Գանձասար

ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

"GANDZASAR"
THEOLOGICAL REVIEW

Գլխաւոր խմբագիր
Մեսրոպ քահանայ
Արամեան

ՎԷՄ VEM
ԵՐԵՒԱՆ 2002 YEREVAN

«Գանձասար» հանդէսի սոյն հատորը հիմնականում նուիրուած է հայ դաւանաբանութեանը: Ներառուած են նաեւ հոգեւոր կեանքին եւ նեբանձնական աստուածպաշտութեանն առնչուող այլ արժէքաւոր նիւթեր: Առաջին անգամ հայերէնով ներկայացւում են Վաղ Եկեղեցու կարեւոր սկզբնաղբիւրներ: Բազմաթիւ ընթերցողների խնդրանքով վերականգնուած է «Վարքեր եւ վկայաբանութիւններ» բաժինը: Սոյն հատորի հրատարակիչն է «ՎԷՄ» բարեգործական հասարակական կազմակերպութիւնը, որի նիւթական հոգածութեամբ հնարաւոր դարձաւ իրականացնել հատորի պատրաստումը:

© «ԳԱՆՁԱՍԱՐ» աստուածաբանական կենտրոն
© «ՎԷՄ» ԲՀԿ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ 375009, ԵՐԵՒԱՆ, ԿՈՐԻՒՆԻ 19ա
19A KORIUN STR., YEREVAN, 375009, ARMENIA
Հեռ./Tel. (+3741) 54 37 07 Հեռապատճէն/Fax (+3741) 54 15 95
Էլ. փոստ/E-mail admin@ganzasar.am www. ganzasar.am
info@vem.am www.vem.am



ՍՈՅՆ ՀԱՏՈՐԸ ՏՊԱԳՐՈՒՄ Է
ՄԵԿԵՆԱՍՈՒԹԵԱՄԲ՝

ԴՈԿՏ. ԵՒ ՏԻԿԻՆ ՍԱՐԳԻՍ ԵՒ ԹԱԼԻՆ ՄԵՍՐՈՊԵԱՆՆԵՐԻ (ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ, ԿԱԼԻՖՈՐՆԻԱ)

Ի ՅԻՇԱՏԱԿ ԻՐԵՆՑ ԾՆՈՂՆԵՐԻ՝

ԳՐԻԳՈՐ ՄԵՍՐՈՊԵԱՆԻ ԵՒ ԱՆԴՐԱՆԻԿ ԷՍՄԷՐԵԱՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

7 Դաւանութիւն հաւատոյ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ

27 ՄԵՍՐՈՊ ՔԱՀԱՆԱՅ ԱՐԱՄԵԱՆ
Ուղղափառ հաւատքի դաւանութիւնը որպէս հոգեւոր կեանքի հիմք

50 ՀՐԱՉ ԲԱՐԹԻԿԵԱՆ
Հայ-բիւզանդական եկեղեցական յարաբերութիւնները փաստաթղթերում

62 Գերմանոս պատրիարքի նամակը համայն տիեզերքի Հայոց Եկեղեցւոյ վեհափառ կաթողիկոս տէր Կոստանդինին

74 Կոստանդնուպոլսի պատրիարք տէր Մանուէլի թուղթը հայոց թագաւոր տէր Հեթումին եւ հայոց կաթողիկոս տէր Կոստանդինին

87 ՊԱՐՈՅՐ ՄՈՒՐԱԴԵԱՆ
Ուրուագիծ հայոց սրբախօսական ժառանգութեան

96 ՅԱԿՈԲ ՔԵՈՍԷԵԱՆ
Ստեփանոս Օրբէլեանի դաւանաբանական երկերն ու նրանց աղբիւրները

111 Պ. ՄԻՆԻՆ
Ս. Դիոնեսիոս Արէոպագացու խորհրդական աստուածաբանութիւնը

ԲՆԱԳՐԵՐ ԵՒ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

135 Տասներկու առաքեալների վարդապետութիւնը (ներածութիւն)

138 Տասներկու առաքեալների վարդապետութիւնը

161 Սուրբ Պողիկարպոս Զմիւռնացի (ներածութիւն)

164 Զմիւռնիայի եպիսկոպոս եւ սուրբ նահատակ սուրբ Պողիկարպոսի նամակը փիլիպեցիներին

178 Սուրբ Պողիկարպոսի վկայաբանութիւնը

188 ՄԵՍՐՈՊ ՔԱՀԱՆԱՅ ԱՐԱՄԵԱՆ
Սուրբ Աթանաս Ալեքսանդրացի

192 Ալեքսանդրիայի եպիսկոպոսապետ սուրբ Աթանասի թուղթը Որդու մարդեղութեան եւ Սուրբ Երրորդութեան մասին

213 ԱՐԱ ՍԱՐԿԱՒԱԳ ՆԱԼՉԱՋԵԱՆ
Սուրբ Բարսեղ Կեսարացի

218 ՍՈՒՐԲ ԲԱՐՍԵՂ ԿԵՍԱՐԱՑԻ
Նայի՛ր քեզ

229 ՍՈՒՐԲ ԵՓՐԵՄ ԱՍՈՐԻ
Դատաստանի եւ երկրորդ գալստեան մասին

237 ՄԵՍՐՈՊ ՔԱՀԱՆԱՅ ԱՐԱՄԵԱՆ
Սուրբ Յովհաննէս Օձնեցի

242 ՍՈՒՐԲ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՕՁՆԵՑԻ
Ընդդէմ երեւութականների

274 ԱՐԱ ՍԱՐԿԱՒԱԳ ՆԱԼՉԱՋԵԱՆ
Անանիա Նարեկացի

277 ԱՆԱՆԻԱ ՆԱՐԵԿԱՑԻ
Հոգեշահ խրատ զղջման եւ արտասուքի մասին

294 Համբերութեան եւ խաղաղութեան մասին

298 ՄԵՍՐՈՊ ՔԱՀԱՆԱՅ ԱՐԱՄԵԱՆ
Պօղոս Տարօնացու «Հաւատքի խօսքն ընդդէմ հերձուածողների»

303 ՊՕՂՈՍ ՏԱՐՕՆԱՑԻ
Բան հաւատոյ ընդդէմ հերձուածողաց

332 ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԱՐԿԱՒԱԳ
Նորին յաղագս, եթէ ոչ է արժան ըստ մասին բաժանել զաստուածայնոց ձայնս ի վերայ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եւ ոչ զ'առ ի յինքեանէ գործս կամ կիրս

343 Յաղագս, եթէ որք յետ միանալոյն երկուս ասեն բնութիւնս ի Քրիստոս, ի հարկէ հետեւին նեստորականաց մտաց

347 Թէ զիա՞րդ չարչարեալ Բանն մարմին եղեալ եւ անչարչարելի մնացեալ, եւ կամ որպէ՞ս դարձեալ ձայնակցեն չարափառքն

352 Նորին յաղագս բնութեանն Բանի եւ միաւորութեան

355 Նորին, եթէ զիա՞րդ ասի մի բնութիւնն Բանին Աստուծոյ մարմնացելոյ ըստ ճշմարտութեան

371 ՎԱՐԴԱՆ ԱՐԵՒԵԼՑԻ
Դաւանութիւն հաւատոյ ուղղափառութեամբ սրբոյ վարդապետին Վարդանայ ի խնդրոյ սրբազան կաթողիկոսին հայոց Կոստանդեայ

384 ՄԵՍՐՈՊ ՔԱՀԱՆԱՅ ԱՐԱՄԵԱՆ
Յովհաննէս Երզնկացու «Ի ճխ սաղմոսն...» ճառը

387 Ի ճխ սաղմոսն, որ ասէ. «Տէր կարդացի առ քեզ»՝ Յոհաննիսի Երզնկացւոյ ասացեալ յատեանն Դրազարկոյն, ի հռչակաւոր եւ ի մեծ անապատին, գնալով անտի...

ՎԱՐՔԵՐ ԵՒ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

411 Առաքեալների հետեւորդ սուրբ Իրենէոսի վկայաբանութիւնը

416 Ալեքսանդրիայի Պետրոս հայրապետի եւ Աբիսողոմ սարկաւագի վկայաբանութիւնը

425 Սրբուհի Յուղիտայի եւ նրա որդու՝ սուրբ մանուկ Կիրակոսի վկայաբանութիւնը

430 Սուրբ Սերապիոն ծերի վարքը

433 Յանուն Քրիստոսի կամաւոր աղքատացած Աստուծոյ այրի պատմութիւնը, ում անունն է Ալեքսիոս

440 Սուրբ Պանտալէոն կամ Պանտելէիմոն բժշկի, Երմողայոս քահանայի եւ նրանց հետ նահատակուածների վկայաբանութիւնը

454 Սուրբ Ստեփանոս Ուլնեցու եւ նրա ընկերակիցների վկայաբանութիւնը

469 Ալեքսանդրիայի հայրապետ սուրբ Կիւրեղ մեծի վարքը

477 Սուրբ Դաւիթ Դունեցու վկայաբանութիւնը

480 Սուրբ Վահան Գողթնացու վկայաբանութիւնը

ՅԱՒԵԼՈՒԱԾ

495 Եթովպական Եկեղեցի

«Զի հաւատք ձեր մի՛ իցեն
իմաստութեամբ մարդկան,
այլ զօրութեամբ Աստուծոյ»:
[Ա Կոր. Բ 5]

ԴԱՒԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՒԱՏՈՅ

Ամէն բանից վեր եւ ամէն բանից առաջ[1] հաւատում ենք Հօր, Որդու եւ Սուրբ Հոգու Ամենասուրբ Երրորդութեանը եւ Մէկ Աստուածութեանը, որ միակ եւ կատարեալ բարին է, անճառելի էութիւնը, անժամանակ գոյութիւնը եւ անփոփոխելի իսկութիւնը, արարիչը եւ կեցուցիչը երեւելիների եւ աներեւոյթների[2]: Մէկ է Ամենասուրբ Երրորդութեան բնութիւնը, տէրութիւնը, զօրութիւնը եւ կամքը՝ Երեք Աստուածային Անձերով անբաժանաբար եւ անիմանալիօրէն առատացած[3]:

Լի է եւ կատարեալ, «որ ամէն ինչ լցնում է ամէն ինչի մէջ» [Եփես. Ա 23], եւ Ինքը չի թերանում, որ ո՛չ նորոգւում է եւ ո՛չ հնանում, ո՛չ լցւում է եւ ո՛չ պակասում, որ նոյնն է միշտ Իր լիութեան եւ անբաւութեան մէջ: Եւ այլ տեղից չկայ օտարամուտ կամ յաւելուած բան Երրեակ Աստուածութեան անհաս, անբաւ, անսահման եւ ամենակատար բնութեան մէջ[4]:

Հայրն անժամանակ պատճառն է Որդու՝ ծննդեամբ եւ Սուրբ Հոգու՝ բխմամբ[5]: Սակայն Ամենասուրբ Երրորդութեան մէջ չկայ մեծութիւն կամ փոքրութիւն, խոնարհութիւն կամ բարձրութիւն[6], այլ մէկ անբաժանելի Աստուածութիւն եւ Զօրութիւն՝ Երեք Անձերի զուգափառ, հաւասարապատիւ եւ անշփոթ միութեամբ՝ առանց առաւելութեան, գերազանցութեան կամ ենթակայութեան: Բոլոր կողմերից որ-

---

1 *Ս. Գրիգոր Աստուածաբան, Ցերախայից վարդապետութիւն, ԿՀ, էջ 34*
2 *Ցաճախապատում, էջ 9-10*
3 *Սարկաւագ, Ա I 2*
4 *Ցաճախապատում, էջ 9-10*
5 *Ցաճախապատում, էջ 9. Սարկաւագ, Ա I 4, Արեւելցի, II 1*
6 *Ցովհան Մայրավանեցի (Մայրագոմեցի), ԿՀ, էջ 52, Շնորհալի, էջ 88, Արեւելցի, II 2*

պէս երկնային մէկ գեղեցկութիւն եւ երեք անբաւների մեծութեան անբաւ բնակցութիւն. Աստուած՝ Իւրաքանչիւրն ըստ Իրեն եւ Իր առանձնաւորութեամբ, որպէս Հայր եւ Որդի եւ Սուրբ Հոգի[7]:

Եւ չկայ այլ Արարիչ, բայց միայն՝ Ամենասուրբ Երրորդութիւնը եւ ամենազօր Տէրութիւնը, որ Իր ամենաբարի կամքով, արարչական զօրութեամբ եւ անհաս իմաստութեամբ արարեց բոլոր արարածներին ոչնչից եւ անգոյութիւնից: Որ նստում է երկինքների երկնքում եւ խնամում բոլոր արարածներին, որ կանխատես գիտութեամբ եւ անբաւ իմաստութեամբ մատակարարում է երկնաւորներին եւ երկրաւորներին, կեանք է ու կեցուցիչ բոլորի համար եւ ամէն ինչում անբաւ, անհաս եւ անճառ[8]:

Որ արարեց մարդուն Իր պատկերով եւ նմանութեամբ՝ որպէս թագ եւ պսակ ողջ արարչութեան՝ շնորհելով նրան Իր հետ լինելու եւ Իր անճառելի խորհուրդներին հաղորդակից եւ մասնակից լինելու կատարեալ երանութիւնը: Որ պատուիրանազանցութեամբ Իրենից հեռացած մարդկութեանը չզրկեց Իր արարչական խնամքից, չլքեց մահուան ստուերում եւ երկրաւոր կեանքի տրտմութիւնների մէջ՝ խոստանալով փրկել մարդուն եւ ազատել մեղքի ու մահուան իշխանութիւնից[9]:

Ժամանակների լրումին Աստուած բացեց Իր անհամեմատ սիրոյ եւ անհուն ողորմութեան դռները եւ այս ընկած աշխարհում ծագեցրեց Իր փրկութեան լոյսը: Մէկը Սուրբ Երրորդութիւնից՝ Աստուծոյ Միածին Որդին՝ նախայաւիտեան Բանը, մեր փրկութեան համար խոնարհուեց Իր Աստուածութեան անհասանելիութիւնից եւ Սուրբ Հոգով կատարելապէս մարդացաւ ս. Կոյս Մարիամից[10]: Ոչ թէ նախ ստեղծեց մարդուն եւ ապա բնակուեց նրա մէջ՝ որպէս տաճարի. այլ Ինքը՝ Բանը, ճշմարտապէս մարդ եղաւ, այսինքն Իրեն միացրեց մարդկային կատարեալ բնութիւն՝ մտքով, հոգով եւ մարմնով[11]: Ոչ թէ Բանը փոխարկուեց մարմնի, կամ մարմինը՝ Աստուածութեան, ոչ թէ աստուածայինը կամ մարդկայինը միաւորուելիս բնութեամբ փոփոխուեցին կամ այլայլուեցին կամ չփոթուեցին, այլ կատարեալ Աստուած Իրեն միաւորեց անթերի մարդկութիւն՝ առանց փոփոխութեան, առանց այլայլութեան, առանց չփոթութեան. այսինքն Աստուած մնաց Աստուած, եւ մարդը՝ մարդ[12]: Երկու կատարեալները եղան մէկ կատարեալ՝ նոր եւ սքանչելի միութեամբ[13]: Յղութեան պահից Աստուածութիւնը եւ մարդկութիւնը անբաժանելիօրէն միաւորուած են մէկ Տէր Յիսուս Քրիստոսի մէջ, եւ Բանի մարդեղութեան փրկագործ տնօրէնութեան մէջ սուրբ Յղութիւնից սկսած որեւէ գործի մասին չի կարելի խօսել որպէս սոսկ աստուածայինի կամ սոսկ մարդկայինի[14]: Քրիստոսի մէջ աստուածմարդկային միութիւնը ոչ թէ բնութիւնների յարակցութիւն կամ կապակցութիւն կամ վերաբերութիւն է, այլ էական, գոյաբանական եւ բնութենական միութիւն, որի մէջ հնարաւոր չէ ներմուծել որեւէ բաժանում կամ լուծարում[15]: Աստուածայինը եւ մարդկայինը անձով, բնութեամբ, կամքով եւ ներգործութեամբ անբաժանելիօրէն միաւորուած են մէկ Տէր Յիսուս Քրիստոսի մէջ: Ուստի մէկ է մարդացած Բանն Աստուծոյ անձը, բնութիւնը, կամքը եւ ներգործութիւնը, եւ մերժելի են մեր փրկութեան իսկութիւնը սասանող որեւէ բաժանութիւն կամ երկութիւն մեր Տէր Յիսուս Քրիստոսի մէջ[16]: Միութեան մէջ պէտք չէ ուրանալ իւրաքանչիւրի կատարելութիւնը, ոչ էլ իւրաքանչիւրի կատարելութեան պատճառով հրաժարուել մէկ կատարելութիւնից՝ միութիւն խոստովանելով անայլայլութեան մէջ եւ անայլայլութիւն՝ միութեան մէջ: Ուրեմն մէկ բնութիւն եւ մէկ դէմք ունի Քրիստոս ոչ թէ ըստ բնութեան նոյնութեան կամ ըստ մէկանձնականութեան, քանզի այս երկուսը միասին գրեթէ զրկում են Աստծուն մարդանալուց եւ մարդուն՝ աստուածանալուց, այլ ըստ Բանի՝ Իր մարմնի հետ անճառ միաւորութեան[17]: Աշխարհի որեւէ օրինակով հնարաւոր չէ հասկանալ, նկարագրել կամ բացատրել Աստուծոյ մարդեղութեան անհուն խորհուրդը, որը հաւատքի խորհուրդ է եւ դաւանական ճշմար-

7 Ս. Գրիգոր Աստուածաբան, Յերախայից վարդապետութիւն, ԿՀ, էջ 35
8 Յաճախապատում, էջ 10. Արեւելցի, III 1
9 Արեւելցի, III 3-13
10 Արեւելցի, III 15-16
11 Սարկաւագ, Ա V 3, Արեւելցի, III 19

12 Ս. Կիւրեղ Աղեքսանդրացի, Առ Սեկունդոս, ԳՊ, էջ 200-201, Սարկաւագ, Ա V 3, Ա VI 1, Շնորհալի, էջ 124-125, Օրբելեան, էջ 8-9
13 Ս. Գրիգոր Աստուածաբան (տե՛ս Օրբելեան, էջ 10)
14 Սարկաւագ, Ա XI 3-12
15 Սարկաւագ, Է I 2, Ժ II 2, Է I 9
16 Խոսրովիկ Թարգմանիչ, էջ 34 (նոյն հատուածը տե՛ս Նչեցի, 31ա), Թուղթ Սահակայ..., ԳԹ, էջ 535-539
17 Օձնեցի, էջ 51-52

տութիւն. ուստի խուսափելով Բանի ներմարդութիւնը մարդկային մտքով ընկալելու գայթակղութիւնից՝ հաւատում ենք, որ Բանն Աստուած անճառաբար, անպարիմանալիօրէն, մտքի համար անհասութեամբ, ինչպէս որ Ինքը գիտի, մարդացաւ՝ Իրենից օտարացած մարդկութեանը փրկագործելու համար[18]:

Նա, որ համագոյակից էր Հօրն ըստ Աստուածութեան, համագոյակից դարձաւ մեզ ըստ մարդկութեան, դարձաւ ճշմարիտ եւ կատարեալ մարդ՝ ամէն ինչում նման մեզ, բացի մեղքից: Քրիստոս փրկական տնօրինութեամբ կրեց բոլոր մարդկային տկարութիւնները, ազատօրէն անցաւ մարդկային կրքերի միջով՝ դատապարտելով դրանց մէջ մեղքի թթխմորը եւ ազատագրելով մեզ մեղքի դատապարտուածութիւնից: Հետեւաբար տնօրինական գործեր են ոչ միայն աստուածայայելուչ հրաշքները՝ ջրի վրայով քայլելը, մեռելներին յարութիւն տալը, հացի բազմացումը եւն, այլ նաեւ՝ մարդավայելուչ տկարութիւնները՝ ծարաւը, յոգնութիւնը, արտասուելը եւն: Երբ Տէրն աստուածային հրաշք էր գործում, գործում էր որպէս Աստուած եւ մարդ, որպէսզի մարդը նոյնպէս կարողանայ աստուածային գործերին մասնակից դառնալ. իսկ երբ մարդկային տկարութիւնների միջով էր անցնում, ապա անցնում էր ոչ թէ դատապարտուածութեամբ՝ սովորական մարդկանց պէս, այլ որպէս Աստուած եւ մարդ, որպէս հզօր եւ ազատարար, եւ ազատում էր մեզ չարի կապանքներից: Քրիստոսի երկրաւոր կեանքի ամէն մի պահ, սկսած սուրբ Ցողութիւնից մինչեւ հրաշափառ Ցարութիւն, փրկական տնտեսութիւն է եւ զերծ է պատահականութիւններից[19]:

Քրիստոս կամաւորապէս կամ անապականաբար, ո՛չ ի հարկէ կամ բնութեան բռնադատուածութեամբ կրեց բոլոր մարդկային անմեղ կամ անպարսաւ կրքերը[20]: Բանն Աստուած ոչ թէ առաւ Ադամի

18 Աթանաս, էջ 59, ս. Կիւրեղ Աղեքսանդրացի, ԳՊ, էջ 29-30, Յովհան Մայրավանեցի, ԿՀ, էջ 143, Սարկաւագ, Ա V 4, Ա VIII 2, Ա IX 2, Խոսրովիկ Թարգմանիչ, էջ 43-46, Ստեփանոս Սիւնեցի, ԳԹ, էջ 445, Սամուէլ Կամրջաձորեցի, ԳԹ, էջ 566, Օրբելեան, էջ 10

19 Յովհան Մայրավանեցի, ԿՀ, էջ 143-146, 363-364, Սարկաւագ, Ա VII 7-25, Խոսրովիկ Թարգմանիչ, էջ 57-61, 129-133, Սասնեցի, Ե, էջ 56-63

20 Մանազկերտի ժողովի Նզովք Ը, Ժ, «Գանձասար», Բ, էջ 120

նախաստեղծ բնութիւնը, այլ մեր ապականացու բնութիւնը[21]՝ ապականակիր մարմինը եւ մեղանչական հոգին ու միտքն եւ, միաւորելով Իրեն, զատեց ապականութիւնը մարմնից եւ մեղքը՝ հոգուց ու մտքից: Ուստի խոստովանում ենք, որ տէրունական մարմինն անապական է ոչ թէ ըստ բնութեան, այլ ըստ անճառ միաւորութեան: Նոյնպէս խոստովանում ենք, որ Քրիստոսի մարմինն ըստ բնութեան չարչարելի է եւ մահկանացու, սակայն ըստ միաւորութեան տնօրէնութեան՝ անչարչարելի եւ անմահ[22]:

Խոստովանում ենք, որ Քրիստոս՝ Նոր Ադամը, աշխարհ եկաւ, որպէսզի բոլորին կեանք տայ եւ նորոգի մարդկութիւնը, որ հին Ադամով դատապարտուած էր ապականութեան, մեղքի եւ մահուան: Նա, որ անբովանդակելի եւ անժամանակ էր բնութեամբ, Իր տեսչութեամբ եւ Հօր կամքով մտաւ աշխարհի չափաւորութեան եւ ժամանակի մէջ՝ իբրեւ մէկը աշխարհից, որ փրկի նրանց, որոնք աշխարհում էին, եւ որ չարի խաբէութեան պատրանքներով բռնադատուածները Քրիստոսի միջոցով գան առ Հայր Աստուած[23]: «Քանզի ինչ որ անհնար էր օրէնքի համար, որը տկարանում էր մարմնի պատճառով, Աստուած առաքեց Իր Որդուն մեղանչական մարմնի նմանութեամբ ու մեղքի համար եւ մարմնի մէջ դատապարտեց մեղքը» [Հռոմ. Ը 3]: Ի լրումն այսր ամենայնի Ինքը՝ մեր խոստովանութեան Առաքեալը եւ Քահանայապետը՝ մեր Տէր Յիսուս Քրիստոս, Իրեն հաշտութեան պատարագ մատուցեց Հայր Աստծուն, որպէսզի Իր արեամբ գնի բոլորին՝ ողջերին եւ մեռեալներին [Եբր. Թ 14, 28][24]: Նա, որ Կենդանի է եւ Կենդանարար, բոլորի համար խաչուեց եւ ճաշակեց մահը, Աստուածութեան հետ միաւորուած մարմնով դրուեց գերեզմանի մէջ եւ Աստուածութիւնից անբաժան հոգով իջաւ դժոխք, քարոզեց չարից բանտարգելուած հոգիներին, ցոյց տուեց փրկութեան նորոգումն ու լոյսը, աւերեց դժոխ-

21 Մանազկերտի ժողովի Նզովք Գ, «Գանձասար», Բ, էջ 119, Թուղթ վարդապետացն Հայոց հիւսիսային կողմանցն, որ ի Հաղբատ եւ Սանահին, առ պատուական կաթողիկոսն տէր Գրիգորիս, Շնորհալի, էջ 310-311

22 Ս. Բարսեղ Կեսարացի, Ընդդէմ Ապողինարի, ԿՀ, էջ 86-87, Մանազկերտի ժողովի Նզովք Է, «Գանձասար», Բ, էջ 120

23 Ս. Կիւրեղ Աղեքսանդրացի, Յորժամ միւսանգամ ածցէ զանդրանիկն աշխարհ, ԿՀ, էջ 160-161

24 Ս. Կիւրեղ Աղեքսանդրացի, Նզովք Ժ, ԿՀ, էջ 239

քը եւ ազատեց հոգիներին, ապա երրորդ օրը Իր հրաշափառ յարութեամբ անդրանիկը եղաւ մեռելներից[25]:

Հաւատում ենք, որ մեր Տէր Յիսուս Քրիստոս նոյն մարմնով աստուածապէս համբարձուեց երկինքների երկինք, նստեց Իր յաւիտենական փառքի աթոռի վրայ՝ Հօր աջ կողմում, Որից միշտ անբաժանելի էր Իր Աստուածութեամբ: Գալու է նոյն մարմնով եւ Հօր փառքով՝ բոլորին արդարապէս դատելու եւ հատուցելու[26]:

Հաւատում ենք Սուրբ Հոգուն՝ Հօր եւ Որդու համագոյակցին եւ արարչակցին, որ անպարագիր զօրութեամբ շրջեց ջրերի վրայ եւ կենդանածնեց բոլոր արարածներին[27], *որ խօսեց Օրէնքում, Մարգարէներում եւ Աւետարաններում, աղաւնակերպ իջաւ Յորդանան՝ փառաւորելու Իր Էակցին, հրաշափայլեց տէրունական փրկագործ տնօրինութիւնների մէջ, Միածնի փչմամբ տպաւորուեց առաքեալների մէջ, ապա Տիրոջ յարութեան յիսուներորդ օրը հրէ լեզուների տեսքով տնօրինաբար իջաւ առաքեալների վրայ եւ Իր անճառելի ու անբաւելի ներկայութեամբ լցրեց Բանի մարդեղութեամբ փրկագնուած արարչութիւնը: Քարոզեց առաքեալների բերանով, Իր աստուածային գիտութեամբ եւ հանճարով պայծառացրեց վարդապետներին, բնակուեց սուրբերի մէջ*[28]:

Հաւատում ենք միայն մէկ Ընդհանրական եւ Առաքելական Սուրբ Եկեղեցու[29], *որ Քրիստոսի խորհրդական մարմինն է [Եփես. Ա 23, Կող. Ա 24] եւ Նրա կենդանի թագաւորութիւնը երկնքում եւ երկրի վրայ [Ղուկ. Ա 33, Յովհ. ԺԸ 36, Յայտ. Ի 1-6], որի գլուխը Ինքը Քրիստոսն է [Եփես. Ե 23, Կողոս. Ա 18], հիմքը՝ ուղղափառ հաւատքի դաւանութիւնը [Մատթ. ԺԶ 16-19], իսկ անդամները [Ա Կոր. Զ 15, Եփես. Ե 30] եւ քարերը՝ Աստծուն հոգով եւ ճշմարտութեամբ դաւանողները [Յովհ. Դ 23-24, Ա Պետր. Բ 4-10]: Հաւատում ենք Եկեղեցու սրբազան խորհուրդներին, մեռելների յարութեանը, գործերի հատուցմանը եւ յաւիտենական կեանքին*[30]:

25 Ս. Կիւրեղ Աղեքսանդրացի, Նզովք ԺԲ, ԿՀ, էջ 241, Խոսրովիկ Թարգմանիչ, էջ 64-65. Նարեկացի ԼԴ էջ 387

26 Հաւատոյ հանգանակ, Նարեկացի ԼԴ, էջ 387-388, Արեւելցի IV 52

27 Նարեկացի ԼԳ, էջ 382,

28 Յովհան Մայրավանեցի, ԿՀ, էջ 55, Նարեկացի ԼԴ, էջ 388

29 Հաւատոյ հանգանակ

30 Հաւատոյ հանգանակ

Այս ամէնը գրեցինք՝ հետեւելով մեր հայրերին եւ հաւատքի ուսուցիչներին, որոնց միջոցով՝ որպէս պատուհանով, ծագել է Ամենասուրբ Երրորդութեան հաւատքի գիտութեան ճշմարիտ լոյսը: Աստուած Ինքն է յայտնել Իրեն. Հայրը՝ Որդուն եւ Հոգուն, Որդին՝ Հօրը եւ Հոգուն, եւ Հոգին՝ Որդուն եւ Հօրը: Եւ Երրեակ Աստուածութեան կենսաբեր հաւատքով ենք ապրում, շարժւում եւ կանք [Գործք ԺԷ 28]՝ յուսալով արժանանալ հոգիների փրկութեանը եւ յաւիտենական կեանքին[31]:

Աղբիւրներ

Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի Ցաճախապատում ճառք եւ աղօթք, Ս. Ղազար, 1954 (=Ցաճախապատում)

Ս. Աթանաս Աղեքսանդրացի, Ճառք, թուղթք եւ ընդդիմասացութիւնք, Վենետիկ, 1899 (= Աթանաս)

Ս. Կիւրեղ Աղեքսանդրացի, Գիրք Պարապմանց, Կ. Պոլիս, 1717 թ. (=ԳՊ)

Տիմոթէոս Կուզ, Հակաճառութիւն առ սահմանեալսն ի ժողովոյն Քաղկեդովնի, Ս. Էջմիածին, 1908 թ. (= Տիմոթէոս Կուզ)

«Կնիք հաւատոյ», Ս. Էջմիածին, 1914 (= ԿՀ)

«Գիրք Թղթոց», Թիֆլիս, 1901 (= ԳԹ)

Յովհաննու Իմաստասիրի Աւանեցւոյ մատենագրութիւնք, Վենետիկ, 1833 (=Օձնեցի)

Խոսրովիկ Թարգմանիչ (աշխատ. Գարեգին վարդապետ Յովսէփեան), Վաղարշապատ, 1899 (= Խոսրովիկ Թարգմանիչ)

Ս. Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, Երեւան, 1985 թ. (= Նարեկացի)

Անանիա Սանահնեցի, «Գանձասար» Ա-Գ (=Սանահնեցի)

Յովհաննէս Սարկաւագ, Յաղագս նշանակի հաւատոյ նիկիականն ՅԺԸ-իցն, Վենետիկ N 504 (= Սարկաւագ. Ա գլուխը հրատ. «Գանձասարի» Զ հատորում, իսկ Ե, Զ, Է, Ժ, ԺԱ գլուխները՝ սոյն հատորում)

Պօղոս Տարօնացի, Ընդդէմ հերձուածողաց, ՄՄ N 6907 (= Տարօնացի, հրատ. սոյն հատորում)

Ս. Ներսէս Շնորհալի, Ընդհանրական թուղթք, Երուսաղէմ, 1871 (= Շնորհալի)

Մխիթար Գոշ, Թուղթ առ վրացիսն, «Գանձասար» Զ (= Մխիթար Գոշ)

Վարդան Արեւելցի, Դաւանութիւն հաւատոյ, (=Արեւելցի, հրատ. սոյն հատորում)

31 Արեւելցի II 4-5

Մխիթար Սասնեցի, MXIT'AR SASNEC'I'S Theological Discourses, edited by S. Peter Cowe, Lovanii, 1993 *(= Սասնեցի)*

Կիրակոս Երզնկացի, Թուղթ առ կարնեցիս, «Գանձասար» Զ, Թուղթ առ ուղղափառ հաւատացեալսն, ՄՄ N 2542 (= Կիրակոս Երզնկացի)

Ստեփանոս Օրբելեան, Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց, Կ. Պոլիս, 1756 (= Օրբելեան)

Եսայի Նչեցի, Դաւանութիւն եւ խոստովանութիւն ի Սուրբ Երրորդութիւնն՝ ասացեալ Եսայի Վարդապետի ի յեզր Վիրապին ի հաստատութիւն ուղղափառաց եւ ի յանդիմանութիւն չարափառաց, ՄՄ N 614 (=Եսայի Նչեցի)

Ս. Յովհան Որոտնեցի, Դաւանութիւն հաւատոյ, ՄՄ N 557 (= Որոտնեցի)

Ս. Գրիգոր Տաթեւացի, Գիրք հարցմանց, Կ. Պոլիս, 1729 (= ԳՀ)

Հաւատոյ հանգանակ, Աղօթագիրք, Վէմ, Երեւան 2000, էջ 232-235 (= Հաւատոյ հանգանակ)

"That your faith should not be
according to the wisdom of man,
but by the power of God." I Cor. 2:5

CONFESSION OF FAITH

Above and before all things, we believe in the All-Holy Trinity, the Father, Son and Holy Spirit and one Godhead, which is the one and perfect good, ineffable essence, timeless existence, and unchangeable quintessence, creator and life-giver of all things visible and invisible. One is the nature of the All-Holy Trinity, one dominion, one kingdom, and one will, inseparable and incomprehensibly abundant in Three Divine Persons.

Full and perfect is He, "who fills all and is in all" (Eph. 1:23), and He lacks nothing, who is not renewed and does not age old and does not wax and wane, who is always the same in His plenitude and infinity. And in the Triune Godhead's incomprehensible infinite, boundless, and completely perfect nature, there is nothing alien or additional.

The Father is the timeless cause of the Son by birth and of the Holy Spirit by procession. However, in the All-Holy Trinity there is neither greater nor lesser, lower nor higher, but rather one indivisible Godhead and Power, Three Persons in coequally glorified, honored and unconfused unity, without advantage, superiority or subordination. From all sides as a heavenly beautiful oneness and an infinite habitation of the greatness of the Three infinities: Each one in Himself, as the Father and Son and Holy Spirit, each with His own identity.

There is no other Creator, except only the All-Holy Trinity and the Almighty Dominion, which with its all-good will, creative power, and incomprehensible wisdom made all the visible and invisible creatures out of nothing, from non-existence. Who sits in the heaven of heavens and cares for all creatures, with providential knowledge and with infinite wisdom provides for the heavenly and the earthly, is life and the giver of life to everyone and in all things infinite, incomprehensible, ineffable.

Who made man in His image and likeness, as the crowning glory of all creation, granting him the perfect beatitude of being with Him, sharing and partaking in His ineffable mysteries. Who did not deprive mankind, who strayed from Him by disobeying His commandment, of His creative care, did not abandon mankind in the shadow of death and in the travails of earthly life, promising to save man and free him from the realm of sin and death.

In the fullness of time, God opened the doors of His incomparable love and boundless mercy and caused His light of salvation to dawn in this fallen world. One of the Holy Trinity, the Only Begotten Son of God, the Word before eternity, for our salvation humbled Himself from His unreachable Divinity and through the Holy Spirit perfectly became a man by the Holy Virgin Mary. He did not that create the man first, then dwell in him as in a temple, rather He, the Word truly became a man, that is He united in himself a perfect human nature, with mind, soul and body. Neither was the Word exchanged for body, nor the body for Divinity, nor while being united did the divine or human change their nature or become altered or confused, but rather perfect Divinity joined to him flawless humanity, without change, without alteration, without confusion: that is God remained God and man remained man. Two perfections became one perfection, in a new and wondrous union. From the moment of conception, the Divine and Human were inseparably united in one Lord Jesus Christ, and in the salvific economy (divine plan of salvation) of the Word become man starting from the holy Conception, it is not possible to speak of any action as solely divine or solely human. In Christ the unity of the God-man is not a conjoining of natures or linking or relating, but rather an essential, existential and substantial unity, in which it is not possible to introduce any division or separation. The divine and human in person, nature, will and action are indivisibly united in one Lord Jesus Christ. Therefore, one is the person, nature, will and action of the Word of God become man, and any division or duality in our Lord Jesus Christ that might undermine the truth of our salvation is to be rejected. In this unity one should not deny the perfection of each, nor reject on account of the perfection of each that one perfection, but should profess unity in the absence of any alteration and the absence of any alternation in the unity. In other words, Christ has one nature and one countenance *(prosopon)* not in respect of the sameness of nature or in respect of being one person, for these two concepts together nearly preclude God from becoming man, or man from becoming god, but in respect of the ineffable unity of the Word in His body. It is not possible by any worldly example to understand, describe or explain the boundless mystery of God's manhood, which is a mystery of faith and a dogmatic truth; therefore, avoiding the offence of attempting to with the human mind the incarnation of the Word, we believe that God the Word became man for the salvation of alienated mankind in a way that cannot be expressed and is beyond our understanding, and beyond the reach of our minds, that only He can comprehend.

He who is consubstantial with the Father in his Divinity, became consubstantial with us in our humanity, became a true and perfect man, in all things like us, except for sin. Christ bore, as part of the divine plan of salvation (economy of salvation), all human weaknesses, voluntarily bearing our human passions, condemning in them the yeast of sin and freeing us from the condemnation of sin. Consequently works of economy are not only the miracles fitting to God – walking on the water, raising the dead, multiplying loaves, etc. – but also human frailties – thirst, fatigue, weeping, etc. When the Lord performed a divine miracle, he performed it as God and man, so that humans might likewise become a participant in those Divine works. And when He bore human weaknesses, He went through them not as one condemned, like ordinary mortals, but rather as God and man, with a liberating strength, and freed us from the bonds of evil. Every moment of Christ's life on earth, beginning from the Holy Conception through the glorious and miraculous Resurrection, is the economy of salvation and is not accidental.

Christ willingly, without being corrupted, and without being forced or compelled by nature, experienced all the innocent or irreproachable human passions. The Word God did not take the nature of Adam as originally created, but our fallen nature, our corrupted body and our sinful soul and mind, and uniting them with Him, He separated corruption from the body and sin from the soul and mind. Therefore we confess that the Lord's body is incorruptible, not by nature, but by this ineffable union. Likewise, we confess that Christ's body was by nature subject to suffering and mortality, however, because of the economy of union, it was not subject to suffering and was immortal.

We confess that Christ, the New Adam, came into the world, so that He might give life to all and renew mankind which through the old Adam had been condemned to corruption, sin and death. He, who is uncircumscribed by space and time, by His nature, in His providence and the Father's will entered into the finitude and time of this world, as one from this world, so that He might give life to those who were in this world and so that those ensnared by the deceitful devices of evil through Christ might come to God the Father. "For what the law could not do, in that it was weak through the flesh, God sending his own Son in the likeness of sinful flesh, and for sin, condemned sin in the flesh (Rom. 8:3)." In fulfillment of all this, He, the Apostle and High Priest of our confession, our Lord Jesus Christ, offered Himself as the sacrifice of reconciliation to God the Father, so that by His blood He might redeem all, the living and the dead (Hebr. 9:14, 28). He, who is Living and Life-Giver, was crucified and tasted death

for all, with body united with His Divinity was placed in the tomb, and with soul inseparable from His Divinity descended into Hell, preached to the spirits imprisoned by the evil one, showing the renewal and light of salvation, destroyed hell and freed the spirits. Then on the third day, through His miraculous and glorious resurrection, He became the first-born of the dead.

We believe that our Lord Jesus Christ with the same body divinely ascended into the heaven of heavens, sat on the throne of His eternal glory, at the right hand of the Father, from Whom is always indivisible in His Divinity. He shall come with the same body and with the Glory of the Father, to judge and requite all justly.

We believe in the Holy Spirit, consubstantial and co-creator with the Father and Son, Who with uncircumscribable power moved upon the waters and bore life to all creatures, Who spoke in the Law, the Prophets and the Gospels, descended as a dove upon the Jordan, to give glory to His Co-being, miraculously showed forth in the Lord's divine plan for salvation (economy of salvaton), was imprinted upon the Apostles by the breath of the Only-Begotten Son, then on the fiftieth day of the Resurrection of the Lord in the form of fiery tongues He descended upon the apostles by His economy and filled the creation, redeemed by the incarnate Word. He preached through the mouths of the apostles, He made the teachers of the Church, brilliant with His divine knowledge and genius, and dwelt in the saints.

We believe in only one Universal and Apostolic Holy Church, which is the mystical body of Christ (Eph. 1:23, Col. 1:24) and His living kingdom in heaven and on earth (Luke 1:33, John 18:36, Rev. 20:1-6), whose head is He, Christ (Eph. 5:23, Col. 1:18), and whose foundation is the confession of orthodox faith (Matt. 16: 16-19), and whose members (I Cor. 6:15, Eph. 5:30) and stones are those who confess God in spirit and truth (John 4:23-24, I Peter 2:4-10). We believe in the sacred mysteries of the Church, the resurrection of the dead, the reward and punishment of works, and the life everlasting.

We wrote all this, following the teachers of our faith and of our fathers, through whom, as through a window, the true light of the knowledge of our belief in the All-Holy Trinity dawns. It is God, who revealed Himself, the Father revealed the Son and the Holy Spirit; the Son, the Father and the Holy Spirit; and the Holy Spirit, the Son and the Father. And it is with life-giving belief in the Triune Divinity we live, move and exist (Acts 17:28), hoping to be worthy of the salvation of our souls and life everlasting.

Чтобы вера ваша утверждалась
не на мудрости человеческой,
но на силе Божией.
I Кор. 2:5.

ИСПОВЕДАНИЕ ВЕРЫ

Превыше всего и прежде всего веруем в Отца и Сына и Духа Святого, – Троицу Пресвятую и Бога Единого, Единственно Совершеннейшего и Благого, неисповедимо Сущего, вневременного Бытия и неизменную Истину, Зиждителя всего видимого и невидимого. Едина Природа, Держава, Царство и Воля Трех Божественных Ипостасей Пресвятой Троицы, преизбыточествующих в своих щедротах, нераздельно и непостижимо.

Преисполнен и совершенен, – „Наполняющий все во всем" (Еф. 1:23). Он не умаляется и не обновляется, не устаревает и не наполняется и не иссякает, и всегда Тот же в своей полноте и необъятности. И нет ничего инородного или прибавленного в Его недосягаемой, безмерной, безграничной и наисовершеннейшей природе.

Отец есть безвременная Причина рождения Сына и исхождения Духа Святого. И в Троице Пресвятой нет ни величия, ни умаления, ни уничижения, ни возвышения, но одно неразделимое Божество и Держава в единстве равнославных, равночестных и несмешиваемых Трех Ипостасей без прибавления, превосходства или подчинения. Всецелое небесное велелепие и безмерное единосущие величия Трех Безмерных, – Бог Каждый по своей сущности и в своей ипостаси, – Отец и Сын и Дух Святой.

И нет иного Творца кроме Пресвятой Троицы и всемогущей Державы, Кто по Своему всеблаговолению, зиждительной мощью и непостижимой премудростью создал всю тварь из ничего и небытия. Кто восседает на небесах небес и опекает все создания, Кто с предзнанием и безмерной премудростью печется о небесных и земных творениях, Жизнь и Зиждитель для всех и во всем, – Безмерный, Непостижимый и Неисповедимый.

Кто сотворил по образу и подобию Своему человека, как венец творения, даровав ему совершенное блаженство пребывания в Боге и возможность быть сопричастником и споспешником Его

неизреченных таинств. Кто не лишил преступившее Закон и отдалившееся от Него человечество Своего милосердного попечительства, не оставил его в тени смертной и скорбях земной жизни, даровав обетование спасения и избавления от греха и власти смерти.

К исполнению времен Бог открыл врата Своей несравненной любви и безмерного милосердия и возжег Свой свет спасения в этом падшем мире. Один из Троицы Пресвятой, – Единородный Сын Божий, Слово Предвечное, снизошел из Своей Божественной недосягаемости и Духом Святым совершеннейшим образом вочеловечился от Пресвятой Девы Марии. Не так, что прежде сотворил человека, а после вселился в него как в храм, но Он Сам, Слово, воистину стал Человеком, то есть присоединил к себе человеческую совершенную природу, – дух, душу и тело. Не то, чтобы Слово превратилось в тело или тело – в Божество, и не то, чтобы соединяясь божественное и человеческое изменили, или преобразовали, или смешали свою природу, но совершенный Бог присоединил к Себе совершенную человечность без изменения, без преобразования, без смешения, то есть Бог остался Богом и человек – человеком. Два совершенных стали одним совершенным, в новом и изумительном соединении. С момента Зачатия Божественное и человеческое нераздельно соединились в Едином Господе Иисусе Христе, и потому в спасительном домостроительстве вочеловечения Слова, начиная со святого Зачатия, нельзя говорить о каком-либо действии, как о только лишь божественном или сугубо человеческом. Богочеловеческое соединение во Христе не есть ни сочетание, ни присоединение или соотношение, но соединение, – сущностное, бытийное и природное, в которое невозможно внести разделение или рассоединение. Божественное и человеческое лицом, природой, волей и действием нераздельно соединены в Едином Господе Иисусе Христе. Следовательно, едина Личность, природа, воля и действие вочеловечившегося Слова Божия и неприемлемы какие-либо разделения или раздвоения в нашем Господе Иисусе Христе, сотрясающие подлинность нашего спасения. В соединении нельзя отрицать совершенство каждого из них, и по причине совершенства каждого нельзя отрекаться от Единого совершенства, исповедуя соединение в неизменности, и неизменяемость – в соединении. Итак, Христос имеет одну природу и одно Лицо не по тождеству природы или по единоличию, ибо эти два понятия в совокупности лишают Бога вочеловечения,

и человека – обожения, а по неизреченному единению Слова со своим телом. Никаким примером мира сего невозможно понять, описать или объяснить безграничное таинство вочеловечения Бога, что является таинством веры и догматической истиной, поэтому избегая соблазна постигнуть человеческим умом воплощение Слова, веруем, что Слово Божие неизреченно, немыслеобъятно и умонепостижимо, как ведомо лишь Ему Одному, – вочеловечился для спасения отчужденного от Него человечества.

Тот, кто единосущен Отцу по Божеству, стал единосущным нам по человечеству, стал истинным и совершенным Человеком, во всем подобным нам, кроме греха. Христос спасительным домостроительством понес все человеческие немощи, свободно пройдя сквозь человеческие страсти, осудив в них закваску греха и освободив нас от проклятия греха. Следовательно, домостроительными делами являются не только богоприсущие чудеса, – хождение по водам, воскрешение мертвых, умножение хлебов и прочее, а также присущие человеку немощи: жажда, изнеможение, проливание слез и прочее. Когда Господь совершал божественное чудо, – Он действовал как Бог и Человек, чтобы человек также мог стать сопричастником Божественных деяний, а когда Он брал на Себя человеческие немощи, то нес их не по проклятию подобно простым смертным, но как Бог и Человек, как Всемогущий и Избавитель, дабы освободить нас от оков зла. Каждое мгновение земной жизни Христа, начиная со святого Зачатия до дивнославного Воскресения, есть спасительное домостроительство, в котором нет ничего случайного.

Христос добровольно или нетленно, не по необходимости или по понуждению естества, понес все человеческие невинные или непорицаемые страсти. Бог Слово взял не первозданное естество Адама, а наше тленное естество- подверженную тленности плоть и грешную душу и дух, и соединив с Собой, отделил тленность от плоти и грех от души и духа. Следовательно, мы исповедуем, что Тело Господне нетленно не по природе, а по неисповедимому соединению. Также исповедуем, что тело Христово по природе подвержено страданиям и смерти, однако по домостроительству соединения, – бессмертно и не подвержено страданиям.

Исповедуем, что Христос – Новый Адам, снизошел в мир, дабы даровать всем жизнь и обновить человечество, осужденное ветхим Адамом на грех и смерть. Он, Который необъятен и вне-

временен по Своей природе, Своим попечительством и волею Отца снизошел в предельность и во временность мира яко один из мира, дабы спасти тех, которые в миру, и чтобы осужденные прелестями духа лукавого смогли со Христом придти к Богу Отцу. "Как закон, ослабленный плотию, был бессилен, то Бог послал Сына Своего в подобии плоти греховной в жертву за грех и осудил грех во плоти" (Рим. 8:3). Во исполнение всего этого Он наш Апостол Обетования и Первосвященник, Господь наш Иисус Христос, принес Себя в жертву примирения Богу Отцу, дабы искупить Своей кровью всех, – и живых, и мертвых (Евр. 9:14, 28). Он, Кто есть Жизнь и Жизнедатель, ради всех принял Крест и вкусил смерть, с Божеством соединенным телом был положен во гроб и от Божества неотделимым духом снизошел во Ад, проповедовал духам заключенным дьяволом, явив свет и спасительное обновление, разрушил ад и освободил плененные духи. На третий же день Он дивнославным Воскресением Своим стал первенцем из мертвых.

Мы веруем, что Господь наш Иисус Христос тем же телом божественным образом вознесся на небо небес и воссел на своем Престоле вечной славы, одесную Отца, от Кого всегда неотделим Божественностью Своей. И грядет Он в том же теле и в Отчей славе для справедливого Суда и возмездия.

Веруем в Духа Святого, Единосущного и Сотворца Отцу и Сыну, Кто непостижимим всемогуществом носился над водами и живопородил все создания, Кто провозвестил в Законе, Пророках и Евангелиях, в образе голубя сошед на Иордан восславить Единосущего Себе, дивновоссиял в спасительных домостроительствах Господних, дуновением Единородного запечатлелся в апостолах, на пятидесятый день Воскресения Господа в облике огненных языков по домостроительству почил на каждом из апостолов и своим неизреченным и необъятным присутствием преисполнил все творение, искупленное воплотившимся Словом. Проповедовал Он устами апостолов, просветлил учителей Своей божественной премудростью и гением, и пребывал во святых.

Веруем в одну Кафолическую и Апостольскую Святую Церковь, которая есть Мистическое Тело Христово (Еф. 1:23, Кол. 1:24) и живое Царство Его на небесах и на земле (Лк. 1:33, Ин. 18:36, Откр. 20:1–6), чьей Главой является Сам Христос (Еф. 5:23, Кол. 1:18), а основанием – исповедание православной веры

(Мф. 16: 16-19); члены же (1 Кор. 6:15, Еф. 5:30) и камни Церкви – исповедующие Бога в духе и истине (Ин. 4:23–24, 1 Пет. 2:4–10). Веруем в священные таинства Церкви, в воскресение мертвых, в воздаяние за деяния и в вечную жизнь.

Все это написали мы, следуя Отцам нашим и Учителям веры, благодаря которым, как через окно, засиял истинный свет познания веры в Пресвятую Троицу. Бог Сам явил Себя: Отец, – Сына и Духа, Сын, – Отца и Духа, и Дух, – Отца и Сына. И благодаря животворной вере в Божественную Троицу мы живем, движемся и существуем (Деян. 17:28), уповая удостоиться спасения наших душ и вечной жизни.

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մեսրոպ քահանայ Արամեան

ՈՒՂՂԱՓԱՌ ՀԱՒԱՏՔԻ ԴԱՒԱՆՈՒԹԻՒՆԸ ՈՐՊԷՍ ՀՈԳԵՒՈՐ ԿԵԱՆՔԻ ՀԻՄՔ

Մարդու հոգեւոր փնտռտումների մասին

Աստուծոյ հետ լինելը, Նրա հետ հաղորդակցութիւն հաստատելը մարդու սրտում հաստատուած հիմնարար ձգտում է: Մարդը, արարուած լինելով Աստուծոյ պատկերով ու նմանութեամբ եւ կոչուած լինելով ապրել Աստուծոյ համար, գիտակցաբար կամ անգիտակցաբար փնտռում է իր Արարչին, որովհետեւ միայն Աստուծոյ հետ միաւորուելով է մարդը վերստանում մեղքի հետեւանքով կորցրած երջանկութիւնը եւ վերահաստատում իր գոյութեան նպատակը: Մարդն իր էութեամբ կրօնական արարած է, եւ նրա կեանքը նպատակաուղղուած է դէպի երկինք: Այս նպատակաուղղուածութիւնը դէպի հոգեւոր ոլորտ ոչ միայն արարչագործութեամբ մարդու մէջ հաստատուած իրողութիւն է, այլեւ պայմանաւորուած է նրանով, որ Աստուած անընդհատ իր անսահման սիրով ձգում է մեզ դէպի Իրեն:

Մարդու կեանքի նպատակը չի կարելի բացատրել որեւէ նիւթական օրինաչափութեամբ կամ պատճառականութեամբ: Մարդու կեանքի նպատակը դուրս է իրենից եւ արարչական սահմաններից: Մարդը ստեղծուած է Աստուծոյ կողմից եւ Աստուծոյ համար: Մարդկային կեանքի մեծագոյն ողբերգութիւնը Աստծուց դուրս, առանց հոգեւոր գիտակցութեան ապրելն է: Առանց հոգեւորի մարդու կեանքն անիմաստ ու դատարկ է: Մարդիկ, կտրուած լինելով հոգեւոր գիտակցութիւնից, յաճախ ճիգեր են գործադրում եւ ժամանակ վատնում՝ ոչ հոգեւոր կամ կեղծ հոգեւոր ճանապարհներով իրենց կեանքին իմաստ հաղորդելու կամ իրենց հոգեւոր դատարկութիւնը լցնելու համար: Սակայն այս աշխարհի որեւէ տեսութեամբ կամ նիւթական բարիքով, մարդու կողմից հնարուած որեւէ գաղափարով կամ արժէքով մարդը չի կարող իրեն երջանիկ զգալ: Ամէն բան այս աշխարհում անցնում է՝ նիւթական գեղեցկութիւն, հարստութիւն, զգացականութիւն եւն, միայն ճշմա-

ըիտ հոգեւոր արժէքներն են անանց եւ յաւիտենական, որոնցո՛վ միայն մարդու հոգին կարող է գոհանալ:

Ըստ Սուրբ Գրքի եւ Եկեղեցու հայրերի՝ հոգեւոր ապրումներն անհամեմատելի են ամէն տեսակ աշխարհիկ զգացումների հետ: Աստուծոյ հետ լինելու երանութիւնը վեր է ամէն տեսակ զգայական ուրախութիւններից: Ոչ մի աշխարհիկ գեղեցկութիւն չի կարող համեմատուել երկնաւոր անանց գեղեցկութեան հետ, որ հնարաւոր չէ նկարագրել մարդկային լեզուով: Զգացական ոչ մի սէր չի կարող համեմատուել աստուածային գերազանց եւ անսահման սիրոյ հետ: Այս աշխարհի բոլոր փափկութիւններն ու հանգստութիւնները չեն կարող համեմատուել այն երանութեան եւ խաղաղութեան հետ, որ Աստուած է տալիս մարդկանց հոգիներին:

Ժամանակաւորով եւ անցողիկով չի կարելի ձեռք բերել այս, մարդուց պահանջւում են հոգեւոր ճիգեր: Իսկ հոգեւոր արժէքները, որոնք ըստ Տիրոջ՝ երկնաւոր, անանց հարստութիւններ են, դիւրութեամբ չեն տրւում, այլ մարդուց պահանջում են հետեւողական ջանքեր եւ լուրջ զոհողութիւններ: Եթէ աշխարհիկ մի դիրք կամ նիւթական արժէք հեշտութեամբ ձեռք չի բերւում, ապա որքան առաւել՝ հոգեւորը: Մեր Տէր Յիսուս Քրիստոս Երկնքի արքայութիւնը, այսինքն՝ հոգեւոր բարիքների ամբողջութիւնը, նմանեցրեց մեծարժէք քարի, որ վաճառւում էր (այսինքն՝ ձրի չէր տրւում): Մի հարուստ մարդ, որ ճոխացած էր այս աշխարհի բարիքներով, տեսաւ այդ գեղեցիկ քարը, զգաց, որ ինքը չունի այդպիսի պատուական հարստութիւն, եւ ցանկացաւ գնել այն: Սակայն պարզուեց, որ ինքը պէտք է վաճառի իր ողջ ունեցածը՝ այն ձեռք բերելու համար: Եւ ըստ Տիրոջ խօսքի՝ հարուստը վաճառում է իր ողջ ունեցուածքը եւ ձեռք բերում այդ պատուական քարը, այսինքն՝ հրաժարւում իր ողջ փարթամութիւնից՝ հոգեւորը ձեռք բերելու համար [Մատթ. ԺԳ 45-47]:

Ըստ հոգու ընթանալը, հոգեւոր արժէքների գերակայութեան գիտակցումը մարդկային կեանքի անհրաժեշտ նախապայմանն են: Աշխարհիկ-նիւթական բաղձանքները ստրկացնում են մարդու հոգին, եւ մարդը կորցնում է ազատութիւնը, որի մէջ արարուել էր Աստուծոյ կողմից: «Ի՞նչ օգուտ է մարդուն, եթէ ամբողջ աշխարհը շահի եւ հոգին վնասի» [Մատթ. ԺՁ 26, Մարկ. Ը 36],- ասում է Տէրը: Հոգին կորցնելու վտանգը բաւականին մեծ է, որովհետեւ ըստ Եկեղեցու հայրերի՝ ծառայական մարմինը լիովին իշխում է իշխանական հոգու վրայ,

եւ մարդկային կեանքը դարձել է խիստ մարմնահակ, այսինքն՝ ուղղորդւում է մարմնաւոր ցանկութիւններով եւ շարժումներով: Մեղքի անկման հետեւանքով խախտուած է մարդկային կեանքի օրէնքը, որն է՝ ըստ հոգու ապրելը: Քրիստոնէական կրօնը կոչուած է ազատելու մարդուն մեղքի կապանքներից եւ վերահաստատելու մարդկային կեանքի հոգեւոր նպատակը:

Քրիստոնէական ճանապարհի իսկութիւնը

Մարդկային էութեանը յատուկ երկնային փնտռումները միշտ չէ, որ ճիշտ հունով են ընթանում: Ժամանակակից աշխարհում հոգեւոր գիտակցութիւնը մեծ անկում է ապրում: Աղանդաւորական շարժումների աշխուժացման հետեւանքով հոգեւորի ընկալումը դարձել է խիստ մակերեսային եւ յաճախ նենգափոխուած: Միւս կողմից մարդու հոգեւոր փնտռումներին արձագանքող տարբեր կրօնական ուղղութիւններ փորձում են ցոյց տալ ճշմարտութեան ճանապարհը՝ չփոթութեան մէջ գցելով դիմացինին: Առաջարկւում են ամենատարբեր կրօնական գիտելիքներ ու փորձառական վարժանքներ, որոնք մարդու մէջ իբրեւ թէ պիտի բացեն հոգեւորը եւ աստուածային ոլորտի ճանաչողութիւնը: Սակայն իսկապէ՞ս վստահելի է այդ գիտելիքը: Ի՞նչ աղբիւրից է: Կա՞յ այդ գիտելիքի իրագործուած պատմական փորձ: Ո՞ւր են հասել մարդիկ դրանով: Ինչպէ՞ս կարելի է մարդկային վերջաւոր կերպերով հասնել անվերջին, ինչպէ՞ս սահմանափակի մէջ բովանդակել անբաւելին: Ինչպէ՞ս զերծ մնալ մարդկային ճիգերի չափազանցումից: Ահա այսպիսի իրավիճակում մարդը պէտք է կողմնորոշուի եւ կատարի ճիշտ ընտրութիւն:

Կայ մէկ շատ կարեւոր առանձնայատկութիւն, որով քրիստոնէութիւնը տարբերւում է մնացած կրօններից եւ կրօնական համակարգերից: Միայն քրիստոնէութեան մէջ է Աստուած մարնաւորւում մարդու փրկագործութեան համար. Աստուած մարդացաւ, որպէսզի մարդն աստուածանայ: Աստուածայինը դարձաւ շօշափելի իրականութիւն մարդու համար: Յիսուս Քրիստոսով մարդն ազատագրուեց թէ՛ աստուածայինի ընկալման աղաւաղումներից, թէ՛ մարդկային ճիգերի չափազանցումներից: Քրիստոնէական կրօնը մարդուն տալիս է ոչ միայն արժէքների որոշակի համակարգ, այլեւ դրանց հասնելու, Աստուծոյ հետ հաղորդակցութիւն հաստատելու յստակ ճանապարհ: Այս ճանա-

պարհն էապէս տարբերւում է միւս կրօնների եւ աղանդների առաջարկած ճանապարհներից, որովհետեւ մեր Տէր Յիսուս Քրիստոս ասում է. «Ես եմ ճանապարհը, ճշմարտութիւնը եւ կեանքը» [Յովհ. ԺԴ 6]: Այսինքն՝ կայ մէկ եւ միակ ճշմարիտ կեանքի ճանապարհ, որ հաստատուած է Աստուծոյ Միածին Որդու փրկագործութեամբ: Եւ այդ ճանապարհը երկրից դէպի երկինք չէ, այսինքն՝ հնարուած չէ մարդու կողմից, այլ երկնքից դէպի երկիր է, այսինքն՝ Աստուծով է տրուած: Ճանապարհ՝ ոչ թէ թուացեալ, վերացական եւ անորոշ, այլ իրական, շօշափելի եւ յստակ: Քանզի «Բանը մարմին եղաւ... եւ մեր ձեռքերը շօշափեցին Կենաց Բանը» [Յովհ. Ա 1, Ա Յովհ. Ա 1],- ասում է Յովհաննէս աւետարանիչը: Նա, որ վեր է ամենայն իմաստութիւնից ու մտքից եւ անհասանելի մարդկային որեւէ ճիգով կամ վարժանքով, անընդմիջելիօրէն մերձաւորւում է մեզ եւ հնարաւորութիւն տալիս Իր հետ հաղորդակից լինել մտքի համար անհասանելի կերպով:

Իւրաքանչիւր կրօնական համակարգի իսկութիւնը ստուգւում է այդ համակարգով իրագործուած պատմական փորձառութեամբ: Քրիստոնէական Եկեղեցին այս առումով ունի հսկայական եւ անգերազանցելի պատմական ժառանգութիւն. իրագործուած գիտելիք՝ Եկեղեցու հայրերի, սուրբերի, վկաների փորձառութեամբ եւ կենդանի բարեխօսութեամբ հաստատուած ու նուիրականացած: Իւրաքանչիւր ոք կարող է իր ապրումները համեմատել այդ փորձառութեան հետ՝ տեսնելու համար՝ ճի՞շտ է ընթանում արդեօք, չի՞ շեղուել եւն: Այս տեսանկիւնից քրիստոնէութիւնը եզակի ճանապարհ է. եւ այս ճանապարհի մասին խօսելիս նկատի չունենք աղանդաւորների կողմից քրիստոնէութեան խեղաթիւրումները, այլ միայն ուղղափառ ճանապարհը, այսինքն՝ այն, ինչ աւանդուել է Աստուծոյ կողմից կենդանի առաքելական յաջորդականութեամբ, այն, ինչ քարոզում է միայն մէկ առաքելական, ընդհանրական, ուղղափառ սուրբ Եկեղեցին, այն, ինչ ուսուցանում են մեր հայրերը:

Հաւատքի մասին

Քրիստոնէական ճանապարհը սկսւում է հաւատքով: Հաւատքով ոչ միայն սկզբնաւորւում է հոգեւոր կեանքը, այլեւ հաւատքով են պայմանաւորուած հոգեւոր կեանքի ողջ ընթացքը, նրա վերելքն ու զարգացումը: Հաւատքը գաղափարական համոզմունք կամ Աստուծոյ

գոյութեան փաստի սոսկ ընդունում չէ, այլ մարդուն տրուած ամենապատուական կարողութիւնը եւ պարգեւը՝ իր Արարչի հետ հաղորդակցութիւն հաստատելու համար: Հաւատքի մեծութիւնը եւ զօրութիւնը արդէն ներկայացնում է Հին Ուխտի պատմութիւնը: Աստուծոյ ընտրեալ այրերի, մարգարէների եւ արդարների համար հաւատքը եղել է հոգեւոր կեանքի եւ սրբութեան առաջնային գործօն: Նրանց համար հաւատքը եղել է մեծագոյն արդարութիւն, ներքին ուխտ Աստուծոյ հետ, աստուածսիրութեան գրաւական, հզօր պաշտպանութիւն, աստուածային սքանչելիքների կատարման նախապայման, աստուածտեսութեան շնորհ եւն: Առ Աստուած հաւատքի այս զարմանալի որակների մասին է գրում ս. Յակոբ Մծբնեցին.

«Եւ Աբէլի հաւատքի համար ընդունելի եղաւ նրա պատարագը: Ենոքը, որովհետեւ հաճելի եղաւ իր հաւատքով, մահուանից դէպի կեանք փոխուեց: Նոյը նոյն հաւատքով փրկուեց ջրհեղեղից: Աբրահամն իր հաւատքի համար արդարացաւ, եւ նրա հաւատքը արդարութիւն համարուեց նրա համար: Իսահակը նոյն հաւատքով սիրելի եղաւ: Յակոբն իր հաւատքով պահուեց: Յովսէփն իր հաւատքի համար փորձուեց հակառակութեան ջրով, ազատուեց փորձութիւնից, եւ ուխտ կնքուեց նրա հետ, ինչպէս եւ Դաւիթն է ասում. «Յովսէփի հետ ուխտ կնքեց Աստուած» [Մնդ. ԼԸ 3]: Մովսէսն իր հաւատքով սքանչելի զօրութիւններ գործեց, իր հաւատքով սպանեց եգիպտացիներին գաւազանի տասը հարուածներով, հաւատքով ճեղքեց բաժանեց ծովը եւ անցկացրեց իր ժողովրդին, հաւատքով փայտը գցեց դառնահամ աղբիւրի մէջ, եւ ջուրը քաղցրացաւ: Հաւատքով մանանայ իջեցրեց՝ իր ժողովրդին լիացնելու, հաւատքով տարածեց իր բազուկները եւ յաղթեց Ամաղէկին: Ինչպէս գրուած է. «Մինչեւ արեւամուտ հաւատքով տարածուած մնացին Մովսէսի բազուկները» [Ելք ԺԷ 12]: Հաւատքով նա երկու անգամ բարձրացաւ Սինա լեռան վրայ՝ քառասունական օր պահք պահելով: Դարձեալ՝ նոյն հաւատքով հարուածեց, սպանեց Սեհոնին եւ Զովգին՝ ամորհացիների թագաւորին:

Զարմանալի է, սիրելի՛, եւ մեծ է այն սքանչելիքը, որ արեց Մովսէսը Կարմիր ծովում. երբ հաւատքով բաժանուեցին ջրերը, բարձր լեռների, քարեղէն պարիսպների նման ամուր մնացին բարձունքներում, կակուղ ջրերը քարացան, սահմանը չէին անցնում եւ փոխեցին իրենց բնոյթը, ոչ բանական արարածները լսեցին հրամանը, չանցան սահմանը. ալիքները սաստուելով՝ մնացին կանգնած եւ պատրաստ

վրէժը հատուցելու՝ զարմացած սպասելով Աստուծոյ հրամանին, մինչեւ անցաւ ժողովուրդը: Երեւացին յաւիտեանների հիմքերը, անդունդների խորքերը, որ հաստատուել էին ի սկզբանէ, շուտափոյթ ցամաքեցին, եւ վեր բարձրացան յաւիտեանների դռները: Եւ եկաւ մտաւ ամպի սիւնը եւ լուսատու եղաւ ամբողջ բանակի համար: Ժողովուրդը հաւատքով անցաւ, եւ ճշմարիտ դատաստան եղաւ փարաւոնի եւ նրա զօրքերի, կառքերի ու երիվարների հետ:

Նաւէի որդի Յեսուն նոյնպէս հաւատքով բաժանեց Յորդանան գետը եւ անցկացրեց Իսրայէլի որդիներին, ինչպէս Մովսէսի օրերին եղաւ:

Այս իմացիր, սիրելի՛, որ Յորդանան գետի հունը երեք անգամ բաժանուեց. նախ՝ Նաւէի որդի Յեսուի, երկրորդ՝ Եղիայի եւ ապա Եղիսէի ձեռքով: Գրուած է, որ Երիքով քաղաքի մօտ գտնուող հունի տեղից Եղիան երկինք բարձրացաւ: Եւ երբ Եղիսէն բաժանուեց նրանից, զարկեց, բաժանեց Յորդանանը եւ անցաւ: Եւ Երիքով քաղաքի մարգարէների որդիներն ընդառաջ ելան Եղիսէին եւ ասացին. «Արդարեւ Եղիայի հոգին իջաւ Եղիսէի վրայ» [Դ Թագ. Բ 15]: Եւ երբ ժողովուրդը Նաւէի որդի Յեսուի օրօք անցաւ Յորդանանը, հաւատքով կործանեց Երիքովի պարիսպները, եւ դրանք առանց ջանքերի ընկան կործանուեցին: Դարձեալ նոյն հաւատքով կոտորեց սպանեց երեսունմէկ թագաւորներին եւ Իսրայէլի երկիրը նրա որդիներին ժառանգութիւն տուեց: Հաւատքով իր ձեռքերը դէպի երկինք տարածեց եւ կանգնեցրեց արեգակը Գաբաւոնում, իսկ լուսինը՝ ելոնացիների դաշտում, որոնք դադարեցրին իրենց ընթացքը: Եւ մեր բոլոր արդար հայրերն ամէն բան հաւատքով արեցին, իրենց հաւատով առաքինացան: Երանելի առաքեալը բոլորի մասին վկայում է, թէ հաւատով առաքինացան [Եբր. ԺԱ 1-40]: Եւ Սողոմոնն ասում է. «Շատերն են, որ ողորմած անուանուեցին, բայց հաւատացեալ մարդ ո՞ւր կը գտնուի» [Հմմտ. Առակ. Ի 6], եւ Յոբն ասում է. «Զեմ փոխի իմ անմեղութիւնը եւ իմ հաւատքի ճշմարտութեան մէջ հաստատ կը մնամ» [Յոբ ԻԷ 5][1]:

Ինքը՝ Յիսուս Քրիստոս, բազմիցս մեծարեց եւ դրուատեց հաւատքը՝ որպէս մարդու հոգեւոր կեանքի էական յատկանիշ: Տիրոջ

1 Գիրք, որ կոչի Զգօն՝ արարեալ սրբոյն Յակոբայ երիցս երանեալ հայրապետին Մծբին քաղաքի՝ ի խնդրոյ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին, սակս մանկանց նորոյս Սիովնի, Կ. Պոլիս, 1824, էջ 16-18

կողմից կատարուած հրաշագործ բժշկութիւնները զուգորդուած են հաւատքով, իր աստուածային սրբարար ներգործութեան համար Տէրը մարդուց պահանջում է հաւատք: Հաւատքով մարդը մասնակից է դառնում աստուածային գործերին, որ անճառելի են եւ վեր մտքից ու իմացումից, եւ ո՛չ միայն այս. հաւատքով կարելի է խնդրել եւ ստանալ ամէն բան, եւ նոյնիսկ գործել այն, ինչ հնարաւոր չէ մարդկային բնութեանը: Աւետարանում ոչ մի բանի վրայ Տէրը չզարմացաւ, այլ միայն մարդու զօրաւոր հաւատքի: Ըստ Աւետարանի՝ միայն հաւատքով է հնարաւոր մտնել յաւիտենական կեանքի ժառանգութեան մէջ: Հաւատքը մուտք է դէպի երկնքի արքայութիւն եւ հոգեւոր բարիքներ, հաւատքով է տեղի ունենում մարդու ներքին վերափոխման հրաշքը: Ս. Յակոբ Մծբնեցին գրում է.

«Եւ մեր կենարար Տէրն այսպէս էր ասում նրանց, ովքեր մօտենում էին Իրեն՝ բժշկութիւն ստանալու. «Թող ըստ քո հաւատքի՛ լինի քեզ» [Մատթ. Թ 29]: Եւ երբ կոյրը մօտեցաւ Նրան, Յիսուս հարցրեց նրան. «Հաւատո՞ւմ ես, որ կարող եմ բժշկել քեզ»: Ասաց նրան. «Այո՛, Տէ՛ր, հաւատում եմ» [Մատթ. Թ 28]: Եւ նրա հաւատքը բացեց նրա աչքերը: Եւ այն մարդուն, ում որդին հիւանդ էր, Յիսուս ասաց. «Դու հաւատա՛, եւ քո որդին կ՚ապրի՛»: Եւ մարդը Նրան ասաց. «Հաւատո՛ւմ եմ, Տէ՛ր, օգնի՛ր իմ թերահաւատութեանը» [Մատթ. Թ 23]: Եւ նրա հաւատալու շնորհիւ ողջացաւ նրա որդին: Եւ թագաւորազնի հաւատքով բժշկուեց նրա որդին, երբ մօտեցաւ Յիսուսին եւ ասաց. «Ասա՛ դու խօսքով, եւ իմ զաւակը կը բժշկուի» [Ղուկ. Է 7]: Մեր Տէրը զարմացաւ նրա հաւատքի վրայ, եւ ըստ նրա հաւատքի եղաւ նրան: Եւ երբ ժողովրդապետը մեր Տիրոջն աղաչեց իր դստեր համար, Յիսուս այսպէս ասաց նրան. «Միայն հաւատա՛, եւ կ՚ապրի քո դուստրը» [Ղուկ. Ը 50]: Նա հաւատաց, եւ նրա դուստրը յարութիւն առաւ: Իսկ երբ մեռաւ Ղազարոսը, մեր Տէրը Մարթային ասաց. «Եթէ դու հաւատաս, քո եղբայրը յարութիւն կ՚առնի» [Յովհ. ԺԱ 25]: Մարթան Նրան ասաց. «Այո՛, Տէ՛ր, ես հաւատում եմ» [Յովհ. ԺԱ 27]: Եւ մեր Տէրը յարութիւն տուեց չորսօրեայ մեռեալ Ղազարոսին: Շմաւոնն իր հաւատքի համար ճշմարիտ վէմ անուանուեց: Երբ մեր Տէրն առաքեալներին Աւազանի մկրտութեան խորհուրդը տուեց, այսպէս ասաց նրանց. «Ամէն ոք, ով հաւատայ եւ մկրտուի, կ՚ապրի, իսկ ով չհաւատայ, կը դատապարտուի» [Մարկ. ԺԶ 16]: Դարձեալ ասաց առաքեալներին. «Եթէ հաւատաք եւ չերկմտէք, չկայ այնպիսի բան, որ չկարողանաք

անել» [Մարկ. ԺԱ 23]: Եւ երբ մեր Տէրը քայլում էր ծովի ալիքների վրայով, Պետրոսն էլ հաւատքով դէպի Նա էր գնում ծովի ջրերի վրայով, իսկ երբ երկմտեց իր հաւատքի մէջ, սկսեց ընկղմուել, եւ մեր Տէրը նրան «թերահաւատ» անուանեց: Եւ առաքեալները այլ բան չէին խնդրում Տիրոջից, այլ միայն. «Աւելացրո՛ւ մեր հաւատքը» [Ղուկ. ԺԷ 5]: Եւ Տէրն ասում է նրանց. «Եթէ [մանանեխի հատիկի չափ] հաւատք ունենաք, լեռները կը շարժէք իրենց տեղերից» [Մարկ. ԺԱ 23]. եւ՝ «Մի՛ երկմտէք ձեր հաւատքի մէջ» [Մատթ. ԻԱ 21]՝ ակնարկելով, որ հակառակ դէպքում նրանք կ՛ընկղմուեն աշխարհի մէջ, ինչպէս Շմաւոնը՝ ծովի ջրերի մէջ: Եւ դարձեալ ասում է. «Ձեր հաւատքի նշանը այս կը լինի. նոր լեզուներով կը խօսէք, դեւերին կը հանէք, ձեր ձեռքը կը դնէք հիւանդների վրայ, եւ նրանք կը բժշկուեն» [Մարկ. ԺԶ 17]:

Սիրելի՛, այսուհետ մտածենա՛նք հաւատքին, քանի որ այսպիսի բազում զօրութիւններ ունի այն: Հաւատը ոմանց երկինք բարձրացրեց, հաւատքով յաղթեցին ջրհեղեղին, հաւատքով ամուլները զաւակներ ծնեցին, փրկուեցին սրից, ազատուեցին կապանքներից, ելան գրից, աղքատները բարձրացան, հալածուողները փրկուեցին, երկնքից հուր իջեցրին, բաժանեցին ծովը, վէմը պատռեցին, ծարաւներին ջուր խմեցրին, քաղցածներին յագեցրին, մեռեալներին կենդանացրին, դժոխքից փրկեցին, ալիքները կանգնեցրին, հիւանդներին բժշկեցին, յաղթեցին զօրութիւններին, պարիսպները կործանեցին, առիւծների բերանը փակեցին, կրակի բոցը հանգցրին, ամբարտաւաններին խոնարհեցրին, խոնարհներին փառքի ու պատիւների հասցրին. այս բոլոր զօրութիւնները հաւատքո՛վ գործուեցին»[2]:

Սակայն ի՞նչ է հաւատքը, եւ ինչպէ՞ս ձեռք բերել այն: Ըստ Եկեղեցու հայրերի՝ հոգեւորի հետ հաղորդակցութիւն հաստատելը մարդկային հոգու որոշակի կարողութիւն եւ օժտուածութիւն է, որը գործում է աստուածային շնորհի լուսաւորութեան պայմաններում: Ինչպէս մարմնաւոր տեսողութիւնը գործում է զգայական լոյսի ներգործութեամբ, այնպէս էլ հոգեւոր տեսողութիւնը գործում է Աստուծոյ շնորհական լոյսի հետ միաւորուելով: Մարդկային հոգու՝ Աստուծոյ հետ հաղորդակցութեան մէջ մտնելու այս շնորհական կարողութիւնը կոչւում է հաւատք: Ս. Գրիգոր Լուսաւորիչն իր «Հաւատքի միտքը»

2 Նոյն, էջ 19-21

ճառում ասում է. «Հաւատքի ճշմարտութիւնը լոյս է մտքի աչքերի համար... Սուրբ Հոգու շնորհի իմաստութեամբ եւ գիտութեամբ լուսաւորուած... Քանզի անանման եւ անհամեմատ է, անպատում եւ անսահման, անհաս եւ անբաւ, սակայն հաւատով տեսնւում, իմացւում եւ օրհնւում է արարածներից...»[3]: Իսկ ս. Գրիգոր Տաթեւացին հաւատքն այսպէս է սահմանում. «Հաւատքը [Աստուծոյ] առաջնային լոյսից բանական հոգու մէջ հեղուած մտքի լուսաւորութիւնն է՝ հոգեւոր բարիքների ճանաչողութեան համար»[4]: Այսպիսով հաւատքը հոգու որոշակի լուսաւորուածութիւն եւ պայծառութիւն է, որոշակի գեղարագոյն վիճակ կամ գերկարողութիւն, որ թոյլ է տալիս առնչուել մարդու համար անհասանելի եւ անճառելի ոլորտի հետ:

Պօղոս առաքեալն ասում է. «Հաւատքը յուսացած բաների հաստատումն է եւ աներեւոյթների ապացոյցը» [Եբր. ԺԱ 1]: Այս սահմանումը ցոյց է տալիս, որ հաւատքի բուն նպատակը դուրս է այս աշխարհից, եւ հաւատքով են աղերսուած հոգեւոր եւ նիւթական ոլորտները: Այս ընկալմանը էապէս խորթ է «մարդը ինչ-որ բանի պէտք է հաւատայ» աշխարհիկ արտայայտութիւնը: Հաւատքի առարկան մէկ եւ միակ Աստուածն է: Եւ հաւատքն այդ Աստուծոյ հետ անձնական փոխյարաբերութիւն հաստատելու ճանապարհն է, որը հաստատուել է Յիսուս Քրիստոսի փրկագործութեամբ եւ դարձել մարդկային բնութեան սեփականութիւնը: Չկայ այլ հաւատք կամ փրկութիւն, այլ միայն այն, որ տրուած է Քրիստոսով:

Առաքեալի այս սահմանումը նաեւ ակնարկում է այն մասին, որ հաւատքը որոշակի անցում է այս կեանքից դէպի վախճանաբանական ապագայ: Հաւատքով վայելում եւ ճաշակում ենք այն, ինչ տրուելու է ապագայում: Հաւատքը մեզ հաստատում է այն բաների մէջ, որ յոյս ունենք ստանալու գալիքում, ապացուցում է այն բաները, որոնց կատարեալ տեսութիւնը լինելու է գալիքում: Այս մասին որոշակիօրէն նշում է ս. Բարսեղ Կեսարացին «Հաւատքի մասին» իր ճառում. «Աստուծոյ մեծութիւնը եւ փառքը, որ անընդգրկելի են խօսքով եւ անըմբռնելի են մտքով, հնարաւոր չէ ո՛չ կերպաւորել, ո՛չ էլ ներկայացնել

3 Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի Յաճախապատում ճառք եւ աղօթք, Ս. Ղազար, 1954, էջ 28

4 Գիրք հարցմանց երիցս երանեալ սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Տաթեւացւոյն, Կ. Պոլիս, 1729, էջ 571

մէկ խօսքով կամ գաղափարով: Իսկ Աստուածաշունչ Գիրքը մեր կողմից գործածուող բազում խօսքերի միջոցով հազիւ մօտեցնում է աստուածայինը սրտով մաքուրների ըմբռնմանը, եւ այն էլ ներկայացնելով որպէս թէ հայելու մէջ: Քանզի դէմյանդիման հայեցողութիւնը եւ կատարեալ ճանաչողութիւնը կը տրուի միայն գալիքում»[5]:

Ըստ ս. Եւագրիոս Պոնտացու՝ հաւատքը հայեցողական ճշմարտութիւն է եւ երկնքի արքայութեան նախաճաշակումը. հաւատքի հայեցողութիւնը եւ հոգեւոր ճանաչողութիւնը մարդկային հոգու բնական կարողութիւններ են, միայն մարդը ճշմարիտ կեանքով պէտք է ապրի եւ հոգ տանի ուղղափառ հաւատքի համար: «Հաւատքի մասին» խօսքում նա գրում է. «Երկնքի արքայութիւնը, ո՛վ եղբայրներ, ոչ այլ ինչ է, եթէ ոչ էերին ճշմարտապէս հասնելը, որն Աստուածային Գիրը «երանութիւն» է անուանում: Քանի որ եթէ Երկնքի արքայութիւնը «ներսում՝ ձեր մէջ է» [Ղուկ. ԺԷ 21], իսկ ներքին մարդու մէջ բացի հայեցողութիւնից ուրիշ ոչինչ չի գոյանում, ապա, հետեւաբար, Երկնքի արքայութիւնը հայեցողութիւն է: Այժմ այդ Արքայութեան ստուերներն ենք միայն տեսնում, ինչպէս հայելու մէջ [Ա Կորնթ. ԺԳ 12], իսկ յետոյ, ազատուելով այս երկրաւոր մարմնից եւ հագնելով անապականն ու անմահը [Բ Կոր. Ե 1-4], կը տեսնենք Երկնքի արքայութեան նախատիպերը: Կը տեսնենք, եթէ, իհարկէ, մեր կեանքը ուղղենք ուղիղ ճանապարհով եւ հոգ տանենք ուղղափառ հաւատքի համար, առանց որի չենք տեսնի Տիրոջը [Եբր. ԺԲ 14]: Զէ՞ որ ասուեց. «Իմաստութիւն չի մտնի չարանենգ անձի մէջ, որ մեղք է գործում» [Առակ. Ա 4]:

Եւ թող չառարկեն ինձ՝ ասելով. «Դու չգիտես, թէ ինչ է գտնուում ոտքերիդ տակ, սակայն յանձն ես առնում իմաստասիրել մեզ հետ անմարմին եւ ամբողջութեամբ աննիւթական էութեան մասին»: Ես կարծում եմ՝ անհեթեթ է թոյլ տալ զգայութիւններին՝ անարգել համակուել զգայականով եւ արգելել մտքի բուն գործունէութիւնը: Քանի որ ինչպէս զգայութիւնն է ընկալում զգայականը, այնպէս էլ միտքը՝ իմանալին: Սրա հետ մէկտեղ հարկ է նշել, որ Աստուած, երբ սկզբից ստեղծեց մարդուն, նրա մէջ դրեց բնական բնածին չափանիշներ: Զէ՞ որ ոչ ոք չի սովորեցնում տեսողութեանը՝ ընկալելու գոյներն ու ձեւերը, լսողութեանը՝ աղմուկներն ու ձայները, հոտառութեանը՝

5 Творения иже во святых отца нашего Василия Великого, Москва, 1991, т. 5, ст. 24

անուշահոտութիւնն ու գարշահոտութիւնը, համի զգայարանին՝ տարբեր համային զգացողութիւնները, շօշափելիքներին՝ փափուկն ու չորը, սառն ու տաքը: Այդպէս էլ ոչ ոք չի կարող սովորեցնել մտքին՝ ընդունելու իմանալին: Եւ ինչպէս զգայարանները, երբ հիւանդ են, պահանջում են միայն հոգատար խնամատարութիւն եւ ապա վերստին դիւրութեամբ սկսում կատարել իրենց առանձնայատուկ գործունէութիւնը, այդպէս էլ միտքը, գամուած լինելով մարմնին եւ լցուած լինելով մարմնական պատկերացումներով, կարիք ունի միայն հաւատքի եւ ճշմարիտ վարքի, որոնք ոտքերը կատարելագործում են, ինչպէս եղնիկինը, եւ նրան հասցնում բարձունքներ [Սաղմ. ԺԷ 34]»[6]:

Մարդկային կեանքի ողջ անկատարութիւնը, ըստ Տիրոջ, գալիս է հաւատքի պակասութիւնից: Մարդիկ փորձում են հաւատքը փոխարինել ամենազանազան բաներով՝ մեծ տեղ տալով իրենց գիտելիքներին, սովորութիւններին, զգացմունքներին, երեւակայութեանը եւն: Արդիւնքում մարդը յայտնուում է հոգեկործան շեղումների մէջ: Ս. Յովհան Ոսկեբերանը «Յովհաննու Աւետարանի մեկնութեան» մէջ գրում է. «Սիրելինե՛ր, ամէնուր մեզ պէտք է հաւատք. հաւատքը բարիքների մայրն է եւ փրկութեան դեղը, առանց սրա մարդ չի կարող ունենալ որեւէ բան մեծամեծ աւանդութիւններից. այլ կը նմանուի անգէտ մարդկանց, որոնք անմտաբար կամենում են ծովն առանց նաւի անցնել, սակայն ձեռքերը եւ ոտքերը բռնուում են մի փոքր լողալուց յետոյ, եւ չկարողանալով առաջ ընթանալ՝ անմիջապէս ընկղմուում են ջրերի մէջ: Նոյնպէս էլ նրանք, ովքեր առանց հաւատքի, միայն իրենց մտքով են ընթանում, նաւաբեկութեան են ենթարկուում: Ինչպէս Պողոսն է ասում ոմանց մասին, թէ «հաւատքի մէջ նաւաբեկ եղան» [Ա Տիմ. Ա 19]: Արդ, որպէսզի նոյն ալիքները մեզ էլ չկործանեն, բռնենք [հաւատքի] այս սուրբ խարսխից»[7]:

Հաւատքն աւելին է, քան մտքի իմացումը, զգացական ներթափանցութիւնը կամ երեւակայութեան թռիչքը: Մարդկային որեւէ ճանաչողութիւն չի կարող համեմատուել հաւատքի ճանաչողութեան հետ, որ Աստուծոյ լոյսի առաջնորդութեամբ տանում է մարդուն դէպի հոգեւոր ոլորտ: Ս. Գրիգոր Տաթեւացին ասում է. «Մարդու բնական տե-

6 Творения аввы Евагрия, Москва, стр. 155-156

7 Մեկնութիւն Սրբոյ Աւետարանին որ ըստ Յովհաննու, կ. Պոլիս, ՀԱՌ ԼԲ, էջ 325

սութիւնը ունի երեք յատկութիւն: Առաջին՝ նախ ճանաչմամբ խոնարհւում է դէպի իր առջեւ դրուած ճանաչելին: Երկրորդ՝ խառնւում է ճանաչելիների հետ: Երրորդ՝ բաժանւում եւ զանազանւում է շատ բաների մէջ. եւ այդպէս փնտռելով՝ գտնում է ճշմարիտը: Այսպիսին է իմաստասէրների բնական քննութիւնը: Իսկ շնորհականը հակառակ է սրանց: Քանզի պարզ եւ միեղէն ճանաչողութեամբ բարձրանում է դէպի աստուածային գիտութիւնը եւ նոյնի տեսութեամբ յափշտակւում: Այսպիսին է մարգարէների, առաքեալների եւ հաւատքի տեսութիւնը»[8]: Համեմատելով բանական քննութիւնը հաւատքի տեսութեան հետ՝ ս. Գրիգոր Տաթեւացին շարունակում է. «Բանական քննութիւնը եւ հաւատքի տեսութիւնը նման են, որովհետեւ երկուսն էլ ուղղուած են դէպի ճշմարտութիւնը: Սակայն զանազանւում են հետեւեալ կերպ: Նախ՝ բանականն ուղղուած է դէպի երկրաւորները եւ ամբողջանում է ճշմարտութեան բազմակի քննութեամբ, իսկ հաւատքն ուղղուած է դէպի Մէկը եւ աստուածային ճշմարտութիւնը: Երկրորդ՝ բանականը երբեմն մոլորւում է ճշմարտութիւնից եւ տարակուսում, իսկ հաւատքն անտարակոյս եւ անմոլար է ճշմարտութիւնից: Երրորդ՝ բանական քննութեանը հետեւում է հերձուածողութիւն, իսկ հաւատքի տեսութեանը՝ ուղղափառութիւն: Չորրորդ՝ բանական քննութիւնը ճշմարիտը քաշում է դէպի միտքը, իսկ հաւատքի տեսութեան դէպքում միտքը հետեւում է ճշմարտութեանը: Հինգերորդ՝ բանական քննութիւնն անվարձատրելի է, իսկ հաւատքի տեսութիւնը վարձքի եւ փառքի է արժանանում»[9]:

Հոգեւոր կեանքը սկսւում է այնժամ, երբ մարդը սկսում է ըստ հաւատքի ապրել, որ նշանակում է ամէն ինչում կատարելապէս վստահել Աստծուն եւ ամէն բան յանձնել Նրա խնամքին: Աստուած Իր անսահման սիրով հոգ է տանում մարդու համար եւ մեզանից աւելի լաւ գիտի, թէ ինչ է պէտք մեզ: Մեզ միայն մնում է աներկբայ սրտով, լիակատար վստահութեամբ հաւատալ Աստծուն, եւ Նա կը տայ մեզ ճշմարիտ կեանքի գիտութիւնը: Միայն չկասկածենք եւ չկեղծաւորենք, այլ ուղիղ մտքով եւ անկեղծ սրտով ապաւինենք Աստուծոյ խնամակալութեանը:

8 Գիրք հարցմանց երիցս երանեալ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Տաթեւացւոյն, Կ. Պոլիս, 1729, էջ 120

9 Նոյն, էջ 121-122

«Քանզի հաւատքով ենք ընթանում եւ ոչ թէ կարծիքով» [Բ Կոր. Ե 7],- ասում է առաքեալը: Հաւատքը մեր կեանքի ուղեկիցն ու պաշտպանն է: Նա, ով ունի ի Քրիստոս ճշմարիտ հաւատքը, լոյսի մէջ է քայլում եւ պաշտպանուած է խաւարի ուժերից: Առաքեալն ասում է. «Եւ այս բոլորի վրայ վերցրէք հաւատքի վահանը, որպէսզի կարողանաք հանգցնել չարի բոլոր այրող նետերը» [Եփես. Զ 16]: Հոգեւոր ճանապարհով ընթանալիս մարդն անընդհատ ենթարկւում է դիւային փորձութիւնների եւ յարձակումների: Ըստ անապատական հայրերի՝ ճշմարիտ դաւանութիւնը հզօր զէնք է չարի դէմ մղուող պայքարում: Ս. Եւագրիոս Պոնտացին գրում է. «Պատրաստի՛ր քո անձն ինչպէս հմուտ ճգնող եւ եթէ յանկարծ տեսնես որեւէ տեսիլք, մի՛ սարսափիր, եթէ տեսնես քեզ վրայ բարձրացրած սուր կամ աչքերիդ առաջ վառուող ջահ, մի՛ խռովուիր, եթէ տեսնես որեւէ վատադէմ եւ արիւնատես կերպարանք, ամենեւին մի՛ տագնապիր քո ներսում. այլ կանգնի՛ր՝ դաւանելով ճշմարիտ [հաւատքի] դաւանութիւնը, եւ դիւրութեամբ կը տեսնես քո թշնամիների կործանումը»[10]: Այսպիսով, հաւատքը նաեւ չարի որոգայթներից խուսափելու կարեւորագոյն գործօն է:

Հաւատքը, յոյսը եւ սէրը քրիստոնէական աստուածաբանութեան մէջ կոչւում են աստուածային առաքինութիւններ: Ինչո՞ւ են այս առաքինութիւնները կոչւում աստուածային: Ս. Գրիգոր Տաթեւացին բացատրում է. «Նախ աստուածային են կոչւում, որովհետեւ այս երեքը վերուղղուած են առ Աստուած: Քանզի հաւատքով է տեսնւում ծայրագոյն Բարին, յոյսով սպասում ենք գերագոյն Բարուն, սիրով ցանկանում ենք վերնային Բարին: Եւ այս ամէնն առ Աստուած է: Դարձեալ՝ հաւատքով ընդունակ է դառնում, յոյսով հաղորդակից լինում եւ սիրով միաւորւում Աստուծոյ հետ: Դարձեալ՝ հաւատքով հաւատում ենք, որ միայն Իր բարութեամբ եւ ոչ հարկադրուածութեամբ ստեղծեց եւ վերստին փրկեց մեզ: Յոյսով սպասում ենք Նրա խոստա-

10 Աղօթքի մասին, «Գանձասար» Ա, էջ 190: Աղօթքի մասին այս նշանաւոր գործը մեզ է հասել ս. Նեղոս Սինայեցու անուամբ: Սակայն նոր աղբիւրագիտական տուեալները եւ, մասնաւորապէս, վերջերս յայտնաբերուած ասորերէն նեբածութիւնը աներկբայօրէն ցոյց են տալիս, որ այս երկի հեղինակը ս. Եւագրիոս Պոնտացին է: Մեծանուն սուրբի շատ ստեղծագործութիւններ նոյն ճակատագրին են արժանացել՝ այլ անունների տակ յայտնուելով, որի պատճառ են հանդիսացել որոգինէական վէճերը եւ նրա որոշ հայեացքների միակողմանի մեկնաբանութիւնները:

ցած ողորմութեանը, քանզի գթած եւ ճշմարիտ է: Սիրով սիրում ենք Նրան, քանզի Ինքն Իրենով բարի է: Եւ այն պատճառով ենք սիրում ընկերոջը, որ Աստուծոյ պատկերն ու արարածն է»[11]:

Հաւատքը առաջինն է, որովհետեւ նախորդում է միւս բոլորին, եւ հաւատքով է սկսւում հոգեւոր կեանքն առհասարակ: Հաւատքը սկիզբն ու արմատն է բոլոր առաքինութիւնների եւ հոգեւոր բարիքների: Դա տեղի է ունենում աստուածային շնորհի լուսաւորութեամբ եւ լուսաւորում մարդկային ողջ էութիւնը:

«Ինչպէս աչքի լոյսը միաւորւում է արեգակի լոյսի հետ եւ ապա կարողանում է տեսնել դրա ե՛ւ ձեւը, ե՛ւ չափը, այնպէս էլ Աստուծոյ իմացական լոյսը միաւորւում է մտքի բանական լոյսի հետ, եւ նրանով տեսնում ենք երկնաւոր եւ երկրաւոր գիտութիւնների զանազանութիւնը, հաւատում Աստծուն եւ յոյսով ու սիրով հաստատւում առ Աստուած: Այս է հաւատքի լոյսը, որ Աստուծոյ իմացական շնորհը հեղւում է մեր բանական մտքի մէջ եւ կայանում հաւատքով»[12]:

Իսկ ինչպէ՞ս ձեռք բերել այս հաւատքը: Կա՞յ արդեօք ճանապարհ՝ բացելու մեր հոգում այս յիրաւի անհուն զօրութիւնը: Առաքեալն ասում է. «Հաւատքը լսելուց է, իսկ լուրը՝ Քրիստոսի խօսքից» [Հռոմ. Ժ 17]: Այսինքն՝ հաւատքը սկսւում է Քրիստոսի կենդանարար խօսքից, որ Սուրբ Գրքով եւ Եկեղեցու հայրերի ուղղափառ վարդապետութեամբ փոխանցուած է մեզ, որպէսզի մեր հաւատքը չլինի «մարդկային իմաստութեամբ, այլ Աստուծոյ զօրութեամբ» [Ա Կոր. Բ 5]: Հաւատքի ճիշտ ընկալումը պահանջում է հաւատքի ուղղափառ վարդապետութիւն կամ ուսուցում: Քրիստոնէական վարդապետութիւնը Սուրբ Հոգու սրբազան աւանդութեան անբաժանելի մասն է. Աստուծոյ Հոգին մշտապէս ներգործում է Եկեղեցում՝ որպէս կենդանի ուսուցիչ եւ առաջնորդ հոգեւոր կեանքի: Ճշմարիտ վարդապետութիւնը հաստատւում եւ վաւերացւում է Եկեղեցու փորձառութեամբ: Եկեղեցին ոչ միայն կենդանի կրիչն է Աստծուց շարունակաբար տրուող յայտնութենական ճշմարտութիւնների, այլեւ այդ ճշմարտութիւնները վարդապետական ուղիներով փոխանցողն է: Վարդապետութեան պատ-

11 Գիրք հարցմանց երիցս երանեալ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Տաթեւացւոյն, կ. Պոլիս, 1729, էջ 571

12 Գիրք քարոզութեան, որ կոչի Ամառան հատոր՝ արարեալ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Տաթեւացւոյն, կ. Պոլիս, 1741, էջ 83)

մական փոխանցումը տեղի է ունենում Աստուծոյ «սրբազան անօթների»՝ Եկեղեցու սուրբ հայրերի եւ վարդապետների միջոցով, որոնց տրուած է առանձնայատուկ վարդապետական շնորհ: Վարդապետական գիտելիքի արգասաւորման համար անհրաժեշտ է, որ այն իրագործուի սեփական փորձառութեամբ՝ թէ՛ ուսուցանողի եւ թէ՛ ուսուցանուողի կողմից:

Քրիստոնէական վարդապետութիւնը փիլիսոփայական համակարգ չէ, այլ ճշմարիտ Վարդապետի՝ Յիսուս Քրիստոսի փրկագործութեամբ հաստատուած կեանքի գիտութիւն, որ տանում է մարդուն դէպի յաւիտենական կեանք: Քրիստոնէական վարդապետութիւնը մշտապէս նորոգւում է Սուրբ Հոգու շարունակական ուսուցմամբ. «Իսկ Մխիթարիչը՝ Սուրբ Հոգին, Որին Հայրը կ՛առաքի Իմ անունով, Նա ձեզ ամէն բան կ՛ուսուցանի եւ ձեզ կը յիշեցնի այն ամէնը, ինչ Ես ասացի ձեզ» [Յովհ. 26]: Քրիստոնէական վարդապետութիւնն անհրաժեշտ է հաւատացեալ գիտակցութիւնը զանազան դիւային շեղումներից զերծ պահելու համար: Այս մասին խիստ զգուշացումներ է կատարում ս. Կիւրեղ Երուսաղէմացին. «Ուսմամբ եւ պատմութեամբ ստացի՛ր հաւատքը եւ պահիր միայն ա՛յն հաւատքը, որ այստեղ վարդապետուած է սուրբ Եկեղեցուց եւ հաստատուած բոլոր Սուրբ Գրքերով: Արդ, որովհետեւ ոչ բոլորը կարող են կարդալ Գիրքը՝ ոմանք տգիտութեան պատճառով, ոմանք էլ իրենց ներսի տգիտութիւնը խափանել չէանալու պատճառով, արդ, որպէսզի տգիտութիւնից հոգիները չկործանուեն, մենք հակիրճ կարգաւորութեամբ ամփոփեցինք հաւատքի ուսուցումը: Փութալով կամենում եմ աւելի ուսուցանել՝ ոչ թէ նամակներ գրելով, այլ մեծ ուշադրութեամբ սրտերի մէջ արձանագրելով: Զգո՛յշ եղէք՝ դրա մէջ կանխապէս հաստատուելով... ամո՛ւր պահէք սա՝ որպէս պաշար դարձնելով ձեր կեանքի ողջ ընթացքում, եւ սրանից բացի այլ բան չընդունէք. նոյնիսկ եթէ մենք ինքներս, մեր խօսքերը փոփոխելով, հակառակն ուսուցանենք, կամ թէ մի թշնամի հրեշտակ, լուսոյ կերպարանք առնելով, կամենայ խաբել ձեզ. [ինչպէս ասում է առաքեալը]. «Եթէ մենք կամ երկնքից իջած հրեշտակ աւետարանի աւելին, քան այն, որ մեզանից ստացաք, նզովեալ լինի» [Գաղ. Ա 8-9]: Եւ նախ նոյն խօսքերի վրայ իսկ ամրանալով՝ պահիր մտքումդ հաւատքի համար, սակայն իր ժամանակին այդ խօսքերի ապացոյցը սպասիր Սուրբ Գրքից ստանալ: Քանզի հաւատքի հաստատութիւնը դրուեց ոչ թէ այնպէս, ինչպէս հաճոյ էր մարդկանց, այլ ամբողջ Գրքից ամենայար-

մար խօսքերը հաւաքուած լինելով՝ ամբողջանում են հաւատքի հաստատութեան մէկ վարդապետութեան մէջ»[13]:

Կորնթացիներին ուղղուած երկրորդ թղթում Պօղոս առաքեալը խօսում է նաեւ հաւատքի աճի մասին [Բ Կոր. Ժ 15]: Հաւատքի աճի համար անհրաժեշտ են հաւատքի գործեր: «Հաւատքն առանց գործերի մեռած է» [Յակ. Բ 26], ասում է Յակոբոս առաքեալը: Հաւատքի աճի կամ հոգեւոր կեանքի զարգացման համար մարդուց պահանջւում են հոգեւոր ճիգեր եւ առաքինութեան գործեր: Առանց լուրջ զոհողութիւնների եւ ճգնակեցութեան հնարաւոր չէ հասնել հաւատքի այնպիսի աստիճանների, որ ձեռք են բերել Աստուծոյ սուրբերը: Այսպիսով, հաւատքն ունի սկիզբ, որ Աստուծոյ կենարար խօսքով է սերմանւում մարդկային հոգիների մէջ, հաւատն ունի առաջընթաց եւ զարգացում, հաւատքն ունի նաեւ կատարելութեան աստիճաններ, որի լիութիւնը սուրբերը վայելելու են Երկնքի արքայութեան մէջ:

Ուղղափառ դաւանութեան մասին

Եկեղեցու հայրերը եւ վարդապետները ուսուցանում են, որ հաւատքի առաջին աստիճանը կամ տեսակը դաւանական հաւատքն է կամ հաւատքի դաւանութիւնը: Այս է հաստատում ս. Աթանաս Աղեքսանդրացին. «Աստծուն ճանաչելու առաջին տեսակը ճշմարիտ հաւատքի դաւանութիւնն է»[14]:

«Դաւանել» նշանակում է ընդունել, հաւատարմութիւն խոստանալ, խոստովանել, վկայել որպէս ճշմարտութիւն եւ հաստատել այն, ինչին հաւատում ես: Իսկ դաւանութիւնը հաւատքի հիմնական սկզբունքների ամբողջութիւնն է, որին պէտք է ամբողջ սրտով հաւատայ ամէն մի քրիստոնեայ: «Դաւանել» նաեւ նշանակում է խոստովանել եւ վկայել բերանով. «Քանի որ սրտով հաւատում էք արդարանալու համար եւ բերանով խոստովանում փրկուելու համար. քանզի այս է Գիրքն [ասում]. «Ամէն ոք, ով հաւատայ Նրան, չի ամաչի» [Հռոմ. Ժ 10],- ասում է Պօղոս առաքեալը: Ահա թէ ինչու ամէն օր եկեղեցում

13 Ս. Կիւրեղ Երուսաղէմացի, «Կոչումն ընծայութեան», Վիեննա, 1832, էջ 84-85

14 Ս. Աթանաս Աղեքսանդրացի, Ճառք, թուղթք եւ ընդդիմասացութիւնք, Վենետիկ, 1899, էջ 239

բարձրաձայն արտասանւում է Հաւատոյ հանգանակը: Դաւանական մաքրութեան հարցերը մշտապէս եղել են Եկեղեցու ուշադրութեան կենտրոնում. Եկեղեցու հայրերը, պայքարելով զանազան հերձուածների եւ աղանդների դէմ, իրենց աստուածաբանական գրուածքներով մշտապէս կրթել եւ լուսաւորել են հաւատացեալների հոգիները եւ զերծ պահել վտանգաւոր շեղումներից: Դաւանական մաքրութիւնը նրանց կողմից համարուել է քրիստոնէական կեանքի գլխաւոր նախապայման: Հաւատքի մաքրութիւն է պահանջւում իւրաքանչիւր մկրտուող մեծահասակից (փոքրի դէպքում՝ կնքահօրից) եւ առաւելապէս՝ մկրտող հոգեւորականից, որը պէտք է ուսուցանի եւ նախապատրաստի մկրտուողին: «Մաշտոց» ծիսարանում մկրտութիւնից առաջ զետեղուած խրատը քահանայից պահանջում է մինչեւ [չափահասին] մկրտելը նրան ուսուցանել սուրբ Եկեղեցու հաւատքը եւ վարդապետութիւնը՝ Ամենասուրբ Երրորդութեան խորհուրդը, աշխարհի արարչագործութիւնը, Հին ուխտի պատմութիւնը, Քրիստոսի ծնունդը եւ Նրա բոլոր փրկարար տնօրէնութիւնները՝ Սուրբ Ծնունդից մինչեւ Հրաշափառ Յարութիւն եւ Համբարձում, Սուրբ Հոգու տնօրինական գալուստը, Յիսուսի Երկրորդ Գալուստը, համընդհանուր յարութիւնը, գործերի հատուցումը եւ սուրբ Եկեղեցու եօթ խորհուրդները:

Այսպիսով, մենք տեսնում ենք, որ հաւատքի սկիզբը եւ հիմքը ուղղափառ դաւանութիւնն է, որով էլ սկսւում է քրիստոնէական կեանքը՝ ըստ եկեղեցական վարդապետութեան:

Դաւանութեան մասին խօսելիս հարկ է նկատի ունենալ երկու կարեւոր հանգամանք. ա) դաւանական ճշմարտութիւնները յայտնութենական բնոյթ ունեն, այսինքն՝ տրուած են աստուածային յայտնութեամբ, բ) դրանք սահմանուած եւ եզրագծուած են Եկեղեցու կողմից՝ որպէս քրիստոնէական կրօնի էական դրոյթներ, որ անհրաժեշտ են փրկութեան համար: Իսկ դաւանութիւնը կամ դաւանանքը աստուածային յայտնութեամբ տրուած եւ Եկեղեցու կողմից սահմանուած կրօնական ճշմարտութիւնների ամբողջութիւնն է: Հայերէնում «դաւանութիւն» եզրը որոշ իմաստով համապատասխանում է յունարէն դոգմա (δόγμα) բառի յոգնակի ձեւին, որը սկզբնապէս գործածուել է որպէս այն, ինչ ճիշտ (լաւ) է թւում կամ կարծւում, սակայն հետզհետէ եկեղեցական աստուածաբանութեան մէջ բիւրեղացել է որպէս դաւանական դրոյթ կամ հաւատքի ճշմարտութիւն: Հայերէն եզրն, ի տարբերութիւն յունարէնի, գործածւում է միայն հաւաքական իմաստով:

Դաւանական խնդիրների հետ առնչուող աստուածաբանական ոլորտը կոչւում է դաւանական աստուածաբանութիւն (Dogmatic Theology):

Ըստ քրիստոնէական վարդապետութեան՝ դաւանութիւնն այն անսասան վէմն է, որի վրայ կառուցւում է հոգեւոր կեանքի շինութիւնը: Համաձայն Տիրոջ խօսքի՝ ուղղափառ դաւանութիւնն այն վէմն է կամ ամուր հիմքը, որի վրայ կառուցուած է Եկեղեցին (Մատթ. ԺԶ 18): Այդ Վէմը նաեւ Ինքը՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսն է, որով մարդկութեանը բացուեց աստուածդիտութեան եւ հաւատքի ճանապարհը [Ա Պետր. Բ 4-8]: Ուղղափառ դաւանութեանը (տեսական հաւատք) պէտք է անպայմանօրէն զուգակցել ուղղափառ կենցաղավարութիւն եւ աստուածպաշտական ճիգեր (գործնական հաւատք). տեսական եւ գործնական հաւատքի ճիշտ համադրութիւնը, ըստ Եկեղեցու հայրերի, հոգեւոր կեանքի եւ փրկութեան անհրաժեշտ նախապայմանն է:

«Ա՛յս է հաւատքը. որ մարդը հաւատայ ամենակալ Աստծուն, Ով արարեց երկինքն ու երկիրը, ծովը եւ այն ամէնը, ինչ նրանցում կայ: Ով արարեց Ադամին Իր պատկերով ու նմանութեամբ եւ տուեց Մովսէսի Օրէնքը, Իր Հոգուց առաքեց մարգարէների վրայ եւ յետոյ աշխարհ ուղարկեց Քրիստոսին: Որ մարդը հաւատայ մեռելների յարութեանը, հաւատայ Աւազանի մկրտութեան խորհուրդին. ա՛յս է Եկեղեցու հաւատքը: Որ մարդը հեռո՛ւ մնայ ժամանակները քննելուց, շաբաթապահ կրօններից եւ ամսագլուխ ու տարեկան տօներից[15], թովչութիւնից, աստղագուշակութիւնից, հմայութիւնից, կախարդութիւնից, հերձուածողական աղանդներից, չարի մեքենայութիւններից, խաբէական չար խօսքերից, հայհոյութիւնից, վաւաշոտ շնութիւնից, պիղծ երգերից, սուտ վկայութիւն տալուց եւ սուտ խօսելուց: Սրա՛նք են հաւատքի գործերը, որոնք դրուած են Վէմի վրայ, Որն Ինքը Քրիստոսն է, եւ Նրա վրայ են շինւում բոլոր շինուածքները:

15 Նկատի ունի հրէական ոչ աստուածահաճոյ պահքը, ամսական ու տարեկան զոհաբերութիւնները եւ տօնակատարութիւնները, ինչի մասին յաճախ խօսւում է մարգարէութիւնների մէջ [Ես. Ա 14, Եզեկ. ԻԳ 34, Ամովս Ե 21, Ողբք Բ 6]: Այս երեւոյթը որոշակիօրէն բնորոշ է եղել հեթանոսութեանը եւ ամենայն հաւանականութեամբ արմատացել է որոշ գնոստիկական եւ աղանդաւորական շարժումների մէջ, որոնց դէմ սուր պայքար է ծաւալել քրիստոնէութիւնը: Այս մասին է յիշատակում նաեւ ս. Կիւրեղ Երուսաղէմացին («Կոչումն ընծայութեան», Ա եւ ԺԵ ճառեր):

Եւ հաւատքի մասին, սիրելի՛, այլ շատ խօսքեր կան Սուրբ Գրքում, որի մասին շատից քիչը գրեցի քո սիրոյ յիշատակի համար, որպէսզի իմանաս եւ սովորեցնես, հաւատաս եւ հաւատացնես: Իսկ երբ կարդաս եւ ուսուցանես, կը նմանուես բարի հողին, որի մէջ բարի սերմեր ընկան, եւ նա պտղաբերեց հարիւրաւոր, վաթսունաւոր եւ երեսնաւոր արդիւնքով: Իսկ երբ գնաս քո Տիրոջ մօտ, Նա քեզ «լաւ եւ առաքինի ծառայ» կ՚անուանի քո պտղաբերած մեծ հաւատքի պատճառով, եւ կը մտնես քո Տէր Յիսուս Քրիստոսի արքայութեան մէջ»[16]:

Հայ Եկեղեցու դաւանութեան սկզբնաղբիւրները

Դաւանութեան աղբիւրը Եկեղեցու Սրբազան Աւանդութիւնն է, որի հեղինակն Աստուծոյ Սուրբ Հոգին է: Աստուած Ինքն է յայտնել Իրեն Իր Հոգու կենդանի ներգործութեամբ, եւ այդ յայտնութիւնն արտայայտուած է Աստուածաշունչ Գրքերով, Առաքելական Աւանդութեամբ, Սրբազան ծէսով, Եկեղեցու հայրերի եւ վարդապետների հոգեշունչ գրուածքներով, Տիեզերական ժողովների սահմանումներով եւն: Այդ յայտնութիւնը շարունակական է եւ ոչ թէ մէկ անգամ կատարուած իրողութիւն, որի մէջ մուտք գործելու (Եկեղեցի մտնելու) համար անհրաժեշտ է Սուրբ Հոգու հետ կենդանի եւ գոյաբանական հաղորդակցութիւն, որի նախահիմքն ուղղափառ դաւանութիւնն է:

Դաւանաբանութեան մէջ բարձրագոյն հեղինակութիւնը վերապահուած է Տիեզերական ժողովներին, որոնք Սուրբ Հոգու բացառիկ ներգործութեամբ սահմանել են Քրիստոսի Եկեղեցու ուղղափառ հաւատքը: Տիեզերական ժողովների կողմից ընդունուել են այսպէս կոչուած Հաւատոյ հանգանակներ կամ նշանակներ, որոնք դաւանութեան հակիրճ ձեւակերպումներ են: Հաւատոյ հանգանակը նաեւ կոչւում է «Հաւատամք» կամ «Խոստովանութիւն Հաւատոյ» կամ «Դաւանութիւն Հաւատոյ»: Այս իմաստով դաւանութիւնը ուղղափառ հաւատքի խոստովանութիւնն է, իսկ «դաւանել» նշանակում է ընդունել, խոստովանել եւ վկայել որպէս ճշմարտութիւն:

16 Գիրք, որ կոչի Զգօն՝ արարեալ սրբոյն Յակոբայ երիցս երանեալ հայրապետին Մծբին քաղաքի՝ ի խնդրոյ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին, սակս մանկանց նորոյս Սիովնի, Կ. Պոլիս, 1824, էջ 21-22

Պայքարելով զանազան աղանդաւորական շարժումների դէմ՝ Եկեղեցին մշտապէս կարիք է ունեցել նորոգելու եւ հաստատելու հաւատացեալ գիտակցութիւնը: Եկեղեցու հայրերի եւ վարդապետների կողմից աւանդուել է մեծածաւալ դաւանական ժառանգութիւն՝ ուղղափառ հաւատքն ուսուցանելու, բացատրելու, լուսաբանելու եւ մեկնելու համար: Այս ժառանգութիւնը Սուրբ Հոգով տրուած Սրբազան Աւանդութեան անբաժանելի մասն է:

Հայաստանեայց Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցին (նաեւ Արեւելեան միւս ուղղափառ եկեղեցիները)[17] որպէս տիեզերական է ճանաչում միայն Նիկիոյ (325 թ.), Կ. Պոլսի (381 թ.) եւ Եփեսոսի (431 թ.) եկեղեցական ժողովները, որոնք կոչւում են տիեզերական ժողովներ կամ տիեզերաժողովներ: Այսինքն՝ ուղղափառ հաւատքի գլխաւոր սահմանումները տրուած են միայն Երեք տիեզերաժողովների միջոցով, որոնց դաւանական որոշումների վրայ է կառուցուած Հայ Եկեղեցու դաւանական համակարգը:

Հայ Եկեղեցու դաւանաբանութեան կարեւորագոյն աղբիւրներից են մեծ տիեզերական սուրբերի՝ Դիոնեսիոս Արեոպագացու, Աթանաս Մեծի, Եփրեմ Ասորու, Կիւրեղ Երուսաղեմացու, Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Աստուածաբանի, Գրիգոր Նիւսացու, Եպիփան Կիպրացու, Յովհան Ոսկեբերանի, Կիւրեղ Ալեքսանդրացու դաւանական երկերը, որոնց աւանդների հիման վրայ զարգացել եւ ձեւաւորուել է հայ դաւանական միտքը: Կարեւոր աղբիւր է նաեւ Տիմոթէոս Կուզի հակաճառութիւնը, որը զգալի ազդեցութիւն է թողել հայ դաւանական մտքի ձեւաւորման վրայ: Նշանաւոր են «Կնիք Հաւատոյ» եւ «Գիրք Թղթոց» ժողովածուները: Հայ Եկեղեցու դաւանական համակարգը վերջնականապէս բիւրեղացաւ Յովհաննէս Օձնեցու, Խոսրովիկ Թարգմանչի, Գրիգոր Նարեկացու, Անանիա Սանահնեցու, Պօղոս Տարօնացու, Յովհաննէս Սարկաւագի, Ներսէս Շնորհալու, Մխիթար Գոշի, Վարդան Արեւելցու, Մխիթար Սասնեցու, Կիրակոս Երզնկացու, Ստեփանոս Օրբելեանի, Եսայի Նչեցու, Յովհան Որոտնեցու, Գրիգոր Տաթեւացու աշխատութիւնների շնորհիւ:

17 Արեւելեան Ուղղափառ եկեղեցիների (Oriental Orthodox Churches) ընտանիքը ներառում է Հայ, Ղպտի, Ասորական (ներառեալ Հնդիկ Մալաբար) եւ Եթովպական եկեղեցիները, որոնք վերը նշուած միասնական անուան տակ հանդէս են գալիս միջազգային ժողովներում:

Հայ դաւանական մտքի զարգացման պատմութեան մէջ առանձնայատուկ դեր է ունեցել Մանազկերտի ժողովը (726 թ.), որի ընդունած նզովքները ուղղափառ հաւատքի սահմանումներ են ընդհակառակից:

Հայ Եկեղեցում ծիսական կիրառութիւն ունի երեք հանգանակ, որոնք հակիրճ ներկայացնում են հայ հաւատքի կարեւորագոյն սկզբունքները: Առաջինը կոչւում է Նիկիական, սակայն իրենից ներկայացնում է Նիկիո-Կ. Պոլսեան մի խմբագրութիւն: Երկրորդը Գրիգոր Տաթեւացու խմբագրած հաւատքի խոստովանութիւնն է: Երրորդը Մկրտութեան արարողութեան մէջ գործածուող հակիրճ տարբերակն է: Դաւանական աղերսներով լի են նաեւ Հայ Եկեղեցու ծիսական մատեանները՝ «Շարակնոցը», «Ժամագիրքը», «Մաշտոցը» եւ «Պատարագամատոյցը»:

Հայ Եկեղեցու դաւանութեան կառոյցը

Հայ Եկեղեցու դաւանութիւնն ունի հետեւեալ կառոյցը.

Ա. Աստուած

Բ. Արարչագործութիւն

Գ. Փրկագործութիւն

ա) Քրիստոսաբանութիւն

բ) Սուրբ Հոգու տնօրինութիւն եւ Եկեղեցի

գ) Վախճանաբանութիւն

Դաւանութեան առաջին մասն Աստուծոյ, Նրա գոյութեան, ինքնութեան եւ ստորոգելիների մասին է: Երկրորդ մասն Աստուծոյ կողմից աշխարհի արարչագործութեան մասին է: Երրորդ մասն Աստուծոյ Միածին Որդու մարդեղութեամբ մարդկանց փրկագործելու մասին է: Փրկագործութիւնն իր հերթին եւս բաժանւում է երեք մասի: Փրկագործութեան, ինչպէս նաեւ դաւանութեան գլխաւոր թեման քրիստոսաբանութիւնն է, այսինքն՝ թէ ինչպէս պէտք է խոստովանել Մարմնաւորուած Աստուծոյ Որդուն՝ Յիսուս Քրիստոսին: Այս մասին որոշակիօրէն ասում է ս. Աթանասը. «Քրիստոնէութեան անունը Քրիստոսին ճշմարիտ դաւանելն է, եւ քրիստոնեայ է անուանւում նա, ով ունի ճշմարիտ դաւանութիւնը»[18]: Փրկագործութեան երկրորդ մասը, որ կոչ-

18 Ս. Աթանաս Աղեքսանդրացի, Ճառք, թուղթք եւ ընդդիմասացութիւնք, Վենետիկ, 1899, էջ 240

ւում է Սուրբ Հոգու տնօրինութիւն եւ Եկեղեցի, Յիսուս Քրիստոսի փրկագործութեան շարունակութեան մասին է Հոգեգալուստից մինչեւ շարունակական ներկայ: Իսկ երրորդ մասը՝ վախճանաբանութիւնը, գալիք իրադարձութիւնների մասին է:

Դաւանաբանութեան առանձին մասեր են կազմում նաեւ Սուրբ Հոգու տնօրինութեան եւ եկեղեցաբանութեան մաս կազմող մի շարք կարեւոր խնդիրներ, ինչպիսիք են շնորհը, Եկեղեցու սրբազան խորհուրդները, ծիսական աստուածպաշտութիւնը, աղօթքը եւն:

Հայ դաւանական գրականութեան անբաժանելի մաս են կազմում այսպէս կոչուած «դաւանութիւն հաւատոյ» կամ «խոստովանութիւն հաւատոյ» ժանրի գործերը: Սրանք ունեն որոշակի ամփոփ խոստովանական ոճ եւ իրենցից ներկայացնում են հաւատքի հիմնական դրոյթների դրական, ոչ հակաճառական շարադրանք: Սակայն գրեթէ իւրաքանչիւր դաւանական երկ, լինի հակաճառութիւն, թուղթ կամ մեկնութիւն, ունի այս բնոյթի ժանրային հատուածներ: Ժամանակ առ ժամանակ հարկ է եղել ամփոփ կերպով ի մի բերել հաւատքի դաւանութեան բոլոր հիմնական սկզբունքները որոշակի անհրաժեշտ ծաւալումներով: Այսպիսի երկերն ի յայտ են եկել ոչ միայն ուղղափառ գիտակցութեան հաստատման համար, այլեւ պատասխանելու մեր դէմ ուղղուած դաւանական ոտնձգութիւններին եւ մեղադրանքներին: Իւրաքանչիւր ժամանակաշրջան ունեցել է իր հարցադրումները, եւ հարկ է եղել պատասխանել այդ հարցերին:

Նկատի ունենալով, որ այսօր նոյնպէս մեծ անհրաժեշտութիւն կայ վերահաստատուելու մեր հայրերի ուղղափառ վարդապետութեան մէջ եւ պաշտպանելու մեր լուսաւոր հաւատքի ճշմարտութիւնը՝ երկու տարի առաջ, անսալով Ն. Ա. Տ. Մեսրոպ Բ Կ. Պոլսոյ Հայոց պատրիարքի յորդորին, ձեռնամուխ եղանք կազմելու հաւատքի դաւանութեան մի ամփոփ խոստովանութիւն, որը կոչեցինք «Դաւանութիւն հաւատոյ»: Այս խոստովանութիւնը մեր հայրերի դաւանական խօսքերի ուղղակի եւ անուղղակի վերաշարադրանք է՝ անհրաժեշտ նուազագոյն շաղկապումներով: Մեր նպատակն է եղել անաղարտօրէն ներկայացնել Հայ Եկեղեցու ուղղափառ հաւատքի իսկութիւնը՝ ըստ մեր հայրերի լուսաւոր ուսուցումների: Հաւատքի այս խոստովանութիւնը ներկայացուած է սոյն հատորի սկզբում անգլերէն եւ ռուսերէն թարգմանութիւններով հանդերձ:

Աղբիւրներ

The Armenian version of the works attributed to Dionysius the Areopagite, ed. by Robert W. Thomson, Lovanii, 1984

J. P. Migne, PG, t. 7

Սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի Յաճախապատում ճառք եւ աղօթք, Ս. Ղազար, 1954

Ս. Աթանաս Աղեքսանդրացի, Ճառք, թուղթք եւ ընդդիմասացութիւնք, Վենետիկ, 1899

Ս. Կիւրեղ Աղեքսանդրացի, Գիրք Պարապմանց, Կ. Պոլիս, 1717

Տիմոթէոս Կուզ, Հակաճառութիւն առ սահմանեալսն ի ժողովոյն Քաղկեդովնի», Ս. Էջմիածին, 1908

«Կնիք հաւատոյ», Ս. Էջմիածին, 1914

«Գիրք Թղթոց», Թիֆլիս, 1901

Յովհաննու Իմաստասիրի Աւանդեցւոյ մատենագրութիւնք, Վենետիկ, 1833

Խոսրովիկ Թարգմանիչ (աշխատ. Գարեգին վարդապետ Յովսէփեան), Վաղարշապատ, 1899

Ս. Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, Երեւան, 1985

Անանիա Սանահնեցի, «Գանձասար» Ա-Զ

Յովհաննէս Սարկաւագ, Յաղագս նշանակի հաւատոյ նիկիականն ՅԺԸ-ի՛ցն, Վենետիկ N 504

Պօղոս Տարօնացի, Ընդդէմ հերձուածողաց, ՄՄ N 6907

Ս. Ներսէս Շնորհալի, Ընդհանրական թուղթք, Երուսաղէմ, 1871

Մխիթար Գոշ, Թուղթ առ վրացիսն, «Գանձասար» Զ

Վարդան Արեւելցի, Դաւանութիւն հաւատոյ, ՄՄ N 8132

MXIT'AR SASNEC'I'S Theological Discourses, edited by S. Peter Cowe, Lovanii, 1993

Կիրակոս Երզնկացի, Թուղթ առ կարնեցիս, Գանձասար Զ, Թուղթ առ ուղղափառ հաւատացեալսն, ՄՄ N 2542

Ստեփանոս Օրբելեան, Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց, Կ. Պոլիս, 1756

Եսայի Նչեցի, Դաւանութիւն եւ խոստովանութիւն ի Սուրբ Երրորդութիւնն՝ ասացեալ Եսայի Վարդապետի ի յԵզր Վիրապին ի հաստատութիւն ուղղափառաց եւ ի յանդիմանութիւն չարափառաց, ՄՄ N 614

Ս. Յովհան Որոտնեցի, Դաւանութիւն հաւատոյ, ՄՄ N 557

Գիրք հարցմանց երիցս երանեալ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Տաթեւացւոյն, Կ. Պոլիս, 1729

Գիրք քարոզութեան, որ կոչի Զմեռան հատոր՝ արարեալ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Տաթեւացւոյն, Կ. Պոլիս, 1740

Գիրք քարոզութեան, որ կոչի Ամառան հատոր՝ արարեալ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Տաթեւացւոյն, Կ. Պոլիս, 1741

Հրաչ Բարթիկեան

ՀԱՅ-ԲԻԶԱՆԴԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՊԱՏՐԻԱՐՔՆԵՐ ԳԵՐՄԱՆՈՍ Բ-Ի (1222-1244) ԵՒ ՄԱՆՈՒԷԼ Բ-Ի (1244-1255) ԹՂԹԵՐԸ ՀԵԹՈՒՄ Ա ԹԱԳԱՒՈՐԻՆ ԵՒ ԿՈՍՏԱՆԴԻՆ Ա ԲԱՐՁՐԱԲԵՐԴՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Վերջերս լոյս տեսած մեր մի յօդուածում[1] մանրամասն խօսւում էր Քաղկեդոնի ժողովից (451 թ.) յետոյ հայ եւ յոյն եկեղեցիների միջեւ բացուած վիհի, այն կամրջելու բազմաթիւ փորձերի մասին՝ յիշեալ եկեղեցիների միութիւնը գլուխ բերելու ուղղութեամբ տեղի ունեցած բազում բանակցութիւններում: Այս դաւանական խնդրին ժամանակ առ ժամանակ աղերսուել են տարբեր քաղաքական նպատակներ: Այդ իրողութիւնն ակնյայտ էր դեռեւս Բագրատունեաց Հայաստանի գոյութեան առաջին տասնամեակներում[2], բայց աւելի ցցուն երեւաց Կիլիկիայի հայկական պետութեան գոյութեան ընթացքում: Սոյն յօդուածի նիւթին վերաբերող ժամանակաշրջանը նկատի ունենալով՝ դեռեւս Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեանը գրել է. «Կոստանդնուպոլսի պատրիարք Գերմանոսի՝ հայերուն մօտենալը եւ անոնց հետ միաբանական բանակցութեան մտնելը... աւելի քաղաքական նպատակ ունէին, եւ եկեղեցական ձեւը քաղաքականին հասնելու միջոց էր միայն»: Անդրադառնալով հայերի նպատակներին՝ նա ընդգծում էր. «Հայերուն՝

1 Հ. Բարթիկեան, Կիլիկեան Հայաստանի եւ Բիւզանդական կայսրութեան եկեղեցական փոխյարաբերութիւնները եւ դրանց քաղաքական ծալքերը, «Աշտանակ», թիւ Ա, Երեւան, 1995, էջ 112

2 Հ. Բարթիկեան, Կոստանդնուպոլսի պատրիարք Նիկողայոս Միստիկոսի 101-րդ եւ 139-րդ թղթերը՝ ուղղուած Յովհաննէս Դրասխանակերտցուն եւ Սմբատ Ա Թագաւորին, ՊԲՀ, թիւ 4, Երեւան, 1966, էջ 251-256

յոյներուն հետ բանակցութեան սկսիլը նշան է այն անտարբեր ըմբռնումին, զոր հայեր ունեցան եւ ունէին միշտ իրենց միաբանական ձգտումներուն մէջ պարզապէս զօրաւոր քրիստոնեայ նեցուկ մը գտնելու դիտումով, եւ ոչ թէ միոյն կամ միւսին ճշմարիտ ուղղափառութիւնը ճանչնալով»:[3]

Բնական է՝ այդ փորձերը հէնց սկզբից դատապարտուած էին անյաջողութեան, քանզի որեւէ դաւանաբանական կամ ծիսական զիջում բիւզանդական եկեղեցուն ընդհանրապէս, եւ մասնաւորապէս հայոց պետականութեան Կիլիկեան շրջանում, առաջացնում էր հզօր ընդդիմութիւն հայ հոգեւորականութեան եւ ժողովրդի լայն խաւերի կողմից անգամ այն դէպքում, երբ ժամանակաւոր եւ առերես միութիւնը եւ չնչին ծիսական զիջումները թերեւս կարող էին ապահովել Բիւզանդիայի (այլ դէպքերում՝ նաեւ Արեւմուտքի) ռազմական օգնութիւնը Հայաստանին սպառնացող հարեւան մահմեդական պետութիւնների վտանգի առկայութեան պայմաններում:

Առաջին կաթողիկոսը Կիլիկիայում, որ ձգտում էր բիւզանդական եկեղեցու հետ սերտ յարաբերութիւններ հաստատել, Գրիգոր Բ Վկայասէրն էր: Նրա այդ գործունէութիւնը շարունակեց ս. Ներսէս Շնորհալին, երբ դեռ եպիսկոպոս էր: Նա առաջինն էր նաեւ Կիլիկիայում, որ բիւզանդացիներին ներկայացրեց «Գիր հաւատոյ խոստովանութեան Հայաստանեայց եկեղեցւոյ»-ն, որտեղ շարադրուած էին Հայ Եկեղեցու դաւանանքն ու ծիսակարգը:

Մեր վերոյիշեալ յօդուածում ընթերցողների ուշադրութիւնն էինք հրաւիրել մի հետաքրքիր հանգամանքի վրայ: Թէեւ բիւզանդական կայսրերի եւ Կոստանդնուպոլսի պատրիարքների՝ հայոց կաթողիկոսներին եւ թագաւորներին ուղղած նամակներում յիշւում են վերջիններիս՝ իրենց ուղարկուած նամակների մասին, որտեղ խօսք էր լինում եկեղեցիների միութեան մասին, սակայն այդ նամակներից եւ ոչ մէկի հայկական բնագիրը կամ պատճէնը չի պահպանուել: Ճիշտ է, պահպանուել են ս. Ներսէս Շնորհալու եւ Գրիգոր Տղայի նամակները, որոնցում, թէեւ խօսւում է միութեան ցանկալի լինելու մասին, բայց ակնարկ անգամ չկայ, որ հայոց մեծամեծերը համաձայն են յունական եկեղեցու դաւանանքն ընդունելուն[4]:

3 Մ. Օրմանեան, Ազգապատում, Կ. Պոլիս, 1912, հ. Բ, էջ 1616-1617

4 «Աշտանակ» Ա, էջ 116

Հայոց կողմի՝ բիւզանդական կայսրերին եւ Կոստանդնուպոլսի պատրիարքներին ուղարկած նամակների հայերէն բնագրերի բացակայութիւնը եւ բիւզանդական կայսրերի ու Կոստանդնուպոլսի պատրիարքների՝ հայերին ուղղած յունարէն բնագրերի՝ հայ հետազօտողներին անծանօթ մնալը հայ-բիւզանդական եկեղեցական յարաբերութիւնների մի ամբողջ շրջան հայագիտութեան համար անյայտ են թողել: Մաղաքիա Օրմանեանը ցոյց է տալիս, որ Մանուէլ կայսեր մահից (1180 թ.) յետոյ «յոյներու հետ միութենական բանակցութիւնները վերջնականապէս փակուեցան: Ալեքսիոս Մանուկ (1180-1183) եւ Անդրոնիկոս Բռնակալ (1183-1185) կայսրերը կարող իսկ չէին այսպիսի խնդիրներով զբաղիլ, Իսահակ Անգեղոսն ալ, 1185-ին գահակալելով, բոլորովին տարբեր ուղղութիւն բռնեց՝ ոչ եւս բանակցելով եւ համաձայնելով, այլ բռնութեամբ եւ ուժգնութեամբ հայերը քաղկեդոնականութեան հպատակեցնելով»[5]: Մ. Օրմանեանի եզրակացութիւնը որդեգրեց եւ Կիլիկիայի պատմութեան մեծ գիտակ Գրիգոր Միքայէլեանը[6]:

Յոյների հետ միութենական բանակցութիւնների՝ ամենեւին էլ չփակուելու մասին մենք առաջին անգամ ցոյց տուեցինք՝ հրատարակելով Իսահակ Անգելոս կայսեր՝ յունարէն բնագրով պահպանուած պատասխան նամակը Գրիգոր Տղայ կաթողիկոսին[7]: Նամակից պարզւում է, որ հայոց կաթողիկոսը Իսահակ Անգելոսին ուղարկել է երկու նամակ՝ «մէկը գրուած քո՝ հայերէն լեզուով, իսկ միւսը՝ արաբերէն: Այդ երկու նամակով,- շարունակում է կայսրը,- մի բան յայտնեցիր, որ վառւում է քո սիրտը մեզ հետ միանալու սիրով..., որ դու քեզ վրայ ես վերցնում այնքան ճանապարհ կտրելով մեզ մօտ գալու յոգնութիւնը: ...Դու գրել էիր նաեւ, որ եթէ նոյնիսկ կարող է ճանապարհին յոգնութիւնից վախճանուես, այդ դէպքում եւս չես վարանի կեանքից զրկուելու գնով քեզ ենթակայ ժողովրդին փրկել եւ նրան մեզ հետ միացնել, որպէս բարի հովիւ...»[8]:

5 *Մ. Օրմանեան, Ազգապատում, հ. Ա, էջ 1482*

6 Г. Микаелян, История Киликийского армянского государства, Ереван, 1952, стр. 138

7 *Հ. Բարթիկեան, Նոր նիւթեր Կիլիկիայի հայկական պետութեան եւ Բիւզանդիայի փոխյարաբերութիւնների մասին, «Բանբեր Մատենադարանի», թիւ 4, Երեւան, 1958, էջ 288-290*

8 *Նոյն տեղում, էջ 288*

Հայ-Յունական եկեղեցիների միութեան բանակցութիւնները շարունակուեցին Իսահակ Անգելոսի թագաւորութիւնից յետոյ էլ: Ձեռքի տակ ունեցած աղբիւրների հիման վրայ կարելի է առայժմ խօսել 1239-ից սկսածների մասին: Մ. Օրմանեանը գտնում է (առանց թուական նշելու), որ դրանք սկսուեցին Նիկիայի կայսր Յովհաննէս Վատացէսի գահակալումից (1222 թ.) եւ Գերմանոս Բ-ի աթոռակալութիւնից (1222 թ.) յետոյ[9]:

Որպէս աղբիւր նա նշում է Ղեւոնդ Ալիշանի «Սիսուանը»: Սակայն այնտեղ որեւէ աղբիւր յիշուած չէ, բուն տեքստում էլ հարցի մասին խօսք չկայ, միայն գրքի վերջում բերուած ժամանակագրական ցանկի մէջ 1239 թ. տակ գրուած է. «Գերմանոս պատրիարք Կ. Պոլսի բանագնաց լինի ընդ Հայս վասն միաբանութեան եկեղեցւոյ»[10]:

Ինչպէս պիտի տեսնենք, Գերմանոս պատրիարքը ամենեւին էլ Կիլիկիա չգնաց: Նա վախճանուեց յաջորդ տարի՝ 1240-ին:

1239 թ. տեղի ունեցած բանակցութիւնների մասին մանրամասն տեղեկանում ենք Գերմանոս Բ պատրիարքին յաջորդած Մանուէլ Բ-ի՝ (1244-1254 թթ.) Հեթում թագաւորին եւ Կոստանդին Բարձրաբերդցի կաթողիկոսին ուղարկած նամակից: Ձեռքի տակ ունենալով Մանուէլ պատրիարքի՝ դեռեւս անտիպ յունարէն նամակի պատճէնը՝ այդ հարցը քննութեան ենք առել վերը յիշուած մեր յօդուածում[11]: Բայց հարցն այն է, որ մեզ այնուհետեւ յաջողուեց ձեռք բերել իր՝ Գերմանոս Բ-ի նամակը Կոստանդին Բարձրաբերդցուն եւ «առաջին ձեռքից» իմանալ Մանուէլի նախորդի՝ Գերմանոսի օրօք տեղի ունեցածի մասին: Գերմանոս Բ-ի նամակը հրատարակել էր Սպ. Լագոպատէսը դեռ 1914-ին Պելոպոնէսի Տրիպոլիս քաղաքում, եւ այսօր այն հազուագիւտ է անգամ Յունաստանում[12]: Նամակից պարզւում է, որ եկեղեցիների միու-

9 *Մ. Օրմանեան, Ազգապատում, հ. Ա, էջ 1616-1617*

10 *Ղ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 554*

11 *Տե՛ս ծանօթ. 1:*

12 Σπ. Νικ. Λαγοπάτης, Γερμανός ὁ Β Πατριάρχης Κωνσταντινουπόλεως-Νικαίας (1222-1240). Βίος, συγγράμματα καί διδασκαλία αὐτοῦ, ἀνέκδοτοι Ὁμιλίαι καί Ἐπιστολαί τό πρῶτον ἐκδιδόμεναι, Ἐν Τριπόλει, 1914, σελ. 354-357 *(Սպ. Նիկ. Լագոպատէս, Գերմանոս Բ պատրիարք Կոստանդնուպոլսի-Նիկիայի (1222-1240): Կեանքը, երկերը եւ վարդապետութիւնը, առաջին անգամ հրատարակուող անտիպ ճառերն ու թղթերը, Տրիպոլիս, 1914, էջ 354-357)*

թեան հարցը բարձրացնողն ու նախաձեռնողը հայկական կողմն էր: Հեթում թագաւորը 1239 թ. կամ գուցէ մի փոքր աւելի առաջ դիմել էր Անտիոքի պատրիարքին, հաւանաբար Դորոթէոսին (1219-1245 թթ.), որպէսզի նա միջնորդի կայսերը՝ Յովհաննէս Վատացէսին (1222-1254 թթ.), եւ պատրիարքին՝ Գերմանոս Բ-ին, եկեղեցական միութիւնն իրականացնելու խնդրում: Անտիոքի պատրիարքը Նիկիայի[13] կայսեր եւ Գերմանոս պատրիարքի մօտ դեսպանութիւն էր ուղարկել Սկոպելոս[14] Թէոդոսիոսի վանքի վանահայր տէր Թէոդորետոսին եւ վանական Վասիլիոսին (Մանուէլ պատրիարքի նամակում կոչուած է Վլասիոս)՝ նրանց յանձնելով իր՝ Անտիոքի պատրիարքի նամակները, որոնցում ցոյց էր տրուած հայոց՝ յունական եկեղեցուն միանալու ցանկութիւնը: Մանուէլ պատրիարքի թղթի համաձայն՝ Գերմանոս պատրիարքը կայսեր իմացութեամբ մի նամակով Կիլիկիա է ուղարկում Մելիտենէի՝ «կիլիկեան իշխանութիւններին ծանօթ» Յովհաննէս մետրոպոլիտին: Վերջինս ժամանելով՝ յանձնում է նամակը, ստանում պատասխան նամակ, այդ թւում եւ հայոց հաւատքի խոստովանութեան «Գիրը»: Նամակում ասուած էր, թէ շուտով Հեթում թագաւորի կողմից ուղարկուելու են պատուիրակներ հայոց հաւատքի խոստովանութեան «Գրի» պատճէնով: Հայոց պատուիրակութիւնը գնաց Նիկիա: Կիրակոս Գանձակեցին, առանց թուականը նշելու, բայց նկատի ունենալով 1254 թ. առաջ տեղի ունեցած բանակցութիւնները, յիշում է, որ նրանց մասնակցել է Յակոբ վարդապետը (ապագայ կաթողիկոս Յակոբ Ա Կլայեցին 1268-

13 Ինչպէս յայտնի է, 1204 թ. խաչակրաց Դ արշաւանքի ժամանակ լատինները գրաւել էին Կոստանդնուպոլիսը: Բիւզանդական կայսրն ու Կոստանդնուպոլսի պատրիարքը հաստատուեցին Նիկիա քաղաքում մինչեւ 1261 թ., երբ բիւզանդացիները կարողացան ազատագրել մայրաքաղաքը եւ վերացնել լատինների տիրապետութիւնը: Ահա այդ պատճառով բիւզանդական կայսրութեան պատմութեան այս ժամանակաշրջանը յայտնի է որպէս Նիկիայի կայսրութիւն, իսկ պատրիարքը՝ Կոստանդնուպոլսի՝ Նիկիայի տիեզերական պատրիարք: Նիկիայի կայսրութեան հետ սերտ յարաբերութիւններ էր հաստատել Լեւոն Բ Ռուբինեանը: Նա քաղաքական նպատակներով խնամիացել էր Նիկիայի կայսրութեան առաջին թագաւոր Թէոդորոս Լասկարիսի հետ 1213 թ.՝ նրան կնութեան տալով իր եղբայր Ռուբէն Գ-ի դուստր Ֆիլիպինէին: Տե՛ս Հ. Բարթիկեան, Հայ-բիւզանդական նոթեր, Տեղեկագիր..., Երեւան, 1960, հ. 7-8, էջ 134-137:

14 Հիւսիսային Սպորադների կղզի, Եւբիայից հիւսիս: 378 թուականից եպիսկոպոսանիստ էր:

1286 թթ.)՝ «այր բանաւոր եւ իմաստուն, զոր յառաջագոյն առաքեալ էին վասն սիրոյ եւ միաբանութեան առ թագաւորն Յունաց Յովհաննէս, որ ունէր զկողմանս Ասիոյ եւ մեծացեալ էր յաւուրսն, եւ առ պատրիարքն Նոցուն»[15]:

Հարց է՝ Յակոբ վարդապետը Նիկիա գնաց Գերմանո՞ս, թէ՞ Մանուէլ պատրիարքի օրօք: Առաւել հաւանական է Մանուէլ պատրիարքի օրօք գնացած լինելը (1247-1248 թթ.):

Երկու խօսք Գերմանոսի նամակի բովանդակութեան մասին: Այստեղ, ինչպէս նախորդ դէպքերում, յունական կողմը նախ եւ առաջ քննադատում է հայոց դաւանաբանութիւնը: Թէեւ հայ եւ յոյն եկեղեցիների միջեւ աստուածաբանական ու ծիսական տարբերութիւնները քիչ չեն, սակայն այս նամակը հիմնականում քրիստոսաբանութեան մասին է:

Յիշեալ ժամանակաշրջանում եկեղեցիների միութեան այս առաջին փորձը Գերմանոս պատրիարքի մահուան պատճառով (1240 թ.) մնաց անարդիւնք: Յաջորդող դէպքերի մասին իմանում ենք Մանուէլ Բ պատրիարքի նամակից: Հայոց պատուիրակները գալիս են Նիկիա այն ժամանակ, երբ պատրիարքական աթոռը թափուր էր (1240-1244 թ.): Կայսրը հրաւիրում է եպիսկոպոսների ժողով, որոնք, ծանօթանալով հայոց հաւատքի խոստովանութեան «Գրին», Կիլիկիա են ուղարկում Մելիտենէի Յովհաննէս մետրոպոլիտին եւ բարձրաստիճան այլ անձանց՝ իրականացնելու համար եկեղեցիների միութիւնը: Յունական պատուիրակութիւնը Կիլիկիայից վերադառնում է ձեռնունայն, քանի որ ինչպէս պարզւում է Մանուէլ պատրիարքի նամակից, Կոստանդին կաթողիկոսը նախօրօք գնացել էր Հռոմկլա: Հեթում թագաւորն ասել էր բիւզանդական պատուիրակներին, թէ կաթողիկոսը բացակայում է, եւ առանց նրա եւ հայոց բոլոր եպիսկոպոսների կամքի հնարաւոր չէ միութիւնն իրականացնել: Դա ըստ երեւոյթին գործին ընթացք չտալու պատրուակ էր: Այդ ժամանակուանից, գրում է Մանուէլ պատրիարքը, անցան տարիներ: Հայերը 1247-1248 թթ. ձմռանը եկեղեցիների միութեան մի երրորդ փորձ կատարեցին: Նիկիա ժամանեցին հայոց պատուիրակները: Բիւզանդիան այս անգամ էլ եռանդագին լծուեց գործի՝ միու-

15 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն հայոց, աշխատասիրութեամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանեանի, Երեւան, 1961, էջ 365

Թիւնը իրականացնելու համար, եւ իր կողմից Կիլիկիա պատուիրակութիւն ուղարկեց Մելիտենէի արդէն մեզ ծանօթ մետրոպոլիտին, «որը եւ դրեց գործի սկիզբը», ապա Փիլադելփիայի[16] մետրոպոլիտ Փոկասին: Նամակից պարզ երեւում է, որ ոչ բոլոր հայերն էին միութիւնն ընդունում: Մանուէլի ասելով՝ Հեթումից հեռու ապրող հայերը (թերեւս՝ հայաստանցիները) «դեսուդէն են տարուբերւում եւ ընթացքի մէջ գտնուող միութիւնը չեն ընդունում»: Կայսրութեան՝ հայ-բիւզանդական եկեղեցիների ունիան յաջողեցնելու բուռն ցանկութեան մասին է վկայում այն ծայր աստիճան ստորաքարշ ու քծնող շեշտը, որ հանդիպում ենք Մանուէլ պատրիարքի նամակում: Հայոց Հեթում թագաւորին ու Կոստանդին Բարձրաբերդցի կաթողիկոսին, հայոց իշխանաւորներին, հայ կղերին, ժողովրդին ու բանակին նա դիմում է այնպիսի գերգերադրական ածականներով, որոնք չի կարելի գտնել անգամ յունարէն լեզուի ստուարածաւալ բառարաններում: Բիւզանդական նամակների ոճից հնարաւոր է որոշել նամակի գրութեան ժամանակ նամակագրի եւ հասցէատիրոջ երկրում՝ Բիւզանդիայում եւ Հայաստանում, տիրող քաղաքական իրադրութիւնը, այդ երկուսի ձգտումներն ու նկատառումները: Իսկ զուտ եկեղեցիների միութեան հարցին վերաբերող նամակում հայոց քաղաքական իշխանաւորների եւ բանակի յիշատակութիւնը լաւագոյն վկան է այդ յարաբերութիւնների յետեւում շղարշուած հեռու գնացող քաղաքական նպատակների: Մանուէլ պատրիարքը յոյս է յայտնում, որ այս անգամ միութիւնը պիտի կայանայ: Բայց միութեան՝ ե՛ւ այս, ե՛ւ յաջորդ[17] փորձերը յաջողութեամբ չպսակուեցին:

Արդ, ինչ եզրակացութեան կարելի է յանգել՝ ուսումնասիրելով այս նամակները եւ հայ-յոյն եկեղեցիների միութիւն ստեղծելու ուղղութեամբ հայոց քայլերն ընդհանրապէս: Ինչպէս երեւում է, դիմելով

16 Հին Լիւդիայի քաղաք, դեռ Կալիգուլայի օրօք կոչուեց Նեոկեսարիա (այժմ Ալաշեհիր): Յովհաննու «Յայտնութեան» մէջ (Ա 11) Ասիայի եօթ եկեղեցիներից (քրիստոնեայ համայնքներից) մէկն էր: Միւսներն էին՝ Եփեսոսը, Զմիւռնիան, Պերգամոնը, Թիւատիրան, Սարդիկէն եւ Լաւոդիկիան:

17 Պահպանուել են 1323-1334 թթ. միջեւ գրուած Կոստանդնուպոլսի Եսայաս պատրիարքի նամակները Կոստանդին Դ կաթողիկոսին եւ Լեւոն Ե թագաւորին դարձեալ եկեղեցիների միութեան հարցով: Տե՛ս Հ. Բարթիկեան, Նոր նիւթեր, էջ 209-295:

Բիւզանդիային եկեղեցիների միութեան խնդրով, լինելով հարցը բարձրացնողներն ու նախաձեռնողները, հայերը զգուշանում էին բիւզանդական կողմի խիստ միակողմանի դիրքորոշումից: Յոյները որեւէ դաւանական զիջման չէին գնում եւ հայերին համարում էին հերետիկոսներ, որոնք պէտք է անվերապահօրէն ընդունեն Քաղկեդոնը: Հայերը, տեսնելով բիւզանդական կողմի կարծր դիրքորոշումը դաւանական խնդիրներում եւ գիտակցելով սեփական դաւանութեանը հարազատ մնալու անհրաժեշտութիւնը, յոյս էին տածում փոքր զիջումների գնով գոնէ ժամանակաւորապէս ապահովել տուեալ պահի իրենց քաղաքական ու ռազմական պահանջները: Էական զիջումների մասին խօսք անգամ լինել չէր կարող: Դարեր շարունակուող դաւանական պայքարն առաւել եւս ամրապնդել ու բիւրեղացրել էր սեփական արժէքների համակարգը հայ հասարակութեան ամենատարբեր խաւերի մէջ, եւ որեւէ մէկը, ով կը փորձէր գնալ յոյն կամ լատին եկեղեցիներին ենթարկուելու քայլին, նախօրօք դատապարտուած էր կատարեալ ձախողման:

Նոյն 1248-ին, երբ (հաւանաբար հայոց կողմի նախաձեռնութեամբ) այս անգամ Հռոմի հետ եկեղեցիների միութիւն ստեղծելու փորձ կատարուեց, եւ Հռոմի պապը ջանաց իր դաւանանքը տարածել հայոց մէջ, Կոստանդին Ա Բարձրաբերդցի կաթողիկոսը վճռականօրէն ընդդիմացաւ դրան: Հեթում Ա թագաւորին գրած նամակում նա դատապետեց պապի դաւանաբանական ու ծիսական հայեացքները: Քանի որ Կոստանդին Բարձրաբերդցու՝ Հռոմի պապի դաւանանքի ու ծիսական պահանջների առնչութեամբ արտայայտած կարծիքները պիտի նոյնական լինէին Կոստանդնուպոլսի նման պահանջներին, աւելորդ չենք համարում բերել Հեթում թագաւորին կաթողիկոսի գրածը, որից յստակ երեւում է հայոց հոգեւոր իշխանաւորների անդրդուելիութիւնն այս հարցում.

«Սուրբ թագաւոր ամենայն Հայոց, յառաքեալ գրոյ քո ծանեաք զքոյին հրամանսն, զոր հրամայել էիք քաղցր եւ կակղագոյն առնել զպատասխանիսն թղթի պապուն եւ նրբապէս առնդ Տիմանչիդ, որ առաքեցաւ ի պապէն գտանել զմեզ յետ Ռ, եւ Մ, եւ ԽԸ (1248) ամի գտանելոյս մերոյ ի Տեառնէ: Կարծես զՀայոց եկեղեցին աղքատ ի գիտութենէ. եւ յայս գիրս գտաք ԺԵ սխալ եւ անընդունակ բան խառնեալ ընդ ճշմարիտն. է, զոր իմանալով եւ ի չար կամաց են գրել, եւ է, զի չեն կարացել տեսանել զթիւրն...: Զայս ամէնս կամէաք ասել ընդ

իւրենք. եւ ի քո հրամանացդ արգելաք, եւ թէ ջանացել էին կարկատել զիւրեանց բանն, եւ մեզ չէր պակաս Աստուծոյ ողորմութեամբն ճշմարտութիւնն զոր տուեալ էաք ի դէմ: Դուք թէ պատեհ տեսնոյք, յայտնեցէք իւրենց զոր կամիք, ապա կեցիք մինչ զամէն զոր կամին ասել՝ ասեն, եւ մեզ իմացնէք որ զայն այլ իմանանք: ...Ապա զիւրեանց արուեստակեալ առասպելսն իսկի չընդունիմք, այլ եւ արհամարհեմք, եւ չիշխեն ի վերայ մեր ամենեւին, ոչ վասն դոցա ելնեմք յաշխարհականացն սիրոյ: Թէ ընդ քեզ հաւատ հարցանեն եւ պահանջեն, դու հրամայէ, թէ՝ ես զիմ առաջնորդացն ունիմ հաւատս եւ զիմ եկեղեցւոյն. եւ նոցա պարտիմ համարս տալ եւ ո՛չ ձեզ: Ո եւ Ի (620) գաւառ են Հայք յերզնկայէն ի վեր, եւ կան, որ աւեր են, եւ կան, որ ի ծառայութեան (Թուրքի - Հ. Բ.). Թէ կու ցաւին ընդ Հայոց, թող երթան ազատեն»[18]:

Արդեօ՞ք 1248 թ. Բիւզանդիայի եւ Հռոմի՝ Կիլիկիայում միաժամանակ ծաւալած, կարելի է ասել, դիւանագիտական քայլերը (որոնց նախաձեռնողը Կիլիկիայի աշխարհիկ եւ եկեղեցական ղեկավարներն էին) ժամանակի առումով պատահական զուգադիպութիւն էին կամ մէկը միւսին կանխելու եւ երկրում իրենց ազդեցութիւնը տարածելու փորձեր, թէ՞ Կիլիկիայի հայոց ղեկավար աւագանու դիւանագիտական քայլեր: Լեւոն Բ-ի՝ թագաւոր հռչակուելու նախօրէին, երբ վերջինս պատուիրակութիւն ուղարկեց Հենրիկոս Զ կայսեր մօտ՝ թագ խնդրելու, Ալեքսիոս Գ Անգելոսը ստիպուած եղաւ նոյնն անել. «Եւ լուեալ կայսերն յունաց, եթէ փանկք ետուն թագ Լեւոնի, առաքեաց եւ նա ընծայս եւ թագ գեղեցիկ՝ ոսկւով եւ ակամբ պատուականօք ընդելուզեալ, եւ ասէ. «Զթագն Հռոմայեցւոց մի՛ դիցես ի գլուխ քո, այլ զմերդ, զի առ մեզ հուպ ես քան թէ ի Հռոմ»: Իսկ թագաւոր Լեւոն այր իմաստուն էր, ոչ խոտեաց եւ զմի ոք յերկոցունց թագաւորացն զՀռոմայն կամ զԿոստանդնուպօլսեան»[19]:

Այժմ մի քանի խօսք Մանուէլ պատրիարքի՝ հայոց Հեթում արքային եւ Կոստանդին Բարձրաբերդցի կաթողիկոսին ուղարկած անտիպ նամակը բովանդակող երկու ձեռագրերի՝ Բաւարական արքայական գրադարանի թիւ 207 յունարէն[20] եւ Վատիկանի առաքելական գրադարանի թիւ 77 ձեռագրերի մասին[21]:

Թիւ 207 յունարէն ձեռագրի՝ Մանուէլ Բ պատրիարքի նամակը բովանդակող թերթերի լուսապատճէնները ստացել ենք պրոֆ. Աթանասիոս Կամբիլիսի (Athanasios Kambylis, Համբուրգ) օգնութեամբ: Ձեռագիրը գրուած է ԺԵ դարում, ստուար, հարթ թղթի վրայ: Թուղթը խունացած է: Վերնագրերն ու սկզբնատառերը գրուած են կարմիր թանաքով, տեքստը՝ փոքր ու գեղեցիկ տառերով, առատ են հապաւումները: Մատեանը բաղկացած է 230 թերթից: Վատ է պահպանուած, գրութիւնը մասամբ ջնջուած է: Մատեանում հանդիպում են հայագիտութեան համար հետաքրքրութիւն ներկայացնող բազմաթիւ գործեր: 5-7-րդ թերթերը բովանդակում են «Διήγησις»-ը՝ գիտութեանը յայտնի որպէս «Narratio de Rebus Armeniae»՝ շուրջ 700 թուականին հայերէն գրուած եւ միայն յունարէն թարգմանութեամբ պահպանուած հայ-քաղկեդոնիկ արժէքաւոր սկզբնաղբիւրի տեքստը[22]: 8-13-րդ թերթերում առկայ է «Թուղթ, որ բովանդակում է հաւատոյ ուղիղ ու անթերի խոստովանութիւնը, որ առաքուեց երանելի հայր Թովմայի՝ Երուսաղէմի պատրիարքի կողմից Հայաստանի հերձուածողներին, գրուած արաբերէն Կարոնի եպիսկոպոս Թէոդորոսի (մականունը Աբուկարա կոչուածի) կողմից, իսկ իմ՝ նուաստիս՝ Միքայէլիս, Երուսաղէմի առաքելական աթոռի սինկելոսի կողմից [յունարէն] թարգմանուած, որի կողմից էլ ուղարկուեց: Այն բովանդակում է միակ ճշմարիտ՝ Քաղկեդոնում գումարուած ժողովի՝ Քրիստոսի՝ մեր Աստուծոյ վերաբերեալ ընդունած

18 Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 504-508

19 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, էջ 158

20 Catalogus Codicum Manuscriptorum Bibliothecae Regiae Bavaricae, sub auspiciis Maximiliani Iosephi Boioariae Regis, edidit notisque illustravit **Io. Christoph. L. Baro de Aretin**, Bibliothecae Regiae Praefectus. Voluminis Primi, codices graecos ab **Ign. Hardt** eiusdem Bibliothecae subpraefecto recensitos complexi, tom II, Monachii 1806

21 Bibliothecae Apotolicae Vaticanae Codices Manuscripti recensiti iubente Leone XIII Pont. Max. Codices Manuscripti graeci Ottoboniani Bibliothecae Vaticanae descripti Praeside Alphonso Cardinali Capecelatro archiepiscopo Capuano S.R.E. Bibliothecario, recensuerunt E. Feron et F. Battaglini, Romae, 1893

22 Թարգմանուած է հայերէն: Տե՛ս Հ. Բարթիկեան, «Narratio de Rebus Armeniae» յունարէն թարգմանութեամբ մեզ հասած հայ-քաղկեդոնական սկզբնաղբիւր, Բանբեր Մատենադարանի, Երեւան, 1962, հ. 6, էջ 457-470:

որոշումը»: Սոյն գրութիւնը յիշում է Վարդան Արեւելցին. «Յաւուրսն յայնոսիկ (Լեւոն Ե-ի 813-820 թագաւորութեան վերջում կամ Միքայէլ Բ-ի 820-829 սկզբում) գայր եպիսկոպոս մի Ապիկուռայ անուն առ Աշոտ եւ ջանայր դարձուցանել զնա յաղանդն Քաղկեդոնի, զոր լուեալ Բիւրատ ոմն վարդապետ ի Միջագետս՝ առաքէ զսարգաւագն Նանայ, որոյ եկեալ մարտնչի ընդ Ապիկուռայ եւ յաղթէ նմա զօրութեամբն Սուրբ Հոգւոյն: Եւ հալածէ զնա իշխանն եւ հաստատի եւս առաւել ի հաւատս սրբոյն Գրիգորի»[23]:

Մատեանի 14-16-րդ թերթերը բովանդակում են Գերմանոս Բ պատրիարքի նամակը Կոստանդին Բարձրաբերդցի կաթողիկոսին (Սպ. Լագոպատէսի հրատարակութիւնը սրա հիման վրայ է կատարուած), որի յունարէն բնագիրը եւ մեր հայերէն թարգմանութիւնը բերւում է ստորեւ:

16-18-րդ թերթերում գտնւում է «Հայոց Եկեղեցու կաթողիկոս տէր Կոստանդինի հրամանով գրուած եւ սրբազնագոյն պատրիարք տէր Գերմանոսին հասցէագրուած Հայոց Եկեղեցու հաւատքի խոստովանութեան գրի քննութիւնը, որ կատարուեց Կոստանդնուպոլսի պատրիարքական աթոռին ենթակայ եպիսկոպոսների կողմից (տէր Գերմանոսի) ի Տէր հանգչելուց յետոյ»:

19-21-րդ թերթերում գտնւում է Կոստանդնուպոլսի պատրիարք Մանուէլի թուղթը՝ ուղարկուած Հայոց թագաւոր Հեթումին եւ Կոստանդին Բարձրաբերդցի կաթողիկոսին: Առաջին անգամ մեր կողմից հրատարակուող թղթի յունարէն բնագիրը եւ նրա հայերէն թարգմանութիւնը բերւում են ստորեւ:

Այնուհետեւ մատեանում բերուած են դաւանաբանական բովանդակութեամբ բազմաթիւ թղթեր՝ բիւզանդական կայսրերի, Կոստանդնուպոլսի, Ալեքսանդրիայի պատրիարքների, Հռոմի պապերի, յունական եկեղեցու հայրերի եկեղեցական ժողովների առանձին կանոններ եւ դրանց մեկնութիւնները, Սոկրատ Սքոլաստիկոսի եկեղեցական պատմութեան 35-րդ գլուխը, Զենոնի «Հենոտիկոնը» եւ այլն:

23 Մեծի Վարդանայ Բարձրբերդեցւոյ Պատմութիւն տիեզերական, Մոսկուա, 1861, էջ 107-108: Տե՛ս նաեւ Ն. Ակինեան, Թէոդորոս Աբուկուրա եւ Նանայ Ասորի, Վիեննա, 1922

Վատիկանի առաքելական գրադարանի թիւ 77 ձեռագիրը[24] համապատասխանում է թիւ 207 ձեռագրի բովանդակութեանը:

Ստորեւ բերւում են Կոստանդնուպոլսի պատրիարքներ Գերմանոս Բ-ի եւ Մանուէլ Բ-ի նամակների յունարէն բնագրերը՝ առաջինը Կոստանդին Բարձրաբերդցուն, երկրորդը Հեթում Ա թագաւորին եւ Կոստանդին Բարձրաբերդցուն ուղղուած: Գերմանոս Բ-ի նամակը բերուած է Սպ. Լագոպատէսի հազուագիւտ հրատարակութիւնից, երկրորդը՝ մեր վերծանած յունարէն երկու ձեռագրերից: Զուգահեռ տրւում է այդ նամակների մեր թարգմանութիւնը:

24 Այս թղթեայ ձեռագիրը բաղկացած է 198 թերթից, որոնցից առաջին երեքը պակասում են: Գրուած է ԺԷ դարում: Մատեանի 5-12 թերթերում բերուած է «Narratio de Rebus Armeniae»-ն, Երուսաղեմի պատրիարք Թովմայի՝ «Հայաստանի հերձուածողներին» ուղղուած Քաղկեդոնի հաւատոյ խոստովանութիւնը բովանդակող թուղթը (Աբուկարայի կողմից արաբերէն գրուած եւ Կարոնի եպիսկոպոս Թէոդորոսի կողմից յունարէն թարգմանուած): Ձեռագրում առկայ նաեւ՝ Կոստանդնուպոլսի պատրիարք Գերմանոս Բ-ի նամակը Կոստանդին Բարձրաբերդցի կաթողիկոսին, վերջինիս՝ Գերմանոս պատրիարքին շարադրած Հայոց հաւատի խոստովանութեան «Գրին» պատրիարքի մահից յետոյ Կոստանդնուպոլսի եպիսկոպոսների գրած պատասխան նամակը, Կոստանդնուպոլսի պատրիարք Մանուէլի թուղթը Հայոց թագաւոր Հեթումին եւ Կոստանդին կաթողիկոսին, Հռոմի Մարտինոս պապի հրամանով գումարուած եկեղեցական ժողովի արձանագրութիւնների սկիզբը եւ այլ նիւթեր:

Ա

Նոյնի՝ [Գերմանոս պատրիարքի] նամակը համայն տիեզերքի Հայոց Եկեղեցւոյ վեհափառ կաթողիկոսին, իմաստութեամբ եւ խոհեմութեամբ բարեզարդեալ տէր Կոստանդինին[1]

Ա. Թող ցնծայ այսօր երկինքը, հրճուի երկիրը, առաւել եւս փառաւորուի եւ մեծարուի երկնքի ու երկրի հրաշագործ Արարիչը: Եթէ մէկ մեղաւորի համար, որ ապաշխարում է եւ դարձի գալիս դէպի ճշմարիտ ճանապարհ, ուրախութիւն է երկնքում՝ ըստ մեր ճշմարիտ Աստուծոյ՝ Յիսուս Քրիստոսի անսուտ խօսքի [Ղուկ. ԺԵ 7], ապա որքան աւելի՝ ազնիւ ու բազմամարդ, տիեզերքի բազում վայրերում սփռուած ազգի համար: Բանսարկուի[2] *նախանձի պատճառով մոլորական ճանապարհով ընթանալուց հրաժարուելով՝ նա այժմ շտապում է գնալ հին ու արքայական, ուղիղ, երկնային թագաւորութիւն տանող ճանապարհով**: *Արդ, այդ առթիւ ինչպիսի՛ եւ ինչքա՛ն մեծ ուրախութիւն պիտի ըմբոշխնեն երկնային մարդասէր ուժերը, երկիրն ինչպէ՞ս չսասանուի՝ ո՛չ վախից, այլ բերկրութիւնից, ո՛չ չարչարուելուց, այլ երկրայինների փրկութեան առթիւ ուրախութիւնից, ինչպէ՞ս չհրճուի, ինչպէս մայրն իր զաւակներով, դէպի Աստուծոյ պարգեւած բարիքները բարձրացողների, ճշմարիտ փառքին արժանացողների առթիւ: Հէնց այստեղ ես «յիշեցի զաւուրսն զառաջինս» [Սաղմ. ՃԺ 5]:*

Ինչպիսի՞ք էին դրանք: Երբ Կոստանդինն ու Տրդատը,[3] *մէկը՝ հռովմայեցիների, միւսը՝ հայերի վեհապետներն էին, երկնքում որպէս աստղ երեւացած խաչի նշանով*[4] *հրաշագործ Աստուած տէր Կոստանդինին կոչ արեց դառնալ դէպի բարեպաշտութիւն: Իսկ սուրբ Գրիգորը Խոր վիրապից արեգակի պէս բարձրանալով, Տրդատին ուղղեց դեպի ուղղափառութեան լոյսը եւ մկրտութեամբ նրան անմար լոյսի որդի յայ-*

* *Կայսերական դիրքերից գրուած «կայսերական դաւանաբանութեան» այս թղթի բովանդակութիւնը հետեւեալն է՝ բիւզանդացիներից բացի մնացած բոլորը հերետիկոսներ են, եւ դաւանական փոխհամաձայնութիւնը քաղկեդոնականութեան անվերապահ ընդունումն է: Քանակական մեծութիւնն ըստ նրանց՝ սեփական ճշմարտացիութեան վճռորոշ գործօնն է: Այսպիսի անհանդուրժողական եւ վիրաւորական արտայայտութիւններով լի այս թուղթը լաւագոյնս ցոյց է տալիս, թէ ինչ ոգով էին բիւզանդացիները մօտենում դաւանական*

Α΄

Τοῦ αὐτοῦ ἐπιστολὴ τῷ ὑψηλῷ Καθολικῷ πάσης τῆς ἀρμενικῆς ἐκκλησίας, τῆς κατὰ πᾶσαν τὴν οἰκουμένην, καὶ σοφίᾳ καὶ συνέσει κεκοσμημένῳ Κυρῷ Κωνσταντίνῳ

Α΄. Ἀγαλλιάσθω οὐρανὸς καὶ εὐφραινέσθω γῆ σήμερον, ὑπερυψούσθω δὲ καὶ μεγαλυνέσθω ὁ οὐρανοῦ καὶ γῆς ποιητὴς ὁ ἐκτελῶν τὰ παράδοξα· εἰ γὰρ ἐφ᾽ ἑνὶ ἀνθρώπῳ μετανοοῦντι καὶ πρὸς τὴν ἀλήθειαν ἐπιστρέφοντι χαρὰ γίγνεται ἐν οὐρανῷ κατὰ τὴν ἀψευδεστάτην φωνὴν τοῦ ἀληθινοῦ θεοῦ ἡμῶν Ἰησοῦ Χριστοῦ, ὅταν ἔθνος εὐγενὲς καὶ πολυάνθρωπον καὶ πολλαχοῦ τῆς οἰκουμένης ἐσπαρμένον τὴν ἐκ βασκανίας διαβολικῆς ἐπισυμβᾶσαν τούτῳ ἀπάτην ἀπολιμπάνειν ἤδη ἀπάρχηται καὶ πρὸς τὴν ἀρχαίαν ὁδὸν καὶ βασιλικήν, τὴν εἰς τὴν τῶν οὐρανῶν φέρουσαν βασιλείαν εὐθυπορεῖν κατεπείγηται, ποταπὴν δεῖ καὶ πόσην χαρὰν ἔχειν τὰς ἐπουρανίους καὶ φιλανθρώπους δυνάμεις, ἡ γῆ δὲ πῶς οὐ σεισθήσεται, οὐ φοβουμένη, ἀλλὰ σκιρτῶσα, οὐ παιδευομένη, ἀλλ᾽ εὐφραινομένη ἐπὶ τῇ σωτηρίᾳ τῶν γήνων, ὡς μήτηρ ἐπὶ παισίν, ἐπὶ τὴν κατὰ θεὸν προκοπὴν ἀνιοῦσι καὶ τῆς ἀληθινῆς δόξης ἀξιουμένοις; Ἐνταῦθα δὲ τοῦ λόγου γενόμενος ἐμνήσθην ἡμερῶν ἀρχαίων. Ποίων δὲ τούτων; ἡνίκα Κωνσταντῖνος καὶ Τιρηδάτης, ὁ μὲν τῶν Ῥωμαίων ὁ δὲ τῶν Ἀρμενίων τὴν ἡγεμονίαν ἐνεπιστεύοντο· καὶ τὸν Κυρόν Κωνσταντῖνον διὰ σταυρικοῦ σημείου, ἀστροθετουμένου ἐν οὐρανῷ, ὁ τῶν θαυμασίων προσεκαλεῖτο Θεὸς πρὸς εὐσέβειαν, τὸν δὲ Τιρηδάτην ἐκ βάθους γῆς ὁ ἱερὸς Γρηγόριος ὡς ἥλιος ἀνελθὼν πρὸς τὸ φῶς τῆς ὀρθοδοξίας ὡδήγησε καὶ ἡμέρας υἱὸν ἀνέσπερον ἀνέδειξε διὰ τοῦ βαπτίσματος.

երկխօսութիւններին: Այս երկխօսութիւնների մէջ հայկական կողմը ոչ միայն յենւում է իր հարուստ դաւանական ժառանգութեան վրայ, այլեւ քաջատեղեակ է յունական աղբիւրներին եւ մեղադրանքներին, սակայն յունական կողմը բացարձակապէս տեղեակ չէ հայկական աղբիւրներին: Զարմանալին այն է, որ հազար հինգ հարիւր տարուայ ընթացքում ոչինչ չի փոխուել: Այսօր էլ յունական եւ ռուսական աղբիւրներում առկայ են բազմաթիւ անհեթեթութիւններ հայերի մասին, որոնք անգիտութեան եւ պատմական փաստերի նենգափոխումների հետեւանք են (խկ):

տարարեց[5]: Ուրախանում էին միմեանցով եւ բերկրում. Կոստանդինը՝ Տրդատով եւ Տրդատը՝ Կոստանդինով, մէկը գրեթէ համայն տիեզերքի մարդկանց մկրտութեամբ վերածնուողների նախահայր դարձած: Նա մարմնական բորոտութեան հետ միասին փրկուեց եւ հոգու [բորոտութիւնից], իսկ միւսը՝ հայոց մեծահզօր ազգի առաջնորդը, հրաժարուելով [կռապաշտութիւնից], շնորհիւ [Աստուծոյ] ինքը եւս եղաւ Աստուծոյ որդի, թէպէտ նախկինում անառակ որդի էր: Նա չէր արածեցնում ուրիշի խոզերին, այլ խոզի կերպարանք առած՝ ինքն էր արածում՝ այդպիսի տարօրինակ պատիժ ստացած: Երկուսն էլ սուրբ մկրտութեամբ, ուղղափառ հաւատքն ընդունած, [Աստուծոյ] շնորհով Աստուծոյ որդիներ դարձան՝ համախոհ, համաշունչ, յար եւ նման դատելով, հետեւելով նոյն հաւատքի միաբանութեանը [Եփես. Դ 13] եւ Սուրբ Հոգու հաղորդութեանը [Բ Կոր. ԺԳ 13], նոյն կերպ իրենց ժողովուրդներին ուղղափառութիւնը քարոզելով:

Բ. Բայց բարին մշտապէս ատող [բանսարկուն]՝ հերձուածների այդ պատճառը, աղանդների հնարողը, հանգիստ չտարաւ դա, նա դարձեալ մէջտեղ հանեց իր համար բնական նախանձը եւ մաքուր ցորենի արտում մոլախոտ ցանեց: Էլ ի՞նչ կարիք կայ երկարաբանելու: Նա հայերին, ովքեր նախկինում եղբօր պէս համախոհ էին հռոմայեցիներին, նրանցից պառակտեց, այն էլ ոչ [միայն] մարմնական պառակտմամբ (դա փոքր յանցանք է), այլ դրա հետ միասին՝ հոգեւոր, նաեւ՝ Քրիստոսից: Պառակտման պատճառն այն չէ, որ մենք ինքներս [իբր] մէկ Քրիստոսին երկուսի ենք բաժանում. այդպէս էր դաւանում [հայերին եւ հռոմայեցիներին] հակառակուող Նեստորիոսը, որին մենք եւս, որպէս հրեաների սինագոգի որդու, ամբողջ հոգով յաւիտեանս նզովքի ենք ենթարկում**, այլ որովհետեւ [հայերդ] յանդգնում էք երկու բնութիւնները իրար խառնել եւ մէկը ստանալ, որով ենթա-*

* *Այստեղ խօսքը 451 թ. Քաղկեդոնի ժողովի մասին է, որը Եկեղեցու ողբերգական պառակտման հիմք դարձաւ: Դժուար է պատկերացնել մէկ այլ իրադարձութիւն, որ աւելի մեծ աւերածութիւն առաջացրած լինի Եկեղեցու պատմութեան մէջ, որքան Քաղկեդոնի ժողովը: Յովհաննէս Սարկաւագն այն անուանում է «երկրորդ ջրհեղեղ»: Եթէ քաղկեդոնականների համար այն սուրբ է եւ տիեզերական, ապա արեւելեան ուղղափառ քրիստոնեաների համար այն ամենամերժելի եւ ամենաողբերգական իրադարձութիւններից մէկն է (ԽԿ):*

** *Իրականում Քաղկեդոնի ժողովի ժամանակ ամենապատուաւոր տեղերում բազմած էին Նեստորի համակիրները, որոնց թւում Թէոդորետոս Կիւրացին, որը*

Καὶ συνέχαιρον ἀλλήλοις καὶ συνευφραίνοντο ὁ Κωνσταντῖνος τῷ Τιρηδάτῃ, Τιρηδάτης δὲ τῷ Κωνσταντίνῳ, ὁ μὲν τῆς οἰκουμένης πάσης σχεδὸν ἀρχιπάτωρ τῶν διὰ τοῦ βαπτίσματος ἀναγεννωμένων γενόμενος, ἐπειδὴ μετὰ τῆς σωματικῆς λέπρας καὶ τὴν ψυχικὴν ἀπεξεδύσατο, ὁ δὲ τοῦ μεγαλοδυνάμου ἔθνους τῶν Ἀρμενίων προϊστάμενος· υἱὸς γὰρ καὶ αὐτὸς κατὰ χάριν ἐγένετο τοῦ Θεοῦ ἐπιστραφείς, εἰ καὶ ἄσωτος ἐχρημάτισε πρότερον, οὐκ ἄλλου τινὸς χοίρους, ἀλλ' ἑαυτὸν βόσκειν χοιρείαν ἀναλαβόντα μορφήν, τὸ παράδοξον καταδικασθείς. Ἀμφότεροι δὲ διὰ τοῦ θείου λουτροῦ καὶ τοῦ τῆς ὀρθοδόξου πίστεως ἐνδύματος υἱοὶ θεοῦ κατὰ χάριν γεγόνασι, σύμφρονες, σύμπνοι, τὸ αὐτὸ φρονοῦντες, τῷ αὐτῷ στοιχοῦντες, τὴν ἑνότητα τῆς πίστεως καὶ τὴν κοινωνίαν τοῦ ἁγίου πνεύματος ἔχοντες καὶ τοῖς ὑπ' αὐτοῖς λαοῖς ἀπαραλλάκτως καταγγέλοντες τὴν ὀρθοδοξίαν.

Β΄. Ἀλλ' οὐκ ἔμενεν ἐπὶ τούτοις ἡσυχίαν ἄγειν ὁ ἀεὶ βασκαίνων τοῖς ἀγαθοῖς καὶ τῶν σχισμάτων παραίτιος καὶ τῶν αἱρέσεων ἐφευρετής, ἀλλὰ καὶ πάλιν τὴν συνήθη βασκανίαν ἐνδείκνυται καὶ τῷ καλῷ σίτῳ ἐνσπείρει ζιζάνια. Καὶ τί χρὴ μακρηγορεῖν; διΐστησιν ἀπὸ τῶν Ῥωμαίων τοὺς Ἀρμενίους, ἀδελφὰ φρονοῦντας τὸ πρότερον, οὐ διάστασιν σωματικήν - μικρὸν γὰρ τοῦτο ἀδίκημα - ἀλλὰ ψυχικὴν συνδιΐστησι καὶ ἀπὸ Χριστοῦ, οὐχ ὅτι διϊστῶμεν εἰς Χριστοὺς δύο οἱ αὐτοὶ τὸν ἕνα Χριστόν - τοῦτο γὰρ τὸ δόγμα ὁ ἀντικείμενος εἶχε πρὸς αὐτοὺς Νεστόριος, ὃν καὶ ἡμεῖς ὁλοψύχως ἀναθέματι αἰωνίῳ καθυπεβάλομεν ὡς υἱῷ τῆς τῶν Ἰουδαίων συναγωγῆς - ἀλλ' ὅτι τὰς δύο φύσεις εἰς μίαν συγχέουσι τολμηρῶς,

Կիւրեղ Ալեքսանդրացու ամենաակնառու գաղափարական հակառակորդն էր Նեստորականութեան դէմ պայքարում: Ժողովին հրաւիրուած էր նաեւ ինքը՝ Նեստորը, որը, սակայն, ճանապարհին վախճանուեց: Ժողովը վարում էին Մարկիանոս կայսեր եւ Պուլքերիա կայսրուհու ներկայացուցիչները, որոնք ճնշում էին ընդդիմութեան ամէն մի փորձ: Ուշագրաւ է, որ ժողովը ոչ մի քննադատական խօսք չասաց Նեստորի մասին: Հայ հայրերը իրաւամբ համարել են, որ թէ՛ Նեստորականութիւնը, թէ՛ քաղկեդոնականութիւնը նոյն անտիոքեան դուալիստական քրիստոսաբանութեան շարունակութիւններն են որոշ տարափոխումներով (ԽԿ):

դրւում է, թէ Որդին համագոյակից եւ բնութեանակից չէ նախայաւիտեան Հօրը եւ ժամանակի մէջ գոյութիւն ունեցող Մօրը, քանզի Հայրը Աստուածութիւնից եւ մարդկութիւնից բաղկացած չէ, նոյնպէս եւ Մայրը: Ուստի ճշմարիտ դաւանողները պէտք է ընդունեն, որ Քրիստոս բնութենակից է Հօրը եւ մեզ: Չպէտք է այնպէս վարդապետել, թէ երկու բնութիւնները, խառնուելով միմեանց, երկուսն էլ որպէս այդպիսին վերացան, այլ գոյութիւն ունեն անխառն՝ մէկ եւ նոյն Քրիստոսի մէջ:*

*Ահա այս է պառակտման գլխաւոր պատճառը: Եւ այդպիսով, հայերը՝ մարմնի այդ լաւ մասը, ամբողջական մարմնից հատուեցին եւ հեռուն նետուեցին: Իսկ ամբողջական մարմնից հատուած իւրաքանչիւր մաս ենթակայ է բազմապիսի ապականութիւնների՝ պղծման, փտման, գարշահոտութեան, եռման: Հայոց Եկեղեցին կանգ չառաւ այդ նախնական հերձուածողութեան մէջ**, այլ ձեռք բերեց եկեղեցական աւանդոյթներին ներհակ ուրիշ սովորոյթներ եւս: Այդ սովորոյթները մինչեւ օրս յայտնի չէին, բայց Աստուած բարձրից դրանք նկատեց***: Աստուած տեսաւ Իր ժողովրդի տառապանքները, որ հայերի*

* *Այս թիւրիմացութիւնը գալիս է հայ դաւանաբանութեան մասին սխալ պատկերացումներից: Իրականում հայերն ընդունում են Քրիստոսի ե՛ւ աստուածային, ե՛ւ մարդկային համագոյութիւնը, առանց որի հնարաւոր չէ պատկերացնել ուղղափառ հաւատքն առհասարակ: Հայ հայրերն ուսուցանում են, որ Աստուծոյ Միածին Որդին՝ նախայաւիտեան Բանը, մեր փրկութեան համար կատարելապէս մարդացել է ս. Կոյսից, այսինքն վերցրել է մարդկային բնութեան ամբողջականութիւնը: Ոչ թէ Բանը փոխարկուել է մարմնի, կամ մարմինը՝ Աստուածութեան, ոչ թէ աստուածայինը կամ մարդկայինը միաւորուելիս բնութեամբ փոփոխուել են կամ չփոթուել, այլ կատարեալ Աստուած Իրեն է միաւորել անթերի մարդկութիւն՝ առանց փոփոխութեան, առանց այլայլութեան, առանց չփոթութեան. այսինքն՝ Աստուած մնացել է Աստուած, եւ մարդը՝ մարդ:*

Ուղղափառ հաւատքի համար շատ կարեւոր է Քրիստոսի միութեան խորհուրդը. որեւէ բաժանութիւն կամ երկուութիւն մեր Տէր Յիսուս Քրիստոսի մէջ սպառնում է փրկութեան իսկութեանը: Քրիստոսի աստուածամարդկային միութիւնը ոչ թէ բնութիւնների յարակցութիւն, կապակցութիւն կամ վերաբերութիւն է, այլ էական, գոյաբանական եւ բնութենական միութիւն: Աստուածայինը եւ մարդկայինը անձով, բնութեամբ, կամքով եւ ներգործութեամբ անբաժանելիօրէն միաւորուած են մէկ Տէր Յիսուս Քրիստոսի մէջ: Ուստի մէկ է մարդացած Բան Աստուծոյ անձը, բնութիւնը, կամքը եւ ներգործութիւնը: Ս. Յովհաննէս Օձնեցին գրում է. «Միութեան մէջ պէտք չէ ուրանալ իւրաքանչիւրի

ὡς μήτε τῷ προαιωνίῳ πατρί, μήτε τῇ ὑποχρονίῳ μητρὶ ὁμοούσιον νοεῖσθαι καὶ συμφυῆ τὸν υἱόν· οὔτε γὰρ ἐκ θεότητος καὶ ἀνθρωπότητος ὁ πατήρ, οὔθ᾽ ἡ μήτηρ τοιαύτη. Δεῖ δὲ τοὺς ὀρθῶς φρονοῦντας ὁμοφυῆ τοῦτον κηρύττειν τῷ πατρὶ καὶ ἡμῖν. Οὐ κηρυχθήσεται δὲ οὕτως, εἴπερ αἱ δύο φύσεις εἰς μίαν κραθεῖσαι συνανηνέχθησαν, ἀλλ᾽ εἰ σώζοιντο ἀσύγχυτοι ἐν τῷ ἑνὶ καὶ αὐτῷ Χριστῷ. Αὕτη μὲν ἡ πρώτη αἰτία τῆς διαστάσεως. Καὶ τῆς κοινῆς ὁλομελείας τὸ καλὸν τοῦτο μέλος τῶν Ἀρμενίων ἀποκοπὲν μακρὰν ἀπερρίφθη. Μέλος δὲ πᾶν τῆς ὁλότητος ἐκτμηθὲν πολλοῖς περιστοιχίζεται μετὰ τὴν ἐκτομὴν κακοῖς, μιαίνεται, σήπεται, δυσωδίας ἐκπέμπει, ἀναβράττει· οὐ γὰρ ἐπὶ μόνῃ τῇ πρώτῃ αἱρέσει ἡ τῶν Ἀρμενίων ἐκκλησία παραμεμένηκεν, ἀλλὰ καὶ ἕτερα προσεξεύρηκεν ἔθη ταῖς ἐκκλησιαστικαῖς ἐναντιούμενα παραδόσεσι. Καί ἦσαν ἀπεγνωσμένα ἕως τοῦ νῦν, ἀλλὰ τὰ κατ᾽ αὐτοὺς ἰδὼν ἄνωθεν εἶδεν ὁ Θεός. Εἶδεν ὁ Θεὸς τὴν κάκωσιν τοῦ λαοῦ αὐτοῦ,

կատարելութիւնը, ոչ էլ իւրաքանչիւրի կատարելութեան պատճառով հրաժարուել մէկ կատարելութիւնից՝ միութիւն խոստովանելով անայլայլութեան մէջ եւ անայլայլութիւն՝ միութեան մէջ: Ուրեմն մէկ բնութիւն եւ մէկ դէմք ունի Քրիստոս ոչ թէ ըստ բնութեան նոյնութեան կամ ըստ մէկանձնականութեան, քանզի այս երկուսը միասին գրեթէ զրկում են Աստծուն մարդանալուց եւ մարդուն՝ աստուածանալուց, այլ ըստ Բանի՝ Իր մարմնի հետ անճառ միաւորութեան» («Ընդդէմ երեւութականաց», Յովհաննու Իմաստասիրի Աւձնեցւոյ մատենագրութիւնք, Վենետիկ, 1833, էջ 51-52) (ԽԿ):

** *Իրականում հայ հայրերը եւ վարդապետները ունեցել են լուրջ հիմքեր՝ հերձուածողութեան մէջ մեղադրելու քաղկեդոնականներին: Նրանք իրաւամբ կասկածել են, որ քաղկեդոնական համակարգում կայ քօղարկուած մարդաբանական առնուազուութիւն (մինիմալիզմ), այսինքն՝ որ քաղկեդոնականները չեն խոստովանում մարդկային բնութեան ամբողջականութիւնը եւ կատարելութիւնը Քրիստոսի մէջ: Խօսքն այստեղ այն արհեստական համակարգի մասին է, որ աստուածաբանական մտքի պատմութեան մէջ մտաւ Ղեւոնդէոս Բիւզանդացու կողմից եւ ընդհանրացաւ քաղկեդոնական համակարգում, ըստ որի՝ Քրիստոսի մարդկային բնութիւնն անանձ է: Ակնյայտ է, որ նման համակարգը յղի է փրկաբանական աղէտով (ԽԿ):*

*** *Թէ ինչ ներհակ սովորութիւնների մասին է խօսում, յայտնի չէ: Սակայն այսօր շատ ուսումնասիրողներ ընդունում են, որ շնորհիւ Հայ Եկեղեցու պահպանուած են առաքելական շրջանի դաւանաբանութեան, ծէսի, արքազան աւանդութեան այնպիսի շերտեր, որոնք չեն պահպանուել միւս եկեղեցիներում (ԽԿ):*

գլխին բերեց մթին Եգիպտոսի իշխան բանսարկուն[6]՝ չկտտելով նրանց մարմնապէս, այլ ծայր աստիճան՝ հոգեպէս: Տեսնելով այդ վիճակը՝ Նա սիրով այցելեց նրանց: Ոչ Իսրայէլի Մովսէսին նրանց առաջնորդ կարգեց, ոչ էլ Ահարոնին՝ քահանայապետ[7], այլ հայոց թագաւորին, ով լատիներէն լեզուով ռեքս է կոչւում[8], եւ քեզ՝ վեհափառ հայրապետին՝ հայոց կաթողիկոսին, հայոց բոլոր եկեղեցիների վրայ իշխողին: Երկուսիդ միասին Նա ոտքի հանեց՝ ջերմացնելով ձեր սրտերը բարեպաշտութեան բուռն եռանդով: Դուք ջանում էք ձեր գլխաւորած ժողովրդին հոգով ու մարմնով ուղղել դեպի Աւետեաց երկիրը, որին արժանացել էին անցեալում ձեր հայրերը, նկատի ունեմ նրանց, ովքեր պառակտումից առաջ աչքի էին ընկնում ուղղափառութեամբ: Նրանք ընդունել էին Առաջին [Տիեզերական] ժողովը, ապա՝ Երկրորդն ու Երրորդը[9], որոնց բնակութիւնն [Մնդ. խէ 11] ու վիճակը ժառանգութեան [Սաղմ. ՃԴ 11] երկրում են՝ Աբրահամի, Իսահակի եւ Յակոբի՝ առաջին եւ նշանաւոր հայրապետերի հետ: Դուք ցանկանում էք վերականգնել այդ հնօրեայ համախոհութիւնը, տալ նախկին շքեղութիւնը, հաւատքով հաւասարուել ձեր հայրապետերին: Ինչպէս որ բազում, բարձրից, միեւնոյն աղբիւրից բխող գետերը, կամաց-կամաց առաջ հոսելով ու ընթանալով, բաժանւում են երկուսի, ապա փոքր տարածութիւն կտրելով՝ դարձեալ իրար են միանում ու միասին թափւում լայնատարած ծովը, այդպէս եւ դուք, ո՛վ հայոց ազնուազարմ իշխանաւորներ, եռանդագին շտապում էք թողնել բազմամեայ հերձուածը եւ վերադառնալ նախկին միութեանն ու համախոհութեանը, միանալ մեզ՝ Տիեզերական Եկեղեցուն, կարծես լայնատարած, համապարփակ ծովին, որպէսզի լաւագոյն սկիզբը լաւագոյն եւ սուրբ աւարտ ունենայ*:

Գ. Ահա դրա համար դուք մեր հզօրագոյն, [հաւատքով] Աստծուն տեսնող, Աստծուց փառաւորեալ հռովմայեցիների կայսեր եւ մեր նուաստութեան մօտ ուղարկեցիք բարի, ամենայն բարեպաշտութեամբ զարդարեալ, ուղղափառութեան խորհրդին հաւատացող մարդկանց, այն է՝ Սկոպելոսի սուրբ վանքի սրբազնագոյն վանահայր տէր Թէոդորետոսին եւ ամենաբարեպաշտ վանական տէր Վասիլիոսին[10], որոնց միջո-

* Այստեղ մենք նորից տեսնում ենք դաւանաբանական եւ եկեղեցագիտական խնդիրների իւրովի մեկնաբանութիւն, այսինքն՝ Տիեզերական Եկեղեցին եւ ուղղափառներն իրենք են, իսկ մնացածները՝ մոլորեալներ եւ շեղուածներ, որոնց միակ փրկութիւնը քաղկեդոնականներին միանալն է: Այստեղ «լայնատարած, տարողունակ ծով» արտայայտութիւնը լաւագոյնս ցոյց է տալիս քաղկեդոնականների մտածելակերպի մէջ բոյն դրած ծաւալապաշտական եւ կայսերապաշտական նկրտումները: Ըստ նրանց՝ իրենք ճիշտ են, որովհետեւ շատ են, մինչդեռ պատմութիւնը ցոյց է տուել՝ ճշմարտութիւնը գրեթէ միշտ վերապահուած է եղել փոքրաթիւ խմբերի եւ երբեմն՝ անհատների (խկ):

ἦν ὁ τῆς σκοτεινῆς Αἰγύπτου κατάρχων διάβολος τοῖς Ἀρμενίοις ἐπήγαγεν, οὐ σωματικῶς ἀδικῶν, ἀλλὰ κατατυραννῶν ψυχικῶς. Καὶ ἰδὼν ἐπεσκέψατο συμπαθῶς, οὐχὶ Μωυσέα δημαγωγὸν Ἰσραὴλ ἀναστήσας καὶ Ἀαρὼν ἀρχιερέα, ἀλλὰ τὸν βασιλικῶς τῶν Ἀρμενίων κατάρχοντα, ὃν καὶ ῥῆγα ἡ Λατινὶς προσωνόμασε καὶ σὲ τὸν ὑψηλότατον ἐν ἀρχιερεῦσι τῶν Ἀρμενίων καθολικόν, κράτος ἀνεζωσμένον ἐν πάσαις ταῖς Ἀρμενικαῖς ἐκκλησίαις συνανίστησι, ζήλῳ εὐσεβείας τὰς καρδίας ἀναθερμάνας. Καὶ σπεύδει πρὸς τὴν τῆς ἐπαγγελίας γῆν διαβιβάσαι τὸν ὑφ' ἡμῶν δημαγωγούμενον λαὸν ψυχικῶς καὶ σωματικῶς, ἧς τὴν κατάσχεσιν εἶχόν ποτε οἱ πατέρες ὑμῶν, ἐκείνους πατέρας φημὶ τοὺς πρὸ τοῦ σχίσματος ὀρθοδοξίας λελαμπρυσμένους ὡραϊσμῷ καὶ τὴν πρώτης ἀσπασαμένους σύνοδον, τὴν δευτέραν τε καὶ τὴν τρίτην, ὧν ἡ κατάσχεσις ἄρτι καὶ τὰ σχοινίσματα ἐν τῇ γῇ τῶν πραέων ἐστὶ μετὰ Ἀβραὰμ καὶ Ἰσαὰκ καὶ Ἰακὼβ τῶν πρώτων καὶ καλλίστων πατριαρχῶν, ζητοῦντες τὴν παλαιὰν ἐκείνην ὁμόνοιαν ἀνανεώσασθαι καὶ πρὸς τὸ πρῶτον κάλλος ἀναμορφώσασθαι καὶ κατὰ πίστιν γενέσθαι τοῖς πατριάρχαις ὑμῶν ἰσοστάσιοι. Ὡς γὰρ πολλοὺς ὁρῶμεν τῶν ποταμῶν ἄνωθεν ἐκ μιᾶς ὁρμωμένους πηγῆς καὶ μικρὸν προϊόντας καὶ προοδεύσαντας, εἶτα σχιζομένους εἰς δύο καὶ μετὰ μικρὸν διάστημα πάλιν συνερχομένους εἰς ἕν καὶ ἀλλήλοις συνεισβάλλοντας καὶ πρὸς τὴν εὐρύχωρον θάλασσαν ὁμοῦ συνεισρέοντας καὶ ὑμεῖς, ὦ μεγαλογενέστατοι τῶν Ἀρμενίων ἄρχοντες, μετὰ θερμότητος σπεύδετε τὴν πολυχρόνιον καταλιπεῖν αἵρεσιν κἀπὶ τὴν πρώτην ἀναδραμεῖν ἕνωσιν καὶ ὁμόνοιαν καὶ ὥσπερ εἰς εὐρύχωρον θάλασσαν τὴν καθολικὴν ἐκκλησίαν καὶ τῶν κατὰ μέρος περιεκτικὴν συνελθεῖν ἡμῖν, καὶ τῷ πλάτει αὐτῆς συνευρεθῆναι, ἵνα καὶ τῆς καλλίστης ἀρχῆς κάλλιστον τὸ τέλος καὶ ὅσιον ἐπισφραγισθῇ.

Γ΄. Δι' ὃ καὶ πρὸς τὸν κράτιστον, θεόπτεστόν τε καὶ θεοδόξαστον αὐτοκράτορα τῶν Ῥωμαίων καὶ πρὸς τὴν ἡμῶν ἀπεστείλατε μετριότητα ἀνθρώπους ἀγαθοὺς κατὰ πάντα καὶ εὐλαβείᾳ κεκοσμημένους καὶ ὀρθοδοξίας πιστεύοντας τὸ μυστήριον, τόν τε δῆλαδὴ ὁσιώτατον καθηγούμενον τῆς κατὰ τὸν Σκόπελον σεβασμίας μονῆς ἱερομό-ναχον κυρὸν Θεοδώρητον

ցով իմ հզօրագոյն եւ սուրբ կայսրը, ապա եւ նուաստութիւնս ստացանք ամենահաւատի տեղեկութիւնը՝ հաւատքում մեզ հետ միանալու քո եւ Հայոց ամենափառաւորեալ թագաւորների[11] յստակ ու անկեղծ ցանկութիւնը: Ես այդ խօսքերի վրայ կ'ուրախանայի որպէս բազում աւար ձեռք բերած[12], յատկապէս երբ սուրբ Նախախնամութեամբ իմ հզօրագոյն կայսեր հզօրագոյն բազկին կոչ արեցի, [որ] օգնութեան հասնի լատինական բռնակալութեան կողմից աւարառուած Կոստանդնուպոլսին[13]: Եթէ անհրաժեշտութիւն կայ աւելին ասելու ձեզ՝ մեզ հետ միանալու հարցում մեր արտակարգ ուրախութիւնը ներկայացնելու համար, ապա մաղթում եմ Հայոց ամենամեծախոհ ազգին անյապաղ արժանանալ ուղղափառութեան եւ բարեպաշտութեան, ամէն ինչում լինել մեզ համախոհ: Ես, որ Կոստանդնուպոլսից շատ հեռուները թափառական եմ եւ ինձ վիճակուած Աստուծոյ Մեծ Եկեղեցուց[14] վտարուած եւ աթոռազուրկ, չեմ զլանայ կրկնել տիեզերական ուսուցիչ Պօղոս [առաքեալի] անհամեմատ աւելի ասածը. «Զի ուխտիւք խնդրէի ես իսկ ինքնին նզով լինել ի Քրիստոսէ վասն եղբարց իմոց... ըստ մարմնոյ» [Հռոմ. Թ 3]: Սոյն խնդրի իրականացման իմ սրտագին ցանկութեան վկան է եւ այս ասելիքս, թէ մեր նուաստութիւնը, քո գերակայութեան եւ բարեպաշտութեան կողմից դեռ նամակ չստացած, նրան ուղարկեց երկարաշունչ գրութիւններ եւ մելիտենացւոց եկեղեցու գերագահ մետրոպոլիտին՝ հաւատ ընծայելով Անտիոքի սրբազնագոյն պատրիարքի՝ ի Տէր սիրելի եղբօր՝ մեր նուաստութեանը յղած գրութեան եւ Սկոպելոսի մեծ վկայ Թէոդոսիոսի վանքի սուրբ վանահայր տէր Թէոդորետոսի հաղորդածին: Ուստի ակնկալում ենք քո բարձր իմաստութիւնն ու խոհեմութիւնը, որպէսզի Մելիտենէի ամենասուրբ մետրոպոլիտը քեզ ենթակայ եպիսկոպոսներից ոմանց հետ միասին ժամ առաջ վերադառնայ մեզ մօտ եւ յայտնի քո, ինչպէս եւ վեհապետի կամքը:

Ցանուն երկնի եւ երկրի Արարչի մաղթում եմ, որ եւ երկրի վրայ հաւատքում միանանք եւ դառնանք ժառանգաւորները Աստուծոյ[15] եւ համաժառանգաւորները Քրիստոսի...[16] Սուրբ եւ արարիչ, անսկիզբ ու անեղ Երրորդութեան, ամէն ինչ Ստեղծողի շնորհը քո բարեպաշտութեան եւ բոլոր քո ենթակաների հետ:

Գերմանոս՝ ողորմութեամբն Աստուծոյ՝ Կոստանդնուպոլսի, Նոր Հռոմի արքեպիսկոպոս եւ տիեզերական պատրիարք:

καὶ τὸν εὐλαβέστατον μοναχὸν κυρὸν Βασίλειον δι' ὧν ὅ τε κράτιστος καὶ ἅγιος αὐτοκράτωρ μου καὶ ἡ μετριότης ἡμῶν ἀκριβεστάτην τὴν πληροφορίαν ἐσχήκαμεν ἀπεριέργως καὶ ἀδόλως τὴν κατὰ πίστιν μεθ' ἡμῶν ἕνωσιν σὲ καὶ τοὺς ὑπερενδοξοτάτους ῥῆγας τῶν Ἀρμενίων ἐπιζητεῖν. Καὶ ἀγαλλιασαίμην ἂν ἔγωγε ἐπὶ τοῖς λόγοις τούτοις ὡς εὑρίσκων σκύλα πολλά, μᾶλλον δ' ὡς ὑπὲρ τὴν σκυλευθεῖσαν ὑπὸ τῆς Λατινικῆς τυραννίδος Κωνσταντίνου πόλιν διὰ τῆς κρατίστης χειρὸς τοῦ κρατίστου μου αὐτοκράτορος κατὰ πρόνοιαν θείαν ἐκαλεσάμην. Εἰδεῖ δὲ καὶ πλέον εἰπεῖν εἰς παράστασιν τῆς καθ' ὑπερβολὴν ἀγάπης τῆς μεθ' ὑμῶν ἑνώσεως, εὔχομαι τῷ μεγαλονεστάτῳ ἔθνει τῶν Ἀρμενίων διὰ τάχους καταξιωθῆναι ὀρθοδοξεύειν καὶ εὐσεβεῖν καὶ κατὰ πάντα ἡμῖν συμφρονεῖν καὶ οὐ μελήσει μοι εἰ καὶ ἔτι τῶν ἀγκαλῶν τῆς Κωνσταντινουπόλεως πορρωτάτω πλάζομαι καὶ τῆς λαχούσης μοι μεγάλης τοῦ Θεοῦ ἐκκλησίας ὑπερορίζομαι ἔκπτωτος, ὅπου γε Παῦλος ὁ τῆς Οἰκουμένης διδάσκαλος τὸ ἀσυγκρίτως πλέον εἰρήκει, ἀνάθεμα εἶναι εὐξάμενος ἀπὸ τοῦ Χριστοῦ ὑπὲρ τῶν ἀδελφῶν αὐτοῦ τῶν κατὰ σάρκα, μόνον ἵνα ἐκεῖνοι σωθῶσι. Μαρτυρεῖ δὲ τὴν καρδιακὴν ἡμῶν ὑπὲρ τῆς ὑποθέσεως ταύτης ζέσιν καὶ τόδε ῥηθησόμενον, ὅτι μὴ δεξαμένη ἡ μετριότης ἡμῶν παρὰ τῆς σῆς ὑπεροχῆς καὶ εὐλαβείας γράμμα, αὐτῇ καὶ μακρόστιχα στρώματα καὶ μητροπολίτην ὑψηλόθρονον τῆς τῶν Μελιτινιωτῶν ἐκκλησίας ἀπέστειλε, πιστεύσασα τῇ τοῦ ἁγιωτάτου πατριάρχου Ἀντιοχείας γραφῇ τοῦ ἐν Κυρίῳ ἀγαπητοῦ ἀδελφοῦ τῆς ἡμῶν μετριότητος καὶ τοῖς λόγοις τοῦ ὁσίου καθηγουμένου τῆς ἐν τῷ Σκοπέλῳ μονῆς τοῦ ὁσίου πατρὸς μεγαλομάρτυρος Θεοδοσίου, τοῦ κυροῦ Θεοδωρήτου. Ἀξιοῦμεν οὖν τὴν σὴν ὑψηλὴν σοφίαν καὶ σύνεσιν, ἵνα τάχιον ἀποκατασταθῇ πρὸς ἡμᾶς ὁ πανιερώτατος μητροπολίτης Μελιτινῆς, συνεπαγόμενος καί τινας τῶν ὑπὸ σὲ ἀρχιερέων καὶ πληροφορήσῃ ἡμῖν τὸ σὸν θέλημα καὶ τὸ τοῦ ὑψηλοτάτου.

Εὔχομαι τῷ ποιητῇ οὐρανοῦ καὶ γῆς, ἵνα καὶ ἐν τῇ γῇ τὴν κατὰ πίστιν ἕνωσιν ἑνωθῶμεν καὶ κληρονόμοι μὲν Θεοῦ, συγκληρονόμοι δὲ γενόμεθα Χριστοῦ . . . . . .Ἡ χάρις τῆς ἁγίας καὶ παντουργοῦ καὶ συνανάρχου καὶ ἀκτίστου τριάδος καὶ τῆς τοῦ παντὸς δημιουργοῦ εἴη μετὰ τῆς σῆς εὐλαβείας καὶ πάντων τῶν ὑπό σέ. Γερμανὸς ἐλέῳ Θεοῦ ἀρχιεπίσκοπος Κωνσταντινουπόλεως, νέας Ῥώμης καὶ Οἰκουμενικός Πατριάρχης.



Կոստանդնուպոլսի Տիեզերական Պատրիարք Մանուէլ Բ-ի նամակը Հեթում Ա թագաւորին եւ Կոստանդին Ա Բարձրաբերդցի կաթողիկոսին
Ձեռագիր Monac. gr. 207, f. 19



Կոստանդնուպոլսի Տիեզերական Պատրիարք Մանուէլ Բ-ի նամակը Հեթում Ա թագաւորին եւ Կոստանդին Ա Բարձրաբերդցի կաթողիկոսին
Ձեռագիր Ottob. gr. 77, f. 33v

Թուղթ դարձեալ՝ երրորդ անգամ առաքուած[17] Կոստանդնուպոլսի պատրիարք տէր Մանուէլի կողմից Հայոց թագաւոր տէր Հեթումին, նրանց կաթողիկոս տէր Կոստանդինին, նրանց Համայն Եկեղեցուն՝ մեզ՝ Հռոմայեցիներիս հետ միանալու հարցի վերաբերեալ: Թուին 6756, 6-րդ ինդիկտիոն[18]

Ամենաերջանկագոյն[19], ամենաազնուագոյն, ամենափառաւորագոյն, ամենավեհագոյն, ամենաանուանի թագաւոր[20] ամենաարի եւ մեծազօր Հայոց ազգի: Ահա երրորդ նամակն է[21], որ աղօթելով եռեակ ու համագոյ, գերագոյն եւ ամենագործ Երրորդութեանը՝ մէկ Աստուածութեան մէջ փառաւորուող, առաքում ենք ամենամեծագործ թագաւորական իշխանութեանդ[22], ազնուագոյն բոլոր հարազատներիդ, նաեւ իմաստութեամբ, խոհեմութեամբ եւ կորովամտութեամբ զարդարեալ Հայոց Եկեղեցու վեհափառ կաթողիկոսին, Հայոց ազնուական ազգի համայն եպիսկոպոսներին, գերամեծար, ամենաերեւելի, սրբազան աստիճանակարգում աչքի ընկնող բարձրագոյն պաշտօնեաներին, զինուորական կարգերում ընդգրկուածներին, մի խօսքով, Աստուծոյ կողմից քո թագաւորական իշխանութեանն ընծայուած բոլոր հպատակներին: Մեր սրտերը, աչքերն ու ձեռքերը առ Աստուած պարզելով ու ուղղելով՝ մաղթում ենք, որ ամենալուսաւոր, եռակի փայլով լուսաւորող Սուրբ Երրորդութիւնը, որ աշխարհ եկող ամէն մէկին լուսաւորում է աստուածածանօթութեան ճշմարիտ լոյսով, պայծառացնի քեզ արդարութեան արեգակով՝ Քրիստոսով, որ անժամանակ ծնունդն է Հօրից եւ անսկիզբ նախայաւիտեանը: Նա տեսանելի եւ աներեւոյթ աշխարհը իր անսկիզբ Հօր եւ ամենասուրբ ու անսկիզբ, Հօրից բխող կենարար Հոգով արարեց եւ մէկ աստուածային բնութեամբ երկրպագւում է Հօր եւ Հոգու հետ: Նա վերջին ժամանակներում մեզ համար, մեր փրկութեան համար, ամենասուրբ եւ գերօրհնեալ սրբուհի Աստուածածնից, միշտ Կոյս Մարիամից անսերմ ծագեց եւ աշխարհը փրկեց զազիր մեղքից, Իր ստեղծած մահկանացուներին լոյսի եւ անստուեր օրուայ որդիներ դարձրեց: Նա Իր մէջ պահպանեց Իր երկու բնութիւնները՝ այն, որ ունէր որպէս Աստուած եւ յաւիտեանների Արարիչ, եւ այն, որ ստացաւ որպէս մարդ, դառնալով ընդժամանակեայ, [բնութիւններ], որոնք ե՛ւ չարչարանքներից առաջ, ե՛ւ չարչարանքների ժամանակ, ե՛ւ չարչարանքներից, մեռելներից յարութիւն առնելուց, երկինք բարձրանալուց յետոյ պահպանեց անփոփոխ, անայլայլ եւ անշփոթ: Նա վերստին

Բ՛.

Ἐπιστολὴ πεμφθεῖσα παρὰ τοῦ Πατριάρχου Κωνσταντινουπόλεως κυροῦ Μανουὴλ πρὸς τὸν ῥῆγα Ἀρμενίων κύριν Χεττούμιον καὶ πρὸς τὸν σφῶν Καθολικὸν κύριν Κωνσταντῖνον καὶ πρὸς ἅπασαν τὴν Ἐκκλησίαν αὐτῶν, πάλιν ἐκ τρίτου περὶ τῆς μεθ᾽ ἡμῶν ἑνώσεως τῶν Ῥωμαίων. Ἔτους, ϛψνϛ΄, ἰνδ. ϛ΄.

Πανευτυχέστατε, πανευγενέστατε, πανενδοξότατε, πανυψηλότατε, περιώνυμε ῥὴξ τοῦ ἀνδρικωτάτου καὶ μεγαλοδυνάμου γένους τῶν Ἀρμενίων. Τρίτον ἤδη γράμμα τῷ τρισσῷ καὶ ἑνιαίῳ τῆς ὑπερτάτου καὶ παντουργικῆς ἐπευξάμενοι Τριάδος, τῆς ἐν μιᾷ ὑμνουμένης θεότητι, τῇ μεγαλουργητάτῃ ῥηγικῇ σου ἐπιστέλλομεν ἐξουσίᾳ καὶ πᾶσι τοῖς εὐγενεστάτοις καὶ κατὰ γένος σοι προσήκουσι· τῷ τε σοφίᾳ καὶ συνέσει καὶ ἀγχινοίᾳ κεκοσμημένῳ ὑπερυψήλῳ Καθολικῷ τῆς τῶν Ἀρμενίων Ἐκκλησίας καὶ παντὶ τῷ ἐκ τοῦ εὐγενοῦς ἔθνους τῶν Ἀρμενίων ἀρχιερατικῷ σεμνηνομένῳ ὑψώματι, τοῖς μεγαλοϋπερόχοις καὶ μεγαλεπιφανέσι, κεκοσμημένοις ἀξιώμασι, τοῖς τῷ ἱερῷ διαπρέπουσι καταλόγῳ, τοῖς στρατιωτικαῖς ἐντεταγμένοις τάξεσι, καὶ πᾶσιν ἁπλῶς τοῖς ὑπὸ τὴν δωρηθεῖσαν σοι τοῦ Θεοῦ ῥηγικὴν ἐξουσίαν ὑπηκόοις σου. Καὶ καρδίας καὶ ὄμματα καὶ χεῖρας ἐκτείναντες πρὸς Θεόν, εὐχόμεθα καταφωτισθῆναί σου τὴν διάνοιαν παρὰ τῆς ἀρχιφώτου καὶ τριλαμποῦς παναγίας Τριάδος, τῆς φωτιζούσης πάντα ἄνθρωπον ἐρχόμενον εἰς τὸν κόσμον φωτὶ θεογνωσίας ἀληθινῷ ἵνα ἐν τῷ τῆς δικαιοσύνης ἡλίῳ, Χριστῷ, λαμπρυνθῇς, τῷ ἐκ Πατρὸς μὲν ἀχρόνως γεννηθέντι, ἀνάρχῳ ὄντι πρὸ τῶν αἰώνων. Καὶ τὸν ὁρατὸν καὶ ἀόρατον κόσμον σὺν τῷ ἀνάρχῳ αὐτοῦ Πατρὶ καὶ τῷ παναγίῳ καὶ ἀνάρχῳ καὶ ἐκ Πατρὸς ἐκπορευομένῳ ζωοποιῷ Πνεύματι δημιουργήσαντι καὶ ἐν μιᾷ φύσει θεότητος σὺν Πατρὶ προσκυνουμένῳ καὶ Πνεύματι. Ἐπ᾽ ἐσχάτων δὲ τῶν χρόνων δι᾽ ἡμᾶς καὶ διὰ τὴν ἡμετέραν σωτηρίαν ἐκ τῆς παναγίας καὶ παναμώμου καὶ πανυπερευλογημένης Θεοτόκου καὶ ἀειπαρθένου Μαρίας ἀνατείλαντι ἀρεύστως, καὶ τὸν κόσμον ἐκ τῆς βορβορώδους ἀνασώσαντι ἁμαρτίας καὶ υἱοὺς φωτὸς καὶ ἀνεσπέρου ἡμέρας τοὺς παρ᾽ αὐτοῦ πλασθέντας βροτοὺς ἀναδείξαντι. Ἐν ἑαυτῷ τε τηρήσαντι τὰς δύο φύσεις αὐτοῦ, ἥν τε εἶχεν ὡς Θεὸς καὶ τῶν αἰώνων ποιητής, καὶ ἥν ὡς ἄνθρωπος προσελάβετο ὑπὸ χρόνον γενόμενος ἀναλλοιώτους ἀτρέπτους

գալստեան եւ համընդհանուր յարութեան ժամանակ եւս արժանաւորներին ցոյց է տալու Իր աստուածային եւ մարդկային բնութիւնները բնորոշող պատկերը՝ ամբողջական, Իր մէկ Անձի մէջ պահպանուող, ապա եւ ներգործութիւնն ու կամքը: Առկայ են երկու բնութիւններ, եւ թէպէտ Քրիստոսին վարդապետում ենք նաեւ համաբուն Հօր եւ մեզ, սակայն Նա միաժամանակ պահպանում է իւրաքանչիւր բնութեան յատկութիւնները: Զենք ասում, թէ երկու բնութիւնների իրար խառնուելով առաջացաւ մէկը, եւ թէ այդ երկուսը [Քրիստոսի] մէջ իրար խառնուած են, հետեւաբար պէտք է խոստովանել երկու ներգործութիւն եւ երկու կամք: Աստուածային բնութիւնը կատարում էր իրեն վերաբերողը, երբ երկաբուն Քրիստոսը քայլում էր ծովի՝ անհաստատ ջրի վրայ, երկրային ոտքերով. ջուրը չէր, որ ցամաք դարձաւ, այլ աստուածային գերբնական ուժով [կատարուեց դա]: Անփոփոխ էր եւ մարդկային բնութիւնը, աստուածայինը թոյլ էր տալիս մարմնին անփոփոխ մնալու, այդ բանը յայտնի էր դառնում Նրա՝ քաղց զգալով, որտեղ աստուածայինը իր սահմաններից դուրս չէր գալիս: Ոչ ոք չի կարող երբեք ներկայացնել մէկ բնական ներգործութիւն՝ Աստուծոյ եւ արարածի: Մարդկային բնութիւնը չէր, որ կենդանացրեց Ղազարոսին, ոչ էլ աստուածային տէրութիւնն արտասուեց: Արտասուքը մարդկութեանն է, իսկ կեանք տալը՝ ինքնագոյ կենդանութեանը: Երկու բնութիւնները գործում էին միասին Քրիստոսի մէջ առկայ մէկ անձի մէջ: Արդ, եթէ Քրիստոսի մեջ առկայ են երկու բնութիւններ, եւ դա իրօք այդպէս է, ապա եւ՝ միասին երկու ներգործութիւններ, հետեւաբար նրա մէջ առկայ են եւ երկու կամք, քանզի որտեղ կայ ինքնիշխան բնութիւն, այնտեղ [կան] եւ ներգործութիւններ, որտեղ՝ ներգործութիւն, այնտեղ եւ՝ կամք, քանզի դրանք կապուած են միմեանց: Որով այդ երեքը, Քրիստոսի մէջ երկակի լինելով, կազմում են Աստուծոյ կողմից հիւսուած կապ, եւ Քրիստոսին այդպէս չդաւանողներին, որպէս այլադաւանների, Իր սրբութիւնից վանում է*: Ահա այդպէս եւ ես՝ Մանուէլս, ողորմութեամբն Աստուծոյ արքեպիսկոպոս Կոստանդնուպոլսի, Նոր Հռոմի եւ Տիեզերական Պատրիարք, եւ ինձ հետ եղող Մեծ

* Այսպիսի դաւանութիւնը միանգամայն մերժելի է ուղղափառ քրիստոսաբանութեան տեսանկիւնից: Ակնյայտ է «Լեւոնի տումարի» դուալիստական շունչը, որն է՝ Քրիստոսի փրկագործ տնտեսութեան մէջ ամէն ինչ բաշխել ըստ Աստուածութեան եւ մարդկութեան, որպէսզի Աստուածութիւնը եւ մարդկութիւնը չչփոթուեն: Այս եւտիքէսական ծայրայեղութիւնից խուսափելով՝ քաղկեդոնականները Քրիստոսի խորհուրդի մէջ ներմուծեցին մի անլուծելի երկուութիւն, որը յաղթահարելու համար յետագայում առաջ քաշեցին անձի միութեան (hypostatic union) աւելի վտանգաւոր գաղափարը (ԽԿ):

ἀσυγχύτους πρὸ τοῦ πάθους καὶ ἐν τῷ πάθει καὶ μετὰ τὸ πάθος, καὶ τὴν ἀνάστασιν καὶ τὴν εἰς οὐρανοὺς ἄνοδον. Καὶ τῇ τελευταίᾳ καθόδῳ καὶ κοινῇ ἀναστάσει μέλλοντι τοῖς ἀξίοις ταύτας ἐμφανίζειν τῶν χαρακτηρισμάτων τῆς θείας καὶ ἀνθρωπίνης εἰκόνος ἀμειώτων ἐν μιᾷ τῇ αὐτοῦ ὑποστάσει σωζομένων καὶ τῶν ἐνεργειῶν καὶ τῶν θελήσεων."Οπου γὰρ εἰσὶ δύο φύσεις, ἐπεὶ καὶ ὁμοφυὴ κηρύττομεν τὸν Χριστὸν τῷ Πατρί καὶ ἡμῖν, ἑκατέρας φύσεως τὴν ἰδιότητα συναναφυλάττοντα καὶ οὐχὶ τὰς δύο φύσεις εἰς μίαν κρασθεῖσθαι ἢ συναναχεθείσας ἔχοντα, ἐκεῖ ἐξ ἀνάγκης καὶ δύο ἐνέργειαι καὶ δύο θελήματα.'Ενήργει γάρ ἡ τῆς θεότητος φύσις τὰ ἑαυτῆς ὁπότε ἐν τῇ θαλάσσῃ περιεπάτει, ἐπὶ ἀστάτου ὕδατος γηΐνοις ποσὶν ὁ διφυὴς Χριστός, οὐ γεωθέντος τοῦ ὕδατος, ἀλλὰ τῇ τῆς θεότητος ὑπερφυῇ δυνάμει. Συνισταμένου πρὸς τὸ ἀδιάχυτον καὶ ἡ τῆς ἀνθρωπότητος φύσις ἐσώζετο ἀμετάτρεπτος παρεχωρεῖτο πάλιν ἡ σάρξ ὑπὸ τῆς θεότητος καὶ τὰ ἑαυτῆς ὑπεδείκνυεν ὡς ὁπότε καὶ ἐπείνασε, καὶ ἡ θεότης τῶν αὐτῆς ὅρων οὐκ ἐξίστατο. Οὐδὲ γὰρ δοίη τις πώποτε μίαν φυσικὴν ἐνέργειαν, Θεοῦ καὶ ποιήματος, οὔτε γὰρ ἡ ἀνθρωπίνη φύσις τὸν Λάζαρον ἐζωοποίησεν, οὐθ 'ἡ θεϊκὴ ἐδάκρυσεν ἐξουσία. Τὸ μὲν δάκρυον τῆς ἀνθρωπότητος, ἡ δὲ ζωὴ τῆς ἐν ὑποστάτου ζωῆς. 'Αλλὰ κοινῶς δὶ ἀμφοτέρων ἐνήργουν ἑκάτερα διὰ τὸ ταυτὸν τῆς ἐν τῷ Χριστῷ μιᾶς ὑποστάσεως. Εἰ δὲ δύο φύσεις ἐν τῷ Χριστῷ ὥσπερ ἄρα τῇ ἀληθείᾳ εἰσὶ καὶ δύο ἐνέργειαι τούτῳ συμπαραμένουσαι, καὶ δύο πάντως ἐν αὐτῷ τὰ θελήματα, ὅπου γὰρ φύσις αὐτεξούσιος ἐκεῖ καὶ ἐνέργειαι, καὶ ὅπου ἐνέργεια καὶ τὸ θέλημα, ἐξέχονται γὰρ ἀλλήλων. Καί γε διπλὰ ὄντα τὰ τρία ἐν τῷ Χριστῷ, καὶ δεσμὸν θεόπλοκον ἀπεργάζονται, δι 'οὗ Χριστὸς τοὺς μὴ ταῦτα κατασπαζομένους τοῦ ἱεροῦ ἐξοστρακίζει αὐτοῦ ὡς ἀλλοτριόφρονας, οὕτως ἐγώ τε Μανουὴλ ἐλέῳ Θεοῦ ἀρχιεπίσκοπος Κωνσταντινουπόλεως Νέας 'Ρώμης καὶ οἰκουμενικὸς Πατριάρχης

եւ Սրբազան սինոդի սրբազնագոյն եպիսկոպոսները, Տիրոջ սիրով Քրիստոսին պատարագող եղբայրներն ու սպասակիցները, մաղթում ենք քեզ, ամենաերեւելի հայոց ազգի երիցս ազնուագոյն, ամենաերջանկագոյն թագաւոր, որ ամէնից առաջ դո՛ւ լուսաւորուես, ապա նաեւ քո բոլոր ենթակաները, քանզի դո՛ւ ես նրանց գլուխը, իսկ գլխին անխուսափելիօրէն հետեւելու է մարմնի մասերի ու անդամների համադրութիւնը: Եթէ գլխի մէջ է բանականն ու տեսողականը, ապա անհրաժեշտ է, որ ամէնից առաջ նա՛ մտածի ուղղափառ հաւատքի մասին եւ ընդունի ճշմարտութեան լոյսը: Ճշմարտութիւնը հէնց Քրիստոսն է, Ով Իր ճշմարիտ երկրպագողներին՝ մէկ անձի մէջ երկու բնութիւններով, ներգործութիւններով եւ երկու կամքով խոստովանողներին լուսաւորում է Սուրբ Հոգով եւ ճշմարտութեամբ Իր յաւիտենական թագաւորութեան ժառանգաւորներ դարձնում: Իսկ եթէ քո գլխում բացի տեսողականից առկայ է եւ հոտոտելիքը, [ապա] մէկը յոյսով հայեացքը կ'ուղղի դէպի ճշմարտութիւնը, իսկ հոտոտելիքը Քրիստոսի երկու բնութիւնների հոտը կ'առնի: Քեզ լսողներն էլ, ովքեր ըմբոշխնել են քո առատապարգեւութիւնը, լրացնելով լսողութեան ու համի զգայարանները, ճիշտ դատելով վերադառնում են մեզ հետ միութեան: Հայերին իրար կապող քո սրտից հեռու ապրող [հայերը] մարմնի ձեռքերն ու ոտքերը, դեսուդէն են տարուբերում եւ ընթացքի մէջ գտնուող միութիւնը չեն ընդունում: Սակայն որպէսզի Աստուած, ինչպէս շոշափելիքը, կամաց-կամաց վերականգնի քո գլխի տակ գտնուող նրանց չորս զգայարանները, ճիշտ վարուելով՝ մեր ահա երրորդ նամակն ուղարկեցինք: Թէպէտ սրանից առաջ ուղարկողների նամակը աչքի չէր ընկնում շարադրանքի գեղեցկութեամբ, բայց շնորհով Սուրբ Հոգու իր բովանդակութեամբ յար եւ նման էր նրանց[23]*:*

Գերաբարձրութեանդ յայտնի է, որ տէրութեանդ իմացութեամբ, կամքով ու ցանկութեամբ Անտիոքի սրբազնագոյն պատրիարքը, մեր Աստծուց ներշնչուած, Աստծուց փառաւորեալ հզօր կայսեր եւ ներբողեալ պատրիարքի՝ սուրբ տէր Գերմանոսի մօտ առաքինի ու բարեպաշտ մարդկանց՝ Սկոպելոսի մեր սուրբ հօր Թէոդոսիոսի յարգոյ վանքի ամենասուրբ վանահայր Թէոդորետոսի եւ ամենաբարեպաշտ վանական Վլասիոսի[24] *միջոցով նամակներ է ուղարկել, որոնցում միանգամայն պարզ ու յստակ, անկեղծօրէն ասւում էր հռոմայեցիների եւ հայերի միջեւ հաւատքի միութիւն հաստատելու, ուղղափառ դաւանանքի ու մտածողութեան համերաշխութեան մասին: Եւ այն սուրբը*

καὶ οἱ μετ᾽ ἐμοῦ συνόντες τῆς μεγάλης καὶ ἁγίας συνόδου ἱερώτατοι ἀρχιερεῖς καὶ θῦται Χριστοῦ ἀγαπητοὶ κατὰ Κύριον ἀδελφοὶ καὶ συλλειτουργοί, εὐχόμεθα καταυγασθῆναί σε πρῶτον, τρισευγενέστατε, πανευτυχέστατε ῥήξ τοῦ μεγαλεπιφανοῦς γένους τῶν Ἀρμενίων, εἶθ᾽ οὕτως καὶ τοὺς ὑπὸ τὴν σὴν ἐξουσίαν ἅπαντας, κεφαλὴ γὰρ σὺ αὐτῶν καὶ τῇ κεφαλῇ ἐξ ἀνάγκης ἡ τῶν μερῶν καὶ μελῶν σύνθεσις ἐπακολουθήσει. Εἰ δ᾽ἐν τῇ κεφαλῇ τὸ λογιστικὸν καὶ τὸ ὀπτικόν, ἀνάγκῃ πᾶσα ταύτῃ πρώτῃ τῶν ὑπ᾽ αὐτόν τὸ ὀρθόδοξον σέβας διανοήσασθαι καὶ τὸ τῆς ἀληθείας εἰσδέξασθαι φῶς.᾽Αλήθεια γὰρ ὁ Χριστὸς καὶ τοὺς ἀληθινοὺς αὐτοῦ προσκυνητὰς τοῖς ἐν δυσὶ φύσεσι καὶ ἐνεργείαις καὶ θελήσεσιν ἐν μιᾷ δὲ ὑποστάσει τοῦτον ἀνακηρύττοντας ἐν Πνεύματι ἁγίῳ καταφωτίζει καὶ ἀληθείᾳ καὶ κληρονόμους τῆς αἰωνίου αὐτοῦ ποιεῖ βασιλείας. Εἰ δὲ τὸ ἐν τῇ σῇ κεφαλῇ ὀπτικὸν καὶ ἡ ὄσφρησις, τὸ μὲν ἀπίδῃ πρὸς τὴν ἀλήθειαν, ἡ δὲ τὴν ὄσφρησιν ἀναλάβῃ τῶν ἐν Χριστῷ δύο φύσεων. Καὶ οἱ τὰς ἀκοάς σοι ὑπέχοντες καὶ τῶν σῶν γεγευμένοι μεγαλοδωρεῶν, οἱ καὶ ἀκοῆς καὶ γεύσεως τόπον ἀναπληροῦντες ὀρθὰ φρονοῦντες τὴν μεθ᾽ ἡμῶν ἀπάγεσθαι ἕνωσιν. Χεῖρες δέ τινες καὶ πόδες μακράν σοι τῆς συνεκτικῆς τῶν ᾽Αρμενίων ἀπῳκισμένοι καρδίας τῆδε κακεῖσε περιστρέφονται καὶ τὴν ἕνωσιν τόγε νῦν ἔχον οὐ καταδέχονται.᾽Αλλὰ κἀκείνοις κατὰ μικρὸν ὁ Θεὸς ὡς ἀφῇ τῇ τετρακτῇ ἐπανασώσει τῶν αἰσθήσεων τῶν ὑπὸ τὴν σὴν κεφαλὴν ἢ τὸ παρὸν ἡμεῖς καλῶς γε ποιοῦντες ἡμέτερον τρίτον γράμμα ἐξαπεστείλαμεν. Εἰ καὶ τῆς τῶν ἀποστειλάντων τὸ πρὸ τούτου γράμμα χάριτος ἐλλειπόμενον, ἀλλά γε τῆς ὁμοίας ἐκείνοις ἐξεχόμενον τῇ τοῦ παναγίου Πνεύματος χάριτι.

Οἶδεν ἡ πανυψηλότης σου ὡς γράμματα τοῦ ἁγιωτάτου Πατριάρχου ᾽Αντιοχείας εἰδήσει βουλῇ καὶ θελήσει τῆς ἐξουσίας σου πρὸς τὸν κραταιὸν θεόληπτον καὶ θεοδόξαστον ἅγιον ἡμῶν αὐτοκράτορα καὶ τὸν ἀοίδιμον ἐν πατριάρχαις τὸν ἅγιον κύριν Γερμανὸν ἀφίκοντο δι᾽ ἀνθρώπων ἀποκομισθέντα χρηστῶν καὶ εὐλαβείᾳ κεκοσμημένων, τοῦ τε ὁσιοτάτου καθηγουμένου τῆς κατὰ τὸν Σκόπελον σεβασμίας μονῆς τοῦ ὁσίου πατρὸς ἡμῶν Θεοδοσίου ἱερομονάχου Θεοδωρήτου καὶ τοῦ εὐλαβεστάτου μοναχοῦ Βλασίου τὴν κατὰ πίστιν ἕνωσιν ζητοῦντα γενέσθαι μέσον Ῥωμαίων καὶ᾽Αρμενίων ἀπεριέργως πάντι καὶ ἀδόλως καὶ ὁμόνοιαν τοῦ ὀρθοδόξου σεβάσματος καὶ φρονήματος. Καὶ ὁ ἅγιος ἐκεῖνος

(Գերմանոս պատրիարքը) գլուխ եկած այս բարի եւ դրուատանքի արժանի գործը որպէս շահեկան բան ողջունեց, հոգով առաւել ցնծաց, քան սաղմոսագրի յիշածը՝ «որ գտանէ աւար բազում» [Սաղմ. ՃԺԸ 162], անեզր ուրախութեամբ խանդավառուեց: Նա հոգով ուրախանում էր, ցնծում, տենչում ինքն անձամբ ձեզ մօտ գալով՝ գլուխ բերել այդ բարի եւ դրուատանքի արժանի միութիւնը: Սակայն քանի որ բազում պատճառներով նրա այդ գնալը յաջողութիւն չունեցաւ, նա, նաեւ հզօր ու մեր սուրբ կայսեր իմացութեամբ Մելիտենէի սրբազնագոյն մետրոպոլիտին՝ ամենայն խոհեմութեամբ եւ իմաստութեամբ գեղազարդեալ (որին քո տէրութիւնն էլ անտեղեակ չէ), միութիւնը ժամ առաջ իրականացնելու վերաբերեալ նամակով իր փոխարէն ձեզ մօտ ուղարկեց:

Մելիտենէի մետրոպոլիտը, ձեզ մօտ ժամանելով, յանձնեց նամակը, ստացաւ պատասխան նամակ, այդ թւում նաեւ «Հայոց հաւատքի խոստովանութեան գիրը»: Նամակում ասուած էր, որ շուտով քո տէրութեան կողմից պատուիրակներ պիտի ուղարկուեն հաւատոյ խոստովանութեան գրի պատճէնով:

Քիչ ժամանակ անց քո պատուիրակները հաւատոյ խոստովանութեան գրով ժամանեցին մեր հզօր, Աստծուց իմաստնացած սուրբ կայսեր մօտ: Նրա սուրբ թագաւորութիւնը հրաւիրեց մեր ազգի բոլոր եպիսկոպոսներին, քանի որ սուրբ պատրիարք տէր Գերմանոսը մահկանացուն կնքել էր, ծանօթացրեց ձեր հաւատոյ խոստովանութիւնը բովանդակող գրի հետ եւ բոլորի հաւանութեամբ Մելիտենէի սրբազնագոյն մետրոպոլիտին եւ պատրիարքական իշխանաւորներից մէկին թագաւորական ու ժողովական գրութիւններով ուղարկեց՝ իրականացնելու հաւատոյ միութիւնը: Սակայն քեզ մօտ ժամանողները եւ նամակները քեզ յանձնողները փոքր անց ձեռնունայն վերադարձան: Պատճա՞ռը: Քո ասելով՝ ձեր կաթողիկոսը բացակայում է, նա Հռոմկլայում է եւ առանց նրա եւ ձեր բոլոր եպիսկոպոսների կամքի չէք կարող միութիւնն իրականացնել:

Այդ ժամանակուանից ցայժմ անցան տարիներ եւ, ինչպէս տեսնում ենք, հաւատոյ [միութիւնն էք վերստին խնդրում. հաւատոյ][25] *համափառ գրութեամբ մեր հզօր եւ Աստուծով կառավարող սուրբ կայսեր մօտ ձեր ուղարկած պատուիրակները ժամանեցին: Մենք հարցը անուշադրութեան չմատնեցինք, խառն իրավիճակի վրայ ուշադրութիւն չդարձրեցինք, նրա քննարկումը չձգձգեցինք, ոչ ցրտաշունչ եղա-*

τὸ καλὸν τοῦτο καὶ ἀξιέπαινον τελεσιούργημα ὡς ἔρμαιον ἀγκαλισάμενος καί τῷ πνεύματι ἀγαλιασάμενος ὑπὲρ τοὺς εὑρίσκοντας κατὰ τὸν ψαλμογράφον σκῦλα πολλά, καὶ τῆς ἀπείρου χαρᾶς ἔνθους ὅλος γενόμενος, ἔχαιρε μὲν πνευματικῶς καὶ ἐσκίρτα καὶ ἐγλίχετο δι' ἑαυτοῦ πρὸς ὑμᾶς ἐλθὼν ἀποπληρῶσαι τὴν καλὴν ταύτην καὶ ἐπαινετὴν ἕνωσιν. Ὡς δ' οὐκ ἦν αὐτῷ ἡ ἄφιξις εὔοδος, διὰ τὰ πλεῖστα τὰ αἴτια, τὸν ἱερώτατον μητροπολίτην Μελιτηνῆς, ὃν οὐδὲ ἡ σὴ ἀγνοεῖ ἐξουσία, ὡς συνέσει πάσῃ καὶ σοφίᾳ κεκοσμημένον, εἰδήσει καὶ τοῦ κραταιοῦ καὶ ἁγίου ἡμῶν αὐτοκράτορος, ἀντ' αὐτοῦ πρὸς ὑμᾶς ἐξαπέστειλε, γράμμασι τοῦτον ἐφοδιάσας τὴν ἕνωσιν ἐπισπεύδουσιν.

Ὡς γοῦν πρὸς ὑμᾶς ἀφίκετο ὁ Μελιτηνῆς καὶ τὰ γράμματα δέδωκεν, ἀντιγράμματα πάλιν ἔλαβε καὶ τῆς τῶν Ἀρμενίων λίβελλον πίστεως, φάσκοντα μετ' ὀλίγον καὶ πρέσβεις σταλῆναι παρὰ τῆς σῆς ἐξουσίας τὸν ἴσον λίβελλον ἀποκομισαμένους.

Παρῆλθεν ὀλίγος καιρὸς καὶ οἱ σοὶ πρέσβεις μετὰ τοῦ λιβέλλου ἀφίκοντο πρὸς τὸν κραταιὸν θεόσοφον ἅγιον ἡμῶν αὐτοκράτορα. Ἡ γοῦν ἁγία αὐτοῦ βασιλεία πάντας συναγαγοῦσα τοὺς τοῦ ἡμετέρου γένους ἀρχιερεῖς, ὁ γὰρ ἅγιος Πατριάρχης κύρις Γερμανὸς πρὸς τὴν μακαρίαν ἀπῆρε ζωήν, τὸν ὑμέτερόν τε ὑπέδειξε λίβελλον καὶ κοινῇ πάντων γνώμῃ πάλιν ὁ ἱερώτατος μητροπολίτης Μελιτηνῆς καὶ εἷς τῶν πατριαρχικῶν ἀρχόντων μετὰ καὶ γραφῶν βασιλικῶν καὶ συνοδικῶν τὴν τῆς πίστεως ἕνωσιν ποιήσοντες ἀπεστάλησαν. Οἱ πρὸς σὲ ἀφικόμενοι καὶ τὰς γραφάς σοι ἐγχειρίσαντες, ἄπρακτοι δι' ὀλίγου ὑπέστρεψαν. Καὶ τὸ αἴτιον, ὡς ἀπό σοῦ ἀκούσαντες ἔφησαν ὅτι ἀπόδημος ἦν ὁ ὑμέτερος Καθολικὸς εἰς τὸ Ῥωμαίων κουλᾶ, καὶ ἄνευ τῆς ἐκείνου βουλῆς ἀλλὰ δὴ καὶ πάντων τῶν ὑμετέρων ἀρχιερέων οὐ δύνασθαι ποιήσασθαι ἕνωσιν.

Παρήλθωσαν ἔκτοτε καὶ μέχρι τοῦ νῦν οἱ μέσον ἐναυτοὶ καί, ὡς ὁρῶμεν, ἡ τῆς πίστεως [ἕνωσις ὑμῖν ζητῆται πάλιν καὶ τῆς πίστεως] ὁμόδοξον σύγγραμμα πρὸς τὸν κραταιὸν καὶ θεοκυβέρνητον ἅγιον ἡμῶν αὐτοκράτορα πρέσβεων καὶ γραφῶν ἐξ ὑμῶν ἀφικομένων, ἡμεῖς οὖν μὴ μελήσει δόντες τὰ περὶ τούτου, μήτε ἀναβολαῖς χρησάμενοι, μὴ πρὸς τὰς τῶν πραγμάτων ἀπιδόντες περιπετείας, μὴ πρὸς τὸ τοῦ καιροῦ χειμέριον,

նակի, ոչ մանաւանդ նախորդ նամակների բովանդակութեանը դէմ եղողներին չընդառաջեցինք եւ չյետաձգեցինք, այլ եռանդագին, անկասելի մղումով արդէն երրորդ անգամ ենք ձեռնամուխ լինում գործի[26] *ամէն ինչում ապաւինելով եռակի փայլով լուսաւորող Ամենասուրբ Երրորդութեանը, աղօթելով Քրիստոսին՝ երկնի եւ երկրի Արարչին, որպէսզի եւ երկրի վրայ հաւատքում միանանք եւ երկնքի թագաւորութիւնում յաւերժական բարիքների ժառանգաւորները դառնանք*[27]*: Բարի գործը գլուխ բերելու համար ձեզ մօտ ուղարկեցինք սուրբ, մաքուր արանց, կատարեալ, հոգով կատարեալ, Սուրբ Հոգով առլեցուն, սուրբ օծմանն արժանացած, արժանաւորներին օծման արժանացնողներին, այն է՝ Մելիտենէի սրբազնագոյն մետրոպոլիտին, որը եւ դրեց գործի սկիզբը, ապա Փիլադելփիայի սրբազնագոյն մետրոպոլիտ ամենագերապատիւ Փոկասին: Նրանք հաւաքուածներիս միահամուռ որոշմամբ լիազօրուեցին կանխաւ առաքուած ձեր հաւատոյ գիրը բարձեալ ձեռքերով ընդունելու եւ ձեզնից պահանջելու մի քանի գլուխներ՝ քրիստոնեայ դարձողներին* մեծապէս օգտակար լինելու, եւ նրանց համար, ովքեր դրանք չեն յաւելում: Մենք այդպէս դատեցինք, կատարեցինք եւ ուղարկեցինք առանց պաշտպանուելու հնարաւորութեան: Որով քո տէրութեանը, քեզ հետ եղողներին ու քեզ ենթականերին մնում է մեր եպիսկոպոսներին ուրախութեամբ ընդունել, բարեացակամօրէն ունկնդրել նրանց ասելիքները, որպէսզի դուք եւս փառաւորուէք, ինչպէս ձեր նախնիները, որոնք հայոց ուղղափառ թագաւոր ներբողեալ Տրդատի հետ փայլեցին Նիկիայի մեծ քաղաքում գումարուած առաջին [Տիեզերական] ժողովում, ապա եւ երկրորդ եւ երրորդ ժողովներում*[28] *եւ, մարգարէի ասածով, կ՚ապրէք յաւիտեանս: Պահպանեցէ՛ք ուղղափառ դաւանանքը, որպէսզի ձեր մեծախոհութիւնը քարոզուի ընդդէմ բոլոր հեթանոսների, որոնք եւ պիտի ասեն. «Ահա իմաստուն ու գիտակից այս մեծ ազգը, մեր Տէր Աստուածը Իրեն կանչողների մէջ է, Իր ողորմածութիւնը հրաշքներով է արտայայտում, ցաքուցրիւ եղածը ի մի բերում»: Նա քո՝ երիցս ազնուագոյն թագաւորական իշխանութիւնն էլ պիտի ուղղի դէպի միացումը մեզ հետ, պիտի քեզ եւ բոլոր հաւատոյ միութեանը հետամուտ եղողներին հեռու պահի ամէն տեսակի տհաճ պատահարից:*

* *Հայերին որակելով որպէս «քրիստոնեայ դարձողներ» բիւզանդական կողմը վերստին ցոյց է տալիս իր խիստ միակողմանի մօտեցումը եկեղեցու միութեան*

μὴ τὸ δὴ μεῖζον πρὸς τὰς προλαβούσας ἐπιστολάς, μὴ πρὸς ἄλλό τι τὸ τοῖς μὴ θέλουσιν ὑπερημερίαν χαριζόμενον, ὅλῃ σπουδῇ καὶ ὁρμῇ ἀσχέτῳ, ἐγχειροῦμεν ἤδη τρίτον τῷ πράγματι τῇ τριλαμπεῖ καὶ παναγίᾳ Τριάδι τὸ πᾶν ἀναρτήσαντες, εὐξάμενοι εἰς Χριστόν, τὸν ποιητὴν οὐρανοῦ καὶ τῆς γῆς , ἵνα καὶ ἐν τῇ γῇ τὴν κατὰ πίστιν ἕνωσιν ἑνωθῶμεν καὶ ἐν τῇ βασιλείᾳ τῶν οὐρανῶν κληρονόμοι γενώμεθα τῶν αἰωνίων ἀγαθῶν. Ἄνδρας ἁγίους, ἱερούς, ὅλους, ὅλους τοῦ πνεύματος, πνεύματος πλήρεις ἁγίου, ἁγίου μετόχους χρίσματος, χρίσματος μεταδοτικοὺς τοῖς ἀξίοις, πρὸς ὑμᾶς ἀποστείλαντες, τόν τε ἱερώτατον μητροπολίτην Μελιτηνῆς, πληρώσοντα τὸ καλὸν ἔργον, οὗ κατ᾽ἀρχὴν αὐτὸς ἐποιήσατο, καὶ τὸν ἱερώτατον μητροπολίτην Φιλαδελφείας καὶ πανυπέρτιμον Φωκᾶν, ἐνδεδομένον ἔχοντας ἐξ ἡμῶν τῶν κοινῇ γνώμῃ συναθροισθέντων, τὸ ὑπτίαις χερσὶ τὸν προαποσταλέντα ὑμέτερον λίβελλον ὑποδέξασθαι, καί τινα ὑμᾶς ἀπαιτῆσαι κεφάλαια οὐ μικρὸν πρὸς χρηματισμὸν τοῖς χριστιανίζουσι καὶ μὴ ποιοῦσιν αὐτὰ ἐπαγόμενα. Καὶ ἡμεῖς μὲν οὕτω καὶ νενοήκαμεν καὶ πεποιήκαμεν καὶ ἀπεστείλαμεν ἡμᾶς ἀναπολογήτους πεποιηκότες. Ἐναπέμεινε δὲ τῇ σῇ ἐξουσίᾳ καὶ τοῖς σὺν σοὶ καὶ ὑπὸ σὲ τὸ τοὺς ἡμετέρους ἀρχιερεῖς μετὰ περιχαρείας εἰσδέξασθαι καὶ οὓς εὐήκοον ὑποσχεῖν τοῖς παρ᾽ αὐτῶν λαληθησομένοις, ἵνα δοξασθεῖητε καὶ ὑμεῖς ὡς καὶ οἱ πρόγονοι ὑμῶν οἱ μετὰ τοῦ ὀρθοδόξου βασιλέως τῶν Ἀρμενίων ἀοιδήμου Τηριδάτου ἐν τῇ πρώτῃ διαλάψαντες συνόδῳ τῇ κατὰ τὴν μεγαλόπολιν Νίκαιαν ἀθροισθήσῃ, ἀλλὰ δὴ καὶ ἐν τῇ δευτέρᾳ καί τρίτῃ συνόδῳ, καὶ ζήσησθε κατὰ τὴν προφητείαν εἰς τὸν αἰῶνα, καὶ φυλάξητε τὸ ὀρθόδοξον, ὅπως ἡ σύνεσις ὑμῶν καὶ ἡ σοφία ἐναντίον πάντων τῶν ἐθνῶν κηρυχθείη, οἵ καὶ ἐροῦσιν· ἰδοὺ λαὸς σοφὸς ἐπιστήμων, τὸ ἔθνος τὸ μέγα τοῦτο, ὅτι κύριος ὁ Θεὸς ἡμῶν ἐστὶν ἐν πᾶσι τοῖς ἐπικαλουμένοις αὐτόν, ὁ θαυμαστῶν τὰ ἐλέη αὐτοῦ καὶ διεσπαρμένα πάντα συνάγων πρὸς μίαν ἑνότητα, ὃς καὶ τὴν σὴν ὁδηγῆσαι τρισευγενεστάτην ῥηγικὴν ἐξουσίαν εἰς τὴν τῆς μεθ᾽ἡμῶν ἑνώσεως σύγκρισιν καὶ φυλάξαι σὲ καὶ πάντας τοὺς εἰς τὴν τῆς πίστεως ἕνωσιν σπεύδοντας ἀνωτέρους παντὸς ἀνιαροῦ συναντήματος.

խնդրում: Փաստօրէն, ըստ նրանց՝ հայերն անգամ քրիստոնեայ չեն եւ պէտք է քրիստոնեայ դառնան: Այսպիսի ոգով կատարուած բոլոր միաբարական փորձերը բնականաբար պէտք է հակարդիւնք լինէին (խԿ):

Հաճութեամբ եւ շնորհով [Քրիստոսի] անսկիզբ եւ ամենազօր Հօր, ամենասուրբ ու կենարար Հոգու՝ ի մի ներբողուող ամենասուրբ, ամենագործ, անսկիզբ եւ անեղ, ամենայնի արարող, գերագոյ Երրորդութեան միջնորդութեամբ ու պահպանութեամբ, ամենագերօրհնեալ մեր Տիրուհու՝ ամենափառաւորեալ Աստուածածնի եւ ամենայն սրբոց, ամէն:

Մանուէլ՝ ողորմութեամբն Աստուծոյ արքեպիսկոպոս Կոստանդնուպոլսի Նոր Հռոմի եւ տիեզերական պատրիարք:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1 *Գերմանոս պատրիարքի նամակի վերնագիրը (ինչպէս եւ Մանուէլ պատրիարքի), Կոստանդնուպոլսի պատրիարքարանի դիւանապետին է վերաբերում:*

2 *Սուրբ գրքում «բանսարկու» է թարգմանւում յունարէն «διάβολος» բառը:*

3 *Ամէն անգամ, երբ բարձրանում էր հայ-յոյն եկեղեցիների միութեան հարցը, (աւելի ուշ՝ նաեւ հայ-կաթոլիկ) երկու կողմն էլ յիշում էին Կոստանդին Ա-ի եւ Տրդատ Գ-ի դաշինքի մասին աւանդութիւնը:*

4 *Խօսքը «լաւարոն»-ի մասին է (labarum, թագաւորական դրօշ), որն, ըստ աւանդութեան, Կոստանդին Ա-ի եւ Մաքսենտոսի միջեւ 312 թ. տեղի ունեցած ճակատամարտի սկզբում երկնքում երեւաց կայսրին: Լաւարոնի վրայ գրուած էր. «Սրանով կը յաղթես»: Աւանդութիւնը բերուած է Եւսեբիոս Կեսարացու «Եկեղեցական պատմութեան» մէջ:*

5 *Այս մանրամասնութիւնները Գերմանոս պատրիարքը գիտի Ագաթանգեղոսի «Հայոց պատմութեան»՝ Ժ դարի երկրորդ կէսում Սիմէոն Մետափրատէսի կատարած յունարէն թարգմանութիւնից, որը տեղ է գտել նրա «Սինաքսար»-ում («Վարք սրբոց»):*

6 *«Մթին Եգիպտոսի բանսարկուն» (սատանան) թարգմանում ենք բառացի: Ըստ Սուրբ Գրքի՝ Եգիպտոսը իսրայելացիների գերութեան եւ տառապանքների վայրն էր:*

7 *Ակնարկում է հրէաներին Եգիպտոսի գերութիւնից ազատող Մովսէս մարգարէին եւ նրա եղբօրը՝ Ահարոնին:*

8 *Համաձայն բիւզանդական կայսերական գաղափարախօսութեան՝ աշխարհում գոյութիւն ունի մէկ թագաւոր (վասիլեւս)՝ բիւզանդական կայսրը: Միւս բոլոր թագաւորները Բիւզանդիայի համար իշխաններ էին, կառավարիչներ, բայց ոչ թագաւորներ: Արեւմուտքի թագաւորները, ապա եւ Կիլիկիայի հայոց թագաւորը բիւզանդական պաշտօնական փաստաթղթերում կոչուած են «ռեքս»: Այս մասին աւելի մանրամասն տե՛ս Հ. Բարթիկեան, Միքայէլ Իտալիկոսի «Ներբողեանը» եւ Կիլիկիայի հայոց առաջին թագաւորի խնդիրը, Պատմա-բանասիրական հանդէս, Երեւան, 1984, հ. 4:*

Εὐδοκίᾳ καί χάριτι τοῦ ἀνάρχου καὶ παντοδυνάμου πατρὸς αὐτοῦ καὶ τοῦ παναγίου καὶ ζωοποιοῦ πνεύματος τῆς συναϊδίως ὑμνουμένης παναγίας καὶ παντουργοῦ καὶ ἀνάρχου καὶ ἀκτίστου καὶ τῆς τοῦ παντὸς δημιουργικῆς ὑπερουσίου Τριάδος καὶ μεσιτείαις καὶ προστασίαις τῆς πανυπερευλογημένης δεσποίνης ἡμῶν καὶ πανυπερενδόξου Θεοτόκου καὶ πάντων τῶν ἁγίων, ἀμήν. Μανουὴλ ἐλέῳ Θεοῦ ἀρχιεπίσκοπος Κωνσταντινουπόλεως Νέας Ῥώμης καὶ Οἰκουμενικός Πατριάρχης.

9 *Հայ Եկեղեցին ընդունում է Նիկիայի (325 թ.), Կոստանդնուպոլսի (381 թ.) եւ Եփեսոսի (431 թ.) տիեզերական ժողովների կանոնները: Հայ Եկեղեցին չընդունեց Քաղկեդոնի (451 թ.) ժողովի որոշումները՝ մերժելով նրա՝ Քրիստոսի երկու բնութիւնների մասին ընդունած բանաձեւը, եւ խզեց իր կապերը Բիւզանդական Եկեղեցուց:*

10 *Մանուէլ պատրիարքի նամակում նա կոչուած է Վլասիոս: Չի բացառւում, որ սխալը պատրիարքինը չէ, այլ ձեռագիրն արտագրող գրչինը:*

11 *Այդպէս է բնագրում՝* «ῥῆγας»:

12 *Սաղմոսաց գրքի այս խօսքերը՝ «որ գտանէ աւար բազում», բերում է իր նամակում Մանուէլ պատրիարքը՝ նշելով իր աղբիւրը: Մանուէլը իր նամակը գրելիս ձեռքի տակ է ունեցել Գերմանոսի նամակը: Դա հաստատւում է ոչ միայն այս մէջբերումով: Տե՛ս ծանօթ. 15 եւ 26:*

13 *Ակնարկում է Չորրորդ Խաչակրաց արշաւանքին (1204 թ.), երբ լատին խաչակիրները գրաւեցին Կոստանդնուպոլիսը: Բիւզանդական կայսրն ու Կոստանդնուպոլսի պատրիարքը ստիպուած հաստատուեցին Նիկիա քաղաքում մինչեւ լատինների տիրապետութեան վերացումը (1261 թ.):*

14 *«Աստուծոյ մեծ եկեղեցին» Սուրբ Սոֆիայի տաճարն է Կոստանդնուպոլսում:*

15 *«Որ եւ երկրի վրայ հաւատքում միանանք եւ դառնանք ժառանգաւորներն Աստուծոյ» նախադասութիւնը հանդիպում է եւ Մանուէլի նամակում: Վերջինս այն վերցրել է Գերմանոսի նամակից: Տե՛ս ծանօթ. 26:*

16 *Ձեռագրում եղծուած է մէկ տող:*

17 *Այն տպաւորութիւնն է ստեղծւում, թէ խօսքը Մանուէլի՝ Կիլիկիա ուղարկած 3-րդ նամակի մասին է: Իրականում այն վերաբերում է եկեղեցիների միութեան երրորդ փորձին: Տե՛ս V. Laurent, Les Regestes des actes du Patriarcat de Costantinople. Vol. I. Les actes des Patriarches, Fasc. IV, Les Regestes de 1208 a 1309, Paris, 1971, p. 116:*

18 Աշխարհի արարչագործութեան 6756 թ. համապատասխանում է Ք. թ. 1247-1248 թթ. ժամանը:

19 Թարգմանութեան մէջ ածականի կրկնակի գերադրական ածանցները պահպանուած են ըստ յունարէն բնագրի:

20 Հայոց թագաւորն այստեղ եւս կոչուած է «ռեքս»: Տե՛ս ծանօթ. 8:

21 Տե՛ս ծանօթ. 17:

22 Բնագրում՝ «ռեքսի իշխանութեանդ»:

23 Ոչ յստակ նախադասութիւն է: Խօսքը հաւանաբար վերաբերում է Եկեղեցիների միութեան երկրորդ՝ 1240-1244 թթ. միջեւ տեղի ունեցած փորձի առիթով գրուած նամակին:

24 Գերմանոս պատրիարքի նամակում՝ Վասիլիոս:

25 Ուղիղ փակագծերի մէջ առնուած բառերը գրչի մեղքով թիւ 77 ձեռագրում բաց են թողնուած: Դրանք կան թիւ 207 ձեռագրում:

26 Տե՛ս ծանօթ. 17:

27 Տե՛ս ծանօթ. 15:

28 Հայոց «նախնիներ» ասելով՝ նկատի ունի ոչ թէ Տրդատին, այլ մեր Եկեղեցու այն հոգեւորականներին, որոնք մասնակցեցին առաջին երեք տիեզերական ժողովներին:

Պարոյր Մուրադեան

ՈՒՐՈՒԱԳԻԾ ՀԱՅՈՑ ՍՐԲԱԽՕՍԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ

Անցեալ դարասկզբին (1914 թ.) Հ. Ն. Ակինեանի կատարած այն դիտարկումը, թէ «հայկական սրբախօսական մատենագրութիւնը երկու պարագայի կը կարօտի՝ ինչ ազդեցութեանց տակ ձեւաւորիլն ու զարգացումի ընթացքը, եւ ապա՝ դարուց ընթացքին նախնական խմբագրութեանց կրած փոփոխութիւնների ուսումնասիրութիւն[1]», տակաւին գիտական հանգրուանի չի հասել: Թէեւ հայոց «Ցայսմաւուրքին» վերաբերող հրապարակումների թիւը բաւականաչափ հարստացել է (տե՛ս ստորեւ ներկայացուող մատենագիտութիւնը), բայց քանի դեռ չունենք այդ ծաւալուն ժողովածուների գիտական հրատարակութիւն եւ ընդգրկած նիւթի համեմատական քննութիւն, սրբախօսութեանը վերաբերող մեր պատկերացումները ուրուագծային կը մնան: Մատենագրական պատառիկային տեղեկութիւններից կարող ենք եզրակացնել, թէ մինչեւ «Ցայսմաւուրաց» կազմաւորումը վարքերն ու վկայաբանութիւնները գերազանցապէս «Տօնական», «Ճառընտիր» եւ այլ կարգի ժողովածուների մէջ էին ընդգրկւում: Այսպէս, «հարանց հայր» Սողոմոն Մաքենացու կազմած «Տօնականում» (747 թ.)[2], որ Ստ. Օրբէլեանի բնութագրմամբ էր «պայծառացուցիչ տօնից տէրունական եւ յիշատակք մարտիրոսաց»[3], կային շուրջ երկու տասնեակ վարքեր ու վկայաբանութիւններ[4]: Հայոց Գէորգ Գառնեցի եւ Մաշտոց Սեւանցի

1 Հ. Ներսէս Ակինեան, Նիւթեր հայ վկայաբանութեան ուսումնասիրութեան համար, Վիեննա, 1914, էջ 1-2

2 Նշանաւոր Մշոյ Ճառընտրի (ՄՄ. թիւ 7729) նախօրինակ: Տե՛ս Ա. Մաթեւոսեան, Ե՞րբ եւ որտե՞ղ է գրուել Մշոյ Տօնական-Ճառընտիրը, «Բանբեր Մատենադարանի», հատ. 9, Երեւան 1969, էջ 137-161:

3 Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, 1910, էջ 132

4 Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատեանադարանի, հատ. Բ, Երեւան 1970, էջ 598

կաթողիկոսների օրոք (878-898 եւ 898-899 թուականներ) Սուրբ Ատոմայ ուխտի առաջնորդ Գագիկը, «զյիշատակ մարտիրոսացն միայարեալ ի գիր, որ Ատոմայ գիր անուանեալ ասի»[5], կազմում է վկայաբանութիւններ բովանդակող յատուկ ժողովածու: Ցաւօք, հայագիտութեանը այս հաւաքածուներն իրենց սկզբնական տեսքով տակաւին անծանօթ են: Բայց որ Է-Ժ դարերում այդպիսիք եղել են եւ բաւական լայն ճանաչում են ունեցել, կարելի է հաւաստիանալ, բացի պատմիչների ու յիշատակարանների վկայութիւններից, նաեւ այդպիսի մի ժողովածուից քաղուած եւ նոյն դարերում հայերէնից վրացերէն թարգմանուած վարքերի ու վկայաբանութիւնների մի պատկառելի քանակութեան գոյութեան փաստով, որ պահպանուել է Աթոսի Ժ(ԺԱ) դարի նշանաւոր «Ճառընտիրում» (հին թիւ՝ 57, նոր՝ 8)՝ «Այս վկայաբանութիւնները հայերէնից են թարգմանուած» յիշատակութեամբ[6]: Ուրեմն վստահաբար կարելի է ասել, թէ մինչեւ Յովսէփ Կոստանդնուպոլսեցու՝ յունարէնից կատարած «Ցայսմաւուրաց» թարգմանութիւնը (991 թ.) մեզանում կային վարքերի ու վկայաբանութիւնների ժողովածուներ, բայց, հաւանաբար, այդ նիւթերը համակարգուած չէին ըստ տօնելի օրերի, ուստի Յովսէփ թարգմանիչը «Հոռոմ Տօնացոյցներից» ընտրել է այնպիսին, որ համեմատաբար լիակատար է նկատուել. «իցեն եւ այլ Հոռոմ Տօնացոյցք, յորում չեն այս սուրբքս գրեալ, այլ այլ սրբոց պատմութիւնք են», եւ իր թարգմանութիւնն ուղարկել «ի հայոց եկեղեցիս, որ ընթեռնուն եւ գրեն զիւրաքանչիւր սրբոցն զճգնութիւնս»[7], այսինքն՝ թարգմանական «Ցայսմաւուրքը» լրացնեն ազգային եկեղեցու

5 Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 160

6 Նկարագրութիւնը տե՛ս R. Blake, Catalogue des manuscrits géorgiens de la Laure d'Iviron au Mont Athos, ROC 28 (1931-1932), p. 318-329. Н. Я. Марр, Из поездки на Афон..., ЖМНПр: т. X (1899), март., стр. 1-24, նոյնի՝ Агиографические материалы по грузинским рукописям Ивера, ЗВО, т. XIII (1901), стр. 1-88. Պարոյր Մուրադեան, Ագաթանգեղոսի հին վրացերէն խմբագրութիւնները, Երեւան 1982, էջ 115-121: Ցիշեալ վարքերի ու վկայաբանութիւնների հրատարակութիւնը տե՛ս Իլիա Աբուլաձէ, Վրաց-հայկական գրական փոխյարաբերութիւնները (Թ-Ժ դարեր), Թբիլիսի, 1945 (վրացերէն):

7 Տե՛ս Հ. Ն. Ակինեան, Յովսէփ Կոստանդնուպոլսեցի՝ թարգմանիչ Ցայսմաւուրքի, ՀԱ, Վիեննա 1957, էջ 3, 10: Ձեռագրի նկարագրութիւնը տե՛ս Ցուցակ հայերէն ձեռագրաց Մխիթարեան մատենադարանին ի Վիեննա, հատ. Բ, կազմեց Հ. Համազասպ Ոսկեան, Վիեննա, 1963, էջ 692-714:

ճանաչած տեղական սրբերի վարքերով ու վկայաբանութիւններով: Ցայսմաւուրքային սեպտեմբերեան ողջ տարին ներկայացնող այս երկը հարկաւ «յունական Ցայսմաւուրքն է նախնական վիճակի մէջ»[8], այսինքն՝ Մետափրաստէսի եւ Քսիփիլինոսի մշակած նիւթի նախնական տարբերակը:

Յովսէփի ձեռնարկումի առաջին արձագանքողն ու շարունակողը եղաւ Գրիգոր Մագիստրոսի Վահրամ որդին, որ իբրեւ կաթողիկոս յայտնի է Գրիգոր Վկայասէր անունով (1065-1105 թթ.): «Վկայասէր» մականունն ինքնին յուշում է նրա արդիւնաւոր գործունէութիւնը յունարէնից, լատիներէնից եւ ասորերէնից վարքեր ու վկայաբանութիւններ թարգմանելու, ինչպէս նաեւ նորերը կազմելու մարզում: «Ցայսմաւուրաց» յիշատակարանները նրան են յատկացնում այդ ժողովածուն 46 միաւորով հարստացնելու՝ «Ճառընտիր-Տօնամակ, Տօնանամակ-Տօնական, Ցայսմաւուրք» կազմելու առաքելութիւնը[9]: Յետագայում «Վարք սրբոցները» լրացնելուն իրենց նպաստը բերին Ներսէս Շնորհալին, Գրիգոր Անաւարզեցին, մասամբ՝ նաեւ այլք: Եւ այնուամենայնիւ, հայոց վարդապետները բաւարար չէին նկատում կատարուած աշխատանքը, ուստի Վանական վարդապետը (մահ. 1251 թ.) յանձնարարեց իր աշակերտներին՝ Տէր Իսրայէլին եւ Կիրակոս Արեւելցուն, ստուգել նահատակութեանց օրերի համապատասխանութիւնը Տօնացոյցին (Տէր Իսրայէլ) եւ լրացնել սրբախօսական նոր երկերով (ճառեր, վարքեր): Կիրակոսին է յատկացւում շուրջ 170 ճառերի ու վարքերի մշակումը[10]:

«Ցայսմաւուրքի» վերջին խմբագրողը եղաւ Գրիգոր Խլաթեցին («Եւ ինքն ըստ իւրում իմաստութեանն յաւել ի գիրքս յայս բազում շահաւէտ եւ օգտակար բանս ի հարանց վարուց եւ ի պատմագրաց եւ գովասանութիւնս, է որ յինքենէ եւ է որ ի Տօնապատճառէ»)՝ 1425 թ. ինքն էլ կեանքը աւարտելով նահատակութեամբ[11]:

8 Ն. Ակինեան, նշ. աշխ., էջ 2

9 «Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ», Ե-ԺԲ դարեր, աշխատասիրութեամբ Ա. Ս. Մաթեւոսեանի, Երեւան 1988, էջ 121-140: Լատիներէնից թարգմանելու պարագան Մ. արք. Օրմանեանը մերժում է (Ազգապատում, § 881):

10 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրութեամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանեանի, Երեւան, 1961, էջ Թ-ԺԱ

11 Տե՛ս Սեդա Մարաբեան, Գրիգոր Խլաթեցու ձեռագրական ժառանգութիւնը, «Բանբեր Մատենադարանի», թիւ 15, Երեւան 1986, էջ 179:

«Ցայսմաւուրքների» մէջ ընդգրկուած վարքերի ու վկայաբանութիւնների նշանակալի մասը, անկախ թարգմանական կամ ինքնուրոյն լինելու պարագայի, իբրեւ կանոն համառօտուած են հայոց մատենագրութեան մէջ գործառող ընդարձակ խմբագրութիւններից: Դժբախտաբար, առ այսօր այդ ընդարձակ խմբագրութիւնները ի մի չեն բերուած ու հատորաւոր գիտական հրատարակութեան ենթարկուած: Հ. Մ. Աւգերեանի 12 հատոր կազմող (կամ միակտուր) հրատարակութիւնը նշանակալի չափով վերաշարադրանք է, ուստի այն չի նոյնանում ձեռագրերում առկայ բնագրերի հետ: Գիտական են, բայց ոչ քննական-համեմատական Հ. Ղ. Ալիշանի խմբագրած «Սոփերքի» հատորների մէջ ընդգրկուածները, ինչպես նաեւ 1874-ին լոյս տեսած «Վարք եւ վկայաբանութիւնք սրբոց. հատընտիր քաղեալք ի Ճառընտրաց» երկու հատորները: Մասամբ նոյնը վերաբերում է նաեւ «Վարք սրբոց հարանց եւ քաղաքավարութիւն նոցին ըստ կրկին թարգմանութեան նախնեաց» ժողովածուներին (Վենետիկ, 1855, հատ. Ա, Բ): Վարքերի ու վկայաբանութիւնների առանձին խմբեր կամ շարքեր ու միաւորներ քննութեամբ ու լուսաբանութեամբ հրատարակել են Հ. Ն. Ակինեանը, Ի. Աբուլաձէն, Գ. Տէր-Մկրտչեանը, Պ. Պետերսը, Գ. Յովսէփեանը եւ այլք: Ի դէպ, Երեմիա Քէօմիւրճեանը գիտակցել է նոր ժամանակների վկաների պատմութիւնները գրի առնելու անհրաժեշտութիւնը եւ 1686-ին կազմել «Պատմութիւն նորոց նահատակաց» ժողովածուն, որ ցարդ անտիպ է (Վենետիկի ձեռագիր թիւ 509): Առաւել ամփոփը Յ. Մանանդեանի եւ Հր. Աճառեանի աշխատասիրութեամբ լոյս տեսած «Հայոց նոր վկաները» (1155-1843 թթ., գիտական հրատարակութիւն) ժողովածուն է (Վաղարշապատ, 1903 թ.): «Ամփոփ» եւ ոչ «լիակատար» ենք կոչում, որովհետեւ նրանից դուրս մնացած վարքեր ու վկայաբանութիւններ եւս կան (խօսքը 1843 թուականից յետոյ նահատակուածներին չի վերաբերում): Այդպիսին է, օրինակ, Սամշուիլդէում (Շամշուլտէ) 1450 թուականին նահատակուած «երեք հազար հայոց ու վրաց վկայաբանութիւնը»[12], իսկ վաղմիջնադարեան երկու յուշարձան՝ «Դաւթի եւ Տիրիճանի», «Կողացի ինը մանկանց» վկայաբանութիւնները պահպանուել են միայն հին վրացերէն թարգմանութեամբ եւ դուրս մնացել հայոց վկայաբանական գրականութեան ցանկից[13]: Ինքնին հասկանալի է, որ հայոց սրբախօսական գրականութեանը կատարելապէս անծանօթ են Արեւմտեան Եկեղեցու տօնացոյցներում ներկայացուած հայազգի սրբերի մի քանի անուններ (Սան Մինիատո բեքս էրմինէից մինչեւ Տէր Կոմիտաս Քէօմիւրճեան): Թորգոմ Արքեպ. Գուշակեանի հաշուարկումներով հայոց «Տօնացոյցում» ներկայացուած սրբերի ընդհանուր թիւը 215 է, ըստ աթոռների.

Անտիոքեան -	19	Թեսալիական -	3	Կեսարիոյ -	10
Պոնտական -	5	Կիպրոսեան -	1	Ափրիկեան -	2
Կիլիկեան -	8	Գաղատական -	13	Սեբաստեան -	13
Եփեսոսեան -	7	Աղեքսանդրեան -	37	Պարսից Եկեղեցի -	29
Միջագետեան -	10	Բիւթանիական -	24	Լիկայոնիոյ -	6
Կ. Պոլսոյ -	12	Եթովպիոյ -	1	Հայոց Եկեղեցի-	104[14]
Երուսաղէմեան -	6	Հռոմի Եկեղեցի -	15		

Ընդ սմին, թուարկումների մէջ կան խմբական նահատակներ՝ Հիպերիքեաններ, Քառասուն մանկունք, Քառասունհինգ վկայք, Եօթն մանկունք Եփեսոսի, Թէոդիտոն եւ եօթն կուսանք, Բաբելաս դպիր եւ ութսուներեք աշակերտներ, Սուքիասեանք, Ոսկեանք, Վարդանանք եւ այլք:

Ընդհանրական Եկեղեցու սրբերը, աննշան բացառութեամբ, մինչեւ Քաղկեդոնի 451 թ. ժողովը ճանաչուածներն են: «Ցայսմաւուրքներում», անշուշտ, կան եւ ուշ շրջանի սրբերի վարքեր ու վկայաբանութիւններ, բայց Հայոց Եկեղեցու կիրառած «Տօնացոյց»-ում չեն ընդգրկուած: Այսպէս, օրինակ, «Տօնացոյցը» գիտէ Սիմէոն Սիւնակեաց Աւագին (459 թ.), մինչդեռ «Ցայսմաւուրքը» ներկայացնում է եւ Սիմէոն Կրտսերին (մահ. 592 թ.)՝ առանձնացնելով նրան Սիմէոն անունը կրող բազմաթիւ միւս սրբերից: Այսպիսի դէպքերը քիչ չեն: Նոյնիսկ «Ցայսմաւուրքների» մէջ ընդգրկուած ազգային նահատակներից շատերը, մասնաւորապէս Գրիգոր Տաթեւացուն ժամանակագրօրէն յաջորդած եւ Յ. Մանանդեանի եւ Հր. Աճառեանի ժողովածուում «նոր վկաներ» կոչուած

12 ՄՄ. թիւ 4696, էջ 235-236

13 Այդ երկու յուշարձանի քննութիւնն ու հայերէն թարգմանութիւնը տե՛ս «Բանբեր Մատենադարանի», թիւ 12, Երեւան 1977, էջ 168-190:

14 Տ. Թորգոմ Պատրիարք Գուշակեան, Սուրբք եւ տօնք Հայաստանեայց եկեղեցւոյ, Անթիլիաս 1981, էջ 279-301

նահատակները, պաշտօնապէս սրբացուած չեն եւ «Տօնացոյցում» չկան: Առհասարակ Հայոց Եկեղեցին այս հարցում զարմանալի պահպանողականութիւն է ցուցաբերել: Մենք նոյնիսկ չգիտենք, թէ այն երբեւէ ունեցե՞լ է սրբացման յատուկ կանոն (Փաւստոսի մօտ այդպիսի ակնարկ կայ): Ազգային Եկեղեցու ժողովների՝ պահպանուած արձանագրութիւններում եւ որոշումներում այդ կարգի տեղեկութիւններ չկան: Գիտենք միայն, որ ԺԸ դարում «Տօնացոյցը» կարգաւորելիս կաթողիկոս Սիմէոն Երեւանցին սեփական նախաձեռնութեամբ որոշ յաւելումներ ու սրբագրումներ է կատարել, որ աւանդութեան ուժով շարունակւում է: Ուստի պատահական չէ, որ Շնորհք Արքեպ. Գալուստեանի «Հայազգի սուրբեր» գրքի վերջում (Իսթանպուլ, 1982 թ.) «Տօնելի սուրբերու» ցանկին (55 անուն) յաջորդում է «Ցանկ սրբակենցաղ անձերու եւ մեծագործ դէմքերու, որոնք Տօնացոյցի չեն անցած» (25 անուն): Վերջիններիս թւում են կաթողիկոսներ Գիւտը, Յովհան Մանդակունին, Մաշտոց Սեւանցին, Գրիգոր Ապիրատը, Գրիգոր Վկայասէրը, Գրիգոր Պահլաւունին, Գրիգոր Տղան, Գրիգոր Քարավէժը, պատրիարքներ Գրիգոր Շղթայակիրը, Գրիգոր Պարոնտէրը, Յովհաննէս Կոլոտը, թագաւորներ Աշոտ Ա Բագրատունին, Աշոտ Ողորմածը, Գագիկ Արծրունին, Լեւոն Մեծագործը, մի քանի զօրավարներ, մեծանուն վարդապետներ եւ այլն:

Հայոց սրբախօսական գրականութիւնը, այնուամենայնիւ, չի շրջանակուել ազգային Տօնացոյցով ընդունելի սրբերի վարքերով ու վկայաբանութիւններով: Իբրեւ գրական ընթերցելիք միջնադարում հայերէն են թարգմանուել Արեւելեան ու Արեւմտեան եկեղեցիներում ու մատենագրութիւնների մէջ առկայ բազմաթիւ վարքագրական ու վկայաբանական յուշարձաններ՝ յաճախ նոյնիսկ ընդարձակ ու համառօտ տարբեր խմբագրութիւններով: Ուշագրաւ է, օրինակ, որ մեր Տօնացոյցին անծանօթ Աբերիկոս Յերապոլսոյ եպիսկոպոսի վարքի ընդարձակ խմբագրութիւնը հայերէն է թարգմանուել Ե դարի կէսերին եւ, ինչպէս Հ. Ն. Ակինեանն է բացայայտել, գրական աղբիւր ծառայել նոյն դարի պատմիչներ Ագաթանգեղոսի եւ Փաւստոս Բուզանդի պատմական երկերին[15]: Աւելին, այդ վարքի աւարտին եղած յունարէն տապանագրի

15 Հ. Ն. Ակինեան, Նիւթեր հայ վկայաբանութեան ուսումնասիրութեան համար, էջ ԺԵ-Ի

բանաստեղծական թարգմանութիւնը հայերէնով գրուած չափածոյ խօսքի անդրանիկ նմոյշներից է:

Հայոց սրբախօսական գրականութեան եւ տօնացուցային խնդիրներ քննարկելիս, կարծում ենք, նկատի պիտի առնուի մի քանի պարագայ, մասնաւորապէս.

ա) Քանի որ երկիրը տեւականօրէն զրկուած էր վարչական-քաղաքական ինստիտուտներից, Եկեղեցին ստանձնեց ազգային կազմակերպութեան դեր, ուստի կրօն եւ ազգութիւն հասկացութիւնները զուգորդուեցին, նոյնացան, հետեւաբար ազգային նկատուած կրօնքից դուրս մնացողները մերժուեցին եւ էթնիկապէս: Մինչդեռ եղան էթնիկապէս օտարներ, որոնք ազգային Եկեղեցում ունեցած բացառիկ հեղինակութեան թելադրանքով ճանաչուեցին իբրեւ իւրայիններ (Աբգար թագաւոր, Հռիփսիմեանք, Սուքիասեանք, մասամբ երեք մեծ կապադովկացիներ եւ այլք):

բ) Ի տարբերութիւն Արեւմտեան Եկեղեցու, Արեւելեան թեւին պատկանող Հայոց Եկեղեցին գերազանցապէս հայեցողական է, ոչ կարգապահական կամ օրէնսգիտական, աւանդապահ է եւ խորհրդական աստուածաբանութեան հետեւորդ: Սրբացումը առաւել հրամանակարգական վարդապետութիւն է պահանջում: Հայոց Եկեղեցին սրբերի երկու աստիճանաւորում է տարբերակում տօնելի եւ յիշատակելի: Առաջինները մեծարւում են ժամերգութեամբ ու պատարագով, երկրորդները՝ Յայսմաւուրք մուծուած ընթերցուածներով: Այդ իրողութիւնը պայմանաւորուած է նաեւ տէրունի տօների եւ պահոց օրերին սրբոց տօն չկատարելու սովորութեամբ:

գ) Թիւ կամ անձայն պատարագը ծանօթ չէ Հայոց Եկեղեցուն (Օրթոդոքս Եկեղեցու Ս. Սաբայի մայրավանքում տօների երեք աստիճանաւորում կար՝ գիշերալոյս արթնութեան կամ մեծ տօն, իրիկնային եւ ժամասացութեան: Վերջին երկուսը միջակ եւ փոքր տօն էին նկատւում: Սրբերի գերակշռող մասի յիշատակը փոքր տօնի օրերին էր նշւում), իսկ պատարագի խորհուրդի կատարման համար պահանջւում է ժողովրդի ներկայութիւն: Եպիսկոպոսական ժողովի նուիրապետական հեղինակութիւնն այստեղ յանձնուած է Ազգային եկեղեցական ժողովին՝ աշխարհական ընտրեալների մասնակցութեամբ: Աշխարհացրիւ մի ժողովրդի համար այդպիսի ժողով գումարելը մեծ դժուարութիւնների հետ էր կապուած, եթէ չասենք նաեւ՝ օտար տիրապետողների համաձայնութիւն պէտք էր ստանալ: Այդ պատճառով չէ՞ր, որ

Սիմէոն Երեւանցին ստիպուած էր անձնապէս, առանց Ազգային եկեղեցական ժողովի, մասամբ լրացնել կամ վերանայել Տօնացոյցը:

դ) Կրօնքի եւ ազգութեան զուգորդութեան պատճառով ազգային գետնի վրայ տեղի ունեցած իւրաքանչիւր նահատակութիւն միաժամանակ ընկալւում էր որպէս յանուն դաւանութեան կատարուած իրողութիւն: Եւ որովհետեւ Հայոց պատմութիւնը լեցուն է անհատական կամ խմբային նահատակութեան փաստերով, այն դադարել էր այլեւս բացառիկ իրողութիւն դիտուելուց եւ փաստօրէն վերածուել մի տեսակ ազգային կենսագրութեան:

5) «Տօնացոյց» չմտած առանձնական կամ խմբական նահատակների յիշատակը մեծարելու եղանակներից է «Ամենայն սրբոց՝ Հնոց եւ նորոց, յայտից եւ անյայտից» տօնի կատարումը, որի արձագանքը լսելի է Երուսաղէմի վաղմիջնադարեան խճանկարի արձանագրութեան մէջ՝ «որոց անուանք Տէր գիտէ»:

Կարծում ենք, այս ու այլ պատճառներով է պայմանաւորուած այն տարբերութիւնը, որ ակնյայտօրէն գոյութիւն ունի Հայոց Տօնացոյցների եւ Ցայսմաւուրքների ընդգրկումների միջեւ:

Բնականոն համարելով սրբախօսական գրականութեան ժառանգութեան վերաբերմամբ ցուցաբերուող հետաքրքրութիւնը՝ պիտի յուսալ, թէ ապագայում, որեւէ թարգմանութեան ենթարկուելուց առաջ, նրանց բնագրերը լոյս կը տեսնեն գիտական-քննական հրատարակութեամբ եւ պատշաճ լուսաբանութիւններով:

«Ցայսմաւուրքին» վերաբերող գրականութեան ցանկ

1. Հ. Միքայէլ Չամչեանց, Հայոց Պատմութիւն, հատ. Ա, Երեւան 1985, էջ 17-18:
2. Հ. Մկրտիչ Աւգերեան, Լիակատար վարք եւ վկայաբանութիւն, հատ. ԺԱ, Ցաւելուած, Վենետիկ 1814, էջ ԾԳ-ՂԶ:
3. Հ. Ղեւոնդ Ալիշան, Շնորհալի եւ պարագայ իւր, Վենետիկ 1873, էջ 30-32:
4. Գ. Զարբհանալեան, Պատմութիւն հայ դպրութեան, Վենետիկ 1898, էջ 569:
5. Հ. Ն. Ակինեան, Ցովսէփ Կոստանդնուպոլսեցի՝ թարգմանիչ Ցայսմաւուրքի, «Հանդէս Ամսօրեայ», Վիեննա 1957, թիւ 1-2, էջ 1-12:
6. Հ. Գ. Սարգսեան, Գրիգոր Անաւարզեցի, Հայրապետ եւ գրիչ, «Բազմավէպ», Վենետիկ 1949, էջ 58-66:

7. Փ. Անթաբեան, «Տօնապատճառ» ժողովածուն, «Բանբեր Մատենադարանի», համ. 10, Երեւան 1971, էջ 103-108:
8. Մայիս Աւդալբէգեան, «Ցայսմաւուրք» ժողովածուները, Երեւան 1982:
9. P. Peeters, Pour l'histoire du Synaxaire arménien, "Analecta Bollandiana", 30 (1911), p. 5-26.
10. N. Adonz, Note sur les Synaxaires arméniens, "Revue d'Orient Chrétien", 24 (1924), p. 211-228.
11. N. Adonz, Les fêtes et les saints de l'eglise arménienne, "Revue d'Orient Chrétien", 26 (1926-1628), pp. 24-104, 222-278.
12. Sabastian Euringer, Die Passio des hl. Januuirus von Benevent und siener Genossen. Aus dem Armenischen übersetzt, "Theologie und Glaube", 5 (1913), S. 369-374.
13. Sirarpie der Nersessean, Le Synaxaire arménien de Grégoire VII d' Anarzabe, "Mélangeo Paul Peeters", II, "Analecta Bollandiana", 68 (1950), p. 261-285.
14. Jean Mécérian, Introduction a l'étude des Synaxaires arménien (Ցայսմաւուրք), "Mélanges de l'Université Saint Joseph", 30 (1953), fasc. 4, Bulletin arménologique, II, p. 99-178.
15. René Aigrain, L'Hagiographie, ses sources, ses méthodes, son histoire. Paris, 1953, p. 87-89.
16. N. Marr, Le Synaxaire géorgien, red. ancienne de l'union arm.-géorg., publié et traduit d'après le manuscrit du couvent Iviron du Mont Athos.- Patr. Orient., XIX, fasc. 5. Paris, 1926.

Յակոբ Քեոսէեան

ՍՏԵՓԱՆՈՍ ՕՐԲԷԼԵԱՆԻ ԴԻՒԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԵՐԿԵՐՆ ՈՒ ՆՐԱՆՑ ԱՂԲԻՒՐՆԵՐԸ

Միջնադարեան Հայաստանի եկեղեցաքաղաքական, կրթամշակութային նշանաւոր գործիչներից մէկն է Ստեփանոս Օրբէլեանը (1250-1303 թթ.): Իր նախնական կրթութիւնը նա ստացել է Տաթեւի առաջնորդ Հայրապետ եպիսկոպոսի մօտ, այնուհետեւ տեղափոխուել Նորավանքի եպիսկոպոսարանը, ուր դարձել է դպիր, ապա ձեռնադրուել սարկաւագ: Ուսումը կատարելագործել է Վայոց ձորում, «առ ոտս աստուածարեալ արանց»: Գլաձորի համալսարանի հիմնադիր Ներսէս Մշեցու յորդորով ձեռնադրուել է վարդապետ: Ստեփանոսի հօր՝ «Տարսայիճ մեծ իշխանի նպատակն էր Օրբէլեան տոհմի մենաշնորհը դարձնել ոչ միայն քաղաքական, այլեւ հոգեւոր իշխանութիւնը»[1]: Այս նպատակին հասնելու համար 1285 թ. գումարուած նախարարական ժողովը Ստեփանոս Օրբէլեանին առաջադրում է Սիւնեաց նահանգի մետրոպոլիտի ու արքեպիսկոպոսի թեկնածու: 1286 թ. Կոստանդին Բ կաթողիկոսը նրան օծում է եպիսկոպոս եւ Սիւնեաց մետրոպոլիտ: Սա հնարաւորութիւն է տալիս «միաւորել նահանգի տարանջատուած հոգեւոր թեմերը մէկ գաւազանի տակ»[2]: Ստեփանոս Օրբէլեանի մետրոպոլիտութեան օրօք զգալիօրէն մեծանում է Սիւնեաց միացեալ եպիսկոպոսական աթոռի տնտեսական հզօրութիւնը: Նրա եռանդուն ջանքերով Նորավանքն ու Տաթեւը, Ցախացքարն ու միւս հոգեւոր օջախները ձեռք են բերում նորանոր կալուածքներ: Ստեփանոս Օրբէլեանն այս նոյն եռանդով էր գործում եկեղեցաքաղաքական, հոգեւոր մարզում նմանապէս: Նա իր գործուն մասնակցութիւնն է բերում միարարների դէմ Հայ Եկեղեցու մղած պայքարին: Պապական արեւմուտքի հոգեւոր, եկեղեցավարչական, քաղաքական ծրագրերի ու հաւակնութիւնների առաջքն առնելու նպատակով նա գրում է մի շարք աշխատութիւններ, որոնց մէջ պախարակելով կաթոլիկ եկեղեցուն ծառայագրուած հայ կղերականներին՝ ներկայացնում է արեւմտամէտ կողմնորոշման վտանգաւոր հետեւանքները Եկեղեցու եւ ազգի համար: Այդ երկերից է Օրբէլեանի «Ողբ ի դիմաց Կաթուղիկէին...» պոեմը (1299-1300 թթ.), ուր անցեալի հերոսական դրուագների, նահատակների լուսեղէն սխրանքի տարփողումով հեղինակը կոչ է անում թօթափել ոչ միայն աշխարհիկ, այլեւ հոգեւոր բռնակալների ատելի լուծը[3]: Այս ստեղծագործութիւնն իր կարեւոր նպաստը բերեց «Հռոմի պապի ոտնձգութիւնների դէմ Հայ Եկեղեցու անկախութեան համար մղուող ազգային ճակատի ստեղծման գործում»[4]: Ազգային ընդդիմութեան ոգին իր առաւել բացորոշ, կազմակերպուած դրսեւորումը գտաւ մասնաւորաբար դաւանաբանական պայքարում: Այդ պայքարն աւելի սաստկացաւ Գրիգոր Է Անաւարզեցի կաթողիկոսի օրօք (1293-1307 թթ.), երբ վերջինս քաղաքական ինչ-ինչ նկատառումներով, նահանջելով ազգային եկեղեցու դիրքերից՝ ակներեւօրէն հակւում է Արեւմուտքի կողմը: Ահագնացող վտանգը կանխելու նպատակով Ստեփանոս Օրբէլեանը 1302 թ. գրում է «Թուղթ վասն հաւատոյ եւ կարգաց եկեղեցւոյ յարեւելեան աշխարհէս առ կաթողիկոսն Հայոց տէր Գրիգոր...» երկը: Այստեղ Սիւնեաց մետրոպոլիտը արեւելեան եպիսկոպոսների (այդ թւում նաեւ նշանաւոր Եսայի Նչեցու) եւ մի խումբ իշխանների անունից յորդորում է Գրիգոր Անաւարզեցուն հրաժարուել իր արեւմտամէտ, Հայ Եկեղեցու շահերին վնասող նկրտումներից եւ գործելակերպից: Ազգային եկեղեցու անկախութեամբ մտահոգ հեղինակը չի ցանկանում, որ «զրախօս, փուչ բաների հետամուտ զրպարտիչ բերանները» կասկածայարոյց շշուկներ տարածեն՝ ասելով, թէ՝ «Մեր կաթողիկոսը յոյն է եւ յոյների հետ է դաշնակցում»: Ուստի նա կոչ է անում Անաւարզեցուն յանձնառու լինել եւ «անթերի պահել երեք աստուածագումար ժողովներին համախոհ ու միաբան հայոց լուսաւորիչ, առաքելական եւ սուրբ անձ Գրիգորի, նրա որդիների ու թոռների հաւատքի սահմանը»[5]: Այնուհետեւ Օրբէլեանը կաթողիկոսին յիշեցնում է

1 Գ. Գրիգորեան, Սիւնիքը Օրբէլեանների օրօք (13-15-րդ դարեր), Երեւան, 1981, էջ 196

2 Անդ, էջ 197

3 Ստեփանոս Օրբէլեանի «Ողբ ի սուրբ Կաթուղիկէն». բնագիրը առաջաբանով եւ ծանօթագրութիւններով հրատ. Կարապետ Կոստանեանց, Թիֆլիս, 1885

4 Գրիգորեան, նշ. աշխ., էջ 218

5 Ստեփանոս Օրբէլեան, Սիւնիքի պատմութիւն, թրգմ., ներածութիւն եւ ծանօթագրութիւններ Ա. Ա. Աբրահամեանի, Երեւան, 1986, էջ 356

ազգային եկեղեցու դաւանանքը հաստատագրող Շահապիւանի (444 թ.), Դուինի (յաջորդաբար՝ 506, 554, 584, 608 թթ.), Պարտաւի (713 թ.), Թէոդուպոլսի (Կարին՝ 633 թ.), Մանազկերտի (726 թ.), Անիի (969 թ.), ինչպէս նաեւ Զաքարէ (մահ. 1212 թ.) եւ Իւանէ (մահ. 1227 թ.) եղբայրների օրօք գումարուած ժողովները, եւ փորձում այդ ժողովների որդեգրած հայրենասիրական ընթացքի օրինակով բորբոքել Անաւարզեցու ազգային պատուախնդրութիւնը: Թղթի հեղինակը կոչ է անում կաթողիկոսին պահպանել ոչ միայն Հայ Եկեղեցու դաւանական, այլեւ ծիսական մաքրութիւնը, առաքելաւանդ սահմանումները: Գիտակցելով եկեղեցու ազգապահպան նշանակութիւնը՝ յանուն Արեւելեան վարդապետների նա համարձակօրէն ասում է, որ իրենք պատրաստ են «տանջանքների, աքսորի, բանտի, մեռնելու յանուն սուրբ եւ առաքելական հայրերի աւանդների»[6]: Սակայն, ինչպէս երեւում է, տուեալ թուղթն ամէն առումով անպատասխան մնաց: Այս հանգամանքը Օրբէլեանին ստիպում է 1302 թ. շարադրել իր դաւանաբանական միւս աշխատութիւնը՝ «Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց»-ը, ուր երկաբնակ դաւանանքի՝ սպառնական չափերի հասնող տարածումը նմանեցնելով առողջ մարմինն օրաւուր ճարակող քաղցկեղի՝ հեղինակը տագնապով գրում է. «Կիլիկիա բոլոր, որ տեղի էր մեր պարծանաց, յայս իսկ վարակեալ կեայ, եւ գլխաւոր քաղաքք, որ ի Հոռոմք, ի սոյն մոլորեալ են, եւ եհաս մինչեւ առ մեզ: Զի քարոզի այս յայտնապէս ի Թագաւորական քաղաքն ի Տփղիս եւ ի հին տունն Բագրատունեացն յԱնի, որ ի Շիրակ, նա եւ Թաւրէժ Շահաստանի եւ այլ բազում տեղիս: Ահա ո՞ մնաց ի հայոց ի հայրենի աւանդութեան. միայն սինլքորքն յանկեան ուրեք» (43)[7]: Օրբէլեանը ցաւ ի սիրտ գրում է. «Աւա՜ղ եւ եղո՜ւկ է զիս, թէ որո՞յ ժամանակի եղաք սպասաւորք, բովանդակ անդամաւք խեղացաք ի պատուիրանաց Տեառն եւ հոտեալ եմք անհնարին վիրաւք մեղաց, եւ ոչ գոյ բժիշկ, ոչ պիտանի եւ ոչ սփոփումն...»: Ուստի հայոց առաքելաւանդ դաւանութիւնը զերծ պահելու համար այդ ահագնացող քաղցկեղի տարածումից, հեղինակը շարադրում-կազմում է այս աշխատութիւնը: Սակայն աշխատութեան շարադրումն ունէր մէկ այլ պատճառ եւս: Ինչպէս յայտնի է, ԺԲ-ԺԳ դդ. խոշոր մատենագիր Վարդան Այգեկցու «Գիրք հաստատութեան եւ Արմատ հաւատոյ» երկը Արեւմտեան Եկեղեցին զետեղել էր իր հռչակած հայոց մոլորական գրքերի շարքում[8]: Ըստ երեւոյթին այն հերքելու նպատակով Գրիգոր Անաւարզեցու քեռու ջանքերով ԺԳ դարի երկրորդ կէսում Կիլիկիայում հրապարակ է իջնում երկաբնակ դաւանութեան խօսափող դարձած մի նոր «Արմատ հաւատոյ»[9]: Ինչպէս երեւում է, Ստեփանոս Օրբէլեանի «Հակաճառութեան» շարադրումը պայմանաւորուած էր նաեւ Գրիգոր Անաւարզեցու ձեռքին գտնուող այս երկի աստուածաբանական մերժման անհրաժեշտութեամբ:

Օրբէլեանի՝ խնդրոյ առարկայ աշխատութիւնը բաղկացած է տասներկու միաւորից, որոնց խորագրերն ինքնին ներկայացնում են քննարկուող հարցերի շրջանակը.

- Յայտարարութիւն (ձեռ. 3192՝ Յառաջաբանութիւն) գրոցս, եթէ ինչ կայ ի սմա եւ (ի) քանի գլուխս բաժանի Տեառն Ստեփաննոսի Սիւնեաց այցելուի եւ նախագահ մետրոպոլիտի՝ որդւոյ մեծի եւ բարեպաշտի իշխանաց իշխանին Տարսայիճին, բան դիմադրական ընդդէմ յեռետիկոսաց եւ դաւանութիւն ուղիղ հաւատոյ առաքելական աւանդութեանց եւ Կաթուղիկէ առաքելական եկեղեցւոյ, զոր բնաւորապէս ունի ազգս հայոց: Զոր ազդեալ ի շարժմանէ Հոգւոյ Սրբոյ հիւսեաց ի թուին Հայոց ՉԾԱ (1302) յառաջին շաբաթուս մեծի Զատկի՝ բաժանեալ յերկոտասան դրուատս եւ արտաքոյ թուոց կարգեալ (ՄՄ. ձեռ. 2678, թ.156աբ, 573, թ. 55ա-56ա, 3192, թ. 136ա-138ա: Տպ. չիք այս մասը):

Ա. Առաջին ձեռնարկս: Սակաւ ինչ Նախադրութիւն բանիս (3-7):

Բ. Երկրորդ ձեռնարկս: Ցորում զմի բնութիւն Բանին յատկաբար յայտնի կացուցանէ: Որ է առաքելական դաւանութիւն, զոր պարտի ամենայն զգուշութեամբ պահել անխախտ Կաթողիկէ եկեղեցի սուրբ (7-16):

Գ. Երրորդ ձեռնարկս: Բարառնաբար հարցուածք վասն երկու բնութեանցն: Եւ առ նոյն լուծումն դիմադրաբար՝ չորս գլխովք... (17-34):

6 Անդ, էջ 361

7 Էջերն ըստ «Ստեփանոս նախագահ արքեպիսկոպոսի՝ Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց», Կ. Պոլիս, 1756: Աչքի առջեւ ենք ունեցել նաեւ երկը պարունակող հետեւեալ ձեռագրերը. թիւ 2678 (156ա-174բ), 573 (55ա-95բ), 3192 (136ա-210ա):

8 Տե՛ս Հ. Ս. Անասեան, Հայոց մոլորական համարուած գրքերն ըստ լատինական մի հին ցուցակի, «Էջմիածին», 1975, Ժ, էջ 27-39:

9 Հ. Ս. Անասեան, Հայկական մատենագիտութիւն, Բ, եր. 1976, էջ 888-889

Դ. Չորրորդ ձեռնարկս: Յորում խնդրի ի մէնջ, եթէ բնութիւնքս, զոր ասեն, անձնաւորք եւ դիմաւորք են, եթէ անանձն (35-58):

Ե. Հինգերորդ ձեռնարկս: Ընդդէմ այնոցիկ, որք ապականեն զաստուածային խորհուրդն ջրով եւ խմորով: Յայտարարութիւն խորհրդոյ եկեղեցւոյ կարճ ի կարճոյ (59-74):

Զ. Վեցերորդ ձեռնարկս: Դիմադրութիւն այնոցիկ, որք ի Խաչին ուրանան զԱստուածութիւն եւ մարդ խոստովանին գոլ զչարչարեալն վասն մեր եւ ոչ Աստուած: Եւ այլայլեն զԵրեքսրբեանն սրբասացութիւն, եւ ոչ տան ասել «խաչեցար»: Եւ կամ անուան ի ներքս ածեն՝ «Քրիստոս որ խաչեցար»: Եւ զրպարտեն զմեզ թէ՝ ի դէմս Երրորդութեան ասէք «Խաչեցար» (75-91):

Է. Եւթներորդ ձեռնարկս: Տեսութիւն ի խորհուրդն նաւակատեաց հինգ աւուրն, յորում եւ վասն ճրագալուցին: Ի խնդրոյ Բարսեղ վարդապետի՝ որդւոյ Սմբատայ բարեպաշտի (92-112):

Ը. Ութերորդ ձեռնարկս: Յաղագս մեծի տաւնին Ծննդեան եւ Յայտնութեան: Որք բամբասեն զմեզ, եթէ ի միում աւուր տաւնեն: Եւ ինքեանք առնեն ի դեկտեմբերի քսան եւ հինգ զԾնունդն եւ (ի) յունուարի վեց զՄկրտութիւն: Իսկ զաւետիսն որ նախ քան զայս՝ ի մարտի քսան եւ հինգ: Ի խնդրոյ տեառն Յովհաննիսի Արարատեան նահանգի վերադիտողի (113-131):

Թ. Տասներորդ (=Իններորդ) ձեռնարկս: Պատճառ տաւնի Սրբոյ Հոգւոյն, եթէ ընդէ՞ր միաւար տաւնեմք եւ ոչ ըստ այլ ազգ քրիստոնէից եւ յինչ դէմս հայի միոյ աւուր խորհուրդն: Եւ այս ի խնդրոյ տեառն Յովանիսի Բշնոյ եպիսկոպոսի (ՄՄ, ձեռ. 2678, թ. 169ա-70բ, 573, թ. 80բ-84ա, 3192, թ. 187ա-192ա: Տպ. չիք այս գլուխը):

Ժ. Տասներորդ ձեռնարկս: Ընդդէմ այնոցիկ, որ հակառակ կան եւ խափանեն զկանոնեալ մատաղն, զգառն Զատկին եւ զտեառնականն եւ զագապս, որ է հոգեհանգիստ, եւ որ զաւրհնութիւնս Խաչի եւ Եկեղեցւոյ զենմունս լինի (131-148):

ԺԱ. Մետասաներորդ ձեռնարկս: Բոլոր պատճառ ժողովոյն Քաղկեդոնի: Եւ բացայայտութիւն նոցին աղանդոյն: Եւ յայտարարութիւն Տոմարին Լեւոնի, զոր ինքեանք ընկալան եւ զմեզ հարկեն յանձն առնուլ: Վիպասանեալ նորին Ստեփանոսի ի խնդրոյ Խաչատուր վարդապետի Կեչառեցւոյ (148-168):

ԺԲ. Երկոտասաներորդ ձեռնարկս: Վասն հաւատոյ եւ կարգաց Եկեղեցւոյ: Յարեւելեան աշխարհէս առ Կաթողիկոսն Հայոց Տէր Գրիգոր:

Որ վասն կասկածանաց ինչ՝ ակնածեալ եպիսկոպոսաց աշխարհիս՝ գրեցին զայս նամակ ուղղափառութեան միաբանութեամբ: Ի ձեռն տեառն Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի եւ գահերէց Մետրոպոլտի, որ է Պռաւտափրոնտէս Հայոց Մեծաց (168-187):

«Ձեռնարկներից» մի քանիսը, ինչպէս տեսնում ենք (Է, Ը, Թ, ԺԱ), շարադրուած են եղել տարբեր անհատների խնդրանքով եւ նախապէս շրջանառութեան մէջ եղել իբրեւ առանձին միաւոր, միայն աւելի ուշ, դաւանական կացութեան թելադրանքով, հաւանաբար հէնց հեղինակի կողմից, ներմուծուել «Հակաճառութեան» մէջ: Իր աշխատութիւնները շարադրելիս Օրբէլեանն աչքի առջեւ ունենալով նախնեաց այս մարզում կուտակած հարուստ փորձը՝ ըստ պատշաճի օգտագործել է դաւանաբանական, կանոնական, հայրախօսական զանազան երկեր: Հեղինակն օգտագործել է երկու կարգի աղբիւր. քաղկեդոնական վկայութիւններ եւ, միւս կողմից, դրանք ջրող, Հայ Առաքելական Եկեղեցու դաւանական դրութեան իրաւացիութիւնը փաստող սկզբնաղբիւրներ: Հասկանալի պատճառով սրանցում գերակշռում են երկրորդ կարգի աղբիւրները: Ինչպէս դաւանաբանական շատ աշխատութիւններում, այստեղ եւս առաւել յաճախակի յիշուող հեղինակներից է ս. Գրիգոր Աստուածաբանը, որի ժառանգութիւնն ընդարձակօրէն օգտագործուել է Հայ Եկեղեցու քրիստոսաբանութեանը նուիրուած երկերում: Այս հեղինակի ժառանգութիւնից քաղուած տեսականօրէն առաւել տարողունակ մի շարք արտայայտութիւններ, որոնք լայնօրէն պիտառնուել են դաւանաբանական երկերում, տեղ են գտել նաեւ Օրբէլեանի «Հակաճառութեան» մէջ: Այսպէս, բնութեան խնդիրն արծարծելիս Օրբէլեանը վկայաբերում է դասականի համարում ունեցող «Ո՛վ նոր խառնմանս եւ սքանչելի խառնուածոյս» (10) արտայայտութիւնը, որ քաղուած է Աստուածաբանի «Ի Յայտնութիւն Տեառն» ճառից[10]: Հեղինակը վկայաբերում է նաեւ դաւանական մատենագրութեան մէջ լայն շրջանառութիւն ունեցող «Անսկիզբն սկսանի, անեղն եղանի, անմարմինն մարմնանայ, Բանն թանձրանայ, Որդին Որդի լինի» (10) արտայայտութիւնը, որ քաղուած է Աստուածաբանի «Ի Ծնունդն Քրիստոսի» ճառից[11]: «Հակաճառութեան» մէջ երկիցս վկայակոչուած «Աստուած խաչեալ, արեգակն խաւարեալ եւ դարձեալ լու-

10 Տե՛ս ՄՄ, ձեռ. 948, թ. 183բ

11 Անդ, թ. 177բ

սաւորեալ» (12, 86) կանոնական ասոյթի արժէք ունեցող խօսքը քաղուած է Գրիգոր Աստուածաբանի «Ի սուրբ Պասքայ» ճառից[12]: Ս. Հաղորդութեան հացի անխմոր լինելու անհրաժեշտութիւնը ցոյց տալու նպատակով Օրբէլեանը յիշատակում է այս նոյն ճառի մէկ այլ հատուածը («զխմորն քացախուտ չարութեան նմանեցուցանէ»՝ 69), որ առկայ է նաեւ Անանիա Սանահնեցու «Հակաճառութեան» եւ Վարդան Այգեկցու «Արմատ հաւատոյ» դաւանաբանական երկերում[13]: Դարձեալ ս. Գրիգոր Աստուածաբանի անուամբ քաղուած «Մերով ախտակրութեամբն ախտակրէ Աստուած՝ եղեալ մարդ» հատուածը (66) վկայաբերուած է Վարդան Այգեկցու «Արմատ հաւատոյ»-ից[14]: Սա անուղղակիօրէն ցոյց է տալիս, որ հեղինակն իր ձեռքի տակ ունեցել է նաեւ դաւանաբանական վկայութիւններ պարունակող ժողովածուներ: Այսպէս՝ «Որ ոք ոչ երկրպագեսցէ զԽաչեալն, նզովեալ եղիցի եւ կարգեսցի ընդ աստուածասպանսն» (86) վկայութիւնը, որ մի հատուածն է «Առ Կղեդոնիոս» ճառի[15], ինչպէս երեւում է, քաղուած է «Վկայութիւնք սրբոց հարցն ուղղափառաց» դաւանաբանական ժողովածուից[16]: Օրբէլեանի «Հակաճառութեան» մէջ կարդում ենք. «Գրիգոր Անձիանաձու յԱռաքինութեան բանին ասէ. «Տեսցեն զաւրինադիրն զձեռս կարկառեալ. յայտ է՝ խաչեցեալ վասն մեր» (85): Այս խորագրով երկ առկայ է յիշեալ «Վկայութիւնք սրբոց հարցն ուղղափառաց» ժողովածուի մէջ: Ինչպէս նկատում է Կ. Մուրադեանը, Գրիգոր Աստուածաբանի երկերի յունարէն բնագրերն այսօրինակ խորագիր չունեն: Ամենայն հաւանականութեամբ այն յօրինուել է հայ միջավայրում[17]: Ուստի ակնյայտ է, որ Օրբէլեանն իր ձեռքի տակ է ունեցել թերեւս միայն այդ ժողովածուում կամ նրա նախագաղափար օրինակում տուեալ խորագրի ներքոյ կենցաղավարող այդ վկայութիւնը:

12 Տե՛ս ՄՄ, ձեռ. 946, թ. 126ա:

13 Անանիա Սանահնեցի, Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց, աշխատ. Ց. Քեոսէեանի, «Գանձասար» Բ, էջ 187. Վարդան Այգեկցի, Գիրք հաստատութեան եւ Արմատ հաւատոյ, քննական բնագիրը՝ Շ. քհ. Հայրապետեանի, ներածութիւնը՝ Ց. Քեոսէեանի, Երեւան, 1998 (=Արմատ հաւատոյ), էջ 251

14 Արմատ հաւատոյ, էջ 120

15 ՄՄ, ձեռ. 4149, թ. 142բ

16 ՄՄ, ձեռ. 579, թ. 128ա. տե՛ս Կիմ Մուրադեան, Գրիգոր Նազիանզացին հայ մատենագրութեան մէջ, Երեւան, 1983, էջ 166:

17 Կիմ Մուրադեան, նշ. աշխ., էջ 166

Դաւանաբանական աղբիւրներից են քաղուած նաեւ ս. Աթանաս Ալեքսանդրացու, ս. Գրիգոր Սքանչելագործի, ս. Բարսեղ Կեսարացու, ս. Կիւրեղ Ալեքսանդրացու անունով վկայակոչուած հատուածները: Այսպէս՝ «Աթանաս ասէ յԵրկրորդում Տաւնականին Դիոկղետիանոսի ի քառասուն եւ եւթն համարին. Քանզի կենդանութիւն ելով՝ մեռաւ, զի զմեզ կենագործեսցէ, բան ելով՝ մարմին եղեւ՝ զի զմարմինս բանիւ խրատեսցէ, աղբիւր ելով՝ ծարաւեաց վասն մեր, զի այսու իսկ զմեզ արբուսցէ ի տաւնին կենդանի ջրով» (83) քաղուածքը բերուած է Տիմոթէոս Կուզի «Հակաճառութիւնից» եւ Կոմիտաս կաթողիկոսի օրօք (615-628 թթ.) կազմուած «Կնիք հաւատոյ» երկից[18]:

Ս. Գրիգոր Նէոկեսարացու (Սքանչելագործի) անուամբ վկայաբերուած «Եթէ ոք այլ զախտակրեալն եւ այլ զոչ ախտակրեալն ասէ եւ ոչ զնոյն զանախտն զԱստուածն Բան մարմնովն Իւրով ախտակրեալ, որպէս գրեալն է, նզովեալ եղիցի» հատուածը (86), որ հայրախօսական գրականութեան մէջ քաջ յայտնի՝ Սքանչելագործին վերագրուած նզովքներից է, քաղուած է Վարդան Այգեկցու «Արմատ հաւատոյ»-ից[19]: Այս հեղինակի անուամբ բերուած միւս՝ «Սա այն է, որ յառաջ քան զյաւիտեանս էր...» սկսուածքով հատուածը, որ համապատասխանում է Սքանչելագործի նզովքներից 8-րդին, քաղուած է «Կնիք հաւատոյ»-ից եւ Տիմոթէոս Կուզի «Հակաճառութիւնից»[20]: Այդպէս է նաեւ բարսեղեան հատուածի պարագան. «Քանզի ոչ այսքան երկինք եւ երկիր, ծով եւ ցամաք, եւ կենդանիք եւ բոյսք եւ աստեղք եւ այլն զգերունակական զաւրութիւն ցուցանեն մեզ, զորքան կրել Աստուածն անտանե-

18 «Տիմոթէոսի եպիսկոպոսապետի Աղէքսանդրեայ՝ Հակաճառութիւն առ սահմանեալսն ի ժողովոյն Քաղկեդովնի», աշխատ. Կարապետ Ծ. վրդ. [Տէր-Մկրտչեանի], Երուանդ վրդ. [Տէր-Մինասեանի], Ս. Էջմիածին, 1908 (=Տիմոթէոս Կուզ), էջ 140, «Կնիք հաւատոյ Ընդհանուր սուրբ եկեղեցւոյ...» աշխատ. Կարապետ Եպիսկոպոսի, Ս. Էջմիածին, 1914 (=Կնիք հաւատոյ), էջ 346: Մինչդեռ աթանասեան՝ «ծնիցեալն այսուհետեւ ի Կուսէն Մարիամայ...» (83) վկայութիւնը քաղուած է բուն աղբիւրից՝ հեղինակի՝ «Արտադրութիւն առաքելական յաղագս աստուածայնոյն մարմնաւորութեան Բանին...» ճառից (Ս. Աթանասի Աղեքսանդրիոյ հայրապետի ճառք, թուղթք եւ ընդդիմասացութիւնք», Վենետիկ 1899, էջ 281-283): Ճառն ամբողջապէս զետեղուած է Օրբէլեանի Պատմութեան մէջ (Թիֆլիս, 1910, էջ 464-467, աշխար. Թրգ. էջ 365):

19 Արմատ հաւատոյ, էջ 95

20 Կնիք հաւատոյ, էջ 73, Տիմոթէոս Կուզ, 190

լին անախտաբար մարմնով գրկախառնիլ մահուան, զի զմեզ իւրով ախտակրութեամբն զանախտակրութիւն շնորհեսցէ» վկայութիւնը (84-85), որ ինչպէս ասում է Օրբէլեանը, քաղուած է ս. Բարսեղի «Յաղագս Սրբոյն Հոգւոյն» երկից, բերուած է ս. Կիւրեղ Ալեքսանդրացու «Պարապմանց» գրքից[21]: Սակայն վկայութիւնը բառացիօրէն չի համապատասխանում իր աղբիւրին: Սա նշանակում է, որ Օրբէլեանն իր ձեռքի տակ ունեցել է «Պարապմանց» գրքի թերեւս մէկ այլ տարբերակ: Ս. Կիւրեղի այս նշանաւոր երկից է քաղուած «Որ ոք համարձակի ասել աստուածազգեաց մարդ...» սկսուածքով նզովքը (11)[22], ինչպէս նաեւ՝ «Պաւղոս մի Տէր խոստովանի զՔրիստոս...» (85) սկսուածքով վկայութիւնը[23]: «Կիւրեղ ասէ ի խաւսն, որ Յեփեսոս» ծանուցմանը հետեւող վկայութիւնը («Քանզի գնեցաք գնոց՝ ոչ ապականելեաց արծաթոյ եւ ոսկոյ, այլ պատուականիւ արեամբն Քրիստոսի: Իսկ արիւն մարդոյ միոյ հասարակականի եւ իբր զմեզ ի՞բր արդեւք եղեւ փոխանակ աշխարհի կամ ի՞բր մին վասն ամենեցուն մեռաւ...», 85), որ քաղուած է «Կիւրեղի՝ ալեքսանդրացիների եպիսկոպոսի ճառը խօսուած Եփեսոսի սրբազան ժողովի ժամանակ՝ Նեստորին աթոռազուրկ անելու առիթով» միաւորից, իրապէս էլ մաս է կազմում Եփեսոսի տիեզերաժողովի արձանագրութիւնների[24]: Բնութեան խնդիրն արծարծելիս հեղինակը դիմում է Դաւիթ Անյաղթի հեղինակութեանը: Նա վկայաբերում է «Զի՞նչ է անուն. սահման կարճառաւտ...», «Զի՞նչ է մարդ. կենդանի բանաւոր...» սկսուածքով հատուածներ (20, 21), որոնք քաղուած են «Սահմանք Իմաստասիրութեան» երկից[25]: Խնդրի վերաբերեալ առաւել խոր եւ համակողմանի գիտելիքներ ստանալ փափագողներին նա մատնանիշ է անում ս. Գրիգոր Նիւսացու «Յաղագս բնութեան մարդոյ» երկասիրութիւնը (19-20), որից մէկ այլ տեղ վկայակոչում է մի հատուած՝ ցոյց տալու համար Ս. Հաղորդութեան գինու անապական, անխառն լինելու անհրաժեշտութիւնը (69): Այս նոյն աշխատութեան մէջ, խօսելով Մկրտութեան խորհրդի մասին, հեղինակը գրում է. «Զի երիցս

21 *«Գիրք Պարապմանց», էջ 454*

22 *Անդ, էջ 473*

23 *Անդ, էջ 27, 355*

24 *Տե՛ս* Деяние Вселенских соборов, т. 1, Казань, 1887, с. 251–252:

25 *Դաւիթ Անյաղթ, Երկասիրութիւնք փիլիսոփայականք, աշխատ. Ս. Ս. Արեւշատեանի, Եր., 1980, էջ 40, 41*

անգամ ի ջուրն թաղելն, որպէս մեկնէ Դիոնիսիոս, զերեքաւրեայ թաղումն գուշակէ» (71): Արտայայտութիւնը որոշակիօրէն ակնարկում է ս. Դիոնիսիոս Արիսպագացու «Յաղագս եկեղեցական քահանայապետութեան» «երիւք ընկղմամբ եւ վերացմամբք ի ջուրն զաստուածապետականն երեք տիւ եւ գիշերն թաղումն կենսատուն Յիսուսի նմանել մահ...» բառերը[26]:

Օրբէլեանն իր ձեռքի տակ է ունեցել նաեւ կանոնական բնոյթի աղբիւրներ: Հեղինակն օգտագործել է «Մաշտոց» ծիսամատեանի կանոնների վերաբերեալ տեղեկութիւններ հաղորդող օրհնութենաբեր ցուցակը. «Եւ զագապն սուրբ Եփրեմ Ասորի արար ի Նիկոմիդիա քաղաքն յերկրորդ ամի հայրապետութեան իւրոյ, զոր Ղազար թարգմանիչն եբեր ի Հայս» (137) վկայութիւնը գրեթէ բառացիօրէն քաղուած է այդ ցուցակից[27]:

Խօսելով ագապի՝ սիրոյ ճաշի վերաբերեալ՝ Օրբէլեանը յիշատակում է Սահակ Պարթեւ, Յովհան Մանդակունի կաթողիկոսների օրինակարգումները (137), որոնք արձանագրուած են Հայոց կանոնագրքում[28]: Խաչօրհնէքի եւ Եկեղեցօրհնէքի ժամանակ մատաղի պէտքը փաստելու նպատակով սրբազան հեղինակը վկայակոչում է Թադէոս առաքեալի կանոնը («Յորժամ հաստատէ եպիսկոպոսն զսեղանն, արժան է ի նմին աւուր զենմունս առնուլ...»), որ քաղուած է Հայոց կանոնագրքի համապատասխան կանոնից[29]: Մննդեան եւ Յայտնութեան տօնը նոյն օրը՝ յունուարի 6-ին, կատարելու վերաբերեալ Հայոց դիրքորոշման արդարացի լինելը ցոյց տալու համար Օրբէլեանն ակնարկում է Մակար Ա Երուսաղեմացու (+325)՝ հայերին յղած յայտնի թուղթը (120-121), որի համառօտ տարբերակը տեղ է գտել Հայոց կանոնագրքում[30]: Սակայն խնդրոյ առարկայ տեղեկութիւնները բացակայում են այսօր յայտնի Կանոնագրքում: Ինչպէս յայտնի է, Մա-

26 *Տե՛ս* "The Armenan Version of the Works Attributed to Dionysius the Areopagite", ed. by Robert W. Thomson, Lovanii, 1987, p. 68 (II, 3, 7):

27 *Տե՛ս Հ. Գ. Զարբհանալեան, Մատենադարան թարգմանութեանց նախնեաց, Վենետիկ, 1889, էջ 247:*

28 *Կանոնագիրք հայոց, Ա, աշխատ. Վ. Յակոբեանի, Երեւան, 1964 (=Կանոնագիրք), էջ 383, 384, 399 (ԻԹ, Լ, ԽԱ)*

29 *Տե՛ս անդ, Բ, Երեւան, 1971, էջ 27, տ. 5-9:*

30 *Տե՛ս Կանոնագիրք, Ա, էջ 216-229:*

կարի այս թղթի ընդարձակ տարբերակը, այժմ անյայտ հատուածի վկայաբերումով, օգտագործել է Անանիա Շիրակացին[31]: Ամենայն հաւանականութեամբ Օրբէլեանը Մակարի կանոնական թղթի ընդարձակ տարբերակից օգտուել է Անանիա Շիրակացու Աստուածայայտնութեան ճառի կամ (այստեղից նոյնութեամբ յաջորդի մէջ անցած) Անանիա Սանահնեցու Հակաճառութեան միջոցով[32]: Այս նոյն նպատակով հեղինակը վկայաբերում է Հիպոլիտոս Հռոմայեցու կամ Բոստրացու (+235/6) «Սրբաբանի Մնունդ եւ Մկրտութիւն Տեառն...» սկսուածքով հատուածը (128-129), որ քաղուած է Կանոնագրքից[33]: Այս իրողութիւնը հաստատելու նպատակով հեղինակն օգտուել է նաեւ այլ բնոյթի աղբիւրներից: Այսպէս՝ «Կենդանանիոս Կիլիանու եպիսկոպոսի «անուամբ բերուած «Արդ, Աւետիքն ի վեցն ապրիլի եղեն, եւ ի վեցն յունուարի՝ Մնունդն, ըստ որում պատշաճի» (129) հատուածը իբրեւ Կանոնագրքից դուրս առանձին միաւոր՝ շրջանառութեան մէջ է եղել ձեռագիր մատեաններում[34], որտեղից եւ ներմուծուել է Հակաճառութեան մէջ[35]:

Աղբիւրագիտական որոշակի հետաքրքրութիւն է ներկայացնում ս. Գրիգոր Լուսաւորչի անունով վկայաբերուած հատուածը («Գրիգոր Լուսաւորիչն գրեալ է յիւր կանոնքն, որ քսան գլուխ է, թէ միս առանց աղի աւրհնութեան մի՛ ուտիցեն, եւ որ պիղծ համարի զմիս եւ ոչ ուտէ, նզովեալ եղիցի» (+13), որը բացակայում է մեզ յայտնի Կանոնագրքում: Ինչպէս երեւում է, այն մաս է կազմել Օրբէլեանի օրօք կենցաղավարած Կանոնագրքի, որը յետագայում խմբագրուել է: Սրա հետեւանքով հատուածս դուրս է մնացել Կանոնագրքից: Այս տեսակէտից նոյնքան ուշագրաւ է Մովսէս Քերթողի (Է դ.) անունով բերուած

31 Կանոնագիրք, Բ, Վ. Յակոբեանի Ներածութիւնը, էջ XCII-XCVIII:

32 Տե՛ս Ա. Աբրահամեան, Անանիա Շիրակացու Մատենագրութիւնը, Երեւան, 1944, էջ 283-284, Անանիա Սանահնեցի, Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց, «Գանձասար», Գ, էջ 188-195:

33 Կանոնագիրք, Բ, էջ 281 տող 3-7

34 Տե՛ս ՄՄ, ձեռ. 2041, թ. 59ա:

35 Ինչպէս երեւում է, հեղինակն իր աչքի առջեւ ունեցել է նաեւ «Վասն Մնդեանն Տեառն յունուարի Զ եւ պապանձման Զաքարիայի, ի Տաւնապատճառէն բանք համառաւտ Կիւրղի» (ՄՄ, ձեռ. 774, 160բ-163բ), «Վկայութիւնք վասն Մնդեան եւ Մկրտութեան, զի պարտ է առնել ի միում աւուր՝ Յունուար Զ. Կղեմայ, առաքելասահման կանոնացն» (ՄՄ, ձեռ. 573, 97ա-103բ) միաւորները:

հատուածը («Արդ, աղէ ասա մեզ, զի՞նչ կամիս ասել. զՔրիստոսի բնութիւն անձնաւո՞ր, թէ անանձն: Զի ոչ ունիս հնար այլ ազգ ասել, բայց թէ՝ անձնաւոր կամ անանձն: Արդ, եթէ անձնաւոր եւ դիմաւոր ասացեր, ապա երկու անձինք եւ դէմք ի ներքս ածեր: Եւ թէ երկու անձինք եւ դէմք, ապա յայտնապէս երկու որդի եւ երկու Քրիստոս խոստովանեցար: Եւ յայտ է, թէ մինն բնութեամբ լինի Որդի Աստուծոյ, եւ մինն՝ շնորհաւք: Ահա հաւասարեցար Պաւղոսի Սամոսատացւոյ եւ աշակերտեցար Նեստորի հայհոյութեանն: Իսկ եթէ անանձն եւ անդէմ ասացեր, ապա ուրացար զէութիւն Աստուածութեանն կամ զմարդկութեանն, զի անանձն եւ անդէմ անհնար է բնութեան լինել: Եւ ահա անկար ի հայհոյութիւն Մանեայ եւ համաձայն եղեր անիծելոյն Եւտիքեայ, որք զմին դէմսն խոստովանէին եւ զմինն ուրանային՝ առաչաւք եւ չփոթմամբ ասելով», 46-47), որ ինչպէս նշում է Օրբէլեանը, քաղուած է Մովսէս Քերթողի «Ի թղթին մեղադրական, որ գրեաց ի ժողովն Քաղկեդոնի» երկից: Ամենայն հաւանականութեամբ Օրբէլեանի ակնարկը վերաբերում է Մովսէս Քերթողահօր անունով «Գիրք թղթոց»-ում զետեղուած թղթին[36], ուր խօսւում է բնութեան, անձի քրիստոսաբանական խնդրի մասին: Բայց Օրբէլեանի վկայաբերած հատուածը բացակայում է այստեղ: Սրանից կարելի է ենթադրել, որ այս վկայութիւնը սկզբնապէս մաս է կազմել յիշեալ թղթի կամ թերեւս նրա այժմ անյայտ յիշեալ երկի մի բեկորն է:

Դաւանաբան հեղինակն օգտուել է նաեւ եկեղեցաժողովների, հերձուածների վերաբերեալ պատմութիւններից: Այսպէս, Քաղկեդոնի ժողովի մասին տեղեկութիւններ շարադրելիս (158-168) նա ամենայն հաւանականութեամբ աչքի առջեւ է ունեցել «Էակաց գիրքը», «Գիրք թղթոցը», Պողոս Տարօնացու «Թուղթ ընդդէմ Թեոփիստեայ» աշխատութիւնը, Վարդան Այգեկցու «Արմատ հաւատոն»,[37] «Պատմութիւն սուրբ ժողովոյն Եփեսոսի...» միաւորի մի վաղնջական թարգմանութիւնը[38] եւ յարակից համաբնոյթ աղբիւրներ:

36 Տե՛ս «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 22-28, նաեւ՝ ՄՄ, ձեռ. 2966, թ. 89բ-92ա:

37 Տե՛ս Պողոս Տարօնացի, Ընդդէմ Թէոփիստեայ, Կ. Պոլիս, 1752 (=Պողոս Տարօնացի), էջ 109-110, Արմատ հաւատոյ, էջ 159-164, 366:

38 «Պատմութիւն սուրբ ժողովոյն» (նորագոյն թարգմանութիւնն իրականացուած է Գէորգ Մխլայիմի (ԺԷ-ԺԸ դդ.) ձեռքով). ՄՄ ձեռ. 2620, թ. 70ա-381բ

Քաղկեդոնական աղբիւրների մէջ ծաւալով եւ վկայաբերման յաճախականութեամբ առաջինը Լեւոն պապի (440-461 թթ.) նշանաւոր «Տոմարն» է: Լեւոնեան վկայութիւնները բերուած են միջնադարում կենցաղավարող «Տոմարի» մի հատուածական թարգմանութիւնից, որ վկայաբերուած է «Սրբոց վարդապետացն Հայոց Մովսէսի եւ Դաւթի հարցմունք ընդ երկաբնակացն» երկում[39]: Օրբէլեանի բերած վկայութիւններից չորսը («Ապրեցոյ այսուհետեւ յատկութեանց երկաքանչիւրոյ բնութեանցն եւ ի մի դէմս էակցելոյ ամբարձաւ այսուհետեւ յԱստուածութենէ նուաստութիւն, իսկ ի կարութենէն՝ անկարութիւն եւ յանմահէն՝ մահկանացուն», 35, 36: «Քանզի պահէ երկաքանչիւր բնութիւն անընդհատաբար զինքեանն յատկութիւն, եւ որպէս ոչ ի բաց բառնայ զծառային կերպ Աստուծոյ կերպն, այսպէս զԱստուծոյ կերպն ծառային կերպաւորութիւն ոչ պակասեցուցանէ», 50, հմմտ. 51: «Մինչդեռ երկախումբն ընդ միմեանս է եւ մարդոյն նուաստն եւ մեծութիւն Աստուածութեան, քանզի որպէս Աստուած յողորմելն յեղումն ոչ ընդունի, այսպէս եւ մարդն մեծութեամբ աստուածային արժանաւորութեան ոչ ծախի», 52: «Դիտեսցէ թէ ո՞ր բնութիւն վարսեալ բեւեառք կախեցաւ զփայտէ Խաչին եւ խոցելոյ կողին առ մածուցելոյ Խաչին ի ձեռն գեղարդեան զինուորին, իմասցի՝ ուստի արիւն եւ ջուր հոսեցաւ», 77) ինչ-ինչ տարբերութիւններով համապատասխանում են բնագրին[40], իսկ հինգերորդը («Իմաստութիւն ասէ շինողին իւր տուն» [Առակ Ը 22]. 151-152) ակնարկում է Լեւոնի «Տոմարի»՝ «Եւ շինելով իմաստութեան իւր տուն՝ Բանն մարմին եղեւ եւ բնակեաց ի մեզ, այսինքն է՝ ի մարմնի անդ, զոր էառ ի մարդոյ...» բառերը[41]:

Երկաբնակ դաւանութեան խոշորագոյն տեսաբաններից մէկի՝ Թէոդորետոս Կիւրացու (393-շուրջ 466 թթ.) «Հակաճառութիւնից» բերուած հատուածներից երկուսը («Ոչ ի մարմնոյ բնութիւն անյեղլին յեղաւ բնութիւն, այլ մարդկային էառ բնութիւն, եւ զայս գեր քան զհասարակաւոր քահանայապետ կացոյց», 55): «Ուրեմն ոչ Աստուած ախտակրեալն, այլ ի մէնջն յԱստուծոյ առեալ մարդն: Վասն որոյ Եսայիաս գոչէ «Մարդ ելով ի հարուածս...»՝ 56, 78), որոնք առկայ են Յովհաննէս Սարկաւագի (+1129) դաւանաբանական մանր աշխատութիւններում եւս[42], քաղուած են «Պատմութիւն սուրբ ժողովոյն Եփեսոսի» միաւորի մաս կազմող՝ ս. Կիւրեղ Ալեքսանդրացու շարադրած Հակաճառութիւնից: Առաջին վկայութիւնը, ինչպէս նշում է Օրբէլեանը, քաղուած է «ի հակաճառականէն, որ առ երկրորդ նզովումն» մասից: Իրականում այն քաղուած է ոչ թէ 2-րդ, այլ 10-րդ նզովքի Հակաճառութիւնից[43]: Իսկ երկրորդ վկայութիւնը բերուած է ս. Կիւրեղի նզովքներից 12-րդի՝ Թէոդորետոսի շարադրած Հակաճառութիւնից[44]:

«Պաւղոս Սամոսատացու» (Գ դ.) անուամբ վկայաքաղուած հատուածի («Բանն ի Հոգւոյն Սրբոյ ոչ ծնաւ, Բանն ոչ էր, այլ ի մարդ բնակեաց: Աբրահամ, Դաւիթ Բան ոչ ծնան, այլ նոքա ամենեքեան ածին ի փոխունակութենէ զյոյսն կազմեալն, իսկ յոյսն՝ Մարիամ», 55) միայն մի փոքրիկ մասն է համապատասխանում Պողոս Տարօնացու թղթում առկայ վկայութեանը[45]: Սա թերեւս խօսում է այն մասին, որ այս հատուածը հայերէն ձեռագրերում կենցաղավարել է բնագրային տարբեր տարազով:

Նեստորի (428-431) անուամբ վկայաբերուած հատուածներից երեքը («Ասա զառաւղն, թէ Աստուած յաւել զառեալն ծառայի կերպ ի վերայ ած զշարայարութեան արժանաւորութիւն», 51): «Սակս զգեցողին զգեցեալն պաշտեմ, սակս թաքուցելոյն երկրպագեմ զերեւելին», 56: «Անխառնելի այսուհետեւ զբնութեանցն պահեմ շարայարութիւն. խոստովանիմ զ՚առ ի մարդն Աստուած», 56) համապատասխանաբար

39 Տե՛ս «Գիրք ժողովածոյ ընդդէմ երկաբնակաց, մանաւանդ աշխարհաւեր ժողովոյն Քաղկեդոնի, արարեալ սրբազան վարդապետաց», Նոր-Ջուղա, 1688, էջ 34-42:

40 Տե՛ս «Սկզբնագիրք Տոմարի սրբոյն Լեւոնի եւ սահմանի սուրբ ժողովոյն Քաղկեդոնի», Վենետիկ, 1805, էջ 13 (ծնթ. 1), 15 (ծնթ. 1), 16 (ծնթ. 1), 26, 27 (ծնթ. 1):

41 Անդ, էջ 11: Սա վկայաբերուած է նաեւ Պողոս Տարօնացու մօտ. էջ 135:

42 Տե՛ս ՄՄ, ձեռ. 567, թ. 290բ-291ա: Ինչպէս երեւում է, Օրբէլեանն իր ձեռքի տակ ունեցել է նաեւ Թէոդորետոս Կիւրացու «Թուղթ ի Քաղկեդոնէ, յուղարկեալ առ Աղէքսանդր վերատեսուչն Յերապոլսոյ» կամ, որ առաւել հաւանական է, «Ճառ ասացեալ ի Քաղկեդոն, առաջի նուիրակացն հերձելոց եւ աշակերտացն Նեստորի» երկերը (Migne, PG, t. 84, col. 626-628, 733-734, t. 83, col. 1473-1476, 1486-1487, 1413-1416, t. 76, col. 389-392):

43 Տե՛ս Деяние Вселенских соборов, т. 2, изд. II, Казань, 1892, с. 74:

44 Անդ, с. 80

45 Հմմտ. Պողոս Տարօնացի, էջ 134:

քաղուած են նրա վարդապետութեան «Տետր ԺԶ»-ից (առաջին երկուսը) եւ «Տետր ԺԵ»-ից[46]:

Արդ, աղբիւրների հարեւանցի քննութիւնն իսկ ոչ միայն ցոյց է տալիս Ստեփանոս Օրբէլեանի քաջատեղեակութիւնը[47], այլեւ դաւանաբանական այս կամ այն դրոյթը փաստելու համար օգտագործած բազմաթիւ եւ բազմաբնոյթ աղբիւրների մէջ ճիշտ կողմնորոշուելու, փաստերի մտացի համադրումով թելադրուած ընդհանրացումներ անելու հմտութիւնը:

46 Գէորգ Մխլայիմի թարգմանութեան մէջ դրանք ունեն հետեւեալ բնագրային պատկերը. Տետր ԺԶ. «Այլ զի Աստուած կայ ի յառեալն, վասն այսորիկ առեալն յառաւղէն, ըստ որում կցեցեալ, ըստ առաւղին Աստուած անուանի (ՄՄ, ձեռ. 2620, թ. 165ա): «Վասն տանողին համար զտարեալն պաշտեմ, վասն ծածկեցելոյն համար երեւելոյն երկրպագանեմ» (թ. 164բ): Տետր ԺԵ. «Անչփոթ պահեսցուք զբնութեանց կցորդութիւն, դաւանեսցուք զԱստուած, մարդն պաշտեսցուք զմարդն, որ աստուածային կցորդութեամբ ընդ ամենակալին Աստուծոյ ի միասին երկրպագի» (թ. 164ա):

47 Սակայն անաչառ լինելու համար, այսուամենայնիւ, պէտք է արձանագրել, թէ հեղինակը միշտ չէ, որ օգտագործում է պատմականօրէն հաւաստի սկզբնաղբիւրներ: Այսպէս, Արտեմոն հերձուածողի մասին տեղեկութիւններ բերելիս նա, հաւանաբար նկատի ունենալով Եւսեբիոս Կեսարացու «Պատմութեան» (տպ. Վենետիկ, 1877, էջ 405-411) եւ «Արմատ հաւատոյ»-ի (էջ 238) հաղորդած տուեալներն այն մասին, որ նա աշակերտել է Յովհաննէս Աւետարանչին, կտրուկ ժխտում է դրանք: Նա պնդում է, թէ Արտեմոնը ապրել է Յովհաննէս Աւետարանչից 200 տարի յետոյ (էջ 117), ուրեմն՝ Դ դարի սկզբին: Մինչդեռ պատմական փաստերն անհերքելիօրէն վկայում են, որ այս հերձուածողն ապրել է Բ դարում եւ Անտիոքի՝ 254 թ. ժողովի կողմից համարուել Պօղոս Սամոսատացու (Գ դ.) նախակարապետը (Յ. Անասեան, Հայկական մատենագրութիւն, Բ, էջ 928-929):

Պ. Մինին

Ս. ԴԻՈՆԵՍԻՈՍ ԱՐԷՈՊԱԳԱՑՈՒ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Արէոպագիտեան երկերում[1] առկայ խորհրդապաշտութիւնը սերտ յարաբերութեան մէջ է նրանցում առկայ բնազանցութեան (մետաֆիզիկա) հետ եւ վերջինիս հետ միասին կրում է ժամանակի մտաւորականութեան մէջ մեծ տարածում գտած նորպլատոնեան աստուածիմաստութեան (թէոսոֆիա) որոշակի ազդեցութիւնը: Աստուծոյ՝ որպէս անորակ Եզակիութեան (Մոնադ) մասին ուսմունքները, «բարիքի», «չարիքի», «աստուածացման» վերաբերեալ հասկացութիւնները ինչպէս արէոպագիտեան, այնպէս էլ նորպլատոնեան խորհրդապաշտութեան մէջ աւելի ունեն վերացարկուած-բնազանցական բնոյթ, քան բարոյաբանական: Մարդուն աստուածացման բարձրագոյն աստիճանի հասցնող գլխաւոր ուժը գնոսիսն է՝ ճանաչողութիւնը: Բուն աստուածացումն իրագործւում է աւելի շուտ մտքի վերացարկուած գործունէութեան, քան կրօնաբարոյական կատարելագործման միջոցով: Սրանք այնպիսի գծեր են, որոնք Դիոնեսիոսի խորհրդապաշտութիւնը մօտեցնում են նորպլատոնեան խորհրդապաշտութեանը: Այդուհանդերձ չի կարելի չափազանցել Դիոնեսիոսի վրայ նորպլատոնեան փիլիսոփայութեան ունեցած ազդեցութեան նշանակութիւնը: Նրա համար նորպլատոնեան գրականութիւնը ոչ թէ սկզբնաղբիւրի դեր է կատարել, այլ առաւելագոյնը՝ որպէս միջոց՝ այն նիւթի իմաստասիրական մշակման համար, որը նա անմիջաբար քաղում էր իր խորհրդապաշտական փորձառութիւնից եւ Եկեղեցու վարդապետութիւնից: Փիլիսոփայական դրոյթների համապատասխանութիւնը կարող էր պայմանաւորուած լինել

1 Այս երկերը մեզ հասել են Պօղոս առաքեալի աշակերտ ս. Դիոնեսիոս Արէոպագացու [Գործք. ԺԷ 34] անունով եւ սակայն եկեղեցական մատենագրութեան մէջ տարածում են գտել սկսած Ե դարի երկրորդ կէսից միայն: Հաւաստիութեան, յօրինման ժամանակի վերաբերեալ տե՛ս А. Бриллиантов, Влияние Восточного Богословия на Западное в произведениях Иоанна Скота Эригены, СПб, 1898, с. 142:

խորհրդապաշտական փորձի հետ նոյնականութեամբ: Իսկ հաւատարմութիւնը Եկեղեցու վարդապետութեանը նրան հնարաւորութիւն է ընձեռում իր խորհրդապաշտութեան մէջ կարեւոր տեղ յատկացնելու ծիսա-խորհրդագործական կողմին, որը նրան տալիս է եկեղեցական բնոյթ:

Դիոնեսիոսի խորհրդապաշտութեան առանցքային դրոյթը մարդու աստուածացման (θείωσις) *մասին վարդապետութիւնն է: Եւ քանի որ այդ վարդապետութիւնը սերտ աղերսներ ունի նրա բնազանցութեան հետ, ապա առաջինի պարզաբանման համար անհրաժեշտ է քննարկել երկրորդի հիմնական դրոյթները:*

Արեսպագիտեան բնազանցութեան ելակէտը Աստուծոյ մասին վարդապետութիւնն է, որն առանձնանում է իր վերացարկուած-մտազննական բնոյթով: Դա առկայ է Դիոնեսիոսի ոչ միայն անճառելի (ապոֆատիկ), այլեւ նոյնիսկ ճառելի (կատաֆատիկ) աստուածաբանութեան մէջ: Ճառելի աստուածաբանութեան՝ Աստուածութեանը տրուող կարեւորագոյն ստորոգելիներն են՝ Բարին, Գեղեցկութիւնը եւ Սէրը: Աստուած ոչ միայն բարիք է, այլեւ ինքնաբուն բարիք (αὐτοτάγαθον), *գերբարիք* (ὑπεραγαθότης)[2]: *Նա Բարիք է, որովհետեւ բովանդակ գոյին բարիք է տալիս: Միայն Նրա բարիքով է, որ բովանդակ գոյը կայ եւ հաղորդ է Նրան: Այլ խօսքով՝ «բարիք» ստորոգելին այն է նշանակում, որ Աստուած բովանդակ գոյի սկզբնապատճառն է եւ գերագոյն նպատակը: Այսպիսով, բարիքն, ըստ Դիոնեսիոսի, նոյնանալով պատճառականութեան հետ, զուրկ է բարոյաբանական բովանդակութիւնից.* ἀγαθόν *նշանակում է* ὄν՝ *«արարող», «գործող» ստորոգելիով*[3]: *Նոյնպիսի բնազանցական իմաստներ ունեն նաեւ «գեղեցկութիւն» եւ «սէր» ստորոգելիները: Գեղեցկութիւնը* (τὸ καλόν) *մի կերպ է, որով ընկալում ենք բովանդակ գոյը: Եթէ բարիքի Աստուածը գոյութեան է կոչում բովանդակ գոյը, ապա գեղեցկութեան Աստուածը բովանդակ գոյին հաղորդում է համապատասխան կերպ ու ձեւ: Այստեղից հետեւում է, որ գեղեցկութիւնն ըստ էութեան նոյնական է բարիքի հետ*[4]: *Ե՛ւ գեղեցկութիւնը, ե՛ւ բարիքը ամենայն գեղեցիկի եւ բարու սկզբնապատճառն են. բարիքը՝ նիւթականի, գեղեցկութիւնը՝ կերպի, եւ եթէ*

2 De div. nom *(= Ցաղագս աստուածային անուանց)* 1,5 (Migne, PG, t 3)

3 Heinrich Weertz, Die Gotteslehre des Ps. - Dionysius, Köln, 1908. SS. 8-9

4 *Ցաղագս աստուածային անուանց, IV, 7*

դրանք հնարաւոր է զանազանել, ապա միայն տեսականօրէն, բայց ոչ երբեք՝ փաստացի: Ի վերջոյ Աստուած սիրոյ Աստուած է, որովհետեւ Նա ամէն ինչի մասին հոգ է տանում եւ միաւորում բովանդակ գոյը, կապակցում ու սատար լինում Իր զօրութեամբ: Ուստի եւ աստուածային սէրը, ըստ էութեան, այլ բան չէ, քան Աստուածութիւնից դէպի գոյն ուղղորդուած եւ գոյից դէպի Աստուածութիւն վերադարձող անընդհատ շարժում: Այսպիսով, բարիքի, գեղեցկութեան եւ սիրոյ գաղափարներն ի վերջոյ գոյաւորող եւ գոյութիւնը պահպանող աստուածային զօրութիւնների նշանակներ են[5]: *Համանման իմաստով Աստուած անուանւում է նաեւ կեանք, իմաստութիւն, բանականութիւն, ճշմարտութիւն, արդարութիւն, խաղաղութիւն եւ այլն*[6]:

Բնազանցական միտումն առաւել բացայայտօրէն է արտայայտւում անճառելի աստուածաբանութեան մէջ: Դիոնեսիոսն անսպառօրէն շռայլ է ամենաբազմազան ստորոգելիների թուարկման մէջ, որոնք չեն կարող պատշաճել Աստծուն: Ինչպիսի ստորոգելիներ էլ վերագրենք Նրան, առաւել մեծ իրաւունքով մենք պէտք է ժխտենք դրանք՝ որպէս Աստուծոյ էութեանն անհամապատասխան: Ինչպէս Պլոտինի (ἐπέκεινα τοῦ ὄντος, ἐπέκεινα οὐσίας[7] καὶ νοήσεως[8], ἐπέκεινα γνώσεως[9]), *այնպէս էլ Դիոնէսիոսի համար*[10] *Աստուած ո՛չ չունչ է, ո՛չ բանականութիւն, ո՛չ երեւակայութիւն, ո՛չ մտածողութիւն, ո՛չ կեանք, ո՛չ էութիւն* (οὐδὲ οὐσία ἐστιν), *ո՛չ անուն, ո՛չ ճանաչողութիւն, ո՛չ ճշմարտութիւն, ո՛չ իմաստութիւն, ո՛չ բարութիւն, ո՛չ շարժում, ո՛չ դադար, ո՛չ մէկ, ո՛չ բազում, ո՛չ հոգի* (οὐδὲ πνεῦμα ἐστιν), *ո՛չ աստուածութիւն* (οὐδὲ θεότης). *անգոյերից ոչ մէկը չէ եւ գոյերից ոչ մէկը չէ* (οὐδὲ τι τῶν οὐχ ὄντων, οὐδέ τι τῶν ὄντων ἐστιν), *այլ վեր է բոլորից* (ἐπέκεινα τῶν ὅλων): *Այսպիսով, Աստուած բարձրագոյն անդրանցականութիւն (տրանսցենդենտութիւն) է՝ թէ՛ բնազանցական, թէ՛ իմացաբանական առումով, Աստուծոյ անդրանցականու-*

5 Weertz, նշ. աշխ., SS. 12-13. O. Siebert, Die Metaphysik und Ethik des Ps. - Dion. Areopagita. Jena, 1894. SS. 50-51

6 Попов, Идея Обожения... с. 187-188

7 Plotini, Enneades, ed, Fr. Greuzer et G. H. Moser, Parisiis, MDCCLV (=Enn.) VI, 2, 17

8 Enn. I, 7, 1

9 Enn. V, 3, 12

10 De mist. theolog. *(= Ցաղագս խորհրդական աստուածաբ.)* V (Migne, PG, t, 3)

թեան մասին միտքը եկեղեցական միտք է, սակայն չի կարելի չնշել, որ եթէ քրիստոնէական վարդապետութեան մէջ այդ անդրանցականութիւնը բնորոշւում է բարոյաբանական գծերով, ապա Դիոնէսիոսի [վարդապետութեան], ինչպէս եւ նորպլատոնեան աստուածաբանութեան մէջ այն ունի բացառապէս բնազանցական բնոյթ: Աստուած տիեզերական "Εν (Միասնութիւն)[11] է, պարզագոյն Մէկ (ἑνάς), անորակ Մոնադ (μονάς) է[12]:

Լինելով անդրանցական սկիզբ՝ Աստուած միաժամանակ բովանդակ գոյի նախապատճառն ու հիմքն է: Նա է ամէն ինչի արարիչն ու սկզբնապատճառը, արարիչը արարածների, գոյի, բնութեան, [Նա է] փուլերի սկզբունքը, ամբողջ գոյի յաւիտենականութիւնը, ամէն ինչի գոյութիւնը եւ այն, ինչ կայ եւ լինելու է: Ինչպէ՞ս եւ ի՞նչ նիւթից է Աստուած ստեղծել ու կերպաւորել բովանդակ գոյը: Աստուած ամէն ինչ ունի Ինքն Իրենից. այն ամէնն, ինչ գոյութիւն ունի, ծագում է Աստծուց. այդ բոլորը Նա նախապէս ունէր իր մէջ: Բոլոր իրերի պատճառը Աստուածութեան պարզ, գերբնական բնութեան մէջ է: Աստուած ամէն ինչ ունի Իր մէջ, ամէն ինչ պարագրում է եւ պարունակում: Եթէ ամէն ինչ Աստուծոյ մէջ է, ապա դա նշանակում է, որ Աստուած էլ ամէն ինչի մէջ է՝ ոչ թէ նիւթապէս, այլ յարաշարժօրէն: Աստուած ներկայ է աստղերի, հոգիների, մարմինների մէջ, երկնքում եւ երկրի վրայ, ամէն ինչի մէջ նոյն Ինքն է՝ աշխարհում, աշխարհի մ՛ոտ, աշխարհի վրայ, արեգակի, հրի, ջրի, քամու, ամպի, քարի մէջ, ամէն ինչի մէջ, որ գոյութիւն ունի[13]: Անշունչ իրերը հաղորդ են Նրա էութեանը, քանի որ նրանք գոյութիւն ունեն, քանզի ամէն բանի գոյութիւնը Աստուածութեան գոյութեան մէջ է, իսկ շնչաւոր էակները՝ քանի որ նրանք հաղորդ են Աստուածութեան կենսատու զօրութեանը. [իսկ] բանաւոր եւ հոգեւոր էակները՝ քանի որ նրանք հաղորդ են Նրա կատարեալ իմաստութեանը: Այսպէս, լինելով անդրանցական՝ Աստուած միեւնոյն ժամանակ ներունակ (իմմանենտ) է արարչութեանը: Ունիվերսալը ոչ այլ ինչ է, քան Ինքը Աստուածութիւնը, որ դրսեւորւում է մի շարք բացայայտումների մէջ: Իրենց գերգոյութեան մէջ դիտարկուելիս այդ բացայայտումները նոյնական են բացարձակ գոյի հետ եւ

11 Ցաղագս աստուածային անուանց, XIII, 32

12 Անդ, § 1, 4: Հմմտ. Ցաղագս երկնային քահանայապետ., I, § 1

13 Ցաղագս աստուծային անուանց, 1, §§ 3–7

ἑνώσεις θεῖαι են, իսկ իրենց առանձնակիութեան մէջ դիտարկուելիս դրանք ըստ էութեան աստուածային տարակերպութիւններ են: Առաջին բացայայտումը ինքնափակ գոյութիւնն է, որից յորդում են «կենարար սկզբունքները», որոնք գոյութիւն ունեն բացառապէս գոյին մասնակից լինելու հետեւանքով: Այդ սկզբունքների գործարկումից են առաջանում գոյի յետագայ աստիճանակարգերը: Բացայայտումների այդ շարքի մէջ իրենց տեղն են գտնում ե՛ւ անմարմին հոգիների եռեակ [դասերը], ե՛ւ մարդը, ե՛ւ, վերջապէս, անշունչ բնութիւնը[14]:

Եթէ այն ամէնը, ինչ գոյութիւն ունի, ծագում է Աստծուց, իսկ Աստուած ինքնին բարիք եւ ինքնին գեղեցկութիւն է, ապա այն ամէնը, ինչ գոյութիւն ունի, բարի եւ գեղեցիկ է: Արդ, հարցադրելի է, այդ պարագայում ի՞նչն է իր բնութեամբ չար, եւ որտեղի՞ց է այն: Հասկանալի է, որ այն Աստծուց չէ, պարզ է նաեւ, որ այն հրեշտակներից էլ չէ, որովհետեւ հրեշտակներն աստուածային բարութեան եւ գեղեցկութեան դրսեւորումներ են: Բայց այն չէր կարող առաջանալ դեւերից, որովհետեւ եթէ մենք ենթադրենք, թէ չարը դեւերից է ծագում, ապա պիտի ընդունենք, թէ նրանք իրենց բնութեամբ այդպիսին են, բայց դա չի կարելի ընդունել, որովհետեւ նրանք, ինչպէս գոյութիւն ունեցող ամէն բան, Աստուծոյ արարածներն են, իսկ Աստուած, բարիք լինելով, կարող էր ստեղծել եւ ստեղծել է միայն բարիք: Հետեւաբար, եթէ դեւերը չար են, ապա միայն այն պատճառով, որ նրանք լիովին հաղորդ չեն բարիքին իրենց գործունէութեան թուլութեան պատճառով: Դեւերի չարութիւնը իրենց նախասկզբնական վիճակից ընկնելն է, անկատարութիւնը, թուլութիւնը, հեռացումը աստուածային զօրութիւնից: Քանի որ նրանք գոյութիւն ունեն, ապա գոյութիւն ունեն Աստծուց եւ բարի են. [իսկ] քանի որ նրանք չար ոգիներ են, դրանով նրանք անգոյ են, եւ նրանց չարութիւնը բացակայական եւ ոչ իրական մի բան է:

14 Siebert, նշ. աշխ., SS. 31-37: Քանի որ Դիոնէսիոսն ընդունում է արարչութեան [փաստը], նա չի կարող բառիս բուն իմաստով պանթէիստ համարուել, բայց որովհետեւ նրա [ընկալմամբ] արարչագործութիւնը ոչ այնքան ազատ, արարչական գործողութիւն է, որքան աշխարհակազմման անհրաժեշտ գործընթաց, նաեւ՝ քանի որ նա «արարչագործութիւն» (κτίσις) հասկացութեան հետ միասին իբրեւ համարժէք կիրարկում է γένεσις, ἔκφανσις, χύσις բառերը, ապա պէտք է ընդունել, որ նրա տիեզերաբանութեան մէջ նշմարւում է որոշակի հակուածութիւն դէպի պանթէիզմը, ինչն այնքան վառ կերպով արտայայտուեց Պլոտինի [իմաստասիրական] համակարգում:

Նոյն հիմնաւորումով՝ չարը չի կարող առաջանալ նաեւ չար հոգիներից: Ճիշտ նոյնպէս եւ չարիքի աղբիւր չեն կարող լինել ո՛չ բնութիւնը, քանզի այն բարի Աստուծոյ արարչութիւնն է, ո՛չ նիւթը, քանզի եթէ այն անգոյ է, ապա այն ո՛չ բարի է, ո՛չ չար, իսկ եթէ այն որեւէ տեղ եւ որեւէ կերպ գոյութիւն ունի, ապա այն բարիք է. որովհետեւ բովանդակ գոյը ծագում է Աստծուց: Իսկ եթէ չարը չի ծագում ո՛չ Աստծուց, ո՛չ հրեշտակներից, ո՛չ դեւերից, ո՛չ չար հոգիներից, ո՛չ բնութիւնից եւ նիւթից, այսինքն՝ գոյութիւն ունեցող եւ ոչ մի բանից, ապա ուրեմն՝ այն անգոյ է (μὴ ὄν), այսինքն՝ ἔλλιψις, στέρησις, ἀσθένεια, ἀδυναμία է: Չարն ամենայն յոգնակին է, պատահականը, մասնակին, տրոհուածը, աննպատակը, անաւարտը, անկատարը. միով բանիւ՝ [չարը] նոյն գոյն է, բայց ոչ թէ իր սկզբնական միասնութեան եւ կատարելութեան մէջ, այլ սեփական բնութիւնից օտարացման, բազմակերպութեան եւ տարակերպութիւնների կամ, այսպէս կոչուած, այլագոյութեան մէջ: Եւ քանի որ գոյն, ըստ Դիոնեսիոսի, բարիքի հոմանիշն է, ապա չարիքն այլ բան չէ, քան նուազող եւ տրոհուող բարիք[15]:

Մարդու մեղանչումը հեռացումն է ճշմարիտ բարութիւնից, այսինքն՝ ըստ էութեան, որպէս թէ բնազանցական հեռացումն է Աստծուց: Չարի ոչնչացումը ենթադրում է բնութեան կատարելագործում, որ կատարւում է նրա աստիճանական վերադարձով դէպի սկզբնական միութիւն եւ բացարձակ գերգոյութիւն: Մարդու փրկութիւնը հրաժարումն է նիւթից եւ «հաղորդակցութիւնը» Աստուածութեան հետ. «Փրկուողների համար այն այլ կերպ չի կարող լինել, քան նրանց աստուածացմանը զուգընթաց»:

Արէոպագացու բնազանցութեան արդէն քննարկուած իմաստասիրական դրոյթները մեզ հնարաւորութիւն են տալիս տեսնելու, թէ Դիոնեսիոսն ինչպէս է հասկանում աստուածացման բնոյթը: Աստուածացումն ըստ էութեան ոչ թէ կրօնաբարոյական բնոյթ ունի, այլ բնազանցական: Այն նշանակում է անկեալ մարդու «վերադարձը»

15 Չի կարելի չնչել, որ ս. Դիոնէսիոսի՝ չարի բնութեան վերաբերեալ ունեցած հայեացքները մօտիկ եւ համերաշխ են նորպլատոնեան իմաստասիրութեանը: Բայց եթէ Պլոտինը չարը տակաւին նոյնացնում է նիւթի հետ, ապա Պրոկղը, առաջ գնալով, Դիոնէսիոսի նման հաստատում է, որ նիւթը եւս չի կարող չարի սկզբնապատճառ լինել, որովհետեւ այն իբրեւ անորակ եւ անկերպ զանգուած ըստինքեան ո՛չ բարի է, ո՛չ չար:

(ἐπιστροφή) դէպի Աստուածութեան հետ ունեցած իր սկզբնական միութիւնը (εἰς θεοειδῆ μονάδα): Այդ հասկացութեան եւ աստուածացման գործընթացը կազմող փուլերի քննութիւնը ցոյց է տալիս, որ աստուածացումն, ըստ Դիոնեսիոսի, կատարւում է առաւելապէս վերացարկուած մտաւոր հայեցողութեան միջոցով՝ խորհրդապաշտական ճանաչողութեամբ:

Համաձայն Դիոնեսիոսի վարդապետութեան՝ աստուածացումն իր մէջ, որպէս մասնակի փուլեր, ներառում է աստուածանմանութիւնն ու միաւորումն Աստուծոյ հետ[16]: Այս երկու գաղափարներն առանձնապէս կարեւորւում են Դիոնեսիոսի վարդապետութեան մէջ: Եթէ Աստուած Իր էութեամբ անդրանցական Մոնադ է, անորակ Պարզութիւն (ἑνότης καὶ θεοποιὸς ἁπλότης), ապա գերագոյն աստուածանմանութիւնն այլ բան չէ, քան երբ մարդ ձեռք է բերում իր հոգու պարզութեան բարձրագոյն աստիճանը (ἅπλωσις): Եւ իրապէս, հոգեբանական հայեցակէտից քննարկուող աստուածացումը Արէոպագացու երկերում միշտ կիրառւում է որպէս մարդու հոգեւոր պարզութեան հոմանիշ: «Ἕνωσις»-ը նշանակում է աստուածացման օրիեկտիւ, գոյաբանական պահը: Այդ իմաստով Դիոնեսիոսն աստուածացումն ընկալում է որպէս մարդկային հոգու իրական հաղորդութիւն աստուածային բնութեանը, որ կատարւում է աստուածային զօրութեամբ՝ մարդու կողմից գոյի զգալի-երեւութաբանական մասից հրաժարուելու միջոցով: Հոգին, ձերբազատուելով զգալի ոլորտի կաշկանդումներից եւ ամէն տեսակ այլաբնոյթ խառնուրդներից, մտքից վտարելով բոլոր պատկերացումներն ու կերպարանքները, հրաժարուելով ամէն տեսակ մտքերից, ձեռք է բերում պարզութիւն: Այդ ճանապարհով նա վերադառնում է իր սկզբնական վիճակին եւ իր բնութեան լաւագոյն մասով միաւորւում պարզագոյն Աստուածութեան հետ, եւ Աստուած նրան միաւորում է Իրեն՝ նրա պարզութեանը համապատասխան: Այս երկու փուլերն ըստ էութեան ներկայացնում են աստուածացման մէկ միասնական գործընթաց, որին հոգին հասնում է, երբ իր կեանքում իրականացնում է պարզագոյն միաւորում (ἁπλωτικὴν ἕνωσιν):

Աստծուն մերձենալու խորհրդապաշտական գործընթացը բաղկացած է երեք գլխաւոր փուլերից: Համաձայն Պլոտինի՝ այդ փուլերն են՝

16 Յաղագս եկեղեց. քահ., VI, § 3, Յաղագս երկնային քահ., I, § 1

մաքրագործում, լուսաւորում, աստուածացում (κάθαρσις, φωτισμός, θέωσις): Դիոնեսիոսի մօտ այդ փուլերին համապատասխանում են κάθαρσις-ը, φωτισμός-ը եւ τελείωσις-ը:

Կաթարսիսը (Κάθαρσις) մարդկային հոգու ձերբազատումն է ամէն տեսակ զգալի-նիւթական կաշկանդումներից կամ, ըստ Դիոնեսիոսի արտայայտութեան, ամէն տեսակ խառնուրդներից[17]: Կաթարսիսն ունի նաեւ բարոյաբանական կողմ, բայց վերջինս գտնւում է յետին պլանում եւ բնազանցական երանգ ունի: Անհրաժեշտ է կատարել պատուիրանները եւ սիրել Աստծուն[18], սակայն առաւել եւս՝ ամենեւին հրաժարուել այն ամէնից, ինչ անյարիր է աստուածայինին: Հարկ է խուսափել մեղքի պղծութիւնից, որը սակայն ոչ այնքան բարոյական չարիք է, որքան մարդու բնազանցական անկատարութիւնն է. պղծութիւնը «մարդուն [Աստուծոյ] պատկերակցութիւնից հեռացնող բաժանում է»՝ մարդկային հոգուն օտար այլաբնոյթ «խառնուրդ»: Այսպիսով, Դիոնեսիոսի կաթարսիսը, ինչպէս նաեւ Պլոտինի կաթարսիսը, աւելի շատ բնազանցական հեռացումն է մարդկային հոգուն անհարազատ զգալի-նիւթական ոլորտից, քան բարոյական չարիքի բարոյաբանական յաղթահարումը:

Ֆոտիսմոսը (Φωτισμός) հոգու պայծառացումն է աստուածային լոյսով, որը մարդուն բարձրացնում է հայեցողութեան բարձունքի վրայ եւ նրան զօրութիւն տալիս՝ ապրելու հայեցողական կեանքով: Այդ լոյսի բնութեան եւ մարդու հոգու վրայ նրա ազդեցութեան վերաբերեալ Դիոնեսիոսն այսպէս է խորհրդածում. «Բոլոր լուսաւորուող էակների համար լոյսի աղբիւրն Աստուած է՝ բնութեամբ, էութեամբ եւ սեփականութեամբ՝ որպէս լոյսի էութիւն, նրա գոյութեան ու հաղորդման պատճառ: Ուստի, ըստ Աստուծոյ սահմանման եւ Աստծուն նմանուելու կարգի, իւրաքանչիւր ստորին էակի համար վերին էակը լուսաւորման սկիզբ է, քանզի աստուածային լոյսի ճառագայթները վերինի միջոցով փոխանցւում են ստորինին»[19]: «Այս լոյսը երբեք չի կորցնում իր ներքին միեղինութիւնը, թէեւ իր շնորհական յատկութեամբ բաժանւում է, որպէսզի միաւորութեամբ (σύγκρασις) միաւորուի մահկանացուներին եւ նրանց բարձրացնի վեր եւ միաւորի Աստծուն:

17 Ցաղագս երկնային քահ., III, § 3
18 Ցաղագս եկեղեց. քահ., II, § 1
19 Ցաղագս երկնային քահ., XIII, § 4

Այն ներամփոփուած է ինքն իր մէջ եւ յարատեւօրէն մնում է անշարժ եւ միեղէն նոյնութեան մէջ, եւ նրանց, ովքեր իրենց հայեացքը պատշաճ կերպով ուղղում են նրան, նրանց կարողութեան չափով, բարձրացնում է վեր եւ միեղինացնում նրանց, ինչպէս որ այն ինքն իր մէջ պարզ է եւ միեղէն»[20]: Այսպիսով, φωτισμός-ը, սուբիեկտիւ տեսանկիւնից դիտուած, «միեղինացնող» (θεωρία) հայեցողութիւն է, որ ուղեկցւում է աստուածային լոյսով պայծառացմամբ, իսկ օբիեկտիւ տեսանկիւնից՝ աստուածային զօրութիւն է, որ Աստծուց յաջորդաբար՝ գոյի վերին աստիճանակարգերից հեղւում է դէպի ստորինները եւ նրանց բարձրացնում ու միաւորում Աստուածութեանը: Երկնքում աստուածային զօրութեան ընդունումն ու փոխանցումն իրականացնող միջնորդները երկնային քահանայապետութեան զանազան դասերն են, իսկ երկրի վրայ՝ գերագոյն Քահանայապետ Քրիստոսի կողմից հիմնուած եւ երկնային արտապատկերը հանդիսացող եկեղեցական քահանայապետութեան կամ նուիրապետութեան աստիճանները, որն օժտուած է աստուածային զօրութեան փոխանցման այնպիսի զօրաւոր միջոցներով, որպիսիք են եկեղեցու խորհուրդները[21]:

Տելէոսիսը (τελείωσις) մարդու մասնակցութիւնն է «հայեցողական խորհուրդների կատարելագործուող ճանաչողութեանը»[22]: Այն խորհրդական ճանաչողութեան բարձրագոյն վիճակն է, երբ հայեցողութեան բարձունքները հասած մարդու միտքը թափանցում է աստուածային կեանքի խորհուրդների մէջ եւ հաղորդւում Աստուածութեանը: Տէլեոսիսը, որ մարդու հոգու բարձրագոյն կատարելութիւնն է, ըստ էութեան խորհրդական ճանաչողութեան գագաթն է: Այս միտքը յստակօրէն արտայայտուած է խորհրդական աստուածճանաչողութեան, ինչպէս նաեւ մարդկային կատարելութեան նախատիպերի՝ երկնաւոր իմանալի էակների վիճակի մասին Դիոնեսիոսի խորհրդածութիւններում:

Խորհրդական աստուածճանաչողութեան վարդապետութիւնն անքակտելի կապի մէջ է Արէոպագացու աստուածաբանութեան հետ: Եթէ Աստուած ո՛չ միտք է, ո՛չ մտածում, ո՛չ խօսք, ո՛չ ճանաչողութիւն, ո՛չ ճշմարտութիւն, ո՛չ իմաստութիւն, այլ այդ բոլորից վեր է, ապա պարզ է, որ Նա չի կարող ճանաչուել սովորական՝ բանաքննական (ռացիո-

20 Անդ, I, § 2
21 Ցաղագս եկեղեց. քահան., I § 2, § IV, 4
22 Ցաղագս երկնային քահան., III § 3

նալ) եղանակով: Մարդկային միտքն անկարող է ճանաչել Նրան, մարդկային խօսքը խիստ տկար է, որպէսզի արտայայտի Նրա էութիւնը: Որքան միտքը բարձրանում է Աստուծոյ տեսութեան մէջ, այնքան այն կարկամում է, մինչեւ որ, ի վերջոյ, հնարաւոր վերացարկման բարձունքներում անշարժանում է համր լռութեան մէջ: Բայց մարդկային բանականութեան համար Աստուծոյ անճանաչելիութեան իրողութիւնից չի հետեւում, թէ Նա առհասարակ անճանաչելի է: Բացի բանաքննական ճանաչողութիւնից, կայ աստուածճանաչողութեան մէկ այլ յատուկ եղանակ եւս՝ խորհրդականը՝ Աստուածութեան ներքին անմիջական զգացողութեամբ եւ Նրա հետ խորհրդական հաղորդութեամբ կամ հպումով (ἐπαφή): Այն պահին, երբ մարդու միտքը հասնում է վերացարկման գագաթը, երբ միտքը հրաժարւում է ամէն տեսակ պատկերացումներից եւ կերպարներից եւ սուզւում է խորհրդաւոր լռութեան (κρυφόμυστος σιγή)[23] լիակատար անգիտութեան մէջ (ἀλογία παντελής, ἀνοησία)[24], այդ ժամանակ մարդու սքանչացած հոգին (καθαρῶς ἐκστατεῖ)[25] անմիջաբար ասես զգում է Աստուածութեանը: Մոռացած իրեն եւ շրջակայ ամէն ինչ, անգիտութեան խորհրդաւոր մէգի մէջ սուզուած՝ նա համակ Նրա մէջ է, Ով վեր է ամէն ինչից. ձերբազատուելով ամէն տեսակ ճանաչողութիւնից՝ նա իր լաւագոյն մասով միանում է կատարեալ Անճանաչելիի հետ՝ ճանաչելով Նրան նաեւ մտքի բնական գործունէութիւնից դուրս եւ վեր գտնուող միջոցներով[26]: Այսպէս աստուածային մէգը (ὁ θεῖος γνόφος) միաժամանակ անմատչելի լոյս է, որի մէջ բնակւում է Ինքն Աստուած, կատարեալ անգիտութիւն, [որ տրւում է] գիտութիւնից վեր գտնուող [Աստուծոյ] ճանաչողութեամբ: Այստեղ մենք մուտք ենք գործում հակաթեզերի, հակադրութիւնների պարադոքսների ոլորտը, որոնցով առատ է խորհրդապաշտութիւնն առհասարակ: Աստուած միաժամանակ անանուն (ἀνώνυμος) է եւ բազմանուն (πολυώνυμος), ամէն ինչ է (πάντα) եւ ոչինչ (οὐδέν), գոյ է եւ անգոյ (νοησία եւ ἀνοησία): Հոգին մերթ սուզւում է կատարեալ խաղաղութեան, անշարժութեան մէջ, մերթ ապրում սքանչացումի

23 Ցաղագս խորհրդ. աստուածաբան., I, § 1
24 Ցաղագս աստուածային անուանց, I, § 1
25 Ցաղագս խորհրդ. աստ., I, § 1
26 Անդ, I, §-3

(ἔκστασις), հոգեւոր արբումի (νηφάλιος μέθη) պահեր. բոլոր այդ հակադրութիւնները, որոնք լուծւում եւ ներդաշնակորէն միանում են խորհրդապաշտի ներանձնական փորձառութեամբ, անմատչելի են բոլոր նրանց համար, ովքեր լուսաւորուած չեն խորհրդապաշտական ապրումներով: Կարելի է միայն ենթադրաբար հաստատել, թէ աստուածճանաչողութեան ոլորտում այդպիսի հակադրութիւնների իմաստն (γνόφος-φῶς, ἀγνωσία-γνῶσις) այն է, որ փորձառական-բանաքննական ճանաչողութեան բոլոր ձեւերից եւ տեսակներից իսպառ հրաժարումն անհրաժեշտ նախապայման է խորհրդական տեսութեան համար: Վերջինս Աստուածութեան՝ մտքի ամէն տեսակ գործունէութիւնից դուրս եւ վեր գտնուող անմիջական զգացողութիւնն է, ընդ որում Աստուածութեան հետ այդ լռութեամբ հաղորդուելիս մարդկային հոգին ձեռք է բերում Աստուծոյ բնութեան՝ իր համար հնարաւոր առաւելագոյն տեսութիւնը:

Բայց ընդունելով Աստուածութեան հետ խորհրդական միաւորումը, որ աստուածտեսութեան բարձրագոյն եղանակով կատարւում է մարդկային հոգու՝ խորհրդական լռութեան եւ «առանց մտքի» վիճակի մէջ՝ Դիոնէսիոսը ցոյց է տալիս, որ դէպի աստուածգիտութիւն տանող ճանապարհն անցնում է մտքի զննողութեան միջով՝ մարդու հոգու զուտ բանական ոլորտում, եւ որ մարդուն առ Աստուած բարձրացնող զօրութիւնը գնոսիսն է՝ հայեցողութիւնը՝ բառիս լայն իմաստով: Այս ճանապարհն ունի վերելքի իր աստիճանները: Այստեղ իրենց տեղն ունեն ե՛ւ աստուածային յայտնութիւնը, ե՛ւ անճառելի, ե՛ւ ճառելի աստուածաբանութիւնը: Սակայն մի բան անտարակոյս է. ով չի ձգտում ճանաչել Աստծուն նախ բանական քննութեամբ, նրա համար անկարելի է նաեւ խորհրդական ճանաչողութիւնը: Վերջինն առաջինի պտուղն է: Այն արդիւնք է բանական քննութեամբ Աստծուն ճանաչելու անկարելիութեան յստակ գիտակցման: Սակայն Աստուածութեան անմատչելիութիւնը յստակօրէն գիտակցել եւ ամբողջ խորութեամբ զգալ կարող է միայն նա, ով կը լարի իր մտքի ամբողջ զօրութիւնը բանաքննական ճանաչողութեան համար եւ փորձով կը համոզուի, որ այդպիսի ճանաչողութիւնն անհնար է: Որքան խոր եւ համակողմանի լինի այդ փորձը, այնքան շուտ կը յայտնուեն նրա խորհրդապաշտական պտուղները: Այսպիսով, խորհրդական աստուածճանաչողութիւնը ոչ միայն չի բացառում յայտնութեան ուսումնասիրման անհրաժեշտութիւնը եւ նրա բանաքննական մշակումը, այլեւ աւելին՝ երկրորդը առաջինի ելա-

կէտն է[27]: Այսպէս, իր մէջ չպարունակելով Աստուածութեան ճանաչողութիւնը՝ բանաքննական ճանաչողութիւնն ունի ոչ նուազ նշանակութիւն՝ արդէն որպէս յայտնի մեթոդաբանական հնարք, որ առաջնորդում է դէպի խորհրդական աստուածճանաչողութիւն: Բայց սա բաւական չէ: Քանի որ այն անգիտութիւնը (ἀγνωσία), որի մէջ մարդկային հոգին տեսնում է Աստուածութեանը, թէեւ զուրկ է որեւէ բանաքննական բովանդակութիւնից եւ կատարեալ լռութիւն (ἀνοησία) է, այդուհանդերձ դա մտքի որոշակի վիճակ է՝ մաքուր միտք: Գնոսիս՝ ճանաչողութիւն կարող են կոչուել նաեւ այն անտեսք ու անկերպ հայեցողութիւնները (θεωρία), որոնց մէջ արտայայտւում է Աստուածութեան խորհրդական գիտութիւնը: Այդ ճանաչողութիւնը, ի տարբերութիւն բանաքննականի, կարելի է կոչել խորհրդական ճանաչողութիւն: Սա այն նոյն ճանաչողութիւնն է, որը կրօնական կեանքի բարձրագոյն չափանիշ էր համարում տակաւին Կղեմէս Ալեքսանդրացին: Ինչպէս Դիոնեսիոսը, այնպէս էլ Կղեմէսը համարում են, որ այն ունի աստուածային կեանքի խորհուրդները բացայայտելու եւ մարդուն աստուածացնելու (θεοποιεῖν) զօրութիւն:

Տէլեոսիսի նոյն՝ իմացական բնոյթը Դիոնեսիոսը նշում է նաեւ երկնային իմանալի էակների կատարելութեան մասին իր խորհրդածութիւնների մէջ. «Երկնային իմանալի էակների առաջին դասը,- ասում է նա,- որ լուսաւորւում է նոյն Իրենից՝ նախակատար [Էութիւնից], նրանով, որ այն անմիջաբար միտուած է դէպի Նա՝ հնարաւորին չափ լցուած սրբազնագոյն մաքրութեամբ, առատ լոյսով եւ կատարելագոյն լուսաւորութեամբ, մաքրագործւում է, լուսաւորւում եւ կատարելագործւում՝ լինելով ոչ միայն ամենեւին անհաղորդ երկրային կապուածութիւններին, այլեւ լցուած նախասկզբնական լոյսով եւ մասնակից նախասկզբնական ճանաչողութեանն (γνώσεως) ու գիտութեանը (ἐπιστήμη): Արդ,- շարունակում է Դիոնէսիոսը,- այժմ պատշաճ է համառօտաբար ասել, որ հէնց Աստուծոյ ճանաչողութեան հաղորդութիւնն է մաքրագործումը, լուսաւորութիւնն ու կատարելագործումը (ὅτι καὶ κάθαρσις ἐστι, καὶ φωτισμός, καὶ τελείωσις ἡ θεαρχικῆς ἐπιστήμης μετάληψις), քանզի այն ինչ-որ կերպով մաքրում է անգիտութիւնից՝ ըստ արժանապատուութեան հաղորդելով կատարեալ խորհուրդների ճանաչողութիւնը: Նոյն այս մաքրագործող աստուածային ճանաչողութեամբ (τῇ θείᾳ γνώσει) նաեւ լուսաւորում է միտքը, որը նախկինում չգիտէր այն, ինչ այժմ նրան յայտնւում է ի վերուստ պայծառացմամբ: Վերջապէս, նոյն այդ լոյսով կատարելագործում է՝ տալով լուսաւոր խորհուրդների հաստատուն ճանաչողութիւն»:

Այսպիսին են արէոպագիտեան խորհրդապաշտութեան հիմնական գծերը: Մարդու հոգեւոր կեանքի իդեալը աստուածացումն է (θείωσις), որ մի կողմից ընկալւում է որպէս հոգու առաւելագոյն «պարզեցում» (ἁπλωσις), իսկ միւս կողմից՝ որպէս բնազանցական միաւորում (ἕνωσις) աստուածային գոյի հետ՝ որպէս իւրայատուկ «վերադարձ» (ἐπιστροφή) դէպի Աստուածութեան հետ սկզբնական միութիւնը (εἰς μονάδα), որ տեղի է ունենում մտքի վերացարկուած-մտազննական գործունէութեան ընթացքում՝ խորհրդական ճանաչողութեան զօրութեամբ: Հոգու պարզութեան՝ որպէս աստուածացման հոմանիշի մասին իր վարդապետութեան մէջ Դիոնեսիոսը կարող էր յենուել սեփական ներանձնական փորձառութեան վրայ, բայց իր այդ փորձառութեան տուեալների մշակման մէջ չի կարելի չտեսնել նորպլատոնական աստուածիմաստութեան (թէոսոֆիա) ազդեցութեան հետքերը: Այդ ազդեցութիւնը նշմարւում է նաեւ նրա՝ կաթարսիսի ընկալման մէջ, որպէս այլաբնոյթ, այսինքն՝ նիւթական «խառնուրդից» հոգու բնազանցական մաքրագործում: Թերեւս ենթարկուելով նոյն այդ ազդեցութեանը, կարեւորելով գնոսիսի՝ որպէս աստուածացնող զօրութեան նշանակութիւնը՝ Դիոնէսիոսը դրա մեկնաբանութեան մէջ զգալիօրէն առաջ անցաւ Կղեմէս Ալեքսանդրացուց: Եթէ Կղեմէսի համար գնոսիսը հայեցողական «իմանալի» աղօթքն է, ապա Դիոնեսիոսի համար այն մտքի կատարեալ լռութիւնն է (ἀνοησία): Աստուծոյ՝ որպէս անդրանցական, անորակ Պարզութեան մասին վարդապետութիւնը նրան հնարաւորութիւն է ընձեռել հոգեւոր կեանքի իր իդեալին տալ գոյաբանական հիմնաւորում: Դիոնեսիոսը Կղեմէսից առաջ է անցնում նաեւ իմացաբանական իդեալի անհատական ընկալման մէջ: Կղեմէսի գնոստիկը չի մեկուսանում աշխարհից եւ անհաղորդ չէ կեանքի գործնական խնդիրներին. մինչդեռ Դիոնեսիոսի գնոստիկն արդէն մեկուսացած մենակեաց

27 Այն, թէ Դիոնէսիոսը որքան հեռու է յայտնութեան նշանակութեան ժխտումից եւ նրա համակարգուած-գիտական մշակումից, կարելի է ցոյց տալ այն ակներեւ փաստով, որ Սուրբ Գրքի հիման վրայ աստուածաբանութեան դրական մշակման փորձին նա նուիրել է մի շարք աշխատութիւններ. «Ճաղագս աստուածային անուանց», «Ճաղագս խորհրդական աստուածաբանութեան» եւ այլն:

(μοναχός) է[28], ընդ որում Դիոնեսիոսը վանական կեանքին նուիրաբերուելը համարում է եկեղեցական խորհուրդ (μυστήριον μοναχικῆς τελείωσεως), ինչպէս Մկրտութիւնը, Հաղորդութիւնը, Դրոշմը, Քահանայութիւնը:

Սակայն Դիոնեսիոսի խորհրդապաշտութեան մէջ կան նաեւ այնպիսի գծեր, որոնք կտրուկ կերպով տարբերւում են նորպլատոնական մտազնութիւնից: Այդ գծերը բացորոշ են դառնում յատկապէս այն ժամանակ, երբ Դիոնեսիոսն արտայայտում է եկեղեցական խորհրդապաշտութեան գլխաւոր սկզբունքները: Ըստ նրա վարդապետութեան՝ աստուածացումը ոչ միայն արդիւնք է առ Աստուած խորհրդապաշտական բարձրացման բնական գործընթացի, այլեւ աստուածային զօրութեան՝ մարդու վրայ ունեցած գերբնական ներգործութեան: Այդ զօրութեան աղբիւրը երկնային Քահանայապետն է՝ Քրիստոս, միջնորդները՝ երկնային քահանայապետութիւնը, եկեղեցական նուիրապետութիւնը եւ խորհուրդները: Վերջիններիս խնդիրն է աստուածային զօրութեան բաշխմամբ օժանդակել մարդու մաքրագործմանը, լուսաւորմանը եւ Աստուծոյ հետ միաւորմանը: Աստուածանում է մարդու ոչ միայն հոգին, այլեւ մարմինը, որը յարութեան ժամանակ հաղորդ է լինելու աստուածային կեանքին:

Արէոպագիտեան աշխարհայեացքի իդեալիստական բնոյթը, խորհրդապաշտական փորձառութեան կրօնափիլիսոփայական հիմնաւորման ձգտումը, եկեղեցական պաշտամունքի զանազան տեսակների խորհրդական մեկնութիւնը Դիոնեսիոսի երկերը դարձնում են լայնօրէն ընկալելի ոչ միայն Արեւելքում, այլեւ Արեւմուտքում՝ հեղինակի՝ «առաքելական հայր» պատուանունով մեծարմամբ: Այդ երկերի ազդեցութիւնը եղել է խոր եւ տեւական: Բայց եթէ արեւմտեան մատենագիրները Դիոնեսիոսին մեծարում էին գերազանցապէս որպէս խոր մտահայեցող եւ, ենթարկուելով նրա իմաստասիրական գաղափարների ազդեցութեանը, շարունակում էին զարգացնել նրա համակարգի սկզբունքները՝ երբեմն դրանք հասցնելով ծայրայեղութեան, եւ Դիոնեսիոսի խորհրդապաշտութեանը տալիս էին ոչ եկեղեցական բնոյթ (Յովհաննէս Սկոտ Էրիգենա), ապա Արեւելքը նրան առաւելապէս գնահատում

28 Պլոտինը նոյնպէս, ի շարս այլ պայմանների, որոնք ապահովում են մարդու հոգու «վերադարձը» դէպի Աստուածութեան հետ նախնական միութիւն, նշում է մարդու մեկուսացման անհրաժեշտութիւնը. Enn. VI 9, 11:

է որպէս Արեւելեան Եկեղեցու խորհրդապաշտական-ծիսական բնոյթի արտայայտիչ, արեւելեան քրիստոնէութեան ծիսական խորհրդապաշտութեան հիմնադիր: Այդուհանդերձ Արեւելքում եւս Դիոնեսիոսի մտազնական խորհրդապաշտութեան շատ գաղափարներ խոր արմատներ ձգեցին: Այսպէս, աստուածացման մասին Դիոնեսիոսի վերացարկուած-մտազնական խորհրդածութիւնները զգալիօրէն նպաստել են արեւելեան ճգնաւորների կրօնական կեանքի այն իդեալին, ըստ որի՝ աստուածացումը նրանց կողմից սովորաբար ընկալւում է որպէս ἁπλωσις-ի (պարզեցում) հոմանիշ, որն իրականացւում է մտքի վերացարկուած-հայեցողական գործունէութեան ընթացքում: Մտքի լռութեան՝ որպէս խորհրդական աստուածճանաչողութեան պայմանի վերաբերեալ Դիոնեսիոսի վարդապետութիւնը յետագայում մանրամասն կերպով մշակուեց հեսիխասների կողմից, որոնք հեսիխիան (ἡσυχία-հանդարտութիւն) դարձրին խորհրդապաշտական կեանքի միակ չափանիշ:

Եզրափակելով խորհրդապաշտութեան վերացարկուած-մտազնական ուղղութեան քննութիւնը՝ անհրաժեշտ ենք համարում գոնէ հպանցիկ անդրադառնալ ս. Գրիգոր Նիւսացու խորհրդապաշտութեան այն կողմին, որով նա սերտ շփման մէջ է քննարկուող ուղղութեան հետ ընդհանրապէս եւ ս. Դիոնեսիոսի խորհրդապաշտութեան հետ մասնաւորապէս: Տուեալ պարագայում մեզ համար յատուկ հետաքրքրութիւն է ներկայացնում նրա վարդապետութիւնը «հոգու մաքուր հայելու մէջ Աստուծոյ հայեցողութեան» մասին:

Քանի որ մարդու հոգին արարուած է Աստուծոյ պատկերով, ուրեմն իր մէջ կրում է աստուածային բնութեան յատկութիւնների անդրադարձումը: Արարելով մարդուն՝ Աստուած նրա մէջ ասես կերտում է իր պատկերը՝ նրան տալով այն ամէնը, ինչ ունի: Աստուած նախեւառաջ Բարիք է, Գեղեցկութիւն, Սէր, Իմաստութիւն. հոգին նոյնպէս իր մէջ կրում է բարիքի, գեղեցկութեան, իմաստութեան գծերը: Բայց ի շարս դրական յատկութիւնների՝ Գրիգոր Նիւսացին ընդգծում է նաեւ աստուածային էութեան միւս կողմը՝ նրա բնազանցական անդրանցականութիւնը: Աստուած ոչ միայն Բարիք է կամ նախասկզբնական, իսկութեամբ ճշմարիտ Բարիք, այլեւ Գերբարիք (ὑπὲρ τὸν ἀγαθόν[29], καλοῦ παντὸς ἐπέκεινα)[30]: Աստուծոյ բնութիւնը բարձր է

29 Migne, PG, t, 44, col. 725 A. t, 46, col 368 D

30 Անդ, PG, t, 44, col. 184 A

բանականութեանը մատչելի ամէն տեսակ ըմբռնումից եւ կերպարից, նրա մասին մենք կարող ենք միայն ասել, որ այն կայ, իսկ թէ ինչ է այն՝ դա անմատչելի է բանականութեան համար[31]: Տուեալ դէպքում, ինչպէս Դիոնէսիոսը, Գրիգոր Նիւսացին եւս հակուած է աստուածային էութիւնն ընկալելու որպէս գերբնական Պարզութիւն (ἁπλότης) եւ անորակ Մաքրութիւն (καθαρότης)[32]: Աստուածութեան այդ բնազանցական յատկութիւնները պէտք է իրենց արտայայտութիւնը գտնէին մարդու հոգու մէջ՝ որպէս Նախատիպի անդրադարձումներ: Եւ մարդու հոգին իր բնազանցական հիմքում այլ բան չէ, քան անորակ պարզութիւն:

Բայց իր ներկայ վիճակով Աստուծոյ պատկերը մարդու մէջ մեղքի կեղտով եւ անմաքրութեամբ ծածկուած մետաղադրամ է: Հոգու անմաքրութիւնն անմիջական հետեւանքն է գոյի զգալի-նիւթական ոլորտի նկատմամբ մարդու մոլութեան: Զարիքն ինչ-որ իրապէս գոյութիւն ունեցող բան չէ. այն արդիւնք է մարդու ինքնախաբէութեան, նրա մտքի մոլորութեան, երբ վերջինս բարիք է համարում ոչ այն, ինչ իրապէս բարիք է: Բարիքն Աստուծոյ մէջ է, այնինչ մարդն այն փնտռում է նիւթի մէջ: Նիւթի նկատմամբ այսօրինակ հակուածութեան մէջ է մարդու հոգեւոր անմաքրութեան պատճառը: Դեռ աւելին. մարդկային հոգու անմաքրութեան պատճառը հարկ է փնտռել առաւել խորքային իրողութիւնների մէջ. նրա արմատները թաքնուած են մարդու բնութեան երկակիութեան, այսինքն՝ աստուածանման հոգու՝ նիւթական մարմնի հետ բնազանցական միաւորման փաստի մէջ: Ըստ Գրիգոր Նիւսացու՝ մարդու բնութեան զգալի-նիւթական կողմը թէեւ ստեղծուած է Աստուծոյ կողմից, բայց Աստուած այն միացրել է հոգեւոր կողմին՝ կանխապէս իմանալով մարդու գալիք մեղանչման մասին: Այն Աստուծոյ արարածն է այնքանով, որքանով եւ հետեւանքն է մարդու անկման: Ըստ իր գաղափարի, եւ այսպէս ասած, սկզբնական մտայղացման՝ մարդը մաքուր, հրեշտականման հոգի է[33]:

Որպէսզի մարդը վերադառնայ հոգու սկզբնական մաքրութեանն ու պարզութեանը, նրան անհրաժեշտ է ձերբազատուել ամէն տեսակ

31 Անդ, col. 1272 c ռուս. թրգմ. փ. II, M., 1861, c. 445
32 Անդ, col. 732. Հմմտ. Die Gotteslehre des heil Gregor von Nyssa, Münster, 1896, S. 183
33 Migne, PG t, 44, cap. XVI-XVIII

օտար բաներից (τοῦ ἀλλοτρίου), այսինքն՝ հրաժարուել գոյի զգալի-նիւթական ոլորտից: Այդ հրաժարումը ենթադրում է երկու փուլ. առաջին՝ հոգու ձերբազատում նիւթի նկատմամբ մոլութիւնից եւ հէնց նիւթից, երկրորդ՝ հրաժարում բանականութեան փորձառական-բանաքննական բովանդակութիւնից: Առաջինին կարելի է հասնել կաթարսիսով[34], որն ունի բնազանցական նկարագիր, երկրորդին՝ հայեցողութեամբ, որում առաւել չեշտուած է մտազննական բնոյթը:

Ըստ ս. Գրիգոր Նիւսացու վարդապետութեան՝ մեղքից, անմաքրութիւնից մաքրուելը ոչ միայն ազատագրումն է նիւթի նկատմամբ մոլութիւնից, այլեւ հէնց նիւթից: Եւ մարդը որքան վճռականօրէն եւ խորութեամբ հրաժարուի նիւթականի հետ իր կապուածութիւնից, այնքան մօտ կը լինի իր հոգու սկզբնական մաքրութեանն ու պարզութեանը: Որպէսզի իր մէջ վերականգնի Աստուծոյ պատկերի սկզբնական այդ մաքրութիւնը, մարդը պէտք է «դուրս գայ բովանդակ տեսանելիի շրջանակից»[35], «լինի նիւթական աշխարհից դուրս»[36], «բովանդակ աշխարհից վեր»[37], «ձերբազատուի երկրային կեղեւից»[38], «հոգու աչքերից [հեռացնի] նիւթական մշուշը»[39], «հրաժարուի մարմնեղէն ծածկոյթներից»[40], «դուրս գայ [սեփական] բնութիւնից»[41], «իրենից իսպառ հեռացնի բոլոր աւելորդ, մարմնաւոր բաները», «թօթափուի ամենայն նիւթականից եւ կենցաղայինի հանդէպ ծանր վերաբերմունքից», որպէսզի անցնի դէպի «աստուածային ու հոգեւորը»: Այս բոլոր արտայայտութիւնները լաւագոյնս ցոյց են տալիս, որ ս. Գրիգոր Նիւսացին, ինչպէս ս. Դիոնեսիոս Արէոպագացին, կաթարսիսն ընկալում էր ժխտման եւ խիստ բնազանցական իմաստով: Դժուար չէ ցոյց տալ, որ երկրորդ փուլը՝ հայեցողութիւնը եւս, Նիւսացին ընկալում է Արէոպագացու նման, այսինքն՝ ստեղծագործութեան փորձառական-բանաքննական բովանդակութիւնից հոգու հրաժարման իմաստով: Մովսէս նախամարգարէի վարքի նկարագրութիւնից քաղուած հետեւեալ տողե-

34 Անդ, PG, t. 46, col. 376
35 Անդ, t. 44, col. 317 B
36 Անդ, col. 772 D
37 Անդ, t. 46, col. 365 CD
38 Անդ, col. 372 C
39 Անդ, t. 44, col. 1272 C
40 Անդ, t. 46, col. 376 B
41 Անդ, t. 44, col. 1028 B

ը, որոնք իրենց պարունակած գաղափարներով սերտ աղերսներ ունեն Արէոպագացու «Խորհրդական աստուածաբանութեան» Ա գլխի հետ, լաւագոյնս հաստատում են ասուածը. «Միտքը,- ասում է Նիւսացին,- առաւել տարածուելով, առաւել մեծ եւ կատարեալ ուշադրութեամբ շարունակ խորանալով ճշմարտապէս ճանաչելիի ըմբռնման մէջ, որքան վեր է բարձրանում Աստուածութեան հայեցողութեամբ, անքան աւելի է հասկանում աստուածային բնութեան ոչ հայեցողական լինելը: Քանզի, թողնելով տեսանելի ամէն ինչ՝ ոչ միայն զգայարաններով ընկալելիները, այլեւ, ըստ երեւոյթին, մտքով ըմբռնելիները, միտքը շարունակ գնում է աւելի ներս, մինչեւ որ բանականութեան փնտռումով թափանցում է անտեսանելիի եւ անհասանելիի մէջ եւ այնտեղ տեսնում Աստծուն: Քանզի դա՛ է Փնտրեալի ճշմարիտ ճանաչողութիւնը: Մեր ճանաչողութիւնն այն է, որ չգիտենք, քանզի Փնտրեալը վեր է ամէն ճանաչողութիւնից, ամէն կողմից պատուած է որպէս թէ անհասանելիութեան մէգով: Ուստի եւ վեր բարձրացած Յովհաննէսը, լինելով այդ լուսապայծառ մէգի մէջ (ἐν τῷ λαμπρῷ γνόφῷ), ասում է. «Աստծուն ոչ ոք երբեք չի տեսել» [Յովհ. Ա 18]՝ այս խօսքով վճռականօրէն հաստատելով, որ ոչ միայն մարդկանց, այլեւ որեւէ մտաւոր բնութեան համար անհասանելի է Աստուծոյ էութեան տեսութիւնը: Ուստի Մովսէսը, երբ տեսութեամբ վեր բարձրացաւ, այնժամ խոստովանեց, որ տեսնում է Աստծուն խաւարի մէջ, այսինքն՝ տեսնում է, որ Աստուած իր բնութեամբ հէնց այն է, ինչը վեր է ամէն տեսութիւնից ու ըմբռնումից: Քանզի ասուած է. «Մովսէս եմուտ ի մէգն, ուր էր Աստուած» [Ելք Ի 21]: Ուրեմն Ո՞վ է Աստուած: Նա, Ով խաւարը դարձրեց իր ծածկոյթը [Սաղմ. ԺԷ 22], ինչպէս ասում է Դաւիթը: [Այս խաւարում է գտնւում խորհուրդներին հաղորդ պայծառատեսը (ὁ ἐν τῷ αὐτῷ (γνόφῷ) μυηθεὶς τὰ ἀπόρρητα)[42]»]: Ինչպէս կարելի է տեսնել բերուած տողերից, այդ մէգը պատում է մարդու հոգին այն պահին, երբ միտքը, Աստուածութիւնը ճանաչելու իր ճիգի մէջ հասնում է վերացարկման գագաթը, հասցնում է թողնել երեւացող ամէն բան՝ ոչ միայն զգայարաններով ընկալելիները, այլեւ մտքով ըմբռնելիները, այսինքն՝ երբ նա հրաժարւում է ամենայն փորձառական-բանաքննական բովանդակութիւնից եւ խորասուզւում անգիտութիւն-գի-

42 Անդ, t. 44, col. 376 D - 377 AB

տութեան լուսապայծառ մէգի մէջ: Սա մտաքննական սքանչացման (էքստազ) պահն է, երբ միտքը դուրս է գալիս սեփական բնութիւնից, «ինքն իրենից» եւ գտնւում է «ընդարմութեան» վիճակում[43]:

Այս կացութեան մէջ մարդը հասնում է սկզբնական մաքրութեան, եւ նրա հոգին առաւել լիակատար կերպով իր մէջ անդրադարձնում է Նախատիպի յատկութիւնները: Եւ «ով (այդ վիճակում) տեսնում է իրեն, նա իր մէջ տեսնում է նաեւ Բաղձալիին, այդպիսով սրտով մաքուրը դառնում է երանելի, քանզի, նայելով սեփական մաքրութեանը, այդ պատկերի մէջ տեսնում է Նախատիպին: Քանզի ինչպէս նրանք, որ Արեգակը տեսնում են հայելու մէջ, թէեւ իրենց հայեացքը վեր՝ երկինք չեն յառում, բայց Արեգակի փայլը հայելու մէջ տեսնում են ոչ նուազ չափով, քան նրանք, ովքեր նայում են ուղիղ Արեգակի սկաւառակին, այդպէս էլ դուք, ասում է Տէրը, թէեւ անկարող էք նայել լոյսին, բայց եթէ վերադառնաք պատկերի այն շնորհին, որ ձեզ տրուած էր սկզբից, ապա ձեր մէջ կ՛ունենաք Փնտրուածը: Քանզի մաքրութիւնը, անկրքութիւնը, ամենայն չարիքից օտարութիւնը ինքնին Աստուածութիւնն է: Ուստի եթէ քո մէջ դա կայ, ապա անկասկած, քո մէջ է Աստուած: Երբ քո խորհուրդները զերծ են ամէն տեսակ արատից, կրքերից, հեռու են ամէն տեսակ պղծութիւնից, դու երանելի ես քո տեսութեան չափով, որովհետեւ մաքրուելով՝ տեսար չմաքրուածի համար անտեսանելին, եւ նիւթական մշուշը ցրելով հոգու աչքերից՝ սրտիդ մաքուր երկնքում յստակօրէն տեսնում ես երանելի տեսարանը: Բայց յստակապէս ի՞նչ: Մաքրութիւն, սրբութիւն, պարզութիւն եւ Աստուծոյ բնութեան նմանօրինակ լուսակիր արտափայլումներ, որոնց մէջ տեսնում ենք Աստծուն»[44]:

Այդ պահին մարդու հոգին միայն Աստուածութեան անդրադարձումը չէ, որ տեսնում է իր մէջ: Այդ պահին նա իր մէջ զգում է նոյն Իր՝ Աստուածութեան ներկայութիւնը: Քանզի Աստուած, լինելով բացարձակ անդրանցականութիւն, միաժամանակ (այստեղ եւս համաձայնութեան եզր կայ Դիոնեսիոսի՝ արդէն դիտարկուած դրոյթի հետ) ներունակ (իմմանենտ) է արարչութեանը: Ըստ ս. Գրիգոր Նիւսացու վարդապետութեան՝ «ոչինչ չի կարող լինել առանց գոյութեան. ինքն-

43 Անդ, PG t. 46, col. 361

44 Անդ, PG t. 44, col. 80

ըստինքեան եւ նախասկզբնական գոյը հէնց Աստուծոյ բնութիւնն է, որի մասին անհրաժեշտաբար պէտք է հաւատալ, որ Նա բոլոր գոյաւորների մէջ նրանց իսկ լինելութիւնն է»[45]: Աստուած ներկայ է նաեւ մարդու մէջ: Սակայն տրուած լինելով զգալի-նիւթական կեանքին՝ մարդը չի զգում Նրա ներկայութիւնն իր մէջ. անհրաժեշտ է, որ նա հրաժարուի այդ կեանքից, որպէսզի կենդանի կերպով իր մէջ զգայ Աստուածութեան ներկայութիւնը: «Տէրը ոչ թէ Աստուծոյ մասին որեւէ բան իմանալը, այլ Աստծուն սեփական անձի մէջ կրելն է անուանում երանութիւն, քանզի «երանելի են սրտով մաքուրները, որովհետեւ նրանք տեսնելու են Աստծուն» [Մատթ. Ե 8]: Սակայն ինձ թւում է, որ հոգու աչքը մաքրած մէկին Աստուած չի ներկայանում որպէս ինչ-որ տեսարան. ընդհակառակը՝ այս խօսքի բարձրութիւնը [Մատթ. Ե 8] գուցէ ներկայացնում է մեզ այն, ինչը յայտնապէս ասաց ուրիշներին. «Աստուծոյ արքայութիւնը ձեր ներսում է» [Ղուկ. ԺԷ 21]. որպէսզի մենք սրանից սովորենք, որ սեփական սիրտը ամէն տեսակ արարածներից եւ մոլութիւններից մաքրած մարդը իր ներսում նշմարում է Աստուծոյ բնութիւնը»[46]: Վերոյիշեալ տողերում ասուած է. «Եթէ քո մէջ կայ մաքրութիւն, անկրքութիւն, օտարացում ամենայն չարիքից, «ապա անտարակոյս Աստուած քո մէջ է» (Θεὸς πάντως ἐν σοί ἐστιν)[47]: Ըստ երեւոյթին, Աստուածութեան այսօրինակ զգացողութեան (երբ մարդու հոգին իր «պարզութեամբ» հպւում է աստուածային բնութեան Պարզութեանը) մէջ է մարդու «աստուածացման» բարձրագոյն պահը, քանզի այդ պահին մարդու հոգին, իր վրայ դրոշմելով Աստուածութեան բնազանցական այդ յատկութիւնը, ձեռք է բերում իր Նախատիպի պատկերը:

Ս. Գրիգոր Նիւսացու՝ Աստուծոյ՝ որպէս գերբնական պարզութեան մասին, ինչպէս նաեւ աստուածացման՝ որպէս հոգու աստիճանական մտազննական պարզեցման վերաբերեալ խորհրդածութիւններում, ինչպէս նաեւ Դիոնեսիոսի համաբնոյթ վարդապետութեան մէջ, հնարաւոր չէ չտեսնել նորպլատոնեան իմաստասիրութեան որոշ արձագանքները[48]: Սակայն նախեւառաջ հարկաւոր է յիշել, որ Նիւսացու ըմբռնումով՝ Աստուած ոչ միայն Տիեզերական Իրողութիւն է, այլեւ Գերագոյն Անձնաւորութիւն, եւ որ մարդու աստուածացումը կատարւում է Կենդանի Աստուծոյ զօրութեամբ. եւ երկրորդ՝ հարուստ ձիրքերով օժտուած Նիւսացին ամբողջապէս չի հեռանում մեր կողմից դիտարկուած կաթարսիսային հայեցողութեան եւ «լուսախաւար» գնոսիսի խորհրդապաշտութեան ոլորտ: Վերացարկուած-մտազննական խորհրդապաշտութեան արձագանքների հետ ս. Գրիգոր Նիւսացու երկերի մէջ լսւում են այլ կարգի շեշտեր եւս: Այս պարագայում Եկեղեցու մեծահամբաւ հօր հոգեւոր փորձառութիւնը դրականօրէն զարմանք է յարուցում հայեցողական ապրումների բազմազանութեամբ, իսկ նրա երկերը՝ դրանց վրայ հիմնուած խորհրդապաշտական գաղափարների հարստութեամբ: Սակայն այդ ապրումների եւ այդ գաղափարների մասին աւելի յարմար ենք համարում խօսել եկեղեցական խորհրդապաշտութեան մէկ այլ՝ բարոյագործնական ուղղութիւնը քննարկելիս:

Ռուսերէնից թարգմանեց
Յակոբ Քեոսէեանը

45 Անդ, PG t. 45, col. 1272 BC
46 Անդ, t. 44, col. 1269 C
47 Անդ

48 Նորպլատոնականութեան, ինչպէս նաեւ Փիլոն Ալեքսանդրացու խորհրդապաշտութեան նկատմամբ ս. Գրիգոր Նիւսացու ունեցած վերաբերմունքի մասին տե՛ս H. Kock, Das mystische Schauen beim hl. Gregor von Nyssa, «Theolog. Quartalschrift», Ravensburg, 1898 (Heft III), SS. 397-420:

ԲՆԱԳՐԵՐ ԵՒ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՏԱՍՆԵՐԿՈՒ ԱՌԱՔԵԱԼՆԵՐԻ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

ՆԵՐԱԾԱԿԱՆ

1. Առաջին հրատարակութիւն: ԺԹ դարի բանասիրական յայտնագործութիւններից գուցէ եւ ոչ մէկն այնքան յուզում չառաջացրեց ամբողջ աշխարհի բանասիրական շրջանակներում, յատկապէս Անգլիայում, Գերմանիայում եւ Ամերիկայում, որքան 1875 թ. Նիկոմիդիոյ մետրոպոլիտ Փիլոթէոս Բրիեննոսի հրատարակած երկը, որի վերնագիրն էր՝ «Տասներկու առաքեալների վարդապետութիւնը» եւ կամ «Տիրոջ վարդապետութիւնը ազգերին տասներկու առաքեալների միջոցով»: Հրատարակութիւնը կատարուել էր Երուսաղէմի Ս. Յարութեան տաճարի գրադարանի 1056 թ. ընդօրինակուած մի ձեռագրից: Այդ միակ ձեռագրի հիման վրայ հետեւեցին բազմաթիւ հրատարակութիւններ, թարգմանութիւններ եւ քննական ուսումնասիրութիւններ երկի գրուելու պայմանների եւ դրանից կատարուող եզրակացութիւնների վերաբերեալ:

2. Բովանդակութիւն: Այս գործում, որը խիստ արժէքաւոր նպաստ է համայն հին եկեղեցւոյ պաշտամունքի, կառուցուածքի եւ եկեղեցական կեանքի ուսումնասիրման համար, ա) զարգացւում է երկու ճանապարհների ուսմունքը. այսինքն՝ դէպի կեանք տանող ճանապարհը հակադրւում է մահուան անցողիկ ճանապարհին (գլ. Ա-Զ). բ) շարադրւում են պաշտամունքի, այն է՝ մկրտութեան, ծոմապահութեան, աղօթքի եւ սուրբ Հաղորդութեան հարցերը (գլ. Է-Ժ եւ ԺԴ). գ) խօսւում է եկեղեցական կարգերի, այն է՝ առաքեալների, մարգարէների, ուսուցիչների, եպիսկոպոսների եւ սարկաւագների մասին (գլ. ԺԱ-ԺԳ եւ ԺԵ) եւ դ) խօսւում է վախճանի եւ ապագայ դատաստանի մասին (գլ. ԺԶ):

3. Հեղինակը: Անանուն հեղինակը, առաւել հաւանական է՝ հաւաքողը, դիմելով նրան, ում համար գրել է այս գիրքը եւ որին կոչում է «իմ որդեակ», իր յորդորները ներկայացնում է որպէս Տիրոջ վարդապետութիւնը առաքեալների միջոցով, որպէսզի առաւել հեղինակութիւն հաղորդի դրանց, որից էլ առաջացել է գործի վերնագիրը: Անանուն հեղինակի անձնաւորութիւնը որոշելու ուղղութեամբ տարբեր գիտնականների կատարած փորձերը, զուրկ լինելով որեւէ լուրջ հիմքից,

ամբողջապէս երեւակայական եւ կամայական են: Ոչ գիտենք, թէ ով է նա, ոչ իսկ ներքին ու արտաքին վկայութիւնների հիման վրայ կարող ենք նրա մասին հաւանական որեւէ բան եզրակացնել:

4. Գրուելու ժամանակը: Այս գործի գրուելու ժամանակը հնարաւոր չէ ճշգրիտ որոշել: Թէ որքան ենթադրական են այդ փորձերը, վկայում է այն հանգամանքը, որ ուսումնասիրողները, հիմնուելով ներքին տուեալների վրայ, նշել են տարբեր ժամանակներ՝ սկսած 40-ից մինչեւ 160 թուականը: Եղել են անգամ այնպիսիք, որոնք այն համարել են աւելի ուշ շրջանի գրուածք՝ թուագրելով Ե կամ Զ դարով: Բայց այս կամայական կարծիքները, ինչպէս ճիշտ նկատել է Էրհարդը (Ehrhard), «կարող են միայն հիւանդագին հետաքրքրութիւն առաջացնել»:

Գործի որոշ հատուածներից կարելի է փաստարկներ քաղել առ այն, որ գիրքը գրուած է եղել հնագոյն ժամանակներում: Օրինակ, Եկեղեցւոյ գլխաւորները ոչ թէ եպիսկոպոսներն են, այլ մարգարէները («քանզի նրանք ձեր քահանայապետերն են». ԺԳ), մկրտուողները խոստովանում են բարոյական ճշմարտութիւնների ընդունումը եւ ոչ թէ հաւատքի յօդուածները (Է): Միւս կողմից, սակայն, այլ հատուածներից կարելի է եզրակացնել, թէ արդէն տեղի էր ունեցել ինչ-որ զարգացում. այսպէս՝ կան որոշուած ձեւեր եւ մաղթանքներ սուրբ Հաղորդութեան, որը կատարւում է կիրակի օրը (ԺԴ), սահմանւում է ծոմապահութիւն չորեքշաբթի եւ ուրբաթ օրերին (Ը) եւ մկրտութիւնից առաջ (Է): Ըստ մեզ՝ ամենահաւանական կարծիքն այն է, որ «Վարդապետութիւնը» կազմուել է Բ դարի սկզբներին, սակայն ոչ 160 թ. յետոյ, ինչը երեւում է այն բանից, որ արդէն Կղեմէս Աղեքսանդրացին, Բ դարի երկրորդ կէսի սկզբներին, ծանօթ էր դրան եւ օգտուել է դրանից:

5. Գրուելու վայրը: Թէ որտեղ է գրուել այս գործը, չգիտենք, սակայն Եգիպտոսում նրա մեծ տարածման պատճառով ոմանք ենթադրել են, որ այն գրուել է այնտեղ, ուրիշներ՝ թէ այն ստեղծուել է Ասորիքում կամ Պաղեստինում, եւ այլք (առաւել անհաւանականութեամբ)՝ Յունաստանում կամ Փոքր Ասիայում:

6. Երկու ճանապարհները: Ինչպէս արդէն ասուեց, ժողովածուի առաջին մասը բովանդակում է երկու ճանապարհների մասին վարդապետութիւնը (Ա-Զ): Այն ըստ էութեան, յաճախ բառացի, բայց փոքրինչ աւելի սեղմ, կայ նաեւ Բառնաբասի թղթում (ԺԸ) եւ որոշ չափով տարբերւում է Հերմասի «Հովիւ» գրքում (պատգամ Զ): Անվիճելի է,

որ երկու ճանապարհների մասին այս երեք գործերը, յատկապէս «Վարդապետութիւնը» եւ Բառնաբասի թուղթը, փոխադարձ կապ ունեն: Ուստի հարց է առաջանում, թէ ո՞վ է ումից օգտուել՝ Բառնաբասը «Վարդապետութիւնի՞ց», թէ՞ «Վարդապետութեան» հեղինակը Բառնաբասից: Առաւել հաւանական է թւում Հարնակի (Harnack) եւ այլոց կարծիքը, ըստ որի՝ երկուսն էլ վերցրել են մէկ ընդհանուր աղբիւրից՝ բարոյախօսական հակիրճ մի հարցարանից, որը սովորում էին քրիստոնեաները նախքան մկրտուելը, եւ որը գուցէ գրուած է եղել նորադարձների համար հրէական սինագոգում գործածուող հարցարանի հիման վրայ: Երկու ճանապարհների վարդապետութեան մէջ նկատելի չէ քրիստոնէական վարդապետութեան եւ ոչ մի հետք. բոլոր դէպքերում, «Վարդապետութեան» այն հատուածը (Ա 3-6), որտեղ միայն կրկնւում են Փրկչի խօսքերը, յետագայի յաւելում է, ինչպէս այդ երեւում է այն փաստից, որ այդ կամ դրան համապատասխան խօսքը բացակայում է թէ՛ Բառնաբասի մօտ եւ թէ՛ երկու ճանապարհների՝ մեզ հասած լատիներէն հին թարգմանութեան մէջ:

7. «Վարդապետութեան» միասնութիւնը: Շատեր վիճարկել են դրա միասնութիւնը՝ գտնելով, որ երկու ճանապարհների մասին առաջին հատուածի (Ա-Զ) հեղինակն ուրիշ մարդ է, իսկ երկրորդ հատուածինը (Է-ից մինչեւ վերջ)՝ ուրիշ: Այս կարծիքի օգտին են խօսում երկու հանգամանք. ա) թէ վերոյիշեալ հին լատիներէն թարգմանութիւնը բովանդակում է երկու ճանապարհների մասին միայն առաջին վեց գլուխները. բ) ոմանք՝ Է գլխի սկիզբը («այս ամէնը նախ ասելով, մկրտեցէք»)՝ նախորդող խօսքերի հետ բոլորովին առնչութիւն չունեցող: Բայց. ա) այն, որ լատիներէն թարգմանութեան միայն առաջին վեց գլուխներն են պահպանուել, դեռեւս չի փաստում, որ այն սկզբնապէս դրանք էր բովանդակում. բացի այդ, անհաւանական չէ, որ միայն այդ հատուածն է թարգմանուել, որովհետեւ թարգմանչի հետաքրքրութիւնը շարժել են նրա հետապնդած խրատական նպատակները, բ) «Այս ամէնը նախ ասելով» (Է) խօսքը ակնյայտօրէն վերաբերում է Ա-Զ գլուխներում եղած բարոյական ճշմարտութիւնների ընդունմանը:

ՏԱՆԵՐԿՈՒ ԱՌԱՔԵԱԼՆԵՐԻ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ[1]

ՏԱՆԵՐԿՈՒ ԱՌԱՔԵԱԼՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ՀԵԹԱՆՈՍՆԵՐԻՆ ՏՐՈՒԱԾ ՏԻՐՈՋ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ[2]

Գլուխ Ա

Ճանապարհները երկուսն են[3]. մէկը՝ կեանքի, միւսը՝ մահուան[4], սակայն այս երկու ճանապարհների միջեւ տարբերութիւնը մեծ է: Կեանքի ճանապարհն ահա սա է. նախ՝ սիրի՛ր Աստծուն[5] քո Արարչին. երկրորդ՝ քո ընկերոջը, ինչպէս քո անձը[6]: Եւ այն, ինչ չես կամենում, որ ուրիշն անի քեզ, դու եւս ուրիշին մի՛ արա[7]: Այս խօսքերի ուսուցումը սա է՝ օրհնեցէ՛ք ձեզ անիծողներին, աղօթեցէ՛ք ձեր թշնամիների համար եւ պահեցէ՛ք ձեզ հալածողների համար[8], քանզի ո՞րն է առաքինութիւնը, եթէ սիրէք ձեզ սիրողներին. չէ՞ որ հեթանոսներն էլ նոյնն են անում[9]: Իսկ դուք սիրեցէ՛ք ձեզ ատողներին[10] եւ թշնամիներ չէք ունենայ[11]: Հեռո՛ւ մնա մարմնի եւ արեան[12] ցանկութիւններից[13]: Եթէ մէկն ապտակի քո աջ ծնօտին, նրան միւսն էլ դարձրու, եւ դու կատարեալ կը լինես[14]: Եւ եթէ մէկը քեզ բռնութեամբ մէկ մղոն տանի, դու նրա հետ երկո՛ւ մղոն գնա[15]: Եթէ մէկը քո շապիկը վերցնի, տո՛ւր նրան նաեւ քո բաճկոնը[16]: Եթէ մէկը քեզանից քո որեւէ բանը վերցնի, այն ետ մի՛ պահանջիր[17], որովհետեւ չես էլ կարող[18]: Բոլոր նրանց, ովքեր խնդրում են քեզանից, տո՛ւր եւ ետ մի՛ պահանջիր[19], քանզի Հայրը կամենում է ամէնքին բաշխել Իր շնորհները[20]: Երանի նրան, ով

---

1 Այս համառօտ վերնագիրը հաւանաբար ձեռագրի կազմին ամրացուած գրութիւն է եղել, որը ոմանք փորձում են կապել Գործք Բ 42-ի հետ. աւելի ամբողջական վերնագիրը յաջորդում է:

2 Ենթադրւում է, որ հեղինակը գեղեցիկ վերնագիր է յօրինել Մատթ. ԻԸ 18-20-ի ազդեցութեամբ: «Հեթանոսները» յաճախ թարգմանւում է նաեւ «ազգեր», թէեւ վերջինս դարձեալ հասկացւում է առաջին իմաստով: Այն հանգամանքը, որ գործն ուղղուած է հեթանոսներին, հիմք է տուել ենթադրելու, որ գործի հեղինակը հրեայ քրիստոնեայ է: Գործի բնոյթը մեզ մղում է այն ենթադրութեան, որ այն գրուել է ծագումով հեթանոս քրիստոնեաների ուսուցման եւ ոչ թէ հեթանոսների մէջ քարոզութեան համար:

3 «Երկու ճանապարհներ» արտայայտութիւնը կենցաղավարութեան երկու ձեւերի մասին ծանօթ էր ե՛ւ յոյներին, ե՛ւ հրեաներին (Մատթ. Է13-14): Հմմտ. Բառնաբաս, ԺԸ, որտեղ ճանապարհները ներկայացուած են որպէս «լոյսի» ու «խաւարի» ճանապարհներ:

4 Հմմտ. Բ Օր. Լ 15, 19, Երեմ. ԻԱ 8, Մատթ. Է 13, 14:

5 Հմմտ. Բ Օր. Զ 5, որն ամբողջութեամբ մէջբերուած է «Առաքելական սահմանադրութիւններում»՝ Է 2, թէեւ այստեղի մէջբերումն աւելի է համապատասխանում Եօթանասնից բնագրին:

6 Ղեւտ. ԺԹ 18, Մատթ. ԻԲ 37, 39, Հմմտ. Մարկ. ԺԲ 30, 31:

7 Տե՛ս Տոբիթ. Դ 15, Մատթ. Է 12, Ղուկ. Զ 31:

8 Մատթ. Ե 44. սակայն «պահելու» մասին վերջին հատուածն աւելացուած է, եւ սկզբնաղբիւրը յայտնի չէ. այն չկայ նաեւ «Առաքելական սահմանադրութիւններում»: Ոմանք սրա զուգահեռը տեսնում են Հերմասի մօտ (Sim. 5.3.7):

9 Մատթ. Ե 46, 47, Ղուկ, Զ 32: Երկու հատուածները համադրուած են:

10 Հմմտ. Ղուկ. Զ 27-28:

11 Կամ՝ «թշնամիներ չեն լինի»: Ոմանք թարգմանում են նաեւ հրամայական եղանակով՝ «թշնամիներ մի՛ ունեցիր»: Այսպէս է նաեւ «Առաքելական սահմանադրութիւններում»: Հմմտ. Ա Պետ. Բ 15:

12 Բրիենոսի գտած յունարէն ձեռագրում σαρκικός եւ σωματικός, որոնք երկուսն էլ «մարմնական» են նշանակում, սակայն աւելի ճիշտ էր թարգմանել աւետարանական հատուածի լոյսի տակ՝ «մարմին եւ արիւն ոչ յայտնեաց քեզ»: Օտար թարգմանութիւններից ոմանք, սակայն, բաց են թողնում σωματικός-ը, քանզի Դ դարի պապիրուսէ պատառիկում այն չկայ, ոմանք էլ այն փոխարինում են κοσμικός-ով («աշխարհիկ»):

13 Հմմտ. Ա Պետ. Բ 11:

14 Մատթ. Ե 39, 48, Ղուկ. Զ 29

15 Մատթ. Ե 41

16 Մատթ. Ե 40՝ «Եթէ ոք կամիցի առնուլ զշապիկս քո, թող ի նա եւ զբաճկոն քո», Ղուկ. Զ 29՝ «Որ հանէ ի քէն զբաճկոն քո, մի՛ արգելուր ի նմանէ եւ զշապիկս»: Ցունարէն ἱμάτιον բառն է, որ Մատթէոսի մօտ թարգմանուած է «բաճկոն», Ղուկասի մօտ՝ «շապիկ», իսկ Մատթ. ԻԱ 7-8-ում «ձորձ» եւ «հանդերձ»: Սա երկար ու լայն պարեգօտն է, որ ծածկում է ողջ մարմինը՝ ի տարբերութիւն ներքնազգեստի, որը կարելի է անուանել բաճկոն: Թարգմանութիւնների մեծ մասը որդեգրում է վերոյիշեալ դասակարգումը:

17 Ղուկ. Զ 30

18 Այս հատուածը տարօրինակ յաւելում է: Այն կարելի է բացատրել հետեւեալ կերպ. քանի որ դու քրիստոնեայ ես, կամ՝ քանի որ աղքատ քրիստոնեան չի կարող փախհատուցում ստանալ հարուստ հեթանոսից (Ցունկ), կամ՝ քանի որ դու ուզում ես կատարեալ լինել, ուստի չես կարող փոխհատուցում պահանջել: Այլապէս այս արտայայտութիւնն անիմաստ է:

19 Ղուկ. Զ 30, Մատթ. Ե 42

20 Հմմտ. Մատթ. Ե 45: Ոմանք թարգմանում են՝ «կամենում է, որ ամէնքին բաշխուեն մեր շնորհները»: Սրան զուգահեռ հատուած կայ նաեւ «Առաքելական սահմանադրութիւններում»: Բրիենոսը զուգահեռ է գտնում նաեւ Հերմասի մօտ՝ երկրորդ պատուիրանի մէջ: Այս գլխի մնացեալ հատուածը չկայ «Առաքելական սահմանադրութիւններում»:

տալիս է ըստ պատուիրանի[21], քանզի անպարտ է: Վա՛յ նրան, ով ընդունում է. քանզի եթէ կարիքից է ընդունում, ապա անպարտ է[22], իսկ կարիք չունեցողը հաշիւ է տալու, թէ ինչու եւ ինչի համար ստացաւ, եւ բանտարկուելով[23] փորձուելու է իր արարքների մէջ եւ այնտեղից դուրս չի գալու, մինչեւ չհատուցի վերջին քառորդը[24]: Այդ մասին նաեւ այսպէս է ասուած. «Քո ողորմութիւնը թող քրտնի[25] քո ձեռքերում, մինչեւ իմանաս, թէ ում ես տալու»:

Գլուխ Բ[26]

Վարդապետութեան երկրորդ[27] պատուիրանը: Մի՛ սպանիր, մի՛ շնացիր[28], մանուկների մի՛ ապականիր, մի՛ պոռնկացիր, մի՛ գողացիր[29], մոգութեամբ մի՛ զբաղուիր, հմայութիւն մի՛ արա, երեխային մի՛ փչացրու վիժումով եւ մի՛ սպանիր արդէն ծնուածին[30], մի՛ ցանկացիր քո ընկերոջ ունեցուածքը[31], սուտ երդում մի՛ տուր[32], սուտ մի՛ վկայիր[33], մի՛ չարախօսիր, ոխակալ մի՛ եղիր[34]: Երկերեսանի մի՛ եղիր եւ ոչ էլ

21 Հմմտ. Գործք Ի 35:

22 Հմմտ. Գործք Ի 34:

23 Ցունարէն ἐν συνοχῇ բառն է, որը Նոր Կտակարանում հանդիպում է երկու անգամ եւ հայերէնում թարգմանուել է «տագնապաւ» [Ղուկ. ԻԱ 25] եւ «նեղութիւն» [Բ Կոր. Բ 4]: «Դիդախէի» թարգմանիչը գրել է՝ «արկեալ յանձուկ», որը գրեթէ նոյնն է, ինչ որդեգրել է օտար թարգմանութիւնների մեծ մասը՝ «բանտարկուել»:

24 Մատթ. Ե 25-26, տե՛ս նաեւ ԺԸ 34: Այս հատուածը նմանութիւն ունի նաեւ Հերմասի հետ՝ Պատուիրան Բ, 4-6:

25 Ձեռագրում ἱδρωτάτῳ է, որն անիմաստ է, ուստի Բրիեննոսը այն փոխում է ἱδρωτάτῳ, ինչպէս եւ թարգմանուած է վերեւում: Կան նաեւ զանազան այլ մեկնաբանութիւններ, սակայն սա ամենահաւանականն է համարւում:

26 Այս գլուխը գրեթէ ամբողջութեամբ գտնւում է «Առաքելական սահմանադրութիւններում», է 2-5:

27 Ոմանք թարգմանում են՝ «յաջորդ»:

28 Հմմտ. Մատթ. ԺԹ 18, Ելք Ի 13-14, Բառնաբաս, ԺԹ, 4:

29 Հմմտ. Ելք Ի 15:

30 Հմմտ. Ելք ԻԱ 22, 23: Ձեռագրում γεννηθὲν ἀποκτενεῖς, որը թարգմանւում է «նոր ծնուած մանուկ»: Թարգմանիչների մեծ մասի կողմից թարգմանւում է ինչպէս վերեւում:

31 Ելք Ի 17

32 Հմմտ. Մատթ. Ե 33:

33 Ելք Ի 16, Հմմտ. Մատթ. ԺԵ 19, ԺԹ 18:

34 «Առաքելական սահմանադրութիւններում»՝ «յիշաչար մի՛ եղիր»:

երկլեզու, քանզի երկլեզուութիւնը մահու որոգայթ է[35]: Քո խօսքը սուտ եւ դատարկ չլինի՛, այլ գործով լցուած: Մի՛ եղիր ո՛չ ագահ, ո՛չ յափշտակող, ո՛չ կեղծաւոր, ո՛չ չար, ո՛չ էլ հպարտ: Քո ընկերոջ նկատմամբ չար խորհուրդներ մի՛ ունեցիր: Ոչ մի մարդու մի՛ ատիր, այլ ոմանց կշտամբի՛ր[36], ուրիշների համար աղօթի՛ր եւ միւսներին սիրի՛ր քո անձից առաւել[37]:

Գլուխ Գ[38]

Որդեա՛կ իմ[39], հեռո՛ւ մնա ամէն չարից եւ նրա ամէն ստուերից: Ցասկոտ մի՛ եղիր, քանզի ցասումը դէպի սպանութիւն է առաջնորդում: Մի՛ եղիր ո՛չ նախանձոտ[40], ո՛չ կռուարար եւ ո՛չ էլ յախուռն, քանզի այս բոլորը սպանութիւններ են ծնում: Որդեա՛կ իմ, ցանկասէր մի՛ եղիր, քանզի ցանկութիւնը դէպի պոռնկութիւն է տանում: Մի՛ եղիր զազրախօս, ոչ էլ լպիրշ[41], քանզի այս ամէնը չնութիւն է ծնում: Որդեա՛կ իմ, հաւահմայ[42] մի՛ եղիր, քանզի այն դէպի կռապաշտու-

35 Հմմտ. Առակ. ԻԱ 6, Բառնաբաս, ԺԹ, տե՛ս նաեւ Ցակ. Գ 5-6, Ա Տիմ. Գ 8:

36 Հմմտ. Ղեւտ. ԺԹ 17:

37 Այստեղ տեքստը մի փոքր անհասկանալի է: «Դիդախէն» կարծես թէ երեք խմբեր է տարբերակում. մէկը պէտք է կշտամբուի, միւսը աղօթքի կարիք ունի, իսկ երրորդը պէտք է սիրուի անձից առաւել: Սակայն եթէ ոչ մէկը չպէտք է ատուի, ապա սէրը պէտք է վերաբերի ամէնքին: Ուստի Հ. Իգնատիոս Մինասեանը բաց է թողնում «միւսներին» արտայայտութիւնը՝ սէրը վերագրելով ամէնքին:

38 Այս գլխի մօտ կէսը գրեթէ նոյն յաջորդականութեամբ ցրուած է «Առաքելական սահմանադրութիւններում»՝ է 6-8: Պատուիրանները վերաբերում են մանր մեղքերի: Այս գլուխն ամէնից շատ յունարէն բառեր է պարունակում, որոնք չեն հանդիպում Նոր Կտակարանում:

39 Դիմելու նման ձեւը կարող է ենթադրել տալ մկրտութեամբ վերածնուած անձնաւորութեան: Հմմտ. Ա Տիմ. Ա 2, Տիտ. Ա 4, Փլմ. 10, Եբր. ԺԲ 5:

40 Ցունարէն ζηλωτής բառը կիրառւում է նաեւ դրական իմաստով (Ա Կոր. ԺԴ 12, Գաղ. Ա 14, Տիտ. Բ 14): Ոմանք թարգմանում են «մոլեռանդ»՝ նկատի ունենալով «նախանձայոյզ» հրեաներին: Հմմտ. Ղուկ. Զ 15, որտեղ Սիմոնը կոչւում է «նախանձայոյզ»:

41 Առաջինը վերաբերում է լեզուի, երկրորդը՝ աչքի վաւաշոտութեանը, ուստի հայերէն թարգմանութեան «խեղկատակ ու բարձրահայեաց» բառերը թէեւ յունարէնին բառացիօրէն աւելի մօտ են, սակայն իմաստային առումով նուազ հասկանալի են: Հմմտ. Մարկ. Է 20-23, Բ Պետ. Բ 14:

42 Այսինքն՝ մէկը, որ թռչունների վարքի հիման վրայ գուշակում է ապագան: Ըստ այդմ հայերէնը թարգմանում է «հաւադէտ»:

թիւն է առաջնորդում: Մի՛ եղիր ո՛չ կախարդ, ո՛չ աստղագուշակ, ո՛չ էլ մաքրագործող[43], եւ մի՛ կամեցիր դրանք տեսնել, քանզի այս ամէնից կռապաշտութիւն է ծնւում: Որդեա՛կ իմ, ստախօս մի՛ եղիր, քանզի սուտը դէպի գողութիւն է տանում: Մի՛ եղիր ո՛չ արծաթասէր եւ ո՛չ էլ սնափառ[44], քանզի այս ամէնից գողութիւն է ծնւում: Որդեա՛կ իմ, փնթփնթացող[45] մի՛ եղիր, որովհետեւ այն դէպի հայհոյութիւն է տանում: Մի՛ եղիր ո՛չ քմահաճ, ո՛չ էլ չարամիտ, քանզի այս ամէնից հայհոյութիւն է ծնւում: Այլ եղիր հեզ, քանզի հեզերն են ժառանգելու երկիրը[46]: Եղիր երկայնամիտ, ողորմած, անմեղ, հանդարտ[47] ու բարի. եւ մշտապէս դողա՛ քո լսած խօսքերի վրայ[48]: Քեզ մի՛ բարձրացրու[49] եւ հոգիդ անպատկառութեան մի՛ տուր: Քո սիրտը թող չյարի ամբարտաւաններին, այլ թող շրջուի դէպի արդարներն ու խոնարհները[50]: Քեզ պատահած դժուարութիւններն[51] ընդունի՛ր որպէս բարիք՝ գիտենալով, որ առանց Աստուծոյ ոչինչ չի կատարւում[52]:

Գլուխ Դ[53]

Որդեա՛կ իմ, գիշեր ու ցերեկ յիշիր նրան, ով Աստուծոյ խօսքն է խօսում քեզ[54], եւ պատուի՛ր նրան, ինչպէս Տիրոջը, քանզի որտեղ

43 Հաւանական է, որ խօսքը վերաբերում է քրմական դասի այն մարդկանց, ովքեր «մաքրում» էին մարդկանց՝ կրակի միջով անցկացնելով կամ էլ ուրիշ հեթանոսական ծիսակատարութիւնների միջոցով:

44 Մնափառութեան կապը գողութեան հետ հաւանաբար այն է, որ մարդը, սին փառքի յետեւից ընկնելով, ցանկանում է հարստութիւն ձեռք բերել, որի համար էլ դիմում է գողութեան ու աւազակութեան:

45 Հմմտ. Բ Պետ. Բ 10:

46 Մատթ. Ե 5, Սաղմ. ԼԶ 11:

47 Հմմտ. Ա Թես. Դ 11:

48 Հմմտ. Ես. ԿԶ 2, 5, Առաքելական սահմանադրութիւններ, Է 8:

49 Հմմտ. Ղուկ. ԺԸ 14:

50 Հմմտ. Հռոմ. ԺԲ 16, Յակ. Բ 2-3:

51 Յունարէն Ἐνέργημα բառը թարգմանւում է «պատահարներ», «դէպքեր»: Դժուար է ասել, թէ ինչու է հայերէնում թարգմանուած «յաջողութիւնք»:

52 Հմմտ. Սիր. Բ 4:

53 Այս գլուխը, բացառութեամբ որոշ մասերի, պարունակւում է «Առաքելական սահմանադրութիւններում»՝ Է 9-17: Բառային զանազանութիւններ կան, սակայն յաջորդականութիւնը նոյնն է: Բառնաբասի մօտ նիւթի պարունակութիւնն աւելի պակաս է, սակայն բառային արտայայտութիւններն աւելի են համաձայնւում, թէեւ յաջորդականութիւնը տարբեր է:

54 Երր. ԺԳ 7

Տիրոջ մասին է խօսւում, Տէրն այնտեղ է[55]: Ամէն օր փնտռի՛ր սրբերի դէմքերը[56], որպէսզի խաղաղութիւն գտնես նրանց խօսքերում[57]: Հերձուած մի՛ ցանկացիր[58], այլ խաղաղեցրո՛ւ վիճողներին: Արդա՛ր դատիր[59], յանցանքները կշտամբելիս կողմնապահութիւն մի՛ արա[60]: Մի՛ երկմտիր, թէ կը լինի կամ ոչ[61]: Մի՛ եղիր այնպիսին, որ ստանալիս ձեռքդ պարզես, իսկ տալիս կծկես[62]: Եթէ քո ձեռքին որեւէ բան ունես[63], տո՛ւր քո մեղքերի թողութեան համար[64]: Տալիս մի՛ տատանուիր, եւ տալուց յետոյ մի՛ տրտնջա, քանզի դու կ՚իմանաս, թէ ով է ծառայութեան դիմաց առատ վարձահատոյց եղողը: Կարօտեալից երես մի՛ թեքիր, այլ ամէն ինչ բաժանի՛ր քո եղբօր հետ եւ մի՛ ասա, թէ այդ քո սեփականն է, քանզի եթէ անմահականին հաղորդակից էք, ապա որքան առաւել եւս՝ մահկանացու բաներին[65]: Ձեռքդ մի՛ վերցրու քո որդու կամ քո դստեր վրայից, այլ նրանց մատաղ հասակից Աստուծոյ

55 Ոմանք թարգմանում են՝ «որտեղ տէրութիւնն է խօսում» (այդպէս է եւ հայերէն թարգմանութեան մէջ): «Առաքելական սահմանադրութիւններում»՝ «Աստուծոյ մասին վարդապետութիւնը»: Հմմտ. Մատթ. ԺԸ 20, նաեւ Ժ 40, Հռոմ. ԺԲ 7:

56 Ինչպէս որ իսրայէլացիներն էին «սուրբ» Հին Ուխտի մէջ (Հմմտ. Սաղմ. ԾԱ 11), այնպէս էլ քրիստոնեաներն են «սուրբ» Նոր Ուխտով (Հմմտ. Ա Պետ. Բ 9):

57 Կամ՝ «ընդունես նրանց խօսքերը» (Առաքելական սահմանադրութիւններ):

58 Ոմանք «Առաքելական սահմանադրութիւնների» ու Բառնաբասի հիման վրայ «ցանկանալը» փոխում են «արարել»:

59 Հմմտ. Բ Օր. Ա 16, 17, Առակ. ԼԱ 9:

60 Հմմտ. Ա Տիմ. Ե 21, Հռոմ. Բ 11, Եփես. Զ 9, Կող. Գ 25:

61 Ոչ այնքան յստակ արտայայտութիւն է, որը հանդիպում է նաեւ Բառնաբասի (ԺԹ 5) մօտ եւ «Առաքելական սահմանադրութիւններում» (Է 11, որտեղ «մի՛ երկմտիր քո աղօթքների մէջ»): Հմմտ. նաեւ Սիր. Ա 28, Յակ. Ա 8, Դ 8:

62 Հմմտ. Սիր. Դ 31: Բառնաբասի մօտ բառացիօրէն նոյն արտայայտութիւնն է, մինչ «Առաքելական սահմանադրութիւններում» տարբերւում է:

63 Ոմանք թարգմանում են՝ «քո ձեռքի աշխատանքը»՝ դրանով շեշտելով, որ ողորմութիւնը սեփական քրտինքի արդիւնք պէտք է լինի: Այս իմաստով է թարգմանուած հայերէնում «յորժամ ի քոց ձեռաց իցէ»:

64 «Առաքելական սահմանադրությունները» որպէս բացատրութիւն աւելացնում է Առակ. ԺԶ 6 համարը (Է 12): Հմմտ. Տոբիթ. Դ 11, ԺԲ 9, Ղուկ. ԺԱ 41, Գործք Ի 33-36:

65 Հմմտ. Գործք Բ 44, Դ 32, Հռոմ. Ժե 27: Այս նախադասութեան վերջին հատուածը կայ միայն Բառնաբասի մօտ (բացակայում է «Առաքելական Սահմանադրութիւններում»), սակայն այնտեղ օգտագործուած բառերն են «անապական» եւ «ապականացու»:

երկիւղը սովորեցրու[66]: Քո դառնութեան պահին մի՛ հրամայիր քո ծառային կամ աղախնուն, ովքեր նոյն Աստծուն են ապաւինում, որպէսզի չլինի թէ դադարեն երկիւղելուց մեր եւ նրանց վերեւում եղող Աստծուց[67]: Քանզի Նա չեկաւ ըստ արտաքին տեսքի կոչելու, այլ նրանց մօտ, ում Հոգին էր պատրաստել[68]: Իսկ դուք, ծառանե՛ր, հնա՛զանդ եղէք ձեր[69] տէրերին ակնածութեամբ ու երկիւղածութեամբ, ինչպէս Աստուծոյ պատկերին[70]: Ատի՛ր ամէն կեղծիք եւ այն ամէնը, ինչ հաճելի չէ Տիրոջը: Ոչ մի կերպ մի՛ լքիր Տիրոջ պատուիրանները, այլ պահպանի՛ր այն, ինչ ստացել ես՝ առանց որեւէ բան աւելացնելու կամ պակասեցնելու[71]: Եկեղեցում խոստովանի՛ր քո մեղքերը[72] եւ քո աղօթքին[73] չար խղճով մի՛ մօտեցիր[74]: Սա՛ է կեանքի ճանապարհը[75]:

Գլուխ Ե[76]

Իսկ մահուան ճանապարհն[77] այս է. նախ չար է եւ անէծքով լի[78]: Սպանութիւններ, շնութիւններ, ցանկութիւններ, պոռնկութիւններ, գողութիւններ, կռապաշտութիւններ, մոգութիւններ, հմայութիւններ, յափշտակութիւններ, սուտ վկայութիւններ, կեղծաւորութիւններ, ե-

66 Հմմտ. Եփես. Զ 4:
67 Հմմտ. Եփես. Զ 9, Կող. Դ 1:
68 Հմմտ. Մատթ. Ի 23, Յովհ. Զ 44:
69 Ձեռագրում՝ «մեր», որն ուղղուած է «ձեր»:
70 Հմմտ. Եփես. Զ 5, Հռոմ. ԺԳ 1-2, Կող. Գ 22:
71 Հմմտ. Բ Օր. ԺԲ 32, Դ 2, նաեւ Փլպ. Դ 9, Կող. Բ 6:
72 «Եկեղեցում» արտայայտութիւնը բաց է թողնուած Բառնաբասի մօտ եւ «Առաքելական սահմանադրութիւններում»: Հմմտ. Յակ. Ե 16:
73 Ըստ ոմանց՝ «քո աղօթքի վայրին»: Հմմտ. Գործք ԺԶ 13:
74 Այսպէս է Բառնաբասի մօտ: Իսկ «Առաքելական սահմանադրութիւններում»՝ «չար խղճի» փոխարէն «քո դառնութեան օրը»:
75 Այսպէս է Առաքելական Սահմանադրութիւններում: Բառնաբասի մօտ՝ «լոյսի ճանապարհ»:
76 Այս գլուխը գրեթէ ճշգրիտ զուգահեռներ ունի Բառնաբասի մօտ (Ի) եւ «Առաքելական սահմանադրութիւններում» (Է 18)՝ հետաքրքիր տարբերակներով:
77 Բառնաբասի մօտ՝ «խաւարի», բայց յետոյ՝ «յաւիտենական մահուան ճանապարհը»:
78 «Առաքելական սահմանադրութիւններում» չկայ. ճշգրիտ զուգահեռ չկայ նաեւ Բառնաբասի մօտ:

կերեսանիութիւն, նենգութիւն, գոռոզութիւն, չարութիւն, լպիրշութիւն, ընչաքաղցութիւն, զազրախօսութիւն, նախանձ, անպատկառութիւն, մեծամտութիւն, սնապարծութիւն[79]: [80] Բարիներին հալածողներ, ճշմարտութիւնն ատողներ, սուտը սիրողներ, արդարութեան վարձն անգիտացողներ,[81] բարուն եւ արդար դատաստանին անհաղորդներ, ոչ թէ դէպի բարին, այլ դէպի չարն[82] աշխուժացողներ: Որոնցից հեռու են հեզութիւնն ու համբերութիւնը, ովքեր ունայնութիւն են սիրում[83], ձգտում են վարձատրութեան[84], չեն կարեկցում աղքատին, չեն ցաւակցում ճնշուածին, չեն ճանաչում իրենց Արարչին. որդեսպաններ[85], Աստուծոյ ստեղծածը փչացնողներ, կարիքաւորից երես թեքողներ, տանջուածին տանջողներ, հարուստների պաշտպաններ, չքաւորների անօրէն դատաւորներ, ըստ ամենայնի մեղաւորներ[86]: Փրկուեցէ՛ք, որդեակնե՛ր, այս ամէնից[87]:

79 Հմմտ. Մատթ. ԺԵ 19, Մարկ. Է 21-22, Հռոմ. Ա 29-31, Ա Կոր. Զ 9-10, Գաղ. Ե 19-21, Կող. Գ 8: Թուարկուած քսաներկու մեղքերից Բառնաբասի մօտ նշուում են տասնչորսը՝ տարբեր յաջորդականութեամբ եւ եզակի թուով: «Առաքելական սահմանադրութիւններում» բաց է թողնուած միայն մէկը. մնացեալի յաջորդականութիւնը նոյնն է, նոյնն է նաեւ յոգնակիից եզակիի անցումը:
80 Այստեղից սկսած գրեթէ բառ առ բառ կայ Բառնաբասի մօտ՝ երկու աւել արտայայտութեամբ:
81 Այստեղից սկսած «Առաքելական սահմանադրութիւնների» զուգահեռ հատուածը բառացիօրէն նոյնն է:
82 Հմմտ. Հռոմ. ԺԲ 9:
83 Հմմտ. Սաղմ. Դ 3, Ես. Ա 23:
84 Հայերէնի թարգմանիչն այս արտայայտութիւնը թարգմանել է «վրիժագործք»:
85 Հմմտ. Իմաստ. Ե 12:
86 Այս արտայայտութիւնը յունարէնում հանդիպում է միայն այստեղ, ինչպէս նաեւ Բառնաբասի ու «Առաքելական սահմանադրութիւնների» զուգահեռ հատուածներում: Նման արտայայտութիւն գոյութիւն ունի նաեւ Բ Կղեմէս, ԺԸ, որտեղ թարգմանուած է «գերագոյն մեղաւոր»:
87 Այս արտայայտութեան մէջ ոմանք տեսնում են մկրտութեան հրաւէր: Ընդ որում, այս նախադասութիւնը կայ միայն «Առաքելական սահմանադրութիւններում» եւ բացակայում է Բառնաբասի մօտ:

Գլուխ Զ[88]

Տե՛ս, որ որեւէ մէկը քեզ չչեղի[89] վարդապետութեան այս ճանապարհից, քանզի այն քեզ կը սովորեցնի Աստծուց հեռու լինել: Եթէ դու կարողանաս տանել Տիրոջ ամբողջ լուծը[90], ապա կատարեալ կը լինես[91], իսկ եթէ ոչ, ապա արա ա՛յն, ինչ կարող ես: Ինչ վերաբերում է կերակրին[92], վերցրու, ինչ կարող ես: Այլ բացարձակապէս զգուշացի՛ր կուռքերին մատուցուած զոհերից[93], քանզի դա մեռած աստուածների[94] պաշտամունք է:[95],[96]

Գլուխ Է

Ինչ վերաբերում է մկրտութեանը[97], այսպէ՛ս մկրտեցէք[98]: Նախ այս ամէնը պատուիրելով[99] մկրտեցէք Հօր, Որդու եւ Սուրբ Հոգու անունով[100] հոսող ջրի մէջ[101]: Իսկ եթէ հոսող ջուր չկայ, մկրտիր ուրիշ

88 Այս գլխից երկու արտայայտութիւններ ու մէկ ամբողջական հատուած պարունակւում են «Առաքելական սահմանադրութիւններում»՝ է 19-21:

89 Հմմտ. Մատթ. Ի Դ 4:

90 Հմմտ. Մատթ. ԺԱ 29-30: Նրանք, ովքեր ընդունում են հեղինակի հրեայ քրիստոնեայ լինելը, սա վերագրում են ծիսական օրէնքին:

91 Հմմտ. Մատթ. ԺԹ 21:

92 «Առաքելական սահմանադրութիւնների» է 20-ը սկսւում է նմանօրինակ արտայայտութեամբ: Հմմտ. Հռոմ. ԺԴ 1-23, Ա Կոր. Ը 1-13, Ժ 14-33, Կող. Բ 16:

93 Հմմտ. Գործք ԺԵ 20, 29, Ա Կոր. Ը 4, Ժ 18, 20: Սա անհրաժեշտ պայման է. հմմտ. «Առաքելական սահմանադրութիւններ», է 21:

94 Հմմտ. Սաղմ. ՃԺԳ 4, Ես. Խ 18-20, Ա Կոր. Ը 4, Ժ 20:

95 Հմմտ. Բ Կղեմէս, Գ:

96 Այս գլխով աւարտւում է «Դիդախէի» առաջին մասը, որը կարծես թէ ուղղուած է երախաներին:

97 Այս սկզբնական հատուածը ճշտութեամբ կայ «Առաքելական սահմանադրութիւններում»՝ է 22:

98 Կարծւում է, որ այստեղից սկսած «Վարդապետութեան» հեղինակը դիմում է արդէն մկրտուածներին:

99 Այս տողը հիմք է տուել ընդունելու, որ հեղինակը մերժում է մանկամկրտութիւնը:

100 Հմմտ. Մատթ. ԻԸ 19, Գործք Ը 16, Յուստինոս, Ա ջատագովութիւն, ԿԱ:

101 Բառացի՝ «կենդանի ջրի մէջ», այսինքն՝ ոչ թէ լճերում կամ ջրաւազաններում, այլ գետերում ու առուներում: Տերտուղիանոսը (Մկրտութեան մասին, Դ) այս հաստատումը էական չի համարում:

ջրի մէջ, եւ եթէ չես կարող սառը ջրում, ապա մկրտիր տաք ջրում: Իսկ եթէ այդ երկուսն էլ չունես, ապա երեք անգամ գլխին ջուր հեղիր Հօր, Որդու եւ Սուրբ Հոգու անունով[102]: Նախքան մկրտութիւնը թող պահեն մկրտողը, մկրտուողը եւ նաեւ ուրիշներ, ովքեր կարող են[103]: Մկրտուողին պատուիրիր նախապէս մէկ կամ երկու օր պահել[104]:

Գլուխ Ը[105]

Ձեր պահքերը չլինե՛ն կեղծաւորների պահքերի հետ[106], քանզի նրանք պահում են շաբաթուայ երկրորդ եւ հինգերորդ օրերը: Այլ դուք պահեցէք չորեքշաբթին եւ ուրբաթը[107]: Եւ մի՛ աղօթեցէք կեղծաւորների նման, այլ ինչպէս հրամայել է Տէրն Իր Աւետարանում[108]. այսպէս աղօթեցէք. «Հա՛յր մեր, որ երկնքում ես, թող սուրբ լինի Քո անունը, թող գայ Քո արքայութիւնը. թող Քո կամքը լինի ինչպէս երկնքում, այնպէս էլ երկրի վրայ. մեր հանապազօրեայ հացն այսօր մեզ տո՛ւր. եւ մեզ ների՛ր մեր պարտքերը, ինչպէս մենք ենք ներում մեր պարտապաններին. եւ մեզ դէպի փորձութիւն մի՛ տար, այլ փրկի՛ր

102 Հեղինակն ընդունում է ընկղման համար բաւարար ջրի բացակայութեան հնարաւորութիւնը: Ուստի հեղինակը նման դէպքերում հեղման տարբերակը չի բացառում, հետեւաբար կարելի է կարծել, որ այս ձեւն արդէն ծանօթ էր: Ընկղման մասին տե՛ս Հռոմ. Զ 1-23:

103 Մկրտուողի պահեցողութեան մասին խօսում է նաեւ «Առաքելական սահմանադրութիւնները», սակայն մկրտողի ու այլոց պահեցողութեան մասին ցուցումը յատուկ է միայն «Վարդապետութեանը»: Յուստինոսը նշում է, որ եթէ եպիսկոպոսի կողմից որոշեալ ժամանակում մկրտութիւն է կատարւում, ներկաները պէտք է պահակից լինեն մկրտուողին:

104 Տե՛ս Յուստինոս, Ա Ջատ. ԿԱ 2, Տերտուղիանոս, Մկրտութեան մասին, Ի 1:

105 Այս գլուխը գրեթէ բառացիօրէն գտնւում է «Առաքելական սահմանադրութիւններում»՝ է 23, 24:

106 Հմմտ. Մատթ. Զ 16: Խօսքը հաւանաբար վերաբերում է կամ փարիսեցիներին, կամ ընդհանրապէս հրեաներին: Սա թերեւս վկայում է այն մասին, որ հեղինակի ընթերցողները հրէական միջավայրում էին ապրում:

107 Չորեքշաբթի եւ ուրբաթ օրերին պահելու պատճառները բացատրուած են «Առաքելական սահմանադրութիւններում» որպէս Տիրոջ մատնութեան ու չարչարանքների, խաչելութեան ու մահուան յիշատակ: Այս մասին տե՛ս նաեւ Տերտուղիանոս, De ieiun. 2, Կղեմէս Ալեքսանդրացի, Strom. 7. 12. 75. 2:

108 Հեղինակն արդեօք նկատի ունի Մատթէոսի Աւետարանը, թէ բոլոր աւետարանները միասին որպէս ամբողջութիւն՝ դժուար է ասել:

մեզ չարից. քանզի Քոնն են զօրութիւնը եւ փառքը յաւիտեան[109]»: Այսպէս աղօթեցէք օրը երեք անգամ[110]:

Գլուխ Թ՝՝՝

Ինչ վերաբերում է Գոհութեանը[112], այսպէ՛ս գոհացէք: Նախ՝ բաժակի վերաբերեալ[113]. «Գոհանում ենք Քեզանից, Հայր մեր, Քո որդի Դաւթի սուրբ որթատունկի համար[114], որը մեզ յայտնեցիր Քո Որդի[115]

109 *Մատթ. Զ 9-13: Տէրունական աղօթքն այս տեսքով անկասկած Մատթէոսինն է եւ ոչ թէ Ղուկասինը: Մէջբերումը կարեւոր է, քանզի ցոյց է տալիս, որ հեղինակն օգտուել է Մատթէոսի Աւետարանից, եւ որ Տէրունական աղօթքի ծիսական կիրառութիւնը տարածուած էր: Աղօթքի վերջի գոհաբանութիւնը տարբերւում է Աւետարանից «արքայութիւն» բառի բացթողումով: Այդ բառը չկայ նաեւ Աւետարանների հնագոյն ձեռագրերում: Ուստի Աստուածաշնչի քննական տեքստի կողմնակիցներն այն բաց են թողնում նաեւ Մատթէոսի Աւետարանում: Հմմտ. «Առաքելական սահմանադրութիւններ», է 24:*

110 *Այսինքն՝ երրորդ, վեցերորդ եւ իններորդ ժամերին՝ ըստ հրէական սովորութեան: Հմմտ. Գ Թագ. Ը 44, 47, Բ Մնաց. է 34, 38, Յուդիթ Ը 5, Դան. Զ 10, 13, Սաղմ. Մե 17, Գործք Բ 15, Գ 1, ժ 9, 30: Քրիստոնէական կիրառութեան մասին տե՛ս Տերտուղիանոս, De or. 25, De iciun. 10, Կղեմէս Ալեքսանդրացի, Strom. 7, 7, 40, 3:*

111 *Այս եւ յաջորդ գլխի Գոհութեան աղօթքները մասամբ վերարտադրուած են «Առաքելական սահմանադրութիւններում»՝ է 25, 26:*

112 *Այստեղ կարծիքների տարբերութիւն կայ Գոհութեան վերաբերեալ: Ոմանք կարծում են, թէ խօսքն այստեղ վերաբերում է սիրոյ ճաշին՝ ագապէին, մինչ միւսները պնդում են, որ այստեղ ներկայացուած է ս. Պատարագի (Հաղորդութեան) արարողութիւնը:*

113 *Սա տարբերւում է նորկտակարանեան եւ յետագայ պատարագների հերթականութիւնից: Հաւանաբար սա է պատճառը, որ այն բաց է թողնուած «Առաքելական սահմանադրութիւններում»: Սակայն տե՛ս նաեւ Ա Կոր. ժ 16:*

114 *Հմմտ. Սաղմ. ՀԹ 15, Յովհ. ժե 1, Մատթ. ԻԶ 29, Մարկ. ժԴ 25: «Որթատունկը» կարող է մեկնաբանուել կամ որպէս Յիսուսի, կամ որպէս Նոր Իսրայէլի խորհրդանիշ, կամ որպէս Քրիստոսի արիւնը, կամ որպէս կեանք: Եթէ խօսքը վերաբերում է Քրիստոսի արեանը, ապա այն կարելի է ընդունել որպէս փոխակերպման վարդապետութեան առաջին արտայայտութիւններից մէկը:*

115 *Շատ թարգմանութիւններում տրուած է «Մառայ»: Հայերէն թարգմանութիւնը թերեւս մեղմացնելու միտում ունի՝ թարգմանելով «զաւակ»: Մինչ նոյն յունարէն բառը Նոր Կտակարանում թարգմանուած է «որդի» (Գործք Գ 13, 26) կամ «մանուկ» (Մատթ. ժԲ 18):*

Յիսուսի միջոցով. Քեզ փառք յաւիտեան»: Եւ նշխարի վերաբերեալ[116]. «Գոհանում ենք Քեզանից, Հայր մեր, կեանքի եւ գիտութեան համար[117], որ մեզ յայտնեցիր Քո Որդի Յիսուսի միջոցով. Քեզ փառք յաւիտեան: Ինչպէս այս նշխարը սփռուեց լեռների վրայ[118] եւ ժողովուելով դարձաւ մէկ[119], այդպէս էլ Քո Եկեղեցին աշխարհի ծագերից թող ժողովուի Քո Արքայութեան մէջ[120]. քանզի Քոնն են փառքը եւ զօրութիւնը Յիսուս Քրիստոսով՝ յաւիտեան»: Թող ոչ ոք չճաշակի եւ չըմպի ձեր Գոհութիւնից, այլ միայն Տիրոջ անունով մկրտուածները. քանզի այս մասին եւս Տէրն ասել է. «Սրբութիւնը շներին մի՛ տուէք»[121]:

116 *Յունարէն* Κλάσμα *բառը հանդիպում է հացի բազմացման նորկտակարանեան պատումների մէջ (Մատթ. ժԴ 20, ժե 37 եւ զուգահեռներ) եւ թարգմանուած է «նշխար», քանզի վերաբերում է բեկուած հացի կտորներին: Տուեալ դէպքում խօսքը վերաբերելու է Գոհութեան ժամանակ բեկուած հացին: Որոշ հրատարակութիւններ այս արտայայտութիւնը թարգմանում են՝ «հացը բեկանելու վերաբերեալ»: Հմմտ. Ղուկ. Իդ 35, Գործք Բ 42, 46, Ի 7, 11, Իէ 35, Ա Կոր. ժ 16, ժԱ 24:*

117 *Նոր Կտակարանում կան բազմաթիւ արտայայտութիւններ մարդկութեանը Քրիստոսի կողմից «կեանք ու գիտութիւն» շնորհելու մասին՝ Ղուկ. Ա 77, Բ Կոր. Դ 6, Յովհ. Գ 15, Ե 26, Զ 68-69:*

118 *Լեռների այս յիշատակութիւնը շատերին մղել է այն կարծիքին, որ այս գործը չէր կարող Եգիպտոսում գրուած լինել: Անգամ «բլուրներ» թարգմանութիւնը չի լուծում հարցը: Ուստի այս հատուածը քաջալերում է պաղեստինեան ծագման կողմնակիցներին:*

119 *Կիպրիանոսը գեղեցիկ կերպով զարգացնում է Քրիստոսի եւ Եկեղեցու միութեան գաղափարը՝ ԿԳ 13, ԿԹ 5:*

120 *Այս հատուածը կայ «Առաքելական սահմանադրութիւններում»:*

121 *Մատթ. է 6: «Սրբութիւնը» ծիսական լեզուի մէջ վերաբերում է ս. Հաղորդութեանը:*

Գլուխ Ժ[122]

Յագենալուց յետոյ[123] այսպէ՛ս գոհացէք. «Գոհանում ենք Քեզանից, Հա՛յր սուրբ[124], Քո սուրբ անուան[125] համար, որ բնակեցրիր[126] մեր սրտերում, եւ այն գիտութեան, հաւատքի ու անմահութեան համար, որ յայտնեցիր մեզ Քո Որդի Յիսուսի միջոցով. Քեզ փառք յաւիտեան: Դու, ամենակա՛լ Տէր, ամէն ինչ ստեղծեցիր[127] Քո անուան համար, մարդկանց կերակուր եւ ըմպելիք տուեցիր վայելելու, որպէսզի գոհանան Քեզանից, իսկ մեզ հոգեւոր կերակուր եւ ըմպելիք եւ յաւիտենական կեանք շնորհեցիր Քո Որդու միջոցով[128]: Ամէն ինչից առաջ գոհանում ենք Քեզանից, քանզի Դու հզօր ես. Քեզ փառք յաւիտեան: Յիշի՛ր, Տէր[129], Քո Եկեղեցուն[130], եւ փրկի՛ր նրան ամէն չարից[131] եւ նրան կատարեա՛լ դարձրու Քո սիրոյ մէջ[132]. եւ նրան՝ սրբացածին, չորս հողմերից ժողովիր Քո արքայութեան մէջ[133], որը պատրաստել ես նրա համար. քանզի Քոնն են զօրութիւնը եւ փառքը յաւիտեան: Թող շնորհը գայ, եւ թող անցնի այս աշխարհը[134]. ովսաննայ Դաւթի Որդուն[135]: Ով սուրբ է, թող գայ. իսկ ով՝ ոչ, թող ապաշխարի[136]. Մարան աթա[137]. ամէն»: Մարգարէներին թոյլ տուէք գոհանալ, որքան կամենան[138]:

Գլուխ ԺԱ

Արդ, ով որ ձեզ մօտ գալով այս ամէն պատուիրուածն ուսուցանի ձեզ, ընդունեցէ՛ք նրան[139]: Բայց եթէ այդ վարդապետողը մոլորուելով[140] ձեզ այլ վարդապետութիւն ուսուցանի՝ քանդելու համար[141], մի՛ լսէք նրան. իսկ եթէ ուսուցանում է արդարութիւնն ու Տիրոջ գիտու-

---

122 Յետ հաղորդութեան գոհութեան աղօթքը գտնւում է նաեւ «Առաքելական սահմանադրութիւնների» է 26-ում, սակայն բազմաթիւ բացթողումներով, փոփոխութիւններով ու յաւելումներով: Այնուամենայնիւ, մտքի ու լեզուի համապատասխանութիւնը շատ յատկանշական է:

123 «Առաքելական սահմանադրութիւնների» «մասնակցութիւնից յետոյ» արտայայտութիւնը տարբեր գոհաբանական արարողութիւններ է մատնանշում: Այստեղ Տիրոջ Ընթրիքը ակնյայտօրէն կապուած է ագապէի հետ՝ հմմտ. Ա Կոր. ԺԱ 20-22, 33: Նախնական Եկեղեցում չսրբագործուած ընծաների մի մասը բաշխւում էր բոլորին: Թերեւս այստեղից է մեր Եկեղեցում պատարագից յետոյ նշխար բաժանելու սովորութիւնը:

124 Հմմտ. Յովհ. ԺԷ 11:

125 Տարածուած աստուածաշնչական արտայայտութիւն է, որ նշում է Աստուծոյ բնութիւնը, զօրութիւնը եւ մեծութիւնը:

126 Հմմտ. Յովհ. Ա 14: Սա կարող է նշանակել, որ ա) Աստուած բնակւում է մեր մէջ ս. Հաղորդութեամբ, բ) ս. Հաղորդութեամբ Աստուած փառաւորւում է մեր մէջ (Յովհ. ԺԳ 31): Հմմտ. նաեւ Յովհ. ԺԷ 23:

127 Հմմտ. Իմաստ. Ա 14, Սիր. ԺԸ 1, Յայտ. Դ 11:

128 Հմմտ. Յովհ. Զ 50-59: Այս նախադասութեան վերջին հատուածը զուգահեռ չունի «Առաքելական սահմանադրութիւններում»: Յաջորդ նախադասութիւնը նոյնպէս յատուկ է միայն այս գործին:

129 Հմմտ. Ղուկ. ԻԴ 42:

130 Հմմտ. Մատթ. ԺԶ 18 «Իմ եկեղեցին»:

131 Հմմտ. Հռոմ. Է 24:

132 Հմմտ. Յովհ. ԺԵ 12, Եփես. Ե 25:

133 Այսպէս է թարգմանութիւնների մեծ մասում, ինչպէս եւ հայերէնում: Բրիենոսը, սակայն, թարգմանում է հետեւեալ կերպ՝ «Նրան սրբացած վիճակում ժողովիր Քո արքայութեան մէջ»: Հմմտ. Մատթ. ԻԴ 31, Յովհ. ԺԱ 52:

134 Հմմտ. Ա Կոր. Է 31: Ոմանք «շնորհը» նոյնացնում են Քրիստոսի հետ: Քրիստոսի զգուշացման (Մատթ. ԻԴ 42) եւ ս. Պօղոսի վարդապետութեան (Ա Թես. Դ 15) թիւրըմբռնման պատճառով վաղ քրիստոնեաների մէջ լայնօրէն տարածուած էր այն կարծիքը, որ աշխարհի վերջն ու Քրիստոսի յաղթական գալուստը շատ մօտ են: Քրիստոնեաներն աղօթում էին աշխարհի վերջի համար (Յայտ. ԻԲ 17, 20):

135 Ձեռագրում τῷ θεῷ Δαυείδ (Դաւթի Աստծուն), որը Բրիենոսը փոխում է τῷ υἱῷ Δαυείδ (Դաւթի Որդուն): Հայերէն թարգմանութիւնը հետեւում է առաջին տարբերակին: Հմմտ. Մատթ. ԻԱ 9, 15, ԻԲ 42-45:

136 Հմմտ. Գործք Բ 38:

137 Հմմտ. Ա Կոր. ԺԶ 22: Արամէերէն «Մարան աթա» նշանակում է «Տէրը եկել է», մինչ «Մարանա թա» թարգմանւում է «Տէ՛ր, ե՛կ»: Վերջինը, թւում է, աւելի նախընտրելի է, քանզի ներդաշնակ է Տիրոջ գալստեան նկատմամբ իղձին, որն արտայայտուած է նաեւ «Յայտնութեան» մէջ (ԻԲ 20): Այս ձեւով է որոշ թարգմանութիւններում. նոյն մօտեցումն է ցուցաբերել նաեւ հայերէնի թարգմանիչը, երբ թարգմանել է՝ «եկեսցէ Տէր»: Մենք թէեւ համաձայն ենք երկրորդ տարբերակին, սակայն նախընտրեցինք թողնել առաջինի տեսքով, քանզի այդպէս է Աստուածաշնչի բնագրում:

138 Սա ցոյց է տալիս, որ արդէն գոյութիւն ունէր որոշակի ծիսական արարողակարգ: Հմմտ. Ա Կոր. ԺԴ 29, 31:

139 Սա վերաբերում է «վարդապետներին», որոնց մասին խօսուելու է:

140 Ոմանք թարգմանում են՝ «մոլորեցնելով», սակայն բնագրում բառացի այսպէս է:

141 Հմմտ. Գործք Ի 30-31, Ա Տիմ. Ա 20, Բ Տիմ. Բ 17, Յուդա 4:

թիւնը աւելացնելու համար[142], ընդունեցէ՛ք նրան, ինչպէս Տիրոջը: Ինչ վերաբերում է առաքեալներին ու մարգարէներին[143], ըստ Աւետարանի հրամանի՝ այսպէ՛ս արէք[144]. ձեզ մօտ եկած ամէն առաքեալ պէտք է ընդունուի, ինչպէս Տէրը[145]: Բայց նա միայն մէկ օր թող մնայ[146], անհրաժեշտութեան դէպքում՝ նաեւ յաջորդ օրը, իսկ եթէ երեք օր մնայ, ուրեմն սուտ մարգարէ է[147]: Եւ մեկնելիս առաքեալը թող ոչինչ չվերցնի, բացի միայն հացից, մինչեւ իջեւանելը[148]: Բայց եթէ նա արծաթ խնդրի, ուրեմն սուտ մարգարէ է[149]: Հոգով խօսող[150] ամէն մի մարգարէի մի՛ փորձէք[151] եւ մի՛ քննէք[152], քանզի բոլոր մեղքերը ներուելու են, բայց այս մեղքը չի ներուելու[153]: Բայց Հոգով խօսող ամէն ոք

142 Հմմտ. Հռոմ. Գ 21-26:

143 «Դիդախէն» ճանաչում է քրիստոնէական վարդապետութեան ուսուցմամբ զբաղուած մարդկանց երեք դաս՝ ա) վարդապետներ, ովքեր առանձնացուած են վարդապետութիւնը մեկնաբանելու իրենց շնորհով, բ) առաքեալներ, ովքեր Աւետարանի շրջիկ քարոզիչներ են, գ) մարգարէներ, ովքեր տեղացի կամ շրջիկ քրիստոնեաներ են եւ կոչուած են շնորհով ուսուցանելու, հանդարտեցնելու, քաջալերելու, կշտամբելու իրենց ունկնդիրներին: Հմմտ. Ա Կոր. ԺԲ 28-29, ԺԴ 1-5, Եփես. Բ 20, Գ 5, Դ 11, Յայտ. ԺԸ 20, Գործք ԺԳ 1:

144 Հմմտ. Մատթ. Է 15, Ժ 5, Ղուկ. Թ 1-6, Ժ 4:

145 Հմմտ. Մատթ. Ժ 40: Այստեղ առաքեալների նշումը վիճաբանութեան նիւթ է տուել: Սակայն ապացուցուած է, որ անգամ Նոր Կտակարանում «առաքեալ» անուանումը սոսկ տասներկուսին չէր պատկանում, այլ ընդհանրապէս Աւետարանը քարոզողներին: Հմմտ. Հռոմ. ԺԶ 7, Ա Կոր. Ժե 5, 7, Գաղ. Ա 19, Ա Թես. Բ 6, նաեւ Գործք ԺԴ 4, 14:

146 Առաքեալը պէտք է տեղից տեղ գնայ. նրա սկսած գործը պէտք է ուրիշը շարունակի: Եւսեբիոս Կեսարացին իր «Եկեղեցական պատմութեան» մէջ (Գ 37) խօսում է տեղից տեղ շրջող աւետարանիչների արդիւնաւէտ գործունէութեան մասին:

147 Հմմտ. Բ Կոր. ԺԱ 13, Բ Պետ. Բ 1:

148 Այսինքն՝ մինչեւ յաջորդ բնակավայր գնալը:

149 Հմմտ. Մատթ. Ժ 9-14, Մարկ. Զ 8-11, Ղուկ. Թ 3:

150 Այսինքն՝ Սուրբ Հոգու ազդմամբ, որ նկարագրուած է Ա Կոր. ԺԲ 3-ում եւ ԺԴ 2-ում: Հմմտ. նաեւ Գործք Ժ 10-11, ԻԱ 10-11, Եփես. Գ 3, Յայտ. Ա 10:

151 Այսինքն՝ փորձութեան մի՛ ենթարկէք: Փորձելու եղանակը տրուած է Տիրոջ կողմից Մատթ. Է 20-ում:

152 Տե՛ս նաեւ Ա Կոր. ԺԴ 29:

153 Հոգով խօսող մարգարէին քննել նշանակում է մեղանչել Սուրբ Հոգու դէմ: Հմմտ. Մատթ. ԺԲ 31-32, Մարկ. Գ 28-29:

մարգարէ չէ, այլ միայն եթէ Տիրոջ վարքն ունի[154], քանզի վարքից են ճանաչւում սուտ մարգարէն եւ մարգարէն: Եւ ամէն մարգարէ, որ Հոգով սեղան է սահմանում[155], չի ուտում դրանից, եթէ, անշուշտ, սուտ մարգարէ չէ: Ճշմարտութիւնն ուսուցանող ամէն մի մարգարէ, եթէ իր վարդապետածը չի կատարում[156], սուտ մարգարէ է: Եւ ամէն փորձուած ու ճշմարիտ մարգարէ, որ ժողովներ է գումարում աշխարհիկ խորհրդի համար[157] եւ չի ուսուցանում անել այն, ինչ ինքն է անում, թող չդատուի ձեր կողմից, քանզի նրա դատաստանն Աստուծոյ մօտ է. քանզի այդպէս են գործել նաեւ հին մարգարէները[158]: Նա, ով Հոգով կ՚ասի. «Ինձ արծաթ տուր կամ ուրիշ բաներ», մի՛ լսէք նրան[159]. իսկ եթէ նա դիմի ուրիշ կարօտեալներին տալու համար, ապա ոչ մէկը թող չդատի նրան:

154 Հմմտ. Մատթ. Է 15-20: Այսինքն՝ պէտք է հետեւի Տիրոջը եւ ոչ թէ իր անձինը փնտռի՝ Փիլ. Բ 21:

155 Խօսքը հաւանաբար վերաբերում է սիրոյ ճաշին՝ ագապէին, որի հրաւիրողը մարգարէն է:

156 Հմմտ. Մատթ. ԻԳ 3, Իգնատիոս, Եփես. ԺԵ 1-2:

157 Այս տեքստի ամենադժուար հասկանալի հատուածն է: Յունարէնում ποιὼν εἰς μυστήριον κοσμικὸν ἐκκλησίας, որը շատերը թարգմանում են՝ «գործում է եկեղեցու աշխարհիկ խորհրդի համաձայն», ոմանք՝ «եկեղեցու խորհրդի համաձայն աշխարհում»: Վերջինս ցուցադրում է այս դժուարիմաց հատուածի մեկնութեան տարբերակներից մէկը. խորհուրդը եկեղեցին է, եւ աշխարհիկ է, որովհետեւ եկեղեցին աշխարհում է: Բրիեննոսը ἐκκλησίας բառը (հայցական հոլովով) կապում է ποιών-ի հետ եւ թարգմանում այնպէս, ինչպէս տրուած է վերեւում եւ որին հետեւել է նաեւ հայերէնի թարգմանիչը: Բրիեննոսն աշխարհիկ խորհուրդն ընդունում է որպէս մարգարէի խորհրդանշական գործողութիւն: Լաւագոյն բացատրութիւնը տուել է հայերէնի թարգմանիչը, որն այն բացատրում է աստուածային խորհուրդը աշխարհիկ, այսինքն՝ անցողիկ ու անցաւոր խորհրդով փոխարինելով: Ամէն դէպքում, անորոշութիւնը մնում է:

158 Վերեւի արտայայտութիւնը խորհրդական հարսանիքով բացատրողներն այստեղ տեսնում են Ովսէէ մարգարէի եւ նրա «պոռնիկ կնոջ» ակնարկը (Ա 2): Իրենէոսի մօտ կայ մի հատուած, որը նմանութիւն ունի այս տեքստի հետ (Adv. haer. 4. 24. 12.):

159 Հմմտ. Մատթ. Ժ 8:

Գլուխ ԺԲ[160]

Ամէն ոք, ով կը գայ Տիրոջ անունով, թող ընդունուի[161]: Եւ ապա փորձելով ճանաչէք նրան, քանզի դուք իմաստութեամբ կը զանազանէք աջը ձախից[162]: Եթէ ձեզ մօտ եկողն անցորդ է, ապա օգնեցէ՛ք նրան, որքան կարող էք, սակայն նա չպէտք է ձեզ մօտ մնայ երկու կամ անհրաժեշտութեան դէպքում երեք օրից աւելի: Իսկ եթէ նա կամենայ ձեզ մօտ բնակուել՝ լինելով արհեստաւոր, ապա թող աշխատի եւ ուտի[163]: Իսկ եթէ արհեստ չունի, ձեր իմաստութեամբ հոգացէք, որպէսզի քրիստոնեան[164] ձեզ մօտ դատարկապորտութեամբ չապրի: Բայց եթէ նա չկամենայ այդպէս անել, ապա քրիստոսավաճառ է[165]. այդպիսիներից զգուշացէ՛ք:

160 Այս գլխի սկիզբը գրեթէ նոյնական է «Առաքելական սահմանադրութիւնների» է 28-ի հետ:

161 Հմմտ. Սաղմ. ՃԺԷ 26, Մատթ. ԻԱ 9, ԻԳ 39, Մարկ. ԺԱ 9, Ղուկ. ԺԹ 38, Յովհ. ԺԲ 13, 15: «Տիրոջ անունով եկողը» կարող էր լինել ինչպէս ճամփորդող քարոզիչ, այնպէս էլ պարզապէս քրիստոնեայ (Մատթ. Ժ 40, Յովհ. ԺԳ 20): Տե՛ս նաեւ Հռոմ. ԺԲ 13, Երր. ԺԳ 2, Ա Պետ. Դ 9-10, Գ Յովհ. 3-8:

162 Յունարէն արտայայտութիւնը, թւում է, կազմուած է Յվն. Դ 11-ի լոյսի տակ, որտեղ նշուած է, որ մարդիկ «ոչ ծանեան զաջ եւ զահեակ իւրեանց»:

163 Հմմտ. Բ Թես. Գ 10, Գործք ԺԸ 3:

164 «Վարդապետութեան» մէջ միայն այստեղ է այս եզրը հանդիպում: Այս կէտը ենթադրել է տալիս, որ գործը կարող է գրուած լինել Անտիոքում: Հմմտ. Գործք ԺԱ 26:

165 Քրիստոնէութիւնը չահոյթի աղբիւրի չպէտք է վերածուի (Ա Տիմ. Զ 5) նրանց համար, ովքեր կարծում են, թէ այն իրենց ապրուստի միջոց է հայթայթելու: «Քրիստոսավաճառ» եզրը ստեղծուեց ցոյց տալու համար այն մարդկանց, ովքեր շահ էին կորզում իրենց դաւանած քրիստոնէութեամբ: Նման ամբաստանութեան, ամենայն հաւանականութեամբ, ենթարկուել է նաեւ ս. Պօղոս առաքեալը, որն իրեն պաշտպանում է Ա Կոր. Թ 3-23-ում եւ Ա Կոր. ԺԱ 7-9-ում: Նոյն թեման շօշափուած է Իգնատիոսի նամակներում (Թրալլ. Զ) եւ Դ դարի գրականութեան մէջ:

Գլուխ ԺԳ[166]

Ամէն մի ճշմարիտ մարգարէ, որ կը կամենայ բնակուել ձեզ մօտ[167], արժանի է իր կերակրին[168]: Այսպէս եւ ճշմարիտ վարդապետն իբրեւ մշակ արժանի է իր կերակրին[169]: Արդ, հնձանի ու կալի բերքի եւ արջառների ու ոչխարների ամէն մի երախայրիքը վերցրու եւ տուր մարգարէներին, քանզի նրանք ձեր քահանայապետերն են[170]: Իսկ եթէ մարգարէ չունէք, տուէք աղքատներին: Եթէ դու նկանակ ես պատրաստում, ապա երախայրիքը վերցրու եւ տուր՝ ըստ պատուիրանի: Սոյնպէս եւ գինու կամ իւղի սափոր բանալիս վերցրու երախայրիքը եւ տուր մարգարէներին: Նաեւ արծաթի, հանդերձի եւ ամբողջ ունեցուածքի երախայրիքը վերցրու եւ, ինչպէս հաճելի է քեզ, տուր պատուիրանի համաձայն:

166 Այս գլխի մեծ մասը պարունակւում է «Առաքելական սահմանադրութիւններում» (է 28, 29), սակայն խմբագրութիւններով եւ ուշ շրջանի յաւելումներով:

167 Կամ՝ «հաստատուել ձեզ մօտ»:

168 Ոմանք թարգմանում են՝ «աջակցութեան»: Վերոյիշեալ սկզբունքն է քարոզում նաեւ Պօղոս առաքեալը (Ա Կոր. Թ 4-14, Բ Կոր. ԺԱ 8-23, Ա Տիմ. Ե 18): Հմմտ. նաեւ Բ Օր. ԻԵ 4, Մատթ. Ժ 10, Ղուկ. Ժ 7:

169 Հմմտ. Մատթ. Ժ 10, Ղուկ. Ժ 7, Ա Տիմ. Ե 18, նաեւ Ա Կոր. Թ 13:

170 Հրեաներին հրամայուած էր նոյնը կատարել քահանաների համար. Հմմտ. Ելք ԻԲ 29-30, Թիւք ԺԵ 19-21, Բ Օր. ԺԸ 3-4, Բ Եզրաս Ժ 37: Այսպէս նաեւ հին հռոմէացիներն էին իրենց աստուածներին ու քրմերին տալիս իրենց երախայրիքը: «Դիդախէն» լուռ է տասանորդի մասին, թէեւ այս գլխի 7 համարը կարող է մեկնաբանուել որպէս այդպիսին: Վերջին արտայայտութիւնը, որը նշում է մարգարէութեան քահանայական բնոյթը, թւում է, թէ պատկանում է աւելի ուշ շրջանի, քան «Դիդախէի» գրութեան թուականն է: Ոմանք սա աղաւաղում են համարում, ուրիշներ ընդունում են փոխաբերական իմաստով: «Առաքելական սահմանադրութիւններում» քահանայական բնոյթն աւելի ընդգծուած է: Ոմանք այս արտայայտութիւնը մեկնաբանում են Ա Պետ. Բ 9-ի լոյսի տակ. եթէ սովորական մարդիկ քահանաներ են, ապա մարգարէները կը լինեն քահանայապետեր:

Գլուխ ԺԴ[171]

Իսկ Տէրունական օրը[172], միասին հաւաքուելով, հաց բեկէք ու գոհացէք[173] նախապէս ձեր մեղքերը խոստովանելուց յետոյ[174], որպէսզի ձեր պատարագը սուրբ լինի[175]: Բայց ամէն ոք, ով իր ընկերոջ հետ հակառակութիւն[176] ունի, թող չմասնակցի ձեր հաւաքին, մինչեւ չհաշտուի, որպէսզի ձեր պատարագը չարատաւորուի: Քանզի այսպիսին է Տիրոջ կողմից ասուածը. «Ամէնուր եւ ամէն ժամանակ ինձ սուրբ պատարագ մատուցիր[177]. քանզի ես եմ մեծ Թագաւորը, -ասում է Տէրը, -եւ Իմ անունը սքանչելի է ազգերի մէջ»[178]:

171 Այս գլխի սկիզբը էականօրէն տրուած է «Առաքելական սահմանադրութիւններում»: Գիտնականների կարծիքով, այս գլուխն աւելի կը համապատասխաներ, եթէ դրուէր Ը գլխից առաջ, սակայն միեւնոյն յաջորդականութիւնը պահպանուած է նաեւ «Սահմանադրութիւններում», որը խօսում է գրական առնչակցութեան մասին:

172 Ցունարէնում ամբողջական տեսքն է κατὰ κυριακὴν δὲ κύριον, որը բառացի նշանակում է «Տիրոջ տէրունական օրը» կամ «Տիրոջ կիրակին», որն աւելորդաբանութիւն է՝ շեշտելու համար կիրակի օրուայ նշանակութիւնը որպէս ս. Պատարագի: «Տէրունական օրը» «կիրակիի» իմաստով օգտագործուած է նաեւ Յայտնութեան մէջ (Ա 10): Իգնատիոս Անտիոքացին նշում է, որ քրիստոնեաները «ոչ եւս ըստ շաբաթուն կեցջիք, այլ ըստ Տէրունւոյն» (Մագն. Թ 1): Բ դարում Մելիտոն Սարդեցին ճառ է գրել Տէրունական օրուայ մասին (Եւսեբիոս, Եկեղ. Պատմ. Դ 26): Հմմտ. Ա Կոր. ԺԶ 2, Գործք Ի 7, Բառնաբաս, ԺԵ 9:

173 Հմմտ. Մատթ. ԻԶ 26, Մարկ. ԺԴ 22, Ղուկ. ԻԲ 19, Ա Կոր. ԺԱ 23, Գործք Բ 42, Ի 7, 11: Այս յոգնակի հրամայականը ընաւ չի նշանակում, որ քրիստոնեաներից ամէն ոք իր համար հաց էր բեկելու կամ գոհանալու, այլ, ինչպէս սովորական է յունարէնում, յոգնակի հրամայական սկզբունքը վերաբերում է «հաւաքուելուն»:

174 Վստահաբար, այստեղ խօսքը վերաբերում է ընդհանրական խոստովանութեանը: Սա զուգահեռ չունի «Առաքելական սահմանադրութիւններում»: Հմմտ. Յակ. Ե 16, Ա Տիմ. Ե 20:

175 Հմմտ. Հռոմ. ԺԲ 1, Փիլ. Բ 17, Երբ. ԺԳ 15, Ա Պետ. Բ 5:

176 Ցունարէն ἀμφιβολίαν բառն այստեղ աւելի շատ «հակառակութեան» ու «վէճի» իմաստ ունի, քան «երկմտութեան», որն իր բառացի իմաստն է: Հմմտ. Մատթ. Ե 23, 24:

177 Տե՛ս Իրենէոս, ԺԷ 5:

178 Մաղ. Ա 11, 14: Այս մէջբերումն օգտագործուած է «Առաքելական սահմանադրութիւններում» եւ այլ նախանիկիական հեղինակների մօտ՝ ս. Պատարագն ակնարկելու նպատակով:

Գլուխ ԺԵ[179]

Արդ[180], ձեզ համար Տիրոջն արժանի եպիսկոպոսներ ու սարկաւագներ[181] ձեռնադրեցէք խոնարհ, անարծաթասէր, ճշմարիտ ու փորձուած մարդկանց[182]. քանզի նրանք եւս ձեզ համար մատուցում են մարգարէների ու վարդապետների պաշտօնը[183]: Ուստի մի՛ արհամարհէք նրանց, քանզի նրանք ի պատուի են ձեզ մօտ՝ մարգարէների եւ վարդապետների հետ միասին[184]: Յանդիմանեցէք միմեանց ոչ թէ բարկութեամբ, այլ խաղաղութեամբ, ինչպէս կայ Աւետարանում[185]: Եւ ամէն մէկի հետ, ով վրիպում թոյլ կը տայ[186] մէկ ուրիշի դէմ, թող ոչ

179 Այս գլխի սկիզբը, որ պարունակում է «Առաքելական սահմանադրութիւններում» (է 31), ցոյց է տալիս գրութեան վաղ թուական, քանզի՝ ա) ակնյայտ ակնարկներ կան արտակարգ պաշտօնեաներից սովորական պաշտօնեաների անցման, բ) տարբերակում չկայ եպիսկոպոսների ու երէցների միջեւ (Ա Պետ. Ե 1), որն արդէն կայ Իգնատիոսի մօտ, գ) ժողովրդի ընտրութիւնը նոյնպէս վաղ թուական է ցոյց տալիս:

180 Նախորդ գլուխը խօսում էր ս. Հաղորդութեան ու խոստովանութեան մասին, որպէս կիրակի օրուայ կանոնաւոր պաշտամունքի մաս, ուստի անհրաժեշտ է, որ իւրաքանչիւր համայնք ունենայ իր եպիսկոպոսներն ու սարկաւագները: Ժամանակակից Կղեմէս Հռոմէացին (ԽԴ 4) ասում է, որ «երէցների» պարտականութիւնն է «ընծաները մատուցելը»: Իւրաքանչիւր համայնք պէտք է ունենայ այդ պարտականութիւնները կատարելու իրաւունք ունեցող անձինք:

181 Հայերէնի թարգմանիչը «եպիսկոպոսների» փոխարէն ունի «տեսուչներ»:

182 Հմմտ. Ա Տիմ. Գ 2-4, Տիտ. Ա 7-9:

183 Կամ ծառայութիւնը:

184 Այն փաստը, որ մարգարէներն ու վարդապետները ակնյայտօրէն աւելի բարձր պատուի էին, քան եպիսկոպոսներն ու սարկաւագները, հիմք է տուել ընդհանրապէս կարծելու, որ «Դիդախէն» գրուել է շատ վաղ ժամանակում: «Դիդախէի» հեղինակն ասում է, որ եպիսկոպոսներն ու սարկաւագները չպէտք է նուաստացուեն, քանզի նրանք նոյն գործն են անում, ինչ մարգարէներն ու վարդապետները:

185 Հմմտ. Մատթ. ԺԸ 15-17, 21-25, նաեւ Ա Տիմ. Ե 20, 24: Յանդիմանելու եւ խրատելու պարտականութեան մասին տե՛ս Կղեմէս Հռոմէացի, ԾԶ:

186 Այստեղ եղած յունարէն ἀστοχέω բառը նշանակում է «նշանակէտից վրիպել» եւ Նոր Կտակարանում թարգմանւում «վրիպել»՝ սխալուելու կամ մոլորուելու իմաստով՝ Ա Տիմ. Ա 6, Զ 21, Բ Տիմ. Բ 18:

ոք չխօսի, եւ ոչ էլ թող նա լսի ձեզանից[187], մինչեւ չապաշխարի: Ձեր աղօթքները, ողորմութիւններն ու բոլոր գործերը կատարէք այնպէս, ինչպէս կայ մեր Տիրոջ Աւետարանում[188]:

Գլուխ ԺԶ.

Հսկեցէք ձեր կեանքի վրայ[190]. ձեր ճրագները թող չհանգչեն, եւ թող չարձակուեն ձեր գօտիները[191], այլ եղէք պատրաստ, քանզի չգիտէք այն ժամը, երբ մեր Տէրը կը գայ[192]: Ստէպ-ստէպ[193] ի մի հաւաքուէք՝ որոնելու այն, ինչ վայել է ձեր անձերին, քանզի ձեր հաւատքի ողջ ժամանակը ձեզ չի օգնի[194], եթէ դուք վերջին պահին կատարեալ

187 Ցունարէնի բառացի թարգմանութիւնն այսպիսին է: Սակայն ասելուց յետոյ, որ «ոչ ոք թող չխօսի» նրա հետ, բաւական աւելորդ է յայտարարելը, որ նա էլ «չպէտք է լսի ձեզանից»: Այս պատճառով ոմանք յունարէն բայը վերցնում են կրաւորական եղանակով՝ «թող չխօսուի»: Նման թարգմանութիւնը համաձայնում է Իգնատիոսի ցուցումի հետ. «Հեռո՛ւ մնացէք նման մարդկանց հետ շփուելուց եւ անգամ մի՛ խօսէք նրանց մասին» (Զմիւռն. Է 2): Հմմտ. Սաղմ. ԺԵ 4 «ոչ յիշեցից զանունս նոցա ի շրթունս իմ»:

188 Արտայայտութիւնը գուցէ վերաբերում է Լեռան քարոզին (Մատթ. Ե-Է): Ողորմութեան մասին հմմտ. Ղուկ. ԺԱ 41, ԺԲ 33. Գործք Գ 2, 3, 10, Թ 36, Ժ 2, 4, 31, ԻԴ 17: «Ինչպէս կայ Աւետարանում» արտայայտութիւնը կարծես թէ յուշում է, որ Աւետարանն արդէն գրի էր առնուած:

189 Այս գլխի եւ «Առաքելական սահմանադրութիւնների» Է 31, 32-ի նմանութիւնը հիմնականում գաղափարների յաջորդականութեան եւ որոշ արտայայտութիւնների ու եզրերի նոյնութիւնն է: 3 եւ 4 համարները վերարտադրուած են գրեթէ բառացի: «Վարդապետութեան» ու Մատթ. ԻԴ-ի առնչակցութիւնը հաւանական է, սակայն վերջինիս կապը «Առաքելական սահմանադրութիւնների» հետ ակնյայտ է: Բառնաբաս Դ-ում կան մի քանի համապատասխան արտայայտութիւններ:

190 Կամ «ձեր կեանքի համար»: Բառացի կրկնւում է «Սահմանադրութիւններում»:

191 Հմմտ. Ղուկ. ԺԲ 35, որը նոյնութեամբ մէջբերուած է «Սահմանադրութիւններում»:

192 Տէրը գալու է չուտով եւ յանկարծակի: Տե՛ս Մատթ. ԻԴ 42, 44, ԻԵ 13, Եփես. Զ 14, Ա Պետ. Ա 13:

193 Ոմանք թարգմանում են՝ «մեծ թուով»: Հմմտ. Իգնատիոս, Եփես. Ի 2, ԺԳ 1, Պող. Դ 2:

194 Այստեղ զուգահեռ ունի Բառնաբասը (Դ 9):

չլինէք: Քանզի վերջին օրերին[195] շատանալու են սուտ մարգարէներն ու մոլորեցուցիչները, եւ գառները գայլերի են վերածուելու, եւ սէրն ատելութեան է փոխուելու[196]: Քանզի, անօրէնութեան շատանալով, մարդիկ ատելու, հալածելու եւ մատնելու են միմեանց[197]: Եւ այն ժամանակ երեւալու է աշխարհ մոլորեցնողը[198] իբրեւ Աստուծոյ Որդի[199] եւ կատարելու է նշաններ ու հրաշքներ[200]. եւ երկիրը տրուելու է նրա ձեռքը, եւ կատարելու է անօրէնութիւններ[201], որպիսիք երբեք չեն եղել յաւիտեաններում: Այնժամ մարդկային ազգը գալու է դէպի փորձութեան հուրը[202], եւ շատերը գայթակղուելու եւ կորչելու են[203], իսկ ովքեր իրենց հաւատքի մէջ համբերեն, փրկուելու են[204] հէնց նզովեալից[205]: Եւ այն ժամանակ երեւալու են ճշմարտութեան նշանները[206]. առաջին նշան՝

195 Վերջին օրերի ակնարկութիւնը որպէս ներկայի կամ մօտիկ ապագայի, խօսում է «Վարդապետութեան» գրուելու վաղ թուականի մասին. հմմտ. Բառնաբաս Դ եւ բազմաթիւ հատուածներ Նոր Կտակարանում: Խստագոյն փորձութիւններ են սպասւում աշխարհի վերջին՝ Մատթ. Ժ 22, ԻԴ 5-7, Մարկ. ԺԳ 13, Կղեմէս Լե 4: Տե՛ս նաեւ Ցուդա 17, 18, Բ Պետ. Գ 2, 3, Եփես. Գ 19:

196 Հմմտ. Մատթ. ԻԴ 11, 12:

197 Հմմտ. Մատթ. ԻԴ 10, Է 15, Բ Պետ. Գ 3:

198 Ցունարէն ὁ κοσμοπλάνος բառը հանդիպում է միայն այստեղ եւ «Առաքելական սահմանադրութիւններում» (Է 32): Խօսքն ակնյայտօրէն վերաբերում է Նեռին. հմմտ. Ցայտ. ԺԲ 9, Բ Յովհ. 7, Բ Թես. Բ 4, 8, Ցայտ. ԺԳ 2, 13, 14, ԺԹ 20, նաեւ Ղուկ. Ժ 18, Եփես. Ե 6, Մննդ. Գ 1, 4, 5, Ես. ԺԱ 4: Տե՛ս Բառնաբաս Դ 3:

199 Այս մասը չկայ «Առաքելական սահմանադրութիւններում»:

200 Հմմտ. Մատթ. ԻԴ 24:

201 Տե՛ս Բ Պետ. Դ 3, Բ Տիմ. Գ 1:

202 Հմմտ. Ա Պետ. Դ 12, Բ Պետ. Գ 10:

203 Հմմտ. Մատթ. ԻԴ 10, 13:

204 Հմմտ. Մատթ. Ժ 22 եւ նման հատուածները, որոնցից ոչ մէկն ուղղակի մէջբերում չէ:

205 Ցունարէնում ὑπ' αὐτοῦ τοῦ καταθέματος: Թարգմանում են նաեւ «նզովուելուց»: Բրիենոսը եւ ուրիշներ թարգմանում են՝ «նզովեալի կողմից»: Ոմանք այն մեկնաբանում են Ցայտ. ԻԲ 3-ի լոյսի տակ:

206 Արտայայտութիւնը հաւանաբար հիմնուած է Մատթ. ԻԴ 30, 31-ի վրայ, սակայն ոմանք այստեղ ակնարկութիւն են տեսնում ս. Պօղոսի՝ Թեսաղոնիկեցիներին ուղղուած նամակներից: «Ճշմարտութիւն» բառը նպատակայարմար է մեկնաբանել Քրիստոսի երկրորդ գալստեան փաստով: Իսկ «նշանները» ցոյց են տալու, որ Քրիստոս «Ճշմարտութիւնն» է (Յովհ. ԺԴ 6):

երկնքի բացուելը[207], ապա՝ շեփորի ձայնի նշանը[208], եւ երրորդ՝ մեռելների յարութիւնը, բայց ոչ բոլորի, այլ ինչպէս ասուած է. «Գալու է Տէրը, եւ բոլոր սրբերը՝ Նրա հետ»[209]: Այնժամ աշխարհը տեսնելու է Տիրոջը, որ գալիս է երկնքի ամպերի վրայ[210]:

Հին յունարէնից թարգմանեց
Սիմոն Գրքաշարեանը

Խմբագրեց եւ ծանօթագրեց
Միքայէլ եպս. Աջապահեանը

207 Յունարէն ἐκπετάσεως բառը ոմանք թարգմանում են «տարածուել» կամ «փռուել»: «Տարածուելը» սովորաբար մեկնաբանւում է այն իմաստով, որ խաչի նշանն է տարածուելու երկնքով, որը Մատթ. ԻԴ 30-ի հայրաբանական մեկնութիւնն է: Բրիենոսը այն վերագրում է սրբերի վերեւ բարձրանալուն՝ Տիրոջը դիմաւորելու համար: Քանի որ յունարէն բառը հազուագիւտ է, դժուար է ճշգրիտ բացատրութիւնը տալ: «Բացուելը» թւում է ամենաճշգրիտը՝ վերաբերելով երկնքում այն բացուածքին, որով Տէրն է իջնելու: Հմմտ. Ա Թես. Դ 17:

208 Տե՛ս Մատթ. ԻԴ 31:

209 Հմմտ. Զաք. ԺԴ 5:

210 Հմմտ. Մատթ. ԻԴ 30, ԻԶ 64: Տեքստը կարծէք ընդհատուած է: «Առաքելական սահմանադրութիւնները» շարունակում է ապագայ պատժի ու պարգեւի նորկտակարանեան վարդապետութիւնը:

ՍՈՒՐԲ ՊՈՂԻԿԱՐՊՈՍ ՋՄԻՒՌՆԱՑԻ

ՆԵՐԱԾԱԿԱՆ

1. Կեանքը: Պողիկարպոսը ծնուել է Ա դարի երրորդ քառորդում, հաւանաբար Զմիւռնիայում, որտեղ աւելի ուշ պատմում է առաքեալների եւ յատկապէս Յովհաննէս առաքեալի հետ ունեցած իր շփումների մասին: Առաքեալների կողմից ձեռնադրուել է Զմիւռնիայի եպիսկոպոս[1]: Իբրեւ եպիսկոպոս պայքարել է հերձուածների դէմ եւ դարձի բերել մեծ թուով մարկիոնականների ու վաղենտինոսականների եւ ուրիշ հերձուածողների: Շուրջ 155 թ. Պողիկարպոսը գալիս է Հռոմ՝ խորհրդակցելու Անիկետոս պապի հետ (154-156 կամ 167 թթ.) Զատիկը տօնելու օրը սահմանելու մասին, որն Արեւմուտքում տօնւում էր կիրակի օրը, իսկ Փոքր Ասիայի Եկեղեցիներում՝ նիսան ամսի 14-ին, երբ տօնւում էր նաեւ հրէական Զատիկը, անկախ այն բանից, թէ շաբաթուայ որ օրը կը լինէր: Թէեւ համաձայնութիւն չկայացաւ, քանի որ կողմերը վկայակոչում էին հնուց հաստատուած աւանդութիւններ, «նրանք հաղորդուեցին եկեղեցում, եւ Անիկետոսը հաղորդութիւնը տրամադրեց Պողիկարպոսին: Նրանք խաղաղութեամբ բաժանուեցին՝ համայն Եկեղեցուն խաղաղութիւն բերելով»: Պողիկարպոսը նահատակուել է Զմիւռնիայում, Ասիայի կուսակալ Կոդրատոսի ժամանակ, ոչ թէ Մարկոս Աւրելիոսի (161-180 թթ.) օրոք, ինչպէս սխալմամբ նշել է Եւսեբիոսը, այլ Անտոնիոս Պիոսի գահակալութեան օրոք, հաւանաբար 156 թ., քսանթիկոս ամսի երկրորդ օրը, այն է՝ փետրուարի 23-ին. այդ օրը նշւում է նրա յիշատակը[2]: Ըստ Իրենէոսի՝ նա մահացել է ծերունական հասակում: Իսկապէս, ինչպէս իմանում ենք նրա վկայաբանութիւնից, երբ կուսակալը նրան առաջարկել է ուրանալ Քրիստոսին ու զոհ մատուցել, նա պատասխանել է. «86 տարի է՝ Նրան ծառա-

1 Ըստ Տերտուղիանոսի՝ նրան ձեռնադրել է Յովհաննէս առաքեալը: Իգնատիոսի նահատակման ժամանակ (107 թ.) նա արդէն եպիսկոպոս էր:

2 Արեւմտեան Եկեղեցին նրա յիշատակը նշում է յունուարի 26-ին:

յում եմ, եւ Նա ոչնչով ինձ չի վնասել. ես ինչպէ՞ս կարող եմ հայհոյել իմ Թագաւորին, Որն ինձ փրկել է»: Եթէ ընդունենք, որ նա ծնուել է քրիստոնեայ ծնողներից, ինչը խիստ անհաւանական է, ապա այդ ժամանակ ընթանում էր նրա 86-րդ տարին. բայց եթէ նա չափահաս տարիքում է դարձել քրիստոնեայ, որն աւելի հաւանական է, ապա նրա՝ քրիստոնէութիւնն ընդունելուց յետոյ արդէն անցած պիտի լինէր 86 տարի:

2. Թուղթը: Իրենէոսը խօսում է թղթերի մասին, որ Պողիկարպոսն ուղարկել է հարեւան Եկեղեցիներին՝ պաշտպանելով նրանց կամ խրատելով ու քաջալերելով եղբայրներին: Այդ նամակներից առանձնակի կարեւորութիւն է ունեցել Մակեդոնիայի Փիլիպպէ քաղաքի քրիստոնեաներին ուղղուած թուղթը, որն Իրենէոսը բնորոշում է որպէս «հզօրագոյն», Յերոնիմոսը՝ «խիստ օգտակար», իսկ Փոտը՝ «խիստ խրատական, յստակ ու պարզ»: Այն բաղկացած է 14 գլխից, բայց յունարէն ձեռագրերն ունեն միայն Ա - Թ 2 հատուածը: Թ եւ ԺԳ գլուխները վկայակոչուած են Եւսեբիոսի «Եկեղեցական պատմութեան» մէջ (Գ 36), իսկ մնացեալ գլուխները (ԺԺԲ եւ ԺԴ) մեզ յայտնի են հին լատիներէն թարգմանութիւնից:

Իր այս նամակում Պողիկարպոսը՝ ա) խնդակցում է փիլիպեցիներին այն համակրութեան համար, որ նրանք դրսեւորեցին «սրբազան հանգոյցներով կապուածների հանդէպ», այսինքն՝ այն նահատակների, որոնց թւում, անկասկած, եղել է նաեւ Իգնատիոսը (գլ. Ա). բ) խորհուրդ է տալիս նրանց ծառայել Աստծուն երկիւղածութեամբ եւ ճշմարտութեամբ, խուսափելով չարիքներից, բարիք գործելով եւ դիմադրելով հերձուածողների կեղծ վարդապետութիւններին, որոնք ժխտում էին մարմնով յայտնուած Յիսուս Քրիստոսին (գլ. ԲԺ). գ) վշտով անդրադառնում է Փիլիպպէի երէց Վաղեսին, որը, լինելով արծաթասէր եւ ընչաքաղց, անարժան եղաւ հոգեւոր կոչման, եւ աղօթում է, որ նա վերադառնայ ուղիղ ճանապարհին (գլ. ԺԱ եւ ԺԲ). դ) ուղարկում է փիլիպեցիներին «Իգնատիոսի՝ մեզ գրած թուղթը եւ այլ թղթեր» եւ տեղեկութիւններ խնդրում Իգնատիոսի եւ նրա ընկերների նահատակութեան մասին (գլ. ԺԳ). եւ ե) խնդրում է Փրկչի շնորհը նրանց համար (գլ. ԺԴ): Զարմանալին այն է, որ թղթում ոչ մի տեղ չի յիշատակւում Փիլիպպէի եպիսկոպոսի կամ ընդհանրապէս եպիսկոպոսների մասին: Ե 3-ում յանձնարարւում է հնազանդ լինել «երէցներին եւ սարկաւագներին»:

Պողիկարպոսի հիմնական աղբիւրը Սուրբ Գիրքն է. օգտւում է նաեւ Կղեմէսի թղթից, որից բազմիցս բառացի վերցնում է հատուածներ՝ առանց յիշատակելու աղբիւրը: Այս թուղթը գրուել է Իգնատիոսի (որին նա անուանում է «երանելի») նահատակութիւնից ոչ շատ ուշ, հաւանաբար 108 եւ 110 թթ. միջեւ:

3. Պողիկարպոսի վկայաբանութիւնը: Վկայաբանութիւնը Զմիւռնիայի Եկեղեցու շրջաբերական թուղթն է՝ ուղղուած Փռիւգիայի Փիլեմելիոնի Եկեղեցուն եւ «ամբողջ երկրում գտնուող համայնքներին». այն նկարագրում է Պողիկարպոսի մարտիրոսական վախճանը: Այս վկայաբանութիւնը, որը ցարդ պահպանուել է հինգ ձեռագրերում ու Եւսեբիոսի գործերի մէջ եւ որը գրուած է եղել Պողիկարպոսի նահատակուելուց քիչ անց, համարւում է մինչեւ մեր օրերը պահպանուած հնագոյն վկայաբանութիւնը. սակայն Ի-ԻԲ գլուխները, հաւանաբար, յետագայի յաւելումներ են: Վկայաբանութիւնից տեղեկանում ենք, որ արդէն Բ դարի կէսերին նահատակի մահուան տարելիցին քրիստոնեաները հաւաքւում էին «ցնծութեամբ եւ ուրախութեամբ, ի յիշատակ նախկին նահատակների եւ ի վարժութիւն ու պատրաստութիւն ապագայ նահատակների» (գլ. ԺԸ), իսկ Պողիկարպոսի սուրբ մասունքները բնութագրւում են որպէս «թանկարժէք քարերից առաւել թանկ եւ առաւել փորձուած, քան ոսկին» (գլ. ԺԸ): Յատուկ տարբերութիւն է նկատւում Աստուածորդուն տրուող երկրպագութեան եւ «նահատակների՝ որպէս Տիրոջ աշակերտների եւ հետեւորդների, հանդէպ սիրոյ» միջեւ (գլ. ԺԸ): Դ գլխում ինքնակամ նահատակութեան գնալը բնութագրւում է որպէս գովասանքի ոչ արժանի, «քանզի Աւետարանն այդպէս չի ուսուցանում»: Պողիկարպոսի վկայաբանութիւնը եզրափակւում է ընդօրինակողների համառօտ յիշատակարաններով:

ՋՄԻՌՆԻԱՅԻ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԵՒ ՍՈՒՐԲ ՆԱՀԱՏԱԿ ՍՈՒՐԲ ՊՈՂԻԿԱՐՊՈՍԻ ՆԱՄԱԿԸ ՓԻԼԻՊԵՑԻՆԵՐԻՆ[3]

Պողիկարպոսը եւ նրա հետ երէցները[4]՝ Փիլիպպէում ապաստանած[5] Աստուծոյ Եկեղեցուն. թող ձեզ վրայ առատանան ողորմութիւնն ու խաղաղութիւնը՝ ամենակալ Աստծուց եւ մեր Փրկիչ Յիսուս Քրիստոսից[6]:

Գլուխ Ա

Ես մեծապէս խնդակցել եմ ձեզ[7] ի Տէր մեր Յիսուս Քրիստոս՝ այն բանի առթիւ, որ դուք ընդունեցիք ճշմարիտ սիրոյ[8] օրինակները[9] եւ ճանապարհեցիք, ինչպէս վայել էր ձեզ, սրբազան կապանքներով կապուածներին, որոնք պսակներ[10] են Աստուծոյ եւ մեր Տիրոջ ճշմարիտ ընտրեալների[11] համար: Նաեւ ա՛յն բանի համար, որ ձեր՝ ամենավաղ օրերից ի վեր[12] յայտնի[13] հաւատքի ամուր արմատները ցարդ

3 Ձեռագրերի մեծ մասում վերնագիրն այսպիսին է:

4 Կամ «ովքեր նրա հետ երէցներ են»:

5 Քրիստոնեաները պանդուխտ են այս երկրի վրայ: Տե՛ս Կղեմէս Հռոմէացի, Թուղթ առ Կորնթացիս:

6 Հմմտ. Ա Պետ. Ա 2, Յուդա 2:

7 Կարելի է համարել Փլպ. Բ 17-ի, Դ 10-ի արձագանքը:

8 Հմմտ. Ա Յովհ. Դ 16, նաեւ Իգնատիոս, Հռոմ. Է 2:

9 Թարգմանութիւնը երկբայական է: Ոմանք թարգմանում են «պատկերներ» եւ այդ անուան տակ հասկանում Իգնատիոսին եւ նրա ուղեկից բանտարկեալներին՝ այն մեկնաբանութեամբ, որ նահատակը Քրիստոսի «պատկերն» է, նմանակը, հետեւորդը: Իգնատիոսի ուղեկիցների մասին ոչինչ յայտնի չէ, բացի նրանց անուններից (Թ 1): Ոմանք էլ թարգմանում են՝ «հետեւեցիք ճշմարիտ սիրոյ օրինակին»՝ մերժելով առաջին մեկնաբանութիւնը:

10 Հմմտ. Իգնատիոս, Եփես. ԺԱ 2:

11 Հմմտ. Մատթ. ԻԴ 31, Յովհ. ԺԵ 16:

12 Բառացի՝ «նախնական ժամանակներից ի վեր», այսինքն՝ հաւատքի սերմերը ցանուելու ամենաառաջին օրերից: Տե՛ս Փլպ. Ա 5, Դ 15, Հմմտ. Գործք ԺԵ 7, ԻԱ 16:

13 Տե՛ս Հռոմ. Ա 8:

մնում եւ պտղաբերում են ի փառս[14] մեր Տէր Յիսուս Քրիստոսի, Որը մեր մեղքերի համար մահուան համբերեց[15], «Ում Աստուած յարութիւն տուեց՝ լուծարելով դժոխքի երկունքը»[16]: «Նրան չտեսած՝ սիրում էք եւ ուրախ էք անճառ ու փառաւորեալ խնդութեամբ»[17], ինչին շատերն են ցանկանում հասնել[18] իմանալով, որ «դուք չնորհով էք փրկուած եւ ոչ թէ գործերով»[19], այլ Աստուծոյ կամքով՝ Յիսուս Քրիստոսի միջոցով:

Գլուխ Բ

Ուստի, «գօտեպնդելով ձեր մէջքը»[20], «ծառայեցէք Աստծուն երկիւղածութեամբ»[21] եւ ճշմարտութեամբ՝ մի կողմ թողնելով սին զազ-

14 Թարգմանութիւններն այստեղ էականօրէն տարբերւում են: Կարելի է հասկանալ «պտղաբերում են ի Յիսուս Քրիստոս» իմաստով, որը ներդաշնակ է Պօղոսեան ու Իգնատիոսեան եզրաբանութեանը (տե՛ս Իգնատիոս, Մագն.): Սակայն Պողիկարպոսը կարող է նկատի ունենալ նաեւ, որ հաւատքը «պտղաբերում է Յիսուս Քրիստոսի մէջ»՝ Եփես. Դ 13-ի արձագանքով: Քրիստոնէական կեանքի նպատակը «Քրիստոսի մարմինը կերտելն» է, մինչեւ որ մենք «ձեռք բերենք Քրիստոսի կատարելութեան ամբողջութիւնը»: Շնորհներով աճելը նշանակում է «աճել Քրիստոսի մէջ»: Այնուամենայնիւ, հրատարակութիւնների մեծ մասն ունեն «ի փառս» կամ «ի պատիւ»:

15 Յունարէնում՝ «ով համբերեց գնալ մինչեւ մահ եւ հանդիպել նրան դէմ առ դէմ»:

16 Գործք Բ 24: Տե՛ս Սաղմ. ԺԷ 5, ՃԺԴ 3: Հմմտ. Իգնատիոս, Հռոմ. Զ 1: «Դժոխքի» փոխարէն երբեմն թարգմանում են նաեւ «գերեզման» կամ «մահ»:

17 Ա Պետ. Ա 8

18 Ոմանք թարգմանում են՝ «խնդութիւն, որը շատերը կը ցանկանային ճաշակել, եթէ նրանք համոզուած լինէին...»:

19 Եփես. Բ 5, 8, 9

20 Ա Պետ. Ա 13, Եփես. Զ 14, Հմմտ. Կղեմէս, Առ Կորնթացիս, Թ

21 Սաղմ. Բ 11

բախսութիւնն[22] ու չատերի մոլորութիւնը եւ «հաւատալով Նրան, Ով մեր Տէր Յիսուս Քրիստոսին յարութիւն տուեց մեռելներից եւ Նրան տուեց փառք»[23] ու գահ՝ Իր աջ կողմում, Ում[24] հնազանդ են բոլոր երկնայիններն ու երկրայինները[25], Ում ծառայում են բոլոր չնչաւորները[26], Ով գալու է դատելու ողջերին ու մեռածներին[27], Ում արիւնն Աստուած պահանջելու է Նրան չհաւատացողներից[28]: Նրան մեռելներից յարութիւն Տուողը յարութիւն կը տայ նաեւ մեզ[29], եթէ կատարենք Նրա կամքը, ընթանանք Նրա պատուիրանների համաձայն եւ սիրենք այն ամէնը, ինչ սիրել է Ինքը՝[30] հեռու մնալով ամէն անարդարութիւնից, ընչաքաղցութիւնից, արծաթասիրութիւնից[31], չարախօսութիւնից, սուտ վկայութիւնից, «չհատուցելով չարին չարով, կշտամբանքին՝ կշտամբանքով»[32], կամ բռունցքին՝ բռունցքով[33], կամ անէծքին՝ անէծքով: Այլ յիշենք Տիրոջ խօսքը, որ ուսուցանում է. «Մի՛

22 Ինչպէս որ ս. Պողոսն է զգուշացնում փիլիպեցիներին յուդայական ազդեցութիւններից (Փլպ. Գ 1-4), այնպէս էլ Պողիկարպոսն է զգուշացնում երեւակայական գիտութիւններով զբաղուելուց, մանրուքներով հետաքրքրուելուց, սերնդաբանական արձանագրութիւնների մասին անօգուտ մտահայեցողութիւնից, որոնք պատկանում են կամ իսրայէլական ընտանիքներին ու ռաբբիական առասպելներին ու կեղծումներին, կամ գնոստիկների էոններին, կամ էլ ի վերջոյ հեթանոսական դիցաբանութիւններին: Յաջորդ արտայայտութիւնը ցոյց է տալիս, որ փիլիպեցիների հաւատքի մաքրութիւնը վտանգուած էր: Այս գաղափարը կարող էր ձեւաւորուել որեւէ պարականոն գրքի ազդեցութեամբ: Հմմտ. Մատթ. ԻԴ 12, Բ Կոր. Բ 17: Ոմանք «մի կողմ թողնելու» փոխարէն թարգմանում են «ձեռք չտալ»՝ այն փաստարկութեամբ, որ որեւէ յստակ բան չկայ այն մասին, որ փիլիպեցիներն իրապէս տեղի էին տուել փորձութեանը:

23 Ա Պետ. Ա 21, հմմտ. Եփես. Ա 20, Եբր. Ը 1, տե՛ս նաեւ Կղեմէս, ԾԹ 2:

24 Այսինքն՝ Յիսուս Քրիստոսին:

25 Հմմտ. Ա Պետ. Գ 22, Փլպ. Բ 10, Գ 21, Ա Կոր. ԺԵ 28:

26 Հմմտ. Սաղմ. ՃԾ 6, տե՛ս նաեւ Ես. ՄԷ 16:

27 Հմմտ. Գործք Ժ 42, ԺԷ 31, Բ Տիմ. Դ 1, Ա Պետ. Դ 5:

28 Կամ՝ «չհնազանդուողներից»:

29 Հմմտ. Ա Կոր. Զ 14, Բ Կոր. Դ 14, Հռոմ. Ը 11:

30 Տե՛ս Կղեմէս, ԼԳ 1, Իգնատիոս, Եփես. ԺԴ:

31 Հեղինակն ընթերցողին նախապատրաստում է Նրան, ինչ ասելու է Վաղեսի ու նրա կնոջ մասին ԺԱ գլխում:

32 Ա Պետ. Գ 9

33 Այս արտայայտութիւնն ընդունուում է որպէս Փիլիպպէի Եկեղեցում տեղի ունեցած անկարգութեան արձագանք:

դատէք, որպէսզի չդատուէք[34]. ներեցէ՛ք, եւ կը ներուի ձեզ[35], ողորմա՛ծ եղէք, որպէսզի ողորմութիւն գտնէք[36]. ինչ չափով որ չափէք, նոյն չափով պիտի չափուի ձեզ[37]. եւ երանի աղքատներին[38] ու արդարութեան համար հալածուածներին, վասնզի նրանցն է Աստուծոյ արքայութիւնը»[39]:

Գլուխ Գ

Եղբայրնե՛ր, արդարութեան[40] մասին այս ամէնը ես գրում եմ ձեզ ոչ թէ իմ անձնական յաւակնութեամբ, այլ որովհետեւ դուք ինքներդ ինձ մղեցիք: Քանզի ո՛չ ես, ո՛չ էլ ինձ նման որեւէ մէկը չի կարող հասնել երանելի ու փառաւորեալ Պողոսի իմաստութեանը[41], ով, անձամբ գտնուելով ձեր մէջ, այդ ժամանակներում ապրած մարդկանց եռանդուն ու վստահ[42] քարոզեց ճշմարտութեան խօսքը եւ ձեր մօտից մեկնելուց յետոյ եւս նամակներ[43] գրեց ձեզ. եթէ դուք խորամուխ լինէք դրանց մէջ, ապա կը կարողանաք խրատներ ստանալ ձեզ տրուած

34 Մատթ. Է 1

35 Մատթ. Զ 12, 14, Ղուկ. Զ 37

36 Ղուկ. Զ 36

37 Մատթ. Է 2, Ղուկ. Զ 38, Կղեմէս, ԺԳ 2

38 Ոմանք թարգմանում են «աղքատ հոգիներին»:

39 Մատթ. Ե 3, 10, Ղուկ. Զ 20

40 Յունարէն δικαιοσύνη բառը, որն ունի բազմաթիւ նրբերանգներ, դարեր շարունակ թարգմանուել է որպէս «արդարութիւն»: Վերջին շրջանի թարգմանիչները, սակայն, համաձայն չեն բառի իմաստի նման սահմանափակմանը եւ տարբեր թարգմանութիւններ են առաջարկում, ինչպէս օրինակ՝ «սուրբ կենցաղավարութիւն»: Հմմտ. Իգնատիոս, Եփես. Գ 1:

41 Հմմտ. Բ Պետ. Գ 15:

42 Տե՛ս Գործք ԺԶ 12: Βέβαιος բառը նշանակում է ամուր, արագ, հաստատուն, անփոփոխ, վաւերական, անբեկանելի, ուստի թարգմանւում է նաեւ «հեղինակաւոր»: Տե՛ս Իգնատիոս, Զմիւռն. Ը 1:

43 Ս. Պողոսը փիլիպեցիներին ուղղել է միայն մէկ նամակ. այս պատճառով որոշ թարգմանիչներ բնագրային յոգնակին վերածում են եզակիի: Սակայն հնարաւոր է, որ Պողիկարպոսն ընդհանրապէս խօսում է ս. Պողոսի նամակների մասին:

հաւատքի մէջ[44], «որը մեր բոլորիս մայրն է»[45], որին յաջորդում է յոյսը, եւ նախորդում է սէրը Աստուծոյ, Քրիստոսի ու մերձաւորի հանդէպ[46]: Քանզի եթէ մարդ այս ամէնի մէջ է[47], ապա նա կատարել է արդարութեան պատուիրանը[48], որովհետեւ սէր ունեցողը հեռու է ամէն մեղքից:

Գլուխ Դ

«Բոլոր չարիքների արմատն արծաթասիրութիւնն է»[49]: Արդ, իմանալով, որ «ոչինչ չենք բերել աշխարհ եւ ոչինչ չունենք տանելու աշխարհից»[50], զինուենք արդարութեան զէնքերով[51] եւ նախ ինքներս մեզ սովորեցնենք քայլել Տիրոջ պատուիրանի մէջ[52]: Այնուհետեւ[53] նաեւ ձեր կանանց սովորեցրէք հաստատուն մնալ իրենց տրուած հաւատքի, սիրոյ ու մաքրութեան մէջ, սիրել ամենայն անկեղծութեամբ իրենց ամուսիններին եւ ամենայն ողջախոհութեամբ՝ հաւասարապէս բոլոր միւսներին, եւ զաւակներին դաստիարակել Աստուծոյ երկիւղով: Այրիներին սովորեցրէք խոհեմութեամբ վերաբերուել Տիրոջ հաւատքին[54], մշտապէս աղօթել բոլորի համար[55], հեռու մնալ ամէն տեսակ զրպարտութիւնից, չարախօսութիւնից, սուտ վկայութիւնից, արծաթասիրութիւնից եւ ամէն չարից. թող իմանան, որ իրենք Աստուծոյ սեղան[56] են, եւ որ Նա ամենատես է, եւ ոչինչ չի կարող Նրանից ծածուկ մնալ, ո՛չ միտք, ո՛չ մտադրութիւն եւ ո՛չ էլ սրտի ծալքերը[57]:

44 Որոշ թարգմանութիւններ տալիս են՝ «կը կարողանաք կառուցուել ձեզ տրուած հաւատքի մէջ»: Քանի որ եկեղեցու նպատակը «Քրիստոսի մարմինը կառուցելն» է (Եփես. Դ 12), ուստի քրիստոնեայի հոգեւոր աճը կարելի է նկարագրել որպէս «կառուցուել»: Հմմտ. այս արտայայտութեան մշակումը Իգնատիոս, Եփես. Թ 1:

45 Հմմտ. Գաղ. Դ 26, որտեղ խօսւում է «վերին Երուսաղէմի» մասին:

46 Այստեղ որոշ հրատարակութիւններ անհամաձայնութիւն են գտնում: Եթէ հաւատքը «ամէն ինչի մայրն» է, ապա սէրը չի կարող նրան նախորդել:

47 Այսինքն՝ հաւատքի, յոյսի եւ սիրոյ:

48 Տե՛ս Մատթ. ԺԹ 17, ԻԲ 38, Յովհ. ԺԵ 10, Գաղ. Ե 14, Ա Յովհ. Բ 5:

49 Հմմտ. Ա Տիմ. Զ 10: «Արմատ» թարգմանուած բառն ունի նաեւ «էութեան» կամ «բովանդակութեան» իմաստ: Այս նոյն բառն է, որ Մարկ. Ա 1-ում թարգմանուած է «սկիզբ»:

50 Ա Տիմ. Զ 7, Յոբ Ա 21

51 Հմմտ. Հռոմ. ԺԳ 12, Եփես. Զ 11, 13, տե՛ս նաեւ Հռոմ. Զ 13, Բ Կոր. Զ 7:

52 Արտայայտութիւնը տարածուած էր ե՛ւ յոյների, ե՛ւ հրեաների մօտ: Տե՛ս Դիդախէ, Ա 1:

53 Կեանքի որոշակի իրավիճակներին պատշաճ յետագայ ցուցումները կերպաւորուած են ս. Պօղոսի նմանատիպ յորդորների վրայ (Եփես. Ե 21, Կող. Գ 18): Հմմտ. Կղեմէս, Ա 3, ԻԱ 6-8:

Գլուխ Ե

Արդ, իմանալով, որ «Աստուած չի ծաղրւում»[58], մենք պարտաւոր ենք արժանի լինել Նրա պատուիրանին ու փառքին: Նոյնպէս եւ սարկաւագները պէտք է անբասիր լինեն Նրա արդարութեան առջեւ՝ որպէս Աստուծոյ եւ Քրիստոսի եւ ոչ թէ մարդկանց սպասաւորներ[59]. չլինեն զրպարտիչ, կեղծաւոր[60], արծաթասէր, այլ լինեն ամէն ինչում ժուժկալ, բարեսիրտ, ջանասէր, ընթանան Տիրոջ ճշմարտութեամբ, Որը սպասաւորել է ամէնքին[61]: Եթէ Նրան գոհացնենք այս դարում, կը ստանանք նաեւ ապագայ դարը, ինչպէս որ Նա խոստացել է մեզ յարութիւն տալ մեռելներից. եւ եթէ Նրան արժանի կենցաղավարենք ու հաւատանք, ապա Նրա հետ էլ թագաւորելու ենք[62]: Նոյնպէս եւ երիտասարդները պէտք է անբասիր լինեն ամէն ինչում[63], նամանաւանդ

54 Նախնական եկեղեցում այրիները յատուկ խնամքի ու յատուկ պատիւների էին արժանի: Որոշակի քննութիւնից յետոյ նրանք կարող էին ծառայել որպէս սարկաւագուհիներ: «Խոհեմութիւն» թարգմանուած յունարէն բառը նշանակում է «զգաստ, զուսպ, լրջամիտ, չափաւոր, համեստ, ոչ մոլեռանդ»: Այս համատեքստի մէջ բացառուած չէ նաեւ սեռական ժուժկալութիւնը, ուստի երբեմն թարգմանւում է նաեւ «ողջախոհութիւն»:

55 Հմմտ. Ա Թես. Ե 17:

56 Ոմանք այստեղ յոգնակի թիւ են օգտագործում: Պողիկարպոսն այստեղ գեղեցիկ արտայայտութիւն է կերտում: Տե՛ս Կղեմէս, ԽԱ 2:

57 Ա Կոր. ԺԴ 25

58 Գաղ. Զ 7

59 Տե՛ս Իգնատիոս, Զմիւռն. Ժ 1: Պէտք է նշել διάκονος բառի նեղ ու լայն իմաստները, երբ մի քիչ յետոյ օգտագործուելու է Քրիստոսի համար: Ոմանք թարգմանում են «Աստուծոյ սպասաւորներ ի Քրիստոս»:

60 Հմմտ. Ա Տիմ. Գ 8:

61 Հմմտ. Մատթ. Ի 28:

62 Հմմտ. Հռոմ. Ը 17, Ա Տիմ. Բ 12:

63 Երիտասարդներին վերաբերող յատուկ ցուցումները տե՛ս Ա Պետ. Ե 5, Տիտ. Բ 6:

մտածեն ողջախոհութեան մասին եւ իրենց զսպեն ամէն տեսակ չարիքից: Քանզի բարի՛ է աշխարհի ցանկութիւններից կտրուելը[64], որովհետեւ ամէն «ցանկութիւն հոգու դէմ է կռւում»[65], եւ «Աստուծոյ արքայութիւնը չեն ժառանգելու ո՛չ պոռնիկները, ո՛չ հեշտասէրները, ո՛չ արուամոլները»[66], ո՛չ էլ անվայել արարքներ գործողները: Ուստի պէտք է այս ամէնից հեռու մնալ եւ հնազանդուել երէցներին ու սարկաւագներին, ինչպէս Աստծուն եւ Քրիստոսին. կոյսերը պէտք է ապրեն անեղծ եւ անբիծ խղճով[67]:

Գլուխ Զ

Եւ երէցները պէտք է լինեն բարեգութ, բոլորի հանդէպ ողորմած, պէտք է դարձի բերեն մոլորեալներին[68], այցելեն բոլոր հիւանդներին[69], չանտեսեն այրիներին[70], որբերին կամ աղքատին, «մշտապէս բարու մասին հոգան Աստուծոյ եւ մարդկանց առաջ»[71], հեռու մնան ամէն տեսակ զայրոյթից, կեղծաւորութիւնից, անարդար դատաստանից, հրաժարուեն արծաթասիրութիւնից, դիւրահաւատ չլինեն չարախօսութիւնների հանդէպ, դաժան չլինեն դատելիս՝ իմանալով, որ մենք բոլորս մեղապարտ ենք: Արդ, եթէ մենք աղօթում ենք Տիրոջը, որ մեզ ների, մենք նոյնպէս պարտաւոր ենք ներել[72]. քանզի մենք Տիրոջ եւ Աստուծոյ աչքերի առջեւ ենք, եւ «բոլորս կանգնելու ենք Քրիստոսի ատեանի առաջ, եւ ամէն մէկն իր համար հաշիւ է տալու»[73]: Ուրեմն, մենք

64 Ոմանք թարգմանում են «երեւան չգալը»:
65 Հմմտ. Գաղ. Ե 17, Ա Պետ. Բ 11:
66 Ա Կոր. Զ 9-10
67 Հմմտ. Գործք ԻԳ 1, Ա Տիմ. Գ 9, Բ Տիմ. Ա 3:
68 Եզեկ. ԼԴ 4-ի լոյսի տակ ոմանք այստեղ ներմուծում են «ոչխարներ» բառը: Սակայն յունարէն չէզոք սեռի գոյականը կարող է վերաբերել անձերին, ինչպէս Յովհ. Զ 37-ում (Հմմտ. նաեւ Մատթ. Ա 20, Ղուկ. Ա 35, ԺԹ 10): Կասկած չկայ, որ խօսքն այստեղ վերաբերում է Վաղեսին, նրա կնոջը եւ նրանց հետեւորդներին:
69 Հմմտ. Մատթ. Իե 26, 43:
70 Հմմտ. Յակ. Ա 27, Իգնատիոս, Զմիւռն. Զ 2, Պող. Դ 1:
71 Հմմտ. Հռոմ. ԺԲ 17, Բ Կոր. Ը 21:
72 Հմմտ. Մատթ. Զ 12-14:
73 Հմմտ. Հռոմ. ԺԴ 10-12, Բ Կոր. Ե 10:

երկիւղածութեամբ ու բարեպաշտութեամբ ծառայենք Նրան[74] այնպէս, ինչպէս պատուիրել է Նա եւ պատուիրել են մեզ աւետարանած առաքեալներն ու մեր Տիրոջ գալուստը կանխաւ քարոզած մարգարէները: Նախանձախնդիր լինենք բարու մէջ, հեռու մնանք գայթակղութիւններից[75] եւ կեղծ եղբայրներից ու կեղծաւորութեամբ Աստուծոյ անունը կրողներից[76], ովքեր մոլորեցնում են պարզամիտներին:

Գլուխ Է

Քանզի «ամէն ոք, ով չի խոստովանում, թէ Յիսուս Քրիստոս մարմնով յայտնուեց, նեռ է»[77]. եւ նա, ով չի ընդունում խաչի վկայութիւնը[78], սատանայից է[79]. եւ նա, ով Տիրոջ խօսքերը[80] մեկնաբանում է իր կրքերի համաձայն եւ ասում, թէ ո՛չ յարութիւն կայ եւ ո՛չ էլ դատաստան, նա սատանայի անդրանիկ որդին է[81]: Այդ պատճառով էլ, հրաժարուելով շատերի սին եւ կեղծ վարդապետութիւններից, վերադառնանք սկզբնապէս մեզ աւանդուած խօսքին[82] «արթուն լինենք աղօթքների մէջ»[83] եւ հաստատուն՝ պահեցողութեան մէջ, աղօթքնե-

74 Հմմտ. Սաղմ. Բ 11, Եբր. ԺԲ 28:
75 Երբեմն թարգմանւում է «գայթակղիչներից». Հմմտ. Մատթ. ԺԳ 41, ԺԶ 23, Ա Կոր. Ա 23: Պողիկարպոսն ամենայն հաւանականութեամբ նկատի ունի երեւութականներին ու Մարկիոնին:
76 Տե՛ս Իգնատիոս, Եփես. Է 1:
77 Ա Յովհ. Դ 3, Հմմտ. Ա Յովհ. Բ 18, 22, Բ Յովհ. 7, Բ Թես. Բ 5:
78 Այստեղ «վկայութիւն» բառն օգտագործուած է իր հիմնական՝ «մարտիրոսութիւն» իմաստով, ուստի ոմանք թարգմանում են «խաչի վրայ Նրա տառապանքը»: Հմմտ. Յովհ. ԺԹ 34-35, Ա Յովհ. Ե 6-8: Պողիկարպոսի համար խաչը մի վկայութիւն է ընդդէմ երեւութականների: Տե՛ս Իգնատիոս, Եփես. Թ 1, ԺԸ 1, Թրալլ. ԺԱ 2, Ֆիլադ. Ը 2, Զմիւռն. Ա 1:
79 Հմմտ. Յովհ. Ը 44, Ա Յովհ. Գ 8:
80 Երբեմն թարգմանւում է՝ «Աւետարանը»:
81 Ակնարկուած հերետիկոսութիւնն ըստ երեւոյթին երեւութականութիւնն է, որը գոյութիւն ունէր արդէն իսկ առաքեալների օրօք եւ այս կամ այն ձեւով ներկայ էր բազմաթիւ գնոստիկական աղանդների մէջ: Այն մերժում էր Քրիստոսի մարդկային բնութիւնը, ուստի եւ ընդդիմանում էր Փրկագործութեան վարդապետութեանը: Այն նախնական եկեղեցու համար վտանգաւոր թշնամի էր, որի մասին յիշուած է Իգնատիոսի նամակներում:
82 Հմմտ. Յուդա 3:
83 Ա Պետ. Դ 7

րում ամենատես Աստծուց խնդրենք «չտանել մեզ դէպի փորձութիւն»[84], ինչպէս ասել է Տէրը. «Հոգին յօժար է, բայց մարմինը՝ տկար»[85]:

Գլուխ Ը

Արդ, եկէք անընդհատ կառչենք մեր յոյսին[86] եւ մեր ճշմարտութեան առհաւատչեային[87], որ Յիսուս Քրիստոսն է, «Ով մեր մեղքերն իր մարմնով բարձրացրեց խաչափայտի վրայ»[88], «Ով մեղք չգործեց, եւ Նրա բերանում նենգութիւն չգտնուեց»[89], այլ ամէն ինչ հանդուրժեց մեզ համար, որպէսզի մենք ապրենք Իր մէջ[90]: Ուրեմն, համբերութեամբ նմանուենք Նրան[91]. եւ եթէ տառապենք[92] Նրա անուան համար, փառաբանենք Նրան[93]: Քանզի Նա Իր անձով այդպիսի օրինակ տուեց մեզ[94], եւ մենք հաւատացինք դրան:

Գլուխ Թ

Ձեզ բոլորիդ աղաչում եմ հնազանդուել արդարութեան խօսքին[95] եւ դրսեւորել ամենայն համբերութիւն, ինչպիսինին դուք ականատես

84 *Հմմտ. Մատթ. Զ 13, ԻԶ 41: Սա Տէրունական աղօթքից երկրորդ մէջբերումն է:*
85 *Մատթ. ԻԶ 41, Մարկ. ԺԴ 38*
86 *Ա Տիմ. Ա 1*
87 *Այս եզրը սովորաբար վերագրւում է Սուրբ Հոգուն. տե՛ս Բ Կոր. Ա 22, Ե 5, Եփես. Ա 14: Այն երբեմն թարգմանւում է «երաշխաւոր», «գրաւական»:*
88 *Ա Պետ. Բ 24*
89 *Ա Պետ. Բ 22, տե՛ս նաեւ Իգնատիոս, Զմիւռն, Բ:*
90 *Հմմտ. Ա Յովհ. Դ 9:*
91 *Հմմտ. Ա Պետ. Բ 21:*
92 *Հմմտ. Գործք Ե 41, Ա Պետ. Դ 16:*
93 *Ոմանք թարգմանում են՝ «մենք փառաբանում ենք Նրան»:*
94 *Հմմտ. Ա Պետ. Բ 21:*
95 *Պողիկարպոսն այժմ ցոյց է տալիս, որ քրիստոնեայի ստացած «արդարութեան խօսքը» նահատակութեանը պատրաստ գտնուելն է: Նման արտայայտութիւն կարելի է գտնել նաեւ Եբր. Ե 13-ում, որտեղ ս. Պօղոսը խօսում է «կաթնակեր մանկանց» մասին, ովքեր չեն կարող ընդունել «արդարութեան խօսքը»: «Հնազանդուել» թարգմանուած յունարէն բառն իր մէջ ներառում է անպայմանաւոր հնազանդութիւն, ինչպէս զինուորն է հնազանդւում իր հրամանատարին: Ուստի այն կիրառելի է նահատակութեան մասին խօսելիս:*

էք եղել ոչ միայն երանելի Իգնատիոսի, Զոսիմոսի եւ Հռուփոսի[96], այլեւ ձեր իսկ համայնքի[97] անդամների, ինչպէս եւ հէնց իր՝ Պօղոսի եւ ուրիշ առաքեալների մօտ: Վստահ եղէք, որ սրանք ամէնքը «չեն աշխատել իզուր»[98], այլ հաւատքով ու ճշմարտութեամբ, եւ գտնւում են իրենց արժանի տեղում[99] Տիրոջ մօտ, Ում հետ եւ չարչարանքներ կրեցին: Քանզի նրանք ներկայ դարը չսիրեցին[100], այլ Նրան, Ով մեզ համար մեռաւ եւ Աստուծոյ ձեռքով մեզ համար յարութիւն առաւ[101]:[102]

Գլուխ Ժ

Ուրեմն, հաստատ մնացէք այս ամէնի մէջ եւ հետեւեցէք Տիրոջ օրինակին. հաւատքի մէջ հաստատ ու անսասան եղէք, եղբայրութեան սիրահար՝ սիրելով իրար[103], ճշմարտութեան մէջ՝ միասնական, միմեանց ցոյց տուէք[104] Տիրոջ խոնարհութիւնը[105] եւ ոչ ոքի մի՛ արհամարհէք: Եթէ կարող էք բարեգործութիւն անել, մի՛ յետաձգէք[106], «քանզի ողորմութիւնը փրկում է մահից»[107]: Բոլորդ փոխադարձաբար զիջէք իրար[108], որպէսզի «ձեր վարքը բարի լինի հեթանոսների մէջ»[109], եւ ձեր բարի գործերի պատճառով դուք գովեստի արժանանաք[110], եւ Տէրը ձեր պատ-

96 *Հռոմէական վկայաբանութեան մէջ նշւում է, որ Փիլիպպէում դեկտեմբերի 10-ին նշւում է սուրբ նահատակներ Հռուփոսի ու Զոսիմոսի տօնը:*
97 *Հմմտ. Փլպ. Ա 7, 28-30:*
98 *Հմմտ. Փլպ. Բ 16, Գաղ. Բ 2: Յունարէն ἔδραμον բառը յուշում է, որ Պողիկարպոսն այս նամակը գրելիս արդէն գիտէր Իգնատիոսի նահատակութեան մասին:*
99 *Տե՛ս Կղեմէս, Ե 4, 7:*
100 *Հմմտ. Բ Տիմ. Դ 10:*
101 *Հմմտ. Բ Կոր. Ե 15, Ա Թես. Դ 14, Իգնատիոս, Հռոմ. Զ 1:*
102 *Այստեղ աւարտւում է յունարէն տեքստը: Նամակի յաջորդ գլուխները պահպանուել են հին լատիներէն թարգմանութեամբ:*
103 *Զանազան հատուածների մի համադրում՝ Ա Կոր. ԺԵ 58, Կող. Ա 23, Հռոմ. ԺԲ 10, ԺԳ 8, Ա Պետ. Բ 17, Յովհ. ԺԳ 34, ԺԵ 12, 17:*
104 *Հմմտ. Հռոմ. ԺԲ 10:*
105 *Հմմտ. Բ Կոր. Ժ 1:*
106 *Հմմտ. Առակ. Գ 28:*
107 *Հմմտ. Տովբ. Դ 10, ԺԲ 9:*
108 *Հմմտ. Եփես. Ե 21, Ա Պետ. Ե 5:*
109 *Հմմտ. Ա Պետ. Բ 12:*
110 *Հմմտ. Մատթ. Ե 16:*

ճառով չհայհոյուի: «Վա՛յ նրան, ում պատճառով հայհոյւում է Տիրոջ անունը»[111]: Ուրեմն, ամէնքին ուսուցանէք ողջախոհութիւն, որով եւ ապրում էք դուք[112]:

Գլուխ ԺԱ

Ես խիստ վշտացայ Վաղեսի համար[113], ով մի ժամանակ ձեր երէցն էր, քանզի նա մոռացել է իրեն տրուած պաշտօնը: Ուստի ես աղաչում եմ ձեզ՝ հեռու մնացէք արծաթասիրութիւնից եւ եղէք մաքուր ու ճշմարտասէր[114]: «Հեռու մնացէք ամէն չարից»[115]: Քանզի նա, ով այս բաներում չի կարող իրեն կառավարել, ինչպէ՞ս կարող է այդ մասին ուրիշներին խորհուրդներ տալ[116]: Եթէ մէկը հեռու չի մնում արծաթասիրութիւնից, նա իրեն պղծում է կռապաշտութեամբ[117] եւ պիտի դատուի հեթանոսների հետ, ովքեր անգիտանում են Տիրոջ դատաստանը[118]: «Կամ չգիտե՞նք, թէ սրբերն են դատելու աշխարհը»[119], ինչպէս Պօղոսն է սովորեցնում: Ես ոչինչ չտեսայ եւ ոչինչ չլսեցի այս ամէնի մասին ձեր մէջ, որոնց մէջ գործել է երանելի Պօղոսը, ովքեր եւ յիշատակւում են նրա նամակի սկզբում[120]: Քանզի նա գովում էր ձեզ

111 Հմմտ. Ես. ԾԲ: «Վայն» այստեղ ողբի կամ ցաւի արտայայտութիւն է, ինչպէս Ա Կոր. Թ 16-ում, եւ ոչ թէ անէծք, ինչպէս Յայտ. Թ 12-ում եւ ԺԱ 14-ում:

112 Ոմանք սա հասկանում են հրամայական իմաստով՝ «դուք պէտք է ապրէք»:

113 Հաւանաբար Վաղեսն ու իր կինը մեղաւոր էին դրամական որոշակի գործումների մէջ, ինչպէս Անանիան ու Սափիրան:

114 «Արծաթասիրութեան» նշումը ենթադրել է տալիս, որ Վաղեսի բուն մեղքն ընչաքաղցութիւնն է եղել: Սակայն յաջորդ հաստատումներն այնքան էլ չեն ներդաշնակւում առաջինի հետ, եւ ոմանք ենթադրում են, որ «մաքուր» արտայայտութեան ետեւում թաքնուած է Վաղեսի անմաքուր կենցաղը:

115 Ա Թես. Ե 22

116 Հմմտ. Ա Տիմ. Գ 5:

117 Հմմտ. Եփես. Ե 5, նաեւ Կող. Գ 5: Կռապաշտութիւնը Հին Կտակարանում (Եզեկ. ԺԶ 20) դատապարտւում է որպէս «պոռնկութիւն»:

118 Որոշ թարգմանութիւններում այս նախադասութիւնը հարցական է՝ «ովքե՞ր են անգիտանում Տիրոջ դատաստանը»:

119 Ա Կոր. Զ 2, հմմտ. Երեմ. Ե 4:

120 Այստեղ տեքստն այնքան էլ յստակ չէ: Ոմանք հասկանում են Բ Կոր. Գ 2-ի լոյսի տակ: Սակայն աւելի տարածուած է «յիշատակելու» փոխարէն «գովելու» տարբերակը, քանզի ս. Պօղոսը Փլպ. Ա 3-Զ-ում գովաբանում է փիլիպեցիներին:

բոլոր Եկեղեցիներում[121], որոնք միայն այդ ժամանակ էին ճանաչել Աստծուն, իսկ մենք տակաւին Նրան չէինք ճանաչել: Այսպէս, եղբայրնե՛ր, ես շատ եմ ցաւում նրա՝ Վաղեսի ու նրա կնոջ համար. թող Աստուած նրանց ճշմարիտ ապաշխարութիւն շնորհի[122]: Ուրեմն, դուք եւս այս հարցում ողջամիտ եղէք[123] «եւ նրանց թշնամի մի՛ համարէք»[124], այլ ջանացէք ուղղել նրանց՝ որպէս համայնքի տառապած[125] ու մոլորուած անդամների, որպէսզի փրկէք ձեր ամբողջական մարմինը[126]: Քանզի այդպէս անելով՝ դուք ամրապնդում էք ինքներդ ձեզ[127]:

Գլուխ ԺԲ

Ես վստահ եմ, որ դուք լաւ էք իւրացրել Սուրբ Գիրքը[128], եւ Նրանում ոչ մի բան ձեզ անյայտ չէ. իսկ ես այդ բանին չեմ հասել[129]: Սակայն Գրքում ասուած է. «Բարկացէք, բայց մի՛ մեղանչէք»[130], եւ

121 Հմմտ. Բ Թես. Ա 4: Զմիւռնացիները քրիստոնեայ են դարձել փիլիպեցիների դարձից յետոյ:

122 Հմմտ. Բ Տիմ. Բ 25:

123 Հմմտ. Կղեմէս, ԾԶ 1, ԾԷ 1, նաեւ Իգնատիոս, Եփես. Ժ 1, 2:

124 Հմմտ. Բ Թես. Գ 15:

125 Հմմտ. Գործք ԻԶ 23, Իգնատիոս, Եփես. Է 2, Պող. Գ 2:

126 Հմմտ. Ա Կոր. ԺԲ 26, Կղեմէս, ԼԸ 1, ԾԹ 2:

127 Եկեղեցին որպէս «Քրիստոսի մարմին» (Եփես. Ա 23) կենդանի մարմին է: Նրա նպատակը Քրիստոսի հետ այս խորհրդական միութիւնը «կառուցելն» է՝ ուսուցանելով անդամներին (Ա Կոր. ԺԴ 4) եւ նրանց մէջ Քրիստոսի պատկերը ձեւաւորելով (Գաղ. Դ 19): Այս մարմնի մէջ հիւանդ անդամներ չպէտք է լինեն, եւ ոչ մէկը չպէտք է տառապի կամ դուրս շպրտուի (Յովհ. ԺԵ 2, 6): Բացի առողջ լինելուց, Եկեղեցին պէտք է պահպանի իր քանակը. ոչ մէկը չպէտք է կորչի, եւ նրա հօտից դուրս ուրիշներ պէտք է միանան: Սրանք տարածուած գաղափարներ են հայրերի մօտ: Պողիկարպոսն աւելի հեռու է գնում. նա ասում է՝ մոլորուած անդամներին ուղղելով եւ նոր անդամներ ընդունելով «դուք ամրապնդում էք ինքներդ ձեզ»: Սա յետագայում դառնալու էր Եկեղեցու սկզբունքներից մէկը: Առաջինները զբաղուած են դրսի աշխարհով, բայց խնամք են տանում իրենց ներքին աճին. վերջինները զբաղուած են ներքին մարդու ձեւաւորմամբ, բայց այսպիսով ազդում են արտաքին աշխարհի վրայ: Հմմտ. Ղուկ. Ժ 42:

128 Հմմտ. Կղեմէս, ԾԳ 1, Իգնատիոս, Եփես. ԺԴ 1:

129 Ոմանք թարգմանում են՝ «Սակայն ներկայումս ես չեմ հասել այն բանին, որ կատարեմ գրուածը»:

130 Սաղմ. Դ 5

«Արեւը թող մայր չմտնի ձեր բարկութեան վրայ»[131]: Երանի նրան, ով յիշում է այս[132], որը եւ, ես համոզուած եմ, դուք անում էք: Թող Աստուած եւ մեր Տէր Յիսուս Քրիստոսի Հայրը, եւ Ինքը՝ յաւիտենական Քահանայապետը[133] Աստուծոյ Որդի Յիսուս Քրիստոս, ամրապնդեն ձեզ հաւատքի ու ճշմարտութեան, ամենայն հեզութեան ու հանդարտութեան, համբերութեան ու երկայնմտութեան, հանդուրժողութեան ու մաքրութեան մէջ: Եւ թող ձեզ մաս եւ բաժին յատկացնեն Աստուծոյ սրբերի շարքում[134], եւ ձեզ հետ միասին նաեւ մեզ ու ամէնքին, ովքեր երկնքի տակ են եւ կը հաւատան[135] մեր Տէր Յիսուս Քրիստոսին եւ Նրա Հօրը, Ով Նրան յարութիւն տուեց մեռելներից[136]: Աղօթեցէք բոլոր սրբերի համար[137]: Աղօթեցէք նաեւ թագաւորների, իշխանութիւնների ու իշխանների[138] եւ նրանց համար, ովքեր հալածում եւ ատում են ձեզ[139], ինչպէս նաեւ խաչի թշնամիների համար[140], որպէսզի ձեր հաւատքի պտուղը յայտնի լինի ամէնքին[141], եւ որպէսզի դուք կատարեալ լինէք Նրա մէջ[142]:

Գլուխ ԺԳ

Դուք եւ Իգնատիոսն ինձ գրել էիք[143], որ եթէ որեւէ մէկն Ասորիք մեկնի[144], թող իր հետ վերցնի նաեւ ձեր նամակները[145]: Ես այդ կը կատարեմ, եթէ յարմար պահ գտնեմ՝ կա՛մ ինքս, եւ կա՛մ նա, ում ես

131 Եփես. Դ 26
132 Ոմանք թարգմանում են՝ «հաւատում է սրան»:
133 Հմմտ. Եբր. Զ 20, Է 3:
134 Հմմտ. Գործք Ը 21, ԻԶ 18, Կող. Ա 12:
135 Հմմտ. Ա Տիմ. Ա 16:
136 Հմմտ. Գաղ. Ա 1, Կող. Բ 12, Ա Պետ. Ա 21:
137 Այսինքն՝ քրիստոնեաների: Հմմտ. Եփես. Զ 18, Ա Տիմ. Բ 1:
138 Հմմտ. Ա Տիմ. Բ 2:
139 Հմմտ. Մատթ. Ե 44, Ղուկ. Զ 27, Դիդախէ Ա 3:
140 Հմմտ. Փլպ. Գ 18:
141 Հմմտ. Յովհ. ԺԵ 16, Ա Տիմ. Դ 15, Մատթ. Ե 16:
142 Հմմտ. Կող. Ա 28, Բ 10, Յակ. Ա 4, Մատթ. Ե 48:
143 Հմմտ. Իգնատիոս, Ֆիլադ. Ժ 1, Զմիւռն. ԺԱ 2, Պող. Է 2:
144 Ասիական եկեղեցիները միմեանց կապուած էին հոգեւոր ամուր կապերով: Հմմտ. Ա Պետ. Ե 9:
145 Կամ՝ «նամակը»:

կ՚ուղարկեմ, որպէսզի նաեւ ձեր դեսպանը լինի: Իգնատիոսի նամակները[146], որոնք ինքն ուղարկել էր մեզ, եւ միւսները, որքան որ կային մեզ մօտ, ուղարկել ենք ձեզ, ինչպէս պատուիրել էիք: Դրանք կցուած են այս նամակին. դուք դրանցից կարող էք մեծապէս օգուտ ստանալ: Քանզի դրանք բովանդակում են հաւատք, համբերութիւն եւ յորդոր ի Տէր մեր[147]: Այն, ինչ առաւել ստոյգ կ՚իմանաք Իգնատիոսի եւ նրանց մասին, ովքեր նրա հետ են[148], յայտնեցէ՛ք մեզ:

Գլուխ ԺԴ

Այս ամէնը գրեցի ձեզ Կրեշչենսի միջոցով[149], ում անցեալում յանձնարարել եմ ձեզ եւ այժմ էլ յանձնարարում եմ: Քանզի նա մեր մէջ իրեն անբասիր պահեց, համոզուած եմ, որ ձեր մէջ եւս այդպէս կը լինի: Յօժարութեամբ ընդունեցէք նաեւ նրա քրոջը, երբ նա ժամանի ձեզ մօտ: Անվտա՛նգ եղէք Տէր Յիսուս Քրիստոսով: Նրա շնորհը ձեզ բոլորի հետ[150]: Ամէն:

146 Այստեղ ակնարկւում են Իգնատիոսի նամակները Պողիկարպոսին եւ զմիւռնացիներին:
147 Այս հատուածը յունարէն լեզուով մէջբերում է Եւսեբիոս Կեսարացին (Գ 36):
148 Այսպէս է լատիներէն տեքստում, սակայն ոմանք վերածում են անցեալ ժամանակի: Վերջիններս Պողիկարպոսի նամակի Թ գլխից, որտեղ Իգնատիոսն անուանւում է «երանելի», ենթադրում են, որ հեղինակն արդէն տեղեակ էր վերջինիս նահատակութեան մասին, ուստի հարցնում է մանրամասնութիւնների մասին: Իսկ այլք հաւանական են համարում, որ Պողիկարպոսը դեռ տեղեակ չէր Իգնատիոսի նահատակութեան մասին, որի համար էլ օգտագործում է ներկայ ժամանակ:
149 Նամակատար Կրեշչենսը հաւանաբար նաեւ Պողիկարպոսի գրագիրն էր: Այն, որ Կրեշչենսն անցեալում նոյնպէս նման յանձնարարութիւն է կատարել, հիմք է տուել ոմանց համարելու, որ Պողիկարպոսը մէկից աւելի նամակ է գրել փիլիպեցիներին: Իսկ քանի որ որեւէ փաստ չկայ այդ մասին, ապա այս նամակի ԺԳ գլուխը համարւում է առանձին նամակ եւ անջատւում է ընդհանուր բնագրից: Այս կարծիքի հակառակորդներից ոմանք «անցեալում» բառը թարգմանում են «այս նամակում»:
150 Հմմտ. Իգնատիոս, Պող. Ը 3, Թրալլ. ԺԳ 2, Զմիւռն. ԺԳ 2:

ՍՈՒՐԲ ՊՈՂԻԿԱՐՊՈՍԻ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Զմիւռնիայում հաստատուած Աստուծոյ Եկեղեցին Փիլոմելիոնում հաստատուած Աստուծոյ Եկեղեցուն եւ համայն վայրերի սուրբ եւ ընդհանրական Եկեղեցու համայնքներին. Թող բազմանան Հայր Աստուծոյ եւ մեր Տէր Յիսուս Քրիստոսի ողորմութիւնը, խաղաղութիւնը եւ սէրը:

Ա. Ձեզ գրեցինք, եղբայրներ, նաեւ երանելի Պողիկարպոսի նահատակութեան մասին, որն ասես իր վկայութեամբ հաստատելով՝ դադարեցրեց հալածանքը: Քանզի նախապէս գրեթէ ամէն ինչ կատարուել էր, որպէսզի վերեւից Տէրը ցոյց տայ Աւետարանի համաձայն կատարուած վկայութիւնը: 2. Քանզի նա հանդուրժեց, որ մատնուի, ինչպէս եւ Տէրը, որպէսզի մենք եւս դառնանք նրան ընդօրինակող, «չմտածենք միայն մեր գործերի, այլեւ ուրիշների գործերի մասին»: Քանզի ճշմարիտ եւ հաստատուն սիրուց է բխում ոչ միայն իր անձը փրկել, այլեւ բոլոր եղբայրների փրկութիւնը կամենալը:*

Բ. Ուստի երանելի եւ ազնիւ են Աստուծոյ կամքով եղած բոլոր նահատակութիւնները: Քանզի մենք առաւել բարեպաշտ լինելով՝ ամէն ինչի իշխանութիւնը պէտք է վստահենք Աստծուն: 2. Քանզի նրանց ազնւութեամբ, համբերութեամբ եւ տիրասիրութեամբ ո՞վ չի հիանում: Նրանք խարազաններով ծեծուեցին այնքան, մինչեւ երեւացին ներքին երակներն ու մսի կառուցուածքը, եւ դիմացան այնպէս, որ մտիկ կանգնածները եւս գթացին ու ափսոսացին. իսկ իրենք այնքան արի էին, որ իրենցից եւ ոչ մէկը ո՛չ ճչաց, ո՛չ էլ հառաչեց՝ դրանով մեզ բոլորիս ցոյց տալով, որ այդ պահին տանջանքների ենթարկուելով՝ Քրիստոսի վկաները հեռանում էին մարմնից. մանաւանդ որ Տէրը, նրանց մօտ կանգնելով, խօսում էր նրանց հետ: 3. Եւ ապաւինելով Քրիստոսի շնորհին՝ արհամարհում էին աշխարհի չարչարանքները՝ մէկ ժամի փոխարէն ի չիք դարձնելով յաւերժական դժոխքը: Եւ անմարդկայինների կրակը սառն էր նրանց համար: Քանզի նրանք աչքի առաջ ունէին յաւերժական ու երբեք չհանգչող հուրը եւ սրտի աչքերով

* *Փլպ. Բ 4*

տեսնում էին համբերատարներին սահմանուած բարիքները, «որպիսիք ոչ ականջ է լսել, ոչ աչք է տեսել, ոչ էլ մարդու սիրտ է ընկել», իսկ Տէրը նրանց ցոյց էր տալիս, որ այլեւս մարդ չեն, այլ արդէն հրեշտակ են: 4. Նոյնպէս եւ գազանների առաջ նետուելով՝ դատապարտուածները դաժան պատիժներ կրեցին եւ ուրիշ ձեւերով զանազան տանջանքներով պատժուեցին, որպէսզի բռնակալը, եթէ կարողանար, յամառ պատիժներով մղէր նրանց ուրանալու:*

Գ. Քանզի նրանց դէմ սատանան նիւթում էր շատ չարիքներ, բայց Աստուծոյ շնորհիւ նա բոլորի դէմ զօրութիւն չունեցաւ: Քանզի արիագոյն Գերմանիկոսն իր յամառութեամբ վանում էր նրանց երկչոտութիւնը: Նա նաեւ հանդիսաւորութեամբ գազանների դէմ մարտնչեց: Քանզի երբ կուսակալը կամեցաւ նրան համոզել՝ ասելով, թէ խղճում է նրա տարիքը, նա գազանին բռնի իր վրայ ձգեց՝ ցանկանալով շուտափոյթ փրկուել նրանց անարդար եւ անօրէն կեանքից: Դրանից ամբողջ բազմութիւնը, զարմացած քրիստոնեաների աստուածասէր եւ աստուածավախ սերնդի վրայ, աղաղակեց. «Վերացրո՛ւ անաստուածներին: Թող փնտռուի Պողիկարպոսը»:

Դ. Իսկ մէկը՝ Կուինտոս անունով փռիւգիացի, որը վերջերս էր եկել Փռիւգիայից, տեսնելով գազաններին, վախեցաւ. սա նա էր, ով իրեն եւ մի քանի ուրիշների ստիպել էր ինքնակամ յարել: Սրան կուսակալը խիստ յամառելով համոզեց երդուել եւ զոհաբերութիւն կատարել: Այս պատճառով, եղբայրնե՛ր, մենք չենք գովում ինքնակամ յարողներին, որովհետեւ Աւետարանն այդպէս չի սովորեցնում:

Ե. Իսկ ամենահիանալի Պողիկարպոսն այդ լսելով չշփոթուեց, այլ մտածեց մնալ քաղաքում. բայց շատերը նրան համոզում էին քաղաքից դուրս գալ. եւ նա դուրս եկաւ մի փոքր դաշտ, որը հեռու չէր քաղաքից. նա քչերի հետ մնում էր այնտեղ, գիշերուզօր ուրիշ բան չէր անում, այլ աղօթում էր բոլորի եւ աշխարհի բոլոր Եկեղեցիների համար, ինչը նրա համար սովորական էր: 2. Եւ աղօթելիս նրան տեսիլք յայտնուեց իր ձերբակալուելուց երեք օր առաջ. եւ նա տեսաւ, որ

* *Հմմտ. Ա Կոր. Բ 9:*

իր բարձն այրւում է կրակից. եւ դառնալով իր հետ եղողներին՝ նա ասաց. «Ես պէտք է կենդանի այրուեմ»:

Զ. Եւ քանի որ նրան խնդրողները պնդում էին, նա տեղափոխուեց մէկ ուրիշ դաշտ. եւ իսկոյն յայտնուեցին նրան փնտռողները. չգտնելով նրան՝ նրանք ձերբակալեցին երկու տղաների, որոնցից մէկը չարչարուելիս խոստովանեց: Քանզի նա չէր էլ կարող խուսափել, քանի որ նրան մատնողները իւրայիններ էին: 2. Եւ ոստիկանապետը, որը նոյն Հերովդէս անունն էր ստացել, փութաց նրան ներս բերել ասպարէզ, որպէսզի նա նոյն վիճակը բաժանի՝ հաղորդակից դառնալով Քրիստոսին, իսկ նրան մատնողները կրեն նոյն պատիժը, ինչ եւ Յուդան:

*Է. Իրենց հետ ունենալով տղային՝ ընթրիքի նախապատրաստուելու ժամին հալածողներ եւ ձիաւորներ դուրս եկան իրենց սովորական զէնքերով, «ինչպէս աւազակի վրայ վազելիս»**: *Եւ ուշ ժամին նրանք վրայ հասնելով նրան գտան վերնայարկի մի սենեակում պառկած: Նա կարող էր այնտեղից դուրս գալ մէկ ուրիշ վայր, բայց չկամեցաւ այդ անել՝ ասելով. «Թող Տիրոջ կամքը կատարուի»***: *Լսելով նրանց ներկայութեան մասին՝ նա իջաւ եւ սկսեց զրուցել նրանց հետ: Ներկայ գտնուողները զարմանում էին նրա տարիքի եւ բարեկազմութեան վրայ, ինչպէս նաեւ այդպիսի ծերունազարդ այրին ձերբակալելու այդ շտապողականութեան վրայ: Ուստի նա իսկոյն նրանց պատուիրեց այդ ժամին նստել ուտելու եւ խմելու ինչքան որ կամենան. եւ խնդրեց նրանց, որ իրեն ժամանակ տան հանգիստ աղօթելու: Երբ նրանք այդ թոյլատրեցին, նա կանգնեց եւ աղօթեց՝ լցուած Աստուծոյ շնորհով այնպէս, որ երկու ժամ չէր կարողանում լռել, եւ լսողները զարմանում էին, եւ շատերը զղջացին, որ եկել են այդպիսի աստուածավայել ծերունու դէմ:*

Ը. Եւ երբ վերջապէս աւարտեց աղօթքը՝ յիշատակելով բոլորին, նաեւ իրեն երբեւէ պատահածներին, փոքրերին ու մեծերին, յայտնիներին ու անյայտներին եւ Քրիստոսի փրկագործ տնտեսութեան ընդհանրական Եկեղեցին, երբ արդէն դուրս գալու ժամը հասաւ, գրաստի

* *Հմմտ. Մատթ. ԻԶ 55:*

** *Հմմտ. Գործք ԻԱ 14:*

վրայ նստեցնելով՝ նրան տարան քաղաք. օրն Աւագ շաբաթ էր: 2. Եւ նրան պատահեցին ոստիկանապետ Հերովդէսը եւ նրա հայրը՝ Նիկետէսը, որոնք նրան փոխադրելով ծածկակառքի վրայ՝ նստեցին նրա կողքին եւ սկսեցին համոզել՝ ասելով. «Ի՞նչ վատ բան կը լինի, եթէ ասես «Տէր Կեսար», զոհ մատուցես ու անհրաժեշտը կատարես եւ փրկուես»: Նա սկզբում նրանց չէր պատասխանում. բայց քանի որ յամառում էին, ասաց. «Ես ձեր տուած խորհուրդները չեմ կատարելու»: 3. Երբ նրանց չյաջողուեց նրան համոզել, դաժան խօսքեր ասացին եւ իսկոյն ցած իջեցրին: Նա իջաւ ծածկակառքից եւ քայլեց: Նա ետ չդարձաւ, եւ ասես ոչինչ չէր պատահել. նա արագ քայլում էր՝ տարուելով ասպարէզ, որտեղ այնքան աղմուկ էր, որ մարդ չէր կարող լսելի դառնալ:

Թ. Երբ Պողիկարպոսը մտաւ ասպարէզ, երկնքից ձայն լսուեց. «Զօրացի՛ր, Պողիկարպո՛ս, եւ արիացի՛ր»: Ասողին ոչ ոք չտեսաւ, իսկ ձայնը մեզանից ներկայ գտնուողները լսեցին. եւ երբ նա բերուեց, մեծ աղմուկ բարձրացաւ, երբ լսեցին, թէ Պողիկարպոսը ձերբակալուած է: 2. Արդ, երբ նա բերուեց, կուսակալը հարցրեց, թէ ի՞նքն է Պողիկարպոսը: Երբ նա խոստովանեց այդ, կուսակալը համոզում էր հրաժարուել՝ ասելով. «Ցարգիր քո տարիքը» եւ նման բաներ, ինչպէս նրանք սովոր էին ասել. «Երդուի՛ր Կեսարի բախտին ու զղջա՛», ասացին. «Վերացրո՛ւ անաստուածներին»: Իսկ Պողիկարպոսը, լրջախոհ դէմքով նայելով ասպարէզում եղած անօրէն հեթանոսների համայն ամբոխին, ձեռքերը շարժեց նրանց կողմը, այնուհետեւ հառաչելով նայեց երկինք եւ ասաց. «Վերացրո՛ւ անաստուածներին»: 3. Երբ իշխանաւորը պնդելով ասում էր՝ «Երդուիր, եւ քեզ ազատ կ՚արձակեմ. ուրացիր Քրիստոսին», Պողիկարպոսը պատասխանում է. «Ութսունվեց տարի է Նրան ծառայում եմ, եւ Նա ինձ ոչնչով չի վնասել. ես ինչպէ՞ս կարող եմ հայհոյել իմ Թագաւորին, Որն ինձ փրկել է»:

Ժ. Քանի որ իշխանաւորը դարձեալ պնդում էր եւ ասում՝ «Երդուիր Կեսարի բախտին», նա պատասխանեց. «Եթէ դու անափառում ես, որ ես կ՚երդուեմ Կեսարի բախտին, ինչպէս ասում ես, կը նշանակի՝ ինձ չես ճանաչում, թէ ով եմ. լսի՛ր անկեղծօրէն. ես քրիստոնեայ եմ: Իսկ եթէ ուզում ես իմանալ քրիստոնէութեան խօսքը, մէկ օր տրամադրի՛ր եւ լսի՛ր»: 2. Կուսակալն ասաց. «Համոզիր ժողովրդի՛ն»: Իսկ Պողի-

կարպոսն ասաց. «Քե՛զ այդ խօսքին արժանացրի. քանզի սովորել ենք «Աստուծոյ սահմանած իշխաններին եւ իշխանութիւններին, որոնք մեզ չեն վնասում, պատշաճը հատուցել»*. իսկ նրանց արժանի չեմ համարում հաշուետու լինել:

ԺԱ. Բայց կուսակալն ասաց. «Գազաններ ունեմ. քեզ նրանց առաջ կը նետեմ, եթէ չմտափոխուես»: Իսկ նա պատասխանեց. «Կանչի՛ր. քանզի անհնար է, որ մտափոխուենք առաւել լաւից դէպի առաւել վատը: Իսկ լաւը վատից դէպի արդարը մտափոխուելն է»: 2. Կուսակալը դարձեալ ասաց նրան. «Քանի որ գազաններին արհամարհում ես, քեզ կրակով կ՚ոչնչացնեմ, եթէ չմտափոխուես»: Իսկ Պողիկարպոսը պատասխանեց. «Սպառնում ես ժամանակաւորապէս այրուող կրակով, որը քիչ անց կը հանգչի. քանզի դու անգիտանում ես սրբապիղծների համար գալիք դատաստանի եւ յաւիտենական պատժի համար պահուող կրակը: Բայց ինչո՞ւ ես դանդաղում. բե՛ր, ինչ կամենում ես»:

ԺԲ. Այս եւ ուրիշ շատ բաներ ասելով՝ նա լցւում էր արիութեամբ ու ցնծութեամբ, եւ նրա դէմքը ողողւում էր շնորհով. ուստի ոչ միայն նա չվհատուեց ու չընկրկեց իրեն ասուած խօսքերից, այլ ընդհակառակը՝ կուսակալը գազազեց եւ ուղարկեց իր մունետիկին, որպէսզի ասպարէզում երեք անգամ յայտարարի. «Պողիկարպոսը խոստովանեց, թէ ինքը քրիստոնեայ է»: 2. Երբ մունետիկն այդպէս յայտարարեց, Զմիւռնիայում բնակուող հեթանոսների եւ հրեաների ամբողջ բազմութիւնը անասելի զայրոյթով ու բարձրաձայն գոռում էր. «Սա է Ասիայի վարդապետը, քրիստոնեաների հայրը, մեր կուռքերը կործանողը, ով շատերին սովորեցնում է զոհ չմատուցել եւ չերկրպագել»: Այս ասելով՝ նրանք գոռում էին եւ պահանջում Ասիայի կառավարիչ Փիլիպպոսից, որ առիւծ արձակի Պողիկարպոսի վրայ: Եւ նա պատասխանեց, որ դա հնարաւոր չէ, որովհետեւ որսը վերջացել է: 3. Այնժամ նրանք որոշեցին միահամուռ գոռալ, որ Պողիկարպոսը կենդանի այրուի: Քանզի պէտք է կատարուէր բարձի օրինակով յայտնուած տեսիլքը, երբ նա աղօթելիս տեսաւ այն վառուելիս եւ դառնալով իր հետ եղող հաւատացեալներին՝ մարգարէաբար ասաց. «Ես պէտք է կենդանի այրուեմ»:

* Հմմտ. Հռոմ. ԺԳ 1, 7, Ա Պետր. Բ 13:

ԺԳ. Արդ, այս ամէնն այսքան արագ կատարուեց. աւելի արագ, քան ասուեց. քանի որ ամբոխը շուտափոյթ գործատներից ու բաղնիքներից փայտ ու տաշեղներ բերեց. եւ այդ գործին, ինչպէս նրանց սովորութիւնն էր, բոլորից յօժարակամ ծառայում էին հրեաները: 2. Երբ արդէն խարոյկը պատրաստուել էր, նա հանեց իր զգեստը եւ, գօտին արձակելով, փորձեց ինքն իրեն ազատել. նա այդ նախապէս չէր արել, քանի որ իւրաքանչիւր հաւատացեալ ջանում էր աւելի շուտ դիպչել նրա մարմնին: Քանզի նա վկայութիւնից առաջ էլ իր առաքինի կենցաղավարութեամբ զարդարուած էր ամէն բարիքներով: 3. Իսկոյն նրա շուրջը դրեցին խարոյկի համար յարմարեցուած գործիքները: Երբ պատրաստւում էին գամել, ասաց. «Թողէք ինձ այսպէս. քանզի Նա, Ով ինձ ուժ տուեց դիմանալու կրակին, հնարաւորութիւն կը տայ, որ խարոյկն էլ անխախտ մնայ առանց գամերի»:

ԺԴ. Եւ նրանք չգամեցին, այլ կապեցին նրան: Եւ նա ձեռքերը ետ պահելով կապուեց՝ որպէս մեծ հօտից բերուած զոհաբերման պատուական խոյ, Աստուծոյ համար պատրաստուած ողջակէզ: Նայելով վեր՝ դէպի երկինք՝ նա ասաց. «Ո՛վ Տէր Աստուած ամենակալ, Հայր Քո սիրելի եւ օրհնեալ Որդի Յիսուս Քրիստոսի, Որի միջոցով Քեզ ճանաչեցինք, Աստուած հրեշտակների եւ զօրութիւնների, ամէն ստեղծուածի եւ համայն արդարների ցեղի, որոնք ապրում են Քո առաջ: 2. Օրհնում եմ Քեզ, որ ինձ արժանացրիր այս օրուան եւ այս ժամին, որպէսզի նահատակների շարքում մասնակցեմ Քո Օծեալի բաժակին, մարմնի եւ հոգու յաւերժական կեանքի յարութեանը, անապականութեամբ Սուրբ Հոգու: Նրանց մէջ թող ես ընդունելի լինեմ այսօր Քո առաջ որպէս պարարտ եւ ընդունելի զոհ, ինչպիսին նախապատրաստել ես կանխաւ եւ յայտնել ու կատարել ես, Աստուա՛ծդ անսուտ եւ ճշմարիտ: 3. Ուստի եւ գովում եմ Քեզ ամէն ինչի համար, օրհնում Քեզ, փառաբանում յաւերժական եւ երկնային քահանայապետ Յիսուս Քրիստոսի՝ Քո սիրելի Որդու միջոցով, Որի համար Նրա հետ եւ Քեզ, եւ Սուրբ Հոգուն փառք այժմ եւ գալիք դարերում: Ամէն:

ԺԵ. Երբ նա ասաց «ամէն» եւ աղօթքը վերջացրեց, խարոյկի մարդիկ կրակը վառեցին: Երբ մեծ բոց փայլեց, հրաշք տեսանք, ում որ տեսնել էր տրուած: Եւ մենք հետեւեցինք՝ պատահածները միւսներին

հաղորդելու համար: 2. Կրակը սարքեցին ծածկակառքի ձեւով: Ինչպէս քամուց ուռած նաւի առագաստներ, բոցն այդպէս շուրջանակի պատեց վկայի մարմինը: Եւ նրա մէջ, թւում էր, ոչ թէ միս էր այրւում, այլ հաց էր եփւում, կամ ոսկի եւ արծաթ էր շիկանում հնոցի մէջ: Եւ այնպիսի անուշահոտութիւն զգացինք, ասես խունկ էր բուրում կամ որեւէ այլ թանկարժէք բուրաւէտ նիւթ:

ԺԶ. Ի վերջոյ, անօրէնները, տեսնելով, որ կրակը չի կարողանում ոչնչացնել մարմինը, հրամայեցին կոնեկտորին մօտենալ նրան եւ խոցել դաշոյնով: Երբ նա այդ արեց, մեծ քանակութեամբ արիւն ժայթքեց, որից կրակը հանգաւ, եւ ամբողջ ամբոխը զարմացել էր, որ այդքան տարբերութիւն կայ անհաւատների եւ ընտրեալների միջեւ: 2. Վերջիններից մէկն էլ եղել էր եւ ինքը՝ ամենահրաշալի Պողիկարպոսը, որը մեր ժամանակ եղել էր առաքելական եւ մարգարէական ուսուցիչ, Զմիւռնիայի ընդհանրական Եկեղեցու եպիսկոպոս, քանզի նրա բերանից դուրս եկած ամէն մի խօսք կատարուեց եւ կը կատարուի:

ԺԷ. Արդարների ցեղի դէմ կանգնած նախանձը, նենգը, չարը, տեսնելով նրա վկայութեան վեհութիւնը, ի սկզբանէ անբասիր վարքը նրա, ով պսակուած էր անմահութեան պսակով եւ անվիճելի մրցանակ էր կրում, ջանաց, որ անգամ նրա մարմինը մենք չվերցնենք, թէեւ շատերս ցանկանում էինք այդ անել եւ հաղորդակից դառնալ նրա սուրբ մարմնին: Ուստի նրանք թելադրեցին Հերովդէսի հայր եւ Ալկէսի եղբայր Նիկետէսին խնդրել իշխանից, որ չյանձնի նրա մարմինը. «Զլինի թէ, - ասում էին նրանք, - թողնելով Խաչեալին՝ սկսեն սրան պաշտել»: Նրանք այսպէս թելադրեցին եւ նրանց սատարում էին հրեաները, որոնք պահպանեցին նրա մարմինը, երբ մենք ուզում էինք այն վերցնել խարոյկից: Նրանք անգիտանում էին, թէ մենք ոչ կը կարողանանք հրաժարուել Քրիստոսից, Ով ամբողջ աշխարհի մեղաւորների փրկութեան համար անշահախնդիր կերպով չարչարանքներ կրեց, ոչ իսկ կը կարողանանք մէկ ուրիշին պաշտել: 3. Քանզի Նրան, Ով Աստուածորդի է, մենք երկրպագում ենք, իսկ վկաներին՝ որպէս Տիրոջ աշակերտների եւ հետեւորդների, ըստ արժանւոյն սիրում, նոյն Թագաւորի եւ Ուսուցչի նկատմամբ անգերազանցելի նուիրուածութեան պատճառով. թող մենք եւս դառնանք նրանց հաղորդակից եւ աշակերտակից:

ԺԸ. Արդ, հարիւրապետը, տեսնելով հրեաների յամառելը, նրան մէջտեղ բերեց, ինչպէս նրանց սովորութիւնն էր, եւ այրեց. ուստի եւ մենք, յետոյ վերցնելով թանկարժէք քարերից առաւել թանկ եւ ոսկուց առաւել ստուգուած նրա ոսկորները, զետեղեցինք այնտեղ, ուր եւ պատշաճ էր: 2. Այնտեղ մենք կարող կը լինենք ցնծութեամբ եւ ուրախութեամբ հաւաքուելու, եւ Տէրը մեզ հնարաւորութիւն կը տայ նշելու այդ վկայի ծննդեան օրը, ի յիշատակ նախկին նահատակների եւ ի վարժութիւն ու պատրաստութիւն ապագայ նահատակների:

ԺԹ. Ահա այսքանը երանելի Պողիկարպոսի մասին, ով Փիլադելփիայից եղածների հետ տասներկուերորդ նահատակուողն էր. առանձին յիշատակւում է բոլորի կողմից, ուստի եւ անգամ հեթանոսների կողմից ամէնուր նշւում է, թէ նա ոչ միայն նշանաւոր ուսուցիչ է եղել, այլեւ արտակարգ վկայ, որի նահատակութեանը ցանկանում են բոլորը նմանուել Քրիստոսի եւ Աւետարանի համար: 2. Իր կայունութեամբ յաղթելով անարդար իշխանին եւ այդպիսով անմահութեան պսակը ստանալով՝ առաքեալների եւ բոլոր արդարների հետ ցնծալով՝ փառաբանում են ամենակալ Աստծուն եւ օրհնում մեր Տէր Յիսուս Քրիստոսին՝ մեր հոգիների Փրկչին, մեր մարմինների Կառավարչին եւ համայն փրկագործ տնտեսութեան ընդհանրական Եկեղեցու Հովուին:

Ի. Դուք շատերի միջոցով խնդրեցիք ձեզ յայտնել կատարուածների մասին, իսկ մենք առայժմ գլխաւոր գծերով տեղեկացել ենք մեր եղբայր Մարկիոնի միջոցով: Ուստի, այս ամէնն իմանալով, թուղթն ուղարկեցէք նաեւ միւս եղբայրներին, որպէսզի նրանք եւս փառաբանեն Տիրոջը, Որն իր ընտրութիւնը կատարում է իրենց իսկ՝ ծառաների միջից: 2. Նա, Ով կարող է մեզ բոլորիս Իր շնորհով եւ պարգեւով Իր միածին Որդի Յիսուս Քրիստոսի միջոցով տանել Իր յաւիտենական թագաւորութիւնից ներս, Նրան փառք, պատիւ, զօրութիւն, մեծարանք յաւիտեանս. ողջունեցէք բոլոր սրբերին. ձեզ ողջունում են մեզ հետ գտնուողները եւ սոյնը գրող Եւարետոսն՝ ընտանիքով:

ԻԱ. Երանելի Պողիկարպոսը նահատակուեց քսանթիկոս ամսի երկրորդ օրը, մարտեան կաղանդներից եօթ օր առաջ. Աւագ շաբաթ օրը՝ ութերորդ ժամին, նա ձերբակալուեց Հերովդէսի կողմից Փիլիպպոս Տրալլացի քահանայապետի, Ստատիոս Կոդրատոսի կուսակալութեան

եւ Յիսուս Քրիստոսի յաւիտենական թագաւորութեան ժամանակ. Նրան փառք, պատիւ, մեծարանք, յաւիտենական գահ սերնդէսերունդ: Ամէն:

ԻԲ. Մաղթում ենք ձեզ առողջութիւն, եղբայրնե՛ր, հետեւելով Յիսուս Քրիստոսի Աւետարանի խօսքին. փառք Նրան եւ Հայր Աստծուն եւ Սուրբ Հոգուն՝ ընտրեալ սրբերի փրկութեան համար. ինչպէս վկայեց երանելի Պողիկարպոսը, որի հետքերով մենք եւս թող արժանանանք Յիսուս Քրիստոսի թագաւորութեանը:

Այս ամէնն արտագրել է Գայիոսը Իրենէոսից, որն աշակերտն էր Պողիկարպոսի, որն էլ եղել է Իրենէոսի համաքաղաքացին: Իսկ ես՝ Սոկրատէս, Կորնթոսում Գայիոսի օրինակներից գրեցի: Շնորհը բոլորի հետ:

Դարձեալ ես՝ Պիոնիոս, այս ամէնը փնտռելով գրեցի նախորդ գրուածից, որը յայտնութեամբ ինձ բացայայտեց երանելի Պողիկարպոսը, որպէսզի յետագայում այս ամէնը, որոնք ժամանակի ընթացքում արդէն համարեա թուլացել էին, հաւաքելով ծանուցեմ, որպէսզի ինձ եւս Տէր Յիսուս Քրիստոսը ժողովի Իր ընտրեալների հետ Իր երկնային թագաւորութեան մէջ. փառք Նրան, Հօրը եւ Սուրբ Հոգուն յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

ՈՒՐԻՇ ՎԵՐՋԱԲԱՆ ՄՈՍԿՈՎԵԱՆ ԿՈԴԵՔՍԻՑ

Այս ամէնն արտագրել է Գայիոսը Իրենէոսի գրածներից. նա եղել է նաեւ համաքաղաքացին Իրենէոսի՝ սուրբ Պողիկարպոսի աշակերտի: Քանզի այս Իրենէոսը, Պողիկարպոս եպիսկոպոսի ժամանակ գտնուելով Հռոմում, քարոզել է շատերին: Նրա շատ գրուածքներ լաւագոյնս եւ ճշմարտապէս կան: Դրանցում յիշատակում է Պողիկարպոսին, թէ նրա մօտ է սովորել: Նա ժխտել է ամէն հերձուած, եւ եկեղեցական ընդհանրական կանոնը, ինչպէս ստացել էր սրբից, այնպէս էլ աւանդեց: 2. Այս էլ է ասում. թէ երբ Մարկիոնը, որից կոչուել են մարկիոնականները, պատահել է սուրբ Պողիկարպոսին եւ ասել. «Ճանաչի՛ր մեզ, Պողիկարպո՛ս», սա պատասխանել է Մարկիոնին. «Ճանաչում եմ սատանայի առաջնեկին»: 3. Իրենէոսի գրածների մէջ սա եւս կայ. թէ այն օրը եւ այն ժամին, երբ Զմիւռնիայում նահատակուեց Պողիկարպոսը, Հռոմ քաղաքում գտնուող Իրենէոսը ձայն է լսել՝ ասես շեփորից, որն ասում էր. «Պողիկարպոսը նահատակուեց»: 4. Ինչպէս ասացինք, ահա Իրենէոսի այս գրքերից Գայիոսն արտագրեց, իսկ Գայիոսի օրինակներից՝ Իսոկրատէսը Կորնթոսում: Ես էլ՝ Պիոնիոս, Իսոկրատէսի ընդօրինակութիւններից սուրբ Պողիկարպոսի յայտնութեամբ փնտռեցի ու գրեցի՝ հաւաքելով այդ ամէնը, որոնք ժամանակի ընթացքում արդէն համարեա թուլացել էին, որպէսզի ինձ եւս Տէր Յիսուս Քրիստոսը ժողովի Իր ընտրեալների հետ Իր երկնային թագաւորութեան մէջ. փառք Նրան, Հօրը եւ Սուրբ Հոգուն յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Հին յունարէնից թարգմանեց
Սիմոն Գրքաշարեանը

Խմբագրեց եւ ծանօթագրեց
Միքայէլ եպս. Աշապահեանը

ՍՈՒՐԲ ԱԹԱՆԱՍ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՑԻ

Ս. Աթանաս Ալեքսանդրացին Քրիստոսի Եկեղեցու մեծագոյն հայրերից մէկն է: Նա ոչ միայն եղել է այն սրբազան անօթը, որով մեզ տրուեցին Նիկիոյ սուրբ հաւատքի դաւանական սահմանումները, այլեւ եղել է այդ դաւանութիւնն իր ողջ խորութեամբ բացայայտողը: Նա օժտուած է եղել Սուրբ Գրքի դաւանաբանական իմաստները տեսնելու հանճարեղ կարողութեամբ: Նրա գրուածքներում աստուածաբանական ճշմարտութիւններն ի յայտ են գալիս զարմանալի կենդանի զօրութեամբ, որոնք ոչ միայն հաստատում են քրիստոնէական դաւանութեան տեսական դրոյթները, այլեւ քրիստոնէական հաւատքի ողջ իսկութիւնը: Ինչ որ իմաստով ս. Աթանասն ուղղափառ դաւանութեան կամ ուղղափառութեան հիմնադիրն է. եւ պատահական չէ, որ եկեղեցական աւանդութեան մէջ ս. Աթանասն անուանուել է «Ուղղափառութեան հայր», «Ուղղափառ հաւատքի սիւն», «Եկեղեցու սիւն» եւն: Նրա ամբողջ կեանքը եղել է նաեւ ուղղափառ հաւատքի պաշտպանութեան իւրօրինակ վկայութիւն, եւ յանուն սուրբ հաւատքի՝ նա արիաբար կրել է բազմաթիւ հալածանքներ: Արիոսականները նրան համարում էին իրենց գլխաւոր թշնամին եւ դիմում էին ամէն տեսակ խարդաւանքների՝ նրանից ձերբազատուելու համար: Նրանք աշխարհիկ իշխանութիւնների աջակցութեամբ Աթանասին հինգ անգամ վտարել են Ալեքսանդրիայի աթոռից, եւ նա աւելի քան տասնեօթ տարի անցկացրել է աքսորում՝ երբեմն նոյնիսկ լքուած մնալով իր իսկ հաւատակից եղբայրների կողմից: Այս բոլոր տառապանքների եւ վշտերի մէջ նա շարունակել է անզիջում պայքարը ճշմարիտ հաւատքի համար եւ ամէն գնով բացայայտել ճշմարտութեան հակառակորդների վտանգաւոր մոլորութիւնները: Սակայն նոյնիսկ պայքարի ամենաթեժ պահերին ս. Աթանասը լի է եղել իւրօրինակ համբերութեամբ եւ ներողամտութեամբ մոլորեալների նկատմամբ եւ ջանացել ամէն կերպ նրանց վերադարձնել դէպի ուղղափառ հաւատք: Նրան շատ բարձր է գնահատել անապատականների նախահայր ս. Անտոնիոսը: Եգիպտական ճգնաւորութեան մեծագոյն հեղինակութիւններից մէկը՝ ս. Պափնոտիոսը գրում է. «Երբ ս. Աթանասը եպիսկոպոս ձեռնադրուեց, այնժամ չար մարդիկ... փորձեցին պառակտել Աստուծոյ Եկեղեցին: Սակայն ինձ Սուրբ Հոգին ասաց. «Ես նրան կանգնեցրի որպէս Եկեղեցու սիւն

եւ լուսատու: Բազում վշտեր եւ մարդկային չարախօսութիւններ են սպասում նրան՝ Քրիստոսի նկատմամբ բարեպաշտ հաւատք ունենալու պատճառով: Բայց նա յաղթահարելով բոլոր փորձութիւնները ... կ՚ազդարարի Եկեղեցիներին աւետարանական ճշմարտութիւնը»[1]: Իսկ ս. Գրիգոր Աստուածաբանը նրա մասին գրում է. «Մեզ՝ գետնին նետուածներիս, փրկութեան եղջիւր բարձրացուեց, ճիշտ ժամանակին շնորհուեց անկիւնաքար, որ մեզ շաղկապում է ինքներս մեզ եւ միմեանց հետ, կամ՝ հուր, որ մաքրագործում է փտած եւ վնասակար զանգուածը... կամ՝ սուր, որ հատում է չարութեան արմատները: Եւ Բանը գտաւ իր առաջամարտիկին, եւ Հոգին ստացաւ մէկին, ով յանուն Նրա պիտի ունենար նախանձախնդրութեան շունչը»[2]:

Ս. Աթանաս Ալեքսանդրացին թէպէտ մշտապէս հալածանքների մէջ է եղել, սակայն թողել է զարմանալի մեծ գրական ժառանգութիւն: Նրա գործերի մեծ մասն ունեն դաւանաբանական եւ ջատագովական բնոյթ եւ նուիրուած են Նիկիական հաւատքի պաշտպանութեանը: Ս. Աթանասը յստակօրէն տեսնում էր Նիկիոյ ձեւակերպմանը հակառակուելու վտանգը: Հին եւ հնանման աստուածաբանական համակարգերը երկիմաստ էին: Նոր եւ ամուր համակարգը կարելի էր կառուցել Նիկիոյ հիմքի վրայ, այսինքն՝ ելնելով «Համագոյութիւն» (ὁμοούσια) հասկացողութիւնից, ըստ որի պէտք էր կառուցել եւ յղկել ուղղափառ հաւատքի ողջ աստուածաբանական կառոյցը: Հայրը, Որդին եւ Սուրբ Հոգին համագոյակից (էակից) են, այսինքն՝ ունեն նոյն աստուածային բնութիւնը եւ էութիւնը: Համագոյութիւնը նշանաւորեց քրիստոնէութեան յաղթանակը հրէական եւ միջին-պլատոնական մտքի վրայ՝ ցոյց տալով, որ հին կրօնափիլիսոփայական համակարգերն ի վիճակի չէին ընկալելու եւ եզրակերպելու Բանի ներմարդութեան (մարդեղութեան) խորհուրդը: Քրիստոնէութիւնը պահանջում էր հաւատքի սահմանման նոր եւ ստոյգ եզրաբանական համակարգ, որն ամրագրուեց Նիկիոյ Ա տիեզերաժողովով: Նիկիական հաւատքի հետեւողական բացայայտման մէջ է Մեծն Աթանասի մեծագոյն ներդրումն աստուածաբանական մտքի պատմութեան մէջ:

1 **Святитель Афанасий Великий**, Творения, Т. 1, ст. 49

2 **Святитель Григорий Богослов**, Собрание Творений, Том 1, слово 21, похвальное Афанасию Великому, архиеп. Александрийскому, ст. 308-309

Ս. Աթանասի ջատագովական գործունէութեան հիմնական նպատակն է եղել պաշտպանել քրիստոնէութիւնը հելլենականացման վտանգից, որը թաքնուած էր Արիոսի եւ նրա հետեւորդների հերետիկոսութեան մէջ: Լայնօրէն գործածելով յունական մտածողութեան կերպերը եւ գաղափարները՝ յայտնութենական ճշմարտութիւնները դասակարգելու եւ համադրելու համար, նա գիտէր՝ ինչպէս առանձնացնել յունական մտածողութիւնը քրիստոնէական յայտնութիւնից, որպէսզի Աւետարանի ճշմարտութիւնը չաղճատուէր: Եթէ Աթանասն օգտւում էր փիլիսոփայութիւնից, ապա դա անում էր Եկեղեցու վարդապետութեան փրկաբանական իսկութիւնը հաստատելու համար: Նրա բոլոր ջանքերն ուղղուած էին հիմնաւորելու Եկեղեցու սրբազան աւանդութիւնը, վարդապետութիւնը եւ հաւատքը, որը տուեց Տէրը, քարոզեցին առաքեալները եւ պահպանեցին հայրերը:

Ս. Աթանասը ոչ միայն սահմանեց եւ յստակեցրեց Ամենասուրբ Երրորդութեան դաւանութեան կարեւորագոյն սկզբունքները, այլեւ ըստ էութեան նախանշեց Եկեղեցու քրիստոսաբանական մտքի զարգացման հիմնական ուղիները: Նրա գրուածքներում Բանի մարդեղութեան խորհուրդը բացայայտուած է զարմանալի խորութեամբ: Ս. Աթանասի՝ «Նա մարդացաւ, որպէսզի մենք աստուածանանք» նշանաւոր արտայայտութիւնը լաւագոյն բանալին է Եկեղեցու փրկաբանական ուսուցման: Մենք չէինք փրկուի, եթէ Աստուած Ինքը չմարդանար, եւ եթէ Քրիստոս Աստուած չլինէր: Բանն Աստուած, առնելով մարդկային բնութիւնը, աստուածացրեց այն: Եթէ Քրիստոս Աստուած չլինէր, չէր կարող աստուածացնել մեզ:

Բացի դաւանական եւ ջատագովական բնոյթի երկերից, ս. Աթանասի աստուածաբանական ժառանգութիւնը ներառում է նաեւ բազմաթիւ մեկնողական, ճգնաւորական-ներանձնական, տօնախօսական ճառեր, քարոզներ եւ նամակներ: Թէպէտ ս. Աթանասն ամէնից շատ վկայակոչուող հայրերից է հայ դաւանաբանական եւ հակաճառական բնոյթի աղբիւրներում, այսուհանդերձ նրա երկերի մեծ մասի հայերէն թարգմանութեան բնագրերը մեզ յայտնի չեն: Մասամբ դրանք հրատարակուած են «Ս. Աթանասի Աղեքսանդրիոյ հայրապետի ճառք, թուղթք եւ ընդդիմասութիւնք» (Վենետիկ, 1899 թ.) ժողովածուով: Առաջին անգամ արեւելահայերէն թարգմանութեամբ ներկայացնում ենք ս. Աթանասի ամենակարեւոր դաւանաբանական երկերից մէկը, որը վերնագրուած է այսպէս՝ «Ալեքսանդրիայի եպիսկոպոսապետ ս. Աթանասի թուղթը Որդու մարդեղութեան եւ Սուրբ Երրորդութեան մասին»:

Այս բացառիկ հոգեշունչ գրուածքը, լինելով սուրբ հայրապետի ուշ շրջանի գործ, ամփոփ եւ առաւել համակարգուած կերպով է ներկայացնում նրա դաւանական հայեացքները: Քրիստոնէական հաւատքի հիմնական սկզբունքները՝ Ամենասուրբ Երրորդութեան Անձերի համագոյութեան, ինչպէս նաեւ՝ Յիսուս Քրիստոսի մարդեղութեան խորհուրդի մասին, բացայայտուած են իրենց փրկաբանական խոր աղերսներով եւ սուրբգրային կուռ հիմնաւորումներով: Այստեղ դաւանական ճշմարտութիւններն առաջնորդում են մարդուն դէպի հոգեւոր վերափոխութիւն եւ հաւատքի էական ճանաչողութիւն, որի հիմքը, ըստ ս. Աթանասի, ուղղափառ դաւանութեան խոստովանութիւնն է:

Գրաբար թարգմանութիւնը ակնյայտօրէն կատարուած է Ե դարում եւ զերծ է յունաբան դպրոցի թարգմանական խրթնաբանութիւններից: Գրաբար բնագրի դժուարահաս մասերը մանրազնին բաղդատուել են մեր ձեռքի տակ եղած յունարէն բնագրի, ինչպէս նաեւ ռուսերէն թարգմանութեան հետ:

Աղբիւրներ

Ս. Աթանասի Աղեքսանդրիոյ հայրապետի ճառք, թուղթք եւ ընդդիմասութիւնք, Վենետիկ, 1899 թ.

Patrology, Johannes Quasten, Volume III

Athanasius, Alvyn Pettersen

Святитель Афанасий Великий, Творения, Т. 1–4

Святитель Григорий Богослов, Собрание Творений, Том 1, слово 21, похвальное Афанасию Великому, архиеп. Александрийскому

Μέγας Αθανάσιος, Περὶ τῆς ἐνσάρκου ἐπιφανείας τοῦ Θεοῦ Λόγου καὶ κατὰ Ἀρειανων, Βιβλιοθήκη Ἑλλήνων Πατέρων καὶ Ἐκκλησιαστικῶν Συγγραφέων, Αθῆναι 1963, Τόμος 33, Σελ. 221-238

ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱՅԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ՍՈՒՐԲ ԱԹԱՆԱՍԻ ԹՈՒՂԹԸ ՈՐԴՈՒ ՄԱՐԴԵՂՈՒԹԵԱՆ ԵՒ ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ովքեր ցանկանում են չարարուեստաբար հասկանալ աստուածային Գիրքը, իրենց հայհոյութիւնը հաստատելու համար վկայակոչում են մարդուն վերաբերող խօսքերը Աստուծոյ Որդու աղքատութեան մասին. սակայն այս նուաստ խօսքերի եւ գործերի մէջ է քրիստոնէութեան ողջ իսկութիւնը:

Արդ, եթէ կարողանային լսել երանելի Պօղոսի՝ կորնթացիներին գրածները. «Քանզի գիտէք շնորհները մեր Տէր Յիսուս Քրիստոսի, որ ձեզ համար աղքատացաւ, [Նա], որ հարուստ էր, որպէսզի դուք Նրա աղքատութեամբ հարստանաք» [Բ Կոր. Ը 9], ապա երբեք չէին համարձակուի ասել՝ Որդին նման չէ Հօրը, յատկապէս իմանալով, թէ ինչ է Նրա աղքատութեան զօրութիւնը, եւ ինչ է Նրա խաչի զօրութիւնը: Ուստի եւ մէկ այլ տեղ նոյն Պօղոս [առաքեալն] ասում է. «Որ կարողանաք հասու լինել բոլոր սուրբերի հետ՝ ինչ է լայնութիւնը, երկարութիւնը, [բարձրութիւնը] եւ խորութիւնը, ճանաչէք գիտութեանը գերազանցող Քրիստոսի սէրը, որպէսզի լցուէք Աստուծոյ լրիւ ամբողջութեամբ» [Եփես. Գ 18-19]: Այս պատճառով Նրա աղքատութեան եւ չարչարանքների մասին համարձակւում է գրել. «Քա՛ւ լիցի ինձ պարծենալ, բայց միայն մեր Տէր Յիսուս Քրիստոսի խաչով, որով աշխարհը խաչուած է ինձ համար, ես՝ աշխարհի համար» [Գաղ. Զ 14], «Որովհետեւ իմ մտքում չեմ դրել իմանալ ձեր մէջ այլ բան, բայց միայն՝ Յիսուս Քրիստոսին եւ նոյն Իրեն՝ խաչուածին» [Ա Կոր. Բ 2]. «Եւ եթէ ճանաչուած լինէր, արդարեւ փառքի Տիրոջը չէին խաչի» [Ա Կոր. Բ 8]: Եւ այժմ, եթէ սրանք հասկանային աստուածային Գիրքը, արդարեւ չէին համարձակուի ամէնքի Ստեղծողին հայհոյել՝ Նրան ստեղծուած կամ արարուած կոչելով:

Վկայակոչում են՝ ասելով մեզ. «Ինչպէ՞ս կարող է Որդին Հօր նման կամ Հօր էութիւնից լինել, երբ գրուած է. «Ինչպէս Հայրն Ինքն Իր մէջ կեանք ունի, նոյնպէս եւ Որդուն տուեց Ինքն Իր մէջ կեանք ունենալ» [Յովհ. Ե 26]: Ըստ նրանց՝ տուողը գերազանց է վերցնողից: Նաեւ [գրուած] է. «Մի՛ կոչիր Ինձ բարի, բարի չէ ոչ ոք, այլ միայն

Աստուած» [Մարկ. Ժ 18], դարձեալ՝ «Աստուա՛ծ իմ, Աստուա՛ծ իմ, ինչո՞ւ թողեցիր Ինձ» [Մատթ. ԻԷ 46], դարձեալ՝ «Այդ օրուայ մասին ոչ ոք չգիտի... եւ ոչ էլ Որդին, այլ միայն՝ Հայրը» [Մարկ. ԺԳ 32], դարձեալ՝ «Ում Հայրը սրբացրեց եւ աշխարհ ուղարկեց» [Յովհ. Ժ 36], դարձեալ՝ «[Հայր] Աստուած, որ յարութիւն տուեց Նրան մեռելներից» [Գաղ. Ա 1]: Արդ, ինչպէ՞ս կարող է, ասում են, մեռելներից յարութիւն առնողը նման լինել Իրեն յարութիւն տուողին:

Այս վկայութիւնների շատից քիչը ներկայացրեցինք, որպէսզի սրանք մեկնելով՝ միւսները հեշտութեամբ հասկացուեն: Արդ, ըստ մեր կարողութեան մենք պէտք է պատմենք դրանց զօրութեան մասին:

Երբ երանելի Պօղոսն ասում է. «Հայրը յարութիւն տուեց Իր Որդուն մեռելներից» [տե՛ս Հռոմ. Ժ 9], ապա Յովհաննէսն ասում է մեզ, թէ՝ «Ասաց Յիսուս. «Քանդեցէ՛ք այդ տաճարը, եւ երեք օրուայ ընթացքում այն կը վերականգնեմ»: Եւ ասում էր Իր մարմնի տաճարի մասին» [Յովհ. Բ 19-21]: Արդ, յայտնի է նրանց, ովքեր արթուն են, թէ մարմնի յարութեամբ նկատի ունի Որդու յարութիւնը մեռելներից, որովհետեւ ինչ որ Նրա մարմնի մասին են ասում, ի դէմս Նրա են ասում, այսպէս՝ երբ ասում է, որ Հայրը կեանք տուեց Որդուն, պէտք է իմանալ մարմնին կեանք տալը, քանի որ եթէ Ինքն է կեանքը, ապա ինչպէ՞ս է կեանքը կեանք վերցնում, երբ Ինքը խոստանում է՝ ասելով, թէ՝ «Իմ ոչխարներն Իմ ձայնը լսում են, եւ Ես ճանաչում եմ նրանց, նրանք գալու են Իմ յետեւից, եւ Ես նրանց կը տամ յաւիտենական կեանքը, եւ նրանք չեն կորչի յաւիտեան» [Յովհ. Ժ 27]: Եւ արդ, եթէ Ինքն է Աստուծոյ իմաստութիւնը, եւ ամէն հասակ Իրենից է, ապա ինչո՞ւ ասաց. «Յիսուս զարգանում էր իմաստութեամբ եւ հասակով» [Ղուկ. Բ 52]: Եւ եթէ Հայրն Իր Բանի եւ Որդու միջոցով է ստեղծել ամէն ինչ, ապա պարզ է, որ Նրա մարմնին էլ է յարութիւն տուել Նրա միջոցով: Արդ, Նրա ձեռքով յարութիւն տուեց Նրան եւ Նրա ձեռքով կեանք տուեց Նրան: Մարմնով յարութիւն է առնում որպէս մարդ եւ կեանք է ստանում որպէս մարդ՝ «կերպարանքով որպէս մարդ լինելով» [Փիլ. Բ 7]. եւ Ինքը որպէս Աստուած յարութիւն է տալիս Իր տաճարին եւ կեանք՝ Իր մարմնին: Եւ դարձեալ երբ ասում է. «Ում Հայրը սրբացրեց եւ աշխարհ ուղարկեց» [Յովհ. Ժ 36], ապա մէկ այլ տեղ Նրա մասին ասում է. «Եւ ես ինձ սրբացնում եմ, որպէսզի նրանք էլ սրբացուեն ճշմարտութեամբ» [Յովհ. ԺԷ 19]: Իսկ երբ ասում է. «Աստուա՛ծ իմ, Աստուա՛ծ իմ, ինչո՞ւ թողեցիր Ինձ» [Մատթ. ԻԷ 46],

ապա դա մեր անունից է ասում, որովհետեւ [Նրա համար ասուեց]. «Ծառայի կերպարանք առնելով, մարդկանց նման դառնալով եւ կերպարանքով որպէս մարդ լինելով» [Փլպ. Բ 7], եւ՝ «Հնազանդ լինելով մինչեւ մահ եւ այն էլ՝ մահուան՝ խաչի վրայ» [Փլպ. Բ 8]: Նոյնպէս էլ Եսային է ասում. «Նա մեր մեղքերն է վերցնում եւ մեզ համար չարչարւում» [Ես. ԾԳ 4], քանի որ Իր համար չի չարչարւում, այլ մեզ համար, եւ Աստուած Իրե՛ն չթողեց, այլ մեզ, եւ մեզ՝ թողնուածներիս համար եկաւ աշխարհ: Եւ երբ ասում է. «Դրա համար էլ Աստուած Նրան առաւել բարձրացրեց եւ Նրան շնորհեց մի անուն, որ վեր է, քան ամէն անուն» [Փլպ. Բ 8], եւ ինչ որ սրանից յետոյ է ասում, տաճարի մասին է ասում, որն Իր մարմինն է:

Որովհետեւ ոչ թէ Բարձրեալն է բարձրանում, այլ Բարձրեալի մարմինը, եւ Բարձրեալի մարմնին անուն շնորհեց, որ վեր է, քան ամէն անուն, եւ ոչ թէ Աստուծոյ Բանն ըստ շնորհի կոչուեց Աստուած, այլ Նրա մարմինը Նրա հետ Աստուած ասուեց: Որովհետեւ չասաց՝ Բանն Աստուած եղաւ, այլ «Բանն Աստուած էր» [Յովհ. Ա 1], այսինքն՝ միշտ կար Բանն Աստուած, եւ այս նոյն Աստուած մարմին եղաւ, որպէսզի Նրա մարմինը լինի Բանն Աստուած, ինչպէս որ Թովմասը շօշափելով Նրա մարմինը՝ գոչեց. «Տէ՛ր իմ եւ Աստուա՛ծ իմ» [Յովհ. Ի 28]՝ երկուսը միասին Աստուած կոչելով: [Այս մասին] Յովհաննէսը նոյնպէս գրեց. «Կենաց Բանի մասին, որ սկզբից էր, որի մասին լսեցինք, որին ականատես եղանք, եւ որին շօշափեցին մեր ձեռքերը» [Ա Յովհ. Ա 1]: Արդ, այս ամէնից յայտնի է, որ մարմնի մէջ շօշափուեց Որդին եւ Աստուծոյ Բանը, եւ երկու դէպքում էլ, ըստ աստուածային Գրքի, շօշափուողը Կենաց Բանն է: Եւ երբ ասում է. «Քանի որ Սուրբ Հոգին դեռեւս չկար, որովհետեւ Յիսուս դեռ փառաւորուած չէր» [Յովհ. է 39], նկատի ունի Նրա մարմինը, որ դեռ փառաւորուած չէր: Որովհետեւ ոչ թէ փառքի Տէրն է փառաւորւում, այլ փառքի Տիրոջ մարմինը: Այն փառաւորւում է՝ Նրա հետ երկինք բարձրանալով: Ուստի եւ որդեգրութեան հոգին էլ դեռ մարդկանց մէջ չէր, որովհետեւ նախապէս մարդուց մարմին առնելով՝ դեռ երկինք չէր բարձրացել:

Արդ, որքան որ Գիրքն ասում է, թէ Որդին վերցրեց, Նրա մարդկութեան համար է ասում, ոչ թէ Աստուածութեան: Եւ երբ առաքեալն ասում է, թէ՝ «Քրիստոսի մէջ է բնակւում Աստուածութեան ամբողջ լիութիւնը մարմնապէս» [Կող. Բ 9], պէտք է հասկանալ, որ Աստուածութեան ամբողջ լիութիւնը բնակւում է Նրա մարմնի մէջ: Երբ ասում

է. «Որ իր Որդուն իսկ չխնայեց, այլ մեր բոլորի համար [մահուան] մատնեց նրան» [Հռոմ. Ը 32], մէկ ուրիշ տեղ էլ ասում է. «Ինչպէս որ Քրիստոս սիրեց Եկեղեցին եւ Իր անձը մատնեց նրա համար» [Եփես. Ե 25]:

Որովհետեւ Որդին չեկաւ Ինքն Իրեն փրկելու մահից, այլ մեզ՝ մեռեալներիս. եւ ոչ թէ Իր համար մեռաւ, այլ մեզ համար. քանի որ դրա համար էլ Ինքն ընդունեց մեր աղքատութիւնն ու անարգանքը, որպէսզի Իր ամբողջ հարստութիւնը մեզ շնորհի, որովհետեւ Նրա չարչարանքները մեր անչարչարութիւնն են, Նրա մահը՝ մեր անմահութիւնը, եւ Նրա արտասուքը՝ մեր խնդութիւնը, Նրա թաղուելը՝ մեր յարութիւնը, Նրա մկրտութիւնը՝ մեր սրբութիւնը: Քանզի ասում է. «Ինձ սրբացնում եմ նրանց համար, որպէսզի նրանք էլ սրբացուեն ճշմարտութեամբ» [Յովհ. ԺԷ 19]: Եւ Նրա վէրքերը մեր բժշկութիւնն են, որովհետեւ ասում է. «Նրա վէրքերով մենք բժշկուեցինք» [Ես. ԾԳ 5]: Նրա պատիժը մեր խաղաղութիւնն է, որովհետեւ [ասում է]. «Մեր խաղաղութեան համար Նա պատիժ կրեց» [Ես. ԾԳ 5], այսինքն՝ մեր խաղաղութեան համար Նա է պատժւում: Եւ Նրա անփառութիւնը մեր փառքն է. ուստի մեզ համար փառք էր խնդրում՝ ասելով. «Փառաւորի՛ր ինձ, Հա՛յր, Քեզ մօտ եղող այն փառքով, որ ունէի Քեզ մօտ նախքան աշխարհի լինելը» [Յովհ. ԺԷ 5]. որովհետեւ Նրանով ենք փառաւորուած: Նրա էջքը մեզ համար բարձրանալ է՝ ըստ գրուածի՝ «Եւ նրա հետ յարութիւն տուեց մեզ եւ նրա հետ նստեցրեց երկնքում ի Քրիստոս Յիսուս, որպէսզի գալիք յաւիտեաններում Իր շնորհի անչափելի մեծութիւնը քաղցրութեամբ ցոյց տայ մեր նկատմամբ ի Քրիստոս Յիսուս» [Եփես. Բ 6]: Եւ որ խաչի վրայ ասաց. «Հա՛յր, քո ձեռքն եմ աւանդում իմ հոգին» [Ղուկ. ԻԳ 46], այսինքն՝ Իր միջոցով Հօրն է աւանդում Իրենով կենդանութիւն տուած բոլոր մարդկանց, որովհետեւ Նրա անդամներն ենք, եւ այդ բոլոր անդամները մի մարմին են, որը Եկեղեցին է. ինչպէս երանելի Պօղոսը գրում է գաղատացիներին. «Որովհետեւ դուք ամէնքդ մէկ էք ի Քրիստոս Յիսուս» [Գաղ. Գ 28]: Արդ, Իրենով յանձնում է բոլորին:

Այսպէս էլ երբ ասում է. «Տէրն Ինձ ստեղծեց իր ճանապարհի սկզբին՝ Իր գործերի համար» [Առակ. Ը 22], ասում է Իրենով կառուցուած Եկեղեցու մասին: Քանզի ամէն ինչի Արարիչը ստեղծուած կամ արարած չէ, այլ Արարչով է նորոգւում արարածը՝ ըստ Պօղոսի խօսքի՝ «Որովհետեւ Նրա արարածներն ենք՝ ստեղծուած ի Քրիստոս

Յիսուս բարի գործերի համար» [Եփես. Բ 10], եւ դարձեալ ասում է. «Որպէսզի Եկեղեցու միջոցով յայտնի լինի այժմ երկնային իշխանութիւններին եւ պետութիւններին Աստուծոյ բազմազան իմաստութիւնը, Նրա յաւիտենական նախասահմանութեան համաձայն, որ Նա կատարեց մեր Տէր Յիսուս Քրիստոսով, որով համարձակութիւն եւ վստահելի հաղորդակցութիւն ունենք՝ Նրա նկատմամբ հաւատքի միջոցով» [Եփես. Գ 10-12]. եւ կրկին ասում է. «Քանի որ Նա ընտրեց մեզ Քրիստոսով նախքան աշխարհի արարումը, որպէսզի մենք սուրբ եւ անարատ լինենք Նրա առաջ սիրով, մեզ որդեգրութեան նախասահմանեց Յիսուս Քրիստոսի միջոցով» [Եփես. Ա 4-5]: Եւ դարձեալ՝ երկու ժողովուրդների համար ասում է. «Որպէսզի Իրենով երկուսին դարձնի մէկ նոր մարդ, խաղաղութիւն հաստատի եւ Իր խաչի միջոցով Աստուծոյ հետ հաշտեցնի երկուսին մէկ մարմնի մէջ՝ Իր խաչով սպանելով թշնամութիւնը» [Եփես. Բ 15-16]:

Եւ երբ ասում է. «Մի՛ կոչիր ինձ բարի. բարի չէ ոչ ոք, այլ միայն Աստուած» [Մարկ. Ժ 18], ասում է սա՝ ըստ մարմնի Իրեն մարդկանց հետ դասակցելով եւ ըստ Իրեն մօտեցած [երիտասարդի] ըմբռնելու չափի. որովհետեւ երիտասարդը միայն մարդ էր համարում Նրան եւ ոչ թէ Աստուած: Եւ սա է [Տիրոջ] պատասխանի իմաստը, որ եթէ Ինձ միայն մարդ ես կարծում եւ ոչ Աստուած, ապա մի՛ կոչիր Ինձ բարի, որովհետեւ մարդկային բնութիւնը չի կարող բարի լինել, այլ միայն Աստուած: Եւ այնուհետեւ աւելացնում է. «Պատուիրանները գիտես» [Մարկ. Ժ 19], եւ նրա հարցին՝ որո՞նք, պատասխանում է. «Մի՛ շնանար, մի՛ սպանիր» [Մարկ. Ժ 19] եւ մնացածները: Պատասխանում է եւ ասում. «Այդ բոլորը իմ մանկութիւնից ի վեր արել եմ, արդ, ի՞նչ եմ պակաս թողել» [Մարկ. Ժ 20]: Ասում է նրան. «Ցանկանո՞ւմ ես կատարեալ լինել, գնա վաճառի՛ր, ինչ որ ունես, եւ աղքատների՛ն տուր եւ երկնքում գանձեր կ՚ունենաս. եւ վերցրո՛ւ խաչդ եւ արի՛ Իմ յետեւից» [Մատթ. ԺԹ 20]: Արդ, այսպէս Տէրը ցոյց տուեց, որ բարին Իրեն էլ է յատուկ, որովհետեւ ոչ ոք չի կարող չարիքին հետեւելով յաւիտենական կեանք ժառանգել: Եւ երբ վերջին օրերի մասին ասում է, թէ՝ «Ոչ ոք չգիտի... եւ ոչ էլ՝ Որդին, այլ միայն Հայրը» [Մարկ. ԺԳ 32], մարդկօրէն է ասում, որովհետեւ եթէ Հօրը գիտի, ապա ինչպէ՞ս չգիտի, թէ երբ է վերջին օրը, քանզի ասում է. «Ոչ ոք չի ճանաչում Հօրը, եթէ ոչ՝ Որդին, եւ ում Որդին կամենայ յայտնել» [Մատթ. ԺԱ 28]: Եւ եթէ Սուրբ Հոգին գիտի բոլոր աստուածային բաները, [ապա] Որդին

ինչպէ՞ս չգիտի օրը, որն Ինքն է ստեղծել: Եւ եթէ յաւիտեաններն ու դարերը Նրանով եղան, ակնյայտ է, որ վերջին օրը նոյնպէս յաւիտեանների ու ժամանակների մէջ է, որի մասին չէր կարող չիմանալ:

Արդ, Տիրոջ կողմից ասուած բոլոր նուաստ խօսքերը վերաբերում են Նրա աղքատութեանը, որպէսզի մենք դրանցով հարստանանք եւ ոչ թէ դրանցով հայհոյենք Աստուծոյ Որդուն: Այս իսկ պատճառով Աստուծոյ Որդին մարդու որդի եղաւ, որպէսզի մարդկանց որդիները, այսինքն՝ Ադամի [որդիները], Աստուծոյ որդիներ դառնան: Որովհետեւ անճառաբար, անպատմելիօրէն, անհաս մշտնջենաւորութեամբ Հօրից ի վերուստ ծնուածը ժամանակի մէջ Կոյս Մարիամից եղաւ ներքեւից, որպէսզի սկզբնապէս ներքեւից ծնուածներս երկրորդ անգամ ի վերուստ ծնուենք, այսինքն՝ Աստծուց: Արդ, Նա երկրից միայն մայր ունի, իսկ մենք երկնքում՝ միայն Հայր: Այս պատճառով էլ Ինքն Իրեն մարդու որդի է կոչում, որպէսզի մարդիկ էլ հայր կոչեն Աստծուն. «Հա՛յր մեր, որ երկնքում ես» [Մատթ. Զ 9]: Արդ, ինչպէս մենք՝ ծառաներս, Աստուծոյ որդիներ եղանք, այնպէս էլ երկնքի Տէրն Իր ծառայի որդին եղաւ, այսինքն՝ Ադամի, որովհետեւ վերցնելով մարդկանց մահկանացու հօրը՝ մարդկանց տուեց Իր անմահ Հօրը՝ համաձայն ասածի, թէ՝ «Նրանց իշխանութիւն տուեց լինելու Աստուծոյ որդիներ» [Յովհ. Ա 12]: Ուստի, Աստուծոյ Որդին մարմնով ճաշակեց մահը Իր մարմնական մօր համար, որպէսզի մարմնական որդիներն էլ Նրա կեանքին հաղորդակից լինեն Իրենց հոգեւոր Հայր Աստուծոյ համար: Արդ, Նա Աստուծոյ Որդի է ըստ բնութեան, իսկ մենք՝ ըստ շնորհի: Եւ դարձեալ, Նա՝ ըստ տնօրէնութեան եւ մեզ համար Ադամի որդի դարձաւ, իսկ մենք բնութեամբ ենք Ադամի որդիներ: Ուստի ասում է. «Գնում եմ դէպի իմ Հայրը եւ ձեր Հայրը, դէպի իմ Աստուածը եւ ձեր Աստուածը» [Յովհ. Ի 17], որովհետեւ Աստուած, ինչպէս նախապէս ասացի, Նրա Հայրն է ըստ բնութեան, իսկ մերը՝ ըստ շնորհի: Եւ Նրան Աստուած եղաւ ըստ տնօրէնութեան, որովհետեւ մարդ է, իսկ մեզ Տէր է եւ Աստուած ըստ բնութեան: Եւ այս պատճառով Հօր Բանը եւ Որդին, միանալով մարմնի հետ, մարմին եղաւ, որպէսզի եւ մարդիկ, միանալով Հոգու հետ, լինեն մէկ Հոգի: Արդ, Նա Աստուած է մարմնազգեստ, իսկ մենք՝ մարդիկս, հոգեզգեստ. որովհետեւ մարդկանց էութիւնից պտուղ առնելով, այսինքն՝ Աբրահամի զաւակներից, այսինքն՝ «ծառայի կերպարանքով եւ մարդկանց նման լինելով» [Փլպ. Բ 7]՝ Աստուծոյ էութիւնից մեզ տուեց Սուրբ Հոգու պտուղը, որպէսզի

բոլորն էլ Աստուծոյ որդիներ դառնան՝ Աստուծոյ Որդու նմանութեամբ: Ինքը՝ Աստուծոյ ճշմարիտ Որդին, հագաւ մեզ բոլորիս, որպէսզի մենք բոլորս հագնենք մէկ Աստծուն:

Արդ, ամբարշտութիւն է ասելը, որ Աստուծոյ Հոգին ստեղծուած կամ արարած է, որովհետեւ Հին եւ Նոր Կտակարանների Գրքերը ասում են, որ Նա համադաս եւ փառաբանակից է Հօրը եւ Որդուն, որովհետեւ նոյն Աստուածութիւնից եւ էութիւնից է, ինչպէս Տէրն ասաց. «Նրա ներսից կենդանի ջրերի գետեր պիտի բխեն: Նա այդ ասում էր Հոգու մասին, որին ընդունելու էին Իրեն հաւատացողները» [Յովհ. է 38-39], ինչպէս որ Յովէլը Հօր անունից ասաց. «Իմ Հոգուց կը հեղեմ բոլոր մարմինների վրայ, եւ կը մարգարէանան ձեր որդիներն ու դուստրերը» [Յովէլ Բ 28]. եւ այս պատճառով փչեց առաքեալների երեսին՝ ասելով. «Առէ՛ք Սուրբ Հոգին» [Յովհ. Ի 22]. որպէսզի սովորենք, որ Աստուածութեան լիութիւնից տրուեց Հոգին աշակերտներին, քանզի ասում է՝ Քրիստոսի մէջ, այսինքն՝ նրա մարմնի մէջ, «բնակւում է Աստուածութեան ամբողջ լիութիւնը մարմնապէս» [Կող. Բ 9], ինչպէս ասում է նաեւ Յովհաննէս Մկրտիչը. «Մենք ամէնքս Նրա լիութիւնից ստացանք» [Յովհ. Ա 16]: Քանզի մարմնաւոր տեսքով, այսինքն՝ ինչպէս աղաւնի, Սուրբ Հոգին երեւաց՝ իջնելով եւ մնալով Նրա վրայ, որովհետեւ մեր մէջ բնակւում է Աստուածութեան պտուղը եւ առհաւատչեան, իսկ Քրիստոսի մէջ՝ Աստուածութեան ամբողջ լիութիւնը: Եւ ոչ ոք թող չկարծի, թէ Նա, նախապէս չունենալով, ընդունեց [Հոգին]: Քանզի Ինքը, որպէս Աստուած, ի վերուստ առաքում է Սուրբ Հոգուն, եւ Ինքն էլ, որպէս մարդ, ընդունում է երկրի վրայ: Արդ, [Սուրբ Հոգին] Նրանից Նրա վրայ իջաւ, Նրա Աստուածութիւնից՝ Նրա մարդկութեան վրայ: Նաեւ Եսային աղաղակում է Հօր անունից՝ ասելով. «Այսպէս է ասում քո Տէր Աստուած, որ արարեց եւ ստեղծեց քեզ որովայնից. «Մի՛ վախեցիր, ծառա՛յ իմ Յակոբ, եւ դու, սիրեցեա՛լ իմ Իսրայէլ, որին ընտրել եմ, որովհետեւ ես ջուր պիտի տամ ծարաւածներին, որոնք ընթանում են անջրդի տեղերով. Իմ Հոգին պիտի դնեմ քո բերանում եւ Իմ օրհնութիւնը՝ քո զաւակի վրայ»» [Ես. ԽԴ 2-3]: Իսկ Աւետարանում Յիսուս խոստանում է ջուր տալ ծարաւեալներին՝ սամարացի կնոջը ասելով Սուրբ Հոգու մասին. «Եթէ դու գիտենայիր Աստուծոյ պարգեւները, եւ Ո՞վ է, որ քեզ ասում է. «Ինձ խմելու ջուր տուր», գուցէ ինքդ արդարեւ Նրանից ուզէիր, եւ քեզ կենդանի ջուր կը տար» [Յովհ. Դ 10]: Եւ փոքր-ինչ յետոյ նրան ասում

է. «Ով այս ջրից խմի, նորից կը ծարաւի, բայց ով խմի այն ջրից, որ ես եմ տալու նրան, յաւիտեան չի ծարաւի. իսկ ջուրը, որ ես նրան տալու եմ, նրա մէջ կը լինի բխող ջրի աղբիւր յաւիտենական կեանքի համար» [Յովհ. Դ 13-14]: Եւ այս մասին Դաւիթը սաղմոսելով ասում է, թէ՝ «Քեզանից է կեանքի աղբիւրը, եւ Քո [երեսի] լոյսով ենք տեսնում լոյսը» [Սաղմ. ԼԵ 10], որովհետեւ գիտի, որ Որդին Հօր մօտ է եւ աղբիւրն է Սուրբ Հոգու: Ինչպէս ասում է Երեմիայի միջոցով. «Երկու չարիք գործեց Իմ ժողովուրդը. Ինձ՝ կենդանի ջրի աղբիւրիս, լքեց եւ իր համար ծակ ջրհորներ փորեց, որոնք ջուր չեն կարող պահել» [Երեմ. Բ 13]: Եւ երբ քերովբէները փառաբանում են Աստծուն՝ երիցս ասելով՝ «Սո՛ւրբ, սո՛ւրբ, սո՛ւրբ Տէր զօրութիւնների» [Ես. Զ 3], փառաբանում են Հօրը, Որդուն եւ Սուրբ Հոգուն. ուստի ինչպէս Հօր եւ Որդու, այդպէս էլ Սուրբ Հոգու անունով ենք մկրտւում եւ Աստուծոյ որդիներ դառնում, եւ ոչ թէ՝ աստուածների: Որովհետեւ Հայրը, Որդին եւ Սուրբ Հոգին է Զօրութիւնների Տէրը, քանզի մէկ Աստուածութիւն է եւ մէկ Աստուած: Ուստի ինչ որ ըստ Եսայու Հայրն ասաց, նոյնն էլ Յովհաննէսն ասում է, թէ Որդին ասաց, իսկ Պողոս [առաքեալը] «Գործք առաքելոց»-ում ասում է, թէ Սուրբ Հոգին ասաց: Քանզի Եսային այսպէս է ասում, թէ՝ «Տեսայ Զօրութիւնների Տիրոջը, որ նստած էր բարձր ու վերացած աթոռին, եւ տաճարը լի էր Նրա փառքով, եւ սերովբէներ կային նրա շուրջ, որոնցից իւրաքանչիւրը վեց թեւ ունէր. երկուսով իրենց երեսներն էին ծածկում, երկուսով՝ իրենց ոտքերը եւ երկուսով էլ թռչում էին: Ձայնակցում էին իրար եւ ասում. «Սո՛ւրբ, սո՛ւրբ, սո՛ւրբ Տէր զօրութիւնների, ամբողջ երկիրը լի է Նրա փառքով»» [Ես. Զ 1-3]: Եւ քիչ յետոյ ասում է. «Լսեցի Տիրոջ ձայնը, որն ասում էր. «Ո՞ւմ ուղարկեմ, եւ ո՞վ կը գնայ այդ ժողովրդի մօտ»: Եւ [ես] ասացի. «Ահաւասիկ ես, ի՛նձ ուղարկիր»: Եւ ինձ ասաց. «Գնա՛ այդ ժողովրդի մօտ եւ ասա՛. «Լսելով կը լսէք, բայց չէք իմանայ, տեսնելով կը տեսնէք, բայց չէք ճանաչի». քանզի այդ ժողովրդի սիրտը կարծրացել է, ծանր են լսում իրենց ականջներով, իրենց աչքերն էլ փակել են, որպէսզի չլինի թէ երբեւէ աչքերով տեսնեն ու ականջներով լսեն եւ սրտով իմանան ու դարձի գան, եւ [ես] բժշկեմ նրանց» [Ես. Զ 8-10]: Իսկ Յովհաննէս աւետարանիչն ասաց. «Այն պատճառով հրեաները չէին կարողանում հաւատալ Յիսուսին, քանզի Եսային ասաց. «Նրանց աչքերը կուրացրեց եւ նրանց սրտերը կարծրացրեց, որպէսզի երբեւէ աչքով չտեսնեն եւ սրտով չիմանան ու դարձի չգան, եւ նրանց

չբժշկեմ»: Եսային այս ասաց, երբ Նրա փառքը տեսաւ» [Յովհ. ԺԲ 39-41], այսինքն՝ Որդու փառքը, քանի որ Յիսուս՝ Տէր Սաբաովթ է, որովհետեւ Տէր Սաբաովթ թարգմանւում է «Զօրութիւնների Տէր», ինչպէս ասում է Դաւիթը. «Զօրութիւնների Տէրը՝ Նա Ինքն է փառքի Թագաւորը» [Սաղմ. ԻԳ 10]: Իսկ փառքի Տէրը, ըստ Պօղոս [առաքեալի], խաչուած Քրիստոսն է [հմմտ. Ա Կոր. Բ 8]. ըստ այսմ՝ Դաւիթն ասաց. «Տէրը կը հովուի ինձ, եւ ինձ ոչինչ չի պակասի» [Սաղմ. ԻԲ 1], եւ մէկ այլ տեղում ասում է. «Որ հովւում ես Իսրայէլին, ո՛ւշ դարձրու, որ առաջնորդում ես Յովսէփի ցեղին ինչպէս հօտ, [Դո՛ւ], որ քերովբէների վրայ ես նստում, յայտնուի՛ր» [Սաղմ. ՀԹ 2]: Իսկ Աւետարանում Որդին ասում է. «Ես եմ լաւ հովիւը» [Յովհ. Ժ 11]: Արդ, Ինքը Որդին է, որ նստում է քերովբէների վրայ եւ հովւում է Իսրայէլին: Իսկ Պօղոս [առաքեալը] «Գործք առաքելոց»-ում ասաց. «Սուրբ Հոգին է Եսայու միջոցով ասել այս» [Գործ. ԻԸ 25], ինչ որ Եսային ասաց, թէ՝ «Զօրութիւնների Տէրն ասաց ինձ» [Ես. ԺԴ 22]: Արդ, Հայրը, Որդին եւ Սուրբ Հոգին է Զօրութիւնների Տէրը:

Եւ երբ Գիրքը Հօր մասին ասում է, թէ՝ «Նա ստեղծեց բոլոր երեւելիները եւ աներեւոյթները» [Կող. Ա 16], ապա մէկ այլ տեղում էլ Գիրքն ուսուցանում է մեզ, թէ Որդու միջոցով ստեղծեց: Ոչ թէ Հայրն առանձին այլ բան ստեղծեց, եւ Որդին՝ մէկ այլ բան, այլ ինչ որ գործում է Հայրը, գործում է Իր զօրութեան միջոցով, որը Որդին է, որովհետեւ «ամէն ինչ Նրանով եղաւ» [Յովհ. Ա 3]: Այդպէս էլ երբ Որդին ասում է. «Քանդեցէ՛ք այդ տաճարը, երեք օրուայ ընթացքում կը վերականգնեմ», ասում է, ինչպէս յայտնի է, Իր մարմնի մասին [Յովհ. Բ 19-21]. եւ մէկ այլ տեղում Գիրքն ասում է, թէ՝ «Հայրը յարութիւն տուեց Իր Որդուն մեռելներից» [Գաղ. Ա 1]: Ճշմարիտ է ասում, որովհետեւ յարութիւն տուեց Իր Բանի եւ Որդու միջոցով: Եւ չենք ասում, թէ մարմինն Աստուծոյ Բանն է, այլ ասում ենք, որ Որդու մարմինն է: Արդ, երբ ասում է՝ մարմինը յարութիւն առաւ, նկատի ունի, որ Որդին յարութիւն առաւ մեռելներից. ուստի ըստ մարմնի ենք ասում, թէ մեռաւ, թաղուեց եւ յարութիւն առաւ մեռելներից, իսկ ըստ հոգու [Նա] երկնքում, երկրի վրայ եւ ամէնուրեք էր: Արդ, որովհետեւ նախ հարուստ էր, այսինքն՝ Աստուած էր, իսկ յետոյ մեզ համար աղքատացաւ, այսինքն՝ մարդացաւ եւ ամէն ինչով նմանուեց մեզ, բացի մեղքից, այս պատճառով որպէս մարդ կեանք ստացաւ [Նա], որ ունէր կեանքը, որովհետեւ Ինքն է կեանքը, սակայն ստանում է մեզ համար:

Եւ որպէս մարդ աճում էր հասակով եւ իմաստութեամբ [Նա], որ Աստուծոյ մշտնջենական զօրութիւնն ու իմաստութիւնն [է]: Եւ որպէս մարդ սրբւում է [Նա], որ միշտ սուրբ է եւ սրբուելու կարիք չունի, որովհետեւ ասում է. «Իմ անձը սրբացնում եմ նրանց համար, որպէսզի նրանք էլ սրբացուեն ճշմարտութեամբ» [Յովհ. ԺԷ 19]: Եւ որպէս մարդ վեր է բարձրանում՝ ընդունելով մի անուն, որ վեր է բոլոր անուններից, անուն, որը միշտ ունէր ըստ Իր բնութեան, քանզի ասուած է. «Բանն Աստուած էր» [Յովհ. Ա 1]:

Արդ, ամէն անգամ, երբ Գիրքն ասում է, թէ Որդին վերցրեց, Նրա մարմնի համար է ասում, որ Եկեղեցու պտուղն է, քանզի ասում է. «Քրիստոս է պտուղը» [Ա Կոր. ԺԵ 20]: Արդ, պտուղը վերցրեց մի անուն, «որ վեր է բոլոր անուններից», յարութիւն առաւ [Նրա] զօրութեամբ նաեւ մարմնի զանգուածը եւ Նրա հետ նստեց՝ ըստ ասուածի՝ «Նրա հետ յարութիւն տուեց մեզ եւ Նրա հետ նստեցրեց» [Եփես. Բ 6]. ուստի մարդիկ ըստ շնորհի կոչուեցին աստուածներ եւ Աստուծոյ որդիներ: Արդ, [նախ] Տէրն Իր մարմնին մեռելներից յարութիւն տուեց եւ Իրենով բարձրացրեց, իսկ սրանից յետոյ յարութիւն է տալիս նաեւ Իր մարմնի անդամներին. եւ որպէս Աստուած՝ նրանց շնորհում է այն ամէնը, ինչ Ինքը վերցրեց որպէս մարդ: Արդ, Ինքն Իրեն կեանք է շնորհում, Ինքն Իրեն սրբում է եւ Ինքն Իրեն բարձրացնում: Իսկ երբ ասում է, թէ Հայրը Նրան սրբեց, աշխարհ ուղարկեց, յարութիւն տուեց, անուն շնորհեց եւ կեանք տուեց, յայտնի է, որ Հայրն ամէն ինչ Նրա միջոցով արեց: Արդ, Նրա միջոցով է յարութիւն տալիս Նրան եւ Նրա միջոցով սրբում Նրան եւ Նրա միջոցով բարձրացնում Նրան եւ Նրա միջոցով կեանք տալիս Նրան: Եւ երբ Իր հոգին յանձնում է Հօր ձեռքը, Իրեն յանձնում է Աստծուն որպէս մարդ, որպէսզի բոլոր մարդկանց յանձնի Աստծուն, որովհետեւ ձեռքը Ինքն է, եւ Ինքն է Հօր ձեռքը: Եւ երբ ասում է. «Բոլոր բլուրներից առաջ ծնեց Ինձ» [Առակ. Ը 25], Եկեղեցու անունից է [ասում], որը սկզբնապէս ստեղծուած էր, իսկ յետոյ ծնուեց Աստծուց ըստ շնորհի: Այս պատճառով էլ «Առակներում» նախ ասուած է. «Տէրն ինձ ստեղծեց» [Առակ. Ը 22], եւ յետոյ՝ «Ծնեց» [Առակ. Ը 25]:

Եւ երբ Գիրքը Հօր մասին ասում է. «Մէկ Աստուած չստեղծե՞ց մեզ» [Մաղ. Բ 10], նոյնպէս էլ Որդու մասին է ասում, թէ՝ «Նրանով ամէն ինչ ստեղծուեց» [Կող. Ա 16]: Եւ նոյն բաները ասւում են Սուրբ Հոգու մասին: «Հանում ես,- ասում է,- նրանցից Հոգին, սպառւում եւ

հող են դառնում: Ուղարկում ես Քո Հոգին եւ ստեղծագործում նրանց եւ նորոգում երկրի երեսը» [Սաղմ. ՃԳ 29-30]: Եւ երբ Յիսուս Հօր մասին ասում է Պետրոս [առաքեալին]. «Երանի՛ է քեզ, որովհետեւ մարմինը եւ արիւնը չէ, որ յայտնեց քեզ, այլ Հայրը, որ երկնքում է» [Մատթ. ԺԶ 17], ապա Իր մասին էլ է նոյնն ասում. «Ոչ ոք չի ճանաչում Հօրը, եթէ ոչ Որդին, եւ նա, ում Որդին կամենայ յայտնել» [Մատթ. ԺԱ 27]. Նոյնպէս էլ Սուրբ Հոգու մասին է ասում Պողոս [առաքեալը]. «Բայց Աստուած մեզ յայտնեց Սուրբ Հոգու միջոցով, որովհետեւ Հոգին քննում է ամէն ինչ եւ Աստուծոյ խորութիւնները: Քանզի մարդկանցից ո՞վ է, որ որեւէ բան գիտի մարդու մասին, եթէ ոչ մարդու հոգին, որ նրա մէջ է: Նոյնպէս եւ ոչ ոք չգիտի Աստուծոյ խորութիւնները, եթէ ոչ՝ Աստուծոյ Հոգին» [Ա Կոր. Բ 10-11]: Արդ, ինչպէս որ մարդու հոգին իր մարդկութիւնից եւ էութիւնից անբաժան է, նոյնպէս եւ Աստուծոյ Հոգին օտար չէ Աստուածութեանը: Եւ երբ Եսայու միջոցով Տէրն ասում է. «Որդիներ ծնեցի եւ մեծացրի» [Ես. Ա 2], ապա Աւետարանում ասում է. «Մարմնից ծնուածը մարմին է, իսկ հոգուց ծնուածը՝ հոգի» [Յովհ. Գ 6], եւ դարձեալ. «Հոգին ուր ուզում է՝ փչում է, նրա ձայնը լսում ես, բայց չգիտես որտեղից է գալիս կամ ուր է գնում. այսպէս է եւ ամէն ոք, որ Հոգուց է ծնուած» [Յովհ. Գ 8]: Եւ Աւետարանի սկզբում Յովհաննէսն ասում է. «Իսկ ովքեր ընդունեցին Նրան՝ Իր [անունը] հաւատացողներին, իշխանութիւն տուեց Աստուծոյ որդիներ լինելու, որոնք ո՛չ արիւնից, ո՛չ մարմնի կամքից, ո՛չ մարդու կամքից, այլ Աստծուց ծնուեցին» [Յովհ. Ա 12-14]: Ուստի ովքեր Սուրբ Հոգուց են ծնուել, նրանք Աստծուց են ծնուել, եւ ովքեր մկրտուել են ի Քրիստոս, մկրտուել են ի Հայր եւ ի Սուրբ Հոգի: Եւ երբ Պետրոս [առաքեալն] Անանիային ասաց. «Ինչո՞ւ սատանան լցրեց քո սիրտը, որ դու ստէիր Սուրբ Հոգուն եւ ագարակի գումարից թաքցնէիր. մարդկանց չստեցիր, այլ Աստծուն» [Գործ. Ե 3-5], [ցոյց տուեց], որ ով ստում է Սուրբ Հոգուն, ստում է Աստծուն, Ով Հոգու միջոցով բնակւում է մարդկանց մէջ: Որովհետեւ ուր Աստուծոյ Հոգին է, այնտեղ էլ Աստուած է, քանզի ասում է. «Սրանով գիտենք, թէ Աստուած մեր մէջ է, քանզի Իր Հոգուց տուեց մեզ» [Ա Յովհ. Դ 13]:

Եւ երբ Գիրքն ասում է, թէ Սուրբ Հոգին խօսում էր Մարգարէների մէջ, մէկ այլ տեղ երանելի Պողոսն ասում է, թէ Հայրն էր խօսում Մարգարէների մէջ. «Աստուած բազում ձեւերով եւ բազում օրինակներով նախապէս խօսեց մեր հայրերի հետ մարգարէների միջոցով. իսկ այս վերջին օրերին խօսեց մեզ հետ Որդու միջոցով» [Եբր. Ա 1-2], իսկ մէկ այլ տեղ ասում է, թէ Որդին է խօսում. «Եթէ ապացոյց էք փնտռում, թէ ինձանով Քրիստոս է, որ ձեզ հետ խօսում է» [Բ Կոր. ԺԳ 3]: Իսկ Որդին ասաց, որ Հոգին է խօսում առաքեալների միջոցով. «Երբ ձեզ ատեանի մատնեն,- ասում է,- հոգ մի՛ արէք, թէ ինչպէս կամ ինչ պիտի խօսէք, քանի որ ոչ թէ դուք էք, որ պիտի խօսէք, այլ ձեր Հօր Հոգին, որ պիտի խօսի ձեր միջոցով» [Մատթ. Ժ 19-20]: Եւ երբեմն [առաքեալն] ասում է, թէ հաւատացեալների մարմինները Սուրբ Հոգու տաճար են, իսկ երբեմն ասում է, թէ նրանց անդամները Քրիստոսի անդամներն են, երբեմն էլ նրանց Հօր տաճար է անուանում. «Քանզի դուք,- ասում է,- կենդանի Աստուծոյ տաճար էք, ինչպէս ասաց Աստուած, թէ՝ «Պիտի բնակուեմ նրանց մէջ եւ պիտի ընթանամ նրանց միջով, նրանց Աստուածը պիտի լինեմ, եւ նրանք պիտի լինեն Իմ ժողովուրդը»» [Բ Կոր. Զ 16], եւ «Եթէ մէկն Աստուծոյ տաճարն ապականի, Աստուած էլ նրան պիտի ապականի» [Ա Կոր. Գ 17], եւ դարձեալ՝ «Չգիտէ՞ք, որ Աստուծոյ տաճար էք դուք, եւ Աստուծոյ Հոգին է բնակւում ձեր մէջ» [Ա Կոր. Գ 16]: Քանզի եթէ որեւէ մէկը Հոգու տաճար է, ապա նա նաեւ տաճար է Հօր եւ Որդու, որովհետեւ ուր Աստուծոյ Հոգին է բնակւում, այնտեղ էլ Աստուած է բնակւում: «Եւ ինչպէս որ Հայրը յարութիւն է տալիս մեռելներին եւ կենդանացնում, նոյնպէս եւ Որդին է կենդանացնում, ում կամենայ» [Յովհ. Ե 21]: Նոյնպէս եւ Հոգու մասին է ասում, թէ՝ «Հոգին է, որ կենդանացնում է, մարմինը ոչ մի բան չի կարող անել» [Յովհ. Զ 64]: Պողոս [առաքեալը] գրում է կորնթացիներին. «Իսկ Հոգին կենդանացնում է» [Բ Կոր. Գ 3-6]: Տեսնո՞ւմ ես, որ Հօր գործերը Սուրբ Գիրքը կոչում է Որդու եւ Սուրբ Հոգու գործեր, ինչպէս երանելի Պողոսն ուսուցանեց՝ ասելով. «Կան շնորհների զանազանութիւններ, բայց Հոգին նոյնն է, կան սպասաւորութիւնների զանազանութիւններ, բայց Տէրը նոյնն է, կան ներգործութիւնների զանազանութիւններ, բայց նոյն Աստուած է, որ ներգործում է ամէն ինչ ամէն ինչի մէջ» [Ա Կոր. ԺԲ 4-7]: Արդ, ասելով, թէ Հայրն է, որ ներգործում է ամէն ինչ ամէն ինչի մէջ, քիչ յետոյ ասում է, թէ Սուրբ Հոգին է ներգործում ամէն ինչ ամէն ինչի մէջ. «Քանզի այս ամէնը,- ասում է,- միեւնոյն Հոգին է ներգործում եւ բաժանում իւրաքանչիւրին, ինչպէս որ կամենում է» [Ա Կոր. ԺԲ 11]:

Եւ երբ երանելի Պողոսն ուսուցանում է Սուրբ Հոգու մասին, թէ Սուրբ Հոգին մեր ժառանգութեան առհաւատչեան է, ապա Դաւիթն

ասում է, որ Տէրն է մեր ժառանգութիւնը, քանզի ասում է. «Տէրն է իմ ժառանգութեան եւ բաժակի բաժինը» [Սաղմ. ԺԵ 5]: Եւ մէկ ուրիշ տեղ ասում է. «Տէ՛ր, քեզ կանչեցի եւ ասացի. «Դու ես իմ յոյսը եւ բաժինը ողջերի երկրում»» [Սաղմ. ՃԽԱ 6]: Իսկ Երեմիան ասաց, թէ՝ «Յակոբի ժառանգութիւնը Նա է, Ով ստեղծեց ամէն ինչ, եւ Նրա անունը Տէր է» [Երեմ. Ժ 16]: Արդ, մարգարէները ասացին՝ Տէրն է սուրբերի ժառանգութիւնը, իսկ Պօղոս [առաքեալն] ասաց, որ Սուրբ Հոգին է ժառանգութիւնը. «Որին հաւատալով,- ասում է,- կնքուեցինք խոստացուած Սուրբ Հոգով, որ մեր ժառանգութեան առհաւատչեան է» [Եփես. Ա 13-14]: Ինչպէս եւ Մովսէսի դէմքը կնքուեց Սուրբ Հոգով, երբ ընդունեց Աստուծոյ օրէնքները. եւ Իսրայէլի զաւակներից ոչ ոք չէր կարողանում նայել նրա վրայ, որովհետեւ «Տիրոջ երեսի լոյսը ծագեց» նրա վրայ [Սաղմ. Դ 7], ինչպէս գրուած է Աւետարանում. «Այնժամ արդարները իրենց Հօր արքայութեան մէջ կը փայլեն, ինչպէս արեգակ» [Մատթ. ԺԳ 43]: Քանզի Աստուած լոյս է, նոյնպէս եւ Որդին է ճշմարիտ լոյս, նաեւ Հոգին է լոյս, որովհետեւ ճշմարիտ լոյսի նոյն էութիւնից է, ինչպէս Եսային է ասում. «Լոյսն Իսրայէլի կրակ պիտի դառնայ եւ նրան սրբի բոցավառ կրակով» [Ես. Ժ 17]: Իսկ Աւետարանում Յովհաննէս Մկրտիչն ասում է Տիրոջ համար, թէ՝ «Նա կը մկրտի ձեզ Սուրբ Հոգով եւ կրակով» [Մատթ. Գ 11], իսկ մէկ այլ տեղ [Սուրբ Գիրքը] Տիրոջը սրբագործող է ասում. «Ես եմ սրբագործող Տէրը» [Ղեւտ. ԻԲ 16]: Եւ երբ Գիրքն Աստծուն հուր է անուանում. «Մեր Աստուածը,- ասում է,- լափող կրակ է» [Բ Օր. Դ 24, Երր. ԺԲ 29], նոյնպէս եւ Սուրբ Հոգու մասին է ասում, թէ՝ «Առաքեալներին երեւացին բաժանուած լեզուներ՝ նման կրակէ լեզուների, եւ նստեցին նրանցից իւրաքանչիւրի վրայ: Եւ բոլորը լցուեցին Սուրբ Հոգով եւ սկսեցին խօսել այլ լեզուներով, ինչպէս որ Հոգին նրանց խօսել էր տալիս» [Գործ. Բ 3-4]: Որովհետեւ նրանք, ովքեր հագել են Հոգին, հագել են Հօրը. «Որովհետեւ պէտք է,- ասում է,- որ այս ապականացու մարմինն անապականութիւն հագնի, եւ այս մահկանացու գոյութիւնը հագնի անմահութիւն» [Ա Կոր. Ժ 53]. քանզի ովքեր հագել են Աստուծոյ Հոգին, անապականութիւն են հագել, իսկ Աստուած անապականութիւն է:

Եւ երբ Դաւիթն ասում է. «Շատերն ասացին. «Ո՞վ ցոյց կը տայ մեզ բարութիւն»» [Սաղմ. Դ 6], Սուրբ Հոգու մասին է ասում. եւ մէկ

այլ տեղ էլ ասաց. «Տէրն Իր բարութիւնը չի պակասեցնի նրանցից, ովքեր անբծութեամբ են ընթանում» [Սաղմ. ՁԳ 13]: Նմանապէս էլ Մատթէոս [աւետարանիչը] Նրա մասին այսպէս է ասում. «Գիտէք ձեր որդիներին բարի պարգեւներ տալ, որքա՜ն եւս առաւել ձեր Հայրը, որ երկնքում է, բարիքներ կը տայ նրանց, որ Նրանից խնդրում են» [Մատթ. է 10]: Իսկ Ղուկաս [աւետարանիչը], նոյն օրինակը բերելով, մեկնում է, թէ ինչ են նշանակում բարիքները՝ ասելով. «Եթէ դուք, որ չար էք, գիտէք բարի պարգեւներ տալ ձեր որդիներին, որչա՜փ եւս առաւել ձեր երկնաւոր Հայրը կը տայ Սուրբ Հոգին Իրեն հաւատացողներին» [Ղուկ. ԺԱ 13]: Քանզի եթէ Սուրբ Հոգին միակ Բարի էութիւնից չլինէր, ապա Նա իսկապէս չէր կոչուի բարի, այնինչ Տէրը մարդացած լինելու պատճառով հրաժարւում էր բարի կոչուելուց՝ ասելով. «Մի՛ կոչիր Ինձ բարի. բարի չէ ոչ ոք, այլ միայն Աստուած» [Մարկ. Ժ 18]: Իսկ Գիրքը չի հրաժարւում բարի կոչել Սուրբ Հոգուն՝ համաձայն Դաւթի, որն ասում է. «Քո բարի Հոգին ինձ կ՚առաջնորդի դէպի արդար երկիր» [Սաղմ. ՃԽԲ 10]: Եւ երբ Տէրը դարձեալ Իր մասին ասում է. «Ես եմ կենդանի հացը, որ երկնքից է իջած» [Յովհ. Զ 51], մէկ այլ տեղ էլ Սուրբ Հոգին է կոչում երկնաւոր հաց՝ ասելով. «Մեր հանապազօրեայ հացը տո՛ւր մեզ այսօր» [Մատթ. Զ 11]: Քանզի մեզ ուսուցանեց աղօթելիս այս կեանքում խնդրել հանապազօրեայ հացը, այսինքն՝ հանդերձեալը, որի պտուղն ունենք այս կեանքում՝ Քրիստոսի մարմնով հաղորդուելով, ինչպէս Ինքն ասաց. «Եւ հացը, որ Ես կը տամ, Իմ մարմինն է, որը Ես կը տամ, որպէսզի աշխարհը կեանք ունենայ» [Յովհ. Զ 52]: Քանզի Տիրոջ մարմինն է կենդանանարար հացը, որովհետեւ կենդանարար Հոգուց յղացաւ. «Քանզի Հոգուց ծնուածը հոգի է» [Յովհ. Գ 6]:

Եւ երբ Երեմիան Աստուծոյ մասին ասաց, թէ Նա առաջնորդեց Իսրայէլին անապատում. «Եւ չասացիք. «Ո՞ւր է Տէրը, որ մեզ հանեց եգիպտացիների երկրից եւ առաջնորդեց մեզ անապատում»» [Երեմ. Բ 6], իսկ Եսային ասաց, որ Սուրբ Հոգին առաջնորդեց Իսրայէլին անապատում. «Նրանց անցկացրեց անդունդներով, ինչպէս ձին է անցնում անապատով, եւ նրանք չյոգնեցին, եւ ինչպէս հօտը՝ դաշտի միջով. Տիրոջ Հոգին իջաւ եւ առաջնորդեց նրանց» [Ես. ԿԳ 13]: Իսկ Պօղոս [առաքեալը] կորնթացիներին ասաց, թէ Քրիստոսն էր առաջնորդում. «Որովհետեւ խմում էին հոգեւոր Վէմից, որ գնում էր նրանց հետ, եւ Վէմը Ինքը՝ Քրիստոսն էր» [Ա Կոր. Ժ 4]: Եւ երբ Պօղոս [առաքեալն]

ասաց, որ ինքն [Աստծուց] է կոչուած. «Աստուած ընտրեց ինձ իմ մօր որովայնից եւ կոչեց Իր շնորհների միջոցով՝ յայտնելու ինձանով Իր Որդուն, որպէսզի աւետարանեմ Նրան հեթանոսների մէջ» [Գաղ. Ա 15-16], ապա հռոմէացիներին անուանեց Քրիստոսից կանչուածներ՝ նրանց գրելով. «Որոնց թւում էք եւ դուք՝ կանչուածներդ Յիսուս Քրիստոսի» [Հռոմ. Ա 6]: Իսկ Սուրբ Հոգին ասաց, որ Պողոսին եւ Բառնաբասին կանչեն՝ հեթանոսներին Քրիստոս աւետարանելու [տե՛ս Գործ. ԺԳ 2], եւ, ո՛վ զարմանք, տաճարում Յիսուս ասաց Պողոսին. «Գնա՛, որովհետեւ Ես քեզ պէտք է ուղարկեմ հեռաւոր հեթանոսների մօտ» [Գործ. ԻԲ 21]: Եւ Պողոս [առաքեալը] գաղատացիներին գրեց. «Պողոսը՝ առաքեալ, ոչ մարդկանց կողմից եւ ոչ էլ մարդու միջոցով, այլ Յիսուս Քրիստոսի եւ Հայր Աստուծոյ, որ յարութիւն տուեց Նրան մեռելներից» [Գաղ. Ա 1], եւ փոքր-ինչ յետոյ ասում է. «Յայտնում եմ ձեզ, եղբայրնե՛ր, որ Աւետարանը, որ ձեզ աւետարանեցի, ըստ մարդու չէ, եւ ես մարդուց չառայ, ոչ էլ որեւէ մէկից սովորեցի, այլ Յիսուս Քրիստոսի յայտնութիւնից» [Գաղ. Ա 11-12]: Այսուհանդերձ ասւում է, որ Սուրբ Հոգին է Պողոսին եւ Բառնաբասին ուղարկել հեթանոսներին Քրիստոս քարոզելու:

Եւ երբեմն մարգարէները խօսում են Հօր անունից, ինչպէս սաղմոսներում. Աստուած ասում է. «Մէկ անգամ երդուեցի Իմ սրբութեամբ, որ Դաւթին չեմ ստի. նրա սերունդը յաւիտեան կը մնայ, եւ ինչպէս արեւ՝ նրա աթոռն Իմ առջեւ է» [Սաղմ. ՁԸ 36-37]. եւ դարձեալ. «Քո որովայնի պտղից պիտի նստեցնեմ քո գահին» [Գործ. Բ 30]. ինչպէս եւ Պետրոս [առաքեալն] ասաց, թէ՝ «Դաւիթը մարգարէ էր եւ գիտէր, որ Աստուած նրան երդուելով խոստացաւ՝ նրա որովայնի պտղից Քրիստոսին նստեցնել նրա գահի վրայ» [Գործ. Բ 30]. իսկ երբեմն Որդու անունից, ինչպէս Եսային ասաց. «Այսպէս է ասում Տէրը. «Ձեր պատճառով Իմ անունը մշտապէս հայհոյւում է հեթանոսների մէջ. դրա համար Իմ ժողովուրդն այդ օրը պիտի ճանաչի Իմ անունը, թէ Ես եմ, որ խօսում եմ, եւ ահա մերձ եմ»» [Ես. ԾԲ 5-6]. իսկ երբեմն Սուրբ Հոգու անունից, ինչպէս Ագաբոս մարգարէն ասաց. «Այսպէս է ասում Սուրբ Հոգին այն մարդուն, ում գօտին է սա...» [Գործ. ԻԱ 11]. եւ կրկին Պողոս [առաքեալը] Տիմոթէոսին գրում է. «Իսկ Սուրբ Հոգին յայտնապէս ասում է, թէ վերջին ժամանակներում ոմանք պիտի հեռանան հաւատից» [Ա Տիմ. Դ 1]. եւ դարձեալ. «Հոգին Փիլիպպոսին ասաց. «Մօտեցի՛ր եւ բարձրացի՛ր եթովպացի ներքինիի

կառքը» [Գործ. Ը 29]: Եւ Եզեկիէլ մարգարէն մեղադրելով ասում էր Հին [Ուխտի] ժողովրդին. «Այդ ամէնով տրտմեցրիր ինձ,- ասում է Տէրը» [Եզեկ. ԺԶ 43], իսկ Պողոս [առաքեալը] Նոր [Ուխտի] ժողովրդին գրում է. «Եւ մի՛ տրտմեցրէք Աստուծոյ Սուրբ Հոգուն, որով կնքուեցիք փրկութեան օրուայ համար» [Եփես. Դ 30]: Եւ Դաւիթը հրեաների մասին ասում էր. «Եւ բարկացրին Աստծուն անապատում» [Սաղմ. ՀԷ 40]. Եսային էլ նրանց մասին [ասաց]. «Իսկ նրանք ըմբոստ եղան եւ բարկացրին Նրա Սուրբ Հոգուն, եւ Տէրը նրանց թշնամի դարձաւ» [Ես. ԿԳ 10]. Ստեփանոսը նոյնպէս «Գործք առաքելոց»-ում ասում է. «Խստապարանոցնե՛ր եւ սրտով ու ականջներով անթլպատնե՛ր, դուք միշտ Սուրբ Հոգուն հակառակւում էք, ինչպէս ձեր հայրերը» [Գործ. Է 51]: Եւ երբ Պողոս [առաքեալը] Հօր մասին ասում է, թէ՝ «Աստուած արդարացնում է, ո՞վ է, որ դատապարտելու է» [Հռոմ. Ը 33], [ապա] նոյնն ասում է ե՛ւ Որդու, ե՛ւ Սուրբ Հոգու մասին. «Բայց լուացուեցիք, մաքրուեցիք, արդարացուեցիք մեր Տէր Յիսուս Քրիստոսի անունով եւ մեր Աստուծոյ Հոգով» [Ա Կոր. Զ 11]: Եւ Տէրն Իր մասին սատանային ասաց. «Քո Տէր Աստծուն չպիտի փորձես» [Մատթ. Դ 7], իսկ Պետրոս [առաքեալը] Սափիրային ասաց. «Ինչո՞ւ միաբանուեցիք՝ փորձելու Տիրոջ Հոգին» [Գործ. Ե 9]:

Եւ Աստուած է, որ ամէն ինչ պարունակում եւ լցնում է, ինչպէս ասում է Եսայու միջոցով. «Երկինքն ու երկիրը Ես եմ լցնում,- ասում է Տէրը» [Երեմ. ԻԳ 24]. նոյնպէս եւ Որդու մասին Պողոս [առաքեալն] ասաց. «Որ իջաւ, նոյն Ինքն է, որ բարձրացաւ երկինքներից աւելի վեր, որպէսզի լցնի ամէն ինչ» [Եփես. Դ 10], իսկ նոյնը Դաւիթը Հոգու մասին ասաց. «Ո՞ւր գնամ ես Քո Հոգուց կամ Քո դէմքից ո՞ւր փախչեմ» [Սաղմ. ՃԼԸ 7]: Ասելով, թէ՝ «Ո՞ւր գնամ ես քո Հոգուց»՝ ցոյց տուեց մեզ, որ Սուրբ Հոգին լցնում է ամէն ինչ. «Եւ Քո դէմքից ես ո՞ւր փախչեմ. եթէ երկինք ելնեմ, այնտեղ ես Դու, եթէ իջնեմ դժոխք, այնտեղ էլ մօտ ես» [Սաղմ. ՃԼԸ 7-8]: Իսկ ո՞վ իջաւ դժոխք, եթէ ոչ Որդին, որ յարութիւն առաւ մեռելներից: Եւ երբ Ստեփանոսը «Գործք Առաքելոց»-ում ասում է, թէ՝ «Փառքի Աստուածը երեւաց մեր հօրը՝ Աբրահամին» [Գործ. Է 2], ապա այս [նոյնը] Պողոս [առաքեալն] ասում է Որդու մասին. «Որովհետեւ եթէ ճանաչուած լինէր, արդարեւ փառքի Տիրոջը խաչը չէին հանի» [Ա Կոր. Բ 8], նոյնպէս եւ Դաւիթն է ասում. «Զօրութիւնների Տէրը՝ Նա Ինքն է փառքի Թագաւորը» [Սաղմ. ԻԳ 10]. որովհետեւ Հօր, Որդու եւ Սուրբ Հոգու փառքը

մէկ է. «Իմ փառքը,- ասում է,- ուրիշին չեմ տայ» [Ես. ԻԲ 8], քանի որ Որդին երկրորդ Աստուած չէ, այլ մէկ եւ միակ Աստուծոյ Բան, Աստուած ասուելով Հօր մէջ, ինչպէս եւ Հայրն է Աստուած ասւում Որդու մէջ, որի մասին է խօսում Եսային՝ Աստուած ասելով Որդուն Հօր հետ. «Քեզ պիտի երկրպագեն եւ Քեզ աղօթեն, որովհետեւ Աստուած Քո մէջ է, եւ բացի Քեզանից չկայ այլ Աստուած. Դու ես Աստուածը, իսկ մենք չգիտէինք, ո՛վ Աստուած՝ փրկիչդ Իսրայէլի. պիտի ամաչեն եւ ամօթահար լինեն բոլորը, ովքեր Նրան հակառակւում են» [Ես. ԽԵ 14-15]: Եւ Նրան հակառակ են բոլոր նրանք, ովքեր չեն խոտովանում, որ Նա եւ Նրա Հոգին նոյն Հօր էութիւնից են, եւ Նրանից բացի այլ Աստուած չկայ, ինչպէս նաեւ նրանք, ովքեր ամաչում են Նրա չարչարանքներից եւ աղքատութիւնից: Որովհետեւ ոչ ոք չի կարող ճանաչել Աստծուն, եթէ սուրբ Թովմասի հետ չխոստովանի, որ Խաչուածն ու մեռելներից յարութիւն Առածը Տէր Աստուած է, որ Իր առաքեալներին ասաց. «Եթէ Ինձ ճանաչէիք, ապա կը ճանաչէիք եւ Իմ Հօրը. այսուհետեւ կը ճանաչէք Նրան եւ տեսել էք Նրան»: Փիլիպպոսն ասում է Նրան. «Տէ՛ր, Հօրը մեզ ցո՛յց տուր, եւ դա բաւական է մեզ»: Յիսուս Նրան ասում է. «Այսքան ժամանակ ձեզ հետ եմ, եւ Ինձ չճանաչեցի՞ր, Փիլիպպո՛ս. ով Ինձ տեսաւ, տեսաւ Հօրը. իսկ դու ինչպէ՞ս ես ասում, թէ Հօրը մեզ ցո՛յց տուր, չե՞ս հաւատում, որ ես Հօր մէջ եմ, եւ Հայրը՝ Իմ մէջ: Այն խօսքերը, որ ես ասում եմ, Ինքս Ինձանից չեմ խօսում, այլ Հայրը, որ բնակւում է Իմ մէջ, Նա՛ է գործում գործերը: Հաւատացէ՛ք Ինձ, որ ես Հօր մէջ եմ, եւ Հայրը՝ Իմ մէջ. եթէ ոչ՝ գոնէ գործերի՛ համար հաւատացէք Ինձ» [Յովհ. ԺԴ 7-12]: Հայր Աստուծոյ գործ է դեւեր հանելը. եւ [Տէրն] ասաց, որ Սուրբ Հոգու միջոցով է հանում դեւերին. «Իսկ եթէ ես,- ասուած է,- Աստուծոյ Հոգով եմ հանում դեւերին» [Մատթ. ԺԲ 28], որի մասին ասում է Ղուկասը. «Ես Աստուծոյ մատով եմ հանում դեւերին» [Ղուկ. ԺԱ 20]: Որովհետեւ երբ Գիրքը Որդուն անուանում է Հօր բազուկ, ապա Սուրբ Հոգուն կոչում է Աստուծոյ մատ. եւ երբ Որդուն անուանում է Բան, ապա Սուրբ Հոգուն ասում է Աստուծոյ շունչ:

Եւ դարձեալ առաքեալն ասում է. «Երբ տայ թագաւորութիւնն Աստուծոյ եւ Հօր ձեռքը, երբ կործանած լինի բոլոր իշխանութիւնները եւ ամէն պետութիւն ու զօրութիւն. որովհետեւ Նա պէտք է թագաւորի, մինչեւ բոլոր թշնամիներին դնի Իր ոտքերի տակ: Վերջին թշնամին, որ պիտի խափանուի, մահն է, որովհետեւ՝ «Ամէն ինչ հնազանդեցրեց Նրա ոտքերի տակ» [Սաղմ. Ը 7]: Իսկ երբ ասում է, թէ՝ ամէն ինչ Նրան հնազանդուեց, պարզ է, թէ բացի Նրանից, Ով ամէն ինչ հնազանդեցրեց Նրան: [Իսկ երբ ամէն ինչ Նրան հնազանդուի, այն ժամանակ եւ Ինքը՝ Որդին կը հնազանդուի Նրան, Ով ամէն ինչ հնազանդեցրեց Նրան], որպէսզի Աստուած լինի ամէն ինչ ամէն ինչի մէջ» [Ա Կոր. ԺԵ 24-28]: Սա ասաց աշխարհի հնազանդութեան մասին, որ Նրա մարմնով հնազանդուեց, որովհետեւ Նրա երկնային թագաւորութեան մասին Դանիէլը յայտնեց՝ ասելով. «Նրա թագաւորութեանը վախճան չի լինի» [Դան. Գ 100], ինչպէս եւ ըստ Ղուկասի՝ սուրբ Գաբրիէլն ասաց Կոյսին Տիրոջ մասին. «Եւ կը թագաւորի յաւիտեան, եւ Նրա թագաւորութիւնը վախճան չի ունենայ» [Ղուկ. Ա 33]: Իսկ առաքեալն ասում է, որ Նրա թագաւորութիւնը վախճան ունի. «Որովհետեւ Նա պէտք է թագաւորի, մինչեւ բոլոր թշնամիներին դնի Իր ոտքերի տակ» [Ա Կոր. ԺԵ 25]: Նոյնպէս եւ Դաւիթն [ասաց]. «Տէրն իմ Տիրոջն ասաց. «Նստի՛ր Իմ աջ կողմում, մինչեւ Քո թշնամիներին ոտքերիդ պատուանդան դնեմ»» [Սաղմ. ՃԹ 1]: Արդ, երբ ասում է «Նստի՛ր», նկատի ունի սկիզբը, իսկ ասելով, թէ «մինչեւ Քո թշնամիներին դնեմ»՝ ցոյց է տալիս վախճանը: «Իսկ երբ ամէն ինչ Նրան հնազանդուի, այն ժամանակ եւ Ինքը Որդին կը հնազանդուի Նրան, Ով ամէն ինչ հնազանդեցրեց Նրան, որպէսզի Աստուած լինի ամէն ինչ ամէն ինչի մէջ» [Ա Կոր. ԺԵ 28]: Սրանով ցանկանում է ասել. երբ բոլորս հնազանդուենք Քրիստոսին, դառնանք Նրա անդամները եւ Նրանով Աստուծոյ որդիներ դառնանք. «Որովհետեւ դուք ամէնքդ մէկ էք,- ասում է,- ի Քրիստոս Յիսուս» [Գաղ. Գ 28], այնժամ եւ Ինքը մեր փոխարէն կը հնազանդուի Հօրը, ինչպէս Գլուխ՝ Իր անդամների համար: Իսկ քանի դեռ Իր անդամները չեն հնազանդուել [Իրեն], Ինքը՝ նրանց Գլուխը, նոյնպէս չի հնազանդուել Հօրը՝ սպասելով Իր անդամներին: Իսկ եթէ [Ինքը] հնազանդուողներից մէկը լինէր, [ապա] սկզբի՛ց եւեթ կը հնազանդուէր Հօրը եւ ոչ թէ վախճանին այդ կ՚անէր: Որովհետեւ մենք Նրանով ենք հնազանդւում Հօրը եւ Նրանով ենք մենք թագաւորում, մինչեւ մեր թշնամիները դրուեն մեր ոտքերի տակ: Երկնքի Տէրը մեր թշնամիների պատճառով մեզ նման դարձաւ եւ վերցրեց Դաւթի՝ Իր մարմնաւոր հօր մարդկային աթոռը՝ վերաշինելու եւ հաստատելու այն, որպէսզի երբ հաստատուի այն եւ բոլորս Նրանով թագաւորենք, հաստատուած մարդկային թագաւորութիւնը Հօր ձեռքը տայ . «Որպէսզի Աստուած ամէն ինչ լինի ամէն ինչի մէջ» [Ա Կոր.

ԺԵ 28]. Նրա՝ որպէս Փրկիչ Աստուծոյ միջոցով թագաւորելով, Նրա՝ որպէս Փրկիչ մարդու միջոցով թագաւորելուց յետոյ:

Եւ երբ Պետրոս [առաքեալն] ասում է. «Իսրայէլի ողջ տունը թող ճշմարտապէս իմանայ, որ Աստուած Նրան ե՛ւ Տէր, ե՛ւ Օծեալ արեց, այն Յիսուսին, Ում դուք խաչեցիք» [Գործ. Բ 36], Նրա Աստուածութեան համար չի ասում, թէ՝ Տէր եւ Օծեալ արեց, այլ Նրա մարդկութեան, որ է ողջ Եկեղեցին, որ Նրա խաչելութիւնից յետոյ Նրանով տիրեց, թագաւորեց եւ օծուեց երկնքի թագաւորութեան [համար], որպէսզի թագաւորակից լինի Նրան, Ով Իրեն ունայնացրեց նրա համար եւ բարձրացրեց նրան՝ ծառայի կերպարանքի միջոցով: Քանզի Աստուծոյ Բանը եւ Որդին միշտ Տէր եւ Աստուած էր, եւ ոչ թէ խաչելութիւնից յետոյ դարձաւ Տէր եւ Օծեալ, այլ ինչպէս նախապէս ասացի, Նրա Աստուածութիւնն է, որ Նրա մարդկութիւնը դարձրեց Տէր եւ Օծեալ: Եւ երբ ասում է. «Հա՛յր, եթէ կարելի է, այս բաժակը Ինձանից հեռացրո՛ւ, բայց ոչ թէ Իմ կամքը թող լինի, այլ Քո՛նը, հոգիս յօժար է, բայց մարմինս՝ տկար» [Ղուկ. ԻԲ 42-43, Մարկ. ԺԴ 38], սրանցով ցոյց է տալիս երկու կամքերը՝ մարդկայինը, որը [յատուկ] է մարմնին, եւ աստուածայինը: Որովհետեւ մարմնի տկարութեան պատճառով մարդկայինը հրաժարւում է չարչարանքներից, իսկ Նրա աստուածային [կամքը] յօժար է: Ինչպէս եւ Պետրոս [առաքեալը], լսելով չարչարանքների մասին, վախեցաւ եւ ասաց. «Քա՛ւ լիցի Քեզ, Տէ՛ր». իսկ Տէրը, նրան սաստելով, ասաց. «Ետե՛ւս գնա, սատանա՛յ, դու գայթակղութիւն ես Ինձ համար, որովհետեւ Աստուծոյ բաները չես խորհում, այլ մարդկանցը» [Մատթ. ԺԶ 22-23]: Որպէս մարդ հրաժարուեց չարչարանքներից, իսկ լինելով Աստուած եւ Աստուծոյ էութեամբ անչարչարելի՝ յօժարութեամբ ընդունեց չարչարանքներն ու մահը, որովհետեւ անհնար էր, որ մահը Նրան տիրէր [տե՛ս Հռոմ. Զ 9]. քանզի Աստուած էր մարդու նմանութեամբ, որ կամաւոր մեռաւ եւ յարութիւն առաւ Իր իշխանութեամբ՝ որպէս Աստուած, ինչպէս եւ Դաւիթն ասաց. «Թող յարութիւն առնի Աստուած, եւ կը ցրուեն Նրա բոլոր թշնամիները» [Սաղմ. ԿԷ 2]: Եւ դարձեալ ասում է. «Ելի՛ր, Տէ՛ր իմ Աստուած, ըստ քո սահմանած կարգի, եւ ժողովուրդների բազմութիւնները շուրջդ կը հաւաքուեն, դրա համար բազմի՛ր բարձունքում. Տէրն է դատում Իր ժողովրդին» [Սաղմ. Է 7-9]: Եւ առաքեալն էլ է ասում. «Չարչարուեց տկարութեամբ, բայց կենդանի է Աստուծոյ զօրութեամբ» [Բ Կոր. ԺԳ 4], իսկ Աստուծոյ զօրութիւնը Որդին է: Չարչարուեց տկարութեան, այսինքն՝ մարմնի հետ միաւորուածութեան պատճառով, եւ որպէս մարդ հրաժարուեց չարչարանքներից, իսկ կենդանի է Իր զօրութեան միջոցով:

Եւ երբ Տէրը Յովհաննէսի Աւետարանում ասում է. «Յաւիտենական կեանքն այս է, որ ճանաչեն Քեզ միակ ճշմարիտ Աստուած, եւ Յիսուս Քրիստոսին, Ում Դու առաքեցիր» [Յովհ. ԺԷ 3], ապա մէկ այլ տեղ նոյն Յովհաննէսը Որդուն է ճշմարիտ Աստուած ասում, քանզի. «Գիտենք,- ասում է,- Աստուծոյ Որդին եկաւ եւ մեզ տուեց միտք, որպէսզի ճանաչենք ճշմարտութիւնը. եւ մենք ճշմարտի՝ Նրա Որդու՝ Յիսուս Քրիստոսի մէջ ենք, որովհետեւ Նա է ճշմարիտ Աստուածը եւ յաւիտենական կեանքը» [Ա Յովհ. Ե 20]: Ըստ այսմ Նա ճշմարիտ Աստուած է ե՛ւ մինչեւ մարդ լինելը, ե՛ւ Աստուծոյ ու մարդկանց միջնորդ լինելուց յետոյ, ոչ միայն մարդկանց, այլեւ Աստուծոյ, ինչպէս եւ ասում է Երեմիան. «Դա մեր Աստուածն է, Ում հետ ոչ ոք չի կարող համեմատուել. Ով գտաւ իմաստութեան բոլոր ճանապարհները եւ դրանք տուեց Իր ծառայ Յակոբին եւ Իր սիրեցեալ Իսրայէլին: Եւ դրանից յետոյ յայտնուեց երկրի վրայ եւ շրջեց մարդկանց մէջ» [Բար. Գ 36-38]: Եւ ե՞րբ շրջեց մարդկանց մէջ, եթէ ոչ այնժամ, երբ նրանց պէս ծնուեց կնոջից, մանուկ եղաւ, աճեց եւ հասակ առաւ: Եւ մէկ այլ տեղ Երեմիան ասում է. «Նրա սիրտը ամէն ինչից խոր է. եւ մարդ է, սակայն ո՞վ կարող է ճանաչել Նրան» [Երեմ. ԺԷ 9]: Նմանապէս եւ Եսային է ասում. «Մեզ համար Մանուկ ծնուեց, Որդի տրուեց մեզ, Ում իշխանութիւնն Իր ուսերի վրայ է. Նա պիտի կոչուի Մեծ խորհրդի հրեշտակ, Աստուած հզօր, իշխան խաղաղութեան, Հայր հանդերձեալ աշխարհի» [Ես. Թ 6]. եւ մէկ այլ տեղ ասում է. «Ահա կոյսը պիտի յղիանայ եւ Որդի ծնի, եւ Նրա անունը պիտի կոչուի Էմմանուէլ, որ նշանակում է Աստուած մեզ հետ» [Ես. Է 14, Մատթ. Ա 23]: Արդ, Աստուած է, որ ծնուեց Կոյսից եւ մտաւ օրէնքի տակ. եւ դարձեալ մէկ ուրիշ տեղ ասում է. «Նայեցինք Նրան, եւ Նա գեղեցկութիւն չունէր» [Ես. ԾԳ 2]: Քանզի մինչ այդ Նրան տեսել էր աստուածային եւ փառաւոր տեսքով՝ նստած բարձր եւ վերացած աթոռին, երբ քերովբէները փառաւորում էին Նրան՝ ասելով. «Սո՛ւրբ, Սո՛ւրբ, Սո՛ւրբ Տէր զօրութիւնների» [Ես. Զ 3]: Եւ այս ամէնից յետոյ տեսնում է Նրան ծառայի կերպարանք առած եւ մարդկանց նման դարձած, որի համար ասում է. «Եւ նայեցինք Նրան, բայց ոչ տեսք ունէր եւ ոչ էլ գեղեցկութիւն. այլ Նրա տեսքն աւելի անարգ ու նսեմ էր, քան բոլոր մարդ-

կանց որդիներինը: Եւ Նա հարուածների ենթակայ մի մարդ եղաւ, որ ցաւերին համբերել գիտի, քանզի Իր երեսը դարձնելով՝ անարգուեց եւ ոչ մի բանի տեղ չդրուեց: Նա մեր հիւանդութիւններն էր վերցնում եւ մեզ համար չարչարւում, իսկ մենք համարեցինք, որ Նա ցաւերի, հարուածների ու չարչարանքների ենթարկուեց [Աստծուց]: Բայց Նա վիրաւորուեց մեր անօրէնութիւնների համար եւ չարչարուեց մեր մեղքերի համար» [Ես. ԾԳ 2-5]: Եւ մէկ այլ տեղ Նրա մասին ասում է. «Ահաւասիկ մեր Աստուածը դատաստանով պիտի հատուցի եւ վրէժխնդիր լինի, Նա ինքը պիտի գայ եւ փրկի մեզ: Այն ժամանակ կոյրերի աչքերը պիտի բացուեն, եւ խուլերի ականջները պիտի լսեն, այն ժամանակ կաղը եղջերուի նման պիտի վազի, եւ ծանրախօսների լեզուն պարզ պիտի դառնայ» [Ես. ԼԵ 4-5]: Մէկ այլ տեղ կրկին ասում է. «Ոչ թէ հրեշտակ կամ պատգամաւոր, այլ Տէրն Ինքը գալով փրկեց մեզ» [Ես. ԿԳ 9]: Իսկ Դաւիթն ասում է. «Մարդը մայր է կոչում Սիոնը, եւ նրա մէջ ծնուեց մարդը, եւ նրա հիմքերը Բարձրեալը գցեց» [Սաղմ. ՁՁ 5]: Քանզի այս մարդը, որ այստեղ ծնուեց, Ինքն է՝ Բարձրեալը, ինչպէս սաղմոսն է ասում. «Թող իմանան, որ Քո անունը Տէր է, եւ Դու միակ Բարձրեալն ես ամբողջ երկրի վրայ» [Սաղմ. ՁԲ 19]: Եւ երբ Փրկիչն ասում է. «Ով առաքեց Ինձ, աւելի մեծ է, քան ես» [Յովհ. ԺԴ 28], մարդ լինելու պատճառով է Հօրն Իրենից մեծ ասում: Իսկ լինելով Հօր Բանը՝ հաւասար է Նրան, քանզի ասում է. «Ես եւ Իմ Հայրը մէկ ենք» [Յովհ. Ժ 30]. եւ «Ով Ինձ տեսաւ, տեսաւ Իմ Հօրը» [Յովհ. ԺԴ 9]: Եւ Հօրը հաւասար լինելը ոչ թէ յափշտակութեամբ է ձեռք բերել, այլ ըստ բնութեան է հաւասար եւ համագոյ [Նրան], որովհետեւ հայրական էութիւնից է ծնուած:

Այսքանը մասամբ գրեցի, որպէսզի ինչպէս առաքեալն է ասում. «Այսուհետեւ չլինենք երեխաներ, որոնք տարուբերւում եւ քշւում են վարդապետութեան բոլոր քամիներից՝ մարդկանց խաբէութեամբ, մոլորեցուցիչ պատրանքների տանող խորամանկութեամբ» [Եփես. Դ 14]:

Գրաբարից փոխադրեցին
Մեսրոպ քահանայ Արամեանը
եւ
Սահակ սարկաւագ Ղազարեանը

ՍՈՒՐԲ ԲԱՐՍԵՂ ԿԵՍԱՐԱՑԻ

Ս. Բարսեղ Կեսարացին Ընդհանրական Եկեղեցու մեծանուն հայրերից ու հեղինակութիւններից է եւ դասւում է տասներկու տիեզերական վարդապետների թուին: Նա այն սակաւաթիւ հայրերից է, որոնք Եկեղեցու սրբազան աւանդութեան մէջ պատուուած են «մեծ» տիտղոսով: «Աստուծոյ մարդ» (Յեսու Ժ Դ 6), «Հաւատարիմ ծառայ» (Թիւ. ԺԲ 7), «Աստուծոյ խորհուրդների տնտես» (Ա Կոր. Դ 1), «այր բաղձալի» (Դան. Ժ 11), «Եկեղեցու սիւն եւ հաստատութիւն» (Ա Տիմ. Գ 15, Գաղ. Բ 9, Յայտ. Գ 12), «Տիրոջ կամք» (Ես. ԿԲ 4), «աշխարհի լուսատու, որ իր մէջ կրում է կենաց խօսքը» (Փիլիպ. Բ 15,16). ահա այն պատուանուններից մի քանիսը միայն, որոնցով նրան մեծարում է ս. Գրիգոր Աստուածաբանը: Բարսեղ Կեսարացին քրիստոնէական հաւատքի՝ բոլոր ժամանակների մեծագոյն ուսուցիչներից մէկն է եւ ուղղափառութեան պաշտպանութեան գործում համարուել է երկրորդ Աթանաս: Նա եղել է բացառիկ կազմակերպչական ունակութեամբ օժտուած եկեղեցական գործիչ, յայտնի է որպէս վանականութեան հիմնադիր հայր եւ սուրբ Պատարագի ծէսի բարեկարգիչ:

Կապադովկեան դպրոցը եւ առանձնապէս ս. Բարսեղ Կեսարացին մեծ ազդեցութիւն են թողել հայ աստուածաբանական մտքի զարգացման վրայ: Այս մեծ սուրբի յիշատակը Հայ Եկեղեցին տօնում է տարին երկու անգամ:

Ս. Բարսեղ Կեսարացին ծնուել է Կապադովկիայի Կեսարիա քաղաքում մօտ 330 թ., տոհմիկ ազնուական եւ աստուածասէր ընտանիքում: Ուշագրաւ է, որ այս ընտանիքից են սերում երեք մեծ կապադովկեան հայրերից երկուսը՝ ս. Բարսեղը եւ ս. Գրիգոր Նիւսացին: Ս. Բարսեղը նախնական կրթութիւնը ստացել է հօրից՝ Պոնտոսի Նէոկեսարիա քաղաքի նշանաւոր հռետոր Բարսեղից: Ապա ուսանել է Կոստանդնուպոլսի հռետորական դպրոցում, իսկ հետագայում՝ 351 թուականից յետոյ, շարունակել է կրթութիւնը Աթէնքում: Այստեղ նա հանդիպել է ս. Գրիգոր Աստուածաբանին, որի հետ դարձել են ցկեանս մտերիմ ընկերներ:

Այսպէս, ստանալով ժամանակի քրիստոնէական եւ յունա-հռոմէական բարձրագոյն կրթութիւնը, մօտ 356 թ. ս. Բարսեղը վերադառնում է հայրենի քաղաք եւ իր գործունէութիւնը սկսում որպէս հռետոր, որից չուտով հրաժարւում է՝ կեանքն ամբողջովին Աստծուն նուիրելու համար: Հետագայում նա այսպէս է նկարագրում իր հոգեւոր

արթնութիւնը. «Ես իմ ժամանակը վատնել եմ յիմարութիւնների վրայ, իմ երիտասարդութիւնն անցկացրել եմ զուր գործերով եւ ուսանել այն իմաստութիւնը, որն Աստուած յիմարութիւն է համարում (Ա Կոր. Ա 20): Ես արթնացայ յանկարծակի՝ ասես խոր քնից: Ես տեսայ Աւետարանի ճշմարտութեան հիասքանչ լոյսը եւ ճանաչեցի այս աշխարհի իշխանների իմաստութեան ունայնութիւնը, որ ենթակայ է կորստեան (Ա Կոր. Բ 6): Ես շատ արտասուք եմ թափել իմ թշուառ կեանքի ընթացքում եւ աղօթել, որ ինձ տրուի մի առաջնորդ, ով իմ մէջ կը հաստատի ճշմարիտ աստուածպաշտութեան սկզբունքները»: Հոգեւոր արթնութիւնից բխող նրա առաջին քայլը լինում է մկրտութիւնը, յաջորդ քայլը՝ ճանապարհորդութիւնը դէպի Եգիպտոս եւ Միջագետք՝ հանդիպելու հռչակաւոր ճգնաւորների, ինչպէս նաեւ՝ ուխտագնացութիւնը Ս. Երկրի սրբավայրերը: Խորապէս ազդուելով ճգնաւոր հայրերի կենցաղավարութիւնից՝ ս. Բարսեղը գրում է. «Ես հիացայ նրանց ժուժկալութեամբ եւ տոկունութեամբ, աքանչացայ նրանց յարատեւութեամբ աղօթքի մէջ եւ քնի յաղթահարմամբ: Զընկրկելով բնական որեւէ կարիքից՝ նրանք միշտ առաջնային էին համարում հոգեւոր նպատակները. քաղցած ու ծարաւ, մերկ ու ցրտահար՝ նրանք երբեք չենթարկուեցին մարմնին, երբեք չցանկացան ուշադրութիւն դարձնել դրան: Ապրելով ասես իրենց մարմնից դուրս՝ նրանք ցոյց տուեցին, որ ամէն բան այս կեանքում անցաւոր է եւ պէտք է քաղաքացիութիւն եւ տուն ունենալ երկնքում: Այս ամէնը հիացրեց ինձ: Ես օրհնեալ անուանեցի այս մարդկանց կեանքը. նրանք ցոյց տուեցին, որ իրենց մարմնում կրում են Յիսուսի մահը: Եւ ես աղօթեցի, որ նմանուեմ նրանց»:

Ուխտագնացութիւնից վերադառնալով՝ Բարսեղն իր ունեցուածքը բաժանում է աղքատներին եւ 358 թ. ճգնութեան համար առանձնանում Իրիս գետի մօտ՝ Նէոկեսարիայից ոչ հեռու: Շուտով սուրբին են միանում նրա օրինակով ոգեշնչուած եւ վանական կեանքով ապրել փափագող ուրիշ քրիստոնեաներ: Նրան այցելում է նաեւ Գրիգոր Աստուածաբանը, եւ նրանք միասին ուսումնասիրում են Որոգինէսի աշխատութիւնները եւ կազմում «Ֆիլոկալիա» ժողովածուն, նաեւ վանական երկու կանոնախմբեր, որոնց ազդեցութեամբ վանական կեանքը սկսում է տարածուել. Բարսեղ Կեսարացին արժանանում է «արեւելեան վանականութեան օրէնսդիր» անուանը: Անգամ այս ժամանակաշրջանում նա իրեն դրսեւորում է որպէս գործի մարդ եւ կարճ ժամանակում մի քանի վանք հիմնում: Զարմանալի չէ, որ նրա այսօրինակ արտակարգ ունակութիւններն իր թեմի համար օգտագործել է կամենում Կեսարիայի մետրոպոլիտ Եւսեբիոսը եւ մօտ 364 թ., անսալով վերջինիս յորդորներին, Բարսեղը քահանայական ձեռնադրութիւն է ընդունում: Նա դառնում է Եւսեբիոս Կեսարացու «լաւագոյն խորհրդատուն, օգնականը, Սուրբ Գրքի մեկնիչը, նրա հաւատքի նեցուկը, բոլոր հոգեւորականներից ամենավստահելին եւ աւելի հմուտ, քան աշխարհականներից որեւէ մէկը», ինչպէս ասում է ս. Գրիգոր Աստուածաբանը: Եւսեբիոսի վախճանից յետոյ՝ 370 թ., Կեսարիայի հայրապետական գահին նրան յաջորդում է ս. Բարսեղը: Որպէս հայրապետ նա արագօրէն շահում է իր ժողովրդի համակրանքը: Հիմնում է հիւանդանոցներ, որբանոցներ, դպրոցներ, տներ աղքատների, ճամփորդների եւ օտարականների համար եւն:

Ս. Բարսեղ հայրապետն ամենայն վճռականութեամբ պայքարում էր արիոսականութեան դէմ՝ անտեսելով այն հանգամանքը, որ այս հերետիկոսութիւնը վայելում էր Վաղես կայսեր հովանաւորութիւնը: Այդ է վկայում նրա պատասխանը նահանգապետ Մոդեստոսին, որին կայսրն ուղարկել էր սուրբ հայրապետի մօտ՝ ունեցուածքի բռնագրաւման եւ արտաքսման սպառնալիքով նրանից հաւաստագիր ստանալու այն մասին, թէ նա հաւատարիմ է արիոսականութեանը: Ահա հայրապետի պատասխանը. «Հնարաւոր չէ բռնագրաւել նրա իրերը, ով ոչինչ չունի. գուցէ քեզ հարկաւոր է մի պատմուճան կամ մի քանի գրքե՞ր, որոնք իմ ամբողջ ունեցուածքն են: Ես չգիտեմ՝ ինչ է արտաքսումը. այն վայրն, ուր այժմ ապրում եմ, իմը չէ, եւ ուր էլ որ վտարուեմ, կը լինի իմը: Այլ խօսքով՝ ամբողջ աշխարհը, ուր էլ պանդխտանամ կամ բնակուեմ որպէս օտարական (Սաղմ. ԼԸ 13), Աստծուց է: Տանջանքներն ի՞նչ կարող են անել ինձ՝ մէկին, ում համար մարմինն արհամարհուած է... Իսկ մահն ինձ համար կը լինէր բարութիւն, քանի որ այն ինձ աւելի շուտ կ՚ուղարկի Աստուծոյ մօտ, Ում համար ապրում եմ եւ Ում համար ստեղծուել եմ, Ում համար մեռնում եմ եւ Ում մօտ շտապում»: Մոդեստոսն, այս խօսքերից ապշած, ասում է. «Այսպէս եւ այսպիսի ազատութեամբ մինչեւ օրս ոչ ոք ինձ հետ չէր խօսել»: Բարսեղը պատասխանում է. «Հաւանաբար, մինչեւ օրս դու չես հանդիպել եպիսկոպոսի... Երբ խօսքը վերաբերում է Աստծուն, եւ յանդգնում են ըմբոստանալ Նրա դէմ, այդժամ, արհամարհելով ամէն բան, նայում ենք միայն Աստծուն: Հուրը, սուրը, գազանները եւ մարմինը չարչարելու գործիքները մեզ համար ոչ թէ սարսափ են, այլ բաղձանք: Տանջի՛ր

մեզ է՛լ աւելի, հալածի՛ր, սպառնա՛, արա՛ այն ամէնն, ինչ կամենում ես, վայելի՛ր քո զօրութիւնը: Սակայն թող կայսրն իմացած լինի, որ չէ՛ք կարող մեզ ընդունել տալ կամ շեղել դէպի արիոսական չարափառ դաւանութիւնը, որքան էլ որ դաժան սպառնալիքներ տաք»:

Այս անվեհերութիւնն ու վճռականութիւնն այնպիսի տպաւորութիւն են թողնում կայսեր վրայ, որ նա դադարեցնում է Բարսեղ Հայրապետին ենթարկեցնելու փորձերը եւ չեղեալ է համարում նրա արտաքսման հրամանը:

Բարսեղ Կեսարացու գործունէութեան կարեւորագոյն ուղղութիւններից մէկը Եկեղեցու միութիւնն էր: Արեւելքի եւ Արեւմուտքի եպիսկոպոսների միջեւ միութեան բացակայութեան պայմաններում նա ձեռք է բերում Աթանաս Մեծի հաւանութիւնը՝ բարելաւելու յարաբերութիւնները Հռոմի եւ Արեւելքի միջեւ: Նա համոզուած էր, որ ուղղափառութիւնը յաջողութիւն կ՛ունենայ, եթէ հաւատացեալների միջեւ տարաձայնութիւններ չլինեն: Դժբախտաբար, միջեկեղեցական եւ քաղաքական ինչ-ինչ պատճառներով այդ գործընթացը դանդաղում է, սակայն ի վերջոյ՝ 378 թ., Վաղես կայսեր մահուանից յետոյ, արտաքին պայմանները նպաստում են խաղաղութեան վերականգնմանը: Բարսեղ Կեսարացին վախճանւում է մօտ 379 թ.՝ շուրջ յիսուն տարեկանում: Երկու տարի անց Կոստանդնուպոլսում գումարւում է Երկրորդ տիեզերական ժողովը, որը վերահաստատում է Նիկիական հանգանակը: Անկասկած, քրիստոնէութեան պատմութեան այս նշանակալից իրադարձութեան հիմքը դրել է Բարսեղ Մեծը:

Բարսեղ Կեսարացին մեծագոյն եւ բազմաբեղուն աստուածաբան է: Նա հեղինակ է դաւանաբանական, մեկնողական, հակաճառական, խրատական, բարոյագիտական, վանական-կանոնագիտական, քարոզխօսական-ճառագրական, կրթական-մանկավարժական աշխատութիւնների, նաեւ սուրբ Պատարագի բնագրի, ինչպէս նաեւ բազմաթիւ ու բազմաբնոյթ նամակների. նրա գրական ժառանգութիւնը մեզ է հասել գրեթէ ամբողջութեամբ: Բարսեղ Կեսարացու աշխատութիւնները յոյժ բարձր են գնահատուել նրա ժամանակակիցների կողմից: Դրանք ընթերցում կամ ունկնդրում էին հասարակութեան զանազան խաւերի մարդիկ՝ թէ՛ քրիստոնեաները, թէ՛ հեթանոսները: Դրանք նոյնքան արժէքաւոր ու արդիական են նաեւ այժմ:

Ս. Բարսեղ Կեսարացին Հայ Եկեղեցու առաւել սիրուած սուրբերից է, նա մեծ ազդեցութիւն է թողել հայ աստուածաբանական մտքի

ձեւաւորման վրայ: Նրա երկերի զգալի մասը հայերէն է թարգմանուել դեռեւս Ե դարից եւ շարունակաբար լրացուել յետագայում: Նրա ճառերի մի ժողովածու հայ աւանդութեան մէջ յայտնի է «Պահոց գիրք» անունով, որը նախատեսուած է Մեծ պահքի շրջանի ընթերցումների համար: «Պահոց գրքի» քննական բնագիրը հրատարակութեան է պատրաստուած Կիմ Մուրադեանի աշխատասիրութեամբ, որը, ցաւօք, դեռեւս հրատարակուած չէ: Այդ բնագրի հետ բաղդատելով՝ Սիմոն Գրքաշարեանը հին յունարէնից արեւելահայերէն է թարգմանել այս ժողովածուի «Նայի՛ր քեզ» ճառը, որը խմբագրուել եւ համեմատուել է ռուսերէն թարգմանութեան հետ:

«Նայի՛ր քեզ» ճառը խրատական բնոյթի է, սակայն ունի նաեւ աստուածաբանական, մարդակազմական աղերսներ: Ճառն Աստուծոյ յիշեալ պատուիրանի միջոցով (Բ Օր. Դ 9) ընթերցողի կամ ունկնդրի միտքն ուղղում է ինքնաքննութեան՝ սեփական էութեան եւ մեղքերի ճանաչմանը, եւ մեղքերից ձերբազատուելու միջոցով նրան առաջնորդում է կատարելագործման: Նաեւ սովորեցնում է բարի խորհրդածութիւնների միջոցով մեղքերից ձերբազատուելու եղանակները: Սուրբի խրատների նպատակը ինքնաճանաչման միջոցով մեզ աստուածտեսութեան առաջնորդելն է, որով եւ եզրափակւում է ճառը. «Արդ, «Նայի՛ր քեզ», որպէսզի տեսնես Աստծուն»:

Աղբիւրներ

Լիակատար վարք եւ վկայաբանութիւն սրբոց, ի Մկրտիչ վարդապետէ Աւգերեան, Վենետիկ, 1810

Святитель Григорий Богослов, Собрание творений, Том 1, Слово 18, 43, Свято-Троицкая Сергиева Лавра, 1994

Patrology by Johannes Quasten, Volume III, Westminster, Maryland, 1994

Anthony Meredith, The Cappadokians, NY, St Vladimir's Seminary Press, 1995, p. 19-38

Nicene and Post-Nicene Fathers, Vol. 8, Saint Basil the Great, Letters, Hendricson publishers, 1995

Архиепископ Филарет (Гумилевский), Историческое учение об отцах церкви, Москва, 1996

Շնորհք արքեպիսկոպոս Գալուստեան, Համաքրիստոնէական սուրբեր, Գանձասար, 1997, էջ 76-77

Արա սարկաւագ Նալչաջեան

ՍՈՒՐԲ ԲԱՐՍԵՂ ԿԵՍԱՐԱՑԻ

ՆԱՅԻ՛Ր ՔԵԶ

Մեզ ստեղծող Աստուած տուել է մեզ խօսքի գործածութիւնը, որպէսզի միմեանց յայտնենք մեր սրտի խորհուրդները եւ, ունենալով ընդհանուր բնութիւն, իւրաքանչիւրս փոխանցենք մերձաւորին՝ սրտից՝ որպէս գանձարանից, դուրս հանելով ծածուկ խորհուրդները: Քանզի եթէ մերկ հոգով ապրէինք, ապա մտքով անմիջապէս կը հասկանայինք միմեանց, բայց քանի որ մտքերն արտադրում է մարմնի վարագոյրով ծածկուած մեր հոգին, ապա խորքում եղածները արտայայտելու համար կարիք ունի բառերի եւ անունների: Հետեւաբար, երբ մեր միտքը ստանում է [որեւէ] իմաստալից ձայն, այն, խօսքի մակոյկով ընթանալով օդի միջով, ասողից փոխանցւում է լսողին. եւ եթէ գտնի խորին խաղաղութիւն եւ հանդարտութիւն, խօսքը կը հանգրուանի սովորողների լսելիքում, ինչպէս հանգիստ եւ անխռով նաւահանգստում: Իսկ եթէ խիստ փոթորկի նման խառնաշփոթ բարձրացնի լսողների մէջ, ապա [խօսքը], օդում ցրուելով, նաւաբեկութեան կ՚ենթարկուի: Արդ, այս խօսքի համար [եւս] խաղաղութիւն պատրաստէք լռութեան միջոցով: Քանզի պիտանին ճանաչւում է ամէն բանից, եւ [խօսքը] հարազատաբար ընդունողներին որսալը դժուար է: Ճշմարիտ խօսքը դիւրութեամբ կարող է վրիպել նրանցից, ովքեր չեն զգուշանում: Արարչագործ Հոգու սերմանածը հակիրճ է, սակայն այդ հակիրճով շատ բան է յայտնում, որպէսզի հակիրճութեան միջոցով դիւրին լինի պահել յիշողութեան մէջ: Քանզի խօսքի բնական կատարելութիւնն է՝ անյատակ խորութեամբ չթաքցնել նշանակութիւնը եւ աւելորդ կամ ունայն՝ զուր տեղը չտարածուել: Այդպիսին է նաեւ Մովսէսի գրքից այժմ մեր ընթերցածը, որն ըստ ամենայնի ջանասէրներդ կը յիշէք, եթէ, անշուշտ, հակիրճութեան պատճառով այն չի վրիպել ձեր լսելիքից: Այդ խօսքում կայ հետեւեալը. «Նայի՛ր քեզ: Թող քո սրտում երբեք անօրէն խորհուրդ չլինի» [Բ Օր. ԺԵ 9]: Մարդիկս մտքով դիւրութեամբ ենք մեղանչում, այդ պատճառով էլ «մեր սրտերից իւրաքանչիւրի Ստեղծողը» [Սաղմ. ԼԲ 15], գիտենալով, որ մեղքերը մեծ մասամբ գործւում

են [չար խորհուրդների] յորձանքին հաւանութիւն տալով, նախադաս համարեց մտքի մաքրութիւնը: Քանզի յատկապէս ինչով որ առաւել յաճախ պատրաստակամօրէն մեղանչում ենք, նոյնը եւ առաւել արժանի համարեց պահպանութեան խնամքի: Քանի որ, ինչպէս օրինակ, հոգատար բժիշկները պահպանիչ միջոցներով նախապէս զօրացնում են մարմնի առաւել տկար մասերը, այնպէս էլ հոգիների բարեխնամ եւ ճշմարիտ Բժիշկը, ինչ որ տեսնում է մեր մէջ առաւել միտուած դէպի յանցանքները, հէնց դրանք էլ ամրացնում է զօրաւոր պահպանութեամբ: Քանի որ մարմնաւոր գործերը կարօտ են ժամանակի, պատեհութեան եւ ջանքերի, օգնականների եւ այլ օժանդակութիւնների: Իսկ մտքի շարժումները կատարւում են առանց ժամանակի ու ջանքերի, կայանում են առանց առարկաների եւ ամէն ժամանակ պատրաստ են: Եւ թերեւս մէկը բարձրամիտներից ու պարկեշտութեան դէմ հպարտացողներից, որոնց ձեւացեալ ողջախոհութիւնը միայն արտաքուստ է, շատ անգամ նստած լինելով նրանց մէջ, ովքեր իրեն երանի են տալիս առաքինութիւնների համար, սրտի անտեսանելի շարժմամբ, մտքով ընթանում է դէպի մեղքի վայրը: Երեւակայութեամբ տեսաւ ցանկալին, սրտի գործարանում ամբողջապէս ծածուկ տպաւորեց ինչ-ինչ անվայել խօսքեր, ինքն իր մէջ յայտնապէս պատկերացրեց հեշտութիւններ, ներքուստ մեղանչեց առանց վկայի եւ ամէնքից ծածուկ, մինչեւ որ գայ Նա, որ յայտնում է «խաւարի մէջ ծածկուածները եւ ի յայտ է բերում սրտերի խորհուրդները» [Ա Կոր. Դ 5]:

Արդ, պահի՛ր «Թող քո սրտում երբեք ծածուկ անօրէնութիւն չլինի» [խօսքը], քանզի «ով ցանկութեամբ նայեց կնոջը, արդէն իսկ շնացաւ իր սրտում» [Մատթ. Ե 28]: Քանի որ մարմնի գործերը բազմաթիւ խոչընդոտներ ունեն, իսկ ով գիտակցաբար է մեղանչում, մտքի արագութեամբ է գործում մեղքը: Հետեւաբար, ուր յանցանքն աւելի դիւրութեամբ է գործւում, աւելի դիւրութեամբ է տրւում մեզ նաեւ պահպանութիւնը: Սրա համար է վկայում. «Թող քո սրտում երբեք ծածուկ անօրէնութիւն չլինի»: Սակայն դառնանք այս խօսքի սկզբին:

Ասում է. «Նայի՛ր քեզ»: Կենդանի էակներից իւրաքանչիւրն իր բնութեան պահպանութեան սեփական մղիչներն ունի ամէնքի կազմիչ Աստծուց: Եւ եթէ ջանաս, արդարեւ կը գտնես, որ անասուններից շատերն ընդդիմութիւն ունեն մնասակարի հանդէպ՝ [նոյնիսկ] առանց վարդապետութեան, դարձեալ ինչ-որ բնազդով շտապում են օգտա-

կար վայելքների: Այդ պատճառով էլ մեզ խրատող Աստուած մեզ այս մեծ պատուիրանը տուեց, որպէսզի այն, ինչ նրանք ունեն ի ընէ, մեզ օգնականութիւն լինի բանականութեամբ: Եւ այն, ինչ անասուններն անում են՝անգիտակցաբար, նոյնը մենք անենք հայեցողութեան միջոցով եւ խորհուրդների շարունակական վերահսկողութեամբ՝ հաստատօրէն պահպանելով Աստուծոյ տուած ազդումները եւ մեղքից փախչելով, ինչպէս անասունները փախչում են մահաբեր կերակուրներից, եւ գնալով արդարութեան ետեւից, ինչպէս նրանք են գնում ուտելի խոտեղէնի ետեւից: Արդ, «Նայի՛ր քեզ», որպէսզի կարողանաս վնասակարը տարբերել օգտակարից: Բայց քանի որ նայելը երկակի իմաստ ունի. մէկը՝ մարմնի աչքերով նկատել տեսանելիները, իսկ միւսը՝ իմանալի հոգու զօրութեամբ խորասուզուել անմարմնական հայեցողութեան մէջ, [ուստի] եթէ այս պատուիրանը համարենք աչքերի ներգործութեան համար ասուած, իսկոյն կը յանդիմանուենք սրանց անկարութեան համար: Քանզի, արդարեւ, [մարդն] ինչպէ՞ս ինքն իրեն ամբողջութեամբ կ՚ընդգրկի աչքերով: [Մարդու] աչքը չի կարող տեսնել սեփական անձը. ո՛չ գագաթին է հասնում, ո՛չ թիկունքին, ո՛չ դէմքին, ո՛չ որովայնի ներսը: Սակայն ամբարշտութիւն է նաեւ ասել, թէ Հոգու պատուիրաններն անիրագործելի են: Ուրեմն, պատշաճ է այս պատուիրանը համարել ըստ մտքի գործակցութեան: «Նայի՛ր քեզ», այսինքն՝ ամէն կողմից նայի՛ր քեզ: Քո պահպանութեան համար անքո՛ւն պահիր հոգուդ աչքը: «Որոգայթների մէջ ես շրջում» [Սիր. Թ 20], թշնամու թաքցրած թակարդները շուրջբոլորն են: Ամէն ինչ զննի՛ր, «որպէսզի այծեամի պէս փրկուես թակարդից եւ թռչունի պէս՝ որոգայթից» [Առակ. Զ 5]: Քանզի այծեամն անորսալի է թակարդի համար իր սուր տեսողութեան [շնորհիւ]: Իսկ թռչունը, երբ կամենում է, թեթեւասահ թեւածումով բարձրանում է որսորդների դարաններից: Արդ, տե՛ս, որ անասուններից աւելի վատթար չլինես քո իսկ պահպանութեան հարցում, երբեք չբռնուես որոգայթներով, որով «գերուած կը լինես բանսարկուից՝ կատարելու նրա կամքը» [Բ Տիմ. Բ 26]:

«Նայի՛ր քեզ», այսինքն՝ ոչ թէ քոնին կամ ինչ որ քո շուրջն է, այլ միայն քեզ: Քանզի այլ ենք մենք, եւ այլ է մերը, եւ այլ է, որ մեր շուրջն է: Մենք ենք հոգին ու միտքը, որով ստեղծուեցինք Ստեղծողի պատկերով, մերն է մարմինը եւ նրա զգայութիւնները, իսկ մեր շուրջն են ունեցուածքը, հմտութիւնները եւ կեանքի այլ յարմարութիւնները: Արդ, ի՞նչ է նշանակում այս խօսքը. մի՛ նայիր մարմնին եւ ամէն կերպ

հետամուտ մի՛ եղիր նրա բարիքներին՝ առողջութեանը, գեղեցկութեանը եւ երկարակեցութեանը, եւ մի՛ հիացիր ունեցուածքով, փառքով, զօրութեամբ կամ որեւէ այլ բանով, որ ունես եւ համարում ես այս անցաւոր կեանքի մեծութիւն, եւ սրանց համար հոգալով՝ անհոգութեան [չմատնես] քո բուն կեանքը: Բայց «Նայի՛ր քեզ», այսինքն՝ քո հոգուն: Զարդարի՛ր եւ խնամի՛ր այն, որպէսզի ներհայեցողութեան միջոցով կտրուի, հեռացուի չարութիւնից եղող այս անմաքրութիւնը, եւ յոռութիւնից եղող ամէն զազրութիւն ամբողջովին մաքրուի, [որպէսզի] ամենայն առաքինի գեղեցկութեամբ զարդարես այն եւ պայծառացնես: Քննի՛ր ինքդ քեզ՝ ո՞վ ես դու, ճանաչի՛ր քո բնութիւնը, որ մարմինդ մահկանացու է, իսկ հոգիդ՝ անմահ: Եւ քանի որ մեր կեանքը երկակի է. մէկը՝ մարմնին բնորոշը, վաղանցուկ է, իսկ [միւսը]՝ հոգուն ազգակիցը, սահման չի ճանաչում, արդ, «Նայի՛ր քեզ», մի՛ սեւեռուիր մահկանացուի վրայ իբրեւ յաւիտենականի եւ մի՛ արհամարհիր յաւիտենականը իբրեւ անցաւոր: Անտեսի՛ր մարմինդ, քանզի անցաւոր է, խնամի՛ր հոգիդ, [որ] անմահ է: Ամենայն ճշմարտութեամբ հսկի՛ր քեզ, որպէսզի գիտենաս երկուսին էլ բաշխել պատշաճը. մարմնին՝ կերակուրն ու զգեստը, իսկ հոգուն՝ աստուածպաշտութեան կանոնները, ճգնութիւնները, սուրբ առաքինութիւնները, [դարձը] մեղքերից դէպի ուղղութիւն, որպէսզի ո՛չ գիրացնես մարմինդ, ո՛չ էլ [չափից] աւելի նեղութիւն տաս մարմնիդ: Քանզի «մարմինը ցանկանում է հոգուն հակառակը, իսկ հոգին՝ մարմնին. սրանք իրար հակառակ են» [Գաղ. Ե 17], [ուստի] տե՛ս, որ մարմնին զիջելով՝ շատ զօրութիւն չտրամադրես [առաւել] նուաստին: Քանզի ինչպէս կշեռքի նժարների պարագայում, եթէ [մի] նժարը ծանրացնես, ապա, անշուշտ, հանդիպակաց [նժարը] կը թեթեւացնես, նոյնպէս եւ մարմնի եւ հոգու դէպքում. մէկի առաւելութիւնն անհրաժեշտաբար առաջ է բերում միւսի նուազութիւնը: Քանի որ բարեկեցիկ ու պարարտութեամբ ծանրացած մարմնի [դեպքում] միտքը, իհարկէ, լինում է տկար եւ անզօր իրեն բնորոշ գործունէութեան մէջ, իսկ [եթէ] հոգին քաջառողջ է եւ բարի վարժանքի միջոցով բարձրացել-հասել է իրեն բնորոշ մեծութեանը, [ապա], բնականաբար, մարմնի ունակութիւնները կը թառամեն:

Այս պատուիրանը պիտանի է ե՛ւ տկարներին, ե՛ւ զօրաւորներին, քանզի հիւանդութիւնների ժամանակ էլ բժիշկները հիւանդներին յորդորում են ուշադիր լինել իրենք իրենց նկատմամբ եւ չանտեսել ոչինչ, որ ծառայում է բժշկուելուն: Այսպէս եւ խօսքը՝ մեր հոգիների բժիշկը,

այս փոքր օգնութեամբ բժշկում է մեղքերից չարչարուող հոգիները: Ուրեմն «նայի՛ր քեզ», որպէսզի յանցանքներիդ համապատասխան օգնութիւն ստանաս բժշկութիւնից: Մեղքերդ մեծ են եւ ծանր. կարիք կայ շատ անգամ խոստովանութեան եւ դառն արտասուքի, փութաջան արթնութեան եւ անդադար պահքի: Թեթեւ [ու] ներելի՞ է յանցանքը. թող [դրան] հաւասարուի նաեւ ապաշխարութիւնը: Միայն «նայի՛ր քեզ», որպէսզի գիտակցես հոգուդ առողջութիւնն ու հիւանդութիւնը: Քանզի շատերը, հիւանդացած լինելով մեծամեծ ու անբժշկելի ծանր ախտերով, չգիտեն անգամ, որ հիւանդ են:

Արդ, մեծ է այս պատուիրանի օգուտը նաեւ գործով զօրաւորների համար, քանի որ նոյնը ե՛ւ բժշկում է հիւանդացածներին, ե՛ւ կատարեալ է դարձնում առողջներին: Քանզի մեզանից՝ Խօսքին աշակերտածներից իւրաքանչիւրը մէկ գործի սպասաւոր է, ինչպէս մեզ կարգել է Աւետարանը: Քանզի այս «մեծ տանը»՝ Եկեղեցում, կան ոչ միայն «թանկարժէք անօթներ՝ ոսկեայ եւ արծաթեայ, այլեւ փայտեայ եւ խեցէ» [Բ Տիմ. Բ 20], ինչպէս նաեւ՝ տեսակ-տեսակ գործեր: Արդ, այս տունը, «որը կենդանի Աստուծոյ Եկեղեցին է» [Ա Տիմ. Գ 15], ունի որսորդներ, ճանապարհորդներ, ճարտարապետներ, շինարարներ, երկրագործներ, հովիւներ, ճգնաւորներ, զինուորներ: Սրանց բոլորին պատշաճում է այս հակիրճ խօսքը՝ իւրաքանչիւրին դարձնելով գործերով ճշգրիտ եւ ջանքերով յօժարակամ: Որսո՞րդ ես՝ Տիրոջից առաքուած, որ ասաց. «Ես առաքում եմ բազմաթիւ որսորդներ, եւ կորսան նրանց ամէն մի լեռան վրայ» [Երեմ. ԺԶ 16]. [ուրեմն] փութաջանօրէն հսկի՛ր, որպէսզի որսը ոչ մի տեղ չփախչի քեզանից, որպէսզի ճշմարտութեան խօսքով բռնելով չարիքից որսացուածներին՝ բերես Կենդանի [Աստուծոյ] մօտ: Ճանապարհո՞րդ ես, [ուրեմն] նմանուի՛ր աղօթողին. «Ուղղի՛ր իմ ընթացքը» [Սաղմ. ԼԹ 3]: Նայի՛ր քեզ, [որպէսզի] չշեղուես ճանապարհից, չխոտորուես աջ կամ ձախ, [այլ] գնաս արքունի ճանապարհով: Ճարտարապետը թող զգուշութեամբ դնի հաւատքի հիմքը, որ է Յիսուս Քրիստոս: Շինարարը թող նայի, թէ ինչպէս է շինում. «ո՛չ փայտ, ո՛չ խոտ, ո՛չ եղեգն, այլ ոսկի եւ արծաթ, պատուական քարեր» [Ա Կոր. Գ 12]: Հովի՛ւ, հսկի՛ր, որ չանտեսես ոչինչ, որ վերաբերում է հովուական [գործին]: Որո՞նք են դրանք. ե՛տ դարձրու մոլորեալին, դարմանի՛ր խորտակուածին, բժշկի՛ր հիւանդացածին: Երկրագո՛ծ, փխրեցրո՛ւ անպտուղ թզենու բունը եւ վրան դիր [այն], ինչ նպաստում է պտղաբերութեանը: Զինուո՛ր, «չարչարակի՛ց եղիր Աւետարանին» [Բ Տիմ. Ա 8], «պատերազմի՛ր բարի պատերազմը» [Ա Տիմ. Ա 18] ընդդէմ չար ոգու, ընդդէմ մարմնի ախտերի: «Վերցրո՛ւ Հոգու ամբողջ սպառազինութիւնը» [Եփես. Զ 11], մի՛ շաղախուիր «աշխարհիկ հոգսերով, որպէսզի հաճելի լինես Զօրավարին» [Բ Տիմ. Բ 4]: Ճգնաւո՛ր, նայի՛ր քեզ, [որպէսզի] երբեք զանց չառնես ճգնաւորական օրէնքները, քանզի [ոչ ոք] պսակ չի ստանում, «եթէ ըստ օրէնքի չպայքարի» [Բ Տիմ. Բ 5]: Նմանուի՛ր Պօղոսին, որ ընթանում էր, նաւարկում ու պայքարում: Դու էլ, որպէս բարի ճգնաւոր, ունեցի՛ր անզբաղ հայեցողութիւն, ձեռքերով ծածկի՛ր խոցելի տեղերը՝ [ուշիուշով] հետեւելով հակառակորդին: Ընթացի՛ր «առաջ նայելով» [Փիլիպ. Գ 13]: «Այնպէ՛ս ընթացիր, որ հասնես» [Ա Կոր. Թ 24]: Մարտնչի՛ր աներեւոյթ [թշնամիների] դէմ: Այս խօսքը կամենում է, որ կեանքի բոլոր [իրադարձութիւններում] չընկճուես, չտրուես քնին, այլ զուարթութեամբ ու արթնաբար տոկաս:

Օրս չի բաւականացնի, որ պատմեմ Քրիստոսի Աւետարանի սպասաւորների գործերը եւ այս պատուիրանի զօրութիւնը, թէ որքան պատշաճ է այն ամէնքին: «Նայի՛ր քեզ», եղիր սթա՛փ, խոհե՛մ, պահի՛ր ներկան, հոգա՛ ապագայի համար: Անհոգութեամբ բաց մի՛ թող եղածը՝ վայելք համարելով [այն, ինչ] թւում է արդէն ձեռքումդ է, [սակայն] չկայ եւ չի լինելու: Այս ախտը մի՞թէ բնորոշ չէ պատանիներին, [որոնք] թեթեւամտօրէն կարծում են, թէ յուսացածն արդէն իրենց ձեռքում է: Քանզի երբ խաղաղութիւն են վայելում կամ գիշերային հանգիստ, իրենց համար ստեղծում են երեւակայական պատկերացումներ՝ դիւրաշարժ մտքով դեգերելով ամէնուրեք, պատկերացնելով փառք, փայլուն ամուսնութիւն, բազմաթիւ զաւակներ, խոր ծերութիւն, պատիւներ ամէնքից: Եւ ապա, չկարողանալով որեւէ տեղ հաստատել իրենց յոյսը, փքանում են նրանով, ինչ մարդիկ մեծ են համարում. տիրանում են գեղեցիկ ու մեծամեծ տների՝ լցնելով դրանք մեծարժէք գանձերով, իւրացնում են այնքան հողեր, որքան նրանց խորհուրդների ունայնութիւնն իրենց կը հեռացնի [Աստուծոյ] արարչութիւնից: Դարձեալ, դրանցից [ստացուած] բերքը փակում են ունայնութեան շտեմարաններում, դրան յաւելում են անասուններ, բազմաթիւ ծառաներ, քաղաքական իշխանութեան [օղակներ], ազգերի վրայ իշխանութիւն, զօրավարութիւն, պատերազմներ, յաղթանակներ, թագաւորական իշխանութիւն: Խորհուրդներով կառուցում են [այս ամէնը]՝ ընթանալով յոյժ անմտութեամբ եւ համարելով, թէ վայելում են [իրենց] յուսա-

ցածները, ասես արդէն կան եւ իրենց ոտքերի առջեւ են ընկած: Այս ախտը յատուկ է դատարկ եւ ծոյլ հոգուն՝ երազ տեսնելով արթուն մարմնով: Արդ, խօսքը, ճնշելով մտքի այսպիսի թուլութիւնն ու խորհուրդների փքացումը, ասես սանձով զսպելով խորհուրդների անհաստատութիւնը, տալիս է այս մեծ եւ իմաստուն պատուիրանը՝ ասելով «Նայի՛ր քեզ», ոչ թէ ենթադրելով գոյութիւն չունեցողները, այլ օգտագործելով առկայ [իրերը]:

Կարծում եմ, որ Օրէնսդիրն այս խրատը տալիս է՝ վերացնելու համար սովորութիւն դարձած այն ախտը, ըստ որի՝ մեզանից իւրաքանչիւրի համար դիւրին է քննել ուրիշի [անձը], քան զննել սեփականը: Որպէսզի չախտանանք դրանով, ասում է. «Դադարի՛ր քննել ուրիշի յանցանքները, տես մի՛ տուր ուրիշների տկարութիւնները քննելու խորհուրդներին, այլ քե՛զ նայիր», այսինքն՝ հոգուդ աչքն ուղղիր սեփակա՛ն [անձիդ] քննութեանը: Քանզի շատերը, ինչպէս Տէրն է ասում, «նկատում են իրենց եղբօր աչքի շիւղը, բայց իրենց աչքի գերանը չեն տեսնում» [Մատթ. Է 3]: Արդ, մի՛ դադարիր քեզ քննելուց, թէ [արդեօ՞ք] կեանքդ ընթանում է ըստ պատուիրանի, եւ արտաքնապէս մի՛ փորձիր որեւէ մէկի վրայ որեւէ թերութիւն գտնել, այն բարձրամիտ ու հպարտացած փարիսեցու պէս, որն արդարացնում է իրեն եւ նսեմացնում մաքսաւորին: Այլ՝ մի՛ դադարիր դատել քեզ. արդեօ՞ք չմեղանչեցիր խորհուրդներով կամ արդեօ՞ք լեզուդ չգայթակղուեց՝ մտքիցդ առաջ անցնելով, կամ արդեօ՞ք ձեռքովդ որեւէ անխոհեմ գործ չկատարուեց: Եւ եթէ քո կեանքում բազմաթիւ մեղքեր գտնես (անշո՛ւշտ, կը գտնես, քանզի մարդ ես), մաքսաւորի պէս ասա. «Աստուա՛ծ, ների՛ր ինձ՝ մեղաւորիս» [Ղուկ. ԺԸ 13]:

Արդ, «Նայի՛ր քեզ»: Եւ եթէ փորձուես խռովքներից, այս խօսքը ժամանակին կը ներազդի սրտիդ, որպէսզի մոլորութեամբ առաւել հպարտանալով չհասնես ամբարտաւանութեան եւ անգիտութեամբ չընկնես յետին տրտմութեան մէջ: Փքւում ես հարստութեամբ եւ մեծամտանում նախնիներով, հիանում ես հայրենի երկրովդ, մարմնի գեղեցկութեամբ եւ ամէնքի կողմից պատուելով. «Նայի՛ր քեզ», որ մահկանացու ես, «քանզի հող ես եւ հողին պիտի վերադառնաս» [Ծննդ. Գ 19]: Շո՛ւրջդ նայիր՝ նրանց, ովքեր քեզանից առաջ փորձուել են իրենց բարձրամտութեամբ: Ո՞ւր են նրանք, որ զգեստաւորուած էին քաղաքական զօրութեամբ: Ո՞ւր են անպարտելի հռետորները: Ո՞ւր են նրանք, որ տօնախմբութիւններ սահմանեցին, երեւելի ձիաբոյծները,

զօրավարները, իշխանները, բռնակալները. մի՞թէ ամէնքը փոշի չեն, մի՞թէ ամէնքը յուշ չեն [դարձել], մի՞թէ մի քանի ոսկոր չի մնացել նրանց կեանքից յիշատակ: Նայի՛ր գերեզմաններին. կարո՞ղ ես արդեօք տարբերել ո՛րն է ծառան եւ ո՛րը՝ տէրը, ո՛րն է աղքատը եւ ո՛րը՝ հարուստը: Եթէ կարող ես, զանազանի՛ր կալանաւորին թագաւորից, վայելչատեսին՝ տգեղից, զօրաւորին՝ տկարից: Արդ, յիշելով բնութիւնդ՝ երբեք չես ամբարշտանայ եւ կը յիշես քեզ, եթէ նայես քեզ:

Դարձեալ, նուաստ ծագումո՞վ ես եւ անփա՞ռ, աղքատների աղքա՞տը, անտո՞ւն, պանդո՞ւխտ, տկա՞ր, օրուայ հացի կարո՞տ, դողո՞ւմ ես հզօրներից, ամէնքից վախենո՞ւմ ես քո նուաստագոյն ապրուստի պատճառով, քանզի ասուած է. «Աղքատը չի դիմանում սպառնալիքներին» [Առակ. ԺԳ 8], արդ, մի՛ վհատուիր քեզ համար, եւ քեզ մօտ թող չլինի մերձաւորներին նախանձելու որեւէ կտրիճ ամենաբարի յոյսդ, այլ քո հոգին վե՛ր բարձրացրու դէպի Աստծուց քեզ տրուած բարիքները եւ դէպի խոստումով ապագայում պահուածները: Նախեւառաջ՝ քանի որ մարդ ես՝ աստուածաստեղծ կենդանի [էակներից] մէկը: Արդեօ՞ք սա բաւական չէ ողջամիտ խոհականութեամբ վերնագոյն բարեմտութեան համար. Աստուծոյ՝ Իր իսկ ամէն ինչ գոյացնող ձեռքերով ստեղծուած լինելը, նաեւ՝ որ լինելով ըստ քո Ստեղծիչի կերպարանքի, կարող ես բարի առաքինութեամբ ընթանալով հասնել-նմանուել հրեշտակներին: Ստացար իմանալի հոգի, որով ճանաչում ես Աստծուն, մաքուր խոհականութեամբ ստացար էաւոր բնութիւն, քաղում ես իմաստութեան ախորժելի պտուղը: Բոլոր ցամաքային կենդանիները՝ ընտանիներն ու վայրենիները, բոլոր ջրային ուտելի [կենդանիները] եւ նրանք, որ թռչում են օդում, քո ձեռքի տակ՝ քո ծառաներն են: Դու չգտա՞ր արուեստները եւ հաստատեցիր քաղաքները, հնարեցիր փափկութեան համար հարկաւոր բաները: Բանականութեան միջոցով չէ՞, որ [կարողանում ես] գնալ ծովով: Ցամաքն ու ծովը չե՞ն սպասաւորում քո կեանքին: Օդն ու երկինքը՝ աստղաբոյլերով հանդերձ, ցոյց են տալիս քեզ իրենց կարգաւորութիւնը: Արդ, ինչո՞ւ ես նեղսրտում, որ արծաթասանձ ձի չունես: Սակայն ունես արեգակ, որ արագագոյն ընթացքով ամբողջ օրը ճառագայթում է քեզ համար որպէս ջահ: Չունես արծաթէ կամ ոսկէ լապտեր, սակայն ունես լուսին, որ իր լոյսով բիւրապատիկ աւելի է լուսաւորում քեզ: Երբեք չես նստել ոսկեպատ կառք, սակայն ունես ոտքեր՝ քո սեփական ու բնական կառքը: Արդ, ինչո՞ւ ես երանի տա-

լիս նրանց, ովքեր ծանրացրել են քսակները եւ կարօտ են ուրիշի ոտքերի: Ջես քնում փղոսկրեայ մահճակալին, սակայն ունես երկիրը՝ աւելի պատուական, քան բազմաթիւ փղոսկրէ [մահճակալները], նրա վրայ հանգիստը քաղցր է, քունը՝ արագ ու հոգսերից զերծ: Ջես բնակւում ոսկեճաճանչ ձեղունի տակ, սակայն [ունես] երկինքն ու անճառելի գեղեցկութեամբ փայլող աստղերը: Եւ սրանք [դեռ] մարդկայիններն են, բայց կան առաւել կարեւորները. Աստուծոյ մարդեղութիւնը քեզ համար, Սուրբ Հոգու բաշխումը, մահուան լուծարումը, յարութեան յոյսը, Աստուծոյ պատուիրանները, որոնք կատարելագործում են քո կեանքը, պատուիրանների միջոցով ընթացքն առ Աստուած, երկնքի չքնաղ արքայութիւնը, առաքինութեան գործերի համար պատրաստուած արդարութեան անանց պսակները:

Եթէ նայես քեզ, սրանք եւ դեռ սրանից աւելին կը գտնես քեզ մօտ եւ կը վայելես ներկան, ուստի չես նեղսրտի կատարեալ աղքատութեան համար: Այս պատուիրանը, ամէնուրեք քո առջեւ լինելով, մեծ օգնութիւն կը ցուցաբերի: Օրինակ՝ բարկութիւնը տիրեց քո խորհուրդներին եւ ցասումը քեզ մղեց անվայել խօսքերի եւ դաժան ու գազանային գործերի. եթէ նայես քեզ, կը զսպես զայրոյթդ, ինչպէս անհնազանդ ու դժուարասանձ մի ձի՝ մօտենալով տանջանքի սպառնալիքով, ինչպէս մտրակով:

Կսանձես նաեւ լեզուդ եւ ձեռք չես բարձրացնի զայրացնողի վրայ: Դարձեալ, չար ցանկութիւնները ցաւեցրին հոգիդ՝ տանելով [դէպի] անզուսպ ու անժուժկալ յորձանքները: Եթէ նայես քեզ եւ յիշես, որ ներկայիս հեշտութիւնները դառը վախճան են ունենալու, եւ որ այժմ մեր մարմիններում եղած ցանկութեան խայթոցները ծնելու են գեհենում մեզ տանջող անմեռ թունաբեր որդեր, եւ մարմնի բորբոքումը դառնալու է մայրը յաւիտենական հրի, ցանկութիւններն իսկոյն կը փախչեն-կանհետանան, եւ ներսում՝ հոգուդ մէջ, մի սքանչելի խաղաղութիւն ու հանդարտութիւն կը լինի, ինչպէս տիրուհու ներկայութեամբ դադարում է անկարգ աղախինների աղմուկը: Ուստի «Նայի՛ր քեզ» եւ ճանաչի՛ր, որ առաջինը բանական եւ իմանալի հոգին է, իսկ վերջինները՝ անբան կրքերը, եւ որ առաջինին բնութեամբ յատուկ է իշխելը, իսկ վերջիններին՝ լսելն ու հնազանդուելը բանականութեանը: Արդ, երբեք թոյլ մի՛ տուր, որ միտքդ ստրկանայ՝ ծառայ դառնալով կրքերին, եւ դարձեալ, թոյլ մի՛ տուր կրքերին՝ դէմ կանգնել բանականութեանը եւ իրենց վերագրել հոգու իշխանութիւնը:

Ըստ ամենայնի եւ ստուգութեամբ ճանաչի՛ր ինքդ քեզ, եւ բանական օգնութիւն կը ստանաս աստուածճանաչողութեան համար: Քանզի եթէ նայես քեզ, կարիք չես ունենայ ամբողջ արարչութիւնից ճանաչելու Արարչին, այլ՝ հէնց քեզանից, որ փոքր մի աշխարհ ես, կը տեսնես քո Ստեղծչի մեծ իմաստութիւնը: Քո մէջ եղած անմարմին հոգուց կը ճանաչես անմարմին Աստծուն, որ սահմանափակուած չէ տեղով, ինչպէս եւ քո միտքը, որ առաւելապէս ունի տեղով չպարագրուած ընթացք, բայց մարմնին միացած լինելով՝ պարունակւում է տեղում: Հաւատա՛, որ Աստուած անտեսանելի է՝ ճանաչելով քո հոգին, քանի որ այն նոյնպէս անըմբռնելի է մարմնաւոր աչքերի համար. ո՛չ գոյն ունի, ո՛չ մարմնաւոր տեսք, այլ ճանաչւում է միայն ներգործութիւնների միջոցով: Ուստի մի՛ փնտռիր աչքերով տեսնել Աստծուն, այլ, նկատի առնելով իմանալի հաւատը, ընդունի՛ր Նրա մասին գիտութիւնը: Սքանչացի՛ր ճարտարապետով, [որ] հոգուդ զօրութիւնը կապեց մարմնիդ, թէ ինչպէս, մինչեւ նրա ծայրերը հասնելով, բազմաթիւ առանձին անդամներդ բերեց մէկ միաբանութեան եւ փոխհամաձայնութեան: Տես, թէ հոգիդ ի՛նչ զօրութիւն է տուել մարմնիդ եւ ի՛նչ վշտակցութիւն է բարձրանում մարմնիցդ հոգուդ: Ինչպէ՛ս է մարմնիդ կենդանութիւն ստանում հոգուցդ, իսկ հոգին զգում է մարմնիդ ցաւերը եւ ինչպիսի չտեմարաններ ունի այն գիտելիքների համար: Ինչպէ՛ս է, որ նախապէս ստացած գիտելիքները չեն աղօտանում նոր աւելացողներից, այլ անխառնակ ու յստակ յիշողութիւններ են, որ ինչպէս պղնձէ մի տախտակի վրայ դրոշմուելով՝ պահւում են իշխանական հոգում: Ինչպէ՛ս է, որ [հոգին] կորցնում է իրեն բնորոշ գեղեցկութիւնը եւ ապա, թօթափելով չարութեան ընդդիմամարտութիւնը, առաքինութեան միջոցով [դարձեալ] ընթանում է դէպի Արարչի նմանութիւնը: Հոգուդ զննումից բացի, եթէ կամենում ես, նայիր նաեւ մարմնիդ կազմութեանը եւ սքանչացի՛ր, թէ բանական հոգուդ ինչպիսի՜ վայելուչ բնակարան է յարմարեցրել ամէնարուեստն Աստուած: Կենդանի էակներից միայն քեզ ստեղծեց ուղղաձիգ [դիրքով], որպէսզի հէնց դրանից հասկանաս, որ քո կեանքը ծագումնակից է վերնագոյններին: Քանզի բոլոր չորքոտանիների հայեացքը գետնին է յառած, եւ նրանք հակուած են դէպի մարմնաւորը, իսկ մարդու հայեացքն [ուղղուած է] վեր՝ դէպի երկինք, որպէսզի հետամուտ չլինի մարմնի ախտերին, այլ ամբողջապէս նպատակաուղղուած լինի դէպի երկնային ընթացքը: Նաեւ՝ գլուխը տեղադրուած է մարմնի ամենա-

բարձր [մասում], եւ նրա վրայ են զետեղուած առաւել պատուական զգայարանները: Այնտեղ են տեսանելիքն ու լսելիքը, ճաշակելիքն ու հոտոտելիքը՝ ամէնքն իրար մօտ զետեղուած: Այսպէս [հաւաքուած] լինելով փոքր տեղում՝ ոչ մէկը չի խափանւում դրացու ներգործութիւնից: Աչքերը գրաւել են ամենաբարձր դիտակէտը, որպէսզի մարմնի մասերից ոչ մէկը նրանց վրայ չդրուի: Դարձեալ՝ լսելիքը բացուած է ոչ ուղղակի, այլ ձայնն ընդունում է օդի ոլորաձեւ ընթացքով: Սա եւս գերագոյն իմաստութիւն է, որ ձայնն անարգել չանցնի, աւելի ստոյգ՝ ոլորաններում բեկբեկուելով հնչի, եւ արտաքին ոչ մի ազդեցութիւն չի կարող արգելք դառնալ զգալուն: Ուսումնասիրի՛ր լեզուիդ բնութիւնը. որքա՜ն փափուկ է, ճկուն եւ շարժումների բազմազանութեամբ բաւարարում է խօսքի բոլոր կարիքները: Ատամները միաժամանակ ե՛ւ ձայնի գործիք են՝ լեզուի դէմ զօրաւոր պատնէշ լինելով, ե՛ւ կերակրի սպասաւորներ. մի մասը կտրում է, միւսները՝ մանրում: Այսպէս ընթանալով ամենայն իրաւացի խորհրդածութիւններով եւ ուսումնասիրելով օդի ներքաշումը թոքերով, ջերմութեան պահպանումը սրտում, մարսողութեան անդամները, արիւնատար անօթները, այդ ամէնից քեզ վրայ կը տեսնես Արարչի անքննելի իմաստութիւնը, այնպէս որ դու եւս մարգարէի հետ կ՝ասես. «Քեզ ճանաչելը սքանչելի է ինձ համար» [Սաղմ. ՃԼԸ 6]: Արդ, «նայի՛ր քեզ», որպէսզի տեսնես Աստծուն, Ում փառք յաւիտեանս: Ամէն:

Հին յունարէնից թարգմանեց
Սիմոն Գրքաշարեանը

ՍՈՒՐԲ ԵՓՐԵՄ ԱՍՈՐԻ

ԴԱՏԱՍՏԱՆԻ ԵՒ ԵՐԿՐՈՐԴ ԳԱԼՍՏԵԱՆ ՄԱՍԻՆ

Եկէ՛ք բոլորդ, եղբայրնե՛ր, ինձնից՝ մեղաւոր ու տգէտ Եփրեմից, խորհուրդ լսէք: Քանի որ մեզ հասաւ այն ահաւոր եւ մեծ օրը, իսկ մենք, սիրելինե՛ր, դեգերում ենք զուարճանքների մէջ՝ չյիշելով, որ կարճ է այս ժամանակը, եւ չհոգալով Աստծուն հաշտեցնելու մասին: Ահա երազի եւ իրիկուայ ստուերի պէս են անցնում օրերը, ամիսներն ու տարիները, եւ շուտով կլինի Տիրոջ ահաւոր եւ մեծ գալուստը: Իսկապէս ահաւոր է այդ օրը մեղաւորների համար, նրանց համար, ովքեր չկամեցան կատարել Աստուծոյ կամքը եւ փրկուել:

Դրա համար էլ աղաչո՜ւմ եմ ձեզ, հարազա՛տ եղբայրներ, եկէք դե՛ն նետենք երկրաւոր բաների մասին հոգսերը, որովհետեւ ամէն բան անցնում է, ամէն ինչ վերջանում, եւ ոչինչ մեզ չի օգնի այն ժամին, բացի բարի գործերից, որ այստեղ ունենք: Որովհետեւ ամէն ոք իր գործերն ու խօսքերը պիտի բերի Աստուծոյ ահաւոր դատաստանի ատեանի առջեւ: Սիրտը կդողայ, երիկամները կայլայլուեն, երբ այնտեղ յայտնի դառնան գործերը, խորհուրդներն ու խօսքերը: Մեծ սարսափ է, եղբայրնե՛ր, մեծ դողում է, սիրելինե՛ր: Ո՞վ արդեօք չի զարհուրի, ո՞վ չի դողայ, չի սգայ եւ լաց լինի, քանի որ այնտեղ պիտի յայտնի դառնայ, ինչ որ մենք արել ենք ծածուկ եւ խաւարի մէջ: Իմացէ՛ք այս, որ ձեր սիրոյ համար եմ ասում ձեզ:

Պտղատու ծառերն իրենց ժամանակին իրենց ներսից տերեւների հետ միասին պտուղներ են տալիս: Որտեղի՞ց են ծառերը զարդարւում վայելչութեամբ, եթէ ոչ իրենց ներսից են Աստուծոյ հրամանով պտուղ տալիս՝ ըստ իրենց տեսակի: Նոյնպէս եւ այն ահաւոր Օրը մարդկային բոլոր մարմիններն իրենց միջից դուրս պիտի հանեն այն ամէնն, ինչ արել են՝ բարի թէ չար, եւ իւրաքանչիւր ոք ահաւոր Դատաւորի ատեանի առջեւ պիտի բերի իր գործերը՝ իբրեւ պտուղ, եւ իր խօսքերը՝ իբրեւ տերեւ: Արդարները կբերեն գեղեցիկ, վայելուչ պտուղներ, սուրբերը՝ բարի պտուղներ, քաջ նահատակները կբերեն իրենց՝ համբերութեամբ կրած տանջանքների ու չարչարանքների պարծանքը, աշխար-

հից հրաժարուածները՝ իրենց ճգնութիւնը, ժուժկալութիւնը, պաղատանքը: Իսկ մեղաւորները, ամբարիշտներն ու անմաքուրները ամօթով, լալով եւ ողբով այնտեղ կբերեն վատթար եւ ապականուած պտուղներ՝ անչիջանելի հրի անքուն որդը:

Սարսափելի է այնտեղ դատաստանը, եղբայրնե՛ր, քանի որ վկաների միջոցով չէ, որ յայտնի է դառնալու ամէն բան՝ [մեր] գործերն ու խօսքերը, խորհուրդներն ու մտքերը, երբ մօտ կլինեն հազարների հազարները եւ բիւրերի բիւրերը, քերովբէներն ու սերովբէները, արդարները, սուրբերը, մարգարէները եւ առաքեալները:

Ուրեմն ինչո՞ւ ենք ծուլանում. ժամանակը հասել է, եւ Օրը մօտեցել, երբ մեր բոլոր գաղտնիքները դուրս պիտի հանի ահաւոր Դատաւորը: Եթէ իմանայինք, թէ ինչ է մեզ սպասում, լաց կլինէինք ամէն ժամ՝ գիշեր ցերեկ աղաչելով Աստծուն, որ փրկի մեզ այն ամօթից եւ յաւիտենական խաւարից: Ատեանի առջեւ պիտի կարկամի մարդու բերանը, պիտի դողան բոլոր արարածները, նաեւ նրանք՝ սուրբ հրեշտակների գնդերը, Նրա գալստեան փառքից:

Ի՞նչ պիտի ասենք Նրան դատաստանի Օրը, եղբայրնե՛ր, եթէ այս ժամանակն անցկացնում ենք ծուլութեամբ: Որովհետեւ Նա համբերատար է եւ մեզ բոլորիս կոչում է դէպի Իր արքայութիւնը, բայց մեզնից հաշիւ պիտի պահանջի այս կարճ ժամանակուայ մեր անհոգութեան համար եւ մեզ պիտի ասի. «Ձեզ համար մարմնացայ, ձեզ համար մարմնով երկրի վրայ քայլեցի, ձեզ համար տանջուեցի, ձեզ համար թուք ընդունեցի, ձեզ համար ապտակուեցի, ձեզ համար խաչուեցի, ձեզ համար [խաչա]փայտի վրայ քացախ խմեցի, որպէսզի ձեզ երկնային եւ սուրբ դարձնեմ: Իմ արքայութիւնը ձեզ շնորհեցի, Իմ դրախտը ձեզ պարգեւեցի, ձեզ բոլորիդ Իմ եղբայրներն անուանեցի եւ Հօրը ընծայեցի ձեզ, ուղարկեցի Հոգին. սրանից առաւել ի՞նչ պիտի անէի, որ չարեցի ձեզ համար, որպէսզի դուք փրկուէք: Միայն չեմ ուզում բռնանալ ձեր կամքի վրայ, որպէսզի ձեր փրկութիւնը ստիպողաբար չլինի: Ասացէ՛ք, մեղաւորնե՛ր եւ բնութեամբ մահկանացունե՛ր, դուք Իմ՝ ձեզ համար չարչարուած Տիրոջս համար ի՞նչ չարչարանքներ կրեցիք: Ահա պատրաստել եմ արքայութիւն եւ կեանք, հանգիստ եւ ուրախութիւն, նաեւ արտաքին խաւարի մէջ՝ յաւիտենական տանջանքներ: Իւրաքանչիւր ոք իշխանութիւն ունի գնալու, ուր ուզում է»:

Եկէք բոլորս երկրպագե՛նք Նրան, լա՛ց լինենք մեր Տիրոջ առջեւ՝ ասելով. «Տէ՛ր, այդ ամէնին, իբրեւ Աստուած, համբերեցիր մեզ համար, բայց մենք՝ մեղաւորներս, ամէն ժամ անարգում ենք Քո բարերարութիւնները: Աստուած ես անսկիզբ բնութեամբ՝ անհասանելի, անչարչարելի, անկարօտ. Քեզ հաճոյ թուաց խաչի չարչարանքներով փրկել մեղաւորներին, որ Քեզ չէին ճանաչում, նրանց պարգեւեցիր գիտութեանդ լոյսը: Արդ, մեղաւորների ազգը ի՞նչ տայ Քեզ՝ անհասանելի Աստծուդ, Բարուդ եւ բոլորի հանդէպ Գթածիդ, որոնք ամբարիշտ են իրենց կամքով եւ ո՛չ բնութեամբ, քանի որ նախքան մեր ապրելը բոլոր ազգերն ամբարիշտ էին, եւ դարձեալ յետոյ մենք մեղաւոր ենք մեր կամքով: Իսկ Դու, Տէր, նոյնն ես ամէն ժամ՝ բարի եւ բազմագութ, ահաւոր եւ փառաւորեալ, յաւիտեանների Արարիչ. Քո մեծ գթութեան պատճառով, որ ցոյց տուեցիր մարդկանց որդիներին, վերացնում ես մեր սկզբի դժուարութիւնները: Աստուա՛ծ, յաղթուեցիր Քո սիրուց ու սուրբ գթութիւնից եւ մերձեցար խաչին ամբողջ աշխարհի փրկութեան համար: Քո շնորհից սովորեցինք Քո փառքի առջեւ այս ասել. որ եթէ չյաղթուէիր գութիցդ, Քրիստո՛ս, Քեզ չէիր մատուցի՝ մեղաւորներիս համար մորթուելու եւ պատարագուելու: Տէ՛ր, Քո շնորհի եւ սիրոյ քաղցրութեամբ լցուեց Քո ծառայի միտքը, [որ] յարաժամ քաղցրանում է, լուսաւորւում, յաճախապէս հաստատւում, [նաեւ] յարաժամ անարգում է եւ դէպի դառնութիւն փոխւում՝ չախորժելով միշտ ունենալ իր Տիրոջ քաղցրութիւնը:

Յիսո՛ւս Միածին, ճառագա՛յթ Հօր՝ անմատոյց, անմերձենալի եւ անհասանելի լոյսի մէջ բնակուող, որ շնորհներով լուսաւորեցիր ամբողջ աշխարհը, շնորհներով լուսաւորի՛ր նաեւ ինձ, իմ խաւարած աչքերը, որպէսզի ապականիչը չխաւարեցնի դրանք: Քանի որ մեր մարմինները նմանուեցին նոր տնկուած ծառերի, Տէ՛ր, որոնք կարիք ունեն յարաժամ ջրուելու, եւ մեր տկար միտքն էլ անընդհատ կարօտ է Քո շնորհով հաստատուելու եւ լուսաւորուելու: Քո խօսքը, Տէ՛ր, թող բանայ իմ կուրացած աչքերը: Մօրից [կոյր] ծնուածի համար մեծ սքանչելիք եղաւ Սելոամում. կոյրը տեսաւ՝ լուսաւորուեց մարմնաւոր աչքերով, նաեւ ներքուստ՝ մտքի աչքերով եւ սկսեց առանց երկիւղի քարոզել իր Բժշկին [Յովհ. Թ. 7-27]: Իմ Փրկի՛չ Աստուած, լուսաւորի՛ր մեր սրտի աչքերը՝ սիրելու Քեզ եւ միշտ սիրով կատարելու Քո կամքը, Տէ՛ր:

Ահա Քո ահաւոր արեան բաժակը լի է լոյսով եւ կեանքով: Շնորհի՛ր մեզ իմաստութիւն եւ լուսաւորութիւն, որպէսզի հաւատով, սիրով եւ սրբութեամբ մօտենանք նրան, եւ այն մեզ համար լինի մեղքե-

րի թողութեան եւ ոչ դատաստանի Օրը դատապարտութեան համար: Որովհետեւ ովքեր անարժանաբար են մօտենում աստուածային [խորհուրդին], նրանք իրենք իրենց են դատապարտում՝ առանց իրենց սրբելու, իրենց հարսնարան ընդունելով Թագաւորին: Մեր հոգին անմահ Փեսայի սուրբ հարսն է, եւ հարսանիք է, երբ մաքուր հոգով ենք ուտում եւ խմում աստուածային Խորհուրդը: Ուրեմն նայի՛ր քեզ, քո հարսնարանը միշտ անաղտ պահիր եւ փափագիր ընդունելու երկնային Փեսային՝ Քրիստոս Թագաւորին, որպէսզի Տէրն Իր գալստեան օրը Իր Հօր հետ օթեւանի [այնտեղ]: Արժանացրո՛ւ քեզ հրեշտակների եւ հրեշտակապետերի առջեւ գովութեան, որ մեծ փառքով եւ ցնծութեամբ մտնես դրախտ: Քանի որ ի՞նչ է քեզնից խնդրում Աստուած, ո՛վ մարդ, բացի քո փրկութիւնից: Եւ եթէ դու յապաղում ես՝ չկամենալով փրկուել, չես գնում Աստուծոյ ուղիղ ճանապարհներով եւ չես ուզում Նրա պատուիրանները կատարել, դու ինքդ քեզ ես սպանում եւ դուրս հանում երկնային հարսնարանից: Սուրբ Աստուած, որ մեզքի ենթակայ չէ, Իր Միածին Որդուն չխնայեց քեզ համար, իսկ դու, թշուառակա՛ն, չես խղճում ինքդ քեզ: Սթափուի՛ր քնից դ, բա՛ց քո բերանը, աղաչի՛ր Նրան, մեղքերի ծանրութիւնը հեռացրո՛ւ քեզնից, գթա՛ քեզ, յաճա՛խ պաղատիր, անընդհատ արտասուի՛ր, փախի՛ր թուլութիւնից, ատի՛ր ծուլութիւնը, հեռացի՛ր չարութիւնից, փափագի՛ր ժուժկալել, ճգնի՛ր հանդարտութեան մէջ, սովորի՛ր սաղմոսերգել: Շտապի՛ր, եղբայր, քանի դեռ ժամանակ կայ, քո ամբողջ սրտով սիրի՛ր Աստծուն, ինչպէս որ Նա քեզ սիրեց: Դարձի՛ր Աստուծոյ տաճար, եւ Բարձրեալը կբնակուի քո մէջ, քանի որ այն հոգին, որն իր մէջ ունի Աստծուն, Աստուծոյ սուրբ եւ մաքուր տաճարն է դառնում: Քանի որ երբ Աստուած բնակւում է քո մէջ, երկնային հրեշտակները ցնծում են եւ միշտ շտապում պատուել. հրեշտակները շտապում են պատուել այն հոգուն, որի մէջ իրենց Տէրն է բնակւում, որովհետեւ այն իրենց Տիրոջ տաճարն է:

Երանի՜ այն մարդուն, ով Քեզ սիրում է իր ամբողջ սրտով եւ ատում է աշխարհն ու այն ամէնը, ինչ նրանում կայ, որպէսզի Քեզ ունենայ միայն՝ սուրբ Տիրոջդ: Եթէ որեւէ մէկն այսպէս անկեղծ սիրի Աստծուն, նրա միտքը երբեք չի լինի երկրի վրայ, այլ միշտ վերեւում, որտեղ Նա է, ում ինքը սիրեց, բաղձաց եւ ծարաւեց մտքով: Այնտեղ է նա քաղցրութիւն զգում, այնտեղ է լուսաւորւում, այնտեղ է յագենում քաղցրութեամբ եւ Աստուծոյ սիրով: Երանի՜ նրան, ով ճաշակեց

նրանից եւ չյագեցաւ Աստուծոյ սիրոյ քաղցրութեամբ, որի մասին ո՞վ կարող է արժանապէս խօսել: Պողոս առաքեալը, որ ճաշակեց նրանից եւ յագեցաւ նրանով, աղաղակում եւ ասում է. «Ո՛չ մահը, ո՛չ կեանքը, ո՛չ հրեշտակները, ո՛չ իշխանութիւնները, ո՛չ այլ բաներ, որ այժմ կան, ո՛չ գալիքները եւ ո՛չ զօրութիւնները, ո՛չ բարձրութիւն, ո՛չ խորութիւն եւ ո՛չ մի ուրիշ արարած Աստուծոյ սիրուց չի կարող բաժանել այն անձին, ով ճաշակեց Նրա սիրուց» [Հռոմ. Ը 38-39]: Աստուծոյ սէրը կրակ է, որը զօրանում է այն հոգում, ով փափագում է Նրան, պայծառացնում է նրա զգայութիւնները, նա բարձրանում է երկրից, ատում է երկրաւորը եւ միայն Նրան է տեսնում, ում սիրեց:

Սուրբ մարտիրոսները, որոնք ճաշակեցին նրանից եւ յագեցան նրանով, մեզ սովորեցնում են եւ ասում. «Ինչքա՜ն նուրբ են Աստուծոյ սիրոյ կապանքները, արդարեւ լի են սքանչելիքներով, սուրը չի կարող կտրել դրանք, եւ ոչ էլ կրակը՝ քանդել: Կոտրուած անդամները չէին կտրում սէրը, այրւում էին անդամներն ու կապկպւում, սակայն սիրուց չէին բաժանւում: Սուրբերի մարմիններն ընկղմւում էին, բայց նրանց սէրը չէր ընկղմւում: Կապանքներ էին դրւում անդամների վրայ, սակայն սէրը չէր կապւում: Ո՞վ չի զարմանայ սիրոյ կապանքների վրայ, որոնք երբեք չկտրուեցին եւ չքանդուեցին: Եթէ մէկը երբեւէ ճշմարտապէս սիրի Աստծուն, այդպիսի սէր կստանայ: Այդպիսի սէր Տէրը տուեց Իր Եկեղեցուն եւ այդ սիրով զարդարեց նրան: Այն սէրը Աստուծոյ գրաւականն է հոգում. սիւն եւ հաստատութիւն է գտնում սէրը սուրբ անձերում: Նոյն սէրը մեզ մօտ իջեցրեց Աստուծոյ Միածին Որդուն, նոյն սիրով Աստուած մարդացաւ, նրանով Անմարմինը մարմնացաւ, նոյն սիրով կապուեց զօրաւորը, նոյն սիրով հոգին եղաւ Փեսայի հարսը, որպէսզի իր մէջ արտացոլի Նրա վայելչութիւնը, նրանով չարչարուեց անչարչարելի Փեսան: Սակայն եթէ մարդ հեռու է այդ սիրուց, երկնաւոր Տէրը չի հաճի նրան, չի կամենայ բռնադատել յօժարութիւնը, որովհետեւ մի անգամ ընդմիշտ նրան իշխանութիւն տուեց՝ ապրելու իր կեանքը, ինչպէս ինքն է ուզում: Ո՞վ կարող է կամ ո՞վ ուժ կգտնի փառաւորելու Փրկիչ Աստծուն այն բոլոր շնորհների համար, որ բոլորս ընդունեցինք Նրա ողորմածութեան շնորհիւ: Փա՜ռք եւ գոհութիւն Նրա բարեհաճութեանը:

Լսեցէ՛ք, եղբայրնե՛ր, իմ անարգիս, գեղեցիկ խորհուրդը եւ շտապէք, քանի դեռ ժամանակ ունէք, մաքրուէք եւ արժանի դարձէք Աստծուն, որպէսզի Սուրբ Հոգին բնակուի մեր մէջ, Աստուծոյ սէրը շատա-

նայ մեր մէջ՝ մշտապէս Նրա կամքը կատարելով: Ուրիշ հոգս չունենա՛նք, եղբայրներ, բացի Նրանից, թէ ինչպէս մեր հոգիները լոյսի մէջ գտնուեն: Զկապենք մեր անձերը երկրաւոր իրերի, ստացուածքների եւ ունեցուածքի, այլ զարդարենք դրանք աղօթքներով եւ պահքով, տքնութեամբ եւ արտասուքով, որպէսզի մեր անձը փոքր-ինչ համարձակութիւն գտնի ահաւոր Դատաւորի ատեանի առջեւ, երբ ամէն մի հոգի կանգնած կլինի սարսափով, երբ կլինի ընտրուածների բաժանումը մեղաւորներից, երբ ոչխարները կկանգնեն աջ, իսկ ուլերը՝ ձախ կողմում:

Իմացէ՛ք, եղբայրներ, որ մօտեցել է Տիրոջ գալուստը, որը պիտի հատուցի իւրաքանչիւրին ըստ իր գործերի. Իր ընտրեալներին պիտի ընդունի յաւիտենական լոյսերի մէջ, եւ պիտի պատժի մեղաւորներին, որոնք զայրացրին Իրեն: Երանի՜ այն մարդուն, որը համարձակութիւն կունենայ այն ժամին եւ կլսի այն երանելի ձայնը. «Եկէ՛ք, իմ Հօր ընտրեալներ, ժառանգեցէ՛ք արքայութիւնը» [Մատթ. Իե 34]: Այնժամ իւրաքանչիւր ոք իրեն կտեսնի լոյսի մէջ, կնայի իր աներեւակայելի փառքին եւ սքանչանալով՝ իր մտքում կասի. «Մի՞թէ սա ես եմ, ինչպէ՞ս ես՝ անարժանս, այստեղ յայտնուեցի»: Մեծ ուրախութեամբ կմօտենան հրեշտակները՝ սուրբերին փառաւորելու, եւ կպատմեն նրանց առաքինութիւնները՝ ճգնութիւնը, ժուժկալութիւնը, տքնութիւնը, աղօթասիրութիւնը, կամաւոր աղքատասիրութիւնը, կատարեալ աղքատութիւնը, համբերելը ծարաւին, ժուժկալելը, երկար աղօթելը, Քրիստոսի կատարեալ սիրոյ համար ուրախութիւնը մերկութեան մէջ: Հրեշտակները մեծ ուրախութեամբ այս ամէնը պիտի ասեն արդարներին, իսկ արդարները նրանց պիտի պատասխանեն. «Երկրի վրայ երբեք բարի գործ չենք արել»: Դարձեալ հրեշտակները կյիշեցնեն նրանց տեղը եւ ժամանակը եւ, հիանալով նրանցով, Աստծուն կփառաւորեն՝ տեսնելով, որ սուրբերի մարմինները երկնքում փայլում են աւելի պայծառ, քան լոյսը, [որովհետեւ] նահատակուեցին երկրի վրայ եւ համբերութեամբ ծածկեցին իրենց մէջ գեղեցիկ մարգարիտն ու անաղտ պատմուճանը, քանի որ գտան հանդում թաքնուած մարգարիտը եւ, վաճառելով երկրի վրայ իրենց ամբողջ ունեցածը, ձեռք բերեցին այն:

Փոքր է ճգնութեան ժամանակը, եղբայրնե՛ր, եւ մեծ է հանգիստը, ժամանակաւոր է ճգնութեան չարչարանքը, եւ յաւիտեանս յաւիտենից է հանգիստը փափուկ դրախտում: Եթէ մէկը գիտակցում է, որ

Աստուծոյ դէմ մեղք է գործել եւ թուլանում է՝ ախորժելով այն, նա իր կամքով յանցանք է գործում. թող սիրով արտասուի, անընդհատ լաց լինի, որպէսզի արտասուքով դէպի իրեն ձգի շնորհները, ստանայ զղջում, իր մարմինը լուանայ արտասուքով եւ հառաչանքներով:

Ունե՞նք արդեօք արտասուքի փորձ, եղբայրնե՛ր, ձեզնից որեւէ մէկը լուսաւորուե՞ց այն ուրախարար արտասուքով, որ Աստուծոյ համար է: Իմացէ՛ք, եղբայրնե՛ր, երկրի վրայ աւելի քաղցր բան չկայ, քան այդ պահի ուրախութիւնն ու հանգիստը: Երբ մէկը աղօթքներով խնդրում է Աստծուն իր սրտում, միշտ փափագում է Աստուծոյ հետ [լինել]: Եթէ ձեզնից որեւէ մէկը հմուտ լինի, քաղցրանայ արտասուքի մէջ, սիրով պաղատի, կբարձրանայ երկրից, ամբողջովին դուրս կլինի մարմնից. ինչո՞ւ եմ ասում մարմնից, այս ամբողջ յաւիտեանից դուրս կլինի, երկրի վրայ չի լինի, Աստուծոյ հետ կխօսի, Քրիստոսից կլուսաւորուի; Սուրբ Հոգով միշտ կսրբուի: Մեծ հրաշք է, եղբայրնե՛ր, որ հողեղէն մարդն իր սուրբ աղօթքի մէջ Աստուծոյ հետ է խօսում: Երանի՜ այն մարդուն, որն ամէն ժամ Աստուծոյ առջեւ ապաշխարութիւն ունի: Զղջումն անձի բժշկութիւն է, հոգու լուսաւորութիւն, ապաշխարանք, մեղքերի թողութիւն, Սուրբ Հոգուն է դէպի մեզ ձգում, ապաշխարութիւնը Միածին Յիսուսին է ամբողջացնում մեր մէջ, ամէն ժամ Նրան ենք ցանկանում:

Կամենում եմ ասել ձեզ, եղբայրներ, արտասուքի զօրութեան մասին: Աննան արտասուքով Աստծուց ստացաւ Սամուէլ մարգարէին՝ իր սրտի բարձրութեանն ու պարծանքին: Սիմոնի տանը մեղաւոր կինը Քրիստոսից ստացաւ մեղքերի թողութիւն՝ լաց լինելով եւ թրջելով Նրա ոտքերը: Մեծ է արտասուքի զօրութիւնը, եղբայրնե՛ր, արտասուքն Աստուծոյ մօտ մեծապէս զօրանում է, մեր անձերը միշտ լուանում է մեղքերից եւ մաքրում անօրինութիւններից: Աստուծոյ համար արտասուքը յարաժամ համարձակութիւն է տալիս Աստուծոյ առաջ, պիղծ խորհուրդները չեն կարողանում մօտենալ այն հոգուն, ով զղջում ունի: Դրանից աւելի ի՞նչ քաղցրութիւն կգտնուի, ի՞նչն է փափագելի, քան նման երանութիւնը, երբ հոգին տեսնում է Նրան՝ Աստծուն՝ Նրան աղօթելով: Երբ հոգով ցանկանայ, պաղատանքներում միշտ Նրան կտեսնի, Նրա հետ կխօսի ցերեկը եւ գիշերը: Անկողոպտելի գանձ է Աստուծոյ սէրը, անճառելի ուրախութիւն. բերկրում է այն հոգին, որն ունի այդ սէրը՝ ոչ թէ մէկ օրուայ, այլ որ շարունակւում է ամբողջ կեանքում՝ գիշեր թէ ցերեկ:

Գութը մաքուր աղբիւր է հոգու մէջ, եղբայրնե՛ր, որը ոռոգում է հոգու պտղաբեր տունկը. պտղաբեր տունկը բարեգործութիւններն ու առաքինութիւններն են, որոնք միշտ ոռոգւում են արտասուքով եւ աղօթքով: Քո հոգում միշտ տնկի՛ր գեղեցիկ, պտղաբեր, ծաղկուն տունկը եւ ոռոգի՛ր այն արտասուքով ու պաղատանքներով: Արտասուքով եւ աղօթքով ոռոգուած տունկը ճոխանում է հոգու համար պիտանի պտղաբերութեամբ: Ընտիր եւ գեղեցիկ կլինի անվերջ արտասուքով եւ աղօթքով ոռոգուող քո տունկը, քանզի ամէն օր ոռոգուելով կաճի եւ պտուղ կտայ: Մի՛ լինիր ինձ՝ թոյլիս եւ մեղաւորիս նման, որ ամբողջ օրն ասում եւ երբեք չեմ անում. ծոյլ եմ յօժարութեամբ եւ թոյլ՝ յորդորմամբ, չունեմ մաքուր աղօթքներ, քանի որ իմ մասին գիտեմ, որ ամէն ժամ մեղաւոր եմ, սարսափում եմ գալիք դատաստանից եւ պատասխան չունեմ իմ մեղկութեան յանցանքների համար:

Արդ աղաչո՛ւմ եմ ձեզ, Աստուծոյ երկիւղն ունեցողնե՛ր, որ ամէն ժամ կատարում էք Նրա կամքը, բարեխօսեցէ՛ք Նրա առաջ ինձ՝ տկարիս համար, որպէսզի ինձ վրայ գայ Նրա սուրբ շնորհը ձեր աղօթքներով, եւ փրկուի իմ հոգին այն ահաւոր եւ մեծ Օրը, երբ Քրիստոս գայ՝ հատուցելու իւրաքանչիւրին:

Փա՛ռք միակ, անմահ եւ գթած Աստծուն, որ Իր շնորհով շարժեց մեր լեզուն՝ խօսելու դատաստանի, սիրոյ եւ զղջման մասին՝ հոգիների լուսաւորութեան, սրտի եւ խորհուրդների օգտի համար, որպէսզի ամէն հոգի, ասելով այս ամէնը, քաղցրանայ եւ ուղղուի դէպի յաւիտենական կեանք՝ դէպի Յիսուս Քրիստոս՝ մեր Տէրը, Որին փառք յաւիտեանս. ամէն:

Գրաբարից փոխադրեց
Մարթա Արաբեանը

Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՕՁՆԵՑԻ

Ս. Յովհաննէս Օձնեցի Իմաստասէրը ծնուել է Տաշիրքի Օձուն գիւղում՝ մօտաւորապէս է դարի կէսերին: Մանուկ հասակից ս. Յովհաննէսն աչքի է ընկել իր աստուածատուր ձիրքերով եւ առաքինասէր վարքով: Նա աշակերտել է ժամանակի նշանաւոր վարդապետներից մէկին՝ Թէոդորոս Քռթենաւոր խարազնազգեստ ճգնաւորին, որի հոգեւոր հոգածութեամբ ոչ միայն հմտացել է Աստուածաշունչ Մատեանի, իմաստասիրութեան, քերականութեան եւ հռետորութեան մէջ, այլեւ հասել ճգնաւորական-անապատական կեանքի բարձրագոյն աստիճանների՝ հետեւելով իր ուսուցչի կենցաղավարութեան նուրբ եւ գերազանց օրինակին: Յարատեւ ճգնութիւններով եւ խստամբեր կեանքով ապրող ս. Յովհաննէսն Աստծուց ստացել է մարգարէութեան եւ բժշկութեան բացառիկ շնորհներ: Իր ուսուցչի կողմից կոչուել է քահանայական աստիճանի՝ դառնալով Տիրոջ մարմնի մեղսաքաւիչ խորհուրդի ժիր սպասաւոր եւ աստուածային շնորհաբաշխութեան սրբազան անօթ: Քահանայագործութեան շրջանում ի յայտ է եկել ոչ միայն նրա հոգեւոր ճանաչողութեան եւ փորձառութեան առանձնայատուկ օժտուածութիւնը, այլեւ դրանց փոխանցման աստուածատուր կարողութիւնը. նա ունեցել է Սուրբ Գիրքը եւ աստուածաբանական գրուածքները մեկնելու եւ ուսուցանելու՝ ի վերուստ տրուած շնորհ:

Եղիա Արճիշեցի կաթողիկոսի վախճանից յետոյ (717 թ.) ս. Յովհաննէսը համազգային ընտրութեամբ դարձել է ամենայն Հայոց կաթողիկոս: Այս մեծ պատմական իրադարձութեան մասին այսպէս է գրում Վարդան Արեւելցին. «Աստուծոյ խնամքի ներգործութիւնից շարժուեցին Հայաստանի բոլոր եկեղեցականների եւ աշխարհականների սրտերը՝ [Հայոց] առաքելական Աթոռի վրայ բարձրացնելու Յովհաննէսին՝ երկրորդ Ոսկեբերանին, որ հեզ էր հոգով, բարձր՝ հանճարի խօսքով, անբիծ աղաւնի էր, ճշմարիտ առաքինի, հեռու բոլոր չար գործերից, ամենավեհն էր բոլոր արեւելեանների մէջ... եւ բազում թախանձանքներով ստիպում են ամէներջանիկ Յովհաննէսին եւ Սուրբ Հոգու կոչմամբ նստեցնում սուրբ Գրիգորի Աթոռին՝ մեծ հանդիսութեամբ եւ աշխարհակոյտ բազմութեան ներկայութեամբ»[1]: Այս աստուածապար-

1 Վարդան Արեւելցի, Ճառք, Ներբողեանք, Երեւան 2000, էջ 354

գեւ Հայրապետի օրոք հոգեւոր կեանքը մեծ ծաղկում է ապրել. բարեկարգուել են եկեղեցական տօները, մշակուել է եկեղեցական կանոնագիրքը, բազմաթիւ եկեղեցիներ են կառուցուել, սուր պայքար է ծաւալուել աղանդաւորութեան դէմ, իր վերջնական բիւրեղացմանն է հասել հայ քրիստոսաբանական միտքը: Նրա հայրապետութեան շրջանում գումարուել են 720 թ. Դուինի Զ եւ 726 թ. Մանազկերտի նշանաւոր ժողովները: Եկեղեցական-կազմակերպչական բուռն գործունէութիւնը զուգորդուել է աստուածային նշաններով եւ բժշկութիւններով: Նրա սրբութեան եւ հրաշագործութիւնների համբաւը տարածուել է Հայաստանի սահմաններից դուրս, եւ սուրբ հայրապետի նկատմամբ յարգանքը առիթ է հանդիսացել, որ Հայաստանը զերծ մնայ մի շարք աւերիչ արշաւանքներից: Որքան մեծացել է նրա համբաւը, այնքան աւելի է սուրբի սրտում բորբոքուել մարդկանցից հեռանալու եւ ճգնաւորական կեանքով ապրելու փափագը: 728 թ. ս. Յովհաննէսն իր փոխարէն կաթողիկոսական գահին է բազմեցրել Դաւիթ Արամոնեցուն, իսկ ինքն առանձնացել՝ ճգնելու հայրենի գիւղից ոչ հեռու: Իր հետագայ կեանքն անցկացրել է խստագոյն ճգնութիւնների եւ յարատեւ աղօթքի մէջ: Այս ճգնութեան տարիներին տեղի են ունեցել մեծամեծ հրաշքներ, որոնք նկարագրւում են նրա վարքի մէջ: Նրա հանգստարանը ցայսօր մեծ եւ հրաշագործ սրբավայր է:

Ս. Յովհաննէս Օձնեցուց մեզ հասած գրաւոր ժառանգութիւնը մեծ չէ ծաւալով, սակայն նրանից պահպանուած իւրաքանչիւր նշխար մեծ արժէք է ներկայացնում հայ աստուածաբանական մտքի ուսումնասիրութեան համար: Նրա անունով մեզ են հասել հետեւեալ երկերը[2].

1. Ատենաբանութիւն եւ կանոնք, ԼԲ, ներկայացուած Դուինի ժողովին- Յովհաննու Իմաստասիրի Աւձնեցւոյ Մատենագրութիւնք, Վենետիկ, 1833 (= Մատ.), էջ 1-33.
2. Ընդդէմ պաւղիկեանց.- Մատ. էջ 33-47.
3. Ընդդէմ երեւութականաց.- Մատ. էջ 48-80: Ձեռ. Ս8 N 1009, էջ 3-51.
4. Յաղագս Կարգաց Եկեղեցւոյ.- Մատ. էջ 81-106.
5. Հատուածք բանից ի Հաւաքմանց յաղագս կարգաց Եկեղեցւոյ- Մատ. էջ 109-114.

2 Երկերի ցանկը ներկայացուած է ըստ Նորայր եպս. Պողարեանի (Նորայր եպս. Պողարեան, Հայ գրողներ, Երուսաղէմ, 1971, էջ 98-101):

6. Շարականք Աւագ տօնից.- Ա. Դաւթի մարգարէին եւ Յակովբայ Տեառն-եղբօր: Բ. Ստեփանոսի Նախավկային: Գ. Պետրոսի եւ Պօղոսի առաքելոցն: Դ. Որդւոցն Որոտման.
7. Կանոնագիրք Հայոց (խմբագրել է բոլոր կանոնախմբերը՝ սկզբում նախաբան եւ համառօտ գլխակարգութիւն զետեղելով: Ցիշատակարանը տե՛ս Մատ. էջ 115-116):

Վերագրելի եւ երկբայական գործեր

1. Հիմնարկէք եկեղեցւոյ- Մատ., էջ 119-122.
2. Օրհնութիւն նորաշէն եկեղեցւոյ- Մատ., էջ 123-129.
3. Յաղագս Եկեղեցւոյ- Մատ., էջ 130-144.
4. Սակս ժողովոցն որ եղեն ի Հայս- Գիրք Թղթոց (Թիֆլիս, 1901), էջ 220-233.
5. Ընդդէմ այնոցիկ որք զԽորհուրդն խմորով եւ ջրով առնեն- Գիրք Թղթոց, էջ 234-238.
6. Խոստովանութիւն անշարժ յուսոյ... եւ ընդդէմ դաւանողաց զմի Քրիստոս յերկուս բնութիւնս- Արարատ, 1896, էջ 192-9 (Ըստ Ե. Դուրեանի անվաւեր (Նախատարերք, 1915, էջ 93).
7. Վասն մարմնաւորութեան Տեառն.- Հրատ. Հ. Ն. Ակինեան, Յուշարձան, Վիեննա, 1911, 340-344 (անվաւեր).
8. Թուղթ առ Աթանաս պատրիարքն Ասորւոց, (որպէս նախաբան Խոսրովիկի կողմից նրան ուղղուած թղթի)- Գ. Յովսէփեան, Խոսրովիկ Թարգմանիչ (Վաղարշապատ, 1899), էջ 97-100.
9. Ի գիտութիւն պատուիրանացն Տեառն զոր սուրբ հարքն եդին- «Նաեւ ես զձեզ աղաչեմ մի՛ նոյն աւրինակաւ գնալ...», Ձեռ. Ս8 N 1303 (1297-1307 թթ.), էջ 387-419 (թերի):

Ս. Յովհաննէս Օձնեցու ամենանշանաւոր եւ մեծածաւալ աշխատութիւնը «Ընդդէմ երեւութականների» ճառն է: Գրութեան ստոյգ թուականը յայտնի չէ: Այս գործի ստեղծման առիթ է հանդիսացել այդ ժամանակ Հայաստանում աշխուժացած «երեւութականութիւնը» (դոկետիզմը), որի դէմ սուր պայքար է ծաւալել Հայ Եկեղեցին: Երեւութականութիւնը դեռեւս Ա դարից սկիզբ առած հերետիկոսական ուսմունք է, ըստ որի՝ Քրիստոսի մարդեղութիւնը եւ չարչարանքներն իրական չեն, այլ երեւութական եւ թուացեալ: Այս ուսմունքի հիմքում ընկած են մի շարք հեթանոսական պատկերացումներ Աստուծոյ եւ նիւթական աշխարհի մասին: Երեւութականութիւնը յատկապէս ար-

մատացել է գնոստիկների քրիստոսաբանական հայեացքների մէջ: Ըստ երեւութականների՝ Քրիստոս իրականում չի խաչուել, այլ հրաշքով ազատուել է, իսկ Նրա փոխարէն խաչուել է Յուդա Իսկարիովտացին կամ Սիմոն Կիւրենացին:

Աւելի ուշ շրջանում երեւութականութիւնը հանդէս է եկել որպէս մարդաբանական առնուազուութիւն (մինիմալիզմ) քրիստոսաբանութեան մէջ: Աստուածաբանական մտքի պատմութեան մէջ Տիրոջ մարդեղութեան որեւէ թերի կամ ոչ իրական խոստովանութիւն անխուսափելիօրէն յանգեցրել է երեւութական ծայրայեղութիւնների, որոնց վառ օրինակներից է Եւտիքէսի կեղծ ուսմունքը:

Զ-Ը դդ. երեւութականութիւնը յատկապէս աշխուժացել է Յուլիանոս Հալիկառնասցու անապականութեան վարդապետութեան ծայրայեղ հետեւորդների կամ յուլիանոսականների շնորհիւ: Պէտք է նկատի ունենալ, որ Հայ Եկեղեցու հայրերը վիճել են ոչ այնքան Յուլիանոսի, որքան նրա ծայրայեղ հետեւորդների հետ: Յամենայն դէպս Յուլիանոսի գրուածքներում չկայ այն կոպիտ երեւութականութիւնը, որի մասին յաճախ խօսել են նրա հակառակորդները՝ մեղադրելով նրան այն բանի մէջ, որ Տիրոջ մարմնի անապականութեան իր ուսմունքով նա փրկութեան խորհուրդը վերածում է ինչ-որ «երեւակայութեան եւ անրջական պատրանքի»: Յուլիանոսի հետեւորդներն աւելի հեռու են գնացել, նրանց անուանել են «աֆտարդոկետներ» (անապական-երեւութականներ) եւ «ֆանտազիստներ». այս անունները լաւագոյնս ցոյց են տալիս նրանց մտածելակերպի մէջ բոյն դրած երեւութականութիւնը: Յուլիանոսի ծայրայեղ հետեւորդներից ոմանք համարել են, որ աստուածմարդկային միութեան մէջ պայծառակերպուած եւ աստուածացած մարդեղութիւնը չի կարելի անուանել «արարչական». այսպէս է առաջացել «անարարչականների» աղանդը:

Յուլիանոսի ծայրայեղ հետեւորդներ (երեւութականներ) են յայտնուել նաեւ Հայաստանում: Դատելով նրանց դէմ ծաւալուած պայքարի չափերից՝ «երեւութականութիւնը» բաւականին խոր արմատներ էր գցել հայկական միջավայրում: «Երեւութականութիւնը» հայոց պատմութեան մէջ յիշատակւում է նաեւ «Մայրագոմեցւոյ աղանդ» անունով, եւ սա կապուած է Սարգիս Մայրագոմեցու անուան հետ: Մայրագոմեցու հետեւորդներին կամ հայ երեւութականներին սուր քննադատութեան է ենթարկել Թէոդորոս Քռթենաւոր խարազնազգեստ ճգնաւոր վարդապետն իր «Ընդդէմ մայրագումացւոցն» գրուածքում: Երեւութականների դէմ պայքարը յաջողութեամբ շարունակուել եւ իր գագաթնակէտին է հասել ս. Յովհաննէս Օձնեցու եւ մեծ գիտնական վարդապետ Խոսրովիկ Թարգմանչի աշխատանքների շնորհիւ:

Ս. Յովհան Օձնեցու «Ընդդէմ երեւութականաց» ճառն առանցքային նշանակութիւն ունի ոչ միայն հակաաղանդաւորական պայքարի տեսանկիւնից, այլեւ հայ աստուածաբանական մտքի կարեւորագոյն սկզբնաղբիւրներից է: Հայ քրիստոսաբանական մտքի մի շարք առանձնայատկութիւններ բացայայտուած են հանճարեղ խորութեամբ: Ակնյայտ է ս. Բարսեղ Կեսարացու եւ ս. Գրիգոր Աստուածաբանի ազդեցութիւնը, որոնց յաճախ վկայակոչում է: Լայնօրէն գործածում է արտաքին իմաստասիրական կաղապարներ: Ճառն ունի գեղեցիկ հռետորական ոճ, որը, սակայն, զերծ չէ խրթնաբանութիւններից, ինչը հետեւանք է յայտնութենական ճշմարտութիւնները բառային կերպերով ներկայացնելու դժուարութեան:

«Ընդդէմ երեւութականաց» ճառի ներկայացուող թարգմանութիւնը կատարուած է ըստ Վենետիկի 1807 (աշխատ. Մ. Աւգերեանի) եւ 1833 թթ. հրատարակութիւնների:

Մեսրոպ քահանայ Արամեան

ՍՈՒՐԲ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՕՁՆԵՑԻ

ԸՆԴԴԷՄ ԵՐԵՒՈՒԹԱԿԱՆՆԵՐԻ

Ա. Ինձ համար յոյժ տենչալի էր եւ փափագելի, որ ո՛չ ուրիշներն ինձ, ո՛չ էլ ես ուրիշներին թշնամի չլինեմ, այլ, ըստ առաքելական հրամանի, ամէն ժամ հետամուտ լինեմ բարի բաների՝ միմեանց եւ ամէնքի հանդէպ [Ա Թես. Ե 15]՝ ամբողջ սրտով փնտռելով խաղաղութիւն բոլոր մարդկանց նկատմամբ [Հռոմ. ԺԲ 12], որպէսզի դրանով սիրոյ եւ խաղաղութեան Աստծուն ջանայինք հաւանեցնել մեր մէջ բնակուելու: Բայց քանի որ ահա այժմ մարդիկ, վերստին վերցնելով սպանութեան գործիքները, որ ի սկզբանէ հրաման ստացանք մի կողմ դնել, պատերազմում են միմեանց դէմ, եւ Քրիստոսի անդամների մէկ Գլխի փոխարէն շատ գլուխներ ու ցեղապետեր են տեղ գրաւել, ապա անհրաժեշտ է, որ մենք ընտրութիւն կատարենք՝ ունենալու միայն մէկ զօրագլուխ եւ վերակացու մեր կեանքին, եւ Նրան ոչ միայն Աստուած ենք կոչում, այլեւ գրում ենք Նրա մասին եւ Նրա անունով յորդորում [Ես. ԽԴ 5], Նրա համար ահա ատում ենք եւ այն, ինչ Նա է ատում. եւ ատենք դրանցից կատարելագոյնը՝ ատելութիւնը [Սաղմ. ՃԼԸ 21-22]:

Բ. Նաեւ ասենք նրանց. «Զէ՛ք ապրելու, քանի որ Տիրոջ անունով սուտ խօսեցիք» [Երեմ. ԻԸ 16]՝ ըստ մարգարէի խօսքի: Եւ ո՞ր սուտն է աւելի չար, քան Քրիստոսին մարմնով եկած չխոստովանելը. այդպիսիներին Մեծն Յովհաննէսը կոչում է «մոլորեցուցիչ» եւ «նեռ» [Ա Յովհ. Դ 3]: Քանզի նրանք, ում մասին է խօսքս, այնքան են տկարացնում ու նուաղեցնում Քրիստոսի մարմնի մասին խորհրդածութիւններն ու խօսքերը, որ մինչեւ իսկ աչքի երեւոյթ են համարում մարմնացեալ Բանին, որքան հնարաւոր է հասկանալ նրանց խօսքերի իմաստից: Քանզի Քրիստոսի մէջ բոլոր մարմնաւոր կրքերը[1] յանձն չեն առնում կոչել մարմնաւոր կամ մարմնով, «որպէսզի,- ասում են,- մէկ Քրիստոսի մէջ երկու բնութիւնների ակնարկութիւն չանենք, այլ ինքն իսկ Բանն Աստուած էր,- ասում են,- որ անցնում էր երկուսի միջով էլ՝ մարդկայինի եւ աստուածայինի»:

Գ. Զարմանում եմ այսպիսի կեղակարծ եւ անհաստատ խոստովանութեան վրայ: Եթէ Քրիստոս կամենում էր անմարմնապէս կրել մարմնական [կրքերը], էլ ինչո՞ւ մարմնացաւ Կոյսից՝ յղութեան իննամսեայ ժամկէտով, եւ ծնուելով՝ յայտնուեց որպէս մանուկ: «Կը գտնէք,- ասում է,- մի մանուկ՝ խանձարուրի մէջ փաթաթուած եւ դրուած մսուրի մէջ» [Ղուկ. Բ 12], եւ՝ «ըստ մարմնի՝ Դաւթի սերնդից» [Հռոմ. Ա 3], եւ՝ «որոնցից եւ Քրիստոս է ըստ մարմնի» [Հռոմ. Թ 5], եւ՝ «Մեծ է աստուածպաշտութեան խորհուրդը, որ յայտնուեց մարմնով» [Ա Տիմ. Գ 16], եւ՝ «Քրիստոսի չարչարուելը մարմնով» [Ա Պետր. Դ 1], եւ՝ «Թէպէտեւ մեռաւ մարմնով, բայց կենդանի է հոգով» [Ա Պետր. Գ 18]: Սակայն ակամայ կուրութիւնը ցանկանում է տեսնել անտեսանելին, իսկ կամաւոր կուրութիւնը ջանում է չտեսնել տեսանելին:

Դ. Այլեւ ասում են. «Կոյսից չմարմնացաւ, այլ կոյսի մէջ», որպէսզի, յիրաւի «կոյսից» ասելով, մեր բնութիւնը չյիշեցնեն եւ չներմուծեն: Իսկ ասելով «կոյսի մէջ»՝ «ուրեմն Ինքը՝ Բանն Աստուած է,- ասում են,- մարմնացած լինում Կոյսի արգանդում»: Հարցնում եմ ձեզ. մարմնանալը ըստ բնութե՞ան էք վերագրում Բանին, թէ՞ ըստ մեզանից [վերցրածն][2] Իրեն միաւորելու: Եթէ այս բնութիւնն ընդունեց Իր [բնութեան] փոխարէն, ապա թողեց այն [բնութիւնը], որն ունէր. ուրեմն ընդունայն է եւ մեր փրկութեան յոյսը: Բայց, կարծում եմ, ձեր միտքն ուրիշ բան է երկնում՝ այդպէս կեղծաւորութիւն անելով: Իսկ ի՞նչ ես անելու հրեշտակապետի խօսքը. «Նա, Ով ծնուելու է,- ասում է,- քեզանից» [Ղուկ. Ա 35] եւ ոչ թէ «քո մէջ», եւ թէ՝ «Աստուած ուղարկեց Իր որդուն, Որը ծնուեց կնոջից» [Գաղ. Դ 4], եւ թէ՝ «Առաքուեց Աստուած Աստծուց եւ հոգի ու մարմին առաւ Կոյ-

---

1 *Մարդկային կրքերը լինում են մեղանչական (անգոսնելի, պարսաւելի) եւ անմեղ (անանգոսնելի, անպարսաւելի): Քրիստոս կրել է միայն անմեղ կրքերը (օրինակ՝ քաղցը, ծարաւը, յոգնութիւնը, տրտմութիւնը, քունը եւն):*

2 *Նկատի ունի մարդկային բնութիւնը:*

սից»[3], եւ թէ՝ «Քրիստոս Կոյսից է. կանա՛յք, կո՛յս եղէք»[4], եւ թէ՝ «Մնուեց սուրբ Կոյս Մարիամից»[5]: Գիտեմ, որ լսում ես այս խօսքերն ու չես հնազանդւում, որպէսզի կորստեան մատնուես՝ հայրերին[6] անհնազանդ որդիդ:

Ե. Իսկ եթէ տարակուսանքի երկիւղից է ձեր թերախօսութիւնը, ապա նմանւում էք նրանց, ովքեր, սրի ահից փախչելով, մեռնում են գահավէժ լինելով: Նրանց պէս եւ դուք, վախենալով ասել «երկու բնութիւնից», փախչում ընկնում էք Պանդորոսի յիմարութեան մէջ, որն ասում էր, թէ «Բանը փոխուել է մարմնի ու ոսկորի»: Որովհետեւ եթէ հոգեւոր աչքով չնայէք Աւետարանի՝ «Բանը մարմին եղաւ» խօսքին [Յովհ. Ա 14], բնաւ չէք կարող խուսափել վերոյիշեալ հայհոյութիւնից:

Զ. Ըստ նոյն օրինակի՝ մէկ բնութիւն ասելիս, եթէ չասէք ինչպէս հարկն է՝ ըստ ճշմարիտ կարգի, կը նմանուէք հայհոյութիւններ բարբառող բազում շների: Քանզի բոլոր քրիստոսասէրների մտքի աչքերը լուսաւորուած են սրա վերաբերեալ, որ մարմնի եւ Բանի բնութիւնը մէկ է ոչ ըստ բնութեան նոյնութեան, որովհետեւ երկուսն էլ մարդկային կամ երկուսն էլ աստուածային չեն: Մարմինը երկնքից իջած չէ, ինչպէս առաջին Եւտիքէսն էր ցնորաբանում, ոչ էլ Բանն Աստուած սկիզբ է առել Մարիամից, ինչպէս Փոտինոսին էր թւում, այլ անեղ Բանը, ի բնէ անեղ Հօրից իջնելով, արարչական մարմին առաւ Կոյսի արգանդից: Ուրեմն, մէկ բնութիւն է՝ ոչ ըստ բնութեան նոյնութեան, քանզի թէեւ ասում ենք՝ մէկ է բնութիւնը մարմնացեալ Բանի, սակայն ոչ այդպիսի խելայեղ եւ ստայօդ իմաստով, իբրեւ թէ մէկը միւսի կողմից ջնջուած է կամ հեղուկների պէս լուծուած են իրար մէջ, ինչից եւ ոչ մի բնութիւն չի լինում: Այլ առանց թողնելու այն, ինչ էր,

3 «Վարդապետութիւն սրբոյն Գրիգորի», ԼԸ, պարբ. 368, Ագաթանգեղեայ Պատմութիւն Հայոց, աշխ. Գ. Տէր-Մկրտչեան եւ Ստ. Կանայեանց, Տփղիս, 1909 (=Ագաթ.), էջ 184

4 Ս. Գրիգոր Աստուածաբան, «Յաստուածայայտնութեան եւ ի Մնունդն Փրկչին», ճառ ԼԸ՝ ըստ յունական եւ լատինական դասակարգութեան («Յովհաննու Իմաստասիրի եւ կաթողիկոսի Հայոց Օձնեցւոյ ճառ ընդդէմ երեւութականաց», աշխատասիրութեամբ՝ Մ. Աւգերեանի, Վենետիկ, 1807 (=Աւգերեան), էջ 6, տողատակի ծանօթ. 4)

5 Նոյն տեղում

6 Նկատի ունի Եկեղեցու հայրերին:

դարձաւ այն, ինչ չէր: Այսպէս յայտնի դարձաւ Բարձրագոյնի խոնարհութիւնը. մնալով [Իր] բարձրութեան վրայ՝ Նոյն Ինքը խոնարհութեան մէջ յայտնուեց, ինչպէս ասում է սուրբ Գրիգորը. «Թէպէտեւ մեզ համար իջաւ անարգութեան մէջ, սակայն մնում է Իր բնութեան մէջ»[7], ինչպէս Ինքն իսկ ասաց. «Ես նոյնն եմ եւ չեմ փոփոխւում» [Մաղ. Գ 6]:

Է. Յայտնի դարձաւ նաեւ մեր մեծութիւնը. ունենալով ծառայի պատկերը՝ հագանք Երկնաւորի պատկերը [Ա Կոր. ԺԵ 49]: Փրկիչն Ինքը յայտնեց սա՝ ասելով. «Ես եկայ, որպէսզի կեանք ունենաք եւ առաւել եւս ունենաք» [Յովհ. Ժ 10]: Այսինքն՝ չեկայ վերցնելու տրուած գոյացութեան սկզբնական շնորհը, այլ Իմ առաւել աստուածանմանը հաստատելու նրա վրայ: Քանզի Ստեղծիչը չեկաւ եղծելու Իր ստեղծած արարածին, այլ վերաստեղծելու նրան եւ նորոգելու: Եւ այսպէս, առանց թողնելու իրենց գոյութիւնը, մարդկայինն ու աստուածայինն այնուհետեւ ասւում են միաւորութեամբ՝ այդպիսի գոյացութեամբ չլինելով [մինչեւ միաւորուելը]: Այսինքն՝ Բանն Աստուած, մարդ դառնալով եւ ասուելով, այսուհանդերձ մնաց Աստուած, իսկ մարդը, աստուածանալով եւ [աստուած] ասուելով, երբեք չկորցրեց իր բնութիւնը: Ինչպէս երանելի Եփրեմն է ասում. «Ոչ թէ մարմինն անմարմնութեան փոխեց, այլ Իր մարմինն ունի այնպէս, ինչպէս ծնուեց Կոյսից. եւ [այն] առաւել է, քան մերը՝ ըստ Բանն Աստուծոյ հետ միաւորութեան»[8]:

Ը. Արդ, պարզ է, որ անհաս միաւորութիւնն է եւ ոչ թէ բնութիւնների փոփոխումը, որ առաջնորդում է մեզ «մէկ» խոստովանել մարմնացեալ Բանի բնութիւնը: Այս է ուսուցանում նաեւ մեծահանճար Կիւրեղը՝ Ալեքսանդրիայի հայրապետը՝ ասելով. «Բանը մարմնաւոր բնութեան չվերածուեց, ոչ էլ մարմնի [բնութիւնը]՝ Բանի, այլ երկուսն էլ մնում եւ իմացւում են իւրաքանչիւրն իր բնական յատկութիւններով՝ ըստ մեր կողմից ասուած խօսքերի. Որդու բնութիւնը մէկ է ըստ անճառելի եւ անպատմելի միաւորութեան»[9]: «Իւրաքանչիւրն իր բնական յատկութեամբ» ասելով նկատի ունի, որ երկուսից իւրա-

7 «Վարդապետութիւն սրբոյն Գրիգորի», Խ, պարբ. 378, Ագաթ., էջ 189

8 Վկայակոչութեան աղբիւրն առայժմ մնում է անյայտ:

9 Թուղթ Բ Առ Սեկունդոս, «Գիրք Պարապմանց ս. Կիւրղի Աղեքսանդրու հայրապետին» , Կ. Պոլիս, 1717 թ., էջ 418

քանչիւրը մնում է անփոփոխ՝ ինչպիսին որ էր: Իսկ գերազանց եւ սքանչելի միաւորութեան մէջ որեւէ արգելք չկայ՝ ամէն ինչ միութեամբ խոստովանել Քրիստոսի մէջ՝ մէկ դէմք, մէկ անձ եւ մէկ բնութիւն: Քանզի [Նա], որ անմարմին Բանն էր Հօրից, մարմին հագաւ սուրբ Կոյս Մարիամից, այսինքն՝ մեր մարդկային բնութիւնից, որը միաւորելով Իր դէմքին ու բնութեանը՝ մարմնով հանդերձ կոչւում է մէկ դէմք եւ մէկ բնութիւն: Հօրից [ծնուած] Բանը ոչ թէ անգոյ կամ առանց մտքի ու անձի եւ առանց բնութեան վերցրեց մերը կնոջից, այլ ըստ ամենայնի կատարելապէս առնելով՝ միաւորեց Իր կատարելութեանը. եւ այսպէս մէկ կատարեալ է ասւում՝ մէկ կենդանութիւն եւ դէմք ունենալով: Ոչ միութեան մէջ ուրանում եմ իւրաքանչիւրի կատարելութիւնը, ոչ էլ իւրաքանչիւրի կատարելութեան պատճառով հրաժարւում եմ խոստովանել մէկ կատարելութիւնը՝ միութիւն խոստովանելով անայլայլութեան մէջ եւ անայլայլութիւն՝ միութեան մէջ:

Թ. Ապա ուրեմն Քրիստոս մէկ բնութիւն եւ մէկ դէմք ունի, եթէ հարկ է աւելի համառօտ ասել, ոչ ըստ բնութեան նոյնութեան կամ ըստ մէկանձնականութեան, քանզի այս երկուսը միասին գրեթէ զրկում են Աստծուն մարդանալուց եւ մարդուն՝ աստուածանալուց, այլ, ինչպէս բազում անգամ ասացի, ըստ Բանի՝ Իր մարմնի հետ անճառ միաւորութեան: Ինչպէս եւ սուրբ Գրիգորն է ասում. «Բնութեամբ միացաւ մարմնին եւ մարմինը միաւորեց Իր աստուածութեանը»[10]: Ահա ըստ անճառելի եւ անհասանելի միութեան եւ միաւորութեան ենք համարձակւում «մէկ» կոչել Քրիստոսի բնութիւնը եւ ո՛չ թէ որեւէ այլ կերպ: Նոյնը հաստատում է նաեւ երանելի Յուլիոս Հռոմի հայրապետը. «Երանի՜ նրան, ով ասում է, որ եղական մարմինն անեղ Աստուծոյ հետ՝ միաւորութեամբ աստուածային է եւ երկրպագելի, նաեւ երկուսը միասին մէկ անեղ Աստուած է»[11]: Հաւասարապէս երանի է տալիս երկուսին էլ՝ խոստովանելով «երկու»՝ ըստ բնութիւնների, եւ «մէկ»՝ ըստ միաւորութեան: «Մէկ» ասելով՝ չխեղաթիւրենք՝ խցանելով բնութիւնների աղբիւրները, եւ «երկու» ասելով՝ չկամենանք պատռել միաւորութեան պատմուճանը, այլ գիտենալով բարեպաշտաբար մօտենալ երկուսին էլ՝ միութեա՛մբ ճանաչենք բնութիւնները եւ բնութիւններից գնանք դէպի միաւորութիւն: Ինչպէս սքանչելի Յովհան Կոստանդնուպոլսեցին է ասում. «Խոստովանում եմ միութիւն, սակայն ոչ թէ քայքայում կամ մի բնութեան վերածումը միւսի կամ ընդհակառակը, այլ միացած՝ մէկ դարձած»[12]: Արդ, ինչպէս նախապէս ասացի, երեւելին եւ անտեսանելիը մէկ դարձած է կոչւում ըստ միաւորութեան եւ ո՛չ ըստ համագոյութեան, որովհետեւ, իսկապէս, ինչպէ՞ս [համագոյ] կը լինեն նրանք, որոնք [այդպիսին] չեն:

Ժ. Սակայն ձեր ասած այս խօսքն էլ ենք լսում. «Աստուածայինն եմ մէկ բնութիւն կոչում՝ Իր իսկական բնութիւնը, որ Հօրից ունէր, որովհետեւ արարածներից ոչ ոք բնութիւն չի կոչւում, քանզի միայն Արարչինն է բնութիւն կոչւում, իսկ մարմինը Քրիստոսի մարմին եմ կոչում, բայց ո՛չ Քրիստոսի բնութիւն»: Փախչո՞ւմ ես բնութեան անուանումից, դրա հետ եւ՝ «երկու» ասելուց, եւ չես հասկանում, որ մարմին ասելով ներառում ես այն, ինչից փախչում ես: Ուրեմն այն, ինչով կարծում ես բարեպաշտանալ, կը դնեմ ընդդէմ քեզ: Մարմինը կոչելով Բանի մարմին եւ ասելով՝ Բանը մարմին ունի, ուրիշ ի՞նչ ես կարծում ասել, եթէ ոչ նոյնը: Եւ դարձեալ՝ «Բանը Հօրից» ասելով՝ Հօր բնութիւնը տուած կը լինես Նրան, իսկ երբ ասում ես «մարմինը մարդկանցից է», ո՞ւմ բնութիւնն ունի ըստ քեզ, եթէ ոչ՝ մարդկանց: Բայց կարծում եմ, թէ կամենում էք մարմինն էլ չհամարել Քրիստոսինը, քանզի եթէ խոստովանէիք, որ Քրիստոս ճշմարտապէս ունի մարմինը, եւ այն՝ մարդկանցից եւ մարդկային, ապա չէիք վարանի նաեւ մարդկային բնութիւն կոչել այն: Քանզի նոյնն է Քրիստոսի՝ մարդկային մարմին եւ մարդկային բնութիւն ունենալը, որովհետեւ Քրիստոս առանց միաւորութեան չի՛ կոչւում Քրիստոս Յիսուս, այլ՝ Բանն Աստուած: Ինչպէս ասում է սուրբ Բարսեղը. «Եթէ մէկը մարմինը կոչի Բանի բնութիւն, եւ Բանը՝ մարմնի բնութիւն, [ապա] այս խօսքը լի է ամբարշտութեամբ»[13]:

ԺԱ. Իսկ եթէ միեւնոյն Քրիստոսին խոստովանում ես երկու բնութիւններից, այսինքն՝ աստուածային եւ մարդկային, ինչո՞ւ ես վախենում ու սաստկացնում չարութիւնը եւ անշնորհք ու հայհոյական շարադրանքով պղտորում բարեպաշտների լսելիքը: Քանզի ասում ես. «Նա, որ Հօրից էացած անձ էր, անձնաւորուեց սուրբ Կոյսից, եւ Հօրից ունեցած բնութիւնը բնաւորուեց Կոյսի արգանդում»: Բայց գո-

10 «Վարդապետութիւն սրբոյն Գրիգորի», ԼԸ, պարբ. 369, Ագաթ., էջ 185
11 Թուղթ առ Փրոստոկիոս (Աւգերեան, էջ 16, ծանօթ. 2)

12 Վկայակոչութեան աղբիւրն առայժմ մնում է անյայտ:
13 Վկայակոչութեան աղբիւրն առայժմ մնում է անյայտ:

հութի՛ւն Աստուծոյ, որ բացայայտում է խաւարի խորքերը եւ ցոյց տալիս մահուան ստուերները [Յոբ ԺԲ 22], քանզի թէպէտեւ շատ աշխատեցիր խաւար արահետներով ծածկել եւ թաքցնել քո մէջ հաւաքուած դառը մաղձը, [սակայն] այժմ, աստուածային հայեացքից հարկադրուած, դուրս թափեցիր [այն]: Արդ, Կոյսի մէջ ինչպէ՞ս անձնաւորուեց Որդու անձը. Իր բնութիւնը թողնելով՝ ա՞յլ բնութիւն դարձաւ, ինչպէս ասում է Պանդորոսը, թէ՞ Իրենը պահելով՝ առերեւութապէս միայն ձեւն Իր վրայ առաւ, առաչօք եւ սոսկ ձեւով ցոյց տալով մեր [բնութիւնը] Կոյսից, ինչպէս յիմարաբար խօսում է երկրորդ Եւտիքէսը՝[14] ասելով. «Խոստովանում եմ, որ Բանն Աստուած Կոյսի արգանդում կերպարանք ու ձեւ է առել, մարդու պատկեր ու ձեւ ընդունել, այլ ո՛չ թէ արարածական բնութիւնից որեւէ մաս խառնել Իրեն, քանզի Աստուածութիւնն անխառն է եւ անյօդ»: Տեսնո՞ւմ ես ինչպէս էք ձեր հայհոյութեամբ ձայնակցում միմեանց. դու ասում ես՝ Հօրից ծնուած Որդու անձն անձնաւորուեց Կոյսի մէջ, իսկ նա ասում է՝ Կոյսից ոչինչ չխառնեց անխառն աստուածութեանը:

ԺԲ. Իսկ եթէ Բանն Իրեն միաւորեց ո՛չ մեր անձնաւոր բնութիւնը Կոյսից, ինչպէ՞ս Ինքն Իրեն անուանեց մարդ կամ մարդու որդի: Նաեւ՝ ինչպէ՞ս, յայտնուելով որպէս մանուկ, պատուեց խանձարուրով, սնուում էր կաթով եւ հասակով աճելով՝ վեր էր ընթանում դէպի կատարելութիւն՝[15] ըստ Աթանաս Մեծի ուղղափառ դաւանութեան, [որն] ասում է. «Ըստ Իր հրամանի՝ մարդկային բնութիւնը կատարելապէս միաւորեց Իրեն, ինչպէս որ կամեցաւ. այսինքն՝ ծնուեց կնոջից, հասակով աճեց, յոգնեց, ծարաւեց, քաղցեց, քնեց, տրտմեց, մեռաւ եւ յարութիւն առաւ»[16]: Այս բոլորը Քրիստոսի կողմից արուած արտաքին ձեւեր ու սուտ երեւումնե՞ր են թւում քեզ, թէ՞ ճշմարտութիւն: Ուրեմն՝ եթէ ճշմարտութիւն, ինչպէս եւ է իսկ, քանզի անհնար է, որ անսուտ Աստուած ստով կեղծի Իր գործերը, [ապա] ինչպէ՞ս ես յանդգնում

14 Երկրորդ Եւտիքէսի ինքնութեան հարցն անորոշ է: Մինչեւ Օձնեցին այս մասին հայ մատենագրութեան մէջ տեղեկութիւններ չկան, սակայն նրանից յետոյ հայ մատենագիրները կրկնում են այս վկայակոչութիւնը (Աւգերեան, էջ 8-9, տողատակի ծանօթ. 2):

15 «Կատարելութիւն» ասելով՝ այստեղ ս. Յովհան Օձնեցին նկատի ունի 30 տարեկանը, որը կատարեալ հասակ է: Սա չի նշանակում, որ Յիսուս Քրիստոս մինչ այդ ունէր որեւէ մարդկային թերութիւն կամ անկատարութիւն:

16 Վկայակոչութեան աղբիւրն առայժմ մնում է անյայտ:

ասել, թէ Որդու աներեւոյթ եւ անմարմին անձը, մարմնի ձեւ առնելով, անձնաւորուեց Կոյսի արգանդում, եւ թէ Հօրից առաքուած Բանն Աստուած Իրեն չմիաւորեց մեր կատարեալ բնութիւնը՝ [այն] վերցնելով կնոջից:

ԺԳ. «Եթէ այդպէս ասենք,- ասում են,- ընդունած կը լինենք երկու դէմք եւ երկու բնութիւն»: Դարձեալ, փախչելով սնոտի երկիւղից, աւելի մեծ չարիքի մէջ ես ընկնում: Եթէ չես կամենում «մէկը» ասել «երկուսից» ըստ բնութեան, ապա շատ աւելի չարաչար կերպով՝ ըստ բնութեան ասած կը լինես «մէկ բնութիւնը»: Սակայն Բանի անմարմին աստուածային բնութիւնը, մարմնեղէն բնութիւն ընդունելով Կոյսից, միաւորեց Իրեն, որ ըստ բնութեան երկուսից է՝ աստուածային եւ մարդկային, իսկ ըստ միաւորութեան մէկ է: Քանզի եթէ հաւատքի այս երկու գեղեցիկ ոտքերի վրայ կանգնելով չհաստատուես ճշմարտութեան մէջ, դրանցից որ մէկին էլ յենուես, կաղ կը լինես ճշմարիտ խոստովանութեան մէջ, այլ [պէտք է] երկուսն ըստ իւրաքանչիւրի [յատկութեան] կատարեալ ընդունել եւ ըստ միաւորութեան՝ մէ՛կ կատարեալ, մէ՛կ դէմք եւ մէ՛կ Որդի Աստուծոյ խոստովանել, ինչպէս սուրբ Բարսեղն է ասում. «Երկու կատարեալ գոյացութիւնների միաւորութիւն»[17]:

ԺԴ. Սրա դէմ հակառակ կանգնելով գրեցիր դու քո չարադրանքներում՝ ասելով. «Այն բնութիւնը, որ Հօրից է, նոյնը բնաւորուել է Սուրբ Կոյսից: Եթէ մինչ այդ բնութիւնը Հօրից էր, ուրիշ ի՞նչ բնութիւն պէտք է գոյանար Կոյսի արգանդում»: Մտածի՛ր, թէ այդպէս ասելովդ որքան սաստիկ հայհոյութիւնների յորձանուտի մէջ ես ընկղմւում: Նիկիայում հաւաքուած սուրբ հայրերն ասացին. «Նոյն Հօր բնութիւնն [ունեցողը], մեր փրկութեան համար մարդանալով, ծնուեց սուրբ Կոյս Մարիամից՝ Սուրբ Հոգով»[18]: Եւ ապա մէկ առ մէկ թուարկեցին մեր բնութեան կատարելութիւնները՝ «հոգի, մարմին, միտք», եւ ասացին. «Նոյն մարմնով երկինք համբարձուեց եւ գալու է նոյն մարմնով»[19]: Իսկ դու ասում ես. «Այն բնութիւնը, որ Հօրից է, բնաւորուեց Կոյսի արգանդում եւ այդ պատճառով կոչւում է մէկ

17 «Բարսղի եպիսկոպոսի ուղղափառի եւ Ապողինարի հերձուածողի վիճաբանութիւն», «Կնիք հաւատոյ», Ս. Էջմիածին, 1914 (=ԿՀ), էջ 87

18 Հմմտ. «Հաւատամքի» համապատասխան հատուածի հետ:

19 Հմմտ. «Հաւատամքի» համապատասխան հատուածի հետ:

բնութիւն»: Եթէ Կոյսի արգանդում բնաւորուեց, ապա Հօրից չէր բնաւորուել: Դարձեալ, եթէ Կոյսի արգանդից սկսեց Հօր հետ մէկ բնութիւն լինել, ապա նախքան Կոյսի արգանդն իջնելը օտար էր Հօր բնութեանը: Եւ այդպէս բարբաջելովդ[20] ձայնակից ես լինում Արիոսի չարափառութեանը:

ԺԵ. Դարձեալ, ասում ես, որ «մէկ բնութիւն»-ը ստուգապէս դէմ է «երկու բնութիւն» ասողներին: Իսկ ով «երկու բնութիւն» է ասում, նկատի ունի աստուածայինն ու մարդկայինը. դու քո «մէկն» ասելով նրանցից ո՞րը նկատի ունես կամ ո՞ր եղանակով: Ուստի այդպէս մոլորւում ես ցնորական խորհուրդներով եւ չես կարողանում գտնել Աստուծոյ ուղիղ ճանապարհը [Առակ. Բ 20]: Քանզի Բանն Աստուած ոչ թէ նախապէս գոյացրածը [վերցրեց, այլ] մարդկային բնութեամբ հանդերձ գոյութիւն առնելով Կոյսի անարատ արգանդից՝ անճառապէս միաւորեց իր գոյութեանն ու բնութեանը: Քանզի «մարմնի բնութիւնը ճանաչեցի Բանի միաւորութեամբ»,- ասաց սուրբերից մէկը[21], եւ այսպէս է ասւում մէ՛կ դէմք եւ մէ՛կ բնութիւն մարմնացեալ Բանի: Զի ասւում ինքնին մէկ բնութիւն եւ անձ, քանզի Բանն Աստուած այն յաւիտենապէս ունէր, այլ՝ ըստ անճառ տնօրէնութեան՝ Կոյսից: Ինչպէս ասում է սուրբ Բարսեղը. «Մարիամի բնութիւնից ծնուած էութիւնը ոչ թէ բնութեամբ էր Աստուած, այլ տնօրէնութեան միաւորութեամբ, քանզի Բանը, որ Աստուած էր Հօր բնութիւնից, Մարիամի բնութիւնից ծառայի պատկեր առաւ եւ դարձաւ նրա որովայնի պտուղը»[22]: Եւ այս է նրա [խօսքը]: Ապա ուրեմն՝ ոչ թէ աստուածային բնութիւնը բնաւորուեց Կոյսի արգանդում, ինչպէս դու ես բարբաջում, այլ Բանն Աստուած՝ Հօրից, մարդկային բնութիւն հագաւ կնոջից: Ինչպէս ասում է նաեւ Աթանաս Մեծը. «Քանի որ մեր մարդկային բնութիւնն էր, որ պիտի ծնուէր, դրա համար էլ նրան չարչարուած է ցոյց տալիս»[23]: Այսպիսին է Հօր [խօսքը]:

ԺԶ. Իսկ դու, որ ասում ես. «Բանը, որ Հօրից էր, ճշմարտապէս մարդ դարձաւ մարդկանցից», ինչո՞ւ ես վարանում դաւանել մարդ-

20 Բնագրում «զաւղակատելովդ», որը չկայ ՆԲՀԼ-ում:

21 «Բարսղի եպիսկոպոսի ուղղափառի եւ Ապողինարի հերձուածողի վիճաբանութիւն», ԿՀ, էջ 86

22 «Բարսղի եպիսկոպոսի ուղղափառի եւ Ապողինարի հերձուածողի վիճաբանութիւն», ԿՀ, էջ 91

23 Վկայակոչութեան աղբիւրն առայժմ մնում է անյայտ:

կային բնութիւնը Քրիստոսի մէջ եւ ծռմռւում խօսքերիդ մէջ՝ ցատկոտելով մի սնոտի մտածութիւնից միւսը: Վախենում ես ասել «երկու բնութիւն». մեծ երկիւղ կայ նաեւ, երբ Քրիստոսի «մէկ բնութիւնը» արժանավայել կերպով չի խոստովանւում: Իսկ եթէ ստուգութեամբ եւ բարեպաշտօրէն հասկանաս երկուսն էլ, ոչ մի արգելք չկայ՝ «մէկն» ասելով՝ յիշելու նաեւ «երկուսիցը», եւ դարձեալ, «երկուսիցը» չմոռանալով՝ խոստովանելու նաեւ «մէկը»: Քանզի եւ սուրբ հայրերը, ուղղափառութեան վրայ հիմնուած հաւատով, անտարակոյս եւ աներկբայ խոհականութեամբ, այս երկուսն էլ որպէս անվրէպ զէնք կրելով իրենց վրայ, մատուցում էին ըստ անհրաժեշտութեան [եւ] մէկ առ մէկ առաջ մղելով՝ փայլատակեցնում ճշմարտութեան թշնամիների դէմ. նրա՛նց, ովքեր ըստ Եւտիքէսի կամ էլ ըստ Յուլիանոսի չարապէս ըմբռնելով էին ասում «մէկ» [եւ] իրենց երկիմաստ խօսքերով դժուարութիւններ յարուցում: Քանզի թէ՛ «մէկը», թէ՛ «երկուսը» իրար հետ միասին կ՚առաջնորդեն յոյժ ուղղափառ խորհուրդների:

ԺԷ. Ծառը պտղից է ճանաչւում [Ղուկ. Զ 44], իսկ ծաղիկն արմատից է անուն ստանում: Ծաղկի մասի՞ն ես հարցնում. արմատի անուամբ է հանդէս գալիս: Եթէ անունը վերցուի, ապա [կվերանայ] նաեւ իմաստը, եւ ի յայտ կը բերես երկուսի՝ անուան եւ իմաստի վերացումը. [մինչդեռ] արմատը [հանդէս է գալիս] անուամբ, գոյնը՝ տեսանելիութեամբ, հոտը՝ բուրմունքով եւ համը՝ ճաշակմամբ: Նոյն օրինակով էլ թեւածելով կը բարձրանաս դէպի փրկչական մարմինը, տեսակի անուամբ մարդ կը խոստովանես Նրան՝ Յիսուս Քրիստոս ասելով. [Նրան] տեսնելու պատճառով՝ «Շօշափեցէ՛ք ինձ եւ տեսէ՛ք, քանզի ոգին մարմին ու ոսկորներ չունի, ինչպէս ես, որ տեսնում էք, ունեմ» [Ղուկ. ԻԴ 39], [Նրա] մարդկային կրքերի պատճառով՝ «Որովհետեւ ինքը չարչարուեց եւ փորձութեան մատնուեց, կարող է օգնել նաեւ փորձուողներին» [Եբր. Բ 18], Նրա՝ մեզ համար մեռնելու պատճառով՝ «Քրիստոս մեզ համար մեռաւ՝ ըստ Գրքի» [Ա Կոր. ԺԵ 3]:

ԺԸ. Ապա ուրեմն եթէ եւ այս մէկով չսթափուեցիր, մէկ առ մէկ միւսների մօտ գնալով հարցրու. եւ կը համոզուես՝ տէրունական մարմինն ասելու համագոյ եւ համաբուն մեր մարդկային բնութեանը, քանզի այսպէս երկու բնութիւնից խոստովանելով՝ Նրան կը հռչակես ե՛ւ մարդ, ե՛ւ Աստուած: Իսկ ասելով, որ Նա ըստ բնութեան «մէկ» է, ինչպէս եւ վկայում են ձեր իսկ խօսքերը, սոսկ բացարձակ անուամբ յայտնած կը լինես. [ուրեմն] ինչպէ՞ս կարող ես ասել, թէ Նա մարդ եղաւ, մեռաւ

եւ [Իր] մահուամբ մեր մէջ աղբիւրացրեց անմահութեան շնորհը: Այս պատճառով սուրբ հայրերը համարձակօրէն ցոյց են տուել Քրիստոսի երկու՝ աստուածային եւ մարդկային բնութիւնների գոյութիւնը: Ասում է «երկու բնութիւն», քանի որ Աստուած է եւ մարդ, եւ թէ՝ «բնութիւնները միացան»[24], եւ թէ՝ «Քրիստոս ստուգապէս ունէր երկու բնութիւնը»[25], եւ թէ՝ «Երկակի է Քրիստոս. մարդ էր, որ երեւում էր, եւ Աստուած էր, որ չէր երեւում»[26], եւ այլ այսպիսի [խօսքեր], որ ասուել են ուրիշների կողմից: «Երկուսից» ասելով ոչ թէ հրաժարւում էին հաստատել «մէկը», կամ էլ ընդհակառակը՝ «մէկը» խոստովանելով՝ յամառում «երկուսից» խոստովանել, այլ լուսափայլելով ուղղափառութեան այս երկու ջահերով՝ համարձակօրէն պայծառանում էին՝ ըստ բնութեան «երկու» եւ ըստ միաւորութեան «մէկ» քարոզելով Քրիստոսին, որով ցոյց էր տրւում, որ Բանն Աստուծոյ բնութիւնն անեղ է եւ Հօրից, իսկ Նրա մարմնի գոյացութիւնը՝ Կոյսից եւ եղական՝ ասելով. «Աւետարանիչների խօսքերը հաւասարապատիւ չեմ ասում, ոչ էլ նրանց արժանաւորութեան մասին ասուածները. այլ մէկը ցոյց է տալիս Աստուածութեան բարձրութիւնը, իսկ միւսը՝ խոնարհուելը դէպի մեր մարդկային նուաստութիւնը»[27], եւ թէ՝ «Զարչարելի է մարմնով եւ անչարչարելի՝ Աստուածութեամբ»[28]: Սակայն սա, որ այժմ ասաց. «Աստուածութեամբ անչարչարելի է», մէկ այլ տեղում վերաձայնում է՝ «Աստուած չարչարեալ»[29]: Արդ, ինչպէ՞ս հասկանանք սրանք. մի՞թէ

24 Ս. Գրիգոր Աստուածաբան, Թուղթ Ա առ Կղեդոնիոս, ճառ ԾԱ՝ ըստ յունական եւ լատինական դասակարգութեան եւ գլուխ Թ «Առ որս» ժողովածուում (Աւգերեան, էջ 27, ծանօթ. 2)

25 Ս. Գրիգոր Աստուածաբան, ճառ ԼԱ՝ ըստ յունական եւ լատինական դասակարգութեան (Աւգերեան, էջ 27, ծանօթ. 2)

26 Երանելւոյն Կիւրղի Երուսաղեմացւոյ հայրապետի «Կոչումն ընծայութեան», Վնտ., 1832, էջ 52

27 Ս. Գրիգոր Նիւսացի, Ճառն զոր խօսեցաւ ի ժողովոյն Կոստանդնուպոլսի, զետեղուած է ս. Գրիգոր Աստուածաբանի «Առ որս» ժողովածուում (գլուխ Դ) եւ Նիւսացու յունարէն եւ լատիներէն գործերի Բ հատորում (Աւգերեան, էջ 28, ծանօթ. 1)

28 Ս. Գրիգոր Աստուածաբան, Թուղթ Ա առ Կղեդոնիոս, ճառ ԾԱ՝ ըստ յունական եւ լատինական դասակարգութեան եւ գլուխ Թ «Առ որս» ժողովածուում (Աւգերեան, էջ 27, ծանօթ. 2)

29 Ս. Գրիգոր Աստուածաբան, Ճառ ԼԶ՝ ըստ յունական եւ լատինական դասակարգութեան եւ գլուխ Ե «Առ որս» ժողովածուում (Աւգերեան, էջ 28, ծանօթ. 3)

կարելի է մարտնչել սեփական վարդապետների դէմ. քա՛ւ լիցի: Այլ առաջինը խօսում է ըստ բնութեան, իսկ երկրորդը՝ ըստ Բանի միաւորութեան: Երբ ըստ միաւորութեան է խօսում, չի ուրանում ընդհանուրից իւրաքանչիւրին, եւ դարձեալ՝ ընդհանուրից իւրաքանչիւրի մասին ասուած որեւէ խօսք միութիւնը երկու միութիւնների չի բաժանում, այլ երկուսին էլ մօտենում է բարեսէր եւ բարեպաշտ կամքով՝ չարչարելին անչարչարելի խոստովանելով՝ ըստ ընդհանուր միաւորութեան, եւ ըստ բնութեան անչարչարելին բազմաչարչարելի խոստովանելով՝ ըստ միաւորութեան:

ԺԹ. Սրա նման, միւս սուրբ հայրերը եւս արձանագրեցին իրենց դաւանական խօսքերը: Երբ անհրաժեշտ էր լինում խօսել ըստ բնութեան, համարձակապէս յիշում էին երկուսից իւրաքանչիւրի առանձնայատկութիւնները. ոչ թէ մէկ Որդին երկու որդիների կամ երկու դէմքերի բաժանելու համար, այլ միայն այն էին ազդարարում, թէ ինչ [գոյացութիւններից էր միութիւնը]: Ըստ սուրբ Բարսեղի. «Ցոգնեց ճամփորդութիւնից՝ մարմնի եւ ջղերի յոյժ երկար ուղեգնացութիւնից. ոչ թէ Աստուածութիւնը աշխատութեամբ չարչարուեց, այլ մարմինը, որ բնութեամբ աւելի յարմար էր՝ կրելու դիպուածները»[30]: Եւ նա, որ այժմ ըստ մարմնի բնութեան այսպէս է ասում, մէկ այլ տեղում ըստ Բանն Աստուծոյ հետ միաւորութեան այսպէս է արտայայտւում՝ ասելով. «Ես ասում եմ, որ մարմնի թաղումը եւ նրա զգեստը Բանինն են՝ ոչ թէ աստուածային բնութեամբ, այլ տնօրէնութեան միաւորութեամբ: Նոյնպէս եւ՝ մարդկային անձին յատուկ խօսքերը եւ չարչարանքները, տրտմութիւնն ու տագնապը, ասում եմ, որ Բանինն են՝ ոչ թէ աստուածային բնութեամբ, այլ տնօրէնութեան միաւորութեամբ»[31]:

Ի. Այս երկու ուղղապաշտ շաւիղներով այսպէս կարողանալով վեր ընթանալ դէպի Բանի մարմնաւորութեան խորհուրդը՝ սուրբ հայրերը արժանաւորապէս եւ պատշաճօրէն համարձակւում էին խօսել ե՛ւ բնութիւնների, ե՛ւ տնօրէնութեան միաւորութեան մասին՝ ասելով. «Քաղ-

30 «Գոհութեան մասին» ճառից է: Քննական բնագիրը պատրաստել է Կիմ Մուրադեանը, որի հետ համեմատելով հին յունարէնից հայերէն է թարգմանել Սիմոն Գրքաշարեանը: Պատրաստւում է հրատարակութեան հանդէսի առաջիկայ հատորներում, ինչպէս նաեւ՝ «Գահոց գիրք» ամբողջական ժողովածուով:

31 «Բարսղի եպիսկոպոսի ուղղափառի եւ Ապողինարի հերձուածողի վիճաբանութիւն», ԿՀ, էջ 95

ցեց մարմնով, ծարաւեց, յոգնեց, ննջեց: Դրանով ոչ թէ նսեմացրեց Աստուածութիւնը, այլ՝ որպէսզի ճշմարտապէս ցոյց տայ մարմնի բնութիւնը»[32]: Եւ թէ՝ «Բանը, որ Հայր Աստծուց է, անչարչարելի է եւ անմահ. դրա համար մարմին առաւ, որպէսզի կարողանայ չարչարուել»[33]: Եւ թէ՝ «Աստուծոյ Միածին Որդին մեր բնութիւնը միացրեց Իր Աստուածութեանը եւ ամէն ինչ անում ու կատարում է մեր մարդկային բնութեամբ, սակայն ըստ աստուածային բնութեան անախտ է ու անկարօտ եւ լցնում ու կատարելագործում է բոլոր արարածներին»[34]:

ԻԱ. Արդ, մէկ Քրիստոսի մասին այսպէս են անբաժանաբար վկայում բազմերջանիկ հայրերը՝ ոչ թէ մէկ Քրիստոսին երկու դէմքերի կամ երկու որդիների բաժանելու համար, քա՜ւ լիցի, այլ այստեղ կամենում են առաւել եւս հաստատել հաւատքի ճշմարտութիւնը, դրա հետ միասին նաեւ կործանել չարափառների հոյլերը, որոնք Քրիստոսի բնութիւնը «մէկ» կոչելու միջոցով ուրանում էին Նրա մարդեղութեան անսուտ խորհուրդը: [Նկատի ունեմ] վերջին Եւտիքէսին, որ «մէկ բնութիւն» [ասելով]՝ դժոխաբանում էր, թէ Քրիստոսի մարմինը Կոյսին համագոյ չէ. առաջին Եւտիքէսին, որ «մէկ բնութիւն» ասելով՝ յայտարարում էր, որ Քրիստոսի մարմինը երկնքից է եւ անստեղծ. Վաղենտիանոսին եւ Մանիին, որոնք «մէկ բնութիւն» ասելով՝ թուացեալ համարեցին Քրիստոսի յայտնութիւնը. Ապողինարին, Սոփրոնիոսին եւ Ցուլիանոսին, որոնք «մէկ բնութիւն» ասելով՝ յայտարարեցին, թէ Բանը թերի եւ անկատար է առել մեր բնութիւնը Կոյսից. Եւնոմիոսին եւ Արիոսին, որոնք «մէկ բնութիւն» ասելով՝ յայտարարեցին, թէ Բանի միաւորութիւնը մարմնի հետ [սոսկ] անտեսանելի եւ տեսանելի արարածների շարակարգութիւն է:

ԻԲ. Կարծում եմ՝ սրանցից հեռու չէ նաեւ քո ասած «մէկ բնութիւնը», որ տանջանքների վախից ընդունում ես Բանն Աստուծոյ մարմնացումը, իսկ այն, ինչից է՛ մարմինը, ուրանում ես: Ինչպէս օրինակ՝ նրանք, ովքեր թագաւորական գահոյքը համարում են պատուարժան, իսկ նիւթը, որից կերտուել է գահոյքը, արհամարհելով մի կողմ են

32 Վկայակոչութիւնը Սեբերիանոս Գաբալացուց է (Աւգերեան, էջ 30, ծանօթ. 1):

33 Գիրք Գարապմանց ս. Կիւրղի Աղեքսանդրու հայրապետին, կ. Գոլիս, 1717 թ., էջ 490:

34 Վկայակոչութեան աղբիւրն առայժմ մնում է անյայտ:

դնում իբրեւ անարգ մի բան՝ չհասկանալով, որ առարկան այն ժամանակ է պատուում, երբ [պատիւ է] ընծայում նրա բնութեանը: Քանզի եթէ չընծայուի նրան, որից վերցուեց, չի երեւայ այն փառքի առաւելութիւնը, որին հասաւ: Եւ դարձեալ՝ եթէ նոյն էութեամբ չհասնի փառքի մեծութեան, չի կոչուի «փառաւորեալ», այլ «փոփոխեալ», քանզի փառքն ու փառաւորելը մէկը միւսի նկատմամբ տարբերութիւնն են յայտնում եւ ո՛չ նոյնութիւնը:

ԻԳ. Արդ, կամ եկ խոստովանի՛ր, որ վերոյիշեալ չարափառներից մէկի պէս ես, եւ կ՚իմանանք, որ յոյժ մարդատեաց ես՝ ուրանալով Աստուծոյ մարդասիրութիւնը, քանզի Նա, Իր վրայ առնելով մեր բնութիւնը, մեծարեց [այն], իսկ դու չխոստովանելովդ անարգում ես: Ուրեմն էլ ինչո՞ւ քեզ հետ վիճենք՝ իբրեւ հարազատի. դու, որ ախորժում ես հեթանոսաբար մեկուսանալ մեզանից, քանի որ պատուիրան ստացանք՝ չգնալ հեթանոսների ճանապարհով եւ սամարացիների քաղաքները չմտնել [Մատթ. Ժ 5]: Իսկ եթէ այն խիստ չարաչար արմատներից բուսած աւելի չար մի ճիւղ չես, կը խոստովանես մեզ հետ, մանաւանդ՝ Ընդհանրական Կաթողիկէ Եկեղեցու հետ, մէկ եւ նոյն Քրիստոսին ե՛ւ Աստուած, ե՛ւ մարդ, որպէսզի ճանաչուի մարմնացեալ Բանն Աստուծոյ անբաժանելի եւ անշփոթ միութիւնը: Ինչո՞ւ ես նմանւում զառիվայր թափուող ջրի, որ անկարող է ետ դառնալու, կամ ամպերից պոկուած կարկուտի, որ աւելի մօտ է հալչելու, քան թէ դարձեալ միանալու ամպերին: Առանց նենգութեան ընդունի՛ր գրուածները եւ ճշմարի՛տ համարիր Փրկչի կատարած գործերը: Սուտ համարիր քո սին եւ սխալական խորհուրդները եւ ո՛չ թէ աստուածային անսուտ Գիրքը: Եթէ Գրքով պիտի գայթակղուես, գործի՛ն հաւատա, քանզի խօսքի ապացոյցները գործերն են, ինչպէս վկայում է Տէրը. «Գոնէ գործերի համար,- ասում է,- հաւատացէք» [Յովհ. Ժ 38]:

ԻԴ. Միմեանցից խիստ տարբեր բաներն իրար հետ մի՛ համեմատիր, քանի որ այնտեղ ներգործութիւնն առանց մարմնի է եւ միայն ձեւով, իսկ այստեղ՝ մարմնով եւ ճշմարտութեամբ: Կերակրուեց Աբրահամի մօտ [Մնդ. ԺԸ 8], ճաշակեց նաեւ աշակերտների հետ [Գործ. Ժ 41]. այնտեղ՝ անմարմին, այստեղ՝ մարմնաւորուած, որից պարզ է, որ այն մէկը գործի նմանութիւնն էր, իսկ այս մէկը գործն է ճշմարտութեամբ: Եթէ գործը գործի կողքին դնելով հաւասարեցնես, հաւասարուած կը լինեն նաեւ յայտնութիւնները՝ նախորդն ու այս վերջինը: Նոյնին կը հետեւեն ծնունդը, հասակով աճելը, մահը, թաղումը, յա-

բութիւնը, համբարձումը, որոնց միջով Ինքը, որպէս գլուխ, անցնելով, Իր մարմնի՝ Եկեղեցու համար պատշաճ բոլոր անդամներին հրաւիրելով կանչում է Իր ետեւից. իսկ մեր յոյսի բոլոր ակնկալութիւններն, ըստ քեզ, ստուեր են ու ցնո՞րք: Սրանից Մանին ու Մարկիոնն իսկ կը կենդանանան այդքան տարիներ անց՝ քեզ իրենց զաւակը դարձած տեսնելով: Մարգարէն ասում է. «Կորստեան ես մատնում սուտ խօսողներին» [Սաղմ. Ե 7]. եթէ խօսքը կորստեան է մատնում, առաւել գործն է պատճառ դառնում կորստեան: «Զէ՞ որ մեր հայր Աբրահամը գործերով արդարացաւ»,- ասում է Մեծն Յակոբոսը [Յակ. Բ 21]: Ինչո՞ւ ես փորձում սուտն ապացուցել եւ ո՛չ թէ հաւատքը՝ խօսքերով եւ գործերով՝ կամենալով լինել սատանայ հօր անդրանիկ որդին [Յովհ. Ը 44]:

ԻԵ. Ինչո՞ւ ես ջանում անունը փոխել եւ այլ անուն դնել, որից հեռու է ասուածը, կամ էլ խօսքերն անպատշաճ կերպով այլափոխել: Յանձնի՛ր քեզ խօսքի բուն խորհուրդին եւ ո՛չ թէ խօսքի խորհուրդը հարկադրաբար շեղիր քո կողմը: Հաստատի՛ր այն խօսքերը, որոնք Բանն Աստուած հաստատեց եւ ընտրեց, եւ մի՛ արդարացրու շատերից յանդիմանուած եւ դատապարտուած խօսքերդ: Ճանաչի՛ր՝ այդ [խօսքերից] ո՛րն է ասուած «ըստ բնութեան», եւ ո՛րը պէտք է հասկանալ «ըստ միաւորութեան»: Այսպէս աւելի յստակօրէն կը կարողանաս հասկանալ գրուած իւրաքանչիւր խօսքի իմաստը:

ԻԶ. Քանզի աւետարանական եւ առաքելական խօսքերից շատերը ծածուկ եւ դժուարիմաց են, որոնց եթէ խաւարամիտ մէկը փորձի նայել իր հոգու աչքերով, նոյն այդ ճշմարիտ խօսքերը նրա համար մոլորութեան պատճառ կը դառնան: Ինչպէս այն յիմարամիտ Ապողինարը, առաքեալից լսելով «Որովհետեւ մանուկները հաղորդակից եղան արեան եւ մարմնի, Ինքն էլ մերձաւորութեամբ մասնակից եղաւ նրանց» [խօսքը] [Եբր. Բ 14], սրանից, ուրեմն, [հետեւութիւն անելով], մարմնից կտրեց-հանեց մարդկային բանական հոգին՝ ասելով. «Աստուածային էր՝ հոգեւորութեամբ հոգիացած»[35]: Ուրիշ մէկն էլ, սխալ հասկանալով, մոլորուեց Փրկչի ասած մէկ այլ խօսքով. «Ոչ ոք երկինք չբարձրացաւ, բացի Նրանից, Ով իջաւ երկնքից՝ Մարդու Որդին, որ երկնքում

35 «Բարսղի եպիսկոպոսի ուղղափառի եւ Ապողինարի հերձուածողի վիճաբանութիւն», կՀ, էջ 84

է» [Յովհ. Գ 13]. առաջին Եւտիքէսի [մասին է խօսքը], որ Քրիստոսի մարմինը համարեց երկնքից բերուած, աստուածային բնութիւնից հնարուած եւ Կոյսի միջով, ինչպէս խողովակով, անցկացուած: Զհասկացաւ, որ երկրաւորը երկնաւորի հետ միաւորուելու պատճառով էր այս [խօսքն] այսպէս ասում[36]: Ուրեմն, աստուածային գրուածքների մէջ խօսք կայ, որ ասուած է եւ հասկացւում է ըստ բնութեան, եւ կայ՝ ըստ տնօրինական միաւորութեան: Երբ Փրկիչն ասաց Փիլիպպոսին. «Ով Ինձ տեսաւ, Իմ Հօրը տեսաւ» [Յովհ. ԺԴ 9], եթէ այս «տեսնելը» չհասկանաս որպէս Հօր բնութեան տեսութիւն, որ ունի Որդին, ապա ոչ թէ միայն որդեհայրութիւն ներմուծած կը լինես, այլեւ մարմին էլ կը շնորհես Հօրը, ինչպէս եւ Որդին ունի: Նոյնպէս եւ, երբ ասաց, թէ՝ «Ես եւ Հայրս մէկ ենք» [Յովհ. Ժ 30], «մէկ» լինելն ըստ դէմքի եւ անձի չասաց, այլ ըստ բնութեան:

ԻԷ. Որին դու, կուրացած մտքով նայելով, չկարողացար զանազանել, այլ, յանդիմանելով նախնիների աստուածխօսութիւնը, գրեցիր եւ ասացիր. «Ի՞նչ կարիք կայ թուելու յոյն իմաստուններին, որոնք ասում են՝ Երրորդութիւնը դէմքերով եւ անձերով բաժանուած է, իսկ աստուածութեամբ՝ միաւորուած»: Այստեղից յայտնի դարձրիր, որ դու այդ երկուսից ոչ մէկն էլ չես ընդունում. եւ այդպէս, ըստ դէմքերի չբաժանելով, դառնում ես սաբելացի[37], իսկ ըստ բնութեան չմիաւորելով՝ արիոսական[38]: Եթէ ըստ դէմքերի չի բաժանուում, անձերն ինչպէ՞ս են կարողանում անփոփոխ մնալ, ինչի մասին Մեծն Գրիգոր Նազիանզացին ասում է. «Երեք անձերը պէտք չէ մէկի մէջ ժողովել կամ միմեանցից լուծարել կամ խառնակել»[39]: Եւ դարձեալ՝ «Եթէ Աստուածութեամբ չես միաւորում, ապա ուրեմն օտար բնութիւն ես ներմուծում եւ զուգահաւասար անձերը անհաւասար համարում»[40]: Արդ, այսպէս խաւարի միջով փորձում ես հասնել ճշմարտագոյն լոյսին եւ քո մտքի

36 Միտքը ս. Գրիգոր Աստուածաբանի՝ Կղեդոնին ուղղուած Ա թղթից է (Աւգերեան, էջ 36, ծանօթ. 4):

37 Այսինքն՝ Սաբելիոսի հերետիկոսութեան հետեւորդ:

38 Այսինքն՝ Արիոսի հերետիկոսութեան հետեւորդ:

39 Ս. Գրիգոր Աստուածաբան, «Յորժամ տեսանեմ այժմ», կՀ էջ 38: Ըստ Աւգերեանի՝ Ճառն ԻԹ՝ ըստ յունական եւ լատինական դասակարգութեան (Աւգերեան, էջ 38, ծանօթ. 1)

40 Ս. Գրիգոր Աստուածաբան, Ճառն ԻԹ՝ ըստ յունական եւ լատինական դասակարգութեան (Աւգերեան, էջ 38, ծանօթ. 1)

կուրութիւնը վերագրում ես սուրբ հայրերին՝ կոչելով նրանց «յոյն իմաստուններ». եւ սա ի յանդիմանութիւն քեզ ասացիր, քանզի եթէ դու գիտութիւնից լինէիր, այլ գիտուններին չէիր անուանարկի: Իսկ քանի որ ընդունեցիր նրանց իմաստուն լինելը, նրանց իմաստնաբար ասածներն ինչպէ՞ս չես ընդունում: Բայց, քե՛զ եմ հարցնում, եթէ ճշմարիտը կ՛ասես. ովքե՞ր են արդեօք այդ «յոյն իմաստունները», քանզի եթէ անգամ դու կամենաս ստել, նրանց մասին քո ամբաստանութիւնը մեզ յանուանէ ցոյց է տալիս այդ խօսքերի հեղինակներին[41]: Ասացիր՝ դէմքով եւ անձով բաժանում են, իսկ Աստուածութեամբ միաւորում: Սա սուրբ հայրերն են ասել. «Ո՛չ [անձերից] իւրաքանչիւրի առանձնայատկութիւններն են վերանում, ո՛չ էլ [մէկ] անձի առանձնայատկութիւնները երեւում են միւսի մէջ»[42]: Նաեւ՝ «Բաժանւում է անբաժանաբար եւ միաւորւում զատուելով՝ ո՛չ միաւորութիւնը խառնակութեան վերածելով, ո՛չ էլ բաժանութիւնը՝ օտարութեան»[43]: Նաեւ՝ «Պէտք է պահել մէկ Աստուածութիւնը եւ խոստովանել երեք դէմքերը կամ երեք անձերը՝ իւրաքանչիւրն իր առանձնայատկութեամբ»[44]: Նաեւ՝ «Անունները անգոյ չեն եւ մէկ դէմքի տարանուանումներ չեն, այլապէս մեր [հաւատքի] աւանդն անուամբ է եւ ո՛չ իրապէս»[45]:

ԻԸ. Սա է երանելի հայրերի աստուածաբանական դաւանութիւնը, որոնց խօսքերի համար դու նրանց հերձուածողներ ես անուանում եւ չես երկնչում ու զարհուրում օձի պէս թունալից լեզուդ ուղղել ընդդէմ նրանց, ովքեր եղան Բանն Աստուծոյ գործակիցներն ու սպասաւորները՝ անսասան հաւատքով հաստատելով Նրա Եկեղեցին: Եւ մի՞թէ զարմանալի է, որ չես պատկառում աստուածանման մարդկանցից, դո՛ւ, որ նոյն ինքն Վեհագոյն Բնութեան դէմ անգամ յանդգնեցիր ուղղել քո հայհոյական խօսքը՝ չխոստովանելով մէկ անեղ բնութեան մէջ երեք դէմք եւ երեք անձ՝ Հօրը, Որդուն եւ Սուրբ Հոգուն: Այսպէս [Աստուածային Անձերի] միմեանց նկատմամբ պատճառականութեան եւ անունների ժխտմամբ, ժխտւում է նաեւ անձերից իւրաքանչիւրի գոյութիւնը, ինչից հետեւում է, որ Աստուած չկայ, եւ դառնում ես

41 Խօսքը, ամենայն հաւանականութեամբ, կապադովկեան հայրերի՝ ս. Բարսեղ Կեսարացու, ս. Գրիգոր Աստուածաբանի եւ ս. Գրիգոր Նիւսացու մասին է:

42 Վկայակոչութեան աղբիւրն առայժմ մնում է անյայտ:

43 Ս. Գրիգոր Աստուածաբան, «Դարձեալ իմ Յիսուս», ԿՀ, էջ 33

44 Ս. Գրիգոր Աստուածաբան, «Յորժամ տեսանեմ այժմ», ԿՀ, էջ 38

45 Ս. Գրիգոր Աստուածաբան, «Արձակէ ինձ լեզու», ԿՀ, էջ 37

անաստուած, դո՛ւ, որ այդպէս յանդուգն ես աստուածտեսութեան մէջ, որ ճառում ես իմաստասէրի պէս եւ ասում, թէ՝ «Նոյն անձը Հօրից անձնաւորուեց սուրբ Կոյսի մէջ»:

ԻԹ. Երբ «աստուածաբանելով» համարում էիր Նրան «Հօր հետ», չչնորհեցիր Նրան դէմքի կատարելութիւնը, իսկ այժմ վախենալով, որ միգուցէ ստիպուած լինես խոստովանել Նրա՝ Կոյսից, այսինքն՝ մարդկային բնութիւնից, լինելը եւ ընդունել Նրա կատարեալ մարդկային գոյութիւնը, Նրան անուանում ես «անձ Հօրից»: Իսկ եթէ ասում ես «անձ», ինչո՞ւ ես հրաժարւում «դէմք» կոչել Նրան. թէ՞ քո արհեստանոցում ուսանեցիր, որ «անձն» այլ է, «դէմքն՝» այլ: Որոնք թէեւ երբեմն զանազանւում են տարբեր տեսակների մէջ, սակայն երբ գործածւում են միեւնոյն իրողութեան նկատմամբ, երկուսն էլ նոյն իմաստն են ունենում: Քանզի որեւէ [անձնաւոր] մէկի մասին ասւում է, որ թէ՛ «անձ», թէ՛ «դէմք» ունի, եւ սա ընդհանրապէս վերաբերում է մարմնաւոր եւ անմարմին տեսակներին, քանզի իւրաքանչիւրը, որ առանձնաւորուած է տեսակի մէջ, կոչւում է «դէմք», ինչպէս մարդկանցից Պօղոսը, մասնաւորուելով, կոչւում է «դէմք», իսկ անմարմիններից Գաբրիէլը, առանձնացուելով, կոչւում է «դէմք»: Այսպէս եւ՝ Անեղ էութիւնից՝ Հայրը կամ Որդին կամ Հոգին, առանձին յիշուելով, կոչւում են «դէմք»: Եւ Նրանց մէջ դէմքն առանձնացուելով այսպէս է ճանաչւում. Հայրը՝ Ծնող, Որդին՝ Ծնունդ, իսկ Հոգին՝ Ելում: Եւ նոյն սա է անձը, քանզի ինչով սահմանւում է դէմքը, նոյնը կը լինի նաեւ նրա անձը:

Լ. Ուրեմն դու ինչպէ՞ս մոլորուեցիր՝ կա՛մ ասելով՝ Եռանձնեայ զօրութիւնը նոյնիսկ դէմք ու անձ չունի, կա՛մ էլ մարտնչելով Լիբէացու[46] պէս եւ չարաչար ասելով մէկ դէմք եւ անձ[47] երեք դէմքերի ու անձերի փոխարէն: Եւ խիստ զարմացած եմ՝ քո մէջ տեսնելով այս տարօրինակ կերպարը, քանզի ուրիշները սատանայական ձախակողմեան ուսմունքներից քաղեցին մէկական պտուղ, իսկ դու, յոյժ ագահելով, փափագեցիր առանց բացառութեան ունենալ դրանք բոլորը, այնպէս որ քո հանդէպ իրաւացի է մարգարէի ասածը. «Աչքերդ բարձրացրո՛ւ, ուղիղ դէպի առաջ նայի՛ր եւ տե՛ս, որտե՞ղ չթաւալուեցիր

46 Սաբելիոս Լիբէացու մասին է:

47 Ըստ Սաբելիոսի հերետիկոսութեան՝ Աստուածային միեւնոյն անձը երբեմն հանդէս է գալիս որպէս Հայր, երբեմն՝ որպէս Որդի, երբեմն՝ որպէս Հոգի:

քո ճանապարհին» [Երեմ. Գ 2] եւ այլն: Ամէն ինչի մէջ անամօթութիւն անո՛ղդ՝ ե՛ւ դաւանանքում, ե՛ւ [եկեղեցական] կարգերում, ե՛ւ աստուածպաշտութեան մէջ, մերկացար այս ամէնից եւ փոխարէնը լցրեցիր հայհոյութեան չափը: Հնարաւոր է հաշուել գետի մանրաքարերը, ծովի աւազն ու անձրեւի կաթիլները [Սիր. Ա 2], սակայն ո՛չ՝ քո հնարած նորագիւտ խօսքերն ու գործերը: Խորհեցիր դէմ ելնել աստուածային Գրքին. ասուած է. «Երկիրը պիտի լցուի Տիրոջ գիտութեամբ, ինչպէս ջրերի բազմութիւնը լցնում է ծովը» [Ես. ԺԱ 9]: Իսկ դու ծովացրեցիր քո խաբէական խօսքերը եւ նորամուծութիւնները ամէն օր, ժամ ու ամիս: Ո՞ւր տանենք քեզանից մեզ վրայ հասած աղէտները, ո՞ւմ պատմենք չարիքները կամ ո՞ւմ գուժենք կաթից զրկուածիդ եւ ստինքից զատուածիդ մասին [Ես. ԻԸ 9], որ բերանդ դրեցիր երկնքում եւ լեզուովդ պատում ես երկիրը [Սաղմ. ՀԲ 9], որ ձգտում ես մեզանից մերժել մեր Աստուծոյ օրէնքը [Ես. Լ 11] եւ փոխարէնը հրամցնել մեզ մոլորեցուցիչ այլ [վարդապետութիւն] [Ես. Լ 10], որ քրտնակոխ ձիու նման չես կասեցնում քո ընթացքը [Երեմ. Ը 6] «եւ չես ասում, թէ՝ հիմա դադարեցնեմ. որովհետեւ հարկադրաբար էիր անում այդ» [Ես. ԾԷ 10]: Որ յոյժ պնդում ես «մէկ բնութիւնը», սակայն ասածիդ իմաստը յանգում է վաղենտիանոսականների եւ մանիքէականների զառանցանքներին, իսկ երբ ասում է «երկու բնութիւններից», ոչ միայն լսել չես կարողանում, այլեւ աւելի վատթար մի օրինակ ես բերում. ինչպիսին քո աստուածխօսութիւնն է, այնպիսին եւ քո օրինակն է: Եւ վախենալով, թէ միգուցէ ստիպուած լինես ասելու, որ Փրկչի մարմինը մեր՝ մարդկային բնութիւնից է, առհասարակ բոլոր էակներից մերժեցիր բնութեան անունը՝ ասելով. «Բնութիւն է կոչւում միայն աստուածայինը, որը եւ նրանից ստեղծուած բոլոր արարածների բնութիւնն է»: Որպէսզի. ըստ քեզ, գոնէ երկուսից մէկը յարմարուի. կա՛մ Արարչին դասել արարածների հետ, որն անաստուածութիւն է, կա՛մ աստուածութիւն վերագրել արարածներին, որը բազմաստուածութիւն է, եւ երկուսն էլ անաստուածութիւն են: Այս է քո պանծալի «աստուածաբանութիւնը», բայց մանաւանդ՝ յիմարութեանդ ապացոյցը, որ նիւթը կոչում ես յաւերժակից արարչական զօրութեանը եւ ո՛չ թէ Աստծուց ստեղծուած խոստովանում:

ԼԱ. Սակայն լինելով լկտի եւ չար՝ ամբարշտութեանդ յագուրդ տալ չգիտես, ինչպէս ասում է մարգարէն [Ես. ԾԶ 11]: Երբ տեսնում ես Քրիստոսի մարդկային կրքերի մասին որեւէ խօսք, առանց երկիւղի

յանդգնում ես այդ վկայող խօսքերը ջնջել գրուածքից՝ ասելով. «Որոմնացան մշակներն են սերմանել այդ» [Մատթ. ԺԳ 24-30, 38-43]: Ասածդ ոչ միայն անընդունելի է, այլեւ անստոյգ: Եթէ չար մշակները կարողանային բարի սերմի վրայ որոմ ցանել, ապա բոլոր եկեղեցականներն առհասարակ, որոնք Քրիստոսի հօտի վերակացուներն են, կը վերանային, եւ Քրիստոսի կողմից մէկ գաւթում հաւաքուած հօտն անտերունչ կը թափառէր. չէր լինի մէկը, որ տեսնէր, ոչ էլ մէկը, որ լսէր: Բայց արդ, եթէ կային ոմանք, առաւել եւս՝ շատերը՝ կենդանի մնացած, ինչպէ՞ս կարող էին նրանք, որ հալածում էին մոլորութիւն սովորեցնողներին, իրենց ուղիղ վարդապետութիւնը նրանց ձեռքը յանձնել թիւրելու համար: Կամ՝ մեզանից նրանք, որոնց Սուրբ Հոգին արթնացրեց՝ դառնալու լուսաւորիչներ նախորդ [Լուսաւորչից] յետոյ, նկատի ունեմ երկու սուրբերին՝ Սահակին ու Մաշտոցին, եւ նրանց բոլոր ընտրեալ աշակերտներին ու օգնականներին՝ Եզնիկին եւ միւսներին, կամ՝ ով նրանց պէս էր եւ գրեթէ նրանց ժամանակակիցը՝ մեծ իմաստասէր եւ տիեզերահռչակ տէր Մովսէսը, որոնք միաժամանակ հմուտ թարգմանիչներ էին եւ ուղղափառներ. մի՞թէ անգամ նրանք չկարողացան ճանաչել օտարոտի խառնուրդը եւ անխարդախ կաթի փոխարէն պղտոր մոլորութիւննե՞ր ջամբեցին իրենց ազգակիցներին, [կամ մի՞թէ] վարձկաններ էին եւ ոչ հովիւներ, եւ չհոգացի՞ն գառների համար: «[Մի՞թէ] ձեզանից հնչեց Աստուծոյ խօսքը, կամ Աւետարանը միայն ձե՞զ հասաւ» [Ա Կոր. ԺԴ 36]: Ուրեմն դո՞ւք էք բարի հովիւը [Յովհ. Ժ 11], որը Քրիստոս ասաց Իր մասին, եւ ամէնքը, որ ձեզանից առաջ էին, գող էին ու աւազա՞կ [Յովհ. Ժ 8]: Ասում էք. «Աստուածսիրութեամբ եւ ուսումնատենչութեամբ համակուած՝ ինչ գրքեր որ կարողացան գտնել, թարգմանեցին եւ բերեցին»: Ի՞նչ էք ասում. աստուածասէր լինելով՝ աստուածատեցութե՞ան գործեր էին յանդգնում գործել, կամ ուսումնատենչութեամբ ջանալով՝ դէպի յիմարութի՞ւն էին գնում՝ դառը համարելով քաղցր եւ խաւարը՝ լո՞յս, փոխելով չարը բարու հետ եւ իրենց վրայ հրաւիրելով մարգարէական վայասացութի՞ւնը [Ես. Ե 20]: Այսպէս սնոտիները սնոտիներով էք պատում, ինչպէս ասում էր Յոբը [Յոբ ԻԷ 12] եւ ձեր յոյսը ստութեան վրայ դնելով՝ ստութեամբ էլ պիտի ծածկուէք, ինչպէս ասում էր Եսային [Ես. ԻԸ 15]: Լսում ես Յիսուսի քաղցելու մասին Աւետարաններում գրուածը [Մատթ. Դ 2] եւ այնուհետեւ լողում ես շաղակրատանքի հոսանքների մէջ՝ ասելով. «Նրա քաղցը հասկանում եմ, ինչպէս

Աստծուն է վայել քաղցելը. այլ ոչ թէ նմանեցնում եմ մարդկային օրինակին. քանզի մարդու քաղցելն ապականութիւն է գործում. եւ նոյն ինքը քաղցը ոչ այլ ինչ է. եթէ ոչ ապականութիւն»:

ԼԲ. Իսկ ես ամենեւին չեմ հասկանում նախայաւիտենական՝ աստուածային [բնութիւնը] կարիքի հարկադրութեան ներքոյ. քանի որ եթէ այդպէս լինէր. ստիպուած կը լինէինք մարմին կոչել նաեւ պարզ եւ անմարմին զօրութիւնը: Եւ ըստ ձեզ՝ սուտ է «մարդ եղաւ կնոջից» խօսքը. այլ իր մարմինը երկնքից բերելով՝ ցոյց տուեց մեզ: Սրանով գնում հանդիպում ես նրան. ում միշտ փնտռում ես՝ առաստպելաբան Եւտիքէսին. ինչպէս մի մոլորուած մանուկ. որ շարունակ կանչում է մօրը:

ԼԳ. Դարձեալ. մեզ յատուկ հոգեկան եւ մարմնական [կրքերը] մարդկային բնութեան ապականիչ կամ ապականութիւն չեն. քանզի ապականութիւնը ներհակ է լինելութեանը. իսկ ներհակները չեն կարող միասին եւ միաժամանակ գոյութիւն ունենալ: Իսկ քաղցը. ծարաւը. յոգնութիւնը. տրտմութիւնը. յոգոց հանելը. երկիւղը. ցասումը. ինչպէս նաեւ անգիտութիւնը եւ այլ այսպիսի բաներ բանական հոգու լինելութեան հետ միասին են տրուած մարդուն. ուրեմն սրանք ապականութիւն չեն. քանզի եթէ ապականութիւն լինէին. չէին կարող լինել գոյութեան հետ միասին. այլ [մարդկային] բնութեան բաղկացուցիչ մասն են: Արարիչն ասաց մեր նախահօրը. «Դրախտի բոլոր ծառերից կ՚ուտես» [Մնդ. Բ 16]: Չէ՞ որ սրանով կերակրելի բնութեանը առաջադրում էր համապատասխան պէտքը. այլապէս աւելորդ եմ համարում Ստեղծագործողի տնկած այն պտղալից դրախտը. ուր բնակեցնելով մարդուն՝ հրամայեց նրան վայելել այնտեղից:

ԼԴ. Եւ դարձեալ՝ «Դրախտի մէջտեղի ծառից չուտես. որպէսզի չմեռնես» [Մնդ. Գ 3]: Եթէ երկիւղի զգացումը բնաւորուած չէր մարդու բանական հոգում, ինչպէ՞ս էր [Աստուած] զգուշացնում, եւ կամ՝ [մարդը] զգուշացուում եւ չզգուշանալուց յետոյ մեղադրուում: Իսկ դրանից առաջ գրուած է Նրա տնկած այդ փափկութեան դրախտը մշակելու եւ պահելու մասին [Մնդ. Բ 15]: Առաջինը վերաբերում է աշխատանքին, իսկ երկրորդը՝ հոգածութեանը: Իսկ քնելու ունակութեան մասին բացայայտ կերպով իմանում ենք հետեւեալ խօսքից. «Աստուած թմրութիւն բերեց Ադամի վրայ, եւ նա ննջեց» [Մնդ. Բ 21]: Ոչ թէ քնի իրողութիւնը արտաքուստ բերեց նրա վրայ, այլ [քնի] բնաւորական կիրքը գործեց ըստ հարկի: Իսկ ցանկութիւնը գիտեմ նրանից, որ

[կինը] ցանկացաւ արգելուած պտուղը: Իսկ այն խօսքը, թէ՝ «Ադամի համար [իրեն նման] օգնական չգտնուեց» [Մնդ. Բ 20], ցոյց է տալիս նախաստեղծի տրտմութիւնը, որը, կենդանիների միւս տեսակներին տեսնելով իրենց զուգակիցների հետ վայելչացած, այդ պատճառով տրտմում էր միայն իր՝ անընտանիք մենութեան եւ զրկանքի համար: Իսկ կանխագիտութիւնը նրա մէջ ոչ թէ ըստ բնութեան էր, այլ Աստուծոյ Հոգու ներգործութիւնից, որ երբեմն շարժման մէջ է դնում, երբեմն էլ, Ինքն Իր մէջ ամփոփուելով, թողնում մտաւոր եւ բանական հոգին. քանզի արարածներից ոչ ոք չարժանացաւ դրան. դա բնորոշ է միայն Արարչին, ինչպէս եւ Ինքն է ասում Եսայի [մարգարէի] միջոցով. «Ինձանից բացի չկայ մէկը, որ գիտենայ վերջին իրողութիւնները. մինչեւ դրանք չկատարուեն եւ չամբողջանան» [Ես. ԽԶ 9-10]:

ԼԵ. Արդ, պարզ է որ սրանք նախքան մեղանչելն էլ գոյութիւն ունէին ըստ բնութեան եւ ոչ թէ հետագայում են ներմուծուել մեր բնութեան մէջ մեղքի հետեւանքով, ինչպէս դու ես կարծում: Բայց քանի որ միեւնոյն ինքնիշխան կամքն ազատ ցանկութեամբ յօժարամէտ է դէպի երկու կողմն էլ, սրանց կարգաւորութիւնը երկակի է իմացւում. մէկինը կոչւում է հոգու, միւսինը՝ մեղքի. «Կեանքի հոգու օրէնքն ինձ ազատեց մեղքի եւ մահուան օրէնքից» [Հռոմ. Ը 2],- ասում է Պօղոս [առաքեալը]. եւ թէ՝ «Այլ օրէնք եմ տեսնում մտքի օրէնքի դէմ մարտնչող եւ ինձ գերող՝ մեղքի օրէնքով, որ իմ անդամների մէջ է» [Հռոմ. Է 23]:

ԼԶ. Արդ, քաղցը, տրտմութիւնը եւ այլ այսպիսի [կրքեր] ոչ թէ յետոյ են մուտք գործել մահուան ու ապականութեան հետ կամ իրենք ապականութիւն են, այլ կառավարւում են առաջնորդական [մտքի] կողմից, ինչպէս երկրագործն է [վարւում] սերմերի հետ. եթէ դրանք սերմանում է մարմնի մէջ, մարմնից պիտի ապականութիւն հնձի, իսկ եթէ սերմանում է հոգու մէջ, հոգուց պիտի յաւիտենական կեանք հնձի [Գաղ. Զ 8]: Տրտմութիւնն ինքնին մահ չէ, այլ աշխարհի տրտմութիւնն է, որ մահ է գործում, իսկ ըստ Աստուծոյ տրտմութիւնը հաստատապէս հասցնում է փրկութեան [Բ Կոր. Է 10]: Եւ ոչ միայն այս, այլեւ միմեանց փոխարինող ներհակները նոյն կերպով շրջաբերւում են երբեմն դէպի կեանք, երբեմն՝ դէպի մահ, քանզի տրտմութիւնը փոխարինւում է ուրախութեամբ, իսկ չարութեան հետ խառնուած ուրախութիւնը՝ սուգով եւ տրտմութեամբ, որը հալածելու սպառնալիք էր տալիս Յակոբոս Մեծը՝ ասելով. «Ձեր ծիծաղը սուգի թող վե-

բածուի, եւ ձեր ուրախութիւնը՝ տրտմութեան» [Յակ. Դ 9]: Բայց նոյն այն ուրախութեամբ, որ առ Աստուած է, Պօղոս [առաքեալը] պատուիրում է ուրախանալ ամէն ժամ [Փլպ. Դ 4]՝ սիրով ընդարձակուած հոգով: Նոյնպէս եւ որկրամոլութեամբ ուտելը յանդիմանւում է, բայց այն սեղանը, որ Աստծուն փառաւորելու համար է, բարեբանւում է հէնց նոյն առաքեալի խօսքով. «Թէ՛ ուտէք, թէ՛ ըմպէք, բոլորն արէք ի փառս Աստուծոյ» [Ա Կոր. Ժ 31]:

ԼԷ. Արդ, վերն ասուածից պարզ է, որ նոյնը կարելի է ասել նաեւ նախաստեղծի մասին. քանի դեռ նա ընթանում էր պատուիրանապահութեամբ, վերոյիշեալ բնաւորական [կրքերով] ընդդիմամարտելով՝ իրենից հեռու էր վանում մահն ու ապականութիւնը, եւ այդպէս՝ առաւել յարատեւ գոյութեամբ ընթանալով՝ հաղորդակցւում անճառելի կեանքին: Իսկ երբ պատուիրանազանցութեան պատճառով վայր սայթաքելով ընկաւ, որից եւ բողբոջեց մեղքը, այնժամ մտաւ մահուան ու ապականութեան լծի տակ: Եւ Ստեղծիչը այսպէս չէր [գոյացրել] Իր կողմից ստեղծուածին, այլ ստեղծուածի ինքնակամութիւնը եւ բանսարկուի պատրանքները յաւելեցին մահն ու ապականութիւնը մեր բնութեան մէջ: Բայց այն ժամանակ դժուարահակ էինք դէպի մեղքը եւ աւելի դիւրահակ՝ դէպի բարին, իսկ այժմ, այս ապականացու կեանքի մէջ ընկած լինելով, հակառակ փոփոխութեամբ ենք տառապում՝ դիւրահակ ենք դէպի մեղքը եւ դժուարահակ՝ դէպի առաքինութիւնը:

ԼԸ. Եւ սա այսպէս է, ինչպէս ըստ կարգի [ցոյց է տալիս] խօսքս՝ քո ասածի պատճառով. քանզի բնաւորական [ունակութիւնները] մեկնաբանեցիր որպէս ապականութիւն, ոչ միայն մարմնի հետ լծորդուածները՝ յոգնութիւնը, քաղցն ու քունը, այլեւ հոգու երեք մասերը՝ խոհականը, ցանկականը եւ ցասմնականը, որոնք ոչ այլ ինչ են, եթէ ոչ մարդու կազմութեան բնաւորական [ունակութիւններ] եւ յատկութիւններ, որոնք պատուիրանապահութեամբ զինուած մարտնչում են մահուան ու ապականութեան դէմ, իսկ պատուիրանազանցութեամբ զինաթափուելով՝ յանձնւում թշնամիներին:

ԼԹ. Արդ, քանի որ տեսանք, որ մեր հոգու եւ մարմնի կրքերը ո՛չ մեղք են, ո՛չ էլ ապականութիւն, այլ մեր մարդկային բնութեանը պատշաճող որոշակի որակներ ու յատկութիւններ, [ուրեմն] մի՞թէ զարմանալի է, որ Փրկիչը նոյնպէս, երբ ապրում էր մարդկանց մէջ, գործադրեց դրանք, որտեղ, երբ եւ որքան կամեցաւ՝ ոչ ինչ-որ օտար կամ ստուերակերպ եղանակով, այլ ճշմարտութեամբ եւ մեր իսկ բնաւորական [կրքերը] գործադրելով ու թոյլ տալով, որ մարմինը կրի իրենը: Սուրբ Գրիգոր Նիւսացին այսպէս է ասում. «Քառասուն օր ոչինչ չճաշակելուց յետոյ քաղց զգաց եւ երբ կամեցաւ, որ բնութիւնը իրենը կատարի, թոյլ տուեց»[48]:

Խ. Ապա ուրեմն, ըստ մեզանից վերցրած Իր մարմնի օրէնքի՛ կրեց մեր կրքերը եւ ոչ թէ ըստ Աստուածութեան, ինչպէս դու ես կարծում: Քանզի եթէ հնարաւոր լինէր, որ Քրիստոս ըստ Աստուածութեան կրէր մարդկային կրքերը, ապա թերեւս մարմին չէր առնի Կոյսից, [այսինքն]՝ մեր բնութիւնից, այլ կը շարունակէր նախահայրերին յայտնուելու նոյն երեւութական կերպը, ինչպէս կերաւ Աբրահամի մօտ [Մնդ. ԺԸ 8], մարտնչեց Յակոբի հետ [Մնդ. ԼԲ 24], անգիտաբար հարցրեց Ադամին ու Կայէնին [Մնդ. Դ 9]: Իսկ եթէ դրանք ճշմարտութեան նմանութիւն ու օրինակ էին, եւ Սա նոյն ինքը ճշմարտութիւնն է եւ ոչ թէ օրինակը, ապա ուրեմն պարզ է, որ ճշմարտութիւն էին ե՛ւ երեւումը, ե՛ւ երեւածը, ե՛ւ կրելը, ե՛ւ կիրքը: Թէեւ աստուածային զօրութիւնը կարող է նաեւ նմանութեան մէջ պահել ճշմարտութիւնը, ինչպէս ասաց սուրբերից մէկը՝ մեր Գրիգորիոսը, սակայն նախկին երեւումներն ու կրքերը վերջինների հետ համեմատելով՝ դրանք պէտք է կոչել նմանութիւն եւ օրինակ եւ ո՛չ թէ ճշմարտութիւն: Իսկ ճշմարտութիւն կոչում եմ իրողութիւնը եւ ո՛չ թէ միայն անունը: Արդ, ինչպէս որ իրողութիւն էր կնոջից ծնուելը, այդպէս էլ իրողութիւն էին նաեւ Նրա ներգործութիւնները եւ կրքերը: Եւ ինչպէս Բանի մարմինը ուրիշ մէկից չճանաչեցինք, այլ Կոյսից, այսինքն՝ մարդկային [բնութեան] զանգուածից, այդպէս էլ Քրիստոս ըստ մե՛զ կրեց մեր իսկ մարդկային կրքերը եւ ո՛չ թէ ըստ Աստուածութեան կամ այլ կերպ, ինչպէս եւ մեծն Գրիգոր Նազիանզացին է ասում. «Կրկնակի էր, որ յոգնեց, երկիւղեց, արտասուեց, քաղցեց, ծարաւեց մարմնի օրէնքով»[49]: «Կրկնակի» ասելով նկատի ունի Բանն Աստծուն ու Նրա մարմինը, իսկ ասելով «մարմնի օրէնքով»՝ ցոյց է տալիս, որ կրքերը կրելն ըստ մարդկութեան է եւ ո՛չ ըստ Աստուածութեան: Դու դրանցից եւ ոչ մէկը չես կարողանում

48 Ս. Գրիգոր Նիւսացի, Յաղագս երանութեանց, ԻԴ ճառ, Ա հատոր՝ ըստ յունական եւ լատինական դասակարգութեան (Աւգերեան, էջ 51, ծանօթ. 2)

49 Ս. Գրիգոր Աստուածաբան, «Յաստուածայայտնութիւն եւ ի Մնունդն Փրկչին», ճառ ԼԸ՝ ըստ յունական եւ լատինական դասակարգութեան (Աւգերեան, էջ 52, ծանօթ. 2)

ընդունել, որի պատճառով նոյն մարդկային կազմութիւնն ինքնին մեղք համարեցիր:

ԽԱ. Այս մասին ասում է գաբաղացիների եպիսկոպոսը՝ առաւելաշնորհ Սեւերիանոսը՝ Փրկչի տնօրէնութեան մասին ճառում. «Անչարչարելին չարչարւում է չարչարելիով. մտաւ ոչ թէ այն կրքերի տակ, որոնք տանում են դէպի մեղք, այլ՝ որոնք յատուկ են մեր բնութեանն ընդհանրապէս: Քանզի հոգին ու մարմինը ծառայում են ե՛ւ դէպի մեղք տանող, ե՛ւ մեղքից զերծ կրքերին. վերջիններից են քաղցելն ու ծարաւելը, յոգնելն ու ննջելը, որոնք մարմնի կրքեր են եւ մեղք չեն համարւում: Իսկ պոռնկութիւնը, պղծութիւնը եւ հակառակութիւնը մեղքի կրքեր են: Նոյնպէս եւ հոգին իր մէջ է պահում Արարչից [ստացած] օգտակար ու կարեւոր կրքերը՝ երկիւղը, տրտմութիւնն ու ցաւումը, որոնք եթէ առանձին դիտարկուեն, կը կոչուեն կրքեր, իսկ [եթէ]՝ չափով եւ ըստ ժամանակի, [ապա] մեր բնութեան օգնականներն են»[50]: Այսպէս ասելով՝ շարունակում է. «Կենարարը յանձն առաւ մարմնի եւ հոգու այն կրքերը, որոնք զերծ են մեղքից. քաղցեց մարմնով, ծարաւեց, յոգնեց ու ննջեց եւ դրանով ոչ թէ նսեմացրեց Աստուածութիւնը, այլ ճշմարտապէս յայտնեց մարմնի բնութիւնը: Նոյնպէս եւ հոգով երկիւղեց, տագնապեց, տրտմեց. ասում է. «Հոգիս տրտում է մահու չափ» [Մատթ. ԻԶ 38], եւ դարձեալ, թէ՝ «Սկսեց տրտմել ու տագնապել» [Մատթ. ԻԶ 37]: Դրանք մեղանչական կրքեր չէին, այլ մարմնի բնութեան յայտարարներ»[51]: Ապա դարձեալ շարունակում է, որպէսզի նախապէս փակի հերձուածողների բերանը եւ ցոյց տայ, որ բազմաթիւ կրքերի ենթակայ [մեր] այս մարմինն է առել, որը երկիւղում է չարչարանքից, դողում մահուան բռնութիւնից, խռովւում ու տրտմում կեանքի վախճանի համար[52]:

ԽԲ. Ահա սուրբ հայրը բացայայտօրէն ցոյց տուեց, որ մեր մէջ եղած այս կրքերը մեղքի ու ապականութեան մասեր չեն, այլ մարմնին ու հոգուն բնորոշ անհրաժեշտութիւններ, դէպի որոնք Տէրը խոնարհուեց կամաւորապէս եւ ըստ [փրկագործութեան] խորհուրդի կանխագիտութեան, [որոնց], սակայն, փրկչական մարմինը հարկադրաբար ենթակայ չէր, քանզի բնական կրքերի ծառայութեանը ենթարկուելը յատուկ է միայն մարդուն: Իսկ Բանն Աստուած անբաժանաբար Իրեն միաւորեց մեր [բնութիւնը]. երբ Ինքը կամենում էր, այնժամ Իր մարմնին թելադրում էր գործադրել բնական [կրքերը]՝ հաստատելով, որ Իրեն է միաւորել կատարեալ մարդկային [բնութիւնը]՝ հոգով եւ մարմնով: Ինչպէս ասում է սքանչելի Յովհան Կոստանդնուպոլսեցին. «Ինչո՞ւ առաւօտեան քաղցեց. երբ կամենում եւ թոյլ էր տալիս մարմնին, այնժամ էր զգում Իր կրքերը»[53]: Ասում են. «Եթէ այդպէս է, ուրեմն Քրիստոս փոփոխելի էր, [քանզի] մարմինը երբեմն տկարանում էր Բանի թոյլտուութեամբ, երբեմն էլ զօրանում Բանի կողմից»: Դարձել են թիւրահաւատներ՝ յանդգնելով թիւրել ճշմարիտ հաւատքը: Իսկ ի՞նչ կ՛ասես Քրիստոսի՝ մեզ համար մեռնելու մասին. ըստ քեզ՝ կամ մեռաւ եւ փոփոխուեց, կամ էլ չփոփոխուեց եւ չմեռաւ: Իսկ եթէ ե՛ւ մեռաւ, ե՛ւ չփոփոխուեց, ուրեմն նոյնպէս էլ կրեց կրքերը եւ չփոփոխուեց դրանցից: Եւ ինչպէս մեռնելիս ընդունեց մեր մահը, այսինքն՝ հոգին բաժանուեց իր մարմնից, այդպէս եւ [կրքերը] կրելիս նոյն կերպով հաղորդ դարձաւ մեր կրքերին, ինչպէս սուրբ Բարսեղն է ասում «Գոհութեան մասին» ճառում. «Արդ, ինչպէս Տէրն ընդունեց քաղցը, երբ պինդ կերակուրը սպառուեց Նրա մէջ, եւ ծարաւը ճշմարտապէս յայտնեց, երբ մարմնի մէջ խոնաւութիւնը սպառուեց, եւ երկարաձիգ ուղեղնացութիւնից յոգնեց մարմնով ու ջղերով, [սակայն] ոչ թէ աստուածութիւնը յոգնեց եւ չարչարուեց, այլ մարմինն ընդունեց իր բնութեանը յատուկ պատահմունքը, այդպէս էլ ճշմարտապէս արտասուեց՝ թոյլ տալով, որ մարմնի մէջ կատարուի բնական պատահմունքը»[54]: Այսպէս [է ասում] այս սուրբ հայրը:

ԽԳ. Այստեղից պարզ է, որ երբ կամեցաւ, ինքնիշխան կամքով թոյլ տուեց, որ բնական կրքերից իւրաքանչիւրը ճշմարտապէս եւ անապականաբար ներգործի իր մարմնի ու հոգու վրայ, ոչ [թէ] սոսկ անուամբ եւ նմանութեամբ, այլ առաւելապէս՝ ըստ էութեան, որից է նաեւ անունը, համբերելով դրանցից իւրաքանչիւրի մէջ, եւ այս պատճառով է ասում, որ ընդունեց մեր կրքերը: Այլեւ ըստ մեզ [կրեց],

50 Սեբերիանոսի Եմեսացւոյ Գաբաղացւոց եպիսկոպոսի ճառք ԺԵ, Վենետիկ, 1830, էջ 11-12

51 Նոյն, էջ 12-13

52 Նոյն, էջ 13

53 Ս. Յովհան Ոսկեբերան, Մատթէոսի Աւետարանի մեկնութիւն, ճառ ԿԷ (ԿՀ ըստ այլոց)՝ ըստ յունարէն եւ լատիներէն դասակարգութեան (Աւգերեան, էջ 56, ծանօթ. 1)

54 Տե՛ս 30-րդ ծանօթ.:

եթէ չատ չես գայթակղուի խօսքովս՝ խորհելով ապականութեան մասին, քանզի ես ասում եմ, որ Քրիստոս յանձն առաւ բնական կրքերը, իսկ դու ներմուծում ես անբնականը, որն ապականութիւն է եւ փոփոխելիութիւն: Սոսկ մարդ չէր, բայց լոկ Աստուած էլ չէր, այլ մանաւանդ՝ ե՛ւ Աստուած, ե՛ւ մարդ էր միաժամանակ: Տէրն Իր մէջ ցոյց տուեց այն, ինչն ըստ մեզ է, եւ այն, ինչն ըստ մեզ չէ. քաղցեց ըստ մեզ, եւ քաղցելով ոչ ըստ մեզ՝ տարաւ մեզ դէպի երկնային բարիքների վայելումը: Եթէ սոսկ մարդ էր, կրելով չէր կարող նաեւ ներգործել, եւ եթէ սոսկ Աստուած էր, ներգործելով հանդերձ չէր կարող կրել: Սակայն, արդ, միաժամանակ լինելով երկուսն էլ՝ կրեց մեր տկարութիւնները եւ ըստ մեզ եղաւ, իսկ մենք Նրա զօրութեան հետ միաւորուեցինք եւ ըստ Նրա եղանք:

ԽԴ. Անգիտացաւ եւ դրանով մեզ դարձրեց մարգարէաշնորհ: Մեռաւ ըստ մեզ՝ թաղել տալով Իր մարմինը, եւ մարդկային հոգով ճշմարտապէս այցելեց դժոխքում գտնուողներին, որոնցից առաջինով ընդունեցինք մահուան լուծարումը, իսկ երկրորդով՝ ապականութեան: Եւ միանգամայն ճիշտ է ասել, որ Նա հաղորդակից դարձաւ մեր բոլոր բնական [յատկութիւններին], որով մեզ հաղորդակից դարձրեց Իր բնական [յատկութիւններին]: Այդ է առաւել յստակօրէն ասում մեծն Աթանաս Ալեքսանդրացին. «Բանը կրեց մարմնաւոր ծնունդը եւ մեղքի, ապականութեան ու մահուան մէջ ցրուած Իր արարածներին Իրենով հաւաքեց նոր պատկերի մէջ, որի համար դատապարտեց մեղքը երկրի վրայ, խաչափայտի վրայ վերացրեց անէծքը, գերեզմանի մէջ լուծարեց ապականութիւնը եւ դժոխքում՝ մահը: Ելաւ ամէն ինչի վրայ, որպէսզի փրկի բոլոր մարդկանց՝ Իրենով ցոյց տալով մեր պատկերը: Քանզի ի՞նչ կարիք ունէր Աստուած ծնուելու կնոջից, աճելու հասակով եւ տարիքով, Ով արարել է յաւիտեանները, եւ կամ ի՞նչ կարիք ունէր խաչի, գերեզմանի ու դժոխքի, որոնց մէջ էինք ընկել մենք, եթէ ոչ՝ մեզ փնտռելու՝ մեր պատկերի միջոցով կենսագործելով մեզ, եւ որպէսզի կանչի Իրեն միանալու եւ նմանուելու Իր կատարեալ պատկերին»[55]:

ԽԵ. Այսպէս ասելով՝ աստուածանման հայրը ցոյց է տալիս, որ Բանն Աստուած ոչ թէ սոսկ Իր ամենակարող զօրութեամբ կամ իշխանասաստ հրամանով տանջեց մեզ տանջողներին, այսինքն՝ մեղքը, ապականութիւնն ու մահը, այլ մեզանից վերցրած Իր մարմնով ու բանա-

55 *Վկայակոչութեան աղբիւրն առայժմ մնում է անյայտ:*

կան հոգով դրանց մերձենալով՝ յաղթեց: Եւ այսպէս Երկրորդ Ադամը նորոգեց առաջինին, քանզի եթէ նա, մեղքից վիրաւորուելով, իրեն ծառայութեան յանձնեց հակառակորդին, ապա Սա, անմեղութեամբ մօտենալով, դատապարտեց մեղքը եւ, վիրաւորին առողջացնելով, ծառայողին հրամայեց ծառայեցնել իր ծառայեցուցչին: Այս ազատութիւնը Տիրոջից ստացանք ոչ այլ կերպ, քան այն ծառայական կրքերով, որոնք [Նա] կրեց Իր մարմնով՝ մահու չափ հնազանդ լինելով Հօրը [Փիլ. Բ 8], որպէս թէ տկարութեամբ զօրութիւն ցոյց տալով եւ խոնարհութեամբ ճանապարհ հարթելով դէպի բարձրութիւն: Աւելի ընդարձակ խօսքով նոյնն է ասում նաեւ Մեծն Գրիգոր Նազիանզացին. «Իր վրայ է վերցնում օտար կերպարանքը՝ Իր մէջ ամբողջութեամբ բերելով ինձ եւ ինչ որ իմն է, որպէսզի Իրենով սպառի չարիքը, ինչպէս կրակը՝ մոմը, եւ ինչպէս արեգակը՝ գոլորշին, եւ ես միաւորութեան շնորհիւ հաղորդ լինեմ Նրա [յատկութիւններին]: Ուստի գործով է պատուում հնազանդութիւնը եւ փորձում այն չարչարանքների մէջ. քանի որ սէրը բաւական չէր լինի (ինչպէս եւ մեզ համար), եթէ նաեւ գործով չկատարէր մերը, քանզի սիրոյ ապացոյցը գործն էր: Թերեւս աւելի վատ չէ խորհել հետեւեալը, թէ փորձում է մեր հնազանդութիւնը եւ մարդասիրութեան արուեստով ամէն ինչ չափում՝ ըստ Իր չարչարանքների, որպէսզի որպէս թէ Իր փորձառութեամբ իմանայ մերը»[56]: Այսպէս [է ասում] սուրբ հայրը:

ԽԶ. Բայց մարդկային բոլոր կրքերը մէկ շարքի մէջ մի՛ դիր եւ մէկ մի՛ համարիր՝ իբրեւ թէ կարծելով, որ դրանք բոլորը նոյն կերպ են բնաւորուած մեր մէջ: Ուստի եւ արժանավայել չէ ասել նաեւ, թէ Փրկչի կիրընդունակութիւնը [վերաբերում է] այդ բոլոր [կրքերին], քանզի դրանցից ոմանք կոչւում են բնական՝ ըստ բնութեան մեր մէջ կարգաւորուած [լինելով], ինչպէս քաղցը, ծարաւը, քունը, յոգնութիւնը, տրտմութիւնը, երկիւղը, ցասումը, անգիտութիւնը, իսկ ոմանք յետոյ են ներմուծուել մեր մէջ, որոնցից մէկը սկզբնաւորուել է մեզանից, այսինքն՝ մեղքը, որը սովորեցրեց արհամարհել պատուիրանը, իսկ միւսը յանցանքի պատճառով Արարչի կողմից դրուած պատուհաս

56 *Ս. Գրիգոր Աստուածաբան, Որդու մասին երկրորդ ճառից, ՃառԼ՝ ըստ ռուսերէն դասակարգութեան, տե՛ս* **Святитель Григорий Богослов**, Собрание Творений, Том 1, Слово 30, о богословии четвертое, о Боге Сыне второе, *էջ 308-309:*

է, [այսինքն՝ մահը: Իսկ ապականութիւնը հետեւանք է մահուան եւ ո՛չ մեզանից, ո՛չ էլ Արարչից չի կցուել մեր բնութեանը, այլ որսացել եւ իր կերակուրն է դարձրել մահուան իշխանութեան տակ ընկածներիս, քանզի, ինչպէս նախապէս ասացի, ներհակ է լինելութեանը եւ ապականում է իրը՝ կարծես թէ ձգտելով անգոյացնել գոյը: Որով յոյժ ուրախանում ու չար յոյսով զուարճանում էր խաբեբան՝ մեր նախահօրը պատրողը, իբրեւ թէ յաղթել է նախանձելի [պատիւ ունեցողին] եւ կարողացել է խափանել [նրան, որ] կոչւում է Արարչի պատկեր բոլոր արարածների մէջ, եւ վստահ էր, թէ այլեւս անհնար է, որ նա, կազմալուծուելով այն նիւթի մէջ, որից գոյացել էր, վերստին գոյութեան կոչուէր, ուստի անշունչ ու անշարժ նիւթն անտեսելով, բռնութեամբ պահում էր միայն կենդանի հոգին: Այս պատճառով մեզ կենսագործելու եկած Բանն Աստուած թոյլ չտուեց, որ Իր մարմնին մօտենայ ապականութիւն, ինչը եւ մեռնելիս պիտի կործանէր: Օրինակ, որեւէ շինութեան հիմքի քանդումով [կործանւում է շինութիւնը], եւ կամ պարսպի խորտակմամբ կործանւում է քաղաքը: Իսկ արդարադատ Աստուած թէպէտ պատժեց մեզ, սակայն նոյն այդ մահուան մէջ երկու նմանօրինակ օգտաշահ սերմեր թաքցրեց, որոնք հետեւեալն են. [մէկն այն է], որ մահից նեղւում ենք, երբ մեղքերը հասնում են իրենց լրումին, եւ [միւսը՝ որ մահն անքակտելի կենդանութեան սկիզբն է: Ուստի Տէրն ամենայն փութով եկաւ ու յանձն առաւ մահը, որպէսզի լուծարի մեղքն ու խափանի ապականութեան յափշտակութիւնը եւ որպէսզի Իր յարութեամբ հրաւիրի մեզ երկնային կեանքի:

Խէ. Սակայն կամենում եմ մի փոքր եւս երկարաձգել ապականութեան մասին խօսքս, քանի որ այս չափազանց չար մարդկային ցեղին արժէ երկարաձիգ խօսքերով պախարակել, որպէսզի աւելի խոհեմաբար գիտենայ, թէ ի սկզբանէ Աստուած ինչպիսի՛ պատուով ստեղծեց մեր բնութիւնը, [որն] ինքնակամութեամբ սայթաքելով ինչպիսի՛ եւ որքա՛ն անարգութեան հասաւ: Եւ կամ մեր Արարիչն ինչպէ՛ս հոգաց մեր փրկութեան մասին՝ մարդանալով եւ Իր խաչի արեամբ ազատելով մեզ թէ՛ մեղքից, թէ՛ ապականութիւնից, թէ՛ բանսարկուի բռնութեան ծառայութիւնից: Արդ, ապականութիւնն ամբողջ իրի քակտման պատճառն է, որ տեղի է ունենում փոփոխութեամբ, քանզի ամբողջը բաղկացած է մասերից, իսկ ապականութիւնը փոփոխութեան միջոցով քանդում է մասերից բաղկացածը: [Ահա] մի օրինակ, որ պատշաճում է մեր այս խօսքին. տնկողի կողմից արմատախիլ արուած մի տունկ,

որին ապականութիւնը մերձենալով՝ փոփոխութեան հրամանով վերացնում է նրանից նրա նախկին բնական որակութիւնները եւ դրանց փոխարէն ներմուծում յոյժ անվայելուչ որպիսութիւններ՝ թոյլ չտալով, որ այն մնայ այդ փոփոխութեան մէջ, այլ վայր քաշելով՝ բաշխում է նրան ըստ բաղկացած տարրերի. եւ այնուհետեւ միայն ամենազօր ձեռքի կարողութիւնն է՝ քայքայուած նիւթը կրկին նոյնի մէջ հաւաքելով վերահաստատել [բնական] տեսակը:

Խը. Արդ, խօսքս ցոյց տուեց մեր կործանման երեք վիճակներ. առաջինը՝ մեր իսկ գտած եւ առաջ բերած մեղքը, երկրորդը՝ մահը, որով Աստուած դատապարտեց ու պատուհասեց, եւ վերջինը՝ ապականութիւնը, որն, ինչպէս ասացինք, մահուան հետեւանքն է եւ մանաւանդ՝ հակառակորդի թուացեալ յաղթանակը իր խաբէութեան պայքարում: Քանզի թէպէտեւ Ստեղծիչը հողածիններին ասաց. «Հող էիր եւ հող պիտի դառնաս» [Մնդ. Գ 19], [սակայն] ոչ թէ հրաման տուեց, այլ բացայայտեց, թէ ինչ է հետեւելու մահուանը, ինչպէս, օրինակ, բարձր տեղից գլորուող քարը մօտակայքից դիտողը կ՝ասի. «Կը գնաս, մինչեւ հասնես՝ ուր հարկն է»:

Խթ. Արդ, ծայրինները, [այսինքն՝ մեղքը եւ ապականութիւնը], պարզապէս չար են ե՛ւ անուամբ, ե՛ւ իրապէս, իսկ մէջտեղինը, [այսինքն՝ մահը], ո՛չ պարզապէս եւ ո՛չ նոյն կերպ, այլ՝ ծայրիններից վերցրած եւ իրար հետ միահիւսուած: Քանզի այն, ինչ կոչւում է մահ, կոչւում է նաեւ քուն, եւ ինչը կեանքի վախճան է, [նաեւ] կեանքի սկիզբ է: Ծայրիններն ի յայտ բերեցին մարդը եւ բանսարկուն. մէկը պատճառ եղաւ մեղքի, իսկ միւսը՝ մեր բնութեան ապականութեան: Այս պատճառով Նա, որ մեզ համար մարդացաւ եւ կոչուեց Երկրորդ Ադամ [Ա Կոր. ԺԵ 45], մեղք չգործեց, «քանզի Նրա բերանում նենգութիւն չգտնուեց» [Ա Պետր. Բ 22] եւ «Նրա մարմինը ապականութիւն չտեսաւ» [Գործք Բ 31]: Ինչ որ Ինքը չէր դրել մեր բնութեան մէջ, նաեւ չառնչուեց դրանց հետ, քանզի աւելորդ եւ զուր համարեց իրեն մօտեցնել այն, ինչից կամենում էր ազատել մեզ, սակայն պատուհասից[57] չհրաժարուեց: Ինչպէս, օրինակ, բժիշկը, որ պատրաստում է դեղ տալ հիւանդին, եթէ [նախ] ինքն է փորձում դեղը, ապա վստահութիւն է ներշնչում: Քանզի պատուհասը ո՛չ մեղք էր, ո՛չ էլ

57 Այսինքն՝ մահուանից:

ապականութիւն, այլ այն, ինչը հալեցնում ու մաքրում էր դրանք մեր բնութիւնից, ինչպէս կրակն [է մաքրում] ժանգը ոսկուց: Եւ այս կամաւորապէս կրելու կարողութիւնը միայն Քրիստոսինն է եւ նրանցը, ովքեր, Նրանից զօրանալով, արժանացան ընդունելու որդեգրութեան փառքը. «Կցորդ դառնալով Նրա չարչարանքներին՝ հաղորդակից դարձան նաեւ Նրա փառքին», ինչպէս ասում է առաքեալը [Հռոմ. Ը 17]: «Քանզի Տէրը խրատում է նրան, ում սիրում է, տանջում է ամէն մի որդու, ում ընդունում է» [Եբր. ԺԲ 6], որը թէպէտ «... նոյն պահին ուրախալի չի թւում, սակայն յետոյ դրանով կրթուածներին հատուցում է խաղաղութեան պտուղը արդարութեան մէջ» [Եբր. ԺԲ 11]: Իսկ խաղաղութեան պտուղը նոյն ինքն է, որ «երկուսը մէկ դարձրեց եւ Իր մարմնի մէջ քանդեց միջնորմը՝ թշնամութիւնը» [Եփես. Բ 14]: Եւ ի՞նչն է աւելի վեհ ու գերաշխարհիկ, քան այս խաղաղութիւնը, երբ Գերագոյնի յաղթանակով մեր մարդկային բնութիւնը միանում է աստուածայինին եւ [Նրա հետ] դառնում մէկ: Ինձ թւում է, որ սա է, երբ Որդին ասում է Հօրը. «Փառաւորի՛ր Քո Որդուն Քեզ մօտ եղող այն փառքով, որ ունէի Քեզ մօտ նախքան աշխարհի լինելը» [Յովհ. ԺԷ 5]: Եւ այս խօսքերի խորհուրդը Ինքը Տէրը գալով կ՚ուսուցանի մեզ, եթէ հարցնենք Նրան.

-Ո՛վ Տէր, Աստծուն քեզ Հայր ես կոչում, ուրեմն Նրա էակից Որդին ես, անշուշտ նաեւ փառակիցը: Իսկ ի՞նչ է նշանակում այդ խօսքդ. «Փառաւորի՛ր Քո Որդուն Քեզ մօտ եղող այն փառքով»: Այն ես հաստատում, թէ՝ ունէի փառքը, եւ՝ Քեզ մօտ ունէի, եւ՝ նախքան աշխարհի լինելն ունէի: Իսկ եթէ Նրա մօտ եղող փառքն ունէիր մինչեւ աշխարհի սկիզբը, այժմ ի՞նչ ես խնդրում. այնժամ ունէիր, իսկ այժմ չունե՞ս: Սակայն անհնար է, որ մշտնջենաւոր էութիւնդ առանց փառքի լինի, քանզի եթէ փառքը Քեզ հետ չէ, ուրեմն [Քեզ հետ] չէ նաեւ էութիւնդ, եւ եթէ [փառքը] Քեզ հետ չէ, ապա վերանում է նաեւ Հօր փառքը, Ումից ունէիր այն: Ուրեմն էլ ի՞նչ ես խնդրում Նրանից, աղաչում ենք Քեզ, Տէ՛ր, յայտնի՛ր մեզ, «քանզի Քո մէջ են թաքնուած իմաստութեան եւ գիտութեան բոլոր գանձերը» [Կող. Բ 3]:

-Դեռ պէտք է անարգանք կրէի, թուք ու ապտակ ընդունէի, քացախ ու լեղի ճաշակէի, յանձն առնէի խաչի մահը, աղաչէի Հօրը, ինչպէս անարգուած մէկը, որպէսզի դարձեալ Ինձ տայ փառքը:

-Բայց ինչո՞ւ, մի՞թէ անարգանքների պատճառով զրկուեցիր փառքից: Եթէ այդպէս է, ուրեմն մահուան հետեւանքով էլ կորցրեցիր

անմահութիւնդ, եւ միաժամանակ հարկ է ասել, թէ մարմնիդ պատճառով Աստուածութիւնդ էլ հեռացաւ Քեզանից:

-Այդպէս չէ՛, ոչ թէ Ես փոխուեցի Իմ [յատկութիւններից], այլ Իմ մասին ունեցած մարդկանց կարծիքներն էին, որ փոխուեցին: Երբ վայելում էին բժշկութեան սքանչելիքները, զարմանում, հաւատում ու բարեբանում էին, ինչպէս պատշաճ էր Իմ փառքին, իսկ երբ Ինձ անարգուած տեսան, գայթակղուեցին Ինձանից, թողնելով Իմ մասին պատշաճ խորհուրդները՝ ընկղմուեցին յոյժ անպատշաճ խորհուրդների մէջ, ինչպէս եւ Եսային, Իմ վերաբերեալ մարգարէանալով, ասել էր նրանց մասին [Ես. ԾԳ 4]: Արդ, խնդրում եմ Հօրից, որ մարդկանց մտքից թօթափի անհաւատութեան անարգանքը եւ նրանց հագցնի հաւատքի խորհուրդների փառքը: Թող չնայեն այս [խոնարհութեանը], որ տեսնում են այժմ, այլ նրան, ինչ լինելու է դրա միջոցով՝ Իմ մշտնջենական փառքի մեծութեանը: Թո՛ղ իմանան նրանք, որոնց իմաստութիւնն իրենց առաջնորդեց դէպի մոլորութիւն, որ հաւատացեալները քարոզութեան յիմարութեամբ պիտի փրկուեն [Ա Կոր. Ա 21]. Իմ այդ անարգանքով մարդիկ վերստին պիտի գտնեն կորցրած փառքը, Իմ ճաշակած մահուամբ պիտի ստանան անմահութիւնը. եւ միաժամանակ հարկ է ասել, որ Իմ՝ Մարդու Որդի դառնալով՝ մարդկանց որդիները պիտի արժանանան Աստուծոյ որդիներ դառնալու: Այս էր, որ Հայրն Ինձ պատասխանեց երկնքից. «Փառաւորեցի եւ դարձեալ պիտի փառաւորեմ» [Յովհ. ԺԲ 28]:

-Ինչպէս նախքան Քո մահը՝ հրաշքներիդ զօրութեամբ որոշ մարդիկ փրկուեցին, առաւել եւս Քո կամաւոր մահուանից յետոյ պիտի բազմանան Քեզ հաւատացողները, եւ դեռ աւելին, քանզի սակաւաթիւ են ընտրեալները Քո աստուածահրաշ նշաններից, բայց անթիւ են այն մարդիկ, որոնց Քո խաչի քարոզութիւնը պիտի հաւաքի՝ դառնալու Քո արքայութեան ժառանգորդները:

Գրաբարից փոխադրեցին
Մեսրոպ քահանայ Արամեանը
եւ
Արա սարկաւագ Նալչաջեանը

ԱՆԱՆԻԱ ՆԱՐԵԿԱՑԻ

Անանիա Նարեկացին Հայ Եկեղեցու մեծագոյն հեղինակութիւններից է: Պատմական բոլոր տեղեկութիւնները խօսում են նրա բացառիկ սրբութեան եւ ճանաչողական կարողութիւններով օժտուած անձնաւորութիւն լինելու մասին: Նրա կողմից հիմնադրուած Նարեկայ հռչակաւոր վանքը հայ հոգեւոր կեանքի եւ աստուածաբանական մտքի ամենանուրբ դպրոցներից մէկն է եղել:

Անանիա Նարեկացու ծննդեան եւ վախճանի ստոյգ ժամանակը յայտնի չէ, սակայն կենսագրական փաստերի համադրութիւնը թոյլ է տալիս եզրակացնել, որ նա ծնուել է Ժ դարի սկզբներին եւ վախճանուել նոյն դարի վերջերին: Նա ծագումով, հաւանաբար, Այրարատեան նահանգից էր, ուր եւ անցել են նրա ուսումնառութեան տարիներն ու եկեղեցական ծառայութեան սկզբնական շրջանը՝ Արշարունիք (Խաւարժոր վանք) եւ Հաւնունիք (Անտաք) գաւառներում: Այս շրջանում իսկ Անանիան արդէն համարւում էր ժամանակի ամենագիտուն վարդապետներից մէկը եւ մեծ հեղինակութիւն ունէր: Դա էր պատճառը, որ նրան է վստահւում նորահիմն Նարեկայ վանքի վանահայրութիւնը, որտեղից եւ ստանում է Նարեկացի պատուանունը: Նարեկայ վանքը Վասպուրական նահանգի Ռշտունեաց գաւառի համանուն գիւղում է՝ Վանայ լճի հարաւային ափին, հիմնադրուել է 930-940-ական թթ. եւ ղեկավարւում էր Բարսեղ Կեսարացու կանոնադրութեամբ: Կարճ ժամանակում Անանիայի առաջնորդութեամբ այն մեծ հռչակ է ձեռք բերում: Այստեղ հաւաքուել էին նշանաւոր վարդապետներ, երաժիշտներ, երգիչներ, մատենագիրներ, գիտնականներ: Անանիա Նարեկացին եւս յոյժ կրթուած, բազմակողմանի զարգացած անձնաւորութիւն էր, որն օժտուած էր բազմազան ձիրքերով. աստուածաբան էր, իմաստասէր, երաժիշտ, պատմագէտ, մատենագէտ, մանկավարժ, բանաստեղծ ու հռետոր՝ լի հոգեւոր իմաստութեամբ ու գիտութեամբ՝ «գեր ի վերոյ քան զամենեսեան»[1]: Նարեկայ վանքում նա ստեղծում է հոգեւոր դպրոց, ուր, բացի հոգեւոր առարկաներից, դասաւանդւում են նաեւ զանազան գիտութիւններ ու արուեստներ: Նարեկայ վանքի

1 Ուխտանէս եպիսկոպոս, Պատմութիւն Հայոց, Վաղարշապատ, 1871, էջ 8

դպրոցի սաներից ամենահռչակաւորն, անկասկած, սուրբ Գրիգոր Նարեկացին է, որի հոգեւոր հանճարը ձեւաւորուել է Անանիա Նարեկացու գորովագութ հայրական շնչի ներքոյ, եւ որոնց միջեւ, ի դէպ, սերտ ազգակցական կապ կար[2]: Կայ գրաւոր վկայութիւն, որ ս. Գրիգոր Նարեկացին իր հռչակաւոր «Ողբերգութեան մատեանի» ստեղծմանը ձեռնամուխ է եղել իր ուսուցչի՝ Անանիա Նարեկացու յորդորներով եւ ընծայել կամ ձօնել է նրան[3]:

Անանիա Նարեկացին կարեւոր ներդրում է ունեցել ժամանակի դաւանաբանական պայքարում. նա հեղինակել է «Հակաճառութիւն ընդդէմ Թոնդրակեցւոց» երկը, որը բարձր է գնահատուել 10-12-րդ դդ. եկեղեցական հեղինակաւոր հայրերի կողմից[4], թէեւ հէնց ինքը՝ Անանիան, կեանքի վերջին տարիներին յանիրաւի մեղադրւում է Թոնդրակեցիութեան մէջ եւ հալածանքի ենթարկւում. ծերունազարդ վանահայրը, խարդաւանքի զոհ դառնալով, ստիպուած թողնում է հարազատ Նարեկայ վանքն ու ապաստանում Կճաւայ վանքում: «Նեղութիւն եւ անձկութիւն, հալածումն եւ աւտարութիւն, բարկութիւն ոչ իրաւացի, եւ սրտմտութիւն ոչ բանականաբար բաժին ինձ եւ վիճակ...»[5]. ահա այն, ինչ կեանքի այդ շրջանում ճաշակել է առանց այդ էլ ճգնակեաց եւ անհամար կամաւոր նեղութիւններ ու զրկանքներ կրած վարդապետը: Սակայն այս հալածանքների մէջ նա անտրտունջ գոհացել է Աստծուց. «...եւ ես յայսմ ասացից գոհութիւն Աստուծոյ, զի բարի է յուսալ ի Տէր յամենայն կեանս՝ ի բարեկեցութեան եւ ի թշուառութեան... ի խաղաղութեան եւ ի հալածանս... ի պատուի եւ յանպատուութեան, ի վեհագոյն վայելուչս յարկս բնակութեան եւ յարտաքսել յանիրաւաց. ի հայրենի ժառանգութեան յամենայնիւ գեղեցկապէս յարմարեալ եւ ի տարագրութեան յամենայնէ զրկեալ եւ նուազեալ, առանց յարկի եւ ծածկութի, ի բոլոր պիտոյից սահմանեալ կե-

2 Նրանց ազգակցական կապի վերաբերեալ կարծիքները զանազան են. ըստ ոմանց՝ Անանիան Գրիգորի մօրեղբայրն էր, ըստ ոմանց՝ մօր հօրեղբայրը, ըստ ոմանց էլ՝ մօր հօրեղբօր որդին (Հ. Թամրազեան, Անանիա Նարեկացի. կեանքը եւ մատենագրութիւնը, Երեւան, 1986, էջ 29-30):

3 ՄՄ N 5037, թ. 160բ-161բ

4 Հ. Թամրազեան, Անանիա Նարեկացի. կեանքը եւ մատենագրութիւնը, Երեւան, 1986, էջ 56-58

5 Գ. Տէր-Մկրտչեան, Հայագիտական ուսումնասիրութիւններ, Երեւան, 1979, էջ 224

նաց մարդկութեանս»[6]: Ամենայն հաւանականութեամբ, յետագայում նա արդարացուել է, քանի որ թաղուել է Նարեկայ վանքում՝ ժամատանը:

Անանիա Նարեկացին թողել է գրական հարուստ ժառանգութիւն. նրան են վերագրւում դաւանաբանական, հակաճառական, իմաստասիրական, պատմական, խրատական, բարոյագիտական երկեր, աղօթքներ, հոգեւոր բանաստեղծութիւններ: Յատկապէս ուշագրաւ են նրա ներանձնական խրատները, որոնք հայ հոգեկեցութեան եւ վանական կեանքի կարեւոր աղբիւրներ են: Խրատները զգալի ազդեցութիւններ ունեն անապատական հայրերի եւ յատկապէս ս. Եփրեմ Ասորու գրուածքներից: Այս խրատները նաեւ բացայայտում են ճգնաւորական փորձառութեան եւ ներանձնական-խորհրդական աստուածգիտութեան մի շարք կարեւոր սկզբունքներ եւ առանձնայատկութիւններ, որոնք դրուած են եղել Նարեկեան դպրոցի հիմքում:

Անանիա Նարեկացու խրատներից երկուսը՝ «Խրատ խոնարհութեան մասին» եւ «Խորհուրդների մասին», «Գանձասար» աստուածաբանական կենտրոնն արդէն հրատարակել է «Հոգեւոր կեանքի մասին» ժողովածուով[7]: Նրա խրատական ժառանգութեան յայտնի գործերից են նաեւ «Հոգեշահ խրատ զղջման եւ արտասուքի մասին» եւ «Համբերութեան եւ խաղաղութեան մասին» երկերը: Առաջին խրատն այն մասին է, թէ ինչպէս ստանալ եւ պահել յարատեւ զղջման եւ արտասուքի շնորհը, որն աղօթական ներարուեստի եւ անապատական կեանքի կարեւորագոյն գործոններից մէկն է: Իսկ երկրորդը եղբօր նկատմամբ սիրոյ պատուիրանը կատարելու մասին է, որի կարեւորագոյն նախադրեալներն են խաղաղասիրութիւնը եւ համբերութիւնը:

«Հայ աստուածաբանական մատենադարան» շարքով հրատարակութեան են պատրաստւում Անանիա Նարեկացու այս երկերի քննական բնագրերը, որոնք էլ հիմք են հանդիսացել ներկայացուող թարգմանութիւնների համար:

Արա սարկաւագ Նալչաջեան

---

6 *Նոյն տեղում, էջ 232-233*

7 *«Հոգեւոր կեանքի մասին», «Գանձասար» աստուածաբանական կենտրոն, Երեւան, 1997*

ԱՆԱՆԻԱ ՆԱՐԵԿԱՑԻ

ՀՈԳԵՇԱՀ ԽՐԱՏ ԶՂՋՄԱՆ ԵՒ ԱՐՏԱՍՈՒՔԻ ՄԱՍԻՆ

Ո՛վ աստուածասէր, Աստուծոյ սէրը փնտռող սիրելի՛ եղբայր, [ահա] խօսքը, որի համար աղաչեցիր ինձ՝ ասելով ցոյց տալ քեզ զղջման եւ արտասուքի ճանապարհը: Արդ, ես սակաւօրէն առիթ եմ ընձեռում քո աստուածսիրութեանը՝ բարւոք յօժարութիւնդ յորդորելով ըստ իմ աղքատիմաց մտքի եւ [փոքր]-ինչ հետամուտ լինելով Սուրբ Գրքին եւ նիւթական օրինակների, որովհետեւ «Նրա աներեւոյթ [գործերը] արարածների ճանաչման միջոցով են տեսնւում» [Հռոմ. Ա 20], ինչպէս ասում է առաքեալը: Արդ, արտասուքի շնորհը նշան է Քրիստոսին սիրելու եւ Նրա արքայութեանը ցանկալու, ինչպէս ասաց Տէրը պոռնկի մասին, որ արտասուեց Նրա սուրբ գարշապարների վրայ, թէ՝ «Նրա անհամար մեղքերը կը ներուեն, որովհետեւ շատ սիրեց Ինձ» [Ղուկ. է 47]: Մարգարէներն էլ սէրը, որ ունէին ժողովրդի հանդէպ, արտասուքի միջոցով էին յայտնում, ինչպէս ասում է Երեմիան. «Ո՛վ կը դարձնէր իմ գլուխը ջրերի շտեմարան եւ իմ աչքերը՝ արտասուքի աղբիւրներ, որ ես օր ու գիշեր ողբայի այդ ժողովրդին» [Ղուկ. է 47]:

Նաեւ Եսային է ասում. «Մի՛ ստիպէք ինձ մխիթարուել, այլ թողէ՛ք, որ դառնապէս լաց լինեմ իմ ժողովրդի անկման համար» [Եսայի ԻԲ 4]: Եւ նոյն Ինքը՝ Տէրը, Ղազարոսի հանդէպ ունեցած Իր սէրը յայտնեց արտասուքի միջոցով, երբ արտասուեց գերեզմանի վրայ, որի համար ժողովուրդը զարմացաւ եւ ասաց. «Տեսէ՛ք՝ որքան էր սիրում նրան» [Յովհ. ԺԱ 36]: Առաքեալն էլ՝ սէրը, որ ունէր կորնթացիների հանդէպ, արտասուքի միջոցով յայտնեց՝ ասելով. «Բազում վշտերից եւ սրտի նեղութիւնից գրեցի ձեզ առատ արտասուքով: Ոչ թէ որպէսզի տրտմէք, այլ որպէսզի հասկանաք իմ սէրը, որն առաւելապէս ունեմ ձեր հանդէպ» [Բ Կոր. Բ 4]: Արդ, ինչպէս [երբ] մէկը ինչ-որ բան է խնդրում մի ուրիշից եւ արտասուքով է աղերսում, ցոյց է տալիս սրտի յօժարութիւնը եւ տեսնողներին յայտնում խնդրանքի ջերմ ցանկութիւնը, եւ երբ մէկը մեղանչում է մի ուրիշի նկատմամբ եւ արտասուքով է թողութիւն խնդրում, յայտնի է դարձնում սրտի բեկումը, թէ

ողջ սրտով է զղջացել, այնպէս էլ դու, երբ արտասուքով ես պաղատում առ Աստուած, յայտնի ես դարձնում կամքիդ յօժարութիւնը եւ խոնարհեցնում Աստծուն դէպի քո աղաչանքները: Եւ երբ Նրան քեզ գործակից ես դարձնում եւ ջերմեռանդօրէն ճգնում, այնժամ շնորհը քեզ ուսուցանում է պաղատանքների արուեստը, թէ ինչպէս է պէտք անել: Ինչպէս [երբ] մէկն արուեստ է սովորում մի ուրիշից եւ [այդ] արուեստը որոշ ժամանակ գործադրում է, այդժամ աւելի արուեստից է իմանում, քան ուսուցչից էր սովորել, այնպէս էլ դու քեզ համար գործադրի՛ր արտասուքով պաղատանքը, եւ նա ի՛նքը կը սովորեցնի քեզ, եւ շնորհի՛ց կ՚ուսուցանուես: Քանզի սուրբ Բարսեղը նոյնպէս աստուածսիրութեան մասին հարցումին այսպէս է պատասխանում. «Ո՛չ լոյսով ուրախանալը, ո՛չ կեանքի խնամքը, ո՛չ էլ մայրերի՝ իրենց զաւակներին սիրելը որեւէ մէկից չեն սովորում. եւ սա նոյն իրենցից՝ վայրի գազաններից [կարելի է] ուսանել, քանզի բնականօրէն սիրում են իրենց ծնողներին: Այսպէս Աստուած բնածին բարիքի մէջ տնկեց Իր սէրը. մենք միայն պէտք է գործադրենք, հետամուտ լինենք եւ գտնենք սէրն առ Աստուած, այսինքն՝ արտասուքը, որ հաճելի է Աստծուն, եւ միշտ անյագ մնանք Նրա սիրոյ մէջ»[1]:

Արդ, դո՛ւ, ո՛վ սիրելի, մտովի պատկերացրու երկու օրինակ. մէկը՝ հոգիդ, միւսը՝ մարմինդ. ինչպէս մարմնիդ ես տալիս հանդերձ ու կերակուր, նոյնպէս եւ հոգիդ կերակրիր արտասուքով, եւ այնպէ՛ս ջանա, որ ամէն օր նախ հոգիդ կերակրես, յետոյ մարմինդ: Ինչպէս մարդիկ գնում են սգոյ տուն եւ այնտեղ, ուր ողբում են մեռեալին, աղիողորմ ձայներ են հանում եւ ակամայ ճմլում լսողների սիրտն ու արտասուք բխեցնում, իսկ երբ գնում են հարսանեաց տուն, այնտեղ ծիծաղեցնողները կատակներ են անում, եւ լսողներն ակամայ սկսում են ծիծաղել: Այդպէս եւ դու, երբ սիրտդ քարանայ եւ չկարողանաս արտասուել, խորհրդածիր զղջման խօսքերի ու օրինակի մասին, եւ սիրտդ կը զղջայ ու արտասուք կը բխեցնի: Կարգ ու սահմա՛ն դիր, խորհրդո՛վ որոշիր արտասուքի ժամանակը եւ Աստծուց խնդրիր շնորհի օգնութիւնը՝ բռնադատելով քո բնութիւնը. այնժամ Աստուած կը նայի քո ճիգերին եւ կը տայ շնորհը, որին ձգտում ես: Այս մասին էր Տէրն ասում, թէ՝ «Հզօրներն են յափշտակում երկնքի արքայութիւնը»

1 Basilio di Cesarea, Il Libro delle Domande (Le Regole), edito da Gabriella Uluhogian, Lovanii in Aedibus E. Peeters, 1993, p. 41-42

[Մատթ. ԺԱ 12]: Եւ ինչպէս հողագործները վաղօրօք պատրաստում են գործիքները, երբ դեռ չի հասել բերքի ժամանակը, այնպէս էլ դու այս ամէնը որպէս օրինակ ստացիր այս երկրաւոր [իրերից], ինչի մասին է առաքեալն ասում. «Նրա աներեւոյթ [գործերը] ի սկզբանէ արարածներով են ճանաչւում» [Հռոմ. Ա 20]: Եւ երբ տեսնում ես աղքատին, որ գալիս թախանձում է, եւ ողորմութիւն են շնորհում նրան, դու դա օրինակ դարձրու Աստուծոյ մօտ, թէ՝ «Նրանք, [որ] կարիքի ենթակայ մարդիկ են, կարօտեալին ողորմութիւն շնորհեցին, իսկ ես Քեզ եմ դիմում, որ Արարիչդ ես անկարօտ. շնորհի՛ր ինձ ողորմութիւն, քանզի Քո առատ մարդասիրութեանդ հնարաւոր է»: Նաեւ սա՛ դարձրու զղջման պատճառ-օրինակ. «Ո՞վ է գովում թագաւորին, թէ հարստութիւն եւ դիզած գանձեր ունի, քանզի դա թագաւորների համար սովորական է, այլ նրա վրայ են զարմանում, որ խոնարհւում է դէպի աղքատները եւ ողորմում որբին ու այրուն: Այսպէս եւ Դո՛ւ, Արարի՛չ. զարմանալի չէ, որ ոչնչից արարեցիր երկինքն ու երկիրը, քանզի դա Քո արարչական զօրութեան կարողութիւնն է, այլ նրա վրայ եմ զարմանում, որ խոնարհուեցիր երկնքից, առար ծառայի կերպարանք, մէկ խօսքով աւազակին դրախտ շնորհեցիր, պոռնկին թոյլ տուեցիր մօտենալու Քո սուրբ գարշապարին, համբոյրի արժանացրիր անառակ որդուն: Արդ, եւ ի՛նձ ողորմիր, Արարի՛չ, ո՛չ ըստ իմ արժանիքների, այլ ըստ Քո մեծ ողորմութեան»:

Քեզ վարձկան մի՛ համարիր, որպէսզի չթուլացնես արտասուքդ, այլ շնորհական թախանձանքով ջանա՛ ստանալ Արքայութիւնը: Եւ փորձի՛ր բնութիւնդ, թէ ինչպիսի՞ պատճառից է առաջ գալիս զղջումը, եւ մնա՛ դրա մէջ: Դարձեալ՝ ուշադրութիւն դարձրու, թէ ինչպիսի՛ պատճառից է հանգչում եւ մի կո՛ղմ նետիր այն, որպէսզի Աստուած տեսնի ձգտումդ եւ տայ շնորհը: Դարձեալ՝ միայն աղօթքի խօսքերի՛ն ուշադրութիւն մի դարձրու եւ միայն ա՛յն [մի] համարիր աղօթք, այլ [աղօթքիդ] ընդունելի լինելը. տես, թէ հաճելի՞ է Աստծուն, թէ՞ ոչ, քննի՛ր քո միտքը եւ տե՛ս. եթէ պատճառ գտնես, որ խիղճդ դատի քեզ, մի կո՛ղմ նետիր այն: Այնժամ հոգումդ կը ծագի աղօթքի լոյսը, եւ շնորհը մտքիդ մէջ կը յայտնի, որ քո աղօթքն ընդունելի եղաւ: Սրա մասին է առաքեալն ասում, թէ՝ «Զգիտենք, թէ ինչպէս է պէտք աղօթել, բայց Հոգին Ինքը բարեխօսում է անմռունչ հեծեծանքներով» [Հռոմ. Ը 26]: Դարձեալ՝ հեռացի՛ր երկրաւոր զբաղումներից, որպէսզի վարժուես զղջման ու արտասուքի մէջ, եւ շնորհն արմատանայ քո

մէջ: Ինչպէս, օրինակ, հողը, երբ խոնաւ է լինում եւ որպէս ջրի հետեւանք՝ իր վրայ կանաչ բուսականութիւն է ունենում, այնտեղից մարդիկ, երբ կամենում են, դիւրութեամբ ջուր են հանում, իսկ երբ հողը չորային է լինում, որքան էլ ջանան, ջուր չի բխի, այսպէս եւ դու, երբ խնդամիտ ես եւ ուրախ, զղջման շնորհը հեռանում է քեզանից, եւ երբ կամենաս, չես կարող արտասուել, քանզի արտասուքն առաջ է գալիս տրտմութիւնից, ինչպէս երկինքը նախ մթնում է ամպերից եւ ապա կարող է երկիր հեղել իր բարի անձրեւը: Իսկ եթէ շարունակ տրտում ես, մտախոհ ու զարհուրած եւ յիշում ես Քրիստոսի գալուստը, ահեղ ատեանն ու անաչառ դատաստանը, այնժամ երբ կամենաս, կարող ես արտասուել, քանզի արտասուքի նիւթն [արդէն] սրտումդ է բնակուած: Այս մասին մարգարէն ասում է. «Շարունակ տրտում էի շրջում, քանզի հոգիս լցուած էր չարչարանքով» [Սաղմ. ԼԷ 7]: Արդ, նա, ով իմաստութիւն ունի, այս կեանքում ուրախութիւն չունի, այլ շարունակ երկիւղի մէջ է, քանզի աներեւոյթ թշնամիներ ունենք, ինչպէս ասում է Պետրոս առաքեալն իր ընդհանրական թղթում. «Արթո՛ւն եղէք եւ հսկեցէ՛ք, քանզի ձեր ոսոխը՝ սատանան, առիւծի պէս մռնչում է, փնտռում, թէ ո՛ւմ կուլ տայ» [Ա Պետ. Ե 8]: Եւ Պօղոսն ասում է. «Մեր պատերազմը մարմնի ու արեան դէմ չէ, այլ իշխանութիւնների եւ պետութիւնների՝ չար ոգիների դէմ, որոնք երկնքի ներքոյ են» [Եփես. Զ 12]: Իսկ մարգարէն ասում է. «Մուտքն այս աշխարհ ծանր է, դժուարին եւ տառապանքով լի» [Ես. Խ 2, 4]: Յոբն ասում է. «Մարդկանց կեանքը երկրի վրայ փորձութիւն է» [Յոբ Է 1]: Իսկ Տէրն Ինքն ասում է. «Այս աշխարհում նեղութիւն պիտի ունենաք» [Յովհ. ԺԶ 33]: Արդ, քանի որ որքան ժամանակ մարմնի մէջ ենք, ենթակայ ենք փորձութեան եւ շրջում ենք որոգայթների մէջ, ուստի կարիք ունենք մեծ երկիւղի, սուգի ու արտասուքի, որպէսզի կարողանանք յաղթել այս պատերազմում, որ մեր առջեւ է:

Ուստի, սիրելի՛ եղբայր, դու մեծ եռանդով ու յօժարութեամբ ջանա եւ ստացի՛ր զղջման շնորհը եւ մի՛ դադարիր խնդրելուց, մինչեւ չստանաս, եւ չթուլացնե՛ս ջանքերդ, մինչեւ չբացես դուռը: Աստուած նրա համար է յետաձգում տալը, որպէսզի քեզ մղի թախանձելու, որպէսզի երբ ստանաս, չդադարես թախանձելուց, քանզի Աստուած յոյժ բաղձում է աղաչողի թախանձանքը: Քանզի եթէ միայն այն խնդրես, ինչ հաճելի է Աստծուն, անհնար է չստանալ Տէր Աստծուց, ինչպէս Ինքն իսկ ասաց. «Ով խնդրում է, ստանում է, եւ ով բախում

է, բացւում է նրա առջեւ» [Մատթ. Է 8]: Սակայն պարգեւի յետաձգման պատճառով մի՛ դադարիր թախանձելուց, որի մասին առաքեալն ասում է. «Նախանձախնդիր եղէք նմանուելու նրանց, ովքեր հաւատով ու համբերութեամբ ժառանգեցին աւետիսը» [Եբր. Զ 12]: Արդ, ուրեմն զղջման շնորհը արուեստ է, եւ մեծ հնարքներով ու ջանքերո՛վ է պէտք ստանալ այն: Երբեմն զղջումն առաջ է գալիս ինքնին՝ առանց քո ջանքերի, երբեմն էլ անգամ մեծ ջանքերով չես կարողանում արտասուել: Երբ զղջումն ինքնին է առաջ գալիս, Աստուծոյ շնորհով է, որը ներգործում է հոգուդ վրայ եւ արթնացնում միտքդ: Իսկ երբ ջանում ես եւ չես կարողանում արտասուել, Աստուած է, որ կասեցնում է շնորհը եւ փորձում է քեզ, որպէսզի տեսնի քո ջերմեռանդութիւնն ու ջանքերը: Եթէ շնորհը միշտ առանց ջանքերի լինէր, այնժամ քո լաւ ու պիտանի լինելը որտեղի՞ց կ՚երեւար: Իսկ արտասուքը ոչ միայն աչքերից է գալիս, այլեւ սրտից: Ձեռք բեր սուրբ սիրտ եւ խոնարհ հոգի, որպէսզի Աստուած խոնարհուի դէպի քո աղօթքը եւ հոտոտի [այն] որպէս անուշահոտութիւն, ինչպէս գրուած է, թէ՝ «Երբ Նոյը զոհ մատուցեց Աստծուն, Տէրը հոտոտեց անուշ բուրմունքը» [Ծն. Ը 20-21]՝ ոչ թէ թռչունների ու անասունների մարմնի կամ արեան, այլ մատուցողի կամքի: Այսպէս եւ քո աղօթքը զոհ է Աստծուն. սուրբ սրտո՛վ մօտեցիր Աստուծոյ առջեւ եւ զգուշացի՛ր բոլոր յանցանքներից:

– Ամբարտաւանութիւնից, որի մասին Տէրն ասաց. «Ով բարձր է մարդկանց առջեւ, պիղծ է Աստուծոյ առջեւ» [Ղուկ. ԺԶ 15]: Իսկ Սողոմոնն ասում է. «Աստուած հակառակ է ամբարտաւաններին» [Առակ. Գ 34]:

– Ատելութիւնից, ինչպէս ասում է աւետարանիչը. «Ով ատում է եղբօրը, մարդասպան է» [Ա Յովհ. Գ 15]: Իսկ Պօղոսն ասում է. «Եթէ մարմինս մատնեմ հրով այրուելու, բայց սէր չունենամ, օգուտ չունեմ» [Ա Կոր. ԺԳ 3]:

– Բարկութիւնից, որի մասին ասում է. «Մարդու բարկութիւնն Աստուծոյ արդարութիւնը չի գործում» [Յակ. Ա 20]:

– Ոխակալութիւնից, ինչպէս Տէրն ասաց. «Եթէ մարդկանց չներէք իրենց յանցանքները, ձեր երկնաւոր Հայրն էլ չի ների ձեզ» [Մատթ. Զ 14]: Նաեւ գրուած է, թէ՝ «Ամէն ինչ պիղծ է... պիղծ են նրա աղօթքները, պիղծ եւ անպիտան է նրա ձեռքերի տարածումը» [Ես. Ա 13-15]: Քանզի ով ոխ ունի ընկերոջ հանդէպ, անհնար է, որ նրա աղօթքներն առ Աստուած բարձրանան:

– Առաւել զգուշացիր ընչասիրութիւնից, ինչպէս ասում է առաքեալը. «Ագահութիւնը, որը կռապաշտութիւն է» [Կող. Գ 5]: Դարձեալ՝ «Բոլոր չարիքների արմատն արծաթասիրութիւնն է» [Ա Տիմ. Զ 10]:

– Որովայնամոլութիւնից, որի մասին ասաց. «Վա՜յ ձեզ, որ յագեցած էք» [Ղուկ. Զ 25]:

– Առաւել զգուշացիր պոռնկական խորհուրդներից, ինչպէս գազանից, քանզի հէնց դա է, որ Քրիստոսի անդամը դարձնում է պոռնկի, ասում է առաքեալը. «Արդ, Քրիստոսի անդամները վերցնեմ դարձնեմ պոռնկի՞ անդամներ. քա՜ւ լիցի» [Ա Կոր. Զ 15]: Եւ՝ «Ով ապականում է Աստուծոյ տաճարը, Աստուած էլ նրան է ապականում» [Ա Կոր. Գ 17]:

– Բամբասելուց, ինչպէս ասում է առաքեալը. «Բամբասողները չեն ժառանգում Աստուծոյ արքայութիւնը» [Ա Կոր. Զ 10]:

– Տրտնջալուց. այդ մասին գրուած է. «Տրտնջացողին դրսում կը թողնես՝ մեռնելու հայհոյողի հետ»[2]:

– Մարդահաճոյ խօսքերից, ինչպէս ասում է մարգարէն. «Աստուած պիտի ցրի մարդահաճոների ոսկորները» [Սաղմ. ՃԲ 6]: Առաքեալն ասում է. «Եթէ մարդահաճոյ լինէի, ապա Քրիստոսի ծառան չէի լինի» [Գաղ. Ա 10]:

– Շատախօսութիւնից, որի մասին Սողոմոնն ասում է. «Շատախօսութիւն անելով՝ չես կարող ազատուել չատախօսութեան մեղքից» [Առակ. Ժ 19]: Ինչպէս ասում է Տէրը. «[Երբ] նա սուտ է խօսում, իրենից է խօսում, քանզի ստախօս է եւ ստութեան հայր» [Յովհ. Ը 44]: Սողոմոնն ասում է. «Ստախօս շուրթերը պիղծ են Տիրոջ առջեւ» [Առակ. ԺԲ 22]:

– Երդումից, որի մասին Տէրն ասում է. «Ամենեւին մի՛ երդուիր» [Մատթ. Ե 34]:

– Խեղկատակութիւնից՝ ըստ հետեւեալի. «Վա՜յ ձեզ, որ այժմ ծիծաղում էք, քանզի պիտի սգաք» [Ղուկ. Զ 25]:

– Առաւել զգուշացիր հարբեցողութիւնից, որի մասին գրուած է. «Մի՛ արբիր գինով, որի մէջ զեխութիւն կայ» [Եփես. Ե 18]: Իսկ Սողոմոնն ասում է. «Գինին խիստ անառակ է, արբեցութիւնը՝ խայտառակող, եւ ամէն անմիտ շաղախւում է դրանով» [Առակ. Ի 1]: Գինին

2 Վկայակոչութեան աղբիւրը յստակ չէ:

աչքերի կուրութիւն է, ականջների խլութիւն, բերանի պապանձում, ձեռքերի կաչկանդում, ոտքերի սայթաքում, սրտի թուլութիւն, խորհուրդների ցնորում: Գինին հալածում է Աստուծոյ երկիւղը, հեռու վանում պատուիրանը եւ հեռացնում ուղիղ վարքից:

– Ծուլութիւնից, որի մասին Տէրն ասում է. «Զա՛ր եւ ծո՛յլ ծառայ» [Մատթ. ԻԵ 26], որի համար «վա՛յ ինձ»:

Արդ, յանցանքների բազմութիւններն անչափ են, որոնք ոչ ոք չի կարող հաշուել, սակայն դու զգուշացի՛ր ամէն ինչից, որպէսզի քո աղօթքն ու արտասուքն ուղիղ մատուցուեն Աստուծոյ առջեւ, ինչպէս ասում է մարգարէն. «Թող իմ աղօթքներն ուղիղ լինեն Քո առջեւ, ինչպէս խունկը» [Սաղմ. ՃԽ 2]:

Ինչպէս, օրինակ, հողը, երբ տղմոտ է, չի կարող վճիտ ու քաղցրահամ ջուր բխել, այլ անախորժ ու ժահահոտ, այսպէս ախտալից ու ժահահոտ սրտից [բխած] աղօթքը խոտան է երեւում, ինչպէս փարիսեցունը: Եւ եթէ կամենում ես, որ Աստուած խոնարհուի դէպի քո աղօթքը, դու ոչ ոքի մի՛ ամբաստանիր, ինչի մասին Ամբակում մարգարէն ասում է. «Վա՜յ նրան, ով պղտոր հրապոյրներ ու կասկածելի ճանապարհներ է արբեցնում իր ընկերոջը» [Ամբ. Բ 15]: Այս մասին տեղեակ լինելով՝ իմացի՛ր, որ տարբեր վայրերում շատերն աղօթք արեցին ու զոհեր մատուցեցին, սակայն Աստուած չընդունեց դրանք: Աստծուն զոհ մատուցեց Աբելը եւ քանի որ սուրբ սրտով էր, Աստուած ընդունեց, իսկ Կայէնի [զոհը] չընդունեց, քանի որ [նրա] սրտում նախանձ կար: Լաց եղաւ նաեւ Եսաւը, սակայն քանի որ սրտում ատելութիւն կար, օրհնութիւնների չհասաւ: «Մեղա՜յ» ասաց նաեւ Դաւիթը, եւ քանի որ ամբողջ սրտով էր, մարգարէն իսկոյն ասաց թէ՝ «Տէրը ներեց քո մեղքը» [Բ Թագ. ԺԲ 13]: «Մեղա՜յ» ասաց նաեւ Սաւուղը, սակայն քանի որ կատարեալ կամքով չէր, Սամուէլ մարգարէն չընդունեց, այլ ասաց. «Աստուած քեզանից պիտի խլի քո թագաւորութիւնը» [Ա Թագ. ԺԵ 28]: Աստծուն ընծաներ էր բերում նաեւ ժողովուրդը, սակայն Երեմիան Տիրոջ խօսքով ասում էր. «Ինչո՞ւ էք թարսիսից ոսկի ու խունկ բերում ինձ եւ կինամոն՝ հեռու երկրից [Երեմ. Զ 20]. նախ քո սի՛րտը լուա չարիքներից, եւ ապա կ՚ընդունեմ այն քո ձեռքից»: Աղօթում էին նաեւ հրեաները, սակայն մարգարէն ասում էր. «Երբ բարձրացնէք ձեր ձեռքերը, երեսս պիտի շրջեմ ձեզանից, եւ եթէ աւելացնէք աղօթքները, պիտի չլսեմ ձեզ, որովհետեւ ձեր ձեռքերը արեամբ լի են» [Ես. Ա 15]:

Իսկ նրա պահեցողութեան մասին ասում է. «Այդպիսի պահեցողութիւնը չէ, որ ես ընտրեցի» [Ես. Ա 15]: Տէրն ասում է. «Երկու մարդ տաճար գնացին աղօթելու՝ փարիսեցին եւ մաքսաւորը» [Ղուկ. ԺԸ 10]: Աստուած ընդունեց մաքսաւորի աղօթքը խոնարհութեան պատճառով, իսկ փարիսեցունը չընդունեց հպարտութեան պատճառով: Կուսութիւն պահեցին նաեւ յիմար կոյսերը, սակայն քանի որ ընտրողութեամբ չարեցին [այդ], չկարողացան մտնել առագաստը: Սիմոնն իր տուն հրաւիրեց Տիրոջը, սակայն ընտրողութեամբ ընդունել չիմացաւ, որի պատճառով [Տէրը] մեղադրեց [նրան]՝ ասելով. «Մտայ քո տուն, [եւ] ջուր չտուեցիր Իմ ոտքերի համար» [Ղուկ. Է 44]: Իսկ պառնկին գովեց՝ ասելով, թէ՝ «Արտասուքով թրջեց Իմ ոտքերը եւ Իմ գլուխն օծեց անուշաբոյր իւղով [Մատթ. ԻԶ 7, Մարկ. ԺԴ 3], ուստի ասո՛ւմ եմ, նրա բազմաթիւ մեղքերը պիտի ներուեն, քանզի շատ սիրեց Ինձ» [Ղուկ. Է 44, 47]:

Արդ, ո՛վ պատուական եղբայր, վայել է, որ պատասխանեմ ըստ քո խնդրանքի, քանի որ վաղուց փափագում էիր ձեռք բերել արտասուքը, ուստի քեզ պէտք չէր գրել, թէ յաճա՛խ աղօթքի կանգնիր կամ սաղմոսիր, քանզի դա վերաբերում է ընդհանուրին, իսկ դու շարունակ անում ես: Այլ ես քեզ ցոյց կը տամ ընտրողութեան արուեստը, որը ծածուկ է շատերի համար, մանաւանդ՝ ծուլացողների: Տեսնո՞ւմ ես, թէ առաքինութիւնը որքա՛ն կարիք ունի ընտրողութեան, որն Աստուած ընդունում է: Սրա համար էր Տէրն ասում. «Զգուշացէ՛ք ողորմութիւն անելիս» [Մատթ. Զ 1]: Քանզի որքան ջանում ես առաքինութեան համար, այնքան էլ պէտք է ջանալ ընտրողութեան համար, որոնք կարող են հաճեցնել Աստծուն: Ինչպէս, օրինակ, որեւէ ամանում, որը կեղտոտուած ու աղտեղուած է, թէկուզ ցանկալի կերակուր դնեն, ոչ ոք չի կարող ճաշակել, իսկ երբ ամանը սրբուած ու մաքրուած է, նրա մէջ թէկուզ փոքր-ինչ կերակուր դնեն, ախորժելով կ՚ընդունեն, այսպէս եւ քո աղօթքն ու արտասուքը կերակուր են Աստուծոյ համար. հոգիդ մաքրի՛ր աղտից, այնժամ, ինչպէս ասում է մարգարէն, «Դու դեռ չաղօթած, կասի՝ ահա՛ ես» [Ես. ԾԸ 9]: Իսկ եթէ չես զգուշանում յանցանքներից, անզգոյշ ես շատախօսելու, բամբասելու, բարկանալու, ատելու, տրտնջալու, շոգմոգելու, հպարտանալու մէջ, այնժամ աղօթքդ խոտան է երեւում Աստուծոյ առջեւ:

Ինչպէս օրինակ՝ աղքատ մէկը գնում է իշխանի պալատ՝ ողորմութիւն խնդրելու, եւ ծառաներից ոմանց անիծում է, ոմանց վրայ բարկանում, ոմանց նախատում: Այնժամ նրան վռնդում են պալատից՝ ասելով. «Մեզ աղաչելո՞ւ ես եկել, թէ՞ դատելու»: Այսպէս եւ դու, երբ աշխատես եւ ստանաս աղօթքի ու արտասուքի շնորհը, երկայնամիտ ու համբերող ոգի՛ ստացիր, որ վարքդ վկայի խօսքերիդ մասին: Իսկ եթէ խոնարհութեամբ խօսես, բայց վարքդ լինի հպարտ եւ ինքնահաւան, դրանից ի՞նչ օգուտ: Ինչպէս ուղղում ես երեւացող վարքդ՝ պահքն ու աղօթքը, աշխատութիւնն ու անընչութիւնը, այնպէս էլ ուղղիր անեռեւոյթ վարքդ՝ [դառնալով] հեզ, խոնարհ, անոխակալ, մարդասէր, ողորմած, համբերող, երկայնամիտ, բազմագութ, խաղաղարար, մարդկանց շահող: Եւ ինչպէս դու ես Աստծուց ողորմութիւն խնդրում, այնպէս եւ դու պէտք է ողորմած լինես, քանզի երբ աղքատը խնդրում է քեզանից, եւ դու չես ողորմում, ապա դու ես երբ մօտենաս Աստծուն՝ ողորմութիւն խնդրելու, այնժամ քեզ կ՚ասի. «Քեզ թախանձեցի, բայց Ինձ չողորմեցիր: Արդ, ինչո՞ւ պիտի ես ողորմեմ քեզ: Քանզի ինչ որ արեցիք այս փոքրիկներից մէկին, Ի՛նձ արեցիք» [Մատթ. ԻԵ 40]:

Քո բերանից զգուշացիր, ինչպէս եկեղեցուց, քանզի ինչպէս եկեղեցի չի թոյլատրւում մտցնել այլ առարկայ, բացի նրա սպասաւորութեան անօթներից, այսպէս եւ դու զգուշացիր ամէն մի տգեղ խօսքից, որպէսզի բերանիցդ դուրս չգայ, ինչպէս եւ գրուած է. «Քո բերանը բաց Աստուծոյ խօսքով» [Առակ. ԼԱ 8]: Այնժամ քո աղօթքն ու արտասուքը որպէս ընծայ կը մատուցուեն Աստուծոյ առջեւ: Բայց քանի որ մեր առաջիկայ խօսքը զղջման մասին է, թէ ինչպէ՛ս հասնենք շնորհին, արդ, երբ կամենում ես արտասուել, բայց սիրտդ քարացած է լինում, դու այսպէ՛ս ասա Աստծուն. «Ինչպէս գալիս է ձմեռը, եւ խստաշունչ սառնամանիքներից չորանում ու մեռնում են բոլոր բոյսերը եւ ծաղիկները, բայց Դո՛ւ, Ամենակալ, գարնան գալու հետ անձրեւ ես ցօղում, ջերմութիւն ուղարկում հարաւից, եւ հալչում են ձմռան սառոյցները, մեռելութիւնից դարձեալ յարութիւն են առնում ու վերստին նորոգւում ծաղիկների զանազան վայելչութիւնները եւ, հողից գոյն ստանալով, իւրաքանչիւրն արձակում է իր առանձնայատուկ բուրմունքը: Նրանք կենդանի չեն եւ չեն կարող Քեզ աղաչել՝ նորոգելու իրենց, Դու Քո կամքով ես գարուն բերում ու նորոգում: Իսկ ես, լինելով կենդանի եւ Քո պատկերով ստեղծուած, շարունակ մեղանչելով, ինձ վրայ խստաշունչ ձմեռ բերեցի, եւ թոշնեցին իմ առաքինութեան ծաղիկները: Այժմ աղաչում եմ, Բարերա՛ր, տո՛ւր ինձ հոգեւոր

դարուն, հալածի՛ր իմ մեղքերի սառոյցները, ցողի՛ր իմ սրտին ողորմութեան անձրեւը, հոգուս մէջ ուղարկի՛ր Քո երկիւղի հարաւային ջերմութիւնը, որը ջուր էր հանում վէմից, իմ սիրտը դարձրո՛ւ արտասուքի ընդունարան:

Դարձեալ՝ ինչպէս թագաւորը, տեսնելով որ տախտակի վրայ գոյներով նկարուած իր պատկերը անարգութեան մէջ է՝ հնացած ու աղտեղուած, հրամայում է վերստին նորոգել նախկինի պէս, այսպէս եւ ես, Արարի՛չ, ստեղծուած լինելով Քո պատկերով, մեղքերով հնացրի այն. այժմ նորոգի՛ր, Բարերա՛ր, ըստ Քո մեծ ողորմութեան: Ինչպէս իր տիրոջ բակում կապուած անասունը, երբ տեսնում է իր տիրոջը, բառաչում է ի լուր նրա, եւ նրա տէրը, գթալով, հրամայում է դարման տալ, այսպէս եւ ես, Տէ՛ր իմ, դեգերում եմ Քո գաւթում գթութեան ակնկալիքով, որպէսզի բացես իմ առջեւ Քո ողորմութեան դուռը: Ինչպէս աղաւնին ելաւ տապանից եւ շրջելով ջրհեղեղի համատարած ջրերի վրայ՝ իր ոտքերի համար կանգնելու տեղ չգտաւ, իսկ երբ վերադարձաւ տապան, այնժամ Նոյը գթալով ընդունեց նրան իր տեղը, այսպէս եւ ես, Արարի՛չ, ելայ Քո սուրբ Եկեղեցուց եւ, դեգերելով այս աշխարհի ալեկոծութիւնների մէջ եւ հոգուս հանգիստ չգտնելով, դարձեալ դիմում եմ Քո մարդասիրութեանը. ընդունի՛ր ինձ ըստ Քո մեծ ողորմութեան: Եւ ինչպէս երկու պարտապաններից մէկին թողեցիր հինգ հարիւրը, իսկ միւսին՝ յիսունը՝ տեսնելով, որ չեն կարող վերադարձնել [պարտքը], նոյնպէս եւ ես, Արարի՛չ, Քո պարտապանն եմ բիւր քանքարի եւ չունեմ բարի գործեր, որպէսզի հատուցեմ Քեզ. արդ, շնորհի՛ր ինձ յանցանքների թողութիւն ըստ Քո մեծ ողորմութեան: Եթէ անիրաւ դատաւորն արեց այրու դատը, ապա Դո՛ւ, արդա՛ր Դատաւոր, արա՛ իմ դատը եւ փրկի՛ր ինձ ոսոխից՝ սատանայից: Մարդը, որ Երուսաղէմից Երիքով էր իջնում, ընկաւ աւազակների ձեռքն ու վիրաւորուեց, բայց սամարացին գթալով կապեց [նրա] վէրքերն ու դարմանեց նրան, իսկ ես ընկայ սատանայի ձեռքը եւ հոգով վիրաւորուեցի. բժշկի՛ր ինձ, Արարի՛չ, ըստ Քո մարդասիրութեան:

Անառակ որդին, որ հեռացաւ հայրական խնամքից եւ գնաց խոզերի կերակուրի ետեւից, երբ վերադարձաւ, արժանի էր պատիժների, սակայն Դու, հայրական գթութիւնիցդ յաղթուած, ընդառաջ գնալով՝ համբուրեցիր եւ պատուիրեցիր զարդարել նախկին պատմուճանով, ձեռքին մատանի [դրեցիր], իսկ ոտքերին կօշիկներ [հագցրիր], մորթեցիր պարարտ [եզը], զարդարեցիր սեղանը եւ ուրախացրիր հրեշ-

տակներին: Արդ, Տէ՛ր, եւ ես, հեռանալով Քո սուրբ կամքից եւ ապրելով անառակութեամբ, վերադարձայ դէպի Քո բարերարութիւնը. Մարդասէ՛ր, ընդունի՛ր ինձ հայրենի տուն՝ ըստ Քո մեծ ողորմութեան:

Անդամալոյծին ուրիշները բերեցին Քո առջեւ, ինքը չաղաչեց Քեզ, բայց Դու ուրիշների հաւատքով ողորմեցիր նրան եւ ասացիր. «Քո մեղքերը ներուած են, վե՛ր կաց, վերցրո՛ւ քո մահիճը եւ գնա՛» [Մատթ. Թ 2, 7, Մարկ. Բ 5, 11, Ղուկ. Ե 20, 24], իսկ ես, մարմնիս մահճով վերցնելով անդամալոյծ հոգիս, բերեցի Քո առջեւ. արդ, բժշկի՛ր, Բարերա՛ր, ըստ Քո առատ ողորմութեան»:

Արդ, երբ կամենում ես աղօթել կամ արտասուել եւ բոնադատում ես բնութիւնդ, բայց զղջում առաջ չի գալիս, այսպիսի՛ խօսքեր ասա աղօթքումդ, այնժամ սիրտդ կը զղջայ, եւ կ՚արտասուես: Այսպիսի պատճառից շատ անգամ է զղջում առաջ գալիս, որը ոչ ոք չի կարող գրել, բայց մեծ ճիգե՛ր գործադրիր, եւ շնորհը քեզ կ՚ուսուցանի: Մինչեւ չտիրանաս շնորհի, չես կարող արտասուք հեղել, բացի եթէ դրա համար պատճառ կայ: Իսկ երբ, շնորհը ստանալով, վարժուես, այլեւս կարիք չես ունենայ օրինակների եւ դրդիչների, այլ շնորհից ուսանելով՝ յօժարութեամբ կ՚արտասուես: Եւ փոքր մի՛ համարիր զղջման շնորհը, այլ մեծ եռանդով ջանա՛ եւ խնդրի՛ր Աստծուց, մինչեւ ստանաս, քանզի Տէրն այսպէս ասաց. «Արքայութիւնը ներսում՝ ձեր մէջ է» [Ղուկ. ԺԷ 21]: Այսինքն՝ արտասուքը, որը ներսից բխելով՝ մաքրում է հոգին մեղքերից եւ Աստծուն խոնարհեցնում գթալու, քանզի ինչպէս յորդառատ անձրեւից [յետոյ] օդը լինում է հանդարտ ու մաքուր, այնպէս էլ արտասուքի հեղումից փարատւում է մեղքերի խաւարը: Եւ ինչպէս սաստիկ քամուց հալածւում են ամպերը եւ խափանւում անձրեւները, այսպէս եւ չար վարքից խափանւում է զղջման շնորհը: Եւ ինչպէս իւղի պակասելուց հանգչում են լապտերները, այսպէս եւ զղջման շնորհի պակասելուց քարանում է միտքը: Եւ ինչպէս առատ ձէթը պայծառացնում է լապտերը, այսպէս եւ արտասուքի շնորհը բորբոքում է սէրն առ Աստուած: Եւ ինչպէս արեգակի ճառագայթներից հալչում են ձմռան սառոյցները, այսպէս եւ արտասուքից հալչում են մեղքի սառոյցները: Եւ ինչպէս ցօղից զուարթանում է բոյսը, այսպէս եւ հոգին զուարթանում է արտասուքից: Եւ ինչպէս ջուրն աճեցնում է տունկերը, այսպէս եւ արտասուքը զօրացնում է Հոգու շնորհը: Եւ ինչպէս ոսկին, մտնելով բովի մէջ, առաւել է մաքրւում, այսպէս եւ հոգին, ընդունելով արտասուքի շնորհը, առաւել է լուսաւորւում: Եւ ինչպէս

անձրեւները կակղեցնում են չորացած հողը, եւ կրակը՝ երկաթը, այսպէս եւ ջերմ արտասուքը, վերստին նորոգուելով, լուսաւորում է հոգին: Եւ ինչպէս կրակի մէջ մտած երկաթը կայծեր է արձակում, այսպէս եւ արտասուքի շնորհը բորբոքում է սէրն առ Աստուած: Եւ ինչպէս մութ գիշերով վառուած լոյսը աչքերը դարձնում է տեսնող, այնպէս եւ արտասուքը սրատես եւ նրբիմաց է դարձնում հոգու աչքերը: Եւ ինչպէս խունկն անուշահոտ է, բայց առաւել անուշահոտութիւն է բուրում այն ժամանակ, երբ մերձենում է կրակին, այսպէս եւ աղօթքն աւելի լաւ է, երբ արտասուքով է մատուցւում: Եւ ինչպէս նետը, ձեռքից թռչելով, վիրաւորում է թշնամուն, այսպէս եւ արտասուքը, աչքերից ցողուելով, վիրաւորում է սատանային: Եւ ինչպէս մէկը քնած է խոր քնով, եւ որոտի ձայնն արթնացնում է նրան, այսպէս եւ արտասուքի շնորհը թուլութիւնից արթնացնում է հոգին: Եւ ինչպէս բարեկամների գալուստը մխիթարում է սգաւորներին, այսպէս եւ արտասուքի շնորհը մխիթարում է տրտմած հոգին ու մեղքերի համար վհատուածներին: Եւ ինչպէս ջուրը մարում է կրակը, այնպէս արտասուքը մարում է մեղքի զօրութիւնը: Եւ ինչպէս եղէգն այրւում է սաստիկ կրակից, այնպէս մեղքի փշերն այրւում են արտասուքի զօրութիւնից: Եւ ինչպէս սրից խոցուած մարմինը բժշկւում է դեղն ընդունելով, այսպէս եւ հոգու վէրքերը բժշկւում են արտասուքի զօրութեամբ: Եւ ինչպէս փոշին քշւում է սաստիկ քամուց, այնպէս արտասուքի միջոցով հալածւում է մեղքը: Եւ ինչպէս անջրդի հողը բուսեցնում է այրման ենթակայ փուշ ու տատասկ, այսպէս եւ անզեղջ միտքը բխեցնում է ախտերի բազմութիւն: Եւ ինչպէս ջրարբի արտն աճեցնում է զանազան պտուղներ ու ծաղիկներ, այսպէս եւ հոգին, որն արտասուքի շնորհ ունի, բազմաթիւ առաքինութիւններ է աճեցնում: Եւ ինչպէս մոմը հալչում է կրակից, այնպէս մեղքը հալչում է արտասուքի ներգործութիւնից: Եւ ինչպէս հարաւի ջերմութիւնը ձմեռը վերածում է գարնան, այնպէս արտասուախառն աղօթքը հալեցնում է մեղքերի ձմեռը: Եւ ինչպէս գիշերուայ խաւարը հալածւում է արեգակի ճառագայթներից, այնպէս մեղքերի խոր մթութիւնը փարատւում է արտասուքի ներգործութիւնից: Եւ ինչպէս ծառը, ընդունելով ջրի զօրութիւնը, տարածում է արմատները եւ, հողի մէջ ամրանալով, հաստատուն է մնում սաստիկ մրրիկների դէմ, այսպէս եւ հոգին, ընդունելով արտասուքը, հաստատւում ու զօրանում է ընդդէմ ալեկոծ խորհուրդների: Եւ ինչպէս սառը ջուրը ամռան տօթին զօրացնում է ծարաւից տոչորուողին, այնպէս արտասուախառն աղօթքը զօրացնում է մեղքերով ծանրաբեռնուած հոգին: Եւ ինչպէս պարտուած թշնամին փախչում է հզօր մարտիկներից, այսպէս եւ մեր ոսոխը՝ սատանան, հալածւում է աղօթքի ու արտասուքի ներգործութիւնից: Եւ ինչպէս բարեկամների աւետիսն ուրախացնում է սիրտը, այսպէս եւ Աստուծոյ առջեւ արտասուքը մշտնջենաւոր ուրախութիւն է տալիս հոգուն: Եւ ինչպէս աղը համեմիչ է [ընդդէմ] նեխութեան, այսպէս եւ երկրաւոր զբաղումներից խաւարած խորհուրդները համեմւում ու սրբւում են երկարատեւ ու արտասուալից աղօթքներով: Եւ ինչպէս ամռան տօթ օրն աղեկիզուածը, երբ ջուրն առնում ցողում է դէմքին, առոյգանում է ու թօթափում յիմարութիւնը, այսպէս եւ մեղքերի մէջ շաղախուած հոգին ընկնում է ու յիմարանում, ինչպէս գրուած է. «Մեղքերով բռնուած հոգիները նաեւ անմտանում են, բայց ստանալով զղջման ու արտասուքի շնորհը՝ առոյգանում, եւ յիմարութիւնը թօթափւում է»[3]: Եւ ինչպէս անուշահոտ ծաղիկն ուրախացնում է քիմքը, այնպէս տրտմած ու վհատուած հոգին ուրախանում է արտասուքի ներգործութիւնից: Եւ ինչպէս պարիսպը քաղաքի ամրութիւնն է, այսպէս եւ արտասուալից աղօթքը հոգին պարսպում է սատանայի նետերից: Եւ ինչպէս օգնականից զրկուած ու թշնամիներից հալածուած մէկն ուրախանում է օգնականի յայտնուելով, այնպէս դեւերից յաղթուած ու խորհուրդներից ընկճուած հոգին քաջալերւում եւ ուրախանում է արտասուքի ներգործութեամբ: Արդ, թէեւ չունեմ զղջման ու արտասուքի շնորհ, սակայն, ըստ ներքին մարդու, ցանկանում ու փափագում եմ ստանալ այն, դրա համար յաճախ արեցի դրա գովեստը, որովհետեւ ոչինչ այնպէս սիրելի չէ Աստծուն, ինչպէս սուրբ արտասուքը: Քանզի ովքեր զրկուեցին Աստուծոյ բարեհաճութիւնից, [դարձեալ] վերականգնուեցին արտասուքի միջոցով, ինչպէս Դաւիթը պոռնկութիւնից ու սպանութիւնից յետոյ սրբուեց արտասուքի միջոցով, որ ամէն գիշեր լաց էր լինում իր մահճում, որի համար Աստուած ասաց. «Կը պահպանեմ Երուսաղէմ քաղաքն իմ Դաւիթ ծառայի համար» [Դ Թագ. ԺԹ 34], արտասուքի համար երանելի Դաւիթը դարձեալ արժանացաւ մարգարէութեան [շնորհի]: Նոյնպէս եւ Պետրոսն ուրացութիւնից յետոյ դուրս ելաւ ու դառնապէս լաց եղաւ, եւ [նրա] առաքելական շնորհը դարձեալ մնաց: Պոռնիկը Սիմոնի տանը, արտա-

3 Վկայակոչութեան աղբիւրը յստակ չէ:

սուքով թրջելով Տիրոջ սուրբ գարշապարները, մեղքերի թողութիւն ստացաւ: Նկատի չունեմ այն արտասուքը, որը դիպուածով՝ ըստ պատահման է լինում, այլ այն, որ մեծ ջանքով ստանում է շնորհը եւ ինքնին գործադրում: Քանզի մարգարէն չասաց, թէ՝ մէկ կամ երկու անգամ լաց կը լինեմ, այլ՝ ամէն գիշեր՝ մահճումս: Նաեւ քիչ արտասուքն է բարի եւ փրկութեան պատճառ, սակայն ո՛չ ինչպէս այն, որը յարատեւ է եւ շնորհ ստանալու [պատճառ]: Իսկ եթէ կամենում ես, որ զղջման շնորհը յարատեւի քո մէջ, զգուշացի՛ր անօգուտ զբաղումներից, որպէսզի որեւէ պատճառով շնորհը չմարի, ինչպէս ասում է առաքեալը. «Մի՛ մարէք շնորհի Հոգին» [Ա Թես. Ե 19]: Եւ մի՛ սովորիր օրէցօր յետաձգել, այլ, ինչպէս պարտք, ժամանա՛կ յատկացրու արտասուքին: Իսկ երբ միտքդ քարացած լինի, եւ կամենաս զղջում առաջ բերել, դու ինքդ քեզ, որպէս ուրիշ մէկին, ահաբեկի՛ր՝ ասելով. «Ձեռ յիշում փողի ահեղ հնչումը եւ հրեշտակապետի ահաւոր ձայնը, ծովացած հրի բորբոքումն ու տարածումը ամբողջ տիեզերքով մէկ, արդարների բարձրացումը լուսեղէն ամպերով եւ մեղաւորների մնալը խաւարամած կորստեան մէջ, ամբողջ տիեզերքի հաւաքուելն ու խօսքերի եւ գործերի հաշիւը տալը. ահեղ ու վճռորոշ Օրը, որ մեծ ու երեւելի օր է, երբ կը դատուեն զատուածներն ու բաժանուածները, եւ յայտնի կը դառնան քաջ նահատակներն ու առաքինիները, եւ ամէն ժամ Աստուծոյ հետ կը լինեն»: Արդար դատաստանն աներեւոյթ է, միայն գրուած է, բայց մարդկանցից ծածուկ է. պէտք է շարունակ յիշել եւ աչքի առջեւ ունենալ, որպէսզի միտքը զարհուրի:

Սա՛ դարձրու օրինակ. բերքահաւաքի սկզբում[4] աղքատներն ինչպէ՞ս են գնում արտերն ու կալերը, այգիներն ու հնձանները եւ ողորմութիւն խնդրում, քանզի մարդիկ այն ժամանակ են առաւել ողորմութիւն անում, երբ պտուղը դեռ այգում է, իսկ գինին՝ հնձանում: Իսկ երբ արդէն հաւաքուած է, հաշուուած ու կնքուած, այնժամ, թէեւ ողորմութիւն անում են, սակայն դժուարութեամբ: Դա օրինակ է այս կեանքի. քանի դեռ ողջ ես եւ լուծարուած չէ արարածներիս ծառայութիւնը, կարող ես թախանձել եւ ստանալ ողորմութիւն, իսկ երբ դատավճիռը կայացուի եւ առագաստի դուռը փակուի, այլեւս ողորմութիւն չի լինելու, այլ Նրա առջեւ լինելու են իւրաքանչիւրի վարձն ու գործերը: Դրա համար է առաքեալն ասում. «Ուրեմն համարձակութեամբ մօտենանք Նրա շնորհի գահի առջեւ եւ ողորմութիւն խնդրենք պատեհ ժամանակ» [Եբր. Դ 16]: Այստե՛ղ է շնորհի գահը. եթէ մօտենաս եւ խնդրես, կը ստանաս ողորմութիւն, քանզի պատեհ ժամանակ է, իսկ այնտեղ շնորհի գահ չէ, այլ դատաստանի. թէկուզ խնդրես, ողորմութիւն չես ստանայ, քանզի պատեհ ժամանակում չէ: Իսկ այս կեանքում ո՞վ է աւելի աղքատ, քան սարեփթացի այրին, որ մի բուռ ալիւր ունէր. նոյնիսկ նա՛ ողորմութիւն արեց եւ կերակրեց Եղիային: Իսկ բազմագութ Աբրահամը, որ բարեխօսում էր սոդոմացիների փրկութեան համար, չէր բարեխօսում հարուստի համար, որը նրանից մի կաթիլ ջուր էր աղաչում: Ուստի եւ դու, քանի դեռ այս օրն առջեւդ է, տղամարդու պէս ձգի՛ր գօտկատեղդ, քանի դեռ նաւաբեկութիւնից [խոյս տալով]՝ յաջողութեամբ նաւում ես դէպի ցամաք, եւ ա՛յժմ աշխատիր ստանալ բոլոր առաքինութիւններն ու ջանա ձեռք բերել զղջման շնորհը: Արտասուքի շնորհը նրանով է պատուական, որ ամէն ժամանակ չես կարող ողորմութիւն անել կամ օգնել եղբայրներին, իսկ արտասուել կարող ես, քանզի արտասուքի նիւթը քո մէջ է եւ դրսից չի ներմուծւում:

Երբ աղօթում ես, խորհուրդներիդ թոյլ մի՛ տուր այստեղ-այնտեղ գնալ, այլ յիշի՛ր, թէ Ում առջեւ ես կանգնած. երկնաւոր թագաւոր Քրիստոս Աստուծոյ, որ մէկ ակնթարթում ստեղծեց երկինքն ու երկիրը, որի մասին Սողոմոնն ասում է. «Ինչպէս կշեռքի նժարների սլաքը կամ ցօղի մի կաթիլը, որ առաւօտեան ընկնում է հողին, այնպէս է ամբողջ աշխարհը Տիրոջ աչքում» [Իմաստ. ԺԱ 23]: Երբ այս ամէնը յիշես, միտքդ կը զարհուրի, եւ աղօթքդ երկիւղով կը մատուցես, իսկ երբ միտքդ քարացած լինի եւ չգայ դէպի զղջում, այսպէ՛ս ասա. «Ելի՛ր, հիւսիսի՛ [քամի], եւ ե՛կ, հարաւի՛ [քամի], փչի՛ր իմ հոգու պարտէզի վրայ [Երգ Դ 16], հալեցրո՛ւ իմ մեղքերի սառոյցը: Տէ՛ր իմ, տո՛ւր ինձ հոգեւոր գարուն, Դո՛ւ, որ վէմից ջուր բխեցրիր, իմ սիրտն արտասուքի ընդունարա՛ն դարձրու»: Եւ ասա՛ քո մտքում. «Ձե՞ս տեսնում աշխարհականներին՝ ինչպէ՛ս են ջանում ու մշակում իւրաքանչիւրն [իր] անդաստանը. իսկ դու հոգուդ անդաստանը թողել ես անմշակ, եկաւ առաւօտը, եւ չաշխատեցի, հասաւ երեկոն, եւ գնում եմ ունայնաձեռն: Չգիտե՞ս, որ մարմինդ մի անօթ է, քանզի այսօրն անցնում է ինչպէս երազ, եւ վաղը՝ ինչպէս երեկոյի ստուեր: Ցիշի՛ր

4 Բնագրի «ի ժամանակի նորամտին» արտայայտութիւնը թարգմանուած է «բերքահաւաքի սկզբում». «նորամուտ» բառի այս ստուգաբանութիւնը ՆԲՀԼ-ն չունի:

այն, որ երէկ մեզ հետ էին մեր եղբայրները եւ այսօր [այլեւս] չեն երեւում, այլ գնացին իրենց եւ մեր Տիրոջ մօտ»:

Եթէ շարունակ այս խորհես, միտքդ կը վարժուի զղջմանը, եւ շնորհը կը հաստատուի քո մէջ: Իսկ եթէ ասես, թէ երկրաւոր բաներից եմ օրինակ բերում, դատած կը լինես, քանզի մենք նոյնպէս մարմնաւոր ենք, եւ կարելի՛ է երեւացող օրինակով առակախօսել, ինչպէս Տէրն էր երկնաւորը սահմանում երկրաւորներով եւ մեզ գթալով [խօսում] նուաստ օրինակներով, ինչպէս ասում է Աւետարանը. «Աստուծոյ արքայութիւնը նման է խմորի» [Ղուկ. ԺԳ 21]: Դարձեալ՝ «Երկնքի արքայութիւնը նման է տասը կոյսերի» [Մատթ ԻԵ 1], կամ՝ ագարակում թաքնուած գանձի, կամ՝ ծով նետուած ուռկանի: Իսկ առաքեալն ասում է. «Երկնաւորները երկրաւորներով են ճանաչւում» [Հռոմ. Ա 20]: Զղջման շնորհի մասին պատմեցինք ըստ քո խնդրանքի, քանի որ արտասուքը վկայուած է ամբողջ Սուրբ Գրքով, ինչպէս ասում է մարգարէն. «Ամէն գիշեր լաց եղայ իմ մահճում եւ արտասուքովս թրջեցի իմ անկողինը» [Սաղմ. Զ 7]: «Գիշեր-ցերեկ կերակրուեցի իմ արտասուքով» [Սաղմ. ԽԱ 4]: Իսկ Երեմիան ասում է. «Ո՞վ իմ գլուխը կը դարձնէր ջրերի շտեմարան եւ իմ աչքերը՝ արտասուքի աղբիւրներ, որպէսզի լաց լինէի գիշեր-ցերեկ» [Երեմ. Թ 1]: Իսկ Եսային ասում է. «Թողէք, որ լաց լինեմ, եւ մի՛ ստիպէք ինձ մխիթարուել» [Ես. ԻԲ 4]: Իսկ Եզեկիէլին Աստուած ասաց. «Սգոյ զգե՛ստ հագիր եւ գնա՛, նստի՛ր ժողովրդի առջեւ ու հառաչի՛ր: Եթէ քեզ հարցնեն, թէ ինչո՞ւ ես այդպէս լալիս, կը պատասխանես՝ բօթ լսեցի, որ վրայ է հասնելու Տիրոջ բարկութիւնը: Թերեւս քեզ նախանձելով լաց լինեն Իմ առջեւ, եւ ողորմեմ նրանց» [Եզեկ. ԻԱ 6, 7]: Աստուած մարգարէին ու ժողովրդին յորդորում էր արտասուել: Իսկ Յովէլ մարգարէն ասում է. «Ի՛նձ դարձէք պահքով ու աղօթքով, լացով ու կոծով, պատռեցէք ձեր սրտե՛րը եւ ո՛չ թէ ձեր հանդերձները» [Յվլ. Բ 12]: Դարձեալ՝ ասում է. «Սգացէ՛ք, քահանանե՛ր, քուրձո՛վ ննջեցէք, սպասաւորնե՛ր» [Յվլ. Ա 9]: Նոյն Ինքը Տէրն ասում է. «Երանի՛ նրանց, որ այժմ լալիս են, քանզի պիտի ծիծաղեն» [Ղուկ. Զ 21], եւ՝ «Երանի՛ սգաւորներին, քանզի նրանք պիտի մխիթարուեն» [Մատթ. Ե 4]: Իսկ առաքեալն ասում է. «Լացով եմ խօսում Քրիստոսի խաչի թշնամիների մասին» [Փլպ. Գ 18]: Դարձեալ ասում է, թէ՝ «Բազմաթիւ վշտերի ու սրտի նեղութեան պատճառով գրեցի ձեզ յորդ արտասուքով» [Փլպ. Գ 18]: Դարձեալ, թէ՝ «Ամբողջ երկու

տարի[5] չդադարեցի արտասուքով խրատել ձեզանից իւրաքանչիւրին» [Գործ. Ի 31]: Իսկ Տիմոթէոսին գրում է. «Ցիշեցի քո արտասուքը, որպէսզի խնդութեամբ լցուեմ» [Բ Տիմոթ. Ա 4]:

Վարդապետների կողմից նոյնպէս բազմաթիւ վկայութիւններ կան արտասուքի մասին, ինչպէս ասում է Աստուածաբանը. «Մի՛ արհամարհիր արտասուքը. դո՛ւ, որ առատ արտասուքի արժանի ախտացար եւ ապա ողորմութիւն գտար»[6]: Իսկ Բարսեղն ասում է. «Արտասուքն ու ապաշխարութիւնը մկրտութեանը հաւասար պայծառացնում են անմաքուր հոգիները»[7]: Եփրեմն ասում է. «Երբ մարդ խօսում է Աստուծոյ հետ սուրբ աղօթքով, այդպիսին երկրի վրայ չէ, այլ նրանից վեր՝ երկնքում. դրանից քաղցրանում է, դրանից լուսաւորւում ու լցւում աստուածային լոյսով»[8]: Իսկ Ոսկեբերանն ասում է. «Զկայ ոչինչ Աստծուն այնքան սիրելի, որքան արտասուքը, եւ ինչպէս ջրով ու Հոգով, այնպէս էլ արտասուքի ու խոստովանութեան միջոցով դարձեալ սրբւում ենք, եթէ ցուցադրաբար կամ պարծենալով չանենք»[9]: Դարձեալ՝ Եւագրոն ասում է. «Երբ պատերազմողի խորհուրդները քեզ վրայ գան, դու արտասուքի տէգն ուղղիր թշնամու դէմ, եւ այդ աւազակապետը զարհուրած կը փախչի քեզանից»[10]: Իսկ երանելի Նեղոսն ասում է. «Աղօթքը համարիր զէնք, պահքը՝ ամուր պարիսպ, իսկ արտասուքը՝ աւազան»[11]:

Ուստի եւ դու մի՛ ծուլացիր հասնել շնորհին, որպէսզի արժանի լինես հասնելու խոստացուած բարիքներին ի Քրիստոս Յիսուս՝ ի Տէր մեր, Որին փա՛ռք յաւիտեանս. ամէն:

Գրաբարից փոխադրեց
Արա սարկաւագ Նալչաջեանը

---

5 Բնագրում «երկեամ» (երկու տարի): Աստուածաշնչի հայկական բնագրերը տալիս են նաեւ «երեամ» (երեք տարի) տարբերակը, որը համապատասխանում է յունարէն բնագրին: Հաւանաբար, սուրբգրային այս տարընթերցումը գրչական սխալի հետեւանքով ընդհանրացած երեւոյթ է:

6 Վկայակոչութեան աղբիւրը հնարաւոր չեղաւ պարզել:

7 Նոյն

8 Նոյն

9 Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդիանուպոլսի յԱւետարանագիրն Մատթէոս, Վենետիկ, էջ 90-91

10 Սրբոյ հօրն Եւագրի Պոնտացւոյ վարք եւ մատենագրութիւնք, Վենետիկ, 1907, էջ 75

11 Վարք սրբոց հարանց եւ քաղաքավարութիւնք նոցին, հ. Բ, Վենետիկ, 1855, էջ 694

ԱՆԱՆԻԱ ՆԱՐԵԿԱՑԻ

ՀԱՄԲԵՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Երբ մարդն Աստծուց իմաստութեան եւ երկիւղի շնորհ է ստանում, նա ընկերոջը տրտմեցնող խօսքեր չի ուղղում եւ նրա տրտմութեան պատճառը չի դառնում: Սողոմոն իմաստունն ասում է. «Իր խիստ խօսքը զսպողն իմաստուն է» [Առակ. ԺԷ 27]: Արդ, եթէ եղբայրդ մեղանչել է քո դէմ, մի՛ յիշիր անցած տրտմութիւնը, մի՛ աղաղակիր եւ յիշատակիր այն, որ մարմին չառնի, այլ համբերիր, խաղաղ ու ներողամիտ եղիր եւ կտեսնես, թէ որքան բարի կլինի քեզ համար. կլինես խաղաղարար եւ Աստուծոյ որդի, սէրը՝ հաստատուն, եւ եղբայրը քեզ բարեկամ ու օգնական կմնան, միտքդ էլ հանգիստ կառնի:

Իսկ եթէ յիշես անցեալ տրտմութիւնը եւ աղաղակես [այդ մասին], կզրկուես խաղաղարարի վարձքից եւ մեղանչած կլինես Աստուծոյ դէմ: Սիրոյ պատուիրանը խախտած եւ եղբօրը քեզ թշնամի դարձրած կլինես, նա կտրտնջայ քեզնից, կբամբասի եւ կատի քեզ, հնար կմտածի՝ չարիք գործելու եւ նենգելու: Եւ երբ եղբօրդ հետ թշնամանաս, Աստուած Իր ձեռքից [բաց] կթողնի [քեզ], քո աղօթքները խոտան կերեւան Աստուծոյ առջեւ, եւ դու սատանայի պատերազմը չես կարող կանխել: Լսի՛ր, կարո՞ղ ես այն վերացնել, քանի որ սատանան այլ կերպ չի կարող մուտք գործել մարդու մէջ, քան միմեանց նկատմամբ ատելութեան միջոցով:

Եթէ եղբօր սիրոյ մէջ հաստատուն մնաս, քեզ գործակից կլինի Աստուած, դու կյաղթես սատանային, եւ շատ չարիքներ կխափանուեն:

Երբ սրով խոցւում է մարմնի անդամներից մէկը, վրան դեղ դնելով՝ բուժում են այն: Սակայն եթէ անփոյթ են գտնւում վէրքի նկատմամբ, այն թարախակալում է, եւ ցաւը տարածւում է մարմնի բոլոր անդամների մէջ: Այսպէս է նաեւ եղբօրը տրտմեցնելը. եթէ խաղաղութիւն անես, միտքդ շուտափոյթ կբժշկուի, սէրը հաստատուն կմնայ, իսկ եթէ շատացնես խօսքերը եւ կարծես, թէ խաղաղուել ես, այդ խօսքերը շատերի մէջ կտարածուեն, տրտմութիւն կբերեն, որն էլ թշնամութիւն կծնի:

Ինչպէս երբ մարդ գազանի է հանդիպում [եւ հանդարտ է մնում], գազանը մոնչալով անցնում է, սակայն երբ գրգռում է նրան, դառնում եւ կծում է մարդուն, այդպէս էլ եղբօր տրտմութիւնն է. եթէ խաղաղեցնես, խաղաղութեամբ կանցնի ժամը, դու էլ հանգիստ կմնաս: Սողոմոնն ասում է. «Զայրացկոտ մարդը կռիւ է յարուցում, բայց համբերատարը խաղաղեցնում է այն» [Առակ. ԺԵ 18]: Այս պատճառով էլ Աստուած մարդուն իմաստուն է արարել, որ իմանայ իւրաքանչիւրի բնութիւնն ու պատրաստուի: Քանի որ եթէ վայրի գազանին վերաբերուես որպէս գառի, նա խածող բնութիւն ունի, քեզ կվիրաւորի: Եթէ հրի մէջ մտնես այնպէս, ինչպէս ցօղի մէջ, այն կիզող բնութիւն ունի, քեզ կայրի: Իմացի՛ր, որ այդպիսին է չար մարդու բնութիւնը, եւ ոչ ոքի քեզ թշնամի մի՛ դարձրու: Տէրն ասում է. «Չար մարդն իր սրտի գանձից է հանում չարիքը, քանի որ նրա սիրտը՝ աղեղի եւ լեզուն նետի նման են. երբ առիթ ես տալիս, նա քաշում է նետը եւ վիրաւորում քեզ»: Իսկ խօսքերն առաւել չար վէրքեր են հասցնում, քան նետը: Այս մասին Սողոմոնն ասում է. «Մարդիկ կան, որ իրենց խօսքով խոցում են թրի պէս» [Առակ. ԺԲ 18], իսկ մարգարէն ասում է. «Օձի պէս սրեցին իրենց լեզուները, եւ նրանց շրթների տակ իժի թոյն կայ» [Սաղմ. ՃԼԹ 4]:

Շատ մարդիկ էլ կան, որոնց դու սիրում ես, իսկ նրանք նենգում եւ չարիք են գործում, հապա եթէ առիթ տաս, որքա՜ն առաւել չարիք կպատճառեն, ինչպէս դարձեալ ասում է Սողոմոնը. «Երկաթը երկաթ է խարտում, մարդն էլ՝ ընկերոջ երեսը» [Առակ. ԻԷ 17]:

Եւ որ կեանքն ու մահը լեզուի ձեռքում են, իմացիր այն բանից, որ Կայէնը սպանեց Աբէլին, եւ Յովսէփի եղբայրները վաճառեցին Յովսէփին: Որքան Դաւիթը բարիք էր գործում Սաւուղի նկատմամբ, Սաւուղն այնքան առաւել էր հալածում նրան: Եւ որքան էլ Ինքը՝ Տէրը, բարիք էր գործում հրեաների նկատմամբ, հանում էր դեւերին, բժշկում էր հիւանդներին, յարութիւն էր տալիս մեռելներին, նրանք Նրան դիւահար եւ սամարացի էին անուանում:

Արդ, այս ամէնն իմանալով՝ բնաւ տրտմեցնող խօսք մի՛ ասա ընկերոջդ, այլ այն սիրոյ փոխարկիր, որեւէ մէկի հետ մի՛ թշնամանա եւ խաղաղութեան մէջ կմնաս: Բաւական է մեր թշնամի սատանան. քեզ ոսոխ մի՛ դարձնիր եղբօրը, որին Աստուած քեզ օգնական է շնորհել, որովհետեւ եթէ տրտմեցնես նրան, ոչ միայն նրան չարիք պատճառած, այլ նաեւ քո իսկ մարմնի անդամը ճեղքած եւ քեզ թշնամի

դարձրած կլինես, քանի որ նա կխորհի քեզ նենգելու, ատելու, մատնելու, բամբասելու եւ քեզնից տրտնջալու մասին:

Իսկ եթէ սիրես եղբօրը, բարիք գործես, համբերես բարկութեանը, ոչ միայն բարիք արած կլինես նրան, այլ նաեւ քեզ, քանի որ նա կօրհնի քեզ, կգոհանայ քեզնից եւ պարգեւներ կտայ: Իսկ երբ նեղութեան մէջ ընկնես, կջանայ քեզ ազատել նեղութիւնից, հանապազ կաղօթի քեզ համար եւ կմխիթարի քեզ: Եւ Աստուած առաւել օգնական կլինի քեզ, որ եղբօր հանդէպ սէրդ հաստատուն պահեցիր: Այս պատճառով էլ պատուիրանի գլուխը սէրն է, որը խափանում է բոլոր տրտմութիւնները:

Արդ, երբ եղբայրդ քո դէմ մեղանչի, դու համբերիր, խաղաղուիր, նոյն պահին չարը խափանիր, եւ օրը խաղաղութեամբ կանցնի, բազում վշտերից կփրկուես: Ինչ որ եղբօրն անես՝ թէ՛ բարի եւ թէ՛ չար, քո անձին ես անում, եւ Աստծուց այն կգտնես:

Արդ, այս է իմաստութեան սկիզբը. բնաւ թշնամութիւն չանել որեւէ մէկին: Առաքեալն ասում է. «Եթէ հնարաւոր է, բոլոր մարդկանց հետ խաղաղութիւն հաստատէք» [Բ Կոր. ԺԳ 11], եւ դարձեալ՝ «Սէրն ընկերոջը չար բան չի անում» [Հռոմ. ԺԳ 10], այս պատճառով էլ հնա՛ր գտիր եւ խաղաղութի՛ւն գնիր: Ինչպէս լեռան վրայից պոկուած քարը մենակ չի գլորւում, այլ բազում քարեր է իր հետ գլորում, այնպէս էլ սակաւ խօսքերից բազում եւ անչափ տրտմութիւններ են ծնւում:

Սակայն մի՛ կարծիր, թէ միայն այդ է տրտմութիւնը: Երբ դու խօսում ես, չարն աճում, արմատներ է ձգում, տարածւում է շատերի մէջ, ժամանակ է անցնում, եւ անչափ տրտմութիւն է հասցնում քեզ: Մի՛ ասա, թէ՝ «Ես մեծ եմ եւ հարուստ, իսկ նա՝ աղքատ եւ անարգ, ինձ ի՞նչ կարող է անել», քանի որ ամէն ոք կարող է չարիք պատճառել: Եթէ ոչինչ էլ չկարողանայ անել, կանիծի, Աստծուն կբողոքի, մարդկանց մօտ կբամբասի. այս պատճառով էլ դու միշտ խաղաղութիւն հաստատիր: Եւ եթէ մէկին պէտք է Աստուծոյ համար խրատել եւ ուղիղ ճանապարհի բերել, քաղցրութեա՛մբ խրատիր եւ սիրո՛վ շահիր, ինչպէս ասում է առաքեալը. «Հեզութեա՛մբ խրատիր հակառակորդին» [Գաղ. Զ 1]: Ինչպէս կակրը, ինչ որ գտնում է, լափում է, իսկ երբ ոչինչ չի լինում, արագ հանգչում է, այդպէս էլ եղբօրից տրտմելը. եթէ նիւթ տաս շատ խօսքերով, չարն այն աւելի կբորբոքի, եւ ատելութիւն կծնուի: Այս մասին Սողոմոնն ասում է. «Եթէ ձգձգես

խօսքը, դատաստան եւ կռիւ դուրս կգայ» [Առակ. Լ 33]: Իսկ առաքեալն ասում է. «Տիրոջ ծառան պէտք չէ, որ կռիւ անի, այլ բոլորի հանդէպ լինի հեզահամբոյր» [Բ Տիմ. Բ 24]: Ինչպէս անձրեւը, ի վերուստ քիչ-քիչ իջնելով, ապա միախառնուելով շատանում եւ հեղեղ է առաջացնում, այնպէս էլ, երբ տրտմեցնող խօսքեր ես ուղղում եղբօրդ, այդ խօսքերը միախառնուելով բարկութիւն են ծնում:

Արդ, ով Աստուծոյ շնորհ ունի, նա ուրիշի տրտմութիւնը սիրոյ կփոխարկի, ուր մնաց թէ իրենը: Մարգարէն ասում է. «Դադարի՛ր բարկանալուց, հանդարտուի՛ր սրտմտութիւնից» [Սաղմ. ԼԶ 7]: Սողոմոնն ասում է. «Որդեա՛կ, եթէ բարի լինես, պիտի լինես քեզ համար եւ քո ընկերների, եթէ անզգամ լինես, միայն դու չարիք պիտի գտնես» [Առակ. Թ 12]: Եսային ասում է. «Եթէ քո բերանով բարկութեան ոչ մի խօսք չասես, քեզ կտայ քո Հայր Յակոբի ժառանգութիւնը» [Ես. ԾԸ 14]: Ամովս մարգարէն ասում է. «Սրով ընկան նրանց հայրերն ու իշխանները նրանց լեզուի անսանձ խստութեան պատճառով» [Օսէէ, Է 16]: Ինքը Տէրն ասում է. «Ով բարկանայ իր երբօր վրայ եւ նրան ասի յիմար կամ մորոս, ենթակայ կլինի գեհենի կրակին» [Մատթ. Ե 22]: Առաքեալն ասում է. «Ամէն դառնութիւն, բարկութիւն, զայրոյթ, աղաղակ եւ հայհոյութիւն թող վերանան ձեզնից՝ իրենց չարութեամբ հանդերձ» [Եփես. Դ 31]: Եւ Յակոբն իր թղթում ասում է. «Որովհետեւ մարդու բարկութիւնը Աստուծոյ արդարութիւնը չի կատարում» [Յակ. Ա 20]:

Արդ, սա իմանալով՝ դու տրտմութիւնը սիրոյ փոխարկիր, ինչպէս եւ մարգարէն է ասում. «Խաղաղութիւն փնտռիր եւ դրան հետեւիր» [Սաղմ. ԼԳ 33]:

Եւ Քրիստոսին՝ մեր Աստծուն, փառք յաւիտենից յաւիտեանս. ամէն:

Գրաբարից փոխադրեց
Մարթա Արաբեանը

ՊՕՂՈՍ ՏԱՐՕՆԱՑՈՒ «ՀԱՒԱՏՔԻ ԽՕՍՔՆ ԸՆԴՈՒՄ ՀԵՐՁՈՒԱԾՈՂՆԵՐԻ»

Պողոս Տարօնացին ԺԱ-ԺԲ դդ. հայ դաւանաբանական մտքի մեծագոյն ներկայացուցիչներից մէկն է: Նրա վարքը եւ գործունէութիւնը անխզելիօրէն կապուած են Մշոյ Առաքելոց վանքի հետ, որը նրա օրօք եւ նրա ջանքերի շնորհիւ դարձաւ հայ հոգեւոր կեանքի եւ մշակոյթի գլխաւոր կենտրոններից մէկը: Իր մեծ ժամանակակցի՝ Յովհաննէս Սարկաւագ Իմաստասէրի հետ Պողոս Տարօնացին գլխաւորել է Հայ Եկեղեցու դաւանական պայքարն ընդդէմ քաղկեդոնականութեան[1]: Պողոս Տարօնացու բացառիկ հեղինակութեան մասին են վկայում նրա մասին հայ մատենագրութեան մէջ պահպանուած մեծարանքի խօսքերը՝ «մեծ իմաստասէր հայոց», «երկրորդ լուսաւորիչ Տանս հայոց», «վէմ ադամանդեայ ընդդէմ հերձուածողաց»[2] եւն:

Պողոս Տարօնացին հարուստ աստուածաբանական ժառանգութեան հեղինակ է: Մեզ են հասել բազմաթիւ դաւանական, ծիսական, կանոնագիտական, իմաստասիրական բնոյթի գործեր: Արդէն հրատարակուած, ինչպէս նաեւ Երեւանի Ս. Մեսրոպ Մաշտոցի (ՄՄ), Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց (ՍՅ) եւ Սուրբ Ղազարի (ՍՂ) ձեռագրատներում Պողոս Տարօնացու անունով յայտնի երկերի պատկերը հետեւեալն է[3]՝

ա) Պողոսի Տարօնացւոյ ընդդէմ ժողովոյն Քաղկեդոնի (համառօտ տարբերակ)

1 Լ. Մելիքսեթ-Բեկ, Պողոս Տարօնացի՝ ԺԱ-ԺԲ դարերի հայ մատենագիրը եւ թոնդրակեցի եւ ծայթ հայերը, «Էջմիածին», 1960, N 4, էջ 38

2 Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 356

3 Պողոս Տարօնացու մատենագրական ժառանգութեան պատկերը պարզելիս օգտուել ենք Հ. Մանուչարեանի «Պողոս Տարօնացի» ուսումնասիրութեան մէջ առկայ տեղեկութիւններից, որոնք համեմատել ենք ս. Մեսրոպ Մաշտոցի անուան, Սրբոց Յակոբեանց եւ Սուրբ Ղազարի մատենադարանների գրչագրերի հետ եւ յաւելել Տարօնացու անունով գտնուած նոր միաւորներ: Աղբիւրագիտական ճշգրտումների համար ներկայացուած են միաւորների սկսուածքները եւ երբեմն՝ վերջաւորութիւնները:

Սկս. «Աստուածային եւ մեծ առաքեալն Պաւղոս գրէ առ կորնթացիսն՝ ասելով. «Զիմաստութիւն խօսիմք ընդ կատարեալսդ...»[4]:

բ) Պատասխանի թղթոյն Թէոփիստեայ (ընդարձակ տարբերակ) «Գոչեաց Կաթուղիկէ Առաքելական Քրիստոսապսակ եւ հարսնացեալ սուրբ Եկեղեցի. Եբաց զծածկեալ գանձն իւր յաւիտենից. եւ փող հարեալ բարձրաքարող բարբառով...»[5]:

գ) Պողոսի Տարօնացւոյ Վասն մարդեղութեան Քրիստոսի[6]

դ) Ընդդէմ հերձուածողաց[7]

4 Բնագիրը հրատարակուել է 1688 թ. Նոր Ջուղայում, «Գիրք ժողովածոյ ընդդէմ երկաբնակաց», էջ 376-450: ՄՄ - 83 (1664), 573 (ԺԵ), 625 (ԺԷ), 774 (1651), 841 (ԺԸ), 1324 (1281), 1521 (1404) (153բ-159բ) (երկու միաւոր), 1865 (1656), 2160 (1773) - քաղուածք, 2174 (1309), 2190 (ԺԸ), 2268 (ԺԷ), 3076 (ԺԷ), 3078 (1589-1608), 3124 (1757), 3192 (1714), 4670 (1401), 4676 (ԺԴ), 4677 (ԺԵ),, 4709 (ԺԴ-1344՟), 4764 (1534), 5787 (1617), 6517(ԺԸ), 6617 (1618), 6624 (ԺԷ), 7248 (ԺԷ), 7248 (ԺԷ), 7255 (1701), 8030 (1731), 8194 (1688), 8273 (1731), 8391 (ԺԷ), 8938 (1685), 9830 (ԺԸ), ՍՅ - 775, 858 (ԺԷ), 898 (1619), 960, (1602), 1047 (ԺԷ), 1072 (1611), 1134 (1822), 1272, 1418, 1750, 1760, 1840, 1886, 2043, ՍՂ - 791 (եր. 332-355), 392 (ամբողջը), 1440 (եր. 28-58):

5 Բնագիրը լոյս է տեսել 1752 թ. Կ. Պոլսում «Թուղթ երանելւոյն Պողոսի Տարօնացւոյ յաղթող ախոյեան վարդապետի ընդդէմ Թէոփիստեայ հոռոմ փիլիսոփայի» վերնագրով: ՄՄ 731 (1345) 1ա-253ա, թերի, սկս. - «...ն ուսուցին սուրբ եկեղեցւոյ, զոր սուրբ առաք[եալն] ասաց եւ ստուգապէս ցուցանէ զանճառ միաւորութիւն Աստուծոյ ընդ մարմնոյ Իւրոյ եւ գրեաց այսպէս...». յիշատակարաններ գրչի՝ 251բ, ստացողի՝ 253ա, յետագայի (ԺԴ.)՝ 305ա: ՄՄ 1555 (1397 թ.), թերի, 292բ-317ա, սկս. - «Սուրբն Գրիգոր ասէ՝ միացաւ ի մարմնի եւ խառնեաց զմարդկութիւնս ընդ Իւրումն Աստուածութեանն...», վրջ. «...Իսկ [ի] Հօրէ Միածինն մշտնջենաւոր, մշտնջենաւորապէս ծնեալ Հոգւովն Սրբով ի Մարիամ կուսէն...»: ՄՄ 2678 (1426-1478 թթ.), թերի, 181ա-225բ, սկս. - «Գոչեաց ի Կաթողիկէ առաքելական քրիստոսապսակեալ հարսնացեալ սուրբ եկեղեցի եւ եբաց զծածկեալ զգանձս Իւր յաւիտենից...», վրջ. - «...վասն զի յառաջնորդաց ձերոց ապականեցաւ ամենայն կարգ եկեղեցւոյ Աստուծոյ, յեպիսկոպոսաց, ի քահանայից, ի կրօնաւորաց եւ ի սարկաւագաց, վասն այնորիկ յառաջագոյն պատուիրեաց Պողոս, խրատեաց եւ ասէ...»: (Ձեռագրից պակասում են 209ա, 209բ երեսները, 219 էջը կիսատ է, մեծ մասը ջնջուած է): Տե՛ս նաեւ ՄՄ - 574 (ԺԷ), 670 (ԺԸ), 671 (ԺԶ), 840 (1641), 1109 (1640), 1154 (ԺԷ), 8482 (1664, 1714), ՍՅ - 847 (1634), 898 (1619), 1072 (1611), 1547 (1393):

6 ՄՄ-714 (1303-1350)

7 ՄՄ- 6907 (ԺԵ), 3918 (1591), 9410 (ԺԹ, հատուած), 10199 (ԺԷ, հատուած), ՍՅ 1142 (271-294), ՍՂ 57, (եր. 467-486 հին համարակալումով) - ընդարձակ հարցմունք եւ պատասխանիքով:

Սկս. «Հաւատով խոստովանիմք, պաշտեմք եւ երկրպագեմք...»:

ե) Ի խորհուրդ Քառասնորդական պահոց[8]

Սկս. - «Վասն ընդարձակագոյն եւ երկար ասելոյ եւ գրելոյ զաւրինակ եւ զխորհուրդ քառասնորդաց պահոցս յառաջագոյն ասացեալ է ի բազմաց...»:

զ) Պատճառ երկրորդ շաբաթու երկուշաբաթ աւուրն, թէ ո՞րպէս երկրորդ շաբաթս հինգ աւուրցս հաւասար ունի զընթերցուածսն եւ զսաղմոսն զատ եւ ուրիշ յայլոցն շաբաթուց առ յեաւթներորդ շաբաթն հայելով (ամբողջական, լաւ պահպանուած)[9]

Սկս.- «Արդ, երկրորդս շաբաթ, յորում ծնունդն Սամուէլի պատմի յաւրինակ ծննդեանն Քրիստոսի...»:

է) Պօղոսի Տարօնացւոյ Բացայայտութիւն ժամակարգութեան աղօթից[10]

Սկս. «Ազգարարութիւն ժամուն նշանակ է հրեշտակացն լուսաւորութեան գոչման փողոցն...»:

ը) Պօղոսի Տարօնացւոյ Կարգ մեկնութեան ժամուց աղօթից[11]

Սկս. - Ա. «զմարմնաջան վաստակն եւ զհանգստեան մահիճսն [թողուլ] եւ հասանել ի տեղի աղօթիցն. այս է՝ թողուլ զհողաթաւալ եւ զմարմնական ջանս եւ համօրէն յարութեանն հասանել...», վրջ. - «..եւ յառնել խաչիւն պահպանեալ հրեշտակաց նմանութեամբ յաւրհնութիւն եւ ի գովեստ Տեառն, զարթուցեալ փառաւորել զՀայր, զՈրդի եւ զՍուրբ Հոգին, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս»:

թ) Յաղագս սրբոյ Եկեղեցւոյ կարգացոյցք[12]

Սկս. - «Երանելին Պաւղոս գրէ, եթէ ստուեր հանդերձելոց բարեացն էին աւրէնք...»:

ժ) Յաղագս հիմնարկութեան սրբոյ Եկեղեցւոյ[13]

Սկս. - «Վէմն անտաշ եւ անկոփ կանգնեալ ի մէջ խորանին...»:

Վերագրելի գործեր

ՄՄ- 3276 գրչագիրը պարունակում է գործեր Պօղոս Վերծանողի անունով՝

8 ՄՄ - 1521 (1404թ.), 186բ-189ա: Տե՛ս նաեւ՝ 3276 (ԺԷ), 4869 (1482):
9 ՄՄ - 1521 (1404թ.), 189ա-189բ: Տե՛ս նաեւ՝ 3276 (ԺԷ), 4869 (1482):
10 ՄՄ - 1979 (ԺԴ, 401ա-411բ), ՍՑ 1272 (226-252):
11 2018 (1621թ.), 368ա-376ա (ամբողջական, լաւ պահպանուած):
12 ՍՑՁ 1272 (252-257):
13 ՍՑՁ 1272 (257-256):

59բ. Յառաջաբանութիւն Պաւղոսի, զոր [յ]Եփթաղի ցանկէ արարեալ

Սկս. - «Աբիացիքն հերձուած ասեն, թէ մարգարէից բանքն ի վկայութիւն չէ ընդունելի...»:

Նոյն երեսի վրայ՝ Պատճառ սահմանաց գրոց

Սկս.- «Մեծն Դաւիթ եւ Եզնակ Կողբացի չոգան ի յԱթէնս...»:

61ա. Վասն կազմութեան խնկոց

Սկս. - «Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ...»:

61բ. Աստղաբաշխական երկրաչափութիւնք

Սկս.- «Ի հարաւային ծայրէն մինչեւ ցհիւսիսային շրջանակն...»

62ա. «Գիտութիւն հպարտացուցանէ, այլ սէր շինէ»

Սկս. - «Այս է՝ գիտութիւն առանց սիրոյ հպարտացուցանէ...»

Զանազան միաւորներ՝ ՍՂ 57 գրչագրի (եր. 486-505) «Ընդդէմ հերձուածողաց» բնագրից անմիջապէս յետոյ:

ՍՂՁ 643, եր. 118-124- Վերլուծութիւն կարգաց Եկեղեցւոյ

Սկս. «Որք զթագս արքայական...»:

***

Պօղոս Տարօնացու «Բան հաւատոյ ընդդէմ հերձուածողաց» հակաճառական բնոյթի երկը, որի բնագիրն ընթերցողին ներկայացւում է առաջին անգամ, հայ դաւանաբանական գրականութեան կարեւոր աղբիւրներից է: Բնականաբար երկի հիմնական թեման քրիստոսաբանութիւնն է: Թէպէտ յստակ չէ, թէ որն է երկի ստեղծման դրդապատճառը, եւ «հերձուածողներ» ասելով՝ հեղինակը ում նկատի ունի, այսուհանդերձ երկն ունի ակնյայտ հակաքաղկեդոնական ուղղուածութիւն: Ամենայն հաւանականութեամբ այս երկասիրութիւնը, ինչպէս նաեւ նրա «Պատասխանի Թղթոյն Թէոփիստեայ» (համառօտ եւ ընդարձակ) գործը, արդիւնք են լարուած հակաքաղկեդոնական պայքարի:

Երկի առաջին մասը հաւատքի խոստովանութիւն է «Դաւանութիւն ի Սուրբ Երրորդութիւնն» խորագրով, որն ունի հակիրճ երրորդաբանական սկիզբ եւ աւելի ընդարձակ քրիստոսաբանական շարունակութիւն: Երկրորդ մասն իրենից ներկայացնում է բացառապէս քրիստոսաբանական բնոյթի «Հարցմունք եւ պատասխանիք»: Որոշ ձեռագրեր «Դաւանութիւն ի Սուրբ Երրորդութիւնն» խորագրով առաջին մասը ներկայացնում են Պօղոս Տարսոնացու անունով: Յայտնի չէ, թէ սա ընդամէնը գրչական սխա՞լ է, թէ՞ իսկապէս առաջին մասի հեղի-

նակը Պօղոս Տարսոնացին է, ում ինքնութիւնը մնում է անյայտ մեզ համար:

«Հարցմունք եւ պատասխանիք»-ում Պօղոս Տարօնացին հետեւողականօրէն ներկայացնում է Հայ Եկեղեցու քրիստոսաբանութեան մի շարք կարեւոր դրոյթներ, յատկապէս Քրիստոսի մարդկային համագոյութեան խնդիրը: Այս կարեւորագոյն փրկաբանական խնդրի բացայայտման բանալին, ըստ Տարօնացու, Տիրոջ մարմնի կիրընդունակութեան եւ մարդկային տկարութիւնների ճիշտ ընկալումն է: Նա քննութեան է առնում Սուրբ Աւետարանի գրեթէ բոլոր դժուարիմաց խօսքերը Տիրոջ մարդկային տկարութիւնների մասին՝ ցոյց տալով Քրիստոսի մարդկային կատարելութեան ճշմարտացիութիւնը: Պօղոս Տարօնացին ոչ միայն բացայայտում է Տիրոջ մարդեղութեան իսկութիւնը, այլեւ իրաւամբ ցոյց է տալիս քաղկեդոնական համակարգում քօղարկուած «մարդաբանական առնուազութիւնը»: Անանձ եւ անկատար մարդեղութիւնը վտանգում է փրկութեան իսկութիւնը: Քրիստոս կատարեալ Աստուած է եւ կատարեալ մարդ՝ անբաժանելի, անշփոթ եւ անփոփոխելի միութեամբ: Աստուածութիւնը եւ մարդկութիւնը անճառելիօրէն միաւորուած են մէկ բնութեան եւ անձի մէջ:

Երկի քննական բնագիրը ներկայացնում ենք ըստ Մեսրոպ Մաշտոցի անուան մատենադարանի չորս ձեռագրերի՝ 6907 (ԺԵ)- A[14], 3918 (1591)- B, 9410 (ԺԹ, հատուած)- C1, 10199 (ԺԷ, հատուած)- C2[15]:

Մեսրոպ քահանայ Արամեան

14 Բնագիրը ներկայացւում է աննշան ուղղագրական միջամտութիւններով. օրինակ՝ վերականգնուած են բաց թողնուած յ-երը եւ ւ-երը՝ արքա-արքայ, քահանի-քահանայի, հոգոյ-հոգւոյ եւն, սրբագրուած են որոշ բարբառային ձեւեր՝ անկամ-անգամ, ցանգամ-ցանկամ եւն, ուղղուած են տառասխալները եւ վրիպակները՝ միաւորացաւ-միաւորեցաւ, կուսեն-կուսէն եւն: Միօրինակութեան համար հազուադէպ հանդիպող «այդ» հնագոյն ձեւը (3 անգամ) փոխարինուած է «այլ»-ով: Մնացած անհրաժեշտ փոփոխութիւններն արտացոլուած են տարընթերցումների մէջ:

15 C1 եւ C2 ձեռագրերում առաջին մասը («Դաւանութիւն հաւատոյ ի Սուրբ Երրորդութիւնն») ամբողջական է, իսկ երկրորդ մասից («Հարցմունք եւ պատասխանիք») կան մի քանի փոքր հատուածներ՝ աննշան տարընթերցումներով:

ՕԵՐԻՑՍ ԵՐԱՆԵԱԼ ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՊԱՒՂՈՍԻ ՏԱՐԱՒՆԱՑՒՈՅ ԱՍԱՑԵԱԼ *

ԲԱՆ ՀԱՒԱՏՈՅ ԸՆԴԴԷՄ // ՀԵՐՁՈՒԱԾՈՂԱՑ 86ա

ԴԱՒԱՆՈՒԹԻՒՆ Ի ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆՆ ՐԱՒԳՆԵԱ՛, ՅԻՍՈ՛ՒՍ*

I. [1]Հաւատով խոստովանիմք+, ◻պաշտեմք եւ երկրպագեմք զզուգափառ միութիւն Ամենասուրբ Երրորդութեանն՝ Հայր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ: [2]Հայր անսկիզբ եւ անճառ, որոց ⌜ինքն է⌝ սկիզբն եւ պատճառ՝ Որդւոյ՝ ծնդեամբ եւ Հոգւոյ+՝ բղխմամբ: [3]Թէպէտ եւ սկսեալք են ի Հայրէ, ⌜այլ հաւասարք են ընդ Հայր⌝՝ ըստ բանին Տեառն, որ ասէ. «Ես եւ Հայր ○իմ մի եմք» [Յովհ. Ժ 30]: [4]Եւ վասն Հոգւոյն ասէր Յիսուս առ սամարացիսն+. «Հոգի է Աստուած» [Յովհ. Դ 24]: [5]Հոգի է ըստ անձնաւորութեան եւ Աստուած է ըստ բնութեան, վասն զի Աստուածութիւնն բնութիւն է Սուրբ Երրորդութեանն: [6]Եւ ասէր Տէրն+՝ Հոգի է Աստուած. եւ ոչ ասէր, թէ՝ եղեւ, այլ թէ՝ է, եւ էն ցուցանէ, թէ ոչ է եղեալ, այլ բղխեալ է ի Հայրէ՝ ըստ Դաւթի, որ ասէ. «Ի քէն է, Տէ՛ր, աղբեւր կենդանութեան+!» [Սաղմ. ԼԸ 10]:

* ○ B | հերձուածողացն B | ⌜–⌝ B | Սահակայ սուրբ միայնակեցի եւ երանելի ճգնաւորի Քրիստոսի ասացեալ է դաւանութիւն ի Սուրբ Երրորդութիւնն (Երրորդութիւն- C1) եւ ընդդէմ չարափառացն հարցումն եւ պատասխանի Պաւղոսի Տարսոնացւոյ ասացեալ ընդդէմ հերձուածողաց / բան հաւատոյ... աւգնեա՛ Յիսուս C (=C1+C2)

1 +եւ դաւանեմք BC | ◻պաղատեմք C1 | զուգափառ B | Երրորդութեան C | Սրբոյն C1

2 անսկիզբն BC | ⌜ի քէն է⌝ C | Որդւոյն C | Հոգւոյն BC | + Սրբոյ BC

3 ⌜–⌝ A | ⌜0124(-3)⌝ C | ասէր B | ○ AC1

4 ասէ C | սամարացին BC | +թէ C

5 առանձնաւորութեան BC

6 +թէ BC | +!եւ լուսաւորութեան B ! եւ լուսով յերեսաց (երեսաց C2) քոց տեսանեմ զլոյս C

[7]Եւ ոչ ասէր+՝ ի ձէնջ, այլ թէ՝ ի քէն ○է. ըստ նմին եւ Եսայի ասէ.
«Տէր, Տէր առաքեաց զիս, եւ Հոգի նորա» [Ես. ԽԸ 16]: [8]Տէր Հայր,
Տէր Որդի եւ Հոգի նորա ասէ. այլ ոչ ասէ+՝ Հոգի նոցա, այլ թէ՝
○Հոգի նորա, +¹զի ի Միոյն է բղխումն եւ ոչ՝ յերկոցունցն: [9]Որպէս
Որդի միայն ○էի Հաւրէ ծնեալ եւ ոչ ի Հոգւոյն, նոյնպէս եւ Հոգին
Սուրբ միայն ○¹է ի Հաւրէ բղխեալ եւ ոչ ի յՈրդւոյ: [10]Եւ այլ իմն
պատճառ, ⌜զի եթէ⌝ Հոգին յՈրդւոյ ելս բղխէ, որպէս ի Հաւրէ, ապա
եւ երկու հոգի իմանի. մինն՝ ի Հաւրէ, եւ միւսն՝ յՈրդւոյ: [11]Եթէ մի
86բ Հոգին յերկոցունց բղխէ, ահա մասնաւոր տեսանի, որ է յոյժ //
հայհոյութիւն: [12]Եւ եթէ հարցանեն+՝ ընդէ՞ր ասաց Որդին, թէ՝ «Ցիմ-
մէ անտի առնուցու եւ պատմեսցէ ձեզ» [Յովհ. ԺԶ 14], ոչ եթէ այս
զբղխումն ասէ, այլ Յիսուս յայտ առնէ ասելովն. «Ոչ եթէ յանձնէ
ինչ խաւսեսցի, այլ զոր ինչ լուիցէ, խաւսեսցի եւ զգալոցն պատմես-
ցէ ձեզ» [Յովհ. ԺԶ 13]: [13]Քանզի որպէս Որդին Հոգւովն առնէր
զաւրութիւն՝ ասելով, թէ՝ «Ես Հոգւովն Աստուծոյ հանեմ զդեւս»
[Մատթ. ԺԲ 28], նոյնպէս եւ Հոգին+ Որդւովն պատմէր զիմաս-
տութիւն՝ ըստ Պաւղոսի, որ ասէ. «Առաքեաց Աստուած զՀոգի
Որդւոյ իւրոյ ի սիրտս մեր, որով աղաղակեմք՝ Աբբա՛, Հա՛յր»
[Գաղ. Դ 6]: [14]Եւ եթէ ասիցեն, թէ փչեաց յաշակերտսն+ եւ ասէ.
«Առէ՛ք Հոգի Սուրբ» [Յովհ. Ի 22], եւ թէ այս բղխումն է, ապա եւ
⌜Որդի ծնունդ է⌝ ի Հոգւոյն՝ ըստ հրեշտակին, որ+¹ ասէ, թէ՝
«Ցղութիւն նորա ի Հոգւոյն Սրբոյ է» [Մատթ. Ա 20]: [15]Ահա
շփոթումն երեւի՝ Որդին Սուրբ ◻բղխող եւ Հոգին Սուրբ բղխող.
զայս ոչ տեսանեմք ◻¹ի Սուրբ Երրորդութիւնն: [16]Եւ զայս ելս ասէ
Որդի առ Հայր, թէ՝ «Ամենայն ինչ, ○որ քո է, այն իմ է» [Յովհ. ԺԷ

7 ասէ B | +թէ B | ○ B
8 +թէ B | ○ B | +¹վասն զի B | երկոցունցն B
9 ○ B | ○¹ B
10 ⌜եւ թէ⌝ B
11 մին B
12 թէ(1) B | +թէ B | Որդի B
13 ասելովն B | +Սուրբ B | որ (31) B
14 թէ (1) B | ասեն (2) B | +իւր B | ⌜այս ելս ծնունդ է Որդին⌝ B | +¹առ Յովսէփ B | ասէր B
15 ◻ ծնող B | ◻¹առ B
16 ○ B

10]: [17]Ոչ +այս զբղխումն ասէ, այլ զանհաս էութիւնն: Զնոյն ինքն
ասէ, թէ՝ «Ամենայն, որ ինչ իմ է, այն քո է» [Յովհ. ԺԷ 10]: [18]Ոչ եթէ
այս զմարմնանալն ասէ, այլ զաւրութիւն ասէ: [19]Ապա թէ ասիցեն,
թէ Որդին անկենդան է, վասն զի ի նմանէ ոչ բղխէ Հոգին, ահա+
ասասցուք ⌜եւ մեք⌝, եթէ Հոգին ելս անբան ○է, քանզի+¹ ի սմանէ
○¹ոչ ելս ծնանի Որդի, որ է ○²կարի յիմարութիւն զայս գործել: [20]Այլ
մեզ պարտ է իմանալ, քանզի հայրութիւնն ոչ է բնութիւն, եւ որդիու-
թիւնն+ ոչ է բնութիւն, եւ բղխողութիւնն Հոգւոյն ոչ է բնութիւն, այլ
յատկութիւնք առանձնաւորու//թեանցն են մի բնութեան: [21]Եւ 87ա
հարցանեմք ընդ նոսա, թէ ⌜Սուրբ Հոգին⌝ բղխումն է, եւ Որդին՝
միածին ծնունդ, զբղխումն ի վերայ անձի՞նն ասէք, թէ՞ ի վերայ
բնութեանն: [22]Զի եթէ ի վերայ անձինն ասէք, ահա որ երկու անձն
ասէք զՀոգին Սուրբ. մինն՝ ի Հաւրէ եւ միւսն՝ ի յՈրդւոյ: [23]Եւ եթէ
ի վերայ բնութեանն ասէք+՝ բխեալ է ի Հաւրէ եւ յՈրդւոյ, ահա որ
զբնութիւնն այլայլեցիք: [24]Քանզի զՀոգին Սուրբ ասէք, թէ ի բնու-
թեանցն է եւ յերկոցունց բղխեալ է. ապա եւ բղխողքն հեռի են ի
բնութենէ, քանզի նոքա ոչ են բղխած, այլ բղխողք են:

II. [1]Եւ արդ, մատիցուք առ+ Փրկիչն մեր Յիսուս Քրիստոս, եթէ
որպէ՞ս էջ յարգանդ Կուսին եւ կամ զի՞նչ էառ եւ որպէ՞ս միացաւ եւ
զիա՞րդ կրեաց զկիրս ամենայն եւ որպէ՞ս էր անմեկնելի ի Հաւրէ եւ
ի Հոգւոյն Սրբոյ: [2]Եթէ ինքն կամեսցի, ◻յայտնեսցէ: [3]Ասաց հրեշ-
տակն առ ամենասուրբ Կոյսն Մարիամ. «Հոգին Սուրբ եկեսցէ ի
քեզ, եւ զաւրութիւն Բարձրելոյն հովանի լիցի ի վերայ քո» [Ղուկ. Ա
35]: [4]Եկն Հոգին Սուրբ զաւրութեամբ եւ մաքրեաց զԿոյսն սուրբ
յամենայն մարմնական կրից, եւ ապա Որդին միածին կամաւ Հաւր

17 +եթէ B
19 +եւ ասա B | ⌜–⌝ B | ○ A | +¹եւ B | նմանէ B | ○¹ B | ○² B
20 հայրութիւն B | որդիութիւն B | + Բանին B | բխողութիւն B | յատկութիւն A | բնութիւն AB
21 ⌜10⌝ B
22 թէ A
23 բնութեան A | +եթէ B | զբնութիւն B
24 եթէ B | բնութիւն(7) B | բխէ(1) B
1 +կենսատու B | միաւորեցաւ B
2 ◻յայտ արասցէ B
3 կոյս B

եւ գործակցութեամբ Սուրբ Հոգւոյն էջ բնակեցաւ ի սուրբ Կոյսն։
[5] Եւ անպարագրելի անձն Որդւոյն պարագրեցաւ ի Կուսէն՝ ըստ
Պաւղոսի, որ ասէ. «Որ ի կերպարանս Աստուծոյ էր, ոչ ինչ յափշտա-
87բ կութիւն համարեցաւ զլինելն հաւասար Աստուծոյ, այլ զանձն ոչ//
նայնացոյց՝ զկերպարանս ծառայի առեալ» [Փլպ. Բ 6-7]։ [6] Եւ ընդ
իջանել Բանին էառ յարենէ ամենամաքուր Կուսին եւ ի վերայ իւր
աստուածային անձին անձնացոյց՝ ըստ հարցն սրբոց, որ ասացին,
թէ՝ «Էառ ⌜մարմին, հոգի⌝ եւ միտք եւ զամենայն ⌜ինչ, որ⌝ է ի
մարդ»*։ [7] Առանց ապականութեան առեալ եւ աստուածացոյց՝ ըստ
Դաւթի, թէ՝ «Աւծ զքեզ Աստուած, Աստուած քո» [Սաղմ. ԽԴ 8]. ոչ
եթէ զԲանն Աստուած ասէ, այլ զմարդեղութիւնն։ [8] Եւ ըստ Յիսուսի,
որ ասէ, ի Յոհանու գլուխն, թէ՝ «Զոր Որդին Մարդոյ տացէ ձեզ,
քանզի զնա Հայր կնքեաց Աստուած» [Յովհ. Զ 27]։ [9] Եւ արդ, ոչ
ասեմք երկուս՝ այլ իմն զաւծածն եւ այլ իմն զաւծողն։ [10] Այլ էաւծ,
ասէ, միաւորութեամբ եւ կնքեաց Աստուածութեամբ։ [11] Որպէս մի
+կերպարան Հաւր եւ մի +⌜կերպարան Հոգւոյն Սրբոյ, նոյնպէս եւ մի
կերպարան Բանին եւ մարդկութեանն։ [12] Թէպէտ եւ Պաւղոս երկուս
ասէ, այլ ◻զմիութիւն ինքն ցուցանէ՝ ասելով+ մեզ. «Մի է Աստուած
Հայր եւ ○մի միջնորդ Աստուծոյ եւ մարդկան՝ մարդն Յիսուս Քրիս-
տոս» [Ա Տիմ. Բ 5], քանզի որպէս ի հոգւոյ եւ ի մարմնոյ ⌜մի մարդ
կոչի⌝, նոյնպէս աստուածային բնութիւն եւ մարդկային բնութիւն կո-
չի մի մարդ, զորոյ զանունն Քրիստոս Աստուած ճանաչեմք։ [13] Դար-
ձեալ ասէ Պաւղոս. «Մարդով եղեւ մահ, եւ մարդով՝ յարութիւն մե-
ռելոց» [Ա Կոր. ԺԵ 21]։ [14] Եւ ինքն ցուցանէ, թէ ուստի է մարդս այս,
որով զյարութիւն արար՝ ասելով, թէ՝ «Առաջին մարդն յերկրէ՝ հո-
ղեղէն, իսկ երկրորդ մարդն՝ ○Տէր յերկնից» [Ա Կոր. ԺԵ 47]։ [15] Տե-
88ա սանե՞ս, զի թէպէտ մարդ ասէ // զՅիսուս Քրիստոս, այլ յերկնից

5 յունայնացոյց B | էառ B
6 անձինն B | առ B | ⌜10⌝ B | ⌜10⌝ B
* Հաւատոյ հանգանակ. «Ժամագիրք», Երուսաղէմ, 1959, էջ 460
8 Յոհան B
10 աւծ B | Աստուածութեամբն B
11 +է B | +⌜է B
12 ◻միաւորութիւնն B | +թէ B | ○ B | ⌜(+մարդն)201⌝ B | բնութիւնն B | որոյ B
14 զյարութիւնն B | ○ B

ասէ։ [16] ⌜Որպէս եւ յայլում տեղւոջ ասէ⌝, թէ՝ «Յիսուսիւ Քրիստոսիւ
եղեւ ամենայն+ ինչ յերկինս եւ+⌜ յերկրի՝ եթէ՛ երկինք, եթէ՛ երկիր,
եթէ՛ աթոռք, եթէ՛ պետութիւնք, եթէ՛ իշխանութիւնք» [Կող. Ա 16]։
[17] Տեսանե՞ս, զի զՅիսուս, զոր եւ մարդ ասէ, ի յերկնից ասէ եւ
արարչակից ընդ Հաւր եւ ◻ընդ Հոգւոյն։ [18] Եւ արդ, զայս եւս գիտե-
լի է, զի եւ Պաւղոս Բ կերպարանս ասէ զՅիսուս Քրիստոս՝ ◻զմինն
իջեալ եւ զմիւսն առեալ։ [19] Եթէ Բ բնութիւնքն ոչ միաւորեցան, որ-
պէս հերձուածողքն ասեն, ահա+ Բ կերպարանքն, քանզի Պաւղոս
զկերպարանքն Բ-◻ացոյց եւ ոչ՝ զբնութիւնն։ [20] Եթէ կերպարանքն
ոչ միաւորեցան, ահա+ Երրորդութիւնն+⌜ չորրորդութիւն տեսանի։
[21] Եթէ ասիցեն, թէ Պաւղոս վասն Բ բնութեան ○ասէ զերկու կեր-
պարանքն+, ◻ըստ այս եւս մոլին։ [22] Քանզի+ զԵրրորդութիւնն մի
կերպարան ◻ասեն, որպէս եւ՝ մի բնութիւն։ [23] Ահա+ զանձնաւորու-
թիւնն ուրացան, քանզի կերպարան եւ պատկեր ի վերայ անձինն
ասի եւ ոչ՝ ի վերայ բնութեանն։ [24] Զի յամենայն Սուրբ Գիրս զպատ-
կերս եւ զկերպարանս եւ զանձինս երիս ○ասեն՝ ըստ Մովսիսի, որ
ասէ, թէ՝ «Ասաց Աստուած՝ արասցուք մարդ ըստ պատկերի մե-
ռում+ ⌜եւ ըստ նմանութեան⌝» [Ծն. Ա 26]։ [25] Եւ վասն անձինն ասէ
Յիսուս. «Որպէս Հայր ունի կեանս յանձին իւրում, նոյնպէս եւ
Որդւոյ ետ ունել կեանս յանձին իւրում» [Յովհ. Ե 26]։ [26] Ոչ եթէ
Որդի ոչ ունէր, զայն ցուցանէր Յիսուս, թէ՝ «Որ յանձնէ իւրմէ
+խաւսի, փառս // անձին իւրում խնդրէ» [Յովհ. Է 18]։ [27] Վասն այնո- 88բ
ւրիկ զՀայր պատճառ ցուցանէ, զի մի՛ Որդին+ միայն փառաւորեսցի։

16 ⌜ըստ Պաւղոսի⌝ B | +որ B | երկինս B | +⌜որ ինչ B | թէ(1,2,3,4,5) B
17 ◻սուրբ B
18 կերպարան B | ◻զմիւսն A
19 միաւորեցաւ A | +որ B | ◻ասաց B
20 միաւորեցաւ A | +եւ B | Երրորդութեան B | +⌜կերպարանն B
21 բնութեանն B | ○ B | կերպարանն B | +ասաց B | ◻ընդ B
22 +թէ B | Երրորդութիւնն B | ◻է B
23 +որ B | զանձնաւորութիւնքն B
24 ամենայն B | զպատկերքն B | ○ B | +եւ պատկերի մերում A | ⌜–⌝ B
25 անձին B
26 ցուցանէ B | իւրմէ B
27 +Որդին A

[28] Եւ վասն Հոգւոյն ասէր, թէ՝ «Ես Հոգւովն Աստուծոյ հանեմ զդեւս» [Մատթ. ԺԲ 28], զի եւ Հոգին փառաւորեսցի ընդ Հաւր եւ ընդ Որդւոյ միածնի։ [29] Եւ դարձեալ ի Յորդանան յայտնապէս տեսանեմք ▫զերիս կերպարանսն եւ ոչ՝ զչորրորդն։

III. [1] Եւ արդ, խնդրելի է, եթէ կերպարան Որդւոյն, որ էջն յերկնից, միաւորեցաւ ընդ կերպարանին ▫մարդոյն, որպէ՞ս էրն յարգանդի Կուսին կամ որպէ՞ս ընդ Հաւր եւ ⌜Հոգւոյն Սրբոյ⌝, եւ որպէ՞ս Հայր եւ ▫Հոգի ընդ նմա էին. ոչ անձնաւորութեամբ, այլ զաւրութեամբ եւ միաւորութեամբ։ [2] Նոյնպէս եւ Որդին ընդ Հաւր էր եւ ընդ Հոգւոյն Սրբոյ՝ ըստ հրամանի ▫Տեառն, որ ասէր, եթէ. «Ես ի Հայր, եւ Հայր+ յԻս» [Յովհ. Ժ 38]։ [3] Ոչ ընդ ▫ամենայն ինչ ասէր, այլ զանորիշութիւն ցուցանէր, քանզի թէպէտ+ անշաւշափելի էր Բանն, շաւշափեցաւ՝ ըստ Յովհաննու, որ ասէ, թէ՝ «Զեռք մեր շաւշափեցին ի վերայ Բանին կենաց» [Ա Յովհ. Ա 1], սակայն անշաւշափելի մնաց, քանզի ոչ շփոթեցաւ։ [4] Նոյնպէս եւ մարդկութիւն անշաւշափելի էր+ Բանին միաւորութեամբն եւ ոչ շփոթմամբ՝ ըստ բանին Տեառն, որ ասէ, եթէ՝ «Ոչ ոք ել յերկինս, ⌜եթէ ոչ որ էջն յերկնից՝ Որդին մարդոյ, որ էն յերկինս⌝» [Յովհ. Գ 13]։ [5] Քանզի+ հացն եւ գինին անապական, զոր Տէրն ետ աշակերտաց ○իւրոց՝ զկուսածին Քրիստոսն հաւատամք։ [6] Նոյնպէս եւ զհոգին բանական եւ զմարմինն, որ+ ի Կուսէն էառ, Աստուած յաւիտենական
89ա ▫խոստովանիմք։ // [7] Եւ եթէ ասիցեն, թէ ի Կուսէն էառ՝ յաւիտենական ոչ է, ասեմք ⌜եւ մեք⌝, եթէ ի սեղանոյն ○էառ զհացն եւ զգինին+ Յիսուս, այն+[1] ոչ է կուսածին Քրիստոս։ [8] Ահա+ ամենայն դիմաւք ⌜կուրացեալ էք⌝, որք զայսպիսի կարծիս ստացէք ի Կուսածինն։

28 Որդւոյն B
29 ▫զերրորդ B |կերպարանն B | չորրորդն A
1 կերպարան(2) A | ▫Որդւոյն B | յարգանդ B | ⌜10⌝ B | ▫Որդի A
2 ▫Փրկչին B | +ի B
3 ▫աման B | զանորիշութիւնն B | +եւ B
4 մարդկութիւնն B | +ըստ B | ⌜–⌝ A
5 +որպէս B | զհացն B | զգինին B | աշակերտացն B | ○ B
6 +եւ B | ▫հաւատամք B
7 ⌜–⌝ B | ○ B | + ի բաժակէն առ B | +⌝եւս B
8 +որ B | ⌜կորացեալ գտանին⌝ B

[9] Դարձեալ հարցցուք եւ մեք ընդ նոսա՝ ○եթէ Աստուած կատարեալ էր Քրիստոս եւ մարդ կատարեալ, զկատարելութիւնն ⌜ի վերայ⌝ ▫անձի՞նն ասէք, թէ՞ ⌜ի վերայ բնութեանն⌝։ [10] ○Զի թէ ի վերայ բնութեանն ասէք, ահա որ Բ կատարելութիւն տեսանի ի Սուրբ Երրորդութիւնն։ [11] Քանզի Երրորդութիւնն մի բնութիւն է, եւ մի բնութիւնն մարդկութիւն. ահա որ զԵրրորդութիւնն ասէք մարմնացեալ, որ է յոյժ հայհոյութիւն։ [12] Զի թէպէտ+ Սուրբ Երրորդութիւնն մի բնութիւն է, այլ Հայր եւ Հոգին ոչ առին մարմին, բայց միայն՝ Որդին։ [13] Եւ եթէ Բ կատարելութիւն ի վերայ անձինն ասէք, ահա որ Երրորդութիւնն չորրորդութիւն եղեւ, որ է Նեստորի ○չարափառութիւնն։ [14] Եւ եթէ ասիցեն, թէ մարդկային անձն ոչ ունէր Քրիստոս, քանզի աստուածային անձն ունէր, ասասցուք եւ մեք՝ եթէ զաստուածային բնութիւն ունէր, ընդէ՞ր+ ○զմարդկայինն բնութիւն էառ։ [15] Եւ այլ իմն պատճառ զի եթէ մարդկային անձն ոչ ունէր, ապա եւ սուտ խաւսէին, թէ մարդ կատարեալ է։ [16] Եւ որ ○ասէ սուտ՝+ սատանայ է։ [17] Իսկ մեք այսպէս դաւանեմք զՔրիստոս, քանզի ○է Աստուած կատարեալ եւ մարդ կատարեալ+. եւ ընդ իջանել Բանին յարգանդ+[1] Կու//սին՝ էառ զկատարեալն եւ 89բ
ոչ զմասնաւորն։ [18] Քանզի որպէս զաստուածային կերպարանն ▫ի մարդկայինն+ ▫[1]միացոյց, եւ է մի կերպարան, ▫[2]այսպէս եւ աստուածային կատարելութիւնն ⌜եւ մարդկային կատարելութիւնն⌝ միաւորեցաւ եւ է մի կատարելութիւն։ [19] Նոյնպէս աստուածային բնութիւնն եւ մարդկային բնութիւնն միաւորեցաւ եւ է մի բնութիւն։

9 ○ A | ⌜վասն⌝ B | ▫բնութեան B | ⌜[1]վասն անձինն[1]⌝ B
10 ○ A | եթէ B
11 բնութիւն(2) B | մարդկութիւնն B
12 + եւ B
13 զԲ B | կատարելութիւնն B | ○ A
14 զմարդկային B | զաստուածային B | թէ B | բնութիւնն B | +եւ B | ○ B բնութիւնն B
15 զմարդկային B | խաւսին B
16 ○ B | +խաւսի ի B | սատանայէ B
17 ○ B | +է B | +սուրբ B | մասնաւորն A
18 աստուածային B | ▫եւ B | մարդկային B | +կերպարանն B | ▫[1]միաւորեցաւ B | ▫[2]նոյնպէս B | ⌜–⌝ B
19 սոյնպէս(0) B

20 ◻Սմին նման աստուածային ներգործութիւնն եւ մարդկային ներ-
գործութիւնն միաւորեցաւ, եւ է մի ներգործութիւն: 21 ⌜Այսպէս եւ⌝
աստուածային կամքն եւ մարդկային կամքն միաւորեցաւ, եւ է մի
կամք: 22 Ոչ բաժանմամբ ասեմք՝ ըստ Նեստորի եւ ոչ շփոթմամբ՝
ըստ Եւտիքեայ, այլ անշփոթ միաւորութեամբ խոստովանիմք զՔրիս-
տոս: 23 Քանզի որպէս Հայր մի է, եւ ոչ ասեմք Բ, նոյնպէս եւ մարմ-
նացեալ Բանն Աստուած մի է, եւ ոչ ասեմք Բ: 24 Նոյնպէս եւ Հոգին
Սուրբ մի է եւ ոչ+ Բ, զի մի՛ Երրորդութիւնն չորրորդութիւն +⌜համ-
բաւեսցի:

IV. 1 ◻Հարցումն: Ընդէ՞ր Հայր եւ Հոգի ոչ առին մարմին, բայց
միայն՝ Որդին: 2 Պատասխանի: Քանզի Հայր անծին է եւ եթէ+ առ-
նոյր մարմին եւ ծնանէր, լուծանէր ի հայրութենէն: 3 Նոյնպէս եւ
Հոգին Սուրբ, քանզի+ բղխումն է ի բղխողէն եւ ոչ՝ ծնունդ: 4 Եւ թէ
Հոգին եւս առնոյր մարմին եւ ծնանէր, նա եւս ելանէր ի հոգիութե-
նէն եւ որդի լինէր. եւ այս փոփոխումն լինէր եւ ոչ հաստատուն:

V. 1 ◻Հարցումն: Եթէ ⌜ասիցեն, թէ⌝ Որդի միայն մարմնացաւ,
90ա ապա+ յաւելաւ քան զՀայր եւ+⌜ զՀոգին+2. քանզի յա//ռաջ քան զմարմ-
նանալն հաւասար էր ընդ Հաւր եւ ընդ ⌜Հոգւոյն Սրբոյ⌝: 2 Պատաս-
խանի: Ասասցուք ⌜եւ մեք⌝՝ եթէ ոչ միաւորեցաւ Բանն Աստուած
ընդ մարդկութեանն, յաւելաւ, ապա եթէ միաւորեցաւ, ոչ յաւելաւ:
3 Քանզի թէպէտ ⌜էառ զմարդկային բնութիւնն ի սրբոյ Կուսէն⌝, այլ
յառաջ+ քան զյաւիտեանս ◻էր՝ ըստ ⌜Աւետարանին Յովհաննու⌝,
թէ՝ «◻Ելանիցէ Որդի մարդոյ, ուր էր զառաջինն» [Յովհ. Զ 63]:

20 ◻Նմին B | նմանէ(1) B | ներգործութիւն(1) A
21 ⌜սմին նման⌝ B
24 +ասեմք B | +⌜համարեսցի եւ B
1 ◻եւ արդ, հարցումն, զոր եթէ հարցանիցեն, եթէ B
2 +Հայր B
3 Հոգի A | +եւ Հոգի Սուրբ B
4 եթէ B | հոգիութենէ B
1 Տե՛ս ◻հարցումն (III 1), յետագայում նոյնն է B-ում: | ⌜–⌝ B | +եւ B | +⌜քան B
| +2Սուրբ B | ⌜Սուրբ Հոգւոյն⌝ B
2 ⌜նախ⌝ B | մարդկութիւն B | թէ B
3 ⌜345(առ/0)12⌝ B | ՝առ B | +է B | ◻ B | ⌜Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ
ասէ յԱւետարանն ի Յոհան գլուխ⌝ B | ◻եանց A

4 Տեսանե՞ս, զի Քրիստոս զմարդկային բնութիւնն, ⌜ուր էրն ասէ, ոչ
եթէ յարգանդ<է> Կուսին ել⌝, ուստի ծնաւ, այլ ◻ի յերկինս համբար-
ձաւ եւ ընդ աջմէ Հաւր նստաւ+⌜: 5 Եթէ ասիցեն, թէ Որդի մարդոյ
զԱստուածութիւնն ասէ, ասասցուք եւ մեք, եթէ ի բազում տեղիս
Որդի մարդոյ ասէ Յիսուս: 6 Զայն ամենայն վասն Աստուածութեանն
ասէ եւ ոչ վասն մարդկութեանն՝ ըստ նոցա կարծեացն: 7 Այլ այս է
ճշմարիտն, քանզի թէպէտ ի սրբոյ Կուսէն էառ զմարդկային բնու-
թիւնն, այլ Բանն Աստուած յառաջ ◻է քան զյաւիտեանս: 8 Հանդերձ
մարդկութեամբն ◻է Որդի Աստուծոյ, որպէս զհացն եւ զգինին ան-
ապական՝ հանդերձ բանիւն, զոր ասաց Յիսուս, թէ՝ «Այս է մարմին
իմ եւ արիւն իմ» [Մատթ. ԻԶ 26-28, Մարկ. ԺԴ 22-23, Ղուկ. ԻԲ 19-
21], 9 կուսածին Աստուած հաւատամբ, թէպէտ ◻յետ բազում ամաց ի
սեղանոյն էառ, նոյնպէս եւ զմարդկութիւնն, որ ի Կուսէն էառ, հան-
դերձ Աստուածութեամբն ◻⌜խոստովանիմք յառաջ քան զյաւիտեանս+⌝:
10 ⌜Եւ այս եւս ուղիղ է⌝, քանզի թէպէտ աւր ըստ աւրէ առնուն քա-
հանայքն զհացն եւ // զգինին անապական եւ ◻պատարագեն, եւ ոչ 90բ
յաւելու ի Քրիստոս, նոյնպէս եւ Բանն Աստուած էառ զմարդկու-
թիւնն, աստուածացոյց, եւ ոչ յաւելաւ յԱստուածութիւնն: 11 Քանզի
հուրն միացաւ ընդ երկաթի եւ զսեւութիւն երկաթին ներկեաց, եւ ոչ
յաւելաւ ջերմութիւն հրոյն:

V. 1 Հարցումն: Ընդէ՞ր ասաց Յիսուս+. «Քակեցէ՛ք զտաճարս
այս, եւ զերիս աւուրս շինեցից զսա» [Յովհ. Բ 19]: 2 Եւ աւետարա-
նիչն ասէ, թէ՝ «⌜Վասն տաճարին⌝ մարմնոյ իւրոյ ասէ» [Յովհ. Բ 21]:
3 <Պատասխանի>: ◻Իսկ չարափառքն յոյժ ուրախանան, բայց ոչ է,
որպէս նոքա կարծեն: 4 Քանզի ոչ եթէ մարմինն Տեառն ի միմեանց
քակտեցաւ, այլ անքակ մնաց, որպէս էրն՝ ըստ Աւետարանին, թէ՝
«Ոսկր նորա մի՛ փշրեսցի» [Յովհ. ԺԹ 36]: 5 Եւ մարգարէն ասէ, թէ՝

4 ⌜{-34567}201(+Նա)⌝ A | ◻ B | +⌜եւ B
7 ◻ B
8 ◻էր B
9 ◻B | ◻⌜B | +խոստովանիմք B
10 ⌜–⌝ A | հաց B | գինի B | ◻պատարագի B
11 միաւորեցաւ B | երկաթոյ B
1 ասէ B | +թէ B | զայս B
2 ⌜(տաճար/1)0⌝ B
3 ◻եւ B

«Մարմին նորա ոչ ետես զապականութիւն» [Սաղմ. ԺԵ 10, Գործ. Բ 31]: [6] Մարմին Քրիստոսի էին աշակերտքն՝ ըստ Պաւղոսի, ⌜որ ասէ⌝, թէ՝ «Մարմին եմք ի մարմնոյ նորա եւ անդամք յանդամոց նորա» [Ա Կոր. ԺԲ 27, Եփես. Ե 30]: [7] Եւ յորժամ կալան զՅիսուս, ցրուեցան ամենեքեան եւ փախեան ի նմանէ: [8] Եւ յետ երից աւուրց շինեաց զնոսա յարութեամբն իւրով, եւ անքակ մնացին ի Քրիստոսէ մինչեւ յաւիտեան: [9] Եւ դարձեալ ասեն ոմանք, թէ միաւորութիւնն+ քակտեցաւ զերիս տիւս եւ զերիս գիշերս: [10] Ասասցուք եւ մեք ընդդէմ նոցա, թէ արիւնն եւ ջուրն, որ ել ի կողիցն ○Քրիստոսի, ո՞չ էր Քրիստոսի: [11] Քանզի նախ զհոգին աւանդեալ էր, եւ ապա խոցեցին զկողն, եւ ել արիւն եւ ջուր: [12] Եւ սոսկ մարմնոյն՝ Քրիստոսի ասել ոչ լինի,
91ա քանզի եւ հոգի ոչ գոյ ի նմա: [13] Եւ հոգին բանական, որ ի // դժոխքն ○գնաց, նա ոչ+ է Քրիստոս, քանզի մարմին ոչ գոյր ընդ նմա: [14] Եւ Բանն Աստուած, որ ընդ աւազակին եմուտ ի դրախտն, նա եւս ոչ էր Քրիստոս: [15] Ահա որ ընդ ամենայն տեղիս զերիս տիւս եւ զերիս գիշերս ոչ գոյր ○ընդ նոսա Քրիստոս: [16] Այլ պարտ է ○մեզ այսպէս դաւանել՝ քանզի արիւնն եւ ջուրն, որ+ ել, ⌜ի Քրիստոսի կողիցն էր եւ⌝ Քրիստոսի էր՝ ըստ ○ⁱՅոհաննու աւետարանչին, որ ասէ, թէ՝ «Արիւն Յիսուսի Քրիստոսի՝ Որդւոյն Աստուծոյ, սրբեսցէ զմեզ յամենայն մեղաց մերոց» [Ա Յովհ. Ա 7]: [17] Եւ զաւազակն ⌜Քրիստոս տարաւ ի դրախտն⌝ եւ ոչ՝ առանձին Բանն Աստուած: [18] Եւ զդժոխքն Քրիստոս աւերեաց եւ ոչ՝ սոսկ բանական հոգին, քանզի ասէ Պետրոս առաքեալն, թէ՝ «Քրիստոս մեռաւ մարմնովն, այլ կենդանի էր հոգւովն, ○եւ երթեալ ի դժոխքն եւ բանաւորաց քարոզեաց» [Ա Պետ. Գ 18-19]: [19] Տեսանե՞ս, զի զկենդանին մարմնովն մեռեալ ասէ □Պետրոս եւ զմեռեալն կենդանի ասէ հոգւովն եւ ի դժոխսն երթեալ:

6 մարմինն(1) B | ⌜–⌝ B
9 միաւորութիւն B | +Քրիստոսի B
10 ○ B | է B
13 ○ B | +եւս B |գոյ B
15 գոյ B | ○ B
16 ○ B | արիւն A | +ի կողիցն B | ⌜–⌝ B | ○ⁱ A
17 ⌜2301⌝ B | առանձինն B
18 եթէ B | ○ A | դժոխս B | բանաւորացն B
19 մարմնով B | □Պաւղոս A | երթալ A

[20] Եւ գերեզմանն, յոր եդին զմարմինն ○Քրիստոսի Յիսուսի, ոչ լոկ մարմնոյ ասեմք, այլ Քրիստոսի: [21] Քան ամենայն □իրաւք զգերեզմանն նման տեսանեմք սուրբ Աստուածածնին: [22] Եւ դարձեալ, որպէս ծնունդն □սքանչելի էր, նոյնպէս եւ մահն+ անթարգմանելի է:

VII. [1] Հարցումն: Ընդէ՞ր ասաց Յիսուս. «Վասն աւուրն այնորիկ եւ ժամուն ոչ ոք գիտէ՝ ո՛չ հրեշտակ յերկինս եւ ո՛չ Որդի, բայց միայն՝ Հայր» [Մատթ. ԻԴ 36]: [2] <Պատասխանի>: Իսկ հերձուածողքն ասեն, թէ մարդկային բնութիւնն էր, որ ոչ գիտէր: [3] Ասասցուք
91բ եւ մեք ընդդէմ նոցա այսպէս՝ եթէ Որ//դի զմարդկային բնութիւնն ասէր, ⌜ահա աստուածային բնութիւն, որ ի Քրիստոսի էր⌝, նա ոչ էր որդի: [4] Եւ եթէ Բանն Աստուած Որդի էր Հաւրն, յայտնի է, եթէ Բանն Աստուած էր, որ անգիտացաւ: [5] Եւ եթէ Բանն Աստուած+ անգիտանայր եւ նա Որդի է, եւ ○եթէ մարդկային բնութիւնն անգիտացաւ, նա եւս Որդի է: [6] Քանզի ասաց Յիսուս, եթէ՝ «ոչ հրեշտակք գիտեն եւ ոչ Որդի» [Մատթ. ԻԴ 36]: [7] Ահա որ Բ որդի տեսանեմք Հաւրն երկնաւորի՝ մինն՝ հաւասար ընդ Հաւր՝ ըստ Յիսուսի, որ ասէ, թէ՝ «Ես եւ Հայր իմ մի եմք» [Յովհ. Ժ 30], եւ միւսն՝ կրտսեր քան զՀայր՝ ըստ բանին, որ ասէ. «Հայր իմ մեծ է քան զիս» [Յովհ. ԺԴ 28]: [8] Եւ որք զայսպիսի □կարծիս խորհին եւ ընդ Բ սահմանեն ի վերայ կուսածին Արքային, ուրացողք գտանին+ ի ծնունդն Քրիստոսի: [9] Զոր եթէ զաստուածային Որդին եւ զմարդկային որդին ասեն ծնեալ ի Կուսէն, ահա որ զԿոյսն սուրբ Բ որդւոյ մայր ասեն: [10] Եւ եթէ զմին որդին ասեն ծնեալ ի Կուսէն եւ զմիւսն՝ ոչ, ահա+ զմինն ուրացան՝ զորն եւ իցէ: [11] Այլ մեզ պարտ է իմանալ, թէ զինչ է բանն, զոր ասաց Յիսուս, եթէ՝ «+ո՛չ հրեշտակք յերկնից եւ ո՛չ Որդի, բայց միայն՝ Հայր» [Մատթ. ԻԴ 36]: [12] Բազում պատճառ ունի բանս ○այս:

20 ○ B | մարմնոյն B
21 զամենայն A | □կիրս A | զԱստուածածնին A
22 □անճառելի B | +Քրիստոսի B
3 ⌜–⌝ B
4 յայտ B | թէ(2) B
5 +ոչ B | ○ B
6 գիտէ B
8 որ B | □բան B | +նոքա B
10 զմի(1)B | +որ B
11 +ոչ ոք գիտէ B
12 ○ B

[13] ○Նախ առաջին այս է, թէ ո՛չ հրեշտակաց եւ ո՛չ ձեզ գիտելի է
զաւր կատարածին, քանզի յառաջագոյն զհրեշտակսն ստեղծ Տէրն,
քան զմարդիկ: [14] Վասն □այնորիկ յառաջ զհրեշտակս ասաց եւ ապա
զորդի եւ անուանեաց զհրեշտակս երէց որդի: [15] Եւ ապա ստեղծ
92ա զմարդն եւ անուանեաց կրսեր որդի ○զնոսա: [16] Եւ // զաւրն զայն ո՛չ
հրեշտակք գիտեն, որ յերկինս են, եւ ո՛չ ⌜որդիք հաւատացեալք⌝,
բայց միայն՝ Սուրբ Երրորդութիւնն: [17] Ըստ Յիսուսի, որ ասէ, թէ՝
«Որպէս գիտէ զիս Հայր, գիտեմ եւ ես զՀայր» [Յովհ. Ժ 15]: [18] Եւ
Պաւղոս ասէ, թէ՝ «Քրիստոս է Աստուծոյ զաւրութիւն եւ Աստուծոյ
իմաստութիւն» [Ա Կոր. Ա 24]: [19] Գիտէ ճշմարիտ զամենայն: [20] Ըստ
այնմ՝ զոր եւ ինքն պատմեաց մի ըստ միոջէ մինչ ի կատարած
աշխարհիս եւ զայն աւրն ոչ յայտնեաց: [21] Եւ այլ պատճառ+, եթէ
ասէր Յիսուս, թէ՝ գիտեմ եւ ոչ ասեմ,+⌡ գայթակղէին ⌜ի նա⌝ առա-
քեալքն, եթէ ոչ է սէր Սորա առ մեզ կատարեալ, քանզի գիտէ եւ
⌜⌡ոչ ասէ մեզ⌝: [22] Եւ այլ իմն պատճառ, □զի որպէս զամենայն կիրս
կրեաց կամաւորաբար՝ նոյնպէս եւ զանգիտութիւնն:

VIII. [1] Հարցումն: Ընդէ՞ր ասէ աւետարանիչն, թէ «Սկսաւ Յիսուս
տրտմիլ եւ հոգալ» [Մատթ. ԻՋ 37], եւ ասելն Տեառն՝ «⌜Տրտում է⌝ ոգի
իմ մինչեւ ի մահ» [Մատթ. ԻՋ 38]: [2] Պատասխանի: Ոմանք ի
հերձուածողաց ասեն, թէ մարդկային բնութիւնն էր, որ տրտմէր եւ
հոգայր: [3] Ո՛վ անաւրէն, եթէ մարդկային բնութիւնն տրտմէր ⌜եւ հոգայր⌝,
եւ աստուածայինն՝ ոչ, ահա որ Բ բնութիւնք ի միմեանց բաժանեցան,
քանզի մինն տրտմէր եւ հոգայր, եւ միւսն՝ ոչ: [4] Եւ որք զայսպիսի
կարծիս ○ասեն ի վերայ Քրիստոսի, զանէծս ընդ Նեստորի ընդունին:

13 ○ B | առաջինն B | զհրեշտակս B | մարդիկ A
14 □այն B | զհրեշտակն A
15 ○ B
16 ⌜հաւատացեալք, որք որդի անուանեցան⌝ B
18 եթէ B
20 աշխարհի B
21 պատճառաւ B | +քանզի B | թէ(1)B | եթէ(1) B | +⌡ձեզ B | ⌜–⌝ B | ⌜20⌝ B
22 □քանզի B
1 ⌜տրտմէ⌝ A
2 տրտում էր B
3 տրտում էր(1) B | ⌜–⌝ B | զաստուածայինն A | բնութիւնքն B | տրտում էր(2) B
4 զայսպիսիս B | կարծեն B | ○ B |

[5] Այլ աւետարանիչն ցուցանէ, եթէ «սկսաւ տրտմիլ եւ հոգալ» [Մատթ.
ԻՋ 37], քանզի Մինն ի Սրբոյ Երրորդութենէն ⌜սկսաւ զամենայն
տնօրէնութիւնսն⌝ կատարել, քանզի տրտմեցաւ եւ // զտրտմութիւնս 92բ
○մեր երարձ. ի հոգս անկաւ, զի զհոգիս մեր ազատեսցէ ի բռնութենէ
խաւարին:

IX. [1] Հարցումն: Զի՞նչ է, զոր ասաց Յիսուս, թէ «Հոգիս յաւժար
է, □բայց մարմինս տկար ○է» [Մատթ. ԻՋ 41]: [2] Պատասխանի: Չա-
րափառքն ասեն, թէ հոգի զաստուածային բնութիւնն ասէ եւ մար-
մին՝ զմարդկային բնութիւն: [3] Ահա որ յոյժ ուրացան: [4] Զի եթէ հոգի
զաստուածային բնութիւնն ասէր, ապա եւ Որդի ոչ էր մարմնացեալ,
քանզի ասէ, թէ՝ հոգիս յաւժար է [Մատթ. ԻՋ 41]: [5] Եւ եթէ Բանն
Աստուած զիւր անունն հոգի կոչէ, ահա որ □Երրորդութիւնն շփո-
թեցաւ, քանզի երբեմն Որդի ասէ զինքն եւ երբեմն հոգի: [6] Եւ որք
շփոթումն ասեն ի Սուրբ Երրորդութիւնն, ուրանան եւ զանձնաւո-
րութիւնն: [7] Եւ այլ ոմանք ասեն, թէ զբանական հոգին ասաց □Քրիս-
տոս, եթէ յաւժար է, □⌡բայց մարմինս տկար: [8] Եւ այս եւս ոչ է ուղիղ.
զի եթէ մարդկային հոգին յաւժար էր, եւ մարմինն տկար, ապա
ընդէ՞ր ասէր նոյն ինքն Քրիստոս+. «Երանի՛ +⌡խաղաղարարաց+2»
[Մատթ. Ե 9]: [9] Քանզի զիւր ⌜մարմինն եւ զհոգին⌝ ոչ կարէր խաղա-
ղեցուցանել եւ հակառակութիւն ասել ի Քրիստոս՝ յո՛յժ հայհոյու-
թիւն է:

X. [1] □Հարցումն: Ընդէ՞ր ասէր Յիսուս, թէ՝ «Տրտում է անձն իմ
մինչեւ ի մահ» [Մատթ. ԻՋ 38]: [2] ○Պատասխանի: Այլ ցուցանէ
Փրկիչն, թէ տրտմութիւն հոգւոյն է եւ տկարանալն՝ մարմնոյն: [3] Եւ
Բանն Աստուած ⌜միաւորեալ էր⌝ ընդ հոգւոյն եւ ընդ մարմնոյն, կրէր
կամաւ զտրտմութիւնն եւ զտկարութիւնն վասն մերոյ փրկութեան:

5 ⌜…(1,5բառ)թիւն⌝ A | ○ B | հոգիս A
1 □եւ B | ○ B
5 □ի յորդիութենէ B
7 եթէ B | □Յիսուս B | □⌡եւ B | զմարմինս B
8 ասէ B | +թէ B | +⌡է B | +2զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին B
9 ⌜(-q2)0(1-ն)⌝ B
1 □ եւ եթէ բանական հոգին յաւժար է B
2 ○ B
3 միաւոր B | +էր | զտրտմութիւն A

93ա [4] Եւ այս եւս ○ի դէպ է, որ ասէր, թէ՝ «Հոգիս յաւժար է, □բայց // մարմինս՝ տկար» [Մատթ. ԻՁ 41]: [5] Քանզի հոգին են մարգարէքն, □որ խաւսէին ի Թաբաւր լերին վասն ելիցն Տեառն ○յԵրուսաղէմէ [Մատթ. ԺԷ 3]: [6] Եւ մարմին ○էին աշակերտքն եւ ○ⁱտկար, □որք ոչ կամէին զչարչարանս Տեառն, զի մի՛ ի նոցանէ հեռասցի [Մատթ. ԺՁ 22]: [7] Եւ այս եւս ճշմարիտ է, ○քանզի ասէ Յիսուս, թէ՝ Հոգիս յաւժար է. հոգի զՀոգին Սուրբ ասէ, քանզի յաւժարութեամբ Սուրբ Հոգւոյն արար զամենայն: [8] Բայց մարմինս տկար, նոյն ինքն է Բանն⁺, ըստ Յովհաննու⁺ⁱ, որ ասէ, թէ՝ «Բանն մարմին եղեւ եւ բնակեաց ի մեզ» [Յովհ. Ա 14]: [9] Քանզի որպէս մարմնացաւ, նոյնպէս⁺ տկարացաւ: [10] Եւ մինն ի Սրբոյ Երրորդութենէն կրեաց զամենայն կամաւորաբար եւ ոչ՝ ⌜ի հարկէ⌝:

XI. [1] Հարցումն: Ընդէ՞ր «անկաւ ի վերայ երեսաց իւրոց, եկաց յաղաւթս եւ ասէ. «○Հա՛յր իմ, եթէ հնար □է, անցցէ բաժակս այս յինէն, □ⁱբայց ոչ որպէս ես կամիմ, այլ որպէս դու»» [Մատթ. ԻՁ 39]: [2] Պատասխանի: Անկաւ ի վերայ երեսաց իւրոց, զի զանկեալքս ⌜բարձրացուցցէ յերկինս⌝: [3] Եկաց յաղաւթս, զի աղաւթիւք զմեզ ի փորձութենէ ապրեցուցցէ՝ ըստ Յիսուսի, որ ասէ. «Յաղա՛ւթս կացէք, ⌜զի մի՛ մտանիցիք ի փորձութիւն⌝» [Ղուկ. ԻԲ 46]: [4] Եւ ասէր, թէ՝ «Հա՛յր ○իմ, եթէ հնար □է, անցցէ բաժակս այս յինէն» [Մատթ. ԻՁ 39]: [5] Ոչ եթէ երկնչէր ի չարչարանացն, ըստ □այնմ՝ «Մի՛ երկնչիք յայնմանէ, որ սպանանեն զմարմինն ձեր» [Մատթ. Ժ 28]: [6] Եւ ինքն զիա՞րդ երկնչի ի մահուանէ: [7] Եւ եթէ Յիսուս երկնչէր, ⁺սէրն նորա ոչ էր առ մեզ կատարեալ:

4 ○ B | □եւ B
5 հոգիք B | մարգարէք B | □եւ B | ○B
6 ○ A | ○ⁱ A | □եւ B
7 ○ A
8 մարմինն(1) B | ⁺Աստուած B | ⁺ⁱաւետարանչին B
9 ⁺եւ B
10 ⌜բռնադատելով⌝ B
1 ⌜–⌝ A | □ինչ իցէ A | □ⁱայլ A
2 ⌜(+ի)10⌝ B
3 ⌜եւ այլն ⌝ A
4 ○ A | ինչ իցէ A
5 ⌜Յիսուսի, որ ասէ⌝ B
7 ⁺ապա եւ B | է B

[8] Քանզի Յոհաննէս ⁺ասէ, թէ՝ «Սէր կատարեալ ի բաց մերժէ <զ>երկիւղն» [Ա Յովհ. Դ 19]: [9] Իսկ □եթէ երկնչէր՝ ⌜ոչ է⌝ կատարեալ⁺ սէր:⁺ⁱ // [10] Եթէ յակամայ □եկն ի չարչարանս մահու, քանզի ասաց 93բ
Յիսուս. «Ոչ որպէս ես կամիմ, այլ որպէս դու⁺» [Մատթ. ԻՁ 39]. ահա որ կամքն նորա Հաւր կամացն հակառակ էր՝ ըստ չարախաւսիցն: [11] Եւ եթէ ասիցեն՝ այլ է կամք աստուածային եւ այլ է կամք մարդկային, □ըստ այսմ եւս տարակուսին: [12] Քանզի կամքն մարդկային, որ ի Քրիստոս էր, ոչ կամէր զչարչարանս, ապա ընդէ՞ր ասաց զՊետրոս. «Ե՛տ յետս իմ, սատանա՛յ⁺» [Մատթ. ԺՁ 23, Մարկ. Ը 33], քանզի⁺ⁱ Պետրոս ոչ կամէր զչարչարանս եւ զմահ Տեառն: [13] Զի թէ կամքն մարդկային, որ ի Քրիստոս էր, նա⁺ ոչ կամէր զմահն եւ զչարչարանս եւ կամակից էր կամացն Պետրոսի, պարտ էր զՊետրոս բարեկամ անուանել, քան ○թէ՝ «Գայթակղութիւն իմ ⌜ես» [Մատթ. ԺՁ 23],- ասէ⌝: [14] Եւ դարձեալ, ասէ Տէրն. «Իջի ես յերկնից, ոչ զի զկամս իմ արարից, այլ զկամս Այնորիկ, որ առաքեացն զիս» [Յովհ. Ջ 38]: [15] Տեսանե՞ս, զի իջեալ Բանն ասաց զայս: Ոչ եթէ այլ էր կամք Հաւրն, եւ այլ⁺՝ կամք Բանին, այլ զայն ցուցանէր, թէ ⌜ամենայն իրաւք⌝ հնազանդ էր Որդի □ընդ Հաւրն երկնաւորի: [16] Եւ զասելն Յիսուսի. «Հա՛յր, եթէ հնար ինչ իցէ, անցցէ՛ բաժակս այս յինէն, ապա ○թէ ոչ՝ արբից զսա» [Մատթ. ԻՁ 39], զայն ցուցանէր Յիսուս, եթէ բաց ի խաչելութենէն ոչ գոյ հնար ազատութիւն առնել: [17] Եւ դարձեալ, զմիակամութիւնն □առաւել ցուցանէ, քան թէ զհակառակութիւնն:

XII. [1] Հարցումն:⁺ Եթէ իջեալ հրեշտակն⁺ⁱ եւ զաւրացուցանէր զնա [Ղուկ. ԻԲ 46]: [2] Պատասխանի: Հակառակորդքն ասեն, թէ զմարդկային բնութիւնն զաւրացուցանէր հրեշտակն:

8 ⁺աւետարանիչն B
9 □որ B | երկնչի B | ⌜չէ⌝ B | ⁺ի B | ⁺ⁱեւ B
10 □երկն A | չարչարան A | ⁺կամիս B | կամք B
11 կամքն(1) B | կամքն(2) B | □ընդ B | այս B
12 ⁺գայթակղութիւն իմ ես դու B | ⁺ⁱեւ B | զմահն B
13 ⁺եւս B | զչարչարանսն B | ○ B | ⌜եւ սատանայ ասել⌝ B
15 կամքն (1) B | ⁺էր B | կամքն(2) B | ցուցանէ B | ⌜ամէնուրեք⌝ B | □միածին B
16 զբաժակս զայս AB | ○ A | ցուցանէ B | □բայց B
17 □առնել B | հակառակութիւն B
1 ⁺Որ ասէ աւետարանիչն B | թէ B | հերեշտակ B | ⁺ⁱյերկնից B
2 հակառակքն B | բնութիւն B

94ա [3] Մի՞թէ+ Բանն // Աստուած ոչ էր ⌜ընդ նմա, այսինքն⌝՝ ի մարմնին։
[4] Եւ եթէ ի մարմնի էր՝ ըստ Պաւղոսի, որ ասէ. «Ի նմա բնակէ ամենայն լրումն Աստուածութեան ○մարմնաւորապէս» [Կող. Բ 9], ընդէ՞ր եւ Բանն Աստուած ոչ զաւրացուցանէր զիւր մարդկութիւնն, որ արարիչն է հրեշտակաց, քան □թէ՝ հրեշտակն, որ արարած էր ի նմանէ։ [5] Այլ այս է ճշմարիտն, քանզի որպէս զամենայն կիրս վասն մեր կրեաց Մինն ի Սրբոյ Երրորդութենէն կամաւորաբար, նոյնպէս եւ զզաւրանալն ի հրեշտակէն, զի զտկարութիւնս մեր բարձցէ։ [6] Եւ ○որ ասաց ցԱդամ+. «Քրտամբ երեսաց ⌜քոց կերիցես զհաց քո⌝» [Ծն. Գ 19], ⌜նոյնպէս եւ⌝ ինքն քրտնեցաւ եւ զմարմին զիւր ետ մեզ հաց անմահութեան եւ զքիրտն Ադամայ □եբարձ։ [7] Եւ դարձեալ ուսոյց մեզ, եթէ ի ժամանակի նեղութեան այսպէս պարտ է աղաւթել, մինչեւ քիրտն □հիրեւ զարիւն ի վերայ երկրի հեղցի։ [8] Քանզի ասէ □Աւետարանն, թէ+ «սկսաւ Յիսուս առնել եւ ուսուցանել» [Գործ. Ա 1]։

XIII. [1] Հարցումն։ Ընդէ՞ր ասաց □Յիսուս, թէ՝ «Աստուա՛ծ, Աստուա՛ծ իմ+, ընդէ՞ր թողեր զիս» [Մատթ. ԻԷ 46]։ [2] Պատասխանի։ ⌜Բազումք ի հերձուածողացն⌝ ասեն, թէ մարդկային բնութիւնն ասաց առ աստուածային բնութիւնն, թէ՝ «Աստուա՛ծ Աստուա՛ծ...»։ [3] Ո՛վ յիմար, զի թէ մարդկային բնութիւնն ասաց զայս, ահա որ զմարդկային բնութիւնն, որ ի Քրիստոս էր, մեղանչական ասէք։ [4] Քանզի Դաւիթ ասէ. «Աստուա՛ծ, Աստուա՛ծ իմ+, ընդէ՞ր թ<ողեր զիս]։ [5] ⌜Հեռի եղէ վասն բանի յանցանաց իմոց⌝» [Սաղմ. ԻԱ 2-3]։ [6] Եւ ցուցանէ Դաւիթ, եթէ որք թողեալ յԱստուծոյ՝ վասն մեղաց իւրեանց հեռացեալ են+։ [7] Որք զայսպիսի բանքս ○ասեն ի վերայ մարդկային բնութեանն, որ ի Քրիստոս էր+, նոքա հեռացեալ են ի ⌜Սուրբ Հոգւոյն⌝։

3 +եւ B | ⌜–⌝ B
4 Աստուածութեանն B | ○ B | էր B | □զի B
6 ○ B | +թէ B | քրտամբ B | ⌜եւ այլն⌝ A | ⌜նոյն⌝ B | □մաքրեաց B
7 □իւր եւ B
8 □աւետարանիչն B | +զայս ամենայն B
1 □Փրկիչն B | +նայեաց առ իս B
2 ⌜բազում հարձուածողք⌝ B | +իմ նայեա՛ց առ իս B
4 +նայեաց... B
5 ⌜–⌝ B
6 Աստուծոյ B | +:Եւ B
7 ○ B | +ասեն B | ⌜շնորհաց Հոգւոյն Սրբոյ⌝ B

[8] Եւ այս եւս □տա//ռակուսէ նոցա, քանզի ասաց Յիսուս. «Աստուա՛ծ, Աստուա՛ծ իմ+, ընդէ՞ր...»։ [9] Զի եթէ մարդկային բնութիւնն ասաց զայս առ աստուածային բնութիւնն, ապա եւ աստուածային բնութիւն Բ է, քանզի Յիսուս Բ անգամ ասաց. «Աստուա՛ծ, Աստուա՛ծ ○իմ»։ 94բ
[10] Եւ եթէ մարդկային բնութիւնն ○ասաց առ Սուրբ Երրորդութեան անձնաւորութիւնն, ընդէ՞ր երիցս անգամ ոչ ասաց, քանզի անձնաւորութիւնքն երեքն են, մի՞թէ զմինն մոռացաւ ասել. քա՛ւ լիցի։ [11] Այլ մեզ պարտ է այսպէս իմանալ, քանզի առ Մովսէս ասաց որ Էնն, թէ՝ «Ես եմ Աստուած Աբրահամու, Աստուած Իսահակայ եւ Աստուած Յակովբայ» [Ելք Գ 6]։ [12] Աստուած Աբրահամու՝ Հայր+, եւ Աստուած Իսահակայ՝ Որդին Միածին, եւ Աստուած Յակովբայ՝ Հոգին Սուրբ։ [13] Եւ ասաց Աստուածն Իսահակայ առ Աստուածն Աբրահամու եւ Աստուածն Յակովբայ. «Աստուա՛ծ, Աստուա՛ծ իմ, ընդէ՞ր...»։ [14] Իսկ խոյն փոխանակ Իսահակայ ⌜կախեցաւ ի ծառոյն⌝, եւ Աստուածն Իսահակայ փոխանակ ամենեցուն կախեցաւ ի խաչէն։ [15] Եւ որպէս վասն մեր խաչեցաւ Մինն ի Սրբոյ Երրորդութենէն, նոյնպէս եւ վասն մեր աղաղակեաց առ Հայր եւ Հոգին Սուրբ եւ ասաց. «Աստուա՛ծ, Աստուա՛ծ իմ, ընդէ՞ր...»։ [16] Ոչ եթէ ինքն էր թողեալ, այլ Ադամ հեռացեալ էր, եւ խաչելութեամբն իւրով մերձեցոյց առ Հայր եւ Հոգին Սուրբ։

XIV. [1] Հարցումն։+ Աւանդեա՞ց Յիսուս զբանական հոգին ի վերայ խաչին, ⌜թէ՞ ոչ։⌝ [2] Պատասխանի։ Որք ուրանան զԲանն Աստուած, ասեն, թէ մարդկային բնութիւնն մեռաւ ի վերայ խաչին։ [3] Ո՛վ հայհոյիչ, եթէ մարդկային բնութիւնն մեռաւ, եւ աստուածայինն՝ ոչ, ⌜ահա որ մարդկային բնութիւնն ծնաւ ի Կուսէն, եւ աստուածայինն՝ ոչ⌝։ [4] Քան//զի որ ծնաւ, նոյնն եւ մեռաւ։ 95ա

8 զայս B | □տարակուսս է B | +նայեա՛ց եւ այլն B
9 բնութիւն(1) B | բնութիւնն(3) B | ○ B
10 ○ B | Երրորդութիւնն A | անձնաւորութեանն A | □է B
11 Մովսիսիւն A
12 +Սուրբ B
14 ⌜–⌝ A
1 +Թէ որպէս B | ○ B
3 բնութիւն B | ⌜–⌝ B
4 ծնաւն B

[5] Եւ եթէ զծնունդն Աստուծոյ ասէք եւ զմարդն ոչ յիշէք, եւ զմահն մարդոյ ասէք եւ ոչ՝ Աստուծոյ+, ահա որ զերկոսին ուրացեալ էք՝ ի ծնունդն՝ ◻մարդն եւ ի մահն՝ Աստուածութիւնն: [6] Եւ եթէ ասիցեն, թէ աստուածային բնութիւն ոչ մեռանի, քանզի Աստուածութիւն Երրորդութիւնն է, ասասցուք, եթէ ի Կուսէն+ աստուածային բնութիւնն ոչ ծնանի, քանզի բնութիւնն Երրորդութեանն է: [7] Ապա եւ որ ոչն ◻մեռաւ, նա եւս ոչ ծնաւ: [8] Եւ որք այսպէս դաւանեն, ընդ Նեստորի դատապարտեսցին: [9] Այլ մեզ պարտ է դաւանել զմահն Քրիստոսի՝ որպէս+ ⌈ասէ առաքեալն⌉ Պաւղոս, թէ՝ «Հաշտեցաք ընդ Աստուծոյ արեամբ Որդւոյ նորա» [Հռոմ. Ե 10]: [10] Ոչ եթէ Բ ⌈որդի էր⌉, մինն մեռաւ եւ միւսն՝ ոչ, այլ մի եւ նոյն ○ինքն Որդին Աստուծոյ մեռաւ հանդերձ մարդկութեամբն: [11] Եւ մարդկութիւնն, որ ի Քրիստոս էր, մնաց կենդանի հանդերձ Աստուածութեամբն: [12] Եւ որ ◻մեռաւն, նոյն ինքն է կենդանի, եւ որ կենդանի էր, նոյն ինքն է եւ մեռեալ՝ ըստ Աւետարանին, որ ասէ, թէ՝ «Ի կողիցն Քրիստոսի ել արիւն եւ ջուր» [Յովհ. ԺԹ 34]: [13] Եւ եթէ ասիցեն, ○թէ արիւն զԱստուածութիւնն նշանակեաց, եւ ջուրն՝ զմարդկային բնութիւնս, քանզի մեռեալ էր, ընդ այս ◻եւս յոյժ տարակուսին, քանզի աստուածային բնութեանն արիւն ոչ գոյ, եւ մարդկային բնութիւնն ի միում ժամանակի արիւն եւ ջուր բղխել ոչ կարէ: [14] Ապա որպէ՞ս պատմեսցեն մեզ, որք զԲ բնութիւնն ասեն ի Քրիստոս: [15] Այլ մեզ պարտ է այսպէս իմանալ, քանզի ջուրն եւ արիւնն ոչ ○ի մերկ յԱստուածութենէն
95բ ել եւ ոչ ի սոսկ մարդկութենէն, // այլ <յ>անճառ միաւորութենէն:

5 +ասէք B | ◻մարդկութիւնն B | զԱստուածութիւնն B
6 բնութեամբն(1) B | Աստուածութիւնն B | +եւս B | բնութիւն(2) B | բնութիւն (3) B | Երրորդութեան B
7 ◻ 3 անընթեռնելի տառ A
8 զայսպիսիս B | դատապարտին B
9 +եւ B | ⌈10⌉ B
10 ⌈որդիս ունէր Աստուած⌉ B | ○ B
12 ◻մեռեալն էր B | էր(1) B | էր(2) B
13 ○ A | բնութիւնն(1) B | ◻եւ B | բնութիւնն(2) B
15 ○ B | Աստուածութենէն B

[16] Եւ եցոյց, ◻թէ անճառ միաւորութիւնն էր մեռեալ, եւ անճառ միաւորութիւնն էր կենդանի, եւ միաւորութիւնն եդաւ ի գերեզմանի, եւ միաւորութիւնն ազատեաց զհոգիսն, եւ միաւորութիւնն եբաց զդուռն դրախտին եւ ասաց աւազակին. «Այսաւր ընդ իս իցես ի դրախտին» [Ղուկ. ԻԳ 43]:

XV. [1] Հարցումն: Զի՞նչ է, զոր ասէ Պաւղոս ի Կորնթացիսն, ○եթէ՝ «Վկայեցաք զԱստուծոյ, զի յարոյցն զՔրիստոս ի մեռելոց» [Ա Կոր. ԺԵ 15]: [2] Պատասխանի: Որք զԱստուած ոչ հաւատան, նոքա ասեն, թէ Քրիստոս մեռաւ, եւ Աստուած յարոյց զնա ի մեռելոց: [3] Եւ այլք ասեն, թէ մարդկային բնութիւնն մեռաւ, եւ աստուածային բնութիւնն յարոյց զնա ի մեռելոց: [4] Ո՛վ եղկելի, եթէ մարդկային բնութիւնն Քրիստոս է առանց ◻Աստուածութեանն, ապա +այլ է Հայր, որ ոչ մարմնացաւ, ⌈եւ այլ է Հոգին Սուրբ, որ ոչ ծնաւ, եւ այլ է Որդին, որ ոչ մեռաւ⌉, եւ այլ է Քրիստոս, որ ծնաւ, եւ Աստուած յարոյց զնա ի մեռելոց: [5] Եւ այլ եւս, զի եթէ մարդկային բնութիւնն Քրիստոսի առանց աստուածային բնութեանն ⌈է Քրիստոս⌉, ապա ոչ գտանէք վկայութիւն, թէ Մարիամ ⌈զմարդ ծնաւ եւ⌉ զԱստուած+: [6] Քանզի աւետարանիչն ասէ. «Եւ Յիսուսի Քրիստոսի ծնունդն էր այսպէս» [Մատթ. Ա 18], եւ դուք ասէք, թէ Յիսուս Քրիստոս ⌈մարդկային բնութեանն⌉ է ○անուն եւ ոչ՝ միաւորութեանն, ⌈զի ամենեւին սուտ էք⌉: [7] Եւ եթէ միաւորութեանն է Քրիստոս անուն, ապա յայտ է, թէ միաւորութիւնն մեռաւ, որ է Քրիստոս, եւ միաւորութիւնն յարոյց զինքն ⌈ի մեռելոց⌉, որ է Աստուած: [8] Ըստ Յիսուսի, որ ասէ, թէ՝ «Իշխանութիւն ունիմ դնել զանձն իմ եւ իշխանութիւն ունիմ առնուլ ◻զնա» [Յովհ. Ժ 18]: [9] Եւ այս եւս ուղիղ է, քանզի ասէ Պաւղոս, թէ՝ «Առաքեաց Աստուած զՈր//դի իւր, որ եղեւ ի կնոջէ ⌈եւ եմուտ ընդ...⌉» 96ա
[Գաղ. Դ 4]: [10] Զի որպէս առաքեաց Հայր զՈրդի իւր, նոյնպէս եւ

16 ◻մեզ B | ասէր B | ցաւազակն B
1 որ B | ○ B | յարոյց B
4 ⌈աստուածային բնութեանն⌉ B | +յայտ է, թէ B | ⌈8,9,10,11,12,13,14,01234567⌉ B
5 ⌈10⌉ B | եթէ B | ⌈–⌉ B | +ծնաւ B
6 ⌈մարդկութեանն⌉ B | ○ A | միութեանն B | ⌈–⌉ B
7 անունն B | ⌈–⌉ B
8 ◻զսա B
9 ⌈–⌉ B

յարոյց։ [11] Եւ զայս⁺ հարցանեմք ընդ նոսա՝ թէ Քրիստոս մեռաւ, եւ Աստուած յարոյց զնա ⌜ի մեռելոց⌝, Ղազար մեռաւ, եւ Աստուածութիւնն, որ ի Քրիստոս էր, յարոյց զնա ⌜ի մեռելոց⌝։ [12] Զի՞նչ աւելի էր Քրիստոս, քան զՂազար, զի զԲ-սինն Աստուած յարոյց ի մեռելոց։ [13] Որք զայսպիսի ◻բանս ի մարդկութիւնն ⁺տայցեն, որ ⁺⌜ի Քրիստոս, ընդ հրեայսն դատապարտեսցին, քանզի նոքա ⁺²իբրեւ մարդ խաչեցին, բայց աստուածասպանք ◻⌜եղեն։

XVI. [1] Հարցումն։ Զի՞նչ է, որ ասաց Յիսուս, թէ՝ «Ելանեմ ես առ Հայր իմ եւ առ Հայր ձեր եւ ⌜Աստուած իմ եւ Աստուած ձեր⌝» [Յովհ. Ի 17]։ [2] Պատասխանի։ Հայհոյիչքն ասեն, թէ աստուածային բնութիւնն ասաց. «Ելանեմ ⌜ես առ Հայր իմ եւ առ Հայր ձեր⌝», եւ մարդկային բնութիւնն ասաց⁺. «Աստուած իմ եւ Աստուած ձեր», որ է յոյժ ◻հայհոյութիւն զայս կարծել։ [3] Զի եթէ աստուածային բնութիւնն ասաց առանց մարդկային բնութեանն, յայտ է, եթէ⁺ մարդկային բնութիւնն ⌜ոչ է⌝ Որդի Աստուծոյ, քանզի ⌜եւ նա⌝ ոչ ասաց, թէ՝ «Ելանեմ⁺⌜ առ Հայր ⌜²իմ եւ առ Հայր ձեր²⌝»։ [4] Եթէ մարդկային բնութիւնն եւս ասաց, թէ՝ «Ելանեմ առ Հայր», ապա եւ մարդկային բնութիւնն եւս էր որդի։ [5] Եւ եթէ մարդկային բնութիւնն եւս էր որդի, ընդէ՞ր ոչ ասաց, թէ՝ «Ելանեմ առ Հայր իմ»։ [6] Եւ դարձեալ, թէ մարդկային բնութիւնն ասաց. «Աստուած իմ եւ Աստուած ձեր», եւ Բանն Աստուած զայս ոչ ասաց, ապա եւ մարդկային բնութիւնն զի՞նչ աւելի էր, քան զառաքեալսն։ [7] Քանզի ուրացողքն ասեն, թէ որպէս առաքելոցն Աստուած էր Հայր, նոյնպէս եւ մարդկային բնութեանն, որ ի Քրիստոս էր,
96բ Աստուած էր։ [8] Եւ թէպէտ Բանն Աստուած // ասաց զայս, թէ՝ «Ելանեմ ես առ...», հանդերձ մարդկութեամբն ասաց եւ ոչ առանց մարդկային բնութեանն առանձինն։ [9] Ապա յայտ է, թէ մարդկային բնութիւնն ի Քրիստոսի հանդերձ Բանիւն ասաց. «Աստուած իմ եւ Աստուած ձեր»։ [10] Եւ զոր ասացն Յիսուս, թէ՝ «Ելանեմ ես առ Հ<այր>...»,

11 ⁺եւս B | ⌜եւ⌝ B | ⌜ı–ı⌝ B
12 մեռելոյ A
13 ◻տկարութիւնքս B | մարդկային B | ⁺բնութիւնս B | ⁺⌜է B | դատապարտին B | ⁺² եւս B | ◻⌜ կոչեցան B
1 զոր B | ⌜այլն⌝ A
2 ⌜–⌝ A | ⁺թէ առ B | ◻մոլորութիւն B
3 թէ(2) B | ⁺եւ B | ⌜որ էր⌝ A | ⌜1(եւս/0)⌝ B | ⁺⌜ես B | ⌜2–2⌝ A
7 բնութիւնն A

պատճառն այս է, զի <զ>առաքեալսն ընդ ինքն միաւորեաց եւ ասաց, թէ՝ «Ելանեմ ես ա<ռ>...»։ [11] Զի Հայրն երկնաւոր Քրիստոսի Հայր էր բնութեամբ եւ առաքելոցն՝ շնորհաւք։ [12] Նոյնպէս եւ Մինն ի Սրբոյ Երրորդութենէն ինքն զինքն ընդ առաքեալսն միաւորեաց եւ վասն Հոգւոյն Սրբոյ ասաց, եթէ՝ «Աստուած իմ եւ Աստուած ձեր», զի ամենայն սուրբ ուղղափառք զՀոգին Սուրբ հաւատասցեն։ [13] Քանզի Աստուած էր կոչմամբն, որպէս՝ առաքելոցն, Աստուած էր արարչագործութեամբն, եւ վասն զի զառաքեալսն ընդ ինքն բարձրացոյց եւ ասաց, թէ՝ «Ելանեմ...»։ [14] Եւ ինքն Քրիստոս ընդ առաքեալսն խոնարհեցաւ եւ ասաց, թէ՝ «Աստուած իմ եւ Աստուած ձեր⁺»։ [15] Ըստ այնմ, զոր ասէ առաքեալն Պաւղոս, թէ «Պարտ էր նմա ◻ամենայնիւ⁺ եղբարց նմանել» [Եբր. Բ 17], «զի եղիցի նա անդրանիկ ի մէջ եղբարց բազմաց» [Հռոմ. Ը 28], այսինքն՝ առաջնորդ եւ փրկիչ ամենայն ուղղափառ հաւատացելոց։

XVI. [1] Հարցումն։ Ընդէ՞ր ասաց Յիսուս յետ յարութեանն, թէ՝ «Տուաւ ինձ ամենայն իշխանութիւն...» [Մատթ. ԻԸ 18] ⌜եւ այլն⌝։ [2] Պատասխանի։ ◻Զարափառքն ասեն, թէ յառաջ քան զյարութիւնն ⌜մարդկային բնութիւնն⌝ ոչ ունէր զամենայն իշխանութիւնս եւ յետ յարութեանն ապա ընկալաւ, եւ վասն այսորիկ ասաց, թէ՝ «Տուաւ
ինձ ամենայն իշխանութիւն»։ [3] Ո՛վ եղկելի, զի եթէ յառաջ քան // 97ա
զյարութիւնն ոչ ունէր զամենայն իշ<խանութիւն>, ընդէ՞ր ասէր առաքելոցն, թէ՝ «Ետու ձեզ⌝ իշխանութիւն կոխել զաւազ եւ զկարիճս ⌜եւ զա<մենայն զաւրութիւն թշնամւոյն>⌝» [Ղուկ. Ժ 19]։ [4] ○Եւ աւանդ ասելով՝ զգունդս դիւաց ◻նշանակէ, եւ կարիճ՝ զպիղծ հերձուածողսն⁺։ [5] Վասն զի հանապազ հերձուածողքն, որ կարիճ անուանեցան, առնուն զաւրութիւն ի սատանայէ, որ աւանդ կոչեցան եւ ◻խայթեն զՔրիստոս։

14 -{XVI 4- XVI 14} B |
15 որ B | ◻ամենայն B | ⁺իրաւք B | յեղբարսն(1) B
1 ⌜–⌝ B
2 ◻հայհոյիչքն B | ⌜–⌝ B | իշխանութիւն(1) B
3 ասաց B | ⌜տուաւ Ինձ ամենայն⌝ B | զաւազն B | զկարիճն B | ⌜ı–ı⌝ B
4 ○ A | ◻ցուցանէ B | ⁺նշանակէ B
5 կարիճն B | ◻խեթեն A

[6] Եւ դարձեալ, թէ մարդկային բնութիւնն Քրիստոսի ոչ ունէր իշխանութիւն յառաջ քան զյարութիւնն, ապա զայս ո՞ր բնութիւն ասաց, թէ՝ «Որպէս Հայր ունի կեանս յանձին իւրում, ○նոյնպէս եւ Որդւոյ ետ ունել կեանս յանձին իւրում, եւ իշխանութիւն ետ նմա դատաստան առնել» [Յովհ. Ե 26]: [7] Զի եթէ ⌜առանց մարդկային բնութեանն ասաց Բանն⌝, ահա որ Բանն Աստուած+ ոչ եւս ունէր ⌜իշխանութիւն եւ⌝ կեանս յանձին+⌝: [8] Քանզի ասէր Յիսուս, թէ՝ «Որդւոյ ետ ունել կեանս յանձին իւրում»: [9] Այլ եւս պատճառ, զի եթէ Բանն Աստուած ասաց զայս, ապա եւ մարդկային բնութիւնն, որ ի Քրիստոս էր, նա ոչ էր Որդի Աստուծոյ, քանզի մի Որդի գոյ Աստուծոյ եւ ոչ Բ: [10] Եթէ զմարդկային բնութիւնն, որ ի Քրիստոս էր, եւ ասէք, եթէ Որդի էր Աստուծոյ, ահա որ Բ որդի ասէք Հաւրն երկնաւորի, մինն՝ բնութեամբ եւ միւսն՝ շնորհաւք: [11] Եւ յայս Բ որդւոցս զո՞րն ասէք, թէ ծնաւ կամ զո՞րն ասէք, թէ մեռաւ: [12] Եւ այլ իմն պատասխանի. զի եթէ մարդկային բնութիւնն ասաց. «Որպէս Հայր ունի կեանս, նոյնպէս եւ Որդւոյ ետ», ապա յայտ է, թէ յառաջ քան զյարութիւնն
97բ մարդկային բնութիւնն եւս ունէր զամենայն իշխանու//թիւնս: [13] Բայց յետ յարութեանն ընդէ՞ր ասաց, թէ՝ «Տուաւ ին<ձ>...»: [14] Եւ զայս ասէր Յիսուս, զի կարկէր զբերանս հերձուածողաց, որք ասէին, թէ Քրիստոս ազատեաց զհոգիս արդարոցն եւ զմեղաւորացն՝ ոչ: [15] Ո՛վ եղկելի, զի եթէ մեղաւորացն ի դժոխոցն ոչ ազատեաց, յայտ է, թէ սատանայի իշխանութիւն մեծ է քան զՔրիստոսին, քանզի Քրիստոս մեղաւորսն բազում ասաց եւ զարդարսն սակաւ: Ահա, որ ոչ հաւատայք Քրիստոսի: [16] Քանզի Քրիստոս ասէ. «Տուաւ ինձ ամենայն...», զի երկնաւորաւքն հանդերձ զնա Աստուած հաւատասցեն, եւ որ ինչ յերկրի ասաց, զի ոչ ինչ եթող ի ձեռն սատանայի, ըստ այնմ, զոր ասաց Յիսուս. «Տուաւ ինձ ամենայն իշխա<նութիւն>...»: [17] Դարձեալ ասէ Յիսուս. «Յորժամ բարձրացայց, զամենեսեան ձգեցից առ իս» [Յովհ. ԺԲ 32]: [18] Ո՛վ անմիտ հերձուածող, ընդէ՞ր հակառակիս ընդ Քրիստոսի: [19] Տեսանե՞ս, զի զամենեսեան ասէ, եւ դու ասես՝ ոչ: [20] Մի՞թէ դու առաւել գիտես, քան զՅիսուս եւ կամ ընդ նմա էիր ի քակել դժոխոցն. քա՛ւ լիցի: [21] Եւ դարձեալ ասէ Յիսուս. «Իշխան

6 եթէ(1) B | անձին(1) B | ○ B | անձին(2) B
7 ⌜4(+Աստուած)3(+զայս)012⌝ B | +նա B | ⌜–⌝ B | +ի իւրում B
8 զկեանս B
9 բնութիւն B

աշխարհիս այսորիկ դատապարտեալ է» [Յովհ. ԺԲ 31]: [22] Եւ անարատ Կոյս Աստուածածինն ասէ. «Յրուեաց զամբարտաւանն եւ քակեաց զհզաւրն յաթոռոց, զխոնարհս բարձրացոյց» [Ղուկ. Ա 31-32], վասն զի ոչինչ եթող ընդ նմին: [23] Եւ Դաւիթ ասէ վասն հոգւոցն, որ ի դժոխս են. «Տէ՛ր, հաներ ի դժոխոց զանձն իմ» [Սաղմ. ԻԹ 4]:

XVII. [1] Հարցումն: Ընդէ՞ր ասաց □Աւետարանն. «Զ Աստուած ոչ ոք ետես+, բայց միածին Որդի+⌝» [Յովհ. Ա 18]: [2] Պատասխանի: Բազում անգամ կամեցան մարդիկ+ զ Աստուած տեսանել եւ ոչ կարացին, զի ոչ էին // կամք Աստուծոյ, որ տեսանէին ○զնա: [3] Բայց 98ա
որոց կամէր Աստուած՝ զինքն ցուցանէր: [4] Ըստ Մովսիսի+՝ երեւեցաւ Աստուած Ադամայ բազում անգամ [Ծն. Ա-Գ]: [5] ⌜Եւ ըստ Յեսայեայ⌝՝ «Տեսի զՏէր նստեալ յաթոռ+...» [Ես. Զ 1]: [6] Եւ Յ<ակ>ովբ ասէ. «Տեսի զՏէր+ դէմ յանդիման եւ ապրեցաւ անձն իմ» [Ծն. ԼԲ 30]: [7] Եւ+ Ստեփաննոս+⌝՝ «Աստուած փառաց երեւեցաւ+2» [Գործ. Է 2]: [8] Եւ Դաւիթ+՝ «Աստուած մեր յայտնապէս՝1» [Սաղմ. ԽԹ 3]: [9] Ընդէ՞ր ասէ, թէ՝ «Զ Աստուած ոչ ոք ետես ի մարդկանէ»: [10] Այլ զայն կամի ցուցանել, թէ զէութիւն աստուածային բնութեանն, ○այսինքն՝ Սուրբ Երրորդութեանն, ոչ ոք կարէ տեսանել ո՛չ աչաւք եւ ո՛չ մտաւք: [11] Ապա եթէ+ կամեսցի, յայտնեսցէ զինքն, որպէս ○զի կարողք □լինիմք տեսանել զնա հաւատով:+1

23 Բարձրացոյց եւ զմեծատունս արձակեաց յունայն: Տեսանե՞ս, զի յունայն ասէ, վասն զի ոչինչ եթող նմա: Եւ Դաւիթ ասէ վասն հոգւոցն, որ ի դժոխսն էին. «Ասաց Տէր. «Ի խորոց անդընդոց դարձուցից եւ ի միջոյ զայն ի դուրս կորզեցից»» [Սաղմ. ԿԷ 23] / (VII 10-23) B
1 ասէ B | □Յովհաննէս, թէ B | +ի մարդկանէ B | Որդին B | +⌝որ ի ծոց Հաւր, Նայ պատմեաց մեզ B
2 +որ B | տեսանէին(1) B | կամքն B | ○ B
3 ցուցանել A
4 +որ ասէր B
5 ⌜Եւ Եսայի ասէ⌝ B | +բարձրութեան B
6 +նստեալ B
7 +սուրբ B | +⌝յիւրում քարոզութեանն ասէ B | +2երեւեցաւ Աբրահամու հաւր մերում մինչ ի Միջագետս էր B
8 +ասէ B | +⌝եկեսցէ: Բայց B
10 ○ B | Երրորդութեան B
11 թէ B | +Ինքն B | ○ B | □լինիցիմք B

XVIII. [1] ○Հարցումն։ Զի՞նչ է, որ ասէ Պաւղոս+, թէ՝ «Հաւատարիմ
եղեւ Արարչին իւրոյ» [Եբր. Գ 2]։ [2] Պատասխանի։ Չարափառքն
ասեն, թէ Պաւղոս զՔրիստոս արարած ասէ։ [3] Նախ ասասցուք եւ
մեք ընդդէմ նոցա, թէ Պաւղոս յԵբրայեցւոց թուղթն արարած ասէր
զՔրիստոս։ [4] Եւ հրեայքն+՝ «Ծ ամ չեւ է քո ⌜եւ զԱբրա<հա՞մ⌝ տե-
սեր>» [Յովհ. Ը 57]։ [5] Եւ Արիսոս ասէր, թէ Քրիստոս արարած է եւ
ոչ Արարիչ։ [6] Եւ դուք, ո՛վ □զազիրք, ասէք, թէ արարած է եւ ոչ
Արարիչ։ [7] Ապա եւ դուք զանձանց վկայէք, թէ հրեայքն եւ Պաւղոս
եւ Արիոս ⌜համախոհք են⌝։ [8] Եւ դարձեալ ընդդէմ նոցա ասեմք, թէ
Պաւղոս զՔրիստոս արարած ասէ, որպէս եւ նոքա կարծեն, ասասցեն
մեզ, թէ ի Քրիստոս<ի> ո՞ր բնութիւն ⌜արարած է⌝, աստուածայի՞նն+,
թէ՞ մարդկայինն+⌝։ [9] Գիտեմք,+ զի ասէք, թէ մարդկային բնութիւնն ⌜է
98բ արարած⌝, որ ի Քրիստոս է, եւ աստուածայինն+⌝ արարիչ է // եւ ոչ
արարած։ [10] Ընդ այս եւս պապանձին։ [11] □Զի եթէ մարդկային բնու-
թիւն Քրիստոսի արարած է, եւ նա Քրիստոս է առանց Բանին
Աստուծոյ, ⌜ապա յայտ է, թէ Բանն Աստուած, որ արարիչ է, նա ոչ
է Քրիստոս։ [12] Եւ եթէ մարդկային բնութիւնն առանց Բանին Աստու-
ծոյ ասեն⌝, թէ ոչ ասի Քրիստոս, ապա ընդէ՞ր ասէ Պաւղոս, թէ՝
«Յիսուս Քրիստոս հաւատարիմ եղեւ Արարչին+» [Եբր. Գ 2]։ [13] Եւ
այլ եւս, զի թէ Պաւղոս զՔրիստոս արարած ասէ,+ որպէս ֆռանկն
ասէ, բայց ընդէ՞ր նոյն ինքն ○եւ Պաւղոս ասէ, թէ՝ «Յիսուսիւ
Քրիստոսիւ ○1եղեւ ամենայն, ○2որ ինչ եղեւն, ○3այսինքն՝ աթոռք+⌝,
իշխանութիւնք ⌜եւ պետութիւնք⌝» [Կող. Ա 16]։ [14] Եւ դարձեալ ⌜ասէ
Պաւղոս+⌝. «Ակն կալցուք մեծին Աստուծոյ եւ Փրկչին+⌝ Յիսուսի

1 ○A | +վասն Քրիստոսի B
4 +ասէին առ Քրիստոս B | ⌜–⌝ B
5 ասէ B
6 □զասիրք A
7 ⌜համախոհ էք⌝ B
8 ⌜10⌝ B | աստուածային B | +բնութիւնն B | մարդկային B | +⌝բնութիւնն B
9 □գիտեմ B | +թէ B | բնութիւն B | ⌜10⌝ B | աստուածային B | +⌝բնութիւնն B
11 □եւ B | թէ B | բնութիւնն B
12 ⌜–⌝ A | եթէ(1) B | +իւրոյ B
13 ասէր(1) B | +եւ B | ○ B | ○1 B | ○2 B | ○3 B | +⌝թէ B | ⌜–⌝ B
14 ⌜10(+թէ)⌝ B | +⌝մերոյ B

Քրիստոսի» [Տիտ. Բ 13]։ [15] Այլ այս է ճշմարիտն, քանզի ասէ Պաւղոս.
«Քրիստոս հաւատարիմ եղեւ Արարչին+»։ [16] Տեսանե՞ս, զի Պաւղոս
զՔրիստոս հաւատարիմ ասաց Հաւրն երկնաւորի։ [17] Քանզի ոչ էր
կամքն Քրիստոսի Հաւր կամացն հակառակ։ [18] Վասն այնորիկ եւ
Պաւղոս զՔրիստոս հաւատարիմ ասէ եւ Արարիչ ասաց զՀայր
Քրիստոսի։ [19] Քանզի Բանն Աստուած առանց մարդկային բնութեանն
⌜ոչ ասի Քրիստոս, եւ ոչ մարդկային բնութիւնն⌝՝ առանց Բանին
Աստուծոյ+։ [20] Այլ միաւորութեանն է Քրիստոս անուն։ [21] Եւ վասն
միաւորութեանն Պաւղոս զՀայր Արարիչ անուանեաց Քրիստոսի,
քանզի զմիաւորութիւնն Հայր ⌜եւս արար⌝։ [22] Ըստ Պետրոսի, որ ի
«Գործս ○Առաքելոց»-ն ասէր առ հրեայսն, եթէ՝ «Գիտասցէ ամե-
նայն տունդ Իսրայէղի, զի Տէր զնա աւծեալ Աստուած արար, զայն
Յիսուս, զոր դուքն խաչեցէք» [Գործ. Բ 36]։ [23] Տեսանե՞ս, զի+ Պետ-
րոս □արար ասաց, բայց աւծեալ ասաց եւ ոչ՝+⌝ ստեղծեալ։ [24] Նոյ-
նպէս եւ Պաւղոս զՀայր Արարիչ ասաց Քրիստոսի վասն միաւորու-
թեանն եւ ոչ՝ վասն ստեղծագործութեանն։ [25] Եւ վասն Բանին
Աստուծոյ ասէր Դաւիթ. // «Աստուած մեր յերկինս եւ յերկրի. ⌜զամե- 99ա
նայն, զոր ինչ կամեցաւ՝ եւ արար⌝» [Սաղմ. ՃԼԴ 6]։ [26] Քանզի Բանն
Աստուած, որ յերկինս էր ընդ Հաւր եւ+ Սուրբ Հոգւոյն, իջեալ յերկ-
նից եւ էառ կատարեալ մարդկութիւն ի սրբոյ Կուսէն եւ արար
զանճառ միաւորութիւնն։ [27] Եւ վասն Հոգւոյն Սրբոյ ասաց հրեշտակն
առ Յովսէփ, թէ՝ «Յղութիւն նորա ի Հոգւոյն Սրբոյ է» [Մատթ. Ա
20]։ [28] Եւ սուրբ հարքն ասացին, թէ՝ «Հոգւովն Սրբով+ էառ զամե-
նայն ⌜ինչ, որ⌝ է ի մարդ՝ առանց ապականութեան»*։ [29] Զի թէպէտ+
Որդին միայն մարմնացաւ, այլ Հայր եւ Հոգին Սուրբ կամակիցք եւ
գործակիցք էին նմա։

15 +իւրոյ B
16 ասէ B
19 ⌜–⌝ B | +ոչ ասի Քրիստոս B
21 ⌜Արարիչ ասէ⌝ A
22 Գործսն B | ○ B | գիտասցի A
23 +եւ B | □արարիչ A | +⌝ասաց, թէ B
25 ⌜–⌝ A
26 +ընդ B | էջ B |զկատարեալ B | մարդկութիւնն B
28 +որով | ⌜10⌝ B
* Հմմտ. Հաւատոյ հանգանակ, Ժամագիրք, Երուսաղէմ, 1959, էջ 460։
29 +միածին B | կամակից A | գործակից A

XIX. [1] ⌜Հարցումն⌝։ Զի՞նչ է, զոր ասէ Պաւղոս, ○թէ՝ «Հոգին ցանկայ հակառակ մարմնոյ եւ մարմինն □ցան<կայ>...» [Գաղ. Ե 17]։ [2] Պատասխանի։ ○Ասեն ոմանք ի □չարափառացն, թէ հոգին մարդոյ զարդարութիւնն □կամի, եւ մարմինն՝ մեղքն։ [3] Ո՛վ յիմարք, թէ հոգի մարդոյ զմեղսն ոչ կամէր, ապա յայտ է, թէ+ ոչ գործէ, եւ եթէ ոչ գործեն ամենայն հոգիք զմեղս եւ ոչ կամակից են մարմնոյն, որ զմեղսն գործեն։ [4] Յայտ է, թէ+ ի դժոխս ոչ երթան, ⌜եւ ապա⌝ դատաստանն Աստուծոյ ոչ է ճշմարիտ։ [5] Եւ դարձեալ, թէ ամենայն մարմին զարդարութիւնն ոչ կամենայ, յայտ է, թէ ամենայն մարմին յարքայութիւնն Աստուծոյ ոչ մտանէ։ [6] Եւ թէ ⌜արքայութիւն Աստուծոյ եւս մտանէ ամենայն մարմին⌝, յայտ է, թէ ընդ այս+ ⌜դատաստանն Աստուծոյ ոչ է⌝ ուղիղ։ [7] Այլ եւս պատճառ զի թէ հոգի մարդոյ հանդերձ մարմնովն զմեղս ոչ գործէ եւ ոչ կամակից է մարմնոյն, որ զմեղս գործէ, ապա ընդէ՞ր բարբանջեն ○հերձուածողքն եւ ասեն, թէ
99բ քաւարան գոյ, եւ զներելի մեղքն քաւէ հոգին։ // [8] ⌜Եւ այս⌝ կարի յոյժ յիմարութիւն է։ [9] Քանզի որ զմեղս ոչ գործէ եւ ոչ կամենայ, □եւ մարմինն, ○որ զմեղս գործէ, զիա՞րդ հոգին փոխանակ մարմնոյն երթայ ի քաւարանն եւ զմարմնոյն մեղսն քաւէ։ [10] ⌜Եւ այս⌝ ոչ է ուղիղ դատաստան։ [11] Այլ այս է ճշմարիտն, քանզի Պաւղոս ասէ, թէ՝ «Հոգին ցանկայ ⌜հակառակ մարմնոյն, եւ մարմինն ցանկայ հակառակ հոգւոյն⌝»։ [12] Ոչ եթէ վասն □մարդոյն ասէ, այլ վասն գործոց մարդկան։ [13] Ըստ այնմ, զոր+ ինքն ասէ, թէ՝ «Ընդ հոգեւորսն զհոգեւորսն խաւսիմք» [Ա Կոր. Բ 13]. ոչ եթէ ընդ անմարմնոցն խաւսիմք, այլ ⌜ընդ այնոսիկ⌝, որք զարդարութիւնն գործէին, զնոսա հոգեւորս կոչէ։

1 որ B | ○ B | մարմնոյն(1) B | □հակառակ հոգոյն B
2 ○ B | □չարախաւսիցն ասեն B | □ասէ A | մարմին A
3 եթէ (1)B | հոգին B | կամի B | +եւ B | հոգիքն B | զմեղսն B
4 +եւ B | ⌜10⌝ B
5 եթէ(1) B | զարդարութիւն B | մարմինք B | մտանեն B
6 եթէ(1) B | ⌜4523(յ+0)1⌝ B | +եւս B | ⌜2301⌝ B
7 եթէ(1) B | հոգին B | ○ B
8 ⌜–⌝ B
9 կամի B | □որ B | ○ B | մարմնոյ B
10 ⌜–⌝ B
11 ⌜–⌝ A
12 □մարմնոյն A .
13 +եւ B | անմարմնոց B | խաւսէր(2) B | ⌜–⌝ B | կոչեցին B

[14] Եւ դարձեալ, ⌜Պաւղոս ասէ⌝. «Ո՞չ ապաքէն մարմնաւոր էք եւ ըստ մարմնոյ գնայք» [Ա Կոր. Գ 3]։ [15] Ոչ եթէ այսու ընդ անհոգի մարդոյ+ խաւսի, այլ որ զմեղս գործէին, զնոսա մարմնաւորս անուանէ։ [16] Քանզի արդարութեան փառքն անաւսր է եւ աներեւոյթ, վասն այնորիկ զնա հոգի ասէ Պաւղոս։ [17] Եւ մեղքն՝ թանձր, եւ անարգանքն նորա երեւի ○յոյժ, վասն այնորիկ զնա մարմին կոչէ։ [18] Եւ յիրաւի ասէ Պաւղոս, թէ արդարութիւնն ցանկայ հակառակ մեղացն, եւ մեղքն ցանկայ հակառակ արդարութեանն։ [19] Այլ հոգի եւ մարմին մարդոյ յաւրէ, յորմէ+ միաւորեցան, զամենայն ⌜ինչ, զոր⌝ առնեն, միաւորութեամբն առնեն ըստ Յիսուսի, որ ասէ. «Մի՛ հոգայք վասն հոգւոց ձերոց, թէ զինչ ուտիցէք» [Մատթ. Զ 25]։ [20] Տեսանե՞ս, զի Քրիստոս զկերակուրն հոգւոյն ասէ, թէպէտ+ մարմնովն ուտէ։ [21] Եւ դարձեալ ասէ Յիսուս. «...եւ մի՛ վասն մարմնոց ձերոց, թէ զինչ ագանիցիք» [Մատթ. Զ 25]։ [22] Քանզի հանդերձն
զմարմինն ծածկէ, // բայց հոգին ցանկայ։ [23] Նոյնպէս եւ կերակուրն 100ա
զմարմինն զաւրացուցանէ, բայց հոգին ցանկայ ուտել։ [24] Եւ յայսմանէ յայտ է, թէ ամենայն իրաւք հոգին եւ մարմինն ⌜հնազանդ են միմեանց⌝ եւ ոչ՝ հակառակ։ [25] Դարձեալ ասէ Յիսուս. «Մի՛ երկնչիք յայնմանէ, որ զմարմինն ձեր սպանանէ, բայց զհոգին ոչ կարէ սպանանել» [Մատթ. Ժ 28]։ [26] «Այլ ես ցուցից,- ասէ Յիսուս,- եթէ յումմէ երկնչիցիք. երկնչիցիք+ յայնմանէ, որ յետ սպանանելոյն ունի ⌜իշխանութիւն զհոգի եւ զմարմին արկանել ի գեհեն հրոյ⌝» [Ղուկ. ԺԲ 5]։ [27] Տեսանե՞ս, զի Քրիստոս զմարմինն ասաց սպանանել, բայց զմահն եւ զերկիւղն հոգւոյն ետ, եւ ասէր ընդ հոգիսն, թէ՝ «Մի՛ երկնչիցիք ⌜դուք յայնմանէ, որ զմարմինս ձեր սպանանեն⌝»։

14 ⌜10⌝ B
15 մարդն B | +քո B | զմեղսն B | մարմնաւոր B
16 նաւսր B
17 անարգանք B | ○ B
18 արդարութիւն B | մեղաց B | արդարութեան B
19 +հետէ B | ⌜10⌝ B | առնէ(1) B | առնէ(2) B
20 կերակուրն B | ասաց B | +եւ B
24 ⌜201⌝ B |
25 զմարմինս B | սպանանել A | կարեն A
26 երկերուք(2) B | +դուք B | ⌜–⌝ A
27 երկնչիր A | ⌜–⌝ A

[28] Եւ դարձեալ ⌜ասէ Քրիստոս եւ եցոյց⌝, թէ հոգին եւ մարմինն ի
գեհեն հուրն տանջելոց են։ [29] Քանզի հոգի, որ այսաւր երկնչի եւ
խնամէ զմարմինն իւր ի սպանանելոյ, վաղիւն յարքայութիւնն Աս-
տուծոյ ոչ ○կարէ մտանել։ [29] Եւ կատարի բանն □Յիսուսի, որ ասէ,
թէ՝ «Դատեմ, եւ դատաստան ⌜իմ արդար է⌝» [Յովհ. Ե 30]։

XX. [1] ○Հարցումն։ Զի՞նչ է բնութիւն։ [2] Պատասխանի։ Ամենայն
ինչ, զոր եւ կայ, զինչ իրաւք որ յամենայն ընչից զինքն բաժանէ, այն
է բնութիւն նորա։ [3] Եւ տե՛ս, թէ անբան □անասունքն ի մարդկանէ
բաժանին, այն է նոցա բնութիւն։ [4] Եւ տե՛ս, թէ հրեշտակք ինչ իրաւք
ի Սուրբ Երրորդութենէն բաժանին, այն ○է նոցա բնութիւն։ [5] Եւ
տե՛ս, թէ Սուրբ Երրորդութիւնն ինչ իրաւք յամենայն արարածոցս
բաժանի, այն է նորա բնութիւն, որ է □այսպէս՝ Աստուած անեղ+ ○եւ
անժամանակ+1, անսկիզբն+2 ○1եւ անքանակ+3, յառաջ քան զյաւի-
տեանս+4, անիմանալի է ⌜բնութիւնն Աստուծոյ⌝ ○2եւ անթարգմանելի,
եւ գոյութիւն է անճառելի, եւ իմաստութիւն է անհասանելի։ [6] Վասն
100բ որոյ խոստովանելի է // զԵրիս Անձնաւորութիւնսն եւ զՄի Աստուա-
ծութիւնն, էութիւն անեղ, կատարեալ, անհաս ○եւ անճառ, անիմանա-
լի երկնաւորացն եւ երկրաւորացս, Արարիչ բոլորից եւ ստեղծող
ամենայն էիցս, Աստուած ի վերայ ամենեցուն՝ աւրհնեալ յաւիտեանս.
ամէն։+

28 ⌜-{0,2}31⌝ B | հրոյն B
29 ○ B | մտանէ B
29 □ Տեառն B | դատիմ A | ⌜-⌝ A
1 ○ A
2 ամենայն(2) B
3 □կենդանիքն ինչ իրաւք B | բնութիւնն B
4 ○ A
5 այս B | +է B | ○ B | +1է B | +2է B | ○1 B | +3է B | +4է B | ⌜10⌝ B | ○2 B | իմաստութիւնն A
6 Անձնաւորութիւնն A | ○ B | ստեղծիչ B

Քննական բնագրի ներկայացուող համակարգը մշակուած է «Հայ աստուածաբանական մատենադարան» շարքի համար։ Տարընթերցումները ներկայացուած են ըստ նախադասութիւնների։

Գործածուած նշաններն են՝

1. ○ - յաջորդող բառը բաց է թողնուած,
2. + - ներմուծութիւն մէկ կամ աւելի բառերի,
3. □ - յաջորդող բառը փոխարինուած է մէկ կամ աւելի բառերով,
4. ⌜ ⌝ - ներփակուած բառերը՝

   ա) փոխարինուած են այլ բառով կամ արտայայտութեամբ,

   բ) բաց են թողնուած (⌜-⌝),

   գ) ունեն այլ յաջորդականութիւն (այս դէպքում նշանների մէջ ներկայացուած է նոր յաջորդականութիւնը. օրինակ սկզբնական ⌜0123⌝ փոխարինուում է ⌜3102⌝),

   դ) ա-գ կէտերի խառը տարբերակներ. այս դէպքում նշւում են փոխարինուած եւ բաց թողնուած մասերը, բառերի նոր յաջորդականութիւնը եւն։ Օրինակ՝ երբ սկզբնական ⌜01234567⌝ տարբերակը դառնում է ⌜-{056}74(+a)2(b/3)⌝, նշանակում է, որ 0, 5, 6 բառերը բաց են թողնուած, իսկ 7-ին եւ 4-ին յաջորդում է a յաւելումը, ապա՝ 2-ը, այնուհետեւ b բառը՝ 3-ի փոխարէն։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԱՐԿԱՒԱԳ

ՅԱՂԱԳՍ ՆՀԱՆԱԿԻ ՀԱՒԱՏՈՅ ՆԻԿԻԱԿԱՆՆ ՅԺԸ-ԻՑՆ*

‹Ե›

ՆՈՐԻՆ ՅԱՂԱԳՍ, ԵԹԷ ՈՉ Է ԱՐԺԱՆ ԸՍՏ ՄԱՍԻՆ ԲԱԺԱՆԵԼ ՁԱՍՏՈՒԱԾԱՅՆՈՑ ՁԱՅՆՍ Ի ՎԵՐԱՅ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ՈՉ Ջ'ԱՌ Ի ՅԻՆՔԵՆԷ ԳՈՐԾՍ ԿԱՄ ԿԻՐՍ

I. [1]Կարողութիւն բերել հաւատամք Բանին Աստուծոյ եւ ի մարդն լինել մարդկային ինչ, թէ էր կամեցեալ՝ ոչ կրել հարկաւ բնութեան, այլեւ ոչ յորովայնի, ըստ մեզ, ժամանակաւ զարգանալ, կամ յետ ծննդեանն աւր ըստ աւրէ եւ իմաստութեամբ եւ շնորհաւք՝ ըստ Սրբոյ Աւետարանին: [2]Բայց վասն զի մարդ լինել հաճեցաւ, մարդկայնովքն, որպէս կամեցաւ, պարտ էր յաշխարհի ընթանալ եւ մի՛ հրաշափ‹առագոյնս ինչ եւ մարդեղութեան իւրոյ անարժանս ցուցանել յանկարծաւրէն, վասն զի կարգի եւ յարմարութեան, որպէս եւ յամենայնի Արարիչ է: [3]Վասն որոյ եւ ի սկզբանն, ոչ եւ ի վայրկենի միում, որ եւ կարողն էր գոյացուցանել զէիցս բնութիւն, կամեցաւ, այլեւ գործոյ եւ հանգստեան աւուրս որոշէ, զի ցուցցէ ոչ միայն բնութեան արարիչ, այլեւ աւուրց, եւ մի՛ խառնակիչս եւ անդաս, որպէս թուեցաւ արտաքնոցն, եղիցի յարարածս Աստուծոյ: [4]Եւ իմաստութեամբ թէ նայեսցի ոք եւ ի նախախնամականսն յետ արարչութեան, որք եղենն եւ լինինն եւ լինիցին, անկարգաբար ինչ տեսանել ոչ կարասցէ, քանզի զոչէն զիա՞րդ ոք տեսցէ: [5]Թողեալ անդր զքերթողացն ստեղծուածս կամ, զտիրականագոյնն ասել, առասպելս, ո՞րչափ եւս արժան էր, ուր քան յամենեսին պէտք էին, վասն անչափ մեծութեան խորհրդոյն, յարմարութեան եւ կարգաւոր իրաց՝ անընտանի ինչ ի ներքս ոչ բերել, եւ մանաւանդ, զի յայն իսկ եկեալ էր, ընդէ՞ր իսկ բնաւ եւ մարդ լինել յանձն առնոյր, թէ ոչ էր հանդերձեալ: [6]Էր մերովքս վարիլ եւ առանց մեղաց, քանզի զհրաշափառագոյնսն առաւել յայնժամ պատշաճ էր եւ իրաւացի կատարել: [7]Մի՛ պատմութեամբքն եւեթ զիրսն չափեսցուք, ուստի բազումք ի ներքս մտանեն անտեղի իմացուածք, այլեւ ի ծածկեալսն, զորս մանաւանդ ճշմարտապէս է քննելի, յառեսցուք. «Քննեցէք,- ասէ,- զԳիրս եւ տեսէք»**. ո՛չ վարկպարազի, այլ մեծաւ եւ դժուարըմբերելի աշխատութեամբ՝ բոլորովիմք առ ճշմարտութիւն զմիտսն առաքեալ եւ հաստատեալ: [8]Ապա եթէ ոչ իցէ այսպէս այս, զի՞նչ արդեաւք, յորժամ գնալ եւ խաւսել եւ տեսանել կամ լսել կամ հոտոտել, այլեւ ուտել՝ ոչ ունելով որովայն, կամ սուսեր ի ձեռին բերել եւ գաւտի ընդ մէջ ածել լսիցիմք ի Գրոց, պարտիցիմք իմանալ: [9]Մի՞թէ յաւդապատ, ըստ մեզ, ունել բնութիւն, զի մի՛ զամենայնն ասասցուք՝ զմենամարտիլն, զյառնելն, զնստիլն, զննջիլն՝ երբեմն միայն, եւ երբեմն՝ յաթոռ, երբեմն՝ ի քերովբէս կամ ի կառս, այլեւ տեսլեամբ՝ մարդոյ հինաւուրց երեւեալ: [10]Իսկ Որդի՝ իբրեւ Որդի Մարդոյ եւ նախ քան զլինելն եւ զայլսն մարդկաւրէնագոյնս զիջանելն եւ տեսանել, զհարցանելն անգիտաբար, զզղջալն, զցասնուլն, ոչ սրտի եւ ոչ զնովաւ արեան ունողի զնախանձելն, զտրտմելն, զատելն, զերեսս դարձուցանել կամ ի վերայ հաստատել երբեմն յանաւրինաց եւ յամբարշտաց, իսկ երբեմն՝ ի վերայ արդարոց եւ երկիւղածաց: [11]Արդ, որպէս վասն զայսոսիկ զանմարմին բնութենէն լսելոյ, այսպիսով բնութեամբ զնա գոլ ոչ կարծեմք, այլ տնաւրէնութիւն աստուածային կամ նախախնամութիւն կամ այլ ինչ անուանեալ զիրսն կոչեմք, ըստ պի‹տ›ոյից մերձակայից իրաց եւ ժամանակի, նոյնպէս եւ ի մարդն լինել Բանին Աստուծոյ, որ եւ Աստուած զմարդկայինսն կրելով՝ ոչ հարկաւորապէս զայնոսիկ, որպէս թէ բռնաղատեալ յաւրինաց բնութեանն, պարտիմք ասել կամ իմանալ զախտակրելն, այլ կամաւ եւ զիջանելոյ առ մերսն: [12]Մի՛ մեզ կարծեաւքն կամ զ'առ աչաւքն վասն ապացուցիցն ի վերայ բերցեն արա-*

---

* «Գանձասար» հանդէսի Զ հատորում հրատարակուել է Յովհաննէս Սարկաւագի «Յաղագս Նշանակի հաւատոյ Նիկիականն ՅԺԸ-իցն» ժողովածուի նոյնանուն վերնագրով Ա գլուխը: Ժողովածուին նուիրուած ծանուցման մէջ նշուած է, որ աւելի ծաւալուն ուսումնասիրութեամբ հրատարակութեան է պատրաստուում ժողովածուի ամբողջական բնագիրը: Սակայն նկատի ունենալով, որ վերջինս դեռեւս հրատարակուած չէ, սոյն հատորում ներկայացնում ենք ժողովածուի Ե, Զ, Է եւ ԺԱ քրիստոսաբանական բնոյթի գլուխները, որոնք հայ դաւանական մտքի կարեւոր սկզբնաղբիւրներ են:

* բն.՝ յասեսցուք

** Յովհ. Է 52

գունքն, վասն առ իմանալ ճշմարտութեանն, վասն զի եւ այնոքիկ ճշմարիտք, քանզի յԱստուած եւ առ յինքենէ նշանակեալսն՝ սուտ կարծիք եւ խաբէութիւն ոչ է եւ ոչ ասի: [13]Բայց ըստ պիտոյից, որպէս ասացաւն, այնոքիկ՝ ի պարզ եւ յամենամաքուր բնութենէն, այլեւ ըստ նշանակի իրիք լինէին մատակարարեալք եւ ցուցեալք, իսկ եթէ հարկաւորապէս, որ եւ մանաւանդ վայել է բնութեանս, այլեւ զայլսն եւ զախտսն, զորս ի մեզ կրել՝ ըստ նոցայն կարծեաց, եւ ոչ յետ լնլոյն՝ քաղցնուլ քառասնիցս աւուրց: [14]Բայց վասն զի ոչ զամենայնս մերսն կրեաց զախտս, այլ զանպարսաւսն եւեթ, զի եւ ոչ զմեղաց եւ զապականութեան, յայտ է, թէ զորս ախորժէրն եւ որովք մեզ ի դէպ էր բարեկրիլն, նաեւ՝ զորս ի խրատ եւ յուսումն մեզ կրեաց, վասն որոյ եւ մարդն իսկ լինել յանձն էառ, սոյնպէս եւ իւրովն մարմնով ի մերմէս բնութենէ առեցելով, քանզի իւր իսկ է ճշմարտապէս, զաստուածավայելուչսն կատարէր զսքանչելիս, ուստի եւ ոչ կամաւք միայն կամ բանիւ, այլեւ թքով բերանոյ եւ ձեռին մերձաւորութեամբ եւ ոտիւք, նաեւ մարմնոյն հանդերձի քաղանցիւք զախտս եւ զմահ ի բաց առաքէր:

II. [1]Եւ ո՞ւր է այժմ եւ յայսոսիկ բնութեանցն զանազանութիւն. թէ անչփոթ եւ անփոխադրելի զաստուածայինն խոստովանիմք բնութիւն, եւ բնաւ ոչ յորմէ ունէրն կողոպտեալ կամ նուաստացեալ ինչ՝ ի լինելն մարդ, այլեւ ոչ զմարդկութիւն կամ թէ զոր ըստ մեզն ասել բնութիւն բարձեալ ինչ ի միջոյ, որպէս թէ խափանեալ՝ ի գոլոյն մարմին անձնաւոր եւ մտաւոր: [2]Վասն որոյ մարդ միանգամայն եւ Աստուած ուսաք խոստովանիլ՝ ոչ սկիզբն առեալ Աստուածութեան, այլ մարդկութեան, սակայն մի եւ նոյն, ոչ այլ եւ այլ դիմաւք կամ բնութեամբ, թէպէտ եւ ոչ համաբունք եւ նոյնագոյք: [3]Քանզի նոյն, ըստ Աստուածութեան՝ անեղ, իսկ ըստ մարդկութեան՝ եղեալ ի կնոջէ. այս՝ ի լրման ժամանակաց,
256ա իսկ>* // այն՝ նախ քան զժամանակս եւ զյաւիտեանս, անճառ ի Հաւրէ՝ անմարմնական ծննդեամբն, անճառ եւ ի մաւրէ՝ ըստ մարմնական ծննդեանն, անպատմելի՝ ըստ անեղութեան, անպատմելի եւ ըստ եղելութեան, թէպէտ եւ ըստ ոմանց՝ դիւրահաս իրքն կարծիցին աստուածավայելուչ առաջին ծնունդն, ոչ՝ մարդկավայելուչ եւ երկրորդն, քանզի՝ «Ո՞ պատմեսցէ զազգատոհմն անհաւրն եւ անմաւր»**: [4]Ո՛վ մեծի խորհրդոյս, եւ զիա՞րդ ոչ պատկառեն ոմանք, որոց խաղ ճշմարտութիւնն թուի, եւ փոքր՝ մեծն, եւ լոյսն՝ խաւար, որպէս զառանցելոց նուաստաբար իմանալ կամ խաւսել յաղագս ամենեւին ծայրագունացն եւ անճառ իրացն:

III. [1]Արդ, նմա, որ այսպիսին եւ այսքան վեհագոյն, զի առաւելն թողցուք, դժուարի՞ն արդեաւք էր կամ անհնա՞ր, թէպէտ եւ քեզ թուիցի, զտարբերսն միաւորել ըստ ճշմարտութեան բնութիւնս, եւ զիա՞րդ անհնարինքն մարդկան՝ հնարաւորք Աստուծոյ: [2]Բայց, որպէս յամենայնին սքանչելի երեւի, եւ է եւս առաւել յայսմ, քանզի ոչ ինչ կարի մեծ է, կամ բնաւ իսկ «առնել Աստուծոյ մեծամեծս եւ հրաշակերտս»**, որպէս ի Ցովք գրեալ է: [3]Բայց մարդոյ երեւել բնութեամբ եւ մարդ իսկ
256բ լինել մտաց անհասանելի է, յայտ է, թէ եւ բանի բոլորովիմ//բ անճառելի: [4]Ուրեմն, ճշմարիտ է ասելն՝ զամենայն մեծամեծսն Աստուծոյ եւ յամենայնին սքանչելին գոլ նմա, նուաստ ամենեւին առ մարմնով տնտեսութեանն կամ մարդեղութեան յեղանակ համեմատելով վարկանել: [5]Սակայն եկեսցուք ասել, որքան վայելուչ է մերոյս տկարութեան եւ արժան, այլեւ ճշմարիտ իսկ, թէպէտ եւ տեսանեմք զանազան յեղանակաւք յԱստուածաշունչ Գրոց ասացեալս եւ վասն Փրկչին մերոյ բանս ե՛ւ երբեմն որպէս զմարդոյ, ե՛ւ երբեմն՝ որպէս զ՛յերկոցունց զմիոյքն, ըստ որում եւ էրն իսկ, վասն զի ոչ միայն եւ մարդ սոսկ, այլեւ Աստուած եւ մարդ համանգամայն: [6]Եւ գիտես, զի համանգամայնն ոչ է որոշից բնութեանց յետ միաւորութեան, ասեմ՝ այսպէս իմանամք եւ ասեմք զաստուածավայելուչսն, խոստովանիմք եւ զմարդկայինսն ներգործութիւնս եւ կիրս, այլեւ զկամսն, զոր գտին ասել, բայց եթէ ոչ հարկաւորապէս, այլ կամելով՝ ըստ մերոյս բնութեան, ըստ մեզն եղեալ Աստուած՝ կրէր:

IV. [1]Ո՛չ անվայելուչ վարկանիմ յարացուցիւ ոմամբ հաւատարմացուցանել եւ զայն յինքենէ իսկ, եւ եթէ փոքր ինչ զբանս վասն հաւաստապէս զեղեալսն ցուցանելոյ երկայնեսցուք, ձանձրութեան ոք // հնա-
257ա զանդեսցի, քանզի այսպէս վայել է ի միտ առնուլ տալ, զորմէ ինքն աւրինակ յարացոյցս, զի այսպէս եւ յայս անուանեցից: [2]Եկն երբեմն ինքն, որ հանդերձեալն էր ըստ աւետեացն լինել զաւակ Աբրահամու, յոր եւ աւրհնելոց էին ամենայն ազգք երկրի, առ Աբրահամ ի Մամբրէ, ոչ միայն զի զարդարսն պատուեսցէ գալստեամբն եւ զցանկութիւն վասն ազատ եւ ազատէ** որդի ունելոյ լցցէ կամ զի զամբարշտացն առ

* ՍՂ 504 հիմք դրչագրից մէկ կամ երկու թերթ ընկած է, վերականգնուած է՝ ըստ ՄՄ 6453-ի:

** Գործք Ը 33

* Ցոբ Ե 9, Թ 10

** «Վասն ազատ եւ ազատէ» արտայայտութեան իմաստն անորոշ է:

Աստուած եւ զտմարդեացն կորուստ նմա ծանուցցէ՝ որպէս բարեկամի,
եւ յաղաչանս նմա համարձակութիւն տայցէ եւ զմարդասիրութիւն, որ
եւ <առ> չարսն, հրապարակալուր արասցէ, այլ զի եւ զհիւրասիրու-
թիւն եւ զաւտարասիրութիւն, զոր կատարելապէս ունէր հաւատացեալն,
պայծառ եւ փառաւոր ցուցցէ: [3]Եւ որոց զկնի եւ առ նովաւ զգերազան-
ցեալ չափ պատուոյ փոխարինին առ աւտարս եւ առ ամենայն մարդիկ
սիրոյ սահմանեսցէ, զոր եւ յետոյ էր յինքն փոխադրելոց զմեր առ մի-
մեանս զսէրն, վասն որոյ եւ կոչեսցէ «աւրհնեալս Հաւր իւրոյ»* ասելով
զինքեանն դարմանիչս ժառանգել զնոցայն պատրաստեալ ի սկզբանէ
աշխարհի զարքայութիւն: [4]Եւ եկն ո՛չ միայն, այլ երկու խորհրդականա-
257բ գունիւք սպասաւորաւք, ամբարձ զաչսն հիւրընկալն, // ետես զարսն,
քանզի այսպէս ասէ աստուածային պատմութիւնն. «Յարեաւ, ընթացաւ
ընդառաջ եւ երկիր եպագ»**: [5]Աղաչէր հանգչել անաչխատիցն՝ որպէս
աշխատելոց, լուանալ եւ զոտսն հրաւիրէր զանմարմնոցն. ո՛յ մեծի հա-
մարձակութեանն եւ ճշմարիտ սիրոյն, արդարեւ սիրէ Աստուած, եւ «որ
կայ ի սէրն, բնակեալ է յԱստուած, եւ Աստուած ի նմա բնակէ»***:
[6]Յանդեայ ընթանայր, հասուցանէր զորթն, զոր երեր, հրամայէր եւ Սառ-
ռայի թրել նաշիհ եւ առնել բաղարջս եւ զայսոսիկ հանդերձ կաթամբ
կոգով բերեալ՝ մատուցանէր նոցա, եւ կայր ինքն ի սպասու, մինչեւ
կատարեցին զուտելն: [7]Եւ արդ, զի՞նչ ասիցես, զի՞նչ քեզ թուեսցի՝
կերա՞ն ճշմարտապէս եւ լուացա՞ն ոտիւք, թէ՞ ոչ: [8]Եւ եթէ ոչ ասիցես
կամ կարծիցես, սուտ առնես զաստուածաբանութիւնն, իսկ եթէ կերան
եւ լուացան, որ է ճշմարիտ, զիա՞րդ այսոքիկ առ անմարմնայինսն, քան-
զի զլրումն խնդրէ թափումն եւ զհանգիստ՝ աշխատութիւնն, եւ քա-
ջայայտ է անմարմնոյ ընդ այսպիսիւք ոչ անկանել ախտիւք, որոյ ոչ
ստամոքք եւ ոչ որովայն, ճանապարհ եւ ընդունակ կերակրոյ, ոչ ստա-
մոքք եւ լեզու եւ շրթունք այսոցիկ սպասաւորք եւ գործիք եւ ոչ թուրծք
258ա եւ այլք յայսոցիկ պէտս եւ ոչ ոտք աշխատակի//ք հանգստեան կամ
լուացման կարաւտք: [9]Իսկ արդ, զի՞նչ պարտ է կարծել եւ ասել կամ
զո՞ր հաստատուն համարել, եթէ ոչ՝ զոր աստուածայինն հաւաստէ Մով-
սէս, զի ընկալան ճշմարտապէս զամենայն զհիւրոյսն անճառելի իմն
աւրինակաւ եւ ծախեցաւ կերակուրն, նոյնպէս եւ առ Ղովտաւն իրքն

* Մատթ. Իե 34
** Ծննդ. ԺԸ 2
*** Ա Յովհ. Դ 16

կատարեցան, քան<զի> եւ նա զերկուսն ի Սոդոմ երթեալսն ընկալաւ
հրեշտակս:

V. [1]Եւ արդ, եթէ անմարմին գոլով նախ քան զմարդանալն՝ վասն
տեսչութեան եւ խորհրդոյ եկեր եւ զամենայն զհիւրավայելուչ սպա-
սաւորութիւնն ընկալաւ յառնէն, զիա՞րդ է անհաւանելի ասելն, եթէ ի
մարդն լինել ինքեան, այսինքն է՝ Որդւոյն Աստուծոյ: [2]Մարմնակա-
նաւքն վարէր ոչ միայն կերակրովք եւ ըմպելեաւք, այլեւ այլովք բնա-
ւորականաւք կրիւք, բայց ի մեղաց, եւ ոչ ի հարկէ աւրինաց բնու-
թեան լինէր բռնադատեալ որպէս մեք, այլ կամաւ յայն խոնարհեալ,
որ եւ առաւել է գեղեցկադէպ եւ քաջայարմար: [3]Մի՛ ասիցես, եթէ անդ
անմարմին գոլով՝ ոչ էր կարաւտ կամ ընդ հարկաւ, բայց աստ էր վասն
մարդկութեան, այլ զա՛յն ած զմտաւ, եթէ զոր ինչ կամիցի մի անգամ,
կարող է առնել, թէպէտ եւ եղական բնութեանն // հնարաւոր ոչ բնաւ 258բ
կարծիցի: [4]Եւ զայն դարձեալ, թէ նա նոյն ինքն, որ վասն տեսչութեան
անբնաւորապէս ի կերակուր խոնարհիլ եւ զոտից լուացումն յանձն
առնուլ կամեցաւ, յայնժամ եւ այժմ կարող է զոչ բնաւորն մարդոյ,
թէպէտ եւ մարդ էր, բերել յինքեան եւ ցուցանել, այսինքն՝ ոչ ի կերա-
կուր եւ յըմպելի մերձենալ եւ ոչ այլ ինչ ի մերոցս կրել, յորոց կրեացն:
[5]Բայց զի մի՛ զանվայելուչսն չափոյ մարդանալոյն առնիցէ, ոչ կամե-
ցաւ, եւ զի մի՛ առ աչաւք եւ ոչ ճշմարտապէս լինել մարդ թուիցի
ումեք, քանզի զայս յոլովք կարծեցին եւ յետ այնչափ տարացուցից,
ո՛րչափ եւս առանց այնոցիկ: [6]Որ ի Քրիստոս Յիսուս հաւատայ եւ
խոստովանի ոչ իբր ի լոկ մարդ միայն, այլ որպէս յԱստուած մարդա-
ցեալ, այսպիսեաւք յեղանակաւք իմն կրել նմա զմերս իմանայ եւ ասէ:
[7]Զի ի հարկէ բնութեանն ասել՝ յաղթահարեալ զնա կամ ամաւթոյ ար-
ժանի գոլ Բանին Աստուծոյ՝ զամենայն մարդկայինսն տալ եւ զչարչա-
րանս խաչին իւրով մարմնովն ինքեան կրել, Նեստորի է եւ Դիոդորի՝
ասողաց վեր<ա>բերութեամբ եւ ոչ ճշմարտութեամբ՝ վարկանել պարտ
Բանին զչարչարանսն, եւ է այս՝ ըստ որում Տէրն ցա//չակերտսն ասէր, 259ա
թէ՝ «Որ զձեզ անարգէ, զիս անարգէ»*: [8]Եւ ի դէպ ժամանակի տեսցուք
զՆեստորիսն եւ զերկուց ասացողացն բնութիւնս՝ ընդ միմեանս դատե-
լով, զի գիտասցես ամենեցունց նոցա զմի զգայռեալ հայհոյութիւն,
թէպէտ հայթայթին սիղոբայիւքն գողանալ զթեթեւամիտսն եւ զա-
նուսմունս: [9]Իսկ առ այժմ ջանասցուք ի զրպարտութենէ, որոց ոմանց

* Ղուկ. Ժ 16

սուտն եւեթ է սիրելի եւ ճշմարտութիւն սուղ ինչ կամ բնաւ ոչ փու-
թալի, զանձինս թափել, թերեւս հաւանիցին կամ ոչ:

VI. [1]Ասէք մեզ զանչարչարելի բնութիւն Բանին ընդ չարչարա-
նաւք արկանել, յորժամ Աստուծոյ զչարչարանս ասիցեմք եւ յորժամ
մի ասիցեմք բնութիւն Բանին Աստուծոյ մարմնացելոյ, զ'ի Կուսէն
առեալ մարդկութիւն խոստովանել ոչ ասէք, որպէս Եւտիքէսն այն, ոչ
եթէ ոչ գիտեն ասողքն զայսոսիկ, թէպէտ եւ ոչ ամենեքեան մեզ ըստ
առաքելական ուսումնն եւ ըստ սրբոցն աւանդութիւնս հարցն եւ սահ-
մանս ոչ զանցանել ի խոստովանութեանն հաւատոյ մասին. բայց զի
զամենայնն ասել թողից՝ վասն աւելորդս ասել ոչ երեւելոյ: [2]Ո՞ ոք ի
մեղանչականաց դատապարտել զանմեղս համարեցաւ գայթակղութիւն,
259բ թէպէտ եւ ոչ ի խորս չարեաց ժամանելոց // եւ արհամարհողաց կար-
ծիցի, այլ ի չափաւորաց, վասն զի ե՛ւ Եսաւ, ե՛ւ եղբարքն Յովսէփայ,
ե՛ւ Ահարովն, ե՛ւ Մարիամ, զի մի՛ ասացից զԴաթան եւ զԱբի<ր>ոն
եւ զկորխացիսն եւ ամենայն ժողովուրդն առ Քաղեբ եւ Յեսու զճշմա-
րիտն ասողս, եւ նոյն ինքն՝ առ Մովսէս եւ Ահարաւն, ոչ միանգամ, այլ
եւ յոլովակի, մի՛ բնաւ յիշեսցի եւ որ զՅովբայն չարախաւսէր: [3]Բայց
զբարեկամքն զԴաւթայ՝ Սաւուղ եւ զհրէիցն համա<յ>ն զԵղիայէ՝
Աքաաբ խանգարիչ գոչելով Իսրայէլի, իբր զինքն գոլ մոռանալով, զոր
զեկոյց մարգարէն, զանանիանցն՝ քաղդէացիքն եւ զԴանիէլէ՝ քրմացն
ժողովք, այլեւ իշխանքն առ Դարէհիւ եւ առ Կիւրոսիւ, ամենայն ազգն,
որ եթէ զՏեառնէ եւ զառաքելոցն իշխանք ժողովրդեանն եւ որք ընդ
նոսա, կամ զառաջնմէ յետ առաջնոյն վկայէ եւ զայլոց նոյնք կամ այլք
յիշել բնաւ մի՛ լիցի:

VII. [1]Բայց դուք դատաստան արդա՛ր դատեցարուք եւ մի՛ առ
աչս դատիք, այլ ուղի՛ղ, մի՛ թշնամիս զմեզ, այլ սիրելիս եւ յոյժ մանա-
ւանդ փափագողս սիրելութեան ընկալարուք: [2]Վասն զի ողբամք դառ-
նապէս զ'առ ի միմեանց վարատմանն պատճառս եւ զվարատումն եւ
260ա աղաւթեմք ջերմապէս զհաւաքումն՝ // «Տէ՛ր,- ասելով,- որ չինես զկոր-
ծանեալն Երուսաղէմ եւ զցրուեալսն ժողովս Իսրայիղի, որ ի ծառա-
յութենէ ազատես զազատ ազգիսն, եւ յանապատի հանգուցանես բիւրա-
պատիկ առատութեամբ զանսովորս պարգեւաց՝ զծարաւ եւ զսով, ոչ
հացի եւ ոչ ջրոյ, թէպէտ եւ զայնոսիկ բժշկես, որում ամենայն ինչ
անհնարին է, դիւրահնար յոյժ: [3]Ի հեղեղաց ջուրց փրկես, հասին ջուրք
յանձինս մեր, եկաք ի խորս ծովու եւ պտոյտք զմեզ ընկղմեցին եւ
շրջանք գետոց պաշարեցին, եւ զմեղացն ասեմ եւ զհերձուածողականն

ալիք եւ զբաւանք անցին ի վերայ մերոց գլխոց եւ մերժել կարծեցաք
յաչաց քոց բարձանց, որք հային ընդ ամենայն երկիր: [4]Իցէ՞ թէ յաւել-
ցուք հայել ի տաճար սուրբ քո, որոյ քարինք ցրուեցան եւ քակտե-
ցան, մինչեւ ոչ մնաց քար ի քարի վերայ, այլեւ հրով, զոր բորբոքեաց
մարդասպան դահիճն, տոչորեցաւ չինուածն, եւ մեծն Յովէլ ձայնակցէ
ողբոյս. «Հուր եկեր զգեղեցկութիւն անապատի»*: [5]Շիջցի արդ, Տէ՛ր,
քոյովն, զոր եկիր** արկանել յերկիր, հրովն ապականագործս այս հուր,
եւ ծաղկեսցի դարձեալ Իսրայէլ՝ որպէս շուշան, ծաղկեսցի եւ լցցին
ամենայն երկիր պտղով նորա, զի քոյդ հուր միայն գիտէ ոռոգել: [6]Ուրա-
խասցի միւսանգամ անապատն, ծարաւի անապատն Յորդանանու, այ-
լեւ // զաւտար հուրն զսոդոմացւոց կա՛մ չիջուսցես, կա՛մ զՂովտ զեր- 260բ
ծուսցես ի լեառնն. եթէ իցէ անդ բաբելացի ոմն հուր, քոյոյն մի՛ կա-
բասցէ վնասել, թէպէտ եւ ի ներքս իցեն կապեալք, զբորբոքիչսն ծա-
խեսցէ, զի սուրն եւ որոգայթն, զոր սրեցին եւ թագուցին, ի սիրտս
իւրեանց մտցէ եւ զոտս իւրեանց առցէ, եւ անձինք մեր ապրեսցին
որպէս ճնճղուկ յորոգայթից որսողացն եւ ի մերկացեալ սրոյ մեղաւո-
րացն: [7]Կամեա՛ց ժողովեալ զորդիս սրբոյ քաղաքին ընդ ջերմ գթոյ քոց
թեւովք եւ զոչխարս քո ի գաւիթս քո, եթէ զաւտարսն ի գաւթէն
ժողովեցեր ի նոյն լինել մի հաւտ քեզ սեփականս, զոր անուանեցեր եւ
արարեր քո՝ ո՞չ միաւորեսցես»: [8]Այսոքիկ մեր հայցուածք, միանգա-
մայն եւ ողբք, եւ զիա՞րդ ոչ սիրելիք կամ ախորժողք նախ զգեղեցիկն
սիրոյ կապ, զհամաձայնութիւնն ասեմ ուղղակի ի Քրիստոս խոստո-
վանութեանն, եւ ապա զսիրոյն շղթայս, վասն որոյ մի՛ որպէս յատե-
լեաց, այլ իբր ի սերտ <ս>իրելեաց եւ բարեմտաց, սուրբ ունողաց
սիրտ եւ անկեղծաւոր հաւատս. զամենայն ի մէնջ, որ ինչ վասն այսր
խնդրոյ, ընկալարուք, ո՛վ եղբարք:

VIII. // [1]Արդ, եթէ ըստ Ապողինարի ամբարշտութեանն՝ ասէք 261ա
Քրիստոսի ունել, այսինքն Բանին Աստուծոյ, մարմին միայն առանց
մտաւոր անձին, յիրաւի կարծէիք ասել մեզ զանչարչարելի բնութիւնն
չարչարեալ եւ ընդ չարչարանաւք, քանզի զգայութիւն չարչարանացն,
ի միայն մարմին գոլով՝ առանց մարդկայնոյ անձին մտաւորի, Բանին
Աստուծոյ, ոչ մարմնոյն կամ, զճշմարիտն ասել, մարդացելոյն Աստու-
ծոյ, այլ միայն Բանին լինի ասացեալ, որ է ամբարշտութիւն, վասն զի

* Յովէլ Ա 20
** ըն.՝ երկիր

անանձն մարմին զիա՞րդ կարասցէ զգալ զչարչարանս: [2]Եւ եթէ անանձն
ունէր մարմին Բանն, որպէս Ապողինարի թուի, ապա Բանն, որ ամենե-
ւին արտաքոյ է չարչարանաց, ընդունէր զցաւոցն զգայութիւն, զոր
մի՛ լիցի եւ կարծել անգամ ծանաւթից ճշմարտութեանն: [3]Բայց յորժամ
մարմին անձնաւոր, ըստ որում էն ասեմք Բանին ունել, ոչ այսպէս
իմանի, վասն զի թէպէտ եւ մարդկայինն անձն անհաղորդ է մարմնա-
կան չարչարանաց եւ անհատ ըստ ինքեան, սակայն ի մարմնի գոլով՝
զգայակից լինի ամենայն բնաւորականացն կրից եւ արտաքուստ պա-
տահելոց, ուստի եւ անձնաւորականք կոչին ամենայնքն: [4]Այլեւ ոմանք
261բ զոմանս յախտիցն մասունս անձին անուանեցին՝ զցաս//ումն եւ զցան-
կութիւն եւ զայսպիսիս, եւ որ ինչ վասն այսպիսեացս բանք իցեն,
իւրում տեղւոյ եւ ժամանակի շտեմարանեսցին: [5]Սակայն յայսցանէ ի
միտ առնումք, թէ զգայակից է հոգին ամենայն բնաւորականացն եւ
արտաքնոցն ախտից մարմնոյն, եւ զի զԲանն Աստուած խոստովա-
նիմք՝ միայն ոչ մարմին, այլ անձն մտաւոր առնուլ յԱստուածածին
Կուսէն, այսինքն՝ մարդ լինել Բանն՝ ըստ Գրոց: [6]Յայտ է, թէ ըստ այսմ
ինքն՝ Յիսուս Քրիստոս, որ է մարդ միանգամայն եւ Աստուած, ասի
չարչարեալ ճշմարտապէս եւ անչարչարելի մնացեալ, զի ոչ է արժան
եւ մարթ յետ միաւորութեանն յերկուս բաժանել զմիացեալսն բնու-
թիւնս, զի մի՛ ըստ Նեստորի ի հարկէ երկակս ի ներքս մուծանիցեմք
Քրիստոսս եւ մի՛ բնաւ իմացուք առանձին ինչ մարդոյ եւ առանձին՝
Աստուծոյ, զկնի մարմնանալոյն մարդանալոյ. մի ձայնս եւ մի գործս
կամ կիրս, մի եւ կամս, զի մի է Տէր մեր Յիսուս Քրիստոս՝ Որդի
Աստուծոյ: [7]Նոյն ինքն, որ նախ քան զյաւիտեանս ի Հաւրէ, ի լրման
ժամանակաց ի Կուսէ ծնեալ, զամենայն ինչ, զոր կրեաց կամ գործեաց,
միոյ եւ նմին ասեմք: [8]Զնոյն ինքն բովանդակեալ յամենայնի եւ անբո-
վանդակելի, կրեալ ի գիրկս եւ կրող զամենայն, քաղցեալ եւ կերակ-
262ա ուրիչ, ծարաւի եւ արբուցիչ, զարգաց//եալ եւ ամենակատար, ունայնա-
ցեալ եւ լի, այլեւ լցուցիչ, մեծատուն եւ աղքատ, ընդ հարկաւ եւ
ազատ, աշխատեալ եւ հանգուցիչ, անէծք եւ աւրհնութեան բաշխիչ,
ծառայ եւ Տէր, կերպարան Հաւր եւ կերպարան ծառայի, առանց դպրու-
թեան եւ վարդապետ, տկարացեալ մարմնով եւ Հաւր զաւրութիւն,
զարհուրեալ եւ քաջալերիչ՝ իբրեւ յաղթող աշխարհի, եւ նախ քան
զայս փորձեալ եւ պարտեալ զփորձիչն, երկրորդ Մարդ եւ յերկնից
Տէր, չարչարեալ եւ անչարչարելի, վասն զի իւրացոյց զամենայն յա-
ղագս մարդանալոյն: [9]Եւ եթէ ինքն մարդ եղեալ ասի ըստ Գրոց, ո՞յր

ապա իցեն չարչարանքն եւ այլն ամենայն, եթէ ոչ մարմնացելոյն Աս-
տուծոյ, որոյ եւ մահն եւ յարութիւնն եւ մշտնջենաւոր կենդանու-
թիւնն: [10]Թէպէտ եւ այլ եւ այլ ձայնքն կամ գործքն թուիցին, մի՛ ոք
գայթակղեսցի եւ մեծապէս այլ եւ այլ զմին կարծելով զմարմնացեալն
Աստուած եւ առանց յեղման: [11]Պաւղոս հաստատեսցէ զգայթակղու-
թիւնն վասն Հաւր՝ յիւր Որդին ոչ խնայեալ ասելով, այլ վասն մեր
ամենեցուն մատնեալ*, որոյ եւ մահուամբն հաշտեցոյց ընդ ինքեան
զմեզ, եւ ոչ այսքան միայն, այլեւ զսքանչելին ասել, զի զոչ գիտողն
զմեզս // վասն մեր մեղս արար**, ամենայն իրաւք զԲանն յայտնէ մար- 262բ
մին եղեալ: [12]Տեսանե՞ս զ՛ըստ միոյ ասացեալսն, եւ Յովաննէս զԲանն
տեսեալ «զ՛ի սկզբանէ» ասէ. «Ընդ որ հայեցաքն, եւ ձեռք մեր շուշա-
փեցին ոչ զմարմինն, այլ նովաւ զԲանն կենաց, որ առ Հաւրն էր՝ յաւի-
տենական կեանքն, նա յայտնեալ երեւեցաւ»***, որ եւ զփառսն խնդրէր,
ոչ այլում, այլ ինքեան ունողին ի սկզբանէ աշխարհի, վասն զի ունայ-
նացաւ մարդանալով, որ եւ <ի> լրութենէ իւրմէ զամենեսեան զմեզ
շնորհաւորեաց, զոր վիրաւք ձեռացն եւ կողիցն Թոմաս ծանեաւ Տէր
եւ Աստուած գոլ†, ո՛չ անգիտացեալ, թէ անչարչարելի է աստուածա-
յին բնութիւնն, այլ զճշմարտութիւն միութեանն քարոզեաց: [13]Այսպէս
եւ ի ծնէ կոյրն վարդապետեցաւ՝ ի պահանջելն որդի յՈրդի Աստուծոյ
հաւատոյն, վասն զի տարակուսեցաւ՝ զո՞ զնա լինել. «Ե՛ւ տեսեր զնա,
ե՛ւ որ խաւսիդ ընդ քեզ, նա է»††: [14]Ո՛վ բարուցն ազնուականութեան,
ոչ վասն մարդ տեսանելոյն երկուանալ կամեցեալ, որպէս բազումք եւ
այժմ եւս, եւ ոչ հաւաստիս պահանջեալ՝ գիտելով, թէ ի միոջէ լուսա-
ւորեցաւ, առաձեռն ընծայէր զհաւատն եւ երկիր պագանէր:

IX. [1]Առողջացուք իբրեւ զկոյրն, մանաւանդ եթէ լիցուք հաւա-
տացեալք եւ ոչ տարա//կուսեալք, վասն զի հաւատացելոց յայտնի է, 263ա
եւ քննողաց՝ միգով ծածկեալ՝ «Արդարեւ Որդի Աստուծոյ ես»†††, որք ի
նաւին աշակերտքն ասացին երկրպագելով, յորժամ թեթեւաբար ծանր
մարմնովն ի վերայ լոյծ բնութեանն գնացեալ զնա տեսին, երբեմն եւ
Պետրոս միայն, որ եւ երանեցա<ւ>ն: [2]Եւ զ<ի> մի՛ այսոքիկ եւ սոյն-

* Հռոմ. Ը 32
** Բ Կոր. Ե 21
*** Ա Յովհ. Ա 1-2
† Յովհ. Ի 27, 28
†† Յովհ. Թ 8
††† Մատթ. ԺԴ 33

պիսիք ասացեալք եւ իմացեալք այլք թուե<ս>ցին ոմանց քաջայայտ
ոչ ունել զիմաստս, իբր թէ միոյ իցեն պատկանաւորք մարդացելոյն
Աստուծոյ, ուր ամենեւին գայթակղութիւնն հրէականաց եւ հեթանո-
սականացն յիմարութիւն մտաց առնիլ թուի: [3]Անդ իրքն կանխագի-
տութեամբ Հոգւոյն ճշմարտութեան յայտնապէս մատակարարեցան,
վասն զի այն ինչ Տեառն եւ Աստուծոյ, զբանական մարդկային հոգին
ի ձեռս Հաւր յանձն արարեալ եւ յերկբայս դատաւորին զինուորաց
վասն մահուանն եղեալ, զի իջցի ի խաչէն, գեղարդեամբ զաստուածա-
յին մարմնոյն հարկանէր մի ոմն զկողսն, եւ զճշմարտութիւն գեղեցիկ
եւ բարձր ձայնիւ քարոզէր ի տեսանել զաքանչելիսն՝ Որդի Աստուծոյ
եւ այր զնա խոստովանելով: [4]Զի՞նչ քան զայս ճշգրիտ եւ յայտնի
263բ կամիցի ոք լսել ձայն նշանակիչ. Աստուած՝ զչարչարեալն // եւ զխա-
չեալ: [5]Եւ եթէ այս է, վասն այլոցն յերկուանալ, որոց նախ քան զխաչն
կրից, թէ ըստ մասին ուրուք իցէ միոյ, այսինքն՝ մարդոյ լոկոյ եւ ոչ
մարդացելոյ Աստուծոյ, մեծի է խելայեղութեան:

X. [1]Արդ, խոստովանեցաք եւ դարձեալ խոստովանեսցուք՝ մարմին
ո՛չ անբան եւ անանձն առնուլ Բանին, այլ անձն ունող, բանական,
զգայակից մարմնոյն բանաւորականաց անպարսաւ կրից, համայն եւ՝
չարչարանացն, զի մի՛ անչարչարելի բնութիւն Բանին ասասցի անմիջ-
նորդաբար զգայակից լինել կամ հաղորդ մարմնաւորականացն ախ-
տից՝ բնաւորականացն եւ պատահմանց՝ ըստ Ապաւղինարի: [2]Այլ միջ-
նորդաւ բանականաւ անձամբ՝ գիտողն զչարչարանսն եւ զբնաւորա-
կանսն կիրս, Բանն անչարչարելի ընդ մարմնոյն միացեալ՝ զամենայն
իւրացոյց, վասն զի հանդերձ մարմնովն մի ասի եւ է յետ խառնմանն,
եւ այսպէս ասեմք զնա չարչարեալ եւ անչարչարելի մնացեալ, վասն
զի ոչ փոխադրեցաւ ինչ, յորմէ էրն, եւ մարդ եղեալ չարչարեցաւ
մարմնով: [3]Լուծանին սոքաւք Եւտիքեայքն՝ վասն զ Կոյսն մեզ խոստո-
վանելոյ մայր ըստ մարմնոյ ճշմարտապէս լինել Բանին Աստուծոյ, եւ
264ա մ//արդ կատարեալ լինել եւ ճշմարիտ, որ եւ Աստուածն ըստ բնու-
թեան, եւ չարչարանս կրեալ մարմնով, որպէս եւ ահա ասացաւդ: [4]Զի
ամբարիշտն այն ի Կուսէն ըստ ճշմարտութեան մարդ լինել Որդւոյն
Աստուծոյ խոստովանել յանձն ոչ առնու, այլ ձեւ իմն եւ նմանութիւն
եւ ոչ բնութիւն, առ աչաւք զճշմարտութիւնն կարծելով եւ զկերպա-
րանս ծառայի առնուլ եւ կերպարանաւք գտանիլն որպէս մարդ եւ առ
ի Հաւրէ զառաքիլն ի նմանութիւն մարմնոյ մեղաց: [5]Եւ զայլս այսպի-
սի տեսակաւ ասացեալս ստուեր իմն ցուցանել եւ ոչ ճշմարտութիւն

իմանալ ատելին այն, վասն զի կերպարանաւքն եւ զորպէսն եւ զնմա-
նութեամբն ուրուական ինչ երեւոյթ գոլ կարծէ, յորոց ժողովի ոչ փոքր
ինչ նուազ, քան զայս, եւ այլ կարծիք ամբարշտութեան, քանզի յոր-
ժամ նոյնպէս եւ Հաւր կերպարան եւ նմանութիւն եւ որպէս նա կեանս
յանձին իւրում ունել եւ զայն տալով եւ նկարագիր էութեան նորա գոլ
եւ պատկեր անարեւութիւն յԱստուածաշունչ Գրոց լսիցէ: [6]Այլեւ ճա-
ռագայթ փառաց եւ զաւրութիւն կամ իմաստութիւն եւ այլս, որովք
յայլում զէութիւնն ունել բազում անգամ դէպ եւ պատշաճ թուիցի
իմանալ կամ ստուերապէս զսկզբնատիպն յինքեանց ցուցանել // պար- 264բ
տի եւ ոչ զայսոսիկ ըստ ճշմարտութեան իմանալ: [7]Եւ այսպէս քաջ-
այայտ զհրաժարումն ունի զ'ի բաց դառնալ մոլեգնութենէ նորա կար-
ծիք ոչ միայն ըստ իրաւանցն եւ զկարգաւորն ընտրել գիտողաց ի
սրբոց դաստիարակելոց եւ հասելոց ի չափ հասակի ըստ գիտութեանն,
որ ի Քրիստոս, այլեւ պարզամտաց եւ կաթնակերաց:

<Զ>

ՅԱՂԱԳՍ, ԵԹԷ ՈՐՔ ՅԵՏ ՄԻԱՆԱԼՈՅՆ ԵՐԿՈՒՍ ԱՍԵՆ ԲՆՈՒԹԻՒՆՍ Ի ՔՐԻՍՏՈՍ, Ի ՀԱՐԿԷ ՀԵՏԵՒԻՆ ՆԵՍՏՈՐԱԿԱՆԱՑ ՄՏԱՑ

I. [1]Պարտ էր յաստուածայնոյ անդաստանին եւ այգւոյ կոչեցելոցն
ի գործ, նոյն է եւ ասել թէ՝ հաւատին ի հովուութիւն, ոչ արուեստի
մշակութեանն աւտարս ինչ իմանալ կամ զդուռն եւ զարաւտ անգի-
տանալ հաւատին, ոչ սակաւս եւ անփառս այսոցիկ ունելով աւրինակս,
եթէ գծագրութիւնս պատշաճ իցէ ասել, ըստ որոց զկենդանագրու-
թիւնսն ցուցցեն, եւ մի՛ նորաձեւս ախորժել իմանալ ոչ եւ յայսպի-
սեաց հրաժարականաց եւ ի պարսաւ անկելոց յոլով՝ ոչ ունողաց յա-
րացոյցս: [2]Բայց, որպէս կարծեմ, զի զայլսն թողից, վասն երիցս այսո-
ցիկ զգայթակղութիւնն ոչ անգիտանալով՝ զգուշանալ ոչ կամեցան,
որք եւ զբազումս ըստերիւրեցին՝ իշխանութեանն // եւ ամբարտաւա- 265ա
նութեան եւ ոչ խոկալոյ յերկիւղ Տեառն, ոչ փոքր ինչ եւ վասն չոր-
րորդին համարձակութիւն առ Աստուած բերել՝ ի գիտակցութենէ մտացն

ոչ վկայեալք, որ է մանաւանդ առաքելական պարծանք, առ այսոքիւք
եւ յաչառանաց ոչ հեռիք իբր չլուեալք բնաւ աչառանաւք՝ զհաւատս
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ոչ ունել՝ ոչ ուղիղ, այլ աչառս դա-
տեցեալք, եւ ոմանք յերկիւղէ, ուր ոչ պարտ, երկուցեալք զհաստա-
տուն ի վերայ վիմի ունող զհիմն չինուած հաւատոյն ի վայր արկեալ
կործանեցին: [3]Ո՛հ այլ ընդ այլոյ եւ վրիպակաւ պատահմանն, զի անմ-
տաբար ի վերայ աւազոյ չինեալքն եւ յապառաժի բոյսքն եւ ի մարդ-
կային հեղեղաց եւ բքոց կործանեալքն եւ ի տապոյ չորացեալք զաւրե-
ցին եւ զհակառակաւն չինուածս եւ բոյսս զուգեալ անձանց թշուա-
ռութեանն, վասն զի որ զայնպիսիսն չինէ, սովոր է ընտանեգունաւն,
եւ անդր փչեաց գործեաւ եւ եթէ ի վայրկենի միանգամ զայս առնելով՝
տարագրել կարողացաւ զձեռին Աստուծոյ գործն ի սկման, ուր երիս,
որպէս ասի, աւուրս խորամանկեաց աշխատասիրաբար: [4]Մ՞ի արդեաւք
265բ զաւրէր, որ եւ ի միջոցի անդ // ոչ սակաւս եւ փոքունս կացոյց, զոր
այնու գործեաւն միայն, այժմ ասեմ՝ դաւաճանութիւնս եւ զորս ամե-
նեցունցն անգիտելի թողից ոչ միայն վասն ոչ գիտելոյ, այլ վասն զի
եւ հանապազաւր յայտնի տեսիլս ամենայն ուրեք ի լրոյ եւ յակնտեսից
իրաց ունիմք ներածուս: [5]Յայսոսիկ եւ զորս ի Գիրս, որպէս ի վերայ
թռչելով, յիշեցից միայն զաղոյ արձանին Մննդոց, առ արդար Հայրն
զաղախնական բարուցն արհամարհանս եւ հպարտութիւն ի վերայ ազա-
տին եւ մեծի տիկնոջն, զտոհմայնոյն՝ առ տոհմակիցն, զդժնէին՝ առ
բարիսն, ասեմ, յոլովից զժամանակացն դագ եւ աղուաբանիւքն պատ-
բանս եւ յետ անհաւանութեանն զրպարտութիւն եւ բանդ զԱստուծոյ
ուխտաւորին: [6]Եւ քան զամենեսեանն յաղագս զնչան ունելոյ ուխտին
արիագունին եւ գեղեցկի զՍամսովնի ընդ խաւարմանն եւ տկարու-
թեանն եւ տգեղութեանն, զանարգանացն ստրկութիւնն, թէպէտ եւ
խաղ եղեն մահուամբն, որք խաղացինն ոչ առանց վրէժխնդրութեան
մնացեալք: [7]Իսկ ի պատճառս նոցա յայլոց եղեալքն ոչ են դիւրաթուե-
266ա լիք, ոչ վնասքն եւ ոչ հատուցմունքն առ ի Տեառնէ, այլեւ առ // ի
միմեանց կիրք պատերազմաց եւ դեղատուեաց եւ այլոց յոքնատեսակ
թշուառութեանց, զորս ոչ միայն ի մերումս, այլեւ յարտաքնոցն է գտա-
նել պատմութիւնս, զանցանեն ըստ չափով: [8]Բայց զմինն զայն, թէ եւ
կամիցիմք, ոչ ընդունի բանս ոչ յիշել: [9]Եւ տեղոյս յարմարական գի-
տէք ամենեքեան, որպիսի ինչ վասն ի ծնունդս կանանց մեծին մարգա-
րէի, միանգամայն եւ Մկրտչի, յԱւետարանսն պատմի, որք ինչ վասն
աւետեացն եւ ծննդեանն եւ յանապատի բնակութեանն եւ պանդխտու-

թեանն, յաղագս որոյ եւ մարգարէք յառաջագոյն մարգարէացան՝ զազ-
գակիցն վասն գերազանցութեանն պատուելով ի ձեռն չնորհին եւ զմեծն
ասել, որ եւ յաստուածայինն գլուխն մերձենալ եւ զնոյն ինքն մկրտել
զմարդացեալն Աստուած՝ համարձակութիւն առ ի նմանէ ընդունելով՝
արժանի եղեւ: [10]Զսա թողչութիւն կնոջն ոչ միայն բանտարգել եւ կա-
պանաւոր տայր առնել, այլեւ գլխատել յանդգնեցուցանէր վասն զար-
դարն խաւսելոյ: [11]Ոչ բերէր եւ ոչ Յեզաբէլ զնախանձն Եղիայի, եւ ոչ
նորուն համաբարոյն՝ զընթացողին առաջի Տեառն՝ զաւրութեամբ հոգ-
ւով Եղիայի: [12]Մի՛ տրտմեսցին պարկեշտ կանայք, // զի ոչ ազգն, այլ 266բ
չարին եղեալքն ոմանք խորհրդակիցք եւ գործաւնեայք են արժանի
պարսաւանաց: [13]Եւ զի՞նչ պատահէր, սակաւ մի չիջեալ կայծակունքն
վերստին արծարծուին, ամբառնայր բոցն առ հողմովն գտեալ եւ նիւթ
եւ տակաւին ճչմարտութիւնն իբր եւ զյաղթանակ ի մէջ եդեալ՝ կայր,
զմանկունս հանդիսին՝ փորձելով միանգամայն եւ յորդորելով ակնար-
կութեամբ իմն, որպէս թէ ո՞յ առնուլ զնա կամ նովաւ պսակիլ արժա-
նի առնիցի: [14]Ատեցեալ եղեւ սիրելին, եւ երկնաւորաց փափագելին ի
կարի յոյժ սակաւուց թուով խորհրդականաց ընտրեցաւ, որք իբր ի
դրժողաց յափշտակեալ զբարւոք ճոխութիւնն՝ վտարական լինէին յաւ-
տարութիւն, ոչ ընդ բազումս յաւժարեալք լինել ի չարիս՝ գիտելով, թէ
լաւ է մի, որ առնիցէ զկամս Աստուծոյ, քան զբիւր անաւրէն, եւ սոքա
այսպէս: [15]Իսկ վատթարեալքն յերկիւղէ եւ յաչառանաց գողացեալք
յայտնապէս համարձակութեամբ աւտարացան ի մաւրէն, որ ծնաւն
զնոսա յԱւետարանէն: [16]Խաբեցան յարգանդէ, խաւսեցան սուտ*, զկան-
խաւ դատապարտեալսն առ ի սրբոցն եւ յինքեանց զանաստուածն
զայն տաւմար եւ զ'ըստ նմայն հայհոյիչս վերստին ընդունէին, անդէն
դարձեալք ի // փսխածն եւ թաւալեալք ի տիղմն, ատելիք լինէին մա- 267ա
նաւանդ քան ողորմելիք: [17]Եւ այսպէս ջրհեղեղն երկրորդ ապակա-
նեաց զերկիր, եւ այլազգի հուրն եկէզ ոչ սակաւս քաղաքս եւ նուազս
ազգս, այլ փոքր ինչ եւ զամենայն տիեզերս, թէպէտ եւ ապրեցան որք
էին գրեալ ի կեանս, ոմանք տապանակաւ եւ ոմանք ի լեառն
փախստեամբ: [18]Եւ այսպէս վասն մարդկային աւանդութեանն խոտե-
ցին զաստուածայինն եւ մարդկան հաճոյք լինելով՝ հրաժարեցին ի Քրիս-
տոսի կոչելոյ ծառայս, զորոց ցրուեսցէ Աստուած զոսկերս**, եւ որպի-

* Սաղմ. ԾԷ 4
** Սաղմ. ԾԲ 6

սիք ուրացութեանն բանք՝ զանազանութիւնս բնութեանց, այսինքն՝ անանման յետ միաւորութեանցն ի Տէր մեր Յիսուս Քրիստոս՝ խոստովանել մոլեգնելով աղճատեն: [19]Եւ զոչ այսպէս ասողսն դատապարտքն դատապարտէին եւ զասողսն դարձեալ անպարտս ոչ առնէին, թագաւորին խաբէութեամբ, զի մի՛ թուեսցին զանկելոյն գնալ ի տեղի իւր քարոզել, սակայն ծածկել ոչ կարացին, վասն զի ստութիւն ոչ միայն ճշմարտութեան, այլեւ անձին ոսոխ է:

II. [1]Բայց արդ, դիտեսցուք զերկուց կողմանցն կարծիս եւ ձայնս, եթէ ո՞չ նոյնք իցեն կամ եթէ ա՞յլ ազգ ինչ ունիցին: [2]Եւ նախ համառաւտելով ասել՝ սոքա զտարբերութիւնս բնութեանցն եւ յետ միանալոյն պահեն, զի միումն յերկաքանչ//իւրոցն բնութեանց, զոր ասեն, տացեն զմեծամեծսն, այսինքն՝ Աստուածութեանն զհրաշափառագոյնսն, եւ միւսումն՝ զմարդկաւրէնագոյնսն ամենայն հանդերձ չարչարանաւքն եւ մահուն: [3]Եւ այս ոչ յայտնապէս երկուս ցուցանէ դէմս, թէպէտ եւ բազում անգամ հակառակիցին, վասն զի այլ եւ այլս յանդիման կացուցանէ, այլ՝ զկրողն եւ այլ՝ զքանչելագործն, եւ նոքա յարակցութեամբ յԱստուած զմարդն ասեն պատուեալ եւ յետ յարելոյն ե՛ւ մի, ե՛ւ անբաժանելի իմն, զի նոյնպէս զաստուածավայելուչսն Բանին տայցեն եւ զտկարութեան թուեցեալսն՝ մարդոյն: [4]Տեսանե՞ս զհամաձայնութիւն ամբարշտութեանն, եւ նոքա, թէպէտ եւ հաճութեամբ ասեն Բանին ոչ մարդ լինել ըստ ճշմարտութեան, այլ ի մարդ բնակել, զի յատկութիւնքն ամբողջ պահեսցին բնութեանցն, բայց եւ սոքա նմանապէս զառանձնաւորութիւնն ամբողջ պահելով եւ որոշելով բնութեանցն՝ ոչ են տարաձայնք, այլ տաճար Բանին զմարդկութիւնն, յորում բնակէ ամենայն լրումն Աստուածութեանն մարմնապէս, որում եւ քակել ինքն Բանն տայ հրաման, յորժամ ի հրէիցն վասն նշան ցուցանելոյ զրաբանեալ լինէր: [5]Հասարակ, ասեն, լինել երկոքին՝ զձայնս Գրոց բռնադատելով ձայնակցեալ շատախաւսութեանն իւրեանց, ի զաւակէ Դաւթ//ի եղելոյ մարդոյն, զոր միայն Յիսուս անուանէ Նեստորիոս, յարմարական գոլ զամենայն մարդկայինսն ասէ եւ ոչ Բանին: [6]Սոքա եւ այս նոյնպէս, թեպէտ եւ զանունն որոշեն. եւ եթէ ուստի սկսեալ կամ յորոց ոմանց եւ կամ երբ այսպիսոյ ամբարշտութեան կարծեաց եհաս, սա այլում թողցուք տեղոյ եւ ժամանակ<ի>, կամաւքն Աստուծոյ:

267բ

268ա

<Է>

ԹԷ ՅԻՄԸՐԴ ՉԱՐՉԱՐԵԱԼ ԲԱՆՆ ՄԱՐՄԻՆ ԵՂԵԱԼ ԵՒ ԱՆՉԱՐՉԱՐԵԼԻ ՄՆԱՑԵԱԼ, ԵՒ ԿԱՄ ՈՐՊԷՍ ԴԱՐՁԵԱԼ ՁԱՅՆԱԿՑԵՆ ՉԱՐԱՓԱՌՔՆ

I. [1]Նեստորիոս եւ ըստ նմայքն վարկանին ոչ զնոյն ինքն, որ յԷութենէ Հաւր զԲանն՝ զՄիածին Որդին Աստուծոյ՝ չարչարեալ մարմնով վասն մեր մարդկաւրէն: [2]Որ եւ զանչարչարութիւն, ըստ որում իմանին, եւ է, Աստուած ունի յիւրում բնութեանն, այլ մարդ միայն եւ ըստ մասին՝ զ՛առ ի Կուսէն ծնեալն, եւ ապա նմա փառաց հետեւեցուցեալ չափ՝ ըստ ինքեանցն թուելոյ բարւոք գոլ, յարակից լինել ասեն, որ յԱստուծոյ Հաւրէ Բանին. եւ զյարակցութեանն պատմելով յեղանակ՝ պարգեւեալ նմա՝ ասեն զհաւասարութիւն պատուոյ, այսինքն՝ իշխանութեան, եւ զհամանունաբարն ասել Քրիստոս եւ Որդի եւ Տէր: [3]Իսկ եթէ ասիցի չարչարել նա, որ ի նմանէ // առեալն մարդ պարտ գոլ, ասեն, վերաբերել զայն, որ յԱստուծոյ Բանն, վասն ի նոյն յարելոյ ըստ հաւասարութեան պատուոյ եւ բնութեանց անջատեցելոց եւ իւրաքանչիւր ումեք գոլոյն*, որ ինչ են առանձին, այսինքն՝ զքաղցնուլն եւ զաշխատել, զննջելն եւ զանգիտենալն, զզարհուրելն եւ զաղաւթելն, զգանն եւ զկապանսն եւ զապտակն ընդունել, զթուքն, զարբումն քացախին եւ լեղոյն եւ զտիգոյն վէրս, զմահ խաչին եւ զայլն ամենայն, զորոյ ապարասանութեան կրեաց հրէից եւ հեթանոսաց՝ ասեն մարդոյն, բայց վերաբերել ի դէմս ըստ ճշմարտութեանն Որդւոյ: [4]Արդ, տեսանե՞ս, զի զերկուսն ասողս բնութիւնս ոչ եւ միով իւիք գտանեմք տարաձայնեալս ի զայսոսիկ ասողացն: [5]Եւ զի՞նչ այլ, քան եթէ զայս ի տարբերն ասել զբնութիւնս կարասցեն յաւդել, նաեւ բազումք ի սոցանէ, ոչ պատրուակողովք հնարեալ բանիւք ծածկել զխարդախ իմացուածոցն զաւրութիւն, բացաւ գլխով յայտնապէս աղաղակեն զոչն ասացելոցդ հաղորդել կրից մարդկայնոց բնաւորականաց եւ արտաքուստ պատահելոց, որ ի Հաւրէ Բանին: [6]Եւ նոյնպէս ի զանազանիցն

268բ

* բն՝ գոլոյն

ասացելոց յետ /269ա/ միութեանցն բնութեանց ժողովի՝ համանունաբարն ասիլ Քրիստոս եւ Որդի եւ Տէր, վասն զի ուր զանազանութիւն, անդ եւ ոչ միով իւիք նմանութիւն. եւ եթէ այս, ապա եւ բազմաց դրութիւն: [7]Եւ զոր յայսցանէ առասպելականն թողից, բայց զհամանունաբարն ասիլ՝ տեսցուք. եւ է համանուն, որ անուանի միայն, այլ ոչ եւ իրի տայ կցորդութիւն, որպէս զուարակ ասի երկնայինն եւ որ ի յերկրի, կամ առիւծ եւ մարդ կենդանին եւ այրաձեւն, եւ այսոքիկ զիա՞րդ ոչ աննմանք, կամ զի՞նչ յեղանակաւ խառնումն այսպիսեացս ասասցի. ո՞չ ապաքէն քաջայայտ ունի երկուս գոլ բնութիւնս, եւ զիա՞րդ ոչ երկու բնութեանցն երկու դէմք: [8]Այլ խառնեալ ասեն, եւ եթէ խառնեցան՝ ըստ ճշմարտութեան, ապա զիա՞րդ երկու, թէպէտ եւ անշփոթն մնացին ի Քրիստոս եւ անփոխադրելիք: [9]Վասն զի Աստուած էր մարմնացեալ, որում անհնար ոչ ինչ է, եւ ըստ այսմ բանի, որ ի Հաւրէ Որդւոյն Աստուծոյ՝ չարչարիլ իւրով մարմնովն վասն մեր, եւ ոչ սոքա ասեն, այլ նոյնպէս վերաբերութիւն, որպէս թէ մինչ այրաձեւն հարկանիցի զայրն, որոյ իցէ համանուն պատկերի, ասիցէ ոք զվէրս ընդունիլ
269բ եւ ապա մարդ ոք չարչարեցաւ՝ ըստ // նոցա, եւ ոչ Աստուած մարդացեալ, քանզի ի բնութեանց անջատման միոյ իմանիլ՝ անտեղի է ամենեւին:

II. [1]Իսկ մեք հաւատամք որպէս ի մի Աստուած՝ Հայր ամենակալ, ամենայն երեւելոց եւ աներեւութից արարիչ, այսպէս եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս՝ Որդի նորա, ամենեւին հրաժարեալք յանջատելոյ ի մարդ առանձին եւ յԱստուած առանձին՝ զ«ընդ մեզն Աստուած» ուսեալք, եթէ՝ «Բանն մարմին եղեւ»*, այսինքն՝ ըստ մեզ ամենայնիւ, բաց ի մեղաց: [2]Եւ նոյն ինքն չարչարեցաւ մարմնով, վասն զի էր իւր մարմին, այլեւ զանչարչարութիւնն պահեմք նմին ինքեան, զի Աստուած էր ըստ բնութեան, եւ է աստուածայինն ամենակատար եւ ամենաբախտ բնութիւն, որ եւ երանելի: [3]Վասն որոյ կրից տրտմականաց եւ չարչարանաց անընդունակ է ամենեւին, որ գերաբարձ ոչ քան ընդ զկրիւք բնութիւնս գոլով միայն, այլեւ քան զոչ բնաւորեալս հնազանդել կրից, տի՛նա եւ ամենայնի Արարիչ: [4]Բայց զչարչարելին միացուցանելոյ ընդ ինքեան բնութիւն եւ առաւել հանդերձ նովաւ մի գոլոյ՝
270ա զնոյն ինքն խոստովանիմք չարչարեալ // զանչարչարելին, քանզի զամենայն իւրացուցանել ասեմք զիւրոյն մարմնոյ, եթէ չարչարանս եւ

* Յովհ. Ա 14

եթէ կիրս: [5]Եւ յոյժ յիրաւի, զի ոյր մարմինն նորա եւ մարմնոյնքն եւ ասասցեն եւ եղիցին, սոյնպէս եւ մնացեալ առ չարչարանաւքն եւ անչարչարելին, վասն զի ոչ փոխադրեցաւ կամ յեղաւ ի բնութիւն մարմնոյ կրականի եւ չարչարելոյ: [6]Զի թէ զայս ոք արդեաւք յանդգնեսցի ասել՝ եղեալ յերկինս զբերանն, զանչարչարելին ընդ չարչարանաւք արկանէ եւ ոչ կարելւոյն կարողութիւն տայ լինել, քանզի յամենայնի կարողին անկարելի մանաւանդ է, յորմէ ունին, յԱստուծոյ փոխադրիլ եւ յեղուլ բնութիւն՝ վասն անայլայլելին գոլոյ եւ անփոփոխ, զի այսոքիկ լինելւոյ են բնութեան: [7]Նախ, զի ոչ գոյք եղեն եւ ապա հետեւեալքն ամենայն այսպիսոյ յարմարականք գոյացութեան, վասն զի ըստ սկզբանն պարտին եւ հետեւմունք գոլ եւ ոչ անընտանիք, թէպէտ եւ ոմանք յեղելոց ունին զանփոխադրելին եւ զանչարչարելին գոլ հանդերձ անեղծութեամբ, այլ այսպէս ինձ թուի՝ ըստ Արարչին բաւականութեան եւ նախախնամութեան եւ ոչ եթէ վասն բնութեանն պատշաճողութեան: // [8]Արդ, ոչ է աստուածայինն ընդ փոփոխմամբ, ըստ որում 270բ
ասացաւն, բնութիւն եւ ոչ յեղլի, վասն որոյ եւ ոչ ընդ կրիւք, յայտ է, թէ եւ ոչ չարչարելի: [9]Բայց վասն զի անեղն եղեւ՝ ըստ Պաւղոսի ձայնին, եւ որ ճոխն՝ նոյն ինքն աղքատացաւ, եւ կերպարան Հաւր ունայնացաւ*, ըստ այսոցիկ՝ եւ անչարչարելին չարչարեցաւ, եւ որ կրից անընդունակն՝ մարմնով կրեաց զանըստգտանելի կիրսն, սակայն վասն զի իւր էր եւ անչարչարելին գոլ ըստ բնութեան՝ իբրեւ Աստուծոյ, եկաց մնաց անչարչարելի, եւ երկոքին միոյ եւ նորին ասին եւ են եւ ոչ այլ այլոյ, վասն զի Աստուած գոլով՝ մարդ եղեւ, եւ է Աստուած, համանգամայն եւ մարդ: [10]Իսկ որք զբնութիւնսն որոշեն եւ առանձնակս տան երկաքանչիւրոցն յետ միանալոյն, ըստ ճշմարտութեան մարդ եղեալ զԲանն ոչ խոստովանին. այլ ի մարդ բնակեալ եւ յարակցութեամբ պատուել զնա եւ անուան կցորդութեամբ, եւ թէպէտ յետ այսորիկ Աստուծոյ ասեն զամենայն, որ ինչ մարմնոյն կիրք եւ չարչարանք, ո՛չ ճշմարտութեամբ, այլ վարկանելով միայն, որ է վերաբերութեամբն, եւ է այս Նեստորի եւ որոց ըստ նմայց: [11]Եւ ըստ այսմ՝ սոսկ եւ առանձին մարդոյ ասին չարչարանքն եւ այլն ամենայն ըստ մարմնոյ իմացեալքն,
եւ զիա՞րդ, եթէ ոչ այսպէս կարծե//լն ամենեցուն հակառակ աշխատե- 271ա
ցելոցն յառաջագունից վասն ճշմարտութիւնն յարմնելոյ խորհրդածուացն աշխարհի: [12]Այլեւ դուք, ասեն, տեսանեմք, զի ասէք

* Փլպ. Բ 6-7, Բ Կոր. Ը 8

անչարչարելի զԲանն մնացեալ, ոչ եթէ ոչ ասեմք, որպէս եւ էն իսկ
ըստ բնութեան զԲանն անչարչարելի, բայց նախ զմիանալն ըստ ճշմար-
տութեան ընդ չարչարականիս բնութեան անչարչարելւոյ բնութեան
Բանին իբրեւ հիմն հաստատուն ամենայն մերոց, որոց վասն մարմնով
տնաւրէնութեան Միածնին խոստովանութեանցն դնեմք եւ ապա ասեմք՝
չարչարեալ զանչարչարելին իւրով մարմնովն, վասն զի իւր էր ոչ կար-
ծեաւք, այլ ճշմարտութեամբ, եւ առանց չարչարանաց մնացեալ ըստ
վայելուչ գոլոյ Աստուածութեանն, քանզի իւր եւ անչարչարութիւն
էր: [13]Եւ է իրս յոյժ դժուարատես եւ նուրբ, մանաւանդ թէ անճառելի
եւ առանց քննութեան, չարչարեալ ասել եւ անչարչարելի զնոյն եւ
զերկոսեան առանց երկբայութեան, մի՛ յայսմիկ զմեզ բամբասիցէք,
քանզի աստուածային է տեսչութեանս յեղանակ եւ ոչ մարդկան միայն,
այլեւ իմանալի մաքուր բնութեանն վերնոցն բանականաց անհաս: [14]Բայց
անջատելն զմին յերկուս յետ անպատմելի միաւորութեանն, քաջայայտ
271բ ունի զանբանութեան պարտաւորութիւնն, զի զլոկոյ // եւ միայնակ
մարդոյ զամենայն, որ ինչ մարդկաւրինագոյնքն կրից եւ արտաքուստ
պատահմանց, տան, եւ այս երկակի, որպէս թուի, բայց ըստ ուղիղ
բանի՝ նոյն եւ մի կամ իբր յարակցելոյ եւ հոմանուան՝ ըստ Նեստորի,
եւ կամ յերկուց բնութեանց միում, որ է այլ ինչ ոչ, քան զառաջինն:
[15]Քանզի յերկոցունց ժողովի մարդ միայն չարչարեալ եւ ընդ կրիւք,
եւ ապա ոչ հաշտեցաք ընդ Աստուծոյ մահուամբ Որդւոյ նորա, եւ ոչ
զՄիածինն ետ վասն մեր, եւ ոչ Բանն մարմին եղեւ, եւ ոչ բնաւ այլոցն
ինչ, յորոց կեանք եւ փրկութիւն եւ ազատութիւն Աստուծոյ, տակա-
ւին ի նմին կամք ի մեզս: [16]Մարդոյ որոշեն առանձինն զփրկութեանն
իրս, եւ յորժամ բռնադատիցին ինչ ի զաւրագոյն եւ ի ճշմարիտ բանից,
կամ զի թագուսցեն զդժուարալուրն մեզ՝ Աստուծոյ ասեն զամենայն,
այլ ըստ ճառեցեալ յեղանակցդ, իբր թէ անուանելոց: [17]Կոչեցաւ եւ
Մովսէս «աստուած փարաւոնի»*, եւ առ որս բանն Աստուծոյ եղեւ՝
աստուածք ամենեքեան ի Գրոց անուանին, Եղիա յերկինս շարժմամբ
վերացաւ՝ զմահու փորձ բնաւ ոչ առեալ եւ նախ քան զայս աստուա-
ծային զքանչելագործութեամբքզ, մանաւանդ կրկին զհոգին ի ժամու
ամբառնալոյն յերկինս իշխանաբար ի վերայ արկանելով աշակերտին՝
272ա անդր քան զմարդկայինս թուէր գոլ բնութիւն, // այլեւ <զ>մեռեալ
յարոյց եւ զբազումս մեռոյց՝ զոմանս հրով եւ զայլս սովոյ մատնելով

* Ելք է 1

եւ զկէսն սրով, եւ աստուածազգեստք իսկ էին. «Բնակեցայց ի նոսա
եւ գնացից ի նոսա»*, ասէ, եւ որք ըստ այսմանէ: [18]Եւ արդ, զիա՞րդ ոչ
նոքա աստուածք, եւ կամ յորո՞ւմ, ըստ ձեզ, ոչ հասարակաց մարդ
Քրիստոս: [19]Մի՛ անուամբ, այլ իրաւք պայծառասցուք, մի՛ ստութեամբ,
այլ ճշմարտութեամբ, մի՛ զմեր ինքեանց փրկութիւնն գողասցուք՝ զան-
ձինս նենգելով, մի՛ ստունդանելով զճշմարիտն խաւսողիւ եւ զկենդա-
նական հաւրն ստութեան եւ սպանողին անսասցուք, մի՛ զմիաւորիչ
Հոգւոյն յոքնատեսակ լեզուովքն ճառեցեալս՝ ապախտ արարեալք զմիով
բռնաւորականաւ զաւրութեամբ աւձտողին ի բազումս զմին՝ աղճա-
տականսն ընտրեսցուք, ընդ աւգտաբար բաժանումն նախանձեալ, եւ
ընդ զուգաչափ միաւորութիւնն չարաչար եւ վնասակար բաժանմամբ
ժողովեսցի միաձայնութիւն ոչ ի Սէնսաար, այլ Բիւթանիայ: [20]Երկրորդ
եւ չարագոյն խառնակութեամբ տեղի եւ իր զԲաղկեդոն եւ զանդն
աւանդութիւն ի ներքս զմուծեալ եւ ոչ ի վերնատան, այլ ի հրապարա-
կի, քանզի գիտէ նա չարութեամբ հակառակել բարւոյ եւ այլ ազգ
իրաւք նմանել: [21]Արդ, որ ի բարւոքն մեր հայի եւ աւրինաւոր կեանս
// եւ տնաւրինէ մեծաւ իմաստութեամբ եւ յոյժ անճառելեաւ՝ ի հեռաս- 272բ
տանէ նկարելով, զի ըստ այնմ գնասցուք եւ այնպէս կեցցուք, խոր-
հեսցի ինչ, որպէս գիտէ եւ կամի՝ չար այսպիսոյ յարձակման եւ կա-
մաց խրամատութիւն եւ արգել եւ կործանեսցէ զընդդէմն ինքեան յա-
ռուցեալն ի մարդկանէ աշտարակ եւ զհամարձակութիւն լեզուի եւ
շրթան, զոր ոչ սիրէ, խափանեսցէ, եւ զոր սիրէն, տացէ՝ ժողովելով ի
մի զորդիս իւր զցրուեալս, զի որպէս ի միոջէ փառաւորեսցի յամենե-
ցունց:

* Բ Կորնթ. Զ 16

«Ժ»*

ՆՈՐԻՆ ՅԱՂԱԳԱ ԲՆՈՒԹԵԱՆՆ ԲԱՆԻ ԵՒ ՄԻԱՒՈՐՈՒԹԵԱՆ

I. [1]Ճարտարեն բանիւք պակասեալք յարդեանցն ազնուականութենէ, քանզի այս սովորութիւն է անզեղջ եւ չարասէր ախորժակաց՝ ոչ ըստ բարեմտացն ապաշաւել յանգիտութենէ՝ զսխալանացն վնասս անամաւթաբար խոստովանելով, այլ մանաւանդ յաւելուլ յիմաստս եւ ի բանս եւ ի գործ<ս> ամբարշտութեանն, անյուսացեալք գոլ այցելու եւ վրէժխնդիր զոք եւ չափող ըստ արժանաւորութեան զիւրաքանչիւրոցն արդարապէս հատուցումն իրաց: [2]Զի այսպէս ասացից, ուստի եւ զմահու չափ զ'առ Աստուած մեղանացն ծանրութիւն փոքր եւ առ ոչինչ վարկուցեալք՝ բացաւ գլխով չեղջել աւր ըստ աւրէ զհայհոյութեան չարապէս մթերս եւ յայնմանէ // զստուգակշիռ փոխարինացն բովանդակ հատուցմունս: [3]Ոչ դանդաղին հոմանունութիւն որդւոց երկուց ամենեքեան ի զանազան ժամանակս բուսեալք հերձուածք՝ զՔրիստոսէ ի ներքս մուծանեն եւ մի դէմն ստեղծաբանելով՝ գողանան զանվարժիցն միտս: [4]Քանզի եթէ յատկապէս ապրեցան էակցեալքն, որպէս ասեն, բնութիւնքն, եւ զիւրաքանչիւրսն ամբողջ պահեցին բնաւորական ներգործութիւնս եւ կիրս, այս է ըստ մասին եւ անխառն երկքանչիւրոցն կացելոյ, ո՞ւր ապա միաւորութեանն Բան, եւ զի՞նչ Բանին մարմին լինել կամեսցի յայտնել: [5]Վասն զի չարայարութիւնն ասել եւ ըստ արժանաւորութեան միութիւն՝ յայտնապէս երկուց դիմաց ունի զեկուցումն, որպէս զի գոլ պարզաբար մարդ Քրիստոսի արժանաւորեալ լինել տաճար Բանին, քանզի ամենայն յեղյեղմունք բանից նոցա եւ բազմաւրինակ հանճարոյ դժնդակութիւնք յայսոսիկ առանց հակառակութեան ժողովին եւ զճշմարիտ միաւորութեանն բան կամակար մտաւք անգիտանան: [6]Ոչ հեռի ինչ յայսմանէ եւ զբնութեանցն տարբերութիւնս, զի այլ բնութիւն աստուածայինն, եւ այլ՝ մարդկային:

285բ

* Գրչագիրը որպէս այս գլխի համար է նշում ԺԱ՝ հաւանաբար առանձին գլուխ համարելով Եւսեբիոսի Պատմութեան հատուածը նախորդ գլխից, որի ենթավերնագիրն ընդօրինակուած է վերնագրային կարմրագրով:

II. [1]Բայց յորժամ զմարդասիրութեանն // անբաւութիւն առատապէս եհեղ ի մեզ ի ձեռն հաճելոյն մարդանալ, որ յԱստուծոյ ճշմարտէ՝ ճշմարիտն Աստուած, միացան զանազանութիւնք բնութեանցն անփոխադրապէս եւ առանց լուծման, որպէսզի խոստովանել մեզ զ'<ը>ստ բնութեամբ մարդկայինն աստուածային ըստ միաւորութեանն եւ գոլ զնոյն Աստուած, համանգամայն եւ մարդ: [2]Ոչ զոմն առ ոմն չարայարութեամբ հոմանունաբար որդի անուանեմք՝ ըստ Լեւոնի, կամ ունակական եւ զմիաւորութիւն ի զանազան բնութիւնս եւ տարայատուկս երկաքանչիւրոցն: [3]Քանզի ասէ ի հայհոյութեան իւրում տաւմարին, մինչդեռ երկախումբն ընդ միմեանս է եւ մարդոյն նուաստն, եւ մեծութիւն Աստուածութեանն, եւ զմիաւորութիւնն ծախումն ասել եւ գոլ կարծէ մարդկայնոյ բնութեանն: [4]Վասն որոյ ի վերայ բերէ, քանզի որպէս յողորմելն Աստուած յեղումն ոչ ընդունի, այսպէս մարդն մեծութեամբ աստուածայինն արժանաւորութեան ոչ ծախի, եւ ոչ զանգիտէ յանդգնաբար եւ յայտնապէս համարձակութեամբ հայհոյել՝ մարդն անուանելով սոսկ եւ արժանաւոր եւ զմեծութեանն աստուածայնոյ՝ ի թունից աւձի յինքն ամբարեալ զդժնդակութիւն ճահագործի Նեստորէ, եւ որոց ըստ նմայք այդպիսիւք // եւ եւս դաժանագունիւք: [5]Լի են հայհոյութեամբ առ ի նոցանէ գրեալքն, զորս ընկալեալ ժողովոյն Քաղկեդոնի՝ եղծին զկանոնս առողջ հաւատոյ՝ ոչ իւիք ցուցանելով բնաւ զանազանութիւն հերձուածապետացն առաջնոց, զորոց կարող ես ճանաչել ի գրոց անտի զձայնակցութիւնն, այլեւ զճշմարտութեանն աւանդողաց հակառակ նոցա զուղիղ խոստովանութիւն, որք ոչ բաժանեն յերկուս զմի Տէր մեր Յիսուս Քրիստոս եւ ոչ կամս կամ գործս եւ կիրս երկուց բնութեանց ուրոյն ուրոյն յատկապէս բաշխեն, այլ զամենայն միոյ եւ նորին, որպէս եւ է, գիտեն եւ քարոզեն: [6]Զի եթէ Բանն մարմին եղեւ, ոչ ի մարդ բնակեաց՝ ըստ չարափառացն կարծեաց եւ բանից, եւ է մի բնութիւն Բանին Աստուծոյ մարմնացելոյ ըստ ճշմարտութեան, ո՞ւր ունիցի տեղի երկատութեանն բան եւ կամ զիա՞րդ ի միում զանազանութիւնք՝ ըստ մասին գործոց եւ կրից: [7]Զի թէպէտ եւ երեւի ճշմարտապէս վարեալ երկոքումքք՝ երբեմն աստուածավայելուչ գործովք զէականն իւր ցուցանելով իշխանութիւն եւ պատիւ, եւ երբեմն՝ մարդկայնով առանց մեղաց բանիւ եւ գործովք եւ զտնաւրէնութեանն ճշմարտութիւն յայտնապէս քարոզելով: [8]Սակայն // ոչ այլ եւ այլ բնութեամբք եւ դիմաւք այսոքիկ լինէին մատակարարեալք, այլ ինքն, որ յԱստուծոյ Հաւրէ Բանն, կրէր եւ խաւսէր զմարդավայելուչսն, վասն

286ա

286բ

287ա

զի մարդ եղեւ՝ մնալով Աստուած ըստ էութեանն, եւ ոչ այլ է, որ ի զաւակէն Դաւթի՝ ըստ մարմնոյ, եւ այլ՝ որ* ի Հաւրէ անժամանակական Ծնունդն: [9]Թէ յերկուս ոք անջատիցէ բնութիւնս եւ դէմս կամ այլ, որ զարմանալիսն եւ զմեծամեծս գործէր աստուածաբար, եւ այլ, որ զընտանեգոյնն մեզ բարբառէր եւ կրէր, այլ մի եւ նոյն, քանզի ի լրման ժամանակաց առաքմամբ Հաւր մարդ լինել յաղագս գերազանցեալ առ մեզ սիրոյն հաճեալ՝ յանձն առ: [10]Եւ զերկուց բնութեանցն միութիւն ըստ ճշմարտութեան հաստատէր առ ամենեսին, զի թէ աստուածաբար միայն գործեցեալ նմա՝ ոչ հաւատայր ոք ճշմարտի մարդեղութեան, վասն զի այլ ընդ այլոյ կարծել սովոր են մարդիկ եւ զմարդկայինն եւեթ ի նա տեսանելով՝ ուրանային յԱստուածութենէ նորա: [11]Նորագործ իմն եւ անընդել բնութեան եւ սովորութեան վարէր կարգաւք, քանզի եւ այնպիսի էր խառնումն եւ միաւորութիւնն նոր եւ սքանչելի, զորոյ ոչ նմա կարգաւոր եւ վայելուչ էր աւտարացուցանել զճշմարտութիւնն. զի եթէ ճշմարտութիւն է, ոչ երբեք ստեսցէ:

287բ III. [1]Արդ, էութեանն // գոյացութիւն ո՛չ յեղումն այլայլութեան ընկալաւ կամ կրեաց, քանզի անփոխադրելի եւ անայլայլելի է աստուածայինն ե՛ւ ըստ մտածութեան, ե՛ւ ըստ ազդման: [2]Եւ մարդկայինն թէպէտ եկաց մնաց, սակայն զի յատուկ նորա էր՝ ըստ ճշմարտի միաւորութեանն, ոչ այլ կամ այլոյ ասի, այլ Աստուծոյ, եւ Աստուած համանգամայն: [3]Որպէսզի իմասցիս եւ ասացես զնոյն եւ մի՝ Աստուած եւ մարդ՝ անժամանակ եւ ժամանակեայ, անչարչարելի եւ չարչարեալ, մեռեալ եւ անմահ, այլեւ կենագործակ եւ աղբիւր կենաց եւ անմահութեան, քաղցեալ եւ կերակրիչ, ծարաւի եւ արբուցն կենաց եւ անմահութեան, աշխատեալ եւ հանգուցիչ բեռնաւորաց եւ տաժանեցելոց, երկուցեալ եւ քաջալերիչ՝ որպէս յաղթող աշխարհի, Հաւր իմաստութիւն եւ անգիտացեալ, Տէր եւ ծառայ, Որդի Աստուծոյ եւ Որդի մարդոյ, վերին եւ ստորին, ճոխ եւ աղքատ: [4]Քանզի բաժանել ըստ մասին զճշմարտապէս մին մեզ Տէր Յիսուս Քրիստոս, «որով ամենայն, եւ մեք՝ նովաւ»**, եւ յատուկս երկաքանչիւրում բաշխել բնութեան, ամբարշտութիւն է, ոչ ընդհատ ինչ ի մարդապաշտութենէ, եւ եւս առաւել, զի յամենակատար Երրորդութիւնն եւ ի միայն յաւելուած թուոյ
288ա աւտարոտուոյ առ//նէ բնութեան եւ անձին, քան զոր չիք ինչ անաւրի-

* ընդ՝ եւ

** Ա Կորն. Ը 6

նագոյն ի չարեաց, այլ ըստ գեղեցիկ աւանդութեանն, զոր ընկալաւ Եկեղեցի ի հարցն աւանդապահաց: [5]Ճշմարտութեամբ խոստովանեսցուք մի բնութիւն Բանին Աստուծոյ մարմնացելոյ, որոյ ամենայն, եթէ՛ բարձրագոյնք եւ եթէ՛ նուաստագոյնք անուանեալք, որովք կեցաք եւ ընդ որում փառաւորել արժանի լիցուք զՀայր եւ զՀոգին Սուրբ ճշմարիտ խոստովանութեամբ եւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

<ԺԱ>

ՆՈՐԻՆ, ԵԹԷ ՉԻՄԱՐԴ ԱՍԻ ՄԻ ԲՆՈՒԹԻՒՆՆ ԲԱՆԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՄԱՐՄՆԱՑԵԼՈՅ ԸՍՏ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ

I. [1]Պարտ եւ վայելուչ էր խաղաղութեանն աշակերտաց ոչ պատերազմ առ միմեանց յարուցանել վասն նորին խաղաղութեանն, զի եթէ ի խաղաղութիւն կոչեցաք յորմէ, <որ> ոչ խռովութեան, այլ խաղաղութեան է Աստուած, ուրեմն ոչ զոր կամին, այլ զոր ոչն կամի, սիրեմք եւ գործեմք՝ բանակռիւ լեալք՝ յոչ ինչ պէտս ի կործանումն լսողաց բազում անգամ եւ անձանց իսկ: [2]Այլ թէպէտ եւ ոչ լռել է արժան, յորժամ ի հարկէ ձգիցիմք տալ պատասխանի եւ զհակառակորդսն կշտամբել, սակայն եւ ոչ կռուել դառնութեամբ սրտին շարժեցելոյ, վասն զի ծառայք Տեառն եմք: [3]Հարկ ասեմ՝ ոչ զայլոցն գ//րգռութիւն 288բ
եւ բանաձգութիւն, այլ զճշմարտութեանն նշանակութիւն յոմանց, զի այսպէս ասացից, եւ յայնժամ ի հանդարտէ եղեալ պատերազմող՝ ըստ աւրինի մարտիցուք, ոչ միայն վասն զի պսակիցիմք քաջք եւ երեւեալք, այլ զի եւ զեղբարս պահիցեմք՝ հաւանական եւ կակուղ բանիւ զուղիղն վարդապետելով, զի լսիցեն՝ ախորժելով զհոգեւոր թովչութեանն զձայնս եւ զիմաստուն դեղատուութիւնն յաւժարեսցին ընդունիլ եւ մի՛ զնորին հակառակն խցցեն զլսելիս եւ ի բաց զդեղատուն մղեսցեն. զի ոչ խրտուցանել, այլ հանգուցանել ի մեզ զեղբարս հեզութեամբ եւ չահել առաք պատուէր, յետ որոյ ապա հրաժարել, եթէ ոչ ակնկալութիւն ինչ բարւոյ իցէ պտղոյ, եւ Տեառն այգւոյն թողուլ հա-

տանել կամ դարմանել: [4]Դարձեալ, զի մի՛ զանիծանելն ասացից, վասն
զի յայժմու աշխարհիս ժամանակի կենաց պարտ է ցանկ սպասել պտղոյ
եւ հնարել ըստ կարի երկոքք եւ առաւել քան զկարն:

II. [1]Արդ, Միածինն Հաւր, վասն զի զմարդն եւ ոչ զմարմինն եւեթ
կամէր կեցուցանել, զբովանդակն զգենու եւ լինի ամենայն ինչ մարդ,
289ա բաց // ի մեղաց: [2]Ո՛չ ի մարդ բնակէ, այլ մարդ լինի, զի մարդն եղիցի
Աստուած: [3]Եւ թէպէտ ի զանազանից կատարելոց միաւորութիւնն եղեւ,
սակայն ոչ վասն այնորիկ երկու պարտիցիմք ասել, զի եւ մարդ կրկին
է, այլ ոչ վասն այնորիկ երկու մարդք: [4]Եւ այսմիկ ոչ միայն Մովսէս,
այլ եւ յոլովք յարտաքնոցն գրեթէ ամենեքին իսկ վկայեն: [5]Եւ նախ
Պղատոն, զի զուսմունս վերստին յիշեցումն ասէ, եւ եթէ ոչ նախ քան
ի մարմնին լինել էր բանականն էութիւն, զաւրութիւն, որ ի մեզ, զիա՞րդ
վերստին յիշեցմունք ուսմանց լինել հաւատարմասցի, եւ զի այսպէս է,
ամենեքեան խոստովանին: [6]Բայց ոչ ոք յերկուս զմի բանաւոր կենդա-
նին՝ զմարդն անջատանէ. ոչ ի մերոց եւ ոչ ի նոցանէ, զի թէպէտ եւ
մեծն առաքեալ ներքին եւ արտաքին անուանէ մարդ*, այլ ոչ վասն
այնորիկ երկու մարդք: [7]Այսպէս եւ մի ուսաք ասել զՔրիստոս, վասն
զի զամենայն աստուածային ասեմք զմիտս եւ զհոգին եւ զմարմին ոչ
ըստ բնութեան, այլ ըստ անճառ միութեան, որպէս զի մի՛ եւ երկուս
ասել իշխանականս, այլ մի միայն զԲանն Աստուած: [8]Քանզի որպէս ի
մեզ առաջնորդականս՝ որպէս գործեաւ մարմնովն վարի, այսպէս եւ
289բ մտաւքն մարդկայնովք՝ Բանն, սակայն ոչ // իբրեւ այլ քան զնա գոլով:
[9]Ըստ որում արուեստագէտն եւ գործին անչունչ, վասն զի աստ եւ
արուեստագէտն մահկանացու վայելչապէս, եւ գործին անշունչ եւ այլ
քան զճարտարն, իսկ անդ, վասն զի ի վեր քան զմիտս է, որ ի ձեռն
մտացն եւ մարմնովն առ ամենայն վարէր, յիրաւի մի եւ նոյն ասի:
[10]Արդ, մեղանչական միտն միացեալ ընդ անմեղ բնութեանն՝ գեր ի
վերոյ մեղաց լինէր, եւ չարչարելի եւ ապականացու բնութիւն մարմ-
նոյն՝ խառնեալ ընդ անչարչարականին եւ անապականին, ամենեւին
ազատ յայսցանէ լինէր: [11]Թէպէտեւ հաճեցաւ մեռանել գերամբար-
ձեալ տեսչութեանն, զի թէ ոչ էր միացեալ, որ այսպիսին էր ըստ
բնութեան ընդ Աստուածութեանն, յիրաւի ոք ասէր բնաւորապէս իմն
մեղանչել կամ մեռանել հարկաւորաբար: [12]Բայց այժմ ոչ հարկաւորա-
բար, այլ կամաւ մեռանի, վասն զի Աստուած էր բոլորն, վասն որոյ ոչ

* Հռոմ. է 22, Բ Կոր. Դ 16

ինչ է առանձինն եւ յատուկ ասել երկաքանչիւրոցն բնութեանց, զի
ըստ որում միացան բնութիւնքն, եւ ամենայն տնտեսականքն միոյ եւ
նորին ասասցին, այսինքն՝ Աստուծոյ եւ ոչ մարդոյ <լոկոյ>: [13]Արդ, մի՛
ոք, վասն զի կարեն մեղանչել միտք մարդկայինք, ասասցէ վասն այսո-
րիկ փոփոխելի // զՔրիստոս գոլ, որպէս զի կարողն մեղանչել միտս 290ա
ունելով նորա՝ հնար լինել այսպէս զմտաւ ածել, քանզի ընդ անփոփո-
խելոյն ճշմարտապէս միացեալ փոփոխելին նմանապէս էր անփոփոխե-
լի: [14]Վասն զի միաւորութեանն եւ ոչ առանձնացելոյ է Յիսուս Քրիս-
տոսդ անուն, եւ ի միանալն ամենայնք տկարութեանն ի բաց բարձեալ
լինին, զի ոչ է հնար կամ կար ումեք զանձնաւորն զայն մարմին գտա-
նել առանց Բանին Աստուծոյ: [15]Յաղագս այսորիկ աստուածավայելչա-
բար ե՛ւ է, ե՛ւ ասի Քրիստոս անփոփոխելի, զի համանգամայն անձնա-
ւոր մարմինն Աստուծոյ Բանին, եւ ոչ յետոյ բնակեալ ի նմա: [16]Վասն
զի զայս առ սուրբսն եւ ոչ առ Քրիստոս է ասել՝ ըստ ուղիղ բանի: [17]Եւ
ոչ է կարծել զայս անհնար կամ անկար, զի այսպէս մահկանացուս այս
եւ ապականացուս, զգենլով զապականութիւն եւ զանմահութիւն, ոչ
մեռանի եւ ոչ ապականի: [18]Սոյնպէս աստուածացեալ նոյն միտք միա-
ւորութեամբ Բանին ոչ փոփոխի, ապա ուրեմն ոչ փոփոխելի Քրիս-
տոս: [19]Եւ եթէ ոչ փոփոխելի, ոչ ապա ընդ հարկաւորաբար կրիւք եւ
ոչ ընդ մահուամբ, թէպէտ եւ կամաւ զայս ամենայն կրեաց: [20]Եւ եթէ
այս, մի բնութիւնն միոյն Քրիստոսի պարտիմք խոստովանել, զի եր-
կուս ասել հակառակ բնութիւնս ի վերայ միոյն հետեւումն ունի՝ յոլո-
վից կարծեաց անտեղեաց: [21]Ըստ որում Նեստորն կարծեաց՝ ի մարդ
զԲանն // բնակեալ, ուստի ի Կոյսն ոչ Աստուածածին, եւ ծնունդն ի 290բ
յառաջադիմութենէ աստուածացեալ, եւ ապա՝ երկու աստուածք, քան-
զի այսպէս եւ քո վարեալ հակառակ բնութեամբք, ըստ իրիք հա-
մանուանութեան զՔրիստոսն եւ զՏէրն անուն, զի Բանին, որ յԱստու-
ծոյ Հաւրէ, եւ մարդոյն, որ ի զաւակէ Դաւթի, բաշաղի զանուանս
համանունաբար ասել, եւ համանունք են, որոց անուանքն նոյնք իսկ
բնութիւնք, այլ որպէս մարդ ասի ե՛ւ կենդանին, ե՛ւ գրեալն, կամ ձի՝
ծովու եւ ցամաքի: [22]Այսոքիկ եւ այսպիսիք ամենեքեան անուան կցոր-
դութիւն տալով՝ զբնութիւնսն անջատեն ի միմեանց: [23]Տեսանե՞ս, զի
երկու բնութիւնդ ասել տարբերս յետ միաւորութեանն ի Նեստորէ
սերմանեցաւ, եւ որք այժմ, զնոյն ասելով, պատրուակաւ իմն այլազ-
գաբար գողանան զմիտս անուսմանց: [24]Զի ոչ այլ ինչ է ասել երկուս
բնութիւնս յետ միաւորութեանն զանազանս՝ զնոյն ունելով անուանս:

[25]Բայց հոմանուանաբար կոչումն, որ է Նեստորի, մարդ լոկ ասել զ՝Քրիս-
տոս՝ հաղորդ ի Հաւրէ Բանին, որպէս եւ սուրբքն ամենեքեան, եւ ոչ
միով իւիք զանազանեալ, թէպէտ եւ կարի ոք հակառակեսցի: [26]Եւ
291ա ապա զիա՞րդ երկրպագելի մարդն եւ կամ թուակից Երրորդութեանն //
եւ աթոռակից: [27]Այլ զի առնուն ինչ ի ճշմարտութենէ՝ առնել ի մահ
ձգողի կարթին, մի՛ անբանաբար ի վերայ դիմեալ, կարծելով ստոյգ
կերակուր, վրիպեալք ի կենաց լիցուք, որպէս ի սկզբան հողածինքն
հաւանականաւն պատրեալ բանիւք լքին զկեանս:

III. [1]Արդ, ոչ եթէ մարդկութիւնն եղեւ ընդունակ Բանին՝ ըստ
Նեստորի, այլ Բանն ընկալաւ զմարդկութիւնն, ապա ուրեմն, որպէս
վայել էր ինքեան, այնպէս առնոյր զմերս, եւ ո՛չ՝ որպէս դատին չարա-
չար տկար միտք: [2]Եւ եթէ, ըստ որում ինքն կամեցաւ եւ ըստ որում
վայել էր ինքեան, խառնեցաւ եւ միացաւ ընդ մարմնոյ, զիա՞րդ կարէր
մնալ անդ ինչ տկար եւ ի մարդավայելուչ կարգաց եւ սովորութեանց,
եւ կամ զի՞նչ ունիցին տալ պատասխանի, որք ըստ մերոյս հետեւա-
նաց բնութեան եւ աւրինի զանճառն զայն միաւորութիւն ձեռնամուխ
լինին հարցափորձել: [3]Զի մեք ոչ մարդկաւրինագոյն, այլ որովք Աս-
տուծոյ պատշաճի, վարիմք քննութեամբ, յաղագս այնորիկ եւ մի ասեմք
բնութիւն եւ դաւանութեամբ, վասն<զի> դիւրին էր նմա զայս գործել
սակս գերագոյն իւրոյ բնութեան եւ կարողութեան: [4]Ուստի եւ յետ
միաւորութեանն ոչ է արժան անջատել զբնութիւնսն ի միմեանց, քան-
զի յերկուս յորդիս հատանել է այս աննմանս միմեանց զմին եւ զան-
բաժանելին: [5]Իսկ սուրբ հարքն մի ասացին բնութիւն մարմնացելոյ
291բ Աստուծոյ Բանին, // վասն որոյ ոչ բաժանեմք յետ միաւորութեանն,
այլ ոչ՝ որպէս կարծեն զմէնջ հակառակորդքն, ասեմք մի գոլ բնու-
թիւնս՝ խառնակումն ամենայնիւ եւ շփոթումն ընկալեալ՝ որպէս թէ
տկարագունի մարդկայնոյն էութեան ծախումն ինչ ընկալեալ կամ ի
բացաբարձումն՝ իբր թէ յաղթահարեալ ի հզաւրագունէն, կամ որպէս
ոմանք՝ բնաւ չառեալ զմարդկային բնութիւն: [6]Արդ, զայլասէրսն թիւս
եւ զաննմանս մի խոստովանիմք Քրիստոս եւ մի Որդի՝ ըստ Պաւղոսի
ձայնին՝* ոչ ուրանալով երկուս ասել բնութիւնս միաւորեալս: [7]Այլ յետ
միաւորութեանն ի բաց բառնիլ հատմանն յերկուս՝ ըստ ճշմարտու-
թեանն ուսաք, եւ հաւատամք մի գոլ Որդւոյ բնութիւն. զի եթէ երկու
իցեն, կարելի արդեաւք է լուծումն ընդունիլ: [8]Քանզի որ զանազանս

* Եփես. Դ 5

ունիցի բնութիւնս, հարկաւորապէս կրեսցէ եւ քակտումն. այլ զայս
ասել Մարկեղղի է Գաղատացւոյ: [9]Իսկ եթէ ասիցեն՝ նախ քան զմահն
եւ զյարութիւն կարելի գոլ զայս, իսկ յետ յարութեանն՝ անկար, որպէս
զի անկատար ըստ մեզ նախ քան զյարութիւնն գոլ, եւ յետ յարու-
թեան լինել կատարեալ. թէ այդպէս իցէ, փոփոխելի ուրեմն եւ այլայ-
լելի է Քրիստոս: [10]Այլ մեք ո՛չ այսպէս հաւատամք, քանզի մեք զայսո-
սիկ ընդունել բնաւորեալ եմք, իսկ Փրկիչն ըստ որում յետ յարու-
թեանն եւ նախ քան զյարութիւնն // էր կատարեալ եւ անայլայլելի եւ 292ա
անփոփոխելի: [11]Զի թէպէտ եւ մեռաւ, այլ կամաւ եւ հաճութեամբ եւ
ոչ վասն մարտի հակառակ բնութեանց կամ որակութեանցն, այսինքն՝
զորակութիւնսն ունող հիւթոց մարմնոյն, որ են խառնուածք տարերց,
եւ մարտ ընդ միմեանս բնաւորապէս ունին. եւ ի յաղթահարիլն ի
միմեանց եւ ի յառաւելուլն կամ ի պակասել քան զբարեխառնութիւնն
եւ զչափաւորութիւնն՝ հարկ է վախճանել կենդանւոյն: [12]Սակայն որ-
պէս վերագոյնն ասացաւ, Քրիստոս ոչ ընդ այսպիսեաւ եւ կամ բնաւ
իսկ ընդ հարկաւ ինչ էր բնաւոր կրից մերոց, թէպէտ եւ զանանգոսնե-
լիսն կրէր կամաւոր զկիրս:

IV. [1]Արդ, զի մի՛ եղծանելի թուեսցի Քրիստոս, որպէս՝ Մարկեղղի,
պարտ է խոստովանել եւ ոչ զանազանութիւն ընդդիմութեան Բանին
եւ մարմնոյն: [2]Զի թէ այսպէս իցէ՝ ըստ ոմանց կարծեաց, է ապա եւ
այժմ զանազանութիւն: [3]Եւ եթէ զանազանութիւն՝ աննմանութիւն, եւ
եթէ աննմանութիւն՝ ոչ պարզութիւն, եւ եթէ ոչ պարզութիւն՝ ի բազ-
մաց դրութիւն: [4]Եւ ապա, զի մի՛ այդպիսեաւք անտեղեաւք Որդի վարկ-
ցի՝ ամբարձեալ յերկինս եւ եղեալ զմարմինն, որպէս Գաղատացւոց
Մարկեղղեայ թուեցաւ ասել, եւ այնուհետեւ գերեզման յերկնի եւ ապա-
կանութիւն մարմնոյ եւ յարութիւն մարմնոյ եւ երկրորդ առումն մարմ-
նոյ: [5]Տեսանե՞ս, որպի//սիք ժողովին անբան եւ անտեղի կարծիք ի զա- 292բ
նազանս ասելոյ բնութիւնսն ի Քրիստոս՝ ճշմարտապէս ի զանազանից
առ միմեանս եկեալ բնութիւնքն: [6]Սակայն ո՛չ զանազանութիւն, ուր
միութիւն, որպէս ի մարդոյն ծնեալն մարդ ո՛չ է մարմին սոսկ՝ առանց
անձին, սոյնպէս եւ ոչ՝ ծնեալն ի Կուսէն առանց Բանին: [7]Զի եթէ առանց
Բանին, ապա մարդ միայն եւ յետոյ արժանաւորեալ տաճար գոլ Բա-
նին Աստուծոյ: [8]Եւ որք այսպէս դաւանեն, յիրաւի ըստ իւրեանց առա-
ջարկութեանն՝ յերկուս բաժանեն զմին եւ զանբաժանելին: [9]Բայց եթէ
վասն զի անձնաւոր եւ բանական ունէր մարմին Բանն, եւ վասն այնո-
րիկ իբրեւ զերկուս կատարեալս անջատեն ի միմեանց զբնութիւնսն եւ

հարկ գոլ կարծեն՝ իբր յերկուց շարադրելոց գոյացութեանց երկուս
ասել՝ ըստ այլոց ոմանց եղանակաց շարակացելոց եւ ոչ բնաւ խառ-
նեալ ընդ այլում, ես ոչ գիտեմ զինչ է բռնութիւն այդորիկ հարկի. զի
ահա եւ բանականն ի մեզ ո՛չ ի մարմնոյ ծնանի եւ ոչ յանձնէ, թէպէտ
եւ ասացին ոմանք եւ զանձինս յանձանց ծնանիլ, ըստ որում եւ մար-
մինք, այլ ո՛չ ասին երկու: [10]Եւ դարձեալ, ասեն ծերունիքն զանբանն,
որ ի մեզ, անձն մասն գոլ բանականին, իսկ այլք՝ ըստ ինքեան կատա-
293ա րեալ էութիւն եւ ո՛չ մասն բանականին ախորժեն գոլ զան//բանն: [11]Նախ՝
զի եւ յանբանսն կենդանիս կատարելաբար գտանի, եւ երկրորդ՝ զի
անըմբռն վարկանին մասն գոլ զանբանն, բայց յերիս տարորոշել բնու-
թիւնս զմարդ՝ ոչ ոք կամի: [12]Ասէ եւ Պղատոն՝ պահարան գոլ զմարմին
բանականին անձին, եւ պիւթագորեանքն՝ ոչ ես զմարմին, այլ իմ որ-
պէս ստացուած ինչ: [13]Սակայն ոչ վասն այսորիկ պարտիմք յերկուս
ասել մարդս: [14]Իսկ արդ, զի՞նչ դարձեալ հարկ յերկուս հատմանդ.
արդեա՞ւք, զի ոչ կամիք զերկուս իշխանականսն մի ասել: [15]Այլ մի եւ
ոչ երկու են իշխանականք ի Քրիստոս, քան որպէս ի մեզ միտք ամե-
նայնի իշխեն եւ յաւրինեն ի նմա բանն, զի ըստ որում վերագոյնն
ասացաւ, իբրեւ գործեաւ մտաւք վարէր Բանն, զի ինքն առաջնորդ
մտացն:

Ցաղագս կամացն

V. [1]Արդ, ըստ որում ինքն Բանն իշխէր եւ առաջնորդէր մարդկու-
թեանն, ըստ այսմ եւ կամքն նորին ինքեան եւ ո՛չ այլոյ ուրուք, ուստի
եւ մի ասեմք կամս մարդացելոյն Աստուծոյ եւ ոչ երկուս, զի զայս
կարծել կամ ասել աղճատանաց եւ լեզուագարութեան եւ ոչ ուղիղ
դատողութեան է: [2]Քանզի եթէ նորա են միտքն, նորա ե՛ւ կամքն, ե՛ւ
այլն ամենայն: [3]Վասն զի մտաւոր անձինն միջնորդութեամբ ընդ թանձ-
րագունի մարմնոյն բնութեան միացաւ, որպէս ի մեզ զբանականն՝ միջ-
293բ նորդութեամբ շնչոյն, զի եւ այսպէս իսկ // վայել էր զբովանդակն
ապրեցուցանել, վասն որոյ եւ միտքն Աստուծոյ, եւ կամք մտացն Աս-
տուծոյ: [4]Ո՞չ տեսանես զզաւրութիւն հրոյ. զիա՞րդ ուժգնապէս մտանէ
ի թանձրութիւն եւ ի խստութիւն թանձրութեան երկաթոյ եւ այնքան
զմիաւորութիւնն գործէ, մինչ զի ոչ երկաթ, այլ հուր տեսողացն երե-
ւիլ եւ հրոյ եւ ո՛չ զերկաթոյ ունել առժամայն ազդմամբ զներգործու-
թիւն: [5]Այսպէս եւ ես առաւել իմա՛ ինձ զԲանին Աստուծոյ առ իւրն

մտաւոր անձն եւ մարմին զմիութիւն. յիրաւի ապա ամենայն աստուա-
ծայինք՝ ե՛ւ կամքն, ե՛ւ գործք, ե՛ւ կիրքն մարդկաւրինագոյնք: [6]Զի եթէ
մտաց են կամք, իսկ միտքն առաջնորդաւ վարի Աստուծով, ո՞յր այլոյ
ուրուք կամքն ասասցին: [7]Այլ ասեն. «Ի դէմս աղաւթից ասէր առ
Հայրն. «Ո՛չ իմս, այլ քոյդ կատարեսցին կամք»*: [8]«Եւ զիա՞րդ զայդ
իմասցիս, զմարդկայինն,- ասէ,- յայտնէ կամս». պարտ էր ի բազմաց
զայդ գեղեցկապէս խնդրողաց եւ լուծողաց նախ քան զմեզ՝ ուսանել
քեզ: [9]Բայց եւ այժմ լուիցես, զի զնոցայսն՝ որպէս յամենայն ժամ եւ
ամենայն ուրեք, եւ ոչ զմեր ինչ նորոգ աւանդեմք տեսութիւնս: [10]Արդ,
ոչ եթէ կամս ինչ հակառակս յայտ առնէ զիւր եւ զՀաւր, այլ որպէս
թէ ոչ իցէ, զի բացասացութիւն եւ ոչ ստորասութիւն է բանդ. ոչ զէ է,
294ա այլ զոչէ է. նշանակէ, զի չեն կամք այլ յիս, // բայց որ ի քեզդ: [11]Եւ եթէ
ոչ են եւ ոչ կատարեսցին, եւ որ էնն աղաւթէ, լի է, զի կատարեսցին,
այսինքն՝ համակամութիւնն, որ է մարդկան փրկութիւն իւրով: [12]Ապա
թէ եւ այլ ազգ կամիցիս լսել՝ պարզաբար ասել կամելով զբանդ, եւ ոչ
այն ի բաց տանի զքեզ ի տեսութենէս: [13]Եթէ բարեպաշտաբար եւ
ուղիղ իմանայցես, որ է տնաւրինաբար աղաւթել՝ ուսուցանելով զա-
շակերտսն, թէ առաւել աւգուտ է եւ վայելուչ զկամացն Աստուծոյ
խնդրել զլրումն յաղաւթսն, քան եթէ զինքեանց, քանզի ասասջիք՝
ասէ. «Հա՛յր մեր, սո՛ւրբ եղիցի անուն քո, եւ կատարեսցին կամք քո»**:
[14]Իսկ եթէ ասիցես բնաւոր կամս ունել Քրիստոսի մարդկայինս, որ
ընդդիմանայր կամացն Հաւր, զոր իւր կամս ասէր, եթէ զԲանն ասիցես,
որպէս եւ է իսկ, կամք նորա ոչ ընդդիմանայ Հաւր, զի զայդ եւ դու
խոստովանիս, իսկ եթէ մարդոյ միայն տաս, նախ՝ ո՞յր արդեաւք ան-
ցեալ մեկուսի կայր Բանն, զի սոսկ մարդն աղաւթեսցէ, եւ ե՞րբ
հաղորդեսցի մարդկութեանն, զի յայնժամ պագցուք երկիր, քանզի
մարդոյ միայնոյ պաշտաւն մատուցանել յիմարութիւն է: [15]Եւ մա՞րդ
ուրեմն չարչարեցաւ, եթէ՞ խաւսեաց Բանն եւ տեղի ետ փորձութեանն,
294բ եւ զիա՞րդ խաչն՝ երկրպագելի, կամ // խաչեալն՝ Աստուած, եւ ծաղր՝
մեր փրկութիւնն, եւ վայրապար՝ հաւատքն: [16]Խաբեցան, որ յարեան
մեռեալքն, ի նանիր խաւարումն արեգականն եւ երկրի տատանումն
եւ վարագուրին հերձուլ եւ հարիւրապետին վկայութիւնն, եւ որ բնաւն
է անտեղի, զարհուրեալ ի չարչարանաց անչարչարելին Աստուած, եւ

* Ղուկ. ԻԲ 42
** Մատթ. Զ 10

մերթ խառնեալ ընդ մարմնոյն եւ մերթ զատուցեալ, որպէս զի երբեմն մարդ եւ երբեմն Աստուած երեւեալ, այլ ոչ համանգամայն, որում տացին երբեմն եւ երբեմն ոչ տացին աստուածավայելուչքն: [17]Այլ մեզ մի՛ լիցին աստուածք առժամայնք եւ մի՛ երկիր պագցուք աստուծոյ աւտարի*, քանզի զի՞նչ աւտարագոյն աստուած, քան զոր այսպէսն իցէ: [18]Եւ դարձեալ, եթէ Բանին զաղաւթելն չկատարիլ զիւրոց մարմնակայնոց կամացն տացես, ոչ պարտ էր զիւր կամսն ասել, զի ոչ ընդդիմանայ կամացն Հաւր, այլ զիւրոյն, քանզի այսպէս արդեաւք վայել էր:

VI. [1]Արդ, որպէս ասր սպիտակ ներկանիցի ծիրանի եւ ոչ է երկգոյն, այլեւ ոչ նիւթն զէութիւնն իւր կորուսեալ, նոյնպէս եւ միտքն պայծառացեալ եւ աստուածացեալ մի է, եւ ոչ եւս երկուք առաջնորդականք, քանզի ոչ այլ ինչ կամի միտքն, եւ այլ ինչ՝ Բանն: [2]Եւ որպէս
295ա երաժշտ//ականն եւ գործին ո՛չ երկուք երաժշտականք, սոյնպէս Աստուածն Բան եւ միտք մարդկայինք ո՛չ երկուք իշխանականք, քանզի փոխանակ գործոյն՝ մարդկային մտաւքն վարէր Բանն, որպէս ի մեզ իշխանականն գործեաւ մարմնովն վարի, յոր ինչ կամի, այսպէս եւ Բանն մտաւքն վարի, յոր ինչ ի ձեռն մտացն կատարելութիւնս, ըստ որում եւ մի ասեմք կամս Քրիստոսի: [3]Ապա թէ այսոքիկ քեզ ոչ հաճելիք, ասա՛, դու զի՞րդ կեղծաւորիս մի ասել դէմս Քրիստոսի կամ անձնաւորութիւն, ո՞չ ապաքէն այլ եւ այլ կամք եւ կիրք եւ ներգործութիւնք զայլ եւ այլ ցուցանեն դէմս եւ անձնաւորութիւնս, քանզի ի միում այսպէս եւ զայսոսիկ գոլ ոչ ոք հաւանեսցի: [4]Բայց գիտեմ՝ ուստի բռնադատիս ասել մի զ Քրիստոս. ոչ ախորժելով, այլեւ յոյժ ի միտսդ դժուարելով, եւ որ թուի՝ սաստելով ասողին «մի Տէր»** զՅիսուս Քրիստոս, զի թէ մի ասել հարկաւորիս, ի բա՛ց տար զերկուսդ՝ զամենեւին աւտարագոյնդ միումն: [5]Վասն զի իւրաքանչիւրում թուով զանազանից կամ ոչ անցնիւրքն տացին միումն միայնավայելուչքն եւ երկուցն կամ յոլովից՝ ըստ նոցայքն, եւ ոչ ոք ասասցէ երկուս զմին կամ մի՝ զերկուսն, որպէս եւ ոչ տասն՝ զքսան կամ քսան՝ զտասնն, եւ որք ըստ
295բ այսմանէք, կամ դարձեալ՝ է եւ ոչ, // կամ զոչն՝ է կամ զէն՝ ոչ, որպէս մինչ ոք ասասցէ զտասն՝ քսան եւ տասն կամ ոչ տասն եւ զմարդն՝ ոչ մարդ, այսպէս ժողովի ի քումմէդ բաժանմանէ եւ միաւորելոյ: [6]Եւ եթէ

* Սաղմ. Բ 10
** Եփես. Դ 5

զհաճելին քեզ զերկուսն ախորժեսցես, բա՛ռ զպատրուակ միաւորելոյդ եւ զկեղծաւորութեանդ ստեղծուած մերկացո՛, քանզի մերկ իսկ է եւ անծածուկ իմաստնոց մտաւք, նաեւ՝ չարափառաց, եւ շահ ինչ ոչ է գողանալ զդիւրահաւանսն ի վատթարագոյնսն. թերեւս ի բաց դնել զձեւանալդ՝ եւ զչարափառութիւնն ընդ նմին անկցի ի բաց՝ յառաջատելով ըստ զղջման եւ փոխանցելով ի բարեփառութիւն: [7]Քանզի զախտն ոչ ծածկել սկիզբն է առողջութեան, թէպէտ ոչ այսպէս կարծես, եւ քո ինքեան խորհուրդք գիտեն եւ ազդեն քեզ՝ խաբէութիւն գոլ զկամսն ծածկել բանիւք զմտաց եւ զանհետեւելին հետեւել ցուցանել անյարմարապէս, որ է միումն երկակս տալ:

VII. [1]Արդ, քաջավայելուչ է հարցն սրբոց հետեւել խոստովանութեան եւ միոյ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ոչ ասել երկուս կամս եւ ներգործութիւնս եւ կիրս, այլ ըստ որում ոյր այսոքիկ՝ մի ասել կամս եւ զամենայն նորա՝ իւր՝ եթէ՛ աստուածայինք իցեն եւ եթէ՛ մարդկայինք, ներգործութիւնք եւ կիրք: [2]Քանզի ո՛չ մարդ էր միայն եւ ո՛չ
Աստուած յատուկ, եթէ իւրաքանչիւրումն զիւրն // առանձնապէս տա- 296ա
ցուք, այլ համանգամայն Աստուած եւ մարդ նոյն ինքն: [3]Ուստի պարտ եւ արժան էր երկոքումքք վարիլ նմին ինքեան, զի գիտասցուք, զոր ինչ էրն եւ եղեւ, եւ սքանչասցուք ընդ նորաձեւութիւնսն եւ սքանչացեալ փափագեսցուք նմա եւ փափագելով սրբեսցուք զմեզ ինքեանս յամենայն պղծութենէ հոգւոյ եւ մարմնոյ:

Յաղագս ներգործութեան

VIII. [1]Երկուս կարծելով եւ ասելով անուամբ զմարդկայինն կիրս, իսկ զաստուածայինն ներգործութիւն ասելով ոչ ընդհատ ինչ՝ եւ դէմս երկուս քարոզեն առասպելաբանապէս, եւ որպէս Ղէոն՝ զմին ի միւսում թաքուցեալ ասելով, եւ հակառակս միմեանց գործել կամ կրել միւսումն ասացելոյ, այսինքն՝ մարդոյ լոկոյ առ Աստուած յարեցելոյ: [2]Եւ են այսոքիկ Նեստորի եւ համախոհից նորին, ընդ որ զարմանալ ոչ փոքր ինչ արժան է. նախ՝ զի անարժանս տնտեսութեանն իմանան Բանին եղելոյ մարմին, եւ երկրորդ՝ զի զինքն ասեն հակառակ ինքեան, որ է անտեղի եւ անբան ամենեւին: [3]Զի որ զանազանս եւ ընդդիմակս միմեանց գործէ եւ խորհի կամ կրէ, զի՞րդ ոչ հակառակ ինքեան իցէ եւ կամ զի՞րդ մի դէմ: [4]Եւ եթէ խռովութիւն եւ թշնամութիւն յինքեան ունիցի, ե՞րբ արդեաւք եւ կամ ո՞րպէս զթշնամութիւն այլոց քակիցէ

296բ յիւրում մարմնի*, եւ եթէ այս, եւ ընդէ՞ր բնաւ եւ անու//անեսցի «խա-
ղաղութիւն մեր» կամ տուիչ խաղաղութեան**: [5]Ուրեմն ոչ զոր կա-
մէրն, այլ զոր ոչն կամէր՝ կրեաց կամ գործեաց. անաստուածի կարծիք
են այսոքիկ: [6]Ասէ Պաւղոս զհասարակական մարդոյ ի դէմս իւր. «Տե-
սանեմ այլ աւրէնս յանդամս իմ՝ զինեալ հակառակ աւրինաց մտաց
իմոց եւ գերեալ զիս աւրինաւք մեղաց, որ են յանդամս իմ»***, եւ
այլուր, եթէ՝ «Մարմին ցանկայ հակառակ հոգւոյ, եւ հոգի՝ հակառակ
մարմնոյ»†. եւ զայսոսիկ՝ ոչ վասն յերկուս անջատելոյ զմին կենդանի
զմարդն, այլ յաղագս լծակցելոյ տկարութեանն բնաւորականի ասէ,
վասն զի հարկ է հողեղէն յարկս: [7]Արդ, կա՛մ ասասցեն մարդ հասարա-
կական զՔրիստոս՝ երկուս բնութիւնս ներհականս յաւելլով նմա ասել
ունել, կա՛մ զԱստուած ի մարդ բնակեալ՝ որպէս եւ կամինն իսկ. ասաս-
ցեն յերից զնա գոլ, եւ երիս ըստ նոսին՝ եւ կամս եւ գործս եւ կիրս, զի
զաւելին քան զայսոսիկ թողից: [8]Որքան զանազանութիւն բնութեանց
է ի մարդ կամ տարրական միաւորեալ, թէ արժան իցէ քակել ի պար-
զագոյնսն վերստին կամ ի խառնուածի անդ զյայտնագոյնսն բաժանե-
լով՝ իմաստասիրել, կամ թէ հրաժարեսցեն յայսցանէ՝ անտեղի վարկա-
նելով, հաւանեսցին ճշմարտութեանն՝ նախ եւ ապա որոց պատմենն
297ա զայնոսիկ հաւաստագոյնս, ընդ որս եւ մեք՝ շնորհ//աւք Աստուծոյ: [9]Եւ
է այսպէս, զի թէ մարդ, երկուս կամս յինքեան բերելով՝ ըստ առաքե-
լոյ, ոչ ասի երկուս բնութիւնս, նմանապէս եւ ոչ վասն ներքինն եւ
արտաքինն անուանելոյ մարդս եւ ոչ վասն ի բազմացն գոլ նիւթոց
կամ բնութեանց, թէ ասասցէ ոք. եւ վասն ի յոքունց տեսանիլ զշա-
բադրեալն ի միութիւն՝ ասա՞ց ոք կամ անուանեա՞ց բազումս զմին
մարդ: [10]Զի՞նչ արդեաւք հաւանեցոյց զնոսա հարկաւորապէս երկուս
ասել զմարմնացեալն Բան, ուր զոր եւ ի միումն բաժանեալ կամս՝ եւ
զաւրութիւն խափանեաց ճշմարտապէս: [11]Քանզի «ոչ արար մեղս, եւ
ոչ գտաւ նենգութիւն ի շրթունս նորա»†՝ յաղթելով աւրինացն մեղաց
եւ մահու յանդամս մեր զինեցելոյ եւ գործելով զոր կամէրն եւ ոչ զոր
ոչն կամէր, որ թուի ինձ՝ առաւել մի գոլ քան զմարդ՝ անխառնակ եւ

* Եփես. Բ 14
** Եփես. Բ 14, Բ Թես. Գ 16
*** Հռոմ. է 23
† Գաղ. ե 173
†† Ես. ԾԳ 9, Ա Պետ. Բ 22

անայլայլելի զէութեանն իւրոյ պահելով իսկութիւն եւ լինելն մարդ:
[12]Արդ, եթէ զ՝առ ի միումն եբարձ ստուգապէս բաժանեալ կամս եւ
տիրապէս գործեաց միաւորութիւն, զիա՞րդ յետ այսորիկ երկու իցէ
մի: [13]Հակառակութիւն ի բարձիչն յարեսցին հակառակութեան կամ
երկատութիւն ի միաւորիչն եւ մի զձայնս Գրոց Սրբոց զտնաւրինա-
բար ասացեալս այլայլապէս բաժանեսցեն՝ պատշաճեցուցանելով ստու-
թեամբ // երկուց բնութեանց եւ դիմաց՝ երկաքանչիւրս անուանելով 297բ
երկաքանչիւրոց կամ միւս կցորդս միւսոյ. մեծ՝ փոքու, եւ փոքր՝ մեծի,
ըստ նոսին, ե՛ւ գործս, ե՛ւ կիրս, յորոց յայտնապէս է տեսանել եւ
դիմաց զանազանութիւնս: [14]Վասն զի տարբերաց տեսակաց զանազան
բնութիւնք, եւ բնութեանց այլասէրից յատկացելոց դէմք, այլ մանա-
ւանդ մեծի եւ փոքու, որպէս կամին իմաստասիրակել, քանզի առին-
չուն<ակ>իցն է մեծ եւ փոքր, եւ առանձնակի ըստ ինքեանս ոչ ասին
սոքա, այլ ըստ առ այլ վերաբերութեանց: [15]Եւ եթէ յետ միաւորու-
թեան երկու իցեն բնութիւնք ի Քրիստոս տարբերք, քաջայայտ ահա է
ուրեմն մեծ գոլ աստուածայնոյն, իսկ մարդկայնոյն՝ փոքր, որ նշանա-
կեն երկուս անձինս եւ դէմս: [16]Զի թէպէտ եւ բազում անգամ հնարիւք
խաբէութեան մի դէմն ասելով՝ ջանասցեն պատրել զդիւրահաւան ան-
ձինս, ոչ կարասցեն հաստատել զկեղծաւորեալ խորամանկութիւնն, եւ
ոչ է մեծի եւ փոքու մի դէմ՝ ուրումն, որ զբարձրագոյնսն սքանչելա-
գործէ, եւ ուրումն՝ զիսնարհագոյնսն կրողի, քանզի առ միմեանս բաղ-
դատութեան ընտրութիւն սոցա լինի եւ բաղդատութիւն միոյ առ ինքն
ոչ լինի: [17]Բայց եթէ առ այլայլ ըստ ունակութեան առ ոմն, եւ ոչ
գործաւք եւ կրիւք տարբերից բնութեանց յոյժ ի մի//մեանց զանազա- 298ա
նեցելոց մին բացատրեսցի, երբեք եւ այլ ազգ եւս, եթէ մեծ եւ փոքր է,
Քրիստոս, բնութեամբք եւ գործովք նոցին եւ կրիւք, եւ են սոքա առըն-
չիցն, ընկալցի ըստ ձեզ եւ ներհակութիւն: [18]Քանզի է եւ սա յառինչ-
ւոջն, թէպէտ եւ ոչ յամենայնի առինչուն<ակ>իցն գոյ ներհական, զի
թէ մակացութիւն է ներհական անգիտութեան, ո՞վ արդեաւք մակա-
ցու գեղեցիկ եւ ի վեր քան զԲան՝ կատարեալ ամենայնիւ գտանիցի՝
իբրեւ «զԲանն ի սկզբանէ», որ ե՛ւ «Աստուած», ե՛ւ «առ Աստուած»,
Հաւր իմաստութիւն* եւ զնոյն ճանաչող հաւաստապէս գիտութեամբ:
[19]Իսկ մարդոյ սխալական գիտութիւն եւ փոքր ամենեւին եւ հազիւ
զ՝առ ոտսն նկատէ, այլ եւ զյաւէտն եւ զնուազ հարկաւորապէս ըն-

* Յովհ. Ա 1, Ա Կոր. Ա 24, 30

կալցի ըստ ձերում լեզուագարութեան, զի թէ նման յաւէտ եւ նուազ
ասի, եւ է նմանն, որումն նման եւ անզուգագոյնն, որումն անզուգա-
գոյն: [20]Եւ երկաքանչիւր ոք ի նոցանէ առինչ է, եղիցի ինքն ինքեան
նման եւ ինքն ինքեան անզուգագոյն, քանզի եւ լուաք զայս յիմաստա-
սիրելն ձերում, յորժամ ասէք պատշաճ եւ դիպողագոյն գոլ Բանին
մարմին եղելոյ, ոչ ըստ ձեզ, այլ ըստ Յոհաննու, զսքանչելի գործսն,
իսկ անպատկանաւոր եւ աւտար բնաւին՝ զմարդկայինսն, վասն որոյ
298բ եւ երկուս առանձնակի եւ ըստ մասին բնութիւնս զկնի այն//որիկ յա-
բակցեալս միմեանց աւտարապէս բնախաւսել ձեռնարկէք, զորս ոչ է,
եւ ոչ ասացաք, գտանել ի միում: [21]Արդ, եթէ ի թիւս կրկնապատիկն ոչ
ասի, յաւէտ եւ նուազ առընչին գոլով, եւ ինքն, զիա՞րդ յետ առընչա-
պէսն զՔրիստոս կարծելոյ ձեր առաւել եւ նուազ զնա ասէք զմին եւ
ընդունակ ներհակաց, այլ ոչ տնտեսաբար եւ կամաւորութեամբ զմերսն
կրեալ յաղագս գերազանցեալ մարդասիրութեանն: [22]Այլ գոյացութիւն,
թէպէտ եւ ընդունակ ներհակաց է՝ ենթակայ գոլով, ներհակ նմա ոչ է,
ոչ այլ ոք, եւ ոչ ինքն ինքեան, եւ մանաւանդ առաւելեալ գոյացու-
թեան: [23]Զի թէ առաջինք եւ առաւել գոյացութիւնք ասին անհատք,
վասն Բանին մարմնացելոյ զի՞նչ պարտ է ասել, որում ներհակս որո-
շելով դնէք, որ եւ ոչ ներհակաց հարկաւորպէս է ընդունական, թէպէտ
եւ կրէ տնտեսաբար եւ կամաւք. Կերակրիչն՝ զքաղց, Իմաստութիւնն՝
զանգիտութիւն, Զաւրութիւնն Հաւր տկարանայ մարմնով, եւ Հան-
գիստն աշխատելոց վաստակէ ուղեւորեալ, ծարաւէ Աղբիւրն կենդա-
նութեան, այլեւ մեռանի Անմահն՝ յամենայն կամաւք եկեալ եւ ոչ ի
հարկէ իմեքէ: [24]Արդ, մի՛ մեզ վասն յառաջ ասացելոցդ զառին-
299ա չուն<ակ>իցն յեղանակս ի վերայ միոյ Քրիստոսի // անպատշաճ գոլ
ասողաց զանմարմինն ընդդէմ բերցեն, որպէս թէ դոքա ի վերայ նիւթա-
նականաց ասին եւ ոչ աննիւթից, քանզի մարմին եղեալ մեք զԲանն ի
Յովհաննէ ուսաք*, թէպէտ եւ յիւրմէն անփոփոխելի եկաց մնաց եւ
անայլայլելի յէութենէ Աստուածութեանն: [25]Եւ մի՛ դարձեալ զ'<ը>ստ
հոմասեռիցն ասել մեծ եւ փոքր, եւ ոչ ըստ այլասերիցն հակաբանես-
ցեն մեզ, քանզի ամբարշտին Արիոսի, Թուի ինձ, յայդոսիկ նայելով,
գայթակղելի կորուստ առնելով ի վերայ Հաւր եւ Որդւոյ՝ զմեծն եւ
զփոքր, յորմէ կարծեմ, իմանալ չարապէս զԱրարիչն եւ զարարածն:
[26]Բայց դուք զայլասերութիւն ի վերայ միոյ Քրիստոսի ճարտարելով,

* Յովհ. Ա 14

այսինքն՝ Բանին մարմնացելոյ, առաւել քան զնա ժանդանալ երեւիք,
վասն զի նա ի վերայ յերկուց անձանց երկուս բնութիւնս յոյժ մոլեգ-
նաբար սահմանեաց, իսկ դուք ի վերայ միոյ անձնաւորութեան եւ
դիմի Որդւոյ Աստուծոյ մարդացելոյ՝ բնութեանց երկուց զանազանու-
թիւնս, եւ յետ միաւորութեանն անջատանայք՝ հակառակս ամենեւին
հարցն խոստովանութեան խորհեցեալք, որք ասացին մի գոլ բնութիւն
Բանին Աստուծոյ մարմնացելոյ: [27]Այլ թերեւս ասիցին ոչ գոլ ներհա-
կանս՝ զմեծն եւ զփոքրն՝ յիշելով զասաց//եալն, թէ զոր ոչ է ինքն ըստ 299բ
ինքեան առնուլ, այլ առ այլ վեր<աբեր>եալս*, զիա՞րդ լիցի սմա ինչ
ներհականս: [28]Արդ, գրեսցուք ոչ ներհակապէս ասել զմեծն եւ զփոքրն
եւ այն, զի ոչ եւս ի վերայ միացելոյ կամ շարադրելոյ, որպէս վարկա-
նին նոքա, սակայն ոմն զոմն ընդ ինքեան ի ներքս ածէ, եւ ցուցանին
երկուք, զի թէպէտ եւ զմիմեանս, որպէս ներհականքն, ի բաց ոչ բառ-
նալ երեւին, եւ վասն այնորիկ ոչ եւս ասասցին գոլ ներհականք, բայց
յաղագս առ ինչիցն գոլոյ այլ առ այլ ասին: [29]Եւ զի՞նչ սոքա քեզ, եթէ
ոչ երկուց գոլ թուեսցին բացերեւութիւնք իմն:

IX. [1]Պարտ էր ոչ ի հաւատս արուեստաբանութեամբ, այլ նովիմբ
ինքեամբ եւ անմեղութեանն պարզութեամբ յառիլ եւ իմաստուն երե-
ւիլ ո՛չ երկրաւոր ճարտարութեամբ եւ հանճարով, այլ երկնաւորաւն,
զոր աշխարհս ոչ կարէ ընդունիլ: [2]Նա թէ եւ, յայսոսիկ վարժեալ եւ
կրթեալ, սիրէաք բարեպաշտիկ մտաւք, եւ ոչ հակառակութեամբ ար-
ժան էր, բայց տեսանեմ զբազումս ոչ միայն զանգիտացեալսն վասն
խորութեան մտացն եւ պատիպատ բանիցն իմացուածոց՝ յարտաքնոց
անտի չարապէս բռնադատել, այլեւ զքաջայայտսն եւ առանց դժնդակ
իրիք ծածկութեան՝ զՀոգւով Սրբով // բարբառեալսն, առ կամս իւրեանց 300ա
քարշելով: [3]Եւ զի՞նչ յայտնագոյն քան զոր աւետարանէն Յովհաննէս.
«Բանն,- ասէ,- մարմին եղեւ»**, ո՛չ ի մարդ բնակեաց, ո՛չ մարդ ոք
աստուածացաւ, եւ ո՛չ ասէ, թէ մարմին զգեցաւ, թէպէտ եւ զնոյն
նշանակէր, զի մի՛ այլ բնակիչն՝ իբրեւ ի տաճարի, եւ այլ զբնակարանն
իմասցի ոք, որպէս կարծեն, այլ զճշմարիտ մարդեղութեան նորոյ յե-
ղանակ ի ձեռն մարմին լինելոյն քարոզեաց, եւ որպէս զայս լսելով՝ ոչ
կարծեմք ասել Բանին ի մարմնոյ յեղուլ բնութիւն եւ զէութեան իւրոյ

* Սրբագրուած է ըստ [ԺԱ VIII 14]-ում գործածուած համանման արտայայտու-
թեան:

** Յովհ. Ա 14

փոփոխել կամ կորուսանել գոյացութիւն: [4]Այսպէս եւ յորժամ ասէ
ինքն. «Քակեցէ՛ք զտաճարս զայս»*, ոչ պարտ է կարծել անմիաւոր
զնա ընդ իւրում մարմնոյն, յայտ է, բանական անձն ունողի, այլ որ-
պէս զառաջինն վասն հաւաստապէս եւ առանց կարծեաց մարդ լինե-
լոյն գիտեմք եւ հաւատամք ասացեալ, նոյնպէս եւ զերկրորդն՝ յաղագս
անփոփոխելի եւ անայլայլելի բնութեան Բանին պարտիմք իմանալ ասել:
[5]Զայնակցէ այսմիկ եւ Պաւղոս. «Իբրեւ եկն լրումն ժամանակաց, առա-
քեաց Աստուած զՈրդին իւր, որ եղեւ ի կնոջէ եւ եմուտ ընդ աւրի-
նաւք»†: [6]Զեղելութիւն ոչ ոք յանդգնեսցի կարծել սկիզբն գոյութեան
300բ Բանին <եւ> ասել, այլ նմանապէս զանբաժանելի միաւոր//ութիւն ընդ
մարմնոյն ազդել եւ զ՝ըստ ճշմարտութեան մարդն եղանիլ: [7]Բայց տե՛ս
ճշգրիտ, զիա՞րդ ասեն Բանին զլինելն մարմին եւ զեղանիլն ի կնոջէ.
զգուշացեալք յառաջագոյն կանխագիտութեամբ Հոգւոյն Սրբոյ ի բա-
ժանասիրացն յաւակնութենէ՝ սերմանեցին յոգիս մեր, զի ըստ որում
զեղելութիւնն Անեղին ուսաք ասել եւ զմարմին լինել անմարմնոյ Բա-
նին՝ ոչ այլ եւ այլ կարծելով զԲանն եւ զմարմինն կամ զեղեալն եւ
զԱնեղն, եւ զայս ասեմ՝ ըստ միաւորութեանն, ո՛չ ըստ բնութեանցն:
[8]Սոյնպէս եւ զկիրսն իմասցուք ամենայն ասել Գրոց, զպարագրութիւնն
մարմնով Անպարագրելւոյն, զծնունդն ի կնոջէ Հաւր Մննդոյն, զկե-
բակրիլն եւ զսնունդ Կերակրողին եւ Կատարողի զամենայն զանար-
գանսն՝ գերագոյն քան զամենայն պատիւ, Անչարչարելոյն զչարչա-
րանսն, եւ զմահն Անմահին: [9]Այսպէս եւ զաստուածային ճահագոր-
ծութիւնսն ոչ այլոյ ուրուք, քան եթէ ծնիցելոյն ի Կուսէն Մարիամայ,
որ եւ զամենայն ինչ կրեաց, զոր ինչ կամեցաւ, զմարդկան: [10]Եւ ոչ
ըստ մասին բաժանեմք զմի Տէր մեր Յիսուս Քրիստոս կամ զգործս
նորա եւ զկիրս, զի մի՛ սոսկ մարդ ոք փառակցեսցէ Աստուծոյ, եւ մի՛
303ա յաւելուած թուոյ եւ բնու//թեան աւտարի Երրորդութիւն Սուրբ ըն-
կալցի: [11]Քանզի իւր Բանին յատուկ էր մարմինն, որոյ եւ գործքն եւ
կիրքն ըստ ճշմարտութեան ասասցին: [12]Մի՛ անգիտասցիս եւ զբնու-
թեանցն բան եւ զմիաւորութեանն՝ զոմն նախ մարմնանալոյն եւ զմիւսն
զկնի, զի մի՛ երկուս ուրեք լսելով՝ գայթակղեսցիս, որպէս բազումք՝
կարծելով յետ մարմնանալոյ եւ միաւորութեանն զայն: [13]Քանզի զկնի
մարդանալոյն Աստուծոյ չէիք ի նմա զանազանութիւն բնութեանց յա-

* Յովհ. Բ 19
** Գաղ. Դ 4

ղագս անճառելի միաւորութեանն: [14]Եւ մի՛, զմին բնութիւն լսելով Բա-
նին Աստուծոյ մարմնացելոյ, համարեսցիս առ աչաւք զմարդկութիւնն
եւ բնաւ ոչ առեալ մարմին, վասն զի երկուն լսի ըստ բնութեանց՝
աստուածայնոյն ասեմ եւ մարդկայնոյն, զի այլ է աստուածայինն եւ
անեղանելի էութիւնն եւ այլ՝ մարդկայինս՝ եղականի վիճակեալ գոյու-
թեան եւ մահկանացու: [15]Եւ այսոքիկ, որպէս ասացաք, իմասցին յա-
ռաջ քան զլինելն մարդ Բանին Հաւր, այլեւ մի՛ բնութեան Աստուա-
ծութեանն վարկցիս զմարմինն՝ մի լսելով բնութիւն Բանին մարմնացե-
լոյ, քանզի <ի> մերոյ բնութենէ, վասն որոյ ոչ Հաւր կամ Հոգւոյն
Սրբոյ ասեմք մարմին առեալ կամ ունել, զի թէ բնութեան Որդւոյ
ասիցեմք զմարմինն, եւ ի սկզբանէ հարկ է, ապա եւ Հաւր // այնպիսի 303բ
գոլ եւ Հոգւոյն Սրբոյ, վասն զի մի է բնութիւն Երրորդութեանն:

X. [1]Արդ, հաւատամք մի գոլ բնութիւն Բանին Աստուծոյ մարմնա-
ցելոյ՝ ըստ ասացելում յեղանակիդ՝ զնոյն ինքն Աստուած եւ զնոյն
մարդ, որ է համանգամայն, ոչ զայլ ոք ի Կուսէն ծնեալ, այլ՝ որ ի
Հաւրէ անմարմնապէս եւ առանց ժամանակի ծնունդն է, համագոյակ
եւ իսկակից Որդի, զոր եւ ասեմք Որդի մարդոյ, որում եւ զամենայն
խոստովանիմք կրել եւ գործել: [2]Եւ ոչ ըստ վերաբերութեան, որպէս
ասեն հերձուածողք, առյարեմք զմարդկայինսն Աստուծոյ Բանին, քանզի
այս ի վերայ սրբոց եւ աստուածազգեցիցն յարմարի արանց. «Ոչ եթէ
զքեզ,- ասէ, -այլ զիս անարգեցին, եւ որ զձեզ ընդունի, զիս ընդունի,
եւ որ անարգէ զձեզ, զիս անարգէ»*: [3]Այլ ճշմարտապէս զանչարչարե-
լի Բանն ասեմք չարչարեալ իւրով մարմնովն՝ զանչարչարութիւն ոչ
ինչ վնասեալ, եւ մեռեալ մարմնով՝ ստուգապէս կալով մնալով յան-
մահութեանն բնաւորականի, ոչ սոսկ մարմին կամ մարդ լոկ խաչեալ,
վասն զի ոչ Բանն անջատանի կամ անջատաւ երբեք յիւրմէ մարմնոյն:
[4]Փոքրաբան իցէ յաղագս մեծամեծացն ասել, տեղի տալ Աստուածու-
թեանն ի ժամանակի իրիք տկարութեան թուեցելոյ մարմնականի կամ
չարչարանացն իսկ խաչի, որք ի միաւորութեանն Բանի // յոյժ են 304ա
անտեղեկագոյնք, որպէս եւ Նեստորն ասէ՝ ո՞ տկարացաւ կամ զայն
ամենայն կրեաց: [5]Հերձուածո՛ղդ, կամեցեալ կարծիս տալ զինքենէ
անուսմանց ոմանց՝ ուղիղ փառաւորել, հերձուածող անուանէ զուղ-
ղափառսն՝ ի մեծն Կիւրեղ զակնարկութիւնն առնելով, որում հետե-
ւեալ ամենայնիւ չարասէր ծերունւոյն Ղեւոնն անուանեցելոյ, որ զՀռով-

* Ղուկ. 16

մայն ունէր զաթոռ: [6]Աւա՜ղ չարաբախտութեանն առ որ ի Կոստանդի-
նուպաւլիս եպիսկոպոսն եւ զնոյն խորհող Փղաբիանոս գրէր պատճա-
ռու Եւտիքեայ վանապետի նորին քաղաքի, որ ասէր առ աչաւք զմարմ-
նոյն եւ ըստ այնմ մի գոլ բնութիւն՝ դեղով մահու զառողջութիւն հնա-
րեալ հիւանդութեանն, զոր ընկալեալ ամբարիշտ ժողովոյն, որ ի Քաղ-
կեդոն, թուի թէ առ աչաւք առաւել կամ առ ահին Մարկիանոսի անաւ-
րինի, քան թէ բարւոք զամենավատթարն կարծելով՝ փոքր ինչ նուազ՝
զբովանդակ կործանեցին աշխարհս: [7]Արձան յիրաւի ոչ քաջութեան,
այլ ամբարշտութեան անուանեցին զչարապէս առ յինքեանց սահմա-
նեալն երկուց դիմաց, ըստ Նեստորի եղեալ արձանացուցիչք, ի ձեռն
երկուց զանազան բնութեանցն եւ ըստ նոսին գործոց եւ կրից աղճա-
304բ տաբանելով ի վերայ մի//ոյ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: [8]Եւ որ ի
բիւր հաւանեցոյց չարիս ի սկզբանէ զազգս մարդկան, նոյն եւ զկոր-
ծանականն Եկեղեցւոյ Աստուծոյ արձանագրութիւն կարծեցոյց բազ-
մաց հաւատարիմ գոլ, յորմէ, իբրեւ ի մահաբեր արմատոյ, բուսան
յոքնատեսակ եւ անպատում գործք ժպրհութեան առաւել քան ի հե-
թանոսս, յանուանեալ քրիստոնէիցն եկեղեցիս: [9]Եւ խորհուրդն ան-
աւրէնութեան արդէն իսկ զաւրացաւ, թէպէտ եւ յայտնելոց է յիւրում
ժամանակի, եւ եկաց պղծութիւն աւերածոյ, ուր ոչն էր արժան: [10]Սա-
կայն պահեցաւ նշխար ի ջրհեղեղէն հաւատոյ, յուսամ թերեւս յա-
ճումն համազգի ժողովրդոց, քանզի թեթեւ է յաչս Աստուծոյ եւ դիւրին
զաւրութեան անբաւելոյ՝ յարուցանել զաղքատս յերկրէ եւ յաղբեւաց՝
զտառապեալս բարձրացուցանել եւ նստուցանել դարձեալ յերկնայ-
նոցն իշխանութեան աթոռ եւ զթախծեալն սգով մայր յամայութեան
որդւոց վերստին զուարճացուցանել, ի չորից ժողովել հողմոց զցրուեալս
Իսրայիլի եւ շինել զԵրուսաղէմ, յորում դիցէ զանուն իւր սքանչելի
յամենայն երկրի՝ ընդունելով փառս ընդ Քրիստոսի իւրում եւ երկրպա-
գելի Հոգւոյն Սրբոյ ի միում Աստուածութեան եւ բնութեան այժմ եւ
միշտ եւ յաւիտեանս. <ամէն>:

Բնագիրը պատրաստեց
Մեսրոպ քահանայ Արամեանը

ԴԱՒԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՒԱՏՈՅ ՈՒՂՂԱՓԱՌՈՒԹԵԱՄԲ ՍՐԲՈՅ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՎԱՐԴԱՆԱՅ Ի ԽՆԴՐՈՅ ՍՐԲԱԶԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՀԱՅՈՅ ԿՈՍՏԱՆԴԵԱՅ*

I. [1]Պահանջումն զարհուրելի խնդրոյս, որ ի սրբութենէդ ձերմէ,
հա՜յր պատուական, մերձ տանի զիս յահագնահայեաց եւ յիմանալի
լեառն հաւատոյն, որ բարձրագոյն եւ անդր է քան զերկինս երկնից, որ
անծանաւթ միգով եւ անմատչելի լուսով է շրջափակեալ յանմերձա-
նալի փառս միայնակ ի Սուրբն սրբոց, զոր խոստովանիմ զնա նախ
անճառելի գոլ եւ անհաս բնաւից արարածոց, եւ միայն իւրոյ անբա-
ւութեանն հասանելի էական բնութեան իւրոյ գիտութիւնն: [2]Իսկ զոր
պատմեաց մեզ Միածինն ծնունդ ծոցոյ նորա եւ համարձակեաց Հոգի
նորա ամենակալ, որ քննէ զխորս Աստուծոյ**, ոչ որքան կամէր եւ
կարէր Աղբիւրն բարեաց եւ ամենակարող Զաւրութիւնն, այլ որչափ
մեք կարէաք տանել ի կենցաղումս անցաւորի թանձրագոյն մարմնով
եւ երեւելի աշխարհաւ: [3]Յայնր աստուածական ձրից առեալ ըստ չա-
փու իմում դաւանեմ զնա մի Աստուածութիւն՝ անսկսանելի եւ անկա-
տարած, անմարմին եւ անտեղի, ինքն յինքեան եւ ամենեքեան ի նմա,
որ եւ ի վեր քան զժամանակ եւ նախ քան զգնացս իմաստից մտաց
իմանալեաց. միակի բնութեանն շարժեցեալ մինչեւ յերկեակն եւ յեր-
բեակն առատացեալ, եկաց առանց հարկի անմիջնորդ եւ անհատա-
բար, անթարգմանելի եւ անիմանալի յեղանակ որպիսութեանն եւ ան-
հասական ամպով ծածկեալ ի բոլորից: [4]Սակայն մի է բարին, միակն
էութիւն, պատճառն Որդւոյ հայրականաւ յատկութեամբ եւ Հոգւոյն
Սրբոյ եւ ելողաբար առանձնաւորութեամբ: [5]Ոչ երեքեան ան-
<սկ>զբունք եւ անպատճառք, այլ մին է անպատճառ եւ անսկզբնա-

* Բնագիրը վերջերս հրատարակուել է Յակոբ Քեոսէեանի աշխատասիրութեամբ (տե՛ս Վարդան Արեւելցի, «Ճառք, ներբողեանք», Երեւան, 2000 թ.): Նկատի ունենալով, որ այս երկը հայ դաւանաբանութեան եւ յատկապէս քրիստոսաբանական մտքի կարեւորագոյն աղբիւրներից է, անհրաժեշտ համարեցինք այն նորովի վերահրատարակել՝ լուրջ կէտադրական եւ անհրաժեշտ նուազագոյն բնագրագիտական միջամտութիւններով: Այս փոփոխութիւններն անհրաժեշտ են եղել բնագրի աստուածաբանական իմաստները առաւել յստակ եւ անաղարտ կերպով փոխանցելու մտահոգութեամբ (ԽԿ):

** Ա Կոր. Բ 10

բար սկիզբն Որդւոյ եւ Հոգւոյն, եւ երկոքին ի նմանէ եւ զնա ունին
պատճառ: 6 Բայց ոչ նմանապէս երկոքին ի նմանէ ծնելութեամբ, այլ
մի է ծնեալն, վասն որոյ Միածին Որդի, իսկ միւսն բղխումն է հոգե-
պէս, վասն զի մի է ճշմարիտն Հոգի բերանոյ Աստուծոյ*: 7 Այլ ոչ
նուազունք են պատճառաւորքն քան զպատճառն, թէպէտ ի նմանէ, եւ
ոչ կրսերագոյնք միջոցովք ինչ ժամանակի եւ ոչ վայրկենիւ միով, քանզի
մի է բնութիւն<ն> եւ էութիւնն, զաւրութիւն<ն> եւ իմաստութիւնն,
մեծութիւնն եւ թագաւորութիւն<ն>, անչափութիւնն եւ անհասու-
թիւն<ն>, մշտնջենաւորութիւն<ն> եւ անմահութիւնն. զամենայն ինչ
իմացեալ բարիս, զոր ունի մինն եւ երեքին, բայց յանուանցն եւ յան-
ձանցն յատկականաց, զի անուն պատճառին Հայր, որ է անծին եւ
անվերագոյն, վասն որոյ ոչ պատշաճի անուն Որդւոյ ի վերայ նորա:
Սոյնպէս եւ Միածին Բանն մնայ յառանձնաւորութեան իւրում, յոր-
դիութեան կոչման, եւ ոչ ասի նմա Հայր, զի մի՛ անտեղի կարծիք
անկցին լսողաց՝ Հաւր այլում գոլ Որդի եւ Որդւոյ՝ Հայր գոլ ուրուք:
8 Բայց Հոգի անունն ասի ի վերայ Հաւր եւ Որդւոյ, զի անմարմնու-
թեան է. եւ Հայր եւ Որդի ոչ կոչի Հոգին Սուրբ, զի մի՛ թուեսցի նա
այլում Հայր եւ Քրիստոսի՝ եղբայր, եւ լինիցի չփոթումն մեծ յանչփո-
թելի եւ յամենապարզ Աստուածութեան: 9 Եւ վասն այսորիկ անուանք
եւ անձինք Սրբոյ Երրորդութեան անշարժք են եւ յատկացեալք առանց
խառնակութեան եւ բնութեամբ եւ էական փառաւք եւ կամաւք միա-
ցեալ անզատապէս եւ անբաժանաբար: 10 Բայց մեզ՝ ծնելոցս աւազա-
նաւն յերանելի անուն Երրորդութեան չէ անտեղի Հայր կոչել զՈրդի
եւ զՀոգի շնորհաւք որդիացելոցս, յորժամ յաղաւթսն մեր կոչեմք զգթու-
թիւն Երրորդութեան, որով ապրեցաքն եւ լուսաւորեցաք անախտա-
կան վերստին ծննդեամբն:

II. 1 Արդ, այսպէս դաւանեմք զնա. միաբուն, համափառ, զուգա-
պատիւ եւ միակամ Երրորդութիւն՝ անյաւել եւ անթերի եւ ամենակա-
տար, եւ կայ ի նոյնութեան յաւիտեան: 2 Ուր ոչ է մեծութիւն եւ
փոքրկութիւն, ոչ խոնարհութիւն եւ բարձրութիւն, եւ ոչ ոմն յաջմէ
եւ ոմն՝ յահեկէ, զի ոչ է նա ի տեղւոջ, եւ ամենեւին անդ իմացեալն աջ
է եւ աջողակ, եւ անուն ձախոյ ոչ լսի անդ, եւ ոչ է անդ ոմն աւագ եւ
ոմն՝ կրտսեր, զի ժամանակաւորաց է այս: 3 Եւ թէպէտ ունին Որդի եւ
Հոգի պատճառ, բայց միայն զՀայր եւ ոչ՝ զժամանակ, զի ոչ է իմանալ

* Սաղմ. ԼԲ 6

Հայր առանց Որդւոյ <եւ Հոգւոյ>, եւ ոչ Աստուած՝ անբան եւ անհո-
գի, եւ ոչ անձնաւորութիւն աննկարագիր եւ անճառագայթ, եւ ոչ
էութիւն աներես եւ անլոյս, եւ ոչ կենդանութիւն առանց զաւրութեան
եւ իմաստութեան: 4 Վասն որոյ խոստովանիմ զնա համագոյ եւ մի
Տէրութիւն եւ Աստուածութիւն անեղծանելի, որոյ միութիւնն ոչ բա-
ժանի եւ բաժանումն ոչ խառնակի, զոր ծանեաք զնա ոչ ի մարդոյ եւ
ոչ ի ձեռն եղականի, այլ զինքն յինքենէ իմացաք, այսինքն ի ձեռն
Հաւր՝ զՈրդի եւ զՀոգի, եւ ի ձեռն Որդւոյ՝ զՀայր եւ զՀոգի, եւ ի ձեռն
Հոգւոյն՝ զՈրդի եւ զՀայր: 5 Աստուած Աստուծով իմացեալ եւ ծանու-
ցեալ արժանաւոր արամբք իբր ընդ պատուհանս ծագեալ ի կենդանու-
թիւն եւ ի սնունդ բանական բնութեանս, որով կամք եւ եմք եւ շար-
ժիմք իսկ կենսաբեր յիշատակաւ նորա:

III. 1 Խոստովանիմ եւ միշտ ընդ նմա գոլ զամենաբարի զկամսն եւ
զարարչական զաւրութիւնն եւ զիմաստութիւնն, որոյ անդրանիկ է խոր-
հուրդ սուրբ եկեղեցւոյ, եւ ի պատշաճի ըստ իւրում գիտելութեանն՝
արդեամբք կատարեալ զկամսն եւ հեղեալ զբարիսն եւ ստեղծեալ եւ
արարեալ զաշխարհս յոչգոյից եւ յաննիւթից, որ երեւին եւ որ ոչն
երեւին յերկինս եւ յերկրի, յեզերս եւ յամենայն խորս, ոչ ի պէտս
իւրոյ անկարաւտ բնութեանն, այլ զի յառատ եւ յանհատական բա-
րիսն նորա վայելեսցեն արարեալքն, 2 որոց պատուականքն եւ գլխա-
ւորքն են Բ ազգ բանականաց, ինքնաշարժք* եւ անձնիշխանք, ոմն՝
անմարմին եւ վերնային, որ եւ ընդ եղելութեան իւրում կատարեցաւ
թիւ բազմութեան նոցա, եւ աճեն իմաստութեամբ եւ հանճարով եւ են
կարգաւ կայանին եւ փառաւք զանազանեալք, իսկ ոմն լծակցեալ ընդ
մարմնոյ եւ շաղկապ իմանալեաց եւ զգալեաց եւ միջոց մեծութեան եւ
նուաստութեան, վիճակեալ անտրտում կենաց եւ ժառանգորդ դրախ-
տին փափկութեան՝ ունելով պատուիրան աստուածադիր, զոր թէ պա-
հեալ էր, անախտաբար ծննդեամբ բազմացեալ էր հոգեւոր աճմամբ ի
թիւ լրման արարչադիր կիտին եւ եւս բարձրագոյն փառաց լինէր ժա-
ռանգաւոր: 3 Եւ զի ոչ պահեաց, կորոյս զոր ունէրն, եւ որում ցանկա-
ցաւն՝ ոչ էհաս, եւ զրկեցաւ յառաջակայէն եւ ժառանգեաց մարմնովն
զցաւս եւ զախտս եւ զմահ անասնոց, որոց նմանեացն անբանաբար՝
չիմացեալ զպատիւն. եւ բնակեցաւ ի հովիտս տրտմութեան, որ բերէ
նմա փուշ եւ տատասկ, զի լցցէ զսա քրտամբք եւ արտասուաւք եւ

* բն.՝ ինքն անշարժք

ախտաւք եւ ցաւաւք ծննդեամբ լցցէ զհամարն, յոր սահմանեալ է նմա Տէրն նորա**: [4] Ոչ յառաջագոյն արարեալ եւ գանձեալ զհոգիսն, ըստ յիմարութեան ոմանց, եւ ոչ որպէս մարմին ի մարմնոյ, նոյնպէս եւ հոգիք ի հոգւոց ծնանին ի ծնողաց: [5] Եւ ոչ նոր ստեղծեալ լինին ընդ յղանալն մարմնոց, զի մի՛ տակաւին անկատար լիցի աշխարհ եւ սուտ՝ բան Գրոցն, որ ասէ. «Կատարեցան երկինք եւ երկիր, եւ հանգեաւ Աստուած ի գործելոյ»***: [6] Եւ վնաս մի մեծ այն է, որ այս կարգաւ մեր բնութեանս առնումնս ի Տեառնէ չար կարծեաւք շփոթեալ լինի՝ որպէս թէ նոր հոգիս ստեղծաւ եւ նոր մարմին, եւ ոչ Ադամայ մեղուցեալ հոգին հանդերձ մարմնովն առաւ եւ ապրեցաւ: [7] Այլ անճառելի են իրք հոգւոյն, զի պատկեր Աստուծոյ է եւ ոչ անկցի ընդ քննութեամբ, սակայն նիւթ գոյութեանն ի կենդանի ծնողացն ի շինուած բնութեան ոչ է անմասն ի կենաց: [8] Բայց ոչ զայն ասեմք բանական հոգի, զի նոյնպէս, որպէս վերագոյն ասացաւ, ոչ է այս ընդ գիտութեամբ անկեալ, թէպէտ ոմանք ասեն որպէս յերկաթոյ եւ ի քարէ հուր, նոյնպէս եւ ի ծնողացն է. այլ չգրեցաւ ի հոգւոյն, եւ ոչ ամենայն ինչ ընդ սահմանաւ գիտութեանս մերոյ անկեալ է այսու կենաւքս: [9] Սակայն մարդասիրութիւն խոստովանիմ զԲարերարին պատուհասն, որ մահուամբ արձակեաց զթիւնալից եղեալ մարմինն Ադամայ, զի մի՛ անմահ մնասցէ չարութեանն պատահեալն: [10] Ըստ որում թշնամւոյն մերոյ անմահութիւնն ի դատապարտութիւն եւ ոչ ի բարիս է նմա, զի միշտ կենդանութեամբն իւրով գործէ զչարն ի յաւելուած տանջանացն, որ պահեալ է նմա: [11] Զի նա յանձնէ մեղաւ, եւ Ադամ՝ ի պատրանաց նորա, վասն որոյ տալոց է վրէժ զերկոցունցն, զի ոչ շատացաւ ընդ իւր անկումն կորստեանն ի պատճառս հպարտութեան, այլ եւ նովին ախտիւ ընկէց զմեզ եւ ոչ յայնոսիկ դադարեաց, այլ յամենայն զաւրութենէ ջանացեալ ի պէս պէս խորխորատս կորստեան էարկ զորդի սպանելոյն ի ձեռաց իւրոց մինչեւ ի կռապաշտութիւն եւ յանաւրէն արիւնսն: [12] Իսկ բարերարն Աստուած զարարչական խնամսն ոչ եբարձ ի բնութենէս, այլ ազգի ազգի բժշկութեամբ խորտակել փութացաւ զչարութիւնն եւ ողջացուցանել զվիրաւորեալ պատկերն իւր զգողացեալն ի չարէն: [13] Վասն որոյ խրատեաց զնա բանիւ, բարեգործութեամբք, պա-

* բն.՝ *ախտաւոր*

** Մնդ. Գ 17-18

*** Մնդ. Բ 3

տուհասիւք, սպառնալիւք, խոստմամբք եւ *աւրինաւք գրաւոր պատուիրանին, որովք ի բաց տարաւ <ի> կռապաշտութենէն* եւ *էած առ ինքն մարգարէիւք՝ գուշակելով Հոգւովն Սրբով զգալուստ Բանին իւրոյ իբրեւ ամէնիմաստ դաստիարակ եւ բժիշկ, առ սակաւ սակաւ վարժեաց զխակութիւնն մեր եւ էարկ սպեղանիս կակղացուցիչս խղխայթեալ վիրաց մերոց. եւ իբրեւ ահա ներգործէր դեղն կենդանութեան, եւ կային սպիքն: [14] Եւ կայծակունք առաքինութեանն փայլատակէին ի դարս դարս ի նահապետսն եւ յարդարսն առաջինս եւ ի մարգարէսն. եւ զարգանայր հաւատն կենսաբեր, եւ բացան աչք ի փարատել միգին, եւ ցանկացան կենաց ազգ մարդկան եւ սկսան բախել զդուռն ողորմութեան Կամեցողին ողորմութեան: [15] Ցայնժամ ապա եբաց Աստուած զանդունդս գթութեան իւրոյ եւ զխորս գանձուց անհամեմատ սիրոյն իւրոյ յայտնեաց եւ յիշեաց զուխտ եւ զողորմութիւն եւ զխոստումն իւր, որ ընդ արդարսն առաջինսն, եւ զոր սահմանեալ էր նախ քան զժամանակ եւ ունէր անմոռաց ի մտի, էարկ զայն ի գործ եւ արդիւնացոյց, ելից եւ կատարեաց զբանս ծառայից իւրոց մարգարէից: [16] Մի ի Սրբոյ Երրորդութենէն, Որդին Միածին կամաւք Հաւր եւ հաճութեամբ Հոգւոյն Սրբոյ, անձամբ չափ եւ լրմամբ Աստուածութեան խոնարհեալ եկն աւետեաւք հրեշտակի առ Կոյսն Մարիամ՝ յանարատն եւ ի մաքրեալն Հոգւովն Սրբով, եւ մարմնացաւ ի նմանէ՝ անդ զքերովբէսն եւ աստ զորովայն Կուսին ունելով աթոռ, ոչ կացեալ ի բաց յայնմանէ գալովն աստ՝ ըստ անբովանդակելի բնութեանն, սակայն զհետ եկն կորստեան մերում. զի յորմէ պատրանքն եւ պատրանաց լուծիչն անդուստ եկն յառաջ, այսինքն՝ ի կնոջէ, զի զապականութեանն մերոյ քակիցէ զհիմունս: [17] Ըստ որում յինքն ձգեալ յարենէ Կուսին, որ է զանգուած բնութեանն Ադամայ ոչ անմեղն եւ անապականն, որ յառաջ քան զմեղանսն, այլ զոր յետ պատուիրանազանցութեանն խառնեաց ընդ մեղս եւ ընդ ապականութիւն. [18] զի թէպէտ անարատ եւ անբիծ էր Կոյսն, այլ ծնունդ է նա մեղուցեալ տանն Ադամայ, զոր առեալ Տէրն անմեղ եւ անապական գործեաց՝ միաւորեալ ընդ Աստուածութեան: [19] Ոչ նախ ստեղծեալ մարդ եւ ապա բնակեալ որպէս ի տաճարի. մի՛ լիցի, այլ ինքն եղեալ մարդ ճշմարտապէս, այսինքն հոգի եւ մարմին եւ միտք, առանց որոյ բնութիւն մարդոյ ոչ է եւ ոչ ասի, քանզի որովք մեղաք, նոքին առան ի Տեառնէ, եւ եղեւ բոլորովին փրկութիւն: [20] Ոչ թանձրացեալ Բանն յոսկր եւ մարմին, եւ ոչ մարմինն անաւարացեալ ի պարզութիւն Բանին բնութեան, որպէս փայտ ի բոց*

եւ ի ծուխ լուծեալ, այլ Բանն մարմնացեալ եւ մնացեալ նոյնպէս, մարմինն աստուածացեալ եւ ոչ փոխեալ յանմարմնութիւն: [21] Եւ համառաւտագոյն ասել՝ ոչ փոխեալ եւ ոչ փոփոխեալ, զի անփոփոխելի լոյսն ճառագայթ զփոփոխելի նիւթովն փայլատակեալ՝ կայծակն իմն նոյնակերպ եւ նոյնագործ Բանին հրաշաբուսեալ կատարիւր. երկու կատարեալ ի մի կատարեալ կենդանի գլխաւորեալ՝ անճառ խառնմամբ միաւորեալ, որպէս ձայն՝ ի բան, եւ բան՝ ի գիր, լոյս՝ ընդ աւդ, եւ հուր՝ ընդ երկաթ, եւ տեսութիւն՝ ընդ ակն, եւ մուղ՝ ընդ պողովատ, եւ հոգի՝ ընդ մարմին: [22] Եւ եւս նոր եւ աւտար խառնմամբ ի վեր քան զաւրինակքդ միաւորեալ, բանական հոգին միջնորդեալ նրբութեան Բանին եւ մարմնոյ թանձրագունի, ոչ չփոթեալ եւ ոչ այլայլեալ. մի՛ լիցի: [23] Զի ես ոչ խոստովանիմ զնա չփոթեալ, զի Աստուած ոչ չփոթի, եւ յատուկ է նմա անչփոթն գոլ եւ յիւրական բարութեանցն ոչ կալ ի բաց: [24] Ըստ որում այն, որ զամենայն արարածս բաւանդակեալ է, ինանմսեայ եւ Ե աւուրց չափ յորովայն Կուսին տարեալ եղեւ, ըստ աւրինաց արու անդրանկի ծնաւ կնքեալ կուսութեամբ Հացն կենաց ի Տան Հացի* ըստ մարգարէին, անժամանակ ծնեալն ի Հաւրէ ժամանակաւ եղեւ ի Կուսէն, անհայր ի մաւրէ, որպէս անմայր ի Հաւրէ, մի Որդի, մի դէմ եւ մի Տէր Յիսուս Քրիստոս:

IV. [1] Իսկ վասն խնդրոյ մի եւ երկու բնութեանց նախ անպատշաճ վարկանիմ մանրամասնաբար քննել զՈրդին Աստուծոյ եւ համարել զնա ընդ սահմանաւ գիտութեան մերոյ անկեալ, որ է անտեղի: [2] Եւ վնաս մեծ է իջուցանել զնա յիւրական բարձրութենէն, որ է անհասութիւնն եւ անճառութիւնն, զի եթէ նախ անհասանելի էր եւ ապա հասանելի եւ քննելի եղեւ, այլայլութիւն եւ փոփոխութիւն է այս, զոր մի՛ լիցի մեզ ասել: [3] Զի թէ ասէ ոք կարել իմանալ եւ պատմել, նախ տացէ մեզ զհամանգամանս իւրոյ կազմուածոյն, եւ ապա լուիցուք ի նմանէ զտնաւրէնութիւն Որդւոյն Աստուծոյ: [4] Եւ ասասցէ, թէ զիարդ կուսութիւն եւ ծնունդ ի միասին եկին երկու հակառակքն եւ ոչ հանին զմիմեանս, որպէս կեանք եւ մահ, եւ զիարդ եղեւ Բանն մարմին ըստ Յովհաննու**: [5] Այլ ես խոստովանիմ, զի յերկուց մի եղեւ անձնաւորութիւն, քանզի Բանն Աստուած զբնութիւն Ադամայ կատարեալ առ ի Կուսէն՝ միտք եւ հոգի եւ մարմին, որ է ստուգիւ բնութիւնս մեր,

* «Բեթղեհէմ» անուան ստուգաբանութիւնն է:
** Յովհ. Ա 1

բայց զորպէսն ոչ քննեմ, եթէ մասն ինչ էառ ի Կուսէն եւ եթէ յամենայն զաւդուածոց նորա: [6] Եւ եթէ նմանապէս ի հոգւոյ եւ ի մտաց Կուսին հատաւ եւ միացաւ ընդ Բանին, զայս ոչ իշխեմ ստուգել եւ վնաս համարիմ քննողին: [7] Այլ երկիր պագանեմ անճառ խորհրդոյն եւ լռութեամբ պատուեմ զխորագոյնսն Յիսուսի եւ հաւատոյն տամ, զի աստուածընկալն Պաւղէ հաւատովք ճանաչէ զնա եւ ոչ քննութեամբ*: [8] Հաւատամ զնա Աստուած կատարեալ եւ մարդ կատարեալ, բայց զայս ասելով ոչ հատանեմ յերկուս, այլ զնոյնն ասեմ Աստուած եւ մարդ եւ ոչ կարեմ իմանալ զնա Աստուած առանց մարդոյն եւ ոչ մարդ առանց Աստուածութեան. եւ Աստուած եւ մարդ ասեմ, զի ցուցցի, թէ կատարեալ փրկեցայ եւ ոչ կիսամասնեայ ըստ հերեսիոտացն: [9] Եւ որպէս ծոցոյ Հաւր ծնունդն «յառաջ քան զարուսեակ»** եւ ծոցածին ծնունդ Կուսին ի լրման աւուրց մի Որդի է, եւ ոչ է չփոթումն, եւ որպէս անձն, որ ընդ աջմէ Հաւր նստի յաւիտեան, եւ անձն, որ սնաւ եւ աճեաց զամս ԼԳ, մի անձնաւորութիւն է, եւ ոչ իմանի չփոթումն, [10] նոյն աւրինակ է եւ բնութիւն Հաւր Բան<ի>ն եւ բնութիւն մեր, որ առաւ ի Կուսէն, մի բնութիւն է եւ ոչ է չփոթեալ, զի ամենայն բանաւորք ընտանիք եւ աւտարք զբնութիւն պարզ եւ նուրբ են ասացեալ եւ մաւտաւոր Աստուածութեանն քան զանձնաւորութիւն: [11] Այլ եւ սուրբ հարքն առաջինքն զանձնաւորութիւնն եւ զտեսակն եւ զբնութիւնն մի են ասացել: [12] Եւ որպէս Մարիամ Կոյս է եւ Մայր, եւ պատճառ Քրիստոս է, զոր ծնաւն, նոյնպէս եւ իմանամն զԱստուածն եւ զմարդն, որ մի եղեւ բնութիւն, եւ պատճառ Բանն է, որ մարմնացաւն: [13] Եւ որպէս ոչ բաժանեմք զասացեալսն ի վերայ Մարիամու յետ ծննդեանն՝ զոմանս Մաւր եւ զոմանս Կուսի տալով, այսպէս եւ ոչ բաժանեմք զգործն Քրիստոսի՝ յետ միաւորութեանն զոմանս Աստուծոյ տալով, զոմանս մարդոյն, այլ նմին եւ նորին՝ զխոնարհագոյնսն եւ զբարձրագոյնսն, զի թէ զնուաստականսն մարդն կրեաց, եւ զվերնագոյնսն՝ Աստուածութիւնն, ոչ ինչ նոր եւ հրաշալի իրք եղեն քան զբանականսն եւ զսովորականսն: [14] Ոչ որպէս ասեն, թէ մարմինն կրէր, եւ Աստուծոյ է համարեալ այն. զիա՞րդ մարգարէիցն եւ առաքելոցն իրքն է, որ ասէր Աստուած ցՍամուէլ. «Ոչ զքեզ անարգեցին, այլ զիս»***. եւ ցառա-

* Գաղ. Գ 9-15
** Սաղմ. ՃԹ 3
*** Ա Թագ. Ը 7

քեալսն ասէր Փրկիչն. «Որ զձեզ ընդունի՝ զիս ընդունի, եւ որ զձեզ անարգէ՝ զիս անարգէ»: [15] Այլ աստուածացաւ մարմինն՝ միանալով ընդ Բանին, եւ Աստուած ներգործէր եւ կրէր աստուածացեալ իւրով մարմնովն. [16] զի ոչ կորեաւ ի նա մեր բնութիւնն, այլ միաւորեցաւ փոքրն ի մեծն, յաւելաւ, աստուածացաւ, ըստ որում Աստուածածին է ծնողն եւ ոչ ասի Աստուածածին եւ մարդածին, քանզի բնութիւն մարդոյ կուսութեամբ ոչ ծնանի: [17] Ասեմք, զի Աստուած ներգործէր մեր բնութեամբս զմարդավայելուչ կիրսն, այլ ոչ որպէս գործեաւք եւ ոչ հարկեալ ի բնութենէն ի քաղց եւ ի ծարաւ եւ ի քուն, որպէս առ մեզ, այլ ինքն կամաւք իւրովք ածէր ի կիրսն անանգոսնելի եւ թոյլ տայր բնութեանն կրել զիւր անկսն կամաւոր եւ ոչ հարկաւոր, [18] ըստ որում զաւրէնս բնութեան իւրոյ մարմնոյն լնոյր աճմամբ հասակին, այլ եւ զաւրէնսն կատարէր թլփատութեամբն եւ ընծայելովն ի տաճարն եւ հնազանդելովն Մաւրն: [19] Այլ եւ քաղցնոյր եւ ծարաւէր եւ վաստակէր եւ քրտնէր՝ ոչ յաղթեալ ի կրիցն, այլ մեզ յաղթութեան զէն տալով՝ զնոսա ներգործէր աստուածաբար, կրէր տնաւրինաբար: [20] Եւ նոյն է գործողն եւ կրողն, զի յաստուածապէսն մարդկայնովն եւ ի մարդկապէսն աստուածայնովն վարէր: [21] Եւ վասն այսորիկ հիանամք եւ սոսկամք եւ դողամք ընդ իջանելն Աստուծոյ եւ ընդ անչափ մարդասիրութիւնն, զի վասն մեր կրեաց զայն անկարաւտն զայն ամենայն՝ ոչ մերկ Աստուածութիւնն, զի անհնարին էր, եւ ոչ լոկ մարդն, [22] զի ոչ զատչի ի Բանէն աստուածախառն մարմինն, եւ ոչ հարկեալ լինէր ի կրիցն, այլ յաղթութեան զէնս մեզ ետ զտկարականսն եւ զկարաւտականսն, զի իւրովն զմերն բարձցէ տկարութիւն զաշխատութիւն եւ զցաւս եւ զերկիւղ եւ զանգիտութիւն. [23] քանզի ոչ ի մեզ հայելով ստուգեմք զնորայն, զի որ նման մեզ եւ համագոյ է մարմինն, աննման մեզ է աստուածանալովն, քանզի զմերսն ամենայն շողացոյց՝ Աստուածութեամբն սպեղանիս ի վերայ մեր կազմելով, զխրացուցեալ բնականն մեր կիրսն եւ կարաւտութիւն եւ զեկամուտսն ի մեզ ոչ ընդունելով զանգոսնելիսն: [24] Վասն որոյ անարատապէս ճանապարհորդելով զհասակն սխալական եւ զանհաստատ ի ծնդենէ մինչեւ ի դադարումն կատարեալ հասակի ընդունական իմաստութեան բնութեանս մերոյ աւրինաւք աներբն Աստուած եւ իմաստութեան խորքն՝ ապա երեսունամեայ գայ ի մկրտութիւն ի Յորդանան առ Յովհաննէս անունակն յան-*

* *Ղուկ. Ժ 16*

ցանաց, զի զյատկութիւն անձանց միոյ՝ համաբուն Աստուածութեան ցուցցէ՝ վկայելով Հաւր եւ Հոգւոյն, զՅորդանան սրբեսցէ եւ զարգանդ Աւազանին բացցէ եւ զՀոգին ընկալեալ տացէ Եկեղեցւոյ իւրում: [25] Իսկ չարն տեսեալ զնա իբրեւ զկարաւտ մաքրութեան եկեալ ի մկրտութիւն եւ ի Հաւրէ լուեալ զնա Որդի բնութեան նորա եւ բարձիչ մեղաց, եւ նեղեալ ի մէջ կարծեաց երկուց՝ յաւժարէր զնա փորձել, զի ստուգեսցէ ինչ վասն նորա: [26] Եւ Տէրն գիտելով զկամս չարին՝ մեկուսացոյց զանձն լերամբ անապատ այնով եւ տայ նմա թոյլ մատնիլ առ նա ի փորձ, զի ընկճեսցէ զնա, որ եւ վազեալ չարին ի վերայ նորա լրբութեամբ իբր յԱդամայ պարտեցելոյ ի նմանէ: [27] Իսկ Ամենատէրն, որ ասաց ի դատաստան եկեալ պարտեալ մերով բնութեամբն, յաղթեաց նմա՝ ոչ յայտնելով զինքն, այլ խաբելով զնա, քանզի նա խաբելով յաղթեաց Ադամայ, դատաստանաւ գնաց ընդ նմա Տէրն՝ տալով մեզ զյաղթութեան ճաշակն եւ զաւրինակն:

[28] Սկսանի ապա այնուհետեւ եւ ի դէպ ժամանակի Տէր յայտնել զհաւատն կեցուցիչ ի ձեռն վարդապետութեանն, եւ նորութեան հաւատոյն աւգնականս տայ զհոյլս նշանացն եւ սքանչելեացն. սքանչելեաւքն հաւատարիմ առնէ զբանսն եւ բանիւքն հաստատէ զնշանագործութիւնսն՝ ըստ կարգի գնալով ընդ կանխաւ գուշակեալ բանսն մարգարէիցն զնմանէ, [29] զորս ոչ բաժանեմք երկաքանչիւր բնութեանցն՝ զոմանս Բանին տալով եւ զոմանս՝ մարմնոյն, այլ եւ ոչ զաւետարանչացն եւ զառաքելոցն՝ ըստ բանի ուղղափառացն հարցն, այլ միոյ եւ նորին, քանզի յետ միաւորութեանն ոչ յատկանան ի գործս, ի կամս եւ ի բնութիւնս երկուս: [30] Եւ որ իրաւքն ոչ բաժանի՝ մեք զնա եւ ոչ բանիւ իշխեմք: [31] Իսկ հրեայքն չարասէրքն եւ բարիատեացք, կամաւ եղեալ ի կողմն չարին, զքարոզեալն ի մարգարէից զԱստուած՝ եկեալ սիրով բարի առնել նոցա անձամբ եւ ոչ միջնորդիւ, զնա ոչ ընկալան, այլ նախանձու եղեալ ծառայ եւ աման չարին՝ զԿեանս իւրեանց մատնեցին եւ սպանին զնա՝ զփայտէ կախեալ, ըստ վկայութեան Գրոց իւրեանց: [32] Ոչ յորժամ ախորժեցին, կարացին արկանել ի նա ձեռն, զի չեւ էր եկեալ ժամ նորա, այլ յորժամ ինքն կամեցաւ, քանզի ինքն էր շտեմարան տնաւրինական խորհրդոյն իւրոյ, զոր ի դիպող ժամանակի, ըստ նկատելոյ մարգարէիցն, ի կիր առնոյր, զի մի՛ լիցի փրկութիւն մեր ի հարկէ չարաց եւ ոչ ի կամաց Բարեբարին, քանզի ոչ*

* *Բ Օր. ԻԸ 66*

բնութիւնն սատանայի եւ մոլեգնութիւն հրէիցն եւ լրբութիւնն Յուդայի արարին զփրկութիւն մեր, այլ անճառ գթութիւն բարեգործին Աստուծոյ: [33] Այսինքն՝ եկեալ Արարիչն արարածոց անմահ բնութեամբն Հաւր, առեալ զմահկանացու բնութիւնս մեր անորիշ եւ անշփոթ խառնմամբ՝ չարչարի եւ մեռանի խաչիւ՝ զպարտիս մեր վճարելով անպարտականն գոլով մահու: [34] Ոչ ասեմ զանչարչարելի բնութիւն Բանին չարչարեալ եւ զանմահն մեռեալ. մի՛ լիցի: [35] Այլ զի «Աստուած» խոստովանիմ զմարմինն, զի Աստուծոյ մարմին էր, եւ աստուածացոյց, ասեմ, զմեր բնութիւնն, զոր էառ Աստուած՝ ոչ յանմարմնութիւն փոխեալ, այլ միաւորեալ ընդ Աստուածութեան, ըստ որում չարչարեալ ասեմ եւ ցաւեցեալ եւ խոցեալ եւ բեւեռեալ, որ անմարմնոյ անկարելի է: [36] Եւ վասն այնորիկ մարմնացաւ, զի կարասցէ չարչարիլ եւ մեռանիլ: [37] Եւ «մեռանել» կոչեմ զելանել հոգւոյն բանականի ի մարմնոյն, այլ ոչ բաժանել ի նմանէ Աստուածութիւն: [38] Եւ «կենդանի» ասեմ եւ խոստովանիմ Աստուածութեամբն զմարմինն, ըստ որում երկու վտակքն, զոր զինաւորն գեղարդեամբն պեղէր, քարոզէին զնա կենդանի եւ մեռեալ: [39] Եւ թէ ոք ասէ, թէ Աստուծոյ բնութիւն է անմարմնութիւնն եւ անչարչարութիւնն, թէ մի բնութիւն եղեւ՝ զիա՞րդ մարմին մնաց չարչարելի: [40] Նախ ասեմ, թէ զանմարմնութիւն եւ զանմահութիւն ե՛ւ հրեշտակք, ե՛ւ հոգիք մեր ունին, եւ այդ չէ Աստուծոյ բնութիւն յատուկ: [41] Եւ ահա մարմինն մեռեալ եւ ո՛չ հոգին՝ ասեմք զմարդն մեռեալ, այսպէս եւ Գիրք ասեն, Աստուած խաչեալ եւ արիւն Աստուծոյ եւ մահ: [42] Եւ մեք ոչ ասեմք՝ կորուսեալ զմեր բնութիւնն շփոթմամբ, այլ եւ նզովեմք զշփոթողսն, եւ որք վասն այնորիկ ասեն մի բնութիւն, այլ՝ զՄիաւորեալն անբաժանելի: [43] Մի ասեմք եւ ոչ Բ, եւ ոչ ոք ի ճշմարտից՝ զոմն չարչարեալ ասէ եւ <զոմն>՝ ոչ մեռեալ, եւ ոչ ես ասեմ զայս. մի՛ լիցի: [44] Այլ զինքն ասեմ մարմնով չարչարեալ եւ մեռեալ եւ Աստուածութեամբն անմահ մնացեալ, զի Աստուած մերկ չարչարիլ ոչ կարէ, եւ մարդ սոսկ մեռեալ փրկութիւն ոչ կարէ առնել, զի անյաւդն եւ անհատանելին Աստուած ընդ խոցոտելումն էր միացեալ մարդում, Թումաս վկայէ*: [45] Վասն որոյ ասեմ զայս, թէ երբ կամեցաւ՝ կրեաց, երբ կամեցաւ՝ եցոյց, որքան եւ կամի տեւէ խոցն այն, զի հայեսցին, յոր խոցեցինն**: [46] Եւ զի յիսկզբանն կորստեանն մերոյ նախ

* Յովհ. Ի 27-28

** Յովհ. ԺԹ 37, Զաք. ԺԲ 10

մեղքն տիրեաց բնութեանս եւ մատնեաց մահու եւ ապականութեան. իսկ կենդանութիւնն մեր Աստուած նախ դատապարտեաց զմեղս ի մարմնի՝ շրջելովն ի վերայ երկրի եւ սպան զնա ի վերայ խաչին: [47] Եւ ի յաւանդելն հոգւոյն բանականի, որ էր մերն, չոգաւ նովաւ առ դժոխքնակ մարդկան հոգիսն, ուր էր թագաւորութիւն մահու, եւ մարմնով էջ ի գերեզման, ուր տիրէր ապականութիւնն՝ յերկուս տեղիս արագելով, ուր զմեզ բռնացեալ ունէին մահն եւ ապականութիւնն: [48] Եւ կողոպտելով զմահ յիշխանութենէ իւրմէ՝ ի դժոխս կապեաց եւ զբերան ապականութեան՝ ի գերեզմանին: [49] Եւ ոչ կարաց ծամել զնա, զի Աստուածութիւն էր յերկոսին արգելարանսն հոգւովն եւ մարմնովն, վասն որոյ ըստ Դաւթայ՝ «Ոչ թողաւ ոգի նորա ի դժոխս եւ ոչ մարմին նորա ետես զապականութիւն»*: [50] Եւ այսպէս հանեալ զհոգիսն յիշխանութենէ սատանայի՝ յարեաւ երեքաւրեայ կնքեալ վիմով ի վկայութիւն կուսութեամբ ծննդեանն: [51] Այլեւ երկրորդէ վկայութիւն դրաւքն փակելովք առ աշակերտն մտին**: [52] Եւ զկնի քառասուն աւուր, համբարձեալ յերկինս, նստաւ ընդ աջմէ Հաւր, ուստի ոչ էր մեկնեալ ըստ անբովանդակելի բնութեան Աստուածութեանն, եւ «գալոց է նովին մարմնով եւ փառաւք Հաւր՝ Դատաւոր կենդանեաց եւ մեռելոց»***, զի «ոչ եթէ Հայր դատի զոք, այլ զամենայն դատաստան ետ Որդւոյ իւրոյ»†, զի մարմնատեսակութեամբն ճանաչիցի ի դատեցելոցն:

V. [1] Եւ այսպէս, ոչ յաւելուած ասեմ ի Սուրբ Երրորդութիւն եղեալ, ոչ անձնաւորութիւն եւ ոչ բնութիւն աւտար եւ ոչ կամս եւ ոչ գործս, թէպէտ ի լրման աւուրց էջ Տէր անմարմին Բան եւ ել մարդացեալ ճշմարտապէս, բայց մնաց մի Տէր, մի Քրիստոս, մի անձն, այսպէս եւ մի բնութիւն՝ զսեփականն Հաւր միաւորեալ ընդ մերս անշփոթելի: [2] Եւ մի կամս ասեմ նմա, թէպէտ եւ ասաց ինքն. «Ոչ իմ կամս, այլ քոյդ եղիցի»††: [3] Այս համակամութեան է ձայն եւ ոչ այլութեան, որպէս եւ այլուր ասաց. «Իջի ես ի յերկնից՝ ոչ զի զկամս իմ արարից»†††: [4] Եւ յայտ է, զի յերկնից Բանն էջ եւ ոչ մարմինն. զՀաւր կամացն ասէ, որպէս թէ՝ չէ իմ կամքս աւտար ի քո կամացդ, ըստ մեկնելոյն Աստուա-

* Սաղմ. ԺԵ 10, Գործք Բ 31

** Յովհ. Ի 26

*** Գործք Ժ 42

† Յովհ. Ե 22

†† Ղուկ. ԻԲ 42

††† Յովհ. Զ 33

ծաբանի. «Եւ զի չէր պատշաճ նոր ինչ մտանել յԱմենասուրբ Երրորդութիւնն, Որդին եկն յերից անձանցն եւ Որդի եղեւ, զի անշարժ կացցեն անուանքն»: [5] Նոյնպէս եւ զգործսն ասէր Տէրն, թէ՝ «Հայրն, որ յիս բնակեալ է, գործէ զգործսն»*: [6] Եւ ի վերայ Բանին եւ մարմնոյն որպէս յատկանան գործքն, զի նորա են ամենայն մեծավայելուչքն բնաբար եւ խոնարհականքն տնաւրինաբար, զոր աւետարանիչքն եւ առաքեալքն ոչ համարձակին աւելի ինչ ասել քան զոր ի Մարդացելոյն լուան, մեք որպէ՞ս իշխեմք որոշել, զոր ոչ երբեք բաժանեաց Միացեալն: [7] Այլ եւ եցոյց, թէ ոչ կամի զայլոց բաժանելն զնա, յորժամ ասէ զՈրդին մարդոյ յերկնից իջեալ եւ փոխանակ Հաւր տեսանիլ եւ յառաջ քան զլինելն Աբրահամու գոլ**: [8] Թէպէտ եւ մեք անմարմին խոստովանիմք զնա՝ եկեալ յերկնից ճշմարտապէս, եւ զայլսն լսեմք նոյնպէս մտաւորութեամբ, այլ որպէս Տեառն ամենայն ուստեք եզական ասելով զանձնէ, նոյնպէս մի խոստովանիմք զնա գիտութեամբ եւ ոչ անգիտութեամբ:

VI. [1] Հաւատամ ի մի մկրտութիւն: Հաւատամ եւ ի մի Եկեղեցի, որ է նախ հաւատն ուղղափառ, որ կարող է զամենեսեան հաւաքել ի մի խոստովանութիւն եւ ի վարս: [2] Հաւատամ եւ Քրիստոսի հրամանին անլուծանելոյ առ Պետրոս՝ կոչելով զնա վէմ անշարժ, որ էր հաւատով դաւանելն զնա Որդի Աստուծոյ***, յորոյ վերայ եւ մեք հաստատեալ գթութեամբն Քրիստոսի: [3] Այլ եւ ձեռագործ եկեղեցիք ընդ ամենայն տիեզերս բաժանեալք մի են, յորժամ մի խորհուրդ կատարի յամենեսեան եւ կրանք: [4] Հաւատամք, եթէ մարդասիրութեամբն Քրիստոսի լինի քաւութիւն եւ թողութիւն մեղաց, զոր յետ Աւազանին աղտեղանամք ի տկարութենէ մարմնոյ եւ ի խաբէութենէ սատանայի, զոր ի ձեռն խոստովանութեան եւ ապաշխարութեան թողու այն, որ եկն կոչել զմեղաւորս ապաշխարութեամբ ի փրկութիւն: [5] Եւ խոստովանութեամբ վախճանեցելոցն եւ հաւատովք լինի եւ նոցա ողորմութիւն, թէպէտ եւ անապաշխար վճարեցան, այլ խորհրդով եկեղեցւոյ եւ յետնորդացն յիշատակութեամբ մաքրին մինչեւ յաւրն դատաստանի: [6] Եւ ասեմ թէ իրաւացի դատաստանաւն Աստուծոյ հոգիքն արդարոց եւ մեղաւորաց ոչ առնուն զվճարն փոխարինի առանց լծակցի մարմնոյն, որով առաքինաց<ա>ն կամ անաւրինեցան, բայց ի խնդութենէն եւ

* Յովհ. ԺԴ 10
** Յովհ. Գ 13, ԺԴ 9, Ը 58
*** Մատթ. ԺԶ 16-18

յերկիւղից, զոր յուսով ունին երկաքանչիւր կողմանքն՝ գիտելովն զպատրաստեալն իւրեանց տեղի, ըստ վարուց աշխարհակեաց կենցաղումնս: [7] Եւ են նոքա ընդ իշխանութեամբ Աստուծոյ ի տեղւոջ, զոր միայն գիտէ Դատաւորն նոցա Աստուած, զի լուեալ է մեր վասն այսորիկ այլ եւ այլս, եւ հաստատել ոչ ունիմ ի բնագրոց: [8] Հաւատամ, եթէ յարութիւն առնէ Աստուած հասարակաց արդարոց եւ մեղաւորաց ի սահմանեալն աւուրն իւրական գիտութեամբն եւ դատաստան իրաւամբք Աթոռոյ իւրոյ: [9] Իսկ զփառս եւ զպատիժս զանազանեալս առնուն յարդար Դատաւորէն առաւելութեամբ եւ նուազութեամբ յարմարական աստէն քաղաքավարութեան իւրեանց, եւ զայնոսիկ յաւիտենական, ըստ հրամանի Փրկչին մերոյ Աստուծոյ, որ նա ինքն է Դատաւոր արդարութեան, որ է աւրհնեալ ընդ Հաւր եւ ընդ Հոգւոյն Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս:

VII. [1] Զայս խոստովանութիւն դիւրին էր մեզ ըստ մասին հաստատել ի բնագրոց եւ յերեւելի արանց սրբոց, յորոց վերայ եկեղեցի Հայաստանեայց առաջին հիմամբն անշարժ կայ չնորհաւքն Աստուծոյ, բայց զի վարժ լսելեաց աւանդեմք զբանս, ոչ համարեցաք հարկաւոր: [2] Եւ եթէ յետոյ ուրեք պատճառ ինչ երեւեցաւ եւ նորաձեւ իրք ասացան՝ հեռաւորացն եւ յետնոցն, բանիւք ոչ իշխեմք չափել զԱնչափելին, եւ աղաչեմ չմեղադրել մեզ վասն այսոցիկ: [3] Ո՛ղջ լեր:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՐԶՆԿԱՑՈՒ

«Ի ՃԽ ՍԱՂՄՈՍ...» ՃԱՌԸ

«Գանձասար» հանդէսի Զ հատորում ներկայացուած Յովհաննէս Երզնկացի-Պլուզի «Յաւուր Մննդեան եւ Մկրտութեան Քրիստոսի» բնագրի ներածականում Արմէնուհի Սրապեանը նշում է, որ հրատարակութեան են ներկայացուած մեծ վարդապետի առաւել չուսումնասիրուած երկերը՝ աստուածաբանական բնոյթի ճառերն ու քարոզները: Երզնկացու կեանքի եւ ժառանգութեան ճանաչուած ուսումնասիրողն իրաւացիօրէն նկատում է, որ այդ ճառերն ունեն ոչ միայն աստուածաբանական, այլեւ գրական, իմացաբանական, գիտական, բարոյաքաղաքական, մշակութային, ազգային մեծ արժէք: Յաւօք, բացի վերոյիշեալ ճառից, Երզնկացու այս երկերը ցարդ հրատարակուած չեն: «Գանձասար» հանդէսի հատորներում մենք շարունակելու ենք ներկայացնել Երզնկացու ճառերի եւ քարոզների բնագրերը, մինչեւ հնարաւոր լինի դրանք ամբողջութեամբ հրատարակել:

Ներկայացուող ճառը մեկնութիւն է Ճխ սաղմոսի 1-2 համարների՝

«Տէ՛ր, կարդացի առ քեզ, եւ լո՛ւր ինձ.
Նայեա՛ց ի ձայն աղաւթից իմոց ի կարդալ իմում առ քեզ:
Ուղիղ եղիցին աղաւթք իմ, որպէս խունկն առաջի քո, Տէ՛ր.
Համբարձումն ձեռաց իմոց պատարագ երեկոյի»:

Ճառի վերտառութիւնից յայտնի է, որ Յովհաննէս Երզնկացին այն կարդացել է Դրազարկի հռչակաւոր վանքում՝ ամենայն հաւանականութեամբ 1281-1284 թթ.՝ Կիլիկիայում գտնուելիս: Ճառն ունի բարձր հռետորական ոճ եւ գեղեցիկ, հիւթեղ լեզու, ինչը բնորոշ է հեղինակի գործերին առհասարակ: Երզնկացու խօսքն ունի զարմանալի ներգործականութիւն եւ զօրութիւն, ինչն արդիւնք է նրա աստուածամերձ ու սրբակեաց վարքի: Սուրբ Գրքի աստուածաբանական իմաստները բացայայտուած են զարմանալի խորութեամբ: Ճառի բուն թեման ներքին

աստուածպաշտութիւնն է եւ յատկապէս Աստուծոյ հետ աղօթական փոխյարաբերութեան խորհուրդը:

Ըստ Յովհաննէս Երզնկացու՝ աղօթքը մարդու կողմից Աստուծոյ հետ հաղորդակցութիւն հաստատելու ոչ միայն առանձնական անհրաժեշտութիւն է, այլեւ արարչութեան ընդհանրական ձգտում է դէպի իր Արարչագործ Սկզբնապատճառը: Վերջինիս մէջ մարդու դերը կենտրոնական է եւ, ըստ էութեան, քահանայագործական. «Երբ դիմում եմ [Աստծուն], ինձ հետ դիմում են բոլոր արարածները, ինչպէս բոլոր անդամները մէկ բերանով, քանզի գոյի բոլոր տեսակներից մարդու բնութիւնը իր մէջ մաս ունի. զգայութեամբ՝ զգայական կենդանիների, տնկականով՝ բոյսերի, եւ մտքով՝ իմանալի աշխարհի»:

Աղօթքը մարդու բոլոր զօրութիւնների միասնական ակտ է. Աստծուն պէտք է դիմել խորհուրդներն ուշադրութեամբ ի մի բերելով, սրտի ջերմեռանդութեամբ եւ մտքի խոնարհութեամբ: Կարեւոր է զղջմամբ եւ մեղքերի խոստովանութեամբ աղօթելը, ինչպէս նաեւ Դաւաստանի յիշողութիւնը աղօթքի ժամանակ:

Աղօթքի զգալի նշանակը խունկն է: «Ինչպէս խունկը, անուշահոտ լինելով, իր բուրմունքը չի արձակում, քանի դեռ չի հպուել հրին, այնպէս էլ սաղմոսերգութիւնն ու աղօթքը բարի են, սակայն իրենց անուշահոտութիւնը տարածում են այնժամ, երբ սիրոյ հրի բորբոքմամբ դրւում են Աստուծոյ առաջ... Եւ ինչպէս խունկի ծուխն է ուղիղ եւ թեթեւօրէն վեր ելնում, քանզի չունի ծանրութիւն, թէպէտ ծանր նիւթից է ելնում, այնպէս էլ մեր մտքի իմանալի տեսութիւնը, ցանկականի շարժումը եւ սրտի խորհուրդները, Աստուծոյ սիրոյ հրի մէջ դրուելով, ամէն տեսակ նիւթականից վեր են ելնում...»:

Թէպէտ կան հաստատուած աղօթքի ժամեր, սակայն ուղիղ աղօթքի ժամն այն է, երբ միտքը ելնում է զգայական ցրուածութիւնից եւ միաւորւում Աստծուն: Միտքը մարմնի եւ զգայական շնչի լոյսն է եւ, հպուելով Քրիստոսի լոյսին եւ նրանից պայծառանալով, լուսաւորում է մարմինը, որ գիշերի օրինակն է:

Քրիստոսի պատարագը Աստուծոյ հետ միաւորուելու խորհուրդն է, ուստի, ըստ Յովհաննէս Երզնկացու, հարկ է հոգու եռեակ զօրութիւններով կատարելապէս պատարագ մատուցել Աստծուն. բանականի պատարագը աղօթական օրհնութիւնն է, ցասմնականինը՝ խոնարհութիւնը, ցանկականինը՝ սրբութիւնը: Իսկ մարմինը պէտք է պատարագել՝ թոյլ չտալով, որ այն ըմբոստանայ բանականութեան դէմ եւ իր

ցանկութիւնները թելադրի նրան. իւրաքանչիւր անդամ պէտք է հեռանայ չարից եւ գործի բարին: Պատարագ է նաեւ, երբ մարդ ոչ միայն սեփական անձը, այլեւ ուրիշներին է նուիրում Աստծուն, ինչպէս անում են սուրբ հայրերը:

Աղօթքի խորհրդի հետ խոր աղերս ունի բուրվառի խորհրդաբանութիւնը. բուրվառը սրտի սրբութիւնն է, բուրվառի շղթաները՝ մեր քառանիւթեայ բնութիւնը, շղթաների ագոյցը՝ բանականութիւնը, բուրվառի ներքեւի մասը՝ մեր մարմնի բնութիւնը, բռնելիքը՝ անմոռաց յիշողութիւնը, խնկանուէր միտքը սեղանն է, տաճարը, բեմը, որտեղից բարձրանում է Սուրբ Երրորդութեանը հաճելի անուշահոտութիւնը:

Բնագիրը պատրաստուած է ըստ ՄՄ N 2178=a (1ա-17ա) գրչագրի, որը համեմատուած է N 2854=b եւ N 2992=c գրչագրերի հետ:

Մեսրոպ քահանայ Արամեան

Ի ՃԽ ՍԱՂՄՈՍ, ՈՐ ԱՍԷ. «ՏԷՐ ԿԱՐԴԱՑԻ ԱՌ ՔԵԶ»՝ ՅՈՀԱՆՆԻՍԻ ԵՐԶՆԿԱՑՒՈՅ ԱՍԱՑԵԱԼ ՅԱՏԵԱՆՆ ԴՐԱԶԱՐԿՈՅՆ, Ի ՀՌՉԱԿԱՒՈՐ ԵՒ Ի ՄԵԾ ԱՆԱՊԱՏԻՆ, ԳՆԱԼՈՎ ԱՆՏԻ...* 1ա

I. [1] Անզուգական եւ անբաղդատելի սիրոյն Աստուծոյ առ ազգս մարդկան վկայ են երկինք եւ երկիր՝ ամենայն մասամբք արարածոցս: [2] Նախ՝ զի այս ամենայն գեղեցիկ յաւրինուածք էից յաղագս մարդոյն եկին ի լինելութիւն եւ գործով ի ցոյցս տեսութեան, յորոց վերայ եւ զտիրականն առ իշխանութիւն: [3] Եւ երկրորդ՝ զի ոչ միայն շնչաւ կենդանի է մարդն եւ զգայական մասամբք՝ ճանաչող զգալեացն, այլեւ մտաւոր եւ բանական եւ խոհականին ընտրութեամբ՝ իմաստասիրակ: [4] Վասն այսորիկ եւ կրկնակի բնութեամբ բարգաւաճեալ ցնծայ յարարածս Աստուծոյ, վասն զի ետ մարդոյն զոմանս ի պէտս վայելչութեան, եւ է զորս ի պատճառս իմաստասիրութեան: [5] Եւ երրորդ՝ զի ստեղծ Արարիչն գործիական մասունս ի կազմուածի մարմնոյս եւ ետ հնարս եւ հանճարս իմաստութեան բանական հոգւոյ, որովք ամենայն արարածոցս գեղեցկութիւն մի՛ վրիպեսցի զիւրն ընդունել շահաւէտութիւն: [6] Ետ զգայարանք Ե (5). առաջին՝ աչք, երկրորդ՝ ակա//նջք, երրորդ՝ 1բ
*ճաշակելիք, որ է բերանն, եւ չորրորդ՝ հոտոտելիք, եւ հինգերորդ՝ շաւշափելիք, որ է ձեռն: [7] Իսկ իմաստութեան գտող եւ բացատրող միտք եւ բան: [8] Այլեւ զմեծահրաշ բարձրութիւնն երկնի եւ զխորութիւն եւ զտարակացութիւն** երկայնութեան եւ լայնութեան երկրի եւ զամենայն իրողութիւնս աշխարհի համառաւտեալ հաւաքեաց Արարիչն ի Ե (5)՝ ըստ զգայարանացս չափոյ, [9] զի կամ գոյութիւն է շաւշափելի եւ թանձրատեսակ էութիւն, որ ձեռաւք շաւշափի, եւ կամ պատահմունք գունոց զանազան եւ գեղեցկանկար երանգաւք, որ աչաց տեսանի, կամ հնչմունք ձայնից յաւդաւորական եւ անյաւդաւոր կենդանեաց եւ անշունչ եւ անկենդան նիւթոց, որ ականջաց լսի. եւ կամ համոյ եւ ճաշակաց որակք, որ բերանով ճանաչին, եւ կամ բուրմունք հոտոց, որ*

---

* *Վերնագրի վերջնամասի «անտի տէ՞՞» հապաւումը ենթադրաբար ընթերցելի է որպէս «անտի Տէրն» (Ա. Սրապեան), «անտի ի Տէրն», «անդր ի Տեառնէ» եւն (խմբ.):*

** *բնագրում՝ զտարակացութեան (խմբ.)*

ունգամբք հոտոտին: [10] Եւ ոչինչ է յամենայն մասունս արարածոց, որ
հնգիցս այսոցիկ արտաքոյ գտանի:

II. [1] Արդ, այսոքիկ բնաւորեալ են ի մեզ մասունք զգայարանաց,
ընդ որս եւ ամէնառատ բարեացն Աստուծոյ բխմունք առատապէս
հոսին գետաւրէն գնացիւք՝ իբր ի ծով մեծ յանմարմին մտացն յընդար-
ձակութիւն, [2] եւ ի նմանէ դարձեալ յառաջ գան ներտրամադրական եւ
արտաբերական բանիւ ի ձեռն ձայնական գործեաց՝ իբր զվտակս աղ-
բերաց ընդ երակս երկրի եւ ընդ ծորձորս քարանձաւաց եւ ընդ մէջս
վիմաց, որովք արբեալ զուարճանան բանականաց եւ անբանիցն հոյլք
կենդանեաց, եւ դալարացեալ ծաղկին տնկական եւ բուսական արմա-
2ա տոցն ազգ զանազան: // [3] Այսպէս եւ յիմացուած մտացն աղբիւրաբար
բխմանէ բանից դալարացեալ ծաղկին բանականաց եւ անբանից մա-
սունք հոգւոյն, եւ պտղաբերին տունկք եւ սերմանիք կենդանի այսմ
անդաստանի: [4] Արդ, զի՞ ասէ իմաստունն. «Ոչ լցցի ակն տեսանելով,
եւ ոչ ունկն՝ լսելով, եւ երկիր ոչ յագի ջրով, եւ հուր եւ ջուր ոչ երբեք
ասեն շատ»*: [5] Վասն զի միշտ կարաւտ եմք բնութեամբ տեսանել աչաւք
զգեղեցկութիւն զարդուց, որ յարարածս Աստուծոյ, եւ լսել ականջաւք
զլուր սքանչելի գործոց Արարչին, եւ բանական երկիրս մեր ոչ յագի
այսպիսի ջուրցս գիտութեան ուռոգմամբ, եւ ոչ հուր ցանկականին եւ
մտաւորական տեսութեանց ասէ շատ, զի անյագ է յընդունելն միտք
զգայարանաւք եւ անխոնճ ի խոկումն խորհրդոց եւ յարտաբերութիւն
պատմողական բանից:

III. [1] Արդ, այսպիսի նախադրութիւն բանից մեզ առաջի եդան,
վասն զի մի իմն է մեծագունիցն եւ յաշխարհի հռչակեցելոցն ձայնիւք
եւ տենչալի տեսութիւն եւ ցանկալի աչաց, քաղցր եւ ախորժելի ճա-
շակ բերանոյ եւ անուշահոտ բուրումն ունգաց, հռչակաւորս այս տե-
սանի տեղի եւ յականաւոր յոլորտս տիեզերաց, մենաստանս մեծ մաք-
բակրաւն եւ մարմնապար հրեշտակաւք լցեալ ի բարձրութիւնս ծայ-
րից լերանց, դրախտ Աստուծոյ՝ բանաւոր տնկովք զուարճացեալ ար-
դարութեանն գործովք, ըստ նմանութեան արմաւենեացն ծաղկեալք,
որոյ աճումն ի վեր կոյս եւ անհաս ձեռին մարդոյ, [2] զ՚առ ի յետոյս
2բ մոռացեալք եւ // յառաջադէմսն նկրտեալք, ըստ Պաւղոսի, ուշ եդեալ
բարձրընթաց գնացիւք ի կէտ կոչմանն Աստուծոյ, որ ի Քրիստոս**,

* Ժող. Ա 8
** Փլպ. Գ 13-14

նեղ ճանապարհաւ յաւթեւանսն վերին ճեպեալք, ձիթենիք պտղալիցք
ի տանն Աստուծոյ տնկեալք, եւ աւծմամբ Հոգւոյն Սրբոյ պարարտա-
ցեալք, լուսանիւթ պտղովք առաքինութեանցն լցեալք, նռենիք պա-
բարտապտուղք, ընդ կարծր կեղեւոյ կեղեքեալ եւ չարչարեալ մարմնոյ
դեղնութեան ծածկեալք, բազմահոյլ հատից հոգեկան մասամբն բա-
րեաց, հրագունակ Հոգւոյն որակաւք ներկեալք, [3] խնձորենիք կարմ-
րաբերք՝ ի փայտից անտառաց մարդկութեան միջոցէս բուսեալք, եղ-
բաւրորդւոյն գովեստի պատուեալք, որոյ Իմաստունն յերգսն զհար-
սինն բան բարբառի. «Որպէս խնձոր ի փայտս անտառի՝ Եղբաւրորդին
իմ ի մէջ ուստերաց»*. [4] վարդք կարմրերփեանք ի սէրն Աստուծոյ վա-
ռեալք, մանուշակք մաքուրք, անուշահոտութեանն Քրիստոսի բուրիչք,
շնորհալի շուշանք՝ ճգնողական վարուք ողջախոհացեալք, քրքումք քա-
ջազաւրք կուսութեանն պատկառանաւք պարկեշտացեալք, յաղագս որոյ
ցանկալի՛ է յոյժ եւ բաղձալի՛ ձայն համբաւոյ ձեր եւ զուարթարար
տեսութիւն եւ ճաշակ ձերոյդ պտղոյ քաղցրութեան: [5] Վասն որոյ զա-
ռաքելականն բարբառիմ, զոր ի վերայ հոյակապ եւ հռչակաւոր քա-
ղաքին մեծի Հռոմայ ի համբաւ հաւատոյ նոցա գոհանայր. «Գոհանամ
զԱստուծոյ իմոյ, զի հաւատքն ձեր պատմեալ են ընդ ամենայն աշ-
խարհ»**. ըստ որում եւ եւս գոհանամ, զի զոր ի լուր ականջաց // լսէի, 3ա
եւ այժմ դէմ յանդիման աչաւք իմաւք տեսի եւ զքաղցր եղանակս
ձայնից ձերոց յաւրհնութիւնն Աստուծոյ լուայ եւ իբրեւ ի հոտ խնկոց
անուշից ի նուէրս աղաւթից ձերոց զմայլեցայ: [6] Վասն որոյ յաւժարի
բերան իմ ի պատմել զիմաստութիւն եւ խորհուրդ սրտի իմոյ՝ զհան-
ճար հոգւոց ձեր հրատարակել եւ գրել գրչաւ լեզուի զերանական
պատկեր գեղոյ կերպարանաց կենդանեացդ հոգւով. [7] եւ առնելով զայս
ոչ իբր կարաւտ գոլով բանից, որոց գործքն են վկայք եւ վարք վեհա-
գոյնք, այլ զի աւրէնք են, եւ այս աստուածային եւ ամենագեղեցիկ եւ
մի ի տասանց բարեգործութեանցն թուեալք: [8] Զի հարցանելով մար-
գարէին. «Տէ՛ր, ո՞վ կացցէ ի խորանի քում»*** յիմանալին եւ յանճա-
ռականն: [9] Եւ պատասխանէ նմա Հոգին. «Որ գնայ ամբիծ, գործէ զար-
դարութիւն»†. եւ ընդ այլսն ամենայն թուէ եւ զայս՝ զերկեղածս Տեառն

* Երգ Բ 3
** Հռոմ. Ա 8
*** Սաղմ. ԺԴ 1
† Սաղմ. ԺԴ 2

*փառաւորելով**: [10] Արդ, առաջին՝ այս իսկ է յոյս մեր, զի զերկեղածս
Տեառն՝ մեր բանիւ, թերեւս արժանի եղիցուք կեալ ի խորանի նորա եւ
ի սրբում նորա բնակել ի լերինն: [11] Եւ երկրորդ՝ գովելի են բանիւ
գեղեցիկքն, զի մի՛ նախատիցիմք, իբր ոչ ընտրողք զսուրբսն եւ զանա-
բատ յանսրբոց եւ յարատաւորէ: [12] Եւ երրորդ՝ զաւրէն սիրոյն մի՛ զընկենուլ երեւեսցուք զանվճարականն, եւ թէ ամենեցուն եմք պարտական սիրոյ, ապա կրկնակի պարտք են ի վերայ Աստուծոյ սիրելիսն սիրական բանիւ ներբողել: [13] Եւ չորրորդ՝ գովեստ յառաքինիսն նախ առաջին յԱստուած վերաբերի, երկրորդ՝ յառաքինութիւնն, երրորդ՝
3բ յենթակայ նորին, յոմն՝ որպէս յառաջին պատ//ճառ եւ ի միւսն՝ որպէս ի բարոյ բարի երկրորդ, իսկ ի միւսն՝ որպէս ի սիրելի երկոցունց: [14] Եւ հինգերորդ՝ որ է վերջին եւ մեծ եւ հարկաւոր՝ եթէ ոչ զարժանիսն բանի պատմեսցուք, երկուց կողմանց զրկողս գտանիմք բազմաց այլոց եւ նախ մերոց անձանց. զնոսա՝ վասն ոչ ի ցուցմանէ բարոյն ի նոյնս եւ ի նմանս յորդորելոյ, իսկ զմեզ՝ յաղագս անշարժութեան եւ հեղգութեան առ աւգտակարագոյնսն, ուստի անշահութեան է վրէժխնդրութիւն յասողէն՝ «Մառա՛յ չար եւ վատ, ընդէ՞ր ոչ արկէր զարծաթդ ի մի սեղանաւորս»**:

IV. [1] Արդ, յաղագս այսպիսի պատճառաց զընծայս բանից մերոց նուիրեսցուք աստուածարելոց եւ աստուածեղէն գանձիւք փարթամեցելոցդ եւ ճոխագունից, զի եւ երեւելեացն եւ մեծամեծաց եւ թագաւորական փառաւք պսակելոցն, որոց բնաբար եւ սեփհական է գանձուցն յոլովութիւն, պատուական մարգարտացն եւ մեծագին եւ լուսանշոյլ քարանցն պայծառութիւն, սոփերականն ոսկի եւ ոսկեթել նկարագործական հանդերձիցն արկանելեացն զգեստուց, [2] բայց ոչ ամաւթ համարի ոք այր տառապեալ յիւրոց քրտնաջան տաժանմանց եւ մշակութեան գործոյ երկու դանկաց եւ սակաւ լումայից չափ գնոջ ընծայել արքայաշուք պատուով փառաւորելոյն, ոչ յաւելուած ճոխացելոյն, այլ հնազանդութեան պարտուց հատուցումն եւ ի պատճառս սակաւ ընծային զիւրոյ անձինն պատմել զկարիս՝ յուսով գտանելոյ զողորմութիւն: [3] Եւ կամ թէ ոք զմիոյ երկնի գեղեցկութիւն զխորանայարկ կա-
4ա մարին կայական հաստա//տութիւն, եւ որ ի նմա զարդ սքանչելի կոյտք եւ կաճառք լուսատարք, եւ ճառագայթ արձակ դրից աստեղաց եւ

* Սաղմ. ԺԴ 4
** Ղուկ. ԺԹ 23

լուսաւորին մեծի արեգականն, գերապայծառ ջահին երկնային շրջանին, եւ փոքու լուսաւորին լուսնոյ ստուերական գիշերոյն հանդարտածագ եւ արագընթաց լուսաւորին: [4] Արդ, եթէ ոք զսոսա ներբողական գովեստից բանիւ պատմէ, ոչ առ ի լրումն պակասութեան նոցա եւ կամ իբր առ կարաւտս գովութեան զբանն առնիցէ, զի գեղ անձնաւորական լուսոյն իւրեանց եւ շարժումն ընթացիցն մոլորականաց եւ անմոլար գնդին բաւական է պատմել առանց բարբառոյ բանի ընդ ամենայն ծագս տիեզերաց զգովութիւն նոցա: [5] Բայց կարաւտութիւն եւ բաղձանք առ այն է բնաւորեալ, որ զամենագեղեցիկսն գործով ախորժական ըղձիւ յաւժարի ներբողել բանիւ. եւ կամ թէ ոք զգեղեցիկ պատկեր կենդանոյ բանական մարդոյ եւ զարքայական պատուով շքեղացելոյ նկարագրական դեղաւք եւ պէս պէս երանգաւք հնարի զնոյն ձեւ եւ զնմանութիւն պատկերի ի տախտակս նկարել, ոչ առ ի լրումն թերութեան կենդանւոյն, այլ առ անձուկ սրտին բաղձանաց, զոր ունի ի փափագ եւ ի սէր կենդանոյն, հնարի գեղեցկափայլ դեղաւք ի նոյն ձեւ ի նմանութիւն ածել: [6] Ըստ այսմ աւրինակաց եւ մերս լիցի ընծայումն բանից արքայաբնակ տաճարիս եւ թագաւորհ արանց աստուածամերձից, գանձին ծածկելոյ յագարակի գտողք եւ ամենայն կենցաղականաց անցաւորի վաճառողք // եւ միոյ պատուական մարգարտին 4բ
գնողք, որոց ստացուածք ոսկոյ՝ ուղեղ հաւատոյն հարստութիւն, եւ լուսանշոյլ քարինք՝ առաքինութեանցն պայծառութիւն, եւ գեղեցկութիւն զգեստուցն՝ վեհագոյն վարուցն զարդարանք: [7] Այսպէս եւ երկնային այսմ խորանիս՝ ի կենդանի հոգով լուսաւորաց զարդարեցելոց, յորում փայլեն աստեղք լուսագեղք՝ ի կենցաղական ծովուս առաջնորդք նաւով մարմնոյ ընթացողաց, որք եւ, ըստ քաղցր ճառագայթից արեգականն, ընդ երկիրս ծագեն՝ յերկրայնոցս ամենայնէ անաղտ մնալով, եւ ըստ նմանութեան լուսնին՝ միշտ աճողականք ի բարիս եւ նուազեալք ի չարեաց, վերնական լուսոյն եւ արփիաւոր լուսոյն շաւղաց ընթացողք, որ ոչ նսեմական բանից մերոց կարաւտիք, այլ ձերովդ լուսոյ փայլմամբք փառս ամէնիմաստ Արարչին նուիրեալ յաւժարիմք: [8] Եւ զբարեացն ամենայնի սկզբնատպի զիմաստուն եւ զկենդանի պատկերաց պատիւ ոչ միայն բանական, այլ եւ Աստուածեղէն Հոգւոյն կենդանականաւ շարժեալք, ոչ միայն պատկերեալք եւ կերպարանեալք, այլեւ աւրըստաւրէ ի նոյն գեղեցկութիւն փառաց յաւելեալք:

V. [1] Արդ, այսպիսի մեծահանդէս տեղւոյ եւ երկնաքաղաքացի ժողովոյ կամելով ընձայաբեր լինել մեր՝ եդաք առաջի զմարգարէական

բանն Դաւթի, որ ամենայն երեկոյի երգեցեալ լինի, յորում ասէ. «Տէ՛ր,
կարդացի առ քեզ, եւ լո՛ւր ինձ»*: [2] Որ եւ նախ քան զմեկնութիւն
առաջիկայ բանիս զայս պարտ է ասել, զի յոլովք ի մանկութենէ մին-
5ա չեւ յաւագոյթ ի բերան // առեալ երգեն եւ զմիտս իմաստիցն, որ ի
սմա, ոչ կամին ուսանել: [3] Զի թէ ոք ծարաւի յստակ ջրոյ հանդիպի,
մի՞թէ ոչ յաւժարի լնուլ զցանկութիւն, կամ մտանել ի ծաղկոցս եւ ի
դրախտս ամենալի, եւ ո՞չ կամիցի վայելել ի մրգոցն կամ ի հոտոյն:
[4] Իսկ մեք զիա՞րդ չիցեմք մեղադրելիք՝ կալ առընթեր գանձի ծածկելոյ,
կամ որպէս քսակ լի ոսկով կրեմք կնքեալ եւ ոչ վայելեմք, այլ միայն
զծանրութիւնն զգամք: [5] Այլ չէ պարտ այսմ այսպէս լինել, այլ զիւրա-
քանչիւրսն ի միտ առնուլ արժան է խորհրդով, որպէս եւ այս սաղմոս,
զոր միշտ ամենայն երեկոյի երգեմք, քանզի են աստ զաւրութիւնք
իմաստից, որ կարող են մաքրել, զոր ինչ զաւրն ամենայն կրեցաք ի
մեզ կամայ եւ ակամայ, ոչ միայն վասն միոյ բանին, թէ՝ «պատարագ
երեկոյին», այլ որպէս եւ ասէ. «Տէ՛ր, կարդացի...»: [6] Ըստ չորից յեղա-
նակաց լինի կարդալն առ Աստուած: [7] Առաջին՝ զամենայն արարածս ի
նա իբր ի գրի կարդալ, զի ի նմանէ են, եւ նա է պատճառ ամենայնի՝
յարացուցական, կատարական, գործաւորական, յատկական եւ տար-
բերէն, եւ որ ըստ այսմ ամենայնի: [8] Վասն որոյ եւ ամենայն արարա-
ծովքս անուանեմք զնա ըստ երկուց պատճառաց. վասն զյարացոյցսն
յինքեան ունելոյն զեղական արարածոցս ի գիտութիւն եւ ի կամս իւր,
եւ վասն բաշխելոյն ի մեզ զզանազան եւ զյոքնաթիւ պարգեւսն, [9] վասն
որոյ անուանեմք զնա ի պարգեւաբաշխ պատճառէն եւ ի հեղլոյն յա-
րարածս զամենայն բարիսն, որովք կարդամք զնա բարի եւ իմաստուն,
5բ ազնիւ, կենդանարար, եւ զամենայն որքան ի բարի պարգեւ//աց նորա
անուանեմք, եւ վասն այսորիկ ընդ այլ արարածս եւ զբանական բնու-
թիւնս արարած Արարչին գեղեցկագոյն բնաւիցս ամենայն, ուստի եւ
պարտական պտղոյ, իբր տունկ՝ տնկագործի: [10] Եւ երկրորդ՝ կարդալն
զիւր մեղսն խոստովանաւրէն, որով զլացաւ զբարեացն զպտուղ եւ
զսկզբնատպին բարեացն կերպարան, կամ զոր ունէրն, եղծեալ տգեղա-
ցոյց, եւ կամ զոր պարտն էր կատարել, անփոյթ արարեալ տգեղացոյց
եւ զկենդանականն զաւրութիւն մահաբեր ցաւաւք հիւանդացոյց, զոր
պարտ է կարդալ եւ յայտնել իմաստուն բժշկին. [11] զի պատճառ կորս-
տեան այն իսկ է, յորժամ ծածկէ յանցաւորն զխոցուածս նետից մե-

* Սաղմ. ճԽ 1

ղացն, զոր ընկալաւ յանձին, եւ ոչ կարդայ խոստովանաբար առ Տե-
սողն գաղտնեաց եւ բժշկի: [12] Զոր աւրինակ, եթէ ոք զհիւանդարար
պատճառս ցաւոցն ոչ յայտնէ բժշկին, դեղս առողջական ոչ գտանէ
անձին, եւ ախտք առանց բժշկութեան մնացեալ՝ հնացեալ նեխին, որում
հետեւի մահ, որպէս եւ սոյն մարգարէ ասէ. «Նեխեցան եւ փտեցան
վէրք իմ յերեսաց անզգամութեան իմոյ»*: [13] Իսկ <յ>իմաստութեամբ
զգալ ցաւոյն եւ խոստովանութեամբ կարդալն՝ բժշկութիւն հետեւի. եւ
սոցա գաղափար ի Գրոց Սրբոց իմասցիս: [14] Նախաստեղծքն, որ ոչ
կարդացին խոստովանութեամբ՝ ի հարցանել բժշկին, մահու եղեն ժա-
ռանգորդք: [15] Իսկ Դաւիթ, որ ոչ ծածկեաց, այլ ասաց՝ մեղա՛յ Տեառն,
եւ ապրեցաւ, վասն որոյ թողութեան արժանացաւ: [16] Եւ զի ոչ է այն-
պիսի իրս, որ զԱստուած յողորմութիւն յորդորէ, որպէս // զկարդալն 6ա
խոստովանութեամբ զյանցանսն, որպէս եւ այժմ մարգարէիս ցուցանէ
բան՝ «Տէ՛ր, կարդացի...»: [17] Իսկ երրորդ՝ կարդալ է զահաւոր Դատաս-
տանն, որ սրբոց եւ անսրբոց, վասն որոյ խորհեցան, խաւսեցան եւ
գործեցին բարի եւ չար:

VI. [1] Եւ Բ են ժամանակ կարդալոյ. մի՝ որքան ի մարմնի եւ յայժ-
մու կեանս եմք, որք եւ ազատ կամաւք կարդամք զհամարս գործոց
մերոց, եւ մի՝ ի հանդերձեալ ատենին ի Դատողական աւուրն, յորժամ
ոչ լինիմք տեարք անձանց. [2] զի անդ կարդասցի** ստուգապէս, զոր
աստ ոչ կարդացաք եւ ջնջեցաք եւ փոքր ամաւթով այս եւ պատկա-
ռանաւք, զոր առաջի հարցն խոստովանութեան լինի, ոչ զերծուցաք
զմեզ ի մեծի ատենին եւ յահեղ հրապարակին ամաւթոյ, զոր պարտ էր
ամենայն աւուր կարդալ, [3] զի մի՛ մոռացաւնք ծածկեսցեն, եւ երեւեսցի
ի մեծի ատենին, յորում իւրաքանչիւր ոք զգործս ձեռաց իւրոց, գրեալ
ի տախտակս մարմնոյ իւրոյ, ընթեռնու եւ ի տեղիս եւ ի տարերս
ամենայն, ուր գործեցան: [4] Այլ այժմ, որքան ի շնորհաց եւ յողորմու-
թեան ասի նստեալ յաթոռ, մատիցուք առաջի աթոռոյ շնորհաց նորա
եւ ի դէպ ժամու կարդասցուք, որ վասն միոյ արտասուաց զհինգ հա-
րիւր դահեկանն թողու եւ մի ասելոյն «յիշեա՛ զիս, Տէ՛ր», զդրախտն
պարգեւէ: [5] Իսկ յորժամ յարդարութեան եւ յիրաւանց նստի յաթոռ,
զաստի գործոյս փոխարէնն հատուցանէ, վասն որոյ յիմար կուսիցն
արտասուք անտես լինի եւ բազմաց «Տէ՛ր, Տէ՛ր» զնա խոստովանելն:

* Սաղմ. ԼԷ 6

** բն. կարդացուի (խմբ.):

6բ [6] Մեծատունն պապակի՝ կաթոյ // ջրի կարաւտեալ, Ղազար ցնծայ վասն
աստ վիրաւորելոյն եւ ի գոգն Աբրահամու հանգչի, վասն որոյ աստէ՛ն
կարդասցուք առ նա: [7] Եւ չորրորդ՝ կարդալ է զարարչական եւ զհայ-
րենի գութն ի վերայ արարածոցս եւ զողորմութիւն նորա, զոր տայ
զղջացելոցն, եւ զերկայնամտութիւն, որով ներէ յանցաւորացն, եւ բա-
զում ողորմութիւն նորա, որ առ բազմամեղսն, եւ խոստովանել զճշմա-
րիտ եւ զիրաւացի ընտրութիւն դատաստանաց նորա, վասն զի ողոր-
մութիւնն գանձ է, եւ ճշմարտութիւն նորա կնիք եւ պահպան ի վե-
րայ ողորմութեանն: [8] Եւ յորժամ տեսանէ զմեզ զղջացեալս եւ պաղա-
տանաւք խնդրել եւ հայցել ի նմանէ զողորմութիւն, բանայ* զփականս
դրանն եւ զկնիք պահպանութեանն զճշմարտութիւն եւ հեղու զողոր-
մութիւն իւր ի վերայ մեր զանազան կերպարանաւք եւ առնէ զմարդիկ
բազում աւթեւանացն լցուցիչ, զոր պատրաստեալ է սիրելեաց իւրոց:
[9] Վասն որոյ ըստ այսքան յեղանակացս կարդալով ծառայիցս առ Տէրն՝
ասեմք. «Տէ՛ր, կարդացի առ քեզ, եւ լո՛ւր ինձ»: [10] Վասն զի այս են
սահման եւ գլուխք աղաւթիցն, որովք պաղատիմք առաջի Աստուծոյ
եւ ակն ունիմք լսել մերոց պաղատանացն:

VII. [1] Այլ եւ նոյն ինքն լսելն Աստուծոյ ըստ չորից պատճառաց
լինի, զի ըստ այնմ լուիցէ մեզ: [2] Եւ է առաջին՝ ինքնաշարժ ողորմու-
թիւնն, յորժամ խոնարհեցուցանէ զունկն, որպէս մարդասէր բժիշկ առ
նուազ ձայն հիւանդին, եւ լսէ զպատճառս եւ զկիրս ցաւոյն եւ զաւգ-
7ա տակարն մատուցանէ դեղ: [3] Զի զ<որ>աւրինակ հիւանդն ի նեղ//ու-
թենէ ցաւոց մարմնոյն տագնապեալ՝ առողջութեանն փափագէ, այս-
պէս եւ հոգին, որ ունի զվէրս եւ զխոցուածս մեղաց, ողորմութեանն
Աստուծոյ կարաւտի: [4] Եւ երկրորդ՝ արդար իրաւամբք է հայցելն մեր,
զի լուիցէ մեզ, վասն զի լի է ականջք նորա ի քաղցրաձայնութենէ
մաքուր բնութեանց լուսեղինացն, զիջանել աղերսեմք, ըստ մերս տկա-
րութեան եւ ի հողեղէն բանականացս, որ առաւել եմք ողորմելոյ ար-
ժանի եւ կարաւտք բազմադիմի աւգնականութեան, որ եմք ի տկար
մարմնի եւ ի յամբոխեալ կեանս երկրաւոր: [5] Վասն որոյ բազում հնա-
րիւք կարդալոյ պէտս ունիմք եւ ժտելոյ ի խնդիրն, որպէս այն, որ
զերեք նկանակն հայցէր, եւ որպէս կինն այրի՝ յանիրաւ դատաւորէն,
եւ կամ տղայք ստնդեայք ի մարցն յորժամ հայցեն, [6] այսպէս եւ մեզ
բազում հնարիւք դարձուցցուք ի մեզ, որ պիտոյ են արտասուք բա-

* ըն. բանս (խմբ.):

զում, անմռունչ հեծութիւն, բախումն կրծից, տառապանս սրտից, մինչ
խոնարհեցուցանեմք յաղաչանս մեր, զի տացէ զհայցելին՝ ընդ վերին
բանականսն զպարակցութիւն եւ զվերին քաղաքին ժառանգութիւն:
[7] Եւ երրորդ՝ զի որ մեզ անկարելի է, նմա կարելի, զի ըստ Իմաստնոյն՝
«Երկին բարձր, եւ երկիր խոնարհ»*, ըստ այնմ՝ «Բարձր է ի վերայ
ամենայն ազգաց Տէր»**: [8] Բարձր ոչ տեղեաւ միայն, այլ վասն ամենա-
հաս եւ երկնատես գիտութեանն, որովք քննէ զերկինս եւ զերկիր եւ
տեսանէ զաղքատ բնութեանս կարիս եւ զհայցուածս խորոց սրտից եւ
խոնարհի առ մեզ այն, որ զբարձունս ի վերայ բարձանց պահէ, որպէս
ասէ Ժողովողն***: // [9] Զորրորդ՝ զի ի կարդալն իմում կարդան ընդ իս 7բ
ամենայն արարածք իբր անդամք ամենայն բերանով միով, զի յամե-
նայն տեսակէ գոյիցս մասն ունի յինքեան բնութիւն մարդոյս. զգայու-
թեամբք՝ զգայուն կենդանեացն, աճեցական մասամբն՝ զտնկոցն, եւ
մտաւք՝ զմտաւոր աշխարհին, [10] զոր իբրեւ զքնար ի գիրկս ամենայն
աշխարհի եդեալ՝ հնչէ զբանաւորական երգս եւ ասէ. «Տէ՛ր, կարդացի,
եւ լո՛ւր ինձ» միջնորդաւ ականջաց քոց՝ հրեշտակաց բարեխաւսու-
թեամբ, զի ականջք վերագոյն է քան զբերան, որպէս եւ հրեշտակք՝
քան զմարդիկ:

VIII. [1] «Նայեա՛ց ի ձայն աղաւթից իմոյ»†: [2] Դարձեալ քննելի է եւ
զձայնին զաւրութիւն, զի ոչ թէ «ձայն» զբարձրաբարբառ գոչելն ասէ,
եւ կամ «կարդալ» զարագաշարժ լեզուին զառատութիւն բանից, եւ
կամ «նայել» ի գեղեցկութիւն պատկերի եւ անձին, [3] զի բազում ինչ
այսպիսեացս է, զոր ի բնութենէ ունին մարդիկ՝ զոմանս գովելի կարծե-
լով եւ զայլս՝ նախատելի, որպէս գեղեցկութիւն դիմաց կամ քաղցրու-
թիւն ձայնից կամ արագութիւն եւ սրութիւն լեզուի, այլ առաջի Աս-
տուծոյ ոչ են այսպէս, որ զանգործսն տեսանէ եւ ի ծածուկս սրտին
հայի: [4] Զի գեղեցիկ էր Աբիսողոմ, մինչ զի հերացն եւ վարսիցն զար-
դարանաւք էր զարմանալի, բայց ոչ ինչ աւգնեաց նմա: [5] Կունդ էր
Եղիշա, որ եւ ի տղայոց այպանէր, եւ ոչ վնասեաց ինչ նմա: [6] Առաւել
էր բազմութիւն հրէիցն, եւ աղաղակ նոցա յոյժ, եւ ոչ լուաւ Տէր: [7] Եւ
լուութիւն նրբաձայնին Մովսիսի լսելի լինէր, իսկ հրէիցն ասէր՝ «Թէ եւ

* Առակ. ԻԷ 3
** Սաղմ. ՃԺԲ 4
*** Ժող. Ե 7
† Սաղմ. ՃԽ 1

8ա կարի բազմացուսջիք զհայցուածս ձեր, ոչ լուայց ձեզ»*, այլ // գեղեց-
կութիւն, յոր նայի, է պատկերին պահպանութիւն: 8 Եւ ձայն զներքին
մտացն ասէ, ընդ որ հայի Աստուած եւ լսէ, զոր սիրտն ծնանի, եւ
յառաջ գայ ի ջերմեռանդն սրտէ եւ ի խոնարհ մտաց, եւ կարդալ
զհաճոյական աղաւթիցն: 9 Վասն որոյ Բ զգայութեամբք ընդունել աղա-
չէ՝ ականջաւք եւ աչաւք, եւ ասէ. «Լո՛ւր ինձ, որպէս իմաստուն կու-
սանացն լուար եւ բացէր զառագաստն, եւ նայեա՛ց ի ձայն աղաւթից
իմոյ, ոչ ի դատարկ ձայն հնչմանն»: 10 Այլ զոր աւրինակ, որ յամենայն
ուժոյ ձայնէ զաւրութիւնք ձայնական գործեացն, եւ ամենայն ուժն
անդր հաւաքին, նոյնպէս որ աղաւթէ՝ այս է, որ խաւսի ընդ Աստուծոյ.
11 բոլոր սիրտն եւ ամենայն խորհուրդն յաւժարութեամբ մտացն յա-
ղաւթքն հաւաքին, իբր երկունք յղւոյ ամենայն զաւրութիւնք հոգւոյն
եւ մարմնոյն միաւորին եւ միոյ յուսոյ սպասեն ծննդեան մանկանն, եւ
ապա հանգչի ծնողն: 12 Նոյնպէս եւ որ կարէ ասել. «Ցահ եւ յերկեւղ
քո յղացեալ երկնեցաք եւ ծնաք զփրկութիւն հոգւոյ»**: 13 «Ցղացաք,
երկնեցաք» ասելովն զբովանդակ բնութիւնն ասէ՝ ի գործ աղաւթիցն
պարապեալ եւ ի մամուլս երկեղին Աստուծոյ յառեալք: 14 Վասն որոյ
ասէ. «Նայեա՛ց ի ձայն աղաւթից իմոց ի կարդալ իմում առ քեզ»***:
15 Վասն որոյ պարտ է մեզ հնարել, զի ձայն եւ բանք մեր քաղցրասցին
նմա: 16 Զոր աւրինակ եթէ ոք զթագաւոր բազում զաւրաւք ի ճաշ
մեծարիցէ, բազում եւ զանազան պատրաստութիւնք պիտոյ են նմա,
յորս խոնարհի թագաւորն:

IX. 1 Արդ, ըստ չորիցս այսոցիկ կարդացումն բանից եւ ձայնք
8բ աղաւթիցն // եւ աւրհնութեանցն, զոր տամք Աստուծոյ, քաղցրանայ:
2 Առաջին՝ ցած եւ հանդարտ եւ մեղմ ձայնիւ, որպիսի յեղանակաւ եւ
մահապարտք սարսեալ եւ սասանեալ կերպիւ կան առաջի թագաւո-
րաց եւ խնդրեն զանձին փրկութիւն, ողորմ դիմաւք առ թագաւորն
միայն հային: 3 Երկրորդ՝ առ մարդիկ քաղցր բարուք լինել եւ յաղա-
չանս ունկնդիր, զոր եւ Տէրն ուսոյց, թէ՝ «Որով դատաստանաւ դա-
տիք, դատելոց էք, եւ որով չափով չափ[էք, չափեսցի ձեզ]»†: 4 Եր-
րորդ՝ յորժամ դառնութիւն մեղաց ոչ ունիցի եւ զգործս անձնական

* Ես. Ա 15
** Ես. ԻԶ 18
*** Սաղմ. Ե 3
† Մատթ. Է 2

բարեաց խառնեսցէ յաւրհնութիւն բանիցն Աստուծոյ եւ զգոհութիւն
առեալ պարգեւացն յիշէ ի ժամ հայցուածոցն, յայնժամ քաղցրանայ
նմա. զի այն իսկ է պատճառ, որ ոչ քաղցրանան աղաչանք մեր առաջի
Աստուծոյ, յորժամ վերջանամք ի պահպանութենէ աւրինաց նորա:
5 Վասն որոյ աւրհնելն զնա ասէ. «Ի բա՛ց արա յինէն զձայն երգոց քոց,
զի յաւուրս տաւնից ձերոց գտանին կամք ձեր կատարեալ»*: 6 Զոր-
րորդ՝ որ ոչ է անգիտաբար եւ ոչ ի ստախաւս բերանոյ եւ անխառն ի
փառս որսալոյ եւ մաքուր ի հերձուածոյ ուղիղ փառատրութեամբ աւրհ-
նել զԱստուած եւ խոստովանութեամբ: 7 Այլեւ զխոստովանութիւն բա-
րերարութեան նորա խառնել յաւրհնութիւն նորա եւ զբարեգործակ
անուանսն յիշել ի հայցելն զողորմութիւն նորա, զի քաղցր թուին բանք
աղաւթիցն մերոց, յորժամ զՔրիստոսի շնորհն յեղյեղեմք՝ զքաղցրու-
թիւնն իւր յիշեցուցանելով, թէ՝ «Դու ասացեր, թէ՝ «Զոր ինչ խնդրես-
ջիք յանուն իմ// արարից զայն»**. եւ դու՝ արդարդ, ի վերայ անարդա- 9ա
րոցս մեռար», զոր Պետրոս յիշեցուցանէր***: 8 Եւ այսպիսի բանքս քաղց-
րասցին, իբրեւ զմեղր եւ զկաթն ի ներքոյ լեզուի հարսնացեալ եկեղեց-
ւոյ, որում վկայեն տղայքն. «Քաղցր են ի քիմս իմ բանք քո, քան
զմեղր բերանոյ»†. եւ թէ՝ «Քաղցր են ստինք քո, քան զգինի»††: 9 Եւ
այսպիսի երգ քաղցր ձայնիւ եւ մաղթանք աղաւթից քաղցրասցին Աս-
տուծոյ, յոր եւ նայի առ աղաւթականն եւ լսէ զհայցուածսն:

X. 1 «Ուղիղ եղիցին աղաւթք իմ, որպէս խունկն առաջի քո, Տէ՛ր»†††:
Ցարացոյց առնու մտաւոր աղաւթիցս զգալի նիւթսն, զոր աւրինա-
դրեաց Աստուած Մովսիսիւ առնել ի խորանն վկայութեան: 2 Քանզի
արար սեղան խնկոց ի խորանն՝ արտաքոյ վարագուրին, որ անջրպե-
տէր զսրբութիւն սրբոցն, եւ մանր աղացեալ զզանազան խունկսն՝ արկ
ի վերայ նորա: 3 Եւ աստի առեալ Ահարոն եւ որդիքն իւր՝ բուրվառով
արծարծէին, եւ մտեալ ծխէին ի սրբութիւն սրբոցն առաջի տապանա-
կին եւ սեղանոյ քաւութեանն: 4 Եւ զայն խունկ որդիքն Ահարոնի՝ Նա-
բադ եւ Աբիուդ, աւտար ծխով ծխեցին եւ սատակեցան: 5 Արդ, ասէ,

* Ամովս Ե 23
** Յովհ. ԺԴ 13
*** Ա Պետ. Գ 18
† Սաղմ. ՃԺԸ 103
†† Երգ Ա 1
††† Սաղմ. ՃԽ 2

թէ՝ «Մի՛ լիցին աղաւթքս իմ, որպէս Նաբաղայն եւ Աբիուդայ խոտորնակ խնկարկութիւնն, այլ որպէս Ահարոնին՝ ուղիղ լիցի առաջի քո»: [6] Վասն որոյ եւ մեք տեսցուք զգալի աւրինակ նիւթական խնկոցն, թէ ըստ որքանեաց իրաց ուղիղ լիցին առաջի Աստուծոյ: [7] Եւ զայսոսիկ զաւրինակ եւ զխորհուրդ խնկոցս համեմատեսցուք ընդ աղաւթիցն
9բ մեր խնկարկ//ութիւն, որպէսզի ուղիղ եղիցին աղաւթքն մեր, որպէս զխունկն:

XI. [1] Արդ, առաջին՝ քննելի է այս, զի չորք էին խունկք անուշահոտք ըստ աւրինացն՝ քաղբանն, տաշխն, եղեգնախունկն եւ կնդրուկն՝ ընտիրք եւ ազնիւք: [2] Եւ որպէս անդ ի չորից նիւթոց էր խունկն, յորմէ անուշահոտ բուրումն ելանէր, նոյնպէս եւ ի մեզ չորք են առաքինութիւնք հոգւոյ. խոհականութիւն՝ բանին մասին, եւ ողջախոհութիւն՝ ցանկականին, եւ սրտմտականին՝ արիութիւն, եւ բոլոր անձինն՝ արդարութիւն: [3] Եւ այսպիսի խնկոյս խառնուածք՝ բանին իմաստութիւն՝ յաստուածայինսն, եւ ողջախոհ պարկեշտութիւն՝ ի սէր նորին, եւ արիութիւնն՝ յառաքինութեանցն հանդէս, եւ արդարութիւնն՝ յամենայն տեսակս առաքինութեան: [4] Աղաւթք այսպիսի հոգւոյ բուրումն ուղիղ եւ խունկք անուշունք են առաջի Աստուծոյ: [5] Երկրորդ՝ զի եւ խունկն կարի իմն յարացոյց է աղաւթից, քանզի որպէս նա անուշահոտ գոլով ոչ բուրի, մինչ չեւ է ի հուր արկեալ, այսպէս եւ սաղմոսերգութիւնքն եւ աղաւթքն բարի է, բայց ոչ բուրէ զանուշահոտութիւնն յայլում ժամու, այլ յորժամ հուր սիրոյն բորբոքի եւ զսա առաջի Աստուծոյ արծարծէ եւ զբուրում անուշահոտութեանն յերկինս ծառացուցանէ: [6] Քանզի եւ Յոհանէս զաղաւթս սրբոցն ի ձեռս ԻԴ ծերոցն խունկ ետես ծխեալ բուրվառաւք: [7] Քանզի որպէս խունկն զքիմս, այսպէս աղաւթք բորբոքեալ սիրոյ Աստուծոյ է անուշահոտ: [8] Երրորդ՝ զի գոլո-
10ա շիք ծխոյ խնկոցն ուղիղ ի վեր ելանէ թեթեւաբար, զի ոչ գոյ ի // նմա ծանրութեան տեսակ, թէպէտ ի ծանր նիւթոց ելանէ բուրումն, [9] այսպէս եւ զիմանալի տեսութիւն մտացս մեր եւ զշարժումն ցանկականին եւ զխորհուրդս սրտից ի հուր սիրոյն Աստուծոյ արկեալ՝ յամենայն նիւթականացս ի վեր ելանել եւ յերկիր հայելոյս առ Աստուած եւ ի նորա փառսն դարձուցանել, որ միայն իմանալի տեսութիւնն է լոյս եւ ամենայն բանականաց ցանկալի:

XII. [1] Եւ այսպէս, որք ի ծանրութիւն մարմնոյ եմք, ըստ այսմ կարգի ուղիղ եղիցին աղաւթքն՝ ելանել առ Աստուած, որպէս հրեշտակն Աստուծոյ ասէր ցԿուռնելիոս, թէ՝ «Ելին աղաւթք քո եւ ողոր-

մութիւն առաջի Աստուծոյ»*: [2] Վասն որոյ լծեալ պարտ է ընդ բանիցն եւ զգործս բարեաց, եւ աղաչել ուղիղ ելանել ի սենեկէ սրտին փակեալ, զգայութեամբ ի ցոյցս առնելոյ, եւ իբրեւ զխունկ անոյշ առաջի Աստուծոյ: [3] Չորրորդ՝ զի որպէս անդ ոչ էր ուղիղ աւտար հրով ծխելն զայն խունկն, այլ սեղանոյն Աստուծոյ հրով, եւ որք ընկալան աւտար հուր ի բուրվառս իւրեանց եւ այնու ծխեցին խունկս, պատուհասեալ ծախեցան յաւտար հրոյն, նոյնպէս եւ անձն աղաւթականին ունի զսիրտն որպէս բուրվառ. [4] եւ որպէս բուրվառք խնկոց ի զանազան նիւթոց լինին՝ ոսկեղէնք, արծաթեղէնք եւ պղնձիք, նոյնպէս եւ զանազան են աւրինակք մաքրութեան սրտից մարդկան. ոմանց՝ ըստ ոսկոյն սրբոյ պատուականութեան, եւ այլք՝ ըստ արծաթոյն պայծառութեան, եւ ոմանց՝ պղնձոյ նման կարմրութեան. [5] եւ հուր բուրվառացս այսոցիկ
զՋերմութիւն սիրոյն Աստուծոյ պարտ է դնել եւ ոչ աւտար հուր, // որ 10բ
է սէր աշխարհիս եւ ցանկութիւն սորին, որ թէպէտ այնպիսին աղաւթէ բերանով, բայց զի շտեմարանք խորհրդոցն լցեալ են գարշութեամբ ախտիցն, ըստ բանի առաքելոյն Յակովբայ՝ «Երկրաւոր ցանկութիւնն, որ ի նոսա յղացեալ՝ զմեղս ծնանի, եւ մեղքն՝ կատարեալ գործով, զմահ ծնանին»**, եւ այսպէս աւտար հրով այրին, զի աւտար է ցանկականին ի վայր շարժումն, եւ ոչ են աղաւթքն ուղիղ առաջի Աստուծոյ: [6] Հինգերորդ՝ զի ի հոտոյ խնկոյն, յորժամ ի հուր դնի, ամենեքեան հաղորդին՝ ընդունելով ի քիմսն, եւ ոչ ոք զրկի, բայց եթէ որոց ոչ առողջ են հոտոտելիք: [7] Այսպէս աղաւթականին այն իցեն աղաւթք ընդունելի եւ ուղիղ, զի զամենայն արարածս առնու կցորդ աղաւթիցն. ըստ որում եւ Տէրն ուսոյց ոչ միում անձին ասել՝ Հա՛յր իմ, այլ թէ՝ «Հա՛յր մեր, որ յերկինսդ ես»: [8] Վասն որոյ պարտ է զբոլոր արարածս բառնալ ի ձեռս, իբր ի սկզբան եւ ի բարբառս լեզուին, որպէս ի սեղան ողջակիզաց, եւ ամենեքումք եւ վասն ամենեցուն հայցել շնորհս ի բարի պարգեւացն Աստուծոյ, որպէս եւ Տէրն ուսոյց՝ եւ վասն թշնամեացն մատուցանել աղաւթս: [9] Եւ Պաւղոս խրատէ. «Կամիմ, զի յամենայն տեղիս արք կացցեն յաղաւթս եւ ամբարձցեն զսուրբ ձեռս՝ առանց բարկութեան»***. այսինքն ի ժամ աղաւթիցն չիջո՛ զբարկութիւնն, զոր ունիս վասն թշնամոյն, եւ այնպէ՛ս մատիր առ Տէր աղաւթիւք եւ, մինչդեռ խաւսեսցիս, ասասցէ՝ ահաւասիկ եմ: [10] Եւ այնպէս ուղիղ գոլով աղաւթիցն տայ

* Գործք Ժ 31
** Յակ. Ա 15
*** Ա Տիմ. Բ 8

11ա զբարեաց պարգեւսն լիապէս, որով լնումք անուշ//ահոտութեամբ զեր-
կինս եւ զերկիր՝ հայցելով մեզ մասնակցութիւն ընդ լրումն վերին եւ
ներքին եկեղեցւոյ ընդ փարթամսն, եւ ընդ մեր փրկիչն աղաչեմք տալ
եւ սրբոցն յաւելուած փառաց եւ շնորհաց՝ դարձուցանելով բարերա-
րին զսէր նոցա առ մեզ, վասն որոյ ասէ. «Ուղիղ եղիցին»: [11]Վեցերորդ՝
զի ըստ ժամանակի լինէր ընդունելի եւ ուղիղ խնկարկութիւնն եւ ոչ
տարաժամ, զի երկիցս խնկէին՝ առաւաւտուն եւ երեկոյին. [12] այս կարգ
ուղիղ լիցին մեզ ի մատուցանել զաղաւթսն՝ իմանալ եւ ըստ ժամանա-
կի պահել զուղղութիւնն: [13] Եւ է ժամանակ ուղղութեան աղաւթիցն,
յորժամ ի ցնդմանէ ճապաղման զգալեացս միանայ յաստուածային իմա-
ցումն, զի միտսն, որ է լոյս մարմնոյն եւ զգայական շնչոյն եւ ծագաւղ
սոցա որպէս զառաւաւտ, հուպ տարեալ ի լոյսն Քրիստոս, եւ նորա՝ ի
նմանէ պայծառացեալ, ընդ նմա դառնան եւ զգայական մասունքն, եւ
ընդ նմա՝ մարմինն, որ երեկոյի եւ գիշերոյ նման է. [14] եւ լինի բովան-
դակ մարդն ընդ մտացն վերացեալ յԱստուած եւ երկնաճեմ եղեալ.
թէպէտ եւ զժամուցն պահելի է զսահման, յորս կարգեցան ժամք աղաւ-
թիցն, այլ մեզ երեկոյ է, յորժամ նեղիմք ի խաւարատեսակ խորհրդոցն,
որ ի պատրանաց չարին եւ ի մարմնական զբաղանացս, եւ առաւաւտ՝
զզերծանելն անտի լուսով խրատու աւրինացն ի լոյսն Աստուծոյ դի-
մեալ, որով եւ ընդ ամենայնի պարտիմք զբուրումն աղաւթիցն Աստու-
ծոյ նուիրեալ: [15] Եւթներորդ՝ գիտել զտեղին, յորում պարտ է նուիրել
11բ խնկոցն, մտանել առաջի Աստուծոյ, որպէս եւ նոքա՝ առաջ//ի տապա-
նակին եւ սեղանոյ քաւութեանն: [16] Իսկ մեզ ոչ ի նիւթական խորանի,
այլ յերկինս երկնից, ի սրբութիւն սրբոցն, յանմտանելին եղականաց,
ընդ կարգ քահանայապետութեան երկնայնոցն, ընդ դասապետութիւնս
հրեղինացն մտանեմք աղաւթիւքն: [17] Իսկ բուրվառք <ի> մեզ՝ սրբու-
թիւնք սրտից, չորեքնիւթեայ բնութիւնս մեր՝ սանձք ամբառնալեաց
բուրվառին, իմացականն ի մեզ՝ վերին ագոյցք շղթայիցն, ներքի<ն>
կառոյց՝ մարմնոյս բնութիւն, բռնելիք՝ յիշողականն անմոռաց, խնկա-
նուէր միտքն՝ սեղան եւ տաճար եւ բեմ, ուր ծխին անձեռագործ խո-
րանն՝ արարչական բանին իմաստութեամբ շինեալ, եւ որ հոտոտի ի
հոտ անուշից Հայր եւ Որդի եւ Հոգին Սուրբ. եւ մեր աղաւթելն ուղիղ
գոլով ի յոյսն վերին, որ ասաց Գլուխն մեր, թէ՝ «Ուր եսն եմ, անդ եւ
պաշտաւնեայն իմ եղիցի»*. եւ թէ՝ «Երթամ, պատրաստեմ ձեզ տե-

* Յովհ. ԺԲ 26

զի»*: [18] Ութերորդ՝ ուղիղ եղիցին աղաւթքն, յորժամ գիտէ, թէ առ ո՞վ
է խաւսակցութիւն աղաւթիցն, վասն զի աղաւթք խաւսք է ընդ Աս-
տուծոյ: [19] Գիտել եւ զայս, թէ առանց խնդրելոյ չէ հնար առնուլ, թէ-
պէտ եւ առատ է պարգեւատուն. զսոյն եւ Տէրն ուսոյց՝ «Խնդրեցէ՛ք եւ
առնուցուք»**: [20] Իսկ թէ ո՞րպիսի պարտ է լինել խնդրողին, զի առ-
նուցու, յԱւրէնսն ասէ. «Սո՛ւրբք եղերուք, զի ես եմ Տէր Աստուած
ձեր»***: [21] Եւ մարգարէն Դաւիթ վկայէ. «Մեղս թէ տեսանէի ի սրտի
իմում, մի՛ լուիցէ ինձ Տէր»†: [22] Եւ երկու են յեղանակ սրբութեան. կամ
զառաջին անմեղութիւնն, զոր ձրի շնորհեցաւ ի Տեառնէ, պահել եւ
մնալ սուրբ, եւ թէ այսմ ոչ է // հնար հողանիւթ բնութեանս, ապա յետ 12ա
մեղանացն դարձեալ մաքրիլ ի մեղաց եւ լինել սուրբ, որ է երկրորդ
բարի յետ առաջնոյն: [23] Այսմ հանգոյն եւ ի Քրիստոսէ ուսաք. «Եթէ
կացջիք յիս, եւ բանք իմ ի ձեզ կացցեն, զոր ինչ կամիք՝ խնդրեցէ՛ք, եւ
լինիցի ձեզ»††: [24] Այսինքն՝ կացջի՛ք յիս սիրով, եւ բանք իմ ի ձեզ՝
գործով, եւ ապա լինիցի, զոր խնդրէքն: [25] Եւ որ ի Քրիստոս բնակէ եւ
զբանս նորա արդեամբ ի կիր արկանէ, սիրտ նորա արդարեւ սրբեալ է
յամենայն մեղաց ըստ աստուածաբանին Յոհանու՝ «Որ ի նա է հաս-
տատեալ, ոչ մեղանչէ»†††: [26] Ապա մի՛ վայրապար վարկցուք զաղաւ-
թելն, եւ մի՛ յոչ առնուլն զխնդրուածսն անյոյս լիցուք ի խոստմանէն,
այլ պատրաստեսցուք եղեալքս պատկեր Աստուծոյ նմանութեամբն,
որ արար մեզ, նովաւ խաւսել ընդ սկզբնատպին յաղաւթսն. զի հոգի է
Աստուած, հոգով երկրպագեսցուք‡ եւ ոչ միայն պարանոցի կորանա-
լով: [27] Եւ զի լոյս է, ապա լոյս մտացս ընդ նա խառնի եւ ոչ խաւարա-
տեսակ ծածկոյթս: [28] Ակն տեսանող զԱստուած սրբութիւն սրտին է եւ
ոչ զգալիս, ըստ այնմ՝ «Սուրբք սրտիւք զԱստուած տեսցեն»‡‡: [29] Լե-
զու խաւսակից նմա՝ իմացականն, որ ի մեզ, եւ ոչ մարմնոյս, որով
Մովսէս խաւսէր: [30] Եւ Աստուած ասէր նմա. «Զի՞ գոչես առ իս»‡‡‡,

* Յովհ. ԺԴ 2, 3
** Մատթ. է 7
*** Ղեւտ. Թ 2
† Սաղմ. կե 18
†† Յովհ. ԺԵ 7
††† Ա Յովհ. Գ 6
‡ Յովհ. Դ 23
‡‡ Մատթ. Ե 8
‡‡‡ Ելք ԺԴ 15

վասն զի զներքին մարդոյն խաւսակցութիւնն եւ զտեսութիւնն խնդրէ
Աստուած եւ ոչ զբերանով կարդալ եւ զլեզուով բարբառելն: 31 Պատ-
կերաւս առ նախատիպն մերձ գնասցուք եւ ոչ խեցեղէն անաւթիւս.
ընդ հսկել մարմնոյն եւ սրտին արթնութիւնն հսկեսցէ. եւ զի անձնիշ-
12բ խանութեամբ եւս պատկեր եմք Աստուծոյ, // յազատ եւ յանձնիշխան
կամաց լիցի աղաւթիցն սէր եւ ոչ ի հարկէ եւ բռնութեամբ: 32 Եւ
այսպէս ուղղակի աղաւթիցն կարգաւք առցուք, զոր հայցեմքն: 33 Ին-
ներորդ՝ ուղիղ եղիցին աղաւթքն մեր, յորժամ ըստ կամաց տուողին
լինիցի խնդիրն, որ ուսոյց մեզ զկամս իւր բարերարն. «Խնդրեցէ՛ք
զարքայութիւնն Աստուծոյ եւ զարդարութիւն նորա, եւ այլն ամենայն
յաւելցի ձեզ»*: 34 Եւ առաքեալ ասէ. «Տեսջիք, որպէս ճշմարտութեամբ
գնասջիք»**. այսինքն՝ խոհականիդ ընտրութեամբ: 35 Տես զուղիղ շա-
ւիղն արքայական պողոտային, վասն զի ըստ Տեառն բանի երկու են
ճանապարհ. մին՝ նեղ եւ անձուկ, որ տանի ի կեանս, եւ սակաւք, որ
գնան ընդ նա, եւ՝ լայն եւ ընդարձակն, որ տանի ի կորուստ, եւ բա-
զումք, որ ընթանան ընդ նա***: 36 Եւ զի խաւար է կենցաղս այս, եւ ոչ
կարեմք ընտրութիւն առնել ճանապարհիս, յորում գնամք, զոր ասէ
առաքեալ. «Ուշ եղեալ ընթանամ ի կէտ կոչմանն Աստուծոյ»†], եւ
զայս ճանապարհ բազումք ի մարդկանէ թիւր ընթանան գործով եւ ոչ
զուղիղն հայցեն աղաւթիւք: 37 Զի զոր աւրինակ ի զգալի լուսոյս տեղի
տալ ոչ ոք կարէ ընտրութիւն առնել գունոց, զի ամենայն ինչ, որ
կենցաղումս է, կեղծաւորական գունով ներկեալ է, եւ զչարն բարի
կարծեմք, եւ երկրաւոր մեծութեանց եւ փառաց անցաւորիս եւ առժա-
մանակեայ կենացս ցանկամք: 38 Վասն որոյ պիտոյ է մեզ գործակցու-
թիւն Ընդունողին զաղաւթսն, զի ուղիղ եղիցին աղաւթքն, զոր մա-
տուցանեմք, եւ ոչ աւտար ի տուողին կամաց: 39 Տասներորդ՝ «ուղիղ».
13ա զի որ մերն է սեփհ//ական ժառանգութիւն, զայն խնդրեսցուք. զի զոր
աւրինակ եթէ ոք յիրաւունս դատաստանի մտեալ աղաչիցէ զդատա-
ւորն դարձուցանել յինքն զժառանգութիւն հարց իւրոց, զոր ի թշնա-
մեաց զրկեալ է, եւ յորժամ քննեն ճշմարտութեամբ, եւ թէ ոչ է իւր,
զոր խնդրէ, ամաւթ եւ անարգանս կրէ, ըստ որում եւ Տէրն ասէր.

* Ղուկ. ԺԲ 31
** Եփես. Ե 15
*** Մատթ. Է 13-14
† Փլպ. Գ 14

«Եթէ յաւտարին չեղէք հաւատարիմ, զձերն ձեզ ո՞ հաւատասցէ»*:
40 Եւ է աւտար առաւրեայ եւ անցաւոր կեանքս այս, յորում պանդխտա-
նամք, եւ մեր սեփհական ժառանգութիւն է դրախտին փափկութիւն եւ
երկնից բարութիւնքն, յորում եդ Աստուած զմարդն ի ստեղծմանն ի
դրախտն՝ յուսով փոխմանն ի յերկինս: 41 Վասն որոյ առաքեալ ասէ.
«Ոչ ունիմք քաղաք, որ աստէն մնալոց իցէ, այլ զհանդերձեալսն
խնդրեմք»**: 42 Եւ Դաւիթ, այնմ քաղաքի գոլով ցանկացող, աղաւ-
թիւք զՀոգին Սուրբ առաջնորդ հայցէր. «Հոգի քո բարի առաջնոր-
դեսցէ ինձ ի յերկիր ուղիղ»***, վասն զի այս ոչ է ուղիղ մեր, այլ
գազանաց եւ անասնոց եւ թռչնոց տեղի: 43 Եւ դարձեալ՝ ոչ է ուղիղ,
զի փոփոխական է, յեղյեղուկ եւ անցաւոր, գարնանային եւ ամառնա-
յին յեղանակաւ, աշնանային եւ ձմեռնային փոփոխականութեամբ: 44 Իսկ
այն՝ մշտնջենաւոր եւ անմահ, եւ անփոփոխ, որում վկայէ եւ մարգա-
րէն Զաքարիաս, թէ՝ «Զամառն եւ զգարուն նոյնպէս եղիցի»†: 45 Եւ
դարձեալ՝ զի ոչ է կեանքս այս ուղիղ, այլ անհարթ եւ անհաւասար, զի
իմաստունք եւ արժանաւորք պատուոյ, առաքինիք եւ սիրողք սրբու-
թեան բազում անգամ չարաչար կիրս եւ անպ//ատուութիւնս կրեն: 13բ
46 Իսկ չարք եւ անիրաւք ի մարդկանէ փառս եւ պատիւ եւ իշխանու-
թիւնս ժառանգեն, որպէս ասէ իմաստունն. «Է չարութիւն, զոր տեսի ի
ներքոյ արեգականն, որ իբրեւ յակամայ կամս ել յերեսաց իշխանին:
47 Տուաւ անմիտն ի բարձրութիւնս մեծամեծս, եւ մեծատունք ի խո-
նարհութեան նոցին: 48 Տեսի ես ծառայս հեծեալ ի ձիս եւ իշխանս, զի
գնային իբրեւ ծառայս յերկրի»††: 49 Յորմէ յայտ է, թէ ոչ ուղղու-
թեամբ են իրք այսմ աշխարհի, իսկ այն ուղիղ է, զի իրաւամբ դատաս-
տանի է, եւ ըստ գործոցն արժանաւորութեան, ի բազմապատիկ աւթե-
ւանսն վայելեն: 50 Վասն որոյ մարգարէս հայցէ. «Ուղիղ եղիցին...»՝
զմերն խնդրելով եւ զմնացական բարիսն: 51 Եւ զի սահման աղաւթիցն
մտաց վերելումն է առ Աստուած եւ կամ խնդիր ինչ ի պատշաճիցն
Աստուծոյ, վասն որոյ հայցէ, զի միտք մեր ուղիղ առ Աստուած ելանի-
ցեն եւ խնդիրն պատշաճապէս եւ ըստ կամացն Աստուծոյ լինիցի եւ
յաւգուտ խնդրողին:

* Ղուկ. ԺԶ 12
** Եբր. ԺԳ 14
*** Սաղմ. ՃԽԲ 10
† Սաղմ. ԺԴ 8
†† Ժող. Ժ 5-7

XIII. [1] «Համբարձումն ձեռաց իմոց պատարագ երեկոյի»*: [2] Արդ, գիտելի է, զի չորք էին ի խորանի անդ պատուաւոր եւ հաստատուն սեղանք. զի սեղանն քաւութեան ի սուրբն սրբոց կայր, որ մի անգամ ի տարւոջն քահանայապետն արեամբ եւ խնկով մտանէր, եւ սեղանն երեկոյին, ուր դնէին երեք հաց եւ գառն մի, եւ սեղան խնկոցն ոսկի, որ կայր ի կողմն հարաւոյ եդեալ, որոյ առաջի երկիցս խնկէր յաւուրն՝ առաւաւտին եւ երեկոյին, եւ սեղան ողջակէզացն, յորում մատուցանէին զզոհսն եւ զպատարագսն: [3] Արդ, ի չորից անտի յիշեաց մարգա-
14ա րէս զսեղան խնկոցն, յաղագս խորհրդոցդ, // որ ասացաւ: [4] Իսկ զսեղան հացիցն եւ գառանցն յիշէ յասելն. «Համբարձումն ձեռաց իմոց պատարագ երեկոյի»: [6] Եւ վասն է՞ր զերեկոյին յիշէ եւ ոչ զառաւաւտն: [7] Վասն զի մի եւ նոյն էր խորհուրդն, զի առաւաւտին պատարագն երեկոյին սպասէր, ուր կատարէին ամենայն նուէրք աւուրն յամենայն սեղանոցն: [8] Եւ դարձեալ՝ զի ի հալածման էր Դաւիթ եւ ի վիշտս, մինչ ասաց զայս: [9] Զերեկոյն պատշաճ համարի զնուաղումն լուսոյն, որպէս եւ ամենայն անձն աղաւթականի ի կրից մարմնոյս եւ ի փորձանաց կենցաղոյս, որպէս ի մէջ երեկոյին ժամու կայ, յորմէ հայցէ աղաւթիւք զլոյս շնորհաց եւ աւգնութեանն Աստուծոյ: [10] «Համբարձումն ձեռաց իմոց պատարագ երեկոյի». վասն զի հրէական պատարագքն եւ ողջակէզքն, զոր մատուցանէին, բոլորովիմբ ապացոյց էր նուիրողացն զանձինս Աստուծոյ եւ զկամս հին մարդոյն սպանողաց: [11] Եւ զի լինէր ողջակէզն ի զուարակաց՝ ի խոյոց եւ ի նոխազաց եւ գառանց, զիւրաքանչիւրոյն մեծութիւն եւ փոքրութեան առաքինութեանց նշանակ էր, ըստ Պաւղոսի բանին. «Իւրաքանչիւր ոք զիւր շնորհս ունի յԱստուծոյ»**. ոմն՝ այսպէս, եւ ոմն՝ այնպէս: [12] Իսկ խունկքն ընդ ողջակէզացն ապացոյց էր մաքուր աղաւթիցն, որ ի հրով սիրոյն Աստուծոյ ողջակիզելոցն ամբառնայ Աստուծոյ ի հոտ անուշից միշտ յերկինս, զորոց այժմ մարգարէս զերկոցունց խորհրդոցն ի մէջ առնու ասելով. «Ուղիղ եղիցին աղաւթք իմ որպէս խունկ»՝ զանուշահոտ աղաւթիցն զաւրութիւն խնկոց նմանեցուցանելով: [13] Իսկ ասելն՝ «Համբարձումն ձեռաց իմոց պատարագ երեկոյի»՝ զողջակէզոյն եւ զպատարագացն յիշէ զխոր-
14բ հուրդ, որք բոլորն // առաքինութեանց էին յարացոյցք: [14] Եւ այս ըստ աւրինացն, զի հրաման ետ Աստուած քահանայիցն՝ գառն մի երեկոյին

* Սաղմ. ճԽ 2

** Ա Կոր. Է 7

պատարագել ի վերայ սեղանոյն զոհիցն: [15] Արդ, ասէ, թէ զոհս եւ պատարագս բարբառեցար ոչ հաճիլ, ընկա՛լ ապա զհամբարձումն ձեռաց իմոց յաղաւթս քեզ հաճոյական, քան զանբան արեանցն հեղմունսն:

XIV. [1] Արդ, զոր աւրինակ զգալի խունկքն եւ որ ի նմանէ անուշութիւն հոտոցն խորհուրդ էին իմանալի աղաւթիցն անուշահոտութեան, նոյնպէս եւ զանազան անասնոցն զենմունք ողջակէզացն եւ զոհից զանազան գործոց առաքինութեանց էին աւրինակք, զոր պատարագէ ամենայն անձն, որ նուիրէ զինքն Աստուծոյ եւ մեռեալ իցէ յաշխարհիս՝ ըստ զենման պատարագացն խորհրդոց: [2] Նմանապէս եւ զգառանցն եւ զհացից սեղանն յաւրինակ առնու ամբարձման ձեռաց աղաւթականին՝ ասելով. «Համբարձումն ձեռաց իմոց պատարագ երեկոյի»: [3] Այլ Հոգւովն Սրբով նկատէ Դաւիթ զսոսկալի խորհուրդ տեառն իւրոյ գալոյն ի պատարագ: [4] Ի լրման ժամանակի եւ յերեկոյացեալ դարուս, որ եւ սկսանի ի մեծի հինգշաբթին ի ժամ երեկոյին ի վերնատանն խորհրդոյ, ի հաց եւ ի գինի միաւորեալ՝ զինքն տայր ընտրեալ եւ սրբեալ աշակերտացն, զոր իմացեալ՝ մարգարէաբար ասէ՝ զհամբարձումն ձեռացն իւրոց, նման Տեառն համբարձմանն ի վերայ խաչին զբազուկսն. եւ ի ժամ երեկոյին աւանդէր զոգին՝ նուէր հաշտութեան Հաւր եւ պտուղ
խնկոյ, յորմէ լնոյր արարածք անոյշաբուրիչք հոտոյ: // [5] Նոյնպէս եւ ի 15ա
ժամ վերանալոյն ամբարձեալ զձեռսն արարչական՝ աւրհնեաց զառաքեալսն, զոր եւ մեզ պարտ է առնել ի նուիրելն զաղաւթս համբառնալ զձեռսն՝ անուշահոտ առնելով մաքուր վարուք եւ ճշմարտախաւս լեզուաւ, յուսալով ի շնորհսն Յիսուսի, զի միասցի եւ մերն ընդ գլխոյն մերոյ՝ նուիրեալ Հաւր ի հոտ անուշից: [6] Եւ որպէս Տէրն յաղագս մարդկային սիրոյն ետ զինքն ի մահ եւ պատարագեցաւ սիրով ի խաչին՝ իբրեւ զգառն ի վերայ սեղանոյ, զի մարդիկ հաւատացեալք ի նա՝ ուսցին սիրով նորա պատարագել զանձինս՝ իբր զգառն ի վերայ ողջակիզաց սեղանոյ: [7] Վասն որոյ ասէ. «Համբարձումն ձեռաց իմոց պատարագ երեկոյի»: [8] Բայց երիս իրս յիշէ մարգարէս. համբառնալ ձեռացն եւ պատարագն եւ պատարագելին՝ լինել գառն: [9] Արդ, ձեռն իմանամք զգործսն, զի որպէս ձեռն գործոյ է պաշտպան, այսպէս եւ գործն նորին հոմանունաբար կոչի ի Գրոց, եւ գործք կոչին համանգամայն ամենայն տեսակք առաքինութեան, որ ի բոլոր անձնէ նուիրէ Աստուծոյ: [10] Եւ գառն աւրինակ է անմեղութեան, որպէս զգառն անբիծ եւ անարատ լինել Աստուծոյ պատարագ, զոր եւ ասէ. «Համբարձումն ձեռաց իմոց պատարագ երեկոյի»: [11] Եւ երեք են աւրինակք

գործոցն լինել պատարագ Աստուծոյ. ձեռացն համբարձմամբ, որ յեկեղեցիս Աստուծոյ ի բանաւոր հաւատից պատարագին. հոգեկան եւ մարմնական, զոր իւրաքանչիւր անձն զինքն պատարագէ. եւ երրորդ՝ որ բաւական լինի եւ զայլսն նուիրել Աստուծոյ:

XV. [1] Արդ, զհոգեկանն ի Տեառնէ խրատիմք՝ ասելով. «Հոգի է
15բ Աստուած. եւ երկրպագուաց նորա հոգւով եւ ճշմա//րտութեամբ պարտ է երկիրպագանել»*: [2] Եւ Դաւիթ ուսուցանէ. «Պատարագ Աստուծոյ հոգի խոնարհ»**: [3] Եւ ո՞րպէս լինի հոգին պատարագ: [4] Յերից մասանց գոլով անձն մարդոյ՝ զերիսն պարտ է պատարագել Աստուծոյ. ի բանականէ անտի զաւրհնութիւն, զոր*** յաղաւթսն խնկոցն նմանեցոյց, իսկ ի ցասմնականէն՝ զխոնարհութիւնն, եւ ի ցանկականէն՝ զսրբութիւնն: [5] Վասն զի խոնարհի† կար է լինել առանց սրբութեան սրտի, որպէս ամենայն վաւաշոտք: [6] Եւ ախտասէրք չողոքորթ են եւ մարդեղուզք: [7] Իսկ սուրբ սրտին մեծ ախոյեան է եւ մարտակից ամբարտաւանութիւնն եւ դիւրաւ տիրէ նոցա: [8] Վասն այսորիկ զերկուսն միանգամայն առնու. զի ոչ կարէ հաճոյ լինել խոնարհն՝ առանց սրբութեան, վասն զի յախտէն ստորաքարշի, [9] եւ ոչ սուրբն՝ առանց խոնարհութեան, զի ի սկզբնաչարին ախտն վարակի, այլ սրբեալն յախտից եւ խոնարհեալն հոգով է Աստուծոյ նուէր հաճելի: [10] Վասն որոյ ոչ ասէ խոնարհ սոսկ, այլ՝ հոգի խոնարհ: [11] Եւ Տէրն զխոնարհն հոգւով երանէ††, զի են բազումք յաղքատութեան եւ հոգով մեծատուն, իսկ այլք բնական ծնեալք ի փարթամութիւն եւ հոգւով աղքատք, ըստ որում եւ Աբրահամ եւ Յովբ: [12] Այս է յեղանակ ի հոգւոյն մասանց պատարագել գործով Աստուծոյ, որ է ձեռամբ: [13] Իսկ ի մարմնական մասանցն մատուցանել Աստուծոյ պատարագ. Պաւղոս աղաչանաւք առ Հռոմայեցիսն թուղթ խրատել ուսուցանէ՝ ասելով. «Աղաչեմք զձեզ, եղբա՛ք, գթութեամբն Աստուծոյ պատրաստել զմարմինդ ձեր պատարագ կեն-
16ա դանի սուրբ՝ հաճոյ Աստուծոյ»†††: [14] Բայց այս խորագոյնս ունի իր// ողութիւնս, եւ լուսաւորելոցն մտաւք միայն տեսանելի, զոր ասէ աստուածայինն Պաւղոս՝ մատուցանել զմարմինս պատարագ, ըստ պա-

* Յովհ. Դ 23
** Սաղմ. Ծ 19
*** բն.՝ զաւր (խմբ.)
† բն.՝ խոնարհէ
†† Մատթ. Ե 3
††† Հռոմ. ԺԲ 1

տարագաց գառանցն զենմամբ, եւ նոյն կալ եւ մնալ կենդանի: [15] Եւ այս զիա՞րդ է հնար ի միում անձին պատարագիլ եւ մնալ կենդանի: [16] Արդ, զայս ասելով զմահու եւ զկենաց զանազանութիւն ուսուցանէ մեզ, զի կենդանութիւն է ունակութիւն եւ պատճառ գոլոյ, իսկ մահ է պակասութիւն եւ պատճառ ոչ գոլոյ: [17] Եւ երկաքանչիւր ոք ի սոցանէ երկակի ասի. զի կենդանութիւն է, որ բնական է, եւ է, որ յաւժարական: [18] Արդ, բնական կենդանութիւն է շարամերձութիւն հոգւոյ եւ մարմնոյ, ըստ որում զգայութիւն տայ հոգի մարմնոյ, եւ զգայութիւն մտաց: [19] Եւ հոգին յաղթի ի մարմնական հեշտախտութեանց, ընդ որս եւ անառակ կեանք կոչեցան: [20] Իսկ բնական մահ է անջատումն հոգւոյ ի մարմնոյ. ըստ որում եւ ամենեքեան վախճանիմք: [21] Իսկ յաւժարական մահ է ըստ առաքինութեան կենցաղավարիլ. այսինքն մնալ մարմնով կենդանի եւ մեռելութիւն գործել ախտից: [22] Վասն որոյ չորքս այս յայսմ բանէ մեզ իմաստասիրեսցին. գոլն, ոչ գոլն, բարին գոլ, չարն գոլ: [23] Արդ, գոլն է բնաւորական կենդանութիւն, իսկ ոչն գոլ՝ բնաւորական մահ: [24] Եւ բարի գոլն՝ յաւժարական մահ, իսկ չարն գոլ՝ ախորժական կենցաղավարութիւն: [25] Արդ, յորժամ ասէ Պաւղոս, թէ՝ պատարագեցէ՛ք զմարմինս ձեր, զախորժական մահուամբ պատարա- 16բ
գելն ասէ. եւ զառաքին//ութեամբ կենցաղավարիլն եւ մեռելութիւն գործել ախտիցն՝ ըստ այնմ՝ «Սպանէ՛ք այսուհետեւ զանդամս ձեր երկրաւորս»*: [26] Եւ որպէ՞ս սպանեալ լինին անդամք երկրաւորք: [27] Յորժամ զմասունս զգայութեանցն ոչ տամք թոյլ գործի լինել մեզաց եւ զինուորիլ ընդդէմ աւրինացն մտացն, այլ արդարութեամբ պատարագիլ Աստուծոյ ի կենդանի մարմնի, այսինքն ձեռք փոխել յանիրաւութեամբ զրկելոյ եւ լինել սիրող գործոյ՝ զանձինս եւ զայլս կերակրելով: [28] Պատարագ է Աստուծոյ՝ լեզու յանչահ բանից փոխել ի փառատրութիւնն Աստուծոյ: [29] Պատարագ է՝ աչք ի ցանկութեամբ յածելոյն դառնայ ի տեսութիւն արարածոցս եւ այնու՝ ի փառատրութիւն Աստուծոյ. եւ արտասուաւք զինքն ողողանէ եւ լինի պատարագ Աստուծոյ: [30] Եւ այսպէս իւրաքանչիւր անդամք մարմնոյն, խոտորեալք ի չարէն, եւ գործելով զբարին, պատարագ ասին Աստուծոյ: [31] Իսկ երրորդ յեղանակ պատարագելոյն, յորժամ ընդ ինքեան եւ զայլս նուիրէ պատարագ Աստուծոյ, զմարգարէականն ասել բան. «Ահաւասի՛կ ես եւ մանկունք իմ, զոր ետ ինձ Աստուած»**, [32] զոր եւ հարք սուրբ եւ առաջնորդ

* Կող. Գ 5
** Եբր. Բ 13

հաւտին Քրիստոսի զծնեալսն յինքեանց բանիւ ճշմարտութեանն համ-
բարձմամբ ձեռացն յաղաւթս ընծայեն Աստուծոյ, որպէս գառինս պա-
տարագաց, զոր բանիւ սնուցին եւ ձեռամբ Աստուծոյ նուիրեցին, յո-
րոց բազումք եւ անթիւք պատարագեցին զանձինս Աստուծոյ՝ որպէս
զուարակս եւ գառինս ի սեղանն երկնաւոր. [33] նախ՝ վկայքն երանելի,
եւ յետ նոցա՝ հարքն ճգնաւորք, որք հրով սիրոյն Աստուծոյ ողջակի-
17ա զեց//ան ի մարմնի, ողջակէզք բանաւորք, զենմունք կատարեալք. [34] յո-
րոց եւ դուք իսկ Աստուծոյ պատարագելի եւ կենդանի զենմունք ի
բանական տնկոց բնութեանս, խունկք անուշահոտք, հարցն առաջնոց
եւ սիրելեացն Աստուծոյ եւ սրբոց գոլով համակարգ եւ համաձեւք, եւ
նոցունց դասու եւ կայանի փափագողք եւ փութացողք: [35] Պարտ է ձեզ
միշտ պատրաստ եւ կազմ ունել զգործարան եւ զսեղան նուիրական
աղաւթիցն պատարագաց. այսինքն՝ զլեզու եւ զձեռս. զի զոր աւրինակ
ի բուրվառ խնկոցն չէ արժան աղտեղի ինչ լինել, բայց միայն զհուրն
եւ զխունկ, նոյնպէս բերանին եւ լեզուին չէ ինչ պարտ աղտեղի բանս
ունել, եւ ոչ ձեռին գործի անիրաւութեան լինել՝ ագահելոյ, յափշտա-
կելոյ, զի ձեռն եւ լեզու գործիք են աղաւթից եւ նուիրողք: [36] Այսու
յուսով պահեսցո՛ւք զսոսա եւ մի՛ տացուք գործի լինել չարին, զի
նոքաւք զհոգեւոր պատարագն մատուսցուք Աստուծոյ. զշարժումն
ձեռինն՝ յողորմութիւն, ի մարդասիրութիւն՝ կարկառեալ մտաւք առ
կարաւտեալս, զի համարձակ լիցի համբառնալ առ Աստուած: [37] Նոյն-
պէս եւ բերանոյ լիցի զգուշութիւն առաւել, քան զամենայն անաւթս
ոսկեղէնս, պահել յանարգ պէտս վարելոյ եւ անաւթ եւ գործի լինել
աւրհնութեանն Աստուծոյ՝ Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

Տարընթերցումներ

(I 4) վասն որոյ bc | *(I 5)* կազմուած b | *(I 6)* առաջինն b | *(I 8)* բարձրութիւն bc | *(II 2)* ազգաց փխ. ազգ զանազան bc | *(III 12)* զօրէ նա սիրոյն bc | *(III 13)* յառաքինինն bc | Աստուած b | *(V 9)* պարգեւացն որ անուանեմք bc | *(VIII 7)* պահպանութեամբ c | *(VIII 8)* ծնանին c | *(VIII 12)* երկիւղին c | *(IX 2)* հասին փխ. հային bc | *(IX 7)* զբարեգործկան bc | *(X 4)* ունկն b

Բնագիրը պատրաստեց

Արմէնուհի Սրապեանը

ՎԱՐՔԵՐ ԵՒ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՔԵԱԼՆԵՐԻ ՀԵՏԵՒՈՐԴ ՍՈՒՐԲ ԻՐԵՆԷՈՍԻ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Առաքելական հայրապետ սուրբ Իրենէոսը կամ Երանոսը Արեւելեան եւ Արեւմտեան Եկեղեցիների փառքն ու պարծանքն է: Նա ծնուել է մօտ 120 թուականին Փոքր Ասիայի Զմիւռնիա քաղաքում: Մանկուց աշակերտել է Զմիւռնիայի հայրապետ սուրբ Պողիկարպոսին, որը եղել էր սուրբ Յովհաննէս աւետարանչի աշակերտը: Ուշիմ եւ Հոգով լի մանուկ լինելով՝ Իրենէոսն իր մտքում ու սրտում ամբարում էր այն ամէնն, ինչ Պողիկարպոսից լսում էր Փրկչի՝ աշխարհ գալու, Նրա փրկական տնօրինութիւնների, առաքեալների եւ աշակերտների քարոզութեան մասին, միաժամանակ խորամուխ էր լինում Հին եւ Նոր Կտակարանների ուսումնասիրութեան մէջ: Նա Աստուածային Գրքի եւ առաքելական աւանդութիւնների գանձարան էր, առաքեալների ճշմարիտ հետեւորդը եւ նրանց աշակերտների հարազատ շառաւիղը: Իրենէոսը հմուտ էր նաեւ արտաքին գիտութիւնների մէջ. թէ՛ իր զօրաւոր խօսքով եւ թէ՛ գրով նա անվեհեր յաղթում էր յոյներին: Նա ժամանակի հեթանոսների ու հերետիկոսների դէմ գրել է բազում գրքեր ու թղթեր՝ լի իմաստութեամբ եւ առաքելական հոգով, յունարէն եւ հռոմէական լեզուներով:

Երիտասարդ տարիքում Իրենէոսը սուրբ Պողիկարպոսի կողմից ձեռնադրուեց սարկաւագ եւ ապա քահանայ: Տեսնելով նրա հոգու եռանդն ու յաջողութիւնն առաքելական ծառայութեան մէջ՝ մօտ 157 թուականին նրան ուղարկեց արեւմուտք՝ գաղղերի երկիր՝ օգնական լինելու սուրբ Փոտինոսին՝ Լիոնի առաջին եպիսկոպոսին, որը շատ էր ծերացել եւ կարիք ունէր պաշտօնակցի՝ հալածանքների ժամանակ իր Եկեղեցին հովուելու համար: Իսկ այնտեղից 178 թուականին ուղարկուեց Հռոմ՝ Ելեւթերիոս սուրբ հայրապետի մօտ՝ Եկեղեցու ինչ-ինչ գործերում նրան օգնելու, որտեղ գործն աւարտելուց յետոյ վէճի մէջ մտաւ Վաղենտինոս հերետիկոսի եւ նրա երկու աշակերտներ Ֆլորինոսի եւ Բլաստոսի հետ եւ խօսքով ու գրով պախարակեց նրանց:

Երբ Լիոն վերադարձաւ, այդ տարի սկսուեցին Վերոս կայսեր հալածանքները քրիստոնեաների դէմ, եւ Գաղղիայում սուրբ Պովթինոսի հետ միասին նահատակուեցին շատերը: Նրանց պանծալի վկայաբանութիւնը գրեցին Լիոնի Եկեղեցու երէցները՝ քաջալերելու համար բոլոր հաւատացեալներին, իսկ ըստ Եւսեբիոսի վկայակոչած մի նամակի՝

Իրենէոսը բոլորի միաձայն հաւանութեամբ դարձաւ Լիոնի երկրորդ եպիսկոպոսը Պովթինոսից յետոյ: Նա իր գործերով ճանաչուեց իբրեւ գաղղիացիների Եկեղեցու արժանաւոր գլուխ եւ բանական հօտի քաջ հովիւ՝ լցուած բարեպաշտութեամբ եւ աստուածային նախանձաւորութեամբ, պատկառելի բոլորի՝ թէ՛ մերձաւորների եւ թէ՛ հեռաւորների աչքում: Բան Աստուծոյ գեղեցիկ քարոզութեամբ, նաեւ նշաններով ու հրաշքներով շատ անհաւատների դարձի բերեց եւ հաւատացեալներին զերծ պահեց չարի բոլոր փորձութիւններից:

Իր գործերով եւ անուամբ նա խաղաղութիւն հաստատեց Արեւմուտքի եւ Արեւելքի Եկեղեցիների միջեւ Զատկի տօնի օրուայ հետ կապուած երկպառակութիւնների եւ յուզումների ժամանակ: Բանն այն է, որ Ասիայի Եկեղեցիներում, իբրեւ թէ հին աւանդութեամբ, Զատիկը նշում էին լուսնի տասնչորսերորդ օրը, որը հանդիպում էր նաեւ շաբաթուայ մէջ որեւէ օր: Սա հաճելի չէր շատ հովիւների, մանաւանդ երանելի Բեկտոր եպիսկոպոսին, որը, Աստծուց շարժուելով, եպիսկոպոսական ժողով գումարեց, նոյնն արեց նաեւ Իրենէոսը. Գաղղիայի այլ աթոռներում նոյնպէս եպիսկոպոսական ժողովներ գումարուեցին, եւ բոլորը միաբան նոյն մտքին յանգեցին եւ աշխարհի բոլոր Եկեղեցիներին ուղղուած նամակներ գրեցին, թէ՝ «Չլինի թէ մեր Տիրոջ յարութեան խորհուրդի կատարման օրը լինի այլ օր, բացի կիրակիից»:

Բայց որովհետեւ Ասիայի Եկեղեցիները տակաւին չէին ընդունել այդ որոշումը, Բեկտոր եպիսկոպոսը կամեցաւ նրանց հանել Եկեղեցիների ընդհանուր հաստատութիւնից: Սուրբ Իրենէոսն իր Եկեղեցու միաբանութեան հետ միասին կրկին ժողով գումարեց Լիոնում եւ Բեկտորին գրեց, թէ՝ «Արժան չէ խստութեամբ բաժանել Եկեղեցիները, այլ հարկ է սուրբգրային վարդապետութեամբ եղբայրաբար խրատել նրանց, որովհետեւ այդպէս են անում ըստ իրենց առաջին հովիւների սովորութեան եւ ոչ թէ իրենք են հնարել այդ սովորութիւնը: Նաեւ մեզնից առաջ եղած եպիսկոպոսների ժամանակ սուրբ Ցարութեան պահքն էլ ոմանք քիչ օրեր, ոմանք շատ էին պահում, եւ թէպէտեւ պահքի օրերի թիւը տարբեր էր, բայց հաւատի միաբանութիւնը հաստատուն էր»:

Այս ամէնը եւ սրանից առաւելը գրեց Իրենէոսը. նա, խաղաղաբար լինելով, նոյն խաղաղութիւնն էր աղաչում եւ խնդրում Բեկտորից, որը սիրով լսեց նրան, ինչպէս նաեւ այլ աթոռների ներկայացուցիչների, որոնք միջնորդ էին լինում խաղաղութեան համար, եւ Ասիայի Եկեղեցիների նկատմամբ խստութիւններ չձեռնարկեց: Իսկ որոշ

ժամանակ անց նրանք միաբանուեցին, ինչին յորդորում էր երանելի Իրենէոսն իր կեանքի բոլոր օրերին: Այսպէս կարգով եւ կրօնով առաքեալների քարոզութեանը հետեւելով եւ գրով ու խօսքով վարդապետելով՝ լուսաւորեց Աստուծոյ Եկեղեցին եւ Տիրոջ 202 կամ 203 թուականին արժանացաւ վկայական պսակի: Նրա վկայաբանութեան պատմութիւնը գտնուեց գաղղիական Եկեղեցու հին Ճառընտիրներում, որը թարգմանաբար կը ներկայացնենք այստեղ:

Այն ժամանակ, երբ ամբողջ երկրում քրիստոնեաներին բնաջնջելու մասին Սեւերոս դաժանաբարոյ կայսեր հրովարտակը եղաւ, եւ հալածանքների սաստկութիւնը սպառնում էր կործանել մինչեւ իսկ ողջ աշխարհը, նրա դէմ քաղաքական պատերազմ սկսուեց. Սեւերոսը դիմեց Գաղղիա, Լիոն քաղաքի մօտ սպանեց Կղօդիոս Ալբինոսին, որն այնտեղ ինքն իրեն կեսար էր հռչակել: Երբ նա իմացաւ, որ այդ բարեկեցիկ քաղաքը սուրբ Իրենէոսի միջոցով ընդդիմանում է իրենց պաշտամունքին, ընտրեց իր նման մոլեգին բարքի տէր ու գազանամիտ սրիկաների, բոլոր կողմերից շրջապատել տուեց քաղաքը եւ ասաց. «Ովքեր զոհ չեն մատուցի մեր աստուածներին, նրանց սրով անողորմաբար կոտորէ՛ք»:

Բայց մարդասէր Քրիստոս սուրբ Իրենէոսին յայտնեց առաջիկայ վտանգի մասին՝ ուղարկելով Իր հրեշտակին: Երբ սուրբը տքնութեամբ եւ աղօթքով էր անցկացնում գիշերը՝ իրեն աղօթակից ունենալով երանելի Զաքարիա երէցին, գիշերուայ կէսին յանկարծակի նրա մօտ եկաւ Տիրոջ հրեշտակը եւ այսպէս խօսեց. «Ո՜վ Քրիստոսի հաւատարիմ զինուոր՝ նորընտիր զօրքի զօրավար, Տէրը քեզ բազում չարչարանքներից յետոյ քո ժողովրդի հետ միասին երկնքի արքայութիւն պիտի հրաւիրի մարտիրոսական պսակով: Այժմ քաջալերի՛ր եղբայրներին, որ չվախենան, քանի որ ահա Քրիստոսի համար, Ում սիրում են կատարեալ հաւատով, նրանց վրայ է հասնելու մարդակեր բռնակալը. նրանց սպասում է նահատակութեան պանծալի վկայութիւնը: Թող չվախենան հին թշնամու սպառնալիքներից եւ ո՛չ էլ նրանցից, ովքեր մարմինն են սպանում, բայց հոգին չեն կարող սպանել: Նրանց չարչարանքը մի ժամում կ՛աւարտուի, իսկ քեզ սպասում է երկարատեւ չարչարանք եւ պանծալի յաղթանակ: Շտապի՛ր խնամքով թաքցնել Զաքարիա երէցին, որովհետեւ քո՝ այստեղից գնալուց յետոյ քեզ կը փոխարինի՝ եղբայրներին ի Քրիստոս հաստատելու համար»:

Այս ամէնը լսելով՝ երանելի Իրենէոսն ասաց. «Գոհանո՛ւմ եմ քեզնից, Տէ՛ր Յիսուս Քրիստոս, յաւիտենական լո՛յս, արդարութեան ծա-

գո՛ւմ, գթութեան աղբի՛ւր, որ արժանի համարեցիր այսպէս ուրախացնել ինձ Քո հրեշտակի միջոցով եւ մխիթարել, Տէ՛ր, տո՛ւր Քո այս ժողովրդին հաստատուն հաւատ, որ նրանցից ոչ ոք չհեռանայ Քո անուան դաւանութիւնից, այլ բոլորը, ամրացած Քո զօրութեամբ, պանծալի մահուամբ եւ յաղթանակով թող արժանի լինեն ընդունելու Քո սուրբ խոստումների պսակը՝ անմահ փառքը»:

Աղօթքն աւարտելով՝ սկսեց Քրիստոսով քաջալերել եղբայրներին: Այնուհետեւ իւրաքանչիւրն իր ունեցուածքը բաժանում էր կարօտեալներին, եւ նրանցից բուրում էր վկայութեան անուշահոտութիւնը: Գիշեր-ցերեկ աղօթում էին՝ ակնկալելով այն ժամը, որ աւետարանուեց նրանց Քրիստոսից: Իսկ անօրէն կայսրը քաղաքը զօրքով շրջապատելուց յետոյ նրանց առջեւ դրեց այս պայմանը. եթէ մէկն ազատի որեւէ քրիստոնեայի կամ ուզի պաշտպանել նրան, նոյն մահապարտութեան վճռին կ՚արժանանայ, «որպէսզի,- ասում էր նա,- մենք կարողանանք մեր քաղաքում համարձակօրէն պաշտել եւ զոհեր մատուցել մեր աստուածներին, որոնք երբեք չեն կամենում, որ մեր պատարագները խառնուեն քրիստոնեաների պատարագների հետ»:

Ապա բոլոր վայրերում սկսուեց կոտորածը. առանց խնայելու կոտորում էին տղամարդկանց եւ կանանց, մեծին ու փոքրին, իսկ նրանք յօժար մտքով եւ ուրախութեամբ էին նահատակութեան յանձնում իրենց եւ ճշմարիտ հաւատի համար սրախողխող լինում, մինչեւ նրանց պատուական արեան վտակները հոսում էին հրապարակներում. մերձակայքի գետերը սպանուածների արեան յորդումից կարմիր գոյն էին ստացել:

Ամբարիշտ կայսրը հրամայեց սուրբ Իրենէոսին իր առաջ բերել. նա մոլեգին դաժանութեամբ էր լցուած նրա դէմ. մեր պատմութիւնը շատ կ՚երկարի, եթէ մէկ առ մէկ ներկայացնենք այդ դժնդակ դէպքերը, որ կատարուեցին նրա հետ, այդ մասին արձանագրուած է նրա մարտիրոսութեան մասին գրքում: Երբ երանելին նահատակուեց, նրա մարմինը սուրբ երէց Զաքարիան գիշերով թաղեց մի խոր քարայրում, որի վրայ այժմ խորան է կանգնեցուած՝ իբրեւ վկայութիւն նրա՝ Աստծուն հաճելի պատարագ լինելու:

Սրա հետ միասին Լիոնի Եկեղեցու զանազան յիշատակարաններից քաղում ենք, որ սուրբ Իրենէոսի մարմինը թաղուած մնաց այդ այրում, որը կոչւում էր Սուրբ Յովհաննէս աւետարանչի քարայր (այն գտնւում էր Լիոն քաղաքի արուարձանում՝ մի մացառուտ վայրում՝

խիտ աճած թփերի մէջ), մինչեւ 480 թուականը, երբ սուրբ Պատիէսը կամ Բացիէնսը՝ Լիոնի եպիսկոպոսը, այնտեղ շինեց երկու եկեղեցիներ, որոնցից մէկը՝ այդ նոյն քարայրում, որտեղ գտնւում էին սուրբ Իրենէոսի եւ բազմաթիւ սուրբ նահատակների մարմինները, իսկ միւսը՝ Սուրբ Յովհաննէսի քարայրի վրայ, որը յետոյ, երբ այնտեղի խորանում դրեցին նրա մարմինը, անուանուեց Սուրբ Իրենէոսի տաճար:

Այն տեղին մօտ էր Սուրբ Յուստոսի տաճարը, որտեղ կային շատ սուրբերի նշխարներ: Այդ եկեղեցու հոգեւորականները կարծում էին, թէ դրանց մէջ է սուրբ Իրենէոսի մարմինը, եւ այդ պատճառով էլ դարեր անց սաստիկ պայքար ծագեց իրենէոսեանների եւ յուստոսեանների ժառանգաւորների միջեւ, որը տեւեց երեք տարի, մինչեւ հաւաստի քննութեամբ պարզ դարձաւ, որ սուրբ Իրենէոսի մարմինը գտնւում է Սուրբ Իրենէոսի եւ ո՛չ Սուրբ Յուստոսի եկեղեցում: Այնժամ սուրբ Իրենէոսի նշխարները տեղափոխեցին նոր տապանակի մէջ եւ տեղադրեցին խորանի վրայ՝ երկու վկաների՝ Եպիպոդիոսի եւ Ալեքսանդրոսի նշխարների միջեւ, որի պատճառով էլ լիոնցիների մօտ առանձին՝ նշխարների փոխադրութեան տօն սահմանուեց, որը նշւում է ապրիլի 5-ին:

Աստուած աւելացրեց հրաշքները, որ կատարւում էին սուրբի տապանի մօտ. լիոնցիները ամբողջական մատեաններ են պահում եղած հրաշքների մասին յիշատակութիւններով, քանի դեռ ամբողջ էին պահւում սուրբի ոսկորները: Բայց երբ Տիրոջ 1562 թուականին կալվինական աղանդաւորները գրաւեցին Լիոնը, աւար առան եւ հրոյ ճարակ դարձրեցին եկեղեցիների սուրբ մատեանները, յիշատակարաններն ու պատկերները, կործանեցին սեղանները, շատ եկեղեցիներ հիմնայատակ աւերեցին, սուրբ սպասքները պղծեցին ու եղծեցին եւ սուրբերի նշխարները ցիրուցան արեցին:

Նրանց հետ նաեւ սուրբ Իրենէոսի պատուական մարմինը հանեցին իր տեղից, նետեցին ճանապարհի վրայ, նրա ոսկորների մասունքները ցրեցին այսուայնտեղ, մի մասն էլ գետը լցրեցին, անօրէններն առան սուրբի գլուխը եւ ձեռքից ձեռք էին նետում գնդակի պէս, ապա կոխկռտելով՝ նետեցին գետը: Այդ ամէնը տեսաւ մի ուղղափառ եւ բարեպաշտ բժիշկ, գնաց եւ լռելեայն հանեց այն եւ մեծ երկիւղածութեամբ ու պատուով ծածուկ պահեց: Մինչեւ զօրացաւ Կարլոս IX-ը եւ, վանելով Եկեղեցու թշնամիներին, սուրբի պատուական գլուխը մեծ շուքով բերեց եւ դրեց իր նախկին տեղում, որտեղ պահւում է մինչեւ այժմ:

ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱՅԻ ՊԵՏՐՈՍ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՒ ԱԲԻՍՈՂՈՄ ՍԱՐԿԱՒԱԳԻ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Սուրբ եւ առաքելաշնորհ մեծ հայրապետ Պետրոս Ալեքսանդրացին Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքի պատրիարքական աթոռին նստեց Տիրոջ շուրջ 300 թուականին: Քրիստոսի հաւատքի ճշմարտութեան մեծ քարոզիչ էր նա, որ ուղղափառ հաւատքով շարունակ քարոզում էր Աւետարանը, պտղաբերում բարի գործերով, եւ ամբողջ ժողովուրդը սիրում էր նրան ու պատկառում նրանից: Երեք տարի խաղաղութեան մէջ քրիստոնեայ ժողովրդին նրա հովուելուց յետոյ ամբողջ Հին աշխարհով մէկ սկսուեցին քրիստոնեաների՝ Դիոկղետիանոս քրիստոսամարտ արքայի կողմից կազմակերպուած հալածանքները: Նրա փեսայ Մաքսիմինոս Երկրորդը, որ կոչւում էր նաեւ Արմենտարիոս, խրատուած լինելով իր կռապաշտ ու չարասէր մօրից, ով չափազանց մեծ ատելութիւն ունէր քրիստոնեաների հանդէպ, իր անեղբօրը՝ Դիոկղետիանոսին, դրդել էր քրիստոնէական կրօնը հալածելու մասին արքունական հրաման հրապարակել կայսրութեան բոլոր կողմերում: Ուստի եւ 303 թուականին խիստ հրաման արձակուեց, որ քրիստոնեայ անունը կրող բոլոր անձինք՝ մեծ թէ փոքր, կռապաշտութեան դառնան, իսկ ով այդ հրամանը չկատարի, սրով ու կրակով, սովի ենթարկուելով ու աքսորուելով մահուան կդատապարտուի ու կոչնչացուի:

Եւ այսպէս, քրիստոնեաներին հալածելու անօրէն հրամանն առնելով՝ տարբեր կողմերի իշխաններն ու դատաւորները սկսեցին այն ի կատար ածել: Ո՞վ կարող է թուել այն բազմաթիւ քաջ նահատակներին, ովքեր Քրիստոսի սիրոյ համար իրենց արիաբար մատնեցին մահուան՝ զանազան դառն տանջանքների ենթարկուելով. տղամարդիկ ու կանայք, ծերեր ու մանուկներ, իշխաններ ու քահանաներ, առանձին թէ խմբովին, նահատակւում էին: Սակայն, աւաղ, կային նաեւ ոչ սակաւ ուրացողներ, որոնք այդպիսով յաւիտենական կորստին արժանացան:

Հալածանքների այս հրդեհը, սկսուած լինելով Դիոկղետիանոսի եւ նրա գահակից Մաքսիմինոս Հերակլէսի կողմից, շարունակուեց նաեւ

միւս Մաքսիմինոսի՝ Արմենտարիոս Գաղերիոսի առանձին կայսրութեան մէջ, սակայն առաւել սաստկացաւ Արեւելքում Մաքսիմինոս Երրորդ Դաժի օրոք, ով կեսար դարձաւ 305-ին: Նրա իշխանութեան ներքոյ էին թէ՛ Արեւելքը եւ թէ՛ Եգիպտոսը, իսկ կարճ ժամանակ անց նա վերցրեց նաեւ կայսեր տիտղոսը:

Ահա այս ժամանակներում Եգիպտոսում Ալեքսանդրիայի սուրբ Պետրոս եպիսկոպոսապետը շարունակ յորդորում էր հաւատացեալներին հաւատքի մէջ հաստատուն մնալ եւ առիթը ներկայանալու դէպքում յօժարակամ մեռնել յանուն Յիսուսի:

Մելիտիոս անունով մի եպիսկոպոս Լիկոպոլսից, որ Եգիպտոսի Թեբայիդ բնակավայրի սահմանին մօտ գտնուող Գայլ քաղաքն է, չարից հրապուրուելով ու տանջանքներից զարհուրելով, հաւատն ուրացաւ, զոհեց կուռքերին եւ դեռ ուրիշ ապիրատութիւններ էլ գործեց հաւատացեալների հանդէպ: Ապա սկսեց առերես ցոյց տալ, թէ իբր զղջում է իր արարքների համար՝ ակնկալելով իր եպիսկոպոսութեան աթոռը ստանալ, սակայն սուրբ Պետրոս հայրապետը, այս կեղծիքը տեսնելով, եկեղեցական ժողովով նրան զրկեց քահանայական պատուից՝ յուսալով, թէ միգուցէ զղջայ ու ապաշխարի: Բայց Մելիտիոսը, արհամարհելով հայրապետին, նրա ենթակայութիւնից դուրս եկաւ ու սկսեց ազատօրէն ինքնիշխան գործել, իր կողմը քաշելով՝ շատերին որսաց ու հաւատացեալների մէջ պառակտում մտցրեց: Նրա հետեւորդները կոչուեցին մելիտիոսականներ: Սրան յարեց նաեւ Արիոս Ալեքսանդրացի հերետիկոսապետը նախքան իր աղանդը հիմնելը, սակայն Եկեղեցու սպասաւոր էր մնում, ուստի մերժուեց Պետրոս հայրապետի կողմից եւ արտաքսուեց Եկեղեցուց: Սակայն յետոյ զղջալով՝ հեշտութեամբ ներման արժանացաւ, քանզի ճարտարալեզու եւ իր խօսակիցների սրտերը գրաւող անձնաւորութիւն էր: Շուտով Պետրոս հայրապետի կողմից սարկաւագ ձեռնադրուեց, սակայն շատ չանցած, դարձեալ հեռանալով նրանից, յարեց Մելիտիոսին եւ հերձուածը զօրացրեց: Այս իսկ պատճառով սուրբ Պետրոսը նզովքով նրան արտաքսեց Եկեղեցուց ու բանադրեց: Իսկ Մելիտիոսը, օրէցօր աւելի ու աւելի գրգռուելով Պետրոս հայրապետի դէմ, ամէնքի, մանաւանդ հեթանոսների առաջ չարախօսում էր նրանից, մինչեւ որ Մաքսիմինոսի առաջ էլ ամբաստանեց՝ ներկայացնելով նրան որպէս ժողովրդի խռովեցուցիչ: Եւ քանի որ նրա անունը յայտնի էր թագաւորներին, եւ գիտէին, որ նա է, որ Եգիպտոսի քրիստոնեաներին իրենց հաւատքի մէջ հաստատուն է պա-

հում, ուղարկեցին մարդիկ՝ բռնելու նրան եւ նրա գործակիցներին: Այդ ժամանակ եպիսկոպոսներից, քահանաներից եւ Եկեղեցու այլ սպասաւորներից մօտ 660 հոգի ձերբակալուեցին եւ աքսորուելով զանազան վայրեր՝ այնտեղ տեսակ-տեսակ չարչարանքների ենթարկուելով՝ նահատակուեցին: Բայց սուրբ Պետրոսին բռնել չկարողացան. ալեքսանդրացիների մի բազմութիւն, յարձակուելով արքունի սպասաւորների վրայ, քաջութեամբ դիմադրեց: Այդժամ սուրբ հայրապետը, վախենալով, որ իր պատճառով գուցէ ժողովուրդը կոտորուի, բարեպաշտ մարդկանց յորդորով անաղմուկ մեկնեց քաղաքից եւ երկար ժամանակ հալածական շրջեց Պաղեստինի եւ Միջագետքի կողմերում՝ տարբեր վայրերում ծանր նեղութիւններ կրելով իր պանդխտութիւնից եւ հալածիչների երեսից, քանզի հալածանքների բոցը բռնել էր ամբողջ երկիրը: Բայց որտեղ էլ որ սուրբ հայրապետը գտնւում էր, ստէպ-ստէպ յորդորների ու քաջալերանքի գրեր էր ուղարկում իր հօտի անդամներին եւ իրենց հաւատքի պատճառով ձերբակալուածներին: Այս ամէնի մէջ սրբի ուղեկիցն ու օգնականը նրա երանելի սարկաւագն էր՝ Աբիսողոմը՝ մի զգօն ու Սուրբ Հոգով լեցուն ծերունի, որ նրա հետ երկար տարիներ հալածանքների ենթարկուեց:

Երբ ս. Պետրոսը լսեց, որ իր գործակիցները քարոզութեան ընթացքում նահատակուել են, եւ իր հօտը, հովուից զրկուած, տագնապահար ու վտանգաւոր վիճակում է գտնւում, Աբիսողոմի հետ վերադարձաւ Ալեքսանդրիա՝ իր աթոռ: Մխիթարում ու սրտապնդում էր ամէնքին եւ համարձակօրէն քարոզում Քրիստոս Աստծուն՝ յանդիմանելով հեթանոսների մոլորութիւնը:

Երբ Մաքսիմինոսն այս մասին լսեց, իսկոյն մի արքունի հազարապետ ուղարկեց Ալեքսանդրիա՝ երեւելի զինուորականներով հանդերձ, որպէսզի սպանեն Պետրոս եպիսկոպոսապետին: Երբ զինուորականները ժամանեցին, մեծ խռովք ու աղմուկ բարձրացաւ քաղաքացիների մէջ, եւ ասում էին. «Աւելի լաւ է նախ մենք բոլո՛ր մեռնենք, եւ մեզանից յետո՛յ միայն՝ մեր հայրապետը»: Ուստի զօրագլուխները վախեցան հայրապետին սպանել եւ բաւականացան նրան բանտարկելով:

Այդ նոյն օրերին անապատից Ալեքսանդրիա քաղաք էր իջել Աստուծոյ այր, աշխարհահռչակ մեծ աբբայ Անտոնը՝ այցելելու Քրիստոսին վկայելու համար բանտարկուածներին եւ յարմար առիթի դէպքում նահատակութեամբ չարչարակից լինելու սուրբերին: Հանդիպեց նաեւ Պետրոս հայրապետին, երբ նա դեռեւս բանտում էր, եւ իր քաջալերիչ

աստուածիմաստ խօսքերով ուրախացնում էր նրան մինչեւ նրա վախճանի օրը, իսկ նրա նահատակութիւնից յետոյ վերադարձաւ իր անապատը:

Պետրոս հայրապետի նահատակութեան նախորդ օրը նրա կողմից բանադրուած Արիոսը փորձեց բանադրանքի կապանքներից ազատուել, քանզի վախենում էր, որ սուրբի նահատակութեան ժամանակ, արձակում ստացած չլինելով, ինքը գարշելի կդառնայ ամէնքի աչքին: Ուստի հայրապետի մօտ՝ բանտ, ուղարկեց բարեխօսներ՝ քահանաներ ու երեւելի տանուտէրեր, որպէսզի նա օրհնէր Արիոսին ու ազատէր բանադրանքից, եւ խոստանում էր հեռանալ Մելիտիոսից, ապաշխարել ու Եկեղեցու մէջ տեղ գտած պառակտումը վերացնել, մանաւանդ որ Արիոսն ակնկալում էր սուրբի մահուանից յետոյ աւելի բարձր եկեղեցական աստիճան ստանալ եւ նոյնիսկ հասնել հայրապետական աթոռին: Արիոսի համար գլխաւոր բարեխօսները հայրապետանոցի երէցներ Աքիւղասն ու Ալեքսանդրոսն էին: Բայց ս. Պետրոսը, որ աստուածային յայտնութեամբ տեղեկացած լինելով՝ գիտէր այն է՛լ աւելի մեծ չարիքների մասին, որոնք Արիոսը պատրաստւում էր գործել Եկեղեցու ներսում, բարեխօսների խօսքերին տեղի չտուեց: Երբ նրանք շատ թախանձեցին, իշխանաւորներին դուրս հանելով՝ իր մօտ կանչեց Աքիւղասին ու Ալեքսանդրոսին եւ տխրալից ու զայրալից խօսքերով ասաց.

- Արիոսի համա՞ր էք ինձ աղաչում. Արիոսը թէ՛ այս աշխարհում եւ թէ՛ հանդերձեալում նզովուած ու վտարուած է Աստուծոյ Որդու փառքից: Բայց որ սա ասում եմ, ինձ անգութ ու անխիղճ մի՛ կարծէք, այլ ակա՛նջ դրէք իմ խօսքերին եւ հասկացէ՛ք դէպի բոլոր չարիքներն անյագօրէն ընթացող Արիոսի գաղտնածածուկ պատրանքները: Ես չէ՛, որ որոշում եմ նրան հեռացնել ս. Եկեղեցուց, այլ Աստուծոյ խօսքը: Որովհետեւ այս գիշեր՝ աղօթքիցս յետոյ, մի տեսիլք տեսայ, ուր երեւաց մօտ տասներկուամեայ մի մանուկ՝ լուսազարդ դէմքով, հագին սպիտակ պատմուճան, որը մանկան պարանոցից մինչեւ ոտնաթաթերը պատռուած էր, եւ մանուկը երկու ձեռքով այն ամուր բռնել-հաւաքել էր կրծքի մօտ՝ ծածկելու համար իր մերկութիւնը: Սա տեսնելով՝ ապշահար վիճակիցս թմրեցի, ոսկրերս ընդարմացան, եւ լեզուս քիմքիս կպաւ: Սակայն շուտով խօսելու ուժ ստացայ եւ գոչեցի. «Տէ՛ր, պատմուճանդ ո՞վ պատռեց»: Նա պատասխանեց. «Արիոսը: Բայց դու զգո՛յշ եղիր, նա կամենում է քեզ մօտ բարեխօսներ ուղարկել: Մի՛ հաւատա եւ մի՛ ընդունիր նրան ս. Եկեղեցու հաղորդակցութեան մէջ: Նաեւ պատուիրիր Աքիւղասին ու Ալեքսանդրոսին, ովքեր քեզանից

յետոյ քո Աթոռին են նստելու, որ նրանք նոյնպէս չընդունեն նրան Եկեղեցուց ներս»:

Այս խօսքով սուրբ հայրապետը նաեւ մարգարէացաւ իր խօսակիցներ Աքիւղասի ու Ալեքսանդրոսի՝ իր Աթոռը ժառանգելու մասին: Եւ սկսեց պատմել նրանց, թէ Քրիստոսի համար որքան հալածանք կրեց Պաղեստինում, Փիւնիկիայում, Միջագետքում, Ասորիքում եւ կղզիներում: Ցայտնեց նաեւ, որ մօտեցել է իր նահատակութեան ժամանակը, ինչպէս յայտնուել էր իրեն Տիրոջից, եւ մխիթարելով իր խօսակիցներին՝ յետ ուղարկեց:

Իսկ արքունի զինուորները շտապում էին ի կատար ածել Մաքսիմինոսի հրամանը՝ ցոյց տալով հայրապետին սպանելու հրամանն ամփոփող հրովարտակը: Ժողովրդի զինուած բազմութիւնը վրայ հասնելով՝ փակել էր բանտի դուռը՝ պատրաստ պաշտպանելու իր հայրապետին: Քաղաքացիների հետ էին նաեւ անապատից սուրբ Անտոնի հետ քաղաք իջած շատ միայնակեացներ, որոնք եկել էին իրենց հաւատքի համար բանտարկուած քրիստոնեաներին խնամք տանելու: Զինուորները որոշեցին սրով հեռացնել ամբոխին ու խլել հայրապետին՝ սպանելու համար, սակայն վերջինս, վախենալով, որ կարող է մեծ կռիւ տեղի ունենալ զինուորների ու քաղաքացիների միջեւ, եւ շատերը կարող են կոտորուել, կամ էլ իր մարտիրոսութիւնը կարող է խափանուել, իր երանելի սարկաւագ Աբիսողոմին գաղտնի ուղարկեց զօրագլուխների մօտ եւ աղաչեց ժողովրդին մնաս չհասցնել՝ ասելով.

- Քանի որ ես եմ պէտք, թող գիշերը գան բանտի հարաւակողմը եւ պատը ծակելով՝ ինձ հանեն ու տանեն, ուր կամենում են:

Եւ այդպէս, գիշերը նրան հանեցին բանտից՝ ժողովրդից գաղտնի, քանի որ դռան մօտ գտնուող քաղաքացիները քուն էին մտել եւ սաստիկ քամու պատճառով չէին լսել միւս կողմից պատի ծակուելը, մանաւանդ որ կասկած իսկ չունէին, թէ կարող էր նման բան տեղի ունենալ:

Եւ հինգ զինուորներ երանելի հայրապետին վերցրին-տարան նահատակութեան վայրը, որ տեղացիների կողմից Երինջների դաշտ էր կոչւում: Այս դաշտում էր ժամանակին նահատակուել Մարկոս աւետարանիչը, մօտակայքում նրա անունով մի վկայարան-եկեղեցի էր կառուցուել, եւ այդտեղ էին գտնուում նաեւ Ալեքսանդրիայի հայրապետերի գերեզմանները: Դաշտ հասնելով՝ ս. Պետրոսը զինուորներին խնդրեց իրեն թոյլ տալ գնալու Մարկոս աւետարանչի գերեզմանը: Գնալով այնտեղ՝ հագաւ իր եպիսկոպոսական հագուստը եւ տապանը

գրկելով՝ երկար աղօթեց իր հօտի, Եկեղեցու խաղաղութեան եւ իր մօտեցող նահատակութեան յաջողութեան համար: Ողջունեց նաեւ միւս սրբերի՝ իրենից առաջ հովուած տասնհինգ հայրապետերի՝ այդտեղ գտնուող տապանները:

Առաւօտեան, երբ դեռ նոր էր լոյսը բացւում, սուրբը տեսաւ, որ մի ծեր մարդ, չոր կաշիներ բարձած, եւ մի պառաւ կոյս, կտաւներով բեռնաւորուած, գնում են քաղաք՝ իրենց ապրանքը վաճառելու: Հայրապետը կանչեց նրանց եւ հարցրեց.

- Քրիստոնեա՞յ էք:

Պատասխանեցին.

- Աստուծոյ կամքով:

Դարձեալ հարցրեց.

- Ո՞ւր էք գնում:

- Մեր ապրանքը վաճառելու,- պատասխանեցին:

- Աստուա՛ծ ուղարկեց ձեզ, Լոյսի՛ որդիներ,- ասաց հայրապետը:

Այս խօսքից յետոյ նրա դէմքը սկսեց լոյսի պէս փայլել, եւ ծերունիները հասկացան, որ նա իրենց եպիսկոպոսապետն է: Սուրբն ասաց նրանց.

- Մնացէ՛ք ինձ հետ:

- Ինչպէս կհրամայե՛ս, տէր, - պատասխանեցին ծերերը:

Այնուհետեւ հայրապետը ձայն տուեց զինուորներին ու ասաց.

- Մի՛ սպասէք այլեւս. արդէն լոյսը բացուել է, կատարէ՛ք ձեր թագաւորի հրամանը:

Եւ զինուորները նրան տարան Ս. Մարկոսի վկայարանի հարաւակողմը: Սուրբ Պետրոսն ասաց ծերունուն.

- Կաշիներդ ու կտաւներդ գետնի՛ն փռիր:

Ծերունին հրամանը կատարեց, սուրբը կանգնեց նրանց վրայ եւ դէպի արեւելք նայելով՝ երեք անգամ ծնրադրեց, խաչակնքուեց, նափորտը վրայից գցեց, իր պատուական պարանոցը մերկացրեց ու Քրիստոսի առաջ խոնարհեցրեց, ապա գլուխը պարզելով դէպի զինուորները՝ նրանց ասաց. «Կատարէ՛ք ձեզ հրամայուածը», իսկ ինքը ձեռքերը տարածելով՝ սկսեց աղօթել առ Աստուած: Եւ ահա երկնքից մի ձայն լսուեց.

- Պետրոսն է առաքեալներից առաջին, եւ Պետրոսն է ալեքսանդրացիներից վերջին մարտիրոսը. ե՛կ եւ հանգստացի՛ր Աստծուց քեզ համար պատրաստուած լոյսի բնակարանում:

Զինուորները, սուրբի սքանչելի համեստութիւնից ու հրեշտակային կերպարանքից պատկառելով, չէին համարձակւում սպանել հայրապետին: Այդ ժամանակ նրանք բոլորը մէկական դահեկան հաւաքեցին՝ տալու համար նրան, ով կկտրի սուրբի գլուխը, ինչն էլ արեց նրանցից մէկը՝ մի հարուածով հատելով այն: Այս գործողութիւնից անմիջապէս յետոյ, հայրապետի մարմինն այդտեղ թողնելով, զինուորները փախան, քանզի ժողովրդից վախենում էին: Եւ այդժամ մի հրաշք պատահեց. գլխատուած մարմինը, որն ընկած էր գետնին, յանկարծ կենդանի մարմնի պէս ծնկներին բարձրացաւ, ապա ելաւ կանգնեց ոտքերի վրայ: Հայրապետի նահատակութեան ականատես ծերերը սա տեսան եւ եկան պատմեցին քաղաքում: Լուրը հասաւ նաեւ բանտի դուռը պահպանող քաղաքացիներին: Ժողովրդի բազմութիւնը եկաւ-հասաւ նահատակութեան վայրը եւ մեծ կոծ արեց իր հայրապետի համար: Ոմանք, ձեռքերի մէջ առնելով նրա սուրբ գլուխը, համբուրում էին, ոմանք փաթաթուելով գրկում էին նրա մարմինը, ուրիշներ էլ գետնի վրայից հաւաքում էին սուրբի պատուական արիւնը: Ժողովրդի մէջ հակառակութիւն ծագեց սուրբի թաղման վայրի հետ կապուած: Ոմանք ասում էին, թէ պէտք է թաղել այդտեղ՝ սուրբ Մարկոսի ու միւս ալեքսանդրացի հովիւների գերեզմանների մօտ, իսկ ուրիշներ էլ առաջարկում էին նրա մարմինը տանել նահատակների գերեզմանատեղին, որը հէնց ինքը՝ հայրապետն էր կառուցել դրանից առաջ եղած մարտիրոսութիւնների ժամանակ: Յաղթեց այս վերջին առաջարկը, ուստի սուրբ մարմինն անմիջապէս նաւը դրեցին, քանզի նահատակութեան վայրը Նեղոսի ափին մօտ էր գտնւում, եւ հակադարձ ուղղութեամբ նաւելով դէպի Նեղոսի Փառոն կղզին՝ հասան նրա արեւմտեան կողմը: Սուրբի մարմինը նախ առան-տարան հայրապետական աթոռի իր եկեղեցին եւ եպիսկոպոսական հանդերձանքով զգեստաւորելով՝ նստեցրին ս. Մարկոսի աթոռին: Իր հայրապետութեան ամբողջ շրջանում ս. Պետրոսը երբեք չէր նստել այդ աթոռին, քանզի աթոռի վրայ փայլող լոյս էր տեսնում եւ չէր կարողանում այնտեղ նստել, այլ երբ կամենում էր իր ժողովրդին քարոզել, աստիճանով բարձրանում ու աթոռի պատուանդանի մօտ էր նստում: Իսկ ժողովուրդը, դրանից նեղուելով, տրտնջում էր ու աղաղակում. «Քո աթոռի՛ն նստիր, ո՛վ դու Աստուծոյ սուրբ»: Բայց նա մի կերպ համոզում էր ժողովրդին եւ հայրապետական աթոռին չէր նստում: Իր երէցներ Աքիւղասին ու Ալեքսանդրոսին մի անգամ առանձին ասել էր.

- Երբ մօտենում եմ աթոռին, լուսաւորուած Տիրոջն եմ տեսնում աթոռին նստած եւ չեմ համարձակւում մօտենալ Նրան, այլ սարսափելով դողում եմ, ինչպէս խուիլը՝ կրակից: Միեւնոյն ժամանակ ուրախութեամբ եմ լցւում, բայց չեմ իմանում, թէ ինչպէս վարուեմ ժողովրդի հետ, որ չգայթակղուի: Յաճախ նստում եմ պատուանդանի մօտ, ինչպէս եւ տեսնում էք, սակայն սրանով նոյնպէս յանդգնութիւն եմ գործում, եւ դա անում եմ ժողովրդի օգտի համար: Ուստի այսուհետ, երբ ժողովուրդն ինձ ստիպի հայրապետական աթոռին նստել, դուք նրանց աղաչելով լռեցրէ՛ք եւ ոչ թէ նրանց հետ միասին ինձ վտանգի ենթարկէք:

Ահա այս պատճառով էլ ողջ ժողովուրդը փափագում էր սուրբին իր աթոռին նստած տեսնել, բայց չէր տեսնում, ուստի նրա նահատակութիւնից յետոյ նրա մարմինը տարան-դրեցին նրան վայել աթոռին՝ հատուած գլուխը պարանոցի վրայ յարմարեցնելով: Իսկ նա, թէեւ գլխատուած, սակայն հրաշքով պարզեց իր շնորհաբաշխ աջը եւ ժողովրդին խաչակնքելով՝ ի լուր ամէնքի ասաց. «Տէրը ձեզ հե՛տ լինի»:

Այնուհետեւ քահանաները, սուրբ մարմինն իրենց ուսերին առնելով, օրհնութիւններ երգելով, խնկարկելով եւ մոմեր ու արմաւենու ճիւղեր բռնած, առան-տարան նրա կառուցած հանգստարանը եւ տեսակ-տեսակ խնկերով պատելով՝ մեծ պատուով գերեզման իջեցրին:

Ս. Պետրոսից յետոյ նրա աթոռին նստեց նրա աւագերէց Աքիւղասը, որին յաջորդեց Ալեքսանդրոսը՝ համաձայն սուրբի կանխասացութեան:

Սակայն Աքիւղասի օրերին աղուէսաբարոյ Արիոսը նենգութեամբ վերադարձաւ-մտաւ Եկեղեցու սպասաւորների շարքերը եւ Աքիւղասի կողմից քահանայ ձեռնադրուեց, իսկ Ալեքսանդրոս հայրապետի օրերին, դուրս հանելով սրտում մթերած չար մոլորութիւնը՝ ընդդէմ Աստուծոյ Բանի, մեծ պառակտում մտցրեց Եկեղեցու մէջ՝ ըստ ս. Պետրոս հայրապետի տեսիլքի: Այդ իսկ պատճառով 325 թուականին դատապարտուեց Նիկիոյ ս. ժողովում, ուր, ի թիւս մի շարք սուրբ հայրապետերի, յաղթականօրէն փայլեց Ալեքսանդրոս հայրապետի սարկաւագ ս. Աթանասը, ով դարձաւ Ալեքսանդրիայի յաջորդ հայրապետը եւ բազմատեսակ հալածանքների ենթարկուեց արիոսականների կողմից: Իսկ ս. Պետրոս հայրապետի ու մեծայաղթ վկայի նահատակութիւնը տեղի ունեցաւ Նիկիոյ ժողովից մօտ 15 տարի առաջ՝ 310-311 թթ.՝ իր հալածանքների իններորդ տարում, ալեքսանդրացիների հաթոր ամսուայ

29-ին, որը նոյեմբերի 25-ն է: Ս. Պետրոսի հայրապետութեան տարիները կազմում են 12 տարի, որոնցից միայն երեքն անցաւ խաղաղութեան մէջ, նրա լուսափայլ վարդապետութեամբ, իսկ մնացած ինը տարին անցաւ Քրիստոսի համար հալածանքների մէջ՝ թէ՛ իր աթոռի տարածքում, թէ՛ օտարութեան մէջ, մինչեւ որ կեանքն աւարտուեց փառաւոր նահատակութեամբ, եւ նա երկրից երկինք տեղափոխուեց:

Ս. Պետրոս հայրապետը գրել է ոչ սակաւ թուով կրօնական գործեր, որոնցից մեզ են հասել ապաշխարողներին ուղղուած նրա 15 իմաստուն կանոնները, ինչպէս նաեւ իր նրա գրուածքից հատուած՝ Քրիստոսի Աստուածութեան մասին, Զատկի ճառ, ալեքսանդրացիներին ուղղուած մի նամակ եւ այլն:

ՍՐԲՈՒՀԻ ՅՈՒՂԻՏԱՅԻ ԵՒ ՆՐԱ ՈՐԴՈՒ՝ ՍՈՒՐԲ ՄԱՆՈՒԿ ԿԻՐԱԿՈՍԻ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Երանելի Յուղիտան բարեպաշտ ու ազնուատոհմ մի կին էր թագաւորական ցեղից, Իսաւրացիների երկրի սահմանակցութեամբ գտնուող Լիկայոնիա գաւառի Իկոնիոն քաղաքից, եւ ապրում էր Դիոկղետիանոս կռապաշտ արքայի օրոք: Ամուսնու մահից յետոյ, այրիանալով, մնաց իր փոքր երեխայի՝ Կիրակոսի հետ: Անդադար բարեպաշտական գործերով էր զբաղւում ու ջերմեռանդ աղօթքներով դիմում Աստծուն՝ ցոյց տալու իր որդուն փրկութեան ճանապարհը, այլեւ անխափան կատարում էր սուրբերի յիշատակը:

Երբ սկսեցին փչել քրիստոնեաների դէմ Դիոկղետիանոսի կողմից յարուցուող հալածանքների դառնաշունչ քամիները, Տիրոջ շուրջ 303 թուականին Դիոկղետիանոսի հրամանով Լիկայոնիա նահանգի դատաւոր կարգուեց ոմն Դոմետիանոս՝ մի գազանաբարոյ մարդ, որ յոյժ կամակից էր սուրբերի արեան հեղմանը:

Այդ ժամանակ սրբուհի Յուղիտան վախեցաւ բնակուել իր հայրենիքում, քանզի ամէնքին յայտնի էր նրա եւ իր նշանաւոր տան քրիստոնեայ լինելը: Ուստի առաւելապէս հոգալով իր կայտառ ու դեռաբողբոջ երեքամեայ մանկան մասին, որ անօրէնների կողմից չյափշտակուի՝ թողեց իր ամբողջ ունեցուածքն ու խիստ մեծ հարստութիւնը եւ վերցնելով իր Կիրակոս որդուն ու միայն երկու նաժիշտների՝ հեռացաւ Իկոնիա քաղաքից եւ գնաց Սելեւկիա (որ նաեւ Սուլիկա է կոչւում)՝ Իսաւրիայի կամ սուրացիների մայրաքաղաքը: Սակայն տեսաւ, որ քրիստոնէական հաւատքի հալածանքի ալիքն այնտեղ էլ է հասել, քանզի Ալեքսանդրոս անունով ոմն դատաւոր արքունի հրամանով հասել էր այնտեղ՝ խոշտանգելու, չարչարելու եւ սպանելու բոլոր նրանց, ովքեր չէին կամենայ զոհել Ապոլոն կուռքին:

Յուղիտան, սա տեսնելով եւ յիշելով Աստուածաշնչում գրուած այն խօսքը, թէ՝ «Ինքներդ վրէժխնդիր մի՛ եղէք, սիրելինե՛ր, այլ թո՛յլ տուէք, որ Աստուծոյ բարկութիւնը կատարի այն» [Հռոմ. ԺԲ 19], որպէսզի յանկարծ անօրէնների ձեռքը չընկնի, այստեղից էլ խոյս տալով՝ գնաց Կիլիկիայի Տարսոն քաղաքը, ուր կարծում էր, թէ անծանօթ

լինելու պատճառով խաղաղութիւն կը վայելի: Մի քանի օր յետոյ Ալեքսանդրոս դատաւորը նոյնպէս հասաւ այստեղ եւ, իր ծառաների ու մատնիչների միջոցով որոնելով քրիստոնեաներին, սկսեց դաժանաբար նեղել ու սաստիկ տանջել նրանց:

Տարսոնի քաղաքացիները, տեսնելով ազնուատոհմ Յուդիտային ու նրա պարկեշտ կենցաղավարութիւնը, հարցուփորձի միջոցով պարզեցին, որ նա թագաւորական ցեղից է եւ նշանաւոր տնից: Բայց երբ իմացան, որ հաւատքով քրիստոնեայ է, քանզի նրա մասին վկայում էր նրա երկիւղած ու համեստ վարքը, նրան բռնեցին ու տարան Ալեքսանդրոս դատաւորի մօտ: Այդ ժամանակ նրա մօտ էին գտնւում նաեւ երկու նաժիշտները, որոնք տեսնելով, որ կռապաշտներն իրենց տիկնոջը բռնեցին՝ թողեցին նրան ու փախան եւ հեռւում կանգնած դիտում էին՝ տեսնելու, թէ ինչ են անելու նրան:

Երբ Յուդիտան, գեղեցիկ մանուկը՝ Աստծուց կանչուած մարտիրոս Կիրակոսը գրկին, զինուորների կողմից բերուեց դատաւորի առաջ, դատաւորը հարցրեց.

- Ո՞վ ես դու, տիկի՛ն: Ի՞նչ կրօնի ես պատկանում, անունդ ի՞նչ է, ո՞ր երկրից ես եւ ի՞նչ կեանք ես ապրել:

- Ես քրիստոնեայ եմ,- միայն քրիստոնեայ անունը տալով՝ համարձակ պատասխանեց երանելի կինը,- եւ իմ քրիստոնէական հաւատքի համար թողնելով իմ մեծ հարստութիւնը՝ անշարժ ու շարժական ունեցուածքը, նաեւ ազգականներիս ու ծանօթներիս, որպէս պանդուխտ՝ մանկանս հետ եկել եմ օտար երկիր, որպէսզի քրիստոնէական հաւատքս չկորցնեմ:

Դատաւորը նրա անվեհեր պատասխանից բարկանալով՝ հրամայեց մանկանը խլել նրա ձեռքից եւ իր մօտ բերել: Ապա սկսեց յոյժ սաստելով սպառնալ երանելի Յուդիտային, որ իր հաւատքն ուրանայ: Բայց նա աներկիւղ դաւանեց Քրիստոսին որպէս Աստուծոյ եւ յանդիմանեց հեթանոսական սին կռապաշտութիւնը՝ յօժարակամ յանձն առնելով մեռնել յանուն Տիրոջ: Այդ ժամանակ դատաւորը հրամայեց դալար ճիպոտներով գանահարել նրան: Մանուկ Կիրակոսը, նայելով, թէ ինչպէս են դառը տանջանքներ պատճառելով ծեծում իր մօրը, ողբագին լալիս էր: Երանելի մայրն էլ, իր ցաւերը մոռացած, մեծ տրտմութեամբ ու կսկիծով նրան էր նայում եւ ի սրտէ գոչում առ Աստուած՝ ողորմելու իր մանկանը: Իսկ վերջինս, քանի որ մօր բերանից լսում էր տանջանքի ենթարկման ընթացքում հնչող «Քրիստոնեա՛յ եմ եւ Տէր Յիսուսի՛ն եմ պաշտում» բառերը, ինքն էլ էր քաղցր ձայնով, աղաւնու նման, կրկնում մօր խօսքերը. «Քրիստոնեա՛յ եմ եւ Տէր Յիսուսի՛ն եմ պաշտում»:

Դահիճները սկսեցին է՛լ առաւել դաժանաբար հարուածել երանելի կնոջը: Բայց նա ոչինչ չէր ասում, այլ միայն մեծ համարձակութեամբ վերստին ու վերստին գոչում էր՝ քրիստոնեա՛յ եմ՝ անշունչ մէկի պէս ընդունելով հարուածների պատճառած ողջ չարչարանքը: Մանուկ Կիրակոսն էլ էր շարունակ կրկնում մօր խօսքերը: Եւ դատաւորը, մանկանն իր գիրկն առնելով, սկսեց գգուել ու համոզել, որ լաց չլինի՝ կամենալով համբուրել նրա գեղեցիկ երեսը: Բայց մանուկը դարձեալ իր մօրն էր նայում, անհանգիստ շարժումներով ու աքացիներով աւելի ու աւելի նեղելով իշխանին՝ երեսը շրջում նրանից եւ ձեռքերով հրում, որպէսզի ազատուի նրա գրկից ու մօր մօտ գնայ: Դատաւորը չէր թողնում, եւ մանուկը եղունգներով ճանկռում էր նրա երեսը եւ մօրուքից քաշում: Դատաւորը հարցրեց. «Ի՞նչ է պատահել, ի՞նչ ես ուզում»: Իսկ մանուկն, ի պատասխան, քաղցրաձայն տատրակի ձագուկի պէս բնից իր մօր ձայնին հետեւելով, մօր բերանից ելածն էր նորից կրկնում՝ ասելով. «Ես էլ իմ մայրիկի պէս քրիստոնեայ եմ»:

Ի վերջոյ գգուանքը կատաղութեան փոխելով՝ մոլեգնած դատաւորը բռնեց մանկան ոտքերից ու բեմից՝ իր գահի աստիճանավանդակի վրայից, գետին զարկեց նրան՝ աստիճաններով ներքեւ գլորելով: Ամենայաղթ վկայ սուրբ Կիրակոսի գլուխը մի քարի խփուեց ու ճեղքուեց, ուղեղը ցրիւ եկաւ, եւ սուրբ արիւնը տարածուեց ատեանի յատակին: Տիրոջ հրեշտակն այդ անմեղ մանկան մաքուր հոգին աւանդեց Աստուծոյ ձեռքը:

Թէեւ այս ամէնը տեղի ունեցաւ առաքինի մօր աչքի առաջ, եւ մայրական սիրոյ պատճառով գալարւում էին նրա աղիքները, սակայն սրտում անպատմելի ուրախութիւն էր ապրում որդու մարտիրոսանալու համար՝ մեծ գոհութեամբ փառք տալով Աստծուն.

- Փա՛ռք Քեզ, Տէ՛ր իմ Յիսուս, որ նախահրաւէր կոչմամբ ընդունեցիր իմ որդեակին՝ որովայնիս պտղին՝ նրա թափած վարդագոյն արեան փոխարէն նրան անթառամ վարդերով պսակելով: Գոհանում եմ Քեզանից, Քրիստո՛ս, որ որդուս արժանի դարձրիր Քո սուրբ անուան համար մեռնելու եւ երկնային պսակներին հասնելու:

Դատաւորն այս լսելով՝ զարմացաւ, եւ է՛լ աւելի մոլեգնած, հրամայեց կախել Յուդիտային ու մարմինը սաստիկ քերել: Անողորմ դա-

հիճները երկաթեայ քերիչներով քերեցին նրա մարմինը՝ սկսած պարանոցից մինչեւ գօտկատեղը: Մսերը քրքրուեցին-թափուեցին՝ բացելով ոսկորները, բայց երանելի կինը չարչարանքի մէջ իրեն քարի պէս ամուր էր պահում եւ ուրախութեամբ գոհանում Աստծուց:

Տեսնելով նրա աքանչելի արիութիւնը՝ դատաւորը հրամայեց նրա տանջանքներն առաւե՛լ սաստկացնել: Կաթսաների մէջ ձէթ ու նաւթ եռացնելով՝ լցրին նրա իրանի ու ոտքերի վրայ: Դատաւորի հրամանով սպասաւորներից մէկն աղաղակելով ասում էր սրբուհուն.

- Գթա՛ ինքդ քեզ, զոհի՛ր կուռքերին եւ կ՚ազատուես տանջանքներից ու որդուդ նման չարաչար կերպով չես մեռնի:

Իսկ Քրիստոսի սուրբ աղախինը տղամարդկային քաջութեամբ ասաց.

- Ես դեւերին ու անշունչ տարրերին չե՛մ զոհում: Քանզի Քրիստոսի՛ ծառան եմ ես եւ հաւատում եմ Աստուծոյ Միածին Որդուն՝ բոլոր արարածների Արարչին, Տէր Աստծուն՝ ամենակալ Հօրը, եւ Սուրբ Հոգուն, որ առաջնորդեց մեզ այս նահատակութեանը եւ իմ որդեակ Կիրակոսին արժանացրեց մարտիրոսական մահուան: Ես նոյնպէս նրան եմ հետեւում, որպէսզի նրա հետ միասին երկնքի արքայութեան ժառանգորդ լինեմ ի Քրիստոս Յիսուս:

Երբ դատաւորը վերջնականապէս համոզուեց, որ չի կարող յաղթահարել երանելի կնոջ համբերութիւնն ու մտքի անսասանութիւնը ու չի կարող լռեցնել Քրիստոսին խոստովանելուց, առիւծի նման մռնչաց բարկութեամբ եւ մահուան վճիռ կայացրեց:

Դահիճները, Յուղիտայի բերանին դնչկալ դնելով ու նրան չղթաների մէջ առնելով, տարան մահապատժի վայրը: Տեղ հասնելով՝ Յուղիտան դահիճներից թոյլտուութիւն խնդրեց փոքր-ինչ աղօթելու եւ այն ստանալով՝ ծնկի եկաւ ու աղօթեց այսպէս.

- Շնորհակա՛լ եմ Քեզանից, Քրիստոս Աստուա՛ծ իմ, որ ինձնից առաջ Քեզ մօտ կանչեցիր որդուս եւ արժանացրիր, Քո սուրբ անուան համար այս առժամանակեայ կեանքը թողնելով, ժառանգելու յաւիտենական կեանքն ու անպատում բարիքները: Այժմ էլ սուրբ որդեակիս հետ ի՛նձ՝ քո աղախնի՛ն արժանացրու այդ մեծ պարգեւին, որպէսզի իմաստուն կոյսերի շարքում մասնակցեմ անապական ու անանց Քո հարսանիքին՝ ժառանգելու յաւիտենական ուրախութիւնը եւ Քեզ սիրողների ու Քո սուրբ Մօր ու Աղախնի հետ օրհնելու ամենակալ Հօրդ, համազօր Որդուդ եւ կենդանարար Սուրբ Հոգուդ. ամէն:

Երբ աղօթքն աւարտեց, դահիճը սուրը պատեանից իսկոյն հանելով՝ երանելու գլուխը հատեց: Ահա այսպէս նահատակուեց Քրիստոսի քաջ վկայուհին՝ երանելի Յուղիտան, իր երջանիկ որդուց՝ Կիրակոսից յետոյ, Տիրոջ 304 կամ 305 թուականի յուլիսի 15-ին: Նրանց պատուական մարմինները դատաւորը հրամայեց գցել քաղաքից դուրս՝ այնտեղ, ուր գցում էին մահապատժի ենթարկուածների դիակները: Սակայն յաջորդ օրը՝ լուսանալուց առաջ, գիշերային լռութեան մէջ, եկան Յուղիտայի երկու նաժիշտները, վերցրին մօր ու մանկան մարմինները եւ գաղտնաբար տարան-դրեցին Տարսոն քաղաքից դուրս գտնուող մի քարանձաւի մէջ:

Անցաւ մի քանի տարի. բարեպաշտ ինքնակալ Կոստանդիանոսի օրօք սուրբերի նշխարները գտնուեցին: Նրանք դեռեւս անապական վիճակում էին եւ նրանցից անուշահոտութիւն էր բուրում. իսկ հաւատքով մերձեցողները բժշկւում էին ի փառս Աստուծոյ:

Սուրբ Կիրակոսի եւ նրա մայր Յուղիտայի յիշատակը Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին տօնում է Վարդավառի չորրորդ կիրակիին յաջորդող երկուշաբթի օրը:

ՍՈՒՐԲ ՍԵՐԱՊԻՈՆ ԾԵՐԻ ՎԱՐՔԸ

Սերապիոնը աստուածավախ եւ ազնուական մարդ էր, որ միայնակեաց դարձաւ: Աստուած յաջողում էր նրա բոլոր գործերը: Նա հագնում էր անթեւ վերարկուատիպ հագուստ, կարդալ չգիտէր, բայց խօսելիս բոլոր գրքերը պատկերաւոր պատմում էր: Աղքատութեան պատճառով իր համար խրճիթ չէր կարողացել շինել եւ անմարմնի պէս էր շրջում եգիպտացիների երկրում:

Արդ, երանելի Մակարը նրա մասին մեզ պատմեց հետեւեալը. թէ՝ նա գնաց Ալեքսանդրիա, երկու տարի քսան դահեկանով ծառայեց երկու հեթանոս փողահարների մօտ եւ նրանց դարձրեց քրիստոնէական հաւատքին: Նրանց մկրտելուց յետոյ վերադարձրեց նրանց քսան դահեկանը, իսկ փողահարները նրան խնդրեցին այն տալ աղքատներին՝ ասելով. «Զէ՞ որ դա եղաւ մեր փրկութեան առիթը»: Նա ասաց. «Ձերն է, դուք էլ տուէք: Ես միայնակեաց էի, ձեզ մոլորուած տեսայ, խղճացի, եւ Աստուած ձեզ դէպի Իրեն դարձրեց: Այժմ թո՛յլ տուէք ինձ ուրիշ տեղ գնալ՝ շահելու այլ մէկի»: Եւ նրանք ասացին. «Գոնէ տարին մէկ անգամ եկ մեզ մօտ, հայրի՛կ, որ տեսնենք քեզ»:

Սուրբն այնտեղից իջաւ Աթէնք՝ իր հետ չվերցնելով ո՛չ հաց, ո՛չ կերակուր, ո՛չ գաւազան, այլ միայն իր ունեցած մէկ պարեգօտը: Քաղաք մտնելով՝ աղաղակեց եւ ասաց. «Աթենացի՛ այրեր, օգնեցէ՛ք ինձ»: Երբ հարցրին, թէ՝ «Ի՞նչ է պատահել, ո՞վ ես դու, եւ ի՞նչ է քեզ պէտք», նա ասաց. «Եգիպտացի միայնակեաց եմ, երեք խորհուրդներ ելան ինձ վրայ, եւ ես չկարողացայ դրանց պարտքը հատուցել»: Նրանք հարցրին. «Ո՞ւր են դրանք, որ նեղում են քեզ, ցո՛յց տուր մեզ, եւ մենք կ՚օգնենք քեզ»: Եւ ծերն ասաց. «Մանկուց ինձ նեղեց արծաթասիրութիւնը, սակայն արծաթ չունէի, որ պոռնկութեան տայի այն: Ոսկի չունեմ, որ թօթափուեմ որկրամոլութիւնից՝ հաց գնեմ եւ ուտեմ: Երեք օր է՝ ոչինչ չեմ կերել, եւ քաղցը չար պարտապանի նման շատ է նեղում իմ անձը, եւ եթէ նրան չկերակրեմ, թոյլ չի տայ ապրել»: Փիլիսոփաներից ոմանք, իմանալով եղելութիւնը, նրան մէկ դահեկան տուեցին: Նա, վերցնելով այն, հացավաճառից մէկ հաց գնեց, այնտեղից հեռացաւ եւ այլեւս չվերադարձաւ: Այնժամ փիլիսոփաները հասկացան, որ նա՛ իրօք Աստուծոյ այր էր եւ միայնակեաց: Իսկ սուրբ

ծերը եկաւ Զուկային քաղաք, ուր հանդիպեց ոմն մանիքեցի հարուստի. երանելին ծառայութեան մտաւ նրա մօտ եւ երեք տարի յետոյ նրան ու նրա ամբողջ ընտանիքը դարձրեց ճշմարիտ հաւատքի եւ մկրտեց նրանց: Տասնհինգ օր անց Հռոմ գնալու համար իջաւ ծովեզերք եւ նաւ նստեց: Նաւորդները կարծեցին, թէ նա ունի ճանապարհի պաշար, եւ երբ երեկոյացաւ, նրան հարցրին. «Ինչո՞ւ ոչինչ չես ուտում, հայրի՛կ»: Ծերը պատասխանեց. «Որովհետեւ ոչինչ չունեմ»: Նաւորդները հարցրին. «Հապա ինչո՞ւ ես նաւ մտել»: Նա ասաց. «Եթէ ձեր նաւին որեւէ վնաս պատճառեմ, վերադարձրէ՛ք ինձ այնտեղ, որտեղից վերցրեցիք»: Փնտրեցին, թէ ով էր նրան նաւ թողել եւ չգտնելով՝ կերակրեցին նրան եւ տարան Հռոմ: Ծերը, քաղաք մտնելով, գտաւ Դոմնոսի աշակերտին, որի գերեզմանի վրայ մինչեւ այսօր էլ բժշկութիւններ են լինում, եւ հարցրեց, թէ այդտեղ որեւէ տեղում արգելափակուած կոյս կա՞յ արդեօք: Նա ցոյց տուեց քսանհինգ տարի ոչ ոքի չտեսած մի կոյսի դուռ: Ծերը եկաւ, նստեց նրա դռան մօտ, նրա մօտ ուղարկեց մի [աղջկայ] ասելով. «Մտիր եւ ասա՛, թէ մի միայնակեաց կամենում է տեսնել քեզ»: Սակայն նա պատասխան չբերեց նրան. երեք օր դռան մօտ մնալուց յետոյ աղջկան ասաց. «Մտիր եւ ասա՛, թէ Աստուած է ինձ ուղարկել իր մօտ»: Այնժամ կոյսն ասաց. «Նրան բերէք այստեղ»: Ներս մտնելով՝ աղօթեցին, ապա ծերն ասաց կոյսին. «Ինչո՞ւ ես այստեղ մնում»: Կոյսն ասաց. «Ջեմ մնում, այլ գնում եմ»: Ծերն ասաց. «Ո՞ւր ես գնում»: Կոյսն ասաց. «Իմ Աստուծոյ մօտ»: Ծերը հարցրեց. «Կենդանի՞ ես, թէ՞ մեռած»: Կոյսը պատասխանեց. «Այս աշխարհի համար մեռած եմ»: Ծերն ասաց. «Ի՞նձ ես հաճոյանում, թէ՞ Աստծուն, որ քեզ մեռած ես ասում: Այժմ արա՛, ինչ որ քեզ կ՚ասեմ՝ վե՛ր կաց, գնա՛ եկեղեցի, եւ թող մարդիկ տեսնեն քեզ»: Կոյսն ասաց. «Քսանհինգ տարի է՝ ինձ ոչ ոք չի տեսել, այժմ տեսնելով՝ ի՞նչ կ՚ասեն»: Ծերն ասում է. «Վա՛հ, մի՞թէ չասացիր, թէ մեռած ես, իսկ մեռածը աշխարհի բաները չի իմանում»: Երբ այս խօսքերը լսեց ծերից, դուրս ելաւ եւ եկեղեցի գնաց: Ծերը գնաց, նրան գտաւ եկեղեցու դռան մօտ եւ ասաց. «Եթէ իրօք մեռած ես, արա՛ այն, ինչ կ՚ասեմ»: Կոյսն ասաց. «Ասա՛, հայր իմ»: Ծերն ասաց. «Մերկանանք ես եւ դու, մեր հագուստները դնենք մեր ուսերին եւ ամբողջ քաղաքով գնանք-գանք. ես՝ առջեւից, դու՝ յետեւից»: Կոյսն ասաց. «Եթէ այդպէս անենք, մարդիկ կ՚ասեն, թէ դիւահար ենք, քանզի ամօթ է»: Ծերն ասաց. «Զասացի՞ր, թէ մեռած ես, իսկ մեռածին ի՞նչ ամօթ»: Կոյսն ասաց.

«Աղաչո՛ւմ եմ քեզ, Քրիստոսի ճշմարի՛տ ծառայ, բացի դրանից ինչ որ ասես, կ՚անեմ»: Այդ ժամանակ ծերն ասաց. «Տե՛ս, մի՛ գոռոզանա, քանի որ չես մեռել աշխարհի համար, այլ կենդանի ես»: Եւ կոյսը նրանից խոնարհութիւն սովորեց: Իսկ ծերն այնտեղից Ալեքսանդրիա վերադարձաւ:

Նա փոքրիկ Աւետարան ունէր. երբ տեսաւ մէկին, որ խրուած էր պարտքերի մէջ, վաճառեց Աւետարանը, տուեց նրա պարտքերը եւ ազատեց նրան: Դրանից առաջ, տեսնելով մի մերկ աղքատի, որը կուչ էր եկել ցրտից, հանել էր իր պարեգօտը եւ տուել նրան: Եւ երբ ճանապարհի խաղաղութիւնը պահպանողը տեսաւ նրան եւ հարցրեց, թէ՝ «Ո՞վ քեզ մերկացրեց, հայրի՛կ», նա, հանելով Աւետարանը, ասաց. «Սա՛ մերկացրեց ինձ»: Ապա վաճառեց նաեւ Աւետարանը: Երբ եկաւ իր խուցը, նրա Զաքարիա աշակերտը հարցրեց նրան. «Հա՛յր, ո՞ւր է քո պարեգօտը», ասաց նրան. «Որդեա՛կ, ուղարկեցի այնտեղ, ուր մեզ պէտք է»: Ապա հարցրեց. «Ո՞ւր է փոքրիկ Աւետարանը»: Նա ասաց. «Ով ինձ ասում էր՝ «Վաճառի՛ր քո ունեցուածքը եւ տո՛ւր աղքատներին», վաճառեցի եւ Նրան տուեցի, որպէսզի համարձակ լինենք այնտեղ»:

Վաթսունեօթ տարի նա ապրեց անապատում եւ հինգ տարի՝ իր հօրեղբօր մօտ: Նրան շատ անգամ էին տեսնում գիւղից դուրս նստած լաց լինելիս: Երբ հարցնում էին պատճառը, նա պատասխանում էր. «Իմ Տէրն ինձ տուեց Իր գանձը, իսկ ես կորցրի այն, արդ չարով տանջելու է ինձ»: Իսկ մարդիկ նրան հաց էին գցում՝ ասելով. «Վերցրո՛ւ, եղբայր, կե՛ր, եւ այն գանձը, որ կորցրիր, թող Աստուած քեզ տայ»: Եւ նա ասում էր՝ ամէն:

Նա սուրբ Մակարի աշակերտն է եղել եւ շատ աւելի բարի գործեր է կատարել, քան այլ միայնակեացներ: Երեք տարի ոտքի վրայ մնաց եւ երկու տարի յարկի տակ չմտաւ: Վախճանուեց Սկիւթում՝ իր աշակերտ Զաքարիայի խցում՝ ի փառս Քրիստոսի:

ՅԱՆՈՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԿԱՄԱՒՈՐ ԱՂՔԱՏԱՅԱԾ ԱՍՏՈՒԾՈՅ ԱՅՐԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ, ՈՒՄ ԱՆՈՒՆՆ Է ԱԼԵՔՍԻՈՍ

Հռոմ քաղաքում Եփիմիանոս անունով մի շատ հարուստ եւ ազնուական մարդ էր ապրում, որ փառաւոր եւ մեծ իշխան էր Մեծն Թէոդոսի որդիների՝ Արկադէոս եւ Ոնորիոս թագաւորների օրօք: Նրա կնոջ անունն էր Ախլայիս: Նրանք շատ աղքատասէր էին. յաճախ էին օտարներին ու պանդուխտներին ժողովում իրենց յարկի տակ, կերակրում, հագցնում: Պահքով ու աղօթքով նրանք հանապազ խնդրում էին Աստծուն իրենց զաւակ տալ: Աստուած լսեց նրանց աղօթքները. Ախլայիսը յղիացաւ եւ ծնեց որդի: Երբ Եփիմիանոսին յայտնեցին ուրախ լուրը, նա փառք տուեց Աստծուն եւ մանկանն անուանեց Ալեքսիոս: Եւ երբ մանուկը մեծացաւ, նրան աստուածպաշտութեան ուսման տուեցին, մինչեւ չափահաս եւ երկիւղած այր դարձաւ: Մնողները որոշեցին նրան ամուսնացնել Հռոմի մեծամեծերից մէկի դստեր հետ: Երբ աւարտեցին հարսանիքի պատրաստութիւնը, եւ քաղաքի բազմութիւնը մտնում էր հարսանիքի, Ալեքսիոսը հարսանեաց յարկից փախաւ մէկ այլ տուն: Երբ նրա հօրն ասացին այդ մասին, նա վեր կացաւ եւ գնաց այնտեղ, ուր Ալեքսիոսն էր գտնւում, եւ ասաց նրան. «Ինչո՞ւ եկար այստեղ, որդեա՛կ, վե՛ր կաց, գնա՛ կնոջդ մօտ, խօսի՛ր նրա հետ եւ ուրախացի՛ր»: Եւ բռնելով նրա ձեռքից՝ տարաւ կնոջ մօտ: Երբ Ասլեքսիոսը տեսաւ իր կնոջը, ասաց. «Խաղաղութի՛ւն քեզ, երկնքի Արքայ Քրիստոսի՛ հարս»: Կինը պատասխանեց. «Աստուծոյ ողորմութիւնը թող մնայ քեզ հետ, Քրիստոսի՛ փեսայ»: Եւ նստեցին իրար մօտ: Ալեքսիոսը զարմացաւ կնոջից լսած պատասխանից եւ, նայելով նրա ոսկեայ զարդերին, գեղեցկութեանն ու վայելչութեանը, մտքում ասաց. «Սրա տեսքը երկրաւոր հարստութեան պատրանքն է. ինչպէ՞ս պիտի կարողանանք փրկուել դատաստանի մեծ Օրը, երբ Տէրը գայ Հօր փառքով եւ հրեշտակներով՝ դատելու ամբողջ աշխարհը»: Ապա հանեց իր ոսկեայ մատանին, տուեց կնոջն ու ասաց. «Խաղաղութի՛ւն քեզ, Քրիստոսը թող քեզ հետ մնայ, մինչեւ տեսնեմ քեզ անմահ Արքայ Քրիստոսի աջ կողմում»: Եւ ելնելով պալատի փոքր դռնից՝ գաղտնի հեռացաւ:

Մինչ նրա հայրն ու մայրը կարծում էին, թէ նա սենեակում է, նա հասաւ ծովեզը, գտաւ մի նաւ եւ եկաւ մի քաղաք, որը կոչւում է Լատիկ: Վաճառեց թագաւորական հանդերձները եւ ինչ որ ունէր, բաժանեց աղքատներին, աղքատի զգեստ հագաւ եւ այնտեղից գնաց մի քաղաք, որ կոչւում է Ուռհա: Գալով եկեղեցու դռան մօտ՝ մտքում ասաց. «Կենդանի՛ է Աստուած՝ երկնքի ու երկրի Տէրը, որ չեմ մտնի եկեղեցի, մինչեւ չիմանամ՝ արդեօք Աստուած ներո՞ւմ է իմ յանցանքները»: Այնտեղ մնաց աղքատների հետ. ամէն օր կերակուր էր խնդրում եկեղեցու սպասաւորներից եւ գիշեր ու ցերեկ անդադար ճգնում էր պահքով ու աղօթքով: Նրա ճաշակած կերակուրը ընդամէնը տասներկու դրամակշիռ էր, իսկ դրանից աւելին բաժանում էր իր հետ եղած աղքատներին՝ բաժին չթողնելով միւս օրուայ համար:

Իսկ հայրը, երբ իմացաւ, որ իր որդին հարսանիքում չէ, յոյժ տրտմեց եւ սկսեց նրան փնտռել քաղաքում, բայց չգտնելով՝ սգի մէջ մտաւ. դառնապէս լաց եղաւ, կանչեց իր ծառաներին, որ մօտ չորս հազար հոգի էին, ազատութիւն պարգեւեց եւ բազում գանձեր տալով՝ ասաց. «Շրջէ՛ք ամբողջ երկրում եւ փնտռէ՛ք իմ որդուն. թերեւս Աստուած ինձ ետ տայ նրան»: Եւ ծառաներն իրենց տիրոջ հրամանով գնացին՝ փնտռելու նրան: Նրանցից երկուսը հասան Ուռհա, որտեղ գտնւում էր Ալեքսիոսը: Պատահեց, որ ծառաները մտան եկեղեցի, աղօթեցին եւ, դուրս գալով, աղքատներին բաշխեցին ինչ որ ունէին, որպէսզի թերեւս ճանաչեն նրան աղքատների մէջ: Ալեքսիոսը պարզեց իր ձեռքը եւ ուրիշ աղքատների հետ ողորմութիւն ստացաւ: Նա ճանաչեց ծառաներին, բայց վերջիններս նրան չճանաչեցին, քանի որ Քրիստոսի անուան համար մեծ ճգնութիւնների պատճառով նրա գեղեցիկ տեսքը փոխուել էր: Երբ ողորմութիւն ստացաւ իրենց ծառաներից, ասաց. «Գոհանում եմ Քեզնից, Տէ՛ր, Հա՛յր երկնքի եւ երկրի, որ ինձ՝ Քո ծառային, որ աղքատացել եմ Քո սուրբ անուան համար, արժանացրիր ողորմութիւն ստանալու իմ եւ իմ հօր ծառաների ձեռքից»:

Ծառաները վերադարձան իրենց տիրոջ մօտ եւ ասացին. «Շրջեցինք ամբողջ աշխարհով եւ չգտանք Ալեքսիոսին»: Եփիմիանոսը փառք տուեց Աստծուն եւ ասաց. «Տէրը տուեց եւ Տէրը վերցրեց, թող օրհնեա՛լ լինի Տիրոջ անունը»: Իսկ նրա կինը, իմանալով, որ չի գտնուել իր որդին, դառնապէս լաց եղաւ, մոխիր սփռեց գետնին, նստեց վրան, բացեց ճանապարհին նայող պատուհանը եւ ասաց. «Կենդանի՛ է Տէրը, որ չեմ ելնի այստեղից, մինչեւ չտեսնեմ իմ որդուն»: Իսկ Ալեքսիոսի

այրի կինը, մտնելով տան մի խաւար անկիւն, ասաց. «Չեմ ելնի այստեղից, մինչեւ Տիրոջից ողորմութիւն չգտնեմ եւ չտեսնեմ իմ տիրոջ եւ զուգակցի երեսը»: Ահա այսպիսի ուխտ արեցին նրանք:

Իսկ Ալեքսիոսը բազում ճգնութիւններով տասնհինգ տարի մնաց Ուռհա քաղաքում, ապրեց պահքի եւ աղօթքի մէջ՝ գիշեր եւ ցերեկ անդադար սաղմոսելով: Մի օր այդ եկեղեցու քահանան տեսիլք տեսաւ, որպէս թէ սուրբ Կոյս Մարիամն ասում էր իրեն. «Ելի՛ր, տե՛ս եկեղեցու դռան մօտ այն Աստուծոյ այրին եւ բե՛ր նրան եկեղեցի, որովհետեւ Տիրոջ առջեւ լսելի եղան նրա աղօթքները, եւ նրա ճգնութիւնն անուշահոտութեան պէս բուրեց Աստուծոյ առջեւ»: Քահանան դուրս ելաւ՝ փնտռելու Աստուծոյ այրին, սակայն բազմութեան պատճառով չկարողացաւ գտնել նրան եւ վերադառնալով եկեղեցի՝ խնդրեց Աստծուն յայտնել տեղը: Եւ երկրորդ անգամ տեսիլք տեսաւ, որի մէջ ասւում էր իրեն. «Աստուծոյ այրը փոքր դռան մօտ է»: Երբ լուսացաւ, քահանան նրան գտաւ այնտեղ եւ ասաց. «Վե՛ր կաց, մտի՛ր եկեղեցի, Աստո՛ւծոյ սուրբ, որովհետեւ քո աղօթքները լսելի են եղել Տիրոջ առջեւ»: Իսկ սուրբն ասաց. «Մեղա՛յ Աստուծոյ, Տէրը քեզ ինձ մօտ չի ուղարկել. չգիտե՞ս, որ ես այստեղի աղքատներից մէկն եմ»: Քահանան ասաց. «Ես հաստատապէս իմացել եմ, որ դու ես նա, ում մօտ ուղարկեց ինձ Տէրը»: Աստուծոյ սուրբը վեր կացաւ, մտաւ եկեղեցի եւ քահանայի հետ միասին աղօթեց. իսկ երբ աղօթքը վերջացրին, քահանան ասաց նրան. «Ես քեզ խնդրանք ունեմ, որ պիտի կատարես»: Սուրբն ասաց. «Կ՚անեմ, ինչ որ հրամայես»: Քահանան ասաց. «Այստե՛ղ մնա, մինչեւ մի քիչ կերակուր բերեմ իմ տնից, որ ուտես, եւ զօրանայ քո անձը»: Սուրբը համաձայնեց, սակայն մինչ քահանան գնում էր իր տուն, մտքում ասաց. «Հիմա բոլորը կ՚իմանան, ինչ որ յայտնուել է քահանային, կը հաւաքուեն ինձ մօտ, եւ կը կտրուեմ իմ աղօթքից: Վեր կենամ գնամ Տարսոն՝ Պօղոս առաքեալի քաղաքը, եւ այնտեղ բնակուեմ»: Եւ մինչեւ քահանայի վերադարձը դուրս ելաւ եկեղեցուց, գնաց ծովեզը եւ տեսաւ մի նաւ, որը գնում էր Տարսոն: Ալեքսիոսը խնդրեց, որ իրեն էլ վերցնեն իրենց հետ: Նաւորդները համաձայնեցին, եւ նա մտաւ նաւ: Սակայն երբ նաւում էին, ծովում սաստիկ քամի բարձրացաւ՝ մթնեցնելով Աստուծոյ լոյսը եւ խաւարով շրջապատելով նաւում գտնուողներին: Քամին բռնի վարեց նաւը եւ երեք օր յետոյ Հռոմ հանեց: Երբ խաւարը փարատուեց, եւ քամին դադարեց, Աստուծոյ այրը տեսաւ, որ իրենք Հռոմում են եւ նաւավա-

րին խնդրեց, որ իրեն ափ հանի այդտեղ: Եւ Աստուծոյ կամքով հանեցին նրան: Երբ նա դուրս ելաւ, իր մտքում ասաց. «Կենդանի՛ է Տէրը, որ այլ տեղ կամ այլ մէկի մօտ չեմ գնայ, այլ կը գնամ իմ Հօր մօտ, կը մնամ նրա դռների մօտ, բայց այնպէս, որ նա չիմանայ, թէ իր որդին եմ եւ վերադարձել եմ»: Եւ աղքատի կերպարանքով նստեց պալատի մօտ, տեսաւ իր Հօրը՝ բազում գործերով զբաղուած, եւ վեր կենալով՝ ընդառաջ ելաւ նրան, երկրպագեց ու ասաց. «Թող Տէր Աստուած օրհնի քեզ, թող կատարի քո խնդրուածքները, եւ օրհնեալ լինես սերնդից սերունդ»: Ապա շարունակեց. «Օտարական եմ, չգիտեմ այս քաղաքը եւ ապրուստ չունեմ, վերցրո՛ւ ինձ քո յարկի տակ, թո՛յլ տուր, որ ապրեմ այստեղ, եւ ինչ որ ծախսես ինձ համար, ամէն ինչի Արարչից փոխարէնը կը ստանաս երկնքի արքայութեան մէջ»: Երբ թագաւորը լսեց այս, յիշեց իր որդու հեռանալը եւ չկարողացաւ հանդարտուել, դառնապէս լաց եղաւ եւ հրամայեց նրան տանել իր տուն: Ապա ծառաներին հարցեց, թէ ով կը ծառայի այդ աղքատին: Ծառաներից մէկը մօտենալով՝ ասաց. «Ես կը ծառայեմ նրան». նա ինքն էր մանկուց սնուցել նրան: Եւ հրամայեց նրա համար տեղ պատրաստել դռների մօտ:

Եւ Աստուծոյ այրը Քրիստոսի անուան համար տասնհինգ տարի մնաց այդտեղ՝ իր Հօր դռների մօտ՝ մի խաւար տեղում, եւ ոչ ոք չիմացաւ ու չճանաչեց նրան, եւ ոչ ոք չասաց նրա Հօրն ու մօրը, թէ նա է Ալեքսիոսը:

Տասնհինգ տարի անց՝ մի կիրակի օր, երբ քաղաքի մեծամեծերն ու իշխանները ժողովուել էին Աստուծոյ տաճարում, եւ հաւատացեալները սաղմոսներով, օրհնութեամբ եւ հոգեւոր երգերով ուրախանում էին Տիրոջ տաճարում, երկնքից ձայն լսուեց, որն ասում էր պատրիարքին. «Երեք օր յետոյ Աստուծոյ սուրբին կը վերցնեմ Ինձ մօտ, քանի որ շատ ճգնեց Իմ անուան համար. դուք գնացէք նրա մօտ եւ օրհնութիւն ընդունէք նրանից, եւ նա թող օրհնի ձեր քաղաքը»:

Երբ պատրիարքը լսեց այս, երեքօրեայ պահք յայտարարեց, իսկ երեք օրից հաւաքուեցին եկեղեցում՝ Աստծուց խնդրելու, որ իրենց յայտնի տեսիլքը: Եւ երկնքից ձայն լսեցին, որն ասում էր. «Աստուծոյ սուրբը գտնուում է Եփիմիանոսի տանը»: Երբ իշխաններն ու մեծամեծերը լսեցին այս, ասացին Եփիմիանոսին. «Այսպիսի սուրբ կայ քո տանը, ինչո՞ւ չասացիր մեզ, որ գանք եւ օրհնութիւն ընդունենք նրանից»: Եփիմիանոսն ասաց. «Չեմ հասկանում՝ ինչ էք ասում»: Եւ շտապ

վեր կացաւ գնաց իր տուն եւ հաւաքելով իր ծառաներին՝ ասաց նրանց. «Իմ տան մէջ ճանաչո՞ւմ էք աստուածապաշտ եւ առաքինի մարդուն»: Ծառաներն ասացին. «Չենք ճանաչում: Գիտենք միայն քո դռան մօտի այն տառապեալ մարդուն. շատ ենք տեսել նրան պահքի մէջ եւ աղօթելիս, նա երբեք չի քնում եւ գիշեր-ցերեկ չի դադարում աղօթելուց ու ճգնելուց: Մի քանի օր առաջ էլ թանաք եւ թուղթ խնդրեց, տուեցինք նրան, եւ չգիտենք, թէ յետոյ ինչ եղաւ»:

Այս տասնհինգ տարիների ընթացքում Ալեքսիոսի Հօր տան ծառաները մշտապէս ծաղրում էին նրան, ծիծաղում նրա վրայ, փետում էին նրա մօրուքը՝ համարելով նրան անպիտան: Բայց սուրբն իր մտքում ասում էր. «Այս ամէնը սատանայական որոգայթներ են, բայց չեն կարող Աստուծոյ ծառային խանգարել յաւիտեան»:

Եփիմիանոսը վեր կացաւ եւ ծառաների հետ եկաւ տառապեալի մօտ: Երբ ներս մտաւ, տեսաւ, որ Աստուծոյ սուրբը վախճանուել է: Իսկ պատրիարքը քաղաքի իշխանների եւ բազմութեան հետ միասին սաղմոսներով եւ վառուած ջահերով դուրս եկաւ եկեղեցուց, հասաւ Եփիմիանոսի դռան մօտ, որտեղ ապրում էր Աստուծոյ սուրբը, որն իր անձը պատարագել էր Քրիստոսի անուան համար եւ հաճելի եղել Աստծուն: Պատրիարքը մեծամեծերի հետ մտաւ տառապեալ Ալեքսիոսի քողտիկը, նրան վախճանուած գտաւ եւ ձեռքին՝ մի նամակ: Նա ձեռքը ձգեց, որ սուրբի ձեռքից վերցնի նամակը, սակայն չկարողացաւ. եւ ասաց սուրբին. «Տո՛ւր ինձ այդ նամակը, որ կարդամ Հռոմ քաղաքի բազմութեան համար»: Երբ այս ասաց, ձեռքը բացուեց, եւ թուղթը տրուեց պատրիարքին: Պատրիարքն այն տուեց մի պատուաւոր սարկաւագի՝ հրամայելով ելնել մի բարձր տեղ եւ կարդալ քաղաքի ողջ բազմութեան համար:

Նամակում նրա կեանքի պատմութիւնն էր գրուած. նրա ծննդեան, հարսանիքի, գաղտնի հեռանալու եւ ճգնութիւնների մասին, եւ թէ ինչպէս ողորմութիւն ընդունեց իր ծառաներից, եւ ծառաներն իրեն չճանաչեցին, թէ ինչպէս քահանային յայտնեց իր մասին, եւ ինքը գաղտնի հեռացաւ քահանայի մօտից, թէ ինչպէս քամին նաւը հանեց Հռոմ, եւ այն ամբողջ ծաղրուծանակի մասին, որ նա կրում էր իր Հօր ծառաներից Քրիստոսի անուան համար: Երբ այս ամէնը լսեցին, զարմացան նրա՝ ծառաներից կրած նախատինքներին համբերելու վրայ: Քաղաքի ողջ բազմութիւնը լաց էր լինում: Իսկ հայրը, երբ այս լսեց, ընկաւ իր երեսի վրայ, դառնապէս լաց եղաւ եւ ասաց. «Ի՞նչ արեցիր,

որդեա՛կ իմ, դու էիր իմ յոյսն ու իմ աչքերի լոյսը, եւ իմ կարողութիւնը դու պիտի ժառանգէիր: Ինչո՞ւ չէր շարժւում քո սիրտն իմ ելումուտի ժամանակ, ինչո՞ւ չէիր ասում ինձ քո ով լինելը եւ ինչո՞ւ էիր ընդունում քո ծառաների նախատինքները»: Եւ քաղաքի ամբողջ բազմութիւնը՝ տղամարդիկ եւ կանայք, լաց էին լինում՝ խղճալով նրա հօրը:

Երանելու մայրը դեռեւս չգիտէր այդ մասին, քանի որ արգելափակել էր իրեն իր սենեակում. երբ նրան ասացին, նա բաց արեց դուռը, որը փակել էր, երբ իր որդին փախել էր հարսանեաց առագաստից, եւ դուրս գալով՝ ամբոխին ասաց. «Ճանապա՛րհ տուէք ինձ, որ գնամ ու տեսնեմ իմ փափագելի ճրագին, որը վառւում էր եւ այժմ խաւարել է: Թողէ՛ք ինձ՝ տեսնելու պայծառ աստղին, որ այժմ հանգել է: Աղաչո՛ւմ եմ ձեզ, մայրե՛ր, որ զաւակ էք ծնել, եւ հայրե՛ր, որ զաւակներ ունէք, իմ աղիքները գալարւում են մայրական գութից այս վարդի վրայ, որը թառամեց բուրաստանում եւ հոտ չունի: Տեսէ՛ք ինձ եւ խղճացէ՛ք»: Եւ ընկնելով սուրբի երեսի վրայ՝ ասաց. «Որդեա՛կ իմ, մեծացրի քեզ իմ ծնկների վրայ եւ քաղցրաբուխ կաթով սնեցի քեզ, ինչո՞ւ չխղճացիր ինձ, երբ փակուած էի բանտում քեզ համար. չէի՞ր տեսնում իմ տառապանքը, իմ քաղցրի՛կ որդեակ, եւ իմ անձի նեղութիւնները, իմ աչքերի լո՛յս, քո տառապած հօր եւ քո գերեալ մօր հաստատուն սի՛ւն, որովհետեւ իմ լեզուն չէր դադարում հանապազ քեզ յիշելուց եւ յոգոց հանելուց»:

Երբ նրա կինն իր արգելարանում լսեց, շտապ եկաւ, ընկաւ դիակի ոտքերի մօտ եւ ասաց. «Ես՝ տառապեալս, երէկ մտայ առագաստ եւ այսօր ահա այրի եմ: Ահա նմանուեցի տատրակի, որի ամուսինը մեռաւ, իսկ նա գնաց ծածուկ մի տեղ եւ չնստեց դալար ոստերի վրայ. նոյնպէս եւ ես կը գնամ քարածերպերն ու իմ կեանքի բոլոր օրերում սեւ կը հագնեմ քո մահուան պատճառով»:

Պատրիարքը եպիսկոպոսների եւ մեծամեծերի հետ միասին պատուական հանդերձներով պատեց Ալեքսիոսին, դրեց ոսկեկուռ ու թանկարժէք քարերով պատուած թախտի վրայ եւ աղօթեց: Բոլոր նեղուածներն ու հիւանդները, ովքեր մօտենում էին սուրբի նշխարներին, բժշկւում էին բոլոր հիւանդութիւններից, կաղերն ու կոյրերը, պիղծ այսերից նեղուողները բժշկւում էին: Սուրբի համար գերեզման փորեցին, եւ պատրիարքը հրամայեց երանելու նշխարները թաղել այդտեղ: Սակայն բազմութեան պատճառով երեք օր չէին կարողանում: Եւ

հրամայեց գանձեր ցրիւ տալ, որպէսզի բազմութիւնը դրանցով տարուի, ապա բռնութեամբ վերցրին սուրբին եւ սաղմոսներով ու օրհնութեամբ գերեզման դրեցին:

Սուրբի գերեզմանի հողից բազում բժշկութիւններ էին լինում: Երանելու վրայ չինեցին եկեղեցի, եւ նրա ննջման օրը՝ փետրուարի 5-ին, մեծ տօնախմբութիւն էին անում ի փառս Ամենասուրբ Երրորդութեան՝ Հօր, Որդու եւ Սուրբ Հոգու, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՍՈՒՐԲ ՊԱՆՏԱԼԷՈՆ ԿԱՄ ՊԱՆՏԵԼԵԻՄՈՆ ԲԺՇԿԻ, ԵՐՄՈՂԱՅՈՍ ՔԱՀԱՆԱՅԻ ԵՒ ՆՐԱՆՑ ՀԵՏ ՆԱՀԱՏԱԿՈՒԱԾՆԵՐԻ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Քրիստոսի քաջ եւ երանելի հրաշագործ վկան՝ Պանտալէոնը (նշանակում է ամէնառիւծ), Նիկոմիդիա քաղաքից էր, հեթանոս սինկղիտոսի (ծերակոյտի անդամ) միակ որդին: Նրա մայրը՝ Եւբուղան, քրիստոնեայ էր: Մաքսիմիանոսի հալածանքների օրերին նա կայտառ եւ իմաստուն պատանի էր՝ համեստ ընթացքով եւ գովելի վարքով: Երբ նրա մայրը վախճանուեց, Պանտալէոնը դեռեւս չէր ճանաչում ճշմարտութիւնը, քանի որ հայրը թոյլ չէր տալիս նրան լսելու մօր խօսքերը, եւ նրան ուսման էր տուել հեթանոսական դպրոցներում: Երբ տեսաւ, որ իր զաւակը ուշիմ է եւ առաջադիմում է ուսման մէջ, նրան բժշկութիւն ուսանելու համար տարաւ Եւփրոսինոս բժշկապետի մօտ, որն արքունիքի բժիշկն էր. եւ Պանտալէոնը նրա հետ էր միշտ:

Մի օր թագաւորը նրան տեսաւ եւ հարցրեց նրա ուսուցչին. «Ո՞վ է այդ պատանեակը»: Եւփրոսինոսը պատասխանեց. «Եւստորգիոսի՝ քո ծերակոյտի անդամներից մէկի որդին է: Տուել է ինձ, որ բժշկութիւն սովորեցնեմ»: Այնժամ նախարարներն ասացին. «Թագաւորին արժանի պատանի է»: Եւ արքան նրա ուսուցչին պատուիրեց մեծ հոգատարութեամբ եւ ջանադրութեամբ մարզել նրան իր գիտութեան մէջ, քանի որ պէտք է իրեն:

Նիկոմիդիայում կար աստուածպաշտութեան մէջ կատարեալ մի ծերունի երէց՝ Երմոդայոս անունով, որը փրկուել էր կոտորածից եւ իր երկու ընկերների հետ առանձնացել ու թաքնուել էր մի խցում: Ամէն օր Պանտալէոնը իր ուսուցչի տուն գնալիս անցնում էր նրանց խցի մօտով, եւ ամէն օր Երմոդայոսը տեսնում էր նրան, որ պարկեշտ էր, վայելուչ, երկիւղած ու բարեսէր, քանի որ նրա ընկերներից ոչ ոք չէր կարողացել համոզել նրան անամօթանալ, կնոջ վրայ նայել, թատրոն գնալ կամ ծիծաղել երիտասարդների սովորութեամբ: Եւ ծերը Սուրբ Հոգով իմացաւ, որ պատանին մեծ եւ պատուական անօթ է դառնալու:

Մի օր քահանան գաղտնի կանչեց պատանուն, եւ երբ ներս մտաւ, ողջագուրեց նրան եւ ասաց. «Ո՛ղջ եղիր, որդեա՛կ, որ լի ես ամենայն բարութեամբ»: Պանտալէոնն ասաց նրան. «Ողջ եղիր եւ դո՛ւ, ամենայն պատուի արժանի՛ հայր»: Երէցը բռնեց նրա ձեռքից, նստեցրեց իր մօտ եւ ասաց. «Որդեա՛կ, ո՞վ ես դու եւ ի՞նչ գործ ես անում»: Պանտալէոնն ասաց. «Ես Եւստորգիոս սինկղիտոսի որդին եմ, մօրս անունը Եւբուղա էր, նա վախճանուել է»: Ծերն ասաց. «Ո՞ւմ ես պաշտում, որդեա՛կ»: Պանտալէոնն ասաց. «Քանի դեռ մայրս ողջ էր, նրա հետ էի, նա դաստիարակում էր ինձ բարի օրէնքներով եւ կամենում էր, որ իր հետ լինեմ: Բայց հայրս թոյլ չտուեց եւ դպրոց ուղարկեց: Նա մտածում էր արքունիքի զինուոր դարձնել ինձ, իսկ ես ուզում էի մօրս մօտ լինել: Բայց երբ մայրս մեռաւ, հայրս ուր կամեցաւ, այնտեղ տուեց ինձ ուսման»: Երէցն ասաց. «Ի՞նչ ես ուսանում ուսուցչիդ մօտ»: Պանտալէոնն ասաց. «Ուսուցիչս պատուիրում է ինձ սովորել Ասկղեպիոսի, Հիպոկրատի եւ Գաղենոսի արուեստը եւ ասում է՝ եթէ ուսանես նրանց խրատը, կը բժշկես մարդկանց բոլոր հիւանդութիւնները»: Երէցն ասաց. «Ոչի՛նչ են Ասկղեպիոսը, Հիպոկրատն ու Գաղենոսը, եւ ոչի՛նչ են բոլոր աստուածները, որոնց պաշտում է Մաքսիմիանոս թագաւորը: Ե՛կ, որդեակ, լսի՛ր ինձ եւ հաւատա՛ Քրիստոսին, Ում անունով կը բժշկես բոլոր հիւանդութիւնները, որովհետեւ Նա մեռելներին յարութիւն տուեց, կոյրերին լոյս շնորհեց եւ բոլոր ցաւերը փարատեց. տասներկու տարի արիւնահոսող կնոջ արիւնահոսութիւնը դադարեցրեց, երբ նա դիպաւ Իր հագուստի քղանցքին, ջուրը գինու փոխարկեց, հալածեց դեւերին, բազում սքանչելիքներ գործեց, որոնց թիւ չկայ, Նա մերժ է Իր ծառաներին եւ փրկում է նրանց բոլոր նեղութիւններից: Եւ ովքեր Նրան հաւատացին, շնորհեց անել աւելին»:

Պանտալէոնը լաւ ու պարարտ հողի պէս իր մէջ էր ընդունում կենաց խօսքը՝ հարիւրապատիկ պտուղներ տալու՝ իր եւ շատերի անձերի փրկութեան համար, եւ ասաց ծերին. «Տէ՛ր, եթէ հնարաւոր է, իմ ուսուցչին յայտնեմ, ինչ որ ասում ես, որ նա էլ իմանայ քո քարոզածը եւ օգուտ ստանայ, ինչպէս ես: Որովհետեւ ես այդպիսի բաներ լսել եմ երանելի մօրիցս, որը երբ աղօթում էր, դիմում էր Քրիստոսին, Ում դու աւետարանում ես»: Եւ ծերն ասաց. «Որդեա՛կ, այժմ դու մի՛ հոգա քո ուսուցչի մասին, այլ շտապի՛ր աշակերտել երկնաւոր վարդապետ Քրիստոսին: Յոյսդ Նրա՛ վրայ դիր եւ Նրանով կը զօրանաս ամէն բանում, որովհետեւ Քրիստոսը երբեք չի հեռանում Իր ծառաներից: Այսուհետեւ հաւատա՛ Քրիստոսին եւ ստացի՛ր երկնային շնորհների մկրտութիւնը»:

Դրանից յետոյ ամէն օր գնում էր ծերի մօտ եւ հաստատւում հաւատի մէջ: Եւ ուսուցչի տնից դուրս գալով՝ տուն չէր գնում, մինչեւ չէր տեսնում ծերին, եւ այդպէս լցւում էր մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի շնորհներով:

Մի օր տուն գնալիս ճանապարհին տեսաւ քարբ օձից խայթուած ու մեռած մի մանկան. օձը նրա մօտ էր: Պանտալէոնը զարհուրեց եւ փախաւ, ապա մտքում ասաց. «Այժմ պէտք է իմանամ, թէ արդեօք ճի՞շտ է ասում Երմոդայոս ծերը»: Եւ երկինք նայելով՝ ասաց. «Տէ՛ր Յիսուս Քրիստոս, եթէ արժանի եմ Քո կոչմանը, եւ կամենում ես, որ Քեզ ծառայեմ, թող Քո անունով յարութիւն առնի այս մանուկը»: Երբ այս ասաց, մանուկն անմիջապէս կենդանացաւ, իսկ օձը մէջտեղից պատռուեց: Եւ Պանտալէոնն ասաց. «Օրհնո՛ւմ եմ Քեզ, Տէ՛ր իմ Յիսուս Քրիստոս, որ ինձ արժանացրեցիր Քո ծառաների թւում լինելու»:

Ապա գնալով Երմոդայոսի տուն՝ ընկաւ նրա ոտքերը եւ խնդրեց անյապաղ մկրտել իրեն: Ծերը հարցրեց պատճառը եւ կատարուածն իմանալով՝ նրա հետ գնաց այնտեղ, տեսաւ սատկած օձին եւ փառք տուեց Աստծուն: Ապա երկուսով վերադարձան խուց, եւ ծերը, ամէն բան ըստ օրէնքի անելով, նրան մկրտեց սուրբ մկրտութեամբ: Եւ Պանտալէոնը ծերի մօտ մնաց եօթ օր: Ութերորդ օրը գնաց իրենց տուն: Հայրը, նրան տեսնելով, ասաց. «Որդեա՛կ, ո՞ւր էիր այսքան ժամանակ: Ես մահու չափ տառապում էի քեզ համար»: Պանտալէոնն առակով ասաց. «Արքունիքում մի մարդու բժշկեցինք ծանր հիւանդութիւնից, եւ որովհետեւ այդ մարդը արքայի սիրելին էր, նրա մօտ մնացի եօթ օր, մինչեւ կատարելապէս առողջացաւ», որով պէտք էր հասկանալ իր՝ հաւատով հոգեպէս առողջանալը, մինչդեռ հայրը կարծեց, թէ ուրիշի՝ մարմնով առողջանալու մասին է խօսքը, ուստիեւ լռեց եւ այլեւս ոչինչ չհարցրեց:

Յաջորդ օրը Պանտալէոնը գնաց իր Եփրոսինոս ուսուցչի մօտ, եւ նա նոյնպէս հարցրեց, թէ որտեղ էր այդքան ժամանակ: Նրան էլ Աւետարանի առակով պատասխանեց. «Իմ հայրը մի ագարակ գնեց եւ ինձ ուղարկեց այնտեղ. եօթ օր մնացի այնտեղ, մինչեւ ստացայ նրա իշխանութիւնը, քանի որ բոլոր թանկարժէք քարերից աւելի պատուական էր այն ստացուածքը»: Ի՞նչ իմանար Եփրոսինոսը, թէ նրա մկրտութեան մասին էր խօսքը: Նա լռեց եւ այլեւս հարցեր չտուեց:

Պանտալէոնը, Քրիստոսի շնորհներով լցուած եւ հաւատի գանձը շահած, մեծ հոգս ունէր. իր հօրն աստուածճանաչողութեան բերել,

ուստի ամէն օր առակներով խօսում էր նրա հետ Քրիստոսի զօրութեան եւ կուռքերի անկարութեան մասին: Մի օր ասաց. «Հա՛յր, քո աստուածները, որոնք կանգնած են, ինչո՞ւ չեն նստում, իսկ որոնք նստած են, ինչո՞ւ երբեք չեն կանգնում»: Հայրն ասաց. «Դժուար բան ես հարցնում, ես չեմ կարող քեզ պատասխանել»: Այնժամ սուրբ Պանտալէոնը, ուրախութեամբ լցուած, փառք տուեց Աստծուն, որ մէկ խօսքով հօր առջեւ բացեց աստուածգիտութեան դուռը, այնպէս որ այդ օրից սկսած՝ Եւստորգիոսը, կասկածելով կուռքերին, այլեւս առաջուայ պէս զոհեր չէր մատուցում նրանց:

Պանտալէոնը կամենում էր փչրել իրենց տանը եղած կուռքերը, սակայն զսպում էր իրեն՝ մտածելով, որ պէտք չէ խռովեցնել հօրը, այլ նրան համոզելով բերել Յիսուս Քրիստոսի հաւատին: Մինչ այս մասին էր խորհում, նրանց տուն բերեցին մի կոյրի եւ հարցրին, թէ Պանտալէոն բժիշկը տա՞ն է արդեօք, եւ աղաչեցին, որ դուրս գայ եւ բժշկի կոյրին: Նա լսեց, հօր հետ շտապ դուրս ելաւ եւ, կոյրին տեսնելով, ասաց. «Ի՞նչ ես կամենում»: Կոյրն ասաց. «Աղաչո՛ւմ եմ քեզ, խղճա՛ խաւարածիս, որովհետեւ զրկուել եմ քաղցր լոյսից: Ոչ մի բժիշկ չկարողացաւ ինձ օգնել, ամբողջ ունեցուածքս վերցրին, սակայն բժշկելու փոխարէն իմ ունեցած թոյլ տեսողութիւնից էլ զրկեցին ինձ: Մնացել եմ կոյր ու չքաւոր»: Պանտալէոնն ասաց. «Քո ամբողջ ունեցուածքն ուրիշ բժիշկների ես տուել, մե՞զ ինչ ես տալու, երբ տեսնես»: Կոյրն ասաց. «Ինչ որ մնաց ինձ, այն էլ կը տամ քեզ»: Պանտալէոնն ասաց. «Լոյսի պարգեւն իմ միջոցով քեզ Քրիստոսը կը տայ, իսկ դու գնա աղքատների՛ն տուր, ինչ որ ինձ խոստացար»:

Պանտալէոնի հայրն արգելեց նրան եւ ասաց. «Որդեա՛կ, հեռո՛ւ մնա այդ մարդուց, քանի որ դու աւելի լաւ բժիշկ չես, քան նրանք, ովքեր փորձեցին բժշկել նրան»: Իսկ Պանտալէոնն ասաց իր հօրը. «Այն դեղը, որ ես պիտի տամ նրան, հնարաւոր չէ գտնել, եւ ոչ մի բժիշկ չի կարող տալ, քանի որ իմ Ուսուցիչը ճարտար է բոլոր բժիշկներից եւ լոկ խօսքով է բժշկում Իրեն հաւատացողներին»: Հայրը կարծեց, թէ խօսքը Եփրոսինոսի մասին է: Իսկ Պանտալէոնը տեառնագրեց կոյրի աչքերի վրայ եւ ասաց. «Յիսուս Քրիստոսի անունով, Որը լուսաւորեց նախկին խաւարածներին եւ կանգնեցրեց նախկին նեղուածներին, հաւաքեց ցրուածներին, դարձի բերեց մոլորուածներին, Նրա կամքով նաեւ դո՛ւ տես լոյսը քո կեանքի բոլոր օրերում: Աւելի մեծ լոյս կը տեսնես դու, եթէ հաւատաս Քրիստոսին»:

Մինչ նա ասում էր այս, կոյրը բացեց աչքերը, տեսաւ եւ հաւատաց Քրիստոսին: Պանտալէոնի հայրը նոյնպէս հաւատաց:

Այնժամ Պանտալէոնը գնաց Երմողայոս երէցի մօտ եւ նրան պատմեց կատարուածի մասին: Նա շատ ուրախացաւ եւ եկաւ նրա տուն՝ տեսնելու կոյրին եւ նրա հօրը եւ մի քանի օր այնտեղ մնալով՝ մկրտեց նրանց եւ լուսաւորեց երկնային լոյսով: Եւստորգիոսը մտաւ իր տուն, խորտակեց կուռքերին եւ գցեց մի խորխորատ: Սա տեսնելով՝ Պանտալէոնը փառք տուեց Աստծուն:

Կարճ ժամանակ անց մեռաւ նրա բարերջանիկ հայրը, եւ Պանտալէոնն ազատեց իրենց բոլոր ծառաներին՝ նրանց ինչքեր տալով, մնացած ունեցուածքը բաժանեց աղքատներին, իսկ ինքը գնում էր հիւանդների ու կարօտեալների, Յիսուսի համար բանտարկուածների ու տանջուողների մօտ, խօսքով ու գործով քաջալերում նրանց եւ բժշկում բոլորին: Ամէն բանում նրան գործակից էր Քրիստոսը, եւ բժիշկներից շատերն էին նախանձում նրան:

Մի օր, երբ բժիշկները հաւաքուել էին միասին, տեսան այն կոյրին, ում բժշկել էր Պանտալէոնը, եւ ասացին իրար. «Սա այն կոյրը չէ՞, որին մենք չկարողացանք բժշկել. տեսնես ո՞վ է բուժել նրան»: Եւ կանչելով նրան՝ հարցրին, թէ ով է իրեն բժշկող բժիշկը: Նա ասաց, որ Եւստրոգիոսի որդին՝ Պանտալէոնն է իրեն բժշկողը: Եւ բոլորը հարցրին Եփրոսինոսին. «Մի՞թէ նա քո աշակերտը չէ. իսկապէս որ մեծ բժշկապետի աշակերտ է նա». այս ամէնը նրանք Ասկղեպէոս չաստծոյ մասին էին անգիտութեամբ ասում, սակայն ակամայ ճշմարիտն էին վկայում Քրիստոսի մասին: Բայց այդ օրուանից նախանձում էին Պանտալէոնին եւ կամենում էին պատճառներ գտնել՝ նրան վնասելու: Եւ երբ լսեցին ու տեսան, որ բանտերն է մտնում եւ դարմանում քրիստոնեաներին, նրան մատնեցին թագաւորին՝ ասելով. «Ահա Պանտալէոնը շրջում եւ բուժում է մեր աստուածներին անարգողներին՝ կամենալով նրանց հետ լինել: Եթէ շտապ նրան չսպանես, շատերին կարգելի զոհեր մատուցել եւ Ասկղեպէոսի բժշկութիւնը Քրիստոսինը կը համարի»: Եւ նրան պատմեցին կոյրի մասին, որը խոստովանում էր, որ Պանտալէոնն իրեն բժշկել է Յիսուս Քրիստոսի անունով:

Թագաւորը հրամայեց կանչել բժշկուած կոյրին եւ նրան հարցրեց. «Պանտալէոնն ինչպէ՞ս բուժեց քեզ»: Նա ասաց. «Քրիստոսին դիմելով՝ խաչակնքեց աչքերս, եւ նոյն պահին տեսայ»: Թագաւորն ասաց. «Դու ի՞նչ կ՚ասես քո մասին. աստուածների զօրութեա՞մբ

բուժուեցիր, թէ՞ Քրիստոսի անուամբ»: Բժշկուածն ասաց թագաւորին. «Թող իրենք՝ բժիշկները վկայեն, որ շատ ջանացին ընդունայն, իմ ամբողջ ունեցածը վերցրեցին եւ ոչնչով չկարողացան ինձ օգնել, աւելին՝ մի քիչ տեսնում էի, դրանից էլ զրկեցին»: Թագաւորն ասաց. «Ասա՛ ինձ՝ ո՞վ է մեծ՝ Ասկղեպիո՞սը, որին շատերն են պաշտում, թէ՞ Քրիստոսը, որին միայն Պանտալէոնն է պաշտում»: Նա ասաց. «Քրիստոսը, որին Պանտալէոնը դիմեց եւ լոյս շնորհեց ինձ այն դէպքում, երբ Ասկղեպիոսին պաշտողներն ինձ բուժել չկարողացան»:

Թագաւորը բարկացաւ եւ ասաց նրան. «Ողջամի՛տ եղիր, մա՛րդ, եւ մի՛ ցնորուիր՝ ասելով, որ Քրիստոսը քեզ բժշկեց, քանի որ մեր աստուածնե՛րը քեզ լոյս շնորհեցին»: Բժշկուածը համարձակօրէն ասաց. «Դու մի՛ ցնորուիր. Քրիստոսն ինձ շնորհեց կրկնակի լոյս՝ Իր ծառայի միջոցով բացելով աչքերս եւ միտքս լուսաւորելով Սուրբ Հոգու նորոգութեամբ: Քանի որ քո աստուածները կոյր են, ո՛վ թագաւոր, եւ չեն կարող ուրիշին լոյս տալ»: Թագաւորն ասաց. «Երդւո՛ւմ եմ աստուածներով. կարծում եմ՝ արդար էին բժիշկների ամբաստանութիւնները»: Եւ հրամայեց տանել երանելի կոյրին եւ գլխատել՝ ասելով. «Եթէ դա ապրի, շատերին կը հեռացնի աստուածներից»:

Պանտալէոնն, այս մասին լսելով, գոհացաւ Աստծուց, սպանողներին ինչքեր տուեց, վերցրեց վկայի մարմինը եւ թաղեց իր հօր մօտ:

Ապա Մաքսիմիանոսը հրամայեց իր մօտ բերել Պանտալէոնին, իսկ նա գնալիս սաղմոսում էր. «Իմ օրհնութեա՛ն Աստուած, մի՛ լռիր, քանզի մեղաւորի բերանը՝ նենգաւորի բերանը, բացուեց ինձ վրայ», եւ մտաւ կանգնեց թագաւորի առջեւ՝ աչքերը երկինք բարձրացրած:

Մաքսիմիանոսն ասաց նրան. «Պանտալէո՛ն, ասա՛ ինձ՝ ճի՞շտ է, ինչ որ լսում եմ քո մասին. չէ՞ որ ես պատուիրեցի քո ուսուցչին, որ մեծ հոգատարութեամբ քեզ ուսուցանի, որովհետեւ կամենում էի, որ ինձ մօտ լինես»: Պանտալէոնն ասաց. «Իսկ ի՞նչ ես լսել իմ մասին»: Թագաւորն ասաց. «Ինչ որ լսել եմ, չե՛մ հաւատում, քանի որ կարող է սուտ լինել. լսել եմ, որ շրջում, բժշկում եւ կերակրում ես նրանց, ում մենք տանջում ու հալածում ենք, որովհետեւ զոհ չեն մատուցում աստուածներին, եւ պատուիրում ես Աստուած անուանել Քրիստոսին եւ անարգել մեր կուռքերին»:

Այնժամ Սուրբ Հոգով լցուած Պանտալէոնը պատասխանեց. «Թագաւո՛ր, գրուած է, թէ՝ «Աստուածները, որ չեն արարել երկինքն ու երկիրը, պիտի կորչեն», նաեւ աստուածներ չեն նրանք, որոնք մեռել-

ներին յարութիւն չեն տալիս, կոյրերին լոյս չեն շնորհում եւ մի հիւանդ անգամ չեն բժշկում. արդ, հաւատա՞նք նրանց. մի՛ խաբուիր, արքա՛յ»: Եւ Թագաւորն ասաց նրան. «Իսկ Նա, Ում քրիստոնեաները պաշտում են, անո՞ւմ է այդ ամէնը»: Պանտալէոնն ասաց. «Եւ շատ լաւ. Քրիստոսն արեց այդ ամէնը եւ անում է: Եթէ կամենում ես փորձել, արքայ, հրամայի՛ր մի անդամալոյծ բերել, քո պաշտօնեաներից բե՛ր՝ ում կամենում ես, եւ թող նրա վրայ կարդայ քո աստուածների անունները, իսկ ես կարդամ իմ Աստուծոյ՝ Քրիստոսի անունը. եւ կը տեսնես, թէ ում անունը կը բժշկի նրան, եւ կ՚իմանաս՝ ում պէտք է հաւատալ»:

Թագաւորին հաճելի թուացին այս խօսքերը, ուստիեւ հրամայեց, եւ փողոցից մի անդամալոյծի բերեցին եւ նրա առաջ դրեցին, ապա կանչեցին քուրմերին: Եւ Թագաւորն ասաց Պանտալէոնին. «Աստուածների անունով թող լինի քո ասածի պէս, քանի որ լա՛ւ ասացիր»: Այնժամ նրա ակնարկութեամբ քուրմերը եկան եւ, միմեանց քաջալերելով իրենց սնոտի յոյսով, սկսեցին կանչել մէկը՝ Ասկղեպիոսի, մէկը՝ Արամազդի, մէկը՝ Աստղիկի, մէկը՝ Հերկուլէսի, միւսներն՝ այլ աստուածների անունները, իսկ Պանտալէոնը կանգնած նայում էր, ժպտում եւ արհամարհում էր նրանց սնահաւատութիւնը, քանի որ նրանց բոլոր կանչերը զուր էին:

Թագաւորն ասաց. «Այժմ թող Պանտալէոնը դիմի իր Աստծուն»: Եւ սուրբը, նայելով երկինք, ասաց. «Տէ՛ր, լսի՛ր իմ աղօթքը, եւ թող իմ աղաղակը Քեզ հասնի, մի՛ դարձրու Քո երեսն ինձնից, երբ կանչեմ Քեզ, լսի՛ր ինձ եւ չար խորհող մտքերին, որոնք չեն ճանաչում Քեզ, ցո՛յց տուր, որ Դո՛ւ ես բժշկում Քեզ վրայ յոյս դնողներին»: Ապա բռնելով անդամալոյծի ձեռքից՝ կանգնեցրեց եւ ասաց. «Յիսուս Քրիստոսի անունով այսօրուանից առո՛ղջ եղիր»: Հիւանդն անմիջապէս վեր կացաւ եւ իր տուն գնաց ուրախութեամբ՝ օրհնելով քրիստոնեաների Աստծուն: Այդ օրը շատերը հաւատացին Տիրոջը եւ հեռացան իրենց սնոտի պաշտամունքներից:

Քուրմերն ու բժիշկները կրճտում էին իրենց ատամները եւ ասում Թագաւորին. «Եթէ Պանտալէոնն ապրի, կը վերացնի աստուածների զօրութիւնը, որովհետեւ բոլորին հեռացնում է նրանց պաշտամունքից: Այլեւս մի՛ լսիր նրան, քանի որ անդամալոյծն աստուածների զօրութեամբ բժշկուեց»: Եւ Թագաւորը, նրանց խօսքերն ընդունելով, Պանտալէոնին ասաց. «Լսի՛ր ինձ եւ զո՛հ մատուցիր աստուածներին,

ապա թէ ոչ, չե՞ս լսել, թէ քանի քանիսներ մեռան, որոնք չհնազանդուեցին ինձ»: Պանտալէոնն ասաց. «Քրիստոսի համար մեռածները յաւիտենական կեանք ունեն»: Թագաւորն ասաց. «Պանտալէո՛ն, բաւական է քեզ՝ մինչ այժմ քո Քրիստոսին դաւանելը, խնայի՛ր երիտասարդութիւնդ եւ մօտեցի՛ր, զո՛հ մատուցիր, քանի որ եթէ այդ անհաւատութեան մէջ մնաս, բազում եւ սաստիկ տանջանքների կ՚ենթարկեմ քեզ»:

Քրիստոսի վկան պատասխանեց. «Ինչպէս կամենում ես, չարաչար տանջանքների՛ ենթարկիր ինձ, սակայն ես պատրա՛ստ եմ այդ ամէնին համբերել իմ Քրիստոսի համար»: Մաքսիմիանոսն ասաց. «Իմացե՞լ ես՝ ինչ պատահեց Անթիմոսին»: Պանտալէոնն ասաց. «Իսկ դու իմացա՞ր, թէ յանուն Աստուծոյ ինչպէս համբերեց այն ծերը եւ չգայթակղուեց, այլ մեծ յօժարութեամբ դահճին յանձնեց իր դողդղուն մարմինը: Առաւել եւս մենք, որ երիտասարդ ենք, պարտաւոր ենք առաջ գնալ՝ իբրեւ հաւատով զօրաւորներ, որ արժանանանք անանց պսակին»: Թագաւորը, տեսնելով նրա անսասան հաւատը, հրամայեց կապել ու քերել նրա մարմինը: Իսկ երանելին, երկինք նայելով, հեշտութեամբ համբերում էր չարչարանքներին՝ ասելով. «Տէ՛ր Յիսուս Քրիստոս, մերձեցի՛ր ինձ՝ որպէս տկարի, տանջանքների մէջ մո՛տ եղիր եւ պատերազմի մէջ կատարեալ զօրութի՛ւն տուր ինձ»: Այնժամ Քրիստոսը երմոդայոս ծերի նմանութեամբ երեւաց նրան եւ ասաց. «Մի՛ զարհուրիր եւ մի՛ վհատուիր պատերազմելիս, Ի՛մ սիրելի, քանի որ ես քեզ հետ եմ, ինչ էլ որ պատահի»: Երանելին քաջալերուեց, կապանքները քակուեցին, կրակը հանգաւ, իսկ դահիճները թուլացան:

Մաքսիմիանոսը, այդ ամէնը տեսնելով, ասաց. «Ասա՛ ինձ՝ այդ ի՞նչ մոգական արուեստ է, որով դու ջահերը փչացրիր եւ տանջանքներն անզօր դարձրիր»: Սուրբն ասաց. «Իմ զօրութիւնը Քրիստոսն է. Նա հանգցրեց ջահերը եւ քեզ ու քո ծառաներին ամօթով թողեց»: Մաքսիմիանոսն ասաց. «Մեծամեծ տանջանքներ կը բերեմ քեզ վրայ, եւ ստիպուած զոհ կը մատուցես»: Պանտալէոնն ասաց. «Որքան աւելացնես չարչարանքները, այնքան աւելի զօրութիւն կը տայ ինձ Քրիստոսը»:

Այս լսելով՝ թագաւորը հրամայեց բերել մի մեծ երկաթեայ տապակ, մէջը կապար հալել եւ արդարին գցել դրա մէջ: Երբ տապակը սկսեց եռալ, դահիճները մօտեցան՝ սուրբին մերկացնելու եւ դրա մէջ նետելու: Նա, երկինք նայելով, ասաց. «Տէ՛ր, լսի՛ր իմ աղօթքները,

թշնամու երկիւղից փրկի՛ր իմ անձը, ծածկի՛ր ինձ չարերի ժողովից, որոնք անօրինութիւն են գործում»: Աղօթքի ժամանակ նրան երեւաց հրեշտակը Փրկչի անունից եւ, բռնելով նրա ձեռքը, նրա հետ միասին մտաւ տապակի մէջ: Անմիջապէս կրակը հանգաւ, տապակը սառեց, իսկ սուրբ վկան սաղմոսում էր. «Ես Աստծուն կանչեցի, եւ Տէրն ինձ լսեց երեկոյեան, առաւօտեան եւ կէսօրին. պատմեցի ու ասացի, եւ կը լսես իմ ձայնը»: Մօտիկ կանգնածները զարմանում էին՝ այդ տեսնելով: Իսկ Թագաւորն ասաց իր մերձաւորներին. «Ինչպէ՞ս եղաւ, որ այդ կախարդը կրակը հանգցրեց, կապարը սառեցրեց: Ինչպիսի՞ տանջանքով յաղթենք նրան»: Մտերիմներն ասացին. «Դրան ծովի խորքե՛րը նետիր. մի՞թէ կարող է ծովն էլ կախարդել»: Եւ Թագաւորի հրամանով նրա պարանոցին մեծ քար կապեցին եւ տարան նետեցին ծովի խորքերը: Ինքը՝ Մաքսիմիանոսը, նոյնպէս եկել էր ծովափ՝ տեսնելու, թէ ինչ է լինելու:

Եւ ահա երեւաց Քրիստոսը Երմողայոս ծերի կերպարանքով եւ սաստեց ծովին, եւ ծովը, Աստուծոյ երկիւղից սարսելով, սուրբին ալիքների վրայ պահեց, իսկ քարը տերեւի պէս լողում էր ջրի վրայ: Սուրբը փառաւորում էր Աստծուն եւ ասում. «Գոհանում եմ Քեզնից, Տէ՛ր, իմ ամբողջ սրտով, եւ կը պատմեմ Քո բոլոր սքանչելիքները»: Եւ սաղմոսելով՝ Քրիստոսի առաջնորդութեամբ եկաւ եւ ցամաք ելաւ:

Թագաւորն ասաց. «Քո կախարդութիւնը ծովի՞ն էլ սաստեց»: Պանտալէոնն ասաց. «Ո՛չ թէ ես, այլ Նա, Ով ինձ հետ է՝ Տէր Քրիստոսը, որին դու արժանի չես տեսնելու»:

Սրանից յետոյ Թագաւորը հրամայեց բերել ամէն տեսակ գազաններ, որ յօշոտեն արդարին, եւ ասաց նրան. «Տեսնո՞ւմ ես՝ դրանք պատրաստ են քեզ յօշոտելու, եթէ զոհ չմատուցես աստուածներին: Ես ափսոսում եմ քո երիտասարդութիւնը եւ չեմ ուզում չարաչար մեռնես, ինչպէս քեզնից առաջ անզգամներից ոմանք՝ ոչ միայն տղամարդիկ, այլեւ կանայք»: Պանտալէոնը պատասխանեց. «Ո՛վ մոլորութեամբ լի, ինչով կամենում էիր ինձ վախեցնել, նրանով է՛լ աւելի զօրացրիր ինձ. քանի որ եթէ կանայք քո բոլոր մեքենայութիւնները քակտեցին Աստուծով, որքան առաւել ե՛ս պէտք է այդ անեմ, որ նոյնպիսի պսակների արժանանամ: Իմ Աստուծով ես չե՛մ վախենայ գազաններից, որովհետեւ Նա, որ այդքան սքանչելիքներ գործեց եւ ինձ փրկեց ամէն ինչից, զգօն կը դարձնի գազաններին, իսկ դու քո մոլորութեան մէջ տանջուելով կը մեռնես»:

Սուրբի ասածները կատարուեցին: Քանի որ այդ հրապարակում դարձեալ նրան երեւաց Քրիստոսը Երմողայոս ծերի կերպարանքով եւ զօրացրեց, իսկ գազանները, որոնց արձակել էին, չրջապատեցին երանելիին եւ աւելի մարդասէր եղան, քան մարդիկ. առիւծները թաթերով երեսներն էին մաքրում, ինձերը ոտքերն էին լիզում, միւսները մնչալով ու մռնչալով միմեանց էին կոտորում եւ հեռանում: Ամբողջ ժողովուրդը սկսեց գոռալ ընդդէմ Թագաւորի. «Մե՛ծ է քրիստոնեաների Աստուածը, արձակի՛ր այդ արդարին»: Թագաւորը սրտմտեց, գազազեց եւ այդպէս կանչողներից մօտ հազար հոգու սպանել եւ նրանց մարմինները գազանների առջեւ նետել տուեց, սակայն գազանները չմօտեցան նրանց, որի պատճառով էլ հրամայեց գազաններին կոտորել: Իսկ արդարն ասում էր. «Փա՛ռք Քեզ, Յիսուս Քրիստոս, մե՛ծ են Քո սքանչելիքները, քանի որ ոչ միայն մարդիկ մեռան Քո սիրոյ համար, այլեւ վայրի գազաններ սպանուեցին Քեզ համար՝ Բարձրեալիդ անուանը դաւանողներին մօտենալ յանձն չառնելու պատճառով»:

Թագաւորը դիակները նետել տուեց մի մեծ խորխորատ, իսկ Պանտալէոնին բանտարկեց եւ ասաց իր խորհրդականներին. «Ի՞նչ անենք այս երիտասարդին, որ կախարդութեամբ շատերին հեռացրեց աստուածներից. ինչպէ՞ս փոխենք ամբոխի միտքը, որ խաբուեց նրա մոլորութիւնից»: Եւ նրանց խորհրդով պատրաստել տուեց մի չարչարանքների չարահնար անիւ, որի տանջանքներից մարդը չի կարող կենդանի մնալ, եւ ասաց. «Ցայտարարէ՛ք քաղաքում, որ բոլորը գան եւ տեսնեն Պանտալէոնի կործանումը, իսկ Քրիստոսին հաւատացողները թող զղջան ու դառնան մեր աստուածներին»:

Նշանակուած օրը հրամայեց Պանտալէոնին հանել բանտից եւ բերել ատեան: Քրիստոսի զինուորը սաղմոսում էր. «Խոնարհեցրո՛ւ, Տէ՛ր, Քո ունկը եւ լսի՛ր ինձ, քանզի աղքատ եւ տնանկ եմ ես. իմ անձը սո՛ւրբ պահիր, Տէ՛ր, փրկի՛ր Քո ծառային, Աստուա՛ծ իմ, որ Քեզ վրայ եմ դրել յոյսս»: Երբ աղօթքն աւարտեց, նրան կապեցին անուին եւ սկսեցին գլորել դէպի զառիվայր, սակայն կապանքներն արձակուեցին, անիւը քանդուեց, եւ սուրբն անվնաս մնաց Քրիստոսի օգնականութեամբ. իսկ անիւը գլորուելով՝ սպանեց հեթանոսներից ու սպասաւորներից մօտ հինգ հարիւր հոգու: Սարսափը տիրեց բոլորին. զարհուրած Թագաւորը կանչեց սուրբին եւ ասաց. «Մինչեւ ե՞րբ ես այդպէս անելու. ոմանց հեռացրիր աստուածներից, ոմանց սպանեցիր»: Երանելին յանդիմանեց բռնակալի խստասրտութիւնը եւ ասաց. «Ո՛վ

սատանայի լիրբ ու անամօթ որդի, ձեր մասին լաւ ասաց մարգարէն, թէ՝ «Նրանց գլխին ետ կը գան ցաւերը, եւ նրանց անօրինութիւնները կ՚իջնեն նրանց գլխին»: Մաքսիմիանոսն ասաց. «Քեզ ո՞վ սովորեցրեց այդ ամէնը»: Պանտալէոնն ասաց. «Իմ հոգեւոր ծնողը՝ իմ տէր Երմոդայոս երէցը»: Թագաւորը նենգութեամբ ասաց. «Կարո՞ղ ենք տեսնել նրան, որ ես էլ սովորեմ նրանից»: Պանտալէոնը չթաքցրեց նրան, քանի որ գիտէր, թէ որքան է փափագում վկայական մահ, միաժամանակ էլ յոյս ունէր, թէ թագաւորին կը կարողանայ շահել, ուստիեւ ասաց. «Եթէ հրամայես, կը գնամ եւ նրան քեզ մօտ կը բերեմ»: Թագաւորն ասաց. «Գնա՛ պահապանների հետ»: Եւ Պանտալէոնը գնաց մտաւ տնակ, որտեղ թաքնուել էր ծերը, եւ ասաց նրան. «Տէ՛ր իմ հայր, թագաւորը քեզ կանչում է»: Մերն ասաց. «Լա՛ւ է, որ եկար, որդեա՛կ, քանի որ այս գիշեր Քրիստոսը երեւաց ինձ եւ ասաց. «Երմոդէ՛, այժմ քեզ էլ է պատերազմ սպասում, ինչպէս Իմ ծառայ Պանտալէոնին»: Եւ մեծ ուրախութեամբ գնաց նրա հետ:

Երբ թագաւորը նրան տեսաւ, հարցրեց. «Ի՞նչ է քո անունը»: Մերն ասաց. «Իմ տէրունական անունը քրիստոնեայ է, իսկ ծնողներիս կողմից Երմոդայոս եմ անուանուել»: Թագաւորն ասաց. «Քեզ հետ այլ ընկերներ ունե՞ս»: Մերն ասաց. «Երկու ընկերներ ունեմ՝ Երմիպպոսը եւ Երմոկրատէսը, որոնք մեզ նման քրիստոնեայ են»: Թագաւորը հրամայեց, որ նրանց էլ բերեն, եւ երբ բերեցին, ասաց նրանց. «Դո՞ւք էիք, որ Պանտալէոնին աստուածներից բաժանեցիք»: Նրանք պատասխանեցին. «Քրիստոսն Ինքն է արժանաւորներին Իր մօտ կանչում»: Թագաւորն ասաց. «Համոզէ՛ք նրան, որ աստուածներին զոհ մատուցի, եւ իմ սիրելիներն ու մերձաւորները կը լինէք»: Նրանք ասացին. «Մենք աղաչում ենք մեր երկնաւոր Աստծուն, որ միայն Նրան սիրելի ու մերձաւոր լինենք»: Այս ասելով՝ չորսով միասին սկսեցին աղօթել Տիրոջը. «Տէ՛ր Աստուած, ցո՛յց տուր Քո Աստուածութեան զօրութիւնը Քո անուան համար հաւաքուածներին»: Քրիստոսը երեւաց նրանց, եւ անմիջապէս շարժուեց այն տեղը, ուր աղօթում էին: Թագաւորն ասաց. «Ահա տեսնո՞ւմ էք, որ իմ աստուածները շարժում են գետինը»: Սուրբ Պանտալէոնը պատասխանեց. «Եթէ երկիրը շարժում են, ապա իրե՞նք ինչու կործանուեցին»: Այս խօսքի վրայ թագաւորի մի մեհեանից մէկը եկաւ եւ գուժեց. «Արքա՛յ, քո աստուածներն ընկան ու փշրուեցին»:

Այս լսելով՝ թագաւորը խռովուեց եւ ասաց. «Երդւո՛ւմ եմ իմ արեւով, եթէ շտապ չսպանեմ դրանց, աւելի մեծ վիշտ կը պատճառեն ինձ.

տեսնո՞ւմ էք այդ մոգերին, ինչպէս չորսը միաբանուեցին եւ համարձակուեցին աստուածներին էլ ձեռք նետել»: Եւ հրամայեց Պանտալէոնին բանտարկել, իսկ երեք վկաներին բազում տանջանքներով չարչարել ու գլխատել: Եւ մինչ երանելիներն աղօթում էին, դահիճները կտրեցին սուրբ Երմոդայոս ծերունու եւ երկու եղբայրների՝ Երմիպպոսի եւ Երմոկրատէսի գլուխները, որոնց մարմինները քրիստոնեաները վերցրին ու թաղեցին:

Ապա Մաքսիմիանոսը կանչեց Պանտալէոնին եւ ասաց նրան. «Մի՛ կարծիր, թէ որեւէ մէկը կարող է փրկել քեզ իմ ձեռքից, բայց եթէ զոհ մատուցես, կը փրկուես»: Պանտալէոնն ասաց. «Քո այդ խօսքերին պատասխան տալու հարկ չկայ»: Թագաւորն ասաց. «Ահա քո վարդապետ Երմոդայոսը, Երմոկրատէսն ու Երմիպպոսը լսեցին ինձ ու զոհ մատուցեցին աստուածներին, եւ այժմ արքունիքի առաջին պաշտօնեաներից են»: Պանտալէոնն ասաց. «Թագաւո՛ր, հրամայի՛ր ինձ տեսնել նրանց եւ նրանց հետ յաւիտեանս նոյն արքունիքում լինել»: Թագաւորն ասաց. «Անհրաժեշտութիւն եղաւ մի քաղաքում, եւ ես ուղարկեցի նրանց»: Պանտալէոնն ասաց. «Ո՛վ անամօթ, լա՛ւ ասացիր: Կամենում էիր ստել, սակայն արդարն ասացիր, քանի որ նրանք երկնքում են՝ Քրիստոսի քաղաքում եւ երկնաւոր արքունիքում»: Թագաւորը բարկացաւ սուրբի վրայ, հրամայեց նրան սաստիկ ծեծի ենթարկել եւ ուղարկել գլխատելու: Իսկ սուրբը գնում էր՝ ուրախութեամբ սաղմոսելով. «Բազում անգամ մարտնչեցին իմ դէմ իմ մանկութիւնից ի վեր եւ չյաղթեցին ինձ»: Դահիճները նրան տարան նիկոմիդացիների քաղաքից դուրս՝ մօտ մէկ մղոն դէպի արեւմուտք, կապեցին մի թզենու, դահիճներից մէկը սրով հարուածեց նրան, սակայն երկաթեայ սուրը կակուղ մոմի նման դարձաւ, ետ ծալուեց եւ չդիպաւ արդարին: Դահիճները սարսափեցին եւ ասացին. «Մե՛ծ է Քրիստոսի զօրութիւնը»: Նրանք ընկան սուրբի ոտքերը եւ աղաչեցին աղօթել իրենց համար, որ իրենք էլ հաւատան նրա Աստծուն:

Այնժամ սուրբը աչքերը բարձրացրեց երկինք եւ ասաց. «Տէ՛ր Աստուած իմ, կատարի՛ր իմ ցանկութիւնը, այս մարդկանց չնորհի՛ր մեղքերի թողութիւն եւ մա՛ս տուր երկնքի արքայութեան մէջ, քանի որ Քեզ ապաւինեցին, Տէ՛ր»: Երկնքից ձայն եղաւ եւ ասաց. «Իմ ճշմարիտ ծառա՛յ Պանտալէոն, քո ցանկութիւնը կատարուեց, եւ երկնքի դռները բացուեցին քեզ համար: Այսուհետեւ թող քո անունը լինի Պանտելէիմոն (այսինքն՝ ամէնողորմ). քանի որ շատերին ողորմեցիր եւ

դեռ կ՚ողորմես ու նեղութեան մէջ ապաւէն կը լինես նրանց: Քո ոսկորների նշխարները կը բժշկեն բոլոր հիւանդներին»:

Սա լսելով՝ երանելին կանչեց այդ մարդկանց, որ կատարեն արքունական հրամանը, սակայն նրանք չկամեցան ձեռք բարձրացնել նրա վրայ: Քրիստոսի վկան նրանց ասաց. «Եթէ թագաւորի հրամանը չկատարէք, ինձ հետ բաժին չէ՛ք ունենայ»: Եւ նրանք, համբուրելով սուրբին, կտրեցին նրա գլուխը: Եւ ահա արեան հետ միասին կաթ կամ արեան փոխարէն կաթ բխեց, եւ սուրբի մարմինը երեւաց սպիտակ՝ ինչպէս ձիւն: Եւ ձիթենու տունկը պտուղներով լցուեց: Նիկոմիդիա քաղաքի ժողովուրդը, տեսնելով սքանչելիքները, փառք տուեց Աստծուն, եւ շատերն այդ օրը հաւատացին Տիրոջը:

Երբ թագաւորը սա լսեց, հրամայեց կտրել այդ ծառը եւ այրել սուրբի մարմինը, բայց քրիստոնեաները դահիճների միջոցով վերցրին նրա պատուական ոսկորները եւ գաղտնի ամփոփեցին նահատակութեան վայրին մօտ գտնուող Ադամանտիոս իմաստասէրի ագարակում, հաւաքեցին նաեւ նրա կաթախառն արիւնը:

Սուրբ Պանտալէոն հրեշտակատիպ երիտասարդը նահատակուեց Տիրոջ մօտ 300 կամ 303 թուականի յուլիս ամսի 27-ին:

Սուրբի ընկերները՝ Լաւպիտիոսը, Բասոսը եւ Պրոմֆինոսը, որոնք նրա մօտ էին նրա նահատակութեան ժամանակ, գրեցին սուրբ վկայ Պանտալէոնի ստոյգ եւ հաւաստի պատմութիւնը:

Մատենագիրներն ասում են, թէ Կոստանդիանոսը սուրբ Պանտալէոնի անունով վկայարան չինեց ոչ միայն Նիկոմիդիայում, այլեւ Կոստանդնուպոլսում, Հայոց Սեբաստիայում եւ Յորդանանի անապատում: Այլ կայսրեր նոյնպէս, յատկապէս Յուստինիանոսը, թագուհիներ ու իշխաններ զանազան դարերում նորոգեցին կամ չինեցին այլեւայլ տաճարներ սուրբի անունով:

Սուրբ Պանտելէիմոնի գլխաւոր տաճարում դարեր շարունակ մի շշի մէջ պահւում էր սուրբի կաթախառն արիւնը, որը հաւատով մօտեցողներին պարգեւում էր բժշկութիւն:

ԺԳ դ. Սուրբ Պանտելէիմոն վանքի մի վանական գրում է, որ դեռեւս իր օրերին կար այդ շիշը երկգոյն՝ սպիտակ եւ կարմիր հիւթով, որը սուրբի տօնի օրը հանում էին ի տես ժողովրդի: Ասում են՝ երբեմն արիւնը վերեւում էր երեւում, կաթը՝ ներքեւում, երբեմն էլ՝ հակառակը: Յետագայ դարերում այն փոքրիկ շշերով բաժանուեց Եկեղեցիներին:

Սուրբի նշխարների մասունքները սփռուել են արեւելքից արեւմուտք զանազան գաւառներում ու քաղաքներում: Սուրբի բազուկը գտնւում է Նէապոլում՝ Սուրբ Գրիգոր Լուսաւորչի եկեղեցում, մի այլ մաս՝ Պորտուա քաղաքում՝ Սուրբ Պետրոսի եկեղեցում, որը գտնւում է այն փողոցի վրայ, որը կոչւում է Հայոց ճանապարհ, նաեւ Հռոմում, Ֆրանսիայում: Սուրբի նշխարներից մասունքներ կան նաեւ Հայոց Արցախում՝ Գանձասար վանքի աւագ խորանի տակ, եւ այլ եկեղեցիներում:

Եւ դարեր շարունակ սուրբ Պանտալէոն բժշկի անունով եւ նրա հրաշագործ նշխարներով բազում սքանչելիքներ են գործուել ի փառս Աստուծոյ:

ՍՈՒՐԲ ՍՏԵՓԱՆՈՍ ՈՒՂՆԵՑՈՒ ԵՒ ՆՐԱ ԸՆԿԵՐԱԿԻՑՆԵՐԻ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Մեծ Նախավկայի անուանակիրն ու նրա քաջ նահատակութեանը հետեւողը՝ երանելի Ստեփանոսը՝ Թորգոմի տան պսակը, ապրել է Յուլիանոս Ուրացողի օրերին Փոքր Հայքում: Սուրբի ծնունդը եղել է այսպէս: Նրա հայրը, որի անունը Ղազարոս էր, Միջագետքի կողմերի մի նախարարական տնից պատուական ու մեծազգի մարդ էր, որը մանկուց բնակուել էր Ասորիքի Անտիոք քաղաքում եւ գաղտնի դաւանել Քրիստոսին: Քանի որ դեռեւս տարբեր տեղերում կային ամբարիշտ Լիկիանոսի եւ նրա պաշտօնեաների հրամանով քրիստոնեաներին հալածող հեթանոսներ, Ղազարոսը անօրէնների ահից փախուստի էր դիմել, եկել Փոքր Հայքի Կոկիսոն քաղաք եւ, երեք տարի ապրելով այնտեղ, ամուսնացել: Նրա կինը՝ Մարիամը, նոյնպէս քրիստոնեայ էր եւ լցուած էր Աստուծոյ երկիւղով: Նրանք բարի վարքով ապրում էին Եկեղեցու խաղաղութեան օրերին: Նրանք զաւակ չունէին. Մարիամն ամուլ էր, ուստիեւ ուխտերով խնդրում էին Աստծուն իրենց որդի պարգեւել: Եւ նրանց պահքերի եւ աղօթքների շնորհիւ Աստուած պարգեւեց նրանց խնդրանքը, եւ նրանք արու զաւակ ունեցան:

Երբ երեխան ութ օրական դարձաւ, նրան տարան Սուրբ Աստուածածնի տաճար, որտեղ Կոստանդին քահանան մկրտեց նրան, անուանեց Ստեփանոս եւ մանկութեան օրերից իր ձեռքով դաստիարակեց՝ անելով աստուածպաշտութեան կարգով, իսկ եօթ տարեկանից յետոյ սկսեց ուսուցանել Սուրբ Գիրքը: Սուրբ քահանան ամէն օր սուրբ Պատարագ էր մատուցում եկեղեցում եւ ամէն կիրակի այլ քրիստոնեաների հետ միասին մանկանը հաղորդ էր դարձնում Տիրոջ Մարմնի եւ Արեան կենարար խորհրդին: Եւ մանուկ Ստեփանոսն աճում ու զօրանում էր իմաստութեամբ եւ Սուրբ Հոգու շնորհներով լցուած: Արդէն տասնհինգ տարեկանում, լինելով լաւ կրթուած աստուածային պատուիրանների ու Աստուածաշունչ Գրքի մէջ, իր հոգելից խօսքով եւ օրինակով աստուածպաշտութեան էր յորդորում հաւատացեալներին:

Երբ Կոստանդին քահանան հիւանդացաւ, իր մօտ կանչեց Աստուծոյ ծառայ Ստեփանոսին եւ ասաց նրան. «Որդեա՛կ, պի՛նդ կաց

հաւատիդ մէջ եւ քաջալերի՛ր փոքրիկ հօտիդ, որ հաւատի մէջ չերկմտի, մինչեւ Աստուած իրեն տեսուչ տայ»: Սա ասում էր ժամանակի խռովութեան պատճառով, քանի որ անօրէն Յուլիանոսի թագաւորելու լուրը հասնելուց յետոյ կռապաշտները գլուխ էին բարձրացրել եւ սպառնում էին վերացնել քրիստոնէութիւնը: Ապա Կոստանդինը, ձեռքը դնելով Ստեփանոսի վրայ, մարգարէական հոգով ասաց. «Տէրը քեզ եւ հաւատացեալ հօտիդ հետ, Աստուծո՛յ ծառայ: Դո՛ւ էլ, որդեակ, ոչ երկար ժամանակ անց մի քանիսի հետ միասին կը փախչես լեռնակողմը եւ կարճ ժամանակ կը մնաս այնտեղ. ձեզ կը մատնեն անօրէններին, եւ կը նահատակուէք: Ձեր նահատակութեան տեղում ախտաժէտների բժշկութիւն կը լինի, քո անունը կը տարածուի ամբողջ աշխարհում, եւ քեզնով կը փառաւորուի Աստուած»: Սա ասելով՝ աւանդեց հոգին: Սուրբ Ստեփանոսի կոչով հաւաքուեցին քրիստոնեաները եւ մեծ պատուով գերեզման դրեցին սուրբ քահանայի մարմինը:

Ժողովուրդը, որը շատ տրտում էր այդպիսի նեղ օրերին իր քահանային կորցրած լինելու պատճառով, մխիթարւում էր Աստուծոյ ծառայ Ստեփանոսով, նրա միջոցով հաստատւում էր հաւատի մէջ եւ զօրանում Տիրոջով:

Կարճ ժամանակ անց սկսուեցին քրիստոնեաների հալածանքները, եւ երբ Յուլիանոսը եկաւ Կեսարիա, որի հայրապետը մեծն Բարսեղն էր, հալածանքների դառը հրդեհը հասաւ մինչեւ Կոկիսոնի սահմանները: Անօրէնը, սպառնալով ժողովրդին, ասում էր. «Պարսկաստանից վերադառնալուցս յետոյ եթէ չհամաձայնէք իմ կամքը կատարել, չարաչար մահով կը մեռնէք»: Եւ մեծամեծերի ու ոստիկանների հետ մարդիկ ուղարկեց՝ բոլոր քաղաքներում փնտռելու քրիստոնեաներին՝ ասելով. «Եթէ համաձայնեն ուրանալ Խաչեալին եւ երկրպագեն աստուածներին, պատուի՛ արժանացրէք, իսկ եթէ ոչ, սրով սպանէ՛ք»: Իսկ ինքն իր բանակի հետ գնաց Պարսկաստան:

Հայոց Կոկիսոն քաղաք եկաւ նրա ոստիկաններից մէկը, որն անուանւում էր Սոկրատէս բդեշխ, եւ ահ ու սարսափ գցեց բոլորի սրտերում: Երբ սուրբ Ստեփանոսն իմացաւ, որ քրիստոնեաները երկմտում ու դողում են նրա ահից, հաւաքեց իր ծանօթներին եւ ասաց նրանց. «Եղբայրնե՛ր, թերահաւատ մի՛ եղէք եւ մի՛ վախեցէք անօրէն դատաւորից, որովհետեւ Աստուած կը փրկի մեզ նրա ձեռքից, ինչպէս փրկեց առաջին նահատակներին եւ պսակեց անմահական փառքով: Այժմ, եղբայրներ, ելնե՛նք քաղաքից եւ գնանք Քրիստոսի յետեւից,

ինչպէս որ առաջնորդի մեզ, քանի որ բոլորդ չէ, որ կատարեալ էք. ձեր մէջ կան դեռեւս մանուկներ. գուցէ չարի ծառան պատրող խօսքերով համոզի ձեզնից որեւէ մէկին, ինչպէս եղաւ նախկինների մէջ, եւ պառակտի ընտիր հօտը»: Եւ նրանք ասացին. «Տէ՛ր է մեր յոյսը, մենք ումի՞ց վախենանք: Թող մեր Տիրոջ կամքը լինի»:

Այնժամ Ստեփանոսը նրանց հետ միասին մտաւ մօտակայքում գտնուող Սուրբ Աստուածածնի տաճարը եւ, երկինք բարձրացնելով իր ձեռքերը, ասաց. «Տէ՛ր մեր եւ Աստուած, Դու ես մեր Արարիչը, Քեզ ճանաչեցինք սուրբ առաքեալների միջոցով, այլ Աստուած չկայ Քեզնից բացի, ինչպէս անօրէնների ձեռքից փրկեցիր առաջին ընտրեալներին եւ Քեզ հաւատացողների համար նրանց ամուր աշտարակ ու պարիսպ դարձրիր, որ նաեւ մենք, նայելով նրանց, հաստատուենք Քո մէջ ուղիղ հաւատով, այդպէս էլ Քեզ հաւատով կանչող ծառաներիդ աղաչանքներն ընդունիր սուրբ Աստուածածնի բարեխօսութեամբ ու Կոստանդին սուրբ քահանայի աղօթքներով եւ առաջնորդի՛ր մեզ Քո հրեշտակի ձեռքով, որ տանելով՝ հասցնի մեզ նաւահանգիստ: Աներկի՛ւղ պահիր հակառակամարտ եւ անօրէն դատաւորից, որ բանսարկուն չբաժանի մեզ, եւ դուրս չելնենք Քո հօտից, Տէ՛ր Աստուած մեր: Ողորմի՛ր մեզ, Տէր, ողորմի՛ր եւ փրկի՛ր մեզ, որպէսզի փառաւորենք Քեզ՝ Սուրբ Երրորդութեանդ, յաւիտեանս յաւիտենից. ամէն»:

Եւ Աստուծոյ սուրբը, վերցնելով այդ մարդկանց՝ մօտ երեսուներեք հոգու (նրանց մէջ էին նրա հարազատներն ու բարեկամները, եօթ կոյսեր, նրա հայրը՝ Ղազարոսը, որը հիւանդ էր), գիշերով դուրս ելաւ քաղաքից: Երբ բաւականաչափ հեռացան քաղաքից, Ստեփանոսի հայրը՝ աստուածասէր այր Ղազարոսը, մեռաւ: Նա Տիրոջ ձեռքն աւանդեց իր հոգին յիսունհինգ (կամ վաթսունհինգ) տարեկանում՝ անբիծ վարքով եւ ճշմարիտ առաքինութեամբ ապրելով: Աստուծոյ ծառաները գիշերով շտապ ամփոփեցին երանելիի մարմինը, աղօթելով գերեզմանի վրայ՝ սուրբ խաչի նշանով կնքեցին այն եւ գնացին լեռնակողմ: Հասան մի քարանձաւ, որտեղ Տիրոջ հրամանով սուրբ Բարսեղ Կեսարացի հայրապետը եկեղեցի էր հաստատել, երբ տեսիլքի մէջ տեսել էր, որ այդ լեռան վրայ հրէ սիւն է ցոլում: Եւ իր անուան նշանադրով մի օրհնուած խաչ էր նուիրել եկեղեցուն, որը կոչել էին սուրբ Աստուածածնի անունով:

Արդ, երբ հրեշտակի առաջնորդութեամբ Աստուծոյ ծառաները հասան այնտեղ, ուրախացան եւ գոհացան Աստծուց եւ, իրենց պարագլուխ ունենալով սուրբ Ստեփանոսին, սաղմոսներով, օրհնութեամբ

եւ հոգեւոր երգերով գիշեր-ցերեկ օրհնում էին Աստծուն եւ զօրանում էին մխիթարիչ Սուրբ Հոգու շնորհներով: Նրանք մնացին այնտեղ մօտ երեք ամիս, եւ նրանց կերակուրը լեռան կանկարն էր:

Նրանց հետ եղող սուրբերից մէկը՝ Սոմնասը, մի օր կանկար հաւաքելու գնաց լեռան միւս կողմը՝ մի հովտանման տափարակ: Մի հովիւ, որն իր հօտն էր արածեցնում այնտեղ, տեսաւ նրան եւ գնալով նրա մօտ՝ հարցրեց, թէ որտեղից է նա եւ ինչ է անում այդտեղ: Սուրբ Սոմնասն ասաց, որ ինքն Աստուծոյ ծառան է եւ եկել է բանջար տանելու իր եղբայրների ու քոյրերի համար: Եւ հովիւը հարցրեց, թէ որտեղ են բնակւում եւ ինչ են պաշտում, սուրբը պատասխանեց, թէ փախել են Սոկրատ դատաւորից, լեռան միւս կողմում են բնակւում եւ պաշտում են խաչուած Աստծուն: Հովիւը, սա լսելով, բարկութեամբ լցուեց եւ կամեցաւ բռնել նրան ու սպանել: Իսկ սուրբ Սոմնասը փախաւ գնաց իր ընկերների մօտ եւ պատմեց, ինչ որ պատահել էր: Եւ սուրբերն ապաւինեցին աղօթքին եւ իրենց անձերը յանձնեցին Աստծուն:

Իսկ հովիւը, հօտը տանելով իր ընկերների մօտ, շտապ գնաց դատաւորի մօտ եւ մատնեց նրանց՝ ասելով. «Մեր դիմաց գտնուող քարայրում են քաղաքից փախած մարդիկ»: Դատաւորը, երբ լսեց այս խօսքերը, շատ ուրախացաւ, բայց հրամայեց երկաթեայ կապանքներով կապկպել մատնիչին՝ ասելով. «Միգուցէ դու ես նրանց փախցրել իմ քաղաքից, որ այդքան դիւրութեամբ գտար: Այժմ շտապ տա՛ր իմ զինուորներին նրանց մօտ, որ նրանց ինձ մօտ բերեն, ապա թէ ոչ, սրով կը սպանեմ քեզ»: Եւ նա խոստացաւ կատարել դատաւորի պատուէրը:

Մինչեւ նրանց հասնելը, սուրբ Ստեփանոսը, գուշակելով կատարուելիքը, իր ընկերների հետ միասին մտաւ քարանձաւում գտնուող Սուրբ Աստուածածնի տաճար, ծունկի իջաւ սուրբ նշանի առջեւ եւ ասաց. «Օրհնեա՛լ ես, ճշմարի՛տ Աստուած, որ արժանի համարեցիր մեզ նահատակուելու անօրէնների ձեռքով: Այո՛, Տէր, կարո՛ղ ես մեզ փրկել նրանց ձեռքից, բայց կամենում ես մեր օգուտն ու բարին Քո սուրբ անուան փառքի համար, իսկ մենք, չիմանալով Քո բարեսէր կամքը, փախանք եկանք այստեղ: Այժմ թող Քո կամքը լինի, Տէ՛ր Աստուած, քանի որ պատրաստ ենք մեռնելու Քո անուան համար. մի՛ թողնիր մեզ՝ Քո արեան գինը, որ փառաւորենք Ամենասուրբ Երրորդութեանդ ամենազօր տէրութիւնը այժմ եւ յաւիտեաններում. ամէն»:

Երբ աւարտեցին աղօթքը, փոքր-ինչ ննջեցին տրտմութիւնից: Այնժամ Տէրը նրանց մօտ ուղարկեց իր հրեշտակին, որն ասաց նրանց. «Մի՛ վախենաք, որովհետեւ Տէրն իր օգնականութիւնն ուղարկեց ձեզ, եւ թշնամին չի՛ կարող յաղթել ձեզ, դուք զօրացէ՛ք Տիրոջով եւ յաղթանակ տանելով՝ փառքի պսա՛կն ընդունէք, թող ձեր ոսկորների նշխարներից բժշկութիւն լինի այս երկրում, եւ ձեր քաջութեան համբաւը թող տարածուի ամբողջ աշխարհում»: Երբ հրեշտակի տեսիլքից զարթնեցին, յոյժ ուրախացան եւ սկսեցին աղօթել:

Իսկ անօրէն հովիւը զինուորների հետ միասին եկաւ եւ երբ մօտեցաւ սուրբերին, յանկարծակի պիղծ դեւը նրան հարուածեց, եւ նա չարաչար չարչարանքներով մեռաւ: Զինուորներն ահ ու սարսափի մէջ ընկան: Սուրբ Ստեփանոսն ու միւս սուրբերն այս տեսնելով՝ փառաւորեցին Աստծուն: Ապա սուրբ Ստեփանոսն մօտեցաւ եւ ասաց զինուորներին. «Ի՞նչ էք փնտռում եւ ինչի՞ համար էք եկել»: Եւ նրանք ասացին. «Մեզ Սոկրատէս իշխանն է ուղարկել այստեղ, որ ձեզ իր մօտ տանենք, որովհետեւ այդ հովիւը եկաւ եւ մատնեց ձեզ: Այժմ, եթէ կամենում էք, գնանք նրա մօտ, ապա թէ ոչ, դատաւորը մեզ կը սպանի»: Սուրբ Ստեփանոսն ասաց. «Ձենք վախենում ձեր իշխանի մօտ գալուց, որովհետեւ ահա Տէրն ամաչեցրեց մեր թշնամուն, եւ մենք պատրաստ ենք մեռնելու Նրա անուան համար»:

Ապա սուրբ Ստեփանոսը դարձաւ իր ընկերներին. «Եղբայրնե՛ր, գնա՛նք. հասել է մեր նահատակութեան ժամը, որ ինչպէս կեանքում միասին եղանք, մեր նահատակութեան ժամանակ էլ միասին լինենք, որպէսզի բանսարկուն կորստեան չմատնի որեւէ մէկիս եւ չծիծաղի մեզ վրայ»:

Եւ միասին ծունկի իջան սուրբ Աստուածածնի առջեւ եւ սկսեցին երգել «Տէրը կը հովուի ինձ» սաղմոսը: Աւարտելով այն՝ սուրբ Ստեփանոսն ասաց. «Տէ՛ր, առաջնորդի՛ր եւ պահի՛ր մեզ, որովհետեւ Քեզ ապաւինեցինք»: Ապա վեր կացան, զինուորների հետ ճանապարհ ընկան եւ եկան հասան մի դղեակ, որը յետոյ Կանչի անուանուեց: Սոկրատէս դատաւորն այնտեղ էր:

Երբ սուրբերին կանգնեցրին նրա առաջ, յոխորտալով ասաց. «Փախչելով կամենում էիք ազատուե՞լ ձեռքիցս»: Սուրբ Ստեփանոսը, հոգով զօրացած, ամօթով թողեց յոխորտացող իշխանին. «Քանի որ մենք երկնքի ու երկրի Արարչի ծառաներն ենք եւ հպատակւում ենք Նրա օրէնքներին, անօրէնների հետ հաղորդակցուելու պէտք չունենք,

այդ պատճառով էլ երբ լսեցինք, թէ անօրինութեան պաշտօնեան է եկել, փախանք քո անունից, որովհետեւ քեզ միայն տեսնելն իսկ ամօթ ու նախատինք համարեցինք»: Դատաւորն ասաց. «Հեռացրո՛ւ քեզնից յամառութիւնդ եւ համաձայնի՛ր ինքնակալի կամքը կատարել, որ լաւ լինի քեզ եւ ընկերներիդ համար: Երդւում եմ իմ աստուածներով, որ մեծ պատուի կ՚արժանացնեմ քեզ եւ քեզ հետ եղողներին. քեզ իմ զօրքերի վրայ տէր եւ իշխան կը դարձնեմ: Սուրբ Ստեփանոսն ասաց. «Քո պարգեւները թող քեզ հետ կորչե՛ն, քանի որ չե՛նք հնազանդւում քո կամքին: Ինչ կամենում ես, շտապ արա՛, որովհետեւ պատրաստ ենք ե՛ւ կապանքների, ե՛ւ բանտի, ե՛ւ մահուան մեր Տէր Յիսուս Քրիստոսի անուան համար»: Դատաւորն ասաց. «Քո կախարդութեամբ ես համոզել այդ մարդկանց, որ քեզ հետ չըլեն: Այժմ ես կը խորտակե՛մ քո կախարդանքի զօրութիւնը»: Այս ասելուց յետոյ հրամայեց նրա ձեռքերը կապել յետեւում եւ արջառաջլերով խփել նրա որովայնին, լանջին ու թիկունքին:

Զինուորները կապկպեցին նրանց, իսկ կոյսերին եւ Ստեփանոսի մօրը՝ Մարիամին, բանտ նետեցին: Կապեալներին տարան մի գաւիթ եւ սկսեցին ծեծել ժամը վեցից մինչեւ տասը՝ փոխեփոխ դահիճներ ու պահապաններ կարգելով: Իսկ սուրբ Ստեփանոսն ու նրա ընկերները, աչքերը երկինք բարձրացնելով, սաղմոսում էին. «Ով ապրում է Բարձրեալի օգնութեամբ, Աստուծոյ հովանու տակ կ՚ապրի երկնքում», նաեւ՝ «Նայի՛ր ինձ օգնելու եւ փութա՛ ինձ պաշտպանելու, թող ամաչեն ու ամօթահար լինեն իմ անձը փնտռողները, թող յետ դառնան ու ամաչեն իմ մասին չար խորհողները»: Եւ այսպէս էին անցկացնում տանջանքների ժամերը: Երեկոյեան նրանց բանտ դրեցին, եւ գիշերը Աստուծոյ սուրբերը զօրացան:

Դատաւորի սպասաւորները զարմացած ու զարհուրած էին, որ սուրբերը ոչինչ էին համարում տանջանքների նեղութիւնները, եւ երբ լուսացաւ, գնացին եւ պատմեցին դատաւորին, թէ՝ «Այդ մարդիկ ոչինչ են համարում հարուածները, որ հասցնում ենք իրենց»: Դատաւորը հրամայեց նրանց իր առաջ բերել եւ ասաց նրանց. «Զարե՛ր ու աստուածների՛ թշնամիներ, մինչեւ ե՞րբ ներեմ ձեզ: Արդ կատարէ՛ք իմ կամքը եւ զո՛հ մատուցէք աստուածներին, որ չար տանջանքներով ձեզ կորստեան չմատնեմ»: Սուրբերը միաբերան պատասխանեցին. «Քո աստուածներին մենք չե՛նք երկրպագում եւ քո կամքը չե՛նք կատարում, որովհետեւ Տէրն է մեր օգնականը, չե՛նք վախենում քո սպառնալիք-

ներից. քանի որ ահա մեր մարմինների վրայ իշխանութիւն ունես, ինչ որ կամենում ես, շուտափոյթ արա՛»:

Այնժամ բռնակալը հրամայեց կախել նրանց եւ երկաթեայ քերիչներով քերել: Եւ այնքան քերեցին նրանց, մինչեւ նրանց մարմինները կարմրահանդերձ դարձան թափուած արիւնից, որ ոռոգում էր նրանց անդամները եւ յորդելով թափւում գետնին: Այդ տանջանքների մէջ նրանցից մէկը, որը տարիքով ամենափոքրն էր, աւանդեց հոգին: Նրա անունը Բագարատ էր: Երբ Ստեփանոսը տեսաւ, որ նա տագնապում է, ասաց նրան. «Որդեա՛կ իմ, երբ տանտէրը ճաշ է մատուցում իր որդիներին, սկզբում մատուցում է լաւ կերակուրը. դու այժմ պատուական, անբիծ ու անարատ գառ ես, խաղաղութեամբ գնա՛ մեր Տիրոջ մօտ»:

Երբ դատաւորին յայտնեցին պատանու մահուան մասին, բարկացաւ դահիճների վրայ, քանզի չէր կամենում, որ որեւէ մէկը շուտ մեռնէր: Ապա հրամայեց սուրբերին իջեցնել կախաղանից, իսկ մեռեալին նետել շների առաջ: Երբ երկու հոգի մօտեցան նահատակին եւ կամեցան քարշ տալ ու նետել գազաններին կեր, նրանց ձեռքերը կծկուեցին, լեզուները պապանձուեցին, եւ չկարողացան խօսել: Միւս զինուորները սա տեսան եւ վախեցած գնացին դատաւորին պատմեցին: Իշխաններից մէկը Սոկրատէսին ասաց. «Եթէ կախարդին չսպանես, կորստեան կը մատնեն մեր զօրքը. հովուին սպանեցին, իսկ այս երկուսին անպիտան դարձրեցին»:

Եւ բարկութեամբ լցուած դատաւորը սուրբերին իր առջեւ բերել տուեց եւ, ցասումով լցուած, ասաց նրանց. «Ձեր կախարդութիւնը յիմարացրեց ձեզ. իմ հովուին սպանեցիք, ես բանի տեղ չդրեցի, որ թերեւս համոզուէք, այժմ էլ իմ երկու պատուական մարդկանց կիսամահ արեցիք: Երդւո՛ւմ եմ իմ աստուած Ասկղեպիոնով, որ եթէ կամքս չկատարէք եւ չմոռանաք ձեր յամառութիւնը, չարաչար մահուամբ կը սպանե՛մ ձեզ, ինչպէս այն մեռեալին: Բայց եթէ կատարէք, կը մոռանամ այն ամէնն, ինչ արեցիք. միայն թէ ասէք, թէ հաւատում էք մեծ աստուած Ասկղեպիոնին, քանի որ նրանով ենք մենք եւ մեր երկիրը խաղաղութեան մէջ մնում»:

Սուրբ Ստեփանոսն առաջ եկաւ եւ ասաց. «Սատանայի՛ որդի, քո հովուին սպանեցին դեւերը, որոնց դու աստուած ես անուանում, նաեւ Ասկղեպիոնդ է դեւերի բնակարան ճանաչւում: Իսկ մենք անխօս ու անմիտ դեւերին չե՛նք երկրպագում:

Մեր ընկերը, որին մեռած ես կարծում, մահուանից կեանքի փոխուեց. այդ մասին Պողոսն ասում է. «Եթէ միայն այս կեանքի համար ենք յուսացել ի Քրիստոս, բոլոր մարդկանցից առաւել ողորմելի ենք» [Ա Կոր. ԺԵ 19], եւ դարձեալ՝ «Իսկ արդ, ովքեր ննջեցին ի Քրիստոս, կորա՞ն արդեօք» [Ա Կոր. ԺԵ 18]: Արդ, մեր այս եղբայրը զօրացրեց մեզ Քրիստոսի սիրոյ մէջ եւ գնաց, տեղ պատրաստեց մեզ համար»:

Սոկրատէսն ասաց. «Քո խելագարութիւնը քեզ չի թողնում, որ հասկանաս, թէ ինչ ես ասում»: Ստեփանոսն ասաց. «Դո՛ւ ես խելագար, որ մարդկանց ձեռքի գործերը՝ քանդակուած փայտերն ու կոփուած քարերը, աստուած ես անուանում եւ չգիտես, որ նրանք չեն կարող փրկել քեզ յաւիտենական հրից, որովհետեւ հոգուդ աչքերը կուրացել են, եւ չես տեսնում, այլ մարմնաւոր պատուիդ մասին ես հոգում»: Սոկրատէսն ասաց. «Իսկ դուք ի՞նչ շահ ունէք Խաչուածին պաշտելուց, ձեզնից առաջ էլ շատերը պաշտում էին Նրան, եւ թագաւորները նրանց սպանեցին»: Ստեփանոսն ասաց. «Ո՛վ հակառակամարտ, նրանք՝ Խաչեալին պաշտողները, մահուանից կեանք են տեղափոխուել եւ անթառամ պսակներին արժանացել»: Սոկրատէսն ասաց. «Ես կը հասցնե՛մ քեզ անթառամ պսակներին»: Եւ հրամայեց դալար ճիպոտներով խփել նրանց գլուխներին, մինչեւ որ տասը հոգի տկարացան հարուածներից:

Իսկ ստեփանոսեանները, ձեռքերը երկինք բարձրացնելով, ասում էին. «Օգնի՛ր մեզ, Տէ՛ր Աստուած, մեր նեղութեան մէջ, քանի որ Քո անուան համար են ծաղրելով խփում մեր գլուխներին եւ անարգում են Քո անունը: Քանզի մենք Քո ծառաներն ենք եւ սուրբ առաքեալների միջոցով ճանաչեցինք Քեզ, Տէ՛ր, որ Քեզանից բացի այլ Աստուած չկայ: Արդ, մի՛ թողնիր, որ անօրէնները հայհոյեն Քո անունը, այլ ցո՛յց տուր Քո աքանչելիքները, որ միայն Քեզ ճանաչեն ճշմարիտ Աստուած, եւ հաւատացեալները փառաւորեն Քո սուրբ անունը»: Երբ աւարտեցին աղօթքը, յանկարծակի այնպիսի սաստիկ լոյս փայլեց, որ արեգակը չէր երեւում, Տէրն իջաւ նրանց մօտ եւ ասաց. «Խաղաղութի՛ւն ձեզ, իմ սիրելինե՛ր, քանզի ձեզ հետ եմ յաւիտեան»: Նոյն պահին բժշկեց նրանց եւ բարձրացաւ երկինք: Երբ սուրբերը տեսան աքանչելիքը եւ իրենց անձերի բժշկուելը, յոյժ ուրախացան ու գոհացան Աստծուց: Դատաւորն ու իշխանները վախեցան ու զարմացան, իսկ այնտեղ գտնուողները կուրացան. եւ մօտ հարիւր յիսունհինգ հոգի զղջալով՝ հաւատացին Տիրոջը: Նրանք աղաղակելով ասում էին. «Մենք էլ ենք պաշտում Ստե-

փանոսի Աստծուն»: Եւ սուրբ Ստեփանոսը, ձեռքը դնելով նրանց վրայ, բժշկեց նրանց եւ հաստատեց Քրիստոսի հաւատի մէջ:

Դատաւորը, տեսնելով կատարուածը, յոյժ տրտմեց: Նրա իշխաններից մէկն ասաց. «Ասացի՝ շտապ սատկեցրո՛ւ դրանց, որ իրենց կախարդութեամբ չսպանեն մեզ: Այժմ արա՛ ինչ որ ասացի քեզ, հրամայիր նախ կոյսերին բերել ու սպանել եւ ապա այդ մարդկանց»: Եւ նա հրամայեց կոյսերին իր առաջ բերել. դատաւորը խօսել սկսեց նրանց հետ եւ ասաց. «Խնայեցի ձեր գեղեցկութիւնը եւ չտանջեցի ձեզ, ինչպէս ձեր ընկերներին: Այժմ կատարէ՛ք իմ կամքը եւ զո՛հ մատուցէք աստուածներին, եւ ես երդուելով ասում եմ, որ ձեզ մեր իշխանների տիկիններ կը դարձնեմ եւ բազում պատիւների ու մեծութեան կ՚արժանացնեմ, իսկ եթէ ոչ, սրով կը սպանեմ ձեզ»:

Մարիամն ասաց. «Այս կոյսերն իրենց անձերը չեն նուիրել երկրաւոր մեծութեան կամ որեւէ մարդու, այլ Քրիստոս Թագաւորին: Արդ, դու պատիր խօսքերով մի՛ փորձիր քաշել նրանց դէպի քեզ եւ մի՛ բարբաջիր, քանի որ մենք մեր յոյսը Տիրոջ վրայ ենք դնում եւ չե՛նք վախենում քո սպառնալիքներից, մեր որդեակի եւ նրա ընկերների՝ մեր եղբայրների աղօթքներով Տէրը մեզ կ՚օգնի եւ կը փրկի քո ձեռքից»: Այնժամ դատաւորը հրամայեց դահիճներին նրանց տանել հեռու եւ այնտեղ սպանել, որ նրանց մարմինները գազանների կերակուր դառնան: Եւ դահիճները վաղ առաւօտեան սուրբ կոյսերին Մարիամի հետ միասին տարան նրանց սպանման վայրը:

Երանելի Մարիամը, երբ տեսաւ, որ իրենց աւելի առաջ են տանում նահատակութեան, քան եղբայրներին ու իր որդուն, ցնծալից արտասուելով եւ բարձր ձայնով սկսեց ասել Ստեփանոսին, որն իրենցից փոքր-ինչ հեռու էր. «Որդեա՛կ Ստեփանոս, դու գիտես, թէ ինչպէս սնեցի քեզ, ինչպէս կրթեցի աստուածպաշտութեան մէջ, արդ պի՛նդ կաց հաւատիդ մէջ եւ քաջալերի՛ր եղբայրներիդ, որ ոչ ոք չզարհուրի տանջանքներից, չվախենայ, չերկմտի եւ չերկնչի դատաւորի սպառնալիքներից, քանի որ նրանց մէջ դեռեւս պատանիներ կան: Արդ, նրանք, ովքեր չեն հասել կատարելութեան տարիքին, թող ձեզնից առաջ նահատակուելով՝ սրբութեամբ գնան մեր Տիրոջ մօտ, իսկ ինձ եւ իմ դուստրերի համար աղօթի՛ր, որ խաղաղութեամբ հասնենք մեր անձկալի Քրիստոսին»: Եւ սուրբ Ստեփանոսն ասաց. «Մա՛յր իմ, խաղաղութեամբ գնա՛, Տէրը թող քեզ եւ քոյրերիս հետ լինի», եւ յունարէն աւելացրեց (հաւանաբար առաջինը հայերէն էր ասել). «Մա՛յր իմ, թող առաջինն

այդ կոյսերը խմեն մահուան բաժակը եւ ապա դու. միգուցէ, մանկահասակ լինելով, վախենան սրից: Ես եւ իմ եղբայրները նոյն օրը նոյն ժամին կը գանք ձեզ մօտ»:

Դահիճները նրանց տարան նահատակութեան վայրը՝ լեռան ստորոտում գտնուող մի ձորակ, կոյսերի ձեռքերը կապեցին յետեւում եւ սկսեցին անխնայ կոտորել նրանց: Եւ նրանք մէկ-մէկ մորթուելու առաջանալով դէպի դահիճը՝ իրենց կնքում էին խաչի նշանով: Մարիամը կանգնել էր կոյսերի դիմաց եւ քաջալերում էր նրանց՝ հաւատի մէջ ամուր մնալով՝ հասնել Քրիստոսի տեսութեանը: Երբ դահիճները նրանց գլխատեցին, մերկ սուսերներով հասան Մարիամի մօտ, իսկ նա կանգնած էր՝ ձեռքերը երկինք բարձրացրած, եւ աղօթում էր՝ ասելով. «Օրհնեա՛լ ես, անմա՛հ Թագաւոր, որ իմ զաւակներին արժանացրիր անարատութեամբ ըմպելու մահուան բաժակը»: Դեռ աղօթքը չաւարտած՝ դահիճներից մէկը սրով հարուածեց նրա կրծքին, եւ Մարիամը Հօր, Որդու եւ Սուրբ Հոգու բարի խոստովանութեամբ աւանդեց իր հոգին: Օգոստոսի 11-ն էր, ուրբաթ, ժամը 10-ը:

Նրանց, նաեւ առաջինը նահատակուած Բագարատի սուրբ մարմիններն անթաղ էին մնացել: Նոր հաւատացեալները վերցրին սուրբ Բագարատի նշխարները եւ գիշերով գաղտնի տարան սուրբ կոյսերի նշխարների մօտ, ամփոփեցին մի տեղում եւ նրանց հանգստեան տեղը ծածուկ պահեցին միառժամանակ: Իսկ դահիճները սուրբերի վախճանից յետոյ գնացին դատաւորի մօտ եւ պատմեցին, ինչ որ արել էին: Այնժամ դատաւորը հրամայեց դարձեալ իր առաջ բերել Ստեփանոսին ու նրա ընկերներին եւ ասաց նրանց. «Մինչեւ ե՞րբ թոյլ տամ, որ ձեր կախարդութեամբ իմ ժողովրդին ձեր կողմը դարձնէք»: Սուրբերն ասացին. «Աստուածպաշտութեան դառնալը կախարդութի՞ւն ես համարում»: Սոկրատէսն ասաց. «Թագաւորներից հրաման եմ ստացել թողնել երեք-չորս յանցանքները, արդ, այսուհետեւ կատարէ՛ք իմ կամքը եւ զո՛հ մատուցէք աստուածներին, որ աւելի չար տանջանքների չմատնեմ ձեզ. եւ ձեր Աստուածը չի կարող փրկել ձեզ իմ ձեռքից»: Սուրբ Ստեփանոսն ասաց. «Ո՛վ դատաւոր, ինչո՞ւ ես ջանում փորձել Աստուծոյ ծառաներիս, մենք պատրա՛ստ ենք տանջանքներին, ինչ էլ որ բերելու լինես մեզ վրայ. քո ձեռքում են մեր մարմինները, արա՛, ինչ հաճելի է քեզ»:

Եւ դատաւորը հրամայեց մեծ կրակ պատրաստել եւ նրա մէջ նետել նրանց: Զինուորներն արեցին հրամայուածը եւ սաստիկ մեծ կրակ

վառեցին: Եւ երբ սուրբերին տանում էին, նրանք ճանապարհին երգում էին երեք մանուկների օրհնութիւնը: Երբ հասան հնոցի մօտ, զինուորները նրանց ձեռքերը կապեցին եւ նետեցին բորբոքուած հրի մէջ: Իսկ սուրբերը հնոցում կարծես հովանու տակ էին, որովհետեւ հուրը խորանաձեւ դարձաւ նրանց գլխավերեւում: Եւ սուրբ Ստեփանոսն իր ընկերների հետ սկսեց ասել. «Օրհնեա՛լ ես, անմա՛հ Թագաւոր, որ Քո սքանչելիքներն այսօր մեր մէջ ցոյց տուեցիր: Գովո՛ւմ ենք Քեզ, սքանչելի՛ Աստուած, եւ փառաւորում ենք Քո անունն այս հնոցի մէջ»: Զինուորները, սքանչելիքը տեսնելով, զարմացան եւ շատ վախեցան: Թողնելով սուրբերին հնոցում՝ փութով գնացին իրենց իշխանի մօտ եւ պատմեցին, ինչ որ տեսել էին: Դատաւորն ասաց. «Եւ դեռեւս կենդանի՞ են կրակի մէջ»: Զինուորներն ասացին. «Ուրախ են եւ փառաւորում են իրենց Աստծուն»: Բարկացած դատաւորն ասաց դահիճներին. «Շտապ կախարդներին տարէ՛ք հեղեղատ եւ սրով կոտորէ՛ք նրանց, որ նրանց կախարդութեանը հաւատացող նոր պաշտօնեաները չգան եւ չսպանեն ինձ, քանի որ զօրքս ինձ մօտ չէ» (այդ օրերին Յուլիանոսի մահուան եւ բարեպաշտ Յովիանոսի թագաւոր դառնալու լուրը հասել էր Պարսկաստան, եւ անօրէն Սոկրատէսը փութաց սպանել սուրբերին, մինչեւ ձերբակալուած քրիստոնեաներին ազատելու հրամանի լինելը):

Դահիճները գնացին եւ ստեփանոսեաններին ողջանդամ հանեցին կրակից, որովհետեւ Աստուծոյ կարողութեամբ Տիրոջ հրեշտակը պահել էր նրանց, եւ նրանց գլխից մի մազ անգամ չէր վնասուել: Դահիճները չէին համարձակւում ձեռք տալ նրանց, բայց որովհետեւ շատ էին վախենում դատաւորից, շտապեցնում էին իրար՝ նրանց տանելու նահատակութեան վայրը եւ դատաւորի հրամանը կատարելու: Նրանցից մէկը սուրբերի վրայից հանեց կապանքները, որ հեշտութեամբ քայլեն: Եւ սուրբերը մեծ ուրախութեամբ գնում էին, սաղմոսում եւ ասում. «Մեր նեղութեան մէջ մենք Տիրոջը կանչեցինք, Տէրը փրկեց մեզ նենգաւոր շուրթերից եւ չար լեզուից»: Եւ սաղմոսի կանոնն աւարտելով՝ հասան նահատակութեան վայրը, որը գտնւում էր մի խոր ձորակի մէջ՝ կոյսերի նահատակութեան տեղի դիմաց: Երբ դահիճները շտապեցրին, սուրբերը ծունկի իջան եւ ասացին. «Տէ՛ր, յո՛յս մեր, ապաւէ՛ն եւ Փրկի՛չ, ճշմարիտ Աստուա՛ծ, փառաւորում ենք Քո մարդասիրութիւնը, քանի որ փրկեցիր մեզ դատաւորի ձեռքից եւ պակների արժանացրիր մեր ամբողջ միաբանութեանը, որովհետեւ մեզնից ոչ ոք

չերկմտեց դատաւորի տանջանքներից: Այժմ, բարերա՛ր Տէր, լսի՛ր Քո ծառաների աղաչանքը Քո Մօր եւ Կոյսի՝ սուրբ Աստուածածնի բարեխօսութեամբ եւ ընդունի՛ր մեր հոգին, մարդասէ՛ր Տէր, որպէսզի փառաւորուի Քո անունը»: Երկնքից ձայն եղաւ եւ ասաց. «Եկէ՛ք, Աստուծո՛յ ծառաներ, եւ հանգստացէ՛ք այլ նահատակների հետ»:

Դահիճները յարձակուեցին սուրբերի վրայ եւ սկսեցին կոտորել նրանց: Սուրբ Ստեփանոսն, առանձին կանգնած, ձեռքերը երկինք բարձրացրած, աղօթում էր, բայց երբ տեսաւ կոտորուող եղբայրներին, ասաց. «Նախ փոքրերի՛ն սպանէք»: Իսկ դահիճները, հակառակուելով, նախ ծերերին կոտորեցին: Աստուծոյ ծառան մէկ առ մէկ քաջալերում էր սուրբերին՝ մի փոքր ժամանակ էլ ամուր մնալ եւ հասնել նահատակ ընկերներին, քանզի ասում էր. «Ահա գնում ենք դէպի հանգիստ, որը Տէրը պատրաստեց Իր ծառաների համար»: Այդպէս կոտորեցին բոլորին, եւ միայն Ստեփանոսը մնաց:

Այնտեղ բարի հաւատով նահատակուած սուրբերի անուններն էին՝ սուրբ Բագարատ, Վեղադիոս, Բասիլիոս, Սիմէոն Կեսարացի, Գրիգորիս կամ Գրիգորիոս եւ նրա որդիները՝ Սմբատն ու Յովհաննէսը, Ղեւոնդիոս պատուական ծերն իր երեք որդիների՝ Դաւթի, Ստեփանոսի եւ Թադէոսի հետ միասին, եւ մէկ այլ պատուական ու մեծազգի ծեր Անտիոքից իր չորս որդիներով եւ այլք (տասնեօթ կամ տասնուվեց հոգի), որոնց անունները գրուած են Կենաց Գրքում:

Իսկ սուրբ Ստեփանոսը տակաւին աղօթում էր ջերմ արտասուքով, եւ երբ դահիճները մօտեցան նրան, ասաց նրանց. «Ինչո՞ւ էք յապաղում, ինչո՞ւ էք ապշել՝ անօրինութեամբ արբած, ինչո՞ւ սատանան կուրացրեց ձեր սրտի աչքերը, եւ չէք հասկանում, որ նրանք, ովքեր ձեզ մեռած են թւում, մահուանից կեանք փոխուեցին եւ անանց հանգստի մէջ են գտնւում: Եթէ իմանայիք, թէ ինչ վիճակում են նրանք, նախանձաւոր կը լինէիք՝ հետեւելու նրանց»: Դահիճները, որ երեսունուվեց հոգի էին, ասացին. «Մենք գիտենք եւ մեր իշխանից իմացանք քո եւ քեզ հետ գտնուողների կախարդութեան մասին: Այժմ կամենում ես մե՞զ էլ ձեզ նման դարձնել, եւ դատաւորը սպանի՞ մեզ»: Իսկ սուրբն ասաց. «Այսպէս է գրուած. «Ով չի կամենում Աստուծոյ օրհնութիւնը, այն հեռու կը լինի նրանից»: Եւ նրանցից խնդրեց փոքրինչ սպասել, որ աղօթի եւ, ընկնելով իր երեսի վրայ, ասաց. «Ո՛վ ճշմարիտ Աստուած, անե՛ղ էութիւն, Սո՛ւրբ Երրորդութիւն, Քեզ անլռելի ձայնով փառաբանում են հրեշտակների դասերը եւ երկրպագում են

բոլոր արարածները՝ խոստովանելով Քեզ, հանապազ օրհնելով Քո տէրութիւնը եւ փառաբանելով Քո սուրբ անունը: Որ հաւատացեալներին իբրեւ ամուր պարիսպ տուեցիր Քո սուրբ խաչի նշանը, որ մենք, նրանով կնքելով մեր անձերը, ամաչեցնենք հակառակորդին, եւ նա չկարողանայ յաղթել մեզ: Քո սուրբ խաչին ապաւինելով՝ Քո ծառաներս մեր անձերը մահուան ենք մատնում Քո սուրբ անուան համար: Եւ արդ, Տէր, գոհանո՛ւմ ենք Քեզնից, որ աներկբայ հաւատով պահեցիր մեզ՝ մեռնելու Քո անուան համար: Այժմ, մարդասէ՛ր Տէր, ընդունի՛ր այս բանաւոր պատարագը, որ մատուցեցի Քեզ, դասիր սրանց Քո սուրբերի դասում եւ նրանց անունները գրի՛ր Կեանքի Գրքում: Նաեւ ի՛նձ ընդունիր, Տէ՛ր, եւ խաղաղութեամբ հասցրո՛ւ անվախճան կեանքի նաւահանգիստ: Աղաչո՛ւմ եմ Քո սուրբ անունը, Սո՛ւրբ Երրորդութիւն, ընդունի՛ր աղաչանքս եւ մեր նահատակութեան վայրը դարձրո՛ւ քրիստոնեաների բնակավայր, նոր հաւատացող հօտին օրհնի՛ր եւ օրըստօրէ աճեցրու նրանց, որ շատանան եւ օրհնեն Քո անունը, իսկ հակառակամարտ դատաւորին սատակմա՛ն մատնիր, ինչպէս նրա թագաւորին սատակեցրիր Մերկուրիոս վկայի ձեռքով եւ սուրբ Բարսեղ հայրապետի աղօթքներով, կատարեցիր նրա խնդրուածքները եւ ապրեցրիր Քո սուրբ անունը հաւատացողներին:

Եւ այժմ դարձեալ խնդրում եմ Քեզնից, մարդասէ՛ր Տէր, օրհնի՛ր Քո սուրբ անունը հաւատացողներին, մեր նահատակութեան տեղում թող հիւանդների բժշկութիւն լինի: Ովքեր գան եւ մեր անունով Քեզ աղաչեն այստեղ, օգնի՛ր նրանց եւ նրանց հիւանդութիւններն ու ցաւերը բժշկի՛ր եւ ապրեցրո՛ւ, որ փառաւորեն Քո սուրբ անունը: Ինձ էլ արժանացրո՛ւ ուրախութեամբ ըմպելու մահուան բաժակը, որ Քեզ՝ Հօրդ, Որդուդ եւ Սուրբ Հոգուդ, փառք մատուցեմ յաւիտեանների յաւիտեաններում. ամէն»:

Այնժամ երկնքից ձայն եղաւ, որն ասում էր. «Ե՛կ, Քրիստոսի՛ վկայ, եւ հանգստացի՛ր արդարների ուրախութեան մէջ. եւ ինչ որ խնդրեցիր Տիրոջից, կը լինի քեզ. եթէ որեւէ մէկը գայ ձեր նահատակութեան տեղը եւ ձեր բարեխօսութեամբ որեւէ բան խնդրի, կը տրուի՛ նրան Տիրոջից»: Եւ նա, Սուրբ Հոգով ցնծալով, սքանչելի էր երեւում. նրա երեսից լոյս էր ճառագում, մինչեւ դահիճները, որոնք կանգնել էին փոքր-ինչ հեռու, վախեցան: Նրանք, ահուդողով հաւաքուելով միասին, չգիտէին՝ ինչ անեն: Սուրբը կանչեց նրանց եւ ասաց. «Եկէք կատարէ՛ք ձեր հօր՝ սատանայի կամքը»: Այնժամ դահիճներից առաւել

անխիղճ մէկը համարձակուեց յարձակուել սուրբի վրայ՝ գլխատելու նրան: Եւ մինչ նա, պարանոցը խոնարհած, աղօթում էր իր սրտում, կտրեց նրա գլուխը: Դահճի՝ սուրը բռնած ձեռքը կծկուեց, նա այսաւհարուեց, նրա լեարդն արիւնախառն եկաւ ու բերանից թափուեց, եւ նա մեռաւ: Իսկ նրա ընկերները փախան իրենց իշխանի մօտ եւ պատմեցին ամէն ինչ:

Դատաւորը կանչեց իր խորհրդականներին եւ ասաց. «Կախարդներին սպանեցի եւ ազատեցի իմ անձը յոգսերից: Այժմ ուրախանանք մեծ ուրախութեամբ. մի քանի օրով քաղաքից դուրս գանք, ապա վերադառնանք եւ կորստեան մատնենք այն մարդկանց, ովքեր հաւանեցին կախարդներին»: Իսկ իշխաններն ասացին. «Եկէ՛ք առաւօտեան զոհ մատուցենք աստուածներին, որ փրկեցին մեզ նրանցից»: Անօրէնին հաճելի թուաց այս միտքը: Իսկ առաւօտեան, երբ կամենում էր վեր կենալ իր գահաւորակից, յանկարծակի նրա վրայ մի մեծ քար գլորուեց եւ սպանեց նրան: Ոչ ոք չհասկացաւ, թէ որտեղից գլորուեց այդ քարը: Իսկ նրա զօրքի զինուորները, դիւահարուելով, մոլեգնում էին:

Նրա իշխաններից մէկը՝ Կոստէ անունով, զզջալով եւ սթափուելով, ասում էր. «Այս բոլոր նեղութիւնները, որ եկան մեր զօրքի վրայ, եղան Աստուծոյ ծառաների պատճառով, որոնց անխնայ կոտորեցինք»: Եւ վերցնելով մոլեգնած զինուորներին՝ գնաց վկաների նահատակութեան տեղը, բոլորի հետ միասին ծունկի իջաւ եւ ասաց. «Ո՛վ սուրբ վկաներ, հաւատում ենք ձեր Աստծուն, որին դուք պաշտում էիք, բարեխօսէ՛ք Տիրոջ մօտ, որ թողութիւն շնորհի ձեր դէմ մեղանչածներիս յանցանքներին, եւ ցասումը, որ եկաւ մեզ վրայ, թող Տէրը վերացնի մեզնից, քանի որ մեր արարքների համար կ՚ապաշխարենք եւ կը դառնանք դէպի Նա»:

Երբ իշխանն այս ասաց, դեւերից մոլեգնողներն սկսեցին զգաստանալ եւ միասին օրհնել Աստծուն: Եւ քանի որ սուրբ վկաների մարմիններն անթաղ էին մնացել, միաբանուած զօրքը, որը բժշկուեց (թուով իննսունհինգ հոգի), իշխանի հետ միասին հաւաքեց սուրբերի նշխարներն ու հողը, որի վրայ նրանց արիւնն էր թափուել, եւ թաղեց:

Կոստէ իշխանի մօտ եկան նախապէս հաւատացած քրիստոնեաները, ուրախացան նրանով եւ, տեսնելով բժշկուած զինուորներին, օրհնեցին Աստծուն, որ սուրբ վկաների միջոցով Քրիստոսի նոր ժողովուրդ ծնուեց: Եւ որոշեցին սուրբ վկաների անունով տաճար շինել եւ

նրա հիմքի տակ դնել նրանց նշխարները: Եւ չինեցին երեք վկայարան. մէկը՝ սուրբ կոյսերի վրայ, որն անուանեցին Սուրբ Կաթողիկէ, միւսը՝ սուրբ Ստեփանոսի վրայ, որն անուանեցին Սուրբ Ստեփանոս, իսկ երրորդը՝ վկաների բազմութեան վրայ: Որովհետեւ դրանից յետոյ՝ Յոբիանոսի թագաւորութեան ժամանակ, Եկեղեցում խաղաղութիւն տիրեց, եւ Կոստէ իշխանը, այդ տեղերի վերակացուն լինելով, բերեց քահանաներ եւ Աստուծոյ Եկեղեցու սպասաւորներ, որոնք հաւատացեալներին հաստատում էին Քրիստոսի հաւատի մէջ: Այնտեղ օրէցօր աւելի ու աւելի աճում ու բազմանում էին քրիստոնեաները, եւ ամէն տարի տօնում էր սուրբերի նահատակութեան տօնը:

Արդ, Ստեփանոսի եւ նրա ընկերների նահատակութիւնը տեղի ունեցաւ Տիրոջ 363 թուի օգոստոսի 18-ին՝ ուրբաթ օրը՝ նրա մօր՝ Մարիամի եւ կոյսերի նահատակութիւնից ութ օր անց: Վկաները 33 հոգի էին, Ստեփանոսի եւ նրա հօր՝ Ղազարոսի հետ միասին՝ 35: Իսկ սուրբ Ստեփանոսը Ուլնեցի կոչուեց այն քաղաքի անունով, ուր գտնւում է նրա գերեզմանը. այդ քաղաքը Ուլնին է, ըստ յոյների՝ Յուլիուպոլիս, ռամկօրէն՝ Զեյթունի, որը Փոքր Հայքում է՝ Եփրատ գետի ափին՝ Մարաշի հիւսիսային մասում՝ Կանչի կոչուող դղեակի մօտ: Ինչպէս պատմութիւնից երեւում է, նա նահատակուեց երիտասարդ հասակում՝ քսանից քսանհինգ տարեկանում՝ կատարեալ եւ իմաստուն լինելով մանկուց եւ լինելով ծերերի ու մանուկների վարդապետ, եւ անունով ու գործերով լինելով հանդիսակից ու պսակակից սուրբ Նախավկային, որի հետ էլ երբեմն տօնում էին նրա սքանչելի վկայութեան յիշատակը:

ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱՅԻ ՀԱՅՐԱՊԵՏ ՍՈՒՐԲ ԿԻՒՐԵՂ ՄԵԾԻ ՎԱՐՔԸ

Ուղղափառութեան առաջամարտիկը եւ Եկեղեցու ամուր սիւնը՝ սուրբ Կիւրեղ Ալեքսանդրացի Հայրապետը, ծնուել է ազնուատոհմ եւ բարեպաշտ ծնողներից, Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքի սահմանների մօտ չորրորդ դարի վերջերին եւ մանկուց դաստիարակուել է բարի վարքով եւ ուսմամբ: Տարիքի աճելու հետ աւելի ու աւելի է մարզուել իմաստութեան ուսման մէջ Ալեքսանդրիայի Թէոփիլոս պատրիարքի խնամքի տակ, որի քրոջ կամ եղբօր որդին էր ինքը: Լաւ սովորեց բոլոր արտաքին իմաստասիրական գիտութիւնները, առաւել խելամուտ եղաւ աստուածային վարդապետութեան՝ Մարգարէական եւ Առաքելական Գրքերին, ինչպէս նաեւ Եկեղեցու հին հայրերի եւ վարդապետների խօսքերին: Նա սարկաւագ եւ քահանայ ձեռնադրուեց նոյն Թէոփիլոսի կողմից՝ զարմացնելով բոլորին խօսքի հզօր քարոզութեամբ եւ առաքինափայլ ընթացքով: Այդ պատճառով էլ, երբ Թէոփիլոսը մեռաւ, գրեթէ ամբողջ ժողովուրդը խնդրում էր, որ Կիւրեղը լինի իրենց առաջնորդը: Բայց քանի որ կային եւ ոմանք, որոնք աւագ սարկաւագ Տիմոթէոսին էին խորհում ընտրել, եռօրեայ պայքար եղաւ ալեքսանդրացիների միջեւ այդ երկուսի համար, մինչեւ որ բոլորը միաբանուեցին Կիւրեղի կողմը: Եւ շքեղ հանդէսով նրան նստեցրին պատրիարքական աթոռին Թէոդոս Փոքր կայսեր տասնմէկերորդ տարում, այն է՝ Տիրոջ 412 թուականի հոկտեմբերի 18-ին:

Իսկ այն օրից, երբ երանելի Կիւրեղը նստեց հայրապետական աթոռին, փութաց մաքրել եւ անարատ պահել իր հօտը այլեւայլ հերձուածներից, որոնք այդ ժամանակ կային: Եւ որովհետեւ նաւատիանոսականները, որ նովատեաններն են, այն ժամանակ եկեղեցի ունէին Ալեքսանդրիայում, դուրս արեց նրանց քաղաքից եւ նրանց եկեղեցին տուեց ուղղափառ երէցների ձեռքը, որի պատճառով այլափառները սկսեցին թշնամանալ եւ բամբասել Կիւրեղին՝ հաւատի ճշմարիտ նախանձաւորին, Եկեղեցու արթուն հովուին՝ որպէս անողորմ հալածչի:

Ալեքսանդրիայից մօտ տասը ասպարէզ հեռու կար մի տեղ, որ կոչւում էր Կոնոպէ կամ Կոնոպոս, իսկ նրանից փոքր-ինչ հեռու՝ Մանութէ գիւղը, որը չար այսերի բնակավայր էր. այն տեղը նախկինում

ջանացել էր մաքրել Թէոփիլոսը եւ չէր կարողացել աւարտել գործը: Երբ այս մասին մտահոգուելով՝ մեծն Կիւրեղը աղօթքներով խնդրում էր Աստծուց իրեն հնար ցոյց տալ, տեսիլքի մէջ նրան երեւաց Աստուծոյ հրեշտակը եւ հրամայեց նրան այդտեղ բերել սուրբ վկաներ Կիւրոսի, Յովհաննէսի, Մարկոս աւետարանչի նշխարները եւ վկայարան շինել: Եւ երբ Կիւրեղն արեց, ինչ որ հրամայուել էր (414Թ.), անհետացան վայրենի դեւերն այն գիւղից: Այն ժամանակ Ալեքսանդրիայում հրեաների եւ քրիստոնեաների՝ անհաշտ թշնամիների միջեւ մեծ աղմուկ բարձրացաւ, եւ երբ հակառակութիւնն աճեց, հրեաները միաբանուելով մեծ բազմութեամբ յարձակուեցին քրիստոնեաների վրայ եւ շատերին կոտորեցին: Բայց երբ նրանց պարագլուխները բռնուեցին եւ խռովութիւնը ճնշուեց, Կիւրեղ հայրապետը հրաման արձակեց, որ այն հրեաները, ովքեր չէին ընդունում քրիստոնէութիւնը, հեռանան քաղաքից: Եւ նրանք դուրս եկան ու ցրուեցին զանազան տեղեր, եւ քաղաքը մաքրուեց: Եղան եւ ոմանք, որոնք քրիստոնէական հաւատին դարձան, եւ մեծ խաղաղութիւն տիրեց Ալեքսանդրիայում:

Իսկ քաղաքի Ովրեստէս իշխանը, թէպէտեւ քրիստոնեայ էր, ըստ աշխարհի խորհելով՝ չարախօսեց սուրբ հայրապետի գործի մասին, «որովհետեւ պակասեցին, - ասում է, - մեր քաղաքից այսչափ մարդիկ՝ առեւտրի մէջ շահաւոր», եւ այս պատճառով ամբաստանագիր գրեց կայսրին: Բայց Կիւրեղն ունայնացրեց նրա խօսքերը՝ յայտնելով կայսերը, թէ բազում չարիքներ էին լինում այն քաղաքում Քրիստոսին ատողների երեսից: Եւ որովհետեւ քաղաքապետը դրանից յետոյ հայրապետի դէմ ոխով լցուեց, անապատից միայնակեացների բազմութիւն իջաւ՝ երկուսի հաշտութեան համար միջնորդ լինելու: Սակայն սա եւս ձախողուեց, մինչեւ որ նոր իրարանցման աղմուկ ծագեց Կիւրեղի կողմնակիցների եւ քաղաքապետի թեւակիցների միջեւ, եւ այդ խռովութեան պատճառով այնտեղ սպանուեցին (բացի շատ ուրիշներից) մեծանուն միայնակեաց Ամմոնիոսը, ամբողջ քաղաքում անուանի կին Հիպատիան՝ Թէովնա փիլիսոփայի դուստրը՝ խօսքով եւ գրով զօրաւոր, որը գերազանցում էր ժամանակի բոլոր փիլիսոփաներին: Եւ յետագայում՝ բազում խառնաշփոթութիւններից յետոյ, խաղաղութիւն եղաւ մեծն Կիւրեղի զգօն առաջնորդութեամբ (415 թուին):

Սուրբ Յովհաննէս Ոսկեբերանի հետ կապուած դէպքերի պատճառով Եկեղեցու առաջնորդների միջեւ մնացել էր երկպառակութիւն, քանզի անտիոքացիները, կոստանդնուպոլսեցիները եւ երեւելի աթոռներից ուրիշներ, ինչպէս մեծ Հռոմի [աթոռը], արժանաւոր պատուով մեծարում էին Ոսկեբերանի անունը՝ կատարելով նրա յիշատակը բոլոր սուրբ հայրապետերի հետ: Իսկ ալեքսանդրացիները հեռացել էին նրանից իրենց պատրիարք Թէոփիլոսի օրերից, որը թշնամացել էր Ոսկեբերանի հետ որոգինէսականների դէմ նախանձայուզութեան պատճառով, եւ Կիւրեղն անգամ որոշ ժամանակ մարդկօրէն խորհրդով ջատագովն էր եղել իր նախորդի՝ Թէոփիլոսի, որից շատ երախտիքներ էր գտել, եւ չէր կամենում Եկեղեցու յիշատակումների մէջ դասել Ոսկեբերանի անունը, եւ այլ առաջնորդներից եւս յորդորական գիր ստանալով՝ չէր կարողանում համաձայնել: Եւ մինչդեռ նա այս մասին էր խորհում, Աստուած բժշկեց նրա միտքը: Այս մասին ոմանք այսպիսի բաներ են պատմում: Երազի մէջ նա տեսնում է, որ Յովհան Ոսկեբերանն իրեն դուրս է անում եկեղեցու գաւթից եւ չի թողնում մօտենալ աստուածային սպասաւորութեանը: Տեսնում է նաեւ ամէնօրհնեալ Աստուածածին Կոյսին՝ երկնքի թագուհուն, որ խրատում է Յովհանին ներել Կիւրեղին՝ իբրեւ այդ մասին անտեղեակի, «որովհետեւ դա է, - ասում է, - վրէժխնդիրն իմ փառքի»: Եւ երբ Կիւրեղը զարթնեց տեսիլքից, հասկացաւ տեսածի խորհուրդը եւ, մի կողմ թողնելով սին կարծիքները երանելի Յովհաննէսի մասին, սկսեց գովութեամբ հոչակել նրա անունը եւ եկեղեցում յիշատակել տալ սուրբ հայրապետերի կարգում: Բայց տեսիլքի լրումը, ի գովութիւն Կիւրեղի, ամբողջովին կատարուեց տարիներ անց: Քանզի Ալեքսանդրիայի եւ Կոստանդնուպոլսի աթոռների միջեւ հաշտութիւնից յետոյ, երբ մեռաւ թագաւորական քաղաքի Ատտիկոս պատրիարքը, եւ նրանից յետոյ էլ՝ Սիսիննիոսը կամ Սիսիանոս Սակաւաժամանակեան, ապա Տիրոջ մօտ 428 թուականին յաջորդեց մարդադաւան Նեստորը, որը չար հերձուած հիմնեց Եկեղեցում եւ ուսուցանեց հրէական մոլորութիւնը՝ սոսկ մարդ դաւանելով ս. Կոյսից ծնուած Յիսուս Քրիստոսին, եւ բաժանելով մարդացած Աստուծոյ Որդուն՝ երկու որդի եւ երկու դէմք սահմանեց: Եւ նրա հայհոյութեան սկիզբը եւ լրումը եղաւ այն, որ հրաժարուեց սուրբ Կոյսին Աստուածածին ասելուց, այլ ասում էր Քրիստոսածին, այսինքն՝ մարդածին եւ ո՛չ Աստուծոյ ծնող: Այս սատանայական որոմը մանուածապատ խօսքերով ցանելով սկզբում թագաւորական քաղաքում՝ սկսեց նամակներով տարածել նաեւ հեռաւոր [վայրերում], մինչեւ որ նրա թունալից գիրը հասաւ նաեւ Եգիպտոսի միայնակեացներին. չչնջիւն ընկաւ, եւ շատերը սկսեցին քննել խնդիրը՝ ի գայթակղութիւն տկարների:

Երբ խօսքն ընկաւ երանելի Կիւրեղի ականջը, վառուեց Հոգու ազդմամբ՝ իբրեւ արի առաջամարտիկ՝ Աստուծոյ Որդու փառքի եւ Նրա ամէնօրհնեալ մայր Աստուածածնի համար վրէժխնդիր լինելու: Եւ իր ձեռքն առնելով իր հրաշալի գրիչը՝ նախ զգուշութեան թուղթ գրեց անապատի միայնակեացներին՝ պախարակելով չարի յետին մոլորութիւնը եւ դրա դիմաց դնելով Սուրբ Գրքի եւ սուրբ հայրերի ուղղափառ վարդապետութիւնը, նամակների ձեւով շարադրեց տարբեր գրուածքներ՝ ուղղուած Թէոդոս Փոքր կայսրին եւ Եւդոկիա թագուհուն, բայց Նեստորի անունը չյիշատակելով, որպէսզի չթուայ, թէ ինքը նախատում է կայսերը՝ անխորհրդաբար Քրիստոսի հօտն առաջնորդող այդպիսի այր ընտրած լինելու համար:

Խօսքը հասաւ նաեւ Հռոմի հայրապետ երանելի Կեղեստիանոսի ականջը, եւ նա գրեց Կիւրեղին ստուգութեամբ քննել իրերը, թէ խկապէ՞ս Նեստորը, որի մասին կարճ ժամանակ առաջ դեռ մեծ գովեստով էին խօսում շատերը, հետեւելով կեղծաւոր եւ խորամանկ օձի արտաքին ընթացքին, այդպիսի չար մոլորութիւն է սերմանել:

Այնժամ երանելի Կիւրեղը հոգեշահ եւ ազդու խօսքերով երկու անգամ աղաչական եւ խրատական նամակ գրեց Նեստորին: Իսկ նա խցեց իր ականջները, ինչպէս ճարտար թովչի ձայնի հանդէպ, ամենեւին չլսեց եւ յանդուգն պատասխան գրելով՝ ջանում էր թօթափել իրենից մոլորութեան անունը՝ մեղադրելով Կիւրեղին իբրեւ վարդապետութեան գրքերից անտեղեակի:

Եւ բազում հնարներից յետոյ, որ մտածեց իմաստուն Կիւրեղը մոլորուածի դարձի համար, երբ նրան իր խոտոր մտքերի մէջ յամառ տեսաւ, մարդ ուղարկեց Հռոմ եւ այդ ամէնի մասին յայտնեց Կեղեստիանոս հայրապետին: Եւ նա, իր եպիսկոպոսներով ժողով անելով Հռոմում, դատապարտեց Նեստորի մոլորութիւնը եւ թուղթ գրեց Նեստորին եւ սուրբ Կիւրեղին, որ եթէ նամակը ստանալուց տասն օր անց Նեստորը չզգաստանայ, նզովքի տակ կ՚ընկնի եւ կը զրկուի հաւատացեալների հետ հաղորդուելուց. եւ այս ամէնի մասին հոգալ յանձնարարեց Կիւրեղին:

Եւ Կիւրեղը շտապ այս մասին գրեց բոլոր աթոռների առաջնորդներին եւ ինքը, ժողով անելով Ալեքսանդրիայում, դատապարտեց Նեստորի աղանդը եւ նրան յղեց Կեղեստիանոս հայրապետի պայմանի գիրը, ինչպէս նաեւ՝ նզովքների տասներկու գլուխները՝ մէկ առ մէկ Նեստորի մոլար խօսքերի դէմ ուղղուած: Իսկ Նեստորը, ամուր կերպով մնալով իր մոլորութեան մէջ, ըմբոստացաւ եւ սկսեց շատերին գրգռել Կիւրեղի դէմ՝ յայտարարելով, թէ նա իբր միտում ունի դէպի Ապողինարի աղանդը. նա նաեւ Թէոդոս կայսրին գանգատի գիր ուղարկեց, սակայն անօգուտ:

Սրանից յետոյ, երբ Եկեղեցու մէջ խռովութիւնը սաստկացաւ, հարկ եղաւ մեծ ժողով գումարել Եփեսոս քաղաքում, որտեղ Կեղեստիանոսի նախաձեռնութեամբ եւ Թէոդոսի հաւանութեամբ հաւաքուեցին աւելի քան երկու հարիւր եպիսկոպոսներ: Այնտեղ եկան նաեւ Նեստորը իր պաշտօնեաների ու սպասաւորների բազմութեամբ եւ սուրբ Կիւրեղը իր եպիսկոպոսներով, նոյնպէս եւ Յովնաղը՝ Երուսաղէմի պատրիարքը. եւ սպասում էին Անտիոքի Յովհաննէս պատրիարքի գալուն: Բայց որովհետեւ նա [ինչ-որ] պատճառաբանութեամբ ուշանում էր, սուրբ ժողովը սկսուեց Ամենասուրբ Աստուածածնի տաճարում: Նեստորին երեք անգամ կանչեցին, սակայն նա, խոյս տալով, չկամեցաւ ներկայանալ ժողովին: Կարեւոր քննութիւնից յետոյ, երբ յայտնի կերպով ցոյց տրուեց նրա մոլորութիւնը եւ յամառութիւնը, սուրբ ժողովը նրան զրկեց եպիսկոպոսութեան պատուից եւ քահանայութեան պաշտօնից, հաստատեց հաւատի ուղղափառ դաւանութիւնը՝ խոստովանելով մեր Տէր Յիսուս Քրիստոսին՝ մարդացած Աստուծոյ Միածին Որդուն՝ Աստուածութեան եւ մարդկութեան անբաժանելի միաւորութեամբ, եւ Նրա ծնողին՝ Աստուածածին: Եւ այդ քաղաքում ցնծութեան հանդէս եղաւ, որովհետեւ չարը հեռացուեց նրա միջից, եւ սուրբ Կիւրեղը ժողովի ատեանում սքանչելի ճառ խօսեց՝ ի ներբողումն սուրբ Աստուածածնի եւ ի ջախջախումն Նեստորի աղանդի: Եւ ապա գրուեց ժողովի նամակը՝ ուղղուած կայսերը եւ Կոստանդնուպոլսի Եկեղեցու միաբանութեանը: Իսկ Նեստորը, որովհետեւ իր կողմում ունէր արքունի դռան իշխանաւորներին ու պաշտօնեաներին, բոլոր հնարները գործադրեց, որ այդ նամակը չհասնի կայսերը:

Այդ ժամանակ Եփեսոս հասաւ Անտիոքի Յովհան պատրիարքը, որը Նեստորի աշակերտակիցն էր, եւ լսելով նրա դատապարտութեան մասին՝ խիստ վրդովուեց եւ իր գործակիցների հետ միասին առանձին ժողովակ գումարեց, դատապարտեց սուրբ Կիւրեղին՝ իբրեւ դէպի այլ մոլորութիւն ծայրայեղ խոտորուածի, նրա հետ նաեւ Եփեսոսի Նեմնոն եպիսկոպոսին՝ Կիւրեղի նզովքների պատճէնը տարածելու եւ քաղաքի եկեղեցիները Նեստորի համախոհների դէմ փակելու համար: Եւ ապաւինելով աշխարհական բազկին՝ սպառնաց նոյնն անել եւ այլ եպիս-

կոպոսների հետ, եթէ յանձն չառնեն ունայնացնելու Կիւրեղի խօսքերը: Իսկ Եփեսոսի տիեզերական ժողովին մասնակցած սուրբ եպիսկոպոսները, արդարացնելով Կիւրեղին եւ Մեմնոնին, նզովք դրեցին Յովհանի եւ նրա գործակիցների վրայ՝ նրանց յանդգնութեան համար:

Երբ այս ամէնը խառնիխուռն կերպով հասաւ կայսեր ականջին, նա կարծեց, թէ ե՛ւ Կիւրեղը, ե՛ւ Մեմնոնը օրէնքով դատապարտուած են, քանզի այդպէս էին հաւատացրել նրան Յովհանի ծառայակիցները, որի համար էլ արքունի գործակալների ձեռքով պատուէր յղեց՝ Կիւրեղին եւ Մեմնոնին Նեստորի հետ միասին իրաւամբ հռչակելու յանցաւորներ եւ նրանց երեքին՝ իբրեւ խռովութեան գլխաւորների, միակերպ բանտ նետել: Իսկ երբ տարածուեց տեղեկութեան սուտ լինելը, եւ կայսրն իմացաւ, որ յանիրաւի է բանտարկել Կիւրեղին եւ Մեմնոնին, իր առաջին հրամանը ետ վերցրեց եւ, ի դերեւ հանելով Յովհան Անտիոքացու ժողովակի խօսքերը, հրաման տուեց փակել Նեստորին Անտիոքի մի վանքում՝ իբրեւ բանտում, մինչեւ զգաստանայ:

Բայց որովհետեւ ժանտ Նեստորը չէր դադարում նաեւ այնտեղ սերմանել իր չարութեան որոմը, արտաքսուեց Յովասիս՝ Լիբիայի ամայի վայրը, որտեղ իր հայհոյիչ լեզուով որդնալից լինելով՝ չարաչար մեռաւ, եւ նրա գրուածքները արքունի հրամանով կրակի մէջ այրուեցին, նրա տեղը Կոստանդնուպոլսի պատրիարք ընտրուեց Մաքսիմիանոսը:

Եւ երբ այսպէս խաղաղուեց Քրիստոսի Եկեղեցին, գովութեան նամակներ էին հասնում երանելի Կիւրեղին Կեղեստիանոսից՝ Հռոմի հայրապետից, Մաքսիմիանոսից՝ Կոստանդնուպոլսի հայրապետից, եւ այլ աթոռներից, որոնք նրան կոչում էին Աստուծոյ Եկեղեցու հաստատուն սիւն եւ ամուր խարիսխ, քաջ հովիւ եւ առաքինի նահատակ, որ իր անվեհեր անձը ամէն տեսակ չարչարանքների մէջ նետեց՝ ճշմարտութիւնը պաշտպանելու համար: Ինչպէս եւ ինքն իսկ նախապէս ասում էր. «Զեմ տայ քուն իմ աչքերին կամ նինջ իմ արտեւանունքներին կամ հանգիստ իմ մարմնին, այլ մինչեւ մահս կը չարչարուեմ այս պատերազմում, որ հոգիների փրկութեան համար է, եւ իմ անձի փառքը կը համարեմ մեռնել այսպիսի պայքարում»: Այդ պատճառով եւ Տէրն Ինքը յաջողեց նրան յաղթութեամբ աւարտել մեծ եւ կարեւոր գործը:

Միայն Յովհան Անտիոքացին էր տակաւին հակառակւում Կիւրեղին, որի պատճառով էլ ոչ քիչ գայթակղութիւններ էին լինում Եկեղեցում. ոմանք յարում էին Կիւրեղին, ոմանք՝ Յովհանին, եւ թշնամանքով էին նայում իրար եւ խորշում էին իրար հետ հաղորդակցուելուց:

Բայց մեծն Կիւրեղը խոնարհութեամբ եւ համբերութեամբ շահեց Յովհանի սիրտը, եւ անցած շատ դէպքերից յետոյ նրանք միմեանց գրեցին դաւանութեան գիր եւ ցոյց տուեցին, որ միաբան են ճշմարտութեան մէջ, եւ այդպէս հաշտութիւն ու սէր հաստատուեց նրանց միջեւ:

Բայց երանելի Կիւրեղը կրեց եւ այլ բազում վշտեր սուտ եղբայրների կողմից, որոնց համար դժուարըմբռնելի էր նրա խորիմաց վարդապետութիւնը Աստուծոյ Բանի մարդեղութեան անճառելի խորհուրդի մասին, եւ իր կեանքի գրեթէ բոլոր օրերին նա ստիպուած էր լինում փակելու իր հակառակորդների բերանները, ուսուցանելու տգէտներին եւ առաւել իմաստնացնելու իմաստուն կարծուողներին իր բազմապատիկ գրուածքներով, որոնց մէջ երեւելի են «Գիրք պարապմանց»-ը՝ մարդեղութեան խորհուրդի մասին, «Գիրք գանձուց»-ը՝ տեսակ-տեսակ հերձուածների դէմ, բազում ճառեր եւ թղթեր՝ լի իմաստութեամբ եւ Աստուծոյ Հոգով, եւ Հին ու Նոր Կտակարանների մեկնութիւններ՝ լուսաւոր վարդապետութեամբ:

Մեծն Կիւրեղը զինուեց նաեւ ընդդէմ Թէոդորոս Մոպսուեստացու եւ Դիոդորոս Տարսոնացու՝ Նեստորի ուսուցիչների, եւ նրանց հետեւորդների դէմ, որովհետեւ սրանք, երբ տեսան, որ Նեստորը մերժուեց եւ նրա գրուածքներն այրուեցին, սկսեցին մէջբերել Թէոդորոսի եւ Դիոդորոսի գրուածքները, որոնց անունները հռչակուած էին շատերի մօտ: Բայց սուրբ Կիւրեղը ցոյց տուեց, որ Նեստորի ամբողջ վարդապետութեան արմատը փուչ է, եւ Մոպսուեստացու գործը դաւանութեան աղբիւր է: Եւ այս բաների համար բարեկամական կապ հաստատուեց սուրբ Կիւրեղի եւ Հայոց հայրապետի՝ սուրբ Սահակ Պարթեւի միջեւ, որը երանելի Մեսրոպ Մաշտոցի եւ իր Եկեղեցու ողջ միաբանութեան հետ միասին եղաւ առաջին եւ գլխաւոր ջախջախիչը Մոպսուեստացու եւ նրա հետեւորդների: Այս պատճառով էլ այն ժամանակ Կիւրեղի թշնամիները թշնամանում էին նաեւ հայերի հետ՝ որպէս Կիւրեղի բարեկամների, որոնց թւում էր նաեւ սուրբ Պրոկղը՝ Կիւզիկոսի եպիսկոպոսը, որը յետոյ դարձաւ Կոստանդնուպոլսի պատրիարք: Պահպանուած է սուրբ Պրոկղի եւ Հայոց երանելիների՝ սուրբ Սահակի եւ սուրբ Մեսրոպի նամակագրութիւնը ընդդէմ նեստորականութեան:

Արդ, երանելի Կիւրեղը Եկեղեցու համար այսպիսի քրտնաջան չարչարանքով եւ հանապազօրեայ տքնութեամբ աւարտելով իր աստուածահաճոյ կեանքի ընթացքը՝ խաղաղութեամբ ննջեց ի Քրիստոս եւ փոխուեց սուրբ հայրապետերի դասի մէջ Տիրոջ 444 թ.՝ Ալեք-

սանդրիայի հայրապետ մնալով 32 տարի, եւ թաղուեց այնտեղ՝ Ալեքսանդրիայում, հայրապետերի հանգստարանում: Սակայն, ասում են, թէ որոշ ժամանակ անց նրա պատուական մարմինը կամ ոսկորներից որոշ նշխարներ բերուել են Կոստանդնուպոլիս եւ ամփոփուել սուրբ Աթանասի նշխարների կողքին, որտեղ եւ ամէն տարի առանձին տօնախմբութիւն էր կատարւում ի պատիւ Ալեքսանդրիայի երկու տիեզերահռչակ սուրբ հայրապետերի՝ Աթանասի եւ Կիւրեղի: Հայ Եկեղեցին տարեկան երկու անգամ տօնում է այս մեծ սուրբերի յիշատակը. մէկը՝ միասին (Սրբոց հայրապետացն Աթանասի եւ Կիւրղի), միւսը՝ Եկեղեցու տաներկու վարդապետների շարքում (Սրբոց երկոտասանից վարդապետացն):

ՍՈՒՐԲ ԴԱՒԻԹ ԴԻՆԵՑՈՒ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Քրիստոսի խաչն ու չարչարանքները յանձն առած քաջայաղթ վկան՝ երանելի Դաւիթը, ում նախկին անունը Սուրհան էր, ազգութեամբ պարսիկ էր, մահմեդականի որդի, սերում էր թագաւորական զարմից, բայց որովհետեւ նրա մայրը քրիստոնեայ էր՝ Հայոց աշխարհից, նա տեղեակ եւ ծանօթ էր քրիստոնէական օրէնքներին: Մի անգամ՝ Տիրոջ մօտ 665 թուականին՝ Անաստաս Ակոռեցու կաթողիկոսութեան եւ Գրիգոր Մամիկոնեանի իշխանութեան օրերին, նա այլազգիների զօրքերի հետ Հայաստան եկաւ եւ, տեսնելով քրիստոնեաների պարկեշտ վարքը, հաւանեց մեր օրէնքներն ու կրօնը, թողեց իր ընկերներին, եկաւ Գրիգոր բարեպաշտ իշխանի մօտ եւ ասաց, որ ինքը հաւանում է իր մայրենի քրիստոնէական հաւատը: Իշխանը նրան տարաւ առաքինի Անաստաս հայրապետի մօտ, եւ հայրապետը նրան ութ օր նախապատրաստեց մկրտութեան՝ խօսելով սուրբ հաւատի մասին եւ ուսուցանելով բարեպաշտութեան կարգերը: Ութ օր անց Արճէշի Սուրբ Կաթողիկէ եկեղեցում հայրապետը մկրտեց նրան եւ անուանեց Դաւիթ՝ Գրիգոր Մամիկոնեանի հօր անունով, որը եղաւ նրա կնքահայրը՝ սուրբ Աւազանից ընդունելով նրան եւ իբրեւ կալուածք տալով Կոտայքի Նահանգի Ձագ աւանը:

Որոշ ժամանակ անց Դաւիթը, որ հասել էր արբունքի տարիքի, բարեկամների յորդորանքով ամուսնացաւ եւ բնակուեց Դուինում, որի համար էլ Դւնեցի է կոչւում: Ապրեց բարի եւ աստուածահաճոյ վարքով եւ ծնեց ուստրեր ու դուստրեր, որոնց դաստիարակեց Քրիստոսի հաւատով եւ աստուածպաշտութեան օրէնքներով, մինչեւ հասաւ բարւոք ծերութեան՝ մօտ վաթսուն տարեկանի:

Այդ ժամանակ՝ երանելի Սահակ Ձորափորեցու կաթողիկոսութեան օրերին, ամիրապետը Հայոց աշխարհ ուղարկեց առաջին հագարացի ոստիկանին՝ Աբդուլ ամիրային՝ մի խորամանկ ու անագորոյն մարդու, որը, նստելով Դուին մայրաքաղաքում, նախ քաղցրութեամբ իր մօտ հաւաքեց Հայոց մեծամեծ նախարարներին ու ազնուականներին, ապա սկսեց նեղել նրանց՝ ծանր հարկեր պահանջելով, մինչեւ իսկ կողոպտեց բոլորի ինչքերն ու եկեղեցիները եւ երանելի Սահակ հայրապետին եւ Սմբատ Բիւրատեան սպարապետին շղթայակապ ուղարկեց Դամասկոսի արքունիք:

Դրանից յետոյ նրան պատմեցին Դաւիթ Դինեցու մասին, թէ՝ «Խորասանից այստեղ է եկել Սուրհան անունով մի մարդ՝ պարսիկի որդի, թողել է իր ազգութիւնը, դարձել քրիստոնեայ եւ Դաւիթ է անուանուում»: Ամիրան շտապ հրամայեց նրան իր առաջ բերել, հարցաքննեց ու տեսաւ, որ հաստատուն է Քրիստոսի հաւատի մէջ, եւ բարկանալով՝ հրամայեց խփել նրա բերանին՝ Քրիստոս Աստծուն փառաբանելու պատճառով: Բայց երբ զինուորը ձեռքը բարձրացրեց, որ հարուածի սուրբին, նրա բազուկը կծկուեց, եւ չկարողացաւ պարզել: Սարսափած ոստիկանը նրան բանտ նետել տուեց եւ հրամայեց սոված թողնել: Իսկ սուրբ Դաւիթը, լցուելով Աստուծոյ Հոգով, կամաւոր յօժարութեամբ ճգնում էր Քրիստոսի սիրոյ համար եւ անդադար աղօթքներով գոհանում էր Տիրոջից, որ իր ծերութեան օրերին արժանի եղաւ Նրա անուան համար անարգանքներ ու չարչարանքներ կրելու եւ բանտ նետուելու:

Ութ օր անց նրան կանգնեցրին ատեանում: Ամիրան նրան ասաց. «Մինչեւ ե՞րբ ես անմտաբար յամառելու: Դարձի՛ր քո հայրենի օրէնքներին»: Դաւիթն ասաց. «Դո՛ւք էք յամառում, որովհետեւ չէք ուզում ճանաչել ճշմարիտ Աստուծոյ՝ Քրիստոսի սուրբ հաւատը»: Բռնակալը հրամայեց գետնին գցել սուրբ խաչի նշանը (որը կամ գտել էին սուրբի ծոցում, կամ էլ եկեղեցուց էին հանել) եւ ակնարկեց իր ծառաներին խփել ու նեղել Դաւթին, որ ոտքերով կոխկռտի խաչը: Երանելին շտապ գետնից վերցրեց սուրբ խաչը, արտասուելով համբուրեց եւ դրեց իր աչքերին, ապա ցասումով ասաց ամիրային. «Ամենաչա՛ր, իմացի՛ր, որ ո՛չ հրով, ո՛չ սրով, ո՛չ կեանքով եւ ո՛չ մահուամբ չե՛ս կարող բաժանել ինձ Քրիստոսի սիրուց եւ սուրբ խաչի երկրպագութիւնից, որը Քրիստոսին հաւատացողներիս պարծանքի պսակն է»: Երբ ամիրան տեսաւ նրա՝ Քրիստոսի եւ խաչի սիրուն հաւատարիմ միտքը, հրամայեց նրա Տիրոջ օրինակով խաչափայտի վրայ սպանել նրան: Եւ երբ սուրբ վկան եկաւ իր նահատակութեան տեղը՝ Սուրբ Սարգիս վանքի դռան մօտ՝ գլխաւոր փողոցի վրայ, դահճին խնդրեց փոքր-ինչ սպասել, որ աղօթի, եւ ընկնելով խաչի առջեւ, որ պատրաստուած էր իր համար, տարածեց ձեռքերը եւ ասաց. «Տէ՛ր Աստուած իմ, գոհանո՛ւմ եմ Քեզնից, որ անարժանիս արժանացրիր Քո սուրբ անուան համար այսպէս մեռնելու, եւ ինձ Քեզ խաչակից եւ Քո սուրբերի ժառանգութեանը ժառանգորդ ընտրեցիր»: Եւ ասելով՝ ամէն, կնքեց իրեն սուրբ խաչի նշանով եւ տարածուեց խաչի վրայ: Դահիճները խաչի վրայ կապեցին նրա ոտքերն ու ձեռքերը եւ խաչը կանգնեցրին դէպի արեւմուտք: Եւ զարմանալի նշան եղաւ. խաչափայտը, ինքնիրեն շրջուելով, սուրբի երեսը դէպի արեւելք դարձրեց: Եւ դահիճները, վերցնելով գեղարդները, ասացին նրան. «Շտապ ասա՛ եւ արա՛ այն, ինչ հրամայեց քեզ ամիրան, որպէսզի կորստեան չմատնուես»: Սուրբը, բանի տեղ չդնելով նրանց ասածներն ու տանջանքները, զուարթադէմ աղօթում էր խաչի վրայ: Սուրբի կինը մօտերքում էր եւ քաջալերում էր նրան ամուր մնալ Քրիստոս Աստուծոյ հաւատի մէջ:

Դահիճները գեղարդով խոցեցին երանելիի սիրտն ու կողերը, եւ սուրբ Դաւիթը բարի հաւատով վախճանուեց ի Քրիստոս՝ Տիրոջ 693 թուականի մարտի 30-ին՝ Աւագ երկուշաբթի օրը՝ իններորդ ժամին:

Հայոց մեծամեծերը շատ աղաչանքներով եւ ընծաներով ամիրայից հրաման ստացան նահատակի մարմինը քրիստոնեաների օրէնքով վերցնելու եւ թաղելու: Եւ շուտափոյթ այդտեղ եկան Սարգիս Ամատունի եպիսկոպոսը քահանաների ու պաշտօնեաների հետ, Մամիկոնեան տոհմից Մուշեղ իշխանը եւ նրա Արտաւազդ եղբայրը եւ միւս ազատներից շատ ուրիշներ եւ, սուրբի մարմինն իջեցնելով փայտից, տարան Դուին քաղաքի Կաթողիկէ եկեղեցի, պատեցին մաքուր կտաւներով եւ անուշաբույր խունկերով, սաղմոսներով եւ օրհնութեամբ դրեցին սուրբ Յիզտբուզտի վկայարանի կողքին: Դաւթի չարչարանքների փայտից խաչ պատրաստեցին եւ կանգնեցրին սուրբի տապանի վրայ: Իսկ այն գեղարդը, որով խոցել էին սուրբին, քսան դահեկանով գնեց Մուշեղը եւ տուեց խաչ ձուլելու, որպէսզի երկրպագեն եւ պատուեն այն՝ ի փառս Քրիստոսի եւ ի յիշատակ Քրիստոսի խաչը յանձն առած նահատակի՝ սուրբ Դաւիթ Դինեցու:

ՍՈՒՐԲ ՎԱՀԱՆ ԳՈՂԹՆԱՑՈՒ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

«Քրիստոսական հաւատի սիւն եւ առաքինի նահատակ» գեղեցիկ անունով արդիւնաւորուած պանծալի Վահանը, որը փառաւոր իշխան էր ազատ սեպուհների կարգից, Հայոց մեծ նախարար Խոսրովի՝ Գողթն գաւառի տիրոջ որդին էր՝ ծնուած մօտաւորապէս 700 (Հայոց ՃԽԹ) թուականին՝ երանելի Սահակ Ձորափորեցի հրաշագործ կաթողիկոսի օրօք: Այդ ժամանակ այլազգիների Մրուան ամիրապետն իր Մոհմատ Ոգբա անունով զօրավարին մեծաքանակ զօրքով ուղարկեց Հայոց աշխարհ՝ բնաջնջելու եւ աւերելու մեր երկիրը, սակայն սուրբ հայրապետի միջնորդութեամբ, որ մահուանից յետոյ էլ իբրեւ կենդանի ներկայացաւ եւ այլազգիների զօրավարի գութը շարժեց, մեր երկիրը զերծ մնաց այդ վերահաս վտանգից. սակայն բնակչութեան մէջ դեռեւս ահ ու երկիւղ կար: Կարճ ժամանակ անց՝ 704 (ՃԾԴ) թ., արաբների թագաւորութեան ութսունհինգերորդ տարում, ամիրապետ դարձաւ Մրուանի որդի Աբդլմելեքը (յայտնի է նաեւ Աբդլլա անունով), որ Հայոց աշխարհի երբեմնի ոստիկանն էր եղել, եւ նախարարների դէմ սրտում ոխ պահելով՝ մտածում էր նենգութեամբ նրանցից վրէժ լուծել: Պատգամ ուղարկեց Կաշմ կամ Կասմ անունով իր զօրավարին, որ Նախիջեւանում էր նստում, եւ նրան երկրի ոստիկանապետ նշանակեց: Պատուիրեց առերես մարդասիրաբար վերաբերուել հայերին, խաղաղութեան դաշն կնքել եւ հայոց իշխաններին մեծամեծ խոստումներ տալ, որպէսզի հեշտութեամբ բռնի հայոց գլխաւորներին եւ զօրավարներին եւ իսպառ կոտորելով նրանց զօրքերը՝ գրաւի երկիրը, քանի որ այլ կերպ անհնարին էր համարում հայոց քաջերին յաղթել: Այս մտադրութեամբ արքունի հրովարտակներով դեսպաններ ուղարկեց նաեւ հայոց նախարարների մօտ, որպէսզի նրանցից ականաւորները Կաշմ ոստիկանին ներկայանան եւ մի տեղ հաւաքուելով՝ որպէս արքունի դիւանի մէջ, իւրաքանչիւրը գրել տայ իր անունը, որ ազգովին ազատ անուանուեն եւ ըստ իրենց աւագութեան կարգի ընդունեն իշխանութիւն եւ պատիւ՝ իրենց զօրքերով հանդերձ:

Երկրի իշխանները, ոչինչ չկասկածելով, հաւաքուեցին Նախիջեւան քաղաքում՝ իրենց միամտութեամբ մատնուելով դառն մահուան:

Այլազգիները, նենգօրէն նրանցից վերցնելով զէնքերը, հաւաքեցին Տիրոջ տան մէջ՝ քաղաքի մեծ եկեղեցում, որպէսզի տէրութեանը հաւատարիմ մնալու երդում տան, սակայն բոլորին ներսում պահելով՝ դռները փակեցին եւ ամրացրեցին աղիւսով: Այնուհետեւ Աստուծոյ տունը կրակով այրեցին՝ աղօթքի տունը գերեզմանի վերածելով, որը բոցի եւ ծխի վեր բարձրանալուց բաբելոնեան հնոցին էր նմանւում: Իսկ քաջ նահատակները՝ հայոց նախարարներն իրենց ազատորդիներով, մեռան՝ երեք մանկանց օրհնութիւնը շուրթերին: Այսպէս նահատակութեան ենթարկուեցին երկրի իշխաններն անողորմ դաւաճանների կողմից: Սրա օրինակով նոյնպիսի դառնաղէտ իրադարձութիւններ տեղի ունեցան նաեւ Խրամ քաղաքում. նոյնպիսի դաւադրութեամբ եկեղեցում փակելով՝ հրի մատնուեցին հայոց ազատանու գնդերը, եւ եօթ հարիւր հոգի այսպէս սպանուեց: Այլազգիները, տեսնելով, որ իրենց ուզածը կատարուեց, հնոցի ծխով շնչահեղձ արուածների գլուխները կտրեցին եւ ուղարկեցին ամիրապետին: Եւ երկրի բնակչութեանն ահաբեկելու համար նահատակուածների խանձուած մարմինները փայտերից կախել տուեցին եւ մարդկանց ուղարկեցին ամբողջ երկրով մէկ՝ խուզարկելու սպանուածների տները եւ նրանց ունեցուածքը աւար վերցնելու: Իսկ նրանց ընտանիքները տարան Նախիջեւան եւ Դուին. այս բոլորը կատարւում էր Մեծ Զատկի տօնին: Այնտեղ գերուած փափկասուն տիկնանց ամառուայ տօթին բանտի արգելարաններն էին նետում. շատերը մեռան, իսկ մնացածին վերցնելով՝ աշնանը բերեցին Դամասկոս, որն այն ժամանակ ամիրապետի նստավայրն էր: Նախարարների ընտանիքները տարան արքունիք, իսկ նրանց մանուկներին տեղաւորեցին դպրոցներում՝ ուսում ստանալու:

Նրանցից մէկն էր մանուկ Վահան Գողթնացին, որն այդ ժամանակ չորս տարեկան էր, եւ որին թլփատելով՝ Վահաբ անուանեցին: Կամենալով նրան մանկուց ամուր կապել իրենց հաւատին՝ աւելի շատ հոգ էին տանում իրենց ուսմամբ նրան կրթելու: Եւ որովհետեւ Վահանը խելացի էր եւ տաղանդաշատ, աչքի ընկաւ ուսման մէջ եւ գերազանցեց իր բոլոր դասընկերներին: Երբ հասակ առաւ, ատենադպիր եւ արքունի դպրապետ դարձաւ, եւ քանի որ հմուտ էր բոլոր գործերի մէջ, աւագների սիրելին եղաւ: Մանուկ հասակից նա անտեղեակ էր արդարութեան ճանապարհին, միայն գիտէր, որ քրիստոնեայ է:

Աբդլմելեքը վախճանուեց, եւ նրա փոխարէն ամիրապետ դարձաւ Վլիթը կամ Վելիտը, նրանից յետոյ՝ Սուլեյմանը եւ ապա՝ Տիրոջ 717 եւ

մեր ՃԿԶ թուականին՝ Օմար Երկրորդը, որը նեղեալների հանդէպ գթած եւ արդարամիտ իշխան էր: Հայոց գերիները, նրա մարդասիրութեանն ապաւինելով, խնդիրք յղեցին նրան, որ իրենց երկիրը վերադառնալու հրաման տայ իրենց: Իշխանի սիրտը Վերին Նախախնամութեամբ ողորմած դարձաւ, եւ գերիներից իւրաքանչիւրին իր տեղը վերադարձրեց՝ հոգ տանելով դրանց բոլորի իրաւունքների պահպանութեան համար: Այն ժամանակ Վահանը, որ անուանուեց Վահաբ, իր հայրենի երկիրը գնալու եւ տեսնելու թոյլտուութիւն աղաչեց նրանից: Նրա հոգին շարժող եռանդը Քրիստոսի ճշմարիտ հաւատը գտնելն էր, որ կորցրել էր մանուկ հասակում: Բազում իրեն սիրելի մեծամեծերի աղաչեց, եւ նրանցից ոմանց իր խնդրանքի կատարման համար գործակից ունենալով՝ ամիրապետին համոզեց՝ ասելով. «Քո խաղաղութեան օրօք գնամ եւ իմ հայրենի ժառանգութիւնը վերցնեմ, գործակալներ նշանակեմ եւ ապա վերադառնամ քո տէրութիւնը»: Իշխանը, թէեւ ափսոսաց նրան՝ օգտակարութեան, ազնուականութեան եւ լաւ բնաւորութեան համար, սակայն արդարացի լինելու համար հրովարտակով թոյլ տուեց նրան՝ վերցնելու իր բնիկ Գողթն գաւառը, եւ «թող ոչ ոք չընդդիմանայ նրան», - ասաց: Եւ նրան պատուիրեց շուտ վերադառնալ՝ խոստանալով մեծամեծ պարգեւներ: Այսպէս շուքով, պատուով եւ ընծաներով Վահանն ուղեւորուեց Հայաստան եւ հասաւ իր հայրենի Գողթն գաւառ:

Երկրի բնակիչները, ուրախացած իրենց իշխանի գալստեան համար, հաւաքուեցին եւ նրան յիշեցրին երկրին պատահած աղէտները, նրա՝ մանուկ հասակում հեռանալը եւն: Եւ նա, քրիստոնէական կարգին եւ կրօնին հետեւելով, օրըստօրէ սիրով ընտելացաւ եւ ճշմարտութեան ճանապարհին քաջատեղեակ դարձաւ: Այնուհետեւ մեծապէս զղջալով՝ դառնապէս լաց եղաւ իր անձի կորստեան համար եւ շարժեց իր շուրջը գտնուողների արտասուքը: Ցանկարծ աղօթքի կանգնելով՝ իր սրտի խորքում եղածն աղօթքի վերածեց եւ ասաց. «Հա՛յր երկնաւոր, մեղանչեցի երկնքի դէմ եւ Քո առջեւ, որ Քո Միածին Որդուն ուղարկեցիր աշխարհի փրկութեան համար, որպէսզի մոլորուածները ճշմարիտ գիտութեան դառնան, ճանաչեն Հօր, Որդու եւ Սուրբ Հոգու Մէկ Աստուածութիւնը, երկրպագեն ու օրհնեն Ամենասուրբ Երրորդութեանդ եւ մկրտուեն Քո սուրբ անուամբ: Եւ ես, որ արժանացել էի սրան, երանութեան բաժնից զրկուեցի, որովհետեւ փոքր հասակից անօրինութեան խորքերն ընկղմուեցի, եւ ինձ՝ ճշմարիտ

հաւատքից անգիտութեամբ ետ դարձածիս, մեղքերը խոցեցին, ինչպէս յայտնի է Քեզ, որ յիշում ես մարդկանց բոլոր գործերը: Արդ, մեղաւորս սրտի խորքերից կանչում եմ Քեզ. ողորմի՛ր ինձ, Աստուա՛ծ, ողորմի՛ր ինձ, Տէ՛ր, ողորմի՛ր ինձ, Քո գթութեամբ ընդունի՛ր ինձ եւ Քո մարդասէր շնորհի գութը շարժի՛ր իմ նկատմամբ, որով մեղաւորներն ապաշխարում են Քո ներման քաղցրութեամբ, որ տարակուսողներին համբերութիւն ես տալիս եւ կեանք՝ նրանց, որ սրտով հիւծուած են: Ձեզ բարկանում եւ յաւիտեան ոխ չես պահում մարդկանց մեղքերի համար, որոնք Քեզ են դիմում, Տէ՛ր Աստուած: Ես նմանուեցի անառակ որդուն եւ մերժուեցի հայրական գրկից, որ հոգու նորոգութեան համար ինձ լուսաւորեց Աւազանի վերստին ծննդեամբ՝ ապրելու ըստ Աստուծոյ [կամքի՝] մինչեւ Քրիստոսի հասակին հասնելը: Եւ հիմա դարձել եմ դէպի գթած Հայրդ: Յիշի՛ր իմ մանուկ հասակը, երբ անգիտութեամբ մեղանչեցի, մի՛ յիշիր իմ տգիտութեան մեղքերը, այլ յիշի՛ր ինձ, Տէ՛ր, Քո ողորմութեամբ ու քաղցրութեամբ. եւ ինձ Քո սպասաւորներից մէ՛կը դարձրու, ազատի՛ր ինձ անմաքուր խոզերի կերակուրներից: Լուա՛ եւ սրբի՛ր ապաշխարութեան արտասուքներով, որ մեղքերից մաքրուելով՝ անարատ վարքով եւ ուղղափառ հաւատքով Քո կամքին հաճելի լինեմ այս աշխարհում, անփոփոխ մտքով փառաւորեմ անփոփոխելի Տէրութեանդ՝ Հօրը, Որդուն եւ Սուրբ Հոգուն, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն»: Այնուհետեւ ձեռնամուխ եղաւ բարեպաշտութեան լուսաւոր կարգերին՝ հաստատուն հաւատով, պահքով, տքնութեամբ եւ արտասուքով՝ որպէս վերստին լուացմամբ, քանզի արտասուքն անգիտութեամբ գործած մեղքերը սրբելու երկրորդ աւազանն է: Շատերը, տեսնելով նրան, փառաւորում էին Աստծուն ցուցաբերած ողորմութեան համար: Այնժամ Վահանի իւրայինները, տեսնելով նրա ողջախոհութիւնը եւ Քրիստոսի հաւատի մէջ հաստատուն լինելը, որոշեցին նրան աշխարհիկ կեանք մտցնել, որպէսզի Գողթն գաւառի ժառանգորդը նրա որդին լինի: Նա չհամաձայնեց, սակայն երբ մեծ թախանձանքով ստիպեցին, նա հարկադրուած աշխարհիկ կարգ մտաւ եւ փեսայացաւ Սիւնեաց Բաբկէն իշխանին: Բայց չհեռացաւ իր աստուածսիրութիւնից եւ միշտ հոգ էր տանում, որ աշխարհիկ հարստութիւնը իրեն չխանգարի եւ հեթանոսների ահի պատճառով ծածկապէս չպաշտի Աստծուն, ուստի ամէն բան աղօթքով յանձնել էր Տիրոջ խնամքին: Այդ ընթացքում վախճանուեց ամիրապետը, որն

իրեն իր երկիրը գնալու թոյլտուութիւն էր տուել եւ պատուիրել վերադառնալ իր մօտ, եւ Վահանը այդպիսով ազատուեց նրան տուած խոստումից: Սակայն կասկածում էր Հայոց երկրում իշխանութիւն ունեցող այլազգիներին՝ չլինի թէ նրանցից մէկը նոր ամիրապետին յայտնի իր՝ քրիստոնէութեան դառնալու մասին: Այդպէս էլ եղաւ. այդ լուրն արքունիք հասաւ: Վահանը, իմանալով այդ մասին, որոշեց իր ընտանիքի հետ միասին Ցունաստան գնալ: Թողեց իշխանութիւնը, իր հետ մի քիչ պաշար եւ եօթ ձիաւոր վերցրեց եւ բռնեց գաղթի ճամփան: Երբ Վայոց ձոր հասան, կինը թախանձեց նրան՝ ասելով, թէ ո՞ւր են գնալու: Վահանն ասաց, եւ նրա կինը լուր ուղարկեց իր եղբայրներին, որ Սիւնեաց նախարարութիւնում էին: Նրանք շտապ եկան եւ չթողեցին մեկնել՝ ստիպելով իրենց մօտ մնալ: Վահանը հարկադրուած համաձայնեց: Սիւնիքում նա անցկացրեց մէկ տարի՝ դիմագրաւելով սատանայի բազում փորձութիւնների, որովհետեւ այլազգիները փնտռում էին նրան՝ ձերբակալելու, սակայն այս վտանգի մէջ նրա միտքը հաստատուն մնաց Քրիստոսի հաւատի հանդէպ, եւ յայտնի դարձաւ նրա վճռականութիւնը՝ Աստուծոյ սիրուց անբաժան լինելու եւ իսպառ լքելու աշխարհի սէրն ու ցանկութիւնները: Դրանից յետոյ նա հանգիստ ու դադար չունեցաւ. կնոջն իր ընտանիքի մօտ թողնելով՝ իրեն յանձնեց Աստուծոյ կամքին: Իր հետ մի քանի զինուորներ վերցնելով՝ Աստուծոյ երկիւղով լցուած ծածուկ շրջում էր այս ու այն կողմ՝ խուսափելով թշնամիներից, որոնք փնտռում էին նրան՝ կորստեան մատնելու համար: Ամիրապետին յայտնի դարձաւ, որ Վահանն արհամարհել է իրենց հեթանոսական հաւատը եւ քրիստոնեայ է դարձել: Եւ նրա հրամանով փնտռում էին նրան: Երանելին, հալածուելով արդարութեան համար, թափառում էր, եւ ոչ ոք չէր համարձակւում իր մօտ պատսպարել նրան, մինչեւ սպառուեց նրա ամբողջ ունեցածը, եւ նրա հետ եղած մարդիկ հեռացան՝ մենակ թողնելով նրան: Բայց նա, Աստծուն ապաւինելով, ապագայի համար անյոյս չէր, այլ Տիրոջից գոհանում էր փորձութիւնների համար: Աղքատի կերպարանքով գնաց հանդիպեց հայրապետին (որն այն ժամանակ տէր Դաւիթ կաթողիկոսն էր՝ Ցովհաննէս Իմաստասէրի յաջորդը) Վաղարշապատ քաղաքում եւ նրան պատմեց այն փորձութիւնների մասին, որ կրում էր պատերազմասէր դեւի կողմից: Կաթողիկոսից գրութեամբ հրաման ստացաւ՝ անապատ եւ վանք գնալու, որ այնտեղ նրան սիրով ընդունեն, եւ պահքով, աղօթքով եւ ճգնութեամբ պաշտի Աստծուն:

Վահանը, յօժարութեամբ լսելով, գնաց Շիրակ գաւառում գտնուող մի մենաստան, որ մենակեաց ճգնաւորների վանք էր: Մտնելով այնտեղ՝ առանձնացաւ եւ առաւելագոյն ճգնութիւնների ենթարկեց իրեն. նրա արցունքներից աւազան էր գոյանում: Մօտ վեց ամիս նա անցկացրեց խստակրօն ժուժկալութեամբ եւ զարմացրեց բոլորին: Այնժամ փորձիչը դարձեալ պատերազմ սկսեց նրա դէմ. կրօնաւորների մէջ նրա պատճառով վախ զցեց, նրանք էլ գաւառի տիրոջը յայտնեցին նրա մասին, եւ գաւառի տէրն ասաց. «Թող նա հեռանայ, միգուցէ նրա պատճառով ե՛ւ մեզ, ե՛ւ ձեզ արքունիքից վնաս հասնի»: Քրիստոսի ճգնաւոր նահատակ Վահանը, լսելով այդ մասին, անտրտունջ զուարթութեամբ գնաց ուրիշ միայնակեացների մօտ՝ մեր երկրի մի անյայտ անապատ, եւ այնտեղ, առաւել քան առաջինում, ճգնեց մօտ մէկ տարի՝ միայն մէկ հագուստով եւ ոտաբոբիկ: Մոխիրը որպէս հաց էր ուտում եւ արտասուքը խառնում ըմպելիքին՝ ըստ սաղմոսի եւ ըստ առաքեալի խրատի, թէ՝ «Լաւ է սիրտը շնորհով զօրացնել, քան կերակուրներով»: Սիրով ընթերցում էր Սուրբ Գիրքը, ուսումնասիրում եւ սովորում էր Հին եւ Նոր Կտակարանները եւ նրանցից տեղեկանում Աստուծոյ կամքին հաճոյ լինելու մասին: Ուսուցանող հայրերին հլու հնազանդ էր եւ Տիրոջ օրէնքների շուրջ էր խոկում օր ու գիշեր: Իր անձի փրկութեան համար ամէն ինչ անում էր, որ պատուիրանազանց չլինի: Այդպէս, օր օրի վառելով աստուածային սիրոյ կրակը, արհամարհում էր մարմնական կարիքներն ու հանգիստը եւ մարմնի ու աշխարհի մասին չէր խորհում, այլ ցանկանում էր մարտիրոսանալ եւ արեամբ մկրտուել՝ սաղմոսելով. «Ինչպէս եղջերուն է փափագում աղբիւրի ջրին, այնպէս էլ իմ անձն է փափագում Քեզ, Տէ՛ր»: Աստուծոյ առաջնորդութեամբ եւ այս մտադրութեամբ որոշեց գնալ Դամասկոս՝ արքունիք՝ քրիստոնէութիւնն առերես խոստովանելու, այլազգիներին յայտնելու իր՝ անգիտութեամբ գործած մեղքերը եւ կամ մեռնելու նրանց կողմից, կամ համարձակութեամբ պահելու քրիստոնէական կարգն ու հաւատը, որը ճանաչեց եւ ընդունեց: Եւ ճգնաւորներին աղաչելով, որ աղօթեն իր համար, բաժանուեց նրանցից: Հասնելով Մաքենյաց վանքը, որ Գեղամայ աշխարհում էր, վանահօրը (որի անունը Սաղոմոն էր) տեղեկացրեց ամէն ինչի՝ ե՛ւ իր ճանապարհի, ե՛ւ մարտիրոսուելու իր ցանկութեան մասին: Վանահայրը, որ առաքինութեամբ եւ աստուածային գիտութեամբ լի մի այր էր, խրատեց եւ քաջալերեց նրան: Այնտեղ Սուրբ Խաչի տօնին երանելի Վահանը հաղորդուեց Տիրոջ պատուա-

կան Մարմնին եւ Արեանը, եւ Տիրոջից նրան մի սքանչելի տեսիլք տրուեց: Վերեւից անճառելի լոյս երեւաց, եւ լսելի եղաւ մի ձայն, որն ասում էր. «Քաջալերուի՛ր, Վահա՛ն, քանզի քո անգիտութեան մեղքերը ներուեցին, քո ցանկութիւնը կը կատարուի նահատակութեամբ, եւ Քրիստոսից կը ստանաս խոստացուած պարգեւները»: Այնտեղի վանականներից ոմանք, տեսնելով լոյսը, սքանչացան տեսիլքի անպատմելի անհասութեամբ: Եւ ամէնքը, փառաւորելով Աստծուն, նրան արտասուքով ճանապարհեցին: Այնտեղից գնաց Թեղենեաց վանք եւ այնտեղ մի քանի օր անցկացնելով՝ եկաւ Սովի անունով մէկ այլ վանք, որտեղ ուխտի առաջնորդ Յովհաննէսը մեծ սիրով ընդունեց նրան եւ քաջալերելով՝ հաւանութիւն տուեց նրա բարի ճանապարհորդութեանը՝ տեղեկանալով, որ յանուն Աստուծոյ էր մահուան գնում, որպէսզի Քրիստոսին յայտնի այնտեղ, որտեղ չէր ճանաչել Նրան: Վանահայրն իր փոխարէն եղբայրներից ոմանց ուղարկեց նրա հետ՝ նրա վախճանը տեսնելու:

Արդ, այնտեղից ճանապարհուելով՝ եկան հասան սուրբ երաշխաւորների մօտ՝ Բզնունեաց գաւառում գտնուող Արծկէի Երաշխաւոր կոչուած վանքը: Ուխտի առաջնորդի անունն էր Արտաւազդ (որը, ըստ ոմանց, նաեւ տէր Աբրահամ էր անուանւում): Նա, եղբայրների հետ ընդառաջ գալով Վահանին, մեծագոյն սիրով ընդունեց նրան: Հարցնելով՝ տեղեկացաւ նրանից այն ամէնի մասին, որ նրա հետ պատահեց անգիտութեան ժամանակից մինչեւ նրա դարձը, փորձութիւնները, որ կրեց չորս տարուայ ընթացքում, եւ որ այժմ՝ հալածանքների հինգերորդ տարում, Տիրոջ աջակցութեամբ գնում է իր անձը մահուան մատնելու: Վանահայրը եւ միաբանները, լսելով նրան, փառաբանում էին Աստծուն կատարուած հրաշքների համար եւ երանի էին տալիս նրան՝ բարի մտադրութիւնների եւ յանուն Աստուծոյ սուրբ վախճանի գնալու համար: Բազում այլ խօսքերով մխիթարում էին նրան եւ քաջալերում Սուրբ Գրքով: Եւ նրան յանձնելով Տիրոջ ապաւինութեանը՝ ողջոյնով, արտասուքով եւ աղօթքով ճանապարհեցին: Եղբայրներից մէկը գնաց նրա հետ՝ սպասաւորելու նրան, որքան նա կամենար: Բազում բնակավայրեր անցնելով՝ եկան-հասան Ուռհա քաղաք՝ սուրբ Դաստառակի փրկչական պատկերին երկրպագելու: Տիրոջն աղօթելով՝ Վահանն իրեն Սուրբ Հոգու շնորհներին յանձնեց, իրեն ուղեկցող եղբայրների հետ ամբողջ ճանապարհը սաղմոսներով եւ անդադար աղօթքներով անցնելով՝ Դամասկոս հասաւ: Այն ժամանակ ամիրապետը նստում էր Ռուծափ քաղաքում՝ Բերայի մօտ՝ Համայի եւ Համսայի

միջեւ: Այնժամ Վահանը միաբաններին ասաց, որ հեռանան իրենից, որպէսզի իր պատճառով չձերբակալուեն: Առաքինի նահատակ տէր Վահանը, գալով արքունիք, սպասաւորներին յայտնեց, թէ ով է ինքը, ասաց նաեւ իր արքունիք գալու պատճառը:

Նրան լսելով՝ ապշեցին եւ չէին հաւատում նրա խօսքերին: Իսկ նա խնդրում էր իր մասին յայտնել դպրապետին եւ մեծամեծերին: Երբ նրանք եկան եւ տեսան նրան, զարմացան, թէ ինչ աղքատ կերպարանք ունի՝ յիշելով, թէ նախկինում արքունիքում ինչ երեւելի եւ փառաւոր մարդ էր նա: Կարծելով, թէ ինչ-որ բան է պատահել, հարցրին. «Ինչո՞ւ ես այդպիսին»: Վահանը խոստովանեց ճշմարտութիւնը, թէ՝ «Յանուն Քրիստոսի կամաւոր աղքատութիւն եմ յանձն առել՝ անցաւոր հարստութիւնը արհամարհելով Նրա սիրոյ համար, որ ինձ համար աղքատացաւ եւ Տէր է ու Աստուած: Նրա ողորմութեամբ մեղքերից սրբուեցի եւ եկայ այստեղ, որպէսզի արեամբ վկայելու անանց մեծութեամբ պատուեմ: Արդ, աղաչում եմ ձեզ սա նոյնութեամբ հաղորդել ամիրապետին, որ կատարուի Տիրոջից ինձ սահմանուած առաքելութիւնը»: Նրանք, ապշելով այդ ամէնից, մոլորութիւն էին համարում նրա խօսքերն ու գործերը: Խորհուրդ էին տալիս նրան զգօն լինել, իսկ դպրապետը խստագոյն սպառնալիքով սաստեց նրան: Սակայն Վահանի ուրախութիւնը նրանց անարգանքների պատճառով աւելացաւ, երեսի գոյնը պայծառացաւ, եւ դպրապետի ոչ մի սպառնալիքից չվախեցաւ: Դպրապետը խնայեց նրան՝ ամիրապետին չյայտնելով նրա մասին, այլ երեսուն ոսկի տուեց եւ ասաց. «Գնա՛, հեռացի՛ր եւ քո երիտասարդ կեանքը տանջանքների եւ մահուան մի՛ մատնիր»: Այդպէս նրան հեռացրեց արքունիքից: Իսկ երբ երանելի Վահանն ամիրապետին իր մասին յայտնելու ելք չգտաւ, ծնկեց Աստուծոյ առաջ եւ այս աղօթքն արեց. «Աստուծոյ Միածի՛ն Որդի, որ մոլորուած ոչխարի հովիւ կոչուեցիր եւ, գտնելով նրան, ուսիդ վրայ առար եւ Քո բազուկները տարածելով՝ Քեզ մօտ հաւաքեցիր հեռացած մարդկանց, Դո՛ւ ես իմ յոյսը, Քրիստո՛ս: Մի՛ թողնիր ինձ անօգնական, այլ ընդունի՛ր իմ պաղատանքները եւ լուա՛ իմ յանցանքները Քո սուրբ արեամբ եւ Քո կենարար մարմնով, որ երկնքից իջած մանանայ ես եւ կեանք ես պարգեւում աշխարհին, որ Հօր կամքով եւ Սուրբ Հոգով Քեզ երկրպագողներին առաջնորդում ես դէպի կեանք. առաջնորդի՛ր ինձ, որ Քո երեսի լոյսով տեսնեմ լոյսը եւ փառք տամ Ամենասուրբ Երրորդութեանդ այժմ եւ յաւիտեանս. ամէն»:

Աղօթքից յետոյ գնաց դահճապետի մօտ, նրան իր գալու պատճառն ասաց եւ գրաւոր հաստատելով իր ասածները՝ գրութիւնը տուեց՝ ամիրապետին ցոյց տալու: Երբ ամիրապետը կարդաց, զարմացաւ գրածների եւ եղելութեան վրայ, հրամայեց Վահանին իր մօտ բերել եւ նայելով նրան՝ մտերմաբար ասաց. «Ինչո՞ւ ես աղքատի կերպարանքով, Վահա՛ն, զրկուած քո փառաւոր իշխանութիւնից, Հայոց երկիրը քեզ դրա՞ն հասցրեց»: Վահանը պատասխանեց. «Իմ Տէրն Իր անձն ունայնացրեց ինձ համար՝ աղքատի կերպարանք առնելով, եւ մինչեւ մահ հնազանդ եղաւ: Արդ, ինչն ինձ համար Նա կրեց, ես նոյնպէս դրանից չեմ հրաժարուի»: Ամիրապետն ասաց. «Հայոց սառնապատ լեռների դեւերից խելքդ թռցրել ես»: Վահանն ասաց. «Այն չար այսը, որով անգիտութեամբ բռնուեցի ձեր ուսմունքից, հալածուեց ինձնից, որովհետեւ խաւարը փախչում է լոյսից»: Ամիրապետն ասաց. «Ձեր իմաստուններն ասում են, որ դեւերը, բարուց ընկնելով, ուրիշների համար չարիք եղան ե՛ւ այս աշխարհում, ե՛ւ հանդերձեալում, ուր յոյս ունէք գնալ: Արդ, մի՛ մոլորուիր եւ մեր կրօնից մի՛ շեղուիր: Ի՞նչ է պատահել քեզ, բարիատեա՛ց մարդ, ինչո՞ւ ես յիմարանալով մերժում քո կեանքի փառաւորութիւնը»: Ապա հրամայեց բերել հագուստներ, ոսկեայ ու արծաթեայ գանձեր եւ ասաց. «Վերցրո՛ւ դրանք, շատ ծառաներ ու աղախիններ, ձիեր ու ջորիներ էլ կը տամ քեզ, նաեւ իշխանութիւն՝ այնտեղ, ուր դու կամենում ես. կամ այստեղ, կամ էլ քո ժառանգած Գողթն գաւառում»: Երանելին համարձակութեամբ ասաց. «Վաղուց էի լսել քո սուտ ու ճարտար խօսքերի եւ խորամանկութիւնների մասին, որոնցով շատերին հեռացրել ես ճշմարտութիւնից եւ կորստեան վիհը գցել՝ քեզ գեհենակից դարձնելու՝ ոմանց՝ վախեցնելով, ոմանց՝ անուշ խօսքերով, ոմանց՝ նիւթով եւ ոմանց՝ իշխանութեամբ ուրացութեան մատնելով, որի համար յաւիտենական դժոխքում այրուելով պիտի հատուցես: Բայց Աստուծոյ ծառայիս չես կարող յաղթել քո չար մեքենայութիւններով, որովհետեւ պատսպարուած եմ Աստուծոյ երկիւղով, հաւատով եւ յոյսով, ամրացած եմ գիտութեամբ: Հմտօրէն տեղեակ եմ Քրիստոսի Աւետարանին եւ ձեզանից աւելի եմ քաջատեղեակ ձեր առասպելաբանութիւններին: Որովհետեւ ձեր մոլար վարդապետի մասին, որն ասում էք, թէ պատգամաւոր է, ո՛չ մարգարէներից եւ ո՛չ էլ ուրիշ ազգից մէկը չի վկայում, այլ միայն դուք, եւ ձեզանից էլ՝ ոչ բոլորը: Բայց մեր Աստուծոյ՝ Քրիստոսի մասին բոլոր ազգերն են վկայում: Բայց եթէ կամենում ես իմ խօսքը լսել,

տո՛ւր ինձ ազատութիւն՝ քրիստոնէութեան մէջ մնալու եւ նոյն կարգով հաւատարիմ ծառայութեամբ տէրութեանդ ծառայելու: Իսկ այն, ինչ դու խոստանում ես ինձ, հոգու կորուստ է, եւ ես էլ անցաւոր խոստումների կարիքը չունեմ: Եթէ ուզում ես, վերցրո՛ւ իմ գաւառը, իսկ ես անմահ Թագաւորից արժանի հատուցում կը ստանամ ե՛ւ այս, ե՛ւ հանդերձեալ կեանքում»: Այդ ժամանակ Թագաւորը բարկանալով հրամայեց երանելուն բանտ գցել եւ կապել սիւնին: Իսկ նա մեծ ուրախութեամբ գնաց բանտ եւ գոհացաւ Աստծուց: Ապա ամիրապետը Հայոց երկրի ոստիկանին, որ այնտեղի իշխանն էր, լուր ուղարկեց՝ տեղեկանալու, թէ ի՞նչ ծագում եւ անուն ունի այդ մարդը եւ թէ ինչո՞ւ է նա արքունիք եկել:

Իսկ Քրիստոսի քաջ նահատակ Վահանը բանտում գտնուած իր բոլոր օրերին մարմնաւոր կարիքների մասին չէր հոգում, այլ առաւօտից երեկոյ սաղմոսներով եւ աղօթքներով գոհանում էր Աստծուց եւ զօրանում էր Սուրբ Հոգու շնորհներով: Մինչդեռ դատաւորը չէր դադարում իրենց իմաստուններին ուղարկել՝ նրան համոզելու, որ հրաժարուի Քրիստոսից, սակայն նրա մօտից ետ էին դառնում պարտուած եւ ամօթով: Զարմանալով խոստովանում էին իրենց պարտութիւնը, որովհետեւ չէին կարողանում ընդդիմախօսել անչափ իմաստուն եւ կորովի այդ մարդուն: Երբ ամիրապետին ասացին նրա մասին, զարմացաւ եւ պատուիրեց, որ ոչ ոքի չասեն այդ մասին: Ապա մի քրիստոնեայ եկաւ բանտ եւ ասաց, որ ինքն ասորի քահանայ է, եւ քաջալերեց երանելուն՝ ասելով. «Եթէ [կամենում ես] վերջին հաղորդութիւնը՝ Քրիստոսի մարմինն ու արիւնը ստանալ, վերցրո՛ւ այն քո փրկութեան համար, քանի որ ինձ՝ քահանայիս հանդիպեցիր»: Եւ նա ասաց. «Եթէ խորութիւն չես դնում բոլոր քրիստոնեայ եկեղեցիների՝ Քրիստոսի Մարմնի եւ Արեան ճշմարիտ խորհրդագործութիւնների միջեւ, սիրով կը վերցնեմ, ինչը փափագում եմ. եթէ ոչ՝ իմ արեամբ կը մկրտուեմ եւ աշխարհից կը հեռանամ Աստուծոյ փառքի համար»: Քահանան, զարմանալով սուրբի իմաստութեան վրայ, նրան հաղորդեցրեց ըստ կարգի:

Ողոգոմէի մեծ տօնին, որ Մաղկազարդի օրհնուած օրն է, վկան օրհնում էր Աստծուն այդ օրուայ խորհրդի սքանչելիքների համար: Ապա բանտապետին զուարթօրէն ասաց. «Քեզ խաղաղութեամբ պիտի թողնեմ աշխարհից հեռանալիս, որովհետեւ բարութեամբ ընդունեցիր ինձ»: Մարդը զարմանալով ասաց. «Ի՞նչ վերաբերմունք ցոյց տուեցի

քեզ, չէ՞ որ դու Տիրոջ ճշմարիտ յուսացեալի նման ատեցիր մարմնի հեշտութիւնները եւ վտանգը սիրեցիր, որովհետեւ Աստծուց է քո անձի լուսաւոր շնորհը. եւ այժմ ինձ հրաժեշտի խօսքեր ես ասում, որոնց նմանը երբեք չէի լսել»: Սուրբն ասաց. «Երախտիքներ Հատուցողը թող քեզ հատուցի, ես վաղը կը փոխադրուեմ Նրա մօտ, ում փափագել եմ»: Երանելու մարգարէութիւնը կատարուեց, քանզի յաջորդ օրը այնտեղ եկաւ հիւսիսային մասի իշխանի (Հայաստանի ոստիկանի) հրովարտակը, որ Վահան Գողթնացու մասին ամիրապետին տեղեկացնում էր, թէ «նա ազնուական տոհմի իմաստուններից է, օտար երկրից չէ եւ արքունիք է եկել, որպէսզի կա՛մ թոյլտուութիւն եւ ազատութիւն ստանայ՝ քրիստոնէութիւնն իր հայրենի երկրում պաշտելու, կա՛մ էլ յանուն Քրիստոսի մեռնի»: Սրա վրայ ամիրապետն ապշեց, ապա հրամայեց սուրբին իր առջեւ բերել եւ ասաց. «Ի՞նչ ունես ասելու դու, որ այժմ էլ չես զգաստացել յիմարութիւնից դ»: Երանելին ասաց. «Ճշմարտութիւնը մէկն է, եւ նրա մէջ ստութիւն չկայ. ես զգաստացել եմ Աստուածային Գրքով եւ ճանաչել ձեր մոլորութիւնը, որով ինձ կորստեան էիք մատնել մանուկ ժամանակ: Բայց հիմա այդպէս չէ, որովհետեւ ո՛չ փառքը եւ ո՛չ պատիւը, ո՛չ պարգեւները եւ ո՛չ հարստութիւնը, ո՛չ տանջանքները, ո՛չ բանտը եւ ո՛չ կապանքները, ո՛չ հուրը եւ ո՛չ սուրը, ո՛չ զանազան մեքենայական հնարքները չեն կարող բաժանել ինձ Քրիստոսի սիրուց, Ով չյիշեց իմ մանկութեան մեղքերը, այլ յիշեց ինձ Իր ողորմութեամբ եւ քաղցրութեամբ՝ խաւարից դէպի լոյս եւ անգիտութիւնից դէպի աստուածգիտութիւն դաձնելով: Ես ինչո՞վ հատուցեմ Տիրոջը Նրա ողորմածութեան դիմաց, բացի Նրանից, որ մահուան բաժակն ընդունեմ, մեծարեմ եւ փառաւորեմ Նրան Իրեն ատողների առաջ»: Այնժամ ամիրապետը բարկացաւ եւ հրամայեց շուտափոյթ գլխատել Նրան: Նրա հետ եղող մեծամեծերն աղաղակում էին, որ մահապատիժն անյապաղ կայացնեն, որպէսզի նա չանարգի իրենց կրօնը, որովհետեւ խելացի է, եւ իրենք չեն կարողանում նրան պատասխան տալ: Ապա դահճապետին հրամայեց նրան նահատակութեան վայրը տանել եւ այնտեղ էլ վախեցնել. գուցէ դառնայ իր հաւատից, իսկ եթէ ոչ՝ մահուան մատնուի:

Իսկ երանելին մահուան էր գնում՝ մեծ ուրախութեամբ սաղմոսելով. «Դէպի քեզ բարձրացրի աչքերս, Տէ՛ր, որ երկնքում ես բնակւում»: Բազմազգ բազմութիւնը գնում էր նրա յետեւից՝ նրա նահատակութիւնը տեսնելու: Երբ հասան նահատակութեան վայրը, նա, ձեռքերը բարձրացնելով, ասաց. «Գոհանում եմ Քեզնից, Տէ՛ր, որ իմ ամէնօրեայ արտասուքն ու հառաչանքները չանտեսեցիր, այլ արժանացրիր Քո մեծ եւ ահաւոր անուան համար մեռնելու: Արդ, յիշի՛ր ինձ, Տէ՛ր, Քո մարդասիրութեամբ, ողորմի՛ր եւ արժանացրո՛ւ ինձ Քո սիրելիների հետ անվախճան կեանք մտնելու: Ամաչեցրո՛ւ պարծենկոտ բռնակալին ու նրա գործակիցներին եւ Քո Եկեղեցու մանուկներին հաստատութեան վէմի վրայ ամուր եւ անշա՛րժ պահիր՝ երկնաւոր կանչովդ դէպի հանդերձեալ կեանք ճանապարհուելու եւ լոյսի որդիների հետ փառաւորելու Ամենասուրբ Երրորդութեանդ. նրանց հետ ես էլ թող արժանի լինեմ օրհնելու քեզ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից»: Իսկ դահճապետը, սուրը մերկացնելով, ասաց Վահանին. «Ահա եկաւ քո դառնութեան եւ մահուան օրը, սակայն եթէ կամենաս, կենդանի կը մնաս»: Սուրբն ասաց. «Յանուն Քրիստոսի ընտրեցի մահը, ո՛չ թէ անցաւոր կեանքը»: Այնժամ իսկոյն կտրեցին նրա գլուխը. այսպէս վախճանուեց փառաւոր իշխանը՝ Գողթնի տէր սուրբ Վահանը՝ Դամասկոսի կողմերի Ռուծափ քաղաքում (որն ըստ արաբների Ռուսաֆէ է), Տիրոջ 737 կամ 738 եւ Հայոց ՃՁՁ կամ ՃՁԷ թուականին, այն ժամանակուայ ապրիլի 14-ին՝ Զատիկի յաջորդ օրը՝ ժամը իններին, 38 տարեկան հասակում: Հաւատացեալները, տեսնելով այդ, փառաւորում էին Աստծուն, բայց նրանցից ոչ ոք չէր համարձակւում սուրբի նշխարներին մօտենալ, քանի որ վախենում էր ամիրապետի սպառնալիքներից: Այդ գիշեր ամիրապետին զարհուրեցրեց մի տեսիլք, որի պատճառով էլ յաջորդ օրը ներքինապետի միջոցով յայտարարեց, որ քրիստոնեաները կարող են վերցնել Վահանի մարմինը: Այնտեղ անմիջապէս հաւաքուեց քրիստոնեայ տղամարդկանց եւ կանանց բազմութիւն, եւ ամէն մէկն իր կարողութեան չափով հաւաքում էր նրա արեան կաթիլները: Այդ քաղաքում հայազգի մարդ չկար, այլ միայն յոյներ, ասորիներ եւ նեստորականներ: Նրանց մէջ վէճ եւ հակասութիւն ծագեց սուրբի նշխարների համար, մինչեւ որ խաղաղուեցին, եւ նրանցից իւրաքանչիւրը, սուրբի արիւնից եւ հագուստից մի մաս վերցնելով, փառք տուեց Աստծուն: Իսկ սուրբի մարմնի նշխարները, միասին դնելով մի տեղ, պահեցին եւ սպասում էին Աստուծոյ տեսչութեանը:

Արքունական զօրքից Թէոփիլոս անունով մի յոյն քրիստոնեայ չորս հոգու հետ միասին գիշերը գողացաւ սուրբի նշխարները եւ տարաւ դրեց իր սենեակում: Սակայն այդ իսկ գիշեր Թէոփիլոսի արարքը տեսիլքով յայտնի դարձաւ քաղաքի եպիսկոպոսին, եւ նա բոլորին

պատմեց իր տեսիլքը: Հաւաքուեցին եւ որոշեցին, թէ ինչ անեն: Հաւատացեալները միաբանուելով՝ պատուական գանձը բերեցին եկեղեցի եւ որոշեցին սուրբ Վահանի անուամբ վկայարան կառուցել: Այդ ժամանակ մի մահամերձ հիւանդ աղաչում էր իրեն մօտեցնել սուրբի նշխարներին, եւ երբ մօտեցրին, անմիջապէս բժշկուեց բոլոր ցաւերից, փառք տուեց Աստծուն եւ ինքնուրոյն գնաց իր տունը: Բոլորն, այս տեսնելով, փառաւորում էին Աստծուն եւ աւելի քաջալերւում՝ սրբի հանգստարանն առաւել շքեղ գեղեցկութեամբ կառուցելու: Մէկը, բարձր պատի վրայից սայթաքելով, վայր ընկաւ. մինչ բոլորը ճիչ արձակելով ասացին, թէ նա մեռաւ, նա, ողջ եւ առողջ ոտքի կանգնելով, ասաց. «Ողջ եւ առողջ եմ, քանի որ յայտնապէս տեսայ Աստուծոյ վկայ Վահանին, որն իմ ընկնելու պահին ինձ բռնեց եւ իջեցրեց ներքեւ»: Ամէնքը, հրաշք հրաշքի ետեւից տեսնելով եւ լսելով, փառաւորում էին Աստծուն: Կառուցեցին սրբի վկայարանը, շքեղ սպասքով զարդարեցին եկեղեցին եւ այնտեղ ամփոփեցին Քրիստոսի հրաշագործ վկային՝ փառաւորելով նրան՝ ըստ սուրբ նահատակների կարգի: Այստեղ սուրբ Վահան վկայի միջոցով բազում հիւանդներ էին առողջանում տեսակ-տեսակ ցաւերից եւ փառաւորում Աստծուն:

ՅԱՒԵԼՈՒԱԾ

ԵԹՈՎՊԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Եթովպիան Աֆրիկայի՝ քրիստոնէութիւն ընդունած ընդարձակ տարածաշրջաններից միակ պետութիւնն է, որը մինչեւ օրս պահպանել է իր քրիստոնէական դէմքն ու ինքնուրոյնութիւնը: Շրջապատուած լինելով մահմեդական եւ ոգեպաշտական այլազան կրօններ դաւանող ժողովուրդներով՝ Եթովպիան հաւատարիմ է մնացել քրիստոնէութեանը, որն ընդունելով՝ նա իր ինքնորոյն տեղը գտաւ միաստուածական կրօնների ուղեծրում: Դեռեւս քրիստոնէական հաւատի տարածման սկզբից (Դ դար) Եթովպական բարձրավանդակը հանդիսացել է քրիստոնէութեան ամրոց: Կրելով Ասորական եկեղեցու ազդեցութիւնը, իսկ մինչեւ վերջերս գտնուելով Ղպտի եկեղեցու ենթակայութեան ներքոյ՝ Եթովպական եկեղեցին իր հաւատացեալների 20 մլն բանակով, հազարաւոր եկեղեցիներով ու վանքերով գալիս է յաւերժացնելու աստուածաբանական եւ ծիսաբանական իր ինքնատիպ աւանդոյթները:

ԱՒԱՆԴԱՊԱՏՈՒՄՆԵՐ ՀՐԷՈՒԹԻՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՒ ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆԸ ԴԱՌՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Կայսերական այն դինաստիան, որը մինչեւ 1974 թ. կառավարում էր Եթովպիայում, իր սկիզբը վերագրում է Սողոմոն թագաւորին եւ Սաբայի թագուհուն[1]:

Համաձայն «Թագաւորաց փառքի»[2]՝ Սաբայի թագուհին գահակալում էր Եթովպիայում: Նա յղանում է Սողոմոն թագաւորից եւ ծնում որդի, որին անուանում է Մենիլեկ. եբրայերէն՝ «բեն մելեկ» կամ արաբերէն՝ «իբն մալիք», այսինքն՝ թագաւորազն:

Պատանեկան տարիքում Մենիլեկը ցանկանում է տեսնել իր հօրը եւ ստանալով թագուհու օրհնութիւնը՝ ուղեւորւում է Երուսաղէմ: Սո-

---

1 Տե՛ս Գ Թագ. Ժ, 1-13, Բ Մնաց. Թ. 1-12:

2 Եթովպական թագաւորների ժամանակագրութիւնը, որը կոչուած է օրինակացնելու ԺԳ դարից ի վեր գահակալող «սողոմոնեան» դինաստիայի իշխանութիւնը:

ղոմոն թագաւորը կամենում է, որ իրենից յետոյ որդին ժառանգի Երուսաղէմի գահը, սակայն, տեսնելով, որ նա ցանկանում է վերադառնալ Եթովպիա, ստիպուած համաձայնում է: Եւ Մենիլեկը հեռանում է Իսրայէլի բոլոր առաջնեկների ուղեկցութեամբ: Ըստ աւանդութեան՝ վերջին պահին նրան յաջողւում է իրեն ուղեկցող երիտասարդ հոգեւորականների եւ իր համախոհների օգնութեամբ յափշտակել եւ իր հետ Եթովպիա բերել Ուխտի Տապանակը, որը պահւում էր Երուսաղէմի տաճարում: Մեր օրերում էլ եթովպացի քրիստոնեաներից շատերը հաւատում են, որ դա իրապէս Ուխտի Տապանակն է: Այժմ այն պահւում է Ակսումի Սիոն եկեղեցում:

Ըստ «Թագաւորաց փառքի»՝ եթովպացիները դառնում են յուդայական կրօնին՝ այդպիսով պատրաստուելով նախասահմանուած ժամին ընդունելու Մեսիային՝ Նազովրեցի Յիսուսին, եւ միանալու Նրա աշակերտներին: Իսկ դէպի քրիստոնէութիւն դառնալու սկիզբը, աւանդութեան համաձայն, դրուել է Փիլիպպոսի կողմից՝ Երուսաղէմից Գազա տանող ճանապարհին «եթովպացի ներքինու» մկրտութեամբ[3]:

ԵԶԱՆԱ ԹԱԳԱՒՈՐԻ ԴԱՐՁԸ

Ակսումեան թագաւորութիւնը, որը գտնւում էր այժմեան Տեգրէի տարածքում, քրիստոնէութեան սկզբնաւորման շրջանում մեծ ճանաչում է ունեցել: Ադուլիս քաղաքը՝ Կարմիր ծովի ափին գտնուող նաւահանգիստը, որը կառուցուել էր յոյն նաւաստիների կողմից, առաջին դարում առեւտրի հանգուցակէտ էր Աֆրիկայի եւ Յունաստանի միջեւ:

Հնէաբանական ուսումնասիրութիւնները ցոյց են տուել, որ Ափիլաս թագաւորը, որն իշխում էր Ակսումում Գ դարում, օգտագործել է բազմաստուածութեանը բնորոշ խորհրդանշաններ, ինչպիսիք են կիսալուսինը կամ սկաւառակը, որոնք դրոշմւում էին նրա դրամների վրայ:

Եզանա թագաւորի կառավարման վերաբերեալ հնագոյն արձանագրութիւնները վկայում են, որ նա նուաճել է Մերոէի թագաւորութիւնը եւ իր իշխանութիւնը տարածել Արաբիայի ամբողջ հարաւարեւմտեան մասում: Վաղագոյն արձանագրութիւններում նրա դէպի քրիստոնէութիւն դառնալը վկայում է այն փաստը, որ թագաւորն իր

3 Տե՛ս Գործք Ը 26-39:

սկզբնական ռազմական յաջողութիւնները վերագրել է «անյաղթ Մահրեմին», սակայն յետոյ բոլոր յաղթանակների համար սկսել է փառաբանել «երկնքի եւ երկրի Տիրոջը»: Իսկ կառավարման վերջում Եզանա թագաւորի անուամբ կտրուող դրամների վրայ արդէն խաչեր էին դրոշմւում:

Լատին Ռուփինի պատմութեան մէջ խօսւում է այն մասին, թէ ինչպէս է Ակսումի արքունիքը ընդունել քրիստոնէութիւն: Մերոպիուս անունով սիրիացի մի փիլիսոփայ որոշում է իր երկու աշակերտների՝ Ֆրումենսի ու Եդեսի ուղեկցութեամբ այցելել Աֆրիկեան թագաւորութիւն: Եթովպիայի ափից ոչ հեռու նրանց նաւը խորտակւում է, եւ տեղաբնակները բոլոր ուղեւորներին սպանում են՝ խնայելով միայն երկու երիտասարդներին, որոնց կալանում են ու բերում արքունիք: Այստեղ նրանք իրենց գիտելիքներով հիացնում են թագաւորին ու նրա ընտանիքին եւ յորդորում ընդունել իրենց քրիստոնէական հաւատը: Ակսումից հեռանալու թոյլտուութիւն ստանալով՝ Եդեսը վերադառնում է Սիրիա, իսկ Ֆրումենսն ուղեւորւում է Ալեքսանդրիա՝ նպատակ ունենալով կապեր հաստատել քաղաքի պատրիարքարանի եւ եթովպական երիտասարդ եկեղեցու միջեւ: Այստեղ էլ նա ս. Աթանասի կողմից ձեռնադրւում է Ակսումի եպիսկոպոս՝ դառնալով Եթովպիայի առաջին եպիսկոպոսը:

Այսպիսով, Եթովպիայում քրիստոնէութիւնը ծնունդ է առել շնորհիւ Յունաց աշխարհի հետ ծովային կապի, սիրիական միսիոներութեան եւ Ալեքսանդրիայի պատրիարքութեան հետ շփումների:

ԻՆՐ ՍՈՒՐԲԵՐԸ

Եթովպիայում Սիրիայի ազդեցութիւնը մեծանում է Ե դարում ինը սուրբերի՝ Զա-Միքայէլ Արագաւիի, Պանտալեւոնի, Աֆսէի, Գարիմա Եշաքի, Լիքանոսի, Սեհմայի, Եմաթայի, Ալեֆի եւ Գուբայի գործունէութեան շնորհիւ: Ըստ եթովպական աւանդութեան՝ այդ ճգնաւորները եկել էին Սիրիայից, Հռոմից, Փոքր Ասիայից կամ Կոստանդնուպոլսից: Մինչդեռ, հնարաւոր է, որ խօսքը սիրիացի միաբնակ քրիստոնեաների մասին է, որոնք այդպիսով խոյս էին տուել իշխանութիւնների հետապնդումներից:

Այս ինը սուրբերի կեանքի հետ կապուած բազում աւանդութիւններ կան: Ասում են, որ նրանք որոշ ժամանակ մնացել են Վերին

Եգիպտոսում՝ Ս. Պախոմի վանքում, ապա այնտեղից գնացել Ակսում, որտեղ էլ եթովպերէն ուսանելուց յետոյ ցրուել են երկրով մէկ: Աւանդութիւնը նրանց է վերագրում մի շարք աստուածաբանական եւ վարքագրական աշխատութիւնների (Ս. Պախոմի վանքի կանոնագիրքը, ս. Անտոն անապատականի վարքը, ս. Աթանասի վարքը եւ այլն) թարգմանութիւնը գէեզի[4]: Այսպիսով, ակնյայտ է, որ ինը սուրբերը նպաստել են Եթովպական Եկեղեցու ամրապնդմանը:

ԶԱԳՈՒԷ ԴԻՆԱՍՏԻԱՆ

Մահմեդականութեան տարածմամբ եւ Ակսումեան թագաւորութեան անկումով, Եթովպիայի քրիստոնեայ մասը տեղափոխւում է հարաւ: Սակայն մի քանի դար յետոյ Զագուէ դինաստիայի գործունէութեան շնորհիւ կենտրոնական իշխանութիւնը վերականգնում է իր երբեմնի հզօրութիւնը:

Զագուէի դարաշրջանը կրօնական առումով խիստ բարենպաստ էր, եւ քրիստոնէական հաւատի հանդէպ մեծ հետաքրքրութիւն կար: Այդ դինաստիային պատկանող եւ անվիճելի հեղինակութիւն ունեցող տիրակալներից մէկը՝ Լալիբելան, յայտնի էր դարձել Վալլո գաւառում կառուցած համանուն հռչակաւոր ժայռափոր եկեղեցիներով: Այսպիսով, նա ցանկացել էր Եթովպիայի լեռներում կերտել մի նոր Երուսաղէմ՝ նրա նմանակը, որը հասանելի լինէր բոլոր նրանց, ովքեր զրկուած էին Սուրբ Երկիր ուխտի գնալու հնարաւորութիւնից:

Զագուէի կառավարման ժամանակահատուածը բնորոշւում է նաեւ դինաստիայի իշխանների միջեւ լարուած ընդհարումներով, ինչն, անշուշտ, հզօրացնում էր իրենց հակառակորդներին:

ՍՈՂՈՄՈՆԵԱՆ ԴԻՆԱՍՏԻԱՅԻ ՍԿԻԶԲԸ (1270-1293)

Զագուէի դինաստիայում տարաձայնութիւններն այնպիսի չափերի են հասնում, որ Եկունո Ամլակ իշխանին (1270-1283), որն իրեն համարում էր Սողոմոնի եւ Մենիլեկի յետնորդը, յաջողւում է զաւթել իշխանութիւնը: Նրա հիմնադրած դինաստիան ջանում էր տարածել

4 Գէեզը դասական եթովպերէնն է:

վերոյիշեալ «Թագաւորաց փառքը»՝ մի աշխատութիւն, որը հաստատում էր նրա սողոմոնեան ծագումը:

Եկունո Ամլակը մեծապէս նպաստում է կենտրոնական իշխանութեան ամրապնդմանը, առեւտրի բարգաւաճմանը եւ Եկեղեցու պայծառացմանը: Թագաւորի մահից յետոյ իշխանութիւնն անցնում է նրա որդուն՝ Յագբէ՛ա Սեյոնին (1284-1293): Վերջինիս իշխանութեանը յաջորդող տարիներին բնորոշ անկայունութիւնը պատճառ է դառնում, որ Եթովպիան կռուախնձոր դառնայ տարբեր դինաստիաների միջեւ, եւ միայն նրա ամենանշանաւոր տիրակալներից մէկի՝ Ամդա Սեյոն Առաջինի (1314-1344) օրոք է յաջողւում խաղաղութիւն հաստատել երկրի ներսում եւ հնազանդեցնել ապստամբած ազնուականներին, որոնք, օգտուելով ԺԳ դարի վերջում երկրում տիրող անիշխանութիւնից, փորձում էին անկախութիւն ձեռք բերել:

Երկրի ներսում կարգուկանոն հաստատելուց յետոյ Ամդա Սեյոնը իր ուժերն ուղղում է հարեւան մահմեդական էմիրաթների դէմ, որոնք մշտապէս սպառնում էին երկրի խաղաղութեանը: Պատմական տեղեկագրերը վկայում են, որ մահմեդական զօրքերի յարձակումներից մէկի ժամանակ թագաւորը կռուի է ելնում «յանուն Իսրայէլի Տէր Աստուծոյ»:

ՄԻԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԶԱՐԹՕՆՔԸ

Միապետութիւնը, որը Եթովպիայում գոյութիւն է ունեցել քրիստոնէացման շրջանից ի վեր, սողոմոնեան դինաստիայի կառավարման շրջանում զարթօնք է ապրում: Երիտասարդ ազնուականներից շատերն այն ժամանակ թողնում էին աշխարհիկ կեանքը եւ հոգեւոր այրերի առաջնորդութեամբ տրւում ճգնաւորութեան: Վանականութեան վերածննդի դարաշրջանում երեւան են գալիս առանձնայատուկ օժտուածութեան տէր անհատականութիւններ, ինչպիսիք են Եազուս Մոան, Թաքլա Հայմանոթը, Եւստաթիոսը եւ Բասալոտա Միքայէլը:

ԵԱԶՈՒՍ ՄՈԱ (մահ. 1292)

Եազուս Մոան ծնուել է Դահնայում: 1241-ին նա ձեռնադրւում է աբեղայ, իսկ յետագայում դառնում է երկրի հարաւում գտնուող Հայք լճի կղզիներից մէկում բնակութիւն հաստատած ճգնաւորների հոգե-

ւոր առաջնորդը: Այնտեղ նա հիմնում է վանական դպրանոց, որը կոչուած էր դառնալու վանական կեանքի վերականգնման կենտրոն:

ԹԱՔԼԱ ՀԱՅՄԱՆՈԹ (1215-1313)

Սա աբբայ Եազուս Մոայի ամենաաչքի ընկնող աշակերտներից էր: Դեռեւս երիտասարդ տարիքում Կեռլոս (Կիւրեղ) եպիսկոպոսի կողմից ձեռնադրուելով սարկաւագ՝ Թաքլա Հայմանոթը դարձի է բերում Սաւա գաւառում բնակուող բազմաթիւ ոչ քրիստոնեաների:

Եթովպական մանրանկարչութեան մէջ ընդունուած է Թաքլա Հայմանոթին պատկերել այն դիրքով, որով նա անցկացրել է իր երկրային կեանքի վերջին եօթ տարիները. իր չափազանց նեղ խցում, որտեղ հնարաւոր չէր ո՛չ պառկել եւ ո՛չ էլ նստել, ուր նա եղել է անընդհատ աղօթքի մէջ: Ըստ աւանդութեան՝ դրա հետեւանքով նա կորցրել է ոտքը, եւ միայն մահն է կարողացել ընդհատել նրա երկարատեւ աղօթական վիճակը:

ԲԱՍԱԼՈՏԱ ՄԻՔԱՅԷԼ (ԺԴ դարի առաջին կէս)

Աբբայ Բասալոտա Միքայէլը իրեն համարել է աբբայ Եազուս Մոայի հոգեւոր զաւակը: Յայտնի է նրանով, որ յանդգնել է յանդիմանել Ամդա Սեյոն միապետին, որը խախտում էր քրիստոնէական աւանդոյթները եւ նպաստում արքունիքում բազմակնութեան տարածմանը: Այդ յանդիմանութեան համար նա պատժւում է եւ աքսորւում:

ԵՒՍՏԱՓԻՈՍ (1273-1352)

Եւստափիոսը (Եւոստաթեւոս) գառալթացի յայտնի ճգնաւոր Դանիէլի զարմիկն էր: Նա հսկայական գործունէութիւն է ծաւալել երկրի հիւսիսում գտնուող վանքերում: Իր աշակերտների հետ միասին պահում էր «երկու շաբաթները», այսինքն՝ հրէական շաբաթը եւ քրիստոնէական կիրակին: Եւստափիոսն ընդդիմանում էր ալեքսանդրեան արքունիքի կայացրած որոշումներին եւ ի վերջոյ ստիպուած է լինում բռնել աքսորի ճանապարհը: Վախճանուել է Հայաստանում:

Նրա կառուցած վանքերը երկրի հիւսիսում դեռ երկար ժամանակ ծաղկում էին ապրում: Այնտեղ մտնելու իրաւունք ունէին միայն այն վանականները, որոնք պահում էին «երկու շաբաթը»:

ԶԱՌԱ ԵԱՅԵԿՈԲԻ ԿՐՕՆԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ (1434-1468)

Ամդա Սեյոնի բազմաթիւ տարածքային նուաճումների հետեւանքով երկրում մեծանում է ոչ քրիստոնեաների թիւը, ինչը որոշ չափով նպաստում է հեթանոսութեան տարածմանը: Եթովպական Եկեղեցու ամբողջականութիւնը վերականգնում է շնորհիւ Զառա Եայեկոբի, որը մեծ պատրաստակամութեամբ ձեռնամուխ է լինում բարեփոխումների: Ինչ վերաբերում է եւստափիոսականներին, ապա նրանց համար փոխզիջողական մի որոշում է կայացուում, ըստ որի՝ երկու շաբաթները պահել ցանկացողները կարող էին այդ անել՝ այն պայմանով, որ դա չհակասէր նրանց շահերին, ովքեր այդ հարցում կը գերադասէին Ալեքսանդրիայի պատրիարքի սահմանած կանոնները: Իսկ մնացած հարցերում միապետն անզիջում էր: Յայտնի է, որ նա չէր խնայել նոյնիսկ իր որդիներին. նրանցից երկուսը, որոնց կասկածել էին ուղղափառ հաւատից շեղուելու մէջ, մահապատժի էին ենթարկել:

Զառա Եայեկոբի՝ Եկեղեցու միասնութեանը նպաստող ջանքերի մասին է վկայում այն, որ նա Եթովպիայից երկու պատգամաւորական խումբ է ուղարկել Ֆերարէ-Ֆլորենտական վեհաժողով (1438-1441), որը պապի կողմից գումարուել էր Ընդհանրական Եկեղեցու վերամիաւորման նպատակով: Միապետը մեծ հետաքրքրութիւն է ցուցաբերել նաեւ Երուսաղէմի Եթովպական վանքի հանդէպ:

Ինչ վերաբերում է քաղաքականութեանը, ապա նա շարունակում էր պայքարել հարեւան էմիրաթների դէմ, յաղթարշաւներով հասնում մինչեւ Կարմիր ծով եւ մի քանի տարի շարունակ խաղաղութիւն ապահովում իր թագաւորութեան տարածքում:

ՊՈՐՏՈՒԳԱԼԱՑԻՆԵՐԻ ՀԵՏ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՍԿԻԶԲԸ (1486-1525)

Միջնադարում եւրոպացիները գիտէին, որ մահմեդական երկրներից անդին կայ մի խորհրդաւոր քրիստոնէական պետութիւն, որը կա-

ռավարում է հոգեւորական-թագաւորի կողմից: Միջնադարեան գրականութեան մէջ այդ երկրի գտնուելու վայրի մասին եղած տեղեկութիւններն անստոյգ են. համարւում էր, որ այն գտնւում է Աֆրիկայից մինչեւ Չինաստան գտնուող տարածքներում, սակայն յետագայում գերակշռեց այն Եթովպիայի հետ նոյնացնելու տեսակէտը:

ԺԴ դարում ֆրանցիսկեան եւ դոմինիկեան միսիոներները մեծ դժուարութեամբ այցելում են Եթովպիա՝ իբրեւ առաջին եւրոպացիներն այստեղ: Իսկ 1404 թ. Եթովպացիների մի խումբ գնում է Հռոմ: Սակայն ԺԵ դարում Եթովպիա այցելող եւրոպացիների թիւը նուազում է. 1486-ից մինչեւ 1525 թ. այնտեղ են ժամանում երեք պորտուգալական դեսպաններ:

Պորտուգալացիները ցանկանում էին վերահսկել Հնդկաստան տանող ծովային ճանապարհը եւ այդ նպատակով ամրոցներ էին կառուցում Կարմիր ծովի երկայնքով: Սակայն երիտասարդ միապետը՝ Լեբնա Դենգելը, վերջին պատուիրակութեանն ընդունում է առանց յատուկ ոգեւորութեան, որովհետեւ այն ժամանակ նա յաղթել էր էմիր Մահֆուզին եւ կարողացել իր ձեռքն առնել տարածաշրջանի խոշոր առեւտրական ճանապարհների վերահսկողութիւնը: Շուտով, սակայն, պորտուգալացիների օգնութիւնը խիստ անհրաժեշտ է դառնում:

ԳՐԱՆԻ ԱՐՇԱՒԱՆՔԸ (1525-1543)

1525-ից մինչեւ 1527 թ. Մահֆուզի փեսան՝ Ահմադ Իբն-Իբրահիմ ալ-Գազին, որին կոչում էին Գրան («Ձախլիկ»), մի քանի ամայացնող յարձակումներ է գործում Եթովպական բարձրավանդակի վրայ: Նրան յաջողւում է նուաճել համարեա ողջ երկիրը, որը նրա զօրքերի կողմից հրոյ ճարակ է դառնում: Կոտորում էին բոլոր նրանց, ովքեր հրաժարւում էին ընդունել մահմեդականութիւն: Քանդում էին եկեղեցիներն ու վանքերը, այրում քրիստոնէական արուեստի ստեղծագործութիւնները:

Եթովպացիները ստիպուած օգնութիւն են խնդրում պորտուգալացիներից: 1543 թ. ճակատամարտերից մէկում Գրանը սպանւում է, եւ մահմեդական զօրքը փախուստի է դիմում: Այսպիսով, քրիստոնէական Եթովպիան փրկւում է:

ՊՈՐՏՈՒԳԱԼԱՑԻ ՃԻԶՈՒԻՏՆԵՐԸ ԵԹՈՎՊԻԱՅՈՒՄ (1543-1632)

Հռոմը յոյսեր էր փայփայում իրեն ենթարկել Եթովպացի քրիստոնեաներին, եւ պորտուգալացի զինուորներին հետեւեցին ճիզուիտ միսիոներները: Գելաւդեւոս միապետը հրաժարուեց ճանաչել պապի իշխանութիւնը, սակայն աւելի ուշ Պերո Պայէզ անունով չափազանց պատրաստուած ճիզուիտ միսիոներին յաջողւում է Սուսենիոս կայսերը (1607-1632) համոզել գնալու այդ քայլին: Հայր Պայէզի (1622) մահից յետոյ նրա տեղը գրաւում է հայր Մենդեզը, որն իր քաղաքավարական եւ մտային օժտուածութեամբ զգալիօրէն զիջում էր իր նախորդին:

Սուսենիոս կայսրը ձգտում էր լատինականացնել Եթովպական եկեղեցին, եւ դա պատճառ է դառնում, որ երկրում քաղաքացիական պատերազմ բռնկուի: Ի վերջոյ, Սուսենիոսը հրաժարւում է գահից՝ իր տեղը զիջելով որդուն՝ Փասիլադէսին (1632-1667), որն իր գահակալութեան հէնց սկզբից երկրից վռնդում է բոլոր ճիզուիտներին ու պորտուգալացիներին:

ԳՈՆԴԱՐԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԸ ԵՒ ՕՐՈՄՈՆԵՐԻ ԱՐՇԱՒԱՆՔՆԵՐԸ (1632-1769)

Միջնադարում Եթովպացի միապետերից եւ ոչ մէկը մշտական մայրաքաղաք չի ունեցել: Արքունիքը սովորաբար գտնւում էր տիրակալի մշտափոփոխ զինուորական ճամբարում: Փասիլադէս կայսրը մայրաքաղաք է հռչակում Գոնդար քաղաքը, որը դառնում է գիտութեան, մշակոյթի եւ երաժշտութեան կենտրոն:

Սակայն գոնդարեան ժամանակաշրջանը զերծ չէր յուզումներից ու վտանգներից: Գալլա կոչուող ազգին (կամ ինչպէս իրենք էին իրենց անուանում՝ օրոմոներին) յաջողւում է երկրի հարաւարեւմտեան հատուածից տարածուելով՝ աստիճանաբար զաւթել իշխանութիւնը:

ԴԱՏԱՒՈՐԱՑ ՇՐՋԱՆԸ (1769-1856)

Սա Եթովպիայի պատմութեան ամենամռայլ ժամանակաշրջանն է: Տարբեր գաւառների իշխանների միջեւ եղած տարաձայնութիւնները

վերածուում էին քաղաքացիական անվերջանալի պատերազմների: Միապետերը, իրար ետեւից զրկուելով իշխանութիւնից, փոխարինում էին միմեանց: Նրանցից ոմանք, բամիցս նստելով գահին, այնուհետեւ գահընկէց էին արւում:

Դատաւորաց շրջանի համար յատկանշական է անիշխանութիւնը, որը զուգահեռ է Իսրայէլում միապետութեան հաստատմանը նախորդած տարիների նոյնանուն ժամանակաշրջանին:

ՄԻԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԹԵՒՈԴՐՈՍ Բ-Ի ԿՈՂՄԻՑ (1856-1868)

Կասսա անունով մի հանճարեղ զինուորականի վերջապէս յաջողւում է վերջ դնել Դատաւորաց շրջանի անկարգութիւններին: Հաշտեցնելով ներքին հակառակորդներին՝ 1855-ին նա թագադրւում է Եթովպական Եկեղեցու առաջնորդ Սալամայի կողմից եւ նստում միապետական գահին՝ ստանալով Թեւոդրոս Բ անունը: Նա Եթովպացի առաջին կայսրն էր, որը ջանում էր երկիրն առաւել ժամանակակից դարձնել:

Կայսերն այդ գործում մեծապէս աջակցում էին նրա եւրոպացի խորհրդականները: Թագուհին եւս սատարում էր նրան: Դրա շնորհիւ Թեւոդրոս Բ-ին յաջողւում է իրականացնել իր գրեթէ բոլոր ծրագրերը: Նա պայքարում է ստրկատիրութեան դէմ, ջանում է խստօրէն պահպանել եկեղեցական օրէնքով սահմանուած միամուսնութիւնը, արգելում է այնպիսի վայրագ պատժի կիրառումը, ինչպիսին ռազմագերիների ամորձատումն էր՝ մի բան, որ ընդունուած էր օրոմոների օրօք: Միապետը կազմում է յանցագործութիւնների դէմ պայքարող ոստիկանական ջոկատ, հիմնում է փոստային ծառայութիւն, սահմանում մաքսային գնացուցակներ, կառուցում ճանապարհներ, ժողովրդին ուսուցանելու նպատակով հրաւիրում է եւրոպացի միսիոներներ եւ արհեստաւորներ: Զինուորականների համար, որոնց ապրուստի միջոցը մինչ այդ թալանն էր, սահմանում է կայուն աշխատավարձ: Այս մտայղացումների իրականացման համար նա ռազմատուգանքի պահանջ է ներկայացնում Եկեղեցուն, որին պատկանում էր երկրի հողատարածքների մեծ մասը: Սակայն, Եկեղեցին, որը պահպանողաբար էր վերաբերւում այս կարգի նորամուծութիւններին, խստօրէն ընդդիմանում է:

Թագուհու մահից եւ 1860 թ. իր երկու խորհրդականների սպանութիւններից յետոյ միապետը զրկւում է կայուն յենարանից, եւ դէպքերի յետագայ ընթացքը ստիպում է նրան դիմել ինքնասպանութեան:

ՅՈՀԱՆՆԷՍ Բ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՇՐՋԱՆԸ (1868-1889)

Իշխանութեան համար որոշ պայքարից յետոյ գահն անցնում է երիտասարդ իշխան Կասսա Մերսայի ձեռքը, որը սկսում է կառավարել Յոհաննէս Բ անուամբ: Սա զինուորական խոշոր գործիչ էր, որին յաջողւում է կայսրութիւնը պաշտպանել արտաքին թշնամիներից: Լինելով ջերմեռանդ քրիստոնեայ՝ նա անհանդուրժող էր քրիստոնէական միւս դաւանանքների նկատմամբ: Այդ պատճառով արգելել էր եւրոպացի միսիոներների գործունէութիւնն իր տիրոյթներում: Յոհաննէս Բ-ը յատկապէս բարեացակամ էր Երուսաղէմի եթովպական վանքի հանդէպ, որտեղ Հին քաղաքի արուարձաններից մէկում սկսել էր նոր եկեղեցու շինարարութիւն:

1889 թ. Յոհաննէս Բ միապետը զոհւում է մահդիստների՝ Սուդանի մահմեդական ծայրայեղական աղանդի հետ պատերազմում:

ՄԵՆԻԼԵԿ Բ (1889-1913)

Յոհաննէս Բ-ին յաջորդում է Մենիլեկ (Մենելիկ) Բ-ը: Այս տաղանդաւոր դիւանագէտն ու տիրակալը կրկնակի ընդլայնում է իր կայսրութեան սահմանները եւ հիմնում նոր մայրաքաղաք՝ Ադիս-Աբեբան («Նոր ծաղիկ»): Նրա գահակալութեան տարիներին իտալացիները փորձում էին իրենց հսկողութեան տակ պահել իշխանութիւնը, սակայն Մենիլեկին յաջողւում է հակահարուած տալ թշնամուն եւ փրկել երկիրը: Շարունակելով բարեփոխումներ կատարել՝ նա խթանում է արտասահմանեան միսիոներների բարեգործական եւ կրթական գործունէութիւնը, հիմնադրում Եթովպիայում առաջին ժամանակակից դպրոցները: Իսկ Երուսաղէմի եթովպական վանքը վայելում էր նրա բարեհաճութիւնը:

ՀԱՅԼԱ ՍԵԼԱՍԷԻ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԳԱԼԸ (1913-1930)

Քանի որ Մենիլեկ Երկրորդը որդի չունէր, ուստի նրա մահուանից որոշ ժամանակ անց որոշւում է իշխանութիւնը յանձնել նրա դուստրերից մէկի որդուն՝ երիտասարդ իշխան Իյասուին: Վերջինս կառավարել է սկսում կայսեր մահուանից յետոյ, սակայն այդպէս էլ չի թագադրւում: Մահմեդականութեան հանդէպ ունեցած համակրանքի եւ

անզգոյշ արտաքին քաղաքականութեան հետեւանքով նա զրկւում է գահից: Կայսրուհի է հռչակւում Մենիլեկ Բ-ի միւս դուստրը՝ Զաուդիտուն:

Նա կառավարում էր՝ իշխանակից ունենալով իր հօր զարմիկներից մէկի որդուն՝ Թաֆարի Մակոննենին, որի հետ, սակայն, նրա յարաբերութիւնները լաւ չէին, եւ շատ հարցերում եղած տարաձայնութիւններն էլ աւելի էին խորացնում այդ անջրպետը: Կայսրուհին չափազանց նուիրուած ու նախանձախնդիր քրիստոնեայ էր եւ Եկեղեցու հովանաւոր: Սակայն նրա հայեացքները չափազանց պահպանողական էին. օրինակ՝ գտնում էր, որ երկրում պէտք է պահպանուի ստրկատիրութիւնը (եւ միայն նրա մահից յետոյ՝ 1930-ին, ստրկատիրութիւնը Եթովպիայում վերացուեց): Մինչդեռ իշխան Թաֆարին, որը կրթուել էր ֆրանսիացի միսիոներների մօտ, ընդհակառակը՝ սկսել էր պայքարել ստրկատիրութեան դէմ դեռեւս 16 տարեկանից, երբ նշանակուել էր Հարարի նահանգապետ:

1930 թ. կայսրուհու զօրքերի դէմ տարած յաղթանակից յետոյ Թաֆարի Մակոննենը իրեն կայսր է հռչակում Հայլա Սելասէ («Երրորդութեան զօրութիւնը») անուամբ, որը տրուել էր նրան մկրտութեան ժամանակ:

ՀԱՅԼԱ ՍԵԼԱՍԷԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՇՐՋԱՆԸ (1930-1974)

Կայսեր առաջին գործը խորհրդարանի ստեղծումն էր: Սակայն իտալա-եթովպական պատերազմի ընթացքում (1935-1936) Մուսսոլինիի զօրքերի առաջխաղացման եւ եթովպական ուժերի կրած պարտութիւնների հետեւանքով միապետը նահանջում է Ադիս-Աբեբա, իսկ 1936 թ. մայիսի 2-ին՝ թողնում երկիրը եւ մեկնում Անգլիա: Այն հանգամանքը, որ Բ աշխարհամարտում Իտալիան նացիստական Գերմանիայի դաշնակիցն էր, էապէս փոխում է իրադրութիւնը. 1941 թ. անգլիացիների աջակցութեամբ Հայլա Սելասէն վերադառնում է Եթովպիա:

Տեղաբնակ մտաւորականութիւնը փաստօրէն ոչնչացուել էր իտալացիների կողմից, իսկ կրթական համակարգը անհրաժեշտ էր զարգացնել: Այս ասպարէզում կայսրը նախընտրում է ստեղծել իրեն նուիրուած, բարեկիրթ պետական պաշտօնեաներից կազմուած մի մարմին եւ յետոյ միայն ընդլայնել տարրական կրթութեան համակարգը: Իսկ մինչ այդ ժողովրդի մեծ մասը մնում էր անգրագէտ:

Իր դիւանագիտական ընդունակութիւնների շնորհիւ Հայլա Սելասէին յաջողւում է Եթովպական Եկեղեցին դուրս բերել Ղպտի Եկեղեցու ենթակայութիւնից: 1926 թուականից նա սկսում է բանակցութիւններ վարել Ալեքսանդրիայի պատրիարքի հետ, որպէսզի Եկեղեցու ղեկավարութիւնը այդուհետեւ ընտրուի տեղաբնակներից: Արդիւնքում ղպտիները համաձայնում են յետագայ երեք տարիների ընթացքում Եթովպիայի թեմական նորընտիր ղպտի առաջնորդին թոյլ տալ ձեռնադրելու ծագումով եթովպացի հինգ եպիսկոպոսների: 1948-ի նոր որոշման համաձայն նախատեսւում էր եւս մի քանիսի ձեռնադրութիւնը, իսկ թեմական առաջնորդի մահից յետոյ նրան պետք է փոխարինէր եթովպացի առաջնորդը:

Այնուհանդերձ, Հայլա Սելասէի օրօք երկրի արդիականացումը դանդաղ էր ընթանում: Կայսրը կամենում էր Եթովպիան վերածել համաաֆրիկեան հոսանքների կենտրոնի, սակայն եթովպացի երիտասարդութեան եւ գաղութատիրական լծից նոր ազատագրուած աֆրիկեան ժողովուրդների համագործակցութիւնը միշտ չէ, որ ընթանում էր ի նպաստ կայսերական պետութեան պահպանման: Սկիզբ էին առնում դժգոհութիւնները: Եւ 1960 թ. պետական յեղաշրջման անյաջող փորձ է ձեռնարկւում երիտասարդ ազնուականութեան կողմից:

1974 թ. երկրում մոլեգնող սովը աշխարհից թաքցնելու վերնախաւի փորձերը առաջ են բերում մտաւորականութեան եւ բանակի զայրոյթը: Դժգոհութեան ալիքը տարածւում է երկրով մէկ, եւ ակնյայտ է դառնում յեղափոխութեան անխուսափելիութիւնը:

1974-Ի ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՆՐԱ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ

1974 թ. սեպտեմբերի 12-ին Սելասէ կայսրը զինուորականութեան կողմից ձերբակալւում է ու գահընկէց արւում: Նոյն տարուայ նոյեմբերին զինուորական խորհուրդը Եթովպիան հռչակում է Սոցիալիստական Հանրապետութիւն: Իշխանութեան գլուխ է անցնում «կարմիր գնդապետը»՝ Մանգեստու Հայլա Մարիամը (Մենգիստու Հայլէ Մարիամ):

1975 թ. յունուարի 1-ից բոլոր բանկերն ու ապահովագրական գործակալութիւնները պետականացւում են, իսկ մարտից կառավարութիւնը նախատեսում է անցկացնել ագրարային ռեֆորմ, այսինքն՝ կոլեկտիւացում ըստ կոմունիստական մոդելի:

1976 թ. մարտի 22-ին Եթովպիան հռչակում է Ազգային Հանրապետութիւն: Այդ պահից սկսած երկիրը կառավարւում է մարքս-լենինեան անողոք վարչակարգի կողմից, ինչն աղէտալի հետեւանքներ է ունենում:

Իսկ ինչպիսի՞ արտացոլում է գտնում այդ ամէնը կրօնական կեանքում: Եթովպական յեղափոխութիւնը սահմանափակում է Եկեղեցու արտօնութիւնները: 1974-ի ապրիլի 20-ին մահմեդականները Ադիս-Աբեբայում մեծ ցոյց են կազմակերպում՝ պահանջելով քրիստոնեաների հետ լիակատար հաւասարութիւն: Չնայած քրիստոնեաների կազմակերպած պատասխան ցոյցին, ռազմական խորհուրդը դեկտեմբերին մահմեդական մեծ տօնը՝ Իդ ալ-Ադան, երկրում ոչ աշխատանքային օր է յայտարարում:

1975 թ. Եկեղեցու ունեցուածքի զգալի մասը պետականացւում է:

Մէկ տարի անց զինուորական իշխանութիւնները ձերբակալում են Թեւոփլոս Հայրապետին: Յուլիսի 7-ին հրաւիրուած սինոդը նրա փոխարէն ընտրում է աբբայ Մելակու Վալդա Միքայէլին, որը եպիսկոպոս է ձեռնադրւում՝ ստանալով աբունա[5] Թաքլա Հայմանոթ անունը եւ օգոստոսի 29-ին նստում հայրապետական գահին:

1977 թ. նա յայտարարում է սինոդի կազմում կատարուած փոփոխութիւնների մասին, որը լուրջ տարաձայնութիւնների տեղիք է տալիս:

1978 թ. վերջերին ութ եպիսկոպոսների, որոնք իրենց հոգեւոր աստիճանը ստացել էին դեռեւս կայսեր օրօք եւ բնաւ էլ անիրազեկ կամ զառամեալ չէին, արգելւում է մասնակցել ժամերգութիւններին:

Բանակի կողմից ընդունուած սահմանադրութիւնը երկիրը վերածում էր բազմապիսի կրօնական ուղղութիւններով աշխարհիկ մի պետութեան, որտեղ կրօնը մղւում էր առանձին ոլորտ:

1977-ին զինուորական վարչակարգը բռնագրաւում եւ պետականացնում է «Աւետարանի ձայն» քրիստոնէական գլխաւոր ռադիոկայաններից մէկը, որը Լիւթերական միջազգային միութեան սեփականութիւնն էր:

Հայմանոթ հայրապետի մահից յետոյ նրա տեղում նշանակւում է աբունա Մարկորեւոսը՝ կառավարութեան առաջադրած երեք թեկնածուներից մէկը:

5 Եթովպական Եկեղեցու գլխաւորը

ԵԹՈՎՊԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ՄԻԱԲՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Տիեզերաժողովները, որոնցից առաջինը գումարուել էր 325 թ. Նիկիայում Կոստանդիանոս կայսեր կողմից, նպատակ ունէին նպաստել Եկեղեցու միասնութեանը, որը կարեւոր էր ինչպէս հոգեւոր եւ բարոյական, այնպէս էլ քաղաքական նկատառումներով:

Առաջին երեք տիեզերաժողովները[6] իրապէս ամրապնդեցին Եկեղեցու միասնութիւնը: Մինչդեռ Քաղկեդոնի ժողովը, որը գումարուեց 451 թ., Եկեղեցու միասնականութեան համար աղէտալի հետեւանքներ ունեցաւ. քրիստոնէութիւնը բաժանուեց երկու խմբի՝ միաբնակների եւ երկաբնակների: Եթովպական երիտասարդ Եկեղեցին, որն իր նուիրապետական կառուցուածքով կապուած էր Ալեքսանդրիայի Եկեղեցուն, միացաւ միաբնակների խմբին, որոնց թւում են Ղպտի, Ասորական (յակոբիկեաններ) եւ Հայկական Եկեղեցիները: Սակայն ինքնաբնութագրման համար նա չի գործածում յունարէն «միաբնակ» բառը, այլ իրեն անուանում է «Եթովպական ուղղափառ վերամիաւորուած Եկեղեցի»՝ «վերամիաւորուած» եզրով ընդգծելով իր հաւատը Քրիստոսի մէջ երկու բնութիւնների միաւորման հանդէպ:

Եթովպական Եկեղեցին ամէն կերպ հեռու մնաց Քաղկեդոնի ժողովի տարաձայնութիւններից, որոնց ակտիւօրէն մասնակցեցին Յակոբիկեան եւ Հայկական Եկեղեցիները: Եւ միայն պորտուգալացի ճիզուիտների մուտքով երկրում սկիզբ առան քրիստոսաբանական այդ վէճերը (որոնք, ի դէպ, ուրիշ վայրերում արդէն հանդարտուել էին)՝ խիստ անհանգստութիւն պատճառելով Եթովպացի աստուածաբաններին:

ԵԹՈՎՊԱԿԱՆ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՐՔԵՐԸ

Բոլոր Եկեղեցիների համար էլ Աստուածաշունչը այն հիմնաքարն է, որի վրայ կառուցւում է աստուածաբանութիւնը: Եթովպացիներն այն կարդում են դասական եթովպերէն թարգմանութեամբ, որը հաւանաբար կատարուել է Ե դարում: Ընդհանուր ճանաչում գտած աստուա-

6 Նիկիական տիեզերաժողովը գումարուել է 325-ին, Կոստանդնուպոլսինը՝ 381-ին, եւ Եփեսոսինը՝ 431-ին:

ծաշնչեան կանոնական գրականութեան հետ մէկտեղ Եթովպական Եկեղեցին օգտագործում է մի քանի պարականոն աշխատութիւններ, ինչպիսիք են «Յոբելեանների գիրքը», «Ենոքի գիրքը», «Ջոսիփոնը» եւ այլն:

Եթովպական Եկեղեցին իր մեկնութիւններում հիմնւում է Յոյն, Ղպտի եւ Ասորական Եկեղեցիների հայրերի աշխատութիւնների վրայ: «Հայրերի հաւատքը» աշխատութիւնը, որը Ալեքսանդրիայի, Հռոմի, Բիւզանդական աշխարհի եւ Սիրիայի շուրջ յիսուն աստուածաբանների ջատագովական եւ դաւանաբանական դասական գործերի բանաքաղութիւնն է, ընդունուած է որպէս կանոնաւորող գիրք:

«Հինգ խորհուրդների սիւներ» գիրքը Եթովպական Եկեղեցու պաշտօնական կատեխիզիսն է: Նմանատիպ աշխատութիւնների մեծ մասը բաղկացած է հինգ հիմնական մասից՝ Արարում, Երրորդութիւն, Մարմնաւորում, Մկրտութիւն, Հաղորդութիւն եւ Յարութիւն մեռելոց:

ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՎԷՃԵՐ

ԺԶ դարից սկսած, ինչպէս եւ ամբողջ միջնադարում, աստուածաբանական վէճերը չխնայեցին նաեւ Եթովպական Եկեղեցուն: Մերթ ընդ մերթ ի յայտ էին գալիս զանազան աղանդներ, հերետիկոսական հոսանքներ: Կանգ առնենք դրանցից հիմնականների վրայ:

ԵՒՍՏԱՓԻՈՍԱԿԱՆՆԵՐ

Աղանդի կողմնակիցները կրում են իրենց առաջնորդի՝ աբբայ Եւստափիոսի անունը, որը քարոզում էր պահել «երկու շաբաթները»: Նա հակառակւում էր Ալեքսանդրիայի հայրապետական աթոռից արուած հրամանին՝ չպահել հրէական շաբաթը եւ պահել միայն կիրակին:

Հարիւր տարի շարունակ այս աղանդը առանձնանում էր ազգային Եկեղեցու մնացած մասից: Այժմ էլ Եթովպական Եկեղեցում դեռեւս գոյութիւն ունեն եւստափիոսականներ:

ՍՏԵՓԱՆՈՍԱԿԱՆՆԵՐ

Ստեփանոսականները կամ «Ստեփանոսի որդիները» Եստիփիանոս (կամ Ստեփանոս, մահ. մօտ 1450) անունով վանականի կողմնակիցներն էին: Ինչպէս եւ եւստափիոսականները, նրանք իրենց հետեւորդներից պահանջում էին պահել «երկու շաբաթները» եւ պաշտել Մի Աստծուն՝ Հօրը, Որդուն եւ Սուրբ Հոգուն: Ե՛ւ վանականները, ե՛ւ միանձնուհիները խստակրօն կեանք էին վարում՝ մեղադրելով նրանց, ովքեր չէին կիսում իրենց համոզմունքը: Այս շարժումը կարելի է դիտել որպէս իւրատեսակ եթովպական բողոքականութիւն: Նրանք, օրինակ, հրաժարւում էին խոնարհուել Աստուածամօր պատկերի կամ կայսեր առջեւ: Այդ ժամանակաշրջանում սա հաւասարազօր էր աստուածանարգութեան, որն էլ հէնց նրանց դատապարտութեան պատճառը դարձաւ: Եթէ եւստափիոսականների նկատմամբ փոխզիջողական որոշում կայացուեց (նրանց թոյլատրւում էր պահել «երկու շաբաթները», սակայն առանց իրենց տեսակէտը ուրիշներին պարտադրելու), ապա ստեփանոսականներին Զառա Եայեկոբ կայսրը հետապնդում էր եւ անգամ մահապատժի ենթարկում: Ստեփանոսն ինքը մահացաւ աքսորավայրում, որտեղ գտնւում էր իր կրօնական հայեացքների պատճառով:

ՎԷՃ ՕԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ԺԶ դարի սկզբում, Գրանի դէմ մղած պատերազմներից յետոյ, ճիզուիտների ծաւալած քարոզչական բուռն գործունէութեան արդիւնքում Եթովպական Եկեղեցու ջատագով վարդապետներն իրենց պարտքը համարեցին պաշտպանել իրենց աստուածաբանութեան դասական ըմբռնումները: Սակայն աստուածաբանական վէճերի նորոգումը անխուսափելի հետեւանքներ ունեցաւ՝ առաջացնելով մեծաթիւ հերձուածողական հոսանքներ, որոնցից առաւել տարածուածը Օծման հերձուածն էր: Մնունդ առնելով ստեփանոսական կողմնորոշում ունեցող վանական միջավայրում՝ սա պաշտպանում էր այն տեսակէտը, թէ Յիսուս Քրիստոսի երկու բնութիւնների լիակատար միաւորումը տեղի ունեցաւ Նրա Օծումից՝ Մկրտութիւնից յետոյ, եւ որ այդ պահից յետոյ միայն Նա դարձաւ Աստուծոյ Որդի:

Քրիստոսաբանական նման թեզը կարող էր արագօրէն վերածուել ադոպտիանիզմի (որդեգրողականութեան)՝ մի հերձուած, ըստ որի՝ Քրիստոս հասարակ մահկանացու էր, Ում Աստուած պարզապէս «որդեգրել» էր: Այստեղից էլ գալիս էր Նրա աստուածային բնոյթի եւ կուսական ծնունդի բացասումը:

ՎԵՃ ՈՐԴՈՒ ՇՆՈՐՀԻ ՄԱՍԻՆ

Մինչ այդ առաջացաւ մի նոր հերձուած, որին հիմնականում յարում էին Թաքլա Հայմանոթի վանքի վանականները: Այս ուսմունքի համաձայն՝ Քրիստոս դարձաւ Աստուծոյ Որդի եւ Քաւիչ՝ Սուրբ Հոգուց Իրեն տրուած շնորհով: Ակներեւաբար, սա նոյնպէս ադոպտիանական տեսակէտ էր:

ՎԵՃ ԵՐԵՔ ԾՆՈՒՆԴՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երեք ծնունդների մասին ուսմունքը եւս աստուածաբանական այն տեսակէտներից է, որն անհաւասարութիւն է ներմուծում Սուրբ Երրորդութեան մէջ: Ըստ այս հերձուածի ներկայացուցիչների՝ Քրիստոս ծնուեց երեք անգամ՝ Հօրից (յաւիտեաններից առաջ), Կոյս Մարիամից (մարմնաւորուելով) եւ Սուրբ Հոգուց (Պայծառակերպութեան եւ Յորդանանում մկրտուելու ժամանակ):

ԵԹՈՎՊԱԿԱՆ «ՀԱՒԱՏՈՅ ՀԱՆԳԱՆԱԿԸ»

Եթովպական պատարագը օգտագործում է երկու Հաւատամք: Առաջինը Նիկիական եւ Կոստանդնուպոլսեան տիեզերաժողովների կողմից ընդունուածն է, որը ճանաչուել է բոլոր հնագոյն քաղկեդոնական եւ ոչ քաղկեդոնական եկեղեցիների կողմից: Երկրորդը կոչւում է «Առաքեալների հաւատամք» եւ, ըստ եթովպական աւանդութեան, Երուսաղէմի եկեղեցուն է յանձնուել հէնց իրենց՝ առաքեալների կողմից: Ահա այն.

«Հաւատում ենք Մէկ Աստծուն՝ բոլոր արարածների Արարչին եւ մեր Տէր Աստուած եւ Փրկիչ Յիսուս Քրիստոսի Հօրը, Ում բնութիւնը անհնար է քննել: Եւ ինչպէս մենք այդ մասին արդէն հռչակել ենք, Նա անսկիզբ է եւ անվերջ, Նա յաւիտենական է, Նրա մօտ է լոյսը, որը երբեք չի հանգչի, եւ որին անհնար է մերձենալ: Նա ամենեւին երկուսը կամ երեքը չէ, եւ ոչինչ չի կարող աւելացուել Նրան: Այլ Նա Մի է, որ ապրում է յաւիտեան, քանզի բնաւ չի թաքնուել, որպէսզի անճանաչ մնայ, այլ ընդհակառակը՝ մենք Նրանից Օրէնքի եւ Մարգարէների միջոցով իմանում ենք, որ Նա ամենակարող է եւ իշխանութիւն ունի ողջ արարչութեան վրայ:

Մէկ է Աստուած՝ Հայրը մեր Տէր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոսի՝ Միածին Որդու, որ ծնուած էր նախքան աշխարհի արարումը եւ համազօր է Նրան՝ բոլոր զօրութիւնների, պետութիւնների եւ իշխանութիւնների Արարչին: Եւ վերջին օրերին Նա կամեցաւ մարդանալ եւ անսերմնապէս մարմնացաւ Աստուածամօրից՝ սուրբ Կոյս Մարիամից, եւ հասակ առաւ, ինչպէս բոլոր մարդիկ՝ միայն առանց մեղքի ու չարութեան, եւ Նրա շուրթերին նենգութեան նշոյլ իսկ չկար: Այնժամ Նա չարչարուեց, մահացաւ մարմնով, երրորդ օրը յարութիւն առաւ մեռելներից, համբարձուեց երկինք՝ Հօր մօտ, Ով եւ առաքեց Նրան: Նստեց Զօրութեան աջ կողմում, մեզ ուղարկեց Մխիթարիչ Սուրբ Հոգուն, Որը բխում է Հօրից ու յաւիտենակից է Հօրը եւ Որդուն, եւ փրկեց ողջ աշխարհը: Մենք նաեւ ասում ենք, որ Աստուծոյ ողջ արարչութիւնը սքանչելի է, որ ոչինչ հնարաւոր չէ դէն գցել, եւ որ հոգին՝ մարմնի կեանքը, մաքուր եւ սուրբ է ըստ ամենայնի: Եւ մենք ասում ենք, որ ամուսնութիւնը սուրբ է, եւ որ ծնելը մեղք չէ, քանի որ Աստուած ստեղծեց Ադամին ու Եւային, որպէսզի նրանք աճեն ու բազմանան: Մենք նաեւ հաւատում ենք, որ մեր մարմնի մէջ թաքնուած է հոգի, որն անմահ է եւ ամենեւին չի մեռնում մարմնի հետ: Մենք հեռու ենք վանում հերձուածողների բոլոր գործերը, բոլոր պառակտումներն ու Օրէնքի խախտումները, քանի որ նրանք պիղծ են մեր աչքում:

Հաւատում ենք նաեւ մեռելների յարութեանը՝ ինչպէս արդարների, այնպէս էլ մեղաւորների, եւ Դատաստանի օրուան, երբ իւրաքանչիւրին կը հատուցուի իր գործերի համեմատ:

Այլեւ հաւատում ենք, որ Քրիստոս Իր մարմնաւորման պատճառով աւելի ցածր չէ, այլ՝ որ Նա Աստուած է՝ Բան, Ով իրապէս դարձաւ մարդ եւ, լինելով Հօր Քահանայապետը, հաշտեցրեց մարդկութեանը Աստուծոյ հետ: Եւ դրա համար չպիտի թլփատուենք, ինչպէս հրեաները[7]*:*

Մենք գիտենք, որ Նա, Ով պէտք է Օրէնքի եւ Մարգարէների լրումը լինէր, արդէն եկել է: Նրան, Ում գալստեանը սպասում էին

7 *Եթովպացիների մօտ թլփատութիւնն օրէնք է եւ ժողովրդի մէջ ընդունուած է որպէս արբահամեան ուխտի նշան: «Առաքեալների հաւատամքը» ցանկանում է ընդգծել, որ թլփատութիւնը չպէտք է խորհրդին հաւասարազօր համարուի:*

բոլոր ժողովուրդները, Յիսուս Քրիստոսին՝ Յուդայի ցեղից, Յեսսէի արմատից, Ում ուսերին էր դրուած իշխանութիւնը, փառք, գոհութիւն, պատիւ, օրհնութիւն, փառաբանութիւն եւ սաղմոսերգութիւն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն»:

ԵԹՈՎՊԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՊԱՏԿԵՐ

ԱԿՍՈՒՄԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԸ (330-700)

Եթէ Եզանա թագաւորի՝ Եթովպիայի առաջին քրիստոնեայ տիրակալի՝ Ակսումի հանրայայտ քարակոթողների վրայ արուած արձանագրութիւնները դիտենք որպէս գրական ստեղծագործութիւններ, ապա կարելի է ասել, որ եթովպական գրականութիւնը սկզբնաւորուել է Դ դարում: Խօսքը վերաբերում է պատմական բովանդակութիւն ունեցող գէեզով կամ այլ լեզուներով, մասնաւորապէս յունարէնով արուած գրերին: Եւ սակայն, եթովպական գրականութիւնը որպէս այդպիսին սկզբնաւորուել է Աստուածաշնչի թարգմանութեամբ, որն արուել է յունարէնից՝ այն ժամանակ ամենատարածուած օտար լեզուից: Ըստ երեւոյթին, Սուրբ Գիրքը դասական եթովպերէնի է թարգմանուել Ե դարում՝ մի հանգամանք, որն ասես հաստատում է այն աւանդութիւնը, ըստ որի՝ թարգմանութեան իրականացումը կապուած է ինը սիրիացի սուրբերի՝ Եթովպիա գալու հետ:

Ոմանց վկայութեամբ՝ Հին Կտակարանը թարգմանուել է Սեպտուագինտայից՝ քրիստոնեաների մօտ ընդունուած յունարէն տարբերակից: Սակայն պէտք է նշել, որ եթովպական Աստուածաշնչում ընդգրկուած են մի քանի այլ գրքեր, որոնք միայն եթովպական Եկեղեցու կողմից են ընդունւում որպէս յայտնութեամբ գրուած. դրանք են՝ «Մնացորդացն ըստ Բարուքի», «Եսայու գահակալումը», «Ենոքի» եւ «Յոբելեանների» գրքերը (վերջինս կոչւում է նաեւ «Մննդոց փոքր գիրք»): Եթովպական Հին Կտակարանը ներառում է նաեւ «Եզրասի», ինչպէս նաեւ «Մակաբայեցւոց» երրորդ եւ չորրորդ գրքերը, իսկ որոշ ձեռագրերում ընդգրկուած է նաեւ «Ջոսիփոնը»:

Նոր Կտակարանի թարգմանութեան համար հիմք է ծառայել յունարէն տեքստը: Միւս Եկեղեցիների կողմից ընդունուած բոլոր գրքերից բացի, Նոր Կտակարանի եթովպական կանոնը ներառում է նաեւ Հերմասի գիրքը՝ «Հովիւը»:

Մնացած դէպքերում ակսումեան շրջանի գրականութիւնը կարելի է բնութագրել որպէս թարգմանական (հիմնականում թարգմանում էին յունարէնից՝ սուրբերի վարքը ներկայացնող ստեղծագործութիւններից):

ԱՄԴԱ ՍԵՅՈՆԻ ՇՐՋԱՆԸ (1314-1434)

Մահմեդական էմիրաթների դեմ մղած յաղթական պատերազմների շնորհիւ քրիստոնէական եթովպիան ընդլայնեց իր տարածքները, ինչը մեծապէս նպաստեց նաեւ եթովպական գրականութեան զարգացմանը: Մինչեւ Ի դարը, չնչին բացառութեամբ, այն կրօնական էր՝ հիմնականում թարգմանութիւններ, բայց արդէն ոչ թէ յունարէնից, այլ զպտերէնից[8]: Առաւելապէս դրանք կատարւում էին զպտական տեքստի արաբական տարբերակից: Խօսքը հիմնականում ծիսական գրականութեան մասին է, ինչպիսիք են՝ զպտական ժամագիրքը, վանական ձեռնադրելու կարգը, թաղման կարգը, Աւագ շաբաթուայ ընթերցուածները, «Մարիամի ողբը», «Մարիամի գովքը»[9]:

Ամդա Սեյոնի կառավարման շրջանը հարուստ է նաեւ ճգնաւորական բնոյթի գրականութեամբ եւ սուրբերի վարքագրութեամբ:

Մասնաւորապէս «Փիլոքսենէսը»[10] վանական կեանքի վերաբերեալ հարց ու պատասխանների մի ժողովածու է: Նոյն դարաշրջանին են վերագրւում Խաչի գիւտի պատմութիւնը, մարտիրոսների, առաքեալների, Ադամի ու Եւայի, Փասիլադէսի, Երուսաղէմցի Սիրիացու, Փեղադէի, Պետրոս Ալեքսանդրացու, Գրիգոր Լուսաւորչի եւ այլոց վարքերը, ինչպէս նաեւ «Պատմութիւն սուրբ հայրերի մասին», «Վանականների դրախտը», «Սինոդ», «Դիդասկալիա» գրքերը, որոնք վերաբերում են առաջին տիեզերաժողովների որոշումներին եւ թարգմանուել են մինչեւ 1425 թուականը:

Այս շրջանում թարգմանուել են նաեւ պարականոն գրքեր՝ «Ուխտի գիրքը», «Մեր Տէր Յիսուս Քրիստոսի Ուխտը», «Պետրոսի Յայտնութիւնը», «Կղեմէսը», «Մարիամ Աստուածածնի տեսիլը» եւ այլն:

---

8 Զպտիները եգիպտացի քրիստոնեաներն են:

9 Այն բաղկացած է եօթ մասից եւ յայտնի է նաեւ իր «Լոյսի դարպասներ» կոչուող համառօտ տարբերակով:

10 Այս աշխատութիւնը վերագրւում է սիրիացի եպիսկոպոս Փիլոքսենէս Մաբոգացուն:

ՋԱՌԱ ԵԱՅԵԿՈԲԻ ՇՐՋԱՆԸ (1434-1530)

Զառա Եաեկոբ կայսր-աստուածաբանի կառավարման շրջանը յատկապէս հարուստ էր աստուածաբանական քննարկումներով եւ եկեղեցական բարեփոխումներով, որոնք արտացոլուեցին ժամանակի բազմաթիւ գրական ստեղծագործութիւններում: Կայսերն է վերագրւում «Լոյսի գիրք» ջատագովական աշխատութիւնը:

Այս շրջանի սկզբում երեւան եկաւ «Խորհրդի գիրքը» եւ «Մակաբայեցւոց» եթովպական գիրքը, որտեղ քննարկւում է հոգու անմահութեան հարցը:

«Մենդեան գիրքը», որն ընթերցւում էր Մենդեան տօնին եւ իւրաքանչիւր ամսուայ 29-ին, ուղղուած էր հրեաների եւ ստեփանոսականների դէմ:

«Էութեան գիրքը» շօշափում է Վերջին օծման խնդիրը:

«Սատանայի գրքում» եւ «Հմայութիւնների գրքում» խօսւում է զանազան կախարդութիւնների եւ սնոտիապաշտութիւնների դէմ կայսեր մղած պայքարի մասին: Միւս կողմից էլ՝ այնպիսի գործեր, ինչպիսիք են «Մեր Տիրոջ անունները», «Ասա՛ մեզ Քո անունը», «Աշակերտները», «Եղիայի կառքը» եւ «Ենովքի տեսիլքը» գրքերը, վկայում են եթովպական քրիստոնեաների վրայ մոգական հաւատալիքների ունեցած ազդեցութեան մասին:

Բա-Հայլա Միքայէլի «Երկնքի եւ երկրի խորհուրդների գիրքը» յայտնութենական բնոյթի աշխատութիւն է:

Թարգմանւում էին մեծ թուով քարոզներ կայսեր սահմանած բազմաթիւ եկեղեցական տօնակատարութիւնների ժամանակ ընթերցելու համար:

Նոյն շրջանում խիստ զարգացաւ եթովպական վարքագրութիւնը, որի համար նպաստաւոր հիմք հանդիսացաւ նախորդ դարերում տարածուած վանական շարժումը:

Մէկ այլ եկեղեցագրական ժանր, որը նոյնպէս ծաղկում էր այդ շրջանում, վերաբերում էր հրաշագործութիւններին: Առաւել տարածուած էին Յիսուսի եւ Մարիամի կատարած հրաշագործութիւնները ներկայացնող գրքերը:

ԺԵ դարում ստեղծւում էին հոգեւոր բանաստեղծութիւններ: Դրանցից կարելի է նշել «Հիմն ծաղկին» կամ «Տաղ Կոյս Մարիամին» գործերը, որոնք այժմ էլ մեծ համարում ունեն ժողովրդի մէջ:

Զառա Եայեկոբի օրօք զարգացաւ «մալկէա» (կերպարանք) կոչուող գրական ժանրը, որին յատկանշական էր սուրբերի մարմնի տարբեր մասերի նկարագրութիւնը: Յիսուսին եւ Մարիամին ձօնուած մալկէաները տակաւին մեծ ժողովրդայնութիւն են վայելում Եթովպիայում:

Ինչ վերաբերում է մեկնութիւններին, ապա այս շրջանում է թարգմանուել ս. Յովհան Ոսկեբերանի «Նամակներ հրեաներին» աշխատութիւնը:

ՈՒՀ ՇՐՋԱՆ (1530-1856)

Եթովպական եւ լատինական հոգեւոր մշակոյթների բախմամբ է բացատրւում այս շրջանի գրականութեան մէջ բանավիճական եւ ջատագովական երկերի երեւան գալը: Օրինակ՝ իր յայտնի «Դաւանանքում» Գելաւդեւոս կայսրը պաշտպանում է Եթովպական Եկեղեցու վարդապետութիւնն ընդդէմ լատինականի: Նոյն նպատակն են հետապնդում «Հոգու ապաստարան», «Աստուածութեան բացատրութիւնը» եւ «Հայրերի հաւատը» երկերը:

Արաբների հետ պատերազմների հետեւանքով ստեղծուեցին ջատագովական աշխատութիւններ՝ ուղղուած իսլամի դէմ: Դրանցից է մահմեդականութիւնից դարձի եկած եւ վանականների առաջնորդ դարձած Էմբաքոմի «Հաւատի դարպասներ» գիրքը: Իսկ «Ապականութեան գիրքը» եւ «Ապաշխարութեան գիրքը» հասցէագրուած են մահմեդականացուած քրիստոնեաներին, որոնք ցանկանում են վերադառնալ Եկեղեցու գիրկը:

Սարսա Դենգել թագաւորի (1563-1596) օրօք թարգմանուեց սիրիական ծագում ունեցող «Աւետարանների մեկնութիւն» աշխատութիւնը:

1583-ին թարգմանուեց «Ղպտական մեծ հանրագիտարանը»՝ «Ալ-Հաւիի» բարոյական եւ ճգնաւորական աստուածաբանութեան հիման վրայ:

Ըստ երեւոյթին, Փասիլադէսի կառավարման շրջանում (1632-1667) են ստեղծուել խորհուրդների արարողակարգերին նուիրուած գրքերը՝ «Ապաշխարական գործերի գիրքը», «Թագի գիրքը» (Պասկի մասին) եւ «Լամպի գիրքը» (Վերջին օծման մասին):

Աստուածաբանական երկպառակութիւնների աւարտը ԺԶ դարում նպաստեց կրօնական բանաստեղծութեան զարթօնքին: Այս շրջանին է պատկանում հոգեւոր հիմնի ժանրը, որի կանոններն ուսուցանում էին կրօնական բարձրագոյն դպրոցներում: Այս ամէնը գրւում էր գէեզով:

Նոյն դարում սկզբնաւորուեցին ամարիք[11] լեզուով գրուած առաջին ստեղծագործութիւնները: Սակայն միայն յաջորդ հարիւրամեակում այն կարեւորուեց որպէս գրական լեզու: Առաջիններից մէկը Աստուածաշնչի թարգմանութիւնն էր՝ աբբայ Աբրէամի եւ ֆրանսիական փոխհիւպատոս Ասսելեն դը Շերուիլի համատեղ աշխատասիրութեամբ:

Թեւոդրոս Բ-ի (1856-1868) օրօք ամարիքն այնպիսի հեղինակութիւն ձեռք բերեց, որ թագաւորի ժամանակագրութիւնը գրուեց այդ լեզուով: Այսպիսով գէեզը զիջեց ամարիքին, սակայն լիովին մոռացութեան չմատնուեց:

Կաթոլիկ եւ բողոքական միսիոներները ներդրեցին տպագրութիւնը. առաջին մամուլը Եթովպիա հասաւ 1863 թ. Ս. Ղազար կղզու միաբաններից մէկի շնորհիւ: Եւ այնպիսի բարբառներ, ինչպիսիք էին օրոմոն (գալլա) կամ թեգրինիան, բարձրացուեցին գրական լեզուի աստիճանի:

ՀՈԳԵՒՈՐ ԱՐՈՒԵՍՏ
ՓՈՐԱԳՐՈՒԱԾ (ՔԱՆԴԱԿՈՒԱԾ) ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ԱՐԳԵԼՈՒՄ

Արեւելեան Եկեղեցիների աւանդութեանը խորապէս նուիրուած Եթովպական Եկեղեցին մինչ օրս հետեւում է Ելից գրքի պատուիրաններին. «Քեզ համար կուռք չշինես ո՛չ երկնքում, ո՛չ երկրի վրայ, ո՛չ էլ ջրերում եղած որեւէ բանի նմանութեամբ»[12]:

Եթէ հրեան, այս տողերը հիմք ունենալով, արգելում է ցանկացած պատկեր ընդհանրապէս, ապա Արեւելքի քրիստոնեաները հակուած են առաւել ընդգրկուն մեկնաբանութեան՝ արգելելով միայն կլոր եւ ընդգծուած բարձրաքանդակները: Այսպիսով, քրիստոնեան իւրօրինակ մեկնաբանութեամբ արտայայտում է իր հաւատը մարմնաւորուած Բանի հանդէպ՝ միեւնոյն ժամանակ չխախտելով աստուածաշնչեան պատուիրանները:

Պէտք է ասել, որ Եթովպացի նկարիչներն ու արհեստաւորները մեծ համարում ունէին գորգագործութեան, ասեղնագործութեան եւ պատարագի ժամանակ գործածուող պարագաների՝ սկիհների, ծնծղաների, գդալների, բայց յայտնապէս՝ փայտէ եւ մետաղէ խաչերի պատրաստման ասպարէզում:

11 Ամարիքը ժամանակակից եթովպերէնն է:
12 Տե՛ս Ելք Ի 4:

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

ԿԼՈՐ (ԲՈԼՈՐԱՁԵՒ) ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

Այժմեան եթովպական եկեղեցիները մեծ մասամբ կառուցուած են շրջանաձեւ յատակագծով: Գիւղական վայրերում դրանք սովորաբար ծղոտէ կամ ծալքաւորուած մետաղէ կոնաձեւ կառուցուածքի ծածկ են ունենում, որի վերեւում խոյանում է հսկայ խաչը: Նրա թեւերի միջեւ արուած ճառագայթները նրան տալիս են աստղի ձեւ: Ծայրերում այդ թեւերը կարող են զարդարուած լինել ջայլամի ձուերով՝ որպէս յարութեան խորհրդանիշ:

Այդպիսի եկեղեցիների պատերը քարից են կամ կաւածեփ: Քառակուսի սուրբ սեղանը գտնւում է կենտրոնական մասում եւ ունի երեք դուռ՝ դէպի հիւսիս, հարաւ եւ արեւմուտք : Յաճախ այն շրջապատուած է լինում տասներկու սիւներով, որոնք խորհրդանշում են տասներկու առաքեալներին: Սրբարանի ներսում, որը յատկացուած է քահանաներին եւ սարկաւագներին, գտնւում է սրբութիւն սրբոցը՝ վարագոյրաւոր բոլորաձեւ մի փոքրիկ կառոյց, որը պատարագի որոշակի պահերին հաւատացեալներին անջատում է հոգեւորականներից:

Շրջանաձեւ եկեղեցիները յատկապէս մեծ թիւ են կազմում Եթովպիայի կենտրոնում եւ հարաւում: Հաւանաբար դրանց նախատիպը աֆրիկեան հիւղակն է: Ամենայն հաւանականութեամբ, նրանք առաջացել են աւելի ուշ՝ Գրանի արշաւանքներից յետոյ:

ՈՒՂՂԱՆԿԻՒՆԱՁԵՒ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

Եթովպիայի հիւսիսում քաղաքային եւ գիւղական շատ եկեղեցիներ կառուցուած են ուղղանկիւն յատակագծով: Ինչպէս պարզուեց Ակսումում կատարուած պեղումներից, այդ կառուցուածքն իր արմատներով հասնում է մինչեւ նախաքրիստոնէական շրջան: Ըստ երեւոյթին, սկզբնապէս նրանք ունեցել են քառակուսի կառուցուածք:

Ակսումեան ոճի յատակագիծը, ներառելով բազիլիկ ճարտարապետութեան որոշ գծեր, ծնունդ տուեց իւրօրինակ շինութիւնների, որոնք հնում սովորաբար կառուցւում էին էսպլանադայի[13] վրայ՝ դէպի

եկեղեցին տանող սանդուղքներով: Այդ ոճին կարելի է հանդիպել Հարաւային Արաբիայում: Պատերը կազմուած են հորիզոնական շերտերով մէջընդմէջ դասաւորուած, կաւով շաղախուած խճաքարից եւ չորսուներից, որոնց վրայ հագնում են ուրիշ՝ աւելի փոքր, կլոր հատոյթով լայնական չորսուներ, որոնց դուրս ցցուած ելուստները ստացել են «կապկային գլուխներ» անունը եւ ծառայում են որպէս արտաքին յարդարանք: Այդ ելուստներից վերեւ գտնւում է խճաքարի մի շերտ, որը նման է եղեւնաձեւ կամարի եւ շինութեան փայտեայ մասերը պահպանում է վատ եղանակից: Ներսի կողմից տանիքը փայտէ մի հիմնակմախք է, որը յենուած է նոյն նիւթից կառուցուած քառակուսի բներով եւ խոյակներով սիւների վրայ:

Ակսումեան ճարտարապետութեանը հաւանաբար անծանօթ է եղել գմբեթի կառուցման տեխնիկան: Վերջինս, անշուշտ, Եթովպիայում երեւան եկաւ քրիստոնէութեան տարածումով եւ յետագայում զարգացաւ միաձոյլ կառուցուածքի (միակուռ) եկեղեցիներում: Նրանց որոշ հիմնակմախքներ կարծես նմանակում են գմբեթները:

ԺԱՅՌԱՓՈՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

Եթովպիայի հիւսիսում գտնուող ժայռափոր եկեղեցիները երեք տիպի են՝ քարանձաւային, ստորգետնեայ եւ միակուռ: Քարանձաւային եկեղեցիները կառուցուած են բնական ժայռախոռոչներում դրսից բերուած շինանիւթով, մինչդեռ միւսները փորուած են ժայռի կամ ապառաժի մէջ: Ստորգետնեայ եկեղեցու միայն ճակատային մասն է երեւում, իսկ միակուռ եկեղեցու ե՛ւ տանիքը, ե՛ւ արտաքին պատերը մաքրուած են քարից եւ ամբողջապէս տեսանելի են: Եկեղեցին ասես յառնում է արհեստական հորանից:

ԱՐՁԱՆԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ (ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ)

Եթէ աստուածաշնչեան արգելքի համաձայն եթովպացիների մօտ արձանների գործածութիւնը բացակայում է, ապա փայտէ կամ քարէ դրուագաւոր հարթաքանդակները շատ տարածուած են եթովպական միջնադարեան եկեղեցիներում: Թեմաները ամենաբազմազան են. առաստաղների վրայ, սիւների խոյակներին կամ լուսամուտների շրջանակներին կարելի է տեսնել տարբեր խաչանման, ինչպէս նաեւ բոյսերի ու կենդանիների պատկերներ, աւելի հազուադէպ՝ տեսարաններ սուրբերի կեանքից:

ԳԵՂԱՆԿԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Սուրբ Գրքից կամ սուրբերի կեանքից հատուածներ պատկերելու համար Եթովպական Եկեղեցին, ինչպէս եւ Արեւելեան միւս Եկեղեցիները, դիմում է առաւելապէս գեղանկարչութեանը: Իբրեւ նմուշ կարելի է նշել եկեղեցիների ներքին պատերի որմնանկարները, ձեռագրերը զարդարող մանրանկարները, փայտէ սրբապատկերները: Ներկայումս եթովպացիների մօտ տարածուած է եկեղեցիների պատերը պատկերազարդ պաստառներով զարդարելը:

Ոչ քաղկեդոնական Եկեղեցիներից եւ ոչ մէկում սրբանկարչութեան կողմնակիցների եւ ընդդիմախօսների միջեւ գժտութիւններ գրեթէ չեն եղել: Մինչդեռ բիւզանդական աշխարհում նման ընդհարումները մեծ աւերածութիւններ գործեցին: Միջնադարեան Եթովպիայում կատարուող սրբապատկերների օրհնութեան եւ օծման արարողութիւնը այժմ գոյութիւն չունի: Սակայն դա պատճառ չի եղել, որ եթովպացիները պակաս յարգանքով վերաբերուեն սրբապատկերներին եւ չխոնարհուեն դրանց առջեւ, որոնք (ինչպէս նաեւ ձեռագրերը) պահւում են ծածկոցի տակ կամ կտորի մէջ փաթաթուած:

Մնունդ առնելով աֆրիկեան միջավայրում՝ եթովպական գեղանկարչութիւնը մեծապէս տարբերւում է սեւ մայր ցամաքի այլ երկրների արուեստի ստեղծագործութիւններից իր քրիստոնէական ներշնչուածութեամբ եւ բիւզանդական, եւրոպական, պարսկական, հայկական եւ հնդկական ազդեցութիւններով: Ինչպէս եւ քրիստոնեայ Արեւելքի ողջ սրբանկարչութիւնը, եթովպականը նոյնպէս նպատակ ունի սրբապատկերներում արտացոլել քրիստոնէական հաւատը: Այն պատկերագրում է ուղղափառ աստուածաբանութեան դրոյթներն ու հասկացողութիւնները եւ չի ջանում վերստեղծել իրականութիւնը կամ անձնական տպաւորութիւններ ներմուծել. պատկերւում է միայն այն, ինչն աստուածաբանական տեսանկիւնից համարւում է կարեւոր: Լինելով ե՛ւ աստուածաբանական, ե՛ւ գեղարուեստական արտայայտչամիջոց՝ եթովպական գեղանկարչութիւնը չի յաւակնում ինքնատիպութեան:

Մինչեւ ԺԹ դարի վերջը ստեղծագործութիւնների մեծ մասը, չնչին բացառութեամբ, անստորագիր էր, եւ այսօր դրանց հեղինակներին վերաբերող կենսագրական եւ ոչ մի տեղեկութիւն փաստօրէն չի պահպանուել: Նկարիչ-ենթավարպետը վարժւում էր իր արհեստին՝ արտանկարելով աւելի հին ստեղծագործութիւնները, ինչն, ի դէպ, երաշխաւորում էր դրանց ուղղափառ ուղղուածութիւնը: Սակայն սխալ կը լինէր կարծել, թէ եթովպական կերպարուեստում գոյութիւն ունի միայն մէկ ոճ: Իր երկարատեւ պատմութեան ընթացքում այն զարգացել եւ ենթարկուել է այլեւայլ ազդեցութիւնների: Հնագոյն շրջանում առաւել ակնառու է քրիստոնեայ Արեւելքի ազդեցութիւնը: Այստեղ հանդիպում են տիպիկ բիւզանդական թեմաներ. Աստուածածինը Մանկան հետ գահի վրայ՝ երկու հրեշտակներով շրջապատուած, Քրիստոս խաչի վրայ՝ Մարիամի եւ Յովհաննէսի հետ, Յարութիւն առած Քրիստոս դժոխքից ազատում է Ադամին ու Եւային եւ այլն: Իսկ ԺԵ դարից սկսած՝ Եթովպիայում, մեծ մասամբ արքունիքում, ապրում եւ աշխատում էին նկարիչներ Արեւմուտքից: Այդ ժամանակից ի վեր Եթովպիայում աւելի զգալի դարձաւ արեւմտեան ազդեցութիւնը:

ԱՍԵՂՆԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԳՈՐԳԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ

Եթովպական ասեղնագործական արուեստը տակաւին ուսումնասիրուած չէ: Սուրբ սեղանի ծածկոցներն ու պատարագի հանդերձները սովորաբար զարդարուած են լինում ասեղնագործ նախշերով: Հիմնական տարրը խաչն է՝ ամենատարբեր ձեւերի եւ ամենաբազմազան գոյների: Շատ յաճախ նախշերը ասեղնագործւում են ոսկեթելով, փայլազարդերով եւ զանգակներով:

Քանի որ եկեղեցի մտնելիս կօշիկները հանում են, ապա յատակը սովորաբար ծածկում են ծղոտէ փռոցներով կամ գորգերով: Դրանցում առաւել յաճախ հանդիպող տարրը դարձեալ խաչն է եւ սողոմոնեան դինաստիայի խորհրդանշանները՝ Դաւթի (Սողոմոնի հօր) աստղը կամ Յուդայի (Սողոմոնի նախահօր) առիւծը[14]:

14 Օրհնելով՝ Յակոբն իր որդի Յուդային առիւծ է անուանում [տե՛ս Մն. ԽԹ 9]. այսպէս է կոչուել Ինքը Քրիստոս [տե՛ս Յայտ. Ե 5], ինչն էլ դարձել է սողոմոնեան դինաստիայի նշանաբանը:

ԽԱՉԵՐ

Դիւրակիր փայտէ եւ մետաղէ խաչերի պատրաստումը եթովպական արուեստի մի առանձին ճիւղ է: Գոյութիւն ունեն այդպիսի խաչերի մի քանի տեսակներ:

Խաչվառը կարեւոր դեր ունի Եթովպական Եկեղեցու պատարագում: Հաղորդութեան ողջ ընթացքում այդ խաչը գտնւում է սարկաւագի մօտ, որը կանգնում է սուրբ Սեղանի ետեւում՝ դէմքով դէպի պատարագիչը: Աստուածպաշտական արարողութիւնների ժամանակ այն թափօրի էական բաղադրիչն է: Խաչվառը բաւականաչափ մեծ է՝ մօտ 40-50 սմ. լինում է բրոնզից կամ փայտից եւ ամրացուած է ձողին: Հիմքի մօտ, ուր խաչն ամրացւում է ձողին, կայ երկու օղակ, որոնց թանկարժէք կտոր են ամրացնում: Յաճախ դրանք օձակերպ են լինում: Այդ դէպքում խաչը արեւելեան եպիսկոպոսների գաւազան է յիշեցնում: Խաչվառները զարդարուած են լինում վերացական ճոխ պատկերներով, յաճախ էլ պատկերում են Տիրամօրը Մանկան հետ, հրեշտակներ, ս. Գեւորգին, աւելի հազուադէպ՝ նաեւ խաչուած Փրկչին:

Եթովպացի հոգեւորականները մշտապէս կրում են փայտէ, մետաղէ (հիմնականում՝ բրոնզէ), իսկ հազուադէպ՝ նաեւ փղոսկրէ փոքրիկ խաչեր (20 սմ): Սովորաբար դրանց ստորին հատուածն աւելի երկար է, քան վերինն ու թեւերը, եւ ունի քառանկիւն վերջաւորութիւն, որը խորհրդանշում է Օրէնքի զոհասեղանները: Ձեռքի խաչերը, ինչպէս եւ խաչվառները, զարդարուած են լինում: Պատարագի ընթացքում հաղորդուել ցանկացողները մօտենում եւ համբուրում են խաչի վերնամասն ու հիմքը: Արարողութիւններից դուրս հաւատացեալները նոյն կերպ երկրպագում են խաչին, երբ քահանան, որը մշտապէս իր ձեռքում է պահում այն, խաչակնքում է:

Եթովպացի քրիստոնեաների մեծամասնութիւնը վզին փոքրիկ խաչ է կրում: Դեռեւս ԺԴ դարում Զառա Եայեկոբ կայսեր վճռով տղամարդ, կին թէ երեխայ պարտաւոր էին այդպիսի մի խաչ կրել. դրանով կայսրը կամենում էր կասեցնել հեթանոսութեան տարածման վտանգը: Սկզբում այդ խաչերը փայտից էին: ԺԹ դարում այդպիսի փոքրիկ խաչեր պատրաստելու համար օգտագործում էին աւստրիական արծաթէ դրամները: Առաւել յաճախ նրանք ունենում էին յունական (հաւասարաթեւ) խաչի ձեւ: Լատինական խաչն աւելի հազուադէպ է հանդիպում:

ՀՈԳԵՒՈՐ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Եթովպական պատարագը ծայրից ծայր կատարւում է երգեցողութեամբ: Տօնական ծիսակատարութիւնների ժամանակ երգեցողութիւնը կատարւում է յոտնկայս եւ ուղեկցւում է մարմնի դանդաղ շարժումներով: Աղօթքի գաւազանը ծառայում է որպէս տակտի համաչափման միջոց եւ մեղմացնում է երկար կանգնելուց առաջացած յոգնութիւնը: Ընդ որում օգտագործւում են երկու տեսակ երաժշտական գործիքներ (այն էլ՝ միայն տօնական օրերի պատարագներին)՝ թմբուկ եւ սիստր[15]:

ՀՈԳԵՒՈՐ ԿԵՍՆԵՐԸ

Հաղորդութեան պատարագ

Եթովպական պատարագը բաղկացած է երկու մասից՝ Հաղորդութեան պատարագից, որի հիմքում Վերաբերումն է (հաղորդութեան աղօթքը), եւ Աստուածային ժամերգութիւնից, որի մէջ մտնում են տաճարային ժամերգութիւնը եւ ժամասացութեան պատարագը: Եթովպական հաղորդութեան պատարագը, որը հոգեւոր եւ գեղագիտական մեծ արժէք ունի, շատ երկար է եւ յաճախ տարակուսանքի մէջ է գցում այդ խորհրդին անհաղորդ եղողներին: Այն իր կառուցուածքով նման է Արեւելեան միւս Եկեղեցիների պատարագին: Աստուածպաշտութեան կատարողները սովորաբար հինգն են՝ քահանան, երկրորդ քահանան, սարկաւագը, սարկաւագի օգնականը եւ դպիրը, իսկ հանդիսաւոր դէպքերում մասնակցում են նաեւ մոմակիրը եւ հովհարակիրը: Որոշ դէպքերում պաշտամունք մատուցողների թիւը հասնում է տասներեքի, սակայն պարտադիր է առնուազն երեքի մասնակցութիւնը:

Հաղորդութեան պատարագի սկիզբը նախապատրաստական աղօթքներն են, այնուհետեւ սկսւում է կատեխումենների[16] պատարագը[17]: Այն տեղի է ունենում մուտքի աղօթքով (աղօթք նախքան պատարագը) եւ աւարտւում է Աւետարան ընթերցելով: Այնուհետեւ թափը շրջաբերում է Աւետարանը, որի ընթացքում հաւատացեալները համբուրում են այն: Այսպիսով, ժամերգութեան առաջին մասն աւարտւում է, եւ սարկաւագը, դիմելով կատեխումեններին, հրաւիրում է նրանց թողնել եկեղեցին (նրանք իրաւունք ունեն մասնակցելու պատարագի միայն առաջին մասին):

Երկրորդ մասը կոչւում է Հաւատացեալների պատարագ: Մի քանի բարեխօսական կարճ աղօթքներից յետոյ արտասանւում է «Հաւատամքը» («Հաւատոյ հանգանակը»): Դրան յաջորդում են ս. Բարսեղի աղօթքը եւ խորին խոնարհութիւնները (երկրպագութիւնները): Պատարագի կիզակէտը Վերաբերումն է՝ հաղորդութեան աղօթքը, որին յաջորդում է «Հայր մեր» աղօթքի երգասացութիւնը եւ բուն հաղորդութեան խորհուրդը: Նրան նախորդում է ապաշխարութեան երկարաշունչ մի աղօթք եւ «Տէ՛ր, ողորմեա՛ մեզ, ո՛վ Քրիստոս» արտայայտութեան կրկնողութիւնը 41 անգամ: Բոլոր հաղորդուողները կրում են սպիտակ հանդերձներ: Հաղորդութիւնը տրւում է հետեւեալ կերպ. քահանան կանգնած բաժանում է Հացը, իսկ սարկաւագը Գինու գաւաթը ձեռքին կանգնում է նրա կողքին: Նախ հաղորդւում են երեխաները, յետոյ՝ մեծերը, տղամարդիկ, այնուհետեւ՝ կանայք: Հաղորդութիւնից յետոյ պաշտամունքը եզրափակւում է բազմազան փառաբանական, գոհաբանական աղօթքներով եւ խնդրուածքներով:

ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏԱԿԱՆ ՄԻՒՍ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Տաճարային ժամերգութիւն

Այս կարգի արարողութիւնները, որոնք պահանջում են երգողների ներկայութիւն, տեղի են ունենում մայր տաճարներում եւ եկեղեցիներում մեծ տօների առթիւ:

Նրանք երեքն են.

1. Վազեմա. երեկոյեան հանդիսաւոր ժամերգութիւնն է, տեւում է 4-5 ժամ, կատարւում է օրուայ երկրորդ կէսին, որեւէ տօնակատարութեան նախաշեմին:

2. Մաւադդես. սկսւում է շաբաթ գիշերը եւ շարունակւում մինչեւ կիրակի առաւօտ:

3. Սերհաթա նագ. համապատասխանում է լատինական առաւօտեան ժամերգութեանը, անմիջապէս յաջորդում է Մաւադդեսին եւ ուղեկցւում է Հաղորդութեան խորհրդով:

15 Սիստրը ծնծղայի նման գործիք է:

16 Կատեխումեն - այն հաւատացեալները կամ նորահաւատները, որոնք դեռեւս չեն մկրտուել:

17 Հայկական պատարագում այդ մասը համապատասխանում է Երախայից պատարագին:

Որոշակի շրջանում, օրինակ՝ Մեծ պահքի, կարող են կատարուել նաեւ լրացուցիչ արարողութիւններ:

Տաճարային այս արարողութիւնները բաղկացած են ձօներից, տարբեր աղօթքներից («Հայր մեր», աղօթք հիւանդների համար, ճանապարհորդների համար, թագաւորի համար եւ այլն), սաղմոսներից, եկեղեցական երգերից եւ լիտանիաներից[18]:

ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆՆԵՐ

Վանական ժամագրքերը նախատեսւում են ոչ միայն վանքերում եւ եկեղեցիներում հանրային երգեցողութեան համար, այլեւ դրանք ընթերցւում են եւ դրանցով աղօթում են բազմաթիւ հաւատացեալներ ու ժողովուրդը: Ցաճախ ժամագիրքը նրանց ընթերցանութեան միակ առարկան է:

Ցայտնի են ժամագրքերի երեք հատորներ.

1. Ղպտական ժամագիրքը
2. Սաղմոսների ժամագիրքը
3. Աբբայ Գէորգիս Սագլաւիի ժամագիրքը (որը փաստօրէն փոխարինել է ղպտական ժամագրքին):
4. Եթովպական-վատիկանեան ժամագիրքը (ներկայումս այն չի գործում):

Ֆրանսերէնից թարգմանեց
Արկադի Սարգսեանը

18 Լիտանիա - աղօթք, որը կազմուած է կարճ աղերսների (խնդրանքների) երկար շարանից, որոնցից իւրաքանչիւրն ուղեկցւում է պատասխաններով:

Խմբագիրներ
Արա Նալչաջեան
Սահակ Ղազարեան
Մարթա Արաբեան
Սվետլանա Պետրոսեան

Սրբագրիչ
Սեդա Ստամբոլցեան

Կազմը՝
Արմէն Քիւրքչեանի

Տեխնիկական խմբագիր
Աշոտ Մովսիսեան